



**ՆԻԹԵՐ**

**Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ**

**ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

**ԺԱ. ՀԱՏՈՐ**

**Պէյրուք – Յունուար 2015**





**Խմբագիր՝ ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒԶԵԱՆ**

**«ՆԻԻԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ» մատենաշարի  
հրատարակությունը կը կատարուի Հ.Յ.Դ. Բիւրոյի որոշումով:**



**Ներկայ հատորին տպագրությունը իրականացած է նուիրատուութեամբ  
Տէր եւ Տիկին Հրայր եւ Մակի Սողոմոնեաններու:**





### ՅԱՌԱՋԱԲԱՆ

«ՆԻՒԹԵՐ»-ու ներկայ ԺԱ. հատորը կը ծածկէ յարաբերաբար երկար ժամանակաշրջան, որ սկիզբ կ'առնէ Հ.Յ.Դ. Եօթներորդ Ընդհ. ժողովին (1913 թ. Օգոստոս) յաջորդող օրերէն մինչեւ 1915 թ. Ապրիլ 11/24ը, – Հայոց ժամանակակից պատմութեան ամէնէն տագնապալի մէկ շրջանը երբ, հայկ. բարենորոգումներու հարցի միջազգային արծարծումով, յուսատու հեռանկար մը կ'ուրուագծուէր հայ ժողովուրդի մօտաւոր ապագային համար, բայց որ շուտով, առաջին աշխարհամարտի թուրքոհին մէջ, պիտի փոխակերպուէր պատմութեան մէջ իր նախընթացը չունեցող արհաւիրքի՝ Մեծ եղեռնին, ծանօթ այսօր Հայկական ցեղասպանութիւն անունով: Ցատտ այս հարցը վկայակոչող առաջին փաստաթուղթերը պիտի գտնենք արդէն ներկայ հատորին մէջ, իսկ 1915 թ. Ապրիլ 11/24ին յաջորդող իրադարձութիւններուն վերաբերողները տեղ պիտի գտնեն յաջորդ՝ ԺԲ. գրքին մէջ: Սակայն արձանագրել պէտք է անմիջապէս որ հայութեան դէմ նիւթուած դաւը ունի շատ աւելի հին արմատներ: Արդարեւ, եթէ զանց առնենք 1908 թ. Օսմ. սահմանադրութեան հռչակումին յաջորդող քանի մը տարիներու խաբուսիկ խանդավառութիւնը, Թուրքիոյ մէջ համատարած կամ մասնակի ջարդերու սպառնալիքը դամոկլեան սուրի նման միշտ կախուած կը մնար արեւմտահայութեան գլխուն: Այդ վտանգը առկայ էր ոչ միայն Ապրիլ Համիտ Բ.ի բռնակալութեան օրով, որ 1894-96 տարիներուն 2-300.000 զոհ իսկէց հայութենէն, այլ նաեւ սահմանադրական վարչակարգի տակ. փաստ՝ 1909 թ.ի Ատանայի կոտորածները ու տակաւին յաջորդող տարիներուն հայաբնակ գաւառներու մէջ քիւրտերու կողմէ կամ ուղղակի թուրք խուժանին ձեռամբ գործադրուած թալանը, առեւանգումները, սպանութիւնները, որոնց մասին Կ. Պոլսոյ հայոց պատրիարքարանը օրը օրին եւ մանրամասնաբար կը տեղեկագրէր թուրք կառավարութեան, առանց սակայն շօշափելի որեւէ արդիւնք ձեռք բերելու:

1908 թ.ի Օսմ. սահմանադրութիւնը համիտեան բռնակալութիւնը տապալելով՝ կը խոստանար Թուրքիան օժտել այնպիսի ազատ կարգերով, ուր պիտի տիրէր իրաւահասարակութիւն երկրի բաղկացուցիչ բոլոր ազգութիւններուն համար, առանց կրօնի եւ ցեղի խտրութեան: Այդ հիման վրայ ալ հայկական յեղափոխական կուսակցութիւնները – Հ. Յ. Դաշնակցութիւնը առաջին շարքին – վար դրած էին զէնքը եւ հրաժարած եւրոպական ատեաններուն դիմելէ. որդեգրած էին քաղաքացիական օրինապահ եւ հաւատարիմ ուղեգիծ եւ փարած օսմանցիութեան նոր գաղափարախօսութեան: Կ'ակնկալուէր որ 1907ի Դեկտեմբերին Փարիզի կոնգրէին համաձայնագիրը, այդ առթիւ կատարուած հանդիսաւոր խոստումներն ու ստանձնուած յանձնառութիւնները, զէք հանգրուանային կիրարկումով, հետզհետէ իրականութեան վերածուին: Շուտով սակայն յուսախաբ պիտի ըլլային բոլորը: Նոր իշխանութեան գլուխ անցած եւ զայն մենաշնորհի վերածած Իթթիհատ վէ Թերաքքը կուսակցութիւնը ի դերեւ պիտի հանէր կայսրութեան բարեկարգութեան հետ կապուած բոլոր յոյսերը: Օսմանցիութեան հասարակաց ընթրնողութեան փոխարէն, պիտի մշակուէր երկրին բաղկացուցիչ տարրերուն բռնի թրքացման քաղաքականութիւնը եւ ասիկա այնպիսի պարագաներու տակ երբ անոնցմէ շատերը, իսլամ թէ քրիստոնեայ, – հայ, յոյն, մակեդոնացի, ալպանացի, արաբ ու քիւրտ – ունէին լեզուական, մշակութային, պատմական ու ազգային այնպիսի խոր արմատներ ու առանձնայատկութիւններ որ, հակառակ դարաւոր ստրկութեան, իւրաքանչիւրը անոնցմէ անվթար կը պահէր իր ցեղային ինքնութիւնը: Ծանօթ են արդէն թրքացնելու այս անհեթեթ քաղաքականութեան անմիջական հետեւանքները, – խլրտումներ առաջին առթիւ մահմետական արաբ աշխարհին մէջ եւ, մասամբ զէք, քիւրտե-





րու մօտ, ըմբոստութիւններ Արաբիոյ, Սուրիոյ, Իրաքի եւ Եմենի մէջ. ապա Մակեդոնիոյ ազատագրութեան անունով մղուած Պալքանեան պատերազմը, որուն անմիջական հետեւանքը պիտի ըլլար կայսրութեան եւրոպական տիրոջներուն մեծ մասին կորուստը, Ալլաանիոյ անկախացումը, արիւրիկեան ցամաքամասէն հեռացումը եւայլն, որոնք բոլորը միասին առած կը խարխլէին հիմերը Օսմ. Թուրքիոյ, երկուան «հիւանդ մարդուն», որուն փրկութեան համար իբր թէ ասպարէզ իջած էին երիտասարդ թուրքերը:

Պալքանեան պատերազմի անմիջական հետեւանքներէն հանդիսացաւ նաեւ միջազգային ատենաներուն առջեւ հայկական հարցին վերաբարձումը, որուն նախաձեռնարկ եղան միաժամանակ Էջմիածնի կաթողիկոսութիւնը՝ Երոպայի մէջ Պօղոս Նուպար փաշայի գլխատրութեամբ նշանակուած պատուիրակութեամբ, եւ Կ. Պոլսոյ հայոց պատրիարքարանը՝ իր կազմած Ապահովական յանձնախումբով:

«ՆԻԻԹԵՐ»-ու նախորդ Ժ. հատորին մէկ գլուխը յատկացուած ըլլալով արդէն Բարենորոգումներու խնդրին, ներկայ գրքին մէջ կը ներկայացուին այն վաւերաթուղթերը, որոնք կը վերաբերին հարցին ասարտական փուլին. – Բարենորոգումներու վերջնական համաձայնագրի կնքում (1914 թ. Յունուար 26 – 8 Փետրուար), երոպացի ընդհ. քննիչներու նշանակում, վերջիններու իրաւասութեանց ճշդում եւ, վերջապէս, հարցին ամբողջական ձախողեցումը: Արդարեւ, Ա. աշխարհամարտի բռնկումը առիթ ծառայեցնելով, քրքական իշխանութիւնները իրենց երկիրները վերադառնալու խորհուրդ տուին երկու ընդհ. քննիչներուն՝ հոլանտացի Վեստենենկին եւ դանիացի Հօֆին, որոնք հազիւ ժամանակ ունեցած էին ծանօթանալու իրենց վստահուած փափուկ առաքելութեան: Այսպէս, պիտի վիժէր եւ անփառունակ վախճան ունենար հայկական կնճռոտ հարցի կարգաւորման գէթ նախնական փորձ համարուող միջազգային այս համաձայնագիրը՝ արդէն ակամայ եւ դժկամակութեամբ ընդունուած Թուրքիոյ կողմէ:

Համաշխարհային առաջին պատերազմը, ինչպէս ծանօթ է, պայթեցաւ 1914 թ.ի Յուլիս-Օգոստոս ամիսներուն, իբրեւ սկզբնական պատճառ ունենալով սերպ յեղափոխականի մը կողմէ Սարաժեւօ քաղաքին մէջ Աւստրիոյ զահաժառանգ իշխան Ֆրանց Ֆերտինանտի սպանութիւնը: Դէպքը, ինքնին ոչ այնքան ծանրակշիռ, տեղի կ'ունենար սակայն այնպիսի պահու մը, երբ Երոպան կը գտնուէր քաղաքական շիկացած մթնոլորտի մը մէջ եւ բաւական էր չնչին պատրուակ մը որպէսզի բռնկէր հրդեհը: Տարիներէ ի վեր երոպական մեծ տերութիւնները տնտեսական եւ զինական մրցակցութեան մէջ էին. բաժնուած երկու հակամարտ ճամբարներու, – մէկ կողմէ Երրեակ Համաձայնութիւնը (Անգլիա, Ֆրանսա եւ Ռուսիա), միւս կողմէ՝ Առանցքի երկիրները (Գերմանիա եւ Աւստրո-Հունգարիա) խօշական արշաւի էին դուրս եկած ռազմական եւ զինական ուժի կուտակման համար. ճիգ չէր խնայուէր նոյնպէս, փոխադարձ պաշտպանութեան դաշինք կնքելու անուան տակ, նոր դաշնակից-զինակիցներ ձեռք բերելու ուղղութեամբ: Այնպէս որ Սարաժեւոյի մահափորձէն եւ Սերպիոյ դէմ Աւստրիոյ յայտարարած պատերազմէն անմիջապէս ետք, շրջապագերծուեցաւ առաջին աշխարհամարտը իր մահասփիւռ ոլորապտոյտին մէջ ներքաշելով հետզհետէ հինգ ցամաքամասերու երկիրներուն մեծագոյն մասը:

Թուրքիան եւս պիտի չուզէր անմասն մնալ աշխարհաւեր այս ճակատումէն, հակառակ այն իրողութեան որ միջազգային իրադրութիւնը եւ երկրին ամբողջականութիւնը պահպանելու հրամայականը կը պահանջէին բացարձակ չէզոքութիւն: Այդպէս չէին մտածեր սակայն պետութեան ղեկին գտնուող Իթթի-հատի վարիչները: Ընդհակառակն պատերազմը անոնց համար կը նկատուէր յարմարագոյն պատեհութիւնը վերականգնելու քայքայման ընթացք բռնած Օսմ. կայսրութիւնը, բայց մանաւանդ իրականացնելու վերջին տարիներուն թուրք եւ թաթար շարք մը բանաստեղծներու եւ գործիչներու գովերգած *փանթուրանական* ծրագիրը, ըստ որուն հսկայական ու հզօր պետութեան մը հովանիին ներքեւ պէտք էր միաւորել Սիջին Արեւելքէն մինչեւ Կեդր. Ասիա տարածուող բոլոր թրքախօս եւ թրքացեղ ժողովուրդները: Այդ միաւորման կորիզը պիտի հանդիսանար բնականաբար Թուրքիան, որուն վարիչները, երես դարձնելով Օսմ. կայսրութեան աւանդական հովանաւորներ Ֆրանսայէն եւ Անգլիայէն, գտած էին նոր պաշտպան ի դէմս Գերմանիոյ: Այս վերջինը, ինքն ալ տարուած ցեղային (արիական) գերակշռութեան գաղափարախօսութենէն, այլեւ հետամուտ Արեւելքի մէջ տեղաւորուելու դիտաւորութենէն, չէր վարաներ քաջալեր հանդիսանալու թուրք վարիչներու մեծապետական եւ ցեղապաշտական նկրտումներուն: Ուստի եւ զարմանալի չէր Թալէաթ-Էնվերներու շեշտակի հակումը դէպի Գերմանիան, որուն աջակցութիւնը աւելի քան անհրաժեշտ էր փանթուրանական ծրագիրը յաջողցնելու համար: Գերմանիան՝ արդէն շօշափելի ներկայութիւն 1913



## ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

5

թուականն սկսեալ, վճռական դեր պիտի խաղար իբրև դաշնակից՝ Օսմ. պետութիւնը ներքաշելու համար ուրուագծուող պատերազմին մէջ: Այդ նպատակին պիտի ծառայէին իր ձեռք բերած տնտեսական արտօնութիւնները Պաղտատի երկաթուղագծի կառուցման եւ շահագործման, ինչպէս նաեւ քրքական բանակը սպառազինելու եւ մարզելու համար զօր. Լիման Ֆոն Սանտերզի գլխաւորած մեծաթիւ առաքելութեան ներկայութիւնը, որոնք բոլորը պիտի պսակուէին Իթքիհատի վարիչներուն հետ կնքուած պատերազմական գաղտնի համաձայնութեամբ, ինչ որ, վերջին եւ բախտորոշ պահուն, կատարուած իրողութեան առջեւ պիտի կանգնեցնէր թուրք պաշտօնական կառավարութիւնը:

Ճիշդ է որ Թուրքիա պատերազմի պիտի մտնէր 1914 թ. Հոկտեմբերի վերջերուն միայն, Առաջին աշխարհահամարտի յայտարարութենէն երեք ամիսներ ետք, բայց Իթքիհատ կուսակցութիւնը նախապատրաստուած էր անոր ատելի կանուխէն. առաջին օրերէն յայտարարուած էր ընդհանուր զօրակոչ. երկրի տարածքին հաստատուած էր պատերազմական դրութիւն եւ զօրքեր կուտակուած ռուսական սահմանագծերուն վրայ. չէթէական ջարդարար խումբեր գործի լծուած էին յատկապէս հայկական նահանգներուն մէջ ահ ու սարսափ տարածելու համար: Այս բոլորէն անկախ եւ հակառակ այն իրողութեան որ 1912 թ. ի վեր պաշտօնական յարաբերութիւնները խզուած էին երկու կուսակցութեանց միջեւ, Իթքիհատի կեդրոնը իր ազդեցիկ անդամներէն երկուքը՝ Պեհաւտտին Շաքիրն ու Նաճի պէյը կ'առաքէր Կարին բանակցելու համար դաշնակցական պատասխանատուներուն հետ: Ինչպէս ծանօթ է, Կարնոյ մէջ Յուլիս ամսուն գումարուած Հ.Յ.Դ. Ութերորդ Ընդհ. ժողովը, պատերազմի յայտարարութեան լուրը առնելով, հապճեպով փակուած էր (Յուլիս 30) եւ ժողովականներուն մեծ մասը արդէն ցրուած: Այսուհանդերձ տեղւոյն վրայ գտնուողներէն Ռոստոմ, Ակնունի եւ Վռամեան հանդիպումներ ունեցան թուրք պատուիրակներուն հետ, որոնք եկած էին իմանալու, թէ ինչ պիտի ըլլար Դաշնակցութեան դիրքը ռուս-թրքական պատերազմի մը պարագային. յայտնաբար Թուրքիա որոշած էր պատերազմին մէջ մտնել Գերմանիոյ կողքին, վստահ՝ այս վերջինի յաղթանակին: Անոնք կը յայտնէին որ նպատակ ունէին Կովկասը ազատագրել ռուսական տիրապետութենէն, ինքնավարութիւն տալ հոն ապրող ժողովուրդներուն, որ՝ վրացիներն ու թաթարները պատրաստ էին ապստամբելու եւ գործակցելու իրենց. կը մնար հետեւաբար ճշդել հայերու դիրքը, իսկ իրենք վստահ էին որ Դաշնակցութիւնը մեծ ազդեցութիւն ունի կովկասահայութեան վրայ եւ կ'ակնկալէին որ վճռական պահուն ան կ'անցնի Թուրքիոյ կողմը: Կովկասի ցեղերուն տրուելիք ապագայ ինքնավարութիւնն ալ կը ճշդուի անոնցմէ իւրաքանչիւրին շարժումին մասնակցութեան չափով:

Յայտնի է Դաշնակցութեան պատասխանը Իթքիհատի առաջարկներուն:– Պատերազմի պարագային յստակ է Դաշնակցութեան դիրքը.– Պաշտպանել Թուրքիոյ հողային ամբողջականութիւնը եւ սահմանադրական կարգերը: Բայց եւ այնպէս տարակուսանք կը յայտնուի գերմանական զէնքի յաջողութեան մասին, այլ համոզում՝ որ Համաձայնականները պիտի տանին վերջնական յաղթանակը: Ասով մէկտեղ Դաշնակցութիւնը կտրականապէս դէմ է Թուրքիոյ պատերազմի մտնելուն եւ անոր շահերը կը պահանջեն որ չէզոքութիւն պահպանէ մարտնչող կողմերուն միջեւ:

Թրքական առաջարկներու երկրորդ բաժնին՝ Կովկասի մէջ ապստամբութիւն բարձրացնելու մասին արտայայտուելով, հայկական կողմը դիտել կու տայ որ Սահմանադրութեան շրջանին՝ ընդհանրապէս, եւ հայկ. բարենորոգումներու հարցին մէջ մանաւանդ, Թուրքիոյ բռնած երկդիմի դիրքը ո՛չ մէկ լաւատեսութիւն կը ներշնչէ որ կովկասահայերը խանդավառուին եւ ռուսականի փոխարէն նախընտրեն քրքական տիրապետութիւնը. այնպէս որ յոյս պէտք չէ կապել Կովկասի մէջ Ռուսիոյ դէմ ուղղուած հայկական ապստամբութեան մը:

Այդպէս ալ վերջացան հայերու քրքականութիւնները, հիասթափութիւն եւ վրդովում առաջացնելով թուրքերու մօտ, որ չէին յաջողած Դաշնակցութիւնը եւ անոր ճամբով ընդհանուր հայութիւնը ներգրաւել կովկասեան իրենց արկածախնդրութեան մէջ: Այնուհետեւ հակահայ հալածանքները, եթէ մինչ այդ գործի կը դրուէին իբրև ճնշումի միջոց, այժմ հայոց «անհաւատարմութիւնը» պատրուակ ծառայեցնելով, պիտի դիմուէր հայութեան նկատմամբ բարբարոսական ամէն միջոցի:

Բռնութիւններ, հալածանք ու ջարդ՝ որ յաջորդող ամիսներուն պիտի կազմէին նախերգանքը պետականօրէն ծրագրուած ցեղասպանութեան մը գործադրութեան:







\*  
\* \*

Բացի վերևի արժարձուած հարցերէն, «ՆԻԻԹԵՐ»-ու ԺԱ. հատորը կը շօշափէ նոյնպէս բազմաթիւ ուրիշ խնդիրներ, որոնց յատկացուած գլուխներու ներածական էջերուն մէջ կը տրուին համապատասխան բացատրականներ: Հարկ կը տեսնենք այս առթիւ մատնանշել կարգ մը իրողութիւններ, կապուած ներկայացուած փաստաթուղթերուն.–

1.– 1914 թ.ի Յուլիս-Օգոստոսին պայթած աշխարհամարտը, պատերազմական դրութեան հաստատումը, այլեւ Դաշնակցութեան դէմ թուրք պետութեան ձեռք առած խիստ միջոցառումները պատճառ եղած են որ ոչ միայն կուսակցական ընթացիկ աշխատանքները (ժողով եւայլն) կասեցուին կամ խափանուին, այլ նաեւ նախորդող ժամանակաշրջանի հաւաքուած կուսակցական արխիւը կարելի չըլլայ փրկել ու առաքել ժընել: Անոնց մեծագոյն մասը, Կովկասի մէջ եւ մանաւանդ Թուրքիոյ տարածքին, ենթարկուած է փճացումի, ինչպէս եղած է ճակատագիրը պատմական եւ մշակութային ուրիշ անհատում հարստութիւններու: Այս իմաստով յատկանշական է Հ.Յ.Գ. Հայաստանի բիրոյի Պոլսոյ հատուածին 1914 թ. Սեպտ. 17ի նամակը ուղղուած ժընել՝ Սիք. Վարանդեանին (էջ 139-141). այս գրութեամբ կը տեղեկացուի որ Պոլիս գտնուած արխիւին մէկ մասը կարելի եղած է, ծովու ճամբով եւ Իտալիոյ վրայով, հասցնել ժընել: Անոնք կազմած են 10 ծրար, «հարաքանջիրը 5 քիօ», որոնցմէ 5-ը եղած են Ս. Չաւարեանի «թղթերը»: Կը խօսուի նաեւ «առաջին պատեհութեամբ» ուղարկելի քանի մը կապոցներու մասին եւս: Խօսքը կը վերաբերի անշուշտ մինչ այդ Պոլիս կեդրոնացուած արխիւին, մինչ կազմակերպական շրջաններուն մէջ մնացածները պէտք է համարել ի սպառ կորստեան մատնուած: Այսպէս, 1914 տարուան սակաւաթիւ փաստաթուղթեր միայն՝ Վասպուրականէն, Տարօնէն, Կարինէն, Սեբաստիայէն, Կիլիկիայէն եւայլն կը գտնենք կեդրոնական արխիւատան պահոցներուն մէջ, մինչ 1915 թուականէն գրեթէ ոչինչ մնացած է:

2.– Պարագան տարբեր է արտասահմանեան շրջաններուն՝ Պալքաններ, Եգիպտոս, Արեւմտեան Եւրոպա, Ամերիկա: Պատերազմական պայմաններուն մէջ բախտորոշ դեր վիճակուած պիտի ըլլար մասնաւորապէս Պալքանեան Կ. կոմիտէին, որ այլազան եւ գաղտնի ճանապարհներով պիտի յաջողէր այս կամ այն չափով հարողակցիլ Պոլսոյ եւ անոր միջոցով Երկրի տարբեր միաւորներուն հետ եւ ստացուած գրութիւններն ու տեղեկութիւնները փոխանցել Կովկաս եւ արտասահմանեան միւս շրջաններուն: Արտաշխարհի հանրային կարծիքը Երկրի անցուղարձերուն իրազեկ դարձնելու իմաստով առաջնակարգ դեր պիտի խաղար Պալքանեան Կ. կոմիտէի մէկ ուրիշ նախաձեռնութիւնը, «Հայաստան» եռօրեան, որ 1915 թ. Մարտ 10էն սկսեալ եւ օրը օրին պիտի արձագանգ տար Երկրէն հասնող ահասարսուտ լուրերուն:

3.– Գրեթէ դատարկ է Հ.Յ.Գ. Ութերորդ Ընդի. ժողովին յատկացուած թիւ 1545 թղթածրարը: Պատմական ծանրակշիռ պարագաներու մէջ գումարուած այս ժողովէն, բացառութեամբ Որոշումներու ձեռագիր եւ տպագիր Քաղուածքներուն, յատկանշական ոչինչ հասած է. ո՛չ ժողովական ատենագրութիւն եւ ոչ ալ Բիւրոներու կամ կազմակերպական շրջաններու տեղեկագրեր: Բոլորն ալ կորսուած են ընդմիջտ: Այսուհանդերձ, կարգ մը շրջաններու պարագային, ինչպէս Պալքաններ (թիւ 1190ա), Ատրպատական (558ա), Պոլիս (892-1), բարեբախտաբար կը գտնուին արձանագրութեանց յատուկ մատնաններ (500էն մինչեւ 1000 էջոց, բարակ եւ դիւրաբեկ թերթերէ կազմուած հաստափոր գիրքեր), ուր պահուած են մարմիններու փոխանակած գրութեանց, երբեմն նաեւ տեղեկագրերու պատճենները: Այս մարզին մէջ եւ տուեալ ժամանակաշրջանին համար, մասնաւոր շահեկանութիւն կը ներկայացնեն նոյնպէս Պալքանի Կ. կոմիտէին առաքած գրութիւնները Թիֆլիս՝ Հ.Յ.Գ. Արեւելեան բիրոյին:

4.– Կամաւորական շարժման յատկացուած գլուխին համար լայնօրէն օգտուած ենք Սիմոն Վրացեանի անձնական հարուստ արխիւին: Ներկայիս Պոսթընի կեդրոնական արխիւատուն փոխադրուած Վրացեանի թղթածրարներուն համարակալումը՝ Ս. Վ. սկզբնատառերով, պահած ենք անփոփոխ:

5.– Ըստ կարելոյն պահուած է փաստաթուղթերու ներկայացման ժամանակագրական կարգը, հաշուի առնելով հին եւ նոր տոմարներու միջեւ գոյութիւն ունեցող 13 օրերու տարբերութիւնը: Յիշեցնենք որ Ամերիկան ու Եւրոպան (բացի Պալքաններէն) կը հետեւեին նոր տոմարին, որ 13 օրով առաջ էր տակաւին Թուրքիոյ, Պարսկաստանի, Ռուսիոյ ինչպէս նաեւ Պալքաններու մէջ կիրարկուող հին տոմարէն: Կը պատահի նաեւ որ նշուած ըլլան երկուքը միասին, օրինակ 13/26 Օգոստոս, այսինքն՝ 13 Օգ. հին տոմարով, իսկ 26 Օգ. ըստ նորին:

Ե. ՓԱՍՊՈՒԹԵԱՆ





**ԳԼՈՒԽ I**

**Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԲՈՂՈՔԱԳԻՐՆԵՐԸ ԹՈՒՐՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ (1913 Թ.)**

Հատորին առաջին գլուխը կը բանանք 1913 թուականին Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքարանին եւ թրքական կառավարութեան միջեւ փոխանակուած գրութիւններով, որոնցմով կ'արծարծուի Թուրքիոյ տարածքին, բայց մասնատրապէս հայկական նահանգներու եւ Կիլիկիոյ մէջ հայ տարրին դէմ գործուող անօրինութիւններու խնդիրը: Պատրիարքարանը 1912-13 տարիներուն բազմաթիւ անգամներ իր յուշագիրներով (թաքրիք) կառավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրէր հայաբնակ գաւառներու մէջ տարածուած անկարգութիւններուն եւ յատկապէս հայերուն դէմ ի գործ դրուած ամէն կարգի ճնշումներուն վրայ: Պաշտօնական յուշագիրներուն կ'ընկերանային գաւառներու առաջնորդարաններուն կողմէ յղուած տեղեկագիրներէն քաղուածքներ, ուր մանրամասնօրէն կը յիշատակուէին պետական պաշտօնատուներու եւ դատարաններու խտրական եւ ապօրինի վերաբերմունքը, ինչպէս նաեւ հայերու նկատմամբ գործուած ու անպատիժ մնացած յանցագործութիւնները:

Պալքանեան պատերազմը եւ թրքական բանակին անյաջողութիւնները նոր առիթ դարձած էին թուրք խուժանին մէջ գրգռութիւն առաջացնելու քրիստոնէայ ժողովուրդներուն դէմ. եւ հակառակ այն իրողութեան որ պատերազմի դաշտին վրայ հայ զինուորները անձնուիրութեամբ կը կռուէին թրքական զօրամասերու շարքերուն մէջ, սաղորիչ տարածայնութիւններ այսուհանդերձ շրջանառութեան կը դրուէին այն իմաստով որ թրքական բանակին կրած պարտութիւններուն պատճառը յոյներն էին ու հայերը: Այս գրգռութիւններուն կ'ընկերանային սպառնալիքներ՝ որ թշնամիին կողմէ գրաւուած երկրամասերէն փոխադրուած բազմահազար թուրք գաղթականները պիտի տեղադրուին հայկական գաւառներու մէջ եւ որ հեռու չեն համիտեան ջարդերը յիշեցնող համատարած նոր կոտորածներ: Տեղական իշխանութիւններու դրդումով սկսած էր արդէն կիրարկուիլ տնտեսական պոլլոքոթ յունական եւ հայկական արտադրութիւններու դէմ:

Վերոյիշեալ եղելութիւններն ու երեւոյթները յիշեցնելով կառավարութեան՝ հայոց պատրիարքարանը կը պահանջէր կարգ ու կանոնի հաստատումը եւ անդորրութեան երաշխատրումը հայաբնակ գաւառներուն մէջ:

Հարիրատր էջեր գրաւող մնանօրինակ գանգատներէն՝ ընտրովի միայն տասնեւչորսին պատասխանած է կառավարութիւնը:

- Յաջորդաբար կը ներկայացնենք՝
  - 1.- Պարիարքարանի կողմէ վարչապետարանին ուղղուած 1913 թ. 18/31 Մայիսի թաքրիքը,– յուսահատական ճիշ մը՝ Կիլիկիոյ եւ հայկական նահանգներու հայութեան գոյութեան իսկ սպառնացող վտանգին մասին:
  - 2.- Թուրք կառավարութեան պատասխանը (թեգքերէ) պատրիարքարանի յուշագրին, ներկայացուած հարիրատր դէպքերէն ընտրովի միայն անոնցմէ 15-ին տրուած բացատրութիւններով, ուր երբեմն առանց հերքելու մատնանշուած տխուր իրողութիւնները, կը փորձուի աւելի յաճախ կասկածի տակ առնել տեղեկագրող աղբիւրները, այսինքն գաւառներու հայոց առաջնորդարանները:
  - 3.- 1913 թ. Յունիս 22 թուակիր պատրիարքութեան Խառն ժողովի պատասխանը Արդարութեան եւ կրօնից նախարարութեան. պատասխան՝ որ իսկական պարսաւագիր է, ուղղուած թէ՛ համիտեան անցեալ եւ թէ՛ սահմանադրական ներկայ վարչակարգի վարած հակահայ նենգ քաղաքականութեան դէմ:

Յայտնենք, որ արխիւներու մէջ գտնուող այս փաստաթուղթերը, մեքենագիր կամ տպագիր, ֆրանսերէն լեզուով են, հաւանօրէն թարգմանուած օսմաներէն բնագրէն: Կը տրուին անոնք յաջորդ էջերուն մէջ մեր կողմէ կատարուած հայերէն թարգմանութեամբ:



Փաստ. 116q-2

## 1.– Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԹԻՆ ԹԱԵՐԻՐԸ ՈՒՂՂՈՒԱԾ ԹՈՒՐԹԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

### **Au Grand Vézirat\***

Altesse!

Depuis la date de la remise à Votre Altesse du Mémoire où est exposé le danger de massacre qui menace les Arméniens habitant les vilayets de l'Anatolie orientale et la Cilicie, jusqu'à ce jour, aucune mesure propre à préserver nos nationaux de ce péril n'a été prise; les instigateurs de massacre n'ont été l'objet d'aucune poursuite; l'activité vexatoire déployée par les fonctionnaires uniquement à l'égard des Arméniens ne s'est pas – si peu soit-il relâchée.

Au contraire, d'informations dignes de confiance reçues des régions précitées, il ressort que le péril a grandi, et l'on peut dire que les meurtres isolés, les usurpations, les raptés et les pillages, pris dans leur ensemble, ont – toutes proportions gardées – le caractère d'un massacre.

J'ai l'honneur de remettre, ci-joint, à Votre Altesse, un tableau des nouveaux crimes enregistrés.

Des informations susdites, il ressort également que l'infortunée population arménienne, menacée, d'une part, d'être exterminés, et, d'autre part, en butte à la tyrannique, l'intolérable oppression des fonctionnaires, est en proie à une indicible consternation. Les cultivateurs n'osent pas sortir des villages pour aller labourer leurs champs; les autres classes de la population ne peuvent pas, davantage, vaquer à leurs affaires. En outre, une partie des Arméniens ne trouvent d'autre moyen de salut que dans l'exode et comme sous l'ancien régime – prennent par groupe, la route de l'exil.

Cette situation indique que les Arméniens n'ont plus le droit de vivre dans l'Empire Ottoman.

Cet état de choses devant conduire à l'anéantissement de l'élément arménien dans les régions sus-mentionnées; les multiples assurances du gouvernement touchant l'adoption de mesures susceptibles de garantir l'honneur, la vie et les biens de nos nationaux n'ayant été suivies d'aucun effet, et rien ne restant à ajouter aux supplications, aux plaintes, aux protestations que j'ai fait entendre jusqu'ici, je n'ai qu'à en appeler, pour le sort la nation arménienne – mise au ban de la société –, à la conscience, à la responsabilité de l'Etat et du peuple ottomans, et à la pitié du monde civilisé!

LE PATRIARCHE DES ARMÉNIENS DE TURQUIE

\* *Takrir remis le 18/31 mai 1913 par le Patriarcat arménien, à S. A. Mahmoud Chevket pacha.*





Թարգմանություն**Մեծ Վեզիրություն\*****Վստմություն!**

Ձերդ Վստմության յանձնուած Յուշագրէն ետք, ուր ցոյց տրուած է արեւելեան Անատոլիոյ նահանգներուն եւ Կիլիկիոյ մէջ բնակող հայերուն սպառնացող ջարդի վտանգը, մինչեւ այսօր ոչ մէկ միջոց ձեռք առնուած է պաշտպանելու համար մեր ազգայինները այս վտանգին դէմ. ոչ մէկ հետապնդումի առարկայ եղած են կոտորածի սաղիւնները. նուազագոյն չափով չեն մեղմացած պաշտօնեաներուն կողմէ մի միայն հայերուն դէմ ի գործ դրուած հալածանքները:

Ընդհակառակն, վերոյիշեալ շրջաններէն ստացուած վստահելի տեղեկութիւններէն ի յայտ կու գայ, որ վտանգը մեծցած է, եւ կարելի է ըսել որ առանձնակի սպանութիւնները, յափշտակութիւնները, առեւանգումները եւ կողոպուտները, իրենց ամբողջութեան մէջ եւ ամէն համեմատութիւն հաշուի առած, ջարդի մը հանգամանքը ունին:

Պատիւ ունին Ձերդ Վստմության ներփակ փոխանցելու արձանագրուած նոր ոճիրներու ցուցակ մը:

Վերոյիշեալ տեղեկութիւններէն կը հետեւի նմանապէս, որ դժբախտ հայ ազգաբնակչութիւնը, մէկ կողմէ բնաջնջման սպառնալիքի, միւս կողմէ պաշտօնեաներու բռնութեան եւ անհանդուրժելի ճնշումներուն տակ, մատնուած է անասելի արհաւիրքի մը: Հողագործները չեն համարձակիր դուրս ելլել գիւղերէն՝ երթալ իրենց արտերը հերկելու համար. բնակչութեան միւս խաւերը եւս չեն կրնար պարապիլ իրենց գործերով: Ասկէ զատ, հայերէն մաս մը, գաղթէն դուրս փրկութեան ուրիշ ճար չգտնելով, խումբերով կը բռնեն քարտի ճամբան:

Այս կացութիւնը ցոյց կու տայ որ հայերը այլեւս իրաւունք չունին սպրելու Օսմանեան կայսրութեան մէջ:

Իրերու այս կացութեան հետեւանքը պիտի ըլլայ հայ տարրին ոչնչացումը վերոյիշեալ շրջաններուն մէջ: Կառավարութեան յաճախակի հաւաստիացումները թէ յարմար միջոցներ պիտի որդեգրուին մեր ազգայիններու պատիւը, կեանքն ու ինչքերը երաշխատրելու, որեւէ արդիւնք տուած չըլլալով, եւ ոչինչ մնացած ըլլալով աւելցնելու այն աղերսանքներուն, զանգատներուն, բողոքներուն, զորս ցարդ լսելի դարձուցի, ուրիշ բան չի մնար ինձի բացի (ընկերութենէն դուրս ձգուած) հայ ազգի ճակատագրին համար դիմելէ գիտակցութեանն ու պատասխանատուութեանը Օսմանեան պետութեան ու ժողովուրդին, ինչպէս եւ կարեկցութեանը քաղաքակիրթ աշխարհին:

ԹՈՒՐԹԻՈՅ ՀԱՅՈՅ ՊԱՏՐԻԱՐԶ

\* Հայոց Պատրիարքութեան կողմէ յաճնուած Թարքիր Ն. Վ. Մահմուտ Շելքէֆ փաշային, 18/31 Մայիս 1913-ին:





Փաստ. 880-71

2.– Extraits du tezkéré grand-Véziral adressé au département de la justice et des cultes, à la suite de la correspondance échangée entre le grand-vézirat et le ministère de l'intérieur touchant le takrir en date 18/31 mai 1913 (1329) sub N° 901, présenté par le patriarcat arménien à S.A. le Grand-Vézir.

Les plaintes de Votre Béatitude relatives à la négligence du gouvernement en ce qui concerne la poursuite des bandits et des criminels ne répondent pas à la réalité des faits.

Non seulement des forces militaires ont été envoyées à Chirvan et à Gharzan en vue de la capture et du châtement de bandits tels que Yéchar Tchétó, Mahmé, Mehmed Emine et Djemil qui troublent la tranquillité publique dans la vilayet de Bitlis, mais le vali s'est rendu à Mouche pour prendre telles mesures qu'exigerait la garantie de l'ordre public.

De son côté, le gouverneur-général de Van est allé à Chatak, afin de diriger en personne la poursuite des tribus pillardes et dévastatrices. Une force de 400 hommes, avec deux canons, a été mise à cet effet à la disposition de Djevdet bey, gouverneur de Hékiari, et de Savfet bey, commandant du régiment des tirailleurs.

Après la répression de ces tribus, viendra le tour de la tribu Guirav. Le châtement des Guiravli aura pour conséquence de laisser Mir-Mehé sans appui.

A la suite de la nécessité signalée dernièrement par le vilayet de Van, le ministère de la guerre a immédiatement prescrit au commandant du 9eme corps d'envoyer à Van deux bataillons de troupes.

En outre, au cours des 15 derniers jours, 250 gendarmes ont rejoint ces parages, et ordre a été donné d'en expédier encore 270 qui sont sur le point de quitter Smyrne pour cette destination.

Bref, les autorités locales font tout leur possible pour écarter un moment plus tôt les dangers qui menacent la tranquillité publique dans les régions précitées.



### ՆԻԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՐ

11

**Քաղուածքեր Մեծ-Վեզիրական Թեգքերէն յղուած արդարութեան եւ կրօնից բաժանմունքին ի հետեւումն մեծ-Վեզիրութեան եւ ներքին գործոց նախարարութեան միջեւ փոխանակուած թղթակցութեան՝ ի մասին հայոց Պատրիարքութեան կողմէ Ն. Վ. Մեծ-Վեզիրին ներկայացուցած 18/31 Մայիս, 1913 թ. (1329) թիւ 901 թաքրիքին:**

Չերդ Ամենապատուութեան գանգատները՝ աւազակներու եւ ոճրագործներու հետապնդման ուղղութեամբ կառավարութեան անփութութեան վերաբերեալ, չեն համապատասխաներ դէպքերու իրողութեան:

Ոչ միայն զինուորական ուժեր առաքուեցան Շիրվան եւ Ղարզան<sup>1</sup>՝ ձերբակալելու եւ պատժելու նպատակով Եաշար Չեթոյի, Մահմէի, Մեհմէտ Էմինի եւ Ճեմիլի մման աւազակները, որոնք կը խռովեն հանրային անդորրութիւնը Պիթլիսի նահանգին մէջ, այլեւ վալիին գնաց Մուշ որպէսզի հանրային կարգի երաշխատուման համար հարկ եղած միջոցները ձեռք առնէ:

Վանի ընդհանուր կառավարիչը, իր կարգին, գացած է Շատախ որպէսզի անձամբ ղեկավարէ բալանող եւ աւերող ցեղախումբերու հետապնդումը: Այս նպատակով 400 հոգիէ բաղկացեալ զօրք մը, երկու թնդանօթներով, դրուեցաւ Հեթիարիի կառավարիչ Ճեւտէթ պէյի եւ արձակագօրքի հրամանատար Սաւֆէթ պէյի տրամադրութեան տակ:

Այս ցեղախումբերու զսպումէն ետք կարգը պիտի գայ Կիրաւի ցեղախումբին: Կիրաւիներու պատուհասման հետեւանքը պիտի ըլլայ Սիր Միէն թողուլ առանց յենարանի:

Վերջերս Վան նահանգի կողմէ յայտնուած անհրաժեշտութեան մը հետեւանքով, պատերազմական նախարարութիւնը հրահանգեց անմիջապէս 9րդ գունդի հրամանատարին որ երկու գումարտակ ուղարկէ Վան:

Ասկէ գատ, վերջին 15 օրերու ընթացքին 250 ժանտարմներ դրկուեցան այդ կողմերը, եւ հրաման տրուեցաւ 370 ժանտարմ եւս ուղարկել. անոնք Չմիւռնիայէն մեկնելու վրայ են սահմանեալ վայրը:

Կարճ. տեղական իշխանութիւնները կ'ընեն իրենց կարելին վայրկեան առաջ հեռացնելու այն վտանգները որոնք կը սպառնան վերոյիշեալ շրջաններու հանրային անդորրութեան:

**Ծանօթ. Խմբ.– Յաջորդ էջերուն, կը հետեւին դէմ դիմաց, ճախակողմեան սիւնակին տակ, հայոց Պատրիարքարանի Թաքրիքէն վերցուած սակաւաթիւ օրինակները, իսկ աջին՝ Վարչապետարանի թեգքերէին պատասխան բացատրութիւնները:**

**Հանդիպակաց էջերուն՝ կու տանք փաստաթուղթին թարգմանութիւնը:**

1.- Շիրվանը եւ Ղարզանը (կամ Խարզան) գաւառակներ են, որ կը գտնուէին Պիթլիս նահանգի Սղերդ գաւառին մէջ:





En ce qui concerne les autres plaintes  
contenues dans le takrir

1- *Le kaimakam de Tcharsandjak ayant, à la suite d'un ordre reçu du vilayet, restitué à leurs légitimes propriétaires les maisons et champs usurpés par les aghas; ceux-ci, dans le but de rendre caduque cette réparation, ont commencé à démolir les habitations des Arméniens, et à la tête d'un groupe de 300 individus, ont assailli le siège du gouvernement. Le pouvoir central, au lieu d'arrêter et de punir les meneurs, a, au contraire déplacé le Kaimakam, Chukri bey.*

2- *Par suite des exactions continuelles du fameux bandit Seyd Ali, les habitants du village de Dadik ont dû se réfugier à Bitlis; quant à ceux du village d'Eroun, qui ont été pillés, ils se préparent à émigrer.*

[Réponse].-

Certains habitants de Tcharsandjak ont dernièrement adressé des requêtes au ministère de l'Intérieur touchant la question agraire – vieille de 60-70 ans – de cette localité. Or, la solution-conformément à la justice et à l'équité de cette question ayant été confiée à la commission spéciale chargée de résoudre le problème agraire dans les vilayets orientaux de l'Anatolie, et cette commission étant sur le point de partir pour cette destination, tant qu'une décision n'aura pas été prise par elle à cet égard, il ne sera guère possible de modifier l'état présent des choses. En conséquence, le vilayet de Mamouret-ul-Aziz a été informé de la nécessité qu'il y a, pour les beys et les fermiers, de respecter, conformément au modus vivendi, leurs droits réciproques.

Pour ce qui est du déplacement du Kaimakam, il a eu lieu à la requête, précédemment formulée, du vali et par iradé impérial. Les affaires de cette espèce ne regardant du reste pas le patriarcat, celui-ci ne saurait s'adresser au gouvernement pour des questions de ce genre.

R.-

Bien que l'effendi visé – Seyd Ali qui habite actuellement à Hizan – soit une personne digne de respect, les Arméniens ayant pris l'habitude de lui attribuer tous les crimes qui se commettent dans l'étendue du vilayet, il en est résulté que l'élément arménien nourrit une haine ardente envers cette personne. Cependant, les autorités judiciaires et civiles n'ont relevé contre Seyd Ali effendi – qui mène une vie sédentaire – aucune charge pouvant nécessiter des poursuites.

Et malgré que les Arméniens croient que le brigand Mahmé, qui opère dans les régions de Van et de Bitlis, obéit aux ordres de Seyd Ali effendi, le fils de ce dernier, Sélaheddine, ayant eu, au cours de cette semaine, dans le province de Van, une rencontre avec la bande du brigand sus-nommé, a tué un de ses acolytes et en a blessé un autre. Ce double fait indique que la supposition des Arméniens n'est pas fondée. Toutefois les faits et gestes de Seyd Ali effendi sont surveillés et les autorités ne manqueront pas de sévir contre lui, le cas échéant.





### **Ինչ կը վերաբերի Թաքրիրի միւս գանգատներուն**

1- Չարսանճագի գայմագամը, նահանգ[ապետարան]էն ստացուած հրահանգի մը համաձայն, իրենց օրինաւոր սեփականատէրերուն վերադարձուցած է աղաներու կողմէ՝ յափշտակուած տուներն ու արտերը. վերջինները, այս հատուցումը ի չիք դարձնելու համար, սկսած են քանդել հայոց բնակարանները եւ, 300 հոգիւնց խմբակով մը, յարձակած են կառավարական շէնքին վրայ: Կեդրոնական իշխանութիւնը, փոխանակ ձեռքակալելու եւ պատժելու պարագլուխները, ընդհակառակն, տեղափոխած է գայմագամ Շիքրի պէյը:

2- Հռչակաւոր աւագակ Սէիտ Ալիի [ի գործ դրած] շարունակական կեղեքումներուն հետեւանքով, Տատիկ գիւղի բնակիչները ստիպուեցան Պիթլիս ապաստանիլ, իսկ Էրունի գիւղացիները, որոնք կողոպտուեցան, կը պատրաստուին գաղթելու:

### ՊԱՏԱՍԽԱՆ.—

Վերջերս Չարսանճագի կարգ մը բնակիչներ ներքին գործոց նախարարութեան աղերսագիրներ յղած են՝ 60-70 տարիներու հնութիւն ունեցող իրենց հողային հարցին վերաբերեալ: Արդ, այդ հարցը արդարութեամբ եւ արդարադատութեամբ եզրափակելու պարտականութիւնը վստահուած ըլլալով՝ Անատոլի արեւելեան նահանգներուն մէջ հողային խնդիրը լուծելու նպատակով [կազմուած] յատուկ յանձնախումբին, եւ այս յանձնախումբը մեկնելու վրայ ըլլալով այդ վայրերը, [ուստի] այնքան ատեն որ այս մասին որոշում չէ տրուած, կարելի պիտի չըլլայ բնաւ փոփոխութեան ենթարկել ներկայ վիճակը: Հետեւաբար, Մամուրաթ-իւլ-Ազիզի [Խարբերդի] նահանգապետին տեղեկացուած է, որ պէյերն ու ազարակատէրերը պարտաւոր են ըստ modus-vivendi-ի<sup>2</sup> յարգել իրենց փոխադարձ իրաւունքները:

Ինչ կը վերաբերի գայմագամներու տեղափոխութեան, ան տեղի ունեցաւ կայսերական հրամանագրով, վալիին կանխօրօք ներկայացուցած խնդրագրին հետեւանքով: Մնաց որ այս կարգի գործերը չեն վերաբերիր Պատրիարքարանին, [եւ] վերջինս իրաւասու չէ այս բնոյթի հարցերով կառավարութեան դիմելու:

### Պ.—

Թէեւ նշուած էֆէնտի Սէիտ Ալին, որ այժմ կը բնակի Խիզան եւ յարգանքի արժանի անձ մըն է, հայերը [սակայն] սովորութիւն դարձուցած ըլլալով նահանգին մէջ գործուած բոլոր ոճիրները իրեն վերագրելու, կը հետեւի որ հայ տարրը բուռն ատելութիւն մը կը սնուցանէ այս անձին նկատմամբ: Այսուհանդերձ, դատական եւ քաղաքային իշխանութիւնները՝ հետապնդում պահանջող ոչ մէկ ամբաստանութիւն գտած են Սէիտ Ալիի դէմ, որ նստակեաց կեանք մը կը վարէ:

Եւ հակառակ անոր որ հայերը կը հաւատան, թէ Վանի եւ Պիթլիսի շրջաններուն մէջ գործող աւագակ Մահմէտ կը հնազանդի Սէիտ Ալի էֆէնտիի հրահանգներուն,— այս վերջինի տղան՝ Մալահետտին՝ վերջին շաբթուան ընթացքին Վանի վիլայէթին մէջ բախում մը ունենալով վերոյիշեալ աւագակի խմբակին հետ, սպաննած է անոր արբանեակներէն մէկը եւ վիրաւորած ուրիշ մը: Կրկնակի այս եղելութիւնը ցոյց կու տայ որ հայերու ենթադրութիւնը անհիմն է: Այսուհանդերձ Սէիտ Ալի էֆէնտիի արարքներն ու շարժումները հսկողութեան տակ են եւ հարկ եղած պարագային իշխանութիւնները պիտի չքերանցան իրեն հետ խստօրէն վարուելու:

2.- Լատիներէն. տառացի կը նշանակէ ապրելու եղանակ, այսինքն՝ փոխադարձ զիջումներով համաձայնիլ:





3- *Les exactions des beys au village d'Avzate (Mouche) devenant chaque jour plus intolérables, les habitants se sont vus obligés à abandonner leurs foyers.*

R.-

Les villageois d'Avzate qui se sont dispersés dans les localités environnantes ont été dédommagés et ramenés à leur village et les bêtes et objets enlevés par les beys ont été, en présence même de la commission d'enquête, restitués à leurs propriétaires. En outre, les beys ont pris, par écrit, l'engagement de ne plus molester les villageois qui, reconnaissants de l'attitude des autorités, les ont remerciés et à l'heure actuelle, s'occupent de leurs travaux agricoles.

4- *Le fameux bandit Hasso Ibrahim connu par ses nombreux crimes et qui est l'objet d'un mandat d'arrêt a assailli le village d'Elyouh, dépendance du Kaza de Béchiri (Diarbékir), et y a tué 2 personnes et mis leurs maisons à sac. Par suite de l'indifférence des autorités locales en présence de pareils faits, la population se disperse et la situation devient chaque jour plus critique.*

R.-

Les faits signalés sont dus à un conflit de primauté surgi entre les fils de Mezré et Moustafa agha par suite de la haine qui les divise. Une rencontre ayant eu lieu de ce chef entre les tribus Saf et Derdjan, 2 kurdes ont été tués et 4 kurdes blessés.

Le gouvernement a pris les mesures nécessaires pour mettre fin à ce conflit, et afin d'en empêcher le renouvellement, il a expédié en ces parages des forces militaires suffisantes.

Pour ce qui est de Hasso, non seulement il n'a pas participé aux faits indiqués, mais ce n'est même pas un bandit. C'est un chef de tribu qui n'a pris aucune part aux troubles de 1311 (1895), qui n'a molesté – si peu soit-il –, aucun Arménien et qui est aimé de tous les Arméniens.





### ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՐ

15

3- Աւզատ գիտյի վրայ (Մուշ) պէյերու [ի գործ դրած] կեղեքումները օրէ օր աւելի անտանելի դարձած ըլլալով, բնակիչները հարկադրանքին տակ են լքելու իրենց օճախները:

Պ.-

Աւզատի գիւղացիները, որ ցրուած էին շրջակայքի բնակավայրերուն մէջ, հատուցուած են եւ վերաբնակեցուած իրենց գիւղը, եւ պէյերու կողմէ տարուած անասուններն ու առարկաները քննիչ յանձնախումբի ներկայութեան իսկ վերադարձուած իրենց սեփականատէրերուն: Ասկէ զատ, պէյերը գրաւոր յանձնառութիւն տուած են այլեւս չչարչրկել գիւղացիները, որոնք, երախտագէտ իշխանութիւններու կեցուածքէն, շնորհակալութիւն յայտնած են, եւ այժմ կը պարապին իրենց երկրագործական աշխատանքներով:

4- Հոչակաւոր աւազակ Հասսօ Իպրահիմ, ծանօթ իր [գործած] բազմաթիւ ոճիրներով, եւ որուն դէմ ձերբակալման հրամանագիր արձակուած է, յարձակած է Պշերիկ գաւառակին պատկանող Էլիուխ գիւղին վրայ (Տիարպէքի), սպաննած է հոն 2 անձեր եւ կողոպտած անոնց տուները: Իբրեւ հետեւանք նման դէպքերու պարագային տեղական իշխանութիւններու անտարբերութեան, բնակչութիւնը կը ցրուի եւ կացութիւնը օրէ օր կը դառնայ աւելի տագնապալի:

Պ.-

Նշուած դէպքերը հետեւանք են գերադասութեան [վերաբերեալ] վէճի մը, որ երեսան եկած է Մեզրէի որդիներուն եւ Մուստաֆա աղայի միջեւ, իբրեւ հետեւանք զիրենք բաժնող ատելութեան: Այս պատճառաւ Սաֆ եւ Դերջան ցեղախումբերուն միջեւ բախումի մը ընթացքին 2 քիւրտեր սպաննուած եւ 4 քիւրտեր վիրաւորուած են:

Կառավարութիւնը անհրաժեշտ միջոցները ձեռք առաւ վերջ տալու համար այս վէճին, եւ որպէսզի արգիլէ անոր կրկնումը, այս շրջանները ուղարկեց բաւարար թիով զինուորական ուժեր:

Ինչ կը վերաբերի Հասսոյին, ոչ միայն ան չէ մասնակցած նշուած դէպքերուն, այլ անիկա նոյնիսկ աւազակ չէ: Ան ցեղապետ մըն է, որ որեւէ մասնակցութիւն չէ ունեցած 1311ի (1895) խռովութիւններուն, նուազագոյն չափով չէ խոշտանգած ոեւէ հայ եւ սիրւած է բոլոր հայերէն:





5- *Les meurtres et pillages ont augmenté dans le kaza de Gavache, à Van. Dans le kaza de Chatak, la tribu Guirav a enlevé des villages arméniens de Houmar et de Hadjid 2,000 moutons et tué 2 bergers arméniens. Le bandit Mir-Mehé, accompagné de 60 de ses acolytes, est entré à Hizan où, sous menace, il s'est fait remettre de l'argent par la population et a assassiné le percepteur du fisc ainsi que 2 gendarmes. L'ordre et la tranquillité publique font absolument défaut dans ces régions.*

R.-

La nuit du 4 Mai, une bande de 40 brigands ayant, au village de Tchato, tué 2 bergers et emporté 400 moutons, des forces suffisantes ont été expédiées pour la poursuite et l'arrestation de ces bandits, ainsi que pour la sauvegarde de la population.

Des détachements de troupes ont été également envoyés à tous les villages où la présence de forces militaires a été jugé utile.

L'information relative à l'assassinat de 2 bergers est confirmée par le vilayet. Les autorités de Bitlis annoncent qu'elles ont ordonné les mesures militaires nécessaires en vue de la capture du brigand Mir-Mehé.

Le vali de Van vient de partir pour le Kaza de Chatak qui est le plus infesté par les bandits, et le vali de Bitlis pour Mouche, afin de diriger la poursuite en personnes.

6- *A Mouche, le percepteur du fisc Hosrof (Arménien) a été assassiné de façon atroce, durant l'exercice de ses fonctions. Le meurtre a été commis à la ferme de Chukri bey, frère d'Ibrahime effendi, chef du secrétariat du sandjak et en présence de gendarmes musulmans et non-musulmans qui se trouvaient avec lui. Les autorités, qui subissent l'influence des susdits, n'ont ouvert aucune enquête et les assassins n'ont pas été inquiétés.*

R.-

Hosrof effendi qui s'était rendu au village de Harabi Harnos pour s'occuper de la perception des dîmes et autres taxes fiscales et qui en compagnie d'un percepteur et de gendarmes, se trouvait dans la chambre d'un nommé Derviche effendi où il dictait une quittance, fut tué d'un coup de feu tiré de la lucarne.

Le vilayet de Bitlis nous informe que les fonctionnaires judiciaires et des forces de gendarmerie en nombre suffisant ont été envoyé sur les lieux et que les criminels sont l'objet de poursuites.





### ՆԻԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

17

5- Վանի Կառավարության գաւառակի մէջ սպանութիւններն ու կողոպուտը աւելցած են: Շատախ գաւառակի մէջ Կիրաւ ցեղախումբը տարած է հայկական Խումար եւ Խաչիկ[?] գիւղերէն 2000 ոչխար եւ սպաննած 2 հայ հովիւներ: Միր-Միէ աւազակը իր 60 արքանեակներով մտած է Խիզան, ուր սպանալիքով դրամ կորցած է բնակչութենէն եւ սպաննած է հարկահաւարն ու 2 ժանտարմներ: Կարգն ու հանրային անդորրութիւնը բացարձակապէս գոյութիւն չունին այս շրջաններուն մէջ:

Պ.-

Մայիս 4-ի գիշերը 40 աւազակներէ բաղկացեալ հրոսակախումբ մը Չաթո գիւղին մէջ սպաննած ըլլալով 2 հովիւ եւ տարած 400 ոչխարներ, բաւարար թիով զօրքեր դրկուեցան այս աւազակներու հետապնդման եւ ձերբակալումին, ինչպէս նաեւ՝ բնակչութեան ապահովման նպատակով:

Բանակային ջոկատներ եւս դրկուեցան բոլոր այն գիւղերը, ուր զինուորական ուժի ներկայութիւնը օգտակար դատուեցաւ:

2 հովիւներու սպանութեան վերաբերեալ տեղեկութիւնը նահանգ[ապետարան]ին կողմէ հաստատուեցաւ: Պիթիսի իշխանութիւնները կը ծանուցանեն որ, Միր-Միէ աւազակի ձերբակալման համար, իրենք անհրաժեշտ զինուորական միջոցառումները հրահանգած են:

Վանի նահանգապետը մեկնեցաւ Շատախ գաւառակ, որ ամէնէն շատ ասպատակուած է աւազակներէն, եւ Պիթիսի նահանգապետը՝ Մուշ, որպէսզի անձամբ ղեկավարեն հետապնդումը:

6- Մուշի մէջ հարկահաւար Խոսրով (հայ) իր պաշտօնի կատարման ընթացքին զազանաբար սպաննուեցաւ: Սպանութիւնը տեղի ունեցաւ Բայրահիմ էֆէնտիի եղբոր՝ Շիքրի պէյի ազարակին մէջ եւ ի ներկայութեան իրեն հետ գտնուող իսլամ եւ ոչ իսլամ ժանտարմներու: Իշխանութիւնները, որոնք կ'ենթարկուին վերոյիշեալներուն, որեւէ հետաքննութիւն չկատարեցին եւ մարդասպանները չանհանգստացան:

Պ.-

Խոսրով էֆէնտին, որ գացած էր Խարաբէ Հառնանց գիւղը զբաղելու համար տասանորդի եւ այլ հարկերու գանձումով եւ որ հարկահաւարի մը եւ ժանտարմներու ներկայութեամբ կը գտնուէր Տերվիշ էֆէնտի անուանեալ անձի մը սենեակին մէջ, ուր եւ կը թելադրէր անդորրագիր մը, սպաննուեցաւ լուսամուտէն արձակուած փամփուշտով մը:

Պիթիսի նահանգ[ապետարան]ը կը տեղեկացնէ որ դատական պաշտօնեաներ եւ ոստիկանական զօրքեր, բաւարար թիով, դրկուած են եւ որ ոճրագործները հետապնդումի առարկայ են:



7- *Le 12 mai 1329, 5 personnes du village de Gorov (Bitlis) ont été enlevées et conduites sur la montagne et le prêtre chaldéen du village d'Eroun a été assassiné.*

R.-

Aucun villageois de Grav n'a été enlevé. Quant aux assassins du prêtre chaldéen, l'instruction ordonné contre eux n'a pas encore pris fin.

8- *4 Arméniens du kaza de Hizan (Bitlis), 1 Arménien du village d'Eroun et 4 Arméniens du village de Panitchan, soit 9 Arméniens, ont été assassinés et 4, blessés. En outre, 1,000 têtes de moutons ont été enlevées.*

R.-

Bien que le meurtre, au village de Taî (Hizan) d'un nommé Ohan, fils de Makdessi, soit vrai, celui de 4 personnes n'est pas fondé. 40 individus faisant partie des tribus Jirguian, Gudan et Mamhouran, dans le vilayet de Van, sont entrés au village de Panitchan (Pervari) où ils ont assassiné 4 Arméniens, en ont blessé 3 et ont emporté 700 moutons. Une force de 400 hommes a été lancée contre ces tribus pour les punir. La poursuite est dirigée par le vali de Van qui se trouve en ce moment à Chétak.

9- *Les nombreuses plaintes déposées jusqu'ici contre le fameux bandit Mehmed Emine sont restées vaines et celui-ci vient d'assassiner le prêtre Keurkis.*

R.-

200 hommes de troupes, avec des canons, ont été lancées contre les bandits Mehmed Emine, Yachar Tchéto et Djémil qui opèrent dans la région de Kharzan et de Chirvan.





### ՆԻԹԵՐ Հ. 3. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԲ

19

7- 1329 ք. [1913] Մայիս 12ին Կորով գիղեն (Պիթլիս) 5 անձեր առեւանգուեցան եւ լեռ տարւեցան, եւ Էրունի քաղղեացի քահանան սպաննրուեցաւ:

Պ.–

Կորովեն ոչ մէկ գիղացի առեւանգուած է: Գալով քաղղեացի քահանայի ոճրագործներուն, անոնց դէմ հրահանգուած հետաքննութիւնը դեռ չէ աւարտած:

8- Խիզան գաւառակէն (Պիթլիս) 4 հայեր, 1 հայ Էրուն գիղեն եւ 4 հայեր Բանիջան գիղեն, ընդամենը 9 հայեր սպաննուեցան եւ 4 [հոգի] վիրատրուեցան: Բացի այդ, կողոպտուեցաւ 1000 զլուխ ոչխար:

Պ.–

Թէեւ ճիշդ է Մաքտեսիի որդի Օհան կոչեցեալին սպանութիւնը Թաղ գիղին մէջ (Խիզան) [սակայն] 4 անձերու սպանութիւնը հաստատուած չէ: Ճիրկեան, Կիտան եւ Համմուրան ցեղախումբերուն մաս կազմող 40 անհատներ (Վանի նահանգին մէջ) մտած են Բանիջան (Բարվարի), ուր սպաննած են 4 հայեր, վիրատրած 3 եւ տարած 700 ոչխար: 400 հոգինոց զօրք մը դրկուած է այս ցեղախումբերուն դէմ՝ պատժելու համար: Հետապնդումը կը ղեկավարուի Վանի նահանգապետին կողմէ, որ այս պահուն կը գտնուի Շատախ:

9- Հոչակատր աւազակ Մեհմետ Էմինի դէմ ներկայացուած բազմաթիւ գանգատներ ի գորտանցան եւ ենթական վերջերս սպաննած է Քէորքիս քահանան:

Պ.–

200 հոգինոց զօրք մը, թնդանօթներով, դրկուեցաւ Մեհմետ Էմին, Եաշար Չեթօ եւ Ճեմիլ աւազակներուն դէմ, որոնք կը գործեն Խարզանի եւ Շիրվանի շրջաններուն մէջ:





10- Dans le kaza de Mihalidj (Brousse), l'Arménien Agop a été tué d'une balle par le nommé Hassan. Le meurtrier n'a pas encore été arrêté.

R.-

Agop, garde-forestier à Karadja-bey, ayant été, la nuit du 29 Avril à une heure et demie du bourg, à l'endroit dit Sazlik, à la suite d'une dispute éclatée entre lui et le nommé Hassan, berger au service du bouvier Tétah, assassiné par ce berger; des ordres sévères ont été aussitôt envoyés aux kaïmakams de Karadja-bey et de Kirmasti, ainsi qu'aux commandants de gendarmerie dans ces localités, en vue de l'arrestation du meurtrier, qui est en fuite.

11- 11 Arméniens de Van et des alentours, rentrés de Russie dans leurs foyers, ont été blessés et dévalisés par les hommes du commandant Ahmed agha.

R.-

Bien que les Arméniens aient été dévalisés par les hommes du binbachi Ahmed agha, de la tribu Djélal (Bayazid), les objets volés ont été repris par les autorités et rendus à leurs propriétaires.

12- Le bandit Mahmé, fameux à Bitlis par ses crimes, enlève 4 Arméniens qu'il conduit sur la montagne, puis assaille le village de Kélmon. Ledit brigand envoie ensuite un Kurde et une femme auprès des parents des prisonniers, pour exiger une rançon. Les malheureux parents, hypothéquant leurs terres, se procurent une somme de 23 livres qu'ils remettent au sous-gouverneur du nahié, lequel, par l'entremise de Halil Tchaouche et d'un autre gendarme, la fait parvenir à Mahmé.

R.-

Il n'est pas vrai que 4 Arméniens aient été conduits sur la montagne. Le brigand Mahmé a, simplement, arrêté quelques voyageurs, entre Hizan et Semk, et leur a réclamé de l'argent. Ainsi 3 Arméniens, arrêtés par lui, ont été relâchés, après paiement d'une somme de 30 médjidiés. Les mesures nécessaires ont été prises, simultanément, par les vilayets de Bitlis et de Van, en vue de la capture de ce bandit.





**ՆԻԻԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

10- Միհայիճ գաւառակիւն մէջ (Պրուսա) Ակոր հայր սպաննուեցաւ Հասան կոչեցեալի [արձակած] զնդակով:

Մարդասպանը տակաւին չէ ձերբակալուած:

Պ.-

Գարաճա-պէյի մէջ անտառապահ Ակոր Ապրիլ 29ի գիշերը, գիւղաքաղաքէն ժամուկէս հեռու, Սազլիք կոչուած վայրին մէջ, սպաննուած է Թեթախի ծառայութեան մէջ գտնուող հովիւ Հասան կոչեցեալէն. անմիջապէս խիստ հրահանգներ դրկուած է Գարաճա-պէյի եւ Քիրմասթիի գայմագամներուն, ինչպէս նաեւ այս վայրերու ոստիկան-գորքերու հրամանատարներուն որպէսզի ձերբակալեն այժմ փախուստի մէջ գտնուող ոճրագործը:

11- Վանէն եւ շրջակայքէն 11 հայեր Ռուսիայէն տուն դարձին՝ վիրաւորուած եւ կողոպտուած են հրամանատար Ահմէտ աղայի մարդոց կողմէ:

Պ.-

Թէեւ հայերը կողոպտուած են ճելալ ցեղախումբին (Պայազլիտ) պատկանող հազարապետ Ահմէտ աղայի մարդոցմէն, [սակայն] իշխանութեան կողմէ գողցուած առարկաները ետ առնուած եւ վերադարձուած են սեփականատէրերուն:

12- Մահմէտ աւագակը, հռչակատր Պիթլիս մէջ իր [գործած] ոճիրներով, կ'առեւանգէ 4 հայեր, գոր կը տանի լեռ, յետոյ կը յարձակի Կիլման գիւղին վրայ: Յիշեալ աւագակը յետոյ քիւրտ մը եւ կիւն մը կը դրկէ կալանատրներու ծնողներուն փրկագին պահանջելու համար: Խեղճ ծնողները գրաւի տակ դնելով իրենց հողերը՝ կը ճարեն 23 ոսկի եւ կը յանձնեն գաւառակի փոխ-կառավարիչին, որ Խալիլ Չաուշի եւ ուրիշ ժանտարմի մը միջոցով կը հասցնէ Մահմէտին:

Պ.-

Ճիշդ չէ որ 4 հայեր լեռ տարուած ըլլան: Մահմէտ աւագակը Խիզանի եւ Սեմքի միջեւ ձերբակալած է պարզապէս քանի մը ճամբորդներ եւ իրենցմէ դրամ պահանջած: Այսպէս իր կողմէ ձերբակալուած 3 հայեր ազատ արձակուած են 30 մեճիտիէ վճարելէ ետք: Պիթլիսի եւ Վանի վիլայեթներէն միանգամայն անհրաժեշտ միջոցներ ձեռք առնուած են այս աւագակի ձերբակալման համար:





*13- Plus de 1,000 Arméniens d'Erzindjan et les environs, ne pouvant plus supporter cette intolérable situation, se sont vus obligés d'émigrer en Amérique.*

R.-

Le vilayet de Van n'a aucune connaissance de l'émigration d'un grand nombre d'Arméniens, pas plus que des exactions dont ils auraient été victimes. Pour ce qui est du vilayet d'Erzeroum, il ressort de l'enquête ordonné à cet effet que depuis le 1 mars de l'année courante jusqu'au 25 mai 1329, 890 Arméniens, isolément, et 49 Arméniens avec leurs familles, se sont rendus en Russie: et l'année dernière, à la même époque, 936 individus et 52 familles ont également émigré. Ces chiffres indiquent que, cette année-ci, le nombre des émigrés est inférieur à celui de l'année précédente.

Bien qu'il soit vrai qu'une partie des hommes appelés sous les drapeaux aient émigré pour fuir les rigueurs de la guerre, il est faux que, dans la perception des taxes ou dons militaires ait eu recours à des rigueurs ou à la violence. Cela est reconnu par la plupart des Arméniens eux-mêmes.

Si l'on tient compte en outre du fait que les habitants, le vicaire et les conseils arméniens du village Molla-Suleyman (Alachkert) ainsi que des villages de Zeydguian et Hanzérine, se sont rendus auprès des autorités, pour déclarer que, depuis la Constitution, ils n'ont eu à subir aucune exaction, qu'ils jouissent d'un repos parfait et qu'ils désapprouvent les rumeurs contraires mises en circulation à cet effet, on doit conclure que les bruits propagés par les déserteurs n'ont d'autre but que de cacher la honte de leur désertion.

Du reste, dans les régions privées de ressources économiques, une partie de la population musulmane se rend, chaque année, en Russie, pour y chercher du travail.

Les Arméniens qui se font délivrer des passeports partent dans le même but.

De nombreux déserteurs faisant partie de la réserve sont rentrés dans leurs foyers, honteux et repentants; le reste n'attend, pour les imiter, que la conclusion de la paix et le renvoi de la classe.

Le vilayet d'Erzeroum nous informe qu'en ce moment le calme est parfait dans toutes les parties de la province, que l'état de choses actuel ne saurait être comparé à la situation jadis existante et que toutes la population en est satisfaite.

Le vilayet précité nous communiquera les renseignements aux sujets des sandjaks d'Erzindjan et de Bayézid, dès qu'ils les aura reçus.





### ՆԻԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԻ

23

13- Երզնկային եւ շրջակայքին 1000 հայեր, չկարենալով տոկալ այս անտանելի կացութեան, ստիպուեցան Ամերիկա գաղթել:

Պ.-

Վանի վիլայեթը ոչ մէկ ծանօթութիւն ունի մեծաթիւ հայերու գաղթին մասին, ոչ ալ այն կեղեքումներէն, որոնց ենթարկուած ըլլան անոնք: Ինչ կը վերաբերի Էրզրումի նահանգին, այս նպատակով հրահանգուած քննութենէն ի յայտ կու գայ, որ ներկայ տարուան [1913] Մարտ 1-էն մինչեւ 25 Մայիս 1329 [1913], 890 հայեր առանձնաբար, եւ 49 հայեր իրենց ընտանիքներով մեկնած են Ռուսիա. եւ անցեալ տարի, նոյն ժամանակամիջոցին, 936 անհատներ եւ 52 ընտանիքներ նոյնպէս գաղթած են: Այս թուանշանները ցոյց կու տան որ այս տարի գաղթողներու թիւը նուազ է անցեալ տարուանէ:

Թէպէտեւ ճիշդ է որ զօրակոչի ենթարկուած մարդոց մէկ մասը գաղթած է փախուստ տալով պատերազմի խստութիւններէն, սխալ է [սակայն] որ հարկահաւաքութեան կամ յօգուտ բանակին [հաւաքուած] նուերներու ընթացքին դիմուած ըլլայ խստութիւններու կամ բրտութեան: Այս մէկը ընդունուած է նոյնիմքն հայերու մեծ մասին կողմէ:

Եթէ հաշուի առնենք նոյնպէս այն իրողութիւնը, որ Մոլլա-Սիւլեյման գիւղի (Ալաշկերտ), ինչպէս նաեւ Ջէյտիկան եւ Խանձերին գիւղերու [առաջնորդական] տեղապահն ու թաղականութիւնները դիմած են իշխանութիւններուն յայտարարելու համար, որ Սահմանադրութենէն ասդին ոչ մէկ անիրաւութեան ենթարկուած են եւ որ իրենք կը հերքեն այս իմաստով շրջան ընող զրոյցները,– պէտք է եզրակացնել որ դասալիքներու տարածած աղմուկներուն նպատակը պարզապէս ծածկել է իրենց դասալքութեան ամօթը:

Մնաց որ, տնտեսական աղբիւրներէ զուրկ շրջաններուն մէջ մահմետական բնակչութենէն մաս մը ամէն տարի կ'երթայ Ռուսիա աշխատանք փնտռելու համար:

Անցագիր ստացող հայերը կը մեկնին միեւնոյն նպատակով:

Պահեստի զօրքին մաս կազմող բազմաթիւ դասալիքներ վերադարձած են իրենց տուները, ամօթահար եւ զղջացած. մնացեալները՝ անոնց հետեւելու համար կը սպասեն խաղաղութեան կնքումին<sup>3</sup> եւ զօրամասի արձակումին:

Էրզրումի վիլայեթէն կը տեղեկացնեն մեզի, որ այս պահուն կատարեալ հանդարտութիւն կը տիրէ նահանգին բոլոր շրջաններուն մէջ, որ՝ տիրող ներկայ դրութիւնը բաղդատելի չէ բնաւ նախկինին եւ որ ամբողջ բնակչութիւնը գոհ է ատոր համար:

Վերոյիշեալ նահանգը, անմիջապէս որ ստանայ, մեզի պիտի հաղորդէ տեղեկութիւններ Երզնկայի եւ Պայազիտի գաւառներուն մասին:

3.- Ակնարկութիւն պալքանեան պատերազմի արարտին կնքուելիք խաղաղութեան:



*14- Une dépêche arrivée aujourd'hui de notre archevêché de Bitlis nous annonce que dans le kaza de Hizan, 3 autres Arméniens ont été assassinés et que les ordres donnés par le villayet, n'ont été suivis d'aucun effet.*

R.-

Ainsi que nous vous en avons informé précédemment, en dehors du nommé Ohan, tué au village de Taiï, aucune autre personne n'a été assassiné dans le kaza de Hizan.

L'information y relative est donc dénuée de fondement. Ce fait a été notifié aussi au vicaire de Bitlis qui n'a rien répliqué. D'autre part, aucun symptôme de discorde digne d'attirer l'attention ne se manifestant entre les deux éléments, les crimes qui se commettent doivent être attribués à des motifs ordinaires et privés. Du reste, parmi l'élément kurde, il est des personnes subissant aussi des exactions de la part des kurdes et le vilayet de Bitlis affirme qu'on a pris l'habitude de grossir ces délits de droit commun.



**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

25

14- Այսօր Պիթլիսի մեր առաջնորդարանէն հասած հեռագրալուր մը կ'իմացնէ մեզի, որ Խիզան գաւառակին մէջ 3 ուրիշ հայեր սպաննուած են եւ որ նահանգ[ապետարան]ի կողմէ արձակուած հրամանները ոչ մէկ արդիւնք տուած են:

Պ.–

Ինչպէս որ նախապէս տեղեկացուցած ենք, բացի Օհան կոչեցեալէն, սպաննուած Թաղ գիւղին մէջ, որեւէ մարդ սպաննուած չէ Խիզան գաւառակին մէջ:

Այդ մասին տրուած տեղեկութիւնը ուրեմն անհիմն է: Այս տեղեկութիւնը փոխանցուած է նաեւ Պիթլիսի [հայոց] տեղապահին, որ առարկութիւն չըրաւ բնաւ: Միւս կողմէ, երկու տարրերուն միջեւ ուշադրութեան արժանի գժտութեան ռեւէ ախտանշան երեւցած չըլլալով՝ գործուած ոճիրները պէտք է վերագրուին սովորական եւ մասնաւոր բնոյթի շարժառիթներու: Մնաց որ, քիւրտ տարրին մէջ եւս կան անձեր, որ կ'ենթարկուին քիւրտերու կեղեքումներուն, եւ Պիթլիսի նահանգ[ապետարան]ը կը հաստատէ որ սովորութիւն դարձած է խոշորցնել հասարակ կարգի յանցագործութիւնները:





**3.— REPONSE AU TEZKERE  
DU MINISTERE DE LA JUSTICE ET DES CULTES,  
AU PATRIARCAT ARMENIEN**

**EN DATE DU 22 JUIN 1329 (1913) SUB. N° 78**

Notre Conseil Mixte a pris connaissance des *tezkéres* de Votre Excellence en réponse à nos *takrirs* et mémorandums successifs relativement aux exactions dont les Arméniens sont victimes dans les vilayets de Van et de Bitlis et leurs dépendances – takrirs et mémorandums basés sur les communications faites au Patriarcat par nos différents évêchés et vicariats en ces régions.

Des *tezkérés* responsifs sus-énoncés, il ressort que les communications de nos évêchés et vicariats consisteraient en de simples inventions et calomnies et que le gouvernement impérial, sans faire aucune distinction entre les sujets ottomans, à quelque race ou religion qu'ils appartiennent, poursuivrait et arrêterait, sans le moindre exception, tous les bandits et criminels et n'épargnerait aucune mesure effective susceptible d'assurer la tranquillité et le bien-être de la population. Etant donné cet état de choses, notre Patriarcat est invité à n'accorder ni importance ni confiance à des informations et inventions malveillantes et à procéder au remplacement des évêques de Séert et de Bitlis.

Avant toute réponse à ce sujet, il nous a paru indispensable de rappeler sans détour à Votre Excellence certaines vérités historiques en rapport des plus étroits avec la situation actuelle.

De tout temps et dans toutes les provinces de l'Empire, les *Echrafs* et les hobereaux ont formé une classe à part, constituant un Etat dans l'Etat. Peu à peu, cette classe privilégiée a acquis un tel pouvoir, qu'il lui a même été possible de rendre caducs les projets et les actes les mieux intentionnés de l'autorité centrale. Les fonctionnaires locaux – du plus grand au plus petit – n'ont jamais pu, malheureusement, échapper à son influence. Ceux qui ont voulu s'y soustraire ont été, grâce à l'emploi de la ruse ou de la calomnie, aussitôt révoqué ou remplacés, ou bien, obéissant à un sentiment d'honnêteté et de patriotisme, se sont démis de leurs fonctions.

Toutes les enquêtes des autorités locales concernant les crimes ou les délits perpétrés en province ont dû être menées sous l'influence de cette classe privilégiée, c'est à dire dans un sens conforme à ses intérêts illégitimes. Quiconque a osé se plaindre soit aux fonctionnaires locaux, soit au pouvoir central des actes tyraniques de la classe précitée, a eu à s'en pâtir encore plus peut-être que de ce qui avait fait l'objet de sa plainte.

Etant donné cet état de choses, il est naturel que le pouvoir central ne puisse pas se rendre de la situation en province, un compte exact.

Comme si le malheur, dont l'existence remonte fort en arrière, ne suffisait pas, au cours des 30 dernières années, le gouvernement absolutiste a adopté, notamment à l'égard des Arméniens habitants







**ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ  
ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ  
ԿՐՕՆԻՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ  
22 Յունիս 1329 (1913) թուականի թիւ 78 ԹԵԶԵՐԷԻՆ**

Մեր Խառն ժողովրդ<sup>4</sup> իրագեկ դարձաւ Չերդ վսեմութեան Թեզքերէներուն, ի պատասխան մեր յաջորդական Թաքրիքներուն եւ յուշագիրներուն՝ ի մասին այն անիրաւութիւններուն, որոնց գոհն են Վանի, Պիթլիսի նահանգներուն հայերը, – թաքրիքներ եւ յուշագրեր՝ հիմնուած այդ շրջաններու մեր տարբեր առաջնորդարաններէն եւ փոխ-առաջնորդութիւններէն կատարուած հաղորդագրութիւններու վրայ:

Վերոյիշեալ պատասխան-թեզքերէներէն կը հետեւի, որ մեր առաջնորդարաններու եւ փոխ-առաջնորդարաններու հաղորդագրութիւնները կազմուած են պարզ հնարանքներ եւ զրպարտութիւններ եւ որ կայսերական կառավարութիւնը, առանց որեւէ խտրութիւն դնելու իր օսմանցի հպատակներուն միջեւ – ինչ ցեղի եւ կրօնքի ալ պատկանին անոնք – պիտի հետապնդէր եւ ձեռքակալէր, առանց նուազագոյն բացառութեան, բոլոր աւազակներն ու ոճրագործները եւ պիտի չխնայէր որեւէ իրական միջոց՝ բնակչութեան անդորրութեան եւ բարօրութեան համար: Իրերու կացութիւնը այսպէս ըլլալով, մեր Պատրիարքարանին կը թելադրուի ոչ մէկ կարեւորութիւն եւ վստահութիւն ընծայել չարամիտ տեղեկութիւններու եւ հնարանքներու, եւ ձեռնամուխ ըլլալու փոխելու համար Սղերդի եւ Պիթլիսի առաջնորդները:

Նախ քան պատասխանելը այս մասին, անհրաժեշտ նկատեցինք, առանց դարձուածքի Չերդ Վսեմութեան յիշեցներու այժմու կացութեան հետ սերտօրէն կապուած պատմական որոշ ճշմարտութիւններ:

Կայսրութեան բոլոր նահանգներուն մէջ եւ տեւաբար, էշրաֆները<sup>5</sup> եւ տէրէպէլիները<sup>6</sup> եղած են առանձին դասակարգ մը՝ Պետութեան մէջ պետութիւն մը: Հետզհետէ այս առանձնաշնորհեալ դասակարգը ձեռք բերած է այնպիսի ազդեցութիւն, որ կրցած է նոյնիսկ ի չիք հանել կեդրոնական կառավարութեան լաւագոյն բարեմտութեամբ [կազմած] ծրագիրներն ու արարքները: Տեղական պաշտօնեաները դժբախտաբար, ամէնէն մեծէն ամենափոքրը, երբեք չեն կրցած ազատիլ անոր ազդեցութենէն: Անոնք որոնք, խորամանկութիւն կամ զրպարտութիւն ի գործ դնելով ուզած են խուսափիլ անկէ, անմիջապէս պաշտօնանկ են եղած կամ փոխարինուած եւ կամ, հնազանդելով պարկէշտութեան եւ հայրենասիրական զգացումի՝ հրաժարած են իրենց պաշտօններէն:

Տեղական իշխանութեանց ձեռնարկած բոլոր քննութիւնները՝ նահանգներու մէջ զործուած ոճիրներու եւ յանցագործութեանց մասին, կատարուած են այս առանձնաշնորհեալ դասակարգի ազդեցութեան տակ, այսինքն համապատասխան՝ անոր ապօրինի շահերուն: Ո՛վ որ համարձակած է – ըլլա՛յ տեղական պաշտօնեաներու թէ կեդրոնական իշխանութեան մօտ – գանգատիլ վերոյիշեալ դասակարգի բռնատիրական արարքներուն դէմ, թերեւս աւելի մեծ վնասներու ենթարկուած է, քան ինչ որ կրած էր արդէն իր գանգատին տուն տուող խնդրին պատճառով:

Տրուած ըլլալով իրերու այս վիճակը, բնական է որ կեդրոնական իշխանութիւնը իրական գաղափար չունենայ գաւառի կացութեան մասին:

4.- Կ. Պոլսոյ հայոց պատրիարքութեան գործադիր վերին իշխանութիւնը կը կոչուէր Ազգ. Կեդր. վարչութիւն, որ իր կարգին կը բաղկանար Կրօնական եւ Քաղաքական ժողովներէն. վերջին երկուքի համատեղ գումարումին կը տրուէր Խառն ժողով անունը:  
5.- էշրաֆ – Թուրքիոյ մէջ երեսելի եւ ազդեցիկ անձնատրութիւններ:  
6.- Տէրէպէլի թարգմանեցինք ֆրանսերէն բնագրի hobereau-ն: Այդպէս կը կոչուէին Ֆրանսայի մէջ միջնադարու գաւառական բիրտ ու բռնակալ աւատատէրերը, որոնց համարժեքը Թուրքիոյ մէջ տէրէպէլիներն էին:





l'Anatolie orientale, un système d'oppression et d'exaction, allant même jusqu'à transmettre aux autorités provinciales des instructions confidentielles où il leur laissait entendre qu'il était permis d'attendre à la vie, à l'honneur et aux biens des Arméniens.

Toutefois, pensant qu'il était nécessaire de cacher autant que possible à l'étranger ces agissements contraires à la loi, à la religion et à la conscience, le gouvernement précité eut, pour arriver à donner le change à l'opinion publique européenne, recours aux moyens les plus infâmes, les plus monstrueux. Ainsi, les légitimes plaintes des Arméniens, adressées aux autorités locales ou centrales, étaient, d'ordre de ces dernières et sous l'influence des hoberaux, classées, et même ceux qui avaient eu assez de courage pour les signer étaient accusés de rébellion contre l'Etat. Le couronnement de cette politique vexatoire adoptée à l'égard des Arméniens fut l'organisation d'épouvantables boucheries. Et, afin de soustraire à tout châtement les auteurs et instigateurs de ces tragédies, les poursuites dont les criminels auraient dû être l'objet avaient été entamées contre les Arméniens échappés au massacre. Par ce moyen, on voulait obliger ces infortunés à implorer une amnistie générale dont auraient aussi bénéficié leurs bourreaux. Cette persécution barbare subie par les Arméniens depuis plus d'un quart de siècle, avait, à la longue – surtout dans les vilayets de l'Anatolie orientale – acquis, pour ainsi dire, le caractère d'un usage naturel et, peut on dire, d'une loi au dessus de la législation civile et religieuse. La tragédie d'Adana – postérieure à la proclamation de la constitution – a été une conséquence logique de cette politique érigée en loi naturelle.

Bref, le système – en vigueur pendant plus de 30 ans – de considérer les biens, la vie et l'honneur des Arméniens comme des choses auxquelles on pouvait impunément attenter et de classer leurs plaintes les plus justes, les plus légitimes, a tel point concaincu les oppresseurs que tout leur est permis à l'égard de nos nationaux, que l'autorité centrale ne saurait, aujourd'hui, arriver facilement à faire changer d'avis à ces tyrans.

Pour en revenir à la situation présente, les enquêtes ordonnées à la suite des plaintes parvenues des provinces orientales – enquêtes que devraient avoir lieu avec toute les conditions d'équité et d'impartialité voulues – ces enquêtes ne sont dirigées ni par l'autorité centrale, ni par des fonctionnaires supérieurs tels que les valis ou les mutessarifs, mais sont, en général, confiées à des fonctionnaires subalternes locaux dont une partie – ainsi qu'il a été exposé ci-dessus – subit, volontairement ou contre son gré, l'influence funeste des hobereaux.

Or ces fonctionnaires ne sont pas à même de juger qu'au cas où un coupable ne recevrait pas le juste châtement des ses méfaits; la conséquence de cette impunité serait une recrudescence des crimes, dont la perpétration deviendrait une espèce d'habitude, rendant ainsi impossible le maintien de l'ordre et de la tranquillité.

La plupart de ces fonctionnaires sont réellement convaincus que la loi et le patriotisme leur font un devoir de cacher le crime d'un musulman contre un non-musulman, ou bien, dans la crainte qu'en reconnaissant la réalité d'un crime qu'ils n'ont pas pu ou n'ont pas voulu prévenir, ou dont ils sont incapables de désigner l'auteur, ils n'encourent une mesure de rigueur telle que la révocation, ils ont recours à toute espèce de ruses pour essayer de nier ou de dissimuler des choses indéniables. Toutefois, ils comprennent si bien eux mêmes l'absurdité d'un système où les Arméniens seraient présentés simple-



### ՆԻԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

29

Կարծես չբաւեր այս շատ հին անցեալ ունեցող դժբախտութիւնը, վերջին 30 տարիներու ընթացքին բարձրակարգ տեխնոլոգիաներով կառավարութիւնը որդեգրած էր, յատկապէս արեւելեան Անատոլիոյ հայ բնակչութեան դէմ, ճնշումի եւ հարստահարութիւններու այնպիսի դրութիւն մը, ուր մինչեւ իսկ նահանգային իշխանութիւններուն կը փոխանցուէին խորհրդապահական հրահանգներ, ըստ որոնց արտօնուած է իրենց՝ սաղարաններ նիւթել հայերու կեանքին, պատուին եւ ինչքին դէմ:

Սակայն, խորհելով որ անհրաժեշտ էր արտաքին աշխարհի աչքին կարելի եղածին չափ քողարկել՝ օրէնքի, կրօնքի եւ խղճմտանքի հակառակ հանդիսացող այս արարքները, վերոնշեալ կառավարութիւնը, կարենալ խաբելու համար երոպական հանրային կարծիքը, դիմեց ամէնէն խայտառակ եւ հրէշային միջոցներուն: Այսպէս, հայոց արդարացի գանգատները տեղական եւ կեդրոնական իշխանութիւններուն ուղղուած, այս վերջիններու հրահանգով եւ տէրեւէյիներու ազդեցութեան տակ, բարձի թողի էին տրուած, եւ նոյնիսկ անոնք որ քաջութիւնը ունեցած էին անոնց տակ ստորագրելու, կը մեղադրուէին որպէս պետութեան դէմ ապստամբողներ: Հայոց նկատմամբ որդեգրուած հարստահարիչ այս քաղաքականութեան պսակումը հանդիսացաւ կազմակերպումը սարսափելի կոտորածներու: Եւ, վերջապէս, այս ողբերգութեանց հեղինակներն ու դրոյիչները ամէն պատիժէ ազատելու համար, – հետապնդումներ՝ որոնց առարկայ պէտք է դառնային ոճրագործները, [նոյն հետապնդումները] սկսան ջարդերէն փրկուած հայերուն դէմ: Այդ միջոցով կը փափաքէին ստիպել այս դժբախտները աղերսելու ընդհանուր ներում մը, որմէ պիտի օգտուէին իրենց դահիճները եւս: Աւելի քան քառորդ դարէ ի վեր հայերու կրած բարբարոսական այս հալածանքները, ժամանակի ընթացքին, մանաւանդ արեւելեան Անատոլիոյ մէջ, ստացած էին, այսպէս ասած, բնական սովորութեան եւ, կարելի է ըսել, օրէնքի մը բնոյթը, գերիվեր քաղաքային եւ կրօնական օրէնադրութեան: Սահմանադրութեան հռչակումին յաջորդող Ատանայի ողբերգութիւնը՝ տրամաբանական հետեւանքը հանդիսացաւ բնական օրէնքի աստիճանին բարձրացումը այս քաղաքականութեան:

Համառօտ. 30 տարիներէ ի վեր ի զօրու եղող դրութիւնը, – հայերու ինչքը, կեանքն ու պատիւը նկատելու իբրեւ բաներ, որոնց կարելի էր ձեռք տալ անպատիժ կերպով եւ բարձի թողի ձգել անոնց ամէնէն արդար եւ օրինաւոր գանգատները – համոզած է հարստահարիչները թէ մեր ազգայիններուն դէմ ամէն ինչ թոյլատրելի է իրենց այն աստիճան որ կեդրոնական իշխանութիւնը, այսօր, պիտի չկարենար դիւրութեամբ փոխել տալ այս բռնաւորներուն կարծիքը:

Վերադառնալու համար ներկայ կացութեան, – արեւելեան նահանգներէն հասած գանգատներուն հետեւանքով հրահանգուած քննութիւններուն, – քննութիւններ՝ որոնք պէտք է տեղի ունենային ամենայն արդարութեամբ եւ անկողմնակալութեամբ – այս քննութիւնները ղեկավարուած չեն ոչ կեդրոնական իշխանութենէն, ոչ բարձրաստիճան պաշտօնեաներէ, ինչպիսիք են վալիներ կամ միութեսարիֆներ, այլ վստահուած են ընդհանրապէս տեղական ստորադաս պաշտօնեաներու, որոնց մէկ մասը, ինչպէս վերեւ բացատրուեցաւ, կ'ենթարկուի, կամայ թէ ակամայ, բռնատէրերու դժխեմ ազդեցութեան:

Արդ, այս պաշտօնեաները կարող են դատել միայն այն պարագային երբ յանցաւորը կը ստանայ իր յանցագործութիւններուն արդար պատիժը. անպատժելիութիւնը պատճառ պիտի դառնար ոճիրներու վերածումին, իսկ այս վերջինը՝ պիտի վերածուէր տեսակ մը սովորութեան, այդ ձեւով անկարելի դարձնելով կարգի եւ անդրբնութեան պահպանումը:

Այս պաշտօնեաներու մեծ մասը իսկապէս համոզուած է թէ օրէնքն ու հայրենասիրութիւնը պարտք կը դնեն իրենց վրայ ծածկելու մահմետականին գործած ոճիրը ոչ-մահմետականի մը դէմ, եւ կամ այն վախով որ խոստովանելով ոճիրի մը իրողութիւնը, զոր իրենք չեն կրցած կամ չեն ուզած կանխատեսել, եւ կամ իրենք անկարող են մատնանշել անոր հեղինակը, – կրնան ենթարկուիլ պաշտօնանկութեան նման խիստ միջոցառումի մը, – կը դիմեն ամէն տեսակի խորամանկութեան ժխտելու կամ քողարկելու անուրանալի իրողութիւններ: Սակայն եւ այնպէս իրենք իսկ լաւագոյնս կը հասկնան անհեթեթութիւնը այն դրութեան, ուր հայերը պէտք է ներկայացուէին իբրեւ գանգատողներ անգոյ իրողութիւններու, եւ որ իրենք ամէն ճիգ



ment comme se plaignant de faits inexistant, qu'ils ont soin de faire croire que nos nationaux agissent par malveillance ou sous le pernicieux empire de la haine.

De même, le témoignage contre un musulman en faveur d'un Arménien étant considéré comme une action anti-patriotique ou un acte susceptible de provoquer la vengeance, bien des gens dont le témoignage pourrait faire éclater la vérité, s'abstiennent, le plus souvent, de dire ce qu'ils savent ou même déposent dans un sens contraire à la réalité.

Quant aux Arméniens victimes de ces exactions, non seulement ils sont incapables de fabriquer des plaintes calomnieuses, mais ils doivent, au contraire se défendre eux-mêmes d'infâmes calomnies inventées dans le but de les contraindre à retirer leurs plaintes les plus fondées, les plus légitimes. C'est au point que les malheureux, sachant par expérience qu'ils finiront par subir, du fait de ces calomnies, toute sorte d'ennuis: la détention, la violation de leurs demeures sous le fallacieux prétexte de perquisitions domiciliaires, n'osent même pas se présenter devant l'autorité pour désigner leurs persécuteurs.

Et l'abstention des Arméniens à laquelle Votre Excellence fait allusion dans son tezkéré du juin 1913 (1329) sub N° 78, provient uniquement de ces motifs.

Il suffit par conséquent de se livrer – en tenant compte des circonstances sus-énoncées – à un examen impartial des rapports envoyés par les fonctionnaires locaux au pouvoir central au sujet des Arméniens habitant les vilayets orientaux de l'Anatolie, pour comprendre, en même temps que les causes et l'origine des accusations portées contre nos évêques et vicaires, l'inanité de ces accusations.

Le 3/16 Août 1329 (1913)





### ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

31

պէտք է թափեն հաւատացնելու որ մեր ազգայինները կը շարժին չարամտութեամբ կամ ատելութեան վնասակար մղումով:

Նոյնպէս, մահմետականի մը դէմ եւ ի նպաստ հայոյ մը եղած վկայութիւնը՝ հակա-հայրենասիրութեան կամ վրէժխնդրութիւն գրգռող գործ մը նկատելով, շատ մը մարդիկ, որոնց վկայութիւնը կրնար երեւան բերել ճշմարտութիւնը, կը հրաժարին յայտնելէ իրենց գիտցածը, կամ նոյնիսկ իրականութեան հակառակ վկայութիւն կու տան:

Ինչ կը վերաբերի այս անիրաւութեանց գոհ հայերուն, ոչ միայն անկարող են անոնք զրպարտիչ գանգատներ յօրինելու, այլ ընդհակառակն, ստիպուած են իրենք զիրենք պաշտպանելու ընդդէմ հնարովի խայտառակ զրպարտութիւններու, որոնց նպատակն է հարկադրել զիրենք ետ քաշելու իրենց ամէնէն օրինաւոր գանգատները, այնքան մը որ խեղճերը, փորձառութեամբ գիտնալով որ այս զրպարտութիւններուն հետեւանքով ի վերջոյ պիտի ենթարկուին ամէն տեսակի նեղութեանց, – կալանաւորում, տնային խուզարկութիւններ՝ խաբէպատիր պատրուակով՝ բնակարանի բռնաբարում, – չեն համարձակիր մինչեւ իսկ ներկայանալու իշխանութեանց՝ իրենց հարստահարիչները մատնացոյց ընելու համար:

Եւ հայերու ձեռնպահութիւնը, որուն կ'ակնարկէ Չերդ Վսեմութիւնը իր Յունիս 23 1913 թ. (1329), թիւ 78 Թեզքերէին մէջ, միմիայն ա՛յս շարժառիթովներով է:

Հաշուի առնելով վերոյիշեալ պարագաները, կը բաւէ հետեւաբար անկողմնակալ քննութեան մը ենթարկել տեղական պաշտօնեաներու կողմէ կեդրոնական իշխանութեան առաքուած տեղեկագիրները ի մասին Անատոլիոյ արեւելեան նահանգներու մէջ բնակող հայերուն, հասկնալու համար մեր առաջնորդներուն եւ տեղապահներուն դէմ եղած մեղադրանքներուն պատճառներն եւ անոնց անհիմն ըլլալը:

3/16 Օգոստոս 1329 (1913)





**ԳԼՈՒԽ II**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ**

Ինչպէս ծանօթ է, հայկ. բարենորոգումներու հարցը միջազգային գետնի վրայ սկսաւ վերարծարծուիլ Պալքանեան պատերազմի ընթացքին: Առաջին շրջանին վերաբերող փաստաթուղթերը ներկայացուցած ենք արդէն «ՆԻՒԹԵՐ»-ու նախորդ՝ 10րդ հատորին մէջ (4րդ գլուխ, էջ 125-161): Ուստի այստեղ կը տրուի հարցին ստացած հոլովոյթը 1913 թ.ի կէսէն սկսեալ:

Յիշեցնենք որ բարենորոգումներու առաջին ծրագիր մը՝ հայկական պահանջներու հիման վրայ կազմուած, խմբագրուած էր Կ. Պոլսոյ ռուսական դեսպանատան գլխաւոր խորհրդականներէն Ա. Մանտելշթամի կողմէ: Այդ ծրագիրը կը նախատեսէր վեց նահանգներու (Կարին, Վան, Պիթլիս, Խարբերդ, Տիարպեքի, Սեբաստիա) միացումով կազմել վարչական մէկ միաւոր, դուրս ձգելով անկէ ծայրամասային այն գաւառները, որ հայաբնակ չէին եւ որ արուեստականօրէն աւելցուած էին հայկական նահանգներուն: Վարչական այդ միաւորը պէտք է ունենար գործադիր իշխանութեամբ լիազօրուած քրիստոնեայ ընդհ. կառավարիչ մը, նշանակուած սուլթանէն՝ մեծ տէրութեանց համաձայնութեամբ. նահանգային օրէնսդիր եւ վարչական խորհուրդները կազմուած պիտի ըլլային հաւասար թիով քրիստոնեայ եւ մահմետական անդամներէ. երաշխաւորուած պիտի ըլլային բնականաբար հայ ազգաբնակչութեան ֆիզիքական ապահովութիւնը, այլեւ Նահանգի արդարադատութեան, կրօնական պաշտամունքի եւ ազգային կրթութեան վերաբերող ազատութիւնները:

Ռուսական պաշտպանութիւնը վայելող այս ծրագիրը, սակայն, անընդունելի պիտի համարէր քրքական շահերու պաշտպանի դերը ստանձնած Գերմանիոյ եւ անոր դաշնակից Աւստրիոյ կողմէ: Բննադատութեան պիտի ենթարկուէին առհասարակ բոլոր յօդուածները, իսկ գլխաւոր առարկութիւնները պիտի կեղորոնանային հետեւեալ երկու կէտերուն վրայ.–

1) Ռուսական սահմանին կից հայկական ինքնուրոյն միաւորի մը ստեղծումը պիտի զօրացնէր Ռուսիոյ ազդեցութիւնը Թուրքիոյ վրայ եւ իբրեւ նախաքայլ, ճամբայ հարթէր անոր ապագայ ծաւալումին Արեւելքի մէջ: Փոխարէնը՝ Գերմանիա պիտի առաջարկէր՝ Տրապիզոնի նահանգի յաւելումով՝ եօթը վիլայեթները բաժնել երկու շրջանի, իւրաքանչիւրը առանձին կառավարիչով:

2) Բարենորոգումներու կիրարկման համար նախատեսուած երոպական հակակշիռ հսկողութիւնը (քոնքրոյ) կը համարուէր ոտնձգութիւն Թուրքիոյ վեհապետական իրաւունքներուն դէմ: Թուրքիա եւս բոլոր կերպով դէմ ըլլալով օտար հակակշիռի՝ կ'ուզէր ամէն ինչ կարգադրուած տեսնել քրքական ներքին օրէնքներով եւ քրքական շրջագծի մէջ: Կառավարութիւնը ինք եւս փութացած էր ներկայացնել իր նախագիծը, որ կ'առաջադրէր զօրացնել նահանգներու ինքնավարութիւնը եւ այդ նպատակով աւելի ընդլայնուած իրաւասութիւններով օժտել վալիները: Այդ ծրագիրը, սակայն, անբաւարար նկատուելով մասնաւոր ուշադրութեան չարժանացաւ: Բարենորոգումներու հարցի քննութեան համար պարտականութիւն տրուեցաւ Թուրքիոյ մայրաքաղաքին մէջ գործող երոպական վեց տէրութեանց դեսպանատուներուն, որպէսզի իրենց ներկայացուցիչներէն կազմուած յանձնախումբի մը միջոցաւ քննարկման ենթարկեն ներկայացուած (ռուսական) ծրագիրը: Այս յանձնախումբը 1913 թ.ի Յուլիս ամսուն Պոլսոյ Ենիքէյ արուարձանին մէջ գումարեց յաջորդական ութ նիստեր. հակադիր կողմերու տեսակէտները բաժնուած էին եւ կարելի չեղաւ վերջնական եզրակացութեան մը յանգիլ. բայց եւ այնպէս յանձնախումբը հարկ տեսած էր շարք մը առաջարկներ կատարել գործադրելի բարեկարգումներուն մասին: Վերջին այս պարագան յատկանշական էր այն իմաստով, որ բոլոր տարակարծութիւններով հանդերձ, Երոպան խնդրոյ







առարկայ չէր դարձներ այլևս բարենորոգմանց անհրաժեշտությամբ: Հոս պետք է յիշատակել այն եռուն գործունեությունը զոր կը ծառայեր հայկական կողմը, Կ. Պոլսոյ Պատրիարքարանով, Պօղոս Նուպարի գլխավորած պատուիրակութեամբ, բժ. Յ. Չաւրեանի եւ այլ բազմաթիւ տարբեր ճանապարհներով՝ երոպական մայրաքաղաքներուն շահագրգռութիւնը արթնցնելու համար հայկ. հարցին շուրջ:

Դեսպանական յանձնախումբի ձախողութենէն ետք, բարենորոգումներու հարցով բանակցութիւնները վերսկսան այս անգամ ուղղակի Ռուսիոյ եւ Գերմանիոյ միջեւ: Հասկնալի է որ իր շահերէն մեկնելով Ռուսիա մասնաշատուկ եռանդ ցուցաբերէր՝ աշխուժացնելու գործընթացը եւ յաջող աւարտի հասցնելու իր նախաձեռնութիւնը: Գերմանիա սկիզբը դժկամ, բայց այն պահուն երբ զգաց որ կարելի չէր այլևս շրջանցել հայկական նահանգներու բարեկարգութեան հարցը, ձեռնամուխ եղաւ գործին մէջ, մանաւանդ որ Թուրքիոյ արեւելեան այդ շրջաններուն մէջ ինք եւս կը հետապնդէր, բացի զինուորականէն, նաեւ տնտեսական ծրագիրներ, որոնց իրագործման համար կենսական նշանակութիւն կրնար ունենալ հայ տարրին բերելիք նպաստը. ուստի եւ հարկ չկար կորսնցնելու հայութեան համակրանքը:

Այնուհետեւ երկար, շուրջ վեցամսեայ յոգնեցուցիչ սակարկութիւններ պետք եղան որպէսզի Ռուսիա եւ Գերմանիա վիճելի հարցերուն շուրջ համաձայնութեան մը գան եւ զայն ընդունիլ տան թուրք կառավարութեան: Փաստօրէն գերմանական հաստատակամութեան եւ թրքական յամառութեան առջեւ ռուսական դիւանագիտութիւնը ստիպուեցաւ երթալ այնպիսի զիջումներու, որոնք մեծ չափով կը նուազեցնէին բարենորոգումներու առաջին ծրագրին տարողութիւնը: Ի վերջոյ, 1914 թ. Յունուար 26/Փետրուար 8ին Կ. Պոլսոյ ռուսական դեսպանատան գործակատար Կուլքելիչի եւ Օսմ. Թուրքիոյ մեծ վեզիր Սայիտ Հալիմի կողմէ ստորագրուեցաւ Բարենորոգումներու ռուս եւ թուրք համաձայնագիրը:

Ընդհանուր գծերու մէջ կը նախատեսուէր Արեւելեան Անատոլիի վեց նահանգներու բաժանումը երկու շրջաններու, իւրաքանչիւրին գլուխը երոպացի ընդհ. քննիչ մը՝ նշանակուած սուլթանին կողմէ, մեծ տէրութեանց առաջարկած թեկնածուներէն ընտրուած: Առաջին շրջանը կազմուած էր Տրապիզոնի, Էրզրումի եւ Սեբաստիոյ վիլայեթներէն, երկրորդը՝ Վանի, Պիթիսի, Տիարպէթիի եւ Խարբերդի նահանգներէն, առանց որ անոնցմէ անջատուէին ոչ-հայաբնակ գաւառները: Ընդհ. քննիչներու վերահսկողութիւնը պիտի տարածուէր իրենց շրջանի վարչական, դատական, ոստիկանական եւ այլ մարզերուն վրայ: Յատուկ յօդուածներով կը կարգաւորուէին նահանգային խորհուրդներու եւ վարչութեանց, պաշտօնէութեան (իսլամ եւ քրիստոնէայ) կազմի, զինուորական ծառայութեան, ազգային կրթութեան, լեզուի եւ այլ մարզերու վերաբերող խնդիրները (տեսնել էջ 46-47):

Այս բոլորը հեռու էր անշուշտ հայկական նահանգները վարչական ինքնավարութեամբ օժտելու սկզբնական ծրագրէն, եւ այդ իսկ պատճառով անգամ մը եւս յուսախաբութիւն պիտի պատճառէր հայկական շրջանակներուն: Բայց եւ այնպէս, ան նկատուեցաւ յուսատու առաջին քայլ մը Արեւմտահայաստանի մէջ կարգ ու կանոն հաստատելու, անոր ապագայ զարգացման նախադրեալներ ստեղծելու տեսակէտէն: Կը մնար անշուշտ համաձայնագրի գործադրութեան հիմնական խնդիրը, որու նկատմամբ արդէն առաջին օրերէն ընդհանուր վերապահութիւն կը տիրէր, հաշուի առնելով թրքական ծանօթ խաղերն ու խուսանատումները: Արդարեւ ընդհ. քննիչներու նշանակումէն սկսեալ մինչեւ անոնց իրաւասութեանց ու թոշակներու ճշդումին, եւ այլ կարգի մանրամասնութեանց շուրջ յարուցուած դժուարութիւնները (ֆէս կրելու պարտադրանք եւայլն) նոր վեց ամիսներ պիտի խլէին ու վրայ հասներ ընդհանուր պատերազմը: Վերջին այս առիթը իսկոյն օգտագործելով թուրք կառավարութիւնը խորհուրդ տուաւ նշանակուած քննիչներ Հօֆին եւ Վեստենենկին որ իրենց տունները վերադառնան:

Հայկական հարցի բարենորոգումներու էջը, բացուած 1878 թ. Պերլինի 61րդ յօդուածով, կը փակուէր այս ձեւով ընդմիջտ:



Փաստ. 1277-63

### Ա 1.– Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ, Պոլիս ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄԱՍԻՆ

21 Հոկտ. 1913, Պարիզ

Սիրելիք,

Գրում եմ դարձեալ նոյն հին հասցէով: Հաղորդում եմ Պօղոսի հետ նոր ունեցած երկար գրոյցի համառօտ պարունակութիւնը: Շատ հետաքրքրական է ամբողջ գրոյցը, բայց հնարաւորութիւն չունեմ երկար գրելու: Մի քանի օր առաջ տեսնուեց Սազ[անով]ի<sup>1</sup> հետ, որին երկար նամակ էր գրել Vichy<sup>2</sup>, շնորհակալութիւն է յայտնել արածի համար եւ այլն: Սազ[անով]ը անմիջապէս – դեռ նախքան Պիչոնին<sup>3</sup> տեսնելը – հեռագրում է Պօղոսին եւ rendez vous<sup>4</sup> տալիս: Մի ժամի չափ խօսում են. Պօղոսը պատմում եւ պարզում է նրան ինչ որ պէտք է: Ծանրանում է մէկ կէտի վրայ. – ֆինանսական ճնշումի. մինիստր դրական խոստում չի տալիս. ինդիքը delicate<sup>5</sup> է, ասում է: Այնուհետեւ խոստանում է խօսել յատկապէս այդ մասին Պիչոնի հետ: Աւելացնում է, որ իր Բերլին գնալու գլխաւոր նպատակն է հայկ. ինդիքը: (Այժմ դրա գլխաւոր նպատակը թերեւս դառնայ ակտիւիզան):

Հետեւեալ օրը Պօղ[ոս]ը տեսնում է Պիչոնին. վերջինս շնորհաւորում է նրան Գերմ[անիա]յում առաջ բերած revirement-ի<sup>6</sup> համար (տարակոյս չկայ, որ այդ բանը մեծ մասամբ պարտ ենք Պօղոսին): Պիչոնը եւս խոստանում է մտածել ֆինանսական ճնշման պարագայի մասին: Երկու մինիստրները խորհրդակցում եւ հետեւեալ օրը Փաշան հասցնում է ինձ Times-ի<sup>7</sup> պարիզեան թղթակցի հեռագիրը, որ եւ կը կարդաք անշուշտ. այնտեղ թղթակիցը (որն իր տեղեկութիւններն առել է Սազ[անով]ից եւ Պիչոնից) յայտնում է, որ երկու դաշնակիցները համաձայնութեան են եկած՝ ֆինանսական

ճնշում գործ դնել Թ[ուրքիոյ] վրայ՝ հայկական ռեֆորմները ի կատար ածելու համար:

Սազ[անով] Բերլինում պիտի աշխատէ ընդունիլ տալ նախկին կոնսակցական ծրագրի մի քանի մերժուած կէտերը:

Պօղոսը ասում է, որ Ջավ[իդ]ի<sup>8</sup> Բերլին գնալուց բնաւ երկիւղ չկայ. նա արդէն լուր ունի, որ Բերլինի կաբինէն<sup>9</sup> լաւ ընդունելութիւն չի արել Ջավ[իդ]ին:

Դուք այդտեղից շարունակեցէք «մշակել» Լեպ[ս]ի<sup>10</sup>. մեծ, անգնահատելի ոյժ է:

Վիզէնից<sup>11</sup> քանի օր է լուր չունիմ: Երեւի Պետերբուրգ է անցել:

Կոնտրոլը, ըստ արդի ծրագրի, en dernière instance<sup>12</sup> ընկնելու է հիւպատոսների վրայ. իսկ դա, ըստ իս, մեծ անպատեհութիւն է. եւս առաւել՝ որ յաճախ անպիտան տիպեր են լինում այդ հիւպատոսները:

Այսօր Բերարը<sup>13</sup> ծանօթացրեց ինձ իր մօտ Bapst-ի հետ, որ մի քանի օրից Պոլիս կը գայ: Բերար երկարօրէն խօսել է հետը. նա կը տեսնուի եւ Պօղոսի հետ:

Պօղ.ը ինդրում է ձեզ, որ Ջօհրապի եւ այլոց հետ աշխատէք par persuasion<sup>14</sup> ազդել Թալէաթի վրայ, որպէսզի խոչընդոտներ չդնէ... քանի որ Թուրքիոյ փրկութիւնն իսկ դրա մէջ է:

Նիկոլի<sup>15</sup> վիճակից լուր տուէք, անհանգիստ ենք ձիւտ է, որ մերձ ի մահ տարել են կովկաս:

Այստեղ էր Աբրահամը (Դաստակեան) մի քանի օր. այստեղ ամուսնացաւ մի ջահել հրէուհու հետ, որ իր հաշուով բժշկութիւն է աւարտել Պարիզում: Խոստացաւ աշխատել Բագլում, որ այս թերթը<sup>16</sup> ապրեցնենք գոնէ 6-8 ամիս եւս. (Վաչ[եան]ը իր 2000-ը ղրկելուց յե-

1.- Սազանով. Ռուսիոյ արտաքին գործոց նախարար:  
2.- Վիչի. քաղաք կեդրոնական Ֆրանսայի մէջ:  
3.- Պիչոն. Ֆրանսայի արտաքին գործոց նախարար:  
4.- Ֆրանսերէն. ժամադրութիւն:  
5.- Ֆրանսերէն. փափուկ:  
6.- Ֆրանսերէն. շրջադարձ:  
7.- Թայմզ. լոնտոնեան ազդեցիկ օրաթերթ:  
8.- Ջավիդ. Թուրքիոյ էլեւմտական նախարար:  
9.- Կաբինէ. դահլիճ, կառավարական կազմ:  
10.- Եռիւս Լեպսիոս. գերմանացի ծանօթ հայասէր, նախա-գահ՝ գերման-արեւելեան միաբնակարան կազմակերպութեան,

ապա նաեւ գերման-հայկական ընկերութեան:  
11.- Վիզէն. կոնսակցական ծածկանուն տոքթ. Յակոբ Չաւրրեանի:  
12.- Ֆրանսերէն. ի վերջոյ իմաստով:  
13.- Վիկտոր Բերար. ֆրանսացի քաղաքական գործիչ, բարեկամ Դաշնակցութեան:  
14.- Ֆրանսերէն. համոզելու նպատակով:  
15.- Խօսքը կը վերաբերի Նիկոլ Դումանին:  
16.- Խօսքը կը վերաբերի Pour les peuples d'Orient թերթին, որ 1913-14-ին կը հրատարակուէր փոխարինելու համար նախկին Pro-Armenia-ն:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

տոյ, լուել է այժմ. իմ ու Աւետիքի<sup>17</sup> նամակները, վաղուց գրած, անպատասխան են մնում: Աբրահ(հա)մի խոստումներն էլ գիտէք թէ որքան հեշտութեամբ են տրւում եւ որքան դժուարութեամբ իրագործւում:

Աւետիքը մի վայրկեան որոշեց Ամերիկա գնալ. ետ նորէն հիւանդացաւ եւ այժմ Montreux է: Բժիշկները ասում են՝ Եզրիպտոս գնայ:

Համազասպը<sup>18</sup> Լոնտոնից եկաւ, վաղը կը մեկնի դէպի ձեզ: Ինչքան թեթեւ ու տզան է եղել անիրաւը: Աշխատէք մի լաւ տեղ .....<sup>19</sup>: Իբրեւ զինուոր կարող է շատ լաւ լինել, բայց Մարմնի մէջ enfant terrible<sup>20</sup> կը լինի: Ես մի փոքր յանդիմանեցի իրեն, որովհետեւ Աւետիքին ժընեւում խոստացել էր ուղղակի դէպի ձեզ գալ, բայց յետոյ ճամբան փոխել է եւ ինչ որ պատրուակներով խփել դէպի Պարիզ ու Լոնտոն: Չէի տրտնջալ, ի հարկէ, եթէ չգտնուէինք դրամական այսպիսի ճգնաժամում:

Ինչո՞ւ այդքան ժլատ էք թղթակցութեան մէջ. ի՞նչքան դժուար բան է եղել մէկին յանձնել այդ պաշտօնը: Խաչատուրը<sup>21</sup> ամէնից եռանդունն էր նամակագրութեան մէջ, բայց այժմ նա էլ մոռացել է մեզ:

Սիմոն ջան<sup>22</sup>, անցեալ նամակիդ երկու՝ ըստ երեւոյթին կարեւոր կէտերը մնացին անընթեռնելի, այնքան

չտապ էիր գրել: Մի երկու ընկեր ազատ ձգեցէք դպրոցից ու դասերից եւ զբաղեցրէք զուտ կազմ[ակերպ]ական գործերով, թէ չէ սա ինչի՞ է նման: Վան, էրզրում եւ այլն, ինչպէս տեսնում եմ, մեր ամենակարեւոր ընկերներն կլանւում են իրենց դպրոցներով: Որտե՞ղ է Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը:

Ի՞նչ է ձեր սպաւորութիւնը, ձեր կարծիքը վերջին պաշտօնական սպանութիւնների մասին (Շաքիրի, Միր Մհեր...)<sup>23</sup> – Անշուշտ թող փչելու համար է...

Շարունակո՞ւմ էք արդեօք ձեր յարաբերութիւնը Թալէաթների հետ:

Սպասում ենք դեռ Բրիւսէլի Ինտերնացիոնալի հարցման պատասխանը: Եթէ մոռացել էք, կարդացէք նախորդ նամակը:

Անշուշտ որեւէ մէկը ձեզանից ճանաչում է դոկտոր Հասան Բիզա բէյին:

Մարը<sup>24</sup> դեռ չգրեց, թէ ուր պէտք է փնտուել Բէբէլի նամակը հայկ. հարցի եւ Գերմ[անիոյ] քաղաքականութեան մասին, որ կ'ուզէի հրատարակութեան տալ մի մեծ թերթում:

Համբոյրներ բոլորիդ եւ առողջութիւն:  
**ՄԻՔԱՅԷԼ**

17.- Ահարոնեան Աւետիս:  
18.- Խօսքը Սրուանձտեանց Համազասպի մասին է, որ փախուստ տալով Սիպերիոյ կալանավայրէն անցած էր Երրոպա:  
19.- Անընթեռնելի բառ:  
20.- Ֆրանսերէն – սուկալի, արտակարգ տղայ:

21.- Մալումեան Խաչատուրը, Ալմուհին:  
22.- Չաւարեան Սիմոն:  
23.- Քիւրտ ցեղապետներ, ծանօթ իրենց հայահալած արարքներով:  
24.- Տէր Մարտիրոսեան Միքայէլ:





Փաստ. 61-77

Ա 2.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ

Պոլիս, 18/31 նոյ. 1913

Ընկերներ,

Կը հաստատենք մեր Նոյ. 11/24 թուակիրը:

Ինչպէս կը տեղեկանաք թերթէն ալ, կացութիւնը կը կնճռոտի հետզհետէ: Սեւ նշանները կը բազմանան օրէ օր: Թերթին<sup>25</sup> եկած սպառնազրէն զատ, ուր մահ կը սպառնան մեզի, Պատրիարքին, Նուպար փաշային եւ բովանդակ ազգին, նոյնիմաստ նամակ մըն ալ ղրկուած է անձնապէս Զաւէն Պատրիարքին: Այս քանի մը օր- ուան միջոցին, շնորհիւ թուրք եւ առանձնապէս իթթի- հատական թերթերու մղած խուժանավար եւ թունալից պայքարին, նոյնիսկ ջարդի նախապատրաստական երե- ւոյթներ ալ կը դիտուին: Թաղերու մէջ գիշերային խումբեր կը սլքտան հայերէն եւ առհասարակ օտարա- լեզու ազգերը սեւ ներկելով, մոլեռանդական բացա- զանչութիւններ արձանագրելով, եւն.: Երէկ ալ կար- միր ներկած էին Մաքրիգիւղի<sup>26</sup> հայ եւ յոյն եկեղեցիները:— Այս բոլորին իմաստն այն է որ ահաբեկէն ժողո- վուրդը եւ ըսել տան հայերուն՝ թէ մենք «կոնտրոլ» չենք ուզեր: Արդէն այս իմաստով խօսքեր ալ եղած են պաշտօնական շրջանակներու մէջ: Իսկ կոնտրոլի խըն- դիրը, ինչպէս գիտէք, հասած է ամէնէն փափուկ շրջա- նին: «Լինել-չլինելու» հարց մը, պարզապէս: Երիտ- թուրքերը ամէն գնով կը մերժեն կոնտրոլը, պահանջե- լով որ ընդհ. քննիչներու խորհրդակցանքն ալ օսման- եան պաշտօնեաներ ըլլան: Այս մասին գրած էինք ար- դէն: Խնդիրը կը քաջջուրի այս վիճակին մէջ, եւ ամէն բան կախում ունի արտաքին, բայց մանաւանդ ներքին ճնշումէ մը, իրական ոյժէ: Այլապէս, անգամ մըն ալ պիտի կրկնուի հին պատմութիւնը:

Բնականաբար, մեր ամէնէն մեծ հոգն եղած է ինք- նապաշտպանութիւնը: Ֆոնտի համար Ռուսաստան կը պտտի Վահաբը<sup>28</sup>, որ կարեւոր գումար մը կը նախատե- սէ, արդէն մաս մը ղրկած ըլլալով: Այսօր-վաղը Պերլի- նէն կը սպասենք ընկեր Վիգէնին<sup>11</sup>, որ անմիջապէս պի- տի երթայ Վահաբի մօտ, անոր օժանդակելու համար:

Միւս կողմէ, Եւրոպայէն լուր առինք թէ Փարիզի եւ Լոնտոնի մէջ տրամադրութիւնները շատ լաւ են դէպի կուսակցութիւնը եւ հանգանակութիւն մը անպայման կը յաջողի: Արդէն իսկ գրած ենք երկու յայտնի ընկեր- ներու, որպէսզի ստանձնեն այդ հոգը: Ծուտով կը սպա- սենք պատասխանի:

Ինչ կը վերաբերի ձեր գործունէութեան, հարկ չենք սեպեր աւելորդ անգամ մըն ալ շեշտել՝ թէ ընկերները պարտաւոր են կրկնապատկել իրենց ճիգերը, լարել իրենց բարոյական կորովը,— որպէսզի կուսակցու- թիւնն իր տրամադրութեան տակ ունենայ լայն միջոց- ներ: Մենք գիտենք որ Ամերիկան ամենագորաւոր եւ ապահով կուուան մը եղած է կուսակցութեան համար, յանձն առնելով բազմազան գոհողութիւններ: Բայց մենք այսօր ստիպուած ենք դարձեալ իր ուշադրութիւ- նը հրաւիրել ներկայ կացութեան մասին, թելադրել որ կարելին ընեն մեր նիւթական ոյժը բազմապատկելու: Հազար ափսո՛ս, եթէ միայն զրամի համար պիտի փախցնենք շատ նպաստաւոր պատեհութիւններ:

Ընկեր Վրացեանը փոխարինելու համար, այսօր գրե- ցինք Ս. Արարատեանին որ ամէն յարմարութիւն ունի: Կը սպասենք պատասխանի: Բայց ինչպէս գրած էինք նախորդով ալ, պիտի խնդրենք իրմէ որ գործը չլքէ եւ մնայ մինչեւ յառաջիկայ ամառ — Ը. Ընդհանուր ժո- ղով: Ամէն պարագայի մէջ, գարունէն առաջ պէտք չէ հեռանայ: Չենք կարծեր որ անյաղթելի դժուարութիւն- ներ ունենայ:

Ընկերական բարեկներով  
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

Յ. Գ.- Նամակը փոստին յանձնելու ատեն, իմացանք որ կառավարութիւնը պաշտօնապէս փակեր է Ատա- փազարի Հ.Յ.Դ. ակումբը: Նոր ախտանշա՞ն մը ար- դեօք...

25.- Խօսքը «Ազատամարտ»ի մասին է:  
26.- Մաքրիգիւղ, Մաքրիքեօյ. Պոլսոյ հայաբնակ թաղամասե- րէն:

27.- Կոնտրոլ — հակակշիռ, այսինքն հայկական բարենորո- զումներու գործադրութիւնը երաշխատող եւրոպական հակա- կշիռ, որուն բուն կերպով կ'ընդդիմանային թուրքերը:  
28.- Վոսմեան Արշակը:





Փաստ. 1277-91

Ա 3.- Ս. ԱՐԱՐԱՏԵԱՆԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Փարիզ, 30-12-1913

Սիրելի ընկերներ!

Շատ նպատակաւոր պայմաններում տեղի ունեցաւ դաշ[նակացական] Ուս. V համագումարը<sup>29</sup>, որի տուած որոշումները գործնական լինելու եւ իրական արդիւնքներ տալու մեծ շանս ունեն:

Ուսանող ընկերների մէջ մեզ համար շատ աննպաստ տրամադրութիւններ են նկատուում դէպի մեր բարձրագոյն մարմինները, որոնց կողմից իբր թէ մի տեսակ անտարբերութիւն է նկատուում. օր[ինակ] նամակները մնում են անպատասխան, յաճախ տեղեկութիւններ չեն տրուում իրանց եւայլն: Այդ հետաքրքրութեան բուն պատճառը, անշուշտ, ընկերների գիտակից վերաբերմունքի մէջ պէտք է փնտռել, մի երեւոյթ, որ դրական է իր ընդհանրութեան մէջ:

Օգտուելով առիթից, եղանք Բերարի<sup>13</sup> մօտ եւ մօտ մի ժամուայ խօսակցութեան արդիւնքն անհրաժեշտաբար յայտնում ենք Ձեզ ի գիտութիւն, գտնելով շատ լուրջ ու մեզ համար վերին աստիճանի կարեւոր կարծիքներ:

Բերարի մտքերի ամփոփումը հետեւեալն է.

1- Պոլսոյ հրամանատար ձեմալ բէյի յանձնարարութեամբ Փարիզի զինուորական կցորդ Ֆուատ բէյ տեսակցութիւն է ունեցել Բերարի հետ, ուզել է իմանալ հայասէրների բուն նպատակը եւ յայտնել, որ Թուրքիոյ համար բացարձակապէս անընդունելի է կոնտրոլի սկզբունքը:

2- Բերար բացատրել ու հասկացրել է Ֆուատին (թում է որ իրան յաջողուել է հասկացնել) որ առանց հայկ. բարենորոգումների իրականացման Թուրքիան պիտի ապրի միայն երկու ամիս: Այս յայտարարութիւնը թողել է սոսկալի տպաւորութիւն Պոլսի շրջանների վրայ եւ ձեմալ պէյ չհաւատարկ Ֆուատի տեղեկութիւններին, անձամբ նամակ է ուղղել Բերարին ու ստացել դրական պատասխան: Վերջին բանակցութիւն-

ներն ու Պոլսից ստացուող պատասխանը Բերար վերագրում է այդ խօսակցութեան:

3- Բերար կասկածում է, որ թուրքերը համաձայնուէն կոնտրոլի հետ: Նա գրեթէ չի հաւատում Ֆինանսական ճշումին: Ինչ որ կարեւորն է, նրա խօսակցութեան ընդհանուր ոգին այնքան յոռետես էր, նրա եզրակացութիւնը այնքան յստակ էր, որ նա անկասկածելիօրէն երկիւղ յայտնեց հաւանական կոտորածի մասին: Նա պնդում էր որ միակ փրկութիւնը ինքնապաշտպանութեան մէջ է եւ այդ առթիւ շատ հետաքրքրուեց: Պիտի կարողանա՞յ արդեօք հայ ժողովուրդը դիմադրել կոտորածի [թէ] ոչ. այս հարցը նրան զբաղեցնում է աւելի քան սպասելի էր: Մեր հարցումին թէ կա՞ն արդեօք դէպքեր, նա պատասխանեց անորոշ ձեւով, բայց այնպիսի տպաւորութիւն թողեց, որ ինքն անձամբ համոզուած է:

Նա յայտնեց, որ անձամբ կը համոզի փաշային<sup>30</sup>, քանի որ վերջինը դէմ է եղած այդ գաղափարին: Խորհուրդ տուեց մեր կողմից եւս փաշային յայտնուի մի անգամ եւս, «այլապէս սոսկալի է հայասէրներու պատասխանատուութիւնը»: Մենք այն տպաւորութիւնը ստացանք, որ թրքական շրջանների ներկայացուցիչները յստակօրէն հասկացրել են կոտորածի հաւանականութիւնը:

Բերարի համար կոտորածը անխուսափելի է թւում եւ այն դէպքում, երբ բարենորոգումների սկզբունքը չընդունուի: Այս անգամ պատճառը ուսական ինտրիկները պիտի լինեն, որի մէջ նա չէ կասկածում՝ իր ունեցած տեղեկութիւնների վրայ յենուելով:

Մեզ թւում է, որ աւելի քան լուրջ ուշադրութիւն պիտի դարձնել այդ յայտարարութիւնների վրայ եւ այդ նպատակով էլ յայտնում ենք ձեզ ի տեղեկութիւն:

Ընկերական բարեկներով  
Ս. ԱՐԱՐԱՏԵԱՆ

Պեռարը յատկապէս ըսաւ որ Պոլսի պատասխանատու ընկերներուն իմացնենք այս բոլորը, իբրեւ խղճի պարտք:

Բ. ՇԱՊՀԱԶ

29.- Խօսքը կը վերաբերի Փարիզի մէջ գումարուած եւ նոր արտած Հ.Յ.Դ. Երոպայի Ուսանողական միութեան Հինգերորդ համագումարին:

30.- Խօսքը կը վերաբերի Պօղոս Նուպար փաշային, որ դէմ արտայայտուած էր ինքնապաշտպանութեան նպատակով ձեռնարկուելիք հանգանակութեան:







Փաստ. 116-70

### Ա 4.- ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

*Սիրելի ընկերներ!*

Քանի օր առաջ հաղորդեցինք ձեզ Վ. Բերարի<sup>13</sup> հետ ունեցած խօսակցութեան արդիւնքը՝ նրա մատնանշած վտանգները:

Համաձայն իր բաղձանքին այսօր եւս առիթ ունեցանք իր մօտ լինելու: Տրամադրութիւնը նախկինն է եւ այսօր աւելի քան համոզուած շեշտով մօտաւոր կոտորածի հեռապատկերն է նկարագրում:

«Պիտի չափաւորել հայկական պահանջները եւ ուժեղացնել հայ ժողովրդի դիմադրական կարողութիւնը» – ահա նրա կարծիքը, օրուայ նշանաբանը: Ըստ Բերարի թէ՛ բարենորոգումների իրագործման եւ թէ՛ անիրագործման դէպքում, կոտորածը անխուսափելի է: Նա խօսում է պարզ, աներ[կ]դիմի. նման լաւատեղեակ մարդկանց բերանում այդ խօսքերը ծանրակշիռ բնոյթ ունին եւ մեզ բերում են այն եզրակացութեան, որ նա անհերքելի տեղեկութիւններ ունի թէ ռուսական եւ թէ տաճկական արժանաւատաւ աղբիւրներից:

Եթէ ընդունում ենք այդ հայասէրի անկեղծութիւնը (որի մէջ մենք չենք կասկածում) մեր ժողովրդի ճակատագիրը նորէն վտանգի մէջ է: Ի՞նչ պիտի անել ներկայ մոմենտում, ի՞նչ միջոցների պիտի դիմել այդ ահռելի սարսափները գէթ նուազացնելու համար:

Անբաւարար են մեր ունեցած միջոցները. Վահաբի<sup>28</sup> խաղաղ գործունէութիւնը չի տալիս եւ չպիտի տայ ցանկալի արդիւնքը: պատասխանատուութեան խոշոր մասը նորէն կ[ուսակցութիւն]եան վրայ է ծանրանում: Որքան տեղեկութիւններ ունենք ու որքան յայտնեց ուսա-

ն[ողութեան] համագումարը, Պոլսի գործունէութիւնը չի համապատասխանում օրուայ պահանջին ու կացութեան: Միաժամանակ պայքարելով հայերիս ազգային ու քաղաքական պահանջների համար, պիտի՞ մոռանանք արդեօք էականը – ժողովրդի գոյութեան, սոսկ ֆիզիքականի ապահովութեան հարցը:

Մեր ցանկութիւնն է, որ այսօր մեր բովանդակ ջանքերը թափուեն այդ հիմնական աշխատանքի վրայ, եւ եթէ գոհողութիւնն, որ պակասում է, համեստ ընկերներս տրամադրում ենք մեր բովանդակ ոյժերը՝ որեւէ բանով մասնակցելու համար այդ ճակատագրական մենամարտին:

Միակ միջոցն է – շուտավոյթ հրաւիրել Խորհուրդը<sup>31</sup>, վերակազմել Փոքորիկը<sup>32</sup> եւ անմիջապէս անցնել գործի: Թւում է, որ դեռ ուշ չէ. գէթ այժմեանից սկսենք այդ աշխատանքը, այլապէս շատ-շատ ուշ պիտի լինի եւ տուժողը նորէն հայութիւնը պիտի լինի, իսկ պատասխանատուն՝ մենք:

Ձեր ուշադրութիւնը հրաւիրելով այս ձեռնարկի վրայ, որին տրամադրում ենք մեր համեստ ոյժերը եւ բացառապէս ինքնապաշտպանութեան ու Փոքորիկի համար:

*Ընկերական ջերմ բարեկներով՝*

**Ս. ԱՐԱՐԱՏԵԱՆ  
Ռ. ԻԻԶԲԱՇԵԱՆ  
Բ. ՇԱՀՊԱԶ  
Մ. ՂԱԶԱՐԵԱՆ  
Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ**

31.- Հ.Յ.Գ. Բիւրոներու եւ Պատասխանատու Կ. կոմիտէներու ներկայացուցիչներէն կազմուած վերին մարմին, որ Ընդհ. ժողովները բաժնող ժամանակաշրջանին կը գումարուէր հրատապ խընդիրներու առթիւ որոշում կայացնելու համար:

32.- Փոքորիկ. բռնի հանգանակութեան ձեռնարկ:

**Յ. Գ.- Նոյն հարցի մասին գրեցինք նաեւ Հայաստ[անի] բիւրոյին:**

**ՆՈՅՆՔ**







Փաստ. 116գ-1

Ա 5.- ԿԱՆԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

4-1-1914, Փարիզ

Ի նկատի ունենալով այն վերջին փուլը, որուն մէջ մտած է հայկական բարենորոգումներու հարցը եւ որոշելու համար այդ բարենորոգումներուն հետ կապուած յոյսերու իրական արժէքը, այսօր հաւաքական տեսակցութիւն մը ունեցանք արեւելեան հարցի ամէնէն հմուտ եւ ամէնէն լաւատեղեակ անձնաւորութիւններէն՝ հայոց վաղեմի բարեկամ պ. Վիկտոր Պէռարի<sup>13</sup> հետ: Այն յայտարարութիւնները գորս այդ Պարոնը բրաւ մեզ մեր դատի այս ճգնաժամանային ընկերին, այնքան խորապէս տպաւորիչ էին, որ մենք անհրաժեշտ անյետաձգելի պարտք կը համարենք մեզ զանոնք դնել հասարակութեան աչքերուն առաջ, որպէսզի մեր ժողովուրդի բոլոր խաւերը — այնքան ղեկավարները, որքան ղեկավարողները — առնեն անոնցմէ իրենց ինկող ազդարարութեան բաժինը եւ ըստ այնմ ճշդէն իրենց վերաբերող կէտերն ու անոնցմէ բխող պարտականութիւնները:

Պ. Վիկտոր Պէռարի կարծիքով՝ Նախ եւ առաջ պէտք է, որ հայերը իրենց ուշադրութեան կենտրոնական առարկան ընեն բարենորոգումներուն շուրջ կատարուած դիւանագիտական բանակցութիւնները: Բանակցութիւնները՝ ըստ Պ. Վիկտոր Պէռարի, կը կատարուին անկախաբար հայերէն եւ եթէ ունեցան որեւէ հետեւանք, հայերը այդ կ'ընդունին: Բայց, անգամ մը եւս, հայերը իրենց մտազբաղումին առաջին առարկան պիտի չընեն այդ բանակցութիւնները եւ այլամերժօրէն պիտի չվերաբերուին անոնց, որովհետեւ, պարզ է, հնարաւորութիւն չունին ազդելու, ներգործական դեր խաղալու իրենք, այդ բանակցութիւններուն մէջ:

Հայերը, ընդհակառակն, պիտի գիտնան, որ ո՛չ ոք, ո՛չ իսկ Ռուսիան իրենց վրայ չի նայիր իբրեւ հայերու — իբրեւ ազատութեան ձգտող ժողովուրդի մը: Հայերը ռուսներու համար առաջխաղացումի, դէպի հարաւ էջքի գործիքներ են միայն եւ այդքան միայն:

Հիմա հայերը պիտի գիտնան պարզապէս, հաստատապէս, որ կը գտնուին երկայրի վտանգի մը առջեւ, այն է կոտորածը յամենայն դէպս, այնքան բարենորոգումներու ներմուծման, որքան զինման պարագային: Վիժման պարագային բացայայտ է, կոտորածներ՝ մեծ թէ փոքր միշտ տեղի կ'ունենան եւ այդ է պատճառը, որուն համար կը պահանջեն բարենորոգումները: Բայց ներկայ պարագային առաւել քան հաւանական է, որ անոնք տեղի ունենան գլխաւորաբար օտար ազդակներու զրդումով:

Իսկ բարենորոգումներու, նոյնիսկ իսկ եւրոպական հսկողութեամբ հակակշռուած բարենորոգումներու պարագային, կոտորածներն պիտի սարքուին անոնց ձեռքով, որոնք պէտք ունին ապացուցանելու, թէ բարենորոգումները եւ մասնաւորաբար հակակշիռը ատելի են հայկական նահանգներուն մէջ ապրող իսլամներուն:

Իբրեւ եզրակացութիւն, ըստ Պ. Վիկտոր Պէռարի, պէտք է հայերը կազմակերպեն իրենց ինքնապաշտպանութիւնը, եւ այդ պէտք է ըլլայ իրենց այսօրուայ մեծագոյն, առաջնագոյն մտահոգութիւնը:

Եթէ այդ չըմբռնեն հայերը, գոնէ պէտք է ըմբռնեն այն, որ պատահական որեւէ աղէտի հանդէպ իրենք պիտի մնան միակ յանցաւորն ու միակ տուժողը:

Ես ո՛չ միայն, աւելցուց Պ. Պէռար, հայասէր եմ, այլ եւ թրքասէր: Եւ թրքասէր եմ ոչ թէ զգացական — սանթիմենթալ — պատճառներով, այլ անոր համար, որ ամէն բանէ առաջ Ֆրանսացի եմ եւ Ֆրանսայի շահը կը պահանջէ օսմանեան կայսրութեան պահպանումն ու ամրապնդումը: Հայերը լաւ, յստակ տեսնելով իրենց կացութիւնը, այնպէս որպէս եւ պարզեցի, եւ գործելով ըստ այնմ, ծառայած կ'ըլլան թէ՛ իրենց եւ թէ՛ թուրքիոյ, անկասկած շատ աւելի խոր եւ շօշափելի կերպով քան այս վերջնային անհեռատես, անհաշիւ ղեկավարները:

Այս կարգի որոշ ազդարարութիւններ չեղան հայ ժողովուրդին ո՛չ 95-96 թուականներուն, ոչ ալ 1909-ին, այնպէս որ այն ժամանակ ունէինք մասամբ անակնկալի չբեղանքը: Բայց հիմա, որ ունինք թէ՛ անցեալի օրինակը եւ թէ՛ այս նախօրօք եւ ուժեղ կանխագգուշացումները, եթէ դարձեալ մենք մեզ նետենք ոչխարներու նման ջարդարարներու ետխաղաններուն տակ, այդ կը նշանակէ թէ մենք ատոր միայն արժանի ենք...

«Ազատամարտ»ի թղթակից՝ Բ. ՇԱՀՊԱԶ  
«Հորիզոն»ի թղթակից՝ Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ  
«Բազուկի Ձայն»ի թղթակից՝ Ս. ԱՐԱՐԱՏԵԱՆ

Յ.Գ.- Պատճէնը ուղարկուած է «Հորիզոն»ի, «Բազուկի Ձայն»ի եւ «Հայրենիք»ի խմբագրութեանց:



Փաստ. 62-3

Ա 6.– Ա. ՎՌԱՄԵԱՆԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Ս. Պ[ետերբուրգ] 11/24 Յունուար 1914

Ընկերներ,

Կը հաստատեմ իմ 3/16 Յունուար նամակս, զոր ցարդ ստացած կը լինիք, եւ նախորդները:

Իմ գործս այս շաբթուն կը յուսամ աւարտել (մինչեւ յուն. 15) եւ անցնիլ Մոսկուա: Գումարը որոշ չէ. կ'իմացնեմ փակուելուն պէս հանգանակութիւնը: Փարիզէն կը գրեն որ կարելի է յուսալ մօտ 25,000 Ֆրանք, աւելին եւս՝ եթէ Պօղ[ոս] Ն[ու]պ[ար] հաւանի մասնակցիլ: Աշխատանք կը կատարուի համոզելու գինքը, Շէրիֆի դէմ եղած մահափորձը օգտագործելով:

V[ictor] B[érard] համամիտ է այս ձեռնարկին եւ կ'աշխատի, եւ կը խոստանայ աջակցիլ ալ: London-էն լուր չունիմ. դուք ալ բան մը չգրեցիք դեռ:

Բերարը կը կասկածի որ թուրքերը Ալպանիոյ մէջ ըրածնուն պէս՝ խաղ մը կրնան փորձել Հայաստանի մէջ, առաջիկայ գարնան, արդարացնելու համար իրենց երկիրները թէ քիւրտերը կրնան գրգռուիլ եւրոպ. կոնտրոլին: Խնդրած է որ ուշի ուշով հետեւինք թէ նոր զօրք ուղարկուած է ներսի նահանգները — ինք կը մատնանչէ այս առթիւ նման երեւոյթները, որոնք կանխած են Կրեաէի, Մակեդոնիոյ եւ Կիլիկիոյ ջարդերը, եւ կը յանձնարարէ մեզ զգուշ լինել եւ սթափ: Այս մասին հարկ եղածը ձեռք կ'առնէք անշուշտ:

Այս մտահոգութիւնը եւ հանգանակութեան գործին դանդաղումը, ինչպէս կը տեսնեմ, մղած է ոմանք, ինծի կը թուի միայն կամ զխաւորապէս Պերճը<sup>33</sup>, «Փոթորիկ»<sup>32</sup> վերականգնելու առաջարկ մը ընել: Վիզէն<sup>11</sup> ու ես մերժեցինք — պատճառաբանեալ նամակով մը (յունուար 3/16):

Միքայէլը<sup>34</sup> չարաչար կը գանգատի որ Դրօշ[ակը] եւ Pro-Arm[enia] անիրազեկ կը մնան Երկրի կացութեան: Ընդհ. ժողովի որոշումը ամսական տեղեկագրերու մասին, պէտք էր գործադրութեան դնել, սկսելով նոյնիսկ Պոլսէն: Կարելի չէ վերջապէս ամբողջ բեռը անոր վզին թողուլ, այսպիսի տագնապի պահու մը: Հոգ գրիչ ունեցողները ունիք, հարկ է նաեւ առանձինն շրջաբերակաւնով մը բոլոր Կ. կ[ոմիտէներու] ուշադրութիւնը հրա-

ւիրել ընդհուպ:

Պատրիարքարանն ալ դադրած է եղեր տեղեակ պահելու գիրենք. Վահանին<sup>35</sup> ուշադրութեանը:

\* \* \*

Հոս է ժամանակէ մը ի վեր համբաւեալ Աբդուլ Ռըզաքը: Տեսնուեր էր Թիֆլիս ոմանց հետ (Նաւասարդեան, Առաքեալեան եւայլն) եւ յանձնարարական նամակ ունէր բերած Պրոֆ. Վարդանեանի վրայ: Իբր թէ հայուքիւրտ համերաշխութեան կը ձգտի եւ թէ ծանօթ շրջաբերականը (հրատարակուած Կարնոյ «Յառաջ»-ին մէջ) իրը չէ: Վերջինը սխալ է եւ սուտ. ես ինքս այդ վաւերագիրը ստացած եմ Վան, կուսակալէն. գտնուած է մեծաքանակ այն պայուսակին մէջ, զոր բերին Բաղէշի կուսակալին յանձնեցին Խայրէտտինի սպանիչ երկու չերքէզները: Անշուշտ այդ պատմութիւնը ծանօթ է ձեզ: Ստոյգ աղբիւրէ մը իմացանք թէ հոս եկած է ռուսներուն առաջարկելու որ օգնեն իրեն անկախ Քիւրտիստան մը հիմնել պարսիկ սահմաններուն վրայ, իբրեւ Etat tampon<sup>36</sup> մը: Աբդուլ Ռըզաք փորձեր է ապացուցանել թէ այդպիսի պետութիւն մը չա'տ շուտ կրնայ գրաւել համակրանքը նաեւ Թուրքիոյ քրտերուն եւ զանոնք շահիլ Ռուսիոյ կողմը: Կարեւորութիւն տուող չեղաւ. թո՛ղ որ իր դիմումէն քիչ առաջ իր եւ միւսներու ենթադրական ուժին եւ կարգ մը պարագաներու մասին ճշգրիտ տեղեկութիւններ տրուած էին պատկան շրջանակներու: Այդ տեղեկագրին պատճէնը ուղարկուած է ձեզ ալ:

\* \* \*

«Իթիֆհատ»-ի հետ խզման պատմութեան հրատարակումը փութացուցէք. ժամանակն է. աւելի ուշ՝ միայն պատմական նշանակութիւն կրնայ ունենալ ու թերեւս անճահ: Վերջապէս պարզելու է այս հանելուկը հասարակութեան առջեւ, անգամ մը առմիշտ լուեցնելու համար բամբասանքներն ու յերիւրանքները:

Ընդհ. Ժ. ի որոշումներու տետրէն ուղարկեցէք Կովկաս: Մօտ է ծրգ ժողովին գումարման օրերը, իսկ Կովկաս չունի ոչ մէկ տեղեկութիւն անոնց մասին:

Ընկ. բարեկներով՝

ՎԱՀԱՊ

Նկատի ունենալ Թեհրանի Կ.Կ. ի նոր հասցէն՝  
Dr. Archak Karapetian, Téhéran  
Ներքակ՝ երկրորդ պահարանով Կեդր. կոմիտէին թեհրանի:

33.- Պերճ. ծածկանուն Բարսեղ Շահպաղի:  
34.- Վարանդեան Միքայէլ:  
35.- Փափագեան Վահանին (Կոմս):  
36.- Ֆրանսերէն – պատուար պետութիւն. հակամարտ, թշնամի երկու երկիրներու միջեւ ստեղծուած պետութիւն:





Փաստ. 103-1

### Ա 7.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Ընկերներ!

Անցեալ շաբթու, հայկական հարցի մասին ձեզ գրեր ենք շրջաբերական նամակ մը, յոյս ունինք, որ ստացած էք ցարդ: Հարկ կը համարենք հաղորդել ձեզ նաեւ մեր ստացած հետեւեալ վերջին տեղեկութիւնները:

**Ընդհանուր քննիչներու խնդիրը կարելի է արդէն վերջացած համարել:** Ընտրութեան ձեւը այն է՝ ինչ որ գրեր էինք ձեզ նախորդիւ. իրաւասութեանց խնդրին գալով, կառավարութիւնը վերջապէս համաձայնած է, որ քննիչները իրաւունք պիտի ունենան պաշտօնանկել բոլոր մանր պաշտօնեաները, իսկ վալիներու պաշտօնանկութեան պարագային պիտի իմաց տան ներք. գործ. նախարարութեան, վերջինս ալ նախարարական խորհրդին, որը մինչեւ չորս օր պիտի տայ իր համաձայնութիւնը: Ինչ կը վերաբերի պաշտօնեաներու ընտրութեան, ընդհ. քննիչները իրաւունք պիտի ունենան նշանակել բոլոր մանր պաշտօնեաները, իսկ վալիները պիտի նշանակէ կառ[ավարութիւն]ը քննիչներուն ներկայացուցած թեկնածուներու ցանկէն:

**Լեզուական խնդիր:** Պետական բոլոր օրէնքներն ու կանոնները պիտի հրատարակուին թուրքերէն եւ տեղական լեզուներով: Դատարաններուն եւ միւս պաշտօններուն մէջ, թուրքերէնէն զատ պիտի գործածուի նաեւ տեղական լեզուները բոլոր այն վայրերուն մէջ, ուր անհրաժեշտ կը համարեն ընդհ. քննիչները: Դատարաններու վճիռները պիտի գրուին թուրքերէն, ի պահանջը հարկին նաեւ հայերէն առանց ծախքի:

**Ազգային տուրք:** Դպրոցներու մասին մեր առաջարկը՝ ազգ. տուրք հաստատելու առթիւ՝ չէ ընդունուած կառավ[արութեան] կողմէ:

**Համխտիչներու մասին նոր կարգադրութիւն պիտի ըլլայ:** Անոնք պիտի նկատուին իբրեւ պահեստի գուներ եւ իրենց գէնքերը պիտի հաւաքուին:

**Զինուորական ծառայութիւնը** պիտի ըլլայ տեղին վրայ, պայմանաւ սակայն, որ ի պահանջը հարկին հայկական նահանգներէն ալ անհրաժեշտ քանակութեամբ զօրք ղրկուի կայսրութեան հեռաւոր վայրերը:

**Հողային հարցի մասին** կառավ[արութիւն]ը կ'առաջարկէր նոր օրինագիծ մը, որուն համաձայն խնդրի կարգադրութիւնը կը թողնուէր հաշտարար դատարաններուն. մեր պնդումին վրայ սակայն ընդունուեցաւ, որ այս խնդիրն ալ լուծուի ընդհ. քննիչներու անմիջական հսկողութեան տակ:

Բոլոր այս խնդիրներու շուրջ համաձայնութիւնը կազմուած է երկու կողմերուն միջեւ. առկա կը մնայ ժողովներու եւ պաշտօններու մէջ հայերուն ունենալիք մասնակցութեան չափի խնդիրը: Ռուսական ծրագիրն է որ պաշտօնեաները՝ թէ ժողովներու եւ թէ միւս պաշտօնատեղերու մէջ հաւասար ըլլան մինչեւ մէկ տարի. իսկ մէկ տարիէն, որ նոր մարդահամար պիտի կատարուի՝ ընդհանուր քննիչներու միջոցաւ, ընտրութիւններն ըլլան համեմատական սկզբունքով: Կառավար[ութիւն]ը այս կէտին կ'առաջարկէ՝ որ Վան եւ Պիթիւս վիլայէթներու մէջ հաւասար, իսկ միւս վիլայէթներու մէջ համեմատական դրութեամբ: Հաւանական է որ ընդունուի կառ[ավարութեան] առաջարկը քանի որ հաւասարի դրութիւնը ընդունուելու պարագային ալ տեւողութիւնը պիտի ըլլայ միայն մէկ տարի: Այս խնդրի շուրջ Պոլսոյ մեր մարմինը<sup>37</sup> բաժնուած է երկու կարծիքի. մէկ մասը կը պնդէ՝ թէ պէտք է շեշտել հաւասարի դրութեան վրայ եւ մերժուելու պարագային խզել դիւանագիտական յարաբերութիւնները, իսկ միւս մասը գտնելով թէ՛ ներկայ պարագային աւելին ստանալն անկարելի է, կ'առաջարկէ բաւականանալ եղածով (համեմատականով): Մենք ալ վերջին տեսակէտին կողմնակից ենք որովհետեւ՝ Ա) նոյն տեսակէտն ունին բանակցութիւնները վարող դիւանագիտական մարմինները. Բ) որ հաւասարի դրութիւնը այնքան կարճատեւ կեանք մը պիտի ունենար որ չարժէր անոր համար խանգարել հազիւ կանոնաւորուած գործը. Գ) որ համեմատականի սկզբունքը ինքնին արդէն մեր սկզբունքներէն մէկն է. եւ Դ) որ՝ ներկայ պարագաներու մէջ պահանջել աւելին կը նշանակէ աւելի գորեղ թափով հրահրել իսլամական ընդդիմութիւնը: Այսպէս ալ ենք գրել մեր կարծիքը:

Բացի այս կայ նաեւ յարաբերութեանց վերսկսման պարագան: Մօտաւորապէս 2 ամիս է որ կառ[ավարութեան] եւ Իթթիհատի հետ խզուած է մեր յարաբե-

37.- Ալմարկուսիւն Արեւմտեան քիւրդից:





րուծիւնը: Անոնց կողմէ եղած բանակցութեան առաջարկին մենք միշտ պատասխանել ենք՝ «մինչեւ դուք չզիջիք բարենորոգումներու խնդրին եւ մասնաւորապէս եւրոպական քոնթրոլի մէջ, մեր կողմէ ոչ մէկ գիշում հնարաւոր չէ եւ յարաբերութեանց վերսկսումը աւելորդ»: Արդ՝ ի նկատի ունենալով որ վերը գրուած կէտերու մէջ կառ[ավարութիւն]ը գիջած է, բնական է սպասել ուրեմն, որ շուտով կառ[ավարութեան] կողմէ նոր դիմում կը կատարուի մեզ, մեր խոստման համաձայն յարաբերութիւնները վերսկսելու եւ մանաւանդ երեսփոխանութեանց մէջ փոխադարձ գիջումներ ընելու: Պոլսոյ մեր մարմինը տրամադիր է գիջումի. այս առթիւ ալ մեր կարծիքն է՝

Քանի տակաւին գործնականացած չեն խոստացւած բարեկարգումները<sup>38</sup> եւ ոչ իսկ գործադրութիւնն սկսուած, պէտք է պահանջել կառավարութենէն, որ յե-

տաձգէ հայկական նահանգներու ընտրութեանց գործը մինչեւ խոստացուած բարենորոգումներու գործադրութեան սկսուիլը. այդ պարագային միայն մեր կողմէ հնարաւոր կ'ըլլայ ոեւէ գիջում, իսկ յարաբերութեանց վերսկսման մասին պէտք է բաւականանալ առ այժմ միայն բարեկամական յարաբերութեանց վերսկսումով, պաշտօնականը թողնելով միայն բարենորոգումներու գործադրութեան:

Ներքին գաւառներու վիճակի մասին կը գրենք առանձին:

Ընկ. բարեկներով  
Ի դիմաց Հայաստ[անի] բիւրոյի  
ԱՐՏԱԻԱԶԴ<sup>39</sup>

20-1-1914, Կարին

Յ.Գ.- Ստացել ենք ձեր նամակը եւ ղրկած դրամը: Յաջորդիւ կը տեղեկացնենք մանրամասնութիւնները:  
ՆՈՅՆ

38.- Բնագրին մէջ «բանակցութիւնները», ինչ որ անուշադրութեան հետեւանք համարելով, ուղղեցինք բարենորոգումներու:  
39.- Արտատպ. ծածկանուն Հ.Յ.Գ. Հայաստանի բիւրոյին:





Փաստ. 103-2

Ա 8.– ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԷՆ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Ընկերներ!

Մեր հեռագիրն արդէն ստացած կ'ըլլաք անշուշտ, քանի որ ամենագլխաւոր խնդիրը՝ քոնթրոլը ընդունուած է, այնքան ալ կարեւորութիւն չունին ուրեմն երկրորդական խնդիրները: Այդ պատճառով է որ հեռագրեցինք օւի<sup>40</sup> թէ եւ ունէին[ք] որոշ վերապահութիւն:

Խնդիրը հոն է, որ մենք մեր ընթացքով կուսակցութիւնը կը դնենք կեղծ դրութեան մէջ: Եթէ բանակցութիւնները ուղղակի մենք ինքներս վարէինք կառ[ավարութեան] հետ, կրնայինք ի հարկէ այս կամ [այն] կէտի մէջ գիջումներ ընել եւ ատով որոշ պարտաւորութիւններ վերցնել մեր վրայ: Բայց քանի որ բանակցող կողմերը ուրիշներն են, արդեօ՞ք անհրաժեշտ է մեր անպայման համաձայնութիւնը վիճելի կէտերուն շուրջը: Թող բանակցող կողմերը հնարաւորութեան սահմանին մէջ համաձայնութեան գան. մենք կը շարունակենք կանգնած մնալ մեր պահանջներու վրայ: Կրնանք ի հարկէ ժամանակաւորապէս լռել, կրնանք թոյլ տալ ու նոյնիսկ աջակցիլ ընդունուած կէտերու իրագործումին, բայց պարտական ենք պատեհ առթիւ առաջ բերել նաեւ մեր մնացած պահանջները: Այս պարագային ուրեմն մեր համաձայնութիւնը տալով, արդեօ՞ք մենք ինքներս կաշկանդած չենք ըլլար մեր ձեռքերը ապագայի վերաբերմամբ:

Անծանօթ ըլլալով բանակցութեանց ամբողջ եղանակին, չենք կրնար կտրուկ առաջարկներ ընել, բայց մեզ կը թուի թէ լաւ է, որ մենք չխառնուինք պաշտօնապէս մեր համաձայնութիւնը պաշտօնական դեր չխաղաց երկու կողմերու բանակցութեանց ընթացքին: Թողնենք, որ միայն մեր տրամադրութիւնը աչքի առաջ ունենալով կարգադրեն գործերը: Եթէ սկիզբէն կանգնած ըլլայինք այս տեսակէտի վրայ, քեռիներու<sup>41</sup> հետ կապերը խզելու հարց չէր ծագեր այլեւս. եւ ի՞նչ կապ է այն, որ պէտք է խզել եղեր: Չըլլա՞յ թէ մեր ընկերներն ալ, ինչպէս 907ին Գեղամը<sup>42</sup> Մուշի մէջ «փաստերու հիման վրայ» եկեր են այն եզրակացութեան որ՝ «ուս կառ[ավարութեան] ներկայացուցիչները առաջ կը քշեն ոչ թէ հայ ժողովրդի, այլ իրենց կառ[ավարութեան] շահերը»:

միթէ՞՞ այժմս ալ նոյն դերն է ստեղծուած քեռիներու վերաբերմամբ ինչ որ կար ժամանակին հարեւաններու հետ<sup>43</sup>:

Համեմատական ներկայացուցչութեան խնդրի մասին, անցեալ տարի մեր կարծիքը յայտնած ենք արդէն: Որքան ալ ցանկալի ըլլայ հաւասար թուով ներկայացուցիչներ ունենալու պարագան, բայց եւ այնպէս պէտք չէ դուրս գալ արդարութեան սահմաններէն եւ մեր սկզբունքներէն. համեմատական ներկայացուցչութեան դրութիւնը պիտի դառնայ անխուսափելի, բայց ինչպէս անցեալի մէջ առաջարկեր ենք, պէտք է պնդել, որ համեմատական դրութիւնը կատարուի ոչ թէ ըստ կրօնի այլ ըստ ազգութեան: Եթէ յաջողուի այս նախ՝ բոլոր հայերը (կաթոլիկ, բողոքական, եւն) մեզ հետ կ'ըլլան, իսկ մահմետականները կը բաժնուին քիւրտերու, արաբներու, թուրքերու, եզիտիներու, եւն, եւն: Չենք կարծեր որ այս բոլոր տարրերը միացած մնան կրօնի դրօշի տակ: Եւ արդէն, ըստ ազգութիւններու կատարուած ընտրութեան խնդիրը ինքը բաժանումներ առաջ կը բերէ անոնց մէջ. այսպիսով մենք միշտ աւելի կ'ըլլանք, քան իւրաքանչիւր ցեղ առանձին վերցրած:

Տեղն է յիշել եւ ուրիշ կարեւոր պարագայ մը եւս: Նոր, այսքան հրապուրիչ առաջարկները մէկ կողմ մնան, եթէ մեզի յաջողուէր կենդանացնել մեր մեռած սահմանադրութիւնը, ընդունիլ տալու ազգ. տուրքի պարտադրութիւնը, որքա՛ն շատ բան շահած կ'ըլլայինք. փորձեցէք դարձեալ այս ուղղութեամբ աշխատիլ: Ի դէպ՝ ի՞նչ պիտի ըլլայ inspecteurներու<sup>44</sup> եւ նահանգ. ժողովներու յարաբերութիւնները. վերջիններուս իրաւասութեան սահմանները չպիտի՞ լայնանայ արդեօք: Թեթեւ, աւելորդ, բայց եւ այնպէս հետաքրքիր է իմանալ թէ ո՞ր երկրէ եւ ի՞նչ տարրերէ կ'ուզուի հրաւիրել inspecteurները. պիտի ունենա՞ն անոնք ալ իրենց օգնականները ինչպէս Սանդերսը<sup>45</sup> զինուորական գործերու մէջ: Շուէցարիացոց դիմում կա՞յ արդեօք inspecteurներու համար:

40.- Ֆրանսերէն – այո:  
41.- Քեռիներ, գործածուած է ռուսերու համար:  
42.- Գեղամ. Տէր Կարապետեան Գեղամ, դաշնակցական երեսփոխան Մուշէն:  
43.- Հարեւան կամ դրացի կը գործածուի քուրքերու համար:  
44.- Ֆրանսերէն – քննիչ: Հայկական նահանգներու կառավարիչներուն կը տրուէր Քննիչ կամ Ընդհանուր քննիչ տիտղոսը:

45.- Օքթօ Լիման ֆոն Սամտերս, գերմանացի զօրավար, որ զինուորական առաքելութեան մը զլուխ անցած, եկած էր Թուրքիա թրքական բանակը կազմակերպելու համար: 1913 թ. Նոյեմբերին, նշանակուելով Ջիմուտրական գերագոյն խորհուրդի անդամ, համաշխարհային Ա. պատերազմի ամբողջ տեսողութեան ան պիտի ղեկավարէր օսմանեան բանակը:





Համիտիէներու ջնջման վրայ ծանրանալու չէ մեր կարծիքով. անոնց այդ ձեւով մնալը նոյնիսկ ձեռնտու է մեզ որովհետեւ՝ 1) Որ քիւրտերու մէկ մեծ մասը զուրկ կը մնայ գինուորական կանոնաւոր կրթութեան: 2) որ՝ համիտիէներու եւ կանոնաւոր գինուորներու միջեւ եղած անտագոնիզմը<sup>46</sup> այսպիսով աւելի կը սաստկանայ. այս կէտի մէջ մեծ դեր կը խաղան հայերը, եթէ զօրքը տեղին վրայ ծառայելու որոշումը գործադրուի:

Ընտրական գործին մէջ մեր կարծիքով կարելի է գիշտումներ ընել, պայմանաւ սակայն որ մասնակցին հայերը եւ ոչ թէ կուսակցութիւնը, որը կապուած է Ընդհ. ժող.ի որոշումով: Եթէ յանկարծ նոր պայմաններ ստեղծուին ու մենք անգամ մը եւս խաբուելիք, վերջը կրնանք շատ վատ կերպով վարկաբեկուիլ. այս առթիւ գրած ենք նաեւ Վան, Մուշ եւ միւս Կ. Կ.երուն իրենց կարծիքն առնելու համար: Յամենայն դէպս մեր կարծիքն է, որ կառավարութեան պահանջուի առայժմ յետաձգել հայկական շրջաններուն ընտրութեան գործը մինչեւ inspecteurներու գալը եւ գործի սկսիլը. ատկէ վերջ եթէ խաբուելիք ալ, հոգ չէ:

Երկու կողմերու մէջ տիրող հաշտարար տրամադրութիւնները արդեօք չի կարելի ապացոյցը նկատել այն ենթադրութեան թէ՛ երկու կողմերն ալ առանձին յոյս մը չեն կապեր ընդունուած կէտերու կայունութեան վրայ: Մենք կը կարծենք որ այո՛: Քանի որ աւելի խոշոր դէպքեր կան աչքի առաջ, ի՞նչ նշանակութիւն կրնայ ունենալ օրինակ՝ ռուսներու համար համեմատական կամ հաւասար ներկայացուցչութեան խնդիրը: Մեզ կը թուի թէ ռուսական աջ ձեռքին հետ միասին կը գործէ նաեւ ձախ ձեռքը... սահմաններու վրայ նոր ու տենդոտ շարժումներ կը նկատուին մասնաւանդ վերջերս: Գարոյին ըսէք թէ Մանուկեանի դէպքը կրկնուե-

լու պատրաստութեան վրայ է, ինչպէս կը հաղորդեն մեզ վերջերս:

Իթիբիհատի հետ անպայման պէտք է վերսկսիլ յարաբերութիւնները, բայց ի սէր Աստուծոյ ոչ հին ձեւով. քաղաքական բանակցութիւններու ընթացքին, մենք դժբախտաբար շատ դիւրութեամբ ամիկօջօնութեան<sup>47</sup> ճամբան կ'ընտրենք: Ի՞նչ պիտի ըլլայ մեր դիրքը, եթէ դրսի ձեռքերը մեր դէմ հանեն քիւրտերուն: Կամ եթէ հէնց հայերուս մէջ առաջ գան խմբակներ՝ որոնք pro vacationներով<sup>48</sup> ձգտին բարդութիւններ առաջ բերել եւ մեզ մէջը ձգել: Կայ նաեւ ուրիշ վախ մը: Իթիբիհատի վերջին քայլերը՝ անպայման դժգոհութեան մեծ հող պիտի պատրաստեն թուրքերու, մասնաւանդ պաշտօնէութեան ծոցին մէջ: Դրսի ոյժերը չեն կրնար չհահագործել, այդ դժգոհութիւնը նոր մարտ Յ1<sup>49</sup> մը պատրաստելու համար... ու կասկած չկայ, որ ձին ու ջորին կռուելու պարագային էջը կը տուժէ մէջտեղ: Իթիբիհատը ինքն ալ լաւ պիտի գիտնայ, որ գոնէ հայկական շրջաններուն մէջ, բացի հայերէն ուրիշ ոեւէ ապաստան չի կրնար գտնել ինքը, վտանգի պարագային:

Մուշ եւ Վան, կառավարութիւնը առաջարկներ էր ըրած նոր՝ տեղական բանակցութիւններու համար. մենք կը կարծենք որ այս առաջարկներով կառավարութեան նպատակն էր մասնակի բանակցութիւններով ջլատել հաւաքականօրէն շեշտուած պահանջներու ոյժը. գրեթէ իրենց ընդհանուր պահանջներէ չչեղիլ երբեք եւ չներկայացնել նոր առաջարկներ. այսպէս ալ պատասխանուած է արդէն:

Ընկ. բարեւներով  
Ի դիմաց Հայաստ[անի] բիւրոյի  
ԱՐՏԱԻԱԶԴ<sup>39</sup>

22/1 914, Կարին

46.- Հակամարտութիւնը:  
47.- Տառացիօրէն այդպէս է. ըստ երեւոյթին կ'ուզէ ըսել՝ անձնական, մտերմիկ բարեկամութեան ճամբով:  
48.- Ֆրանսերէն – գրգռութիւններով:  
49.- Այկնարկութիւն 1909 թ. Մարտ 31ի Մուլթան Համիտի կողմէ բռնատիրութիւնը վերահաստատելու նպատակով փորձուած պետական հարուածին եւ անոր գուզնիքաց տեղի ունեցած Առաջին կոտորածին:

Պիտի խնդրենք որ պ. Սերովբէ Նորատունկեանին հարցնէք թէ ի՞նչ եղաւ Մատթեանի դատարարութեան գործը մեզի դէմ բացուած: Անհրաժեշտ է մեզ իմանալ:  
ՆՈՅՆ







Փաստ. 103-3

Ա 9.– ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԷՆ ԴՐՕՇԱԿԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ընկերներ!

Ստացել ենք 14 յուլուար թուակիր ձեր նամակը: Չստացանք դրամները: Իր ժամանակին ստացել ենք նաև զրկուած բլանքներն ու կնիքը: Պուլանըքի թերթերը կրնաք զրկել հետեւեալ հասցէով՝

Պուլանըք, Երեւանի գիւղ, պ. Աբրահամ Օհանեանին, յանձնելի ...ին. եւ կամ՝

Պուլանըք, Կոփ [գիւղ], «Սեւ Քարեցի Սաքօ» գրադարանին, յանձնելի ...ին:

«Դրօշակ»ը մենք կը ստանանք շատ ուշ եւ անկանոն. շատ ցանկալի է որ չուշացնէք առաքումը: Ստորեւ կը դնենք մեր հասցէն:

Պաշտօններու կազմակերպական վիճակը հետզհետէ կը կանոնաւորուի. միխթարական եւ Վասպ[ուրական]ի եւ Դուր[ան]-Բարձր[աւանդակ]ի<sup>50</sup> շրջանները: Կազմակերպութիւնը առհասարակ նկատելի է որ կը զօրանայ թէ՛ այդ եւ թէ՛ միւս շրջաններուն մէջ: Հակառակ Ընդհ. Ժողովի որոշման դժբախտաբար չկրցանք տրամադրելի ազատ ընկեր<sup>51</sup> մը ունենալ շրջաններու կազմակերպական գործը աւելի աննախանձելի դրութեան հասցնելու: Ոյժերու պակասը չափէն աւելի զգալի է:

Հայկ. հարցը որքան մօտեցաւ իր լուծման, այնքան աւելի սկսեցին սրուիլ մեր դրացիներու կիրքերը: Վերջերս բաւական յամառ շուկներ կային այստեղ, նոր ցնցումներու ու մինչեւ իսկ նոր ջարդերու սպառնալիքներով: Դրութիւնը առայժմ խաղաղ է, թէեւ մեր յարաբերութիւնները շատ սառն են թէ՛ կառ[ավարութեան] եւ թէ՛ իթիհատի հետ: Իթիհատական ծանօթ գործիչները իրենք էին հակաբարենորոգչական պրոպագանտի գլուխն անցած. եւ անոնց միջոցաւ էր որ գաղտնի հանրագիր մը կը կազմուէր մասնաւորապէս քննթրոյին դէմ ուղղուած: Այս փորձը սակայն ոեւէ հետեւանք չունեցաւ: Վերջին այս շուկներու օրերուն դիտելի էր որ տեղույս հիւպատոսները կ'աշխատէին (ամէն մէկն առանձին) իր կողմն ունենալ հայերու՝ մասնաւորապէս

մեր համակրանքը: Մուշ եւ Վան տեղական կառավարութիւնները առաջարկած են նոր բանակցութիւններու սկսիլ մերոնց հետ, մեր պահանջներու վերաբերմամբ: Վանի կուսակալ Թահսին ժողովին մէջ յայտնած է թէ՛ «հայերու պահանջները՝ համեմատական եւ ազգային ընտրութեան»<sup>52</sup> առթիւ ընդունուած է արդէն կառավարութեան կողմէ, բայց այդ սկզբունքներու կիրարկման համար չպէտք է պահանջել որ առժամեայ նոր օրինագիծ մը հրատարակուի»: Նախ քան բանակցութիւնները, մենք գրեք էինք արդէն մեր կարծիքը, նման մասնաւոր բանակցութիւններու առթիւ: Մեր կարծիքն էր որ կառ[ավարութիւն]ը այդպիսի մասնաւոր բանակցութիւններով նպատակ ունի ջլատել հաւաքականօրէն դրուած պահանջներու ոյժը եւ պառակտում առաջացնել զանազան հոսանքներուն մէջ. այդ պատճառով ալ նոյն մարմիններուն գրած էինք՝ բանակցութիւններու ընթացքին ոչ մէկ կերպ չչեղիլ ընդհանուր պահանջն. այսպէս ալ պատասխանուած է արդէն կուսակալին:

Ինքնագարգ[ացման]<sup>53</sup> գործը նոյն շրջաններուն մէջ առաջ կը տարուի բաւական միխթարական չափով. այս տեսակէտէն թոյլ է Բարձրաբերդը<sup>54</sup> եւ ուրիշ մէկ երկու վայրեր: Ա. Գարոն<sup>55</sup> եկա՞ւ արդեօք: Իր վերջին նամակի պահանջին համաձայն մեր կարծիքը հեռագրեցինք Պոլիս: Մանրամասն կը գրենք այսօր:

Մեր շրջանի բոլոր Կ. Կ.ներուն գրեք ենք, որ ամսէ ամիս տեղեկութիւններ հաղորդեն ձեզ:

Ընկ. բարեւներով  
Ի դիմաց Հայաստ[անի] բիւրոյի  
ԱՐՏԱԻԱԶԴ<sup>39</sup>

22/1/1914

Մեզի գրեցէք հետեւեալ հասցէով՝

– Էրզրում, Քիլիսէ Գափուսնտա Թաթոս էֆ. Սէրինկիւլեան, կամ՝

– Էրզրում, Քիլիսէ Գափուսնտա Վահան էֆ. Մնացականեան

Միշտ ներփակեալ պահարանով՝ յանձնել Արտաւազդին:

Յ.Գ.- Մեր նախորդ նամակով Տիգրան Խաչիկեանին յանձնելի նամակ մ'էինք զրկած. արեօք յանձնել էք իրեն. թող պատասխանէ:

– Ա. Գարոն եթէ եկած է յայտնեցէք իրեն, որ Սարուստանից<sup>56</sup> ստացուած վերջին նամակները ցոյց կու տան որ Մանուկեանի փորձը նորէն կրկնուելու վրայ է:

50.- Դուրան-Բարձրաւանդակ – Տարօն-Սասուն:

51.- Ազատ ընկերը կը գործածուէր գործիչի իմաստով:

52.- «Ազգային ընտրութեան» սկզբունքը հայոց կողմէ ներկայացած պահանջ էր, ըստ որում հայ երեսփոխանները պէտք է ընտրուէին հայերու քուէներով:

53.- Իմա ինքնապաշտպանութեան:

54.- Կարնոյ շրջան:

55.- Արմէն Գարո – Փաստրմաճեան Գարեգին:

56.- Սարուստան, Կովկասի կուս. ծածկանունը:





Փաստ. 1545-1

**Բ 1 . – Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Բ Ա Ր Ե Ն Ո Ր Ո Գ Ո Ւ Մ Ն Ե Ր Ը**

**(ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐ 1914 ՅՈՒՆՈՒԱՐ 26-Ի)**

*Թարգմանում ապաշտօնական (ֆրանսերեն) բնագրէն*

Երկու օտար ընդհանուր քննիչներ պիտի դրուին Արեւելեան Անատոլիոյ երկու շրջանակներուն զլուխը, այ. Ա --- այն շրջանակին համար որ կը պարունակէ Էրզրումի, Տրապիզոնի եւ Մըվազի նահանգները, եւ այ. Բ --- այն շրջանակին համար, որ բաղկացած է Վանի, Պիթլիսի, Խարքերդի եւ Տիարայէքիի նահանգներէն:

Ընդհանուր Քննիչները քննարկու ի գործ պիտի դնեն իրենց շրջանակին վարչութեան, դատական իշխանութեան, ոստիկանութեան եւ ժամտարմըրիին վրայ:

Այն պարագային երբ հանրային ապահովութեան պահպանման ծառայող ուժերը անբաւական ըլլան, Ընդհանուր Քննիչին պահանջումով զինուորական ուժեր պիտի դրուին իր տրամադրութեան տակ՝ գործադրելու համար իր իրաւասութեան սահմաններուն մէջ գտնուող միջոցները:

Ընդհ. քննիչները պարագային համեմատ ապաշտօնանկ կ'ընեն այն բոլոր ապաշտօնեաները որոնց անբաւականութիւնը կամ յոռի ընթացքը հաստատած են, դատարանի յանձնելով անոնք որ օրէնքով պատիժի արժանի ընթացքի մը մէջ կը գտնուին. ապաշտօնանկ եղած ստորադաս ապաշտօնեաներուն տեղ կը նշանակեն ուրիշներ որոնք պէտք է լրացնեն օրէնքներով եւ կանոնադիրներով որոշուած ընդունելութեան եւ կարողութեան պայմանները: Անոնք իրաւունք ունին Վ[եհափառ] Սուլթանին կառավարութեան անուանման ներկայացնելու բարձր ապաշտօնեաները: Կատարուած բոլոր ապաշտօնանկութիւններուն մասին անմիջապէս հեռագրով տեղեկութիւն պիտի տան պատկանեալ նախարարութիւններուն՝ համառօտ պատճառաբանութիւններով, ուրկէ ետք մինչեւ ուրբ օր այդ ապաշտօնեաներուն տոսիլէն եւ պատճառաբանեալ մանրամասն տեղեկագիր մըն ալ պէտք է դրկեն:

Ծանրակշիռ պարագաներու մէջ, որոնք ստիպողական կարգադրութիւններ կը պահանջեն, ընդհանուր քննիչները իրաւունք պիտի ունենան անմիջապէս կախակայելու դատական այն ապաշտօնեաները՝ որոնք ապաշտօնանկ չեն կրնար ըլլալ ըստ օրինի, պայմանով որ իրողութիւնը անմիջապէս հաղորդեն դատական ապաշտօնատան:

Եթէ տեսնուի որ կուսակալները այնպիսի ընթացքներու մէջ կը գտնուին, որոնք խիստ միջոցներու գործադրութիւնը կը պահանջեն ստիպողաբար, Ընդհանուր Քննիչները խնդիրը հեռագրով պիտի հաղորդեն ներքին գործերու նախարարութեան, որ իսկոյն պիտի ներկայացնէ նախարարական խորհուրդին եւ այս վերջինն ալ իր կարգին որոշում մը պիտի տայ Ընդհանուր Քննիչի հեռագրին ստացուելէն ետք առ առաւել մինչեւ չորս օր:

\* \* \*

Հողային վեճերը պիտի լուծուին Ընդհանուր Քննիչներուն ուղղակի հսկողութեան տակ:

\* \* \*

Ընդհանուր Քննիչներու պարտականութեանց եւ իրաւասութեանց մասին աւելի մանրամասն հրահանգներ պիտի պատրաստուին անոնց անուանումէն ետք ու անոնց աջակցութեամբ:

Այն պարագային, երբ տասը տարուան ժամանակամիջոցի մը մէջ, ընդհանուր քննիչի ապաշտօնները թափուր մնան, Բ. Դուռը նոր ընդհանուր քննիչներու ընտրութեան համար յոյս կը դնէ մեծ տէրութեանց բարեացակամ աջակցութեան վրայ. (Elle compte sur ...):

\* \* \*

Օրէնքները, հրամանագիրները եւ ապաշտօնական ազդերը իւրաքանչիւր շրջանի մէջ պիտի հրատարակուին տեղական լեզուներով: Դատարանի եւ վարչութեան դիմող կողմերը իրաւունք պիտի ունենան իրենց լեզուն գործածելու, երբ ընդհանուր քննիչը այդ բանը հնարաւոր գտնէ: Դատարաններու վճիռները պիտի խմբագրուին բարբերէրէնով, եւ եթէ կարելի ըլլայ, անոնց պիտի կցուի երկու կողմերուն լեզուով թարգմանութիւն մը:





## ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

47

\* \* \*

Իրաքանչիւր նահանգի կրթական պիտոճէին մէջ իրաքանչիւր տարրի (*ուսում*) բաժինը պիտի որոշուի կրթական տուրքին մէջ անոր մասնակցութեան համեմատութեամբ: Կայսերական կառավարութիւնը ո՛չ մէկ արգելք պիտի յարուցանէ, եթէ հասարակութեանց մէջ կրօնակիցները նպաստեն իրենց դպրոցներուն պահպանման:

\* \* \*

Ամէն Օսմանցի խաղաղութեան եւ անդորրութեան ատեն իր զինուորական ծառայութիւնը պիտի կատարէ այն զինուորական քննչութեան շրջանակին մէջ ուր կը բնակի: Սակայն, կայսերական կառավարութիւնը մինչեւ ցնոր տնօրինութիւն Եւմէնի, Ասիոյ եւ Նէճուտի նման հեռաւոր վայրերը պիտի դրկէ ցամաքային զինուորական ուժեր, զորս պիտի առնէ Օսմանեան կայսրութեան բոլոր մասերէն՝ անոնց բնակչութեան թիւին համեմատութեամբ. ասկէ զատ ծովային բանակին համար զէնքի տակ պիտի կանչէ ամբողջ կայսրութեան մէջէն առնուած նորակոչեր:

«Համիտիյէ» գունդերը պիտի վերածուին պահեստի հեծելազօրքի: Անոնց զէնքերը պիտի պահուին զինուորական մթերանոցներուն մէջ եւ զօրաշարժի կամ ռազմափորձի ատեն միայն պիտի բաժնուին անոնց: Այդ գունդերը պիտի գտնուին իրենց պատկանած շրջանակին զօրաբանակի հրամանատարներուն հրամանին տակ: Խաղաղութեան ատեն գունդերուն, վաշտերուն եւ գումարտակներուն հրամանատարները պիտի առնուին օսմանեան կայսերական գործօն բանակի սպաներէն: Այդ գունդերուն զինուորները մէկ տարի զինուորական ծառայութեան ենթակայ պիտի ըլլան: Հոն ընդունուելու համար պէտք է իրենք հայթայթեն իրենց ձիերը՝ անոնց բոլոր կազմածներով միասին: Այս գունդերուն մէջ պիտի կարենայ մտնել առանց ցեղի եւ կրօնքի խտրութեան նոյն զինուորական շրջանակէն ամէն մարդ որ կը համակերպի այդ պահանջներուն: Երբ զօրաշարժի կամ ռազմափորձի համար հաւաքուին, այս զինուորները ենթակայ պիտի ըլլան կանոնաւոր զօրքին համար գործադրուող կարգապահական նոյն կանոններուն:

\* \* \*

Նահանգային ընդհանուր ժողովներու իրաւասութիւնը ճշդուած է 13 մարտ 1329 (1913)ի օրէնքին սկզբունքներուն համաձայն:

\* \* \*

Վերջնական մարդահամար մը – որուն պիտի ձեռնարկուի ընդհանուր քննիչներու հսկողութեան տակ՝ հնար եղածին չափ շուտով եւ, եթէ կարելի ըլլայ, մէկ տարին չանցնելու պայմանով – պիտի ճշդէ զանազան կրօնքներու, ազգութեանց եւ լեզուներու ճիշդ համեմատութիւնը երկու շրջանակներուն մէջ: Մինչեւ այն ատեն Վանի եւ Պիթիսի նահանգային ընդհանուր ժողովներուն (*մէճիսը ումումի*) եւ էնճիւմէններուն ընտրովի անդամներուն կէտը իսլամ եւ կէտը ոչ-իսլամ պիտի ըլլայ. Էրզրումի նահանգին մէջ, եթէ վերջնական մարդահամարը կատարուած չըլլայ մինչեւ մէկ տարի, նահանգային ընդհանուր ժողովի անդամները նոյնպէս հաւասարութեան հիման վրայ պիտի ընտրուին, ինչպէս վերոյիշեալ երկու նահանգներուն մէջ: Սըվազի, Խարբերդի եւ Տիարպէթիի նահանգներուն մէջ, Ընդհանուր ժողովներու անդամները այժմէն պիտի ընտրուին համեմատականութեան սկզբունքին վրայ: Ասոր համար, մինչեւ վերջնական մարդահամարը, իսլամ ընտրողներու թիւը պիտի որոշուի համաձայն վերջին ընտրութեանց հիմ ծառայող ցուցակներուն, իսկ ոչ-իսլամներու թիւը պիտի որոշուի իրենց հասարակութիւններուն կողմէ ներկայացուելիք ցանկերուն համաձայն: Եթէ սակայն, նիթական դժուարութիւններ ընտրական այս առժամեայ դրութեան գործադրութիւնը անհնար դարձնեն, ընդհանուր քննիչները իրատունք պիտի ունենան Սըվազի, Խարբերդի եւ Տիարպէթիի երեք նահանգներուն ընդհանուր ժողովներու աթոռներուն բաշխման համար ուրիշ համեմատութիւն մը առաջարկելու, որ անելի համապատասխան ըլլայ նոյն նահանգներու ներկայ պէտքերուն եւ պայմաններուն:

Այն բոլոր նահանգներուն մէջ ուր ընդհանուր ժողովները պիտի ընտրուին համեմատականութեան սկզբունքին հիման վրայ, փոքրամասնութիւնը ներկայացուցիչ պիտի ունենայ նահանգային խորհուրդներուն մէջ (*էնճիւմէն*):

Վարչային խորհուրդներու (*մէճիսը իտարէ*) ընտրովի անդամները ըստ առաջնոյն կէս առ կէս իսլամ եւ ոչ-իսլամ պիտի ըլլան:

Եթէ ընդհանուր քննիչները անպատեհութիւն մը չտեսնեն, իսլամներու եւ ոչ-իսլամներու միջեւ հաւասարութեան սկզբունքը պիտի գործադրուի երկու շրջանակներու ռատիկականութեան եւ ժամտարմըրիի զինուորագրման մէջ, քանի թափուր պաշտօններ մնան:

Հաւասարութեան նոյն սկզբունքը կարելի եղածին չափ պիտի գործադրուի նաեւ երկու շրջանակներուն մէջ հանրային միւս բոլոր պաշտօններուն բաշխման ատեն:





Փաստ. 103-4

**Բ 2.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ  
ԹԻՒ 3 ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ-ՆԱՄԱԿԸ Կ. ԿՈՄԻՏԵՆԵՐՈՒՆ**

Բանակցութիւնները՝ հայկ. գաւառներու մէջ մտցուելիք բարենորոգումներու շուրջը, ինչպէս յայտնի է վերջացան առանց մեծ դժուարութիւններու, ու այս պարագան արդէն պարզ նշան մըն է, որ բանակցող կողմերը գտնուելով հաւանական սուր դէպքերու առջեւ, առանձին կարեւորութիւն մը չեն տար բանակցութիւններու այս կամ այն ելքին: Համաձայնութեան իսկական պատճէնը, որ վերջին օրերս ստացանք, կու գայ արեւի եւս ուժեղացնելու մեր վերապահ դիրքի անհրաժեշտութիւնը: Համաձայնագրի մէջ կարեւոր կէտերը խմբագրուած են այնպէս անորոշ ու առաձգական դարձուածքներով, որ նոյն այդ համաձայնութիւնը առաջիկային շատ լայն դուռ պիտի բանայ նոր ու խոշոր անհամաձայնութիւններու: Աւելի քան հաւանական կը թուի հետզհետէ – ինչպէս կը հաղորդեն Փարիզէն եւ ուրիշ տեղերէ – որ թուրք կառավարութիւնը միջազգային շարք մը խնդիրներ կարգադրելէ եւ մանաւանդ ակնկալուած փոխառութիւնը յաջողցնելէ վերջ, ինքն իսկ խոչընդոտներ պիտի յարուցանէ բարենորոգումներուն դէմ, եւ նոր գետին պատրաստէ քաղաքական նորանոր բարդութիւններու:

Ընկերներու լուրջ ուշադրութիւնը պիտի հրաւիրենք այն պարագաներու վրայ, որ ներկայ պայմաններուն մէջ, կեղք. կառավարութիւնը եթէ յստակ կերպով զգայ իսկ բարենորոգումներու անհրաժեշտութիւնը՝ օսմ. ընդհ. պետական շահերու տեսակէտէն, այնուամենայնիւ դարձեալ ստիպուած պիտի ըլլայ երթալ հինաւորաց ճանապարհով, որովհետեւ կառավարական կուսակցութեան արդի ընթացքը՝ մէկ կողմէն հին, անպետք տարրերուն ուղղուած, իսկ [միւս] կողմէն ալ ուղղուած ոչ իթթիհատական պաշտօնէութեան (զինուորական թէ քաղաքային), երրորդ կողմէն ալ նաեւ տուրքերու յարաճուն յաւելումները, – բուն դժգոհութեան հետ միասին, անխուսափելի խորէն պիտի առաջ բերեն նաեւ քիչ ու շատ կազմակերպուած հակահոսանք Իթթիհատ]ին դէմ: Եւ որովհետեւ դժգոհութեան բուն պատճառները պիտի մնան քողարկուած – ինչպէս միշտ եղեր է – ժողովուրդը Իթթիհատ]ին դէմ հանելու համար, ընդդիմադիր տարրերը հրապարակ պիտի նետեն քրիստոնեաներու, մասնաւորապէս հայերուն տրուած զիջումները, – այսպիսով ժողովրդի աչքին Իթթիհատը ներկայացնելու համար իբրեւ դաւաճան օսմանցիութեան եւ մանաւանդ իսլամութեան շահերուն: Իսկ Իթթիհատ]ը մղուած մասամբ ինքնապաշտ[պանութեան] բնագոյն, մասամբ նաեւ իր ծանօթ հակումներէն, անխուսափելի կերպով ինքզինք ցոյց պիտի տայ հակառակը, սպացուցանելու որ տրուած խոստումները ոչ այլ ինչ են, եթէ ոչ մանկավարժ միայն, նեղ կացութենէն ազատուելու համար: Ընդհանուր վիճակը արեւի քան ծանր պիտի ըլլայ մանաւանդ այն պարագային, երբ ընդդիմադիր տարրերը, Իթթիհատին դէմ դուրս գան որոշ ծրագրով մը, եւ փորձեն խռովութիւններ առաջ բերել երկրին մէջ: Այս պարագային անկասկած տուժող ամենէն արեւի պիտի ըլլանք մենք՝ հայերս: Չպէտք է մոռնալ այն պարագան, որ մեր դրացիներուն մէջ անձնական շահերու ու փառքի ձգտումը շատ արեւի զօրաւոր է եւ ուժեղ քան հայրենիքի շահերու պաշտպանութիւնն ու մաքուր գաղափարականութիւնը: Խռովութիւնները անկասկած վտանգաւոր են ամենէն արեւի հայրենիքին ու ընդհ. պետական շահերուն համար, բայց այս ընթացումը դժբախտաբար կը պակսի մեր դրացիներուն:

Ահա թէ ինչու մեր բոլոր մարմիններուն ու ընկերներուն առաջնակարգ պարտականութիւնն է ներկայ պայմաններուն մէջ, ամեն տեղ զգուշացնել հայ ժողովուրդը, դրդել զայն չօրօրուելու դրսէն գալիք բարիքներու յոյսերով, այլ ընդհակառակը, բարենորոգումներու գործադրութիւնը դիւրացնելու եւ այսպիսով հայրենիքի յառաջդիմութիւնը ապահովելու, ինչպէս նաեւ կանխելու համար բոլոր հաւանական վտանգները, ոյժ տալ ներքուստ կազմակերպման ու զօրացման եւ արեւի մեծ թափով նուիրուիլ ինքնապաշտպանութեան գործին որ ժամանակի հրամայական պահանջն է:

Ընկ. բարեւներ  
Ի դիմաց Հայաստ[անի] բ[իւրոյ]ի  
ԱՐՏԱՄԱԶԴ<sup>39</sup>







Փաստ. 1157-30

Հ.Յ.Դ. Պալքանեան  
Կեղր. կոմիտէ

(Ստանալնիդ իմացուցէք)  
1914 փետրուար 16  
Սոֆիա

**Բ 3.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 2**  
**Հ.Յ.Դ. ՊԱԼՔԱՆԵԱՆ ՇՐՋԱՆԻ ՍԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ**

Ընկերներ,

Հոս ներփակեալ պիտի գտնաք հայկական բարենորոգումներու մասին մեծ պետութեանց եւ թուրք կառավարութեան միջեւ ընդունուած վերջնական համաձայնագրին ճշգրիտ պատճենը՝ թարգմանուած ֆրանսերէն թնագրէն:

Վերջի մէկ ու կէս տարուան մէջ տեղի ունեցող քաղաքական դէպքերը եւ դիւանագիտական իրարանցումները՝ նոր յոյսերու եւ նոր ակնկալութեանց դուռ մը բացած էին մեզի: Ամենքս ալ համոզուած էինք թէ այս անգամ այլեւս դիւանագիտական անգութ աշխարհը լրջօրէն ձեռք կ'առնէ մեր ալ արդար դատը եւ անոր վերջնական բայց նպաստաւոր լուծում մը կու տայ: Յիրաւի չնոցուեցաւ հայուն դատը, բայց քանի կը շատնային ու կ'երկրնային պալքանեան կնճիռները եւ համերոպական ընդհանուր պատերազմի մը մղձաւանջը՝ Տամուկեան սուրի պէս կախուած էր իրաքանչիւր պետութեան ուսին վրայ, մեզի համբերութեան յորդորներ կը կարդային ցոյց տալով դիւանագիտական սեղանին, արդէն իսկ ծանրաբեռնուած վիճակը: Ու մենք համբերեցինք ու յուսացինք:

Պալքանեան կնճիռները հետզհետէ հարթուեցան, դիւանագիտական սեղանին վրայ վերջապէս անկիւն մը գտնուեցաւ մարտիրոսացած ազգի մը արիւնոտ դատին: Սկսան երկար բանակցութիւններ եւ ի վերջոյ ռուս եւ գերման համաձայնութիւն մը կրցեր էր ծնունդ տալ վերոյիշեալ համաձայնագրին:

Արդի՞ւնքը սակայն... դարձեալ համբերութիւն: Դարերէ ի վեր մխացող վերքերուն ո՛չ մէկ անմիջական դարմանում: Առնուազն տասնեակ տարիներ կը հրամցուին մեզի մեր տարրական իրաւունքներուն կարեւալ թերեւս տէր ըլլալու համար եթէ ուրիշ պատահարներ չարգիլէն այդ: Մինչ անդին նոյն այդ դիւանագիտութեան անարգ մէկ քաբրիսովը<sup>57</sup> ամիսներու ընթացքին մէջ միայն կարելի եղաւ ազատ եւ ինքնօրէն Ալպանիա մը ստեղծել, որ այսօր նոյն իսկ թագաւորական աստիճանով ճանչցուելու հովեր կ'առնէ:

Հայու սեւ ճակատագրին վերջին այս հեզմութիւնը անգամ մը եւս կու գայ այն հաստատ համոզումը գոյացնել տալու մեր մէջ, թէ օտարներէն չունինք շատ բան սպասելու եւ ինչ բարիքներ կամ օգուտներ ստանանք անոնցմէ՝ պէտք է զանոնք մեր պատահական շահերը նկատենք միայն:

Թողունք ուրեմն այդ համաձայնագիրը գործադրութեան դրուի եւ մաղթենք որ լաւ արդիւնքներ յառաջ բերէ:

Անդրադառնանք մեր այժմեան վիճակին: Այս միջոցիս երկրէն եկած լուրերը հեռու են մխիթարական ըլլալէ եւ նոյնիսկ մտահոգիչ: Թերեւս այս անգամ եւս սուղի նստի մեզի բարենորոգումներու այս ծրագիրը իր նախորդներուն պէս: Քանի քանի անգամներ այսպիսի ծրագիրներու գործադրութիւնը պատուհաս միայն եղած է հայութեան գլխուն՝ խոր սուզերով պատելով մեզ ամենքս: 95-96 թուականներու մասսայական կոտորածներու շարքը եւ 1909 Ատանայի ջարդը՝ տխուր բայց փայլուն մէկ ապացոյցը չե՞ն միթէ հայկական բարենորոգմանց գործադրութեան: Եւ երբ լուրեր կը ստանանք թէ այս վերջերս երկրի թուրք ու քիւրտ տարրերը տենդոտ ջանքեր կը թափեն զինուելու, միւս կողմէ վերջերս ծայր տուած հակաքրիստոնէական պոքոթը հսկայ ծաւալ ստանալու վրայ է, եւ ի մասնաւորի կը սպառնայ մեծ չարիքներ հասցնելու հայ տարրին, ակամայ կը ստիպուինք մտածելու թէ արդեօք նոր գուլումներու եւ նոր արհաւիրքներու նախօրեակին չենք գտնուիր այժմ ալ:

57.- Քմայքով:





Երկար փորձառութեանց վրայ հիմնուած այս գուշակութիւնները կը թելադրեն մեզի՝ որ մենք եւս մեր կարգին լրջօրէն խորհինք ու պատրաստենք երկրի ինքնապաշտպանութեան գործը՝ կարենալ դէմ դնելու համար պատահական ամէն անակնկալներու:

Եւ որպէսզի Պալքանեան շրջանն ալ կարենայ իր որոշ մասնակցութիւնն բերելու մեզի համար փրկարար միակ այս միջոցին՝ հարկ է որ մեր բոլոր մարմինները անյապաղ գործադրեն մեր հետեւեալ յանձնարարութիւնները, որոնք ստիպողական են:

Ա) Հոն ուր դեռ նոր մարմիններ ընտրուած չեն, պէտք է փութացնել նոր ընտրութիւնները կարող եւ գործելու փափաք ունեցող ընկերներէ:

Բ) Փոխադրել անմիջապէս մեզի մարմիններու քով գտնուող պատրաստի գումարները՝ հոգ տանելով գանձելու նաեւ ցարդ գանձելի մնացած գումարները:

Գ) Իմացնել անմիջապէս թէ Ձիֆոնի<sup>57ա</sup> վերաբերեալ՝ կազմակերպական ի՞նչ տեսակ ապրանքներ կը գտնուին ձեր քով եւ որչա՞փ:

Արդ, ի գործ, ընկերներ, քանի դեռ ժամանակն է: Վայրկեանները թանկ են ու յղի եւ չենք զիտեր թէ վաղուան օրը ի՞նչ անակնկալներ կը բերէ մեզի:

Ընկերական բարեւորով  
Հ.Յ.Դ. ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵՂԲ. ԿՈՄԻՏԷ

57ա.- Ձիֆոն – զինական ֆոնդ՝ ինքնապաշտպանութեան համար:







Փաստ. 103-14

#### Բ 4.– ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԷՆ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆՆԵՐՈՒՆ (ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՍԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. Կ.ԻՆ)

Հայկ. բարենորոգումներու եւ ընտրական գործին առթիւ միաժամանակ դրկած մեր զոյգ շրջաբերականները. յուսով ենք ստացած էք ցարդ: Յանկալի էր որ գէթ երկտողով մը իմացնէիք մեզ ձեր ստանալը:

Իրազեկ պահելու համար մեր մարմինները հայկ. շրջաններու մէջ պատահած կարեւոր անցուղարձերուն, պարտք կը զգանք հաղորդել հետեւեալ տեղեկութիւնները:

Հայկ. բարենորոգումներու մասին մեր տեսակէտը հաղորդած ենք արդէն մեր նախորդ շրջաբերականով (N° 3): Վերջին անցքերը՝ զինուորական նոր առաքումները Պոլսէն դէպի Կարին ու թերեւս շուտով նաեւ դէպի հայկ. միւս գաւառները, ինչպէս նաեւ քրտական արդէն իսկ սկսուած շարժումները թէ Բաղէշի շրջանին մէջ եւ թէ Վան վիլայեթի սահմաններուն մօտիկ, կարեւոր պարագաներ են, որոնց վրայ պիտի հրաւիրենք մեր մարմիններու լուրջ ուշադրութիւնը: Որքան ալ որ առայժմ դժուար է ճշգրիտ բնորոշումը տալ արդէն իսկ սկսուած քրտական շարժման, այնուամենայնիւ ի նկատի ունենալով շարժման պարագայութիւններու ըմբռնումներն ու ձգտումները, ինչպէս նաեւ քիւրտ ժողովրդի տակաւին անկազմակերպ ու հետեւապէս նաեւ անկարգապահ վիճակը եւ մանաւանդ այն պահանջները, որոնցով հրապարակ կու գան անոնք, անկասկած պիտի հանդիսանան նոր պատճառներ յետաձգել տալու համար բարենորոգումներու գործադրութիւնը ու թերեւս նաեւ անիշխանական նոր վիճակ մը ստեղծելու երկրին մէջ: Այս պայմաններուն մէջ մեր մարմիններուն վրայ առաջնակարգ պարտք կ'իյնայ մնալ զգոյշ ու արթուն: Յանկալի էր նաեւ որ մեր մարմիններէն իւրաքանչիւրը օրը օրին տեղեկութիւններ տար մեր շրջաններու մէջ պատահած կարեւոր անցուղարձերուն մասին առհասարակ, իսկ քրտական շարժման մասին մասնատրապէս:

Վերջին 7-րդ Ընդհ. ժող.ի որոշման համաձայն, ինչպէս յայտնի է, յաջորդ Ընդ. Ժ.ը պիտի գումարուի յառաջիկայ յուլիսին: Յիշեցնելով ձեզ այս, պիտի խնդրենք, որ աշխատիք օր առաջ ներկայացնել մեզ ձեր հարցերը որ ըստ այնմ կազմուի Ժ[ողով]ին օրակարգը: Պիտի խնդրենք նաեւ որ օր առաջ պատրաստէք շրջանի բոլոր հաշիւները ներկայացնելու համար Կեդր. հաշուեքննիչ մարմնոյն ու անոր միջոցաւ նաեւ Ը[նդհանուր] Ժ[ողով]ին:

Ընկ[երական] բարեւերով  
Ի դէմ Հայ[աստանի] բ[իւրո]յի  
ԱԲՐԱՀԱՄ

14-III-914, Կարին





Փաստ. 103-21

## Բ 5.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ ԹԻՒ 6 ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ-ՆԱՍԱԿԸ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵՆԵՐՈՒՆ ԵՒ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

[Կարին, 13-4-1914]

### Ընկերներ!

Վերջին քրտական շարժումը ինչպես արդեն սպասելի էր իր վրայ հրաւիրեց մեր մարմիններու ուշադրութիւնը: Չանազան տեղերէ հարցումներ կ'ուղղուին մեզ՝ պահանջելով տեղեկութիւններ քրտական շարժման, ինչպէս նաեւ բացատրութիւն մեր բռնելիք դիրքի մասին: Վերջին Ընդհ. Ժողովը ինչպէս զիտեք որոշած էր նպաստել քիւրտերու ազգային գիտակցութեան զարգացմանը եւ միաժամանակ աջակցիլ կառավարութեան՝ քիւրտ աւատապետութեան դէմ մղելիք պայքարին մէջ: Ընդհ. Ժողովը սակայն այս որոշումը տալով՝ չէր մտած անհրաժեշտ մանրամասնութիւններու մէջ եւ այդ պատճառով բաւական դժուար խնդիր մը կը ներկայանայ ճշդէլ մեր դիրքը քրտական արդի շարժման վերաբերմամբ: Կը թուի նոյնիսկ որ ներքին հակասութիւն կայ Ընդհ. Ժ.ի տուած այդ որոշման մէջ: Եթէ մենք նպաստելու ըլլանք քրտերու գիտակցութեան զարգացմանը, միւս կողմէ նաեւ պիտի աջակցինք շարժման ծաւալումին, իսկ աւատական ոյժը խորտակելու տեսակէտէն ալ պէտք է աջակցինք կառավարութեան: Ի՞նչ դիրք բռնել, ո՞ր կողմը թեքուիլ: Առաջիկայ Ընդհ. Ժ.ի մէջ անշուշտ այս խնդիրը պէտք է ըլլայ մեր զբաղումի գլխաւոր հարցը, բայց մինչ այդ մենք անհրաժեշտ կը համարենք դիմել մեր մարմիններուն խնդրելով որ յայտնեն իրենց կարծիքները քրտական շարժման հանդէպ մեր բռնելիք արդի դիրքի մասին: Մարմիններու կարծիքներն իմանալ անհրաժեշտ կը համարենք նաեւ այն տեսակէտով, որ ներկայիս մէկ կողմէ կառավարութիւնը պատրաստակամութիւն կը յայտնէ օգտուիլ մեր ոյժերէն, իսկ միւս կողմէ ալ շարժման յայտնի ղեկավարներէն մէկը առաջարկած է մեզ պաշտօնական բանակցութիւններ սկսիլ Դաշնակցութեան հետ: Մինչեւ այժմ հասած կարծիքները եթէ ամփոփենք, կարելի է բաժնել երեք գլխաւոր մասերու, այն է՝ Ա- Չէզոք մնալ. Բ- Աջակցիլ կառավարութեան եւ Գ- Միանալ քրտ[ական] շարժման: Հարկ կը համարենք այս երեք կէտերու մասին ալ յայտնել մեր կարծիքները:

Չէզոք մնալու առաջարկը ինքնրստիներեան անգործնական է: Այս տեսակէտի պաշտպանները իրենց տեսակէտը կը պաշտպանեն մեր թուլութիւնով, զենքի եւ ոյժի պակասով եւայլն: Բայց հէնց այդ պատճառով իսկ մենք չենք կրնար չէզոք մնալ եւ չպէտք է մնանք: Եթէ մենք զօրեղ ըլլայինք այդ պարագային թերեւս կարելի ըլլար մտածել չէզոքութեան մասին, բայց մենք այնքան թոյլ ենք, կամ գոնէ կը նկատուինք մեր շրջապատի համար, որ մեր թուլութենէն քաջալերուած, ամէն բոլոր պիտի փորձեն խախտել ու պիտի խախտեն մեր չէզոքութիւնը: Այս պարագաներու մէջ մեր կամքէն իսկ անկախ մենք չենք կրնար պահպանել չէզոքութիւն: Միւս կողմէ ալ միանալ ամբողջովին կառավարութեան հետ, նոյնպէս չենք կրնար թէկուզ այն պարզ պատճառով, որ մենք սխալ կը նկատենք կառավարութեան բռնած ուղղութիւնը: Քրտ[ական] շարժման դէմ ալ կառավարութիւնը կը փորձէ կռուիլ հին զենքերով յենուելով միմիայն զինուորական ոյժի վրայ եւ առանց ի նկատի առնելու աւատական կարգերու վերացման անհրաժեշտութիւնը. այսպիսով կառավարութեան մղած կռիւը աւատականութեան դէմ կը դառնայ նաեւ կռիւ քիւրտ ազգայնութեան զարթնումին դէմ, որը սկսեր է արտայայտուիլ արդէն, թէն այլանդակուած կրօնական եւ աւատական շաղախներով:

Երրորդ կողմէն չենք կրնար քրտ[ական] շարժման հետ կապուելու պատասխանատուութիւնը վերցնել մեր վրայ, աչքի առաջ ունենալով գլխաւորապէս հետեւեալ պատճառները՝

Ա- Քրտ. շարժումը ունի անկազմակերպ ու անորոշ վիճակ. ղեկավարներէն շատերը կը ձգտին ոյժը դարձնել բարենորոգումներու դէմ եւ շերիաթի անունով կը փորձեն քիւրտերը համախմբել կրօնական հողի վրայ:

Բ- Այս պայմաններու մէջ, քրտ. շարժման յաջողութեան պարագային, նոյն այդ ոյժը կարող է զօրեղ խաչըն-





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

դոտ հանդիսանալ մեր էական ձգտումներուն եւ առնուազն քալանի ու աներումի դուռը բանալ հայերուն դէմ:

Գ- Որ այժմ իսկ արդէն ապստամբներու կողմէ բռնութիւններ կը կատարուին հայ գիւղացիներու վրայ, փորձեր կ'ըլլան խլելու անոնց զէնքերը եւ սպառնալիքներ կ'ըլլան հայերուն:

Դ- Որ քիւրտ շարժման ղեկավարները, եթէ նոյնիսկ շարժման յաջողութեան տեսակէտէն վնասակար նկատեն հակահայ քայլերը, այնուամենայնիւ անոնք անզօր պիտի ըլլան վերցնել քիւրտ խուժանի հակահայ արանդական դարետը մտայնութիւնը, եւ արդէն մեզ հասած տեղեկութիւններէն գիտենք որ Բաղէշը պաշարող խուժանի կողմէ ծրագրուած է եղեր յաջողութեան պարագային «հաշի տեսնել» նաեւ հայերուն հետ:

Ե- Որ ղեկավարները՝ ըլլալով կրօնական կամ արատական պետեր, շարժումը անհրաժեշտօրէն պիտի տանին իրենց դիրքերու ու շահերու նկատումներով, պարագայ մը՝ որ չի կրնար հաշտուիլ բնաւ ոչ մեր եւ ոչ ալ մեր ժողովրդի շահերուն ու տեսակէտներուն հետ:

Այս պարագաներու մէջ ահա, ի նկատի ունենալով վերը յիշուած բոլոր կէտերը, մեր կարծիքով մեր դիրքը պիտի ըլլայ՝

Ա- Առաջնագոյն կարեւորութիւնը տալ ինքնապաշտպանութեան գործին. ամէն կերպ ու ամէն պարագայի բոլոր պատահականութեանց առջեւ պատրաստել մեր ժողովուրդը՝ համոզուած, որ միմիայն ընդդիմադրութեան պատրաստ ոյժը կրնայ քիւրտերը հեռու պահել հայերուն վրայ յարձակումներ գործելու գայթակղութենէն. եւ որովհետեւ կառավարութիւնը ինքն ալ միջոցներ ձեռք պիտի առնէ որպէսզի շարժումը բարդ կերպարանք չստանայ, պէտք է աւելի եւս շեշտել ուրեմն գիւղական պահակներու կազմակերպման անհրաժեշտութեան վրայ: Այս կէտի շուրջ ուրեմն մենք անպայման պիտի գործակցինք կառավարութեան հետ:

Բ- Թէ՛ կեդրոնի եւ թէ՛ գաւառներու մէջ պէտք է ամէն անգամ շեշտել կառավարութեան] մօտ, թէ որքան օգտակար է ու անհրաժեշտ արատական դրութեան ջնջումը եւ գիւղացիներուն սեփականատէր դառնալը: Ընկերային այս յեղաշրջումով միայն կարելի է վերջ տալ արդի վտանգաւոր շարժումին: Ատով քիւրտ տարրը ազատուելով ճորտական վիճակէն, միշտ կը ձգտի մնալ պետական ամբողջութեան մէկ մասը, եւ եթէ անկէ վերջն ալ քիւրտ ժողովրդի մէջ տեղի ունենայ ռեւէ շարժում, այդ կ'ըլլայ միմիայն ներքին կռիւ եւ բնաւ չի կրնար սպառնալ երկրի ընդհանուր շահերուն ու գոյութեանը:

Գ- Ծանօթացնել քիւրտ տարրը մեր ուղղութեան հետ եւ աշխատիլ որ անոնք ալ ընդունին մեր տեսակէտները եւ դնեն նոյն ընդհանուր պահանջները:

Դ- Ամէն միջոց ձեռք առնել քիւրտ յարձակումներու առջեւն առնելու համար, իսկ մասնակի ընդհարումներու պարագային ջանալ կողմացնել զանոնք:

Ահա մեր կարծիքները: Յայտնելով այս ամէնը ընդհանուր կէտերով, մենք դարձեալ պիտի խնդրենք մեր մարմիններէն եւ ընկերներէն որ փութան յայտնել մեզ իրենց կարծիքները:

Ընկերական բարեւներով  
Ի դիմաց Հայ[աստանի] բ[իւրոյ]ի  
ԱՐՏԱԻԱԶԴ

**[ԴՐՕՇԱԿԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ]**

**Ընկերներ!**

Ստացեր ենք իր ժամանակին Ուս. միութեան նամակը<sup>58</sup> ինչպէս նաեւ ժողովի հարցերը. նամակին առանձին կը պատասխանենք շուտով. կը զարմանանք, որ մինչեւ հիմա նամակ մը իսկ չգրեցիք մեզ, հակառակ որ նոր հասցէներ էիք ուզած կարեւոր լուրեր հաղորդելու համար: Գոնէ պատասխանեցէք մեր նամակներն ստանալնիդ: Պիտի խնդրենք որ ներկայ շրջաբերականը կարդալէ վերջ որկէք Փարիզ:

Ընդհ. ժողովի օրերը կը մօտենան. զանազան տեղերէ մեզ հարցումներ կ'ուղղուին գումարման վայրի մասին. վերջնական տեղը տակաւին որոշուած չէ, բայց ինչ ալ ըլլայ, համաձայն վերջին Ընդհ.ի որոշման, ժողովը պի-

58.- Տեսնել էջ 37-39:





տի գումարուի Երկրի մեջ. ի նկատի ունեցէք այս եւ պատասխանեցէք ըստ այնմ հարցում ուղղող մարմիններուն, եթէ կայ ի հարկէ:

Գարուն<sup>55</sup> վերադարձա՞ւ թէ ոչ. ո՛ր մնաց Վիզէնը<sup>11</sup>. իրենց առաքելութեան մասին մանրամասն թող տեղեկացնեն մեզ այլ: Գարոյի հեռագիրը՝ ուղղուած պաշտօնական մարմիններուն, ստացուած է: Ընտրական գործին մեջ մեր հարեւանները<sup>43</sup> այս անգամ ալ խաբեցին մեզ. մեր շրջանի ընտրութիւններու մեծ մասը արդէն վերջացած է. հայ թեկնածուներէն քուէներու մեծ մասը մինչեւ հիմա ստացած են Մատաթեան (մատնիչ) եւ Մեծատուրեան. այնպէս որ ոչ պատրիարքարանի եւ ոչ ալ այստեղի Ազգ. մարմնոյ թեկնածուները պիտի կրնան յաջողիլ: Իթթ[իհատ]ը գաղտնի ու յայտնի ոյժ կու տայ Մատաթեանի եւ իր ընկերոջ ընտրութեան:

Կառ[ավարութիւն]ը զինուորական ոյժ է հանած, Վարդօ, Մանազկերտ եւ ուրիշ գաւառներու մեջ քիւրտ պարագլուխներ ձերբակալելու համար. բաւական խիստ [դիրք] է բռնած առայժմ. շուկներուն մայելով նոր ընդհարումներն անխուսափելի են. հաւանական կը նկատուի որ քիւրտերն սկսին պարտիզանական կռիւներ:

Չմոռնաք բարենորոգումներու եւ ուրիշ նման կարեւոր խնդիրներու մասին տեղեկացնել մեզ:

ՆՈՅՆ





Բ 6.- ՉՈՐՄ ՆԱՍԱԿ ԱՐՄԷՆ ԳԱՐՈՅԷՆ

Հայկ. նահանգներու Ընդ. քննիչի պաշտօնին համար նախատեսուած թեկնածուներու վերջնական ընտրութիւնը կայացաւ 1914 թ. 2/15 Ապրիլին: Մինչ այդ կուսակցութիւնը Երոսպա առաքած էր արդէն Արմէն Գարոն (Փաստրմաճեան) եւ բժ. Յ. Չարեանը՝ նկատի առնուած թեկնածուներուն հանդիպելու եւ զանոնք նախապատրաստելու իրենց ստանձնելիք պաշտօնին:

Ստորեւ Պոլիս՝ Հ.Յ.Դ. Արեւմտեան բիւրոյին ուղղուած Արմէն Գարոյի չորս նամակները, որոնցմով ամփոփ գիծերու մէջ կը ներկայացնէ իրենց տարած աշխատանքները:

Փաստ. 116-44

Փարիզ, 15 Ապրիլ 1914

Ընկերներ,

Ամսուս 10էն ի վեր այստեղ եմ Վիգէնին<sup>11</sup> հետ միասին, բայց մինչեւ այսօր Պատրիարքարանէն եւ ոչ էլ Փաշա- յէն<sup>30</sup> յանձնարարական թուղթերը չհասան որ ըստ այնմ դիմումներն ընէինք:

Հեռագրեցինք Փաշային որ շտապեցնէ պէտք եղած թղթերը: Պատասխան ստացանք թէ ամսոյն 10ին ուղարկել է Վարանդեանի հասցէով: Հաւանական է որ վաղը կամ միւս օր թղթերն հասնին:

Փարիզ գրեթէ ոչ ոքի չկրցանք տեսնել. Զատկուայ տօներուն առթիւ բոլորը բացակայում են: Միայն Վիգէնը տեսնուեցաւ այստեղի քեռիին<sup>59</sup> հետ 2 անգամ եւ անկէ պէտք եղած յանձնարարականներն առաւ իրենց միւս ներ- կայացուցիչներուն վրայ:

Վաղը մեկնում ենք Բրիւքսէլ, ուր եւ կը սպասենք Փաշայի թղթերուն որպէսզի այդ canal-ով<sup>60</sup> ներկայանանք մեր մարդոցը իբր, եւ ոչ թէ քեռիներու canal-ով:

Մոստիճեանը<sup>61</sup> մէկ օրով եկաւ Լոնտոնէն եւ ըսաւ թէ չպիտի կարողանայ մեզ ընկերանալ իր անձնական գոր- ծերուն պատճառաւ. շատ շատ մէկ օրով պիտի կարողանայ Բրիւքսէլ գալ:

Թղթերու ուղանալուն պատճառաւ ի գուր մէկ շաբաթ այստեղ կորցրինք: Ուր մնացին Վահանին<sup>35</sup> ուղարկե- լիք document-ները Արեւմտեան բիւրոյին, դեռ չստացանք: Միւս կողմէ ժամանակ չմնաց. վայ թէ՛ վաղը միւս օրը ընտրութիւնը տեղի ունենայ եւ մարդիկը անմիջապէս ճամբայ ելնեն առանց որ մենք ժամանակ ունենանք հետե- րին գոնէ մէկ անգամ տեսնուելու:

Մեզ գրեցէք միշտ Շահպազի հասցէին եւ նա մեզ կը հասցնէ անմիջապէս:

A propos<sup>63</sup>, Շահպազին Եգիպտոսէն գրել են թէ մեր Համազասպը<sup>18</sup> այնտեղ է գնացել եւ առանց տեղական ըն- կերներուն հետ տեսնուելու, այս կողմ այն կողմ ըսել է թէ որոշ միտինով է գնացել Փաշային հետ տեսնուելու: Այնտեղ միայն թիւթիւնճեանին հետ է տեսնուել: Արդեօք դուք էք ուղարկել թէ ինքը իր գլխին. եթէ այս վերջինն է, օր առաջ գրեցէք այնտեղ պէտք եղած տեղերը որ անախորժ surprise-ներու<sup>64</sup> առաջ չգտնուինք, մանաւանդ, ի նկատի առած նրա ճարթ ու փուրթ բնաւորութիւնը:

Լաւ կը լինէր եթէ մեզ օր առաջ հեռագրով իմացնէիք այն քանտիտաններու<sup>65</sup> անունները, որոնք պիտի ընտր- ուին, որպէսզի անոնցմով միայն զբաղուէինք:

Սպասելով ձեր լաւ լուրերուն՝  
ԳԱՐՈ

59.- Այստեղ քեռին Ֆրանսայի մօտ Ռուսիոյ դեսպանի մասին է:  
60.- Ֆրանսերէն – խողովակով, միջոցաւ:  
61.- Մոստիչեան Յարութիւն – անդամներէն մէկը հայոց կաթո- ղիկոսի կողմէ նշանակուած հայկական պատուիրակութեան:  
62.- Ֆրանսերէն – փաստաթուղթերը:

63.- Ֆրանսերէն – ի դէպ:  
64.- Ֆրանսերէն – անակնկալներու:  
65.- Թեկնածուներու. հարցը կը վերաբերի հայկական նա- հանգներու համար իբրեւ ընդհանուր քննիչ նկատի առնուած թեկ- նածուներուն:







Փաստ. 116-46՝

S-Gravenhage, 19 Ապրիլ 1914

Սիրելիք,

Փարիզէն մեկնեցանք ամսուս 16ին, առանց ձեր ուղարկելիք թղթերն ստանալու եւ նոյն օրն իսկ կարդացինք թերթերում կատարուած ընտրութիւնը: Բրիւքսէլ մնացինք 24 ժամ եւ բաւական երկար տեսակցութիւն ունեցանք այնտեղի երկու քանիտատաներուն հետ: Թէեւ Փաշան<sup>30</sup> շատ էր գովում երկուսին էլ, բայց մեզ այնքան էլ դուր չեկան, մանաւանդ գեներալը, մի bon viveur-ի<sup>66</sup> տպաւորութիւն էր թողնում, իսկ քորոնէլ Carte աւելի փորձուած եւ էներժիք մարդ էր երեւում:

Ամսուս 17ին այստեղ հասանք բայց դեռ հնարաւորութիւն չունեցանք մարդոց հետ տեսնուելու. այսօր կէսօրին պիտի հանդիպինք քանիտատաներէն մէկուն հետը որը չէ ընտրուած, իսկ վաղը կամ միւս օր միայն իսկականին հետ, որը քաղաքէս հեռու է բնակում: Հաւաքած տեղեկութեանց նայելով Mr. Westeneng բաւական յարգուած մարդ է, մօտ 20 տարի հոլլանտական գաղութներում եղած: Իսկ միւսը աւելի homme de cabinet<sup>67</sup> եւ զինուորական, թէեւ այստեղի քեռին<sup>68</sup> ցաւում է, որ նա չէ ընտրուած:

Ինչպէս լսում ենք շուտով պիտի մեկնին դէպի Պոլիս ընտրուածները եւ հազիւ թէ մենք հնարաւորութիւն եւ միջոց ունենանք միւսին (նորվեգիացուն) տեսնելու եթէ մինչեւ մէկ շաբաթ նա ճամբայ ելնէ:

Մոստիճեանը չկարողացաւ մեզ ընկերանալ իւր անձնական գործերուն պատճառաւ, թէեւ խօսք տուաւ գոնէ մէկ օրով գալու, բայց դժուար թէ տեղէն շարժուի:

Տեսակցութենէն յետոյ մանրամասն կը գրեմ ընտրուածի մասին:

Բարեկներով բոլորիդ՝  
ԳԱՐՕ

Փաստ. 116-47

La Haye, 21 Ապրիլ 1914

Ընկերներ,

Այսօր վերջապէս տեսնուեցանք. նշանակուածներէն մէկը՝ Mr. Westenenk, մօտ 3 ժամ շարունակ հետը խօսեցինք, վաղն էլ ամբողջ օրը միասին պիտի լինինք, ինչպէս նաեւ միւս օրը:

Առաջին տպաւորութիւննիս շատ լաւ էր. ինքը երիտասարդ է, 44-45 տարեկան, եւ մօտ 20 տարի colonial administration-ի<sup>69</sup> մէջն է եղած: Շատ հետաքրքրուած է մեր իրականութեամբ, բայց առայժմ գրեթէ ոչինչ չգիտէ. նոր է սկսել ծանօթանալ մեր պատմութեան եւ երկրին հետ:

Մինչեւ հիմա տեսածներէս ամենայնաւորը եւ ամենահամակրելին է երեւում:

Միւսի մասին հաւաքած տեղեկութեանց նայելով լաւ մարդ է երեւում. ինքը զինուորական է եւ բաւական աչքի ընկնող պաշտօն ունի իր երկրում:

Աշխատում ենք նրա հետ էլ մի rendez-vous<sup>4</sup> սարքել եւ հաւանական է որ երկուսին միասին բերենք եւ աշխատինք որոշ եզրակացութեան գալ միասին: Թէեւ շատ ուշ ենք մնացած, բայց շնորհիւ մեր Վիգէնի<sup>11</sup> աներեսութեանը պիտի յաջողինք գոնէ մի շաբաթով ուշացնել նրանց մեկնումը, որպէսզի հնարաւորութիւն ունենանք մի գործ տեսնելու:

Առայժմ այսքան. վաղը կամ միւս օրը աւելի մանրամասն կը գրեմ, թող թէ մեր դիպլոմատը<sup>70</sup> արդէն գրում է ամէն օր եւ ինձ հայտնուի որ ծուլանում եմ:

Մէկ խօսքով 10 օրուայ թափառումներից յետոյ այսօր մի քիչ սրտերնիս թեթեւցաւ:

Համբոյրներով՝  
ԳԱՐՕ

66.- Ֆրանսերէն – կենցաղասէր, զուարճասէր մարդ:  
67.- Ֆրանսերէն – բառացի գրասենեակի մարդ, այսինքն պաշտօնէս:  
68.- Այսինքն հոլանտական պետութեան մօտ Ռուսիոյ դեսպանը:

69.- Ֆրանսերէն – գաղթային վարչակազմի:  
70.- Դիւանագէտը. այս պարագային ակնարկութիւնը բժ. Յ. Չարեանին (Վիգէն) է:







ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Փաստ. 116-48

Փարիզ, 27 Ապրիլ 1914

Սիրելիք,

Երէկ վերադարձանք La Haye-ից, այնտեղ վերջացնելով մեր տեսակցութիւնները: Ինչպէս միւս նամակումս գրել էի, գնացինք մեր մարդուն<sup>71</sup> քաղաքը եւ ծանօթացանք իր ընտանիքի հետ:

Իրենց ապրուստով, շատ համեստ եւ համակրելի ընտանիք են. եթէ ուզուի էք մի քիչ էլ provinciale<sup>72</sup> եւ դեմոկրատ մարդիկ:

Մեր տուած թղթերը կարդացել էր եւ աւելի տեղեակ է երեւում: Շատ մը հարցեր տուաւ մեզ եւ լաւ մը հասկըցուցինք իրեն իւր գործի դժուարութիւնը:

Բաժանուելիս քանիցս մեզ շնորհակալութիւն յայտնեց մեր միսիոնին համար ըսելով որ ինքը ոչ մի տեղեկութիւն չուներ հայկական հարցի մասին. մեզմէ լսածները իրեն շատ բան պարզեցին:

Մանրամասնօրէն պարզեցինք իրեն մեր կուսակցութեան դերը այս գործում եւ շեշտեցինք որ առանց մեր աջակցութեան ոչինչ պիտի կարողանայ յաջողցնել:

Մէկ խօսքով՝ հոլլանտացուն նկատմամբ կարելի է ըսել որ ըրինք այն ինչ որ անհրաժեշտ էր. հիմա մնում է միւսը:

Այսօր երեկոյեան պիտի իմանանք միայն նրա գալու մասին եւ հաւանական է որ վաղը կ'ունենանք առաջին հանդիպումը նրա հետ:

Միւսը մեզ խոստացաւ գալ այստեղ երբ հեռագրենք Նորվեկիացու գալուն մասին որպէսզի իրար հետ ծանօթանան եւ միասին խորհրդակցին իրենց պահանջներու նկատմամբ (instruction-ները<sup>73</sup> մշակելու ժամանակ):

Եթէ նորվեկիացին էլ միւսին նման կարողանանք պատրաստել, այն ատեն հանգիստ սրտով երկուսին էլ ճամբայ կը հանենք դէպի ձեզ՝ յանձնելով ձեզ մնացածին մասին հոգալ:

4-5 օրէն այստեղ կը վերջացնենք մեր գործը. ես կը մեկնիմ դէպի ժընեւ սպասելով դէպքերուն, իսկ Վիգէնը<sup>11</sup> դեռ չէ որոշած իր ընելիքին մասին, հիւսիս<sup>74</sup> վերադառնայ թէ ձեզ մօտ գայ:

Նա մանրամասնօրէն կը գրէ քիւրտական շարժման մասին իր գիտցածները: Իմ կարծիքով ոչ մի վնաս չկայ ատոնց հետ յարաբերութեանց մտնելում, նախ իմանալու համար թէ ինչ կ'անցնի կը դառնայ եւ երկրորդ՝ ի հարկին canaliser<sup>75</sup> ընելու համար յօգուտ մեր դատին:

La Haye-էն գրեցի Շահպազին որ իմ կողմէն հեռագրէ Կարին՝ Վալիին եւ առաջնորդին պաշտօնապէս իմ քանտիտաթիւրս դնելու: Քանի որ գործը ինատի<sup>76</sup> եկաւ, ես էլ այն կարծիքի եմ որ պէտք է պայքարել մինչեւ վերջը եւ աշխատիլ որ թէ Պատրիարքարանը եւ թէ Իթթիհատը մի անգամ ընդմիջտ համոզուին որ ներքին գաւառներում առանց մեզ ոչինչ չեն կարողանալու ընել: Բայց ցաւալին այն է, որ այդտեղի ընկերները իրար հակասելով պատրիարքին քաջալերեցին իր յիմար քայլում:

Իմ բաժինս՝ ես ուրախ կը լինէի որ ոչ պատրիարքին եւ ոչ էլ մեր թեկնածուները անցնէին, այլ զուտ թուրքական մարդիկ ինչպէս արդէն հոտը գալիս է<sup>77</sup>: Այդ մի լաւ դաս կը լինէր մերոնցմէ շատերուն համար եւ թէ այդ գաւառի անունից խօսող բայց պոլսեցոց ձեռքը խաղալիք դարձած պատրիարքին: Եւ այդ դասէն կ'օգտուէինք:

Բարեկներով՝  
ԳԱՐՕ

71.- «Մեր մարդը» այստեղ Վեստենենկն է:  
72.- Ֆրանսերէն – գաւառացի:  
73.- Ֆրանսերէն – խօսքը կը վերաբերի Ընդի. քննիչներու իրատարբեանց մասին մշակուող հրահանգներուն:  
74.- Հիւսիս, այսինքն Ռուսիա, աւելի մշտնապէս՝ Փեթրասպուրկ:  
75.- Ֆրանսերէն – հուճարել:

76.- Թուրքերէն – յամառութեան, կամակորութեան:  
77.- Արդարեւ 1914 թ. ընտրութիւններուն Արմէն Գարոյի թեկնածութիւնը ձայնորութեան պիտի մատնուէր Իթթիհատի խաղերուն հետեւանքով: Կարնոյ հայ թեկնածուներէն պիտի ընտրուէին Վարդգէս (Սերենկիլեան) եւ Իթթիհատի թեկնածու Յովսէփ Մատաթեան:





Փաստ. 116-49

Բ 7.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻՆ

Պոլիս, 6/19 Մայիս 1914

Ստացած ենք ձեր ապրիլ 11 թուակիրը: Տակաւին կը սպասենք Ընդհ. ժողովի հարցերուն եւ հաշիւներուն: Գիտէք որ ժամանակը շատ կարճ է, եւ յապաղումներուն պատասխանատու չենք կրնար ըլլալ: Եթէ տակաւին չէք ստացած նախորդ Կ. Կ.ի հաշիւները, կը յանձնարարենք վերջին անգամ մըն ալ գրել եւ խստորէն պահանջել, այլապէս պատասխանատուութիւն կը հրաւիրեն իրենց վրայ:

Թուրքերը կը դժկամակին որեւէ իրաւասութիւն տալ երկու Քննիչներուն, եւ պարզապէս իրենց Նահանգային օրէնքը կը ցուցնեն, ինչ որ իրականին մէջ արժէք չունի եւ պիտի ոչնչացնէ բարեկարգութեան թեթեւ յոյսերն ալ: Հայկ. շրջանակները թելադրութիւններ մշակած էին, որպէսզի Քննիչները աստիճան մը գործադիր իշխանութիւն ունենան. սակայն նոյնիսկ Բարենորոգման ծրագիրն ստորագրող դեսպանները չպաշտպանեցին զայն. գերմանականը շատ վերապահ է, ռուսականը նոր վերադարձաւ, իսկ իր փոխանորդը սրտով չէր հետապնդեր. միւսները անտարբեր են: Այնպէս որ իրերը ձգտած են իրենց վիճակին: Այժմ երկու Քննիչները իրենք իրենց իրաւասութեանց ծրագիր մը կը պատրաստեն հոլանտական դեսպանին հետ, հեռով հայկ. շրջանակէ: Դիմում եղած էր ազգային շրջանակէ գործակցութեան համար, բայց հոլանտական դեսպանը չթոյլատրեց:

Երկու քննիչները երեւութապէս լաւ են. մերոնք ծանօթացած էին Եւրոպայի մէջ: Լրջօրէն գիտակից կը թուին իրենց պարտականութեան, եւ նոյնիսկ յայտներ են որ կը նախընտրեն վերադառնալ, քան ճամբայ իյնալ առանց որոշ իրաւասութեան: Կառավարութիւնը պայման դրած է որ Ֆէս գործածեն: Իւրաքանչիւրը պիտի ստանայ ամսական 450 օսմ. ոսկի, որուն համար սակարկութեան մէջ են: Քննիչները կը պահանջեն որ յատուկ ապարանքներ շինուին իրենց համար: Հաւանաբար մէջ կը մտնուի խառն խումբ մը: Ամէն պարագայի մէջ, շատ բան մտած կը մնայ, եւ երկու եւրոպացիները առ այժմ կը զգուշանան հայերու հետ տեսնուելէ:

Իթիբիհատի հետ մեր յարաբերութիւնները կը մնան անփոփոխ: Բիւրոյի վերջին ժողովին մէջ առաջարկ եղաւ յարաբերութեան ձեւ մը գտնելու, բայց մերժուեցաւ: Այնպէս որ, մեր վերապահ եւ սպասողական ընթացքը պիտի շարունակուի մինչեւ Ընդհ. ժողով, եթէ անակնկալ դէպքեր չպատահին:

\*  
\*\*

Քրտական շարժման հանդէպ ալ մնացինք չէզոք, մանաւանդ որ շարժումը պղտոր հանգամանք ունէր, թէեւ այժմ խլրտումը զսպուած կը թուի, բոլոր պարագլուխները ձեռքալուծած ըլլալով: Իթիբիհատը բուն իսկ իրեն դէմ նկատելով շարժումը, աննախընթաց խստութեամբ պատժեց յանցաւորները, մինչ վեց տարիէ ի վեր չլսելու կը զարնէր այդ միեւնոյն աւագակներուն դէմ տեղացող գանգատները եւ անոնց մազին անգամ չէր ուզեր դպչիլ:

Ռուսերը ծրագիր կը մշակեն Հայաստանի մէջ դրամատուն մը բանալու համար: Իրենց պետական շրջանակներէն յորդոր եղած է որ հայերը շատ խստապահանջ չըլլան, համերաշխ մնան, աւելի ոյժ տան կուլտուրական գործերուն, եւ իրենք յանձն կ'առնեն թոյլ չտալ, որ մեր գլխուն աղէտներ պատրաստուին եւայլն: Յոյս կայ նաեւ որ ձեւ մը գտնուի Լիթիւի գոհերը ազատելու, ընդհ. ներումով կամ անհատական խնդրագրերով<sup>78</sup>:

Ընկերական բարեկներով  
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

78.- Ի վերջոյ երկրորդ Ընդհանուր քննիչին՝ Հօֆի համար Վանը պիտի նշանակուի իբրեւ պաշտօնատեղի:

79.- Հարցը կը վերաբերի 1912 թ. «Գաշնակցութեան գործով» Սիւլիպիա արքայազններուն:

— Ստիպողական: Շտապեցէք Ընդհ. ժողովին համար, այլապէս շատ ուշ կը մնաք:





Փաստ. 1402-18

**Բ 8.- ԲԱՐՍԵՂ ՇԱՀՊԱՉԷՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՍԻՏԵԻՆ**

Փարիզ, 26 Մայիս 1914

Ընկերներ,

Կոտորածի վտանգը հետզհետե կը մեծնայ, Հայաստան զինուորով լեցուած է. բարենորոգումները վիժեցան. շատ հաւանականութեամբ շուտով կը սկսի մասսայական խուզարկութիւններ եւ ձերբակալութիւններ. եւ ոչ ոք տեղէն չի կրնար շարժիլ. Թալաթի եւ ռուս նախարարներու տեսակցութիւնը Լիվատիայի<sup>80</sup> մէջ ով գիտէ ինչ հիմներու վրայ... ապահովեց թուրքերու ազատ ասպարէզ Հայաստանի մէջ: Քիւրտական ապստամբութեան զսպումէն անմիջապէս յետոյ պիտի ձեռնարկեն Դ[աշնակցութեան] ջնջումին ու զսպումին:

Իսկ եթէ Ալլանիան գրաւուի Աւստրիայէն եւ Իտալիայէն, Հայաստանի խնդիրը մէջտեղ պիտի դրուի Ռուսիոյ կողմէ եւ այն ատեն դարձեալ հայերը պիտի վճարեն իրենց կաշիով բոլոր ծախքերը: Պոլսոյ մեր ընկերներուն ընթացքը անմեկնելի թուլութիւն մը կը յատկանշէ: Թուրքիա մեր մամուլը կաշկանդած է, գոնէ Հայրենիքը եւ Ամերիկայի Կ. Կ[ոստանտնուպոլիս]էն առաջ անցնին եւ հնչեցնեն ահազանգը. աւելի երկարատեւ լռութիւն մեղք է. պէտք է դնել համազգային ինքնապաշտպանութեան խնդիրը բացէ ի բաց:

Ձեր՝

ԲԱՐՍԵՂ ՇԱՀՊԱՉ

80.- Լիվատիա – Խրիմ, Եալթայի մօտ բնակավայր, ուր Թալաթ 1914 թ. Մայիսին հանդիպում ունեցած էր Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Մերզէյ Սազանովի հետ:



Փաստ. ՍՎ. 80-3

**Բ 9.— INSTRUCTIONS RELATIVES AUX  
ATTRIBUTIONS ET  
A LA COMPETENCE DES INSPECTEURS  
GENERAUX**

**Art[icle] 1.** Les Ins[pecteurs] Généraux établiront leur siège dans la ville de leur secteur respectif qu'ils jugeront répondre le mieux au besoin du service.

Ils fixeront eux même l'époque et le mode d'exécutions et tournées qu'ils auront à faire dans leur secteur soit personnellement soit par voie de délégué sous cette réserve que tous les mois ils devront adresser tant au Ministère de l'Intérieur qu'au Ministère de la justice un rapport sur la situation dans le secteur au point de vue de l'administration civile et celui de l'administration judiciaire.

**Art. 2.** Les Ins[pecteurs] Généraux auront le contrôle de l'administration de la justice, de la police et de la Gendarmerie de leur secteur.

Dans le cas où les forces de sûreté publique s'y trouveraient insuffisantes et sur la demande de l'Inspecteur Général, les forces militaires devront être mises à sa disposition pour l'exécution des mesures prises dans les limites de sa compétence. En cas de demande par les Inspecteurs Généraux, des employés télégraphistes seront détachés à leur résidence privée pour l'expédition de la correspondance officielle. Il sera élaboré à l'usage des Ins. Généraux, un code spécial pour leur permettre de correspondre en chiffre avec le Grand Vézirat et les Ministères de l'Intérieur et de la Justice. Des gendarmes ou soldats seront également mis à leur disposition dans leur résidence privée.

**Art. 3.** Les Inspecteurs Généraux veilleront à l'application dans leur secteur respectif des dispositions de la loi sur l'administration des vilayets et des Communes et tous les autres lois et règlements de l'Empire visant les matières de l'administration, de la justice de la police et de la gendarmerie.

Փաստ. 116-50

**ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ՔՆՆԻՉՆԵՐՈՒ ԻՐԱԻԱՍՈՒԹԵԱՆՑ  
ԵՒ ՁԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ  
(Հարազատ քարգմանութիւն  
ֆրանսերէն բնագրէն)**

**Յօդուած 1.— Ընդհ.** Քննիչները իրենց կեդրոնը պիտի հաստատեն իրենց պատկան շրջանակի ա՛յն քաղաքին մէջ գոր ա մէնէն աւելի համապատասխան կը գտնեն իրենց պաշտօնավարութեան պահանջներուն:

Քննիչները իրենք իսկ պիտի նշանակեն ժամանակը եւ ձեւը այն քննութիւններուն եւ պտոյտներուն գորս պիտի կատարեն իրենց շրջանին մէջ, ըլլայ անձնապէս, ըլլայ պատուիրակի միջոցաւ, այն վերապահութեամբ որ ամէն ամսու պարտաւոր են թէ ներքին գործերու եւ թէ դատական նախարարութեան ուղղել տեղեկագիր մը իրենց շրջանակի կացութեան մասին, քաղաքային եւ դատական վարչութեան տեսակէտներով:

**Յօդ. 2.— Ընդհ.** Քննիչները հակակշռի պիտի ենթարկեն իրենց շրջանակի դատական, ոստիկանական եւ ժանտարմական վարչութիւնը:

Եթէ հանրային ապահովութեան ուժերը անբաւական ըլլան, Ընդհ. Քննիչին պահանջովով, զինուորական ուժը պէտք է դրուի իր տրամադրութեան տակ, իր ձեռնհասութեան սահմանին մէջ որոշուած միջոցներու գործադրութեան համար: Եթէ ընդհ. քննիչները պահանջեն, հեռագրիչ պաշտօնեաներ պիտի զրկուին իրենց անձնական բնակարանը, պաշտօնական թղթակցութիւնները փութացնելու համար: Ընդհ. քննիչներու գործածութեան համար պիտի պատրաստուի մասնաւոր հեռագրական բառարան մը, որ պէսզի կարենան ծածկագիր թղթակցիլ մեծ եպարքոսութեան եւ ներքին ու դատական նախարարութիւններուն հետ: Նմանապէս ժանտարմաներ կամ զինուորներ պիտի դրուին իրենց տրամադրութեան տակ, իրենց անձնական բնակարանին մէջ:

**Յօդ. 3.— Ընդհ.** Քննիչները, իրենց պատկան շրջանակին մէջ, պիտի հսկեն գործադրութեանը նահանգներու եւ համայնքներու օրէնքին տրամադրութեանց, ինչպէս եւ կայսրութեան բոլոր այն օրէնքներուն եւ կանոններուն որոնք կը վերաբերին վարչութեան, արդարադատութեան, ոստիկանութեան եւ ժանտարմրրի գործերուն:



## ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՄԻՐ

61

**Art. 4.** Les Ins. Généraux soumettront à la S[ublime] Porte après avoir pris l'avis des Gouverneurs Généraux, des avant-projets de loi accompagnée d'exposée de motifs, pour demander la modification des dispositions des lois de l'Empire qui ne correspondraient pas au besoin réel de leur secteur. Ils établiront également des projets d'instruction susceptibles de faciliter l'application desdites lois dans leur secteur respectif.

Ces projets d'instruction devront être soumis à l'approbation du Département qu'ils intéressent.

**Art. 5.** Les Ins. Généraux désigneront des localités nécessitant l'établissement d'une organisation administrative civile en conformité avec l'article 3 de la loi sur l'administration des vilayets et après avoir pris à ce sujet l'avis des gouverneurs Généraux et les commandants des Corps d'Armée ils prépareront les avant-projets des lois y relatifs. Ils détermineront le point d'attache des villages et des communes prétendant relever des deux vilayets. Ils feront connaître au ministère de l'Intérieur leur avis sur les décisions qui conformément aux dispositions de l'article susdit seraient prises par les Conseils Généraux de Vilayets au sujet du changement des chefs-lieux des Sandjaks et des Cazas, de la modification et de la rectification des limites de ces Sandjaks et Cazas ainsi qu'au sujet des changements qu'il y aurait d'apporter à leur répartition administrative.

**Art. 6.** En conformité de l'article 4 de la loi sur les vilayets les Inspecteurs Généraux élaboreront et soumettront au Ministère de l'Intérieur des projets de règlements spéciaux sur l'administration et l'installation des tribus nomades se trouvant dans leur secteur en tenant compte de leur us et coutumes, de leur besoins sociaux et des exigences locales.

De concert avec les Valis ils arrêteront les mesures nécessaires pour prévenir toute déprédation de leur part dans les régions habitées jusqu'à ce que ces tribus soient installées et accoutumées aux travaux agricoles et industriels.

**Art. 7.** Il incombe entre autres devoirs aux Ins. Généraux de consolider la bonne harmonie entre les divers éléments ethniques de leur secteur, de dissiper s'il en existe les malentendus qui les séparent, d'assurer l'égalité des droits de tous et de faire respecter

**Յօդ. 4.**– Ընդհ. քննիչները, կուսակալներուն կարծիքն առնելէ յետոյ, Բ. Դրան պիտի ներկայացնեն օրինագիծեր, պատճառաբանութիւններով միասին, պահանջելու համար բարեփոխումը կայսրութեան օրէնքներու ա՛յն տրամադրութեանց որոնք չեն համապատասխաներ իրենց շրջանակներու իրական պահանջին: Պիտի յօրինեն նաեւ հրահանգի նախագիծեր, դիւրացնելու համար յիշուած օրէնքներուն կիրառումը իրենց պատկան շրջանակին մէջ:

Այս հրահանգի նախագիծերը պէտք է ենթարկուին պատկան պաշտօնատան հաւանութեանը:

**Յօդ. 5.**– Ընդհ. քննիչները պիտի նշանակեն վայրերը որոնք անհրաժեշտ կը դարձնեն քաղաքային վարչական կազմակերպութեան մը հաստատումը, համաձայն Վիլայէթներու օրէնքի Յօդ. յօդուածին, եւ այս մասին կուսակալներուն եւ գօրաբանակներու հրամանատարներուն կարծիքն առնելէ յետոյ, պիտի պատրաստեն անոնց վերաբերող օրինագիծերը: Անոնք պիտի որոշեն թէ ո՛ր նահանգէն կախում ունին այն գիւղերն ու համայնքները որոնք իրենք գիրենք կը նկատեն իբրեւ երկու նահանգներու կապուած: Անոնք ներքին գործերու նախարարութեան պիտի հաղորդեն իրենց կարծիքը՝ այն որոշումներու մասին, որոնք, համաձայն յիշուած յօդուածին, պիտի տրուին Նահանգային ընդհ. ժողովներուն կողմէ, սանձաքններու եւ գազաններու կեդրոններուն փոփոխման, այդ սանձաքններու եւ գազաններու սահմաններուն բարեփոխման եւ սրբազրութեան, ինչպէս եւ անոնց վարչական բաշխման մէջ պէտք եղած փոփոխութեանց մասին:

**Յօդ. 6.**– Համաձայն Նահանգային օրէնքի 4րդ յօդուածին, Ընդհ. քննիչները պիտի պատրաստեն եւ ներքին գործերու նախարարութեան պիտի ներկայացնեն մասնաւոր կանոնագիծեր՝ իրենց շրջանակին մէջ գտնուած վաչկատուն ցեղերու զետեղման եւ վարչութեան մասին, նկատի առնելով անոնց սովորոյթները եւ ընկերային պէտքերն ու տեղական պահանջները:

Համախորհուրդ վալիներուն հետ, անոնք անհրաժեշտ միջոցները պիտի որոշեն, արգիլելու համար վաչկատուններուն կողմէ որեւէ աւարառութիւն բնակութիւն հաստատուած վայրերու մէջ, մինչեւ որ այդ ցեղերը տեղաւորուին եւ վարժուին հողագործական եւ ճարտարագործական աշխատանքներու:

**Յօդ. 7.**– Ուրիշ պարտականութիւններու կարգին, Ընդհ. քննիչներուն կ'իյնայ ամրապնդել ներդաշնակութիւնը՝ իրենց շրջանակի ցեղային զանազան տարրերուն միջեւ, փարատել զանոնք անջատող թիւրիմացութիւնները, եթէ երբեք կան, ապահովել բոլորին իրաւունքի հաւասարութիւնը եւ ընդհանուր կերպով մը





d'une façon générale la liberté et les droits de chacun. Dans cet ordre d'idées les Ins. Généraux auront notamment à exercer une surveillance directe sur le règlement des conflits en matière de possession de terre qui en certaines localités divisent les éléments divers de la population.

**Art. 8.** Il sera de compétence et du devoir des Inspecteurs Généraux de veiller à ce qu'il soit procédé sous leur surveillance et dans le plus bref délai possible à un recensement définitif établissant la proportion exacte des différentes religions, nationalités et langues dans leur secteur respectif.

Les Ins. Généraux veilleront à l'application dans leurs secteurs respectifs des dispositions suivantes arrêtées par le gouvernement Impérial:

Les membres élus aux Conseils Généraux (Medjlissioumoumi) et aux Comités (Endjumen) des vilayets de Van et Bitlis seront par moitié musulmans et non musulmans. Dans le vilayet d'Erzeroum si le recensement définitif n'est pas effectué dans un délai d'un an, les membres des conseils généraux seront de même élus sur la base de moitié comme dans les deux vilayets susnommés. Dans les vilayets de Sivas, Kharpout et Diarbékir les membres des Conseils Généraux seront dès à présent élus sur la base du principe de la proportionnalité. A cet effet jusqu'au recensement définitif le nombre des électeurs musulmans restera déterminé d'après les listes ayant servi de bases aux dernières élections et le nombre des non-musulmans sera fixé d'après les listes qui seront présentées par leurs communautés. Si cependant des difficultés matérielles rendaient ce système électoral provisoire impraticable, les Inspecteurs Généraux auront le droit de proposer pour la répartition des sièges aux Conseils Généraux des trois vilayets Sivas, Kharpout et Diarbékir une autre proposition plus conforme aux besoins et aux conditions actuelles desdits vilayets.

Dans tous les vilayets où les Conseils Généraux seront élus sur la base du principe de la proportionnalité la minorité sera représenté dans les Comités (endjumen).

Les membres élus aux Conseils Administratifs seront comme par le passé par moitié musulmans et non-musulmans.

Au moins que les Insecteurs Généraux n'y voient d'inconvénient le principe d'égalité entre musulmans et non musulmans sera appliqué pour le recrutement

յարգել տալ իւրաքանչիւրին ազատութիւնն ու իրաւունքները: Գաղափարներու այս կարգին մէջ, Ընդհ. քննիչները մանաւանդ ուղղակի հսկողութիւն մը ի գործ պիտի դնեն կարգադրելու համար հողային սեփականութեան այն վէճերը որոնք կարգ մը տեղերու մէջ կը բաժնեն ազգաբնակչութեան զանազան տարրերը:

**Յօդ. 8.— Ընդհ. քննիչներու ձեռնհասութեան եւ պարտականութեան մաս կը կազմէ հսկել որ իրենց վերակացութեան տակ եւ կարելի եղածին չափ կարճ ատենի մէջ վերջնական մարդահամար մը կատարուի, հաստատելով իրենց պատկան շրջանակի զանազան կրօններու, ազգութիւններու եւ լեզուներու համեմատութիւնը:**

Ընդհ. քննիչները իրենց պատկան շրջանակներուն մէջ պիտի հսկեն կայսերական կառավարութեան կողմէ որոշուած հետեւեալ տրամադրութեանց կիրառման.—

Վանի եւ Բաղէշի նահանգներու Ընդհ. ժողովներուն (Մէճլիսի ումումի) եւ նահանգային խորհուրդներու (էնճիւմէն) ընտրովի անդամները պիտի ըլլան կէս առ կէս իսլամ եւ ոչ-իսլամ: Կարինի նահանգին մէջ, եթէ վերջնական մարդահամարը կատարուած չըլլայ մէկ տարիէն, Ընդհ. ժողովներու անդամները նոյնպէս պիտի ընտրուին կէս առ կէսի հիման վրայ, ինչպէս վերը յիշուած երկու նահանգներուն մէջ: Սեբաստիոյ, Խարբերդի եւ Տիգրանակերտի նահանգներուն մէջ, Ընդհ. ժողովներու անդամները այժմէն իսկ պիտի ընտրուին համեմատական սկզբունքի հիման վրայ: Այս առթիւ, մինչեւ վերջնական մարդահամար, իսլամ ընտրողներու թիւը պիտի որոշուի համաձայն վերջին ընտրութեանց իբրեւ հիմ ծառայած ցուցակներուն, իսկ ոչ-իսլամներու թիւը պիտի որոշուի իրենց հասարակութեանց կողմէ ներկայացուած ցանկերով: Եթէ սակայն նիւթական ղեկավարութիւններ անգործադրելի դարձնեն ընտրական այս առժամեայ դրութիւնը, Ընդհ. քննիչները իրաւունք պիտի ունենան երեք նահանգներուն՝ Սեբաստիոյ, Խարբերդի եւ Տիգրանակերտի ընդհ. ժողովներու եւ աթոռներուն բաշխման համար առաջարկել ուրիշ համեմատութիւն մը, որ աւելի համապատասխան ըլլայ յիշուած նահանգներու արդի պէտքերուն եւ պայմաններուն:

Այն բոլոր նահանգներուն մէջ ուր Ընդհ. ժողովները պիտի ընտրուին համեմատականութեան սկզբունքով, փոքրամասնութիւնը ներկայացուցիչ պիտի ունենայ էնճիւմէններուն մէջ:

Վարչական ժողովներու (Մէճլիսը իտարէ) անդամները պիտի ըլլան կէս առ կէս իսլամ եւ ոչ-իսլամ, ինչպէս անցեալին մէջ:

Եթէ Ընդհ. քննիչները անպատեհութիւն չտեսնեն, երկու շրջանակներուն մէջ, իսլամի եւ ոչ-իսլամի միջեւ







**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

de la police et de la gendarmerie dans les deux secteurs, à mesures que les postes deviendraient vacants.

Le même principe d'égalité sera appliqué autant que possible pour la répartition de toutes les autres fonctions publiques dans les deux secteurs.

**Art. 9.** Les Ins. Généraux contrôlent directement ou indirectement le mode d'accomplissement du service de tous les fonctionnaires, vérifient leur degré de capacité et de diligence.

Ils feront dresser des états de service de tous les fonctionnaires.

**Art. 10.** Les Inspecteurs Généraux révoquent selon le cas tous les fonctionnaires dont ils auront constaté l'insuffisance ou la mauvaise conduite en défférant à la justice ceux qui se seraient rendus coupables d'un acte puni par les lois, ils remplacent les fonctionnaires subalternes révoqués par de nouveaux titulaires remplissant les conditions d'admission et capacité prévus par les lois et les règlements.

Ils auront le droit de présenter à la nomination du gouvernement de sa Majesté le Sultan les fonctionnaires supérieurs. De toutes les mesures de révocation prises ils préviennent immédiatement les ministères compétents par des dépêches télégraphiques brièvement motivées suivies dans la huitaine du dossier de ces fonctionnaires et d'un exposé des motifs détaillé.

Les fonctionnaires supérieurs sont\*:

Les décisions relatives aux fonctionnaires relevant directement des Valis seront communiquées à ces derniers.

**Art. 11.** Dans les cas où il serait constaté des actes commis par les valis nécessitant l'emploi des mesures de rigueur urgentes les Ins. Généraux soumettront par télégraphe le cas au Ministère de l'Intérieur qui en saisira immédiatement le Conseil des Ministres lequel statuera dans un délai maximum de 4 jours après la réception du télégramme de l'Inspecteur Général.

Հաւասարութեան սկզբունքը պիտի գործադրուի ուստիկանութեան եւ ժանտարմըրիի հաւաքման համար, հետզհետէ, երբ տեղեր բացուին:

Հաւասարութեան միեւնոյն սկզբունքը պիտի գործադրուի, որքան հնար է, երկու շրջանակներուն մէջ, միւս բոլոր հանրային պաշտօններու բաշխման համար:

**Յօդ. 9.-** Ընդհ. քննիչները հակակշիռ ի գործ կը դնեն, ուղղակի կամ անուղղակի, բոլոր պաշտօնեաներու պաշտօնավարութեան ձեւին վրայ, ստուգելով անոնց կարողութեան եւ փութաջանութեան աստիճանը: Անոնք կազմել պիտի տան բոլոր պաշտօնեաներու «ցուցակ ծառայութեանը»:

**Յօդ. 10.-** Ընդհ. քննիչները պարագային համեմատ պաշտօնանկ կ'ընեն այն բոլոր պաշտօնեաները որոնց անբաւականութիւնը կամ յոռի ընթացքը հաստատած են, դատի ենթարկելով անոնք որ իրենք զիրենք յանցաւոր կացուցած են օրէնքով պատժելի արարքով մը: Հրաժարեցուցուած ստորադաս պաշտօնեաներուն տեղ կը նշանակեն նորեր, որոնք պէտք է լրացնեն օրէնքներով եւ կանոններով նախատեսուած ընդունելութեան եւ կարողութեան պայմանները: Քննիչները իրաւունք պիտի ունենան Ն. Վեհափառութիւն Սուլթանին կառավարութեան անուանման ներկայացնելու բարձրաստիճան պաշտօնատարները: Պաշտօնանկութեան բոլոր տնօրինութիւններու մասին անմիջապէս տեղեկութիւն պիտի տան ձեռնհաս նախարարութեանց, համառօտիւ պատճառաբանուած հեռագիրներով, որոնց ետեւէն պէտք է հասնին, ութ օրուան ընթացքին, այդ պաշտօնատարներու թղթածրարները եւ պատճառաբանութեանց մանրամասն տեղեկագիր:

Բարձրաստիճան պաշտօնատարներն են.— (Յուցակը չէ ճշդուած):

Ուղղակի վալիներէն կախում ունեցող պաշտօնեաներու մասին տրուած որոշումները պիտի հաղորդուին անոնց՝ կուսակալներուն:

**Յօդ. 11.-** Եթէ վալիները այնպիսի արարքներ գործած են որ անհրաժեշտ է ստիպողաբար խիստ միջոցներ տնօրինել, Ընդհ. քննիչները հեռագրով խնդիրը պիտի ներկայացնեն ներքին գործերու նախարարութեան, որ անմիջապէս գայն պիտի հաղորդէ նախարարական խորհուրդին եւ այս վերջինն ալ որոշում պիտի տայ առնուազն չորս օրէն, հաշուելով Ընդհ. քննիչի հեռագրին ընդունելութեան թուականէն:

\* La liste des fonctionnaires supérieurs n'est pas établie.





**Art. 12.** Les Inspecteurs civils, judiciaires de la gendarmerie, des travaux publics et de l'agriculture relèvent directement de leurs Départements respectifs mais sont placés au même titre que les fonctionnaires de Vilayet sous la surveillance des Ins. Généraux et dans les cas jugés urgent par les Ins. Généraux sont tenus d'exécuter les communications qui leur seraient adressées par ce dernier. Ces Ins. soumettent en même temps à l'Inspecteur Général de leur rapport sur les Inspections qu'ils feront en conformité de leurs instructions et l'original de ce rapport du Département dont ils relèvent.

Les rapports d'inspection et d'enquête sur le mode d'accomplissement de leurs devoirs par des fonctionnaires, qu'elles soient faites sur l'ordre des Ministres ou de l'Inspecteur Général, seront également soumis en même temps en copie à l'Inspecteur Général et en original aux ministères respectifs.

**Art. 13.** Les inspecteurs des finances relèvent directement du Ministère des Finances. Ils enverront audit Ministère les rapports d'inspection qu'ils auront à effectuer en conformité du règlement spécial et en remettront une copie à l'Inspecteur Général. Dans le cas où ce dernier jugera urgent de provoquer une inspection sur un cas spécial et le notifiera à l'Inspecteur en chef se trouvant au siège de l'Inspection Général l'Inspecteur en chef est tenu de faire l'Inspection voulue soit personnellement soit par les soins d'un autre inspecteur et d'en présenter le rapport à l'Inspecteur Général.

Le ministère des Finances sera également avisé de pareilles inspections.

**Art. 14.** Dans le cas où un fonctionnaire judiciaire qui se serait rendu coupable d'une action possible de jugement ou de révocation appartient à la catégorie des juges inamovibles l'Inspecteur Général en réfère au Ministère de la Justice pour le faire traduire en justice.

La suite ministérielle qui doit être donnée ne tardera pas au delà d'une semaine. Si ledit fonctionnaire n'est pas un juge sa révocation et son remplacement seront demandés par l'Inspecteur Général soit au Ministère de la Justice soit au Procureur Général près de la Cour d'Appel selon le degré d'importance du poste.

Dans les cas graves nécessitant des mesures urgentes les Inspecteurs Généraux jouiront d'un droit

**Յօդ. 12.**– Քաղաքային, դատական, ժանտարմահան, հանրագուտ շինութեանց եւ երկրագործական քննիչները ուղղակի կախում ունին իրենց պատկանած պաշտօնատուներէն, բայց նահանգին պաշտօնեաներուն հետ միեւնոյն աստիճանով կը դրուին Ընդհ. քննիչներու վերահսկողութեան տակ եւ Ընդհ. քննիչին ստիպողական նկատած պարագաներուն մէջ, պարտաւոր են գործադրել այս վերջինին կողմէ ուղղուած գեկոյցները: Այդ քննիչները միեւնոյն ատեն Ընդհ. քննիչին կը մատուցանեն իրենց հրահանգներուն համաձայն կատարելի քննութիւններուն տեղեկագրի պատճէնը, իսկ անոր բնագիրը կը դրկեն այն պաշտօնատան որմէ կախում ունին:

Պաշտօնատարներու պարտականութեանց կատարման եղանակի մասին կազմուած տեղեկագիրներն ալ — քննութիւնները կատարուած ըլլան նախարարներու թէ ընդհ. քննիչին հրամանով — միաժամանակ պիտի ներկայացուին, պատճէնը Ընդհ. քննիչին, բնագիրը՝ պատկան նախարարութեան:

**Յօդ. 13.**– Ելմտական քննիչները կախում ունին ուղղակի ելմտական նախարարութեանէն: Անոնք նոյն նախարարութեան պիտի դրկեն մասնաւոր օրէնքին համաձայն կատարելի քննութեան տեղեկագիրները, եւ մէկ պատճէնը պիտի յանձնեն Ընդհ. քննիչին: Եթէ այս վերջինը ստիպողական նկատէ քննութիւն մը բանալ մասնաւոր պարագայի մը մասին եւ գեկուցանէ զայն ընդհ. քննչութեան կեդրոնը գտնուող գլխաւոր քննիչին, այս վերջինը պարտաւոր է կատարել ուղղուած քննութիւնը կամ առանձնապէս, կամ ուրիշ քննիչի մը միջոցաւ եւ Ընդհ. քննիչին ներկայացնել տեղեկագիրը: Ելմտական նախարարութեան ալ լուր պիտի տրուի այդպիսի քննութիւններու մասին:

**Յօդ. 14.**– Եթէ դատական պաշտօնեայ մը յանցապարտ է դատով կամ պաշտօնանկութեամբ պատժելի արարքով մը, եւ կամ կը պատկանի անփոփոխ (inamovible) դատաւորներու դասուն, Ընդհ. քննիչը կը դիմէ դատական նախարարութեան, զայն դատի ենթարկել տարու համար:

Նախարարութիւնը գործին հետեւանք պիտի տայ ոչ աւելի ուշ քան մէկ շաբաթէն: Եթէ յիշուած պաշտօնատարը դատաւոր չէ, իր պաշտօնանկութիւնն ու յաջորդին անուանումը պիտի պահանջուի Ընդհ. քննիչին կողմէ կամ դատական նախարարութեանէն կամ վերաքննիչ Ատեանի ընդհ. դատախազութեանէն, նայելով պաշտօնի կարեւորութեան աստիճանին:

Ստիպողական տնօրինութիւններ պահանջող ծանրակշիռ պարագաներու մէջ, Ընդհ. քննիչները անմիջապէս





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

de suspension immédiate à l'égard des fonctionnaires mêmes inamovibles de l'ordre judiciaires à la condition d'en déférer immédiatement les cas au Département de la Justice.

**Art. 15.** Un des plus importants devoirs des Inspecteurs Généraux consistera à veiller à ce que les débats judiciaires restent à l'impartialité et liberté et que les juges ne soient influencés en aucune façon.

**Art. 16.** Les fonctionnaires de l'ordre judiciaire seront obligés de se conformer aux communications des Inspecteurs Généraux visant les réformes à introduire dans la partie administrative et les travaux du greffe des affaires judiciaires afin d'en assurer le cours régulier.

Dans cet ordre d'idées les Inspecteurs Généraux veilleront à l'application dans leurs secteurs respectifs des dispositions suivantes arrêtées par le gouvernement Impérial: les lois, décrets et avis officiels seront publiés dans chaque secteur dans les langues locales. Chaque partie aura le droit devant les tribunaux et devant l'administration de faire usage lorsque l'Inspecteur Général le jugera possible. Les jugements des tribunaux seront libellés en turc et accompagnés si possible d'une traduction dans la langue des parties.

**Art. 17.** L'organisation et la réorganisation de la police et de la gendarmerie s'effectueront dans chaque secteur sous la direction et au vue de l'Inspecteur Général et introduites par l'autorité centrale.

**Art. 18.** 1) La haute surveillance de toutes les institutions de l'instruction publique appartient aux Inspecteurs Généraux.  
2 Al (II) de l'accord\*.

**Art. 19.** Les Inspecteurs Généraux vérifient dans tous leurs détails les crédits affectés dans le budget de

կան կախակալման իրաւունք մը պիտի վայելեն հանդէպ նոյնիսկ դատական անփոփոխելի պաշտօնատարներուն, պայմանաւ որ պարագաները անմիջապէս հաղորդեն դատական պաշտօնատան:

**Յօդ. 15.-** Ընդհ. քննիչներու ամէնէն կարեւոր պարտականութիւններէն մէկը պիտի կազմէ հսկել որ դատավարութիւնները զերծ ըլլան ո՛րեւէ արտաքին ճնշումէ եւ տեղի ունենան ամենամեծ անկողմնակալութեամբ ու ազատութեամբ եւ դատաւորները չազդուին ոչ մէկ կերպով:

**Յօդ. 16.-** Դատական պաշտօնեաները պարտաւոր են համակերպիլ Ընդհ. քննիչներու այն զեկոյցներուն՝ որոնք կը վերաբերին վարչական բաժնին մէջ ներմուծելի բարենորոգումներու եւ դատական գործերու դիւանագրական աշխատանքներուն, անոնց կանոնաւոր ընթացքը ապահովելու համար:

Գաղափարներու այս կարգին մէջ, Ընդհ. քննիչները պիտի հսկեն, իրենց պատկան շրջանակներուն մէջ, կայսերական կառավարութեան կողմէ որոշուած հետեւեալ տրամադրութեանց գործադրութեան, — Իւրաքանչիւր շրջանակի մէջ, օրէնքները, հրամանագիրները եւ պաշտօնական ազդերը պիտի հրատարակուին տեղական լեզուներով: Իւրաքանչիւր կողմ իրաւունք պիտի ունենայ դատարաններու եւ վարչութեան առջեւ իր լեզուն գործածելու, երբ Ընդհ. քննիչը հնարաւոր գըտնէ: Դատարաններու վճիռները գրի պիտի առնուին թուրքերէն եւ եթէ հնար է, անոնց պիտի կցուի թարգմանութիւն մը կողմերու լեզուով:

**Յօդ. 17.-** Ոստիկանութեան եւ ժանտարմըրի կազմակերպումն եւ վերակազմութիւնը պիտի կատարուի իւրաքանչիւր շրջանակի մէջ Ընդհ. քննիչին ղեկավարութեամբ եւ անոր գիտութեամբ: Այն բարեփոխումները որոնք անհրաժեշտ կը նկատուին ոստիկանութեան եւ ժանտարմըրի կազմակերպութեան համար, վալիին գիտութեամբ պիտի նշանակուին Ընդհ. քննիչին կողմէ եւ պիտի ներմուծուին կեդրոնական իշխանութեան կողմէ:

**Յօդ. 18.-** Ա.- Հանրային կրթութեան բոլոր հաստատութիւններուն վերին հսկողութիւնը կը պատկանի Ընդհ. քննիչներուն:  
Բ.- (Տես Համաձայնագրի կրթական բաժինը):

**Յօդ. 19.-** Ընդհ. քննիչները իրենց բոլոր մանրամասնութիւններով պիտի ստորագրեն պետութեան պիւտ-





l'Etat aux services publics du Vilayet et après en avoir référé aux Valis signaleront ceux qu'ils trouveraient supérieurs et inférieurs aux besoins réels en vue tant de prévenir ainsi les dépenses inutiles que de provoquer en cas de besoin une augmentation de crédit.

**Art. 20.** Les Ins. Généraux étudieront les mesures propres à remettre de proposer à l'Autorité Centrale de l'adoption d'une système de perception des dîmes qui tout en sauvegardant les intérêts du trésor que ceux des contribuables serait par son caractère simple et pratique de nature à n'entraîner aucune perte de temps ni difficulté pour les cultivateurs.

**Art. 21.** Les Ins. Généraux après avoir étudié le mode de perception des impôts et du temettu et pris l'avis des Valis, pour les localités où le croiraient nécessaires peuvent soumettre des propositions touchant le renouvellement du cadastre ou amélioration des réformes générales déjà engagées.

**Art. 22.** Les Inspecteurs Généraux feront étudier par le soin des techniciens spécialistes qui leur seront attachés tous les moyens auxquels il y aurait utilité de recourir en vue d'entretenir et d'exploiter les mines et forêts de leur secteur au plus grand profit de l'Etat, l'amélioration du sol, d'assurer le progrès de l'agriculture, de diminuer les dépenses de rendement, de propager l'instruction publique, d'encourager l'industrie et le commerce, de faciliter les communications, en un mot ils feront examiner tout ce qui est de nature à contribuer au relèvement intellectuel et économique des vilayets.

Dans cet ordre de choses ils veilleront à ce que les Valis procèdent aux réformes n'impliquant ni inscription de crédit au budget ni promulgation de loi ou de Décret Impérial. Quant aux mesures qui présupposent soit l'inscription des crédits spéciaux dans le budget général soit une loi spéciale et une sanction Impériale ils en référeront aux Départements compétents.

**Art. 23.** Pour l'accomplissement de ces fonctions il sera attaché à la personne de chacun des Inspecteurs Généraux.

ճէին մէջ նահանգային հանրային գործառնութեանց յատկացուած վարկերը եւ վալիներուն դիմելէ յետոյ, պիտի մասնանշեն ինչ որ վեր կամ վար է իրական պէտքերէն, այսպիսով թէ անօգուտ ծախքերը արգիլելու եւ թէ ի հարկին վարկի յաւելում մը յառաջ բերելու համար:

**Յօդ. 20.-** Ընդհ. քննիչները պիտի ուսումնասիրեն այն միջոցները որոնք թոյլ կու տան առաջարկել կեդրոնական իշխանութեան՝ տասանորդներու գանձման այնպիսի դրուժիւն մը, որ ապահովելով հանդերձ գանձուն եւ հարկատուներուն շահերը՝ իր պարզ եւ գործնական ձեւով, ո՛չ ժամանակի կորուստ պատճառէ, ոչ ալ դժուարութիւն՝ հողագործներուն:

**Յօդ. 21.-** Ընդհ. քննիչները, տուրքերու եւ թէ-մէթթուի<sup>81</sup> գանձման եղանակը ուսումնասիրելէ եւ վալիներու կարծիքն առնելէ յետոյ ա՛յն վայրերու մասին ուր անհրաժեշտ կը նկատեն գայն, կրնան առաջարկներ ներկայացնել՝ տէֆթէրհանէի<sup>82</sup> վերանորոգման կամ արդէն իսկ սկսուած ընդհանուր ըէֆորմներու բարելավման համար:

**Յօդ. 22.-** Ընդհ. քննիչները իրենց յատկացուած մասնագէտներու միջոցաւ ուսումնասիրել պիտի տան այն բոլոր միջոցները որոնց օգտակար է դիմել, իրենց շրջանակի հանքերն ու անտառները պետութեան համար ամէնէն աւելի արդիւնաւէտ կերպով պահպանելու եւ շահագործելու, հողը ազնուացնելու, երկրագործութեան յառաջդիմութիւնը ապահովելու, արտադրութեան ծախքերը նուազեցնելու, հանրային կրթութիւնը տարածելու, ճարտարագործութիւնն ու վաճառականութիւնը քաջալերելու, հաղորդակցութիւնները դիւրացնելու համար, մէկ խօսքով՝ քննել պիտի տան ամէն ինչ որ կրնայ նպաստել նահանգներու մտաւոր եւ տնտեսական բարձրացման:

Այս ուղղութեամբ պիտի հսկեն որ վալիները ձեռնարկեն ա՛յն բարենորոգումներուն որոնք ո՛չ պիտու ճէին մէջ վարկի արձանագրութիւն կը պահանջեն, ոչ ալ օրէնքի կամ կայսերական հրամանագրի հրատարակում: Գալով այն տնօրինութիւններուն որոնք կամ մասնաւոր վարկեր կանխատեսել կու տան ընդհանուր պիւտճէին մէջ, կամ մասնաւոր օրէնք մը եւ կայսերական վաւերացում մը, այդ մասին ձեռնհաս պաշտօնատուներուն պիտի դիմեն:

**Յօդ. 23.-** Իւրաքանչիւր Քննիչի, իր պարտականութեանց կատարման համար, պիտի տրուին:

\* Voir partie Education de l'accord.

81.- Շահատուրքի:

82.- Կալուածատուար:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

Un secrétaire général chef de bureau et un nombre suffisant de rédacteurs, traducteurs, expéditionnaires et commis d'ordre.

Un inspecteur pour les affaires civiles, de police et de gendarmerie.

Un inspecteur pour les affaires judiciaires.

Un inspecteur pour l'instruction publique.

Un inspecteur spécialiste étranger ou ottoman pour l'agriculture.

Un inspecteur spécialiste étranger ou ottoman pour les travaux publics.

Un officier d'ordonnance à choisir parmi les officiers de gendarmerie étrangers.

Un secrétaire particulier étranger.

Un drogman pour l'arménien.

Un drogman pour le kurde.

*Ա. Դիւանապետ-ընդհանուր քարտուղար մը, բաւարար թուով խմբագրողներ, թարգմանիչներ, առաքիչներ եւ ծառայողներ:*

*Բ. Քննիչ մը քաղաքային, ոստիկանական եւ ժամտարմական գործերու համար:*

*Գ. Քննիչ մը դատական գործերու համար.*

*Դ. Քննիչ մը հանրային կրթութեան համար.*

*Ե. Օտար կամ օսմանցի մասնագէտ մը երկրագործութեան համար.*

*Զ. Օտար կամ օսմանցի մասնագէտ մը հանրօգուտ շինութեանց համար.*

*Է. Թիկնապահ մը, որ պիտի ընտրուի ժամտարմըրի օտար սպաներէն.*

*Ը. Օտար անձնական քարտուղար մը.*

*Թ. Հայերէնի թարգման մը.*

*Ժ. Քրտերէնի թարգման մը:*

Les fonctionnaires ci-dessus énumérés seront nommés sur la désignation ou avec l'adhésion des Inspecteurs Généraux et leurs attributions seront déterminées par un règlement spécial élaboré avec le concours des Inspecteurs Généraux.

*Վերոյիշեալ պաշտօնեաները պիտի անուանուին Ընդհ. քննիչներուն ցուցումով կամ անոնց համաձայնութեամբ, իսկ անոնց իրաւասութիւնները պիտի սահմանուին մասնաւոր կանոնադրութեամբ մը, որ պիտի խմբագրուի Ընդհ. քննիչներուն աջակցութեամբ:*

Signé à 10/23 Mai 1914

1914 Մայիս 10/23  
Պոլիս







### ԳԼՈՒԽ III

#### ԹՈՒՐՔԻՈՅ 1914 Թ.Ի ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սահմանադրական շրջանի Թուրքիոյ երեսփոխանական վերջին ընտրութիւնները տեղի պիտի ունենային 1914ին: Ինչպէս նախորդող ընտրութիւններուն, այս անգամ եւս Իթքիհատ պիտի ընէր ամէն ինչ նուազագոյնի իջեցնելու համար հայութեան ներկայացուցչութիւնը Օսմանեան խորհրդարանին մէջ:

Ինչպէս ծանօթ է, 1912 Մայիսէն ի վեր Դաշնակցութեան յարաբերութիւնները խզուած էին իշխող կուսակցութեան՝ Իթքիհատի հետ, պետութեան հետ յարաբերելու պարտականութիւնը վստահելով Կ. Պոլսոյ հայոց պատրիարքութեան: Ինչ կը վերաբերի ընտրութիւններուն, Հ.Յ.Դ. Եօթներորդ Ընդհ. ժողովը որոշած էր ձեռնպահ մնալ, պահանջելով ընտրական օրէնքի փոփոխութիւնը որպէսզի հայութիւնը իր թիւին համապատասխան (2 միլիոն) ներկայացուցիչ ունենար խորհրդարանին մէջ: Այս տեսակետը կը բաժնէին նաեւ միջկուսակցական համերաշխութեան ժողովը եւ Պատրիարքարանը: Կը պահանջուէր 20 երեսփոխան եւ ազգային ընտրութիւն, այսինքն հայ երեսփոխանները ընտրուէին հայերու քուէներով: Այս պահանջները Պատրիարքարանի կողմէ պաշտօնապէս փոխանցուեցան կառավարութեան, միաժամանակ յայտնելով որ հակառակ պարագային հայութիւնը պոյքոթի պիտի ենթարկէ ընտրութիւնները: Ազգային ընտրութեան սկզբունքը մերժուեցաւ, բայց թիւը աւելցնելու մասին խոստումներ տրուեցան, ինչ որ մղեց հայերը մեղմացնելու իրենց կեցուածքը յուսարով իրաւախոհութեան մը գալ կառավարութեան հետ: Այնուհետեւ թուրքերը, իրենց սովորական խաղերը ի գործ դնելով զիջումէ զիջում տարին հայկական կողմը: Սկզբնական 20 կամ 18ի խոստումը վերածուեցաւ 16ի, ապա 13ի, պայմանաւ որ անոր 4-5ը ըլլան Իթքիհատի անդամ կամ անոնց ցանկէն ընտրուածներ:

Պէտք է ընդունիլ որ նման ձախող ելքի մը պատասխանատուութիւնը կ'իյնար առաջին առթիւ Պատրիարքարանով ներկայացուած հայկական կողմին, որ տարուած ընծայուած առիթը օգտագործելու եւ պատրիարքութեան դիրքը ուժեղացնելու մարմնաչէն՝ ինկած էր կառավարութեան ու Իթքիհատի լարած որոգայթին մէջ: Նուազ յանցաւոր չէին շահագրգիռ միւս կողմերը, որոնք անձնական կամ հատուածական նկատումներով կը հեռանային համազգային պոյքոթի մասին տրուած հաւաքական որոշումէն: Այս մասին յատկանշական է Դաշնակցութեան Հայաստանի բիրոյտէն (Կարին) եւ Երկիրը ներկայացնող մարմիններէն (Տարօն, Վասպուրական եւայլն) անընդհատ տեղացող գանգատները, որոնք Արեւմտեան բիրոյտէն (Պոլիս) կը պահանջէին անշեղ հետեւիլ Ընդհ. ժողովի ծանօթ որոշումին, այն է՝ հայկական պահանջներու մերժումի պարագային, պոյքոթի ենթարկել ընտրութիւնները: Այս քննադատութիւններուն՝ պոլսական ոլորապտոյտին մէջ ինկած Արեւմտեան բիրոյտի գլխաւոր բացատրութիւն-չքննադատողը այն էր՝ որ օրուան առաջնահերթ կարեւորութեամբ ներկայացող խնդիրը ազգային միասնականութեան պահպանումն էր, իսկ վերջինիս խզուելու պարագային՝ միակողմանի ձեռնպահութիւնը կը կորսնցնէր իր իմաստը:

Այսպէս թէ այնպէս, 1914 թ.ի երեսփոխանական ընտրութիւնները Թուրքիոյ հայութեան համար վերջ գտան բոլորովին անպատուաբեր կերպով: Տեղ մը հայերը քուէարկեցին ի նպաստ Պոլսոյ պատրիարքարանի նշանակած թեկնածուներուն, տեղ մը՝ տեղւոյն ազգ. առաջնորդարանի ընտրած անձերուն, ուրիշներ՝ Իթքիհատի կողմէ նշանակուած թեկնածուներուն: Գտնուեցան շրջաններ որ հետեւելով առաջին ցուցմունքներուն՝ ձեռնպահ մնացին քուէարկելէ: Արդիւնքը, ընտրուեցան միայն 13 հայ պատգամաւորներ, որոնց 7ը Իթքիհատի ցանկէն, 4ը՝ դաշնակցական (Յովհ. Մերենկիւլեան-Վարդգէս, Արշակ Վռամեան, Վահան Փափագեան, Գեղամ Տէր Կարապետեան), 1ը՝ հնչակեան (Համբարձում Պոյաճեան-Մուրատ), 1ը՝ անկուսակցական (Գրիգոր Զօհրապ):





Փաստ. 102-5

1.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԷՆ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

8/21-9-1913

Ընկերներ,

Ընդհ. ժողովը<sup>1</sup> իրաւաստւ մարմիններու 18-էն 14-ի մասնակցութեամբ նիստ գումարեց օգոստոս 17-ին: Աշխատանքները աւարտեցան 26ին. որոշումներու ամփոփումն ու քաղուածքները արդէն պատրաստ են, հաւանօրէն այսօր իսկ կը յանձնենք փոստին: Անշուշտ կը ջանաք օր առաջ հրատարակել եւ ցրուել: Կապոյտ մատիտով գծուած հատուածները, մեր կարծիքով, յայտարարուի եւ:

Արեւմտեանի անդամ ընտրուած են ընկերներ Անտոն, Շամիլ, Ֆարհատ (Հ.) – Սեպուհ, Թափառիկ, Սիքայէլ եւ Գարօ<sup>2</sup>:

Կեդր. Հաշուեքննիչ՝ Գիսակ, Ա. Խաչ., Մարգարէտ<sup>3</sup>:

Միւսները կ'իմանաք Անտոնէն:

Կը խնդրենք որ ընտրուածները անմիջապէս գործի ձեռնարկեն:

Չեր ուշադրութիւնը կը հրաւիրենք յատկապէս Ընդհ. ժողովի որոշման վրայ՝ առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններու մասին.–

*«Համերաշխօրէն ազգային կուսակցութիւններուն եւ Ազգ. վարչութեան հետ, թուրք կառավարութենէն պահանջել ընտրական օրէնքներու բարեփոխում մը, ապահովելու համար հայ ժողովրդին իր թրի համաձայն ներկայացուցչութիւն մը Օսմ. խորհրդարանին մէջ: Մերժումի պարագային՝ համազգային բոյկոտ հռչակել առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններու դէմ:*

*Ծանօթ.– Եթէ ի նիստ գումարուի 1912-ին լուծուած խորհրդարանը, երեսփոխան ընկերները հաւաքաբար պատճառաբանուած հրաժարագիր մը մատուցանելով հայկական բողոքներու եւ պահանջներու մասին, խմբովին կը հեռանան խորհրդարանէն:*

Ինչպէս կ'իմանանք, ընտրութիւններու համար հրահանգներ արդէն ուղարկուած են նահանգները, ուստի աճապարելու էք Ազգ. Կեդր. վարչութեան հետ բանակցութեան ձեռնարկել կեդրոնական կառավարութեան քով հարկ եղած դիմումները փութացնելու համար: Հոս ալ, մենք կ'օգտուինք Չաւէն եպ[իսկոպոս]ի<sup>4</sup> գալէն՝ անձամբ խօսելու համար հետը, բայց բաւական պիտի ուշանանք՝ եթէ յոյսերնիս անոր վրայ դնենք: Հազիւ թէ մինչեւ 20 օրէն կարենայ Պոլիս հասնիլ:

Այս մասին ձեր ձեռնարկներու արդիւնքը չէք յայտարար հաղորդել մեզ:

Հայաստանի բիւրոյի անդամ ընտրուած է նաեւ ընկեր Կոմսը<sup>5</sup>. արդէն գրուած է իրեն. ձեր կողմէն ալ պաշտօնապէս իմացնելով իրեն, խնդրեցէք որ իր մեկնումը փութացնէ հոս:

Ընկերական բարեւանքով՝  
Ի դիմաց Հայաստանի Բիւրոյի  
ԱՐՏԱԽԱՉԳ<sup>6</sup>

1.- Խօսքը կը վերաբերի 1913 թ.ին Կարնոյ մէջ գումարուած Հ.Յ.Դ. Եօթներորդ Ընդհ. ժողովին, ուր բացի Արեւելեան եւ Արեւմտեան բիւրոներէն, ընտրուեցաւ յատուկ բիւրօ մը Արեւմտահայաստանի համար:

2.- Յիշուածները իրենց իսկական անուններով՝ Չաւարեան Սիմոն (Անտոն), Օտապաշեան Պօղոս-Բարսեղեան Մարգիս (Շամիլ), Թիւրեաքեան Հայկ (Ֆարհատ-Սեպուհ), Տոքք. Փաշայեան Կարապետ (Թափառիկ), Վարանդեան Սիքայէլ (Սիքայէլ) եւ Փաստրմաճեան Գարեգին (Արմէն Գարօ):

3.- Յաջորդաբար՝ Սերենկիլեան Յովհաննէս (Գիսակ), Փրոֆ. Խաչատուրեան Աստուածատուր (Ա. Խաչ), Ղազարոսեան Ղազարոս (Մարգարէտ):

4.- Չաւէն եպս. Եղիայեան, Տիգրանակերտի առաջնորդ, որ նոր ընտրուած էր Կ. Պոլսոյ հայոց պատրիարք եւ որ իր պաշտօնատեղին մեկնելու ճամբուն վրայ պիտի անցնէր Կարինէն:

5.- Կոմս. Փափագեան Վահան:

6.- Արտաւագ. Հայաստանի բիւրոյին համար գործածուած ծածկանուն:





Փաստ. 110-57

2.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԲԱՆԱԼԻԻ [ՍԱՄՍՈՆ] Կ. ԿՈՍԻՏԵԻՆ  
(ՀԱՂՈՐԳԵԼ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ)

2/15 Նոյեմբեր 1913

Ընկերներ,

Ինչպէս գիտէք, կառավարութիւնը հրահանգներ ղրկած է ամէն կողմ, երեսփոխանական նոր ընտրութեանց համար, որոնք տեղի պիտի ունենան անյապաղ:

Նկատի առնելով խնդրին ստիպողականութիւնը, կը փութանք ձեզի հաղորդել կարգ մը մանրամասնութիւններ:—

Վերջին (է.) Ընդհ. ժողովը որոշած էր:—

«Համերաշխօրէն Ազգ. կուսակցութիւններուն եւ Ազգ. Կեդր. վարչութեան հետ, թուրք կառավարութեան պահանջը ընտրական օրէնքներու բարեկարգում մը, ապահովելու համար հայ ժողովրդին իր թիւին համաձայն ներկայացուցչութիւն մը Օսմ. խորհրդարանին մէջ: Մերժումի պարագային, համազգային բոյկոտ հռչակել խորհրդարանական յառաջիկայ ընտրութիւններուն մէջ»:

Ընթացք տալու համար այս որոշման, Բիւրոն անմիջապէս ղիմեց Ազգ. Կեդր. վարչութեան, որ յօժարութեամբ համաձայնեցաւ կազմել յատուկ յանձնաժողով մը, հայ ժողովրդի ընտրական իրաւունքներու պաշտպանութեան համար, մասնակցութեամբ հետեւեալ մարմիններու:—

- 1.- Հ. Յ. Դաշնակցութիւն.
- 2.- Ազգ. Կեդր. վարչութիւն.
- 3.- Բողոքական հասարակութիւն.
- 4.- Կաթողիկ հասարակութիւն.
- 5.- Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան.
- 6.- Ս[ահմանադիր] Ռամկավար կուսակցութիւն, իւրաքանչիւրն երկու պատուիրակներով:

7.- Օսմ. Թուրքիոյ մէջ խորհրդարանական ընտրութիւնները տեղի կ'ունենային անողակի, երկու հանգրուաններով: «Սինթէխիպը սանի»ները առաջին ընտրեալներն էին, որոնք իրենց կարգին պիտի ընտրէին բուն երեսփոխանները (մեպոսները):

8.- Պատրիարքարանէն կառավարութեան յղուած դիմումները կը կոչուէին թագրիք:

Յանձնաժողովը սկզբունքով ընդունած է մեր տեսակէտը, պայմանաւ որ ի հարկին իրաւախոհութիւններ ըլլան կառավարութեան հետ, եւ այսօր իսկ, պատրիարքարանի միջոցաւ, կառավարութեան ներկայացուց ծրագիր մը, հետեւեալ գլխաւոր պահանջներով:—

1.- Հայերը ունենան իրենց թիւին (աւելի քան երկու միլիոն) համեմատ երեսփոխան (համեմատական ներկայացուցչութիւն):

2.- Հայերը իրենք ընտրեն իրենց միւնիստրները<sup>7</sup>, որոնք ալ, իրենց կարգին, ընտրեն հայ մէպոսները:

Ի հարկէ թագրիքը<sup>8</sup> պատճառաբանուած է եւ կը պարզէ ընտրական օրէնքի թերութիւնները, չըջաններու անարդար բաշխումը, հայերու կրած զրկանքները եւայլն: Եթէ կառավարութիւնը մերժէ այս երկու առաջարկները, կամ միայն մէկը, շատ հաւանականութիւն կայ համերաշխօրէն ձեռնպահ մնալու: Այդ պարագային Պատրիարքարանը, իբրեւ պաշտօնական հաստատութիւն, կը չէզոքանայ, թողլով որ քաղաքական կուսակցութիւնները արտայայտուին:

Իսկ եթէ կառավարութիւնը ընդունելով դրուած պահանջները, ուզէ իրաւախոհութեան գալ, միւս կուսակցութիւնները տրամադիր են համակերպելու եւ մենք պիտի ստիպուինք գործակցիլ համերաշխօրէն: Եթէ բոյկոտը համազգային պիտի չըլլայ եւ իւրաքանչիւր կողմ իրեն համար պիտի աշխատի, մենք ալ պարտաւորուած մեր շահերը պէտք է պաշտպանենք, ընտրական պայքար մղելով:

Ամէն պարագայի մէջ, բոյկոտ ըլլայ թէ ոչ, քանի որ ընտրութեան նախնական գործողութիւններն սկսած են, կը թելադրենք այժմէն հետապնդել ընտրական շրջաններու եւ ընտրողներու ցուցակներուն արդար բաշխման, մեր ազգային իրաւունքներու եռանդուն պաշտպանութեան:

Պարբերաբար կը ստանաք նոր տեղեկութիւններ:

Ընկերական բարեկներով  
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ



Փաստ. 102-12

### 3.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԷՆ (Կարին) ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ (Պոլիս)

Կարին, 21-11-1913

Ընկերներ,

Հագիւ պայքարը սկսուած, դուք արդէն նահանջի ձեւերի մասին էք մտածում: Քանի որ այդ տեսակ տրամադրութիւն ստեղծուել է ընկերների մէջ, նա չի կարող չանդրադառնալ ընկերական լայն խաւերի եւ նոյնիսկ ազգային շրջանակների վրայ: Այդպիսով դուք ձեր ընթացքով ինքներդ պիտի նպաստէք բոյկոտի վիժման: Ձեր այժմեան մտածումները եւ նախազգուշական քայլերը՝ ապագայում դիրքերը պահելու համար, ձեր վէճերը՝ մասնակցութեան ձեւերի մասին, ապացոյց կը լինին դրսի աշխարհի համար, որ ինքներդ լուրջ չէք մտածում յայտարարուած պայքարի մասին եւ ամէն ընկեր կարող էք լքել բոյկոտը: Այդ պարագային կարո՞ղ ենք հաստատամտութիւն պահանջել ուրիշ շրջանակներից եւ մանաւանդ պատրիարքարանից: Եւ ինքը կառավարութիւնը կարեւորութիւն կը տա՞յ արդեօք մեր յայտարարութիւններին: Չի կարո՞ղ արդեօք ճարպիկ խաղով այնպէս անել, որ կուսակցութիւնները մէկը միւսից աւելի առաջ վազեն՝ ընտրութիւնների գործում բաժնիներ ապահովելու համար: Դա խայտառակութիւն կը լինի թէ մեր կուսակցութեան եւ թէ ամբողջ ազգի համար:

Մեր կարծիքով ինչ որ անեն ուրիշները, մենք պիտի կենանք մեր պահանջների վրայ, մինչեւ վերջը հաստատ մնանք մեր այժմեան դիրքերի մէջ: Ուրիշ կերպ մենք ոչ միայն այսօր նպաստած կը լինինք բոյկոտը վիժուելուն, այլ եւ ապագայում խախտած կը լինինք հաւատարմութիւնը մեր քաղաքական ուղղամտութիւնը: Փոխանակ մասնակցութեան մասին մտածելու, մասնակցութեան ձեւերի մասին վիճելու, աւելի լաւ է մտածենք բոյկոտին ընդհանուր բնաւորութիւն տալու գործնական միջոցների մասին:

Ընդհանուր ժողովի որոշումների մէջ՝ «համերաշխօրէն ազգ. կուսակցութիւնների հետ», «համագային

բոյկոտ» դարձուածքները չպէտք է ենթադրել տան որ ուրիշ շրջանակների մասնակցութեան պարագային, մենք եւս ստիպուած պիտի լինինք յետ նահանջել, մեր թքածը լիզել: Բաւական է աչքի առաջ առնել որոշումին կցած ծանօթութիւնը: Այնտեղ պարզ ասուած է, որ եթէ կառավարութիւնը հրաւիրէր նախկին երեսփ. ժողովը, փոխանակ նորը ընտրել տալու, մեր ընկերները պիտի հեռանային խորհրդարանից, դնելով մեր պահանջները, անկախ միւս երեսփոխանների բռնելիք դիրքից:

Մեր կարծիքն է՝

Դաշնակցութիւնը պէտք է հետամուտ լինի դրած պահանջներին. գոհացում չգտնելու պարագային՝ բոյկոտ անել: Մեր հաստատուն դիրքը միայն կարող է բոյկոտի գաղափարին կապուած պահել ազգային միւս յեղյեղուկ տարրերը եւ բոյկոտը համագային դարձրնել: Մեր բարոյական յաղթանակը աւելի աչքի կ'ընկնի, եթէ միւսների լքման պարագային, մենք յաջողի՞նք գէթ Վան, Մուշ, Կարին. եթէ այդ վայրերից հայ ժողովուրդի ներկայացուցիչներ չլինին, կարելի կը լինի ասել, թէ հայ ժողովուրդը ներկայացուցիչ չունի խորհրդարանում, թէ կուզէ այդտեղ բազմած լինին 20 ուրիշ հայ երեսփոխան, այլեւայլ ձեւերով ընտրուած:

Բոյկոտը իրական դարձնելու համար կարծում ենք, որ անհրաժեշտ կը լինի մասնակցել պատուիրակների ընտրութեանը. եթէ այդ չանենք, ամէն մի վայրում, կը գտնուեն որոշ թուով հայեր, որոնք կը մասնակցեն եւ մենք ոչ մի միջոց չենք ունենալ մեր ձեռքում՝ ապացուցանելու համար, թէ դա մասնակի բան է եւ ոչ համագային ընտրութիւն. ընտրուած պատուիրակները կամ բողոք ներկայացնելով կը հեռանան, կամ իրենք առանձին ձայն կը տան որեւէ հայի, գիտենալով, ի հարկէ, որ դա չպիտի ընդունուի կառավարութեան կողմից:

Առաջարկ կայ նաեւ, որ Դաշնակցութիւնը ձեռնպահ մնայ հէնց սկզբից, որ իր անդամները ընտրուեն իրեն պատուիրակ: Ժողովուրդի կողմից ընտրուած մեր ընկերները եւ համակիրները [այդ պարագայում] կը վարուեն այնպէս, ինչպէս քիչ առաջ ասուած էր:

Բարեկներով՝  
ԱՐԵՒ[ԵԼԵԱՆ] ԲԻՒՐՈՅՑ<sup>9</sup>

9.- Ստորագրութիւնը Արեւելեան բիւրօ է փոխանակ Հայաստանի բիւրոյի. երեւի հին սովորութեան մեքենական կրկնութիւնն է. նախկին դրութեամբ Արեւելեան բիւրոն բացի Թիֆլիսէն ունէր նաեւ իր Կարմոյ հատուածը: Այս վերջինը, այսինքն հայկական վեց նահանգները, առաւել Տրապիզոնի վիլայէթը 7րդ Ընդհ. ժողովի որոշումով վերածուեցան Երկրի կամ Հայաստանի բիւրոյի:





Փաստ. 712-16

### 4.- ԴՈՒՐԱՆ ԲԱՐՉՐԱԽԱՆԴԱԿԻ (ՏԱՐՕՆ-ՍԱՍՈՒՆ) ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

30 Նոյեմբեր 1913

Ընկերներ,

Ստացանք ձեր 11 հոկտ. թուակիր նամակը. ցարդ գրած ենք միայն մէկ երկտող ընտրութեանց առթիւ, որը կը յուսամ ստացած կը լինէք:

— Ձեզ նամակ չգրելնուս պատճառը ձեր ակնարկած ընկերների մէջ եղած հակառակութիւններն ու տեղումը բարոյական կամ իրաւական մարմնի բացակայութիւնն էր: Մենք եւս մասնաւոր աղբիւրներից լսած էինք այդտեղի ցաւալի անց ու դարձի մասին եւ մեզ իրաւունք հաշուեցինք կապ չունենալ նրանց հետ, որոնք գնում են է. Ընդհ. ժողովի դէմ. դա ցաւալի երեւոյթ է, բայց պէտք է խոստովանինք որ Վիշապը<sup>10</sup> բարոյական եւ իրաւական հեղինակութիւնից պիտի զրկուի մեզ համար, քանի հաստատ գործի անցած չլինին Ընդհ. Ժողովով որոշուած ընկերները եւ քանի որ չէ ցրուած այն կոնգրումներատը<sup>10ա</sup> որին խառն կամ ծիծաղելի «ընկերական ժողով» անունը կը տաք: Եթէ կ'ուզէք հեղինակութիւն ունենալ եւ ճանաչուել մարմին, թող ընտրուած ընկերները միայն գործի դեկը ստանձնեն, որով մենք հասկանանք ո՞վ է գործին ձեռնամուխ եւ ո՞վ է պատասխանատուն: Եթէ կ'ուզէք միասին գործել, բացի վերոյիշեալից պէտք է շարունակ խորհրդակցել կարեւոր եւ ընդհ. գործերի մասին Հայաստ[անի] բիւր[ոյի] եւ Արեւ[ելեան] Բ.ի հետ եւ ոչ թէ գործը սկսելուց յետոյ, այլ առաջ, եւ յետոյ չպիտի շեղուինք Ընդհ. Ժ.ի ընդգծուած ուղիից: Այդ դիտողութիւնները կ'անենք հիմնըւած ձեր երկու նամակների եւ տեղեկութիւնների հիման վրայ:

— Հայկական հարցի մասին, տեղումս տիրող կարծիքն է, որ շատ յոյսեր չպիտի դնել եւ չպէտք է ոչ մէկի գիրկը նետուել. պէտք է խուսափել գործիք դառնալուց մէկի կամ միւսի եւ հիմնուած լինել մեր բարոյական ու

Ֆիզիքական ոյժի վրայ. իսկ դիպլոմատիական խաղերն ու հաւատքները թողնել աւելի դրսի մեզնից դուրս մարմիններին եւ նրանց կողմնակի կերպով ազդել: Ուստի, մեր դրամական ու բարոյական էներգիան համարեա ամբողջապէս պէտք է վատնել մեր շարքերի բարոյականի եւ ֆիզիքականի բարձրացման վրայ: Դժբախտաբար այս ուղղութեամբ աշխատանքը կը պակսի եւ կ'երեւնայ որ ծանրութեան կենտրոնը առաջին ուղղութեան վրայ է դեռ եւս, որը նպատակաշարմար չէ գտնուել եւ Ընդհ. Ժ.ի կողմից:

— Ընտրութիւնների համար ձեր գրածը երկդիմի էր. կարծես տատանուում էք ձեր անելիքների մէջ. եթէ վերջի վերջոյ զիջելու տրամադիր են տեղիդ ընկերները, ապա չպիտի մտնէիք պայքարի մէջ: Մեր նախորդ նամակով բողոքած էինք, որ ազգային ընտրութեանց մասին չէք խորհրդակցած, բայց եւ այնպէս քանի որ ընդհ. ազգի կողմից մի այդպիսի պահանջ ներկայացուել է կառավ[արութեան] եւ ամբողջ աշխարհին, պէտք է որ կանգնած լինենք մեր պահանջի վրայ, թէկուզ դրա համար բոյկոտի կարիք լինի: Կարծում ենք, որ միւս խումբակցութիւնների յետ նահանջելու պարագային իսկ, մենք պէտք է մնանք մեր դիրքերի վրայ եւ մարտի հրաւէր կարդանք նրանց, որոնք յետ են նահանջում: Մենք շատ բարեւոյ յարաբերութիւններ ունէինք տեղումս կառ[ավարութեան] հետ, բայց ձեր այդ թագրերի վրայ գոհ բերինք ոչ թէ մին այլ գուցէ եւ Չ պատգամաւոր եւ արդէն սկսել ենք յայտարարել չմասնակցելու մասին. այնպէս որ զիջելու մասին մտածելը ներկայ պարագաներում նշանակում է գցել մեր պրեստիժը ամենուրեք եւ վիժեցնել այն ծրագիրը որը նախատեսել էր Ընդհ. Ժ.ն իսկ: Բարձր[աբերդ]ից եւ Շամից<sup>11</sup> նոյն ուղղութեամբ նամակներ կը ստանանք, այնպէս որ գոնէ այս Յ նահանգներում, որ ամէն ինչ մեր ձեռքն է եւ կը վիժեցնենք ընտրութիւնները, թողնելով ձեզ ձեր խղճին ու ձեր հայեցողութեանը: Տատանուող ընկերներին ասացէք, որ մեզ հետաքրքիրը չէ մի քանի դաշ[նակցական] կամ ոչ դաշնակ[ցական] մեպոլսներ ուղարկելը: Մենք համոզուած ենք որ դրանից մեծ օգուտ չկայ եւ ինքնախաբէութիւն է. մեզ միակ հետաքրքիրն է այդ խնդրոյ առթիւ ապահովել հայ ժողովրդի իրաւունքը եւ ոչ թէ դաշնակցական կամ այլ կուսակ. պատգամաւորների

10.- Վիշապը, ինչպէս ծանօթ է, կուս. ծածկանունն էր Պոլսոյ, հոս Արեւմտեան քիւրդի տրուած Վիշապ անունը քննադատական բնոյթ ունի եւ կը թուի թէ գործածուած է բացասական իմաստով նկատի ունենալով որ անոր նիստերուն կը մասնակցէին բացի Բիւրոյի անդամներէն նաեւ Պոլիս գտնուող այլ հոգ չէ թէ համագամաւոր ընկերներ. այդ պատճառով ալ այդ գումարումներուն կը տրուէր Խառն ժողով անունը:

10ա.- Խառնակոյտ զանգուած – հաւաքակազմութիւն:  
11.- Բարձրաբերդը Կարինն է, Շամը՝ Վան-Վասպուրական:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

քանակը: Դուք վստահ եղէք, որ գոնէ այստեղից չպիտի ընտրուի ոչ ոք, եթէ նոյնիսկ դուք վճռէք յետ նահանջել: Այդ մասին թէ տեղիս եւ թէ դրսի ընկերների վրայ վստահ եմ: (Այժմ ստացայ Ռ[ոստոմ]ից նոյն բովանդակութեամբ [նամակ]):

Եթէ կ'ուզէք որ բոլորը մասնակի բնաւորութիւն չստանայ, պէտք է ջանաք ընհանուր բնաւորութիւն տալ: Դրա համար նախ հաստատ եղէք ձեր որոշման վրայ ու ինքներդ միք տատանուի եւ երկրորդ ձեր շարքերը սեղմէք. երրորդ՝ ձեռք առէք, ինչպէս մինչեւ այժմ առած էիք, դրսի կուսակց[ութիւններ] եւ խումբակցութիւնները: Մեզնից դուրս եղած շրջանները գրած ենք նոյն ոգիով. դուք եւս գրէք նոյն ոգով, եւ կամ միք խանգարի մեզ:

— Կարծում ենք որ Վիգէնը եթէ առայժմ մնայ այդտեղ Սիմոնի տեղը<sup>12</sup>, աւելի յարմար կը լինէր, իսկ Կոմսը<sup>5</sup> թող շտապի. գարնան յետաձգելը միտք չունի. ի նկատի առէք որ հրաբուխի վրան ենք նստած. օր աւուր այստեղ անակնկալների կը սպասենք: Թող շուտ գայ, բերէ հետը օժանդակ ընկերներ եւ պահանջներս, որ այդտեղ խօսել եմ իրան եւ հանգուցեային<sup>13</sup>, կամ թող հարցնի Շամիլից<sup>2</sup>: Ստացածներս սպառել եմ արդէն, ձեռքս բան չէ մնացել. փոխարժէք 100 դ[ահեկան] փոխադրեցի Քոթոթին<sup>14</sup>. այս շաբթուն նորից կ'ուղարկեմ 100. դրամ կը հասցնեմ եթէ ուղարկէք պահանջածներս: Այժմ պէտք է «նոր ձեւինը», շուտ եւ շատ, շտապէք:

— Գրէք ձեր վերջին տեսակցութեան մասին խ[ալիլի] եւ Թ[ալէաթ]ի հետ. այստեղ վերջերս շատ վատացան յարաբերութիւնները. սառն են եւ սկսել են խստացնել. ոչինչ դա, բայց կը քաշուեն կտրուկ միջոցների դիմելուց:

— Հողային խնդիրը սուր կերպարանք է առած. կ'ուզեն անօրինական միջոցներով խլուած կալուածքները օրինականութեամբ ձեւակերպել: Մենք պայքարում ենք, արգելում ենք եւ դրամական ու զանազան միջոցներով կ'աշխատենք առաջն առնել. եթէ հնար ունենայիք մի չէգոք մարմնից 500 կամ 100 ոսկի գտնել, մենք շրջանառութեան մէջ դնելով (բանկում գրաւ դնելու սխտեմով) պիտի կարողանայինք գէթ հեջիզի<sup>15</sup> տակ եղածները փրկել. մենք բաւական յաջողել ենք եւ ցարդ մի տասնեակ ընտանիքներ փրկած ենք:

Կազմ[ակերպութեան] վիճակը վատ չէ. բաւական բարձր են տրամադրութիւնները. մեզ հետ է ժողովուրդը:

Դիարբեքիր թոյլ է. ուղարկել ենք ընկերներ, գուցէ յաջողին նրանք ձեռք բերելու այդ շրջանն եւս:

Բարեկներով՝  
Դուրան-Բարձր[աւանդակ]ի Կ. Կ.ի դիմաց  
ՌՌԻԲԷՆ<sup>16</sup>

12.- Վիգէնը Բժ. Յակոբ Չապեանն է, Սիմոնը՝ Չապեանը: Վերջինս, պէտք է յիշել, մահացած էր նոյն տարուան Հոկտ. 14ին:  
13.- Հանգուցեայը Չապեան Սիմոնն է, «այդտեղ»ը՝ Պոլիս:  
14.- Քոթոթը ծածկանուններէն մէկն է Ռոստոմի:  
15.- Կալանքի, գրաւման:  
16.- Տէր Սիմասեան Ռոբէն:

Յ.Գ.- Հեռագրեցինք Պատր[իարքարան] եւ պատճէնը ձեզ՝ Դատական նախարարի վարմունքի եւ մերժման մասին:





Փաստ. 102-13

5.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ընկերներ!

Գաւառական կեանքի մէջ առանձին նորութիւններ չունինք. գլխաւոր նորութիւնը ընտրութիւններու խնդիրն է, եւ անոր որպէս արդիւնք նկատուող նոր տրամադրութիւններն են:

Կառավարութեան ընթացքը՝ ընտրութիւններու առթիւ առաջադրուած պահանջներուն վերաբերմամբ, ինչպէս միշտ, այնպէս եւ այժմ շատ կասկածելի է. թէ՛ եւ Արեւմտեանը [բիւրոն] բոլորովին ալ յուսուած չէ, բայց մենք կը կարծենք որ կառավարութիւնը կ'ուզէ այս անգամ ալ յանկարծակիի բերել մեզ, գիշումներու խոստումներով մեզ քնացնելէ վերջը: Արեւմտեանի կարծիքը — ինչպէս կ'երեւար իր վերջին նամակէն — կողմնակից չէ պոլքոթի, ի նկատի ունենալով այն պարագան՝ որ միւս հատուածները համաձայն չեն պոլքոթի: Մենք այս կարծիքին չենք. մենք կը կարծենք թէ ինչ ալ ըլլայ ուրիշ տարրերու տրամադրութիւնը, մենք այսուամենայնիւ շեշտելու ենք մեր պահանջի վրայ, եւ մերժուելու պարագային անպայման պիտի յայտարարենք պոլքոթ, թէկուզ միւս մարմինները համաձայն չըլլան մեզ հետ: Մեր կարծիքն այս է. եւ եթէ կառավարութիւնը մերժէ ընդունիլ առաջադրուած պահանջները այն ժամանակ մենք գաւառներու մէջ կը յայտարարենք պոլքոթ՝ թէկուզ Արեւմտեանը անհամաձայն ալ ըլլայ:

Ընտրութիւններու առթիւ մեր կողմէ առաջադրուած պահանջները փոփոխութիւններ առաջացուցած են նաեւ կառավարութեան տրամադրութիւններուն միջեւ: Տեսակ մը խուլ դժգոհութիւն, անբաւականութիւն

եւ նոր սպառնալիքներ կը նկատուին կառավարական շրջաններու տրամադրութեանց միջեւ: Վանի շրջանի գէնքերու հաւաքման շուկները, մեր եւ ուրիշ շրջաններու մէջ նկատուող դժգոհութիւնը եւ տեսակ մը փոփոխութիւն սպառնալիքները մեր կարծիքով այն նպատակն ունին որ կարողանան ազդել մեր վրայ եւ այդպիսով կոտորել մեր «պահանջկոտ» տրամադրութիւնները...: Պէտք է ըսել որ այստեղ մենք այժմ ոչ մէկ յարաբերութիւն ունինք թէ կառավարական եւ թէ իթիթիհատական շրջանակներու հետ:

Սարուստանի<sup>17</sup> համար կարգադրեցէք որ 50ական օրինակ Դրօշակ դրկուի մեզ. դրկեցէք նաեւ Ծրագիր Կանոնադիր բաւական քանակութեամբ: Եթէ Ծովափից<sup>18</sup> Սարուստանի առթիւ նոյն պահանջը դնեն դրկեցէք եւ նրանց մեզ դրկուած 50 օրինակը հաշուի առնելով: Մենք այսօր կը գրենք այս առթիւ նաեւ Ծովափ: Զուշացնէք կարգադրութիւնը:

Ընկ. բարեկենսորդ  
Ի դիմաց Հայաստ[անի] բիւրոյի  
ԱՐՏԱԻԱԶԴ<sup>6</sup>

5 / XII / 913, Կարին

Սիրելիք,

Ստացայ Larousse-ը. շատ շնորհակալ եմ: Մի փոքրիկ գիրք էլ էի ուզել. կարծեմ Les bâtons rompus անունով: Ի՞նչ եղաւ գրքի հաշիւը:

Ձեր Ռ[ՈՍՏՈՍ]

17.- Սարուստան. կոտ. ծածկանուն Կովկասի:

18.- Ծովափը Տրապիզոնն է:





Փաստ. 102-16

6.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵՂՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Ընկերներ!

Փարլամենտական ընտրություններում առթիվ վերջին Ընդհ. ժողովի որոշումը ձեզ յայտնի է արդեն: Համաձայն այդ որոշման կուսակցության պատշաճ մարմինները ժամանակին միջոցներ ձեռք առած էին արդեն, ազգ. միւս մարմիններում գործակցություններ նույն որոշման գործադրությունն ապահովելու համար: Այս ուղղությունները դիմումներ կատարուեցան կառավարությունից մաս թէ Պատրիարքարանի եւ թէ մասնակի միջոցներով: Պատրիարքարանի երկրորդ թագրիրին դէմ կառավարությունը ցոյց տուաւ չափէն աւելի սիրալիր վերաբերմունք եւ ի հարկէ նաեւ առատ յուսադրումներով: Հետեւանք եղաւ դարձեալ զերօ: Կառավարական խոստումները ի վերջոյ մնացին խոստումներ եւ կառավար. վերջնապէս մերժեց մեր առաջադրած գոյգ պահանջները: Այս պայմաններուն մէջ աւելի քան երբեք ուրեմն անհրաժեշտ է որ մենք կանգնինք մեր Ընդհ. ժողովի բանաձեւին վրայ. մեզ հետ նոյն տեսակէտին քաջելու նաեւ ազգ. միւս շրջանակները:

Արեւմտեան [բիւրոն] ի նկատի ունենալով որ ազգ. միւս շրջանակներում մէջ տրամադրություն կայ «իրաւախոհութեան» մը գալու կառավարություն հետ, կ'առաջակէր որ Դաշ[նակցութիւնն] ալ հրաժարուէր պոյքութէն՝ «քանի որ համագոյսին ըլլալու չէր»: մենք կտրականապէս մերժեցինք: Մենք ունինք մեր ընդհանուր ու հիմնական տեսակէտը եւ անկախ այն բանէն թէ ինչ կը լինի ուրիշներուն վերաբերմունքը դէպի այդ, մենք ինքներս պարտաւոր ենք յարգել մեր տեսակէտը, այսպիսով ուրիշներուն ալ մեզի հետ կապելու համար: Մեր տեսակէտը այս էր — այս է նաեւ գաւառի տեսակէտը՝ Շամ<sup>19</sup>, Դուրան<sup>19</sup>, եւն. եւն: Այսպէս ալ յայտնեցինք Արեւմտեանին որմէ ստացանք իր համամտութիւնը: Յառաջիկայ ընտրություններուն առթիւ ուրեմն մեր դիրքը պարզ է՝ մենք կը կանգնինք այն տեսակէտի

վրայ ինչ որ գծեր է վերջին Ընդհ. ժ. -ը, այսպէս ալ գրեր ենք մեր բոլոր մարմիններուն:

Կառավարությունը բանակցություններ սկսած է նաեւ Վասպ[ուրականի] եւ Դուրանի մարմիններուն հետ: Բանակցութեանց նպատակն է իմանալ մեր պահանջները եւ «իրաւախոհութեան մը գալ»: Մեր մարմինները դրած են շարք մը ընդհանուր պահանջներ բխած մեր Ընդհ. ժողովի որոշումներէն. տակաւին որոշ բան մը յայտնի չէ. բայց ոեւէ դրական արդիւնք չենք սպասեր եւ այդ բանակցություններէն. շատ շատ զուտ տեղական բնոյթ կրող կարգ [մը] պահանջներու բաւարարություն տրուի, առայժմ այսքան:

Ամէնէն հիմնական ու հրամայական գործունէութիւնը մեր շրջաններուն համար ինչպէս շեշտուած է ինքնագարգացողական<sup>20</sup> գործունէութիւնն է, առանց որուն ոեւէ բանակցություն, ոեւէ պահանջ չի կրնար դրական հետեւանք ունենալ. մեր բոլոր ոյժը — ինչպէս որոշած է նաեւ Ընդհ. ժողովը — պէտք է կեդրոնացնել այս ուղղութեամբ: Պէտք է խոստովանիլ որ գործը առաջ կ'երթայ բաւական միտիթարական չափով. անհրաժեշտ է եւ այս շատ շատ անհրաժեշտ որ դուք եւս ձեր ոյժերը կրկնապատկէք այս ուղղութեամբ: Կը սպասենք:

Խորհորի<sup>21</sup> մարմինը իր անվայել ընթացքին համար նկատողություն ստացաւ մեզմէ: Բայց ասկէ զատ մենք ստիպուած եղանք խզել իրենց հետ մեր բոլոր յարաբերությունները, մինչեւ որ ան ներողություն չխնդրէ իր այն անվայել ընթացքին ու անպատշաճ դարձուածքներուն համար որ ցոյց տուեց իր վերին մարմնոյն հանդէպ: Այս մասին մենք իրենց յայտներ ենք արդէն: Պիտի դադրեցնենք նաեւ Զարիֆեանի իրենց հետ ունեցած գործունէությունը, մինչեւ որ ներողություն խնդրեն:

Կը գրենք ձեզ յաջորդաբար:

Ընկեր. բարեկներով  
Ի դիմաց Հայաստ[անի] բիւրոյի  
ԱՐՏԱԻԱԶԴ<sup>6</sup>

19.- Դուրանը Տարօնն է, իսկ Դուրան-Բարձրաւանդակը՝ Տարօնն ու Մասունը, որ արդէն կը կազմէին մէկ Կեդր. կոմիտեոյի:

20.- Ինքնագարգացումը՝ ինքնապաշտպանութիւնն է, այլ խօսքով զինումը:

21.- Խորհոր կամ Խորհանոր՝ կուս. ծածկանունն է Քրիի:





Փաստ. 880-65

**7.- ՄԻՋ-ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ  
ՁԵՌՆՊԱՀ ՄՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆՆԵՐՈՒՆ**

Միջկուսակցական Համերաշխական Մարմինը, փարլամենթական ընտրութեանց առիթով, Ձեր ուշադրութիւնը կը հրաւիրէ հետեւեալ պարագային վրայ.–

Համազգային Ընտրական Յանձնաժողովը որոշած էր, ինչպէս գիտէք, Օսմ. փարլամենթի ընտրութեանց գործին մէջ կանգ առնել երկու սկզբունքի վրայ, այն է՝ *համեմատական ներկայացուցչութիւն եւ ընտրութեան ազգային եղանակ*<sup>22</sup>:

Դժբախտաբար կեդրոնական կառավարութիւնը թէւ խոստացաւ որոշ թուով հայ երեսփոխաններ տալ եւ ընտրութիւնը կատարել ըստ կարելոյն՝ հայերու կողմէ ներկայացուած ցուցակին վրայ, բայց մերժեց Համազգային ընտրական յանձնաժողովի ներկայացուցած սկզբունքները, ուրեմն եւ հայոց հիմնական իրատունքը: Այդ մերժումին վրայ՝ Ընտրական յանձնաժողովը, իբրեւ արտայայտութիւն մեր ժողովուրդի փափաքին՝ ստիպուած եղաւ որոշել՝ *ձեռնպահ մնալու*, ընտրական ամբողջ գործին մէջ:

Միջկուսակցային Մարմինը, որ ջերմ կուսակից է ազգային եւ համեմատական ընտրութեան, հաղորդելով Ձեզ այս իրողութիւնը, կը հրաւիրէ կուսակցական բոլոր շարքերուն յատուկ ուշադրութիւնը, որպէսզի ամէն տեղ յարգուի ձեռնպահ մնալու այս որոշումը, իբրեւ արտայայտութիւն համազգային համամտութեան:

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆ

1913 Դեկտեմբեր  
Կ. Պոլիս

22.- «Համեմատական ներկայացուցչութիւն»ը կը նշանակէր, որ հայերը իրենց ընդհանուր թիւին համեմատութեամբ (2 միլիոն) պէտք է ունենային համապատասխան թիւով երեսփոխաններ օսմ. խորհրդարանին մէջ: Այդ հիմամբ կը պահանջուէր 20 աթոռ: «Ընտրութեան ազգային եղանակ»ը այն էր՝ որ երկրորդ կարգի ընտրելիները (մունթելիպը սանի) միայն հայկական քուէներով ընտրուէին:





Փաստ. 713-1

### 8.- ԴՈՒՐԱՆ-ԲԱՐՉՐԱՒԱՆ-ԴԱԿԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Մուշ, 24 Յունուար 1914

Սիրելիք,

Ստացել ենք ձեր 24-XII-[1913], 1-1-[1914] թուակիր նամակները:

— Վ[իզէ]նի<sup>12</sup> գալը անհրաժեշտ էր. ճիշտ է որ յոյս կայ մի ընկերոջ Տ[արօն] գալուն, բայց թէ այս շրջաններում շատ կարիք կայ ղեկավար ընկերների, հաւանական է շուտով ստիպուի Ռուբէնը<sup>16</sup> այստեղէն անցնիլ Բիթլիս եւ Տիգր[նակերտ]. այն տեղերը թոյլ են: Այստեղ շուտով կը վերջանայ վերակազմման խնդիրը, որից յետոյ կ'ուզենք նոյն վիճակին հասցնել մեր հարեւան գաւառները. այդ պատճառով Ռ[ուբէնի] գնալը թող կարծել չտայ, թէ այս շրջաններին մարդ այլեւս հարկաւոր չէ:

— Ինչպէս կ'երեւնայ ձեր վերջին նամակէն, ընտրութեանց խնդրոյ առթիւ սկսել էք տատանուել: Մեզ թուում է, քանի որ մենք բացարձակ կռիւ յայտարարեցինք եւ հռչակեցինք բոյկոտ, պէտք է որ չզիջանենք, մինչեւ որ օրէնքով չերաշխաւորենք մեր պատգամաւորների թիւը եւ անկախ ընտրութեան ձեւը: Եթէ այժմ դուք եւս չէք ուզեր պնդել ազգային ընտրութեանց վրայ, այդ դէպքում առնուազան պէտք է պնդել վայրերի վրայ, սկզբունք ընդունելով երաշխաւորել Բիթլիսի, Վանի, Էրզրումի նահանգներում պատգամաւորների կէս առ կէսի սկզբունքը, իսկ Դիարբեքիր, Սըւազ, Խարբերդ 1/3 -ի, Ադանայինը 1/3, իսկ մնացածներինը՝ համեմատականի սկզբունքով, յարանուանութեանց եւ կուսակցութեանց կողմից, եւ պարտաւորիչ լինի [որ] կառավ[արութեան համար] վերոյիշեալների կողմից ներկայացուածը ընտրուի:

— Ինչպէս նախապէս գրած էինք, որ ազգային ընտրութեան պահանջը շատ հիմնաւոր չէ, բայց պէտք է նկատել, որ այժմս ուշ է փոխելը մեր առաջարկը, քանի որ ինչպէս կ'երեւնայ կառավ[արութիւնը] իր յարաբերութիւններով կ'ուզէ երկպառակել եւ բոյկոտի թափը կոտրել, իսկ միւս կողմից նա իւր ընտրական ձեւով գործը առաջ կը տանի: Տիգրանակերտ վերջացել են ընտրութիւնները, նոյնպէս Կենճում (Բիթլիսի նահանգ):

Կառավարիչը եւ կուսակալը մեզ հետ բանակցութեան մէջ են. մենք առաջարկեցինք նրանց, նախ բեկանել տալ այդ տեղերի ընտրութիւնները եւ ապա բանակ-

ցել, եթէ անկեղծ է իրանց ցանկութիւնները: Չգիտեմ ինչպէս կարող ենք նոր բանակցութիւնների մէջ մտնել, քանի որ հայկ. նահանգների որոշ հայաշատ գաւառներում արդէն վերջացել են ընտրութիւնները: Եթէ նոր պահանջներ կամ զիջումներ են լինելու թէկուզ ձեր առաջարկած սկզբունքներով, նախ պէտք է բեկանել տալ եղած ընտրութիւնները եւ յետոյ նոր բանակցել: Դիարբեքիրից գոնէ եթէ ոչ 3 կամ 2, գոնէ մի հայ պիտի լինի. ինձ կը թուայ կ'ուզեն խաբել. այդ պատճառով կարծում ենք պէտք է շարունակել բոյկոտը, եթէ գոնէ հայկ. նահանգներում չեն բեկանուելու եղած ընտրութիւնները:

— Ձինուորագրութեան նոր օրէնքը, որով հայերին կամաւոր է թողնուում ծառայելը, իսկ մասմետականներին պարտաւորիչ: Պէտք է հակառակել, քանի որ մեր զինուորները նոյն օւտուի<sup>23</sup> շրջանակում պիտի ծառայեն: Պէտք է անպատճառ պնդել որ մեզ եւս նոյն օրէնքներով գէնքի տակ կանչեն, ինչպէս մասմետականներին: Ճիշտ է որ ստրուկ հայերը կը գանգատուեն զինուորագրութիւնից, բայց պէտք է ի նկատի առնենք, որ մեր զինուորների ներկայութիւնը մեր ապահովութեան եւ ոյժի գրաւակաւներից են:

— Շնորհակալ ենք ձեր տուած տեղեկութիւնների համար. շատ յոյսեր կը տաք, բայց կը վախնանք, որ վերջը ջարդով պիտի վերջանայ եւ այդ պատճառով ձեր գրածները գաղտնի ենք պահում, եւ հերքում թերթերի մէջ եղած ուրախալի լուրերը, որ չարբենայ ժողովուրդը:

Շամիլին<sup>2</sup> ասացէք թող գնէ ապսպրածներս ձեռնոցները, թէկուզ 8 դահեկանով. ուղարկած եմ Բարձր[աբերդ]<sup>11</sup> 500 դ[ահեկան]. պատրաստ ունինք 500 դ. եւս. միւս ամիս կ'ունենանք. մեր կողմից թող առնէ, եւ շուտ շուտ. Բժիշկին ասէք, նա գիտէ. կարմիր տեսակէն լինի, նորը: Մենք հները բոլոր սպառած ենք, այժմս սով է:

— Շատ սիրալիկ են մեր յարաբերութիւնները կառավ[արութեան] հետ: Մեզ հետ վերջերս ատամ ցոյց կը տային. մենք փոխադարձ արինք եւ յայտնեցինք, եթէ մեզ ուզենան գերեզման ուղարկել, իրանց էլ մեզ հետ պիտի տանենք. եւ դրանից յետոյ շատ լաւ ենք իրարու

23.- Բանակամալի:



հետ կատարեալ կատակերգութիւն. չգիտեմ ինչով պիտի վերջանայ:

— Այժմ հողային բռնագրաւումների եւ վիճակագրութիւնների պատրաստութեան աշխատանքի մէջ ենք: Կառավարութիւնը առաջարկում է առաջին հարցի լուծման համար մի յանձնախումբ կազմել վարչական եղանակով լուծման համար. Ռոս[տոմ] եւս առաջարկում է մտնել այդ մարմնի մէջ, բայց ոչինչ դուրս չի գալու. այստեղ եղածը մի լարախաղացի մէկն է եւ շա-

րունակ բարձեր կ'ուզէ դնել գլխներին տակ:

— Թղթակիցին նիւթեր կը տանք եւ յոյս ունինք Ազատամարտը պարբերաբար լուրեր առնէ: Դրօշակի համար մարդ կը փնտռեմ. ինչ անեմ՝ անապատ է, մարդ չկայ եւ մենք ժամանակ չունինք յարգելու մեր իսկ տուած որոշումը:

Բարեկներով Դուրան Բար[ձրաւանդակի]  
Կ. Կ.ի կողմէ՝  
ՌՈՒԲԷՆ<sup>16</sup>

Փաստ. 62-7

### 9.— ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԷԻՆ, Պոսթրն

Պոլիս, 1914 Յունուար 30/12 [Փետր.]

Կը հաստատենք մեր Յունուար 4 թուակիր քարտը: Երէկ ստացանք ձեր Յուն. 26ի նամակը, եւ կը փութանք պատասխանել:

20րդ Պատգ. ժողովի որոշումները չենք ստացած տակաւին, բայց ձեր յիշած կէտերը միանգամայն համաձայն են կացութեան պահանջներուն եւ մեր տեսութեան: Կը ցաւինք, միայն, որ ընկերները իրենք իրենց թոյլ տուած են օրակարգի վրայ հանել հաւաքներու խնդիր մըն ալ: Դուք պարտաւոր էիք հարիւր տոլարը վճարել գանգատողներուն եւ փակել այդ խնդիրը, հասկցնելու համար որ մանր հաշուախնդրութիւններով կարելի չէ արտաւորել կազմակերպութեան այս կամ այն մարմինը: Ի հարկէ ներքի չէր այդ հաշիւը ձգել մինչեւ այսօր, եթէ իր նպատակին յատկացուած չէ, ուրեմն ինքնապաշտպանութեան ընդհ. գումարին խառնուած է: Ամէն պարագայի մէջ, այս ինչպէս եւ մէկ երկու նման դժբախտ խնդիրներ կը քննուին եւ առաջին պատեհութեամբ արդիւնքը պիտի հաղորդենք ձեզի:

\* \* \*

Գործիչի խնդիրը միշտ մեր օրակարգին վրայ է, ժողով չ'անցնիր որ չիօսինք: Բայց նաեւ այժմ ունինք միայն Ս. Արարատեանը, որ կէս մը հաւանած է: Պիտի ջանանք գոհացնել:

\* \* \*

Հայկ. բարենորոգումներու խնդիրը փակուեցաւ Յունուարի 26-ին, Պետերբուրգ գիջած ըլլալով վիճելի կէտերու մասին: Ծրագիրը ինքնին շատ հեռաւոր նմա-

նութիւն մը ունի մեր բուն պահանջներուն հետ, ինչպէս պիտի տեսնէք: Պատճէնը կ'ուղարկենք շուտով: Ամէն պարագային մէջ, նոր հանգրուան մըն է որ կը բացուի մեր բաղձանքներու իրականացման ճամբուն վրայ: Եւ չմոռնանք որ շատ բան կախում ունի Օսմ. կառավարութեան բարիկամեցողութենէն: Քննիչները հաւանաբար հոլանտացի ըլլան եւ արդէն ձեռնարկներ կը կատարուին այդ նպատակով: Բերանացի խոստում եղած է թուրք գաղթականներ չգետեղելու Հայաստանի մէջ: Շատ բան մոլթ կը մնայ նոյնիսկ ծրագրին մէջ եւ ընդհ. քննիչներու պաշտօնավարութեան ընթացքին միայն կրնայ լուսաբանուիլ: Կառավարութիւնը մինչեւ այսօր չարտօնեց հրատարակել բուն ծրագիրը եւ իր յարմար տեսած ձեւով տեղեկութիւններ կը հաղորդէ մամուլին:

Բարենորոգ[ումներու] հարցը այսպէս կամ այնպէս փակուած ըլլալով, այժմ դարձեալ սեղանի վրայ է ընտրական հարցը: Այս խնդրին մէջ մեր գլխաւոր մէկ հոգն էր չիանգարել ներքին համերաշխութիւնը, որ կատարեալ է մինչեւ այս կէտս: Թէեւ հակառակորդներ փորձեցին վիժեցնել բոյկոտը, ինչպէս կ'արտայայտէին իրենց օրգանները, բայց իրենց խաղերը ի դերեւ ելան:

Բիւրոն իր վերջին նիստով որոշեց.—  
1. Պարլամենտական ընտրութեանց մասնակցի կարելի է միայն հայկ. բարենորոգումներու ծրագիրը ստորագրուել յետոյ:

2. Միջկ[ուսակցական] մարմնի եւ Պատրիարքարանի հետ եղած համերաշխութիւնը պահելու համար, կը համաձայնինք որ Պատրիարքը՝ ընտրական յանձնաժո-







ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

ղովին հետ սկսի նախապատրաստական բանակցութեանց, կառավարութեան հետ: Բանակցութիւնները սկսիլ, սակայն, չի նշանակեր մասնակցիլ ընտրութեանց, այլ միայն ճշդել նախապատրաստական պայմանները:

3. Ընտրական յանձնաժողովը պատրիարքին հետ չպիտի գիջի Միջկ. մարմնի եւ վարչութեան ընդունած պայմաններէն: Այսինքն՝ պիտի պահանջուի 18-20 մէպուս, — թեկնածուները պիտի ներկայացնէ Պատրիարքարանը, — բաշխումը պիտի կատարուի հայերու որոշած վիլայէթներուն մէջ, — Դուռը յանձն պիտի առնէ ազգային ընտրութեան<sup>22</sup> մասին նոր օրինագիծ մը ներկայացնել յառաջիկայ պարլամենտին:

4. Հայկ. բարենորոգումներու գործադրութեան վիժու մի պարագային, ապագայ մէպուսները պարտաւոր են հեռանալ պարլամենտէն: Այս մասին գրաւոր յանձնառութիւն պիտի տան թեկնածուները:

5. Եթէ Պատրիարքարանը գիջի այս պայմաններէն, Միջկ. մարմինը կամ Դաշնակցութիւնը իրաւունք ունի բողոքելու եւ ձեռնպահ մնալու:

6. Միջկ. մարմինը նոյնութեամբ ընդունեցաւ այս բանաձեւը եւ այս հիման վրայ է որ վերսկսան բանակցութիւնները: Պատուիրակութիւն մը գայն հաղորդեց պատրիարքին, որ անձամբ տեսակցեցաւ Թալէաթ պէյի հետ: Նախարարը անուշ լեզու խօսքեր ըրած էր, իսկ երբ բանագնացները գացին Իթիթիհատի Կեդը. կոմիտէին, պատասխան ստացան թէ հագիւ 13 աթոռ կրնան տալ, ան ալ առանց ապահովելու եւ չորսը — հինգը Իթիթիհատական հայ ըլլալու պայմանով... Պատուիրակութիւնը կը պահանջէր՝ Վան (2), Տիգրանակերտ (1), Պիթլիս-Մուշ (2), Սըվազ -Շ[ապին] Գարահիսար (2), Խարբերդ (2), Ատանա (1), Հալէպ-Մարաշ (2), Կեսարիա (1), Իզմիր (1), Նիկոմեդիա (1), Պոլիս (2), Կարին (2), Տրապիզոն (1). — Համագումար՝ 20 մէպուս: Իթիթիհատը կը խոստանայ Պոլիս (2), Իզմիր (1), Արդնի (1. Իթիթիհատական Պոյաձեան), Հալէպ (1. Իթիթ. Պոշկէզ[էնեան]), Մարաշ (1), Վան (1), Մուշ (1), Կարին (2), Ատանա (1), Սըվազ (1), Կեսարիա (1). գումար՝ 13:

Միջկ. մարմինը երէկ ժողով գումարելով, որոշեց պնդել իր պահանջին վրայ, քսան երեսփոխան եւն: Այսօր հաւանաբար վերջանայ խնդիրը խզումով: Նկատելի է որ խոստացուած 13էն հագիւ 8-10 կարելի է յաջողի:

Անկախաբար այս մանրամասնութիւններէն, Բիւրոյին մէջ խորհրդակցութեան նիւթ է ընտրութեան մասնակցելու պարագային իսկ դաշն[ակցական] թեկնա-

ծուներ առաջարկելու խնդիրը: Մէկ մասը բողոքովին հակառակ է, իսկ մեծամասնութիւնը ընդունելով հանդերձ որ ներկայ ընտրութիւնները արուեստակեալ հանգամանք ունին, նոյնիսկ ներքին համերաշխութիւնը խանգարելու վտանգ կրնայ ծագիլ, — դիտել կու տան որ կարելի է պատահական մարդոց յանձնել մեր տեսակէտներուն պաշտպանութիւնը, նոյնիսկ բարենորոգումներու հետապնդումը: Պոլսոյ շրջանին մէջ, մեր շարքերը առ հասարակ դէմ են որեւէ ձեւ մասնակցութեան, այդպիսի քայլ մը գտնելով անպատուաբեր յեղափոխական կուսակցութեան համար:

Կացութիւնը այս է ներկայ ըրպէին: Երկիրն ալ իր տրամադրութիւնները յայտնած է: Այս կամ այն կերպ տատանումներու մէջ, մեր միակ վախը այն է որ ներքին համերաշխութիւնը կը խախտի, որովհետեւ մեր հակառակորդները կը փափսան թէ այս բողոք (բոյկոտ, եւայլն) Դաշնակցութեան քաղաքականութիւնն են եւ պէտք է թօթափել, եւայլն: Միթարական է որ այժմ իրենք իրենց անձնական փորձով պիտի համոզուին թէ ո՛րն է բանաւոր եւ պատուաբեր ճանապարհը:

Վեր[ակագմեալ] հնչ[ակեաններու] հակահամերաշխական քայլի մասին դիտել տուինք իրենց կեդրոնին, եւ պիտի գրէին: — Այսօր թերթերը արտատպում մը ըրած էին Կարակէօզեանի կարծեցեալ տեղորի մը մասին («Ազգ»): Ի հարկէ կը լուսաբանէք այդ հարցը հրապարակաւ:

Խարբ[ուլթեանի] գործի մասին չենք կարող որոշ բան ըսել, քանի աչքի առջեւ չունենք բողոք թուղթերը: Երբ ուղարկէք տղթիւմանները, կը յանձնենք ընկեր փաստաբանի մը եւ ձեզի կը հաղորդենք մանրամասնութիւնները:

Շնորհաւորելով ձեր նոր պաշտօնը, կը սպասենք արդիւնաւոր գործունէութիւն եւ սերտ յարաբերութիւն:

Ընկերական բարեկներով  
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻԻՐՕ

Յ.Գ.- Ընկեր Ակնունին կը խնդրէ ձեր հասցէով ղրկուած ապահովագրեալ նամակ մը ղրկել St Louis, պ. Մեսրոպ Պետոյեանի: Հասցէն մեզի ծանօթ չէր: Եթէ հասցէն դուք ալ չգիտէք, բարի եղէք ուղարկել պ. Ասքանազ Չ[թեանի], խնդրելով որ հասցէն ուղարկեն մեզ:





Փաստ. 845-1

### 10.– ՍԵՒ ԲԼՈՒՐ–ՍԵԲԱՍՏԻՈՅ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԷՆ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

914, 6/19 Փետր.

Ընկերներ,

Ստացած ենք ձեր 10/23 Յունուար թուակիրը: Ստացած ըլլալով նաեւ Հ[ալախտանի] Բ[իւրոյ]էն նամակ մը, որով կարգ մը տեղեկութիւններ տալէ յետոյ կ'ուզէր իմանալ մի քանի հարցերու մասին մեր կարծիքը,– անոնց պատասխանեցինք հեռագրաւ. կը փութանք ձեզ ալ գրաւորապէս յայտնել մեր կարծիքը, հոգ չէ թէ մէկ երկու հատերը արդէն իսկ վերջացած են՝ ըստ եկած հեռագիր լուրերու եւ Պոլսոյ թերթերուն:

I Ժողովներու եւ պաշտօնեաներու մէջ հայերու հաւասար թիւ ունենալու մասին, մենք այնչափ համամիտ չենք որ պնդումները շարունակուին, քանի որ՝

ա- Այդ հաւասար թիւը պիտի ըլլայ միեւնոյն մէկ տարւան համար.

բ- Համեմատականի դրութիւնը արդէն համաձայն է մեր պահանջներուն եւ սկզբունքին.

գ- Չգծողներու պատճառաւ քաղաքական նոր անակնկալ մը կարող է վրայ հասնիլ եւ արգելք հանդիսանալ գրեթէ վերջանալու մօտ եղող մեր հարցին<sup>24</sup>:

II Մեր յարաբերութիւնները կառավ[արութեան] եւ Ի[թ]թ[իւ]հատի հետ.– Որչափ որ կառավ[ար]ը գիջած է ընդունելով բարենորոգումներն ու քոնթրոլը, բայց քանի որ անոնք դեռ չեն գործադրուած, պէտք է որ մեր յարաբերութիւնը առայժմ լինի վերապահ եւ ոչ պաշտօնական, մինչեւ գործադրութիւնը իր ընդունած բարենորոգումներուն:

Ինչ կը վերաբերի ընտրութեանց մէջ մեր մասնակցութեան հարցին, այս վերջինը մտած ըլլալով բարդ փուլի մը մէջ, անհրաժեշտ է, մեր իրաւունքները չկորսուելու համար, ձեռք բերել ապահովութիւն եւ մի-

ջոցներ: Որովհետեւ հայկական մի քանի նահանգներու մէջ, ինչպէս մերինը, ոմանք ընտրութեանց սկիզբէն, եւ ոմանք ալ վերջէն, ձեռնպահ մնացած են եւ ատոր հետեւանքով առաջինները մնացած են առանց միւլթիսիպը սանիւր<sup>7</sup>, իսկ երկրորդը՝ առանց երեսփոխանի,– սկիզբէն չմասնակցողները պիտի տուժեն երկու տեսակով, թէ երեսփ. ընտրութեանց մէջ եւ թէ նահանգ[ային] ժողովներու ընտրութեան մէջ, եթէ ըստ առաջնոյն դարձեալ Բ. կարգի ընտրողները պիտի ընտրեն զանոնք:

Արդ, որպէսզի մեր երեսփոխաններու եւ նահանգ. ժող[ով]ներու] անդամներուն ընտրութիւնը չթողուի միայն թուրքերու քմահաճոյքին, անհրաժեշտ է բեկանել տալ մինչեւ հիմա հայկ. նահանգ[ներու] մէջ կատարուած ընտրութիւնները եւ դեռ չաւարտած վայրերուն ընտրութիւնները յետաձգել տալ մինչեւ որոշ համաձայնութեան յանգուիլը: Այս կարգադրութիւնները շատ հեշտ են թէ տիրող կուսակց[ութեան] եւ թէ կառավ[արութեան] համար, երբ անոնք մեր պահանջները արդարացի գտնելով՝ կ'ուզեն մեզ գոհացում տալ եւ կը փափաքին մեր մասնակցութեան: Չընդունուած պարագային ինքնին հասկնալի կը դառնայ որ դեռ համեմատական սկզբունքն իսկ չեն ուզեր յարգել: Մեր տալիք երեսփ[ոխաններու] թուի մասին հարկ չկայ որոշ բան մ'ըսել, քանի որ նախորդ տարիներէ աստի մեր պահանջը եղեր է քսան: Մինակ ձեր լուրջ ուշադրութեան կը յանձնենք սա պարագան թէ, ինչպէս անցեալի մէջ տեսանք, հոգ շատ բան յանձնառու կ'ըլլան եւ կը ստորագրեն, մինչեւ իսկ կ'ընեն շուրջ խոստումներ, բայց տեսանք որ հոգ ձեզի տարբեր կը խօսին, հոս, գաւառները, տարբեր հրահանգներ կու տան. չխաբուելու համար, պայմաններ առաջարկեցէք եւ միջոցներ ձեռք առէք:

Ձեր պահանջած հաշիւը շաբթուան մէջ պիտի դրկուի:

24.- Ալեարկութիւն նոր ստորագրուած բարենորոգումներու ծրագրին:

Ընկերական բարեկեցութիւնով՝  
ՍԵՒ ԲԼՈՒՐԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ





Փաստ. 103-6

### 11.– ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ ԹԻՒ 4 ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ–ՆԱՄԱԿԸ

*«Դրօշակ»ի խմբագրության ընկերներ!*

*Կեղք. կոմ.ներուն ուղղուած ներկայ շրջաբերական նամակները պարտք կը զգանք հաղորդել ձեզ ես: Մենք ձեզ գրեր ենք Յունուար 22 թուակիր նամակ մը ես, որուն պատասխանը ցարդ չստացանք, հակառակ որ դուք ձեր գրած երկտողով կ'իմացնէիք որ «կարելուք քաներ կան հաղորդելիք»: Արդեօ՞ք չէք ստացեր: Նոյն նամակով մենք ձեզ հաղորդեր էինք նաեւ հասցէներ: Գրեցէք կը սպասենք:*

#### ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ

Ընտրական գործին առթիւ – ինչպէս հաղորդեր ենք Պոլիս – մեր կարծիքն է որ մենք իբրեւ կուսակցու-  
թիւն պիտի մնանք ձեռնպահ: Միեւնոյն ժամանակ մեր կարծիքն է որ ազգ. մարմինները անպատճառ մաս-  
նակցին ընտրութեանց: Մասնակցութիւնը անհրաժեշտ կը համարենք հետեւեալ նկատումներով:

Ա.- Ընկերներուն պիտի յիշեցնենք, որ վերջին Ընդհ. ժող.ի մէջ պոյքոթի խնդիրը կապուած էր ոչ թէ ան-  
միջապէս ընտրական պահանջներով միայն, այլ ասոր հետ մէկտեղ առաջին տեղը տրուած էր ուրիշ շարք  
մը կենսական պահանջներ[ու], ինչպէս օր[ինակ], հողային հարցի լուծում, համեմատական ներկայացուց-  
չութիւն, ոստիկանութեան ու ժանտարմերիայի վերակազմութիւն եւն. եւն.: Որոշուած էր նախապէս դնել  
այս պահանջները եւ չմասնակցիլ ընտրութեանց մինչեւ անոնց գոհացում տրուիլը: Յետոյ միայն յարմար  
սեպտեմբար չժանրաբեռնել խնդիրը եւ պոյքոթին հետ կապել միայն ընտրական պահանջները, ընդունելով,  
որ վերջին պահանջի՝ ազգ. ընտրութեան սկզբունքի յաջողութիւնը պայմանաւորուած է միւս պահանջներու  
իրականացումով: Արդ՝ որքան ալ յոռետես ըլլանք վերջին համաձայնութեան վերաբերմամբ, պէտք է խոս-  
տովանիլ որ ստացուածը աւելի է քան կը սպասուէր Ընդհ. ժող.ի ատեն եւ եթէ այժմ մենք սկսուած տեսնե-  
ինք բարենորոգումներու ծրագրի գործադրութիւնը, մենք համարձակ կրնայինք փակուած նկատել պոյքո-  
թի խնդիրը:

Բ.- Գալով ընտրական պահանջներուն, պէտք է նկատել որ այս խնդրի մէջ ալ ձեռք է բերուած որոշ յա-  
ջողութիւն: Մեր խօսքը պատգամաւորներու թուի մասին է: Հայ երեսփոխաններու թուի մէկ կամ երկուսով  
աւել կամ պակաս ըլլալը մեզի համար առանձին կարելուք խնդիր մը չէ: Կարելուք մեզի համար ազգ. ընտ-  
րութեան սկզբունքի յաջողութիւնն է որ կիսով չափ արդէն յաջողուած է կամ յաջողուելու վրայ է: Այն հան-  
գամանքը որ բանակցութիւնները կը վարէ պատրիարքարանը, որ թեկնածուներու համար դիմումներ կ'ըլ-  
լան առաջնորդարաններուն, որ առաջնորդարանները քաղաքական ժողովներու հետ ցուցակներ կը կազ-  
մեն եւ վերջապէս այն՝ որ կառավարութիւնը կը պարտաւորուի ընդունիլ ազգ. մարմիններու առաջարկած  
թեկնածուները, այս ամէնը ոչ այլ ինչ է եթէ ոչ ազգ. ընտրութեան սկզբունքի կիրառումը, որը սակայն անհր-  
րաժեշտ է խորացնել աւելի եւս եւ ջանք թափել որ յաջողուի հայ թեկնածուներու ազգ. գաւառական երես-  
փոխանական ժողովներու կողմէ վաւերացնելու սկզբունքը:

Կարնոյ մէջ, ամիսներ առաջ, այս նպատակով խնդիրը դրուած էր երեսփոխ. ժողովի առջեւ եւ յատուկ  
որոշում ալ ընդունուած. անհրաժեշտ է որ միւս գաւառներն ալ աշխատին նոյն ձեւով եւ յաջողեցնեն հայ  
թեկնածուները գաւառ. երեսփոխ. ժողովներու կողմէ վաւերացնել տալու սկզբունքը, որ կրցանք յաջողցնել  
այստեղ: Նոյնը պէտք է ընեն միւս գաւառները, այսպիսով աւելի եւս շեշտելու ազգ. ընտրութեան պահանջը  
եւ աւելի խորացնելու գայն: Գալով Դաշնակցութեան ձեռնպահութեան, արդի պայմաններուն մէջ մենք այս  
անհրաժեշտ կը համարենք ի միջի այլոց նոյն ազգ. ընտրութեան սկզբունքը աւելի եւս շեշտելու համար:





Այս ամենն զատ, թերևս ձեզ ալ յայտնի է որ Պոլսոյ միջկուսակցական մարմինը որոշեր է մասնակցիլ ընտրութեանց առանց սակայն կուսակցական թեկնածուներու: Մենք միանգամայն դէմ ենք այս տեսակէտին: Մեզի համար անկասկած է, որ այդ որոշումը ուղղուած է բացառապէս դաշնակցական թեկնածուներուն դէմ, որովհետեւ միայն անոնք են որ ասպարէզ պիտի գան իրենց իսկական անունով: Միւսները՝ հնչ[ակեան], վեր[ակազմեալ] հնչ. կամ Ս. ռամկավար պիտի կնքուին «չէզոք» կամ «անկուսակցական» մակդիրին տակ, այսպիսով յաջողցնելու իրենց ընտրութիւնը, իսկ եթէ այսպէս չըլլայ իսկ ու եթէ մենք փորձենք իսկ քրքրել իւրաքանչիւր թեկնածուի դիրքը, կամ հետամուտ ըլլանք որ անոնք չպատկանին այս կամ այն քաղաքական կուսակցութեան, այսպիսով մենք բնաւ մարդ չենք գտներ, ու ծիծաղելի կը դարձնենք ժողովրդական ներկայացուցչութիւնը, աւելի եւս ծիծաղելի կը դարձնենք յեղ. կուսակցութիւնները որոնք ձեռնպահ մնալու ցաւէն բռնուած առաջ պիտի քշեն անջիղ ու անգոյն մարդոց թեկնածութիւնը: Մինչդեռ, արդի պայմաններուն մէջ մանաւանդ մեզ անհրաժեշտ է խորհրդարանի մէջ ունենալ ուժեղ, կորովի ու փորձուած մարդիկ, ընդունակ պայքարի, առաւել եւս ընդունակ հրաժարելու եթէ այդ պահանջէն պարագաները:

Անկասկած է որ այսպիսի մարդիկ կարելի է փնտռել միմիայն կուսակցական շարքերուն մէջ: Անկասկած է եւ այն՝ որ «չէզոք» ու անգոյն տարրերը անգամ մը արդէն ընտրուելէ վերջը զուտ մը խմոր պիտի դառնան կառավարութեան ձեռքը ի վնաս հայ շահերու, ու միամտութիւն է նաեւ յուսալ թէ անոնք կրնան հրաժարիլ երեսփոխանութենէ երբ այդ յարմար ու անհրաժեշտ դատեն պատշաճ մարմինները:

Ամփոփենք մեր կարծիքները՝

Ա.- Դաշնակցութիւնը՝ ինչպէս նաեւ միւս կուսակցութիւնները իբրեւ կուսակցութիւններ կը մնան ձեռնպահ:

Բ.- Ազգ. մարմինները կը մասնակցին ընտրութեանց հայ թեկնածուները վաւերացնել տալով զաւառ. երեսփ. ժողովներուն կողմէ:

Գ.- Դաշնակցութիւնը բնաւ դէմ պիտի չըլլայ, եթէ ազգ. մարմինները դնեն դաշնակցականներու թեկնածութիւնը: Ընդհակառակը անոնց ներկայութիւնը խորհրդարանի մէջ այժմ աւելի քան ստիպողական է:

Դ.- Պարտաւորեցնել ընտրուած ընկերներուն հրաժարիլ երեսփոխանութենէ երբ այդ յարմար դատեն պատշաճ մարմինները:

Ահա մեր կարծիքը ընտրութեանց առթիւ:

Անցեալ օր հեռագիր ստացանք որ Արեւմտեանը որոշեր է մասնակցիլ ընտրութեանց կարգ մը նկատումներով: Հակառակ այս իրողութեան սակայն, մենք դարձեալ կը շարունակենք մնալ ձեռնպահութեան մեր տեսակէտին վրայ:

Ընկ. բարեկերով  
Ի դիմաց Հայ[աստանի] բիւ[րոյ]ի  
ԱՐՏԱԽԱԶԴՅ

18-II-1914, Կարին



Փաստ. 103-8

12.- ՌՈՍՏՈՄԷՆ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾԻՆ

[Կարից] 24 / II 1914

Սիրելիք,

Ուղղակի չենք հասկանում ձեր բռնած ընթացքը: Դուք տակն ու վրայ արիք ամէն ինչ: Քանի դեռ համերաշխական ժողովը եւ պատր[իարքարանը] հետեւում էին մեր Ընդհ. ժողովի որոշումներին, բնական է, որ մեր ներկայացուցիչները այդ ժողովում կարող էին անկախ կերպով տանել բանակցութիւնները, բայց հէնց որ Պատր. դուրս եկաւ, այլ եւ այլ նկատումներով, որոշ սահմանից, մեր ներկայացուցիչները պարտաւոր էին վերապահ դիրք բռնել, եւ Բիւրոն պէտք է հարցնէր պատկանեալ մարմինների կարծիքը, առնէր նրանց համաձայնութիւնը նախ քան այս կամ այն ընթացքի որոշելը: Կացութիւնը աւելի անբնական է դառնում նրանով, որ, ինչպէս տեղեկանում ենք, Ար[եւմտեան] բիւրոյի մեծամասնութիւնն էլ համակարծիք չէ համերաշխ. ժողովին: Սա ի՞նչ օյին էր, որ թոյլ տուիք խաղային մեր գլխին:

Գանք որոշումների էութեանը: Շրջաբերական նամակի մէջ արդէն այդ մասին խօսել ենք: Կամ պէտք էր բոլորովին ձեռնպահ մնալ.- եւ դա իսկապէս ամենապատուաբերը եւ օգտակարը կը լինէր, կամ մասնակցել այն չափով, ինչ չափով պայմանները թոյլ են տալիս: Այդ պարագային,- քանի որ երեսփոխանների հրաժարուելու խնդիր կար բարենորոգումները չգործադրուելու դէպքում,- տարրական տակտը պիտի թելադրէր ուղարկել խորհրդարան այնպիսիներին, որոնք ընդունակ են պայքարելու, իրենց դիրքը գոհելու: Բայց դուք որոշելով կանգ առնել անկուսակցական թեկնածուների վրայ, կարծես դիտմամբ ուզում էք խորհրդարանի հայ ներկայացուցչութիւնը խաղայիք դարձնել կառավարութեան ձեռքին: Այդ դեռ ոչինչ,- դուք ուզում էք, որ այդ կատարուի կուսակցութիւնների աջակցութեամբ: Գոնէ որոշէիք, որ կուսակցութիւնները ձեռնպահ մնան: Մենք մեր ընկերների՝ յեղափոխական կեանքի բովով անցած ընկերների խորհրդարանական ընթացքի պատասխանատուութիւնը դժուարանում ենք մեզ վրայ առնել, ո՞ւր մնաց այսպէս կոչուած չէզոքներին պատասխանատուութիւնը: Խորհրդարանական դիրքի հրապոյրի առաջ մեր եփուած ընկերներից ո՞րը, ի՞նչ չափով դիմացաւ:

Համերաշխ. ժողովի որոշումը ընդունելը ոչ այլ ինչ է, եթէ ոչ նուիրագործումը մեր կողմից այն տեսակէտի, թէ երեսփոխանական աթոռը ստեղծուած է անհատների փայլի, անդորր կեանքի համար եւ ոչ թէ դա ասպարէզ է հասարակական պայքարի համար, ուր կարող են եւ պէտք է որ վտանգուեն անհատի անձնական շահերը: Ուրիշ կերպ մենք մեզ վրայ չէինք առնել վեհանձնօրէն կուսակցականների դիրքը ուրիշներին զիջելու դերը:

Այստեղի անկուսակցական թեկնածուներն են առայժմ

- 1. Մատթեան, 2. Սմբատ Տէր-Ներսէսեան, 3. Արամ<sup>25</sup>, 4. Գ. Մեծատուրեան (պաշտօնեայ), Պոլսից առաջարկուած, 5. Երկանեան եւ Ճ. Խոսրովեան: Մի երկու երեքն էլ կան, որոնց անունը չեմ յիշում:

Իսկ հակակուսակցականների թեկնածուների մասին չմտածեցի՞ք: Ազատական կուսակցութեան բանի տեղ չէրի՞ք:

Ահա ձեր սալոնական ջէնդլմէնութեան առաջին պտուղները:

Ձեր Ռ[ՈՍՏՈՄ]

25.- Հաւանաբար Արամ Ատրուցից է:







Փաստ. 103-10

13.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԷՆ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

26-II-1914, Կարից

Ընկերներ!

Նախորդ փոսթով ընկ. Ռ[ոստոմ]ի գրած նամակով յայտնեք էինք արդէն մեր մտահոգութիւնները ընտրական գործին մէջ ձեր բռնած դիրքի մասին: Նոյնը ստիպուած ենք կրկնել անգամ մը եւս: Մեզ կը թուի թէ պատրիարքարան, ընտրական յանձնախումբ, համերաշխական մարմին եւայլն եւայլն, ոչ միայն չէզոքացուցեր են մեր կուսակցական գործունէութիւնը, այլեւ ձեզ կը քաշեն իրենց ետեւէն ընդունիլ տալով այնպիսի որոշումներ, որոնք բնաւ չեն համապատասխաներ մեր տեսակէտներուն:

Քանի դեռ համազգային պոչքոթի խնդիրը կար, հասկնալի էր ուրեմն համերաշխական ժողովի գոյութիւնը եւ անկէ բխող որոշումները. իսկ երբ այդ խնդիրը վերցուցեալ, նոյնքան հասկնալի էր նաեւ, որ համերաշխական ժող-ը կորսնցուցած պիտի ըլլար իրեն գոյութեան իրաւունքը եւ մեր ընկերները՝ գոնէ առանց մարմիններու կարծիքներն առնելու, իրաւունք պիտի չունենային պատգամներ արձակել եւ նոր որոշումներ անցնել բոլոր մարմիններու համար:

Ճիշդն ըսած՝ մենք ըմբռնել իսկ չենք կրնար թէ ինչպէս, առանց մարմիններու կամքին ու կարծիքին, այսպիսի որոշումներ կը պարտադրեն բոլորին համար: Մենք մեր բողոքը կը յայտնենք այս առթիւ: Եւ յետոյ, ի՞նչ կը նշանակէ առաջ քշել անկուսակցական, անգոյն ու անջիղ անձնաւորութիւններու թեկնածութիւնը: Ընտրուած մարդիկ որոշ չափով մը գոնէ ժողովրդական ներկայացուցչական հանգամանք պիտի ունենան թէ չէ. ընտրուած մարդիկ հայկական պահանջներու արտայայտիչը պիտի ըլլան թէ երեսփոխանական աթոռները դիրքի ու ռոճիկի համար են: Աւելի քան երբեք մեզ անհրաժեշտ է որ խորհրդարանի մէջ մենք ունենանք պայքարի ընդունակ մարդիկ. առաջ քշելով անգոյն մարդկանց թեկնածութիւնը, մենք մեր «ժողովրդական ներկայացուցիչները» պիտի դարձնենք պարզապէս խաղալիքը կառ[ավարութեան] ձեռքին. միթէ՞ ձեզ համար ալ պարզ չէ այս ամէնը: Կուսակցական թեկնա-

ծուներ պէտք է ընտրուին. մենք կը մնանք անխախտ մեր տեսակէտին վրայ:

«Ազատամարտ»ի մէջ կարգացինք որ պատրիարքարանը չեղեալ է նկատեր Վանի քաղ[աքական] ժողովի թեկնածուները. ինչո՞ւ համար. յանուն ո՞ր իրաւունքի. մենք բռնու կերպով կը բողոքենք այս ընթացքին դէմ. եւ եթէ նոյնիսկ պատրիարքարանը փորձէ միշտ «չեղեալ նկատել», մենք բ. կարգի ընտրողներով կ'ընտրենք մեր թեկնածուները՝ անկախ պատրիարք[արան]ի կամ ուրիշ մարմնի մը կամքէն. բայց մտածեցինք որ այս ընթացքը լաւ ազդեցութիւն չ'ունենար: Մենք մինչեւ հիմա կը պահանջէինք ազգովին ընտրութեան պահանջը, բայց երբեք մեր մտքէն չէր անցնէր կարծելու թէ ազգը՝ պատրիարքարանը ինքն է, որ անկախ գաւառ[ական] իշխանութիւններու կամքէն ու ցանկութենէն, ինքն իրեն որոշէ թեկնածուներ. ախր ո՞ւր կ'երթանք այսպիսով:

Այստեղ, ինչպէս գիտէք, ազգ. գաւառ. երեսփոխ[անական] ժողովի միջոցաւ անցաւ Գարոյի եւ Վարդգէսի<sup>26</sup> թեկնածութիւնը. իթիհատը ամէն ջանք ի գործ կը դնէ Վարդգէսի թեկնածութիւնը վիժեցնելու եւ անոր տեղ ընտրելու իր արատաւոր անցեալով չափէն աւելի յայտնի Մատթեանի թեկնածութիւնը: Իթիհատ[հատ]ի ընդհանուր ներկայացուցիչ Հիլմի պէյը երէկ տեսակցելով առաջնորդին հետ խնդրեք էր որ՝ «Եթէ Պոլսէն հարցում ըլլայ թէ երեսփ. ժողովի մէջ Մատթեանը քուէ ստացաւ, պատասխանուի այո՞»: Մատթեանը գաւառ. երեսփ. ժող.ին մէջ ստացաւ 10 ձայն, իսկ Գարոն 28 եւ Վարդգէսը 26. Հասկացուցէք Թալէաթին եւ միւսներուն, որ եթէ փորձեն այդպիսի խաղ մը խաղալ, մենք վճռականօրէն կը շարունակենք մեր ձեռնպահութիւնը այս անգամ բ. կարգի ընտրողներուն միջոցաւ. անկարելի է որ յայտնի մատնիչ մը որպէս հայութեան ներկայացուցիչը երթայ խորհրդարան: Պիտի խնդրենք որ այս պարագան թէ Թալէաթին եւ թէ միւսներուն յայտնէք ուղղակի:

Ժամանակ չկայ աւելի երկար գրելու: Երկար ժամանակ է որ ձեզմէ նամակ չունինք. գրեցէք շուտ շուտ:

Ընկ. բարեկենդիւ  
Հ[այաստանի] բ[իւրոյ]ի կողմէ  
ԱՐՏԱԽԱԶԴ<sup>6</sup>

26.- Գարոն Արմէն Գարոն է (Փաստրմաճեան Գարեգին). Վարդգէսը, այլապէս Գիսակ, Սերեկիպլեան Յովհաննէսն է:





Փաստ. 674-7

### 14.– ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԷՆ (ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ) ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

1914 Մարտ 3, Վան

Ընկերներ!

Ձեր տեղատարափ եւ իրար խաչող հեռագիրները ստացանք. ցաւելով կ'ասենք որ մեր կուսակցական կեանքին մէջ թերեւս առաջին անգամն է, որ մեր Բիւրոներէն մէկը, ինքզինքը եւ իր հետ ամբողջ կուսակցութիւնը այսպէս խայտառակ վիճակի մէջ կը դնէ. խայտառակութիւնը ո՛չ միայն հոն է որ մենք թեկնածուներ կ'ունենանք թէ ոչ, այլ հոն՝ որ համերաշխութեան ժողովի մէջ մերոնք փոխանակ դեկավարողի դեր կատարելու, ընդհակառակ խաբուեցին, որովհետեւ այդպիսի դէպքում լաւագոյն ու պատուաբեր նահանջը բոյկոտի, այն էլ համազգային բոյկոտի ճամբան էր. իսկ «չէզոքներով» ընտրութեան մասնակցելը, նախ որ մեր քաղաքական գործունէութեան ինքնասպանութիւնն է, երկրորդ՝ մեր դեկավար ընկերներու քաղաքական անփորձութիւնը. այո՛ անփորձութիւնը, որովհետեւ «չէզոք» ասելով յայտնի [է] թէ ովքեր են ընտրուած, եւ ովքեր պիտի լինին:

Այն անցեայր ինչ մենք ունենք, երբեք մեզ չի ներեր որ կասկածելի «չէզոքներու» եւ «չէզոք» պիտակի տակ մտած հակառակորդներու քուէ տանք. մեր որոշումը անկեղծ է. կամ կուսակցական թեկնածուներով մասնակցութիւն եւ կամ բոյկոտ:

Գալով պատասխանատուութեան հարցին, կը զարմանանք, որ դուք պատասխանատուութիւնը ձեզմէ նետել կ'ուզէք:

Ձեր տուած հեռագիրները պահած ենք. դուք ոչ մի հեռագիր ունէք մեզ ուղղուած, այն հարցումով թէ չէզոք թեկնածուներով մասնակցենք թէ ոչ. դուք մեզ իրողութեան առաջ էիք դրած, հեռագրելով թէ համերաշխութեան մարմինը այսպէս որոշեց. ուրեմն որոշելէ վերջ է որ մեզ գրած էք, առանց մտածելու, որ կարծիքներ կը հաւաքեն որոշելէ առաջ. երեւի նոյն[ն] էք

արած եւ միւս մարմիններին: Ինչ եւ է. պատասխանատուութեանը ճշտումը կը թողնենք պատկանեալ մարմինին. այժմ կը մնայ տակտ պահելը. իսկ այդ կարծում ենք այնպէս պիտի լինի, որ դուք գէթ այս երեք վիլայէթներու ընտրութեան հարցում պէտք է առաջնորդուէք այս տեղերի դիրեկտիւներով<sup>27</sup>:

Մեր վիլայէթի սահմաններում սկսած է քրդական-չէխական շարժումներ. Բաշկալէի սահմանում խարզանի (Մուսուլ) շէխն է ապստամբել, իսկ Բիթլիսի կողմերը — Խիզանի շէխը. մեծ քանակութեամբ զօրք գնաց. հետեւանքները ճշդել չենք կարող, որովհետեւ խիստ ձիւն է. երթեկութիւնները դադարած:

Վերջերս տեղական կառավարութիւնը իր յարաբերութիւնները մեզ հետ պաղեցրած կ'երեւի, կը կարծենք Պոլսոյ թելադրութեամբ. վալին մի անգամ ակնարկ ըրաւ, որ իրենց մարդիկ Պոլսոյ մէջ շատ են գազազած Դաշնակցութեան դէմ: Բայց եւ այնպէս բարեկամական կապերը կը պահենք: Ռեֆորմներու համար բան մը չլսեցինք. այնպէս էք խրուել ընտրողական քաոսի մէջ, որ ընթացիկ նամակագրութիւնը եւ գործերը մոռացած էք:

Պէտք է վերսկսել շաբաթական նամակագրութեան սիստեմը:

Ի դէպ, «Ազատամարտ»ի վարչութեան հաշուապահութեան մասը կ'երեւայ ողբայի վիճակի մէջ է. ո՛չ մի կանոնաւոր հաշուապահութիւն, ոչ էլ բաժանորդներու ցանկ. մէկին 6 ամիս առաջ կը դադրեցնեն, միւսէն դրամ կը ստանան չեն ճամբեր եւ այլն. Բիւրոն պարտականութիւն ունի հսկելու այդ գործի վրայ. ե՞րբ վերջապէս այդ ճիւղի համար պէտք է գտնէք մի խելքը գլխուն մարդ եւ մեզ ազատէք այս խայտառակութիւններից:

Ի դիմաց մարմնի  
Բարեւներով  
ԱՐԱՄ

27.- Յուցումը ներքով:





Փաստ. 103-19

15.- ՌՈՍՏՈՍԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾԻՆ

Կարին, 11 մարտ 1914

Սիրելիք,

Որքան մեր խելքին զօռ ենք տալիս, չենք կարողանում հասկանալ, թէ ինչո՞ւ կուսակցութիւնները պէտք է մասնակցեն ընտրութիւններին՝ անկուսակցական թեկնածուներ ներկայացնելով: Դուք էլ այդ մասին կատարեալ լռութիւն էք պահպանում:

Ձեռք էլ կարողանում յիշել, թէ երբ եւ ինչպէս ենք հաւանութիւն տուած եղել անկուսակցական թեկնածուների առաջարկին: Այդպիսի բան չէր կարող լինել, որովհետեւ մեր ընկերների մէջ չկայ մէկը, որը այդ ուղիով թեամբ մտածէր:

Եթէ նոյն իսկ եղել է ժամանակին մի այդ տեսակի արտայայտութիւն, յամենայն դէպս մեր հեռագրական չափազանց կատեգորիկ յայտարարութիւնը պէտք է ի նկատի առնէիք եւ անմիջապէս Համերաշխականի ուղղութեամբ յանձնէիք:

Գուցէ դուք այլ կերպ էք հասկացել կուսակցական ձեռնպահութիւնը: Կուսակցականների չընտրուելը անհրաժեշտ է, երբ համազգային բոյկոտ կամ երբ կուսակցութիւնները բացարձակապէս ձեռնպահ են: Բայց երբ պատրիարքարանը որոշում է մասնակցել, երբ կուսակցութիւնները համերաշխական ժողովում համամիտ են գտնուում նրան, այդ ոչինչ՝ ընտրական գործի մէջ էլ որոշ դեր են ստանձնում, — կատարելապէս արհիւրդ<sup>28</sup> բան է՝ կուսակցական թեկնածուների մեկուսացումը: Դա քաղաքական ինքնասպանութեան փորձ է, ուրիշ ոչինչ, իսկ միւս տարրերի կողմից՝ մի ճարպիկ խաղ, որին դուք (մասամբ եւ հնչակեանները) զոհ էք գնացել ոտով գլխով:

Այդ պարագային՝ մեզ մնում էր կամ մասնակցել իբրեւ կուսակցութիւն՝ դնելով կուսակցական թեկնածու-

ներ կամ ձեռնպահ մնալ իբրեւ կուսակցութիւն, ընտրութիւնը թողնել ազգային մարմիններին, բայց չհակառակել, եթէ սրանց կողմից դրուեն կուսակցականների թեկնածութիւնը: Մենք նախընտրեցինք վերջին ճանապարհը, չուզեցանք Մատթեանների ընտրուելու պատասխանատուութեան բաժինը ստանձնել: Չմոռանամ ասել, որ Մատթեանի եւ բժ. Թաշճեանի կողմից արտակարգ ջանքեր են թափուում ընտրուելու: Տեղիս Իթթիհատն էլ իբր թէ նրանց օգտին է աշխատում: Կ'ուզեն գոնէ Մատթեանին տեղաւորել: Այդ նպատակով է, որ Վարդգէսի թեկնածութեան դէմ պրոպագանդ է մղուում: Կուսակցականների մեկուսացման որոշումը տալիս աչքի առաջ չունեցա՞ք, որ ասպարէզը թողնում էք հասարակութեան բացասական տարրերին: Գաւառներում, — այստեղ, Վան, Մուշ, — փորձեցէք գատել կուսակցականներին, ո՞վ կը մնայ տակը: Կամ գուցէ մտադիր էք եղել նաղդել<sup>29</sup> Պոլսոյ թեկնածուներին: Գիտենք, որ Պոլիսը կարող է հայթայթել բոլոր գաւառների համար «անկուսակցական» թեկնածուներ: Բայց այն, ինչ թերութիւն ենք համարում ազգային երեսփոխանական] ժողովի համար, կիրարկե՞նք պարլամէնտի վերաբերեալ էլ:

Երեւի ձեր տեսութիւնները պարզած կը լինէք նամակներով:

Ինչպէս արդէն հեռագրուած է, ազգային մարմինները պնդում են Գարօ-Վարդգէսի թեկնածութեան վրայ: Եթէ խոչընդոտներ հանուեն, առաջնորդարանը հաւանական է ձեռնպահ մնայ:

Ձեր Ռ[ՈՍՏՈՍ]

Մեր երեք վայրերում միակերպութիւն կայ: Թէ այստեղ եւ թէ Վան եւ թէ Մուշ կուսակցութիւնը ձեռնպահ է: Միայն Մշոյ առաջնորդարանն է, որ չի ուզում մասնակցել ընտրութիւններին:

28.- Անհեթք:  
29.- Նաղդել. անպետք իր մը իբրեւ լաւ ապրանք ծախել:





Փաստ. 62-24

16.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ  
Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԷԻՆ, Պոսթրն

Պոլիս, 11/24 Մարտ 1914

Ընկերներ,

Կը հաստատենք մեր Յունուար 30 թուակիրը: Այս անգամ ուշացանք գրելու շնորհիւ մեզուսական թըն- ճուկին, որ ճշմարիտ տագնապի մը մասնեց մեզ:

Ինչպէս կը յիշէք, Ընտրական մարմնի հետ բանակ- ցութեան միջոցին, Իթթիհատը 20-ի տեղ կը խոստանար 13: Երբ զգաց որ ձեռնպահութիւնը դարձեալ պիտի սկսի, աւելի զիջող դարձաւ եւ յանձն առաւ մինչեւ 16 աթոռ տալ, առանց բոլորովին ապահովելու երկուքը եւ իր թեկնածուներն ալ մէջն հաշուելու պայմանով: Հա- մերաշխականը կը պնդէր 18ի վրայ, իբրեւ առաւելա- գոյն զիջում միայն երկուքը Իթթիհատական ըլլալու պայմանով եւ մնացորդը գուտ ազգային ցուցակով:

Մինչ այս մինչ այն, Պատրիարքարանը սկսած էր ընկրկիլ, վախնալով զանազան «փորձանքներէ»: Եւ առտու մը Խառն ժողովը ինքն իր մէջ պառակտուած, թոյլ տուաւ որ Զաւէն եպ. ինքնազուլս բանակցի 16-ի հիման վրայ, հաւանելով մինչեւ չորս Իթթիհատականի ընտրութեան: Համերաշխական ժողովը, դժգոհ այս քայլէն, որոշեց որ կուսակցութիւնները պաշտօնապէս ձեռնպահ մնան, առանց սակայն դժուարութիւն յա- րուցանելու Պատրիարքարանին դէմ: Եւ պատրիարքը հեռագրեց գաւառները որպէսզի յայտնեն իրենց թեկ- նածուները:

Այստեղ էր որ բացուեցաւ նոր էջ մը: Պատրիարքա- րանի հարցումին՝ Կարինի առաջնորդարանը կը ներկա- յացնէր Կարօ եւ Վարդգէս: Վանը՝ Վումեան եւ Փա- փագեան, իսկ Մուշը կը մնար բոլորովին ձեռնպահ: Թէ՛ պատրիարքին, թէ՛ մեր կողմէ հեռագրուեցաւ որ ոչ- կուսակցական «չէզոք կարող թեկնածուներ» նշանա- կեն, ընտրական ժողով կազմելով Առաջնորդարանէ, յարանուանութիւններէ եւ քաղաքական կուսակցու- թիւններէ: Երկրորդ եւ երրորդ հեռագիրներով անուն- ները առաջարկուեցան, իբրեւ ազգային ընտրելի: Միեւ- նոյն ատեն Հայաստանի բիւրոն կը գանգատէր որ մենք սխալ ճամբայ բռնած ենք, որ իրենք ալ իբրեւ կուսակ- ցութիւն ձեռնպահ կը մնան, բայց չեն կարող մերժել ժո- ղովորդային ընտրութեամբ, ազգային մարմիններու քուէով առաջարկուած կուսակցական թեկնածուները: Եւ ահա ստեղծուեցաւ ճշմարիտ անել մը մեզի համար: Մենք ձեռնպահութիւնը հրատարակած էինք հիմնուե- լով մարմիններու մեծամասնութեան կարծիքին վրայ:

Երբ պատրիարքը 16-ի վրայ կը համաձայնի, վերջին ան- գամ դիմեցինք մարմիններու կարծիքին, եւ ստացանք հետեւեալ պատասխանները.—

ՏՐԱՊԻԶՈՆԸ բացարձակապէս կը մերժէր մասնակ- ցիլ, ցորչափ բարենորոգումները գործադրուած չեն: ԽԱՐԲԵՐԴ չէր հաւաներ 20-էն պակաս: ՍԸՎԱԶ՝ ան- բաւական կը գտնէր թիւը, մանաւանդ որ համաձայ- նութենէն շատ առաջ, արդէն Իթթիհատը իրենց համար ընտրած էր մէկուս մը... ՊՈԼԻՍ՝ բոլորովին հակառակ էր մասնակցութեան: Վանը՝ սկիզբէն իսկ կուսակից ըլ- լալով մասնակցութեան, ի հարկէ երբ ազգային բոյկո- տը չյաջողէր,— կը պնդէր իր երկու կուսակցական թեկ- նածուներուն վրայ: ՄՈՒՇԸ՝ միշտ ձեռնպահ էր, կանգ առնելով սա տեսակէտին վրայ թէ՛ բարենորոգման ծրագրին մէջ նահանգային ժողովներու մասնակցու- թեան համար կէս առ կէս ընդունուած տեղերէն երես- փոխաններն ալ կէս առ կէս քրիստոնեայ եւ իսլամ ըլ- լան, իսկ միւս տեղերը 1/3 կամ համեմատական: Իսկ ԲԻՒՐՈՆ երկուքի էր բաժնուած. փոքրամասնութիւնը հակառակ ըլլալով որեւէ՛ ձեւ մասնակցութեան, իսկ մեծամասնութիւնը պատճառաբանելով թէ Դաշնակ- ցութեան համար ձեռնտու չէ ասպարէզը ձգել պատա- հական մարդոց, մանաւանդ երբ բարենորոգման խըն- դիր կայ, երբ երեսփոխանները յանձնառութեան տակ պիտի մտնեն, եւն.:

Հայաստանի բիւրոն ճիշդ այդ տեսակէտն էր որ կը պաշտպանէր ուժգնօրէն, միշտ շեշտելով թէ կուսակ- ցութիւնը պաշտօնապէս ձեռնպահ է, սակայն ներկայ փափուկ պարագաներուն մէջ, բոլորովին վտանգաւոր է շատ առաջ քշել չէզոքները. քանի որ ժողովուրդը կու- սակցական կ'ընտրէ իր ժողովներով, մենք իրաւունք չունինք մերժելու, եւն.:

Այս բոլորը տեղի կ'ունենային ճիշդ այն ատեն երբ Պատրիարքը ներկայացուցած էր բաց տեղերու ցուցակ- ները, եւ կը մնային միայն Վանը, Կարինը եւ Մուշը: Դիւրահասկանալի է որ մեր ուղղամտութիւնը կասկա- ծի պիտի ենթարկուէր միւս կուսակցութիւններուն եւ հասարակութեան կողմէ, որովհետեւ այդ երեք տեղե- րուն մէջ ոչ մէկը «չանս» ունէր բացի Դաշնակցութե- նէն: Կնճիւր լուծելու ուրիշ ձեւ չկար, բայց մերժել թէ՛ Կարինի եւ թէ՛ Վանի թեկնածուները եւ բախում մը յա- ռաջ բերել կուսակցութեան ծոցին մէջ, եւ կամ միւս





երեք կուսակցություններն ալ հաշտեցնել նոր կացութեան հետ, անշուշտ գիջողութիւններ ընելով:

Եւ նախընթաց Կիրակի, Համերաշխականին մէջ վերջին ճիգ մը ըրինք այդ ուղղութեամբ, հաւանելով իրենց ձգել վանի մէկ աթոռը եւ Պիթլիսը, ի հարկէ տեղին ազգային մարմիններու հաւանութեամբ: Այս իմաստով համաձայնութիւն գոյացած էր եւ Պատրիարքը պիտի կարգադրէր մանրամասնութիւնները: Բայց ահա նոր դաւ մը: Պատրիարքը այլեւս ինքզինքը ազատ զգալով զաղտնապէս եւ ինքնագրուի ցուցակ մը կը պատրաստէ, Կարինի մէկ երեսփոխանը (Գարօ) փոխադրելով Վան, որպէսզի անոր տեղ Մատաղ[եան]ը ընտրուի, Վանի քաղաքական ժողովի ցուցակը մէկ կողմ դնելով եւ Վահան Մալգեանը առաջարկելով, ինչպէս տեղեկացած կ'ըլլաք թերթէն: Այս հաշուով ո՛չ միայն ժողովուրդին կամքը արհամարհուած կ'ըլլար, այլեւ Դաշնակցութեան դէմ դաւ մը կը սարքուէր, եւ անհանդուրժելի խաղ մը: Պաշտօնապէս բողոքեցինք այս քմահաճ կարգադրութեան դէմ: Բայց ի հարկէ գաւառին կը մնայ վճռապէս պաշտպանել իր արժանապատուութիւնն ու իրաւունքները:

Խնդիրը այս վիճակին մէջ է հիմա եւ հակառակորդները սկսած են շահագործել այս ձախող կացութիւնը, թուք ու մուր քսելով, ինչպէս իրենց սովորութիւնն է: Մեր գլխաւոր հոգն է ո՛չ միայն համերաշխութիւնը պահել, այլեւ կուսակցութիւնը չենթարկել ցնցումներու: Բիւրոն հակառակ իր բարիկամեցողութեան, չի կրնար գաւառի ազգային մարմիններուն որոշումը ջնջել տալ, ինչպէս կը փորձէ պատրիարքը: Մանաւանդ որ, ինչպէս որոշ կը հասկնանք վերջին նամակներն ու հեռագիրները, վտանգ կայ նոյնիսկ համազգային ձեռնպահութեան, եթէ Պոլիսէն պնդեն նշանակովի թեկնածուներու մասին:

Նկատողութեան առնելով կացութեան բոլոր պարագաները, Բիւրոն իր երէկուան ժողովին մէջ որոշեց դարձեալ պահանջել պատրիարքէն որ չփոփոխէ գաւառի ցանկը, բայց Վանի մէկ աթոռը պահէ ռամկավարներուն եւ Պիթլիսը (դարձեալ դաշնակցական) հնչակեաններուն:

Այս միջոցին չափազանց երկդիմի է պատրիարքին դիրքն ալ, մանաւանդ իր խաղերը՝ ցուցակը մինչեւ այսօր գաղտնի պահելու մասին՝ լուրջ կասկած կը հրաւիրեն: Արդէն իսկ նշաններ կան որ Օրմանեանի, Նորատուրկեանի<sup>30</sup> եւ ծանօթ խմբակին հետ միաբանած, աստիճանաբար պիտի մօտենան իթթիհատին, Դաշնակցութիւնը հարուածելու համար: Այնպէս որ, անհրաժեշտ է գէթ կուսակցական համերաշխութիւնը անխախտ պահել, այդ խաղերը չզոքացնելու համար: Տարաբախտաբար մէպոսական այս տագնապը, մեծապէս վնասեց համերաշխութեանը, թէեւ ամէն յոյս կորսուած չէ եւ մենք ջանք չպիտի խնայենք վտանգը հեռացնելու:

\*

\*\*

Համերաշխութեան անհրաժեշտութիւնը կը շեշտեն նոյնիսկ Պետերբուրգէն: Վերջին օրերու պայքարները արձագանգ գտած են նաեւ Ռուսիոյ պետական շրջանակներուն մէջ, ուրկէ մեր բարեկամներուն յանձնարարուած է զգուշանալ ներքին պառակտումներէ, նոյնիսկ մեր շահուն համար: Անշուշտ նկատի կ'ունենաք այս պարագաները եւ խոյս կու տաք ամուլ բանավէճերէ, եթէ նոյնիսկ միւս թերթերը վերսկսին իրենց արշաւանքը:

Հայկ. բարենորոգումներու նոր ծրագրէն յետոյ, գոր ստացաք անշուշտ, անհամբեր կը սպասուի գործադրութեան: Առաջին քայլը պիտի առնուէր ընդհանուր քննիչներու անուանումով: Պողոսը<sup>31</sup>, մեր բարեկամներն ու ընկերները Զուլիցերիա, Հոլանտա, Պելթիա, ամէն կողմ փնտռեցին — միշտ փոքր պետութեանց հպատակներէն եւ հազիւ կարելի եղաւ գտնել հինգ-վեց հոգի, որոնց ամէնէն ձեռնհասները եւ վստահները, սակայն, կը մերժէին ստանձնել այդ ապերախտ պաշտօնը: Այս ձգձգումներուն ընթացքին, Դուռն<sup>32</sup> ալ իր կարգին կ'ուզէր օգտուիլ, արդէն միշտ չկամութեամբ ընդունած ըլլալով նոր ծրագիրը: Նոյն իսկ Ճաւէտ պէյլը<sup>33</sup>, Փարիզի մէջ յոխորտացեր է որ մինչեւ աշուն հազիւ քննիչներ կ'ընտրուին իսկ երբ անոնք գան, ատեն մը Պոլիս կը պահենք, եւ այսպէս կամ այնպէս մինչեւ 1915-ի ամառը կը ձգձգենք, եւ ո՞վ գիտէ ի՞նչ կ'ըլլայ...

Վերջին լուրն այն է որ Ռուսիա չորս թեկնածու գտած է, պելթիացի եւ հոլանտացի, եւ հաւանաբար մօտերս անոնցմէ երկուքը ընդունին վերջապէս: Մեր կողմէ մարդիկ պիտի երթան Եւրոպա, թեկնածուներուն հետ տեսակցելու եւ միջավայրի պայմանները պարզելու համար<sup>34</sup>: Դարձեալ հայերու կողմէ ուղեցոյց մը կը պատրաստուի, ընդհ. քննիչներուն յանձնուելու համար, որպէսզի աւելի գիտակցութեամբ կատարեն իրենց պաշտօնը, քանի որ նոր ծրագիրը չափազանց մուլթ է եւ անբաւական:

Նկատելի է որ այս միջոցին կարգ մը տէրութիւններ եւ Ռուսիա կ'աշխատին բազմացնել իրենց հիւպատոսները Հայաստանի մէջ: Գերմանիա արդէն ընդհանուր հիւպատոսարան մը հաստատեց Կարինի մէջ, իսկ Ռուսիա որոշած է հաստատել Խարբերդի, Սըվազի եւ Տիգրանակերտի մէջ:

30.- Պոլսոյ նախկին պատրիարք Մաղաթիա Օրմանեան եւ նախկին նախարար Գաբրիէլ Նորատուրկեան:  
31.- Պողոս Նուպար փաշա:  
32.- Բարձր. Դուռն — Պապը Ալի, թրքական կառավարութիւնը:  
33.- Օսմ. Թուրքիոյ ելեւտական նախարար:  
34.- Խօսքը կը վերաբերի բժ. Յ. Չարեանին եւ Արմէն Գաբոյիին, որոնք Արեւմտեան քիւրդի որոշումով մեկնեցան Փարիզ եւ Լահէյ նշանակուած ընդհ. քննիչներուն հետ հանդիպման համար: Տես այս մասին էջ 55-57:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

Կը խնդրենք Հայկական հարցի այս լուրերը չհրատարակել կամ չտարածել լայն խաւերու մէջ:

\*  
\*\*

Ատենէ մը ի վեր, անհատական նամակներով անգամ, կը պնդէք ձեր տրտուկներու մասին, առանց նկատելու թէ ձեր պահանջին իրականացումը բոլորովին մեր կամքէն կախուած չէ: Գործիչի համար մինչեւ այսօր անփոյթ գտնուած չենք, բայց ի՞նչ օգուտ երբ յանձնառու չկայ: Բ. Շահպազը, Դարբինեանը եւ ուրիշ ո՛վ որ ունինք աչքի առջեւ, կը մերժեն: Դուք շատ լաւ կը յիշէք որ Վրացեանը հագիւ մէկ տարիէն կրցանք դրկել: Այս պարագաները նկատողութեան առնելով, մենք խնդրած էինք ընկերներ Մնարեանէն եւ Վրացեանէն իրենց մեկնումը յետաձգել գէթ մինչեւ ամառ: Եթէ Մնարեանի համար անկարելի է, գէթ Վրացեանը պատ-

րաստ է սպասելու մինչեւ Յուլիս, երբ արդէն տեղի կ'ունենայ Ցրդ Ընդհ. ժողովը եւ պատգամաւորներով միասին կը դառնայ: Երբ բուն գործին մարդը չկայ, ինչպէ՛ս ընենք: Արարատեանին դարձեալ գրեցինք:

Վաղուան փոստով կ'ուղարկենք Ընդհ. ժողովի շրջաբերականը: Վերջին պահուն ստացանք 1912/13-ի հաշիւները, բայց ոչ 20րդ Պատգ. ժողովի ատենագրութիւնը: Ըսենք անցողակի, որ շաբաթներէ ի վեր ո՛չ մէկ նամակ ենք ստացած նոր Կեդր. կոմիտէէն եւ անձնական նամակներէ կը տեղեկանանք ձեր կողմի անցուդարձերը: Ձեր վերջին նամակը թուագրուած էր Յունուար 26-ին:

Սպասելով ձեր լուրերուն,

Ընկերական բարեկներով  
**ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻԻՐՕ**

Յ. Գ.- Զիֆոնի<sup>35</sup> մասին առանձին տեղեկութիւններ կու տանք առաջին պատեհութեամբ:

35.- Ձիֆոն. ինքնապաշտպանութեան եւ զենքի հայթայթման ֆոնդ:





Փաստ. 103-16

17.- ՌՈՍՏՈՍԷՆ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾԻՆ

[Կարին] 15-3-1914

Սիրելիք,

Ընդհանուր ժողովի<sup>36</sup> հրաւերը, ինչպէս առաջ էլ գրել ենք, վաղաժամ է: Չէ որ դեռ մեր գլխաւոր հարցերը չեն նշանակուած: Առայժմ դուք ձեր շրջանում, մենք մեր շրջանում յիշեցնենք որոշումների մասին. հարցերը, պաշտօնական հրաւերը կ'ուղարկենք Զատկին, իսկ մինչ այդ դուք մեզ գրեցէք ձեր հարցերը, մենք կ'ուղարկենք ձեզ մեր հարցերը:

Չենք հասկանում թէ ինչ aberration<sup>37</sup> է պատել ընկերների միտքը. ինչո՞ւ են շարունակում կարծել եւ ուրիշներին էլ կարծել տալիս, թէ Դաշնակցութիւնը դուրս է եկել ձեռնապահութիւնից եւ մասնակցում է ընտրութիւններին: Չէ', պնդում ենք, չէ'. կուսակցութիւնը շարունակում է ձեռնպահ մնալ. միայն թէ աչքի առաջ ունենալով ձեռք բերուած կիսով չափ յաջողութիւնը, մանաւանդ բարեկարգումների շուրջը կատարած համաձայնութիւնը, չենք ուզում հակառակել, երբ ազգային մարմինների կողմից դրուում է ընկերների թեկնածութիւնը: Մանաւանդ որ ազգային մարմիններին թողնելով՝ աւելի ենք մօտենում մեր մի սկզբունքին՝ ընտրութեանը ընդհ. ազգային գոյն տալով: Մի մո-

ռացէք մի բան: Երբ նորից դրուի ազգային ընտրութեան եղանակի հարցը - ինչպէս մինչեւ այժմ դրուել է - մենք կ'ունենանք մեր ձեռքին պատրաստի պատասխան. - Օսմ. խորհրդարանի հայ երեսփոխանները ընտրուում են ազգային երեսփոխանական ժողովների կողմից: Չենք ասում, թէ դա գոհացուցիչ կը լինի, բայց դա ճանապարհ կը բանայ իսկական ազգային ընտրութիւնը յաջողեցնելու համար: Եթէ օրէնքի մէջ էլ չմտնի, գոնէ նախընթաց կը դառնայ ապագայի համար, քանի որ արդի կառավարութիւնը պարտաւորուում է ընդունել ազգի ներկայացրած թեկնածուներին. - հոգ չէ, եթէ նոյնիսկ չկատարի իր խոստումը. - պէտք է աշխատել երեսփոխանական ժողովի անդամներին յատկացնել մի տեսակ միւլտիթէխիպի-սանիւների դեր': Այդ տեսակէտից նայելով՝ պատրիարքի բռնած ընթացքը ուղղակի վնասակար է:

Այստեղ մտադրութիւն կար միտինգ գումարել պատրիարքի բռնած դիրքի առթիւ. մտադրութիւն կար յայտարարել, թէ աչքի առաջ ունենալով կառավարութեան հանած դժուարութիւնների հետ միատեղ պատրիարքի միջամտութիւնը, որոշում է ձեռնպահ մնալ ընտրութիւններին: Բայց այս բանը յետաձգուեց, այն յուսով թէ գուցէ պատրիարքը փոխի իր ընթացքը:

36.- Ակնարկութիւն Յուլիսին գումարուելիք Հ.Յ.Դ. Ութերորդ Ընդ. ժողովին:

37.- Ֆրանսերէն. սնորհաբ, խոտորում:

Ձեր Ռ[ՈՍՏՈՍ]

Այսպէս մտադրութեամբ մեր հիշագրուած հարցերը, կ'աւանդ շեշտէ ասելու, մտադրութեամբ մեր յայտարարումը. թէ արդի առաջ աւելացրով փոխաւարարութեամբ ձեռնապահութեան թեկնածուներին չենք հարցաւորել իրարմիտութեամբ, որոշում է ձեռնապահ մնալ ընտրութիւններին: Այս պէս մտած թեւեւ չենք աչք շարժում թէ մտածե՞նք հարցաւորելու փոխել իր մտածութեան:

Ձեր Հ. Յ.

Ռոստոմի ձեռագրէն նմոյշ մը



Փաստ. 116-35

18.- ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ, Ժընև

Պոլիս, 17/30 Մարտ 1914

Համաձայն ընկերներ Ղարիբի եւ Միքայէլի<sup>38</sup> նա- մականերուն, ներփակ ձեզի կը զրկենք հազար Ֆրանք, թերթին համար: Տարաբախտաբար հնարաւորութիւն չունէինք աւելի մեծ գումար մը զրկելու. այսքանն իսկ «Ազատամարտ»էն փոխ առած ենք: Չէքը ուղարկուած է Գարոյի անունով, ենթադրելով որ միւս ընկերները կրնան բացակայ ըլլալ:

Այս առթիւ պիտի խնդրէինք փութացնել 1913-ի հա- շիւները, մանաւանդ որ Տրդ. Ընդհ. Ժողովը կը գումար- ւի յառաջիկայ Յուլիսին, եւ բոլոր հաշիւները պէտք է փակուած ըլլան մինչեւ Ապրիլ 30: Ասկէ առաջ Pro-Armenia-ի հաշիւներն ալ յիշեցուցած էինք, սակայն պա- տասխան չստացանք: Բարի եղէք խմբագրութեան բա- ցատրելու այս պարագաները:

Չէք մոռնար անշուշտ առանձին պատեհութեամբ ուղարկելու ձեր հարցերը՝ Տրդ. Ընդհ. Ժողովի օրակար- գին համար, որուն պատրաստութեան ձեռնարկած ենք արդէն:

Pro Armenia-ի վերջին համարով Վ. Պերարը կարգ մը ակնարկներ ըրած էր, որոնք տեղին չեն, մանաւանդ մեր օրկանին համար:

Պիթիսէն ու Կարինէն ծանրակշիռ լուրեր կը հաս- նին ատենէ մը ի վեր: Այսօր իսկ ընդարձակ մանրամաս- նութիւններ ստացանք Բաղէշէն, ուր վտանգաւոր հա- մեմատութիւններ առած է խնդիրը: Շարժման պարա- գլուխն է մոլլա կամ Խալիֆա Սելիմը, որ եղած է պատ- մական շէյխ Ջէլալէդդինի եւ անոր եղբոր կրօնապետը: Կառավարութիւնը զօրք ուղարկած է Սելիմը ձերբակա- լելու եւ քաղաք բերելու համար, բայց իր հետեւորդ խուժանը ձեռքէն խլած է զայն, զինաթափ քաղաք փախցնելով զօրքը: Խալիֆան այժմ քաջալերուած, կը պատրաստուի գործադրել վաղեմի ծրագիր մը, — պա- շարել ու գրաւել Պիթիսը: Կառավարութիւնը անձար մնալով՝ պատուիրակութիւն ղրկած է Խալիֆան համո- զելու եւ հաշտուելու, բայց անօգուտ: Առ այժմ վտան- գը անհետացած կը թուի, բայց Սելիմը կը յայտնէ որ քրտական շարժումը պիտի սկսի Մայիսի սկիզբը, կամ նոյնիսկ Ապրիլ 15ին: Ուշագրաւ է որ Խալիֆան շարու- նակ հայերուն կը ստիպէ յայտնել թէ ո՞ր կողմը պիտի բռնեն... Հայերը կառավարութեան դիմելով գէնք պա-

հանջած են, բայց յուսախաբ ետ դարձած են: Գիւղական պահակներու համար ալ բոլոր դիմումները անհետե- ւանք մնացած են: Միւս կողմէ խստիւ կը հաւաքուին նոյնիսկ պարզ գէնքերը, հայերը խուզարկութեան կ'են- թարկուին, ոստիկանները սանձարձակ կը գործեն. հա- մախմբումներ, գիշերային երթեւեկներ խստիւ արգել- ւած են. ամբողջ մէկ շաբաթ խանութները փակ մնա- ցած են. հաւանաբար պատերազմական դրութիւն հրա- տարակուի: Այստեղ կառ[ավարութիւն]ը արգելած է թերթերու մէջ լուրեր հրատարակել Պիթիսի մասին:

Իսկ Կարինի մէջ արտասովոր բազմութեամբ զօրք կը համախմբեն: Կառավարութիւնը՝ զանազան պատըր- ւակներով խուզարկութիւններ կը կատարէ, որոնք հա- ւանաբար պիտի տարածուին մինչեւ Մուշ եւ Պիթիս: Վախ կայ որ զօրքը Պիթիս համախմբուի եւ քրտերու փոխարէն հայերը զինաթափ ըլլան:

Աւելի քան մէկ ամիսէ ի վեր մեպուսական խնդիրն է որ կը զբաղեցնէ մեզ, անախորժ իրադարձութիւններու տեղի տալով: Ամէն բան լաւ գնաց մինչեւ այն օրը, երբ պատրիարքը հարկ դատեց վերսկսիլ բանակցութիւննե- րը: Համերաշխականը որոշեց ձեռնպահ մնալ եւ պաշտօ- նապէս թեկնածու չներկայացնել, առանց սակայն պատրիարքին դէմ դժուարութիւն յարուցանելու: Մեր մարմիններէն Տրապիզոնը դէմ էր որեւէ ձեւի մասնակ- ցութեան, ցորչափ բարենորոգումները չեն գործադրու- ւած. Սըվազը անբաւական կը գտնէր թիւր. Խարբերդ 20- էն պակաս չէր հաւաներ. Պոլիսը հակառակ էր. Մուշը՝ ձեռնպահ. Վանը՝ հաստատապէս մասնակցելու կողմն էր եւ կուսակցական թեկնածուներով. Կարինը՝ միշտ համաձայն ըլլալով հանդերձ, կը յայտնէր թէ երբեք չի հանդուրժեր որ ազգային մարմիններով ընտրուած կու- սակց. թեկնածուները մերժուին: Այս տեսակէտը վերջ ի վերջոյ ընդունուեցաւ, եւ վէճը կը շարունակուի աթոռ- ներու բաշխումին մասին... Այս անախորժ վէճի մանրա- մասները կ'իմանաք թերթէն: Հակահոսանքը վերսկսած է մեզի դէմ, եւ պատրիարքն ալ անմասն չէ սարքուած դա- ւէն. բայց երեւի երկար չի տեւեր այս խլրտումը:

Ընդհ. քննիչներու մասին կարգ մը տեղեկութիւններ կը հաղորդենք յաջորդով: Տէրութիւնները առարկած ըլլալով գնդ[ապետ] Հանրի<sup>39</sup> մասին, այժմ թեկնածու կը մնան միայն մէկ պելճիքացի եւ երկու հոլանտացի:

38.- Գարիբը Ահարոնեան Աւետիսն է, Միքայէլը՝ Վարանդեան: 39.- Պելճիքացի գնդապետ Հանրի, սկզբնապէս Ընդհ. քննիչի պաշտօնին համար նկատի առնուած թեկնածուներէն մէկը, որ մեր- ժումի արժանացաւ թուրքերէն:

Ընկերական բարեւանքով ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՈ





Փաստ. 103-17

19.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԷՆ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

19-III-1914, Կարիճ

Ընկերներ!

Ստացանք Մարտ 6 թուակիր ձեր նամակը. յուսով ենք դուք ալ ստացած կ'ըլլաք Մարտ 8 եւ 14 թուակիր մեր նամակները:

Հակառակ այն բանին որ ընտրական խնդրին առթիւ դուք մեր եւ ձեր միջեւ եղած թիւրիմացութիւնը պարզուած կը համարէք, մենք կը կարծենք սակայն որ այդ դժբախտ խնդրի մասին մեր տեսակէտը պէտք է եղած չափով տակաւին չէ պարզուած ձեզ համար:

Սկիզբէն ի վեր մենք կանգնած ենք եղեր կուսակցական ձեռնպահութեան վրայ, չարգիլելով սակայն կուսակցական թեկնածուներու ընտրելիութիւնը, եթէ ազգ. մարմիններու կողմէ ներկայացուին անոնք. այս է պատճառը [որ] մենք առաջին անգամ չէնք հեռագրեր ենք կուսակցութեան ձեռնպահութեան մասին, աւելցընելով նաեւ «ոչ մէկ թեկնածու կրնանք առաջարկել»: Շատ պարզ է չէ՞. քանի որ կուսակցութիւնը ձեռնպահ է, ուրեմն իր կողմէ թեկնածու չէր կրնար ներկայացնել: Չգիտենք ինչ հակասութիւն կայ այստեղ, որ դուք ձեր վերջին նամակով որպէս այդպիսին կ'ուզէք ցոյց տալ: Պիտի խնդրենք որ եթէ կայ նման հեռագիր մը կամ նամակ մը, որ մենք հակասած ըլլանք մեզ ամբողջութեամբ, գրէք մեզ. շատ կարեւոր է այս: Ձեր սխալը սկիզբէն այն եղաւ որ՝ ձեռնպահութեան որոշումը քանդելէ առաջ, դուք չուզեցիք մարմիններու կարծիքներն առնել ձեզ հետ, եւ աւելի խոշոր սխալը այն՝ որ առանց մարմիններու կարծիքին բանակցութեան մտաք թիւի մասին, երբ տակաւին յայտնի չէր թէ մարմինները պիտի մասնակցէին թէ ոչ: Ձեր կողմէ սխալ էր եւ այն պարագան, որ փոխանակ բերրոյական շրջանակներու կարծիքներն առնելու, դուք առաք Կ. Կ. [ներու] կարծիքները առանձին առանձին: Մենք կը կարծենք որ ձեզ համար աւելի արժէքաւոր պիտի ըլլար բերրոյական շրջանակներու հաւաքական կարծիքները քան թէ մարմիններուն առանձին առանձին. դուք այս չըրիք եւ հաւասար կշիռ տուիք օր[ինակ]՝ Տրապիզոնին ու Վանին եւ այսպէս միւսները. չպէտք էր մոռանայիք որ Տրապիզոնը արդէն չէր ալ կրնար ոեւէ բան յաջողցընել եթէ որոշէր մասնակցիլ ընտրութեանց. ընտրութեան պարագային իսկ, անոր ձայնը պիտի խեղդուէր միւս տարրերու ձայնին մէջ, եւ հետեւապէս ձեռնպահ մնալով կամ ոչ, ան ոեւէ բան չունէր կորսնցնելիք: Այդպէս չէ սակայն Վանը, Սուշը եւ ուրիշները: Ձեր տուած վերջին

հեռագրին վրայ ,որով կը յայտնէք թէ պատրիարքը չ'ուզեր փոփոխել իր ներկայացուցած ցանկը, այստեղի ազգ. մարմինները նորէն հեռագրեցին իրենց բողոքը: Ի նկատի ունեցէք եւ նորէն յայտնեցէք պատրիարքին ալ, որ եթէ չփոխէ իր դիրքը, մեր շրջանները՝ գոնէ Կարին, Վան, Սուշ ու Պիթլիս ամբողջութեամբ կը մնան ձեռնպահ: Պատրիարքը պէտք է գիտնայ այս:

Եթէ մէկդի թողնենք քրտական շարժումը, որու մասին ձեզ գրեր ենք արդէն, շրջաններու մէջ արտակարգ խնդիրներ չկան: Իմացաք անշուշտ Քէօփրիքէոյ գիւղի խուզարկութիւններն ու խոշտանգումները: Կը կարծենք թէ կառ[ավարութիւն]ը պատրուակներ կը փրնտուէ խուզարկութիւններու համար. Դերջանի մէջ ալ խուզարկուած են հայ գիւղեր: Ընդհանրապէս տրամադրութիւնները դէպի մեզ եւ դէպի հայերը շատ լարուած են. ոեւէ կապ, ոեւէ յարաբերութիւն չունինք ոչ իթթ[իհատ]ի եւ ոչ ալ պաշտօնական շրջաններու հետ: Իթթ-ը իր բերան «Ալ Պայրազ»ով օր օրի աւելի ու աւելի կը թունաւորէ խուժանի մտքերը. եւ կառ-ը կատարելապէս անտարբեր է: Մեզ բաւական կասկած կը ներշնչէ նաեւ զինուորական առաքումները դէպի հայկ. շրջանները: Չգիտենք ինչո՞ւ նման խնդիրներու համար դուք ոչինչ չէք գրեր մեզ:

Ձեր վերջին նամակի մէջ գրած էք նաեւ «մեր հարեւաններու հետ<sup>40</sup> լաւ յարաբերութիւններ ունենալու մասին երկու խօսք լինել չի կարող». բան չհասկցանք այս պարբերութենէն. գրեցէք ոեւէ յարաբերութիւն ունի՞ք. ի՞նչ հողի վրայ. ինչպէ՞ս է իրենց տրամադրութիւնները: Բարենորոգումներու մասին պիտի խընդրենք որ նոյնպէս գրէք մեզ պաշտօնական շրջանակներու մէջ տիրող տրամադրութիւններու մասին:

Պիտի խնդրենք նաեւ, որ եթէ ընտրական խնդրի մասին զանազան մարմիններու լուսաբանութիւններ տաք, այդ լուսաբանութիւնները հիմնուած չըլլան դարձեալ թիւրիմացութիւններու վրայ: Չմոռնաք մեզ զրկել այն հեռագրին ու նամակը, որու մէջ մենք ոեւէ կերպով հակասած ենք մեզ. կը սպասենք:

Ընկերական բարեկեցութիւն  
ԱՐՏԱԻԱԶԴ<sup>6</sup>

Յ.Գ.- Ի նկատի ունեցէք որ այստեղ իթթ-ը չ'ուզեր Վարդգէսին ընտրել. մեզմէ պահանջեցին որ վերցնենք անոր թեկնածութիւնը. մենք բողոքեցինք. պիտի խնդրենք որ այս մասին եւս յայտնէք իրենց (Իթթ-ին) առաջնորդարանի ցանկէն զատ ուրիշ թեկնածուներու խնդիր չհանել տալու համար:

40.- Իմն թուրքերու, մասնատրաքար Իթթիխատի:





Փաստ. 103-18

20.– ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԷՆ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

30-III-1914, Կարիճ

Ընկերներ!

Կը հաստատենք Մարտ 19 թուակիր մեր նամակը ստացանք ձեր վերջին նամակը Մարտ 21 թուակիր:

Ընտրական գործողութիւնները արդէն իսկ սկսած են. վախ կայ որ թուրք քուէարկողները մերժեն ընտրել նոյնիսկ պատրիարքի ներկայացուցածները: Սպերի մէջ արդէն վերջացած է. ընտրուած են Մատթեան եւ Մեծատուրեան հակառակ որ առաջին ընտրութիւնը բեկանուեցաւ: Պատրիարքի միջամտութեան արդիւնքն է գոր կը վայելենք այժմ:

Կարգացինք Վերակ[ագմեալ] Հնչ. կուս[ակցութեան] յայտարարած գրքոյկը. կը կարդանք նաեւ թերթերու մէջ գրուածները. կը սպասենք ընտրական գաւեշտի ընդհանուր վերջաւորութեանը, ըստ այնմ մեր կողմէ եւս մեր խօսքն ըսելու համար. բայց նախքան այդ, այն ընկերները, որոնք սկիզբէն իսկ նետուեցան ասպարէզ եւ փորձեցին ամբողջ կուսակցութեան պարտադրել նորանոր որոշումներ, միթէ՞ պարտական չեն զգար իրենց վրայ առնելու պատասխանատուութիւնը իրենց ինքնակամ գործունէութեան եւ չթողնելու, որ պատասխանատուութիւնը ընդհանրանայ ամբողջ կուսակցութեան վրայ. մենք կը կարծենք թէ ընկերները իրենք իրենց կողմէ պիտի ընեն այդ քայլը:

Քրտ[ական] շարժ[ման] մասին Բաղէշէն մեր ստացած տեղեկութիւնները կ'արտատպենք ամբողջութեամբ: Մոլլա Սելիմի պարտութիւնը բաւական լքում է առաջ բերել միւս քրտական շրջանակներուն մէջ. եւ այն շրջանակները, որոնք մասնակից կը համարուէին շարժման, այժմ սկսեր են արդէն երես դարձնել: Շարժումը, ինչպէս սպասելի էր, եղեր է անկազմակերպ ու անմտածուած. ասով պէտք է բացատրել այն հանգամանքը, որ սպասուած շրջաններէն քիւրտեր չեն կրցեր հասնիլ օգնութեան: Ինչ ալ ըլլայ սակայն վերջին պարտութիւնը, անշուշտ չի կրնար վերջնական պարտութիւն համարուիլ քիւրտ աւատապետութեան, եւ շարժումը վաղ թէ ուշ նորէն կը բռնկի, եթէ շարունակուի կառավարիչ շրջանակներու նոյն անհեռատես քաղաքականութիւնը: Եթէ կրնաք համոզել զիրենք, համոզեցէք որ օգտուելով առիթէն սահմանափակ են աւատապետներու ոյժն ու իրաւունքները եւ փորձեն իրենց կողմն առնել բուն ժողովուրդը: Այստեղ Իթի-ի ընդհա-

նուր ներկայացուցչին հետ մեր ունեցած տեսակցութեան ժամանակ յայտնեցինք իրենց, որ գրաւեն շարժման մասնակից աւատապետներու հողերը եւ բաշխեն զայն նոյն շրջանի գիւղացիներուն: Մենք կը կարծենք որ այս ուղղութեամբ ձեռք կը բերուի քանի մը տեսակ օգուտներ: Արդեօք չէ՞ք կրնար նոյն ուղղութեամբ աշխատիլ կեդր. կառավ[արութեան] քով. Գրեցէք առհասարակ թէ ոեւէ յարաբերութիւն ունիք հարեւաններուն հետ. այստեղ դժբախտաբար յարաբերութիւնները խզուած են այն աստիճան, որ մեր տները կը լրտեսուին խստօրէն եւ խօսք կայ որ պիտի խուզարկեն ալ: «Յառաջ»ի փակելը նոյն պատճառներով պէտք է բացատրելի դէպ, պիտի խնդրենք որ անհրաժեշտ միջոցները ձեռք առնէք «Յառաջ»ի վերհրատարակման իրաւունքն ստանալու: Գրեցէք մեզ ալ թէ ի՞նչ միջոցներու դիմենք:

Մեր կարծիքն է որ քրտ. շար[ժման] վերաբերմամբ ընդհանրապէս հայ ժողովուրդը, մասնաւորապէս մեր մարմինները պէտք է բռնեն առ այժմ կատարելապէս չէզոք դիրք. այդպէս ալ գրած ենք մեր մարմիններուն: Ստացուած 150 հրացանը դժբախտաբար շնորհիւ առաջնորդին անցած են այնպիսիներու ձեռքը, որոնք ունէ օգուտ չեն կրնար տալ եթէ ոեւէ բան պատահի: Առ հասարակ Սուրէն վրդ. վատ դեր կը խաղայ: Չէ՞ք կրնար համոզել պատրիարքը որ հեռացնէ զայն:

Ընդհ. [ժողովին] համար մեր հարցերը կը պատրաստենք ու կը դրկենք. մարմիններուն գրեր ենք արդէն իրենց հարցերը պահանջելով: Մի մոռանաք, որ ժողովի օրակարգը ու հրաւէրը պիտի դրկուի երեք բիւրոներու կողմէ. Արեւելեանն ալ մոռանալու չէ. մենք գրեցինք իրենց ալ:

Ընդհ. քննիչներու ընտրութեան կամ անոնց վերաբերեալ խնդիրներու մասին չմոռնաք օր օրին տեղեկութիւններ տալ մեզ, իսկ կարեւոր լուրերը հեռագրեցէք:

Գաւառներու մէջ առանձին կարեւոր դէպքեր չկան: Քրտ. շարժման օրերուն Մուշը բաւական երկիւղալի էր դարձած. կասկած կար, որ շարժումը այս շրջաններուն մէջ ալ պիտի տարածուէր, բայց Բաղէշի դէպքերուն ծանօթ հետեւանքը կասեցուցած է զիրենք առայժմ:

Ընկերական բարեւաններով ԱՐՏԱԻԱՁԴ<sup>6</sup>





## ԳԼՈՒԽ IV

### ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

(ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՏԵՂԵԿԱԳԻՐ)

116բ-1 համարը կրող փաստաթուղթը 32 էջոց տեսք է. կը բովանդակէ Հ.Յ.Դ. Արեւմտեան բիրոյի 1913 թ.ի վերջին երեք ամիսներու ժողովական ատենագրութիւնները, շատ համառօտ եւ տղագրութեան ձեւով արձանագրուած. ձեռագիրներէն դատելով՝ անոնք կը պատկանին Ս. Չաւարեանի, Վանայ Սարգիսի, Վահան Փափագեանի եւ այլոց գրիչներուն: Համառօտագրութիւնները ջանացած ենք ամբողջացնել ուղղահայեաց փակագծերու [ ] միջոցաւ:

Յայտնենք որ Դաշնակցութեան Եօթներորդ Ընդհ. ժողովը գումարուած էր 1913 թ.ի օգոստոսին եւ Արեւմտեան բիրոյի անդամ ընտրուած էին Ս. Չաւարեան, Արմէն Գաբօ (Փաստրմաճեան), Վանայ Սարգիս (Օտապաշեան Պօղոս, Շամիլ) Հրաչ (Թիրեաքեան Հայկ), Տոքթ. Կ. Փաշայեան (Թափառիկ) եւ Միք. Վարանդեան: Վերջինս կը մնար ժընտի իբրեւ «Դրօշակ» պաշտօնաթերթի խմբագիր. Ս. Չաւարեան պիտի մահանար նոյն տարուան Հոկտ. 14ին. միւսներէն ոմանք աւելի ուշ պիտի հասնէին նստավայր Պոլիս. այնպէս որ ընտրուած Բիրոն պիտի չկրնար բնաւ լրի կազմով նիստ գումարել: Մինչդեռ օրուան հարցերը հրատապ բնոյթ ունէին եւ անհրաժեշտ էր հաւաքական խորհրդակցութիւն յարմարագոյն լուծումներ գտնելու համար անոնց: Միջազգային քննարկման առարկայ էր հայկական նահանգներու բարենորոգումներու խնդիրը, մօտալուտ էին Թուրքիոյ խորհրդարանական ընտրութիւնները, կար՝ կառավարութեան հետ կապ պահպանելու կնճռոտ հարցը, մանաւանդ որ 1912 թ.ի Մայիսէն ի վեր խզուած կը մնային Դաշնակցութիւն – Իթթիհատ յարաբերութիւնները:

Վերոյիշեալ պարագաներն էին, հաւանաբար, որ մղած էին Արեւմտեան բիրոն Խառն նիստեր գումարելու, հրաւիրելով Պոլիս գտնուող շարք մը հանգամանաւոր ընկերներ ինչպէս՝ Ակնունին, Գարեգին Խաժակը, Յար. Շահրիկեանը, Մելքոն Կիրճեանը, Ս. Օհանջանեանը, բժ. Յ. Չալրեանը եւ ուրիշներ: Տարբեր հարց որ կարգ մը պարագաներու, ինչպէս խորհրդարանական ընտրութիւնները, Երկրի կոմիտէները խնդրոյ առարկայ պիտի դարձնէին իրենց որակումով «Պոլսի մարմնէն» քիսած հրահանգները:

\*

\* \*

Բիրոյական արձանագրութեանց այս գլուխի նիւթերուն կը կցենք Ամերիկայի դաշնակցական կազմին ուղղուած Արեւմտեան բիրոյի երկու նամակները, որոնք ըստ էութեան տեղեկագրական բնոյթ ունին եւ շահեկան են այն իմաստով, որ կ'ուրուագծեն կազմակերպութեան ընդհանուր վիճակը 1913 տարուան աւարտին՝ Երկրի, Կովկասի եւ Պարսկաստանի մէջ, այլեւ կու տան հայկական հարցի եւ Թուրքիոյ երեսփոխանական ընտրութեանց շուրջ ընթացող բանակցութեանց պատկերը: Բացի այդ, Բիրոն չէր մոռնար շեշտելու հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան կարեւորութիւնը: Երկիրը ամէն ճիգ ի գործ կը դնէր արդէն այդ գործը կազմակերպելու համար. կը մնար որ արտասահմանեան մարմինները, նիւթական միջոցներու հայթայթումով, սատար կանգնէին անոր:







Փաստ. 116բ-1

1.- ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ (ԲԻՒՐՈՅԱԿԱՆ) 1913

20-IX-1913

28-IX

Թափ[առիկ] Ֆարհատ, Անտոն<sup>1</sup>:

Թափ[առիկ], Ֆարհատ, Անտոն:

Նամակագրութիւնը կանոնաւոր պահպանելու եւ համապատասխան շրջաններու գործունէութեան հետամուտ լինելու համար (անշուշտ կարեւոր հարցերը ժողովի համաձայնութեամբ ու որոշմամբ) շրջանները բաժնել հետեւեալ ձեւով.

1.- Բանակցել հայ կուսակցութիւնների հետ պարլամենտական ընտրութիւնների առթիւ Ընդհանուր ժողովի որոշումները անցկացնել տալու համար:

Մեծ Հայք, Կովկաս, Դրօշակ եւ արտ[աքին] գործ – Անտոն

2.- Վերոյիշեալ նպատակով յանուն կուսակցութեան դիմել Ազգ. Կեդր. վարչութեան. դիմողները կը լինեն Ֆարհատ եւ Անտոն:

Փոքր Հայք, Տրապիզոն, Պարսկաստան – Թափ[առիկ]

Կիլիկիա, արտասահման – Ֆարհատ

30-IX

Թափ[առիկ], Ֆարհատ, Անտոն:

24-IX

Թափ[առիկ], Ֆարհատ, Անտոն:

1.- Նկատելով որ Արեւմ. բիւրոյի կազմը լրիւ չէ եւ ընտրուած երեք ընկերները դեռ շատ ուշ են գալու կամ գուցէ բնաւ չեն գալու, որոշուեց Հայաստանի բիւրոյի անդամ Կոմսին<sup>4</sup> հրաւիրել մեր նիստերին, այս կարգադրութիւնը հաղորդելով Հայաստանի բիւրոյին:

1. Ընդհանուր ժողովի Որոշումները ամբողջովին գրքոյկով տպագրել:

2. Ուղարկել Դրօշակիին քաղուածքներ ընել:

2.- Որոշուեց Ազգ. երեսփոխանները հրաւիրել՝ իրենց հաղորդելու համար Ընդհանուր ժողովի որոշումները իրենց մասին եւ տալ ուղղութիւն իրենց գործունէութեան:

25-IX

Թափ[առիկ], Անտոն:

3.- Օսմ. պարլամենտական ընտրական օրէնքներու բարեփոխումը պահանջել համերաշխ պատրիարքարանի եւ հայ կուսակցութեանց, համեմատական ներկայացուցչական խնդիրը ընդունիլ տալու կառավարութեան:

Բժիշկին<sup>2</sup> գրել Բերլին՝ մեկնիլ Պետ[երբուրգ] եւ աշխատիլ այնտեղ –

4.- Պարտքերի եւ պահանջների ցանկը կազմելով դիմումները կատարել ում հարկն է:

1.- Խնդրել Քրմ[ոյեան]ից սրբագրել պահանջները:

5.- Օտար գումարները ընթացիկ հաշուից գա-

2.- Ժիր[այր]ից<sup>3</sup> ուղել Աւետեանի ցանկը:

3.- Հաշուեքներին պատրաստել բոլոր թղթերը:

4.- Հաշուեքները հրաւիրել նիստի եկող շաբաթ ժամը 5:

1.- Յաջորդաբար Տոքթ. Փաշայեան Կարապետ (Թափառիկ), Թիրեաքեան Հայկ (Ֆարհատ) եւ Ջաւարեան Սիմոն (Անտոն):  
2.- Բժիշկ – Տոքթ. Ջաւրեան Յակոբ:  
3.- Ժիրայր – Ջօրեան Բարթոլոմէ:  
4.- Կոմս – Փափագեան Վահան:





տելով առանձին պահել պանքայի մէջ:

6.- Ազատութիւն մատենադարանի ինվանթէրը<sup>5</sup> կազմել (ժ[իրայր]ը համամիտ):

7.- Որոշուեց Սասունին[?] վեր. բանտարկեալի դատական ծախքերի հաշուոյն ամսական մէկ ոսկի վճարելու պայմանաւ մինչեւ հինգ ոսկի տրամադրել:

8.- Ընկերներին հրաւիրել իրան ժողովում խորհրդակցելու հայ կուսակցութեանց հետ համերաշխութեան, իթիհատի հետ յարաբերութեան, դրամական հարցերի վրայ: Իբրեւ Ա. խորհրդակցութիւն՝ Հոկտեմբերի 3-ին Հինգշաբթի օր, ժամը 4-ին:

Կենտր. Կ[ոմիտէի] շրջաբերականի խնդիրը:

անձկութիւն. բ) Առաջարկներ եւ դիտողութիւններ.—

Վարչական մաս.— (Ասլան) Մինչեւ այսօր système մը չգտանք. առնելիք, տալիք չգիտենք.— Կտրուած թերթեր կ'երթան. contrôle<sup>8</sup> չկայ: Երկու ձեւ գտնել. մէկը՝ առնելիքի խնդիրներ, միւսը՝ առաքման կանոնաւորութիւն:

Խմբագրական մաս.— Գերմաներէն եւ անգլ[երէն] թարգմանութիւններ աւելորդ են: Վճարուած աշխատակցութիւնները — Կարելի<sup>9</sup> է զեղչել: Կազմը կրնա՞յ փոխուիլ: Լրաբերութեան ճիւղը.— Sirouni եւ Շահնուր: Տողավարձի դրութիւնն է ընդունուած: Թուրքերէնի բաժինը. Ասլան համաձայն է որ մնայ, իսկ եթէ պիտի ջնջուի՝ նախ հարցընել կազմակերպութեան մարմիններուն:

1-X [Բնագրին ծրդ էջը ճերմակ է]<sup>9</sup>:

Թափ[առիկ], Ֆարհ[ատ], Անտ[ոն], Ասլան<sup>6</sup>, Կոմս:

1913 Հոկտ. 29

1.- Երէկուայ որոշման համաձայն ընկ. Ակնու-նու գործունէութեան մասին տեղեկութիւն առնելու համար հրաւիրել նրան ամսիս 3-ին, ժամը 4-ին:

Վերեւի ծրդ որոշումը փոփոխուեց այն մտքով, որ տեղեկութիւն առնելու համար առանձին առանձին հրաւիրել Բիւրոյի նիստերուն:

2.- ա) Օսմ. պարլամենտի հայ պատգամաւորներու համեմատական թիւը 20 պահանջել:

բ) 20 պատգամաւորներու 2/3-ը Հայաստանի 6 նահանգներու եւ 1/3-ը մնացած հայ շրջաններու վրայ բաժանել:

գ) Հայերը առանձինն կ'ընտրեն իրենց միւնիթէ-խիպի սանիները<sup>7</sup>:

դ) Հայ միւնիթէխիպի սանիները առանձինն կ'ընտրեն հայ մէպուսները:

Խառն ժողով.— ներկաներ՝ Թափ[առիկ], Ֆարհատ, Խաչ[ատուր], Մարգ[պետ], Կոմս, Ասլան, Համագ[ասպ], [Քարեգին] Խաժ[ակ], Շահ[րիկեան]:

Օրակարգ

ա- Պարլամենտական ընտրութիւններ եւ մեր դիրքը:

բ- Բիւրոյի վիճակը — աշխատանք վարելու համար — Շրջաբերական մարմիններուն — Համագ[ասպ]ի պարագան<sup>10</sup>:

1913 Հոկտ. 8/21

Ներկաներ՝ Անտոն, Ֆարհատ, Թափառիկ, Ասլան:

Ազատամարտի պարագան.— ա) Վարչ[ութեան] եւ խմբ[ագրութեան] կռիւ, ազդ. եւայլն: Պիւտճէի

5.- Գոյքացուցակը:  
6.- Ասլան — Չարդարեան Ռուբէն, «Ազատամարտ»ի խմբագրապետ:  
7.- Օսմ. խորհրդարանի ընտրութեանց կարգը երկաստիճան էր. առաջին քուէարկութեամբ կ'ընտրուէին «միւնիթիսիպի սանի»-ները, որոնք իրենց կարգին պէտք է ընտրէին խորհրդարանի պատգամատուր երեսփոխանը (մեպուս):  
8.- Ֆրասերէն՝ հակակշիռ:  
9.- Տետրակին այս էջը (8) սպիտակ է, յայտնաբար նիստ չէ գումարուած, որովհետեւ միջոցին, Հոկտ. 14-ին յանկարծամահ եղած էր Չարարեան Սիմոն:  
10.- Խօսքը Սրուանձտեանց Համագասպի մասին է, որ Սիպե-րիոյ իր քաղաքավայրէն փախուտ տալով անցած էր նախ Երու-պա, ապա եկած էր Պոլիս:



Որոշումներ

1913, 5-XI

1.- Համազասպի պարագան.— Գրել Վան եւ Կարին, պատասխան [սպասել] Կ. Կ.էն.— առժամապէս գբաղեցնելու:

2.- Պարլամենտական ընտրութիւնները — Տեղեկութիւններ՝ Կոմսի (վարչութիւն) եւ Ֆարհատի կողմէ, մինչեւ հիմա Պատրիարքարանի հետ կատարուած բանակցութեանց մասին:

ա- Զիջման հարց

բ- Շրջաբերական մարմիններուն (ինչպէս կը հասկնանք ազգ. ընտրութիւնը)

գ- Կուսակցութեանց թողնել ընտրութիւնները

դ- Մնայուն մարմին ընտրական գործի համար

Բիւրոյի կազմի եւ դրսի ընկերների խառը ժողով: Կոմս, Ֆարհատ, Թափ[առիկ], Շամիլ ու Ակնունի, Վարդգէս, Խաթակ, Մարգալետ, Խաչատուրեան<sup>13</sup>:

Օրակարգեր

ա- Ընտրութիւն Օսմ. երեսփոխանական

բ- Ընդհանուր ժողովի խնդիր

գ- Պոլսոյ կուսակցութիւնների Համերաշխ[ական] ժողովի զեկուցում.

դ- Կառավարութեան ներկայացուցիչների հետ յարաբերութիւն.

ե- Զեկուցում հայոց հարցի մասին:

1913, 3-XI

Որոշում՝

Թափ[առիկ], Ֆարհատ, Կոմս, Շամիլ<sup>11</sup>:

ա- Նախորդ ժողովում որոշուել էր ունէլ զիջում չանել հայկ. խնդրի վերաբերեալ, նկատելով, որ այդ զիջումները մեզ կը տանեն մինչեւ այնպիսի նուազագոյնի, որով ինքնրատ ինքեան ռեֆորմների խնդիրը վիժման կը հասնի:

Ակնունին հրաւիրուած է զեկուցում տալու իր առաքելութեան մասին<sup>12</sup>:

բ- Օսմ. ընտրութիւնների մէջ, (բոյկոտի այնպիսի շողութեան դէպքում) քանակը եւ վայրը որոշել համաձայնութեամբ բոլոր միւս տարրերի հետ:

1.- Լսուեց իր արածների մասին:

գ- Անգամ մը տեսնուել կառավարութեան ներկայացուցիչներուն հետ, առանց տեղի տալու, որ երկրորդ տեսակցութիւն տեղի ունենայ: Կ'երթան՝ Շահրիկ[եան]—Ակնունի: Ակնունիի, իբրեւ ռուսահայ[ատակ]ի, երթալուն դէմ բողոքեց Խաթակ:

ա) Նկատելով, որ Ազգ. Ինքն[ապաշտպանութեան] մարմինը չպիտի կարողանայ իր ստանձնած գործը յաջողութեամբ գլուխ հանել, եւ բացի այդ ներքին շատ անխուսափելի խռովութիւններ պիտ տեղի ունենան, յաջողում է համոզել եւ գործը ենթարկել լիկւրդացիայի:

դ- Կուսակցութիւններու Համերաշխ[ական] ժողովներու մէջ աշխատել ընդհ. մի քանի հարցերու շուրջ որոշումներ տալ: Շուտ վերջացնել, որպէսզի հնարաւորութիւն ունենանք գբաղուելու մեր ներքին կազմակերպ[ական] խնդիրներով:

բ) Եզիպտոսի զանազան կուսակցութիւնների եւ խմբակցութիւնների յարաբերութիւնը տարիներից ի վեր լարուած լինելով, չափազանց անհաճոյ միջնորդութեամբ լինելով, ձեռնարկում է համերաշխական ժողովների, որով եւ յաջողում է լարուած կրքերը մեղմացնել եւ բնականոն յարաբերութիւններ ստեղծել զանազան, կուսակցութիւններից եւ խաւերից, ստեղծել մի բարձր մարմին, որի նպատակը պիտի լինի դրամ հանգանակել եւ նպաստ[ել] մեզ ինքնապ[աշտպանութեան] գործին: Այդ մարմնի դերը լինելու է զուտ դրամական խնդիրը: Իրենց նպատակները պիտի իրագործուեն Կիլիկի[ա]յում կազմուած գործադիր մարմնի ձեռքով:

11.- Շամիլ – կուս. մէկ ծածկանունն էր Բարսեղեան Սարգիսի (Վանայ Սարգիս). իսկական անունը Օտապաշեան Պօղոս, նորմալի անդամ Արեւմտեան բիւրոյին:

12.- Ակնունին նոր վերադարձած դէպի Կիլիկիա եւ Եզիպտոս կատարած իր շրջագայութեան:

13.- Առաջին հինգը ծանօթ են արդէն: Վարդգէսը՝ Օսմ. խորհրդարանի անդամ Մերենկիլեան Յովհաննէսն է, ապա Գարեգին Խաթակ, Ղազարոսեան Ղազարոս (Մարգալետ) եւ փրոֆ. Աստուածատուր Խաչատուրեան, ծանօթ պատմաբան:



1913, 8-XI

1913, 10-XI

**Հրանտ<sup>14</sup>, Վանիկ<sup>15</sup>, Ֆարհատ,  
Թափ[առիկ], Շամիլ:**

1.- Գործավարութիւնը կանոնաւորելու համար, որոշուեց Հրանտը լինի ազատ ընկեր, եւ վարէ ընթացիկ գործեր. Հրանտին պէտք է օգնէ Վանիկը, իսկ առաջինի Ազատամարտ գնալու դէպքում, գործավարութիւնը կը ստանձնէ Վանիկը, մինչեւ իր երկիր գնալը:

2.- Բիւրոյի կազմը լրացնելու համար, Արեւելեան բիւրոյից, ինչպէս եւ Արեւմտեանի համաձայնութեամբ, ընկ. Խաչատուրը<sup>16</sup> հրաւիրուեց մասնակցելու կազմի ժողովներին, ձայնի իրաւունքով, իբրեւ մարմնի անդամ:

3.- Նկատելով լայն ժողովների անգործնական լինելը, ինչպէս եւ շատ անգամ գործերին վնասելը, որոշուեց վերջ տալ Խառը ժողովների գոյութեան. մարմինը իրեն վերապահեց հարկաւոր պարագաներին ցանկացած ընկերներին ժողովի հրաւիրել, եւ նրանց կարծիքն էլ առնել կարեւոր, ընդհանուր բնոյթ կրող խնդիրների վերաբերեալ:

4.- Կենտ. կոմիտէի եւ Բիւրոյի յարաբերութիւնները կանոնաւորելու, ինչպէս եւ Կ. կոմիտէին վարչապէս աջակցելու համար, որպէսզի վերջինս իր կազմակերպական աշխատանքները կարողանայ աւելի դիւրութեամբ առաջ տանել, որոշուեց Բիւրոյի անդամները պարբերաբար ներկայ գտնուին Կեդրոնական կոմիտէի ժողովներին<sup>17</sup>:

5.- Հաշուապահութիւնը կանոնաւորելու համար Թափ[առիկը] նշանակուեց հաշուապահ, իսկ Ֆարհատը գանձապահ<sup>1</sup>: Առնուազը Յ ամիսը մէկ անգամ բոլոր հաշիւները պիտի տեսնուի եւ փակուի: Յառաջիկային պարտաւոր են երկուսը միասին ընդհանուր հաշիւները ներկայացնել ժողովին:

6.- Աշխատել երեսփոխանական ընտրութիւնները բոյկոտի ենթարկել, օգտուելով կառավարութեան բռնած կոպիտ եւ վիրաւորական դիրքից, հանդէպ Պատրիարքարանի:

7.- Որոշուեց դոկտոր Եղորդին վճարել 5 ոսկի:

14.- Հրանտ – Հաւանաբար Կիրճեան Մելքոնն է:  
15.- Վանիկ – Թերլեմէզեան Սիիրան:  
16.- Խօսքը Մարութեանի մասին է, Ալմուսին:  
17.- Հարցը կը վերաբերի Կ. Պոլսոյ (Վիշապ) Կ. կոմիտէին:  
18.- Վարանդեանին:  
19.- Վահար – Վանեան Արշակ. Շահէն՝ հաւանաբար Բարսեղ Շահապազ, որ Փարիզ կը գտնուէր: Շահէն՝ ծածկանուններէն մէկն էր նաեւ Անդրանիկի:

**Խաչատուր, Ասլան, Հրանտ, Վանիկ,  
Շամիլ, Ֆարհատ, Թափառիկ:**

1.- Ակնունին զեկուցեց Թալէաթի եւ նրա միւս ընկերների հետ ունեցած տեսակցութեան մասին: Որոշուեց, որ Շահրիկը եւ Վարդգէսն էլ գան, զեկուցումը ամբողջացնելու համար:

2.- Կրկին անգամ խօսք եղաւ խառը ժողովների մասին: Նախկին որոշումը մնաց իր զօրութեան մէջ, որոշելով հարկաւոր ժամանակ հրաւիրել Պոլսում գտնուած ընկերները եւ Կ. կոմիտէի ներկայացուցիչը խորհրդակցութեան:

1913, 10-XI

**Բացի Հրանտէն ներկայ էր ամբողջ կազմը,  
հրաւիրուած էր Վարդգէս եւ Շահրիկ[եան]:**

Զեկուցումը ամբողջանալով, պարզուեց, որ կառավարութեան ներկայացուցիչները Հայաստանի ռեֆորմների մասին գրաւոր կերպով պէտք է ներկայացնեն իրենց իրազօրծելիք կէտերը:

Պիտի սպասել մինչեւ այդ դոկումենտի ստանալը:

1913, 12-XI

**Ներկայ են բոլորը, բացի Զարդարեանէն:**

1.- Զաւարեանի ֆոնդի համար կենտրոն. յանձնաժողով կազմելու համար, որոշուեց, որ Թափ[առիկ] եւ Վանիկը թեկնածուներու ցանկ ներկայացնեն յաջորդ ժողովին, նոցանից յարմարագոյնները ընտրելու համար:

2.- Սասունի յանձնախմբի համար Սիմոնի փոխարէն որոշուեց [Արմէն] Գարոն:

3.- Համազասպի զեկուցումը լսելէ յետոյ, դրամի հանգանակութեան մասին խօսուեց: Որոշուեց Եւրոպայում հանգանակութիւն կատարելու համար հարցուի Միքայէլին<sup>18</sup>: Յարմար համարուեց Վահաբին եւ Շահէնին<sup>19</sup> այդ գործի համար ուղար-





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

կել հոն: Գրել նաեւ Ամերիկա եւ Սարուստան<sup>20</sup>, որ նոյն գործը շարունակեն: Վիգէնը<sup>2</sup> վերադարձէն յետոյ, Սարուստան անցնի նոյն նպատակով:

4.- Շահէն[ին] գրել դպրոցական գրքերի համար<sup>21</sup>:

1913, 13-XI

1.- Ազատամարտի ուղղութեան մասին (նկատելով թուրք մամուլի բռնած ներկայ դիրքը) խօսել Զարդարեանի ներկայութեամբ:

2.- Pour les peuples d'Orient-ի<sup>22</sup> համար գրել Պարիզ՝ եւ պահանջել մանրամասն հաշիւ: Պարիզից դիմել Կովկաս, դրամ պահանջելով, որ հնարաւոր է «Բերարի» ստորագրութեամբ<sup>4</sup>:

3.- «Ազատութեան լոյս» մատենաշարի սեկցիա կազմելու համար ընտրուեց Հրանտ<sup>14</sup>: Միւս պակաս անդամների համար յաջորդ ժողովում պէտք է լրացնել:

4.- Զաւարեան «Ֆոնդի» կենտրոնական յանձնաժողովի՝ դարձնել «Սասունին օգնենք» յանձնաժողովի: Վարդգէսը ընտրուեց այդ յանձնախմբի անդամ: Հրաւիրել վերոյիշեալ մարմինը ժողովի, առաջարկել, որ ընդունին: Ներկայ կը լինին մեր կողմէն Հրանտ եւ Վարդգէս:

5.- Զաւարեանի թաղման ծախսի պարտքը գոցել հանգանակութիւնով, Ազատամարտից, եւ պակասը՝ կազմակերպութիւնից: Ակնունին պիտի ստանձնի հանգանակութեան նախաձեռնութեան գործը, Մարգալ[ետի]<sup>13</sup> հետ միասին:

1913, 15-XI

1.- Նկատելով, որ թուրք մամուլը յարձակողական լեզու է բանեցնում հայերի վերաբերմամբ, եւ նոյնիսկ կոտորածի սպառնալիքներով՝ ցանկանում են ահաբեկել հայ տարրը, որոշուեց մի շարք կորովի յօդուածներ տպել Ազատամարտում, առանց ի նկատի ունենալու այն հանգամանքը, որ թերթը կարող է փակուել:

2.- Ընկերների մէջ առաջ եկած թիւրիմացութիւնը պարզելու [համար] Ընդհանուր ժողովի օրինաւորութեան նկատմամբ, որոշուեց հրաւիրել

խառը ժողով, եւ բացատրութիւններ տալ այդ մասին: Հրանտը, իբրեւ Ընդհանուր ժողովին մասնակցող ընկեր, ստանձնեց անհրաժեշտ բացատրութիւններ տալու:

3.- Կիլիկիայի պէս մի կարեւոր շրջան, առանց գործիչ ընկերների մնալով, կազմակերպութիւնը բոլորովին քայքայուած վիճակ կը ներկայացնէ: Խաչատուրի գեկուցումից եւ այլ աղբիւրներից առած տեղեկութիւնները կը ցուցնեն, որ շատ լաւ տրամադրութիւն եւ հող կայ կազմակերպութիւն ստեղծելու: Որոշուեցաւ փնտռել մի կարող ընկեր այնտեղ ուղարկելու: Առաջին թեկնածու նկատուեց Մարգալետը, եւ որոշուեց դիմել նրան եւ առաջարկել այդ պաշտօնի համար: Հակառակ պարագային ուրիշներին ի նկատի ունենալ:

4.- Համազասպին 2-3 ամսուայ համար նիւթապէս օժանդակելու համար, յարմար համարուեց դիմել Կ. կոմիտէին, քանի որ նրանց գործունէութեան շրջանումն է<sup>23</sup> եւ գործում է խմբերի կանոնաւորման համար:

5.- Նկատելով, որ Ամերիկայի Կ. կոմիտէն քանիցս պահանջել է մի դեկավար ընկեր՝ Վրացեանի փոխարէն, քանի որ վերջինս տրամադիր է այնտեղից հեռանալու, որոշուեց՝

ա- Խնդրել Վրացեանէն որ մնայ մինչեւ գարուն, կամ յառաջիկայ Ընդհանուր ժողովը եւ  
բ- Դիմել ընկեր Արարատեանին եւ առաջարկել, որ գարնան համար պատրաստուի Ամերիկա գնալու:

1913, 17-XI

**Բացակայ էին միայն Հրանտ եւ Ասլան:**

1.- Լսուեց հայոց հարցի վերաբերեալ նոր անցուդարձերը:

2.- Ֆարհատը ստանձնեց Հրանտի հետ միասին ստանձնել իրենց առաջարկուած պաշտօնը: Վանիկ եւ Գիսակ<sup>24</sup> կ'օգնեն նրանց իրենց աշխատանքների մէջ:

20.- Կովկասի համար գործածուող ծածկանուն:  
21.- Իմա գէնքերու գնման համար:  
22.- Դադրած Փրօ-Արմենիայի փոխարէն Փարիզ հրատարակուող թերթ՝ հայկ. հարցի պաշտպանութեան համար խմբագրապետութեամբ Վիկտոր Բերարի:  
23.- Այսինքն Պոլիս կը գտնուի:  
24.- Սերենկիլիւսան Յովհաննէսի (Վարդգէս) մէկ այլ ծածկանունը:







3.- Հրաւիրել Հաշուեքննիչ մարմինն, որ ստանձնեն Ընդհ. ժողովից իրենց վրայ դրուած պարտականութիւնը:

բազրական) զբաղուելը պիտի լինի ընկեր Զարդ[արեան]ի գեկուցումից յետոյ:

1913, 30 XI

1913- 22 XI

**Ներկայ են բոլոր ընկերները:**

Հրաւիրուած էր Վիգէնը<sup>2</sup> գեկուցում տալու հայոց հարցի վերաբերեալ իր արած քայլերի համար:

1.- Լսուեց Վիգէնի երկար եւ մանրամասն գեկուցումը Բերլին եւ Պ[ետերբուրգ] տուած: Ընդհանուր տպաւորութիւնը դրական էր գերմանական քաղաքականութեան մասին, հայկական հարցի վերաբերմամբ:

2.- Ընտրութիւնների համար խօսուեց եւ պարզուեց, որ կուսակցութիւնները եւ Վարչութիւնը<sup>25</sup> տրամադիր են որոշ գիջումներով համաձայնութեան գալ: Որոշուեց, որ յարմարագոյն ձեւը կը լինի՝ գէթ երկրորդ աստիճանի ընտրողները (հայեր) իրաւունք ունենան հայ երեսփոխանները ընտրելու:

Հրանտը եւ Զարդարեանը պէտք է գնան պատրիարքին եւ այդ ուղղութեամբ խօսին, որ թիւրիմացութիւններ տեղի չունենայ կառավարութեան հետ տեսակցելու ատեն:

3.- Կարգացուեց միջկուսակցական Համերաշխական ժողովի համաձայնութեան յայտագիրը եւ ընդունուեց ամբողջութեամբ:

1913, 24 XI

ա.- Զեկուցեց վարչական կազմից եւ հաշիւների մասին Ֆարհատը: Հաշիւները գրաւոր չլինելով, որոշուեց որ յաջորդ ժողովին Ֆարհատ]ը եւ Թափ[առիկը], մատենաներից արտագրելով, բերեն աւելի իրական հաշիւներ:

բ.- Սարգիսը<sup>26</sup> իր մի քանի ամսուայ պաշտօնավարութեան ընթացքում տեսած պակասութիւնները մէկիկ մէկիկ թուեց: Այդ կէտերը գրի առնելով, թողուեց յաջորդ ժողովներին քննութեան առնելու համար:

Թերթի վերակազմութեամբ (վարչական եւ խմ-

**Ներկայ են բոլորը, ինչպէս եւ Վիգէնը:**

ա.- Նկատելով, որ հանգանակութեան խնդիրը մեր ամենակարեւոր խնդիրներէն մէկն է, եւ այդ գործին պիտի շուտով ոյժ տալ Վա[հա]բի հետ միասին, մանաւանդ որ վերջինս էլ Պետերբուրգ]ում սպասում է այդ խնդրի առիթով Վիգէնին, որոշուեց, որ [այս վերջինը] շուտով ճանապարհուի հոն, Բերլինի վրայով: Վերջին տեղը կը մնայ ոչ աւելի քան 5-6 օր:

բ.- Նկատելով, որ Պետերբուրգում] Վիգէնի ներկայութիւնը կարող է շատ անհրաժեշտ լինել՝ Գասբարի հետ տեսակցելու խնդրում, որոշուեց՝ որ նա Վա[հա]բի հետ միաժամանակ սկսի հանգանակութեան] գործը Պետերբուրգ] եւ Մոսկուա: Եթէ այդ երկու վայրի գործը վերջացնելէ յետոյ, Գասբարի հետ ունենալիք յարաբերութիւնների կարիք չզգացուի այլեւս, այնտեղից ճանապարհուի դէպի հարաւ, եւ հանգանակութեան] գործը միասին վարի: Հակառակ պարագային, ինքը կը մնայ այնտեղ եւ Վահ[աբ]ը միայնակ կ'անցնի որոշեալ վայրերը, ու տեղական այլ ընկերների հետ կ'աշխատի վերոյիշեալ գործի համար:

գ.- Ընկեր Գասբարից խնդրել, որ ժողովրդի լուսաւորութեան գրքեր յանձնի, եւ դիւրութիւններ տայ տեղ հասցնել. մերժուեց:

դ.- Որոշուեց՝ խօսակցութեան ընթացքում հասկացնել, որ արգելք չհանդիսանայ գաղթականներին օգնելու համար: (Դէմ մնացին այս որոշման Վանիկ եւ Շամիր):

ե.- Վիգէնը առաջարկում է Դաշնակցութեան Խորհուրդը<sup>27</sup> հրաւիրել, նկատելով վայրկեանի կարեւորութիւնը: Այդ առաջարկը մերժուեց, քանի որ Ընդհ. ժողովը նոր էր որ վերջացաւ:

25.- Խօսքը պատրիարքարանի Կեդր. վարչութեան մասին է:  
26.- Բարսեղեան – Օտապաշեան:  
27.- Դաշնակցութեան Խորհուրդը վերին մարմին էր, կազմը՝ Բիւրոն եւ պատասխանատու Կեդր. կոմիտէներու ներկայացուցիչներէն, որ ընդհանուր ժողովներու միջեւ տարածուող ժամանակաշրջանին պարբերաբար կը գումարուէր՝ օրուան կարեւոր եւ հրատապ հարցերու մասին որոշումներ կայացնելու համար:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

Վիզիտը ցանկանում է, որ արձանագրութեան մէջ գրուի, որ ինքը կողմնակից է մնում **Խորհուրդ** հրահրելուն:

Գ.- Հրանտը գեկուցեց իր տեսակցութեան արդիւնքը **Թալէաթի** հետ: Պարզուեց, որ ոչ միայն ամէն կերպ մերժում են կոնտրոլի<sup>28</sup> սկզբունքը, այլև հայկական վիլայէթների համար տրամադիր չեն որեւէ իրական գիշում անել եւ ձեռնարկել բարեկարգութեան:

Որոշուեց հրահրել երեքշաբթի խառը ժողով, եւ ընկերներին բացատրելով գործի դրութիւնը, խզում առաջ բերել **Իթիհատի** դէմ:

1913, 26 XI

1.- Սկիւտարի մի խումբ ընկերներ բողոքել էին **Բիւրոյին**, Կ. կոմիտէի եւ տեղական մի շարք ընկերների դէմ: Լաւ համարուեց յանձնել այդ գործը **Շամիլին**, որ ենթակոմիտէի ընկերների հետ խօսի եւ աշխատի վերջացնել **Սկիւտարում** եղած թշնամանքները:

2.- Կլուբի ներկայացուցիչ դարձնել **Մալխասի** փոխարէն **Սրենցին**<sup>29</sup>: Որոշուեց որ **Ֆարհատի** փոխարէն ուսանող **Մովսէսը** լինի:

**Ծանօթ.**- Նկատելով, որ **Մովսէսը** իբրեւ ուսանող իրաւունք չունի կուսակց[ութեան] ներկայացուցիչ լինելու, ընկեր **Կոմսը**, **Շամիլ** եւ մի քանի ուրիշներ միասին, ստիպուած եղան կրկին անգամ **Ֆարհատին** ներկայացնել, քանի որ կառավարութիւնից շարունակ պաշտօնեաներ էին գալիս, եւ պահանջում շուտով վերջացնել եւ պատասխան տալ իրենց հարցերին:

1913, 5 XII

**Բացի Ասլանէն<sup>6</sup>, բոլորը ներկայ էին:**

**Ազատամարտ.**— Յրդ անգամ լինելով, շարունակուեց վերակազմութեան համար կարծիքների փոխանակութիւն:

**Ա.**- Որոշուեց՝ յանձնել **Խաչատուրին**, **Ֆարհատին**, **Թափ[առիկ]ին**, հետեւեալ խնդիրների շուրջ խորհրդակցեն եւ մշակուած գրաւոր առաջարկներ

բերեն. ա) **Թերթին** բիւրճէի սահմանելը, ինչպէս նաեւ պաշտօնէութեան, ծանուցումների, ապառիկների եւ այլ խնդիրների մասին:

**Բ.**- Վարչական մասը պէտք է կենտրոնացնել մէկ պաշտօնեայի ձեռքը եւ տալ լայն իրաւասութիւններ, **Թողնելով** նրան ազատ վարչական ներքին գործերի մէջ:

**Գ.**- **Խմբագրութիւնը** կազմել երկու հոգուց, բայց մէկը կը լինի **խմբագրապետ**, եւ **խմբագրութեան** մէջ գտնուած պաշտօնէութեան հետ միմիայն նա գործ կ'ունենայ, եւ նրա միջոցաւ կը կարգադրուի **խմբագրութեան** մէջ գտնուած բոլոր գործերը:

**Դ.**- **Բիւրոյից** կը նշանակուի մէկ ընկեր, որ անմիջական շփման մէջ լինի գլխաւոր **խմբագրութեան** վարչական մասի ղեկավարի հետ: **Այն** խնդիրները, որ ընդհանուր բնաւորութիւն կը կրեն, **խմբագրապետը**, վարչութեան ղեկավարը եւ **Բիւրոյի** ներկայացուցիչը միասնաբար կը խորհրդակցեն եւ կը կատարեն: **Այդ** երեքը միասին կը կազմեն **Ազատամարտի «ղիրեկսիոնը»**<sup>30</sup>:

**Ե.**- **Բիւրոն** նախօրօք գծելով բիւրճէի սահմանները, եւ մշակելով մի քանի հիմնական օրէնքներ, վարչութեան ղեկավարը ազատ է այդ սահմաններում գործելու, ինչպէս եւ **խմբագրութեան** ղիրեկսիոնը: **Բիւրճէի** սահմանից դուրս ռեւէ ծախս, միմիայն **Բիւրոյի** գիտութեամբ եւ **թոյլտուութեամբ** կարելի է:

1913, 6 XII

**Բացի Թափառ[իկէն] ներկայ էին բոլորը:**

**Լսուեց Ասլանի գեկուցումը Թերթի մասին:**

**Ա.**- **Թուրքերէնի** մասին կարեւորութիւնը ներկայումս անհրաժեշտ չգտնելով, որոշուեց առժամապէս դադարեցնել ի պահանջել հարկին **Բիւրոն** կարող է նորէն վերսկսիլ տալ: **Թուրքերէնի** դադարեցումը պատճառաբանուեց բիւրճէի խնայողութեամբ, ինչպէս եւ հնարաւորութիւն տալու լուրե-

28.- Իմա Հայկ. բարեմորդումներու գործադրութեան ծիրէն ներս պահանջող երոպական հակակշռի սկզբունքը:  
29.- Մալխասը՝ Յովսէփեան Արտաշէսն է, Սրենցը՝ Գլուբեան Սարգիս:  
30.- Տնօրէնութիւնը:



րի բաժինը ճոխացնելու պատճառաբանութեամբ: Համաձայն էին բոլորը, բացի Ասլանէն:

15 Դեկտ. 1913

Բ.- Վարչութեան ղեկավարի պաշտօնի կանչել Վարդանին<sup>31</sup>, մերժման դէպքում թողնել ժամանակաւորապէս Թափառ[իկ]ին:

Գ.- Որոշուեց փակել գրաշարանոցը:

Դ.- Խաչատ[ուրի], Ֆարհատի եւ Թափառ[իկ]ի մշակած հիմնական օրէնքները թերթի վարչութեան եւ խմբագրութեան, եւ այլ մանրամասների վերաբերեալ, քննութիւնը թողնուեց կիսատ, յաջորդ ժողովին շարունակելու պայմանով:

12 Դեկտ. 1913

Բոլորը ներկայ են:

Զեկուցում Հայկ. հարցի մասին: Գերմ[ան] եւ ռուս դեսպանների դիմումի արդիւնքը. տեսակցութիւն Խալիլ բէյի<sup>32</sup> հետ:

1.- Որոշուեցաւ հաղորդել Զոհրաբին զգոյշ լինելու իր խօսակցութեանց մէջ. զիջումներ չանելու թուրքերին եւ չխօսելու Դաշնակցութեան անունով կամ զայն համոզելու ձեւով:

Վանի մարմինը տեղական վալիի հետ բանակցութեան մէջ է եւ պահանջ դրել է հայերու համեմատական ներկայացուցիչ տալու ժողովների մէջ, իսկ կէս առ կէս ժանդարմերիայի մէջ:

2.- Որոշուեցաւ Հայկ. հարցի վերջին փուլերի մասին լայն տեղեկութիւններ հաղորդել կարեւոր մարմիններին եւ գրել Վան որ տեղական բանակցութիւններ կը վնասեն մեր դատին եւ որ մեր պահանջը կէս առ կէս է թէ ժողովներու եւ թէ պաշտօններու մէջ:

3.- Դատական նախարարը պարլամ[ենտում] ընտրական մեր պահանջներու դէմ նոր առաջարկներ ըրած էր, որ որոշուեցաւ մերժել եւ պնդել մեր հիմնական առաջարկներու վրայ:

4.- Շարունակուեցաւ Ազատամարտի կազմակերպութեան մասին խմբագրուած կէտերը եւ վաւերացուեցաւ ամբողջութեամբ: Հոն աւելցուեցաւ մէկ յօդուած եւս, որ Ազատամարտի վարչութիւնը պարտաւոր է որոշ % շաբաթէ շաբաթ վճարել կազմակերպութեան ի հաշիւ իր պարտքի: %-ը որոշելը թողնուեցաւ միւս ժողովին:

Լրիւ կազմով:

1.- Զեկուցում Հայկ. հարցի վերջին փուլերու մասին: Զ[օհրապ] տեսնուած էր թուրքերու հետ եւ իր կողմէ կարգ մը կոնսէսիոններ<sup>33</sup> ընելու տրամադրութիւն ցոյց տուած էր: Այս վարմունքը անհամապատասխան նկատուեց մեր եւ Ազգ. պատրիարքարանի ցարդ հետեւած ընթացքին, - թուրքերու հետ բանակցութեան չմտնելու եւ անոնց ոչ մէկ զիջում ընելու մասին - մանաւանդ որ Զ. թէ-եւ անպաշտօն դիրքով, բայց կերպով մը հասկացուցած էր թէ ինքը կրնայ միջնորդի դեր ստանձնել թուրքերու եւ Դաշնակցութեան մէջ, բան մը որ երբեք յանձնարարուած չէր անոր եւ այդ դիրքը Դաշնակց[ութեան] քաղաքականութեան գլխովին հակառակ էր:

Այս առթիւ որոշուեցաւ երկու ընկեր դրկել անոր քով այս պարագաները անոր ուշադրութեան յանձնելու եւ զգուշացնելու իր այդ ուղղութեան մէջ:

Ընկերներէն մէկուն ալ յանձնարարուեցաւ տեսնուիլ քեռիներու<sup>34</sup> հետ եւ անոնց հետ կապ պահելու համար մէկը որոշուեցաւ:

17 Դեկտ.

Լրիւ կազմով:

Սատրազամը<sup>35</sup> պատասխանած էր դեսպաններուն յանուն թուրք կառավարութեան Ընդհ. կառավարչի անուանման ձեւի մասին:

Նկատելով որ այս ձեւը չի համապատասխաներ նախապէս տրուած կոնտրոլի մեր պահանջին եւ ուրեմն մեզի լիովին բաւարարութիւն չի կրնար տալ, ժողովը ձեռք բերուած եւ ձեռք բերուելիք այս յաջողութիւնները էտապ<sup>36</sup> մը կը համարէ, որ մէ վերջ իրեն վերապահելով ձգտիլ մեր սկիզբէն ըրած պահանջներուն:

31.- Խօսքը կը վերաբերի Խանասարի Վարդանին, բուն անունով Մեիրաբեան Սարգիս:  
32.- Իթքիիատի կեդրոնի ներկայացուցիչներէն:  
33.- Չիջումներ:  
34.- Քեռի ընդհանրապէս գործածուած է ռուսերու համար: Հոս՝ Կ. Պոլսոյ ռուս դեսպանատան պաշտօնատարներուն համար:  
35.- Սատրազամ, եպարքոս, մեծ վեզիր՝ վարչապետի համար գործածուող որակումներ են:  
36.- Հանգրուան, փուլ:





Փաստ. 61-87

2.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ  
Հ.3.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ 20ԴԴ ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻՆ  
(Չտպագրել եւ չտարածել. միայն ժողովի համար)

Պոլիս, 24 նոյ. 1913

Ընկերներ,

Համաձայն Կեդր. կոմիտէի ցանկութեան, կը փութանք ձեզի հաղորդել ամփոփ Տեղեկագիր մը կուսակցութեան գործունէութեան եւ արդի կացութեան մասին: Ընդհանուր ժողովի որոշումները արդէն իսկ փոստին են յանձնուած, Կ. կոմիտէի հասցէով: Անմոռանալի Սիմոնի<sup>37</sup> մահէն ի վեր, Բիւրոն դեռ նոր վերակազմուած ըլլալով, չկրցանք աւելի կանուխ գոհացնել ձեզ, թէեւ մանրամասն տեղեկութիւններ հաղորդած ենք արդէն Կ. կոմիտէին:

Ա. — Երկրի կացութիւնը եւ  
ինքնապաշտպանութիւնը. —

Ձեզի ծանօթ է արդէն, որ Օսմ. Սահմանադրութեան առաջին օրերու տպաւորութեան տակ, զգալապէս թուլցաւ ինքնապաշտպանութեան բնագոյր: Մարդիկ համարեա թէ չէին մտածեր վաղուան մասին: Անակնկալներու կամ յուսախաբուութեան վախը շատ ալ զօրաւոր չէր: Այնպէս որ, Դաշնակցութիւնը ստիպուած էր յաճախ ուժասպառ ըլլալ տարրական անհրաժեշտութիւններ բացատրելու համար, հասարակութիւնը զգուշացնելով մանկունակ լաւատեսութեան կամ յափշտակութեան դէմ, պարզելով իրականութեան պահանջները:

Այս ուղղութեամբ ջանքեր թափուեցան առաջին օրէն իսկ, բայց մանաւանդ վերջին երկու երեք տարուան միջոցին: Ի հարկէ աւելի մեծ հոգածութեան առարկայ եղած են կարգ մը կեդրոնական վայրեր, որոնք իրենց դիրքով եւ գործունէութեամբ կոչուած են հզօր դեր կատարելու մեր իրականութեան մէջ: Կուսակցութիւնը կարելին ըրած է օգտուելու համար իր տրամադրութեան տակ գտնուած բոլոր միջոցներէն: Թէեւ կը խոստովանինք որ դեռ անհամար պակասներ կան, որոնք յե-

տաճգուած են նիւթական անձկութեան հետեւանքով:

Այս առթիւ, ինչպէս քանիցս յիշեցուցած ենք Կեդր. կոմիտէին ալ — թերեւս տաղտկալի դառնալու աստիճան — մասնաւորապէս մեր հեռաւոր ընկերներն ու մարմինները պիտի չմոռնան մէկ կարեւոր պարագայ, — կուսակցութիւնը այնքան աւելի գործունէութիւն կրնայ ցուցնել, այնքան աւելի կը մօտենայ իր նպատակին իրագործումին, որքան լայն միջոցներ գտնուին իր տրամադրութեան տակ եւ ժամավաճառ չըլլայ մանր հոգերով: Նկատեցէք որ սնտուկին մէջ մասնաւոր նպատակներով պահուած բոլոր տրամադրելի գումարները բացառապէս յատկացուցած ենք ինքնապաշտպանութեան պէտքերուն, օգտուելով ամէն պատեհ առիթէ, որպէսզի անակնկալներու առջեւ չգտնուինք: Հետեւապէս, աւելորդ է շեշտել որ ներկայ արկածալից եւ պատմական օրերուն մէջ, մանաւանդ ընկեր եւ հաւաքականութիւն պիտի կրկնապատկեն իրենց ճիգերը, կուսակցութեան բարոյական եւ նիւթական ոյժը աւելցնելու համար: Ոչ միայն անհրաժեշտ է բազմապատկել շարքերը, գիտակցութեան եւ շարժման բերել հասարակութեան անտարբեր եւ անօգուտ տարրերը, այլեւ կուսակցութեան ծոցին մէջ իսկ ստեղծել ռազմիկ սերունդ մը՝ միշտ կենսունակ եւ պատրաստակամ: Ահա թէ ինչո՞ւ օգտուելով Ամերիկայի ներկայացուցած անսահման պատեհութիւններէն եւ դիւրութիւններէն, դուք մասնաւորապէս ոյժ պիտի տաք զինավարժական խումբերուն, որոնք իրապէս օրհնութիւններ են մեր դժբախտ հայրենիքին համար: Երեւակայեցէք որ բիւրաւոր երիտասարդներ առանց գէնքի մնան, իսկ բիւրս անգամ բիւրաւորներ ալ ատրճանակի մը բլթակն անգամ բռնել չեն գի-

37.- Խօսքը Չաւարեան Սիմոնի մասին է, որ մահացած էր Հոկտ. 14ին:





տեր... Լման երկու սերունդ կրակի եւ արիւնի դժոխքի մը մէջ անցուց իր գարուն օրերը, եւ երեւի դեռ երրորդ սերունդ մըն ալ պարտաւոր ենք պատրաստել, որդիներուն եւ թոռներուն ապա- գան ապահովելու համար...

Հակառակ երեւութական բարեփոխումներուն, տարաբախտաբար երկրի վիճակը միշտ ալ կը մնայ տխուր ու վրդովիչ, նոյնիսկ յղի հազար հաւանա- կանութիւններով: Կառավարութիւնը արտաքին հեռանկարի մը վտանգին առջեւ զանազան շար- ժուձեւեր կը փորձէ, բայց ո՛չ մէկ իրական փոփո- խութիւն՝ ընդհանուր քաղաքականութեան մէջ, ո՛չ մէկ հետեւողական, անկեղծ, երկրաշէն ծրագիր: Այսօր ալ, ինչպէս երէկ, հասարակ ոճրագործներ, աւագակներ աւելի «ի պատուի» են քան բովանդակ ժողովուրդը: Մանաւանդ ոչ մէկ կերպով բարե- փոխուած չէ խորական քաղաքականութիւնը, ո- ըուն դէմ առաջին բողոքողը հայերը եղան, որուն մեծագոյն գոհերը հայերն են մինչեւ այսօր:

Եւ միխթարական փաստը, այն շրջաններուն մէջ ուր թուրք կառավարութիւնը կամ ամբոխը «բաներ մը գիտեն» հայերու ինքնապաշտպանու- թեան, խառնուածքի, դիմադրական կորովի մա- սին,— այնտեղ մեր հայրենակիցներուն կացութիւ- նը աւելի նպաստաւոր է, այնտեղէն գանգատողնե- րը աւելի սակաւաթիւ են:

**Բ.— Հայկական հարցի ներկայ վիճակը.—**

Բնականաբար, աւելի երկար չէր կրնար տեւել խաբէութեան եւ կարճատեսութեան այն ողբեր- գութիւնը, որ կը շարունակուի հինգ տարիէ ի վեր, Երիտասարդ թուրք վարչութեան կողմէ: Եւ ահա շնորհիւ մղուած պայքարներուն, հայանպաստ պրոպագանդին, միջազգային մրցակցութեանց, բայց մանաւանդ կուսակցական եւ ազգային հա- մերաշիւ ճիգերու, Հայաստանի բարեճարդման հարցը այսօր կը գտնուի դիւանագիտական սեղա- նի վրայ:

Ըսենք անմիջապէս, որ մենք շատ ալ հաւատա- ցողներ չենք այսպիսի երեւոյթներու յաջողու- թեան: Եւ արդէն լաւատեսութեան քիչ պատճառ- ներ կան ներկայիս, եթէ մանաւանդ ներքին ճնշող ոյժ մը հրապարակ չգայ վերջին պահուն: Ռուսիա երեք-չորրորդով գիջեցաւ իր սկզբնական ծրագրին վրայ, համակերպելով Գերմանիոյ պահանջներուն, Թրքահայաստանը երկու մասի բաժնելու աստի-

ճան, նոյնիսկ հաւանելով որ ընդհ. քննիչները Օսմ. կառավարութեան կողմէ նշանակուին: Հիմա Գեր- մանիա եւ Ռուսիա իբրեւ Եւրոպայի ներկայացու- ցիչ, կը պնդեն մէկ կէտի վրայ,— որ քննիչներու խորհրդականները նշանակուին Եւրոպայի կողմէ, ամենայն իրաւասութիւններով, իսկ Դուռը կը մերժէ վճռապէս: Ի հարկին իրական ճնշում պիտի փորձե՞ն, գէթ այս երաշխաւորութիւնը ստանալու համար՝ չգիտենք: Նշանները ե՛ւ յուսալից են ե՛ւ խաբուսիկ:

Նուպար փաշայի պատգամաւորութիւնը տա- կաւին ամէն յոյս կորսնցուցած չէ. Եւրոպայի մեր բարեկամներն ալ հաւաստիքներ կու տան: Միւս կողմէ, ռուսեւզերման մրցակցութիւնը նոր եւ սուր փուլի մը մէջ մտաւ այս օրերս. այնպէս որ կանխահաս է որոշ բան ըսել:

Հայկական պահանջներու պաշտպանութեան այս նոր ճանապարհին վրայ, Պատրիարքարանն ալ բռնած է բաւական խելացի ուղղութիւն, թէեւ աւիւնայ համակերպեցաւ Հայաստանի երկուքի բաժանման եւ թերեւս գիջող ըլլայ նաեւ ուրիշ կէ- տերու մէջ, անսալով դեսպանական խորհուրդնե- րու:

Կուսակցութիւնը կարելին կը փորձէ մէկ կողմէ հնարաւոր առաւելութիւններ ստանալու, միւս կողմէ ազգային պառակտումի առիթ չտալու հա- մար: Մանաւանդ այս վերջին կէտը — ներքին կուռ համերաշխութեան անհրաժեշտութիւնը մեր առա- ջին հոգերէն մէկն է, եւ ապահովաբար պիտի ըլլայ նաեւ մեր ամէնէն ազդեցիկ զէնքերէն մէկը: Կա- ռավարութիւնը, արդէն գիտակից այս պարագա- յին, դիւային միջոցներ կը փորձէ իր առջեւ երկու հայ ազգ ստեղծելու համար, շահագործելով ամէն պատեհութիւն:

**Գ.— Կառավարութեան ընթացքը.—**

Ինչպէս ըսինք, կառավարութիւնը իր բոլոր ու- ժով կը մերժէ օտար միջամտութեան սկզբունքը, կոնտրոլ, եւայլն: Մինչեւ վերջերս, իր տրամադրու- թիւնները բաւական լաւ էին հայերուն հանդէպ. նոյնիսկ դիմումներ եղան մեզ, դարձեալ համաձայ- նութեամբ գործելու համար Իթթիհատին հետ: Մենք ի հարկէ պէտք չունէինք անգամ մըն ալ փոր- ձելու մեր բարեկամները, եւ մնացինք ու կը մնանք միշտ ձեռնպահ եւ արթուն, չհաւատացող ո՛չ մէկ խոստումի կամ բարենորոգչական ծրագրի:







Էտիրնէի գրաւումէն ասդին<sup>38</sup>, Իթթիհատը եւ իր ներկայացուցած կառավարութիւնը տեսակ մը անբարտաւան եւ անբարեացակամ ընթացք բռնեցին: Իսկ վերջին շաբաթներու միջոցին, մանաւանդ ընտրական խնդրի մասին դրուած ծրագրերէն յետոյ, ուղղակի թշնամական շունչ մը փչել սկսաւ պետական շրջանակներէ եւ իթթիհատակա մամուլէն: Չենք յիշեր այլեւս Ազատամարտին եւ Պատրիարքին ուղղուած կրկնակ սպառնազրեքը, հակաքրիստոնէական գանազան արտայայտութիւններ, իսլամ խուժանը հրահրելու, հայերը Թուրքիոյ դաւաճան ներկայացնելու ճիգերը, որոնք թէեւ կարճ տեւեցին, բայց կը մատնեն չափազանց ախտաւոր եւ վտանգալից հոգեբանութիւն մը:

Իթթիհատը իր բոլոր թեւերով կը փորձէ ահաբեկել մեզ, հայ ժողովուրդը, որպէսզի հարկադրուինք յայտարարել որ կոնտրոլի պէտք չունինք, «մենք մեզի» կրնանք համաձայնիլ...: Կուսակցութիւնը — շեշտենք աւելորդ անգամ մըն ալ — չափազանց վերապահութեամբ ընդունած է այս ուղղութեամբ ամէն փորձ: Եւ վերջին անգամ, եղած հրաւերի մը վրայ, մեր ընկեր պատուիրակները բացարձակապէս ըսին ամէն բան Իթթիհատին եւ կառավարութեան ներկայացուցիչներուն. այնպէս որ, հիմա ճարահատ Պատրիարքարանը սիրաշահիլ կը փորձեն եւ իրենց օրկաններն ալ ողորջիչ լեզու մը կը գործածեն քանի մը օրէ ի վեր:

Բարենորոգումներու համար կառավարութեան հոչակած բոլոր առաջադրութիւնները մենք կը նկատենք արեւելեան խաղեր, սա վտանգաւոր ժամանակները անցընելու, օտար միջամտութեան մղձաւանջէն ազատելու եւ ինքն իր գլխուն մնալու: Հետեւաբար, կուսակցութիւնն ստիպուած է լարել իր բոլոր ոյժերը, հսկել իբրեւ արթուն պահակ, ի հարկին հրապարակ գալու համար:

**Դ.— Pro-Armenia.—**

Մեր դատի պաշտպանութեան համար օրգանը, Pour les peuples d'Orient, իր երկրորդ շրջանը կը սկսի Pro-Armenia<sup>39</sup> անունով: Հակառակ նոյնիսկ ընկերներու յոռետեսութեան, այս թերթը սահմանուած է շատ կարեւոր պէտքի մը, եւ մեր եւրոպացի բարեկամները իրենք, Փրէսանսէն ու Պէրաուր, թախանձագին կը խնդրեն որ չընդհատենք զայն, իբրեւ ազդարարութիւն մը դիւանագիտական աշ-

խարհին եւ երիտասարդ թէ ծեր թուրքերուն: Եւ մեր արժանապատուութիւնն իսկ կը պահանջէ կէս ճամբան չմնալ, մանաւանդ ներկայ օրերուն, պարզապէս դրամական նկատումներով:

Հազար շնորհակալութիւն որ Ամերիկան փութաց գումար մը դրկել այդ օրգանի ծախքերուն համար: Անկասկած այսուհետեւ ալ միշտ աչքի առջեւ կ'ունենաք այդ փոքրիկ պրոպագանդիստը, որուն արժէքը դեռ անծանօթ կը մնայ շատերուն համար: Մենք պիտի խնդրէինք մանաւանդ ոյժ տալ բաժանորդագրութեան, փոխանակ նպաստի, եւ այդ կը բաւէ խմբագրութեան ճիգերը պակսեցնելու: Դիւանագիտական շրջանակներուհետ մեր յարաբերութեանց արդիւնաւորութեան տեսակէտով ալ, անուրանալի օժանդակ մըն է Pro-Armeniaն:

**Ե.— Կովկասի մէջ.—**

Վերջին Ընդհ. ժողովին մէջ, ներկայացուցիչներունէր Կովկաս, որ աստիճանաբար կը գտնէ ինքզինքը, կ'ամփոփէ իր ոյժերը եւ շուտով պիտի հասնի — տարակոյս չունինք — ցանկալի բարձրութեան: Վերջին հարուածի<sup>40</sup> հետեւանքները դեռ նոր պիտի դարմանուին. բայց կարեւորն այն է որ տրամադրութիւնը չէ փճացած բոլորովին. հետզհետէ կ'երեւին հին ոգեւորութեան կայծեր: Տեղական պայմանները տակաւին շատ թոյլատու չեն: Յարի կառավարութիւնը, որքան ալ բարեացակամ այս միջոցին,— իր սեփական շահերու բերումով — միշտ կասկածոտ է դարձեալ. այնպէս որ, մեր ընկերները ստիպուած են ստորերկրեայ աշխատանքով գոհանալու առ այժմ: Կը յուսանք, մինչեւ ձեր յաջորդ շրջանային ժողովը, աւելի գոհացուցիչ լուրեր տալ այս մասին:

**Զ.— Պարսկաստան.—**

**Նկատողութեան առնելով Իրանի ներքին խառ-**

38.- Ալնարկութիւն Պալքանեան պատերազմի սկզբը երուպական բաժնի մեծագոյն մասի կորուստէն ետք, պատերազմի երկրորդ փուլի ընթացքին թրքական բանակի կողմէ Էտիրնէ քաղաքի վերագրուման:

39.- Արդարեւ ամբողջ տարի մը այս անունով («Արեւելի ժողովուրդներուն համար») լոյս տեսնելէ ետք, Դաշնակցութեան նախաձեռնութեամբ եւ հայկ. հարցի քարոզչութեան համար հրատարակուող այս թերթը պիտի վերադառնար իր նախկին անունին՝ Pro Armenia-ին:

40.- Ալնարկութիւն ցարական իշխանութեանց կողմէ նախորդ տարիներուն Դաշնակցութեան դէմ շղթայազերծուած հալածանքներուն, բանտարկութեանց, դատաւարութեան եւ արստրներուն:





նակուլթիւններն ու արտաքին դաւերը, որոնց հանդէպ ներքին իրական ոյժ մը չկայ Սահմանադրութեան կուսակից, կուսակցութիւնը առ այժմ որոշած է ձեռնպահ մնալ եւ գոհանալ ամփոփ գործունէութեամբ: Ի հարկէ Դաշնակցութիւնը չպիտի կարենայ անտարբեր մնալ, ժողովրդական ուժեղ յեղափոխութեան մը պարագային:

**Է.— Համերաշխութեան խնդիրը.—**

Ինչպէս դիտել տուինք, կուսակցութեան գլխաւոր հոգերէն մէկն է, մանաւանդ ներկայիս, կարելին ընել անխախտ եւ արդիւնաւոր դարձնելու համար ազգային համերաշխութիւնը: Այս ուղղութեամբ Բիւրոյի առաջին աշխատանքն եղաւ պարլամենտական ընտրութեան առթիւ կազմել տալ խառն քաղաքական յանձնաժողով մը, Ազգ. վարչութեան կողքին, մասնակցութեամբ բոլոր քաղաքական կուսակցութիւններուն եւ յարանուանութիւններուն: Բայց առաջադրելով աւելի տեւական հանգամանք մը տալ համերաշխական դատին, Բիւրոն նախաձեռնարկ եղաւ նաեւ, կազմելու Միջ-կուսակցական խառն մարմին մը, որ արդէն իսկ հրատարակած է իր յայտարարագիրը եւ կը խոստանայ զնահատելի գործունէութիւն, համաձայն մասնաւոր կանոնագրի մը: Չորս քաղաքական կուսակցութիւնները կարգ մը խորհրդակցական ժողովներէ յետոյ, որոշեցին միասնաբար եւ ձեռք ձեռքի գործել Հայկական բարեփոխումներու իրականացման համար, — համաձայնութեամբ շարժիլ Ազգային ներկայացուցչական մարմիններու մէջ, — համերաշխօրէն ընթանալ Օսմ. երեսփոխանական ընտրութեանց եւ պարլամենտական խնդիրներու մէջ:

Ի հարկէ ձեռք չըջանն ալ լրջօրէն ուղադրութեան կ'առնէ այս կէտերը, զգուշանալով կրայոյժ<sup>41</sup> վէճերէ, ամէն բան ստորադասելով ազգային գերագոյն շահերու եւ կուսակցական բարոյականի պահանջներուն: Կը բաւէ որքան որ ուժասպառ եղանք ներքին պառակտումներով եւ անիմաստ իրերամարտութեամբ: Հասկնալի է որ այս ուղղութեան մէջ կուսակցութիւնը ոչինչ կը կորսնցնէ իր սկզբունքներէն, ոչինչ կը զոհէ իր համոզումներէն կամ ծրագրէն:

Այս առթիւ, ձեռք ուղադրութեան կը յանձնենք

նաեւ պարագայ մը, — կուսակցական մամուլը կամ գործիչները, գոնէ ժամանակաւորապէս, պարտին զգուշանալ հակառուսական արտայայտութիւններէ, որոնք կրնան այսպէս կամ այնպէս վնասել մեր դատին: Ճիշդ է որ մեր պայքարը ռուս պետական ռեժիմին դէմ է ուղղուած, բայց գէթ ներկայ պահուն այդ ձեւի արտայայտութիւնները անուղղակի չարիքներ կը պատճառեն:

\* \* \*

Ահա ընկերներ, համառօտ պատկեր մը՝ կուսակցական գործունէութեան: Չենք ուզեր յիշել բուն Հայաստանի մէջ կատարուած կարգ մը գործեր, որոնք տարբեր ուղղութեան մը դատերն են: Կ'աճապարենք այս հակիրճ ուղեգիծը եզրակացնել, անգամ մըն ալ ձեռք նկատողութեան յանձնելով բոլոր անհրաժեշտութիւնները:

Դուք, հեռաւոր եւ սրտցաւ ընկերներ, երբ համախմբուած ազատ երկրի մը կամարին տակ, այսօր գլուխ գլխի կու տաք մեր կուսակցութեան չարն ու բարին դատելու համար, ապահովաբար ձեզի առաջնորդ պիտի ունենաք, ամէն բանէ վեր, այն բոլոր աւանդութիւնները որոնք ապրեցողցին Դաշնակցութիւնը եւ պիտի ապրեցնեն այսուհետեւ: Դուք չպիտի մոռնաք մեր սրբութիւն սրբօցը, — ժողովուրդն ու ժողովուրդին բարիքը: Ազատութիւնը իր ամենայն առումով, կ'իրականանայ այն ատեն երբ բոլորս միասին, հաւաքուած խանդավառութեան եւ անձնուիրութեան նոյն սեղանին շուրջ, երիտասարդ աւիւնով եւ առնական կամեցողութեամբ կը լարենք մեր ոյժերը, եւ հաստատ ու անսայթաք կը քալենք դէպի Մեծ նպատակը: Դաշնակցութիւնը — մօտէն գիտէք բոլորդ ալ — միշտ բարձր ու ժայռի պէս ամուր է մնացած իր շարքերու խտութեան, կենսունակութեան, բայց մանաւանդ շնորհիւ անոնց խանդին ու հաւատքին: Պատգ. ժողովի այս վսեմ վայրկեանին, ձեռք տալիք իւրաքանչիւր որոշումը կոչուած է պատմական նշանակութիւն ունենալու ներկայ պատմական օրերուն:

Ցանկալով ձեզ ամէն յաջողութիւն, վստահ ենք թէ ձեր լաւագոյն թելադրութիւններով պիտի օգնէք միշտ բարձր պահելու կուսակցութեան հմայքը:

Ընկերական բարեկենդան  
**ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ**

41.- Կիրքեր յուզող, գրգռիչ:





Փաստ. 61-97

3.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ  
Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ, Boston

ԽԻՍ ԳԱՂՏՆԻ

Պոլիս, 14/27 Դեկտ. 1913

Ընկերներ,

Կը հաստատենք մեր Նոյ. 24 թուակիր նամակն ու տեղեկագիրը: Ձեզի դրկած ենք նաեւ Է. Ընդհ. ժողովին որոշումները եւ Միջկուսակցական համերաշխութեան կոչերը: Նամակ չենք ստացած: Ի հարկէ յաջողութեամբ վերջացաւ Պատգ. ժողովը եւ շուտով կը ստանանք մանրամասնութիւնները:

Օսմ. երեսփ. ընտրութեանց դէմ բոյկոտ յայտարարուած է արդէն, ինչպէս տեղեկացաք թերթերէն: Կառ[ավարութիւն]ը գիջողութիւն կ'ընէր համեմատականի պահանջին համար, խոստանալով մինչեւ քսան պատգամաւոր: Բայց կը մերժէր ամէնէն կարեւոր պահանջը, — ազգային ընտրութիւնը, անոր փոխարէն յանձն առնելով պատուիրել իր մարմիններուն, որ հայոց թեկնածուներուն քուէ տան: Աւելորդ է ըսել որ խաբուսիկ միջոց մըն էր այս, վաղուց փորձուած:

Որովհետեւ համազգային ընտրական ժողովը շատ ալ տրամադիր չէր մէկ անգամէն վճռական ընթացք բռնելու, հարկ եղաւ միջին ձեւ մը առաջարկել մեր կողմէ, — թէ հայ թեկնածուներն ընտրուին հայ «միւնիսթիսիպը սանի»ներուն կողմէ: Պատրիարքարանը իր ներկայացուցիչներով բանակցեցաւ այս կէտին վրայ եւ Թալէաթ պէյ, կարգ մը անուշ-լեզու հաւաստումներէ յետոյ, մերժեց վճռապէս երկրորդ ձեւն ալ:

Մեր դիրքը պարզ էր այլեւս: Խնդիրը վիճաբանութեան դնելով Միջկ[ուսակցական] Համերաշխական ժողովին մէջ, մեր պատուիրակները առաջարկեցին Համազգային բոյկոտ: Առաջարկն ընդունուեցաւ միաձայնութեամբ (ներկայ էին Ս. Դ. Հնչ., Վեր. Հնչ., եւ Ռամկ. կուսակցութիւնները): Ընտրական յանձնաժողովը եւ Պատրիարքարանի Խառն ժողովն ալ իւրացուցին այս տեսակէտը եւ Պատրիարքը անձամբ գնաց հաղորդելու համազգային որոշումը:

Առ այժմ իրերը կը մնան այս վիճակին մէջ:

Դուք կարգացիք անշուշտ, թէ թուրք մամուլը ինչպէ՛ս արտայայտուեցաւ այս մասին: Կառավարութիւնը թէեւ երեւութապէս անտարբեր կը թուի, բայց ներքնապէս շատ մտահոգ է եւ միջոցներ կը խորհի բանակցութիւնները վերսկսելու կամ գոնէ մեր մէջ պառակտում ձգելու համար:

Ձեռնպահութեան այս յայտարարութիւնը ճիշդ պատեճ ժամուն հասաւ: Որովհետեւ կառավարութիւնը, նահանգային օրէնքը եւն., կարգ մը խաբուսիկ փոփոխութիւններով, կ'ուզէր աչքի փոշի փչել եւ եթէ մենք իրաւախոհութեան գայինք ընտրական հարցի մասին, այս առիթն ալ պիտի շահագործէին Եւրոպայի վրայ ազդելու համար:

Ձեզի գրած էինք Իթիհատի նոր ձեռնարկները, նորէն մեզի հետ համաձայնութեան մը գալու մասին: Առաջին անգամ իրենց հրաւերին պատասխանելէ յետոյ, երկրորդ տեսակցութիւն մըն ալ տեղի ունեցաւ, հասկնալու համար անոնց գիջողութեան վերջին սահմանը: Ներկայ էին Թալէաթ, Խալիլ եւ Միտհաթ Շիւքրի պէյերը (ընդհանուր քարտուղար): Մեր պատուիրակները վճռապէս պարզեցին իրենց տեսակէտը, ամուր կենալով կոնստրուկտի տեսակէտին վրայ: Յայտարարեցին թէ Իթիհատը ուղղակի համիսլամական քաղաքականութիւն մըն է որ կը շարունակէ մինչեւ այսօր, թէ այլեւս ո՛չ մէկ հաւատք ունին տրուած խոստումներուն եւ առաջադրուած ծրագիրներուն վրայ:

Իթիհատի շէֆերը խոստովանեցան որ իրապէս համիսլամական քաղաքականութեան մը հետեւեցան մինչեւ Չաթալճայի ճակատամարտը, որ հաստատեց հայերուն կատարեալ անկեղծութիւնը, հայ զինուորներու դիւցազնական դիմադրութեամբ: Ուզեցին համոզել թէ իրենց պայքարը հայերուն դէմ չէ, այլ միւս քրիստոնեաներուն: Այս խախուտ փաստին պատասխանուեցաւ թէ շարժումը, ինքնին վտանգաւոր երեւոյթ մը, վաղը կ'ընայ նոյն հետեւողականութեամբ ուղղուիլ հայերուն դէմ եւս:





Տաք վիճաբանութիւններէ ետք, երբ մեր պատ-  
ւիրակները ուզեցին հասկնալ Իթիօպիայի նոր գի-  
շտութիւնները. երեւան եկաւ որ իսկապէս ոչինչ  
բաներ են: Ո՛չ միայն կտրուկ կը մերժէին կոնտրո-  
լը, այլեւ ո՛չ մէկ էական գիշտում կ'ընէին ի նպաստ  
Հայաստանի կամ բարենորոգումներու: Բոլորը,  
բոլորը՝ նահանգային օրէնքի մէջ եղած կարգ մը ո-  
ղորմելի փոփոխումներ կամ յաւելումներ են,  
որոնց արժէքը բացատրեցինք թերթին մէջ:

Թէ՛ ընտրական եւ թէ՛ Հայկ. հարցի մասին,  
մենք կը մնանք ուղղակի ընդդիմադիրի դերին մէջ,  
երբեք չչեղելով մեր ուղեգծէն, եւ նկատելի է որ  
Երկիրը շատ աւելի պահանջկոտ է, մերժելով գա-  
նազան իրաւախոհութիւններ, ինքն իր գլխուն բոյ-  
կոտ հուշակերտ աստիճան: Մեր պայքարի միջոցնե-  
րէն մէկն ալ ըլլալով մամուլը, որոշած ենք, հնա-  
րաւորութեան սահմանին մէջ, մերկացնել բոլոր  
գեղծումներն ու ապօրինութիւնները. թէեւ շատ  
առաջ չենք կրնար երթալ, որովհետեւ, մանաւանդ  
այս միջոցին, բոլորի աչքերը մեր վրայ են, թերթը  
կը թարգմանուի ժամէ ժամ, բանտարկութիւն,  
տուգանք, խափանում, բոլոր սպառնալիքները  
կախուած են մեր գլխուն: Նախընթաց շաբթուն  
գինուորական ատեանը որոշած էր ձեռքալալ  
արտօնատէրն ու պատասխանատուն: Յետոյ ետ  
կեցան եւ դատի կանչելով դատապարտեցին: Ամէն  
պարագայի մէջ, շատ հաւանական է որ շուտով  
ուղղակի հալածանք սկսի:

Հայկ. հարցը վճռական փուլի մը մէջ կը մտնէ:  
Սատրագամը<sup>35</sup> աւելի քան մէկ ամիսէ ի վեր կը  
ձգձգէր իր պատասխանը՝ ռուսեկերման ծրագրի  
մասին, որ չափազանց կրճատուած եւ այլափոխ-  
ուած է արդէն: Դեսպանները կը պնդէին որ ընդհա-  
նուր քննիչներու խորհրդականները նշանակուին  
իրենց համաձայնութեամբ, ամենայն իրաւասու-  
թիւններով: Դուռը մերժեց, եւ կը թուէր թէ ամէն  
բան ջուրը պիտի իյնայ, մանաւանդ որ լուրջ ճըն-  
շում չկար: Ահա իրարու յաջորդեցին օսմանեան  
փոխառութեան ձախողումը, գերման գինուորա-  
կան mission-ի<sup>42</sup> վէճը եւ միջազգային ուրիշ բար-  
դութիւններ: Գերմանիա, Ռուսիոյ տրտունջները  
չսաստկացնելու համար, ստիպուած էր աւելի ե-  
ռանդով ոյժ տալ բարենորոգման ծրագրին ընդու-  
նելութեան:

Թուրքերն զգալով իրենց անել կացութիւնը,  
ճնշուած ներսէն եւ դուրսէն, փորձեցին Նուպար

փաշան Պոլիս բերել Պատրիարքին միջոցաւ: Անկէ  
առաջ փորձեր էին — երբ մեզմէ յուսահատեցան —  
Պատրիարքին հետ բանակցութեան մտնել Հայկ.  
հարցը ներքնապէս կարգադրելու համար: Պատ-  
րիարքը պատասխանեց թէ ինք ո՛չ մէկ իրաւասու-  
թիւն չունի, թէ այդ գործերը կը վերաբերին Կաթո-  
ղիկոսին եւ Եւրոպայի պատուիրակութեան: Այն  
ատեն եպարքոսը<sup>35</sup> փորձեց Փարիզի Օսմ. դեսպա-  
նին միջոցաւ հրաւիրել Նուպար փաշան, որ մեզի  
խորհուրդ հարցնելէ յետոյ, մերժեց գալ:

Ճարահատ, մեր հարեւանները<sup>43</sup> այս անգամ  
մտածեցին իրապէս բա՛ն մը ընել: Միեւնոյն օրուան  
մէջ Թալէաթ, Խալիլ եւ Ճէմալ պէյերու միջոցաւ  
դիմումներ եղան մեզի եւ ծանօթ հայ անձնաւորու-  
թեան մը<sup>44</sup>: Խալիլ պէյի առաջարկով բոլորն ալ բա-  
ցատրած կ'ըլլանք:

Պետական խորհուրդի նախագահը կը յայտնէր  
թէ խորհրդականներու դրութիւնը չպիտի յաջողի  
եւ թէ լաւագոյնն է հայերու հետ համաձայնու-  
թեամբ, ընդհ. քննիչներ (inspecteur general) բերել  
Եւրոպայէն, լիազօր իրաւասութիւններով: Ծանօթ  
հայ անձնաւորութիւնը, Խալիլի կարծիքը շօշափե-  
լու համար, հարցուցած էր թէ թուրքերը կրնա՞ն  
ընդունիլ որ առաջին անգամ inspecteur-ներ նշա-  
նակուին դեսպաններու հետ գաղտնի բանակցու-  
թեամբ, իսկ երբ անոնք իրենց պաշտօնը չըրացած  
ստիպուին հրաժարիլ, յաջորդը կամ յաջորդները  
ընտրուին եւրոպական պետութեանց համաձայ-  
նութեամբ: Խալիլը կը պատասխանէր թէ պիտի  
խորհին:

Վեց օր առաջ ռուս դեսպանը Դուռ գնաց պա-  
տասխան ստանալու: Սատրագամը կ'առաջարկէր  
Խալիլի պարգած ձեւը, — «խորհրդականներ նշա-  
նակել դեսպաններու հետ անպաշտօն բանակցու-  
թեամբ»: Դեսպանը զայրացած դուրս ելաւ եւ եր-  
կու օր առաջ գերմանականին հետ միասին գացին:

Սատրագամը անձնապէս կարգ մը առաջարկ-  
ներ կ'ընէր, յոյս յայտնելով որ միւս նախարար-  
ներն ալ կ'ընդունին: Ստորեւ կը նշանակենք այդ  
ձեւերը. —

- 1. Խորհրդականներ կը հրաւիրուին դեսպաննե-  
րու հետ անպաշտօն եւ գաղտնի բանակցութեամբ.
- 2. Եթէ իրենց պաշտօնավարութեան շրջանը

42.- Ֆրանսերէն — առաքելութեան:  
43.- Մեր հարեւանները կը գործածուէր փոխանակ թուրքերը  
ըսելու:  
44.- Ծանօթ անձնատրոփիւնը Գրիգոր Զօհրապն է:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

չլրացած ստիպուհին հրաժարիլ, Բ. Դուռը գրաւորապէս յանձն կ'առնէ յաջորդներու ընտրութիւնը նոյն ձեւով կատարել «պետութիւններու բարեհաճ աջակցութեամբ»:

3. Թէ՛ խորհրդականներու անուանումը, թէ՛ անոնց իրաւասութիւնները եւ թէ՛ հայերու համար առաջադրուած միջոցները Բ. Դրան կողմէ պաշտօնապէս պիտի հաղորդուին պետութեանց.

Սատրագամը կ'աւելցնէր, սակայն, թէ չպիտի հաւանի որ խորհրդականներու եւ օսմանցի քննիչներու միջեւ վէճ ծագած ատեն, Բ. Դուռը պարտաւոր ըլլայ դեսպաններուն հետ համախորհուրդ լուծել: Ռուս դեսպանը դիտել տուած է որ, այդ պարագային, լաւագոյն ձեւը պիտի ըլլար դառնալ եւրոպացի քննիչներ նշանակելու ծրագրին:

Դուռը Երկուշաբթի օր պիտի պատասխանէ այս առաջարկին: Դեսպաններն ալ իրենց մասին կը խորհրդակցին: Հաւանաբար համաձայնութիւն գոյանայ եւրոպացի քննիչներ նշանակելու համար, քանի որ թուրքերն ալ այդ համոզման եկած են:— Գերմանական դեսպանը, որ հիմա աւելի ջերմութեամբ կ'աջակցի Ռուսիոյ, բարեկամաբար խորհուրդ տուած է Դրան որ համակերպին, նոր կընձիռներ չստեղծելու համար:

\* \* \*

Այսպէս թէ այնպէս, մեր պահանջները կը մնան անփոփոխ: Եթէ մեր minimum պահանջէն պակաս ձեւ մը պիտի ընդունուի, թող մեր մասնակցութեամբ չըլլայ:

Մեր հիմնական պահանջներն են.—

1. Եւրոպացի ընդհ. կառավարիչ, համաձայնութեամբ եւրոպական պետութեանց, հինգ տարի պաշտօնավարութեան շրջանով եւ ամէն անգամ նոյն ձեւով ընտրելի.

2. Ամենայն իրաւասութիւններ տալ անոր տեղական վարչութեան մէջ, մասնաւորապէս բոլոր պաշտօնեաներն ընտրելու եւ հրաժարեցնելու իշխանութեամբ.

3. Եւրոպական պետութիւնները պիտի հսկեն բարենորոգումներու գործադրութեան, յարմար ձեւով մը.

4. Կէս առ կէս մասնակցութիւն հայերու՝ նահանգային վարչութեան ընդհ. ժողովներու, ապա-

հովութեան ոյժերու թէ՛ պաշտօնէութեան մէջ.

5. Հայ լեզուի գործածութիւնը դատարաններու եւ վարչութեան մէջ, հայերու համար.

6. Զինուորութիւն՝ իւրաքանչիւրն իր տեղին վրայ եւ ջնջում համիտիէ գունդերու.

7. Կրթական ինքնավարութիւն: Իւրաքանչիւր ազգ ազատ է դպրոցական տուրք դնելու եւ գանձելու: Պետութիւնը իր հարկերուն հետ պիտի գանձէ գանոնք եւ յանձնէ.

8. Բռնատիրուած հողերու վերադարձ:

Ահա այն գլխաւոր եւ հիմնական պահանջները որոնք դրուած են: Ասոնք ընդունուելէ յետոյ, մասնաւոր յանձնաժողով մը կը մշակէ կանոնագիր եւ մանրամասնութիւններ:

Ներկայիս դիմադրութեան կը բախի.

ա. Քննիչներու (կամ խորհրդականներու) ընտրութեան եղանակը:

բ. Մասամբ անոնց իրաւասութիւնները.

գ. Կէս առ կէս իրաւունքը:

Ասոնց մասին է որ կը շարունակուին բանակցութիւնները:

Մեր քաղաքականութիւնն է՝

ա. ներկայիս, չխզել թուրքերու հետ մեր յարաբերութիւնները, բայց երբեք բանակցութեան չմտնել անոնց հետ, ձգձգումներու եւ խաբէութեանց ասպարէզ չբանալու համար. մանաւանդ որ անհրաժեշտ է միշտ անխախտ պահել մեր հարցի միջազգային հանգամանքը:

բ. Մեծ ջանք թափել պետութեանց համաձայնութիւնը պահելու եւ անոնց վճռականութիւն ներշնչելու համար: Պօղոսը [փաշա] մեծ եռանդով եւ ձեռնհասութեամբ կ'աշխատի այս ուղղութեամբ:

Հաւանաբար կարճ միջոցի մը մէջ կարենանք ստանալ գէթ տարրական բարենորոգումներ:

Շուտով կը հաղորդենք ուրիշ մանրամասնութիւններ: Ընկերական բարեւեներով՝

**ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ**

Յ. Գ.— Առ այժմ, ոչ Շահբազը, ոչ ալ Արարատեանը կրնան գալ Ամերիկա: Խնդրեցէք կրկին ընկեր Վրացեանէ եւ Մնարեանէ, որ մնան մինչեւ ամառ:— Ոչինչ պիտի հրատարակուի այս տեղեկութիւններէն:







**ԳԼՈՒԽ V**

**Հ.Յ.Դ. ՈՒԹԵՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ (ԿԱՐԻՆ)**

Հ.Յ.Դ. Ութերորդ Ընդհ. ժողովը գումարուեցաւ Կարին, 1914 թ.ի Յուլիս 16-30ին, նախորդէն հազիւ տարի մը ետք:

Ժողովը տեղի կ'ունենար պատմական դժնդակ պայմաններու տակ, եւ համաշխարհային պատերազմը վրայ հասնելով պատճառ եղաւ որ ան հասցնեպով փակուի, իր աշխատանքները դեռ լրի չաւարտած:

Ընդհ. պատերազմը եւ անոր ընկերացող աննախընթաց իրադարձութիւնները պիտի ունենային աշխարհակործան տարողութիւն, իսկ համատարած կոտորածները մահ ու անքաղ պիտի սփռէին հայոց աշխարհի տարածքին, բիրաւոր մարդոց հետ կորստեան մատնելով ազգային ու մշակութային բազում եւ քանկարժէք գանձեր: Անոնց շարքին պէտք է դասել, թերեւս դոյզն չափով, այն կորուստը, որուն մատնուեցան պատմական այդ ժամանակաշրջանի վկայակոչութիւնը հանդիսանալու կոչուած գրատր յիշատակարանները:

Ինչ կը վերաբերի առանձնայատուկ կերպով դաշնակցական գրականութեան եւ ճող Ընդհ. ժողովի թղթածրարին վիճակուած ճակատագրին, այդ մասին խօսած ենք արդէն Յառաջաբանին մէջ: Ինչպէս պիտի գրէր անի ուշ այդ ժողովին մասնակից Ս. Վրացեան, «Ընդհ. ժողովի արձանագրութիւնները, դժբախտաբար, կորած են անհետ»: Արդարեւ Կարնոյ ժողովէն մնացածը Որոշումներու համառօտ քաղուածքն է, 29 էջոց տետրակ մը եւ նոյնին տպագիր գրքոյկը (26 էջ): Ժողովին մասնակիցներուն մեծ մասին անունները եւս պիտի մնային անյայտ, եթէ չլլար հանդիպակաց էջին վրայ դրուած խմբակարգը: Հոն նշուած են անունները պատգամատրներուն եւ իրենց պատկանած կազմակերպական շրջաններուն: Նկատելի է բացակայութիւնը Խարբերդի, Տիգրանակերտի եւ ուրիշներու, որոնք պատգամատր չեն կրցած ուղարկել. անբաւարար է ներկայութիւնը՝ անցեալին 10 կէտը. կոմիտէիներ հաշուող Կովկասին. Վանի նման կարեւոր շրջան մը կը ներկայանայ միայն մէկ պատգամատրով՝ Թերլեմէզեան Սիհրան. չեն եկած ոչ Արամ Մանուկեան եւ ոչ ալ Իշխան, Վասպուրականի մէջ ստեղծուած տազնապալի կացութեան, ու, թերեւս նաեւ, Ընդհ. ժողովը Վանի մէջ գումարելու իրենց առաջարկը գոհացուած չլլալուն համար: Ներկայ չեն նոյնպէս շարք մը կարեւոր դէմքեր.՝ «Դրօշակ»ի խմբագրութեան պատգամատր Վարանդեան ճամբայ ելած ու հասած էր Վիեննա, բայց եւ ստիպուած վերադարձած էր Ժընեւ, Աւստրիոյ եւ Սերպիոյ միջեւ սկսած պատերազմի հետեւանքով դէպի Պոլիս շոգեկառքի գիծը փակուած ըլլալով: Արմէն Գարօ, Վանայ Սարգիս, Գարեգին Խաժակ, Շահրիկեան, Կոմս կը ստիպուէին մնալ Պոլիս: Վռամեան կը գտնուէր Կովկաս եւ ժողովի փակուելէն ետք միայն հասաւ Կարին, ուր Ռոստոմի եւ Ակնունցիի հետ մասնակից պիտի ըլլար Իթքիհատի պատուիրակներուն հետ կայացած ծանօթ հանդիպումներուն:

Վերեւի մշտումները չեն ըլլար անշուշտ նուազագոյն չափով մտեմացնելու համար կարեւորութիւնը Կարնոյ պատմական ժողովին, ուր ներկայ էին ոչ միայն կազմակերպական շրջաններուն զգալի մեծամասնութիւնը, այլեւ շատ ու շատ վաստակատր եւ հեղինակատր դէմքեր: Հաստատումը կ'ըլլայ պարզապէս ընդգծելու համար այն մեծ պատասխանատուութիւնը, որ դժուարին այդ օրերուն կը ծանրանար Կարին հաւաքուած ընկերներու ուսերուն: Այս վերջիններու վկայութեամբ, Ընդհ. ժողովը ունեցած է յաջող ելք. կրցած է հարթել ներքին տարակարծութիւնները եւ ամրապնդել կուսակցութեան միասնութիւնը:

\* \* \*

ճող Ընդհ. ժողովին յատկացուած այս գլուխին երկրորդ բաժինը կը հասնի մինչեւ ռուսերորք պատերազմին պայթումը՝ 1914 թ.ի Հոկտեմբերի վերջերուն: Կու տանք պատգամատրներու եւ կուսակցական մարմիններու միջեւ փոխանակուած կարգ մը գրութիւններ, որոնք կը պատկերացնեն, պատերազմի պաշտօնական յայտարարութիւնը կանխող ժամանակաշրջանին, Թուրքիոյ տարածքին ծայր տուած հալածանքները դաշնակցական յայտնի դէմքերու, ապա նաեւ ընդհանուր հայութեան դէմ: Կարեւոր փաստաթուղթերէն պէտք է համարել Վռամեանի եւ այլոց վկայութիւնները Իթքիհատի պատուիրակներուն հետ կայացած ծանօթ հանդիպումներուն մասին, որոնք վերջացած էին թուրքերուն համար ոչ հաճելի արդիւնքով: Հայութեան հաւատարմութեան եւ պետութեան հանդէպ քաղաքացիական պարտականութիւնները լրի կատարելու մասին տրուած հաւաստիքները, յայտնօրէն, չէին գոհացուցած փանթորքական նպատակներ հետապնդող թուրք ղեկավարները:





## ԽՄԲԱՆԿԱՐ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐՈՒՆ



**Վերի շարք, ձախեն աջ.**– 1.- Վահան Յովհաննիսեան-Մինախորեան (Մամսոն), 2.- Արտաշէս Գաւաթեան (Կարին, հրաւիրուած), 3.- Մինաս Պալոյեան (Տրապիզոն), 4.- Արմենակ Օխիկեան (Բաղէշ-Պիթլիս), 5.- Վահէ Թոքաճեան (Կարին, հրաւիրուած), 6.- Ասոօ-Աւետիս Ինճեճիկեան (Պէյրոս), 7.- Յովսէփ Յովհաննիսեան (Թեհրան), 8.- Վարդազար Տաքէսեան (Պաքան-Պուլկարիա):

**Միջին շարք.**– Համազասպ Սրուանձտեանց (Պոլիս), 2.- Մարտիրոս Յարութիւնեան (Կովկաս), 3.- Ռուբէն Զարդարեան («Ազատամարտ»ի խմբ.), 4.- Ռոստոմ (Հայաստանի բիրո), 5.- Է. Ակնունի (Արեւմտեան բիրո), 6.- Միսոն Վրացեան (Ամերիկա), 7.- Արտաւազդ Հանըմեան (Եգիպտոս):

**Վարի շարք.**– 1.- Հիւսիսեան (Շապին Գարահիսար), 2.- Մարութ Մարանեան (Կարին), 3.- Տիգրան Խաչիկեան-Արզումանեան (Պոլիս), 4.- Շահ-Արմէն-Պետրոս Տէրտէրեան (Կարին), 5.- Ռուբէն Տէր Մինասեան (Մուշ), 6.- Վարդանեան (Մերաստիա), 7.- Փոլատեան (Մերաստիա), 8.- Միհրան Թերլեմէզեան (Վան):

**Նկարին մէջ չկան.**– Մճօ Պոլեան (Մուշ), 2.- Գեորգ Ղազարեան (Կովկաս), 3.- Փիլոս-Մարալ Փափախեան (Կարին, հրաւիրուած):







Փաստ. 116-30

**Ա 1.- ՈՒԹԵՐՈՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ  
ՀՐԱԽԷՐ-ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ Հ.Յ.Դ. ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ**

Ընկերներ,

Դաշնակցության Ութերորդ Ընդհ. ժողովը տեղի կ'ունենայ ներկայ 1914 Յուլիսի առաջին կիսուն, համաձայն նախորդի որոշման:

Հետեւելով կուսակցության Կանոնագրի տրամադրության, այժմեւ կը հրաւիրենք մեր բոլոր մարմինները, Երկրի մէջ թէ դուրսը, ձեռք առնել անհրաժեշտ միջոցները, որպէսզի իրաւասու մարմինները կարեւոր մասնակցիլ յառաջիկայ Ընդհ. ժողովին, եւ կազմակերպութեան բոլոր շրջանները արտայայտուին իրենց պահանջներով:

Ուստի կը խնդրենք բոլոր Կեդրոնական կոմիտէներէն, ինչպէս եւ մեկուսի կոմիտէներէն`

Ա.- Օրակարգին մէջ իրենց կողմէ ներմուծելի առաջարկները հասցնել Արեւմտեան բիւրոյին ամենէն ուշը մինչեւ Ապրիլի վերջը, որպէսզի կարելի ըլլայ պատրաստել ընդհանուր Օրակարգը եւ ժամ առաջ ներկայացնել բոլոր մարմիններու բազմակողմանի ուսումնասիրութեան եւ քննութեան:

Բ.- Գումարել ռայոնական եւ շրջանային ժողովներ, կարգադրելու համար այն հարցերը, որոնք Կանոնագրի համաձայն կապ ունին Ընդհ. ժողովին հետ:

Գ.- Դրամական, գոյքի եւ յարակից հաշիւները փակել մինչեւ Ապրիլ 30, եւ ուղարկել պատկան Բիւրոներուն, յանձնելու Կեդր. հաշուեքննիչ յանձնախումբին նախնական քննութեան, համաձայն Է. Ընդհ. ժողովի որոշման, որպէսզի ըստ այնմ ճշտուին մարմիններու իրաւասութիւնները:

Դ.- Կանուխէն կատարել պատգամատրներու ընտրութիւնը, ժողովի բացումը յապաղումներու չենթարկելու համար:

Յառաջիկայ Ընդհ. ժողովի վայրը նախորդ ժողովին կողմէ որոշուած ըլլալով, կը փափաքէինք իմանալ օր առաջ, մեր Կեդրոնական կոմիտէներու կարծիքները ժողովի գումարման քաղաքի մասին: Վերջնական որոշումէն յետոյ, վայրը կը ծանուցանենք Կոմիտէներուն առանձին նամակով:

Հրաւիրելով ձեր մասնատր ուշադրութիւնը այս կէտերու ճշգրիտ գործադրութեան մասին, կը խնդրենք Կեդր. կոմիտէներէն ներկայ շրջաբերականը հաղորդել ի գիտութիւն բոլոր Մարմիններուն, նոյնիսկ աննախորդներուն, որպէսզի յառաջիկայ Ընդհանուր ժողովին մէջ արտայայտութիւն գտնեն կուսակցության բոլոր շրջանները, ինչ որ անհրաժեշտ է կուսակցության բարձրագոյն ժողովի տալիք որոշումները ամբողջ կազմակերպութեան բարոյական մասնակցութեան վրայ հիմնելու համար:

Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1914 Մարտ 1  
Պոլիս





Փաստ. 23-3

**Ա 2.– Հ.Յ.Դ. ՈՒԹԵՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԸ  
1914 ՅՈՒԼԻՍ**

**ՕՐԱԿԱՐԳ**

- 1. ա) Ընտրութիւն ղեկանի.— ձշտում եւ վաւերացում մանտաներու:
- բ) Վաւերացում օրակարգի: Նոր հարցեր:

**2. ՏԵՂԵԿԱԳԻՐ**

- ա) Բիւրոներու
- բ) Կեդրոնական կոմիտէներու եւ մեկուսի շրջաններու
- գ) Օսմ. խորհրդ[արանի] դաշնակցական հատուածի
- դ) Կեդր. Հաշուեքննիչ մարմնի եւ այլ յատուկ մարմիններու:

**3. ԶԱՂԱԶԱԿԱՆ – ԹՈՒՐՔԻՍ**

- ա) Դաշնակցութեան դիրքը հանդէպ կառավարութեան:
- բ) Կուսակցութեան եւ Իթիհատի յարաբերութիւնները մինչեւ այժմ, եւ հետեւելիք ուղղութիւնը՝ ապագային: 1) Նախկին յարաբերութիւնները, 2) Խզման խնդիրը, 3) Մասնակի յարաբերութիւններ, 4) Մեր մարմիններու ընթացքը Երկրի մէջ հանդէպ Իթիհատի:
- գ) Հայաքիւրտ յարաբերութիւնները եւ քրտական շարժում:
- դ) Մեր յարաբերութիւնները հայ քաղաքական կուսակցութիւններու հետ:

**4. ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐՈՒ ԾՐԱԳԻՐԸ**

- ա) Բարենորոգումներու հարցին մէջ Դաշնակցութեան նախաձեռնութիւնը 1912ին.
- բ) Բարենորոգումներու նոր ծրագիրը.— կուսակցութեան եւ Պատրիարքարանի ծրագիրները:
- գ) Դաշնակցութեան ձգտումը՝ բարենորոգումներու հարցին շուրջը համախմբելու կուսակցութիւնները, Պատրիարքարանը եւ դրսի ուժերը:
- դ) Ռուսական եւ գերմանական ազդեցութիւն:
- ե) Բարենորոգումներու ծրագրին ղեկանագիտական պատմութիւնը՝ բանակցութիւններու ելքը: Ընդունուած համաձայնագիրը:
- զ) Մեր ապագայ դիրքը բարենորոգումներու հանդէպ:
- է) Զինուորագրութեան հարց:
- ը) Արտագաղթի խնդիր:

**5. ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

- ա) Մեր երկու հիմնական պահանջները (համեմատական ներկայացուցիւն եւ ազգային ընտրութիւն):
- բ) Միջկուսակցական համերաշխական մարմին եւ Պատրիարքարան:
- գ) Ընտրութեան զանազան փուլերը.— Պատրիարքարանի բռնած դիրքը:
- դ) Կուսակցութեան պաշտպանելիք հարցերը Խորհրդարանին մէջ:

**6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՆԴԷՊ ԱԶԳ. ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ**

- ա) Նախկին Ընդհանուր ժողովներու որոշումները՝ ազգային հիմնարկութիւններու հանդէպ բռնելիք դիրքի մասին:
- բ) Եղած շեղումները:
- գ) Մեր դիրքը յառաջիկային:



**7. ՈՌՒՍԱՍՏԱՆ**

- ա) Ռուսական նոր քաղաքականութիւնը հայերու նկատմամբ:
- բ) «Դաշնակցութեան գործը»:
- գ) Մեր նուազագոյն պահանջները Ռուսաստանի մէջ եւ բռնելիք ուղղութիւնը:

**8. ՊԱՐՍԿԱՍՏԱՆ**

- ա) Մեր պահանջները Պարսկաստանի մէջ:
- բ) Հայերու դիրքը պարսիկ պարլամենտին հանդէպ:
- գ) Հայ ժողովուրդի ազգային-քաղաքացիական իրաւունքներու ճշտումը:

**9. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ**

- ա) Վերջնական մշակում կանոնագրի: Օրինականացման խնդիրը:
- բ) Ծրագրային եւ նուազագոյն պահանջներու հարցեր.— Մեր քաղաքական եւ տնտեսական պահանջները: Աշխատաւորական հարցը:
- գ) Բիւրոններու իրաւասութիւնները եւ պարտաւորութիւնները:
- դ) Պատասխանատու մարմիններու պէտքը:
- ե) Խորհուրդի կազմը: Դատական մարմիններու խնդիրը:
- զ) Կեդրոնական կոմիտէներու շրջաններուն մէջ յատուկ գործիչները պահելու հարցը (Մեծ-Հայք, Փոքր-Հայք, Ամերիկա, Եգիպտոս, Կիլիկիա եւայլն):
- է) Դաշնակցութեան քսանեւհինգամեակի հարցը (1890-1915):

**10. ԳՐԱԽՈՐ ԵՒ ԲԱՆԱԽՈՐ ՊՐՈՊԱԳԱՆԴ**

- ա) Պաշտօնական օրգանը (Դրօշակ):
- բ) Կիսապաշտօնական օրգաններ (Ազատամարտ, Հայրենիք եւն.): Գաւառական կուսակցական մամուլը:
- գ) Pro Armenia եւ իր դերը.— Հայկական դատի պաշտպան օրգաններ Բերլին եւ Պետերբուրգ:
- դ) Կազմակերպումն պրոպագանդի:

**11. ԴՐԱՍՄԱԿԱՆ-ՀԱՇՈՒԱԿԱՆ**

- ա) Կազմակերպութեան դրամական վիճակը եւ Գոյքը:
- բ) Հանգանակութեան միջոցներ:
- գ) Նախահաշիւ: Բաշխման սիստեմ:

**12. ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

- ա) Բիւրոններ եւ ուրիշ մարմիններ:
- բ) Գործիչ ընկերներ այլեւայլ շրջաններու համար:
- գ) Դատական, Կեդր. Հաշուեքննիչ եւ այլ մարմիններ:
- դ) Դաշնակցութեան քսանեւհինգամեակի յանձնախումբը:

Յառաջիկայ Ընդհանուր ժողովի տեղն ու ժամանակը:

Հ.Յ.Դ.  
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈ

1914 ապրիլ  
Կ. Պոլիս







Փաստ. 1545-4

Մարմիններուն համար



Ա 3.- Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԷՆ ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ

- Գումարուած 1914 Յուլիսին -

Հ. Յ. Դաշնակցութեան Ութերորդ Ընդհանուր Ժողովը տեղի ունեցաւ Հայաստանի մէջ, 1914 յուլիս ամսին:

Ժողովը տեւեց երկու շաբաթ եւ ունեցաւ 28 նիստ: Ժողովին հրաւիրուած էին:

- 1. Արեւմտեան բիւրօ 1 ձայն
- 2. Արեւելեան բիւրօ 1 »
- 3. Հայաստանի բիւրօ 1 »

**ԹՈՒՐԲԻԱ**

- 4. Մշոյ Կեդր. կոմիտէ եւ շրջան 2 ձայն
- 5. Վանի » » » 2 »
- 6. Կարնոյ » » » 2 »
- 7. Սվազի » » » 2 »
- 8. Խարբերդի » » » 2 »
- 9. Տրապիզոնի » » » 2 »
- 10. Կ. Պոլսի » » » 2 »
- 11. Սամսոնի » » » 2 »
- 12. Ատանայի մեկուսի կոմ. [ս[ոբհրդակցական]
- 13. Բէյրութի » » »
- 14. Իզմիրի » » »
- 15. Կեսարիոյ » » »
- 16. Տիգրանակերտի » » »

**ԿՈՎԿԱՍ**

- 17. Առաջին Կեդր. կոմիտէ եւ շրջան 2 ձայն
- 18. Երկրորդ » » » 2 ձայն
- 19. Երրորդ<sup>1</sup> » » » 2 ձայն

**ՊԱՐՍԿԱՍՏԱՆ**

- 20. Թեհրանի Կեդր. կոմիտէ եւ շրջան 2 ձայն
- 21. Թաւրիզի » » » 2 ձայն

**ԳԱՂՈՒԹՆԵՐ**

- 22. Ամերիկայի Կեդր. կոմիտէ եւ շրջան 2 ձայն
- 23. Պալքանի » » » 2 ձայն
- 24. Եգիպտոսի շրջան » » 1 ձայն

**ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ**

- 25. «Դրօշակ»ի խմբագրութիւն 1 ձայն
- 26. «Ազատամարտ»ի » 1 ձայն

**ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆ**

- 27. Եւրոպայի դաշնակց. ուսանողութիւն 1 ձայն
- 28. Թուրքիոյ » » 1 ձայն
- 29. Ռուսիոյ » » 1 ձայն
- 30. Գործիչներ, Երկրէն եւ այլ վայրերէ:

Ժողովին ներկայ էին վճռական ձայնով՝ 26 հոգի, եւ խորհրդական ձայնով՝ 4 հոգի, ընդամէնը 30 հոգի:

1.- Կովկասի առաջին Կեդր. կոմիտէն՝ Թիֆլիսի շրջանն է, Երկրորդը՝ Կարսի, Երրորդը՝ Երեւանի: Յայտնապէս միւս շրջանները, մանաւանդ Պարսուն չեն կրցած պատգամատր դրկել:





## ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԷՆ

### ԹՈՒՐՔԻԱ

#### ՄԵՐ ԴԻՐՔԸ ԴԷՊԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Նկատի ունենալով պետական այն նեղ եւ տարամերժ քաղաքականութիւնը, որով կը բնորոշուի իթ-  
թիհատական կառավարութիւնը իր գործունէութեամբ, եւ որուն արդիւնք են տնտեսական, դպրոցա-  
կան, վարչային եւ այլ մարզերու մէջ բոլոր ոչ-թուրք ազգութիւններու, հետեւաբար եւ հայ ժողովրդի  
վերաբերմամբ գործ դրուող օրինական եւ հակաօրինական ճնշիչ միջոցները,

Նկատի ունենալով մանաւանդ կառավարութեան հետապնդած խափանարար ուղղութիւնը հանդէպ  
բարենորոգումներու արդէն իսկ աղճատուած ծրագրի անշեղ գործադրութեան,

Ընդհանուր ժողովը եկաւ այն եզրակացութեան որ կուսակցութիւնը պէտք է շարունակէ մնալ ան-  
յողդողդ ընդդիմադիրի եւ անաչառ քննադատի դերին մէջ՝ հանդէպ իթթիհատի, պայքարելով անոր ազ-  
գայնական վնասակար եւ հակապետական քաղաքականութեան դէմ:

Ժողովը չի ժխտեր գործակցութեան սկզբունքը այն համապետական կարեւոր խնդիրներուն համար,  
որոնք համապատասխան են մեր կուսակցութեան ծրագրային պահանջներուն:

Ծանօթ.– Ընկերներու մասնակի դիմումները կառավարութեան մօտ՝ կրնան տեղի ունենալ միմիայն հանրա-  
յին բնոյթ կրող խնդիրներու համար:

#### ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐՈՒ ՀԱՐՑԸ

Ընդհանուր ժողովը, լսելով բարենորոգումներու մասին տրուած գեկուցումը եւ վիճաբանութեան  
ենթարկելով առհասարակ կուսակցութեան բարենորոգչական գործունէութիւնը, դիւանագիտական եւ  
քաղաքական ճանապարհով, ընդունեց որ կուսակցութիւնն սկզբունքով կարող է որդեգրել բարենորոգ-  
չական այդ գործունէութիւնը՝ իբրեւ նպատակայարմար, սակայն պարտք կը դնէ ձեռնհաս մարմիննե-  
րու վրայ՝ աւելի քիչ տարուիլ դիւանագիտական ուղղութեամբ, միշտ շարունակելով գերակշռութիւնը  
տալ կազմակերպական իրական ուժի զարգացման:

Գալով 1914 Յունուար 26-ի Բարենորոգմանց ծրագրին, այն ձեւով՝ որ ընդունուած է Պոլսոյ եւրոպա-  
կան դեսպաններու, թուրք կառավարութեան եւ Ընդհանուր քննիչներու կողմէ, կը նկատէ գայն իր ամ-  
բողջութեան մէջ անբաւարար եւ օգտակար չի գտներ որ նոյն ծրագրի գործադրութեան ժամանակ կազ-  
մակերպութիւնը կուսակցօրէն աջակցութիւն ցոյց տայ եւ այդպիսով որոշ պատասխանատուութիւն  
ստանձնէ. կը թելադրէ միջամտութեան գործը թողուլ ազգային պաշտօնական մարմիններու:

Ասոր հետ միասին, չբացասելով հանդերձ որ յիշեալ Բարենորոգմանց ծրագիրը կը պարունակէ կարգ  
մը կէտեր՝ համապատասխան մեր նուազագոյն պահանջներուն,

Եւ որ իրօք կառավարութիւնը կը ջանայ իր բոլոր հնարաւոր միջոցներով ջլատել նոյնիսկ այդ համեստ  
ծրագրին իրագործումը, ինչպէս ջանք չխնայեց սկզբէն ի վեր չափազանց թուլացնելու նախապէս առա-  
ջադրուած բարենորոգչական սկզբունքները,

Ընդհանուր ժողովը կը հրահանգէ որ կուսակցութիւնը, անհրաժեշտութեան պարագային, ընդդիմա-  
նայ կառավարութեան կողմէ նոյն ծրագրին իրագործման դէմ հանուած խափանարար միջոցներուն եւ  
պաշտպանէ հայ ժողովուրդին իրաւունքները:





**ՁԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ**

Ընդհանուր ժողովը միշտ կանգնած այն տեսակետին վրայ, թէ երկիր մը արտաքին վտանգներէ պաշտպանելու հաստատուն եւ նպատակաշարժար միջոցը՝ համաժողովրդական բանակն է – միլիսը –, եւ հետեւաբար դէմ ըլլալով ներկայ զինուորազրական շարք մը ճնշիչ պայմաններուն,

Ընդունելով դարձեալ որ ամէն ոք պարտաւոր է կատարել քաղաքացիական պարտականութիւնը երկրին հանդէպ,

Կը յայտարարէ իր մարմիններուն, իբրեւ առժամեայ միջոց, իրենց յարմար դատած ձեւով հետամուտ ըլլալ հետեւեալ կարեւոր սրբազրութիւններուն:

1.– Մուկնսիզները ազատել զինուորական ծառայութենէ, ընտանիքներն իրենց նեցուկներէ չզրկելու համար:

2.– Ուսուցիչներու միամեայ ծառայութիւնը վերածել ամառնային մարզանքի, կրթական գործը չկասեցնելու եւ չխանգարելու համար:

3.– Պահանջել որ քրիստոնեաներէն մինչեւ 31 տարեկանները (99 թուական, թրքական) միայն ենթարկուին զինուորակոչի, նկատի ունենալով անցեալին մէջ զինուորական տուրքի վճարուած ըլլալու պարագան:

4.– Հետամուտ ըլլալ որ վտանգի ենթակայ վայրերու մէջ, պատերազմի պարագային, տեղին վրայ պահուին որոշ չափով հայ զինուորներ՝ պետական հրացաններով զինուած, կարգն ու ապահովութիւնը պահպանելու համար:

5.– Հայկական շրջանակներուն մէջ անմիջապէս լրացնել զինուորական պահակները, զինել զանոնք պետական զէնքերով, եւ ժանտարմըրի մէջ մտցնել հայեր – ազգաբնակչութեան թուին համեմատութեամբ,– իբրեւ տարրական միջոցներ՝ տեղական ապահովութիւնը երաշխաւորելու տեսակէտէն:

**ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԶԳ. ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Ընդհանուր ժողովը մասնաւորապէս ծանօթանալով այն մասնակցութեան, որ դաշնակցական մարմիններն ու ընկերները ունեցեր են ազգային այլեւայլ հիմնարկութիւններու մէջ, եւ նկատելով՝

1) Որ այդ մասնակցութիւնը շատ լայն եւ յաճախակի ըլլալով՝ բացարձակապէս կը վնասէ բուն կուսակցական աշխատանքներուն, մղելով մեր ընկերները դէպի այլ ասպարէզներ:

2) Որ այդ առիթով ժողովուրդին մէջ, թէեւ անարդար կերպով, առաջացեր է թշնամութիւն դէպի կազմակերպութիւնը՝ վերագրելով ամէն դաշնակցական անհատի քայլերն ու մտքերը ամբողջ կուսակցութեան:

3) Որ այդօրինակ գործունէութիւնը կը նսեմացնէ կուսակցութեան բուն նպատակը եւ իսկական աշխատանքները մեր ժողովուրդի այլեւայլ խաւերուն մէջ:

Կ'որոշէ՝

ա) Որ այսուհետեւ ղեկավար մարմիններու անդամները (Բիւրօ, Կ. կոմիտէ) ու գործիչները մասնակցութիւն չունենան ազգային վարչական մարմիններու մէջ:

բ) Որ, որեւէ մասնակցութիւն ազգ. հիմնարկութիւններու մէջ, բոլոր ընկերներու վերաբերմամբ, պիտի կատարուի պատկան մարմիններու համաձայնութեամբ:

գ) Որ ընկերներու այդ ասպարէզին մէջ ցոյց տուած գործունէութիւնը պէտք է ենթարկուի կուսակցական քննութիւնի:

դ) Որ ազգային Կեդրոնական եւ գաւառական օրէնսդիր ժողովներու մէջ դաշնակցական երեսփոխանները կրնան կազմել դաշնակցական Ֆրակսիոն, որ պէտք է ձգտի իրեն հետ կապել ազատական տարրերը:





**ՄԵՐ ԴԻՐՔԸ ԴԷՊԻ ՕՍՄ. ՓԱՐԼԱՄԵՆԹԸ**

Ընդհանուր ժողովը խորապէս ցաւելով որ օսմանեան փարլամենթական ընտրութիւնները, վերջին շրջանին մէջ մանաւանդ, գրկուեցան ժողովրդական քուէի հիմնական պայմաններէն, եւ ժողովրդական ներկայացուցչութեան սկզբունքը փոխարինուեցաւ կեղերոնական կառավարութեան քմահաճոյքի կիրառումովը, այլեւ նկատելով որ՝

1) Պետութիւնը կազմող այլեւայլ ազգութիւնները, այժմեան օրէնքին շնորհիւ, միջոց եւ հնար չունին ազգային համեմատական ընտրութեան սկզբունքը գործադրելու, սկզբունք, որ լաւագոյն միջոցն է տարբեր ազգերու իղձերն ու փափաքները փարլամենթ տանելու, եւ, հետեւաբար, պետական օրէնսդրական ժողովը ամբողջ երկրի արտայայտութիւնը դարձնելու:

2) Շնորհիւ այս անասմանադրական կացութեան՝ նոյն ինքն սահմանադրական ռեժիմը, փարլամենթով հանդերձ, եղծուած է ու չ'ապահովեր օրէնսդիր մարմնի ազատ եւ անկաշկանդ գործունէութիւնը:

**Կ'որոշէ՝**

ա) Ամէն ջանք գործ դնել՝ ապահովելու բոլոր ազգութեանց, հետեւաբար հայ ժողովուրդին ընտրական իրաւունքը, համեմատական ներկայացուցչութեան եւ ազգային ընտրութեան տեսակէտէն:

բ) Յիշուած երկու սկզբունքներու անիրականացման պարագային, կը յանձնարարէ ղեկավարուիլ Բարենորոգումներու ծրագրին մէջ ընդունուած համեմատական չափով:

գ) Միշտ բողոքել թէ՛ կառավարութեան եւ թէ՛ կառավարութեան ճնշման տակ գտնուող փարլամենթական մեծամասնութեան այն բոլոր քայլերուն դէմ, որոնք նպատակ ունին ետ մղել եւ կամ կաշկանդել վերեւ առաջ բերուած սկզբունքները:

դ) Բոլոր յարմար առիթներով եւ, եթէ հնարաւոր է, հայ քաղաքական այլ կուսակցութիւններու եւ ազգային մարմիններու հետ, հետապնդել այդ կրկնակ սկզբունքներուն ընդունուիլը՝ սահմանադրական-օրէնսդրական ճանապարհով:

ե) Ապագայ ընտրութիւններուն հանդէպ մեր բռնելիք դիրքին որոշումը թողուլ պատկան մարմիններուն:

Ասկէ գատ, Ընդհանուր ժողովը կը յանձնարարէ իր բոլոր մարմիններուն, լայն պրոպականտ մղել ընտրական շրջանակներու մէջ՝ Օսմանեան փարլամենթի ներկայ շրջանի հայ պատգամաւորներուն դէմ՝ եթէ անոնք թերանան այն բոլոր հարցերուն մէջ որոնք կը վերաբերին հայ ժողովուրդի ընդհանուր շահերուն, եւ շեղելով պատգամաւորի կոչումէ բխող իրենց պարտականութիւններէն՝ փորձեն կամակատար գործիք ըլլալ կառավարութեան կամ փարլամենթական մեծամասնութեան:

Ծանօթ.– Փարլամենթական ընտրութեան միջոցին՝ կ'արգիլուի մեր կուսակցութեան թեկնածուներուն կամ թեկնածութեան տրամադրութիւն ունեցող ընկերներուն՝ ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցութիւն ունենալ այն մարմիններուն մէջ, որոնք կը ստանձնեն ընտրական բանակցութիւնները եւ գործերը վարելու պաշտօնը:

**ԳՐԱԽՈՐ ԵՒ ԲԱՆԱԽՈՐ ՊՐՈՊԱԿԱՆՏ**

Ընդհ. ժողովը քննելով կուսակցութեան բանաւոր ու գրաւոր պրոպականտի խնդիրը, **Որոշեց՝**

1) Հրահանգել բոլոր ձեռնհաս մարմիններուն՝ կրկնապատկելու իրենց աշխատանքները այդ ճիւղին մէջ, եւ ստեղծել պրոպականտիստներ պատրաստելու դասընթացներ՝ կուսակցական գաղափարներն ու սկզբունքները լայնօրէն տարածելու նպատակով:

2) Յատուկ ուշադրութիւն դարձնել «Դրօշակ»ի, իբրեւ կուսակցութեան կեղերոնական օրգանի, կանոնաւորման վրայ՝ թէ՛ հրատարակութեան եւ թէ՛ բովանդակութեան տեսակէտէն:

Ծանօթ.– Հրահանգել բոլոր մարմիններուն, որ ամէն կերպ նպաստեն «Դրօշակ»ի տարածման:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

3) «Ազատամարտ»ի մէջ, որ կուսակցութեան թուրքիոյ շրջանի կիսապաշտօնական օրգանն է, հարստացնել տեղեկութիւններու բաժինը եւ աւելի տեղ տալ գաւառական կեանքին: Կանոնաւորելով հաշուական-վարչական մասը՝ թերթին հաշուական վիճակին նկատմամբ պարբերաբար իրազեկ պահել մարմինները, ինչպէս եւ ճշտութեամբ վճարել կուսակցութեան հասնելիք գումարը:

4) Կազմել հրատարակչական յատուկ մասնախումբ — Հայաստանի բիւրոյի միջոցով — պարտաւորութիւն դնելով անոր վրայ, կանոնաւորելու կուսակցութեան հրատարակութիւններու վաճառումն ու հաշիւները:

5) Դադրեցնել կուսակցութեան միջոցներէն նպաստ տալը «Փրօ-Արմենիա»-ի եւ Հայոց հարցին նուիրուած եւրոպական այլ օրգաններուն, այդ դրամական հոգը թողլով հասարակական այլ շրջանակներուն:

6) Բոլոր վայրերու մեր թերթերուն վրայ կուսակցական աւելի խիստ հսկողութիւն նշանակել՝ թէ՛ ուղղութեան եւ թէ՛ բովանդակութեան տեսակէտէն:

**ԱՐՏԱԳԱՂԹԻ ՀԱՐՑԸ**

Քննութեան ենթարկելով արտագաղթի այժմէական նշանակութիւն ունեցող խնդիրը, եւ նկատելով որ արտագաղթի գլխաւոր պատճառը երկրին մէջ տիրող քաղաքական եւ տնտեսական ծանր պայմանները, ինչպէս եւ գիւնտորական ծառայութեան հետ կապուած դժուարութիւններն են, — Ընդհանուր ժողովը այն կարծիքէն է թէ այդ ընդհանրական աղէտին վերջ տալու կամ գէթ զայն չափաւորելու համար, անհրաժեշտ է իրագործուած տեսնել մեր պահանջները, մասնաւորապէս շտապեցնել հողային հարցի լուծումը, ինչպէս կեանքի, գոյքի եւ ազգային ու քաղաքացիական իրաւունքներու ապահովումը:

Միեւնոյն ժամանակ, իբրեւ անյետաձգելի միջոցներ՝ արտագաղթի դէմ պայքարելու համար, ժողովը կարեւոր կը նկատէ՝

ա) Փութացնել գործադրութիւնը այն օրէնքին, որ կը տրամադրէ հայերու գիւնտորական ծառայութեան կատարումը իրենց նահանգային շրջանակներուն մէջ:

բ) Հաստատել ազգային մարմիններուն կից յատուկ օրգաններ, օգնելու համար արտագաղթի գոհերուն եւ ուժ տալու ներգաղթին:

գ) Անյապաղ ձեռք բերել ընդհանուր ներում, փախստական գիւնտորներուն եւ գիւնտորցուններուն համար:

դ) Լայն տեղ տալ կուսակցական մամուլին մէջ՝ գաղթային հարցի ուսումնասիրութեան եւ լուսաբանութեան:

Գալով Կովկասին, Ընդհանուր ժողովն իբր արտագաղթի գլխաւոր պատճառ կը նկատէ հողագրկութիւնն եւ սակաւահողութիւնը. ուստի կը թելադրէ կովկասեան մեր մարմիններուն՝ աշխատիլ իրագործելու կուսակցութեան ընդհանուր ժողովներուն պահանջներն ու որոշումները՝ հողային հարցին վերաբերմամբ:

**ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 25ԱՍԵԱԿԸ**

Արձագանգելով կուսակցական շրջաններու ջերմ փափաքը, եւ բաղձալով անգամ մը եւս հայ յեղափոխական մտքի արծարծման ծառայեցնել պատմական փաստ մը՝ որպիսին է մարտական Հայ Կուսակցութեան գոյութեան 25ամեակը,

Ընդհանուր ժողովը որոշեց՝ սօսել Դաշնակցութեան 25ամեակը, 1915 տարուայ ընթացքին:

Այս սօնը հանրօգուտ եւ կուսակցապէս արդիւնաւոր դարձնելու նպատակով

1) Ձեռնարկել Դաշնակցութեան 25ամեայ պատմութեան պատրաստութեան:







Ծանօթ.– Հրատարակել հին ընկերները՝ պատրաստելու մոնոգրաֆներ<sup>2</sup> ու յուշեր՝ ժողովածուի ձեռնարկով տպագրուելու համար:

2) Հրատարակել նոյն առիթով կուսակցութեան բոլոր գոհուած հերոսներու, գործիչներու եւ զին-  
ւորներու արկումը, համառօտ կենսագրականով, ինչպէս եւ նկարները այն վայրերուն, ուր անոնք գոր-  
ծեր ու ինկեր են:

3) Յանձնարարել երկրի իրաւասու մարմիններուն՝ հանրային յատուկ հանգանակութեամբ, հա-  
մեստ՝ բայց արժանաւոր արձաններ կանգնեցնել նահատակներուն գերեզմաններուն վրայ, որոնց յիշա-  
տակը յեղափոխական տեսակէտէն դաստիարակիչ արժէք ունի:

4) Կուսակցութեան միւլգէին մէջ համախմբել մեր գոհուած ընկերներու բոլոր յիշատակարանները, որոնք ապագային համագգային արժէք պիտի ունենան, եւ այդ միւլգէն, քանի աննպաստ են քաղաքական պայմանները, կեդրոնացնել ժընեւ, կուսակցութեան տան մէջ:

5) Կազմել, Ձեռնարկի առիթով, յատուկ Ֆոնտ՝ նահատակուած ընկերներու զաւակներուն կրթու-  
թեան նպաստելու համար:

6) Այդ տօնախմբութեան ծրագիրը պատրաստելու եւ գործադրելու նպատակով, հրահանգել Բիւ-  
րոններուն, որպէսզի կազմեն յատուկ մասնախումբ, ընթացք տալու համար այդ գործին, կուսակցու-  
թեան վայել եղանակով:

**ՌՈՒՄԱՍԱՆ**

**(Մեր ընթացիկ պահանջները)**

Գիտակցելով որ ընկերային քաղաքական շարժումները եւ մանաւանդ տնտեսական փոխ-յարաբերու-  
թիւններու պատկանող բարդ խնդիրները՝ յաջողութեամբ կրնան առաջ մղուիլ այն պարագային միայն,  
երբ կը բխին տեղական իրական պայմաններէ, եւ կրնան զարգանալ երբ անոնց կիրառումը կեանքի մէջ  
կ'արտայայտուի գործնական քայլերով,

Նկատելով որ կովկասահայ աշխատաւոր ժողովուրդը ենթակայ է բազմազան ինքնայատուկ կեղե-  
քումներու եւ զրկանքներու, ինչպէս օրինակ,

- ա) Մայրենի լեզուի եւ հայ դպրոցներու իրաւագուրկ եւ անհաւասար դիրքը:
- բ) Հայ գիւղացիի սակաւահողութիւնը բաղադատմամբ ռուս եւ ոչ-ռուս դրացիներու ունեցածին եւ պետական ազատ հողերու համար գոյութիւն ունեցող օրինական սահմանափակումները,
- գ) Իշխող դասերուն եւ ռուս տարրի օգտին միապետական ռեժիմին կողմէ ստեղծուած արտօնեալ դիրքը, որ կ'արտայայտուի մասնաւորապէս հայ տարրի սահմանափակ ներկայացուցչութեամբ պետա-  
կան Դոմայի մէջ, բաղադատմամբ միւս տարրերուն, եւ վերջապէս
- դ) Արդիւնաբերական եւ առեւտրական ասպարէզներու մէջ աշխատաւորութեան շահագործումը,

Համոզուած նոյնպէս որ իրական պայմաններէ բխած եւ գործնական քայլերով առաջ մղուած պայ-  
քար մը, թէ՛ կը բարձրացնէ Դաշնակցութեան բանակին ուժն ու գիտակցութիւնը եւ թէ՛ բաղձալի ար-  
դիւնքներու կրնայ յանգիլ՝ ինչպէս պետական վերակազմումի, նոյնպէս դրացի ազգերու հետ ունենա-  
լիք համերաշխութեան կրկնակ տեսակէտներէն:

Ընդհանուր ժողովը, համաձայն նախորդին, կ'որոշէ՝  
Հետապնդել Ռուսիոյ մէջ հետեւեալ կէտերու իրագործումը:

1) Ազգային դպրոցները պահպանելով իրենց ինքնավարութիւնը՝ հաւասար իրաւունք պէտք է վա-  
յելեն պետական դպրոցներու հետ, եւ հայ լեզուն, ինչպէս նաեւ միւս տեղական լեզուները, պետական  
լեզուին հետ, պէտք է գործածուին իւրաքանչիւրը իր պատկան շրջանի պետական եւ հանրային հաստա-  
տութիւններուն մէջ:

2.- Մեմագրութիւններ:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

2) Ապահովել հայ բնակչության թուլին համեմատ երեք հայ պատգամաւորի ընտրութիւնը՝ պետական Դումայի<sup>3</sup> համար:

3) Աւելցնել հայ գիւղացիին հողաբաժինները, վերացնելով արդէն գոյութիւն ունեցող սահմանափակումները, ուռագելով անջրդի հողերը եւ հայ համայնքներուն յատկացնելով պետական անտառ-արօտներ:

4) Հիմնել քոօփերաթիւ-սպառողական, մանրավարկային ընկերութիւններ հայ գիւղական շրջաններու մէջ, ինչպէս նաեւ բանուորական միութիւններ մեծ քաղաքներու մէջ:

5) Պահանջ դնել կովկասեան ժողովուրդներու կուլտուրական եւ տնտեսական առաջադիմութեան համար՝ մանր զեմըստոյական<sup>4</sup> միութիւններու հաստատման:

6) Պետական վերակազմումի գործին մէջ աշխատիլ ընկերվարական եւ առ հասարակ փոքր ազգութիւններու պատկանող կազմակերպութեանց հետ ձեռք ձեռքի տուած:

**ՊԱՐՍԿԱՍՏԱՆ**

Ութերորդ Ընդհանուր ժողովը լսելով Պարսկաստանի մասին տրուած գեկուցումը, եւ հիմնուելով նոյն երկրի իրական պայմաններուն վրայ՝

**Որոշեց.**

1) Հրահանգել Պարսկաստանի մարմիններուն՝ պարսիկ ձախակողմեան եւ դեմոկրատիք տարրերու աջակցութեամբ ամէն ջանք գործ դնել՝ նախապատրաստելու ժողովրդային զանգուածները, մանաւանդ վստահութիւն ներշնչող այն ուժերը, որոնք կրնան նպաստել քաղաքական կայուն կացութիւն առաջ բերելու Պարսկաստանի մէջ:

2) Լուրջ ուշադրութիւն դարձնել գիւղացիութեան վրայ եւ տեղական պայմաններու համապատասխան միջոցներով ստեղծել գիւղացիական կազմակերպութիւններ:

3) Աշխատիլ ձեռք բերել երեք հայ պատգամաւորի իրաւունք՝ Մէճլիսի մէջ:

4) Հետապնդել ապահովելու ազգային իրաւահաւասարութեան եւ հայկական ներքին ինքնուրոյնութեան սկզբունքները:

**ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ**

**ԵՐԵՔ ԲԻՒՐՈՆԵՐԸ**

**Ա) Արեւմտեան քիւր**

Հ. Յ. Դաշնակցութեան Ութերորդ Ընդհ. ժողովը լսելով Արեւմտեան բիւրոյի գրաւոր տեղեկագիրը իր գործունէութեան մասին, ուրկէ դուրս կը մնային վերջին երեսփոխանական ընտրութեանց ու բարենորոգումներու հարցերը, եկաւ հետեւեալ եզրակացութեանց՝

1) Որ Բիւրոն պէտք եղած եռանդը ցոյց չէ տուեր իր գլխաւոր գործի համար, հարկաւոր չափով չկազմակերպելով հանգանակութեան գործը, բան մը, որ իր բացարձակ կարողութեան սահմանին մէջն էր՝ ունենալով տրամադրելի ուժեր այդ նպատակին համար:

2) Որ Բիւրոն իրական ձեռնարկներ չէ ըրած թէ՛ կուսակցութեան պաշտօնական օրգան «Դրօշակ»ը եւ թէ՛ եւրոպական օրգան «Փրօ-Արմէնիա»ն հարկ եղած բարձրութեան վրայ պահելու համար:

3) Որ Բիւրոն թէ՛ եւ ի թիւհատի եւ Դաշնակցութեան յարաբերութեանց վերաբերեալ թղթերը չհրատարակելով՝ դուրս է եկեր Գործադիր մարմին ըլլալու հանգամանքէն, բայց այս բանին համար ունեցած է իր արդարացուցիչ պատճառները:

3.- Խորհրդարանի:

4.- Նահանգային խորհուրդներու յատուկ:





4) Որ Բիւրոն հակառակ անցեալ Ընդհ. ժողովի որոշման՝ իր կազմի անդամներուն թոյլ է տուեր ազգային վարչական մարմիններուն մասնակցիլ:

5) Որ բիւրոյական շրջանին մէջ Կազմակերպութեան ուժեղացման համար եւ ոչ մէկ ջանք թափած է:

6) Որ նախորդ Ընդհ. ժողովէն ընտրուած Բիւրոն իր լրիւ կազմով գործի գլուխ մնացած ըլլալով, եւ ընտրուած ու ապա հրաւիրուած անդամներու միջեւ ներդաշնակութիւնը պահած ըլլալով՝ առաջ եկած է կացութեան մը, որ մեծապէս նպաստած է Բիւրոյի գործունէութեան մէջ նկատուած սխալանքներուն եւ թերութեանց երեւան գալուն:

**Բ) Արեւելեան քիւր**

Ընդհանուր ժողովը լսելով Արեւելեան բիւրոյի գրաւոր զեկուցումը իր վերջին շրջանի գործունէութեան մասին, թեր ու դէմ վիճաբանութենէ ետք, եկաւ այն եզրակացութեան, որ՝

1) Արեւելեան բիւրոյի ընկերները կրճատելով կուլտուրական հարցերով՝ մոռցած են իրենց անմիջական պարտականութիւնները՝ կուսակցութեան տեղական վերակազմութեան մասին:

2) Արեւելեան բիւրոն չէ իրագործած Ընդհանուր ժողովին կողմէ իր վրայ դրուած գլխաւոր պարտականութիւնը՝ որ կը կայանար հողային հարցի լուծման ի նպաստ աշխատանքին մէջ:

3) Չէ կրցած յարատեւ եւ կանոնաւոր կերպով յարաբերութիւններ պահպանել կուսակցութեան գանազան հատուածներուն եւ մարմիններուն միջեւ:

Այս նկատումներով, բայց աչքաթող չընելով միեւնոյն ատեն Կովկասի մէջ տիրող քաղաքական աննպաստ պայմանները՝ որոնք մեղմացուցիչ հանգամանք կրնան ծառայել վերոյիշեալ թերացումներուն համար, Ընդհանուր ժողովը կը գտնէ որ տուեալ պայմաններուն մէջ կարելի էր աւելի գործ կատարել, ուստի Բիւրոյի գործունէութիւնը կը գտնէ անբաւարար:

Միեւնոյն ժամանակ Ընդհ. ժողովը գոհունակութեամբ կ'արձանագրէ այն փաստը, որ կուսակցական գործերը Կովկասի այլեւայլ շրջաններուն մէջ, անցեալին հետ բաղդատմամբ, շատ աւելի մխիթարական պատկեր կը ներկայացնեն:

**Գ) Հայաստանի քիւր**

Ընդհանուր ժողովը լսելով զեկուցումը Հայաստանի բիւրոյի գործունէութեան, եւ քննութեան առնելով զեկուցման մէջ առաջ բերուած կէտերն ու ներկայացուցիչ ընկերոջ բացատրութիւնները, գտաւ՝

1) Որ Հայաստանի բիւրոյի անդամներէն ոմանք հակառակ Ընդհ. ժողովի կողմէ ընտրուած ըլլալուն, չեն անցած գործին վայրը:

2) Որ Հայաստանի բիւրոյի այս վիճակը արդիւնք է նախորդ Ընդհանուր ժողովի սխալ կարգադրութեան:

3) Որ բիւրոյական գործունէութեան գլխաւոր մասը ծանրացած ըլլալով Բիւրոյի քանի մը անդամներուն վրայ, բաւարար չափով աշխատանք չէ թափուած:

4) Որ Հայաստանի բիւրոյի գործունէութեան բաւարար մասը՝ արդիւնք է Բիւրոյի անհատ ընկերներու ջանքերուն:

Հիմնուած այս պատճառաբանութեանց վրայ, եւ նկատելով որ Հայաստանի բիւրոյի գործունէութեան թերութիւնները հետեւանք են իր անկանոն կազմակերպումին, — Ընդհ. ժողովը անհրաժեշտ կը համարէ յաջորդ Բիւրոն աւելի բաւարար կերպով կազմել:





**ԲԻՐՈՆԵՐՈՒ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ**

Ընդհանուր ժողովը քննելով գոյություն ունեցող երեք բիւրոներու հարցը, եւ նկատելով որ մեր գործունէութեան կեդրոնը պէտք է քայլ առ քայլ դէպի Երկիր փոխադրել,

**Որոշեց՝**

1) Պահել Հայաստանի բիւրոն, եւ անոր իրաւասութեան ենթարկել այն շրջանն եւս, որ մինչեւ այժմ յատուկ էր Արեւմտեան բիւրոյին:

2) Զնջել Արեւմտեան բիւրոն եւ Պոլսոյ մէջ ունենալ Հայաստանի բիւրոյի հատուած:

3) Պահել Արեւելեան բիւրոն, իր այժմեան կանոնական իրաւունքներու սահմանին մէջ:

4) Կազմել Հայաստանի բիւրոն տասն անդամէ, Երկիր՝ 6, Պոլսոյ հատուած՝ 3 եւ ժընեւ՝ 1: Արեւելեան բիւրոն՝ 7 անդամէ – 5-ը ընտրուած Ընդհանուր ժողովէն, 2-ը Կովկասեան Ռայոնական ժողովէն:

Ծանօթ.– Բիւրոներու իրաւասութեանց եւ ընտրութեանց մանրամասնութիւնները ճշտուած են Ընդհանուր ժողովի արձանագրութեանց մէջ<sup>5</sup>:

**ՊԻՒՏՃԷ**

Ընդհանուր ժողովը՝ հիմնուած մարմիններու դրամական կարողութեան եւ պատգամաւորներու լուսաբանութեանց վրայ, կազմեց կուսակցութեան ընդհանուր մուտքի նախահաշիւը, որոշելով այն գումարը, որ պէտք է վճարէ ամէն մարմին:

Իւրաքանչիւր մարմին պարտաւոր է ճշտօրէն իրագործել այս որոշումը, որուն մանրամասնութիւնները շրջաններուն պիտի հաղորդուին կուսակցական ճանապարհով:

Գալով ծախքերուն՝ ժողովը որոշեց.

Իւրաքանչիւր Կ. կոմիտէ իր ամբողջ մուտքին 20%ը պիտի յատկացնէ տեղական ծախքերուն, 10%-ը տեղական գործիչներուն, իսկ 70%-ը պէտք է մտցնէ կեդրոնական արկղը:

Այս 70%[էն] գործի վայրերն իրաւունք ունին պահանջելու այնքան, որքան կ'որոշէ իրաւասու-պատկան մարմինը, շրջանի Բիւրոյին համաձայնութեամբ:

**ԸՆԿԵՐԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՖՈՆՏ**

Ընդհանուր ժողովը լսելով Ամերիկայի շրջանին կողմէ կարօտ ընկերներու օգնութեան մասին եղած առաջարկը, եկաւ հետեւեալ եզրակացութեան:

1) Որքան ալ աշխատանքի անկարող ընկերներուն օգնելը կուսակցութեան պարտականութիւնն է, բայց թոյլատրելի չէ կուսակցական սնտուկէն նպաստ տալ այդ նպատակով:

2) Այդ պարտականութիւնը կ'իյնայ Դաշնակցութեան Կարմիր խաչին վրայ, որ կուսակցութեան տալիք բաժինէն զատ, մնացած գումարին 2/3 մասը պէտք է յատկացնէ յիշեալ ձեռնարկին:

3) Սոյն նպատակին համար գոյացած դրամը պէտք է կեդրոնանայ մէկ տեղ եւ գտնուի երկու բիւրոներու հսկողութեան տակ:

5.- 8րդ Ընդ. ժողովի արձանագրութիւնները չեն հասած մեզի եւ տարբեր աղբիւրներու հաղորդած տեղեկութիւնները կը ծառայեն աւելի շփոթ առաջացնելու: Ստոյգ կերպով կրնանք հաստատել, որ Հայաստանի բիւրոյի համար ընտրուած անդամներն են՝ Ռոստոմ, Ակնունի, Վռամեան, Արամ Մանուկեան, Ս. Վրացեան, Ռուբէն Տէր Մինասեան, Արմէն Գարօ, Վանայ Սարգիս, Ռուբէն Զարդարեան (վերջին երեքը Պոլսոյ կամ Թուրքիոյ հատուածին համար) եւ Միք. Վարանդեան (ժընեւ, «Դրօշակ»ի խմբ.):

Արեւելեան բիւրոյի համար ժողովը իրաւունք ունէր ընտրելու 5 անդամ, մնացեալ երկուքը ընտրելի էին Կովկասի Ռայոնական ժողովէն: Ունինք սակայն 6ին անունները,– Խաչ. Կարճիկեան, Աւ. Սահակեան (Հայր-Աբրահամ), բժ. Յ. Զարեան, Արթ. Գիլյանդանեան, Ս. Արարատեան, Ա. Շահխաթունեան:





**ՈՒԺԵՐՈՒ ԲԱՇԽՈՒՄ**

Ընդհանուր ժողովը, նկատի առնելով զանազան շրջաններէ եղած պահանջը՝ ազատ գործիչներ ունենալու մասին, եւ ընդունելով գործիչ ուժերու բաշխման կարեւորութիւնը՝

Որոշեց՝

Բիւրոններուն թողուլ այդ հարցին վերջնական կարգադրութիւնը, յանձնարարելով յարաբերութեան մէջ մտնել կարիք ունեցող մարմիններուն եւ տրամադրելի ընկերներուն հետ:

**ԱԶԱՏ ԳՈՐԾԻՉՆԵՐ**

Նկատի ունենալով որ կազմակերպական գործը կը տուժէ շնորհիւ այն հանգամանքին, որ ընկերները կը մերժեն թողուլ իրենց մասնաւոր զբաղումները եւ ամբողջովին նուիրուիլ կազմակերպական գործին՝ ապրուստի միջոցներ ստանալով կուսակցութենէն.

Ժողովը որոշեց՝

Համոզել ընկերները, որ զիջող ըլլան այդ հարցին մէջ, յանուն կուսակցական շահերու եւ զոհելով անձնական յարմարութիւնները՝ թողուն իրենց մասնակի զբաղումները եւ ամբողջովին նուիրուին կուսակցական աշխատանքին:

**ԴԱՏԱԿԱՆ**

«Կանոնագրին» թողլով դատական խնդիրներու քննութեան վերջնական ճշտումը, ժողովը ընդունեց հետեւեալ որոշումները.

1) Դատական գործերու վերաքննութիւնը կ'աւարտի երեք աստիճանի մէջ, հետեւեալ կարգով՝  
ա) Խմբի մէջ ծագած դատը կ'աւարտի կոմիտէի որոշումով (Խումբ — Ենթակոմիտէ — Կոմիտէ):  
բ) Ենթակոմիտէի մէջ ծագած դատը կ'աւարտի Կ. կոմիտէի որոշումով (Ենթակոմիտէ — Կոմիտէ — Կ. կոմիտէ):

գ) Կոմիտէի մէջ ծագած դատը կ'աւարտի Շրջանային ժողովին մէջ (Կոմիտէ — Կ. կոմիտէ — Շրջանային ժողով):

դ) Կ. կոմիտէներու մէջ ծագած դատերը կ'աւարտին Բիւրոյի մէջ (Կ. կոմիտէ — Շրջ. ժողով — Բիւրո):  
ե) Բիւրոններու եւ Պատասխանատու մարմիններու դատերը կը քննուին Խորհրդի մէջ՝

զ) Պատասխանատուութեան կ'ենթարկուին այն մարմինները, որոնք անփութութեան պատճառով որոշ պայմանաժամին չեն աւարտեր իրենց ներկայացուած դատերը:

2) Ընդհանուր ժողովը դատական գործերով չի զբաղիր, անիկա ունի միայն վճռաբեկի դեր, սոսկ իրմէ բխած մարմիններուն վերաբերմամբ:

Ծանօթ.— Ընդհանուր ժողովին եկած մէկ քանի դատական գործերը վերադարձնել պատկան մարմիններուն:

6.- Դաշնակցութեան Խորհուրդը կուսակցութեան վերին մարմինն էր, որ Ընդհ. ժողովները բաժնող ժամանակաշրջանին կը գումարէր չնախատեսուած կարեւոր պարագաներուն որոշումներ կայացնելու համար: 7րդ Ընդհ. ժողովի որոշումով Խորհուրդը կը բաղկանար երեք քիւրոներու եւ Ամերիկայի Կ. կոմիտէի ներկայացուցիչներէն:







## ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

125

### ԿԱՆՈՆԱԳԻՐ

*Մինչև ել յաջորդ Ընդհանուր ժողովը՝ ղեկավարուելի 1907-ի Ընդհանուր ժողովէն վաւերացուած կանոնագրով՝ քանի որ քաղաքական պարագաները ստիպելով փակել ժողովը, թոյլ չտուին աւարտել կանոնագրի վերամշակման գործը:*

Ծանօթ.– Յանձնարարել երկու բիրտներուն՝ որ իրենց վերաքննած կանոնագիրը ուղարկեն Մարմիններուն դիտողութեան եւ ապա այդ կանոնագիրը առաջարկեն յաջորդ Ընդհանուր ժողովի վաւերացման:

### ՀԱՇՈՒԹԵՔՆՆԻՉ ՄԱՐՄԻՆ

*Ջնջել կեդրոնական Հաշուեքննիչ մարմինը, որուն գործունէութիւնը, ինչպէս փորձերը ցոյց տուին, եղաւ անպտուղ: Այդ պարտականութիւնը յանձնել Բիւրոններուն, որոնք կը հրահանգուին պահելու յատուկ հաշուապահ մը:*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

*Ընդհանուր ժողովը, անհրաժեշտ համարելով Հայաստանի մեթոտիկ ուսումնասիրութեան գործը, կը յանձնարարէ Հայաստանի բիւրոյին՝ այդ մասին պատրաստել համառօտ հրահանգներ, գլխաւորապէս վիճակագրական եւ տնտեսական խնդիրներու շուրջ, եւ ուղարկել մեր մարմիններուն:*

### ՊԱՏՓԱՄԱՒՈՐՆԵՐ

*Ընդհանուր ժողովը պարտականութիւն կը դնէ բոլոր պատգամաւորներուն վրայ, մանրամասն գեղուցում ներկայացնել իրենց շրջաններուն՝ ժողովի զբաղումներուն եւ որոշումներուն նկատմամբ, որպէսզի բոլոր մարմինները լիովին իրազեկ ըլլան կուսակցութեան Գերագոյն ժողովի աշխատանքին:*

### ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

*Հրաւիրել երկու Բիւրոնները՝ խստօրէն հսկելու թէ՛ կանոնագրի եւ թէ՛ Ընդհանուր ժողովի որոշումներուն գործադրութեան վրայ, կուսակցական շարքերուն մէջ անկարգապահական արարքներու տեղի չտալու նպատակով:*

### ԻՆՆԵՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

*Քաղաքական բացառիկ պարագաները նկատի ունենալով, որոշուեցաւ Թ.րդ Ընդհանուր ժողովը գումարել 1915 թուին՝ Երկրի մէջ:*

Ծանօթ.– Եթէ հարկադրիչ պարագաներ գոյութիւն չունենան, Բիրտներուն իրատեք կը տրուի ժողովը նշանակել 1916-ին: Ասկէ զատ, եթէ հանգամանքները արգելք հանդիսանան, նոյն բիրտները կրնան ժողովը գումարել Արտասահման:





Փաստ. 1545-4

**Ա 4.– ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ  
(ՀԵՌԱԳԻՐ)**

Ժողովի աւարտին «Դրօշակ»ին եւ դաշնակցական մամուլին դրկուած է հետեւեալ գրութիւնը, որուն կողքին Ակնունդի ձեռագրով գրուած է «*Պէտք է տպել իբրեւ հեռագիր*» – **ԽԱՉԱՏՈՒՐ:**

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ VIIIՐԴ ԺՈՂՈՎԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ԱՐԵԻԵԼԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ, ԵՒ ՏԵԻԵՑ ՅՈՒԼԻՍԻ 15-30:

ԺՈՂՈՎԻՆ ՊԱՏԳԱՍԱԻՈՐՆԵՐ ԵԿԱԾ ԷԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ, ԹՈՒՐ-ՔԻԱՅԻ ԿԱՐԵԻՈՐ ԿԵԴՐՈՆՆԵՐԷՆ, ԿՈՎԿԱՍԷՆ, ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ, ԲԱԼԺԱՆԷՆ, ԵԳԻՊՏՈՍԷՆ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ: ՕՐԱԿԱՐԳԻ ՄԷՋ ԳՏՆՈՒՈՂ ԲՈԼՈՐ ԷԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ ԿԱՅԱՑԱԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԱՉԱՅՆՈՒԹԻՒՆ, ԵՒ ԺՈՂՈՎԸ ՅՐՈՒԵՑԱԻ ՄԵՇ ՈԳԵԻՈՐՈՒԹԵԱՄԲ: ՊԱՏԳԱՍԱԻՈՐՆԵՐԸ ԱՐԴԷՆ ՄԵԿՆԵՑԻՆ ԻՐԵՆՑ ՎԱՅՐԵՐԸ: ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ IXՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ 1915-ԻՆ:

ԿՈՍԻՏԷ





Փաստ. 103-29

**Բ 1.– ՅՈՎԱՄԷՓ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԷՆ ԹԵՀՐԱՆԻ ԿԵՂԻ. ԿՈՄԻՏԵԻՆ**

Կարին, 31 Յուլիս 1914

Ինչպէս ծանօթ է, Ա. աշխարհամարտի բռնկումին հետեւանքով Հ.Յ.Դ. Ութերորդ Ընդի. ժողովը փակուեցաւ հապճեպով, տակաւին իր աշխատանքները լրումի չհասցուցած: Ընդի. ժողովին յատկացուած այս երկրորդ բաժնին մէջ կը տրուին գրութիւններ առ հասարակ ժողովին մասնակիցներու գրչին պատկանող: Բացի տիրող ընդհանուր մթնոլորտէն եւ կայացուած գլխաւոր որոշումներէն, կը նկարագրուի պատերազմի յայտարարութեան հետեւանքով Թուրքիոյ տարածքին ստեղծուած ահազանգային դրութիւնը, զօրակոչի դրութեան հաստատումը եւ, մանաւանդ, թրքական իշխանութեանց ձեռք առած բիրտ միջոցները դաշնակցական պատգամաւորներէն իրաքանչիւրին նկատմամբ, վատահաբար իբրեւ արդիւնք թուրքերուն համար ոչ հաճելի այն պատասխանին, որով կը մերժուէր Կարին փութացած Իթքիատի պատգամաւորներուն առաջարկը, այն է՝ ռուս-թրքական պատերազմի պարագային ապստամբութիւն բարձրացնել Կովկասի մէջ (Տեսնել այս մասին Վրաստանի գրութիւնը, էջ 133-35):

*Սիրելի ընկերներ,*

Երէկ երեկոյեան վերջացան Ը[նդհ.] ժողովի զբաղմունքները եւ տեղի ունեցաւ պաշտօնական փակումը: Յուզիչ, միեւնոյն ժամանակ ոգեւորիչ էր փակման առթիւ եղած խօսքերը: Մեզ բոլորիս սիրելի հին ընկերների խօսքից յետոյ հետզհետէ խօսեցին Կովկասի, Պարսկ[աստան]ի, Ամերիկայի, Բալկանի եւ ապա Երկրի ընկերները: Բոլորի ասածների մէջ էլ մեր ապագայի, յոյսի եւ աշխատանքի շեշտն էր հնչուում:

Զբաղմունքների մանրամասն զեկուցումը մօտիկ ապագային թողնելով՝ անձամբ տալու համար, այժմ շտապում եմ համառօտ տեղեկութիւններ եւ իմ տպաւորութիւնս հաղորդել:

Ամենակարեւոր արժէքը այս Ը. Ժ.ի կայանում է նըրանում, որ նա կարողացաւ իր իսկական ուղիի մէջ դնելու մեր կազմակերպութիւնը, որը վերջին մի երկու տարուայ համեմատաբար ազատութիւնից ազդուելով, նշաններ էր ցոյց տալիս շեղելու իր իսկական նպատակից եւ այսպէս ասած լեզալ գործունէութիւն ունենալու: Մտքերի երկար փոխանակութիւններից, բուռն վէճերից, խիստ քննադատութիւններից յետոյ, Ժ.ը Դ[աշնակցութեան] անը յատուկ համերաշխութեամբ տուեց մի շարք անհրաժեշտ եւ գնահատելի որոշումներ: Կազմակերպութիւնը նորից կանգնած է իր բարձրութեան վրայ, գործելու է իր նախկին ուղղութեամբ ու աւանդութիւններով:

Այդ որոշումներով, ինչ խօսք, շեշտուել է նախ ժողո-

վրդի պաշտպանութեան սկզբունքը, շեշտուել է ինքնագործութեան, ոյժերի լարումը եւ ժողովրդի սեփական միջոցներով նպատակին հասնելու ուղիղ տեսակէտը: Այս գործի համար ընտրուել է յատուկ մի մարմին: Ամենանուազագոյն չափերի է հասցրած դիպլոմատիական յարաբերութիւնների գործը. մեր ընկերները պէտք է մի կողմ թողնեն այդ միջոցը եւ միայն իրենց ոյժերի վրայ վստահեն: Նուազագոյն չափի է իջեցուած կուլտուրական գործունէութիւնը: Բարձր մարմնի անդամները (Բիւրօ, Կ. Կ.) չպէտք է վարչական գործեր ստանձնեն իսկ անհատ դաշնակցականների նման գործերի մէջ մտնելը պայմանաւորուած է պատկան մարմնի համաձայնութեամբ: Վարչական գործեր ասելով հասկացուում է հոգաբարձ[ութիւն], թաղական խորհուրդ, բարեգործակ. ընկ. վարչութիւն եւն.: Դ.իւնը մի ուղիղ ճանապարհ ունի. նրա մարմինների անդամներն էլ այդ ճանապարհը հարթելու աշխատանքին պիտի լծուեն եւ ոյժերը այլ ասպարէզներում չլլատեն:

Այս ընդհանուր տեսակէտը ղեկավարող սկզբունք է եղել այս Ժ.ի համար: Բիւրոները Յ-ից երկուսի են իջեցուած – Արեւելեան՝ իր նախկին սահմաններով (Պարսկ. այդ սահմանի մէջ է) եւ Հայաստանի: Արեւմտեանը վերացուած է: Սրա փոխարէն ընդունուել է Հայաստանի բերրոյի սեկցիայի գոյութիւնը Կ. Պոլսում: Երկու բիւրոների կազմերն էլ ուժեղացուած է: Հայաստ. Բ.ի անդամների խոշոր մասը երկրում պիտի մնան եւ այնտեղ գործեն: Վերացուած է Կեդր. հաշուեքննիչ մարմինը, որ այս մի տարում բոլորովին անպտուղ գործունէու-





թիւն է ունեցել: Նրա փոխարէն յանձնարարուել է բիւրոյին ունենալ յատուկ հմուտ մի հաշուապահ:

Իր սկզբունքներից մեկնելով Լ. Ժ. որոշել է բողոք արտայայտել ներկայ պատերազմների դէմ եւ հրաւիրել Օսմ. կառ[ավարութիւնը], որ իր երկրի եւ հայերի շահերի տեսակէտից շարունակի մնալ կատարեալ չէզոք դրութեան մէջ:

Դէպի թուրք կառ. եւ իթթիհատը բռնելիք դիրքի վերաբերմամբ եղած որոշումը ընդդիմադիր եւ քննադատի դերն է շեշտում եւ պայքարն անհրաժեշտ համարում երկրի շահերի տեսակէտից: Պաշտօնական ոչ մի յարաբերութիւն. ընկերները անհատաբար հանրային բնակարանութիւն ունեցող գործերի համար միայն յարաբերութիւն կարող են ունենալ: Պարլամենտի ընտրութիւնների հարցը խիստ աղմկայից նիստեր խլեց: Գիտէք արդէն, որ Դրդ Լ. Ժ. որոշել էր բոյկոտ անել, սակայն այժմ պարլամենտում մենք 3-4 պատգամաւոր ունինք: Որոշուեց նրանց չճանաչել Դաշ. պատգամաւոր եւ հրաւիրել որ հրաժարին պարլամենտից: (Այս խնդրի մանրամասն գեկուցումը անձամբ): Ապագայ ընտրութիւններին մասնակցելու խնդիրը հետեւեալ ձեւակերպում ունեցաւ — պահպանել ազգային եւ համեմատական ընտրութիւն. մերժման դէպքում բոյկոտի խնդիրը ձեռնա մարմինների կողմից հարցը անկէտայի<sup>7</sup> դնել մարմինների մէջ եւ մեծամասնութեան որոշման համաձայն առաջնորդուել: Ռուսիայի վերաբերմամբ ընդունուել է Դրդի [Ընդհ. ժողով] որոշումը այն յաւելումով, որ ռուս քաղաքականութեան վերջին մի երկու տարուայ մեղմութիւնը չպիտի խաբի հայերին եւ մասնաւորապէս մեր շարքերին, որոնք գիտակցելով մեղմութեան տակ թագնուած յետին նպատակը, չպիտի կասեցնեն իրենց գործունէութիւնը: Պարսկ[աստան]ի վերաբերմամբ հետեւեալ բանաձեւը ընդունուեց:

Լ. Ժ. լսելով Պարսկ. մասին եղած գեկուցումն ու տեղեկագիրը եւ մեկնելով Պարսկ.ի տուեալ պայմաններից, որոշեց

1) Հրահանգել իր մարմիններին տեղական ձախակողմեան եւ դեմոկրատիկ տարրերի աջակցութեամբ ամէն ջանք գործ դնել նախապատրաստելու մասսաները, բայց մանաւանդ վստահութիւն ցերչնչող այն ոյժերը, որոնք ասպարէզ պիտի գան քաղաքական փոփոխութիւնների յարմար մոմենտին:

2) Լուրջ ուշադրութիւն դարձնել գիւղացիութեան վրայ եւ տեղական պայմաններին համապատասխան միջոցներով առաջ բերել գիւղական կազմակերպութիւններ:

3) Աշխատիլ պարլամենտում կիրառել տալու իրա-

ւահաւասարութեան սկզբունքը:

4) Հետապնդել ապահովելու ազգային իրաւահաւասարութեան եւ հայկական ներքին ինքնուրոյնութեան սկզբունքները:

Ժող.ը զբաղուեց պրոպագանտայի (գրաւոր եւ բանաւոր), եւրոպական եւ մեր շրջանի), զինուորագրութեան, Դաշնակց[ութեան] 25ամեակի, տրամադրելի ոյժերի եւ նրանց բաշխման, բիւջէի եւ այլ հարցերով: Կազմակերպ. բիւջէն սովորական պայմաններում այս տարի ընդունուեց 1/2 միլիոն Փրանք (արտակարգ պայմաններում եւ արտակարգ միջոցներով ի հարկէ շատ աւելի կը լինի): Իւրաքանչիւր մարմին տուեց իր բիւջէն: Պարզերես դուրս գալու համար ես մեր շրջանի մուտքը 4000 Փրանք տուեցի: Տրուած թուերը պարտաւորիչ են: Անշուշտ մենք 4000ից աւելին կարող ենք տալ (անդամավճ[ար]., հանգանակութիւն եւն.), բայց դիտմամբ քիչ գրեցի, որ յետոյ չամաչենք: Բիւջէի բաշխումը որոշուել է հետեւեալ կերպով — 20% տեղական ծախսեր, 10% գործիչ իսկ մնացած 70% պիտի մտնի կեդրոնական սնտուկը, որին պիտի դիմել անհրաժեշտ կարիքների դէպքում: Մանրամասնութիւնները կը տամ յետոյ:

Ժ.ը պիտի շարունակուէր, դեռ մի քանի օր էլ, սակայն պատերազմն ու այստեղի գորակոչը խանգարեցին այդ: Ընկերների մի քանիսը 3-4 օր է, որ ստիպուած են եղել մեկնել, միւսներից մի մասն էլ զինուորներ են: Այդ պատճառով մի շարք երկրորդական խնդիրների վերաբերմամբ ընդհանուր սկզբունքներ ու դիրեկտիւններ<sup>8</sup> տալը յանձնուել է մի յանձնաժողովի, որ իր նիստերը շարունակելու է մի շաբաթ: Սրա վրայ պարտք է դրուած բանաձեւերն ու որոշումները շուտափոյթ հրատարակել եւ մարմիններին ուղարկել:

Տեղեկագրերն այնպէս ինչպէս որ գրուած էին չկարդացուեցին, իւրաքանչիւր պատգամաւոր համառօտ կերպով տուեց իր շրջանի կազմի մասին տեղեկութիւն եւ գլխաւոր գործունէութեան ուրուագիծը: Հա, մոռացայ գրելու, որ դատական խնդիրները մնում են նախկինը եւ մենք Շրջ. ժող[ովի] այն որոշումը թէ «թողնել Ընդ. ժողովի վճռին» պէտք է առաջարկել մեր բարձր մարմինն՝ Արեւելեանին: Միւս խնդիրների մասին խօսք էլ չեղաւ, դրանք մեր իրաւունքն էր եւ մենք դուրս չենք եկել մեր իրաւասութեան սահմաններից: Վաղը մեկնում եմ, հագիւ կարելի է եղել կառք գտնել, քանի որ ձիերը վերցուած են գորքերի պէտքերի համար: Շտապում եմ մեկնել, որովհետեւ երկիւղ եմ կրում, որ սահմանը կը փակուի: Կառքը համեմատաբար շատ թանգ է: Թիֆլիսից ես հասցէ կը տամ, որպէսզի եթէ մինչեւ իմ գալս որոշ խնդիրների համար նոր տեղեկութիւնների կամ բացատրութիւնների կարիք լինի գրեմ ձեզ:

Ընկերական բարեկներով  
Ֆիլիպ<sup>9</sup>

7.- Այսինքն՝ մարմիններու կարծիքին դիմել:  
8.- Յուցմունքներ:  
9.- Ֆիլիպ՝ ծածկանուններէն սէկն էր Ընդ. ժողովին Թեհրանի պատգամաւոր Յովհաննիսեան Յովսէփի:





Փաստ. ՍՎ. 6-6

Բ 2.- Ս. ՎՐԱՑԵԱՆԷՆ Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՆՏ. ԿՈՄ.ԻՆ

Oqnuatnu 12/25, 1914, Կարիի

Սիրելի ընկերներ,

Կը զգամ որ անհամբերութեամբ լուրերու կը սպասէք, իսկ իմ նամակները կ'ուշանան: Պատճառը, անշուշտ, դժուար է կուսակ. վերջին ժամանակները հոս ստեղծած են այնպիսի կացութիւն, որ ամէն անգործ քայլէն վտանգներ կարող է ծնիլ, իսկ գրաքննութեան եւ այլ պատճառներով ես անյարմար համարեցի գրել ներքին հարցերու մասին: Հիմա կը ջանամ ձեզ Եզով-բոսեան լեզուով<sup>10</sup> քանի մը տեղեկութիւններ հաղորդել՝ նամակը մինչեւ Տրապիզոն ուղարկելով մարդու ձեռքով եւ այնտեղէն օտար փոսթայով: Աւելի էնթիմ<sup>11</sup> ինդիքները կը բերեմ անձամբ:

Ընդհ. ժողովը, ինչպէս արդէն գրած եմ, վերջացաւ շատ յաջող: Քաղաքական պատճառներով ստիպուած եղանք ժողովը որոշուած ժամանակէն առաջ փակել եւ քանի մը կէտեր թողնել յաջողը Ընդհ. ժողովին, բայց եղածն ալ խիստ գոհացուցիչ էր: Օրակարգի քարտինալ<sup>12</sup> արժէք ունեցող կէտերը լուծուեցան մեզ համար ցանկալի իմաստով. թէ բիւրոյական գործունէութեան քննութիւնը, թէ ուժերուն դասաւորումն ու յաջողք քայլերը, ամէն ինչ մեր փափաքած ձեռով վերջացաւ: Առանց մանրամասնութիւններու մէջ մտնել կարողանալու, հաճոյքով կ'իմացնեմ ձեզ, որ կուսակցութիւնը այս Ընդհ. ժողովէն պարզերես ու բարոյապէս զօրացած դուրս եկաւ: Այն ախտաւոր նշանները, որոնց առթիւ այնքան յուզուած էինք իր ատենին, բացարձակապէս դատապարտուեցան, եւ կը յուսամ, որ կը վերնան ընդմիջտ մեր մէջէն: Ժողովի մասին առաջին իսկ պատեհութեամբ կ'ուղարկեմ ձեզ ընդարձակ տեղեկագիր, որ պէտքէն մինչեւ վերադարձս յայտնէք կոմիտէներուն: Վերադարձս, դժբախտաբար, քիչ մը պիտի ուշանայ, ինչ որ կուսակցական կեանքի հրամայական պահանջն է: Ընդհ. ժողովը այս տարի ջնջեց Արեւմ[տեան] բիւրոն եւ գործունէութիւնը ամբողջապէս դրաւ Հայաստանի բիւրոյի ուսերուն վրայ: Ուժերու բաշխումի միջոցին պարզուեցաւ, որ մեր ուժերը համեմատած եղած պահանջի հետ՝ անբաւարար են. նոր ուժեր չկան. մեր երիտասարդ գործիչները հեռու կը փախչին գաւառէն: Ուժերու բաշխման միջոցին, բնականաբար, առաջին պարտականութիւնը կ'ընկնէր ժողովի մասնակցողներու վրայ, որոնք վճիռներ կ'արձակէին, որոնց գործադրողներ պէտք էին: Ի միջի այլոց, ընկերները շատ ստի-

պեցին, որ ես մնամ իբրեւ Բ[իւրո]ի անդամ երկրի մէջ: Ճիշդն ըսած, ես ինձ բաւական անհաճոյ դրուածեան մէջ դրի խոստանալով վերադառնալ Ամերիկա եւ այն ալ այսպիսի ժամանակ, երբ այնքան գործ կայ եւ այնպէս քիչ են մարդիկ: Ես յայտնեցի, թէ խոստացել եմ գնալ Ամերիկա: Արդար կերպով առարկեցին, թէ Ամերիկայի մասին մտածելու ժամանակը չէ, քանի որ ամբողջ երկիրը հրեհէն առջեւ է. յայտնեցին, որ Ընդհ. ժողովի կողմէն կը դիմեն Ամերիկայի Կենտ. կոմիտէին, իմացնելով իմ մնալու անհրաժեշտութիւնը: Ես, յամենայն դէպս, աներեսութիւնը ունեցայ միջին ճանապարհ մը ընտրելու: Ժողովը ընտրեց Հ[այաստանի] Բ[իւրո]ի անդամ, պայմանաւ որ ես երթամ Ամերիկա, մէկ շրջան ընեմ՝ զեկուցանելով կոմիտէներուն Ընդհ. ժողովի մասին եւ դառնամ երկիր: Իսկ առ այժմ մինչեւ այս դրուածեան պարզուիլը, որոշուեցաւ որ մնամ Կարիի՝ Ակնոնիի հետ բիւրոյական ընթացիկ գործերը վարելու համար. եթէ ռուս-տաճկական պատերազմ ըլլայ, այն ատեն, բնականաբար, ես կը մնամ այստեղ եւ կը մասնակցիմ ընդհանուր գործին, իսկ եթէ չլինի, առաջին իսկ պատեհութեամբ կ'ուղեւորուիմ դէպի Ամերիկա: Գիտնալով հանդերձ Ամերիկայի վիճակը, ընկերներ, պիտի ինդրեմ յատկապէս, որ այս ակամայ ուշացումին համար չմեղադրէիք բարձր մարմինները եւ իբրեւ վնասակար քայլ չնակատէիք: Կը հաւատացնեմ ձեզ, մեր վիճակը այնպէս ծանր է ու քրիթիքական եւ անակնկալներով յղի, որ պարզապէս յանցանք կը լինի քիչ-շատ գործի ընդունակ ուժերը հեռացնել երկրէն: Ամերիկայի գործերը լաւ կ'երթան, որովհետեւ այս փոթորիկներու առջեւ այդտեղի ամէն ընկեր կը կրկնապատկէ իր ուժերը: Շատ պատեհութիւններ փախցուցինք. գէթ այս անգամ մեր պարտականութեան գիտակցութիւնն ունենանք: Հագարաւոր կարելիութիւններ կան եւ մենք մեզ այս ընդմիջտ կը զգանք հրաբուխի մը բերնին, ամէն ընդմիջտ կարող է քաթասթրոֆի վրայ հասնել. շատերս պատրաստ ենք այդ քաթասթրոֆին դիմագրաւելու եւ եթէ պէտք ըլլայ, մեր կեանքով առաջ տանելու այն դրօշակը, որի վրայ գծուած է մեր նպատակը: Սրտառու է ընկերներու ցրուումը գաւառներու մէջ, ամէն ոք կ'երթայ՝

10.- Այսինքն՝ քողարկուած, փոխաբերական լեզուով:  
11.- Մտերիմ, անձնական բնոյթ կրող:  
12.- Գլխաւոր, կարեւոր:







լուրջ ու մտախոհ՝ անծանօթ ապագայի մը առջեւ, բայց բոլորս անհուն կերպով ուրախ ենք, որովհետեւ հիմա է, որ առիթ պիտի ունենանք պէտքին պէս ծառայելու մեր գործին: Այս ընդհանուր խօսքերը թող ձեզ շատ բան ըսեն. գիտցէք, որ բացառիկ մոմենտի մը առջեւ կը գտնուինք եւ ո՞վ գիտէ, վաղը՝ միւս օր ո՞վ ողջ կը լինի մեզմէ եւ ո՞վ կ'երթայ աւելցնելու շարքը այն նահատակներու, որոնց արիւնով ներկուած է այս դժբախտ երկրի դաշտ ու ձորը:

Ինչպէս կը տեսնէք, այս պարագաներու տակ Ամերիկայի համար գործիչներու խնդիրը երկրորդական նշանակութիւն կը ստանայ, բայց կերպով մը կարելի եղաւ Արսէնը<sup>13</sup> փրցնել ու ճանապարհ ձգել այդ կողմերը: Արսէնին գրած էի, որ շտապէ գալ Կարին, այսօր եկաւ Տարօսէն եւ վաղը ճամբու կը դնեմ դէպի Պոլիս, որտեղէն պիտի ջանայ նալ մը գտնել ու գալ: Անցեալ օր Պոլիս հեռագրով հարցում ըրի, թէ Ամերիկա գացող ի՞նչ նալ կայ. պատասխանեցին, թէ նալ չկայ: Բայց ես յոյս չեմ կտրած ու կը խորհիմ, որ Արսէնը կարող կ'ըլլայ թէկուզ յունական նալ մը ճարել ու հասնիլ Ամերիկա: Արսէնը կը յուսամ, որ գոհացում կու տայ լիապէս մեր շրջանին. երիտասարդ, պաշարով եւ եռանդուն տղայ մըն է: Մնարին<sup>14</sup> Պոլսէն գրեցի ու խնդրեցի, որ անմիջապէս պատասխանէ, թէ ի՞նչ է որոշած ընել, — կ'ուզէ՞ Ամերիկա վերադառնալ, բայց դժբախտաբար, մինչեւ այժմ իրմէ ոչ մի լուր չաուի: Ձեր վերջին նամակի վրայ, որով կը հրահանգէիք անմիջապէս Արսէնը ճամբու դնել, ես վերջացրի պայմանը Արսէնի հետ. Արսէնը պիտի մնայ երկու տարի, որովհետեւ ինքն ալ դպրոցական խնդիր ունի, մէկ տարի եւս ունի աւարտելու համար: Բաց կը մնայ «Ասպարէզ»ի խմբ[ագրի] հարցը. Ֆէրիտ ձէմիրը<sup>15</sup> համաձայնութիւն տուաւ բայց զինք ճանչցող ընկերներ խորհուրդ չեն տար՝ այն առարկութեամբ, թէ ուր գացած է, միշտ որեւէ խնդիր թողած է իր ետեւը: Դեռ վերջնական որոշում չտուած՝ վրայ հասաւ զինակոչի հրամանը, եւ ամէն ոք գէնքի տակ առնուեցաւ. ձէմիրն ալ ի հարկէ. մինչեւ այս մըղձաւանջը չհեռանայ մեր գլխէն՝ անկարելի պիտի լինի մէկը գտնել: Բայց դեռ պէտք չէ յուսահատուիլ:

Առհասարակ, այս զինակոչը սոսկալի ձեւով առաջ կը տարուի, գրեթէ ամբողջ թուրքիան պատերազմական վիճակի մէջ է: Ամենախիստ կերպով գէնքի տակ կ'առնեն 21-45 տարեկան այր մարդիկը: Հրամանը խիստ է եւ անողոք: Քիչ չեն «պէտէլ»<sup>16</sup> տուողներն ալ. միայն Կարինը մօտ 20.000 ոսկի պէտէլ տուաւ. Քղին 3-4 օրուայ մէջ 5.000 ոսկի «պէտէլ» տուաւ: Այս ոչխար ժողովուրդը, որ հոգին կու տայ, բայց փարա մ'իսկ կը խնայէ զգալին գործերէ կամ ինքնապաշտպանութեան միջոցներէ՝ լուռ ու անտրտուն ռսկիները կը թափէ թուրք պաշտօնեաներու առջեւ, առանց մտածելու, որ վաղը, եթէ պատերազմ ծագի եւ կռուող ուժերու

պէտք գգացուի, իրենց պէտէլ տալուն չի նայուիր եւ իրենք ալ կը քշուին պատերազմի դաշտ: Իսկ պատերազմ պիտի լինի՞ արդեօք: Շատ հաւանական է: Կասկած չկայ, որ եթէ ռուսները պարտուին գերմաններէն, տաճիկները պատերազմ կը յայտարարեն Ռուսիոյ: Բոլոր նշանները այդ ցոյց կու տան: Ռուսական սահմաններու մօտ կը կեդրոնացուին թուրք զօրքեր: Ամրութիւնները արագ կերպով կը նորոգուին ու նորերը կը շինուին: Կարինը վերածուած է բանակի մը, ուր լեցւած են 2.000է աւելի սպաներ եւ 100ի չափ զինուորական բժիշկներ: Ամէն օր կու գան նոր զօրքեր, սպաներ, ռազմամթերք: Քրիստոնեայ թէ իսլամ, զօրք են առնուած եւ արագ կերպով վարժութիւններ կ'ընեն: Ամէն կողմ տենդային աշխատանք կը թափուի: Ժողովուրդի տրամադրութիւնն ալ կը պատրաստուի պատերազմական ձեւով. Օսմ. աժանսի<sup>17</sup> հաղորդած լուրերը պատերազմի մասին չափազանց միակողմանի են, չինձու ու միտումնաւոր. ամէն օր կը հաղորդուին գերմանական յաղթութիւններու եւ ֆրանսական պարտութիւններու լուրեր: Եթէ աժանսի լուրերուն նայելու ըլլաս, Ֆրանսայի մէջ ոչ մարդ մնացեր է եւ ոչ քաղաք — բոլորն ալ գրաւեր են գերմանացիները: Մարդ չի հասկնար, թէ այս խելօք դաւիթները ի՞նչ կ'ուզեն եւ ի՞նչ նոր տոնքիչոթութիւններ է որ կը պատրաստուին ընելու:

Որպէսզի հաւաքուած զօրքերը պահելու միջոց ունենայ, կառավարութիւնը այժմէն իսկ սկսած է ընթացիկ սիոնի — պաշտօնական թալանի —, անողոք կերպով կը գրաւեն ամէն բան. զինուորական պաշտօնէութիւնը կը պատի խանութէ խանութ ու խանէ խան եւ կը գրաւէ զանազան մթերքներ. շաքար, քարիւղ, ալիւր, բրինձ, գինի, քաթան, տախտակ, եւայլն: Շատ տեղեր փակ խանութներու դուռները կոտորած եւ ապրանքները առած են: Տեղեր եղած են, որ գրաւած են շամպանիա գինիներ, անուշեղէն, ֆրսթրիս, առանց մտածելու, որ պատերազմի ժամանակ ֆրսթրիս ուտելու ատենը չէ: Գրաւած են ձիերն ու ջորիները, եզներն ու սայլերը: Երեւակայեցէք վիճակը այն գիւղացիներու, որոնք եզ ու սայլ չունին իրենց հասած արտը քաղելու, հաւաքելու ու կալսելու: Այս տարի բերքը խիստ առատ է, բայց զինուորակոչը քանդեց գիւղացիներու տունը: Պէտք է յիշել, որ այս աղէտէն հաւասարապէս կը տուժեն թէ՛ հայերն ու թէ՛ իսլամները:

Զօրահանութեան ենթարկուած են եւ քիւրտերը,

13.- Արսէն — Միքայէլեան Արսէն, Ամերիկա հրապարակած իբրեւ գործիչ:  
14.- Սնար — Նարինեան Սիմոն, Ամերիկայի մէջ գործիչ, որ այդ օրերուն Երուսալմ անցած էր:  
15.- Ֆերիտ Ղեմալ — Ամսէեան Տիգրան, այլապէս ծանօթ Տիգրան Մամուր ծածկանունով:  
16.- Փրկագին՝ զինուորագրութենէ գերծ մնալու համար:  
17.- Լրատու գործակալութեան:



### ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

որոնց համարիչ գույքերը նիզամիտ<sup>18</sup> սպաներու հրամանատարութեան տակ սկսեցին արդէն հաւաքուիլ Հասան-Գալէի շրջակայքը: Վախ կայ, որ այդ գույքերը կարող են թալան ու բռնութիւն գործ դնել խաղաղ ազգաբնակչութեան գլխին, իսկ պատերազմի պարագային՝ ա՛լ աւելի: Հայերու վիճակը բաւական աննախանձեղի կը դառնայ: Հոս է, որ պէտք կը զգացուի պահակներու օրէնքը գործադրել, բայց կառավարութիւնը կը թուի թէ ոչ միայն պահակներով չ'ուզէր զբաղուիլ, այլ առհասարակ յարմար առիթ կը նկատէ «բարենորոգումներ» կոչուած խրտուիլակն ալ մէջտեղէն նետել: Գէթ երեւոյթները այդպէս ցոյց կու տան. խեղճ Հօֆը<sup>19</sup> եկաւ Կարին ու անցաւ Վան, բայց վրան նայող չեղաւ, Վանի մէջ իր պաշտօնեաները մնացեր են առանց ուշադրութեան եւ ստիպուել են «օթէլ»ի մը մէջ տեղաւորուիլ. իր օգնականը նշանակուած է Տիգրանակերտի Վալին եւ արդէն լուրեր կան, որ ինքն ալ յետ կանչուած է: Վէսթէնէնկը տեղէն իսկ չ'զարթուեցաւ եւ, անկասկած, ստիպուած պիտի լինի Պոլիսն ալ թողուլ. ալ ի՞նչ բարենորոգում, քանի որ Եւրոպայի մեծ տէրութիւններ այլեւս գոյութիւն չունին, ամէն բան խառնուած է, եւ մէջէն կ'ուզէ օգտուիլ Թուրքիան: Խօսք չկայ, որ եթէ այս փոթորիկն ալ չըլլար, որեւէ առիթ պիտի ներկայանար քննիչներ կոչուած խամաճիկները հեռացնելու: Թուրքերը առանց քաշուելու կը յայտարարեն, թէ իրենք բնաւ միտք ու տրամադրութիւն չունին եւրոպական քոնթրոլը ընդունիլ եւ տէրութիւններու պահանջը կատարել: Ժամանակն է արդէն, որ մեր ամենալաւատես շրջանները վազ անցնին այս «քննիչներէն» ու աւելի շիտակ ճանապարհով քալեն:

Թէ երկրի եւ թէ ժողովրդի վիճակը շատ անորոշ է ու երբեք: Տեսակ մը սպասողական, լարուած կացութիւն ստեղծուած է: Մարդիկ չեն գիտեր, թէ ի՞նչ պիտի լինի վաղը, եւ գործէ հիասթափ եղած՝ կը սպասեն: Արդէն գործ ալ չկայ. առեւտուրը մեռած է, պանքաները դրամ չեն տար, դրամը քաշուած է եւ հրապարակի վրայ չէ մնացած. արհեստներ կանգ առած են, որովհետեւ արհեստաւորները զինուոր տարուած են: Ամէն կողմ տարտամութիւն, թշուառութիւն... Զինուոր տարուածներու շատերու ընտանիքները մնացեր են անօթի, չոր հացի կարօտ: Պէտք է տեսնել, թէ ինչ սրտաճմրդի տեսարաններ տեղի կ'ունենան: Հայերէ աւելի թուրքերը ողորմելի են, որովհետեւ հայերու մէջ գէթ փոխադարձ օգնութեան բնագոյր չէ մարած, անոնց մէջ այդ ալ չկայ:

Այս բոլորին հանդէպ կազմակերպութիւնը ստիպուած է արտակարգ կերպով լարել իր ուժերը: Ընկերներէն մեծ մասը զինուոր տարուած են. հրապարակի վրայ մնացած են կամ դրսեցիները եւ կամ 45էն վեր ու 20էն վար տարիք ունեցողները: Թէ ի՞նչ է դրութիւնը այս պայմաններու մէջ — դուք մտածեցէք: Յամենայն դէպս, չենք ընկճուիր եւ կ'աշխատինք լաւագոյնը ընել լաւագոյն արդիւնքներ քաղելու յոյսով: Կազմակերպութեան բարոյական հմայքն ու գորութիւնը բաւական միխթարական է: Այս պայմաններու մէջ մեծ պահանջ կայ նիւթական միջոցներու: Տարեկան պիւտճէն կազմելու ատեն Ամերիկայի շրջանի բաժինն ընկաւ 100.000 Ֆրանք: Չեմ գիտեր՝ կը յաջողի՞նք արդեօք այդ գումարը հաւաքելու, բայց ճիգ խնայելու չէ, որովհետեւ իսկապէս մեծ պէտքերու առջեւ կը գտնուինք: Կազմակերպութեան վիճակը գոհացուցիչ է եւ սահմանէ անդին, ուր բացառիկ պատահութիւններ կան այժմ մեր առջեւ: Ընկերները լաւ լծուած են գործի:

Երկրի մէջ միւս կուսակցութիւնները շատ թոյլ են, չնչմարուելու չափ թոյլ: Սահմանադիրը — Ռամկաւարները աղմուկ-շառաչով ակումբ բացին Կարինի մէջ, բայց դեռ բացումի ճառերու աղմուկը չլուծած՝ արդէն գոցեցին, չէնքն ալ ուրիշ ձեռք անցաւ: Նոյնն է պատկերը եւ ուրիշ տեղեր: Շատ ցաւալի էր հնչակեաններու ձերբակալութիւնը Պոլսի մէջ, այդ խեղճերէն խումբ մը Սապահ Գիւլի<sup>20</sup> ղեկավարութեան տակ, գործիք դարձած են Շէրիֆ փաշայի ձեռքին եւ պատճառ եղած անհամ էնթրիկներու:

Խարբերդի կողմերը պտոյտ գործելու ծրագիրս ջուրն ընկաւ. այս գորակոչը ստեղծած է աննորմալ կացութիւն. այր մարդիկ հեռացած են իրենց տեղերէն, ժողով չէ կարելի ընել, այնպէս որ երթալս բոլորովին ապարդիւն պիտի անցնէր, թէեւ կարեւոր էր մեզի երթալը, որովհետեւ այնտեղ կազմակերպութիւնը համարեա թէ կազմալոյծ է: Ը[նդհ.] Ժ[ողով]ին պատգամաւոր ալ չէին կրցած ուղարկել, ինչ որ շատ գէշ տպաւորութիւն թողուց: Միւս կողմէ օտարահպատակներու ճամբորդութիւնը գրեթէ անկարելի է: Կառավարութիւնը կասկածով կը նայի: Այսպէս, Տարօնի շրջանէն ռուսահայ ռուսանոցներ, որոնք եկած էին ռուսամասիրութիւններ կատարելու, ոստիկանով Ռուսիա ուղարկուեցան: Ակնունի եւ մէկ ուրիշ ընկեր<sup>21</sup> Կարին ոստիկանատուն տարուեցան եւ հարցաքննութեան ենթարկուեցան: Պալքանի մեր ներկայացուցիչը<sup>22</sup> կասկածով մը, ահա քանի օր է բանտ է դրուած. մեզ բոլորիս

18.- Կանոնաւոր բանակային:  
 19.- Հօֆ — հայկ. բարենորոգումներու համար նշանակուած Ընդհ. քննիչներէն մէկը, դանիացի: Միսը՝ Վեստենցնիկ, հոլանտացի:  
 20.- Խօսքը ձերբակալութեան մասին է հնչակեան բազմաթիւ ղեկավար ղեմքերու, որոնցմէ 20-ը 1915 թ. Մայիսին կախաղան պիտի բարձրացուէին Պոլսոյ Պայազիտի հրապարակին մէջ: Սա-

պահ-Գիլյեանը, իսկական անունով Տէր Դանիէլեան Ստեփան, նոյնպէս մահավճիռ ստացած ի բացակայութեան, պիտի ազատէր:  
 21.- Ուրիշ ընկերը՝ Միգալտրեան Վահանն է:  
 22.- Պալքանի ներկայացուցիչը՝ Տարքետեան Վարդապարտ է, որ 1915ին բանտին մէջ պիտի սպաննուէր:





չըջապատած է լրտեսներու վոհմակ մը, որոնք մեր ամէն քայլը հսկողութեան տակ առած են: Այսպիսի պայմաններու մէջ ճամբորդելու մասին խօսք իսկ չէ կարող լինել, թէեւ ես շատ կ'ուզէի առիթէն օգտուելով՝ պտոյտ մը գործել դէպի այն վայրերը, ուրտեղէն շատ պանդուխտներ կան Ամերիկա:

Պատերազմը յայտարարուելէն ի վեր Ամերիկայէն ոչ նամակ ունիմ եւ ոչ «Հայրենիք». երեւի ճամբան բոլորովին փակուած է: Չեմ գիտեր, ինչ կ'ընէք, ինչ վիճակի մէջ էք: Կը հաւատամ, որ բոլորդ ալ առողջ էք եւ գործերն ալ լաւ կ'երթան: Լարեցէք ձեր ուժերը եւ բովանդակ թափով նետուեցէք գործի մէջ, որովհետեւ հիմա աւելի քան երբեք կարիք ունինք ձեր աշխատանքին: Անձնապէս ես լաւ եմ. առողջ եմ, տրամադրուածիւնս ալ տեղն է. պէտք է, սակայն, խոստովանիմ, որ բաւական

կարօտել եմ բոլորիդ. իսկ Կարինիի փոշին ու աղտոտութիւնը երբեմն կը ստիպեն յիշել ամերիկեան քոմֆորթն ու յարմարութիւնը: Եւ սակայն, ես նախամեծար կը համարէի միշտ մնալ այս փոշին մէջ, որովհետեւ հոս է, որ պիտի ստեղծուի այն շէնքը, որի կառուցման համար կ'աշխատինք մենք բոլորս:

Առ այժմ այսքան. աւելի մանրամասն բաներ չեմ գրեր. շատ բաներ շուտով Արսէնը կու գայ ու կը պատմէ, շատ բաներ ալ ես կը բերեմ: Յօդուածներ գրելու ալ հնարաւորութիւն չկայ — փոսթայի գրաքննութիւնը չի թողներ. այս նամակէն քաղեցէք յարմար մասերը եւ գրէք թերթի մէջ:

Կարօտով բարեւներս ձեզ ու բոլոր ընկերներուն՝  
Ս. ՎՐԱՅԵԱՆ

Յ.Գ.- Ձեր վերջին նամակի մէջ կը թելադրէիք պաշտպանել Ամերիկայի տեսակէտները Ը. Ժ.-ի մէջ, որոնք ճակողմեան բնոյթ ունէին: Թէեւ կոմիտէներու կարծիքները շատ ուշ ստացայ, բայց իմ պաշտպանածն ալ այն կարծիքներն են, որոնք յայտնած էին մեր կոմիտէներու մեծամասնութիւնը: Ուրախ եմ ըսել, որ ատոնք բոլորն ալ անցան:

Տեղացիական միութիւններու ինքնագարգացման<sup>23</sup> գումարներու խնդրին հետամուտ կ'ըլլամ, բայց այս միջոցին շատ դժուար է որոշ բան ըսել. լաւագոյն է հետս կը բերեմ այդ մասին մանրամասն տեղեկութիւններ: Յամենայն դէպս նոր յանձնառութիւններ մի ստանձնէք: Խարբուծիեանի գործի մասին ալ դրական բան դեռ չեմ կարող ըսել:

Արսէնը, հաւանաբար, կը մեկնի յունական նաւով — Փաթրասէն — լաւ կ'ըլլայ, որ կարճ ատեն մը Իսթի կողմերը պահելէ ետք, անմիջապէս ուղարկէք Ուէսթ<sup>24</sup>, որպէսզի մինչեւ իմ վերադարձս մի պտոյտ գործէ. վերադառնալուս, երեւի, պէտք կ'ըլլայ, որ ես այցելեմ այն կողմերը. այն ատեն Արսէնը կը մնայ Իսթ, կամ եթէ ուրիշ յարմարութիւն կայ, լաւագոյն կերպով կարգադրեցէք ուժերու դասաւորումը, որպէսզի ի գուր ժամանակ ու էնէրօթի չկորսուի:

ՆՈՅՆ

23.- Ինքնապաշտպանութեան:  
24.- Իսթը՝ Միացեալ Նահանգներու արեւելեան շրջանն է, Ուէսթը՝ Արեւմտեան:





Փաստ. 103-30

Բ 3.- ՎՌԱՄԵԱՆ՝ ԻԹԹԻՂԱՏԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Կարին, Օգոստոս 17/30 1914

Ա. Վռամեանի այս նամակը, ուղղուած հաւանաբար Հայաստանի բիրտյի Պոլսոյ հատուածին, կարեւոր փաստաթուղթ է՝ Հ.Յ.Դ. Տրդ Ընդի. ժողովի աւարտին Կարնոյ մէջ Իթթիհատի եւ Դաշնակցութեան ներկայացուցիչներուն միջեւ տեղի ունեցած հանդիպումներուն մասին: Ընդհանուր գծերու մէջ ծանօթ են այդ առթիւ թուրք վարչներուն առաջարկները Կովկասի մէջ ապստամբութիւն բարձրացնելու մասին եւ անոնց տրուած պատասխանները: Վռամեան, որ Ռոստոմի եւ Ակնունիի հետ մասնակից էր պատմական այդ հանդիպումներուն, անոնցմէ միայն երկու օր ետք, ահա, ստորեւ տրուած նամակով կը տեղեկագրէ, հանդիպումներու թարմ ու անմիջական տպաւորութեան տակ: Վերջին պարագան՝ անկասկած, մասնաւոր շահեկանութիւն եւ վաւերական դրոշմ կու տայ իր գրութեան:

Սիրելիք,

Հեռագրած եմ արդէն գալս, թէ եւ քիչ մը ուշ: Երկու գիշեր միայն մնացի Թիֆլիս, հանգստանալու եւ ընկերներ տեսնելու համար, եւ շարունակեցի ճամբաս: Բաթումէն, ինչպէս նաեւ Թիֆլիսէն գնացքներ կային, օրը մէկ անգամ, միայն դանդաղ կը շարժուէին — 5-6 ժամ աւելի, ուրիշ ոչինչ: Եթէ չմնայի Թիֆլիս, հինգերորդ օրը Բաթումէն մեկնելուս՝ կը հասնէի հոս:

Վարդգէսի<sup>25</sup> մեկնումը անբացատրելի մնաց. ես Կիրակի հասայ Բաթում, ինք նախորդ (Յուլիս 27) շաբաթ օրը նաև նստած էր դէպի Պոլիս: Կ'երեւի շա'տ կարեւորութիւն տուած էր շշուկներուն եւ լուրերուն: Ընկերներու վրայ շատ գէշ ազդած էր թէ Կովկաս եւ թէ հոս. համոզեցէք զինքը որ ժամ առաջ մեկնի եւ գայ հոս, ուր իր պարտականութեան տեղն է. բազմաթիւ գործեր կան, զորս երեսփոխան մը կրնար ընել դիւրութեամբ յօգուտ հասարակութեան: Իր բացակայութիւնը թիւր մեկնութիւններու տեղի կու տայ: Նոյնը ընելու է նաեւ Գեղամը<sup>26</sup>: Յուսով եմ որ Վահանը<sup>27</sup> արդէն մեկնած է:

Գալուս՝ ժողովը արդէն փակուած էր. 9-ի յանձնախումբը<sup>28</sup> կը մնար: Որոշումներու մասին չեմ խօսիր — իմացած էք անշուշտ. եթէ պատերազմը վրայ չհասնէր եւ զօրաժողովը, [Ընդհանուր] ժողովը կրնար շարունակել իր նիստերը եւ կարգ մը բաց մնացած խնդիրներ լուծել, ինչպէս արդէն առիթն ալ ներկայացաւ այդ պակասը զգալու:

Երեք օր առաջ Նաջի բէյը եւ Դր. Բէհաէզզին Շաքիրը հասան հոս, եւ հետեւեալ օրն իսկ տեսակցութիւն խնդրեցին: Նաջի բէյը<sup>29</sup> հետ ես առանձինն տեսակցելէ ետք՝ երեք ընկերով (Ռոստոմ, Ակնունի եւ ես) միասին տեսակցութիւն ունեցանք Օգոստոս 13-ին, եւ ապա երկրորդ անգամ Օգոստոս 15/28ին (այս անգամ Ակնունին եւ ես):

Անոնք պարզ եւ յստակ առաջարկ մը դրին, թէ ի՞նչ պիտի լինի պատերազմի պարագային՝ Դաշնակցութեան դիրքը:

25.- Վարդգէս, Գիսակ՝ ծածկանուններ Սերեկիլիեան Յովհաննէսի, պետական երեսփոխան Կարնոյ:  
26.- Գեղամ՝ Տէր Կարապետեան Գեղամ, պետական երեսփոխան Մուշէն:  
27.- Փափագեան Վահան (Կոմս), պետական երեսփոխան Վանէն:  
28.- 9-ի յանձնաժողով, Ընդի. ժողովէն ընտրուած յանձնախումբ, որուն պարտականութիւնն էր՝ լուծել առկա մնացած հարցերը եւ հրատարակութեան համար խմբագրել Ընդի. ժողովի որոշումները:  
29.- Բեհաէզզին Շաքիր եւ Նաջի բէյ՝ Իթթիհատի կեդրոնին անդամներ, որոնք Կարին առաքուած էին պատերազմի առիթով Դաշնակցութեան որոշ առաջարկներ ներկայացնելու համար:





Երկու պարագայ կը նախատեսէին.

1) Ռուսիոյ յարձակումը Թուրքիոյ վրայ.

2ա) Թուրքիոյ առաջխաղացումը դէպի Կովկաս,

2բ) կամ Թուրքիոյ աջակցութիւնը Կովկասի ապստամբութեան՝ Ռուսիոյ պարտութեան պարագային:

1) Առաջին կէտին մեր պատասխանը բացորոշ էր եւ կանխորոշ:— Պաշտպանել Թուրքիոյ հողային ամբողջականութիւնը եւ Օսմ. սահմանադրական կարգերը: Այս յայտարարութիւնը գոհունակութիւն պատճառեց մասնաւորապէս Բէհհէդիին Շաքիրին:

Գալով Երկրորդ (2) պարագային, մենք յայտարարեցինք թէ պարզ արկած մը կը լինէր այդ քայլը իրենց կողմէն եւ ուզեցինք աւելի յստակօրէն գիտնալ իրենց պատճառաբանութիւնները:

Երկար խօսակցութիւններու մէջ, զորս անկարելի է արձանագրել հոս, իթթիհատի ներկայացուցիչները յայտարարեցին որ կառավարութիւնը որոշած է օգտուիլ Ֆրանսայի եւ Ռուսիոյ պարտութենէն, իր առկախ խնդիրները լուծելու համար: Յոյս ունին Պուլղարիոյ հետ համաձայնութեամբ՝ Թրակիոյ թուրքաբնակ մասերը վերստանալ, Մակեդոնիոյ անկախութիւնը ապահովել (ի հաշիւ Սերպիոյ), եւ Յունաստանի հետ համաձայնութեան մը գալ կղզիներու մասին: Ապա capitulation-ները<sup>30</sup> ջնջել: Մա նուազագոյնն է:

Իսկ եթէ ջախջախիչ պարտութիւն մը կրէ Երրեակ համաձայնութիւնը, առաջ խաղալ դէպի Կովկաս, 1) կամ նուաճելու եւ կամ 2) ցեղերը ապստամբեցնելու:

Իրենց ըսելով՝ վրացիները եւ թաթարները պատրաստութեան մէջ են արդէն. կը մնայ հայերուն դիրքը որոշել, որ վճռական նշանակութիւն մը պիտի ունենայ: Եւ որովհետեւ իրենց համոզումով՝ Դաշնակցութիւնը չափազանց հզօր է հոն եւ կրնայ իր ետեւէն քաշել ռուսահայերը, իրենք կ'ուզենային որ Դաշնակցութիւնը — պահպանելով հանդերձ իր loyalisme-ը<sup>31</sup> ռուս կառավարութեան հանդէպ — վճռական ընդդէմը Թուրքիոյ կողմը:

Թէ թուրք կառավարութիւնը նպատակ չունի Կովկասը կցելու, բայց պիտի ուզէր հեռացնել Կովկասէն ռուս տիրապետութիւնը, եւ ինքնավարութիւն տալ Կովկասեան իւրաքանչիւր ցեղին իր կատարած անձնուիրութեան եւ դերի համաձայն վարձատրելով:

Գերմանիա պիտի օգնէր իրենց այս ամբողջ ծրագրին իրագործման ընթացքին:

Մեր պատասխանը:—

Այս հաւանականութիւնը նկատի չէր կրնար առնել մեր կուսակցութիւնը, մանաւանդ որ ցրուեցաւ ժողովը զօրաժողովի պատճառով:

Մենք լիազօր չենք, այլ կը խօսինք տուեալները նկատի առնելով — վերջին խօսքը Պատասխանատու մարմնին է (comité central) եւ Կովկասի Դաշնակցական մարմնին:

Ահա մեր ենթադրութիւնները:—

Կովկասի հայերը չունին հիմա այն խանդավառութիւնը, զոր կը տածէին Օսմ. Սահմանադրութեան հանդէպ 1908-10 [տարիներուն]: Թուրք կառավարութեան եւ իթթիհատի սխալները չեն կրնար ռուսահայերը դրդել եւ համոզել թէ Թուրքիոյ հետ իրենց գործակցութիւնը կրնար բարելաւել իրենց կացութիւնը: Այդ մտայնութենէն օգտուեցաւ ռուս կառավարութիւնը՝ սիրաշահելու փորձեր ընելու համար մօտիկ անցեալին, եւ զորս այսօր ալ կը շարունակէ:

Կառավարութեան երկդիմի դիրքը բարենորոգումներու փորձին մէջ՝ չի կրնար քաջալերիչ հանգամանք մը ունենալ անոնց համար: Կովկասին ինքնավարութիւն խոստանալէ առաջ՝ անոնց աչքին հոս՝ Թուրքիոյ մէջ միլիթարիզ իրականութիւն մը պէտք էր ստեղծել: Մեր կարծիքով՝ Թուրքիան աճապարելու է բան մը ընել՝ հայերուն համակրանքը շահելու, ճիշդ ինչպէս կ'ընէ այս պահուստ Ռուսիան լեհերուն հանդէպ:

30.- Ֆրանսերէն – առանձին դաշնագիրներով Օսմանեան Թուրքիոյ կողմէ երոպական շարք մը պետութիւններու կատարուած զիջումներ, որոնցմով վերջինները իրաւունքներ ստացած էին շահագործելու հանքեր, նաւահանգիստներ, փոստ-հեռագրատուներ, երկաթուղիներ եւ այլն:

31.- Ֆրանսերէն – օրինապահութիւն:







ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

իրենց ստիպողական հարցումներուն՝ թէ ի՞նչ կ'ուզենք – պատասխանեցինք թէ արդէն իրենց յայտնի է մեր desiderata-ն<sup>32</sup>, իսկ թէ ի՞նչ կրնան հիմա տալ՝ արդի պատերազմական դրուժեան տակ՝ իրենք պատասխանատու դիրքի վրայ գտնուողները աւելի լաւ կրնան գիտնալ, քան մենք:

Խոստացան հեռագրել Պոլիս մեր այս պատասխանը:

Նաջի բէյի հետ եկած էին քանի մը կովկասցի թաթարներ եւ պարսիկներ (որոնց մէջ Իբրահիմ աղան, Սայիդ էլ Մեմալիկը): Ոմանք կ'անցնին Պարսկաստան՝ պարսկական ապստամբութիւն մը ստեղծելու, իսկ Իբրահիմ աղան կովկաս՝ թաթարներու մէջ գործելու:

Բիւրոն անշուշտ կը գրէ ձեզ մանրամասնօրէն. ուստի չեմ ծանրանար շատ: Տպաւորութիւններս հետզհետէ կը գրեմ ձեզ: Հակառակ իրենց հաւաստիքներուն՝ մեզ ուուսասէր կ'ընդունին: Ահա հոդ է ամբողջ խակութիւններն եւ հայութեան կացութիւնը չըմբռնելուն կամ տեսնել չուզելու իրենց ապիկարութիւնը:

Համբոյրներով՝  
ՎԱՀԱՊ

Հոս՝ զինուորացու ընկերները կրցանք իրենց տեղերը ուղարկել:


Գարոն<sup>33</sup> եւս կրնայ թալէադի միջոցով թողլտուութիւն առնել հոս գալու:

43-45 տարեկանները արձակեցին երէկ:

Հաւանօրէն վաղը կամ միւս օր կը մեկնիմ Մուշ: Անկէ Բաղէշ եւ Վան: Հոս եւ Վան ու Մուշ՝ հասցէներ հաղորդեցէք:

32.- Լատիներէն – բաղձանք, ցանկութիւն:

33.- Արմէն Գարո – Փասարմաճեան Գարեգին:



Նմոյշ մը Վոսմեանի ձեռագրէն





Փաստ. 793-6

Բ 4.- Ա. ՀԱՆԸՄԵԱՆԷՆ ԵԳԻՊՏՈՍ

20 օգոստոս 1914

Սիրելի ընկերներ,

Ընդհանուր ժողովը վերջացուց իր աշխատութիւնները. ես եւ Ջարդարեանը մեծ դժուարութիւններով յաջողեցանք հասնիլ Տրապիզոն՝ ուր կը գտնուինք չորս օրէ ի վեր, նաև սպասելով. հաւանական է որ այս քանի մը օրուան մէջ նաև մը ունենանք՝ եթէ երբեք պատերազմ չծագի: Զինուորական խստութիւնները ծայրայեղ են զօրակոչի համար. մինչեւ հիմա լաւ անցուցինք, տեսնենք հոսկից եւ Պոլսէն ինչպէս դուրս պիտի գամ:

Երկրին դրութիւնը ողբալի է պարզապէս. տագնապ՝ ամէն հողի վրայ. Սեւ ծովու ամբողջ ծովեզերեայ քաղաքները, հիմակուրնէ արդէն, սովի սպառնալիքին տակ կ'ապրին. գործերը ամբողջովին դադարած են, վարժարանները բացուելու յոյս չկայ եւ ամէն մարդ գինուոր է, ծեր ու երիտասարդ, կոյր, կաղ եւ քոսոտ:

Եթէ ինձ յաջողուի ճամբայ իյնալ դէպի Եգիպտոս, ձեզի կը հեռագրեմ Պոլսէն կամ Բիրիայէն:

Ընկերական կարօտագին բարեւներով՝  
ԱՐՏԱԻԱԶԴ ՀԱՆԸՄԵԱՆ<sup>34</sup>

Փաստ. 103-32

Բ 5.- ՌՈՍՏՈՍԷՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾԻՆ

[Կարիճ], 24 Օգոստոս 1914

Սիրելիք,

Երէկ խաչատուրը եւ Վահանը<sup>35</sup> ճանապարհ ընկան, առաջինը պիտի գնայ Պոլիս, երկրորդը Սամսոն: Դա կատարուեց կառավարութեան անսպասելի կարգադրութեամբ: Ուրբաթ օրը ոստիկանապետը կանչեց երկուսին եւ կտրուկ կերպով յայտնեց, որ շաբաթ օրը պէտք է ճանապարհ ընկնեն: Ոչ մի դիմում նշանակութիւն չունեցաւ: Վառամեանը յուսահատ ձեռները թափ տուեց: Հիմա չգիտենք, դա ընդհանուր կարգադրութեան արդիւնք է, թէ մասնաւորապէս վերաբերում է խաչատուրին եւ Վահանին: Խաչատուրը գնալուց առաջ մի հեռագիր ուղարկեց նախարարին (Թալաթ պէյին), բայց ինչ օգուտ, քանի որ մի երկու ժամից յետոյ պիտի դուրս գնար:

Ինչ որ էլ լինեն դրդապատճառները, տպաւորութիւնը շատ աննպաստ էր: Այսպէս կամ այնպէս՝ կասկած, անվստահութիւն է յարուցուում կազմակերպութեան հանդէպ: Եթէ այսպէս շարունակուի, հետեւանքները լաւ չեն լինել:

Ստիպուած ենք կրկին անգամ շեշտելու, որ Վարդգէսի<sup>25</sup> ներկայութիւնը անհրաժեշտ է, գէթ մի երկու ամսուայ համար: Զգիտենք նրա չգալու պատճառները,

— նրա նամակը չստացուեց,— բայց ինչ էլ որ լինեն, պէտք է թողնի եւ անպատճառ գայ:

Նրա գալը աւելի անհրաժեշտ եւ օգտակար է քան Գարոյինը<sup>33</sup>, որին կարող են գինուոր տանել այստեղ:

Այս խառը ժամանակը մի յիմար բան էլ աւելացաւ: Հարբեցող անպիտաններից մէկը՝ Մամբրէ անուկով, գիշեր ժամանակ ատրճանակ է արձակում ոստիկանների վրայ, նրանց գողերի տեղ ընդունելով եւ կասկածելով, որ կողոպտելու համար են եկել: Դրանից առաջ է գալիս հրացանաձգութիւն: Մարդը բռնուած է իր դրացու հետ միասին: Այս դէպքն էլ մեծ կարեւորութիւն է ընդունել:

Գուցէ Վահանին չթողնեն, որ Սամսոն էլ մնայ: Այդ պարագային ուղարկեցէք Ամերիկա կամ Եգիպտոս: Խաչատուրին պահեցէք այդտեղ գէթ մինչեւ իմ գալս: Նրա երկիր մտնելը լաւ ժամին չպատահեց:

Նամակ գրո՞ւմ էք արդեօք:

Համբոյրներով՝  
Զեր՝ Ռ[ՈՍՏՈՍ]

Լսելով՝ Հոֆը<sup>19</sup> վերադառնում է Պոլիս: Գարոն թող լաւ ընդունելութիւն ցոյց տայ!

34.- Հանրմեան Արտատպ, Եգիպտոսէն պատգամատր Ընդի. ժողովին:  
35.- Մալումեան Խաչատուրը (Ակնունի) եւ Միմախորեան Վահան:





Փաստ. 103-31

**Բ 6.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾԵՆ ՎԱՐԱՆԴԵԱՆԻՆ [ԺՂՈՒՄ]**

1914, 27-VIII, Պոլիս

**Սիրելի Միքայել**

Ընդհանուր ժողովը վերջացաւ. պարապմունքները կանոնաւոր կերպով շարունակուել են, առանց ոեւէ արգելքի: Կարեւորը որոշումներէն՝ Արեւմտեան բիւրոյի ոչնչացումն է: Այժմ պիտի մնայ 2 բիւրօ, Ռուսաստանի եւ Հայաստանի: Հայաստանի բիւրոն բաղկացած պիտի լինի 10 հոգուց, որոնցից 7-ը պիտի մնան Հայաստանում, իսկ 3ը մնան Պոլսում, իբրեւ Հայաստանի բիւրոյի ներկայացուցիչներ: Որոշումները դեռ չենք ստացել. ստանալուն պիտի ուղարկենք ձեզ. մանրամասները այնտեղից կ'իմանաս: Պոլսում առայժմ պիտի մնան Սարգիս<sup>36</sup>, Ռոստոմ եւ Զարդարեան: Ռոստոմին սպասում ենք այստեղ. հեռագրեցինք, որ ճանապարհուի:

Ընդհանուր գորակոչը եւ մորատորիումը<sup>37</sup> Երկիրը դրել [են] անհաւատալի տնտեսական տագնապի մէջ: Կառավարութեան տրամադրութիւնը բացարձակապէս պատերազմական է: Ցանկանում են յարձակուել Կովկասի վրայ եւ գրաւել: Չեն թաքցնում, որ իրենց փրկութիւնը Ռուսաստանի կործանման մէջն է, եւ պիտի օգտուել ներկայ մոմենտից, թուլացնելու Ռուսաստանին:

Բարեբախտաբար Ռոմանիան, ինչպէս կ'երեւայ նաեւ Բոլզարիան չեն համաձայնուել միասին գործել, այլապէս արդէն պատերազմը յայտարարուած պիտի լինէր, եւ այս պետութեան գլխին մի նոր փորձանք պիտի

բերէին: Յամենայն դէպս, եթէ ոեւէ լուրջ անյաջողութիւն ունենան ռուսները Գերմանիայում, այն ատեն պատերազմը անխուսափելի կը դառնայ: Ի՛նչ կասկած, որ նման պարագայում թէ պետութեան եւ թէ մասնաւորապէս հայերին մեծ վտանգ է սպառնում:

Հեռագիրդ ստացանք դրամի մասին: Բացարձակապէս գուրդ ենք միջոցներից. մի քիչ դրամ որ կար, անպիտան բանկաները ոչինչ չեն տալիս: Մենք էլ գրեցինք Ամերիկա, որ դրամ հասցնեն: Այնպէս որ դու էլ գրիր, որ թէ ձեզ եւ թէ մեզ դրամ հասցնեն, այլապէս շատ պիտի նեղուենք:

Շահէնին<sup>38</sup> ուղարկեցինք Սարուստան<sup>39</sup>: Վարդանին<sup>40</sup> էլ յարմար գտանք, որ գնայ հոն, բայց մերժեց: Կարծում ենք, որ ընտանեկան պատճառներով այդպէս արեց: Եթէ միջոց ունենայինք գէթ 6-8 ոսկով ապահովել ընտանիքին, գուցէ համաձայնուէր:

Եթէ կարեւոր նորութիւններ լինեն, կը գրենք: Դու էլ աշխատիր տեղեակ պահել մեզ այնտեղի անցուղարձերին վերաբերեալ, որ լրագիրներից չենք կարող իմանալ:

Վաղը կամ միւս օրը մեզնից կը ստանաս նոր նամակ:

Շատ բարեկներով՝  
**Հ[ԱՅԱՍՏԱՆԻ] Բ[ԻՒՐՈՅԻ] ՍԵԿՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՇԱՄԻԼ<sup>36</sup>**

36.- Բարսեղեան Սարգիս, ծանօթ Վանայ Սարգիս ծածկանունով. բուն անունը՝ Օտապաշեան Պօղոս. ընտրուած էր անգամ Հայաստանի բիւրոյի (Պոլսոյ հատուած). վերջինիս գրութիւնները ընդհանրապէս իր գրչին կը պատկանին: Շամիլ՝ իր ծածկանուններէն մէկն է:

37.- Լատիներէն. ստեղծում դրամատուներու մէջ պահ դրուած գումարներու աւելի ուշ վճարելու խստումով: Արդարեւ Ա. Աշխարհամարտի յայտարարութենէն անմիջապէս ետք, եւ նախքան Թուրքիոյ մասնակցութիւնը, այդ միջոցառման դիմեցին իշխանութիւնները:

38.- Շահէն, ծածկանուններէն մէկը հայրուկապետ Անդրանիկի, որ պատերազմի սկզբնաւորութեան Հ.Յ.Դ. Բիւրոյի կարգադրութեամբ ուղարկուեցաւ Կովկաս, ուր արդէն կը նախապատրաստուէր կամաւորական շարժումը:

39.- Սարուստան՝ կուս. ծածկանուն Կովկասի համար:

40.- Վարդանը՝ Խանասորայ Վարդանն է, բուն անունով Մեհրաբեան Սարգիս, որ միեւնոյն նպատակով կը ծրագրուէր ուղարկել Կովկաս:





Փաստ. 1078դ-35

**Բ 7.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾԷՆ ԵՓԻՊՏՈՍԻ ԵՆԹԱԿՈՍԻՏԷԻՆ**

1914 -31-VIII, Պոլիս

*Ընկերներ!*

Ձեր պատգամաւորը արդէն տեղդ հասած, եւ զեկուցած կը լինի թէ Ընդհանուր ժողովի եւ թէ երկրի վիճակի վրայ: Մեր ղեկավարող (կառավարական) շրջանակները ընդհանրապէս պատերազմի կողմնակից են: Երբ զերմանական յաջողութիւն լինի նաեւ արեւելեան սահմանների վրայ, այն ատեն պատերազմը անխուսափելի կը դառնայ: Դժբախտաբար չհասկացան մերոնք, որ այս երկրի փրկութիւնը իր չէզոքութեան եւ խաղաղութեան մէջն է: Մեր առած տեղեկութիւններէն կ'երեւայ, որ Կովկաս ռուսները շատ մեծ ոյժ են հաւաքել, հետեւապէս նման պարագաներում մենք պիտի լինենք վնասողը: Բարեբախտաբար այս վերջին օրերս ռազմատենչ տրամադրութիւննին մասամբ իջել է: Մեզ թւում է թէ գլխաւոր պատճառը պիտի փնտռել իրենց անյաջող փորձի մէջ, Բոլզարիան եւ Ռոմանիան եւս իրենց միացնելու առիթով: Նկատելով ներկայ կրիզը, դաշնակցական դրսի մարմինները առաւել եռանդով պիտի աշխատեն, որպէսզի կարելի լինի այն խոշոր բացը լրացնել, որ առաջ եկաւ ներսի վարիվերումներէն: Որքան որ ծանր է ներկայ վիճակը, բայց եւ այնպէս վա-

տատես լինելու կամ յուսահատուելու տեղիք չկայ: Հոֆը<sup>19</sup> հազիւ վան հասած, յետ ուղարկուեց կրկին դէպի Պոլիս: Կառավարութիւնը ոչ միայն կապիտիլախոններն<sup>30</sup> է վերցնում, այլեւ երեւի ցանկանում է օտարի ձեռքով ներմուծուելիք բարենորոգումները մէկ կողմը նետելու: Երեւի շուտով եւրոպական փոստերն էլ կը վերցնեն: Ընդհանրապէս նամակների բացումը սովորութիւն է: Կամաց-կամաց հին սովորութեան վերերեւումն է առաջ գալիս: Ինչեւէ, այս օրերն էլ կ'անցնեն: Մեր դրամները բանտարկուել են բանկերում. ընկերներ, որոնք Ամերիկա եւ այլ վայրեր պիտի երթան, մնացել են բանտարկուած այստեղ: Շտապեցէք ձեզ մօտ գտնուած բոլոր դրամները ուղարկել մեզ, Բանկ Օտոմանի չէքով: Ուշացնելու չէք, որպէսզի աւելորդ օրեր այստեղ մարդիկ չսպասեն: Աշխատեցէք ամսավճարները կանոնաւորապէս գանձել, կուսակցութեան բիւզճէն ուժեղացնելու համար:

Ընկերական բարեկներով՝  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՍԵԿՍԻՈՆ**





Փաստ. 116-69

Բ 8.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾԷՆ ՎԱՐԱՆԴԵԱՆԻՆ

17 Մեպտ. 1914

Սիրելի Միքայել!

Կառավարութիւնը իր վերաբերմունքը դէպի Դաշնակցութիւնը եւ դէպի հայերը փոխել է, չնայած, որ մենք սահմանադրութիւնից մինչեւ հիմա, բոլոր ոյժով աշխատել ենք երիտասարդ թուրքերի ուժեղացման եւ այս երկրի վերակազմութեան ու առաջադիմութեան:

Ընդհանուր ժողովից յետոյ Ակնունին որ պիտի մնար Կարին, կառավարութեան հրամանով ստիպուած եղաւ հեռանալ: 24 ժամ ժամանակ էին տուել: Նոյն վիճակին ենթարկուեցաւ պարսկահայատակ Վահան Յովհաննիսեանը<sup>41</sup>:

Այս երկուսի մեկնելուց մի քանի օր յետոյ ձերբակալուած են տեղի դաշնակցականներէն 2 հոգի. մէկին ազատ են արձակում իսկ միւսին պահում բանտի մէջ: Նոյն ժամանակ քշում են Կարինից Սանասարեանի տեսուչ Աբուլեանին եւ Վրացեանին: Աբուլեանը 25 տարուց ի վեր Կարին է լինում, թէեւ ուսուցիչ պատակ:

Այս բոլոր դէպքերից քիչ առաջ, իթիհատի ներկայացուցիչներ Շաքիր Բեհհատտին եւ Նաջի-բէյ Կարինում մտնում են մերոնց հետ բանակցութեան մէջ, եւ առաջարկում, որ դաշնակցականները ուսուցիչական պատերազմի ընթացքում միանան իրենց, մասնաւորապէս աշխատին կովկասահայերին ապստամբեցնելու: Նրանց ասելով, վրացիք եւ թաթարները պատրաստ են ապստամբելու, մտնում են միայն հայերը: Իրենց ասելով, մտադիր չեն Կովկասը նուաճելու, այլ միայն այնտեղ հիմնելու մի ակտոնոմ<sup>42</sup> իշխանութիւն, պատուար լինելու համար ուսաներին:

Ի հարկէ մերոնք ասում են, որ վրացիների խոստումները չպիտի ընդունել իբրեւ արտայայտութիւն ամբողջ ազգի կողմէն: Թուրքերը<sup>43</sup> նմանապէս դժուար թէ համարձակեն նման մի բան անել, թէպէտեւ մենք վերջերս մօտ տեղեկութիւններ չունենք. գալով կովկասահայերին, դժուար թէ մենք յաջողենք, քանի որ այս 5 տարուայ մէջ՝ այստեղի հայերի վերաբերմամբ այնպիսի կարգադրութիւններ չեղան, որ նրանք նախանձեն, եւ հակուեն դէպի թուրքերը: Բացի այդ մերոնք յայտնում են, որ իրենք կտրակաճապալու դէմ են այս պատերազմին մասնակցելուն (թուրքերի), համոզուած լինելով որ Երրեակ համաձայնութիւնը յաղթանակ պէտք է տանէ: Մերոնք ապացուցել են, որ Կովկասում այնքան ոյժ կայ, որ լուրջ վտանգ կը սպառնայ թուրքական արեւելեան բանակին: Շատ ցաւալի է, որ մեր ղեկավար շրջանակները<sup>44</sup> այս բոլորը լաւ կերպով չեն ըմբռնում, եւ ցանկանում են այս երկրի բախտը վտանգի ենթարկել արկածախնդրական պատերազմ սկսելով մի հսկայ պետութեան հետ:

Ուրեմն այսպէս, հակառակ մեր բոլոր ջանքերին, իթիհատական կառավարութիւնը կասկածամտութեամբ է վերաբերում դէպի մեզ, առանց հիմնական ունէ փաստի, առանց հաշուի առնելու մեր 5 տարուայ անցեալը: Ցանկանում է մասնակցել մի պատերազմի, որի մէջ չափեր չափ չեն չանսեր ունի: Սա շատ ցաւալի մի դրութիւն է, բայց ի՞նչ արած, ղեկը իրենց ձեռքին է, եւ ցանկացածները պիտի անեն: Պիտի քեզ ասենք, որ այժմ այստեղի գործերը վարում են գերմանացիների կողմէն. չենք կարծեր թէ՛ եթէ գերմանացիները այստեղ չլինէին, մեր ղեկավարները իրերը տեսնէին այնպէս, ինչպէս այժմ կը տեսնեն:

Կապիտուլացիոնները<sup>30</sup>, գիտես, վերացրին: Մի քանի օրից այլեւս եւրոպական փոստեր չեն լինի: Ըստ բարի սովորութիւնների ընտանեկան խոստովանութիւններն անգամ հետաքրքիր մարդոց աչքէն չեն վրիպիր: Հնչակեանների ձերբակալման մէջ կառավարութիւնը ունէ յանցանք չունի: Ցանկացել էին թալէաթի եւ միւսներին տեսուր անել, գաղտնիքը բացուել է, եւ մասնակցողները բռնուել են: Տղայական գործ, ի հարկէ:

Ձեզ փոխադրել ենք այստեղի գործածուած թղթերը<sup>45</sup>: Քանի որ ուղղակի Շվեդարիա կողմ<sup>46</sup> չեն ընդունում, ստիպուած եղանք ուղարկել Իտալիա, այնտեղից ձեզ փոխադրելու համար, 10 ծրար, իւրաքանչիւրը 5 քիլօ ուղարկուած է Torino, Dr. Nichan Stepanian-ի հասցէին:

73 Corso Regina Margarita

41.- Նոյն ինքն Սիմախորեան Վահան, որուն իսկական ազգանունը Յովհաննիսեան էր:  
42.- Ինքնավար:  
43.- Իմա Կովկասի թուրքերը, այսինքն թաթարները:  
44.- Իմա թուրք ղեկավար շրջանակները:

45.- Խօսքը կուսակցական արխիւի մասին է, որ հապճեպով դուրս հանուեցաւ Պոլսէն եւ ծովու ճամբով ու Վենետիկի վրայով ուղարկուեցաւ Ժըննէ:  
46.- Կապոց:







Այնպէս ենք պատրաստել, որ նա այնտեղ չբացի, այլ առաջին փաթեթը բացելով, երկրորդը փոստը դնէ, որի վրայ նախօրօք խմբագրութեան հասցէն է դրուած:

Այս կապուցները, որոնց վրայ N° 1, 2, 3, 4, 5 է գրուած, Սիմոնի<sup>47</sup> թղթերն են: Արդէն Մալխասը<sup>48</sup> այդ մեծ մասը ժամանակին ուղարկած է ձեզ, սրանք էլ նրանց հետ միասին կը դնէք առանձին: Միւս 5-ը ծալուած է: 2 ծրար էլ ուղարկեցինք Վենետիկ, հայր Ս. Երեմեանի հասցէին, խնդրելով, որ ուղարկի ժընեւ, քո անձնական հասցէին:

Եթէ մինչեւ նամակիս քեզ հասնելը դեռ չես ստացել այդ կապուցները, հեռագրով, կամ նամակով պահանջիր. կ'ուշացնեն ուղարկելը եւ ո՞վ գիտէ այդ ժամանակուայ ընթացքում ինչե՛ր կը պատահի:

Մի քանի կապուց էլ մնաց. առաջին պատեհութեան կ'ուղարկենք:

Ամենեւին նամակ չես գրում: Երբեմն-երբեմն գրիր: Կարծում եմ, որ նախկին նամակս ստացած կը լինես:

Շատ ու շատ բարեկներով  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻԻՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՍԵԿՍՒՈՆ

Փաստ. 103-33

Բ 9.- ԳԱՀԻՐԷԻ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՆԹԱԿՈՍԻՏԷՆԵՐԻՆ

7 Հոկտ. 1914

Ընկերներ,

Կը հաստատենք մեր 31 Օգոստոսի նամակը. մինչեւ ցարդ ձեզնից որեւէ նամակ չառինք. չենք հասկնար ձեր լռութեան պատճառը, այն ինչ ներկայիս աւելի քան անհրաժեշտ է աւելի յաճախակի նամակագրութեան մէջ լինել:

Կացուցիւնը Երկրում օրէ օր կը ծանրանայ: Չնայած Ընդհանուր ժողովի որոշման, որ իւրաքանչիւր օսմանցի հայ պարտաւոր է իր քաղաքացիական պարտականութիւնները կատարել եւ արձագանք տալ ընդհանուր կոչին, կառավարութիւնը մի ինչ որ անմիտ կասկածանքէ լեցուած դէպի հայերը, նոր հաւաքուածներին գէնք չտալէ զատ, հիների ձեռքից էլ առնում է գէնքերը: Կասկածում են հայերի հաւատարմութեան վրայ այն ատեն, երբ աւելի քան շարունակական կերպով ապացոյցներ ենք տուել եւ տալիս ենք հայերի անշահախնդիր վերաբերմունքի մասին: Կան երիտասարդներ (ինչպէս եւ մահմետականներին) որոնք չեն ներկայացել զինուորակոչին. կառավարութիւնը այդպիսիների վերաբերմամբ դիմել է շատ խիստ անմիտ միջոցների: Միմիայն Ալիւր<sup>49</sup> գիւղում վառել է 20 տուն. նման դէպքեր տեղի են ունեցել նաեւ այլ վայրերում. օգտուելով զինուորական դրութեան յայտարարուելուց, ծեծ, բռնութիւններ, երբեմն էլ սպանութիւններ սովորական են դառել: Չնայած այդ բոլորին, մենք որոշել ենք նորէն մեր յարաբերութիւնները չխզել իրենց հետ, նոյնիսկ գործակցել հաւանական անակնկալների դէպքում, եթէ միայն անկեղծօրէն բաւարարեն մեր այժմէական պահանջներին: Մեզ թւում է թէ սա մի սխալ ուղի է, որի մէջ մտել

են գլուխները կորցնելով, եւ վաղ թէ ուշ պիտի հասկանան իրենց սխալը եւ աւելի անկեղծ վերաբերմունք ունենան դէպի հայերը:

Անշուշտ իմացաք նաեւ Ձէյթունի դէպքերը, Նազարէթ Չառուչի<sup>50</sup> ծեծի տակ մահանալը: Կ[եղրոնական] կառավարութիւնը ասում է որ այդ բոլոր առանց կեղրոնի կառավարութեան գիտակցութեան է եղեր: Վերջերս լուր առինք թէ -----<sup>50ա</sup> դէմ ինչ որ դաւադրանք է սարքուած. յոյս ունինք որ սխալ է, եւ կասկածամիտ մարդկանց կասկածների արդիւնք:

Ընդհ. ժողովի որոշումները տպուած են, եւ շուտով կը ստանաք 5 օրինակ, շրջաբերական նամակի հետ միասին: Աշխատում ենք Ընդհ. ժողովի որոշումները կատարուած տեսնել կարճ միջոցի մէջ, եւ արդէն մի քանի վայրերը, ինչպէս Ամերիկա, Բալկաններ եւ այլ տեղեր գործիչ ընկերներ ուղարկեցինք: Եգիպ[տոս]ի մասին Ընդհ. ժողովը որոշել է Մեկուսի կոմիտէի վերածել. այդ ուղղութեամբ պիտի աշխատէք. շուտով կ'ուղարկուի ձեզ նաեւ նախահաշիւը: Բիւզժի մասին լուրջ ուշադրութիւն էք դարձնելու: Չպիտի արդարացնէք ձեզ տնտեսական կրիզի պատճառով: Գործելու համար միջոցներ են հարկաւոր: Ձեզ մօտ եղած 100 ոսկին չստացանք: Կարծում ենք որ մանդատիստով կարելի է ուղարկել. փորձեցէք: Եթէ չեղաւ, այլ միջոցներ պէտք է փնտռէք:

Ընկերական բարեկներով  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻԻՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾ

Խնդրում ենք կարգալէ յետոյ ուղարկել Գահիրէ:  
ՆՈՅՆ

47.- Չաւարեան Սիմոնի:

48.- Յովսէփեան Արտաշէս:

49.- Գիւղ Վանի մերձակայքը:

50.- Նազարէթ Չառուչը 1895 թ.ի Ձէյթունի ապստամբութեան զլխատր դեկավարներէն մէկն էր եղած:

50ա.- Անունը բաց ձգուած:





Փաստ. 105ա-2

**Բ 10.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԷՆ (ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾ)  
ԲԱԼԿԱՆԵԱՆ Կ. ԿՈՍԻՏԵՒՆ**

Կ. Պոլիս, 29-IX-1914

**Ընկերներ!**

Ստացանք Ստեփանի<sup>51</sup> գրած բաց կարտը: Նրա գրածից երեւում է, որ դուք մեզ նամակ էք գրել, բայց այդ նամակը մենք չենք ստացել: Անհրաժեշտ է իմանալ, թէ որի հասցէով է գրուած նամակը: Ստեփանին յանձնուած հեռագիրը տուեցիք թէ ոչ, ասորը համար էլ գրեցէք:

Ակնուհաս Վարինից հեռացնելը իմացաք, ինչպէս եւ միւս ընկերների եւ ուրիշ հայերի վերաբերեալ ձեռք առած միջոցները: Ակնուհաս տեսակցութիւն ունեցաւ Թալէաթ-բէյի հետ եւ վերջինս խոստացել էր հեռագրել Վարին, որ դաշնակցականների հետ լաւ վերաբերուեն: Ոեւէ լուրջ պատճառ չկար, որ Դաշնակցութեան եւ ընդհանրապէս հայերի հետ անվստահաբար վարուեն: Ընդհակառակը, Դաշնակցութեան Ընդհանուր ժողովը որոշել է, որ իւրաքանչիւր հայ իր օսմանցիական պարտականութիւնը կատարի, արձագանք տալով գորահաւաքին: Այն ինչ՝ մեր կարծիքով ներկայ պատերազմում թուրքիոյ մասնակցութիւնը չափազանց մեծ քաղաքական սխալ ենք համարում: Ուրեմն առաւել իրաւունք ունէինք, որ կառավարութիւնը հասկանար թէ մենք որ աստիճան օրինաւոր հողի վրայ ենք կանգնած եւ պատրաստ ենք մեր ձեռքից եկածը անելու, օսմանեան երկրի ամբողջականութեան պահպանման համար: Մեզ թւում է, որ կառավարութեան այս վրիպումները առաջ են գալիս «Ժուռնալի»<sup>52</sup> ստալոզ ժուռնալներէն: Սա մի տխուր սխտեմ է, որ մուտք է գտել սահմանադրական կառավարութեան մէջ եւս, եւ որը կարող է տխուր հետեւանքներ ունենալ: Վերջերս լուր առինք, որ Զէյ-թունում կառավարութիւնը խիստ միջոցներ ձեռք է

առել ժողովուրդը զինաթափ անելու համար: Եթէ ճշտուեց այս բոլորը, այն ատեն, հակառակ մեր ձեռք առած միջոցներին, հայ ժողովրդի վստահութիւնը գրաւել ներկայ կառավարութեան նկատմամբ, ապարդիւն պիտի անցնի: Բողոքելով այդ սխալ քայլերի դէմ, յամենայն դէպս պիտի անենք այն բոլորը, ինչ որ հարկաւոր է ժողովրդի մէջ խաղաղ տրամադրութիւն պահելու համար:

Պատերազմական խիստ տրամադրութիւններ առաջմ չենք տեսնում: Թէպէտեւ մեր կառավարութիւնը չի ցանկանում անակնկալների դէպքում անպատրաստ գտնուելու: Պատրաստութիւնները տեսնում են թափով: Գաւառներից եկած տեղեկութիւնները նոյնն են, ինչ որ ձեզ գրել ենք: Հայկական գաւառների քննիչ Հոֆը վերադարձաւ եւ այժմ Պոլիս է:

Ի՞նչ եղաւ դրամների խնդիրը՝ այդ մասին ոչինչ չգրեցիք: Ընկեր Ստեփանը թող ժամանակ չկորցնի ընդհանուր խորհրդակցութիւններից յետոյ, թող ճանապարհուի գաւառները կազմակերպ[ական] գործերով զբաղուելու համար: Անհրաժեշտ է բիւզնէսի մասին յատուկ ջանք թափել: Այս կրիզի ատեն կուսակցութեան բիւզնէսի մասին մտածողը գլխաւորապէս դուք եւ Ամերիկան պէտք է լինէք: Ամսավճարների կանոնաւոր գանձման վրայ առանձին ուշադրութիւն էք դարձնելու:

Ընկերները այն կարծիքին են, որ ոեւէ կարելոր դուկումենտ պահելու չէք այդտեղ, եւ ուղարկելու էք Ժրնեւ, Դրօշակի իմբագրատուն: Գրեցէք յաճախ եւ տեղեակ պահեցէք կուսակցութեան վերաբերեալ բոլոր անցուդարձերին:

**Ընկերական բարեկեցութիւնով՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԷՆ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾ**

Ընդհանուր ժողովի որոշումները տպուած են եւ կը ստանաք շուտով:

51.- Բիւրոն Պուլկարիա ուղարկած էր կուսակցական նոր գործիչ՝ տալով անոր լիազօրագիր Ստեփան Արզումանեան անունով. այս վերջինը կը բռնի թէ նոյն ինքն Տիգրան Խաչիկեանն է, ծանօթ Արզուման ծածկանունով:

52.- Ժուռնալի – լրատու, լրտես իմաստով:





Փաստ. 105ա-3

**Բ 11.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԷՆ (ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾ)**

**ԲԱԼԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ**

1914, 7 Հոկտ.

*Ընկերներ!*

Ստացել ենք ընկեր Արզումանեանի Սեպ. 27 թուակիր նամակը: Սկսինք երկրի կացութիւնից: Ստացուած նամակներէն տեղեկանում ենք, որ երկրի կացութիւնը գնալով ծանրանում է. ընդհանուր զինուորակոչութեան պատճառով պատերազմական դրութիւն է յայտարարուած: Այդ դրութիւնը ունի իր առանձնայատուկ օրէնքները, որոնք եթէ գիտակից եւ պատրաստուած մարդկանց ձեռքին չի, չարիք կ'առաջացւի: Հէնց այդպէս է այժմ մեր երկրի դրութիւնը: Զինուորակոչին ընդհանրապէս հայերը արձագանք են տուել. արդէն մենք էլ պէտք եղած խորհուրդները կարեւոր պարագաներում տուել ենք, որ կատարեն իրենց օսմանցիական պարտականութիւնը: Չնայած այդ բոլորին, կան երիտասարդներ, որ արձագանք չեն տուել. կառավարութիւնը ատոնց ձեռք ձգելու համար դիմել է շատ խիստ միջոցների: Չներկայացողների տները շատ անգամ այրում են, ինչպէս Ալիւրում<sup>53</sup> 20 տուն վառեցին: Նոյնանման դէպքեր պատահել են եւ այլ վայրերում: Գնդակահարում են պատահած փախստականներին եւ շատ անգամ անմեղ մարդիկ էլ այդ վիճակին են ենթարկուում: Վասպուրականում պատահել է մինչեւ հիմա 5 դէպք: Նման բռնութիւններ տեղի են ունեցել նաեւ Կիլիկիայում: Զէյթունի փախստականները ձեռք ձգելու համար կառավարութիւնը դիմել է շատ խիստ միջոցների: Չնայած, որ տեղի հայ երեւելիները նպաստել են փախստականների անձնատուութեան, Զէյթունի իշխան Նազարէթ-Չաւուշին<sup>50</sup> եւս բանտարկում եւ ծեծի տակ մահացնում են: Հաւաքել են նաեւ գէնքեր, երկաթէ գործիքներ եւայլն: Պակաս ծանր ազդեցութիւն չի թողել նաեւ բռնագրաւումները: Երկրորդ անգամ լինելով, գիւղացիներից հաց են գրաւել: Կասկածում ենք, որ գիւղացիներէն շատերը ձմեռուայ պաշար չունեն[ան]: Աւելի երկիւղ ազդող պարագային, յառաջիկայ տարուան համար ցանք չանելն եւ աշխատաւոր

ձեռքերի պակասի պատճառով նոր ցանքեր շատ դէպքում տեղի չեն ունեցել: Այդ պարագան երկրի տնտեսութեան համար ճակատագրական նշանակութիւն կ'ունենայ:

Քանի որ Կ. կոմիտէի անդամների մեծամասնութիւնը ցանկանում է մարմինը հող պահելու<sup>53</sup>, կարող էք: Արդէն ընկեր Արզումանեանը ամէն տեսակի օժանդակութիւն կրնայ ձեռք ընել. միայն հարկաւոր եւ աւելորդ թղթերը առաջին պատահութեան ուղարկեցէք ժրնեւ: Չարժէ այդ թղթերի համար ամսական 40 Փրանք ծախսել եւ սենեակ պահել: Եթէ կարիք ունիք կուսակցական եւ այլ լրագիրների հաւաքածու ունենալ, կրնաք նոր փոքրիկ ընթերցարան մը պահել ոչ կուսակցական միջոցներով. այն ատեն թէ հաւաքատեղին կ'ունենաք եւ թէ ձեր ցանկացած լրագիրները կ'ունենաք ձեր ձեռքի տակ, միայն նման ձեռնարկը կուսակցութեան բիւրօէի վրայ չպիտի ծանրանայ:

Դրամի խնդիրը պիտի աշխատէք կարգադրել. աստիճանաբար տաճկականի [?] վերածեցէք, եւ երբ բաւական քանակութեան հասած կը լինի յատուկ մարդով կը կարգադրենք այդ խնդիրը. դրամի կարիքը շատ մեծ է, այդ ուղղութեամբ աշխատելու էք:

Կարոնց հայերի կախաղան բարձրացնելը անհիմն է, նման լուր մենք չառինք, չնայած, որ աւելի թուակիրներով նամակներ ունենք: Դա ինչ որ թիւրիմացութեան արդիւնք պիտի լինի:

Պարոյրի<sup>54</sup> մասին գրեցինք ուր որ հարկն է, որ միւս անգամ նման անհատական կարգադրութիւններ տեղի չունենան: Ինչ որ անելու են, ձեր միջոցներով անեն: Եթէ ոեւէ կարիք լինի, այնտեղից նամակ կը ստանաք:

*Ընկերական բարեւաններով՝  
Հ[ԱՅԱՍՏԱՆԻ] Բ[ԻՒՐՕ]Ի Պ[ՈԼՍՈՅ] ՀԱՏՈՒԱԾ*

*Խնդրում ենք ձեզ տուած հասցէն գրուի Եգիպտոս, որ իրանք էլ այդ հասցէին մեզ գրեն առայժմ:*

*ՆՈՅՆ*

53.- Այսիճքն Կ. կոմիտէի կեդրոնը Սոֆիա պահել:  
54.- Պարոյր ծածկագումն է Անդրանիկի:





Փաստ 105-4

## Բ 12.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ (ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾ) ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ

### Ընկերներ

Կազմակերպական ճրդ Ընդհանուր ժողովը, ինչպես զիտք արդեն ձեր պատգամաւորներու միջոցով, գումարուեցաւ ու վերջացաւ նշանակուած ժամանակին եւ այս թղթածրարով ձեզի կը դրկենք իր որոշումներէն քաղուածքներ, առանձին տետրով: Այս որոշումները պիտի տպագրուէին ժողովի փակումէն անմիջապէս ետք, Հայաստանի մէջ, սակայն քաղաքական պայմանները թոյլատու չեղան եւ առաջ բերին այս յայտումը:

Մեր մարմիններու միջոցով գործադրութեան յանձնելով կուսակցութեան գերագոյն ժողովի կարգադրութիւնները եւ ապագային թողով միայն մէկ քանի որոշումներու, ինչպէս եւ նախահաշուի առաքումը, ներկայ անդրանիկ շրջաբերականով ձեր մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք այն փափուկ պարագաներուն վրայ, որոնցմով այժմ շրջապատուած է Երկիրը, համաերոպական պատերազմին իբր արձագանգ: Աւելի քան երբեիցէ անհրաժեշտ է ուժերու մասնաւոր լարում՝ զերծ պահելու համար մեր ժողովուրդը ռուս ձախորդութենէ, նպաստելու ապահովութեան եւ կարգի պահպանման, առիթ չտալով ռուս միջադէպի եւ կամ քաղաքական թիրիմացութեան հարեւան ժողովուրդներու միջեւ:

Ասոր հետ մէկտեղ կը խնդրենք լարել կազմակերպական ուժերը, եւ ի մի խմբելով բոլոր կենսունակ տարրերը ուժ տալ տեղական ինքնագործունէութեան<sup>55</sup>, տեղի անմիջական պէտքերու հոգացման, առանց ամէն յոյս դնելու կեդրոնական մարմիններու աջակցութեան վրայ, որ ներկայ ծանր պայմաններու մէջ չի կրնար շօշափելի ըլլալ: Նոյն այս նպատակով, համաձայն Ընդհ. ժողովի որոշման, շրջանները գործիչներ պիտի ունենան, որոնցմէ մէկ քանին մեկնած են արդէն Ամերիկա, Լեռնավայր<sup>56</sup>, Պալքան, իսկ անբաժին մնացած շրջաններու – Խարբերդ, Տիգրանակերտ եւայլն – մասին արդէն իսկ կը հոգանք:

Կը խնդրենք նկատողութեան առնել բիրտներու վերակազմութեան հարցը: Արեւմտեան բիրտն այլեւս գոյութիւն չունի, եւ Հայաստանի բիրտոյն է յանձնուած գործերու ղեկավարութիւնը: Պոլսոյ հատուածին պէտք է դիմել միայն ընթացիկ երկրորդական խնդիրներու եւ կազմակերպական տեղեկութիւններու համար:

Բարի եղէք անմիջապէս վերանորոգել հասցէները եւ նոր հասցէներ տալ որպէսզի յարաբերութիւնները չյայտադին:

Ներկայ օրերուն, տեղական մարմինները շատ պահանջկոտ պէտք չէ ըլլան նամակներու նկատմամբ, որովհետեւ մենք անկախ պատճառներով անկարող ենք յաճախ գրել:

Ցանկալով ձեզի բառացիկ եռանդ եւ աշխատանք, այս բացառիկ շրջանի մէջ, կ'ուղարկենք ձեզի մեր ընկերական բարեւներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾ

10 Հոկտ. 1914

Ուղարկում ենք Ընդհանուր ժողովի որոշումներէն 10 օրինակ:  
ՆՈՅՆ

55.- Իմա ինքնապաշտպանութեան:

56.- Լեռնավայր ծածկանունն է Կիլիկիոյ, Սուրիոյ եւ Լիբանանի կազմակերպական շրջանի:







**ԳԼՈՒԽ VI**

**ԿԱՄԱՌՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ**

Կամաւորական շարժման նուիրուած այս գլուխը կը բանանք 1914 թ.ի Սեպտ. 21-23 Թիֆլիսի մէջ գումարուած Հ.Յ.Դ. Կովկասի ռայոնական ժողովով, որմէ հասած է 7 էջոնց ամփոփ արձանագրութիւն մը, խմորատիպ: Ժողովի զբաղմանց գլխաւոր առարկան կամաւորական շարժումն է,– հայ հասարակական կարծիքը յուզող գլխաւոր հարցը: Ատենագրութիւնը այսուհանդերձ շահեկան տեղեկութիւններ կը հաղորդէ Կովկասի դաշնակցական կազմակերպութեան մասին, որ ինչպէս ծանօթ է 1908էն ի վեր ցարական խիստ հալածանքներու ենթարկուելով՝ կազմալուծուած էր կիսով, եւ իր գոյութիւնը կը պահէր ընդյատակեայ գործունէութեամբ: Կացութիւնը փոխուած է այժմ հիմնովին, եւ կուսակցութիւնը հրապարակ իջած է վերստին իր կողքին ունենալով ժողովրդական զանգուածներու համակրանքը: Չեռնարկուած է մեծ թափով վերակազմակերպման աշխատանքին, եւ Ռայոնական ժողովի կազմը ինքնին փաստ է կարճ ժամանակուան միջոցին ձեռք բերուած քաջակերական արդիւնքին: Արդարեւ, բացի երկու Բիւրոներէն եւ Թեւրանէն, ժողովին մէջ ներկայացուցիչներ ունին կովկասեան եօթը Կեդր. կոմիտէութիւններ եւ շարք մը ուրիշ միաւորներ: Իրողութիւն մը՝ որ կը վերականգնէր կարծես կուսակցութեան կեանքին մէջ աւանդութիւն դարձած կովկասեան երբեմնի ռայոնական բազմամարդ ժողովներու դրութիւնը:

2.- Ինչպէս յայտնուեցաւ, Ռայ. ժողովի քննած կարեւորագոյն խնդիրը կը վերաբերէր կամաւորական շարժման, որ արդէն ընթացք առած էր կովկասահայ բոլոր հատուածներու մասնակցութեամբ կազմուած Ազգ. բիւրոյի նախաձեռնած քայլերով: Դաշնակցութեան վերջին Ընդհ. ժողովը, գումարուած դեռ երկու ամիս առաջ, չէր կրնար անշուշտ կամաւորական հարցով որոշում կայացուցած ըլլալ, մանաւանդ որ ընդհ. պատերազմի լուրը առած ըլլալով՝ փակուած էր ան հասկնալով, պարտականութիւն տալով, ըստ մասնակիցներու հաղորդումին, Յատուկ մարմնի մը, որ զբաղի առկախ հարցերով եւ լուծում տայ անոնց: Յատուկ մարմինն ալ չէր կրնար զբաղած ըլլալ կամաւորական հարցով, որովհետեւ նկատի ունենալով ժողովի փակման պարագաները եւ անոր յաջորդող իրադարձութիւնները, ոչ ժամանակը եւ ոչ ալ առիթը պիտի ունենար ան՝ միատեղ հաւաքական որոշում կայացնելու: Եղած է սակայն, դարձեալ ժողովի մասնակիցներուն վկայութեամբ, մէկ այլ նշանակալի որոշում.– *հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան համար կարեւոր ուժերու կեդրոնացում սահմանագրութիւններուն վրայ*: Այս որոշումը Ընդհ. ժողովէն թիսած էր թէ Յատուկ մարմնէն, երկրորդական նշանակութիւն ունի: Իրողութիւնը այն է որ արդէն Օգոստոսին եւ յաջորդող մէկ երկու ամիսներուն Կովկաս անցան Անդրանիկ, Համազասպ, Դրօ, Դաշնակցական Խեչօ, Խանասորայ Վարդան, Իշխան Արդութեան, Սամսոն, Սեպուհ եւ բազմաթիւ ուրիշ մտաւորական եւ կուսակցական ղեկավար ղեմքեր:

Այս կարգադրութիւնները կ'ըլլային նախազուշտական նպատակով՝ վտանգի պահուն անմիջական օգնութիւն հասցնելու համար արեւմտահայութեան. բայց այդքան ուժերու կեդրոնացումը, անոնցմէ շատերուն մարտական տրամադրութիւնը, ապա նաեւ Կովկասի մէջ կամաւորական շարժման նկատմամբ տիրող ընդհանուր ոգեւորութիւնը՝ ստեղծած էին փաստական այնպիսի մթնոլորտ որ հակառակ ուղղութեամբ արտայայտուած միտքերը, Ռայոնական ժողովէն ներս թէ դուրս, պիտի չարժանանային հարկ եղած ուշադրութեան: Աւելի ուշ, ապարդիւն պիտի անցնէին նոյնպէս շարժման տարրութիւնը լոկ ինքնապաշտպանութեան շրջագծին մէջ սահմանափակելու ջանքերը:

Իրականութեան մէջ կամաւորական գումղեր կազմելու եւ ռուսական բանակի կողքին կռուելու գաղափարը կու գար կառավարութենէն, ընդհ. պատերազմի յայտարարութեան առաջին օրերէն եւ նախքան ռուսերորք ճակատի բռնկումը: Կովկասի փոխարքային միջոցաւ Փեթերսպուրկի այդ առաջարկը փոխանցուած էր Թիֆլիսի հայ Ազգ. Բիւրոյին, մարմին, որ կազմուած էր հայ քաղաքական եւ հասարակական կազմակերպութիւններու ներկայացուցիչներէն: Կառավարութիւնը յանձն կ'առնէր զինումն ու ապրուստի միջոցներու հայթայթումը 3000 հոգիէ բաղկացեալ հայկա-







կան զօրքի մը, որ անի ուշ պիտի բարձրանար 7-8000ի: Փոխարէնը կը խոստացուէր իրականացնել թրքահայ վեց նահանգներու բարենորոգումներու առաջին՝ հայ-ռուսական ծրագիրը, որմով լայն ինքնավարութիւն նախատեսուած էր արեւմտահայութեան համար: Յետագային, Կիլիկիոյ շրջանն ալ միացնելով այդ վիլայէթներուն, արծարծուեցաւ հայկական անի ընդարձակ ու ինքնավար մարզի մը ստեղծման խնդիրը, միշտ ռուսական հովանաւորութեան ներքեւ: Հայկական այս բաղձանքներուն, արտաքին գործոց նախարարութիւնը կը գոհանար բերանացի հաւաստիքներ տալով միայն: Նոյնիմաստ խոստում նաեւ ցարէն, որ Թիֆլիս իրեն այցելութեան եկած Ամենայն հայոց կաթողիկոսը պիտի վստահեցնէր, թէ պատերազմէն ետք հայոց ցանկութիւնները պիտի կատարուին:

Այսպէս թէ այնպէս եւ անկախաբար վերոյիշեալ դիմում-բանակցութիւններու ելքէն, Հոկտեմբերի վերջերուն երբ սկիզբ առին ռուսերու քախումները կովկասեան ճակատի վրայ, հայ կամաւորական չորս գունդեր պատրաստ էին արդէն կռուի դաշտ մտնելու, անցնելու սահմանը եւ օգնութիւն հասցնելու ջարդուելու վերահաս վտանգին տակ գոնուող իրենց արեւակիցներուն:

Չենք ծանրանար այնուհետեւ տեղի ունեցած իրադարձութիւններու եւ հայ կամաւորական հերոսական մարտնչումներուն վրայ, որոնց համար շատեր արժանացան ռուսական բանակի հրամանատարութեան բարձր զնահատանքին: Այդ բոլորի մասին կը խօսին հետագայ էջերով տրուած փաստաթղթային վկայութիւնները: Կարելորդ իրենց հիմնական առաքելութեան, այլ խօսքով արեւմտահայութեան փրկութեան խնդիրն էր, որուն մէջ, հակառակ ի գործ դրուած գերագանց ջանքերուն, անոնք ձեռք պիտի բերէին միայն մասնակի յաջողութիւն, փրկելով տասնեակ հազարաւոր կեանքեր սահմանակից գօտիներու մէջ, եւ յատկապէս օգնութեան հասնելով Վասպուրականի մարտնչող հայութեան: Դժբախտաբար Տարօնն ու փրկարարներու սպասող միւս շրջանները պիտի մնային միայնակ իրենց ճակատագրին դիմաց, իբրեւ հետեւանք ռուսական բանակի վարած դանդաղկոտ եւ տեղքայի ռազմավարութեան:

3.- Կամաւորական շարժումը, ինչպէս յայտնի է, մեծ խանդավառութիւն առաջացուցած էր ոչ միայն կովկասահայութեան, այլ նաեւ արտասահմանեան բոլոր գաղութներուն մէջ, – Պուլկարիա, Ռումանիա, Եգիպտոս, Ֆրանսա, Ամերիկա եւայլն: Կարիքին եւ նիւթական միջոցներուն հետ համեմատած՝ ոգեւորութիւնը այնքան մեծ էր, որ հակառակ Արեւելեան բիրոյի եւ տեղական մարմիններու ձեռք առած միջոցներուն, մասամբ միայն կարելի եղած էր չափաւորել եւ հունաւորել երիտասարդութեան հայրենասիրական մղումները: Պալքաններէն միայն, օրինակի համար, հազարէ անի կամաւորներ անցած էին Կովկաս: Նոյն ոգեւորութիւնը կը տիրէր նաեւ ամերիկահայութեան մօտ եւ այլուր:

4.- Կ'արժէ յիշատակել այստեղ միւս դաշնակից պետութիւններուն մէկ ուրիշ մտադրութիւնը, ըստ որուն Ֆրանսա եւ Անգլիա պատերազմի սկզբնաւորութեան կը ծրագրէին ծովու ճամբով ցամաքահանում կատարել կիլիկեան ափերուն. այս նպատակով պիտի օգտագործէին կամաւորական ուժեր: Այս ծրագիրը եւս, գէթ որոշ ժամանակ խանդավառած է գաղութահայութիւնը: Յամաքահանման խնդիրը պիտի չիրականանար, բայց դաշնակից բանակներուն զինուորագրուած հազարաւոր հայ երիտասարդներ յետագային պիտի կազմէին կորիզը Արեւելեան կամ Հայկական լեզնին:

5.- Վերջապէս, յայտնենք որ այս գլուխին տակ ներկայացուածով չեն սպառիր կամաւորական շարժման վերաբերող նիւթերը. ինչպէս միւս բաժիններուն համար, հոս եւս տրուած է մինչեւ 1915 թ.ի առաջին եռամսեակը ծածկող մասը, մնացեալը վերապահուած ըլլալով «ՆԻԻԹԵՐ»ու յաջորդ հատորին: Յիշենք նոյնպէս որ, բացի Հ.Յ.Դ. արխիւատան փաստաթուղթերէն, կարելոր չափով օգտուած ենք նոյնպէս Սիմոն Վրացեանի անձնական դիւանէն: Թէ՛ իբրեւ անդամ Հ.Յ.Դ. Հայաստանի կամ Արեւելեան բիրոյին եւ թէ իբրեւ գործավար-քարտուղար Ազգ. Բիրոյին, Վրացեան մօտէն իրագեղ է կամաւորական շարժման ամնչուող խնդիրներուն:



Փաստ. 1591-1

## 1.– ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ Հ.Յ.Դ. ԿՈՎԿԱՍԻ ՌԱՅՈՆ. ԺՈՂՈՎԻ

### Սեպ. 21-23 1914ին

Ռայոնական ժողովը տեղի ունեցավ Սեպ. 21-23-ին, մասնակցությամբ 20 ձայնի իրաւունքով եւ 12 խորհրդատու ընկերների: Չայնի իրաւունքով ժողովին ներկայացուցիչներ ունէին հետեւեալ մարմինները. Արեւել. բիւրօ 1 ձայն, Հայաստանի բիւրօ 1, I Կեդր. կոմիտէն 1, Տեղական կոմիտէն 1, II Կեդր. կոմ. 1, III Կեդր. կոմ. 1, IV Կեդր. կոմ. 1, V Կեդր. կոմ. 1, VII Կեդր. կոմ. 1, VIII Կեդր. կոմ. 1, Շուշի 1, Ախալքալաք 1, Շահստան 1, Չինուոր. շտաբ 1, Ուսանողութիւն 1, այլեւ չորս գործիչ ընկերներ<sup>1</sup>:

Նախքան զբաղմունքներին անցնելը՝ ժողովը յոտնկայս յարգեց հանգուցեալ ընկ. Ս. Չաւարեանի յիշատակը: Ժողովի օրակարգն էին կազմում հետեւեալ հարցերը:

1. Չեկուցում ութերորդ Ընդհ. ժողովի
2. Չեկուցում Արեւել. բիւրոյի միամեայ գործունէութեան
3. Չեկուցում հայ կամաւորների կազմակերպման եւ յարակից խնդիրների մասին
4. Կուսակցական վերակազմութեան հարց
5. Արեւելեան բիւրոյի երկու անդամի ընտրութիւն:

Արեւելեան բիւրոյի եւ միւս մարմինների ներկայացուցիչների զեկուցումներից երեսուն է, որ կուսակցութիւնը, մանաւանդ վերջին ժամանակներս, արագ կերպով վերակազմում է. կազմակերպում են նոր խմբեր եւ մարմիններ, վերանորոգում են հները: Հրապարակ են գալիս նոր ուժեր, հներն էլ նոր քափ են ստանում: Հասարակական համակրանքը ընդհանրապէս կուսակցութեան կողմն է: Բանուորական կենտրոններում աճում է գործաւորական խմբերի թիւը:

Տնտեսական պայքարների ժամանակ մերոնք բերում են իրենց բուն մասնակցութիւնը: Շատ տեղեր գործը վարողները դեռ նշանակովի մարմիններ են, բայց շուտով յոյս կայ, որ ամէն ինչ կը կանոնաւորուի եւ կարելի կը լինի կիրարկել ընտրական սիստեմը: Յարաբերութիւնները կեդրոնական եւ գաւառական մարմինների միջեւ համեմատաբար թոյլ են եղել: Բաւարար չափով չեն եղել նաեւ պրոպագանդիստ ու կազմակերպիչ ուժեր: Չի մատակարարուել նաեւ պէտք եղած չափով գրականութիւն, այդ պատճառով խմբական պարապմունքների համար շատ դժուարութիւններ են առաջ եկել: Բոլոր ներկայացուցիչների զեկուցումների մէջ տիրող էր լաւատեսութեան շեշտը, ամէնքն էլ յոյս էին յայտնում որ շուտով կուսակցութիւնը կը դրուի իր նախկին դիրքի վրայ:

Չեկուցումներից յետոյ տեղի է ունենում մտքերի փոխանակութիւն կուսակցութեան վերակազմակերպման մասին: Մի քանի ընկերներ մոմենտը անյարմար են գտնում եւ առաջարկում են ուժեր չջլատելու համար առ այժմ մի կողմ թողնել կուսակցութեան գործը եւ ամբողջապէս տարուիլ կամաւորների եւ ինքնապաշտպանութեան հարցով: Մեծամասնութիւնը, սակայն, դրա հակառակ է եւ գտնում է, որ պայմանները շատ յարմար են վերակազմութեան գործը շարունակելու, անհրաժեշտ է օգտագործել համեմատական ազատութիւնն ու պատերազմը պրոպագանդի առարկայ ընդունելով մոմենտի առաջ մղիչ քաղաքական, տնտեսական հարցերը եւ կուսակցութեան շուրջ համախմբել հասարակական կենդանի ոյժերը: Այս առթիւ ընդունուեց հետեւեալը:

*«Շարունակում ենք սկսուած վերակազմութեան գործը՝ օգտուելով ներկայ յարմար մոմենտից եւ տրամադրութիւնից: Պրոպագանդի գործում գլխաւորաբար պէտք է ծանրանալ մոմենտի ստեղծած,*

1.- I Կեդր. կոմիտէն՝ Մեծ քաղաքի կամ Թիֆլիսի Կեդր. կոմիտէն է. Տեղականը՝ Թիֆլիս քաղաքի կոմիտէն է. II Կեդր. կոմիտէն՝ Ջրաբերդ-Կարսն է, III Կեդր. կոմիտէն՝ Միզաստան-Երեւանն է, IV Կեդր. կոմիտէն՝ Ոսկանապատ-Պաքու, V Կեդր. կոմիտէն՝ Քար-Ալեքսանդրապոլ, VII Կեդր. կոմիտէն՝ Նալբանդ-Նոր Նախիջեւանը, VIII Կեդր. կոմիտէն՝ Ապառաժ-Ղարաբաղն է. Չանգեզուրի հետ միասին, Շահստանը՝ Թեհրանի Կ. կոմիտէն է:





### ՆԻԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

147

*կուսակցական ծրագրից բխած խնդիրների վրայ: Ուշք պետք է դարձնել տազնապի ժամանակ գիտել-րում փոխադարձ օգնության գործը կազմակերպելու»:*

Նախքան հայ կամաւորներու կազմակերպութեան անցնելը՝ զեկուցում է տրուում վերջին Ընդհանուր ժողովի մասին, որի որոշումները առանձին տետրակով կ'ուղարկուին ձեզ: Ապա զեկուցում է Հայաստանի բիրոյի ընկերը Պոլսի ընկերների<sup>2</sup> կարծիքների մասին, որից երեւում է, որ այնտեղի ընկերները «որոշել են լարել բոլոր ուժերը, կեդրոնացնել բոլոր տարրերը հայ ինքնապաշտպանութեան համար եւ առաջարկել Կովկասի մարմիններին, որպէսզի ոյժեր կենտրոնացնեն սահմանազուխներում եւ անկախօրէն գործեն նոյն ինքնապաշտպանութեան հողի վրայ: Այդ նպատակի համար անհրաժեշտ են գտնուում դեկավար ոյժերին Կովկաս հրաւիրել»:

Հայ կամաւորների կազմակերպման զեկուցումից երեւում է որ այդ գործը արդիւնք է կուսակցութեան եւ զանազան պետութիւնների հետ վարած բանակցութիւնների, ինչպէս նաեւ թուրք կառավարութեան յամառ չկամութեան բարենորոգումներ մտցնելու: Բարենորոգումների ծրագիրը, որ ռուս կառավարութիւնն առաջարկեց, Տաճկաստանի եւ Գերմանիայի կողմից մերժուեց: Ռուս կառավարութեան հետ ունեցած մտքերի փոխանակութիւնից երեւում էր, որ նա, զանազան քաղաքական նկատումներով, վճռել է տաճկահայերի դրութիւնը բարելաւել, որ նրա քաղաքական կուրսը<sup>3</sup> ներկայումս նպաստաւոր է տաճկահայերի համար, բայց նրան խանգարում է Գերմանիան, որ արգելք է հանդիսանում հայկական ռեֆորմների:

Համաերոպական պատերազմի հէնց սկզբից ռուս կառավարութիւնը ցանկացաւ իմանալ, թէ ինչ է լինելու հայերի դիրքը ռուս տաճկական պատերազմի դէպքում: Միւս կողմից հայ շրջաններին շատ էին մտահոգում պատերազմի դէպքում ծագելիք արհաւիրքները: Այս հողի վրայ սկսուեցին բանակցութիւնները հայերի եւ ռուս կառավարութեան միջեւ: Հայերի զանազան հաստատութիւնների, միութիւնների եւ ընկերութիւնների ներկայացուցիչներից կազմուեց մի մարմին, որ կոչուեց Ազգային բիրո. սա ընտրեց մի գործադիր մարմին, որը բանակցութիւններ սկսեց կովկասական կառավարութեան հետ: Կառավարութիւնը խոստանում էր իրագործել ռեֆորմների սկզբնական ծրագիրը եւ ցանկութիւն էր յայտնում, որ հայերը իրենց համակրութեամբ աջակցին ռուս զօրքին պատերազմի դէպքում: Այդ աջակցութիւնը պիտի կայանայ զօրքին թեթեւ ծառայութիւններ մատուցանելու, մանաւանդ հետախուզումների ժամանակ, եւ ժողովրդական ինքնապաշտպանութեան մէջ: Այսպէս առաջ է գալիս կամաւորներ կազմելու միտքը: Այս կամաւոր խմբերը գլխաւորապէս պետք է ծառայեն հայ գիւղերի ինքնապաշտպանութեան եւ հարկաւոր դէպքում պետք է աջակցեն ռուս զօրքին: Կառավարութիւնը իր վրայ է վերցնում դրանց զինելու եւ ապրեցնելու հոգը: Ազգային բիրոն որոշում է կամաւորների կազմակերպութիւնը, վարժութիւնը եւ ամբողջ զինուորական գործը յանձնել մեր կուսակցութեան: Թէ Ազգ. բիրոն եւ թէ մեր ընկերները որոշում են գործին համագալիս բնոյթ տալ, ի հարկէ, աշխատելով մեր տեսակէտները անցկացնել գործի մէջ:

Այս զեկուցման առթիւ տեղի ունեցած վիճարանութիւնների ընթացքում [յայտնուեց], որ Երրեակ համաձայնութեան<sup>4</sup> յաղթութիւնը՝ մեզ համար նպաստաւոր է, որ՝ ռուս-թուրքական պատերազմը անցանկանալի է, բայց թէ նա ծագի, մեր բոլորիս իղձը պետք է լինի Ռուսաստանի յաղթութիւնը: Մեր ակտիւ մասնակցութեան պատերազմին՝ ընկերների մի մասը հակառակ էր եւ պահանջեց զբաղուել միայն ինքնապաշտպանութեամբ, բայց ժողովականների խոշոր մասը՝ ընդունելով հանդերձ, որ մեր գործը պետք է լինի գլխաւորապէս ժողովրդի ինքնապաշտպանութիւնը, անհրաժեշտ է համարում, հարկը պահանջած դէպքում, աջակցել ռուս զօրքին: Ի վերջոյ ընդունուեց հետեւեալ բանաձեւը.

*«Ռ-այ. ժողովը կանգ առնելով ներկայ քաղաքական միջազգային մոմենտի վրայ եւ դեկավարուելով իր կուսակցութեան հիմնական սկզբունքներով եւ միջազգային համերաշխութեան գաղափարով, իր խորին ցան է յայտնում այն սարսափելի պատերազմի համար, որ սպանդանոց է դարձրել ամբողջ Եւրոպան»:*

2.- «Պոլսի ընկերները» պետք է հասկնալ Հայաստանի բիրոյի (Արեւմտեան Հայաստան) Պոլսի հատուածի իմաստով:

3.- Ուղղութիւնը, ընթացքը:

4.- Երրեակ համաձայնութիւնը կազմուած էր Անգլիայէն, Ֆրանսայէն եւ Ռուսիայէն:





Վերյիշելով պատերազմի դրդապատճառները, կռուող կողմերի նպատակները, աշխատատեղի դասակարգի, մանր ազգութիւնների, մասնատրապէս հայ ժողովրդի ապագան [նկատի առնելով] Ռ-այ. ժողովը աւելի բաղձալի կը համարէր, եթէ այս պատերազմը վերջանար շուտով եւ այն էլ Երբեակ համաձայնութեան յաղթանակով:

Գալով սպասուելիք ռուս-տաճկական պատերազմին՝ Ռ-այ. ժողովը այդ համարում է անցանկալի եւ աղէտաբեր, քանի որ նրա ընթացքում ժողովուրդը պէտք է ենթարկուի կոտորածների, իսկ նրա տնտեսութիւնը՝ աներմունքի:

Այդպիսի պատերազմ բռնկելու դէպքում ժողովը որոշում է Կովկասում կազմակերպել թուրքիկ խմբեր, որոնց նպատակն է լինելու, ռուսաց բանակի առաջխաղացութեան դէպքում, պաշտպանել հայկական վայրերի ազգաբնակչութիւնը աներաժութիւններից ու կոտորածներից եւ աջակցել ռուս բանակին:

Ժողովը ի նկատի ունենալով այն, որ ընդհանուր ժողովի որոշման համաձայն ռուս-տաճկական պատերազմի դէպքում մեր բռնելիք դիրքը որոշող կուսակցութեան օրգան հանդիսանում է Տաճկաստանում գոյութիւն ունեցող յատուկ մարմինը՝ ընտրուած Ընդհանուր ժողովի կողմից՝ եւ երկրորդ՝ մտնելով Արեւել. բիւրոյի դրութեան մէջ, որ ամէն բոլոր սպասում էր ռուս-տաճկական պատերազմի բռնկումին, իսկ այն մարմնի մասին տեղեկութիւն չուներ, ստիպուած է եղել որոշ քայլերի դիմել, խոստումներ անել, եւ արդէն փաստօրէն տեղի է ունեցել ոյժերի մոբիլիզացիան<sup>5</sup>, ժողովը թէեւ իր իրաւասութիւնից դուրս է գտնում կամաւորներ կազմակերպելու հարցի վճիռը, բայց եւ չունենալով այդ խնդրի վերաբերեալ աւելի բարձր եւ իրաւասու մարմինների որոշումը՝ հաստատում է Բիւրոյի որոշումները եւ նպաստում է դրանց լաւագոյն իրագործման:

Ռ-այ. ժողովը ցանկութիւն է յայտնում՝ որ Բիւրոն, ըստ հնարաւորութեան, յարաբերութեան մէջ մտնէ Հայաստանի մարմնի հետ այս առթիւ: Նոյնպէս շարունակէ սկսուած բանակցութիւնները Երբեակ համաձայնութեան պատկանող միւս պետութիւնների հետ եւ նրանցից որոշ խոստումներ ստանայ:

Նոյնպէս վճռում է չտալ այս գործին նեղ կուսակցական բնոյթ եւ վարել ըստ կարելւոյն զգոյշ, առանց հրապարակային բնոյթ տալու:

Այս երկար վիճաբանութիւններ տեղի ունեցան Ազգային բիւրոյի շուրջը: Ոմանք գտնում էին այդ Բիւրոն ապօրէն, ոչ ազգային, այլ մի քանի հաստատութիւնների ներկայացուցչութիւն: Մեծամասնութիւնը՝ ի նկատի ունենալով քաղաքական պայմանները՝ հնարաւոր չէր համարում լայն, ընդհանուր ընտրութեան սկզբունքով ազգային մի ժողով գումարել, գործնական նկատումներով օգտակար էր համարում ներկայ Ազգ. բիւրոյի գոյութիւնը. նրա գործադիր մարմինը ընթանում է համերաշխօրէն մեր ընկերների հետ: Ժողովը որոշեց այս մասին բանաձեւ չբուխարկել եւ հաւանութիւն տուեց ընկերների բռնած դիրքին:

Առաջարկուեց նաեւ կազմել երկու մարմին, մէկը զուտ զինուորական, որ լինելու է մեր ընկերների ձեռքը, եւ միւրը՝ ֆինանսական եւ այլ խնդիրների համար, ուր պիտի մասնակցին Ազգ. բիւրոյի կողմից ընտրուած մարդիկ մեր ընկերների հետ միասին հաւասար թուով: Ցանկալի է, որ զինուորականից զատ, բոլոր յանձնաժողովներում մասնակցեն Ազգային բիւրոյի ներկայացուցիչները:

Ընկերներից ոմանք բողոքում են, որ Ազգ. բիւրոն ամբողջ գործը իր ձեռքն է առել եւ յետ է մղում կուսակցութիւնը: Առաջարկում է աւելի շեշտել կուսակցութեան մասնակցութիւնը բոլոր ձեռնարկներում: Այս առթիւ բուռն վիճաբանութիւն է տեղի ունենում: Առաջ է բերում Ազգ. բիւրոյի կազմութեան, նրա գործունէութեան, իրաւասութեան, կազմի հարց: Երաշխաւորում է, որ մեր կուսակցութեան անկախ դիրքը ապահովուած է եւ շեշտում է համերաշխ գործունէութեան անհրաժեշտութիւնը:

Տեղի է ունենում Արեւել. բիւրոյի երկու անդամների ընտրութիւնը եւ ժողովը փակում է ոգեւորուած տրամադրութեան տակ:

Հ.Յ.Գ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ





Փաստ. 23-4

2.- Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԷՆ ԹԵՀՐԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ

Թիֆլիս, 28 Օգոստ. 1914

Նամակները՝ Ֆիլիպ ծածկանունով, Թեհրանի պատգամատուր Յովհաննիսեան Յովսէփն է, որ Տրդ Ընդի. ժողովէն վերադարձին, ճամբուն վրայ անցած էր Թիֆլիսէն եւ կը գրէ Թեհրանի Կ. կոմիտէին նկարագրելով Համաշխարհային պատերազմի առաջին ամիսներուն եւ թուրք-ռուսական բռնկումի նախօրեակին Կովկասի մէջ կամաւորական շարժման շուրջ տիրող խանդավառութեան մասին:

Սիրելիք!

Նամակ չեմ ստացել ձեզնից եւ գուցէ այդ շատ լաւ է մի կողմից: Այն՝ որ պատերազմական դրութեան պատճառով ցենզուր<sup>6</sup> է նշանակուած եւ եկած բոլոր նամակներն էլ բացուում են: Այնպէս որ ցանկալի կը լինէր ձեր գրած նամակները մասնաւոր բնոյթ ունենային եւ անհրաժեշտ զգուշութիւնները ի նկատի առնուէին:

Սակայն մասնաւոր նամակներ չստանալս էլ որոշ երկմտութիւն է պատճառուում ինձ. կասկածում եմ, որ թէ էրզրումից եւ թէ ալստեղից ուղարկած նամակներս չէք ստացել: Ես 2 ապահովագրած նամակ եմ ուղարկել Ալեքսանի հասցէով, ապա 1 հասարակ եւ 2 հասարակ Դր-ի հասցէով. կը խնդրէի դրանց ստացման մասին ինձ տեղեկացնէիք:

Խիստ կարեւոր եւ պատմական մի մոմենտ է ներկայ ընդհանուր: Բոլորն զգում են այդ եւ մանաւանդ այդ զգալի է մերոնց համար: Կազմակերպութեան կէտ նպատակն է այս խառնաշփոթ վիճակում եւ այս նպատակներ հանգամանքներում օգտագործել բոլոր միջոցներն եւ մի որեւէ շօշափելի բան ձեռք բերել հայկական դատի համար: Անյարմար եմ համարում բոլոր մանրամասնութիւններն գործունէութեան գանազան ուղղութիւնների մասին գրել: Դրանց մասին երկարօրէն կը տեղեկացնեմ վերադառնալուց յետոյ: Այժմ այսքանը կարեւոր է ասել, որ ամէն ջանք ու ճիգ գործադրուում է այդ ուղղութեամբ: Կառ[ավարութիւնը] խիստ բարեացակամ է դէպի հայերը եւ ներկայումս որոշ բանակցութիւններ է վարում հայերի հետ ռուս-տաճկական պատերազմի դէպքում հայերի բռնելիք դիրքի մասին: Որոշ խոստումներ եւ որոշ գարանտիաներ<sup>7</sup> են տրուում իրենց աջակցելու դէպքում հայկական հարցը բաւարար կերպով լուծելու:

Ամենայն հաւանականութեամբ գարանտիաների պաշտօնական լինելու դէպքում, այսպէս թէ այնպէս աջակցութիւնը կը լինի եւ «գուցէ այս անգամ հայերը հասնին իրենց նպատակին»: Սակայն ես մի քիչ յուսահատ

եմ. անցեալը շատ դառն փորձեր է տուել:

Ռուսասիրական տրամադրութիւնը խիստ ուժեղ է: Այդ դեռ որոշ չափով բացատրելի էր Տաճկաստանում, ուր 99% ցանկանում են ռուսական տիրապետութեան, բայց նոյն երեւոյթը եւ այստեղ է: Բարձր ինտելիգէնտցիան, այսպէս ասած հայ դեկավար տարրը խիստ ռուսասէր է եւ ցանկանում է ծայրայեղ դէպքում Տաճկահայաստանը ռուսների միջոցով գրաւուած տեսնել:

Այդ տրամադրութեան իբրեւ արտայայտութիւն կարող է ծառայել այն հանգամանքը, որ այժմ Թիֆլիս են հաւաքուել համարեա բոլոր յայտնի եւ անյայտ, մաքուր եւ անմաքուր խմբապետներ եւ զինուորներ ու իրենց պատրաստակամութիւնն են յայտնում հայ ինքնապաշտպանութեան[ը] եւ հայ դատի ծառայելու:

Նրանց մէջ կան մի քանիսը, որոնք մեր շրջանում լինելով ես լաւ եմ ճանաչում: Աւելորդ է ասել, որ նրանց կենսագրականներն ու «ցուցակ ծառայութեանը» յայտնել եմ ուր որ հարկն է: Գործ յանձնելու դէպքում իմ տեղեկութիւններս ի նկատի կ'առնուեն:

Գաւառներում էլ մի ինքնօրինակ գործունէութիւնն է սկսուել: Որոշ վայրերում կամաւորների խմբեր են կազմուում, կամ նրանց ցուցակը կազմուում, անհրաժեշտ դէպքում մէջտեղ գալու համար: Պէտք է ասել, որ այժմ հրապարակի վրայ է նաեւ Ազգային բիւրոն, որ մէն կերպ ցանկանում է այդ գործերն իր ձեռքն առնել, սակայն հէնց որ կազմակերպութիւնը[ը] հրապարակ իջնի աստղերը կը չքանան:

Երկիւղ կայ թաթարական յարձակումների մասին: Բազում եւ Գանձակում նրանք ուժեղ կերպով զինուում են եւ որոշ նշաններ ցոյց տալիս: Այդ պատճառով տեղական ինքնապաշտպանութեան գործն էլ խիստ հետաքրքրում է այստեղ ինչպէս կազմակերպութեան[ը], նոյնպէս եւ այլ տարրերին: Որքան իմացուեց կառ[ավարութիւնը] խոստացել է որոշ քանակութեամբ գէնք

6.- Գրաքննութիւն:

7.- Երաշխիքներ:







տալ հայ գիւղական հասարակութիւններին, ի հարկէ եղած միջնորդութեան պատճառով: Իրագործումն սպասուում է այս քանի օրս:

Ամէն օր սպասուում է ոռոս-տաճկակ. պատերազմի յայտարարութեան:

Ինչպէս պարզուում է Տաճկ[աստանն] սպասում է Գերմանիայի յաջողութեան որպէսզի ինքն էլ յարձակում գործի Ռուսիայի վրայ: Լուրեր են պտտում որ էրզրումում 120 հազար զօրք կայ. այստեղ էլ սահմանագլխում բաւականին ոյժ կայ: Այդուհանդերձ կարգադրուած է սահմանագլխի վայրերի պաշտօնեաներին իրենց ընտանիքը Թիֆլիս փոխադրել: Թաւրիզից, Ձուլֆայից բացի այժմ էլ Երեւանից պիտի փոխադրուեն: Բաթումը եւս բոլորովին դատարկուել է: Ամէն օր զօրքերի տեղափոխութիւններ են կատարուում:

Եթէ նոր յարմարութիւն ձեռք բերեմ նորից կը գրեմ եւ նոր մանրամասնութիւններ: Առ այժմ ես կը մնամ այստեղ. ժամանակը խիստ կարեւոր է եւ ես կ'ուզէի ամէն բանի մասին լիուրի տեղեկութիւններով բեռնաւորած վերադառնայի եւ ձեր բոլոր հարցերին բաւարարութիւն տայի:

Ընդհանրապէս զգուշանում եմ նամակներ գրելուց եւ միայն կարտեր եմ գրում: Ուզում էի ամէն մանրամասնութիւն գրել ձեզ հասկնալի ձեւով, բայց չյաջողեց: Ինչեւէ մանրամասնութիւնը անձամբ:

Քեռին<sup>8</sup> ինչ է անում: Քեռակիւնն ասում էր, որ գուցէ դայ, ճիշտ է, արդեօք կ'ուզի դալ: Իբրեւ գաղտնիք գրեմ, որ այստեղ է Անդրանիկը. մի անգամ եմ առիթ ունեցել հետը տեսնուելու: Շուտով գալու են եւ ուրիշները:

Աքսորուածներն ու դատի տակ գտնուածները ներուել են եւ վերադարձել կամ կը վերադառնան Կովկաս: Բայց ափսոս որ ծաղիկների հետ փշերն էլ են վերադառնում: Փշեր եւ այն էլ խիստ թունաւոր:

Օգտուում եմ առիթից եւ դէպի Պարսկ. եկող մէկի միջոցով ուղարկում եմ նամակս, որ ճանապարհին փոստին յանձնի: Փոստն այստեղ խիստ ուշ-ուշ է ստացւում: այդտեղից հազիւ 20 օրումն է հասնում: Եթէ մինչեւ այժմ նամակ չէք գրել այսուհետեւ բաւականացէք միայն բացիկներ գրելով եւ նամակներիս հասնելը տեղեկացնելով: Այլ խնդիրների մասին աւելի լաւ է չգրել:

8.- Ամենայն հասանականութեամբ խօսքը ծանօթ հայդուկապետ Գաւաֆեան Արշակի մասին է, որ Պարսկաստան կը գտնուէր:

Ընկերական բարեկներով  
ՖԻԼ[ԻՊ]





Մատեան 1190ա, էջ 519-20  
Նամակ թիւ 199

### 3.- ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԷՆ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

1914 Հոկտ. 20, Սոֆիա

Ընկերներ,

Կը հաստատենք մեր 13 հոկտ. թուակիրը: 5 օր առաջ Ս. Վ[րացեան]ի ստորագրութեամբ ընկ. Ղուկաս Մինասեանի հասցեով ստացանք հետեւեալ հեռագիրը.— «Տեղեկացուցէք ամբողջ հատուածին, որ կամաւորներու պէտք չկայ»: Մենք արդէն չըջաբերական-նամակներով յայտնած էինք մեր բոլոր մարմիններուն, որ մնան սպասողական դրութեան մէջ, մինչեւ որ Կովկասէն հրահանգներ ստանանք:

Ուրբաթ առաւօտ Ատրիանապոլսի գծով Ռոստոմը այտեղ եկաւ. հագիւ նա հասած էր, որ Սեւ ծովի ընդհարման լուրը տարածուեցաւ: Նրա ասելով Ուրբաթ առաւօտը Վարդանը<sup>9</sup> պիտի մեկնէր Պոլսէն ռուսական նաւով: Ընդհարման լուրը Ռոստոմը տատանման մէջ դրաւ. այտեղէն Կովկաս թէ Զուլիցերիա: Այս երկընտրանքի պատճառով երկու օր մնաց Սոֆիա: Միասին տեսակցեցանք Լեաբովին<sup>10</sup> հետ, աւելի անհատական-բարեկամական հողի վրայ քան թէ կուսակցական խընդրով, որովհետեւ ինք եւ իրենները, ինչպէս անցեալ անգամ գրած ենք, բոլորովին նոյնացեր են Ռատոսլաւովիստներին հետ, նպատակ ունենալով մերերը<sup>11</sup> Պոլսէն անմիջապէս հոս փոխադրել: Հեռագրով հանցինք 50 ոսկի. շաբաթ օրն էլ մեր պուլկարահայտակ ընկերներէն յատկապէս զրկեցինք Պոլիս, յանձնելով անոր 4000 Փր-ի չափ մի գումար եւ կարեւոր յանձնարարականներ, որպէսզի կարողանայ ի հարկին պուլկարական հիւպատոսարանի աջակցութեամբ մերինները Պոլսէն ապահով հանել:

Ընկ. Ռոստոմը վերջապէս որոշելով անցնիլ առայժմ Զուլիցերիա, երէկ մեկնեցաւ Սոֆիայէն Տիլիպէ, անկէ էլ առանց թրքական հողով անցնելու, ուղղակի կառքի ճանապարհով Տէտէ-Աղաճ անցնելու համար, չորեքշաբթի Տէտէ-Աղաճէն Մարսէյ կամ Պրինտիգի տանող նաւ նստելու համար:

Ռուսաստան չանցնելու գլխաւոր արգելքներէն մին էլ եղաւ տեղի ռուսական հիւպատոսարանի վարմունքը, պարսկական անցագիրը վիզէ ընելու համար. յայտարարուեցաւ, որ պարսիկներու եւ թրքահայատակներու անցագրերը այժմ անկարելի է վիզէ ընել: Ռոստոմը չուզեց իր ինքնութիւնը անոնց յայտնել, ապա թէ ոչ

հնարաւորութիւն կար Պալքանի Կ. Կ-ի պաշտօնական մի գրութեամբ յայտնել նրա ինքնութիւնը: Երեւի ապագայում ստիպուած լինինք այդ միջոցին դիմելու:

Նայելով թէ ի՞նչ կը լինի Պուլկարիոյ դիրքը թուրք-ռուս պատերազմի պարագային, մենք, Պալքանի եւ Եգիպտոսի ընկերներս, թերեւս կարողանանք լուրջ դեր ստանձնել համանման Կովկասի գործունէութեան: Ռոստոմը ունէր նոյնպէս այն միտքը, որ Պալքանէն, Եգիպտոսէն եւ ի հարկին Ամերիկայէն կարելի կը լինի հաւաքել կամաւորներ եւ ելլել Կիլիկեան ափերը եւ անգամ ուզեց տեսնուիլ Փրանսիական դեսպանի հետ, բայց ետքէն որոշեց այդ մտքով լինելիք յարաբերութիւնները վարել ժընեւում կամ Ֆրանսիայում:

Սեւ ծովեան ընդհարման լուրը աւելի խորացուց այտեղի մեր ընկերներուն տրամադրութիւնները, բայց ստիպուած ենք առայժմ չափաւորութիւն քարոզել:

Ինչպէս նախորդ երկու նամակներով գրած ենք, այժմ եւս ստիպուած ենք, ընկերներ, երեք[կ]նել, որ անհրաժեշտ է, որ մեր եւ ձեր մէջ կանոնաւոր փոխ-յարաբերութիւններ հաստատուին, որովհետեւ մենք այտեղէն հնարաւորութիւն ունինք կապելու Եգիպտոսը, Զուլիցերիան եւ Պոլիսը Կովկասի հետ. եւ եթէ վերեւ յիշուած գործունէութեան ձեռնարկուի, այդ կապը աւելի քան անհրաժեշտ կը դառնայ: Ռոստոմին հետ խորհրդակցելով ուզեցինք պուլկարական թերթի մը միջոցաւ պայմանագրական ձեւով թղթակցութիւն կամ նամակագրական յարաբերութիւն ստեղծել ձեր եւ մեր միջեւ, որը կարելի կը լինի պահել նոյնիսկ այն պարագային երբ Պուլկարիան աննպաստ դիրք բռնէ դէպի Ռուսաստանը: Այդ ուղղութեամբ պէտք է շարունակենք հետապնդումներ ընել:

Մեր կարծիքով լաւ կը լինէր, որ այդտեղ փոխարքայի կողմէ մասնաւոր կերպով յանձնարարուի Սոֆիայի ռուսական դեսպանին, որ մեզ հետ փոխ-յարաբերու-

9.- Խանասարի Վարդանն է, բուն անունով Մեհրաբեան Սարգիս:

10.- Լեաբով – մակեդոնացի յեղափոխական գործիչ, Դաշնակցութեան հին գործակիցներէն, որ կը գործածէր Չաւէն Արշակունի ծածկանունը:

11.- Այսինքն Պոլսոյ մէջ վտանգուած մեր ընկերները:





Թիւններ պահէ. կը թուի, թէ այստեղ դեռ պարզ կերպով չգիտեն, թէ իրենց կառավարութիւնը ի՞նչ դիրք բռնած է հայերու վերաբերմամբ Ռուսաստանում եւ Կովկասահայաստանում:

Գարեգին Նժդեհի ինիցիատիւ<sup>12</sup> բացասական հետքերը դեռ մինչեւ օրս կը քաշենք. անկարգապահ եւ ինքնազլուխ գործունէութեան եւ անցեալ իր խառնակիչ արարքներուն ի պատիժ, Կ. կոմիտէն յարմար կը նկատէ ձեզ յայտնել, որ անհրաժեշտ է զայն անմիջապէս գիտնաթափ ընել. նոյնպէս նրան հետեւող տղաներին՝ առնուազն 2-3 շաբաթով, իսկ Նժդեհին ի սպառ չթողնել մտնել մեր շարքերը, որովհետեւ վերին աստիճան հիւանդոտ-փառասէր տիպ, վաղը նորից պառակտումներ պիտի ստեղծէ: Այս կերպով մենք ազատած կը հա-

մարենք ապագայ պատասխանատուութենէ:

Այս ըոպէիս ստացանք Վրացեանի հեռագիրը Ռոստոմի, Խաթակի եւ Ակնունիի եւ ուրիշների վերաբերմամբ. մտածելով, որ Ռոստոմը կամ Ֆիլիպէ է կամ Տէտէ-Աղաճ, հեռագրեցինք պատճէնը. իսկ Պոլիս չհեռագրեցինք, որովհետեւ պատուիրակը [?] արդէն հոն հասած է. նոյնիսկ սրանց մուտքը արգելուի..... նրանք պէտք է գան Պուլկարիա: Անյապաղ կը սպասենք մի .....<sup>13</sup>

Ընկերական բարեկեցութիւն  
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
ՊԱՒՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԷ

12.- Գարեգին Նժդեհի նախաձեռնութիւնը (ինիցիատիւ) կը կայանար այն իրողութեան մէջ, որ ան, հակառակ Կեդր. կոմիտէի հրահանգին, ինքնազլուխ եւ ցուցական կերպով մեկնած էր Կովկաս իրեն հետ տանելով 40-50 կամատրներ: Ծանօթ է որ կամատրական շարժման շուրջ Կովկասի մէջ ստեղծուած խանդավառութիւնը շատ արագ կերպով վարակած էր արտասահմանեան գաղութները եւ անոնց շարքին Պալքանի երկիրները, ուր արդէն հազարէ աւելի երիտասարդներ արձանագրուած էին երթալ-միանալու համար իրենց եղբայրներուն: Եւ սակայն, Պալքանի Կ. կոմիտէն, հաշտի առնելով մէկ կողմէ Արեւելեան բիւրոյի կրկնակի հրահանգները Թիֆլիսէն՝ հոսքը կասեցնելու եւ նոր կամատրներ չուղարկելու, միւս կողմէ՝ Պուլկարիոյ մէջ վիստացող թուրք լրագրողներու հակահայ գրգռիչ գործունէութիւնը, կուսակցութիւնը կը դնէին զգուշութիւններ ձեռք առնելու եւ շարժումը հունատրելու հարկադրանքին տակ, մանաւանդ որ Պոլսոյ մէջ իբրեւ պատանդ վար

դրուած հարիւրաւոր ընկերներու եւ հասարակական գործիչներու կեանքը խնդրոյ առարկայ էր արդէն: Ահա այս պարագաներով պէտք է բացատրել Կ. կոմիտէի կողմէ Գ. Նժդեհի նկատմամբ առաջարկուած կարգապահական խիստ միջոցներու կիրարկումը:

Վերջինիս հասցէին ուղղուած «անցեալի խառնակիչ արարքները» – ակնարկութիւն է Պալքանեան պատերազմի օրերուն (1912-13) եւ այնուհետեւ հայ կամատրներու շարքերուն մէջ երեւան եկած խմբակի մը, որ անուանարկիչ որակումներ տարածած էր ազգային հերոս Անդրանիկի հասցէին: Օրին, Պալքանի Կ. կոմիտէին բացած բնութիւնները ցոյց տուած էին, որ այդ խմբակի գործունէութեան ետին կը գտնուի Գարեգին Նժդեհի անունը:

13.- Վերջին պարբերութեան վրայ Պալքանի Կ. կոմիտէի կնիքը դրոշմուած ըլլալուն բերումով, կարգ մը բառեր անընթեռնելի են:





Փաստ. 23-5

### 4.- ՄԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ Կ. Կ.ԻՆ

1914, 4 նոյ., Թիֆլիս

Սիրելիք,

Ձեզ բաւական ընդարձակ կերպով գրեր եմ այստեղի գործերու մասին: Ձեմ գիտեր՝ ստացա՞ք: Առհասարակ ապահով չեմ, թէ կարելի է նամակ հասցնել: Ձեզմէ եւ ոչ մէկ տող ստացեր եմ, «Հորիզոնին» հատուկտոր «Հայրենիք» կը գայ. վերջին անգամ ստացանք սեպ. -ի թիւերէն մէկը:

Գրեր եմ, ընկ. Պարոյրեանին ալ պատմեր եմ, թէ ինչ կը կատարուի հոս: Պատերազմին մենք ալ կը մասնակցինք կամաւորներով: Առ այժմ չորս խումբ ունինք՝ Անդրանիկը 1200-ով Սալմաստ է եւ արդէն կ'երթայ դէպի Վան. հետն է Սեպուհը<sup>14</sup> եւ բժ. Զաւրիեւը: Գրոն ու Խեչոն<sup>15</sup> 450-ով Իգտիրէն կ'արշաւեն դէպի Վան. արդէն Աբաղայի դաշտի վրայ տաք ճակատամարտ ունեցեր են: Խմբի մէջ է եւ Արմէն Գարոն: Համազասպը<sup>16</sup> 400-ով Կաղզուանէն կ'արշաւէ դէպի Կարին. արդէն կուի ունեցեր է: Քեռին<sup>17</sup> 400-ով կ'արշաւէ Սարղամիշէն դէպի Վան: Կամաւորներու թիւը օրէ օր կ'աւելնայ. արդէն 3000-ը անցեր է. յոյս ունինք, որ կրկնապատկուելու է: Ռազմական ամբողջ գործը մեր ձեռքն է, իսկ նիւթականի հայթայթելը անկուսակցական մարմնի մը յանձնուած է՝ Ազգային բիւրօ անուան տակ: Կառավարութիւնը գործը կազմակերպելու համար սկզբէն տրուաւ 100,000 ռուբլի, 3000 մոսին, 350 ձի՝ ձիաւորների եւ պարէնի համար եւ ամէն մարտիկի օրական 33 կոպէկ: Կամաւոր գրուել ուզողներու թիւը հազարներու կը հասնի. շատերուն ստիպուած ենք մերժել: Ամէն կողմէ մեծ հոսանք սկսուած է. կու գան ուսանողներ, աշակերտներ, գործաւորներ... Ափսո՛ս, Ամերիկան հեռու է, թէ չէ մեծ խումբ մըն ալ այդտեղէն կու գար: Ազգային բիւրոն սկսած է հանգանակութեան. ծրագրուած է հաւաքել մէկ միլիոն ռուբլի, բայց ոգեւորութիւնը այն-

քան մեծ է, որ աւելի ալ կը հաւաքուի: Մեծ յոյս կայ Տաճկահայաստանի ինքնավարութեան – վեց վիլայէթների եւ Կիլիկիայի: Այժմ կազմուած է մի յանձնախումբ, ատոր ծրագիրը մշակելու. ես կը մասնակցեմ այդ յանձնախումբին: Կը մտածուի, որ ցարը հայերուն յատուկ կոչ մը պիտի ուղղէ:

Տաճկաստանէն լուր քիչ կայ. ջարդերու սպառնալիքը միշտ կը մնայ: Այսօր Վանէն լուր առինք, թէ Վուամեան եւ Փափագեան<sup>18</sup> Վանի մէջ ազատ են: Հոն ալ խմբեր կը պատրաստուեն:

Ես տակաւին Թիֆլիս եմ: Այս պայմաններու մէջ Ամերիկա գալ անկարելի է, ի հարկէ. կու գամ պատերազմը լմննալէն ետք, երբ ինչպիսի՛ն, մեր հարցն ալ լուծուած կ'ըլլայ: Որոշուած էր, ես ալ շատ կ'ուզէի, որ Անդրանիկի հետ Սալմաստի գիծը պիտի երթամ, բայց ընկերները ստիպեցին, որ հոս մնամ: Անդրանիկի հետ գնաց բժ. Զաւրիեւը: Ես հոս կը վարեմ Արրոյի<sup>19</sup> եւ Զինւորական կեդր. մարմնի ազատ անդամի պաշտօնը, կը մասնակցեմ քանի մը յանձնախումբերու, Ազգային բիւրոյի կարգ մը ձեռնարկներուն եւայլն: Մինչեւ կու կորդս աշխատանք կայ, եւ երանի կու տամ Ամերիկային:

Առանձին ջանքեր կը թափենք կովկասահայերու ինքնապաշտպանութեան մասին: Եթէ առաջին նամակներս ալ ստացեր էք, կատարեալ տեղեկութիւն կ'ունենաք այստեղի մասին: Կարօտով բարեւներս ձեզ եւ բոլոր ընկերներուն՝

Ս. ՎՐԱՑԵԱՆ

Ձգիտեմ ինչ ըրիք Պատգ. Ժողովի նկատմամբ, ըստ իս պէտք է յետաձգել Զատկին: Գրեցէք «Հորիզոնի» հասցէին:

14.- Մեպուհ – Ներսէսեան Արշակ:  
15.- Դրօ – Կանայեան Գրաստամատ. Դաշնակցական Խեչօ – Ամիրեան Խաչատուր:  
16.- Սրուանձտեանց Համազասպ:

17.- Քեռի – Գաւաթեան Արշակ:  
18.- Փափագեան Վահան եւ Վուամեան Արշակ – երկուքն ալ երեսփոխան Օսմանեան խորհրդարանի:  
19.- Արրօ – ծածկանուն Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոյի համար:





Փաստ. 1158-119

5.- ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ

Սարիզամիչ – 31 Հոկտ. [1914]

Թէեւ Քէօբըրիւքէոյի դէմ գործող թուրքերը Հասան-ղալայից նոր օգնական զօրքեր են ստացել էրզրումից, սակայն մեր զօրքերը կամաց-կամաց բայց Հասատտուն կերպով եւ յաղթաբար առաջ են շարժուում:

Ռոստով – Դոն

Այստեղ պատրաստուած է մի վակոն կալէտ<sup>20</sup> Հայ կամաւորների համար: Կարգադրութիւն է սպասուում, թէ ուր պիտի ուղարկուի:

Խմբագրական Հորիզոնի – 3 Նոյ.

«Հայ ժողովուրդը արդէն կանգնած է քաղաքացիական եւ քաղաքական հասունութեան այնպիսի մի աստիճանի վրայ, որ իրաւունք կարող է ունենալ լայն ակնկալութիւններ իր ապագայի նկատմամբ...:

«Քսան եւ հինգ տարուայ արիւնայից պատմութիւնը, մեր ձեռք բերած ռազմական փորձառութիւնը այսօր արդէն պատիւ են ներշնչում դէպի մեզ մեր բարեկամներին եւ թշնամիներին:

Այսպիսի գերմարդկային ճիգերի հանդէպ չէ կարելի դնել իբրեւ խոչալ, այսպէս կոչուած, «կեանքի, գոյքի եւ պատուի ապահովութիւն» համեստափայլ պահանջը»:

Զգտել միայն ազատ շնչելու, ազատ ուտելու եւ անձեռնմխելի ընտանիք ունենալու, ամօթ է, վիրաւորական է մի ժողովրդի համար, որ արդէն պատրաստ է իր հայրենիքը ունենալու եւ ազգային կեանքով ապրելու: Բարեբախտաբար այդ «Երբեակ ապահովութեան» բանաձեւը արդէն հնացած է: Նա անբովանդակ է Հայ ազգի համար»:

Իգդիր – 2 Նոյմ. – սեփական հեռագիր

Դրոն վիրաւորուած է կռուի մէջ. կառք է ուղարկւում Նրան Իգդիր բերելու համար:

Մերվ<sup>21</sup> – նոյն

Այս գիշեր Հայ հասարակութիւնը տեղական իշխանութեան ներկայութեամբ հանդիսաւոր ցոյցերով ճանապարհ դրեց կամաւորներու առաջին խումբը դէպի Կովկաս: Այդ խումբը պիտի միանայ Հայկական կամաւորներու ընդհանուր դրոժինային<sup>22</sup>: Մեկնողներ[ին] խաչեր բաժնուեցին. զգայացունց ճառեր՝ գաւառապետին, քահանային, ուսուցչին եւ այլոց կողմէն: Կամաւորները երգեցին ռուս ազգ. հիմնը եւ ազգային երգեր: Ահագին խանդավառութիւն:

Ասխաբադ<sup>23</sup> – նոյն

Հոկտ. 27ին տեղական Հայ հասարակութիւնը հանդիսաւորապէս ճանապարհ դրեց Հայ կամաւորներու առաջին խումբը: Կամաւորներու ապրուստի հոգացողութիւնը՝ իր վրայ է առել հասարակութիւնը իր սեփական միջոցներով, որի համար կամաւոր տուրք է նշանակուել: Կազմուած է կանանց կոմիտէ:

Այստեղով անցաւ Մերվի կամաւորներու խումբը. նոյնպիսի խմբեր սպասուում են Անդրկասպեան երկրի եւ Թուրքեստանի միւս քաղաքներից եւս:

Թիֆլիս, պաշտօնական – 1 Նոյմ.

Իրենցից խլուած Խանասորի լեռնային ճանապարհին տիրելու համար թուրքերի թափած ջանքերը վերջացան անաջողութեամբ:

– Պետրոգրադի Հայ գաղութը ժողովել է 250 000 ռուբլի վիրաւորների եւ Հայ կամաւորների խմբերին:

– Աստրախանի<sup>24</sup> Հայկական գաղութի հանգանակութիւնը տուել է առաջին օր 22 000 ռ.:

– Պետրոգրադի ուսանողութեան ընդհանուր ժողովը որոշում է կայացրել կովկասցի ուսանողներին կոչ անել՝ թողնելու պարապմունքները եւ մտնելու կովկասեան բանակի շարքերը:

Քանձակ – 29 Հոկտ. – թղթակցութիւն

– Շրջակայքից գալիս են Հայ կամաւորներ, առողջ, զուարթ ու կայտառ, կարծես գնում են ոչ թէ կռուելու, այլ մի սրբազան գործի:

– Գալիս են նաեւ գերիների առաջին խմբերը՝ տաճիկ զինուորներ եւ քրդեր:

– Իգդիրից հեռագրում են Կովկ. Սլովօ-ին որ Վանի վիլայէթում հայերը ապստամբուել են եւ զբաւեւել Շատախի եւ Կարախանի բնական դիրքերը:

20.- Կարկանդակի տեսակ:  
21.- Մերվ – քաղաք Թուրքմենիստանի մէջ:  
22.- Գունդին:  
23.- Ախաբադ, Աշխաբադ – Թուրքմենիստանի մայրաքաղաքը:  
24.- Աստրախան, Հաշտարխան – քաղաք Կասպից ծովու հիւսիսը, Վոլկա գետի ափին:







**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

— 75ամեայ Տէր Գրիգոր Դարալագեացցին իր 15 տարեկան տղայի հետ եկել ու մտել է հայ կամաւորներու խմբի մէջ:

**Ասխաբադ — 7 Նոյմ. հեռագիր Հորիզոնի**

Երէկ հայ հասարակութիւնը անսովոր հանդիսաւորութեամբ ճանապարհեց հայ կամաւորների խումբը, որ բաղկացած է գլխաւորապէս ինտելիգենցիայից: Երկաթուղու կայարանում խմբի հետ միացաւ Կոկանդից<sup>25</sup> եկող միւս հայ կամաւորների խումբը, որը անցնում էր Ասխաբադով: Երկու խմբերը ճանապարհելիս ներկայ էր ամբողջ հայ գաղութը: Երգում էին ռուսական հիմնը եւ հայոց ազգային «Մեր հայրենիքը»:

**Ախալքալաք — 7 Նոյմ.**

Այստեղ որոշուած է 12000 ռուբլի հաւաքել եւ քաղաքից ու շրջանից տալ 70 կամաւորներից բաղկացած մի խումբ: կամաւոր գրուել ցանկացողների թիւը անհամեմատ աւելի շատ է:

**Քիւեւ — 1 Նոյեմբեր — թղթակցութիւն**

..... Ընդհանուր ոգեւորութիւնը կրկնապատկուեց այն ժամանակ երբ տեղույս թերթում կարդացինք, որ հայ կամաւորներու թիւը Անդրանիկի ղեկավարութեամբ հասնում է մօտ 75000 հոգու<sup>26</sup>: Շատ ուրախալի է նաեւ այն երեւոյթը, որ ոգեւորութիւնը համակել է ոչ միայն ազգայիններին, այլեւ անգոյն ու ոչ ազգային կուսակցութեանը յարող անհատներին:

..... Օտարազգի ռուսանոցները այժմ աւելի յարգանքով են վերաբերում դէպի հայ ռուսանոցութիւնը: Քիւելի թերթերը առանձին պատկառանքով են խօսում հայկական կամաւորների խիտ շարքերի մասին. շատ մալրուռուս<sup>27</sup> ռուսանոցներ ցանկութիւն են յայտնում մտնել հայկական կամաւորների շարքը:

**Ստաւրապոլ<sup>28</sup> — 2 Նոյմ.**

Մինչ Անդրկովկասի հայութիւնը, նախքան տաճկական պատերազմին յայտարարուելը, եռուս պատրաստութիւն էր տեսնում, հիւսիսային Կովկասի հայ գաղթականութիւնը լուռ հանդիսատես էր միայն: Այսօր նա արթնութեան նշաններ է ցոյց տալիս: Մոսկուայի, Օդեսայի, Ռոս-

տովի, Նախիջևանի հայութեան շարժումը անդրադարձաւ Հիւսիսի հայ գաղթականութեան վրայ: Առաջին ազդանշանը տուաւ Արմաւիրը, ապա Ստաւրապոլը:

Այսօր պէտք էր տեսնալ թէ ինչպէս Ստաւրապոլի հայ համայնքը, առանց դասակարգի խտրութեան, մի սիրտ, մի հոգի դարձած՝ հաւաքուելով եկեղեցի, մաղթանք կատարեց, ապա ժողովուելով դպրոց, անվերջ կեցցէներով ու ովսանաներով ընդունեց հայ կամաւոր գրուող զինուորներին: Ապա վճռեցին օգնել հայ կամաւորներին եւ դրամական օգնութեան աջակցութիւն ցոյց տալ Թիֆլիս Կեդր. Ազգ. բերրոյին: Ժողովը ընտրեց մի մասնախումբ, որին լիազօրութիւն տուաւ ընդառաջ գնալ ծխականներու բոլոր ցանկութիւններին:

**Կաղզուան — 3 Նոյմ.**

Կաղզուանի հայ հասարակութիւնը Հոկտ. 31-ին մեծ շուքով եւ հանդէսով հայկական 2 դրօշակ եկեղեցում օծելէ յետոյ, հոծ բազմութեամբ եկաւ քաղաքի մեծ հրապարակ, որտեղ կազմ եւ պատրաստ սպասում էր հայ կամաւորների բանակը: Այստեղ կամաւորների գէնքի յաջողութեան համար մաղթանք կատարուեց, որից յետոյ ծխական քահանայ Տէր Ներսէսեանը դրօշակներից մէկը յանձնելով բանակի հրամանատարին, խօսեց օրուայ վեհութեան մասին եւ յորդորեց միշտ բարձր պահել հայերիս կողմից ազատութեան համար բարձրացրած դրօշակը:

Երկրորդ դրօշակը յանձնուեց օրիորդի ձեռքով դրօշակակիր զինուորին ասելով «Ահա եղբայր քեզ մի դրօշ, գոր իմ ձեռքով գործեցի» երգը:

Հրամանատարները բանակի կողմից խօսեցին սուրբ գործի եւ վեհ պարտականութիւնների մասին:

Երկրորդ օրը Նոյմ. 1-ին նոյն հոծ բազմութեամբ, հայ կամաւորների բանակը Բասենի գծով ուղեւորուեց դէպի տառապանքի երկիր, դէպի պատերազմի դաշտ: Յաջողութիւն նրանց:

— Սամարղանդից<sup>29</sup> մեկնեց Նոյմ. 8-ին հայ կամաւորների առաջին խումբը, աննկարագրելի ոգեւորութեան մէջ:

**Չուլֆա — 8 Նոյմ.**

Այստեղ հասան Պետրոգրադի հայ ռուսանոց կամաւորները, որոնց սրտագին ընդունելութիւն ցոյց տրուեց երկաթուղու կայարանում եւ ընթրիք առաջարկուեց:

**Քուլթալիս<sup>30</sup> — 9 Նոյմ.**

Այսօր Հայոց դպրոցի շէնքում թաղէոսեանի նախագահութեամբ տեղի ունեցաւ ծխական ժողով: Ժողովը մի յանձնաժողով ընտրեց. տրամադրութիւնը բարձր է:

— Սանահին գիւղի հայ հասարակութիւնը իր միջոցներով վանքում բաց է անում մի հիւանդանոց վիրաւորների համար:

25.- Կոկանդ — քաղաք Իւզպէկիստանի մէջ:  
26.- 75,000-ը անշուշտ չափազանցութիւն է: Կամաւորներու համար սահմանուած էր ընդհանուր 7 հազար հոգի:  
27.- Մալրուս — տառացի՝ փոքր ուս, գործածուած է հոս ուրբանացիներուն համար. բուն ուսերուն կը տրուէր վելիկո-ուս մեծ ուս անուանումը:  
28.- Քաղաք հիւսիսային Կովկասի մէջ:  
29.- Քաղաք Իւզպէկիստանի մէջ:  
30.- Քաղաք Վրաստանի մէջ:





Մատենան 1190ա, էջ 612-13

### 6.- ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՍԻՏԵԷՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Նամակ թիւ 246

Սոֆիա, 11 Նոյ. 1914

Ընկերներ!

Կը հաստատենք մեր անցեալում գրած N° 172 եւ 199 նամակները. դրանցից զատ երկու անգամ հեռագրած ենք կամաւորական ինդերի մասին, բայց մինչեւ ցարդ ոչ մի պատասխան չենք ստացեր, չնայելով, որ այդ նամակներով մի քանի կարեւոր հարցումներ ըրած էինք պալքանեան կամաւորական շարժման մասին, մի բան, որի համար Պոլսի հետ բանակցել անհնարին էր: Մենք ժամանակին փութացեր էինք այդ մասին գրել, որովհետեւ նախագուշակած էինք մօտաւոր ապագային առաջ գալիք անտեղութիւնները: Հակառակ մեր բոլոր յորդորներուն՝ անկարելի եղաւ կասեցնել, նոյնիսկ մեր շրջաններում, հայրենասիրական այն ուժեղ թափը, որ ծայր տուաւ մանաւանդ թուրքական պատերազմով: Պուլկարիոյ եւ Ռուսմանիոյ բոլոր գաղութները առանց բրոբականտի, առանց ոեւէ կոչի, ինքնագլուխ կերպով սկսան գործունէութեան: Պալքանեան Կ. կոմիտէն հանդիսատեսի դրութեան մէջ չէր կարող մնալ. ստիպւած եղաւ գործին գոնէ ուղղութիւն տալ, որովհետեւ երկու կարգի անտեղութիւններ միաժամանակ կարող էին առաջ գալ այդ անկանոն շարժումից. 1) անգոյշ, հրապարակային շարժումը թրքական իշխանութիւններու ուշադրութիւնը կարող էր հրաւիրել, իսկ 2) կամաւորական խմբերը առանց ընտրութեան՝ պատահական մարդկանցով կազմուած, օգտակար ըլլալէ աւելի վնասակար կարող էին դառնալ այդտեղ:

Ուստի ձեզ անմիջապէս հեռագրեցինք հետեւեալը — «կամաւորական տարերային շարժում սկսաւ ամբողջ Պալքանում. անկարելի է արգիլել. դեկավարենք? հրահանգ կ'ուզենք»:

Այս հեռագրին պատասխանը մինչեւ այսօր չստացանք. միւս կողմէ, սկսած շարժումը օրը օրին կ'անէր. մի առժամանակ յաջողեցանք զսպել. այդ ժամանակամիջոցին գաղտնի բանակցութեան սկսանք Սոֆիայի ռուսաց դեսպանատան հետ. դեսպանը ուրախութեամբ ընդունեց մեր հետեւեալ առաջարկները —

1) Անցագրեր տալ եւ 2) նիւթական ու բարոյական աջակցութիւն: Միայն վերջնականօրէն պատասխան

տալու համար հեռագրեց Պետերբուրգ. մինչեւ այսօր պատասխան չստացաւ:

Միւս կողմէն զանազան քաղաքներում կամաւորական շարժումը մտաւ գործնական Փագի մէջ. Ռուսմանիոյ դեսպանին եւ հիւպատոսներուն տուած աջակցութիւններով Կալացէն, Պուլկարէն, Պուլքէչէն բաւական թուով կամաւորներ անցան՝ շատերը մեր ընկերներէն. նրանց օրինակին սկսան հետեւիլ Պուլկարիոյ տղայքը. Վառնա գտնուելով հոծ կամաւորական թեկնածուներ, թուով 400, անկարելի եղաւ զսպել: Վերջապէս թուէս 5 օր առաջ 200-ի չափ մեկնեցան Ռուսչուք. պուլկար կառավարութիւնը արգիլեց նրանց սահման անցնելը. մենք դիմում կատարեցինք ներքին գործոց նախարարութեան մօտ եւ յաջողեցանք արգելքը վերցնել. այդ խումբը երէկ ճանապարհուեցաւ Դանուբի ռուսական շոգենաւային ընկերութեան «Ռուս» նաւով դէպի Ռէսի՝ ռուսական սահմանագլուխ՝ անկէ Կովկաս անցնելու համար:

Կամաւորական խմբեր կան Ռուսմանիոյ եւ Պուլկարիոյ հետեւեալ քաղաքները.— Պուլքէչ՝ 200, Պուլկար՝ 110, Կալաց՝ 100, Քոստանցա՝ 100, Սուլինա՝ 30-40, Ռուսճուք՝ 200, Վառնա՝ 200, Ֆիլիպէ՝ 150, Պուլկար՝ 150, Սոֆիա՝ 20, Տէտէ-Աղաճ-Իսկէչէ՝ բազմաթիւ, Սիւվէն՝ բազմաթիւ (Թրակիոյ թրքական բանակէն փախստականներ): Սրանց կարողացանք մի առժամանակ վար դնել բայց անկարելի է երկար սպասցնել, որովհետեւ մեծամասնութիւնը գործերը թողած է:

Այժմ չգիտենք ինչ կարգադրութիւն անել. մի կողմից «Հորիզոնը» խմբագրականով մը կոչ կ'ընէ աշխարհի բոլոր հայերուն կամաւորական շարժման միանալ, միւս կողմէն ռուսական թերթերում կը կարդանք, որ կամաւորական գնդերը լեցուած են եւ նոր գնդեր կազմուելու համար մեծաքանակ գումար է հարկաւոր: Մեզ ժամանակին մանրամասն տեղեկութիւն չտուիք, որ գիտնայինք, թէ ինչ պայմաններով կազմուած են կամաւորական խմբերը.— Պետակա՞ն հաշուով թէ հայժողովրդական: Եթէ պետական միջոցներ (զէնք, ուտեստ, հագուստ) չեն տրուում, այն ատեն մենք գուցէ աւելի խիստ ընտրութեան պէտքը զգայինք, որպէսզի



**ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

միայն բացարձակապէս լաւերը գային, ոչ թէ երամանկ-  
րով, որոնց համար ըլլալիք ծախսը ներկայ պայմաններում մեծ ծանրութիւն պիտի պատճառէր մերոնց:

Ժամանակին եթէ մանրամասնօրէն գրուած լինէր այս հարցերու մասին, մենք կը կարողանայինք փաստերով ցոյց տալ դժուարութիւնները եւ զգուշացնել երիտասարդութիւնը այսպիսի մեծ չափերով շարժուելու: Այժմ արդէն ուշ է. կը մնայ մեզ լուսաբանել մի քանի կէտեր.—

- 1) Որո՞ւն պէտք է դիմեն կամաւորները Կովկաս հասնելուն.
  - 2) Ո՞վ կը հոգայ նրանց զինական եւ այլ պէտքերը.
  - 3) Որո՞նց յանձնուած է կամաւորական խմբերու դեկավարութիւնը.
  - 4) Ռեսիւէն Մինչեւ Կովկաս ի՞նչ զգուշաւորութիւններ են հարկաւոր ճանապարհին:
- Կը խնդրենք որ անպատճառ պատասխանէք:  
Գարեգնի<sup>31</sup> մասին ժամանակին գրած ենք. չգիտենք ի՞նչ կարգադրութիւն ըրիք. մեր կարծիքով նրան կամ հեռացնելու է կամաւորական շարքերէն եւ կամ դնելու

է ուժեղ անհատականութեան մը շուքին[?] տակ, ապա թէ ոչ նա սաստիկ սկանտալներ կը սարքէ:

Այս վերջին ժամանակներս Ռաշխարհ<sup>32</sup> (Բանօֆ) անհետացեր է Պուլկարիայէն: Այդ անունը ձեզ յայտնի է... մեր շրջանակներում կատարած շահատակութիւններով: Մեր ստացած տեղեկութիւններով իբր թէ անցած է Ռուսաստան Ռոստով[?] — իբր թէ բանակին մէջ կըրուէր. կարող է նա գալ Կովկաս. այժմէն կը յայտնենք, որ պէտք եղած զգուշութիւններ ձեռք առնէք, որ չսպրդի մեր շարքերէն ներս:

Պոլսէն շաբաթով նամակ չենք առել. Կ. Պոլսէն եկողներէն կը տեղեկանանք, որ առանձին թուրքերը լաւ են արտաքննապէս մերոնց հետ: Խաչատուրը<sup>33</sup> մտադիր է թողնել Պոլիսը: Երկու շաբաթ առաջ Մարգպետը<sup>34</sup> մասնաւոր կերպով եկաւ այստեղ, մի քանի թղթակցական միջոցներու մասին խօսելու համար. երկու օր մնալէ ետք վերադարձաւ Պոլիս:

Ռոստովը ժրնեւ հասեր է 5 օր առաջ միայն:

Ուրիշ այնպիսի աչքի ընկնող նորութիւններ չկան:

*Ընկերական բարեւներով  
Հ.Յ.Դ. ՊԱՆՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԷ*

31.- Խօսքը կը վերաբերի Գարեգին Նժդեհի: Տես ծանօթութիւն թիւ 12:

32.- Ռաշխարհ – 1906-07 թուականին Պուլկարիոյ մէջ հաստատուած Հ.Յ.Դ. Չինուորական վարժարանի դասատու մարզիչ, որ խռովութիւններ յարուցած ըլլալով՝ հեռացուած էր: Բանօֆ կամ Բանե իր անցագրային անունն էր:

33.- Խօսքը կը վերաբերի Խաչատուր Մալումեանին, աւելի ծանօթ Է. Ալնունի ծածկանունով:

34.- Մարգպետ – ծածկանունն է կուսակցական յայտնի գործիչ Ղազարոսեան Ղազարոսի:

Մի երկու օր առաջ հեռագրեցինք Հորիզոնի խմբագրութեան, որ 5 օրինակ Հորիզոն ուղարկեն, ամէնօրեայ փոստայով. հինգն էլ մենք բաժանորդագրուած ենք. յարմար առթիւ դրամը կը ղրկենք. յիշեցնէք, որ չուշացնեն եւ ղրկեն:





Փաստ. 23-6

7.- ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ (Ժընել)

1914 թ. Նոյ. 15, Թիֆլիս

Սիրելի ընկերներ,

Նախորդ նամակովս արդէն գրել էի այստեղ կատարուող դէպքերի մասին: Ապահով չեմ՝ ստացե՞լ էք արդէն: Պոստային հաղորդակցութիւնը չափազանց անկանոն է եւ անապահով: Յամենայն դէպս երկու խօսքով կրկնեմ նախորդ նամակիս բովանդակութիւնը:

Համերոպական պատերազմի յայտարարութիւնից յետոյ ռուս կառավարութեան կողմից դիմում է լինում այստեղ հայկական շրջանակներին իմանալու համար, թէ ի՞նչ է լինելու հայերի դիրքը ռուս-թրքական պատերազմի դէպքին:

Հայերին եւս շատ մտահոգութիւն էին պատճառում պատերազմի դէպքում վրայ հասնելիք արհաւիրքները: Ահա այս հողի վրայ սկսւում են բանակցութիւնները: Կառավարութիւնը խոստանում է իրագործել ռէֆորմների սկզբնական ծրագիրը<sup>35</sup>, եթէ հայերը աջակցին ռուս բանակին: Իբրեւ երաշխիք այս խոստման կաթողիկոսին մի գրաւոր տոկումէնտ է տրւում նամակի ձեւով, որի մէջ խոստացւում է բարենորոգումների իրականացումը:

Բանակցութիւնները վարում է ձեզ ծանօթ Ազգային բիւրոյի (կրթական, բարեգործական եւ այլ միութիւնների ներկայացուցիչներից կազմուած մի մարմնի) Գործադիր մարմինը, որ բաղկացած է չորս հոգուց (Մեսրոպ եպս. առաջնորդը, քաղաքագլուխը, Սամսոն Յարութիւնեանը եւ մեր ներկայացուցիչ Բժիշկը<sup>36</sup>): Այս բանակցութիւնների միջոցին առաջ է դալիս հայկական կամաւոր խմբեր կազմելու ծրագիրը: Փոխաբքան հաւանում է. որոշուած է սկզբում 3000 հոգի կամաւորներ հաւաքել: Կառավարութիւնը նախնական ծախսերը հոգալու համար տալիս է 100,000 ռ.: Բժիշկը գնում է Բագու եւ այնտեղ հանգանակում նոյնքան մի գումար, իսկ յետագայ ծախսերն որոշուած է փակել հանգանակութեամբ: Գործի նիւթական մասը իր վրայ է առնում Ազգ. բիւրոն, որ ամէն քաղաքում իր ձեռքերը բանալով՝ ձեռնարկում է հանգանակութեան: Որոշուած է մէկ միլիոն ընդհանուր բիւդժէ, բայց ժողովրդի խանդավառութիւնն այնքան մեծ է, որ յոյս կայ շատ աւելին հաւաքելու: Ազգ. բիւրոյի գործադիր մարմինն է վարում նաեւ բանակցութիւնները կառավարութեան հետ եւ, առհասարակ, գործի լէզալ մասը: Խմբերի կազմակերպումը, խմբապետներ նշանակելը, եւ, առհասարակ, մարտական մասը յանձնուած է կուսակցութեան, որի

համար կազմուած է յատուկ մի մարմին: Ընդհանուր բնոյթ կրող գործերը լուծուած են այդ երկու մարմինների համագործակցութեամբ:

Կազմուած են եւ գործի են անցել արդէն չորս խմբեր հետեւեալ ձեւով. Անդրանիկ (օգնական Սեպուհ) 1200 հոգով Սալմաստում: Նրա հետ են բժ. Ջաւրիեւը, բժ. Տէր-Թովմասեանը, Սամսոնը, Ջամալեանը եւ այլն: Նրանք գնում են դէպի Վան. արդէն խանասորի մօտ մի փայլուն ճակատամարտ են ունեցել: Նրանք յարաբերութեան մէջ են Վանի ընկերների հետ. վանում նրանց գալուն սպասում են:

Երկրորդ խումբը Իգտիրում Դրոյի հրամանատարութեան տակ, բաղկացած 450 հոգուց, որոշուած է բարձրացնել 1000-ի: Խմբի մէջ են նաեւ Արմէն Գարոն ու Խէչոն: Խումբը Նոյեմբ. 1-ին ունեցաւ յաջող մի ճակատամարտ, որի մէջ սպանուեց մի մարտիկ եւ ծանր կերպով վիրաւորուեց Դրոն, որ այժմ, Իգտիրում օպերացիա կատարուելուց յետոյ, բերուել է Թիֆլիս եւ տեղաւորուել է Արամեան հիւանդանոցում: Խմբի հրամանատարութիւնն այժմ գտնւում է Արմէն Գարոյի եւ Խէչոյի ձեռքը: Խումբը հաւանաբար կ'երթայ Վան:

Երրորդ խումբը Կաղզուանում Համազասպի հրամանատարութեան տակ, 500 հոգուց բաղկացած: Խմբի մէջ է նաեւ Վալադեանը:

Չորրորդ խումբը՝ Սարըղամիշում, 480 հոգի, հրամանատար Քեռի: Խմբի մէջ է նաեւ Ս. Արարատեանը: Վերջին երկու խմբերի քաղաքացիական մասը վարում է Նիկ. Աղբալեանը:

Բոլոր խմբերը ունին իրենց ձիաւոր մասը — Պարսկաստանինը 120, միւսները՝ 50-ական. ունին օթօզի<sup>37</sup> ձիեր — Պարսկաստանինը 80, իսկ միւսները՝ 20-ական, ունին սանիտարական<sup>38</sup> խմբեր, Ֆէյտչէրներ<sup>39</sup>, բոլորը պիտի ունենան բժիշկներ, թուղցիկ ու մնայուն հիւանդանոցներ: Բոլորը զինուած են մոսիւններով — կառավարութիւնից ստացուած է 3000 հատ, փամփուշտներ

35.- Խօսքը կը վերաբերի հայկ. բարենորոգումներու այն առաջին ծրագրին, որ Կ. Պոլսոյ հայոց պատրիարքարանի կազմած նախագծի հիման վրայ մշակուած էր Պոլսոյ ռուսական դեսպանատան կողմէ եւ ներկայացուած միւս պետութեանց:  
36.- Բժ. Յակոբ Չարիե: Թիֆլիսի քաղաքագլուխը՝ Ալ. Խատիսեանն է:  
37.- Օթոզ – գումակ, փոխադրական միջոց:  
38.- Առողջապահական:  
39.- Բուժակ, բժիշկի օգնական:



### ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

րով: Ունին իրենց համազգեստը եւ բաւական տաք հագնուած են: Սկզբում համոզուած էին, որ պատերազմը չի սկսուի մինչեւ գարուն. այսպէս էին հաւատացնում փոխարքայի շրջանակները, բայց, յանկարծ, պատերազմը սկսելով՝ պէտք եղաւ շտապ կերպով պատրաստութիւններ տեսնել, որով որոշ թերութիւններ սպրդեցին, բայց վերջը ամէն բան ուղղուեց, մանաւանդ որ ամէն կողմից հասնող նուէրներ՝ շորեղէնով շատ առատ է:

Ամէն կողմից կամաւորների հոսանքը անդադար չարունակուում է. տարերային կերպով գալիս են ուսանողներ, բանուորներ, գործակատարներ, հողագործներ. քիչ չեն եւ ուսու երիտասարդներ, որոնք ուզում են մեր խմբերի մէջ մտնել: Շատերին ստիպուած ենք մերժել. շատերը գլխիկոր հեռանում են: Մերժուողները լացով են մեկնում: Կառավարութիւնը թէեւ սկզբունքով համաձայն է խմբերի թիւը շատացնել, բայց զէնք չունի. առաջարկում է բերդաններ, բայց բերդաններով, ի հարկէ, անկարելի է կռուի գնալ: Որոշ քաղաքներում, ինչպէս Ռոստով, Եկատերինոտար, Թիֆլիս վարձուած են կազարմաներ<sup>40</sup> եւ հարիւրաւոր երիտասարդներ հերթի են սպասում եւ միեւնոյն ժամանակ մարզուում: Կառավարութեան բարձր շրջանների եւ, մեծ մասամբ, տեղական պաշտօնէութեան վերաբերումը զարմանալի կերպով փոխուած է. ամէն տեղից էմիգրանտները<sup>41</sup> առանց որեւէ արգելքի, վերադառնում են: Մի ընդարձակ ցուցակ է ներկայացուած փոխարքայի միջոցով Պետրոգրադ, որով սպասուում է Դաշնակցութեան գործի հետ կապ ունեցողներին ամնիստիա<sup>42</sup>:

Հասարակութեան մէջ ստեղծուած խանդավառութիւնը ցոյց տալու համար լրագիրները տեղեկութիւններ հաղորդում են, թէեւ իրականութեան մի հազարերորդ մասն անգամ չի պատկերացուում: Ես չեմ տեսել եւ չեմ յիշում պատմական մի ուրիշ շրջան, ուր ժողովրդական շարժումն ու յոյսերը այնքան մեծ լինէին: Ինչո՞վ են արդարանում այդ յոյսերը — որոշ կերպով դժուար է ասել: Թերեւս շատ բան մոլոր է: Մի բան միայն պարզ է, որ բոլոր հիասթափութիւններից յետոյ ամէն ոք ուզում է ուսական յաղթական, այն հաւատով, որ գէթ այս անգամ Երրեակ համաձայնութիւնը ի կատար կ'ածէ հայ ժողովրդի բաղձանքները:

Ռուս-թրքական պատերազմի սկզբի օրերում հայկական շրջաններում միտք յղացաւ, որ հայերին էլ մի կոչ ուղղուի, ինչպէս եղաւ լեհերին: Այդ առթիւ եղած տեսակցութիւնները փոխարքայի եւ իր օգնականների հետ այն համոզումը գոյացրին, որ Կովկասի բարձր կառավարութիւնը խուսափում է մի այդպիսի քայլից: Շատերի մէջ կասկած ծագեց ուսական վերջնական դիտաւորութիւնների մասին: Այս առթիւ որոշ դիմումներ եղան եւ Պետրոգրադում: Աջեմովը<sup>43</sup> մի քանի օր առաջ հեռագրել էր եւ ապա նամակով յայտնել, որ Սա-

զոնովը<sup>44</sup> եւ բարձր կառավարական շրջանակները համամիտ են այդպիսի մի կոչ հրատարակելուն եւ խորհուրդ են տուել, որ կաթողիկոսը այդ իմաստով դիմում անէ կառավարութեանը: Սազոնովը հետաքրքրուել է մեր կամաւոր խմբերով եւ ասել, որ դրանք ապացոյց են հայ ժողովրդի կազմակերպական եւ մարտական ընդունակութիւնների: Սազոնովը համակարծիք է եղել նաեւ այդ կոչի մէջ աւտոնոմիա բառը յիշելուն. «աւտոնոմիա վիլայէթներին եւ Կիլիկիան»: «Կիլիկիան, ասել է նա, անգլիացիները մեզ չեն տայ, բայց ձեզ՝ հայերիդ կը տան»:

Այս բոլորի վրայ կաթողիկոսը մի նամակով դիմում արաւ կառավարութեան փոխարքայի միջոցով՝ ներկայացնելով այդպիսի մի կոչի հրատարակութեան. այդ նամակի մէջ ասուում է, որ կայսրը «երաշխաւորէ ստեղծումը վեց վիլայէթների եւ սրանց անբաժան մաս Կիլիկիայի աւտոնոմիայի՝ ուսական պրոտէկտորատի»<sup>45</sup> տակ»: Կազմուել է նաեւ կոչի տէկստը, որ խմբագրեց Հայր Աբրահամը<sup>46</sup> եւ ընկերները, եւ որ ընդունուեց Ազգային բիւրոյում: Տրուելու է նաեւ մի պատճառաբանական գեկուցում այդ կոչի մէջ յիշուող աւտոնոմիայի անհրաժեշտութեան մասին եւ վեց վիլայէթների ու Կիլիկիայի միացուած եւ հայացուած քարտէսը, որը մշակուում է մի յանձնախմբի կողմից: Մի ուրիշ յանձնախումբ էլ մշակում է ինքնավար Հայաստանի վարչական ձեւը: Մի այլ յանձնախումբ կազմուած է մեր դատի համար պրոպագանդ մղելու մամուլի մէջ: Այս տեսակ մարմնի գոյութիւնը շատ է անհրաժեշտ համարուում եւ Եւրոպայում: Մի չորրորդ յանձնախումբը գեաղուում է ինքնապաշտպանութեան խնդրով: Այս բոլոր յանձնախմբերը կազմուած են Ազգ. բիւրոյին կից եւ բաղկացած են մեծ մասով մեր ընկերներից կամ համակիրներից, ինչպէս արդէն նկատած էլ կը լինէք «Մշակի» մղած կատաղի պայքարից: Ինչպէս տեսնում էք, մի շատ ոգեւորուած եւ յուսալից տրամադրութիւն է տիրում: Կարդարանա՞ն արդեօք մեր յոյսերը — չեմ իմանում: Թղթէ տնակներ չե՞ն արդեօք այս բոլոր մեր ծրագիրները, յանձնախմբերը, եռուզեռը, խանդավառութիւնը, ոյժերի գերագոյն լարումը — ո՞վ է իմանում: Ամենասկեպտիկներն անգամ մի առժամանակ զգուշանում են իրենց կասկածներն յայտնելուց եւ իրենց սրտերի խորքում մի բանի են սպասում:

Այս վայրկեանին ահագին նշանակութիւն է ունենալու, ի հարկէ, Երրեակ համաձայնութեան կարծիքը, որ

40.- Զօրանցներ:  
41.- Վտարանդիները:  
42.- Ընդհանուր ներում:  
43.- Մ. Աջեմեան, պատգամատուր Պետրոգրադի պետական դումայի եւ անդամ Հայկական կոմիտէի:  
44.- Ռուսիոյ արտաքին գործոց նախարար:  
45.- Հովանաւորութեան:  
46.- Սահակեան Աւետիք:





Թեև տայ ռուս դիպլոմատիային: Եւ այս տեսակէտից նպաստաւոր տրամադրութիւն ստեղծելը շատ է կարեւոր: Այդ մասին խօսուում է, բայց դժուար է գործնական քայլ անելը: Շատ փափաքելի է, որ Ռոստոմի սկսած միտինգ<sup>47</sup> մինչեւ վերջ տարուի եւ ցանկալի վախճանի հասցուի:

Կազմակերպական գործերը վատ չեն. վերակազմակերպման գործը եռանդով առաջ է տարուում: Սեպտեմբերի վերջին գումարուեց մի արտակարգ ռաշոնական ժողով, որի արձանագրութիւններն ուղարկել ենք ձեզ: Գլխաւոր հարցերը կամաւորներին հարցն էր եւ ինքնապաշտպանութեան խնդիրը: Ժողովը հաստատեց Ար[եւելեան] բիւրոյի բոլոր գործերը կամաւորներին վերաբերմամբ եւ որոշեց բացառիկ կարեւորութիւն տալ ժողովրդական ինքնապաշտպանութեան գործին:

Պատերազմը յայտարարելուց յետոյ թուրքերի մէջ նկատուում է ինչ որ յուզում, արագ կերպով գինուում են, ժողովներ են գումարում, Տաճկաստանից գալիս են էմիսարներ<sup>47ա</sup>: Դրութիւնը աւելի կասկածելի դարձաւ սրբազան պատերազմ յայտարարելուց յետոյ: Հայ ազգաբնակչութիւնը վախի մէջ է, եւ մեծ կարիք կայ ինքնապաշտպանութեան:

Ինքնապաշտպանութիւն է կազմակերպուում նաեւ գրաւուած վայրերում եւ ռուսական սահմանային տեղերում: Դրա համար կառավարութիւնը մեր խմբերի տրամադրութեան տակ է դրել մի քանի հազար բեր-

դան, որով գինուում է տեղական ժողովուրդը: Փորձեր են լինում նաեւ գրաւուած տեղերում տեղական ժողովրդից վարչութիւն կազմակերպելու մերոնց ղեկավարութեան տակ:

Քէօփրիւ Քէօյի կռուի անյաջող ելքից յետոյ մի պրովոկացիոն<sup>48</sup> լուր տարածուեց հայ գինուորների մասին, որ իբր թէ երկչոտ են, դասալիք են լինում, թշնամուկողմն են անցնում, դիտմամբ վէրք են հասցնում իրենց եւ կռուից խուսափում: Այս լուրը անցաւ եւ գինուորական ու պաշտօնական շրջանակները: Այս պրովոկացիային մի անգամ ընդ միշտ վերջ տալու համար կաթողիկոսի կազմից մի պատուիրակութիւն ուղարկուեց պատերազմի դաշտ Մեսրոպ ու Խորէն եպիսկոպոսներին<sup>49</sup> եւ երեք աշխարհականներից բաղկացած: Պատուիրակութիւնը չըջելու է ամբողջ պատերազմի դաշտը եւ ի միջի այլոց, պարզելու է հայ գինուորներին այս պատերազմի նշանակութիւնը մեզ համար:

Պարբերաբար գրում եմ, բայց չգիտեմ՝ նամակներս հասնո՞ւմ են, արժէ՞ շարունակել: Խնդրեմ մի կերպ, նոյնիսկ հեռագրով իմացրէք այս մասին:

Ռոստոմի ներկայութիւնը շատ է անհրաժեշտ այստեղ. բոլոր ընկերները խնդրում են շուտ վերջացնել՝ առանց երեսի վրայ թողնելու՝ միտինգ եւ գալ այստեղ: Գալու որեւէ արգելք չկայ. ոչ էլ միւսներին:

Ձերմագին բարեկներով՝  
Ս. ՎՐԱՅԵԱՆ

47.- Ակնարկութիւն այդ օրերուն Ռոստոմի ուղեւորութեան Եւրոպա, ուր ան հայկական հարցով հանդիպումներ պիտի ունենար ֆրանսական եւ անգլիական շրջանակներուն հետ:

47ա.- Գործակալներ:

48.- Խռովարար, գրգռիչ:

49.- Յաջորդաբար Թիֆլիսի եւ Երեսանի առաջնորդներ:





Փաստ. 23-9

### 8.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ

Ընկերներ!

Ընթացիկ գործերի առատութեան պատճառով կարելի չեղաւ կանոնաւոր յարաբերութիւններ պահել եւ տեղեկութիւններ հաղորդել: Ներկայիս գալիս ենք ուղղելու այդ թերութիւնը եւ տալու ձեզ ամփոփ տեղեկութիւններ կուսակցութեան ներսն ու շուրջը անցած դարձած երեւոյթների մասին:

Մեր կազմակերպական ոյժերի մեծ մասը կլանուած է կամաւորների գործով, ուստի եւ անհրաժեշտ ենք գտնում մի քիչ աւելի կանգ առնել այս խնդրի վրայ: – Ինչպէս գիտեք, յունուար 26ին ստորագրուած բարենորոգումների անյաջող ծրագիրը արդիւնք էր ռուս-գերմանական մրցութեան: Ռուսաստանը ընդհանրապէս համակիր վերաբերում էր ցոյց տալիս դէպի ռեֆորմների ծրագիրը իսկ Գերմանիան՝ հակառակ: Հայկական քաղաքական շրջաններում այն համոզումն էր տիրում, թէ հայկական հարցը կարող է լուծուել ռուսական աջակցութեամբ:

Երբ բռնկուեց երոպական պատերազմը թուրք վարիչները լիկվիդացիայի ենթարկեցին ռեֆորմների ամենահամեստ փորձերն անգամ: Այդ ժամանակ ռուս եւ ֆրանսիական կառավարութիւնները կամեցան իմանալ հայերի եւ մասնաւորապէս Դաշնակցութեան դիրքը թուրք-ռուսական պատերազմի դէպքում: Միւս կողմից հայերին մեծ մտահոգութիւն էին պատճառում պատերազմի պարագային սպասելիք արհաւիրքները: Այս հողի վրայ սկսուեցին բանակցութիւնները հայերի եւ ռուս կառավարութեան միջեւ:– Կառավարութիւնը խոստանում էր յաջողացնել հայկական ռեֆորմների սկզբնական ծրագիրը, որի փոխարէն պահանջում էր հայերից աջակցութիւն ռուս զօրքին պատերազմի դէպքում: Այդ աջակցութիւնը պէտք է արտայայտուէր կամաւորների խմբեր կազմակերպելով եւ ռուս բանակին գործակցելով: Կամաւոր խմբերը պիտի զբաղուէին նաեւ հայ ժողովրդի ինքնապաշտպանութեամբ: Այսպէս առաջ եկաւ կամաւորների կազմակերպման գաղափարը, որ շուտով եւ իրականացում ստացաւ: Բանակցութիւնները վարում էր Թիֆլիսի կուլտուրական զանազան հաստատութիւնների ներկայացուցիչներից կազմուած մի մարմնի – Ազգային բիւրոյի – Գործադիր մարմինը, որի մէջ մեր ներկայացուցիչը ակտիւ մասնակցութիւն էր ցոյց տալիս եւ անց էր կացնում մեր տեսակէտները:

Ազգային բիւրոն իր վրան առաւ կամաւորների կազմակերպման նիւթական մասը եւ իր Գործադիր մարմնի միջոցով յարաբերութիւններ պահպանելը՝ զինուորներ հաւաքել, խմբեր կազմել, խմբապետներ նշանակել, արշաւանքի կէտերը որոշել եւ այլն ամբողջապէս յանձնուեց մեր կուսակցութեան, որի համար կազմուեց յատուկ մի մարմին բացառապէս մեր ընկերներից բաղկացած: Այսպիսով ստեղծուեցին երկու մարմիններ, որոնք վարում էին միեւնոյն գործի տարբեր մասերը եւ որոնք համագործակցում էին իրար ընդհանուր խնդիրներում: Ազգային բիւրոյում եւ նրա յանձնաժողովներում մենք ունինք բաւարար չափով ներկայացուցիչներ, որոնք կարողանում են քիչ շատ կարեւոր բոլոր հարցերի մէջ մեր տեսակէտն անցկացնել: Կամաւորների գործին տրուում է անկուսակցական բնաւորութիւն ոչ միայն ընդհանուր պայմաններով, այլեւ տաճկահայ մեր ընկերների կատեգորիկ<sup>50</sup> պահանջով:

Խմբերի կազմակերպման նախնական ծախսերը հոգալու համար կառավարութիւնը տրամադրեց որոշ գումար, մնացած բոլոր ծախսերը հոգացում են հանգանակութեամբ: Ազգ. բիւրոն որոշել է մէկ միլիոն ռուբլի բիւջէ, բայց հասարակական ոգեւորութիւնը այնքան բարձր է, որ յոյս կայ աւելի մեծ գումար հանգանակել: Առ այժմ կազմուած են չորս խմբեր, մօտ 3000 մարտիկներով: Ոյժերի խոշոր մասը Պարսկաստանից է սկսել գործել, Սալմաստից շարժուելով դէպի Վան: Խմբի հրամանատար է Անդրանիկը, քաղաքական մասի ներկայացուցիչը եւ ռուս բանակի հետ կապեր պահողը՝ բժ. Չարիելը: Այնտեղ գնացել են նաեւ ստուար թուով ինտելիգենտ ոյժեր: Խմբի պարէնաւորման գործը վարում է Սամսոն<sup>51</sup>, բժշկականը՝ բժ. Տ. Թովմասեանը: Խումբը արդէն ունեցել է մի շարք փայլուն յաղթական կռիւներ՝ գրաւելով Սարայն ու Բաշկալան: Այդ շրջանի ռուս բանակի հրամանատարը ամենանպաստաւոր զեկուցումներ է տուել խմբի գործունէութեան մասին:– Երկրորդ խումբը շարժուեց Իզմիրից: Ընդհանուր հրամանատար Դրօ, գործակից Խէչօ, շտաբի կառավարիչ Գարօ: Խումբը արդէն ունեցել է մի քանի յաջող ճակատամարտեր: Նոյեմբերի 1-ի կուում ծանր վէրք ստացաւ Դրոն, մի զինուոր սպանուեց եւ մէկը թէթեւ վիրաւորուեց: Դրոյի հեռանալով խումբը վարում են Խէչոն եւ Գարոն: Շուտով խմբի թիւը պիտի բարձրացուի 1000 հոգու:– Երրորդ խումբը կազմակերպուեց Կաղզուանում Համազասպի խմբապետ-

50.- Վճռական, կտրուկ:  
51.- Սամսոն – Թաղեւոսեան Ստեփան:





տուքեամբ: Խումբը ունեցել է նոյնպես յաջող կոնիներ: Չորրորդ խումբը կազմուեց Սարիղամիշում: Խմբի հրամանատար է Քեռին: Երրորդ եւ չորրորդ խմբերի քաղաքացիական մասի ընդհանուր ներկայացուցիչն է Ն. Աղբալեանը: Քեռու խումբը Նոյեմբ. 16-ին Գրզըլ-Կալա գիւղի մօտ ունեցաւ մի յամառ կոնի իրենցից մի քանի անգամ աւելի մեծ թրքական ոյժերի դէմ: Կռիւր տեւեց ամբողջ օր: Մեր մարտիկները ռազմական բարձր կորով ու կարողութիւն ցոյց տուին՝ հիացում առաջ բերելով ռուս զինուորի եւ հրամանատարների մէջ: Այս կուում մեր կողմից եղել է 10 սպանուած, 1 անհետ կորած, 23 վիրաւոր եւ 2 ձի սպանուած:

Խմբերը զինուած են պետական հրացաններով: Խմբերը ունին իրենց համազգեստները: Ամէն խումբ ունի իւր ձիաւոր գունդը, օբօզը<sup>37</sup> եւ խոհանոցը: Եղած պահանջի հետեւանքով որոշուել է եւ կառավարութիւնն էլ սկզբունքով ընդունել է կամաւորների թիւը կրկնապատկել, բայց զէնքի պակասութիւնը արգելք է լինում այս որոշումը գործադրելու: Այս օրերս որոշուեց նաեւ ռեզերվ<sup>52</sup> պատրաստել եւ հիմնել մեզ համար սպաներ պատրաստելու մի դասընթացը:

Կամաւորների կազմակերպումով մենք նպատակ ունենք մեր մասնակցութիւնը բերել այս պատերազմին, որով եւ ընդհանուր հաշուեյարդարի միջոցին աւելի մեծ իրաւունքով պահանջել, որ գումարուելիք վեհաժողովը լուծէ մեր հարցն էլ: Մենք յոյս ունենք, որ երբեակ համաձայնութեան յաղթութեամբ կ'որոշուի եւ տաճկահայերի ապագան եւ ուզում ենք հաւատալ, որ Թուրքաց Հայաստանը կը ստանայ ատոնումիս: Այդպիսի հաւաստիացումներ լսում ենք թէ Պարիզից եւ թէ մանաւանդ՝ Պետրոգրատից: Այսպէս ռուս թրքական պատերազմի առթիւ Պետրոգրատում եղած հետապնդումները այն հետեւանքն են տուել, որ արտաքին գործոց նախարարութեան մէջ համակրանքով է ընդունուել «վեց վիլայէթների եւ նրա անբաժան մաս Կիլիկիայի ինքնավարութեան» միտքը: Թէ փոխարքային եւ թէ Պետրոգրատ մասնաւոր դիմումներ եղան, որպէսզի հայերին ուղղուած մի կոչ հրատարակուի:

Պետրոգրատից եկած խորհրդի համաձայն կաթողիկոսը մի նամակով դիմեց փոխարքային, որ ցարը այդպիսի մի կոչ ուղղէ: Պետրոգրատից յոյսեր էին տալիս, որ այդպիսի մի կոչ կը հրատարակուի եւ մէջը կը յիշուի նաեւ «վեց վիլայէթների եւ Կիլիկիայի ատոնումիս»: Նոյն իմաստով դիմում է արել կաթողիկոսը ցարին եւս Թիֆլիսում ունեցած տեսակցութեան միջոցին եւ ստացել է բերանացի հաւաստիացումներ: Կարծես թէ կառավարութեան շրջաններում արդէն հաշտուել են Հայաստանի ատոնումիայի մտքի հետ: Թէ ինչ կը լինի այս բոլորի արդիւնքը, ի հարկէ դժուար է ասել:

Օրուայ ամենահրամայական խնդիրը ինքնապաշտպանութեան գործի կազմակերպումն է: Թուրքերից գրաւած եւ ռուսական սահմանակից մասերում ժողովրդական ինքնապաշտպանութեան համար կառավարութիւնը տուել է որոշ քանակութեամբ բերդաններ, եւ խմբերի քաղաքացիական մասի ներկայացուցիչներն արդէն սկսել են ինքնապաշտպանութեան ոյժերի կազմակերպումը: Միւս մասերում սակայն այդ գործը շատ է կաղում: Վերջ ի վերջոյ ժողովրդական ինքնապաշտպանութիւնը իր ամբողջ ծանրութեամբ ընկնելու է մեր կուսակցութեան վրայ: Մեր մարմիններն ու ընկերները պէտք է աշխատեն օգտուելով նախորդ փորձից կազմակերպել ու վարել ինքնապաշտպանութիւնը: Այդ բանի համար կարելի է օգտուել նաեւ ուսանողներից, որոնք գտնուում են իրենց տրամադրութեան տակ, եւ Ազգ. բիւրոյի յատկացրած բիւջէից: Ի հարկէ աշխատելու է գործի հրաւիրել հասարակական բոլոր ընդունակ ոյժերը, առանց նեղ կուսակցական բնաւորութիւն տալու:

Տաճկաստանի եւ արտասահմանի մեր մարմիններից համարեա կտրուած ենք հաղորդակցութեան դժուարութիւնների պատճառով: Այս օրերս ստացանք ընդհանուր ժողովի որոշումները եւ ուղարկեցինք ձեզ: Հատ ու կտոր տեղեկութիւններ կան, որ Հայաստանի բիւրոն ճիգեր է թափում հայ ժողովուրդն ու կուսակցութիւնը պահպանելու փոթորկում Տաճկաստանում: Վանից եկած վերջին լուրերից երեւում է, որ այնտեղ ընկերները լեռները խմբեր են հանել եւ սպասում են Անդրանիկի հասնելուն:

Թուրքերը բաւական զգոյշ են վարում հայերի հետ եւ դեռ ջարդերից խուսափում են, թէւ ամէն տեսակ բռնութիւններ շատ են լինում:

Մեր ունեցած տեղեկութիւններով համարեա բոլոր շրջաններում վերակազմակերպման գործը շարունակուում է, բայց ընդհանուր ուշադրութիւնը կենտրոնացած է պատերազմի եւ կամաւոր խմբերի վրայ:

Խոստանալով այսուհետեւ աւելի շուտ-շուտ տեղեկութիւններ հաղորդել մեր մէջ եւ մեր շուրջը կատարուող դէպքերի մասին՝ խնդրում ենք Ձեզ եւս աւելի կենդանի պահել Ձեր յարաբերութիւնները, եւ հաւաքական ոյժերով աշխատենք ընդհանուր գործի յաջողութեան համար:

Ընկերական բարեւներով  
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

1914 թ.

52.- Պահեստի գունդ:





Փաստ. 23-10

### 9.- ԼՈՒԻՐԵՐ ՀԱՅ ԿԱՍԱԽՈՐ ԽՄԲԵՐԻ ՍԱՍԻՆ

#### № 1

Հայ կամաւոր խմբերը բաւական ժամանակ է, որ գործի մէջ են գտնուում եւ արդէն կարողացել են կատարել մի շարք գործեր, որոնք հիացում են առաջ բերել գինուորական շրջանների մէջ:

Դժբախտաբար մամուլը հնարաւորութիւն չունի խօսելու այդ գործերի մասին, եւ ոչ միայն լայն հասարակութիւնը, այլ եւ գործին մօտիկ կանգնած մարմինները անտեղեակ են մնում: Այդ թերին լրացնելու համար է ահա, որ Հայ կամաւոր խմբերի Կարգադրիչ մարմինը, իբրեւ բոլոր խմբերը համախմբող մի կենտրոնական մարմին, որոշել է խմորատիպով հրատարակել կռուի դաշտից ստացուած տեղեկութիւններն ու խմբերի կազմակերպման շուրջ եղած նորութիւնները եւ օրը օրին ուղարկել իր մարմիններին: Այդ ձեւով, թերեւս, կարելի կը լինի հանրութեան աւելի ծանօթ դարձնել Հայ կամաւոր խմբերի գործունէութեանը:

Պատերազմի բեմում չորս կամաւոր խմբեր ունինք: Առաջին խումբը շարժուեց Սալմաստից Անդրանիկի հրամանատարութեան տակ: Երկրորդ խումբը դուրս եկաւ Իգտիրից Դրոյի հրամանատարութեան տակ: Երրորդ խումբը՝ Կողբուանից, հրամանատարութեամբ Համագասպի: Եւ չորրորդը՝ Սարիղամիչից, հրամանատարն էր Քեռին: Այս անգամ տալիս ենք տեղեկութիւններ Անդրանիկի խմբի մասին:

Խումբը մեկնեց Սալմաստից:

Անդրանիկի խումբը Սալմաստից մեկնել է Նոյեմբեր 3-ին: Գունդը բաղկացած էր 4 բոտայից(?) 158-ական մարդ, 30 սանիտար, 10 ձիաւոր Անդրանիկի մօտ: 45 օբօզի մարդ. 47 օբօզի ձի<sup>37</sup>, 2 ձիաւոր ամէն մի խմբի համար. ընդամէնը մօտ 1200 հոգի: Ժամը 11 1/2ին գունդը հաւաքուեց Դիլմանի մօտ, դաշտի վրայ, ուր Ատրուպատականի ռուս բանակի հրամանատար գեներալ Չէրնոզուբովը զգացուած մի ճառ խօսեց, հաւատ յայտնելով, որ մի նոր արշալոյս է բացուում հայկական երկնակամարի վրայ: (Գեներալի ճառը ընդունուեց ոգեւորուած «կեցցէ»-ներով): Գեներալը իր հիացումը յայտնեց գնդի կանոնաւորութեան մասին եւ մաղթեց յաջողութիւն, որից յետոյ գունդը ճանապարհ ընկաւ:

Առաջին գիշերը գունդը մնաց Քէօհնաշար գիւղում, տների մէջ, բայց տղաների մի մասը ուղարկուեց առաջին դիրքերը պահելու: Այստեղ առաջին անգամ տղաները գիշերապահութիւն արին, լեռների կատարին, ցուրտ գիշերին, որ նրանք յաջողութեամբ կատարեցին:

Նոյեմբ. 4-ին ցերեկը գունդը հասաւ Դերիկի մօտ մի բարձրաւանդակի վրայ եւ գիշերը անցկացրեց բաց երկնքի տակ: Սոսկալի քամի էր փչում, բայց տղաների ոգեւորութիւնը շատ բարձր էր. նրանք քաջութեամբ

տարան ամէն զրկանք: Այստեղ առաջին անգամ զգացուեց տաք հագուստեղէնի եւ տաք կերակուրներ պատրաստելու յարմարութեան պէտքը: Գունդը շատ շտապ էր, որ ճանապարհուեց եւ այդ երկու կողմից էլ մեծ պակասութիւններ ունէր:

Դերիկից խումբը մեկնեց Նոյեմբ. 5-ին առաւօտ եւ հասաւ Աշնակ գիւղի բարձրունքները, որտեղից երեւում էր Բուրուշ-Խորան լեռնանցքը, որ բաժանում էր մեզ Տաճկաստանից եւ որ մենք պէտք է գրաւէինք միւս օր: Հեռադիտակներով պարզուեց, որ թուրքերը գիտէին արդէն մերոնց գալու մասին եւ բռնել էին ամենամուր դիրքերը: Անմիջապէս հրաման տրուեց, որ տղաները գրաւեն իշխող դիրքերը, որ եւ կատարուեց կարգապահութեամբ:

Մի ժամ չանցաւ, որ Բուրուշ-Խորան գիւղի տակից երեւաց թշնամին, համիտիէի մօտ 14 հարիւրեակ եւ մօտ 1200 ասկէր: Մերոնք իսկոյն գրաւեցին մի գիծ մօտ 4 վերստ երկարութեամբ եւ կտրեցին թշնամու արշաւը: Ժամը 1-ին սկսուեց տաք կռիւ, որ տեւեց ամբողջ օր ու գիշեր եւ յաջորդ օր էլ մինչեւ ժամը 3. յայտնապէս յամառ յարձակումներ էր անում թշնամու ճախ թեւը, ուր գործում էին Սեպուհը, Սմբատը եւ Արտաշէսը իրենց խմբերով: Կռուի ժամանակ տիրում էր կարգ ու կանոն, հրամանները կատարւում արագ ու ճշտապահութեամբ: Ոչ մի անգամ չնկատուեցին վախի նշաններ: Տղաները կռուում էին շատ տաք ու եռանդով: Զարմանալի էր կամաւորների տոկոսնութիւնը: Ամբողջ խումբը պառկած մնաց փորի վրայ, ամբողջ գիշեր, ձեռքները վրայ, առանց խարոյկի, հետեւելով թշնամուն, եւ ոչ մի տրտունջ չեղաւ:

Օգնական զօրքերի եւ թնդանօթների հասնելուց յետոյ էլ կռիւը շարունակուեց մէկ օր ու կէս, որով ամբողջ կռիւը տեւեց 3 օր, երբ թշնամին սկսեց փախչել: Ռուս զօրքի հրամանատարը աւելի կասկածով էր նայում եւ չուզեց հալածել թշնամուն, որից վերջինս օգտուեց եւ ազատեց իր մնացած ոյժերը թողնելով բազմաթիւ սպանուածներ ու վիրաւորներ, անցնելով լեռնանցքի միւս կողմը:

Անդրանիկի պնդումները թշնամուն հալածելու մասին անցան ապարդիւն:

Նոյեմբ. 9-ին խումբը անցաւ Բուրուշ-Խորան լեռնանցքը եւ գրաւեց թուրքերի թողած տեղերը: Այսպէս անցաւ գնդի առաջին կռիւը, որից շատ գոհ մնաց գեներալ Չէրնոզուբովը: Մեր գունդը գտնուեց իր կոչման բարձրութեան վրայ:

Բուրուշ-Խորանից յետոյ, խումբը 10 օր Հաչգուլում հանգստանալով Նոյ. 18-ին մեկնում է Ղութուր, ուր





Րազիի մօտ տեղի [է] ունենում ճակատամարտը, որ տե-  
 ևում է մինչև յաջորդ օրուայ ժամը երկուսը: Մեր տղա-  
 ները կուռում են հերոսաբար, կողք կողքի ուսու բանակի  
 հետ: Թշնամին չի դիմանում եւ թողնելով թնդանթ-  
 ներ, սպանուածներ ու գերիներ՝ փախչում է: Մերոնք  
 հալածում են նրան, գրաւում Րազի, Հարաթեյ գիւղերը,  
 ուր առնում են քրդերից 5000 ոչխար: 19-ի գիշերը Սաթ-  
 մանիս հայ գիւղի ոչսը նամակ է բերում Անդրանիկին  
 Համսէկ, Մլան եւ Թակուրի աշիրաթների չորս բէգե-  
 րից, որոնք անձնատուր են լինում: Բոլորն էլ թրքական  
 բինբաշիներ են, որոնց թուրք կառավարութիւնը տուել  
 էր 500-ական հրացաններ:

20-ին այդ բէկերը յանձնուում են Անդրանիկին որ ու-  
 դարկում է նրանց գեներալ Չէրնոզուբովին: Խումբը  
 շարունակում է իր ճանապարհը եւ 21-ին առանց դի-  
 մադրութեան գրաւում է Սարալը: Տեղի քրիստոնեանե-  
 րը աղ ու հացով ընդունում են խմբին եւ մատաղ են  
 մորթում: 27-ին խումբը գրաւում է Ասուրլին, որի  
 շուրջը տեղի են ունենում տաք կռիւներ եւ աւերում են  
 մի քանի քրդական գիւղեր: 29-ին կռիւ է լինում Մոլլա  
 Հասան – Ղարաբէօզ – Հասսասան գծի վրայ. մերոնք  
 մտնում են Հասսասան, բայց երբ արդէն թշնամին փա-  
 խուստի է դիմում հրաման է գալիս յետ քաշուելու:  
 Այստեղ սպանում է Սեպուհին օգնական Չուլալը<sup>53</sup>,  
 յիսնապետ Եղիան եւ մի ունտէր օֆիցէր ինստրուկ-  
 տոր<sup>54</sup>: Նոյ. 30-ից մինչև Դեկտ. 2-ը խումբը պատրաս-  
 տուում էր նոր յարձակումների, երբ 3-ի գիշերը հրա-  
 ման եկաւ նահանջելու որովհետեւ թուրքերը բերել էին  
 նոր զօրքեր, եւ սպառնում էին մերոնց թիկունքը անց-  
 նել: Դեկ. 3-ին Ղօթուր է հասնում, իսկ 4-ին կարգադ-  
 րութիւն է ստանում առաջ շարժուելու: 4-ին եւ 5-ին լի-  
 նում են կռիւներ եւ մերոնք գրաւում են Արաթէլ-Քլի-  
 չակ գիծը եւ լաւ ջարդ են տալիս թշնամուն:

Նոյ. 13-ին Սալմաստից ճանապարհ էր դրուել Աւե-  
 տիսի<sup>55</sup> խումբը, որ պիտի միանար Անդրանիկին: Աւե-  
 տիսը 14-ին հասնում է Խանասոր, ուր ուսու զօրքերի  
 հետ ստիպուած է լինում կռիւ ունենալ Բարթոլոմէոս  
 Առաքեալի վանքի մօտ: Մերոնք, ինչպէս Անդրանիկի  
 բոլոր կռիւներում, լինում են առաջին շարքերում եւ  
 ուժեղ կռուից յետոյ գրաւում են վանքը եւ առաջինը  
 վանքն է մտնում Աւետիսի խումբը գանգակների ղօ-  
 դանջով, յետոյ հասնում են ուսուները: Բաշկալան էլ ա-  
 ուջին գրաւողը մերոնք են լինում, յետոյ հասնում են  
 կազակները: Թշնամին ուժեղանալով յետ է վերցնում  
 Բաշկալան, իսկ Աւետիսի խումբը գնում միանում է  
 Անդրանիկին: Անդրանիկի կռիւները հիացմունք են ա-  
 ուջ բերել ուսու հրամանատարների մէջ, որոնք նրան  
 ներկայացրել են բարձր պատուանշանի եւ ոսկի սուրի,

իսկ 121 հոգի կամաւորներ էլ Գէորգեան խաչի: Հակա-  
 ուակ բոլոր դժուարութիւնների՝ խումբը իր տոկուն ու  
 համարձակ ընթացքով աւելի քան արդարացրել է իր  
 վրայ դրուած յոյսերը:

Մինչև դեկ. 2 ամբողջ խմբից սպանում է 12 հոգի  
 եւ վիրաւորուում 18: Լինում են նաեւ շատ հիւանդացող-  
 ներ, որոնց մեծ մասը վերադարձուած է Կովկաս՝ իրենց  
 վայրերը:

Բաշկալէի ու այլ գրաւուած, ապա բաց թողած չըր-  
 ջանների ժողովրդի դրութեան մասին ստոյգ տեղեկու-  
 թիւններ չկան: Բայց հաւանական լուրեր կան, որ Վա-  
 նի շրջակայքում հայերի գիւղերում ջարդեր կան: Քըր-  
 դերը մեծ շարժման մէջ են: Բաշկալէի եւ Չուսի շրջան-  
 ներում քրդական ոյժեր են կենտրոնանում: Նրանց թի-  
 ւը հազարների է հասնում: Ռուսների հեռանալուց յե-  
 տոյ Բաշկալէում հայ ազգաբնակիւթիւնը ենթարկուել  
 է քրդերի ու թուրք զօրքերի բռնութիւններին: Կոտո-  
 րած է եղել: Բաշկալէի 150 տուն հայ բնակչութիւնը մե-  
 ծապէս տուժել է, սպանուածների թիւը 200 են հաշուում:  
 Կոտորածի ու կողոպուտի են ենթարկուել հետեւեալ  
 գիւղերը.— Հերեսան, Առակ, Մալքան, Րազ, Խառա-  
 տուն, Երինգառնի եւ Հասսասան: Գաղթողների ասե-  
 լով սպանուածների թիւը 300-400-ի է հասնում: Սահմա-  
 նակից շրջանների ժողովուրդը գաղթել է Սալմաստ:  
 Գաղթողների թիւը հասնում է] 600-700-ի սակայն նոր  
 գաղթականներ են գալի: Գաղթականների դրութիւնը  
 շատ ծանր է:

Յայտնի է որ քրդերը միշտ զինուած են եւ թալանի  
 ու կոտորածի տրամադիր: Ճիշտ է նրանց մէջ կան մար-  
 դիկ, որ աշխատում են պատասպարել հայերին, կան այն-  
 պիսիներ էլ, որոնք միանում են ուսուներին, սակայն  
 դրանք տակաւին բացառութիւններ են, այն էլ քիչ վըս-  
 տահելի: Բացարձակ մեծամասնութիւնը թշնամական  
 վերաբերմունք ունին հայի նկատմամբ: Այժմ էլ գլխա-  
 ւոր ջարդարարները ու թալանջիւները քրդերն են: Թէեւ  
 մի քանի տեղերում յաջողուել է հայերին թշնամուց  
 խլուած գէնքերով զինել, բայց դրանք շատ քիչ են ան-  
 գէն բազմութեան մէջ: Բաշկալէում եւ ուրիշ տեղերում  
 ուսուներին հնազանդուած քրդերը, ուսուների հեռանա-  
 լուց յետոյ, կոտորում ու կողոպտում են հայե-  
 րին: [Վանքի] կռուին ուսուների հետ միացած է եղել  
 քիւրտ Սմիլոն, սակայն նրա մարդիկ կռիւը թողած հա-  
 յերին են թալանելիս եղել: Ինքը Սմիլոն էլ մի աւագակա-  
 պետ է: Ռուսների կողմն անցած քրդերից է եւ Աբդու-  
 Րըզակ բէյը, որ Բայագիտի կողմերից է եւ այժմ  
 գտնուում է Խոյում: Նա գանգատուել է մեր ընկերնե-  
 րին, թէ հայերը նեղում են քրդերին: Նրան փաստերով  
 ցոյց է տրուում, որ ընդհակառակը քրդերն են գլխաւոր  
 ջարդարարները: Բէյը խնդրել է աշխատել եւ խոստացել  
 է մի թուրքիկ յայտարարել եւ կոչ անել Մշի, Վանի եւ  
 այլ շրջանների քրդերին չդպչել հայերին:

53.- Չուլալ – դաշնակցական գործիչ, բուն անունով Կարա-  
 պետեան Լեւոն:  
 54.- Մարգիչ ենթասայ:  
 55.- Կիւմիւշխանցի Աւետիս (Կիզեան):







Փաստ. ՍՎ. 144-12

## 10.- ԼՈՒՐԵՐ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐ ԽՄԲԵՐԻ ՄԱՍԻՆ N° 2

### ԵՐԿՐՈՐԴ ԳՈՒՆԴ

Հայ կամաւորների երկրորդ գումարը մեկնեց Իգդիրից Դրոյի հրամանատարութեան տակ: Խմբի առաջին գործը եղաւ Կաւուէ Շամի գիւղի մօտի կռիւը, որի մասնաւորապէս նկարագրութիւնը տրուած է արդէն «Հորի-գոն»-ում: Այդ կռուում վիրաւորուեց Դրոն եւ խմբի հրամանատարութիւնը անցաւ Արմէն Գարոյին, օգնակա-նութեամբ Խէչոյի:

Յաջորդ կռիւները տեղի են ունեցել 23-ին ու 28-ին, ուր խումբը աչքի ընկաւ իր քաջութիւններով:

Թշնամու մի ուժեղ խումբ նոյ. 23-ին ցերեկուայ ժա-մը 11-ին լեռների վրայից կրակ է բացել կամաւոր[ների] վրայ: Իսկոյն կամաւորների ու կազակների մի ձիաւոր խումբ դիրք է բռնել լեռան լանջին մի գիւղում ու հա-մազարկեր ուղղել թշնամու ձախ թեւը, որը կազմուած է եղել մօտաւորապէս 400 հոգուց:

Կամաւորների մի հետեւակ խումբ ուղղուել են դէպի նրանց աջ թեւը: Թշնամին օգտուելով իր գերակշիռ ոյ-ժից, աշխատել է շրջապատել մերոնց: Կռիւը շարունակ-ւել է մինչեւ ժամը 2, երբ մեր տղաներից 15 հոգի, ձիա-ւոր, նկատելով սպառնացող վտանգը, գրոհ են դիմել ու յաջողակ դիրքեր գրաւել լեռան բարձրութեան վրայ: Թշնամին փախուստի է դիմել: Օգնութեան հասնող կա-զակները բռնում են թշնամու ձախ թեւը: Ժամը 4-ին թշնամին նոր ոյժեր է ստանում: Կամաւորների ու կա-զակների խմբերն էլ են ուժեղանում նոր ոյժերով: Մե-րոնք յարձակման են դիմում եւ փախցնում իրենցից մի քանի անգամ բազմաթիւ թշնամուն: Ժամը 5-ին կռիւը դադարում է եւ կազակները հեռանում են: Կամաւոր-ները մնում են դիրքերում մինչեւ ժամը 7-ը, երբ նկա-տում են, որ թշնամու ոյժերն ամրանում են լեռան աջ ու ձախ կողմերում ընկած գիւղերում: Թրքական մի բատալիոն էլ դուրս է գալիս գիւղից եւ գնում անորոշ ուղղութեամբ: Կամաւորները յաջողութեամբ նահան-ջում են իրենց բանակատեղին, ուր հասնում են գիշերը ժամը 10-ին:

Այս կռուում ծանր վիրաւորուում է մի կողակ, թեթեւ վէրք է ստանում մի կամաւոր, սպանւում է մի ձի:

Թշնամու կորուստները մեծ են լինում: Իրենց քաջու-թեամբ աչքի են ընկնում հրամանատարի օգնա-կաններէն ձիաւորների խմբապետ Արտեմ Հանումեան, Յովհաննէս Պարոնեան եւ հետեւակների խմբապետ Մի-քայէլ Բաղալգեօխեանը:

Նոյեմբերի 28-ի կռուի մասին պատմում է մի գին-ւոր: Նա ասում է. թշնամին որոշ դիրքեր գրաւելով կա-մաւորների շուրջն ընկած բարձունքների վրայ, պատ-րաստուում էր յարձակում գործել: Ետպոնի<sup>56</sup> 15 հոգուց կազմուած ձիաւոր խումբը, լեռան բարձրունքից փորի վրայ լաւ դիրք մտած, արշաւեց դէպի թշնամին: Մի ու-րիշ յաջողակ դիրք ընկաւ Զեմլեակի<sup>57</sup> ձիաւոր խմբի ձեռքը: Մերոնց սրարշաւ գրոհները սարն ի վեր հանդի-պեցին թշնամու համազարկերին, սակայն տղաները հի-ացմունքի արժանի անվեհերութեամբ խլեցին թշնամու բարձր դիրքերը առանց մի գոհ տալու: Թշնամին փա-խաւ ձորերը: Մեր միւս խմբերը ընկան նրանց յետեւից եւ սկսեցին հալածել: Այդ ժամանակ եկան ուսու գին-ւորները, որ հեռուից դիտել էին կռիւը եւ հիացած գո-վասանքներ էին թափում: Սակայն մերոնցից մի քանի-սը անզգուշութիւն են անում՝ ուսու գինուորների հետ մտնել ձորում գտնուած մի գիւղ, որ իրենց քաղցն ու ծարաւը յագեցնեն: Թուրքերը տներից կրակ են բաց անում եւ վիրաւորում մի քանիսին:

Այս կռուում վիրաւորուել են հետեւեալներ.—

- 1) Աղեքսանդր Յարութիւնեան — խնուցի,
- 2) Հմայ-եակ Ալեքսանեան — դաւալուցի,
- 3) Արմենակ Կարա-պետեան — վանցի,
- 4) Յովհաննէս Մկրտիչեան — Զա-լայօղլեցի,
- 5) Մուշեղ Սերոբեան — դանձակեցի, եւ
- 6) Խոսրով Սահակեան:

Սպանւում են վեց ձի:

Ռուս գինուորական շրջաններում մեծ գովասանքով են խօսում կամաւորների այս կռիւներում ցոյց տուած քաջութիւնների մասին: Գեներալ Սաւեցկին գովասա-նական գեկուցում է ներկայացրել գեներալ Աբաղիեւին: Մի քանիսին շքանշանով պարգեւատրելու առաջարկ է արած:

Այդ կռուից յետոյ գնդի հրամանատարը հետեւեալ կոչն է ուղղում կամաւորներին:

56.- Պարոնեան Յովհաննէս:  
57.- Նանումեան Յարութիւն:





Հայ կամաւորներու Երկրորդ գունդի խմբապետներուն եւ զինուորներուն,

Տղերք ջան, երկնայ ցոյնք. 28 թուականը կրքնանք հպարտութեամբ յանձնել հայ նորագոյն պատմութեանը:

Երկէ ձեզմէ ամէն մէկը կատարեց իր սրբազան պարտականութիւնը դէպի իր հայրենիքը, բարեխիղճ կերպով: Մեր ռուս զինակից եղբայրները վկայ են դրան:

Ես չեմ ուզում խօսքերու շռայլութեան մէջ մտնել, միայն այսքան կրնամ ըսել, որ հայ ֆետայոյ պատիւը բարձր պահեցիք բոլոր դիրքերում էլ:

Շատ ապրիք:

Հրամանատար ԱՐՄԷՆ ԳԱՐՕ

Դերիք, 29 նոյեմբերի 1914

Յաջորդ կռիւը տեղի ունեցաւ դեկտ. 7-ին, ժամը 10-ի մօտերը: Բաղալիտնի կոմանդիրը յայտնեց մեզ, որ զօրքը պատրաստուած է դէպի կռիւ, որ մեր հայկական երկրորդ կամաւորների բանակն էլ դուրս գայ:

Մեր շտաբի կարգադրութեամբ իսկոյն պատրաստուեցինք եւ մէկ բատալիոն գինուորներով, երկու զնդացիներով դիմեցինք դէպի կռուի դաշտը:

Երկու հարիւրեակ կազակներ եւ մեր ճիւղերը խումբը վաղուց առաջ էին զնացել հանդիպելով թշնամուն ժամի 3-ին. կազակները դիրք են բռնում մի սարի գալթին, իսկ մեր ճիւղերը՝ Հոմեր եւ Քրոսկո քրքրական գիւղերի արեւելեան կողմում գտնուած բարձրունքները: Թշնամին մի քանի անգամ փորձ է անում գրոհ տալ, մեր ճիւղերի վրայ, բայց, մերոնց զալպերը<sup>58</sup> ստիպում են նրանց յետ նահանջել: Ժամի 4-ին մեր

58.- Համազարկերը:

հետեակ կամաւորներ եւ զօրքը բռնում են ամբողջ բարձունքները. թշնամին աւելի մեծ ոյժով նորից փորձում է գրոհ տալ, բայց զնդացիների գործունէութիւնը եւ մերոնց արագ զալպերը ցիր ու ցան են անում թշնամուն: Մեր ճիւղերից մի խումբ այնքան մօտ է լինում թշնամուն, որ ազատ լսում են եղել նրանց խայտառակ հայհոյանքները: Թշնամին թուով մօտ հազար հոգի կը լինէր կանոնաւոր հետեակ ու ճիւղեր զօրքերից եւ համիդեաներից: Կռիւը տեւեց մօտաւորապէս 3 ժամ, մենք սպանուած չունեցանք. միայն թեթեւ ոտքերից վիրաւորուեցին Մոսկուայի Յարպ Ռախմանովը եւ մի գինուոր զօրքից: Թշնամին ունեցաւ բաւականին սպանուած եւ վիրաւոր. ժամը 6-ին կռիւը դադարեց եւ մենք վերադարձանք մեր բանակավայրերը, դիչերուայ ժամը 11-ին:

Խումբը տաք կռիւներ ունեցաւ նաեւ Դեկ. 11-ին, 12-ին եւ 13-ին, որոնց մէջ ցոյց տուաւ առանձին յանդըգնութիւն եւ ռազմական կորով:

Ապա ամբողջ ռուս բանակի հետ ստիպուած եղաւ յետ քաշուել մինչեւ Իգդիր: Ռուս զօրքը նահանջելիս ոչնչացրեց մի շարք գիւղեր, որպէսզի թուրքերը դիչերելու եւ պաշար ստանալու տեղ չունենան: Ժողովուրդը ահաբեկուած փախաւ այդ գիւղերից եւ մեր խումբը անզնահատելի ծառայութիւն մատուցեց բնակեր եղած հայ գիւղացիութեան՝ պաշտպանելով եւ օգնելով նրան գաղթի ժամանակ:

Երկրորդ գունդը իր գործունէութեամբ շատ գոհ է թողել ռուս բանակի հրամանատարներին, իսկ գինուորական շրջանները առանձին հիացումով են խօսում հայ կամաւորների անվեհեր կռիւների մասին: Չորրորդ կորպուսի հրամանատար գեներալ Օգանովսկին յատուկ ուշադրութիւն է դարձրել մեր կամաւորների վրայ. նրա առաջարկութեամբ խումբը որոշուած է միացնել եւ հասցնել 120 հոգու: Նոյն գեներալի առաջարկութեամբ որոշուած է հիմնել խմբերի համար ըհգէրվ, ուր ռուս ինստրուկտորները պէտք է մարզեն մեր խմբերի մարտիկներ, այլեւ հաստատել հայ սպաների դպրոց, ուր շտաբի սպաների ղեկավարութեան տակ պատրաստուելու են մեր խմբերի համար սպաներ:





ԵՐՐՈՐԴ ԳՈՒՆԴ

Երրորդ գունդը շարժուեց Կաղզուանից Համագասպի հրամանատարութեան տակ: Խմբի գործունէութիւնը սկսուեց մի քանի յաջող կռիւներով: Առանձնապէս ուշագրաւ են Քեափանակի մօտի կռիւները: Նոյ. 30-ին մերոնք 14 հոգով 150 կողակի հետ դուրս գալիս Քեափանակի դիրքերը դիտելու, յանկարծ սկսում են կրակել թուրքերը, վրայ են հասնում մեր մնացած տղաները եւ բռնկւում է տաք կռիւ, որ տեւում է մինչեւ երեկոյ. մերոնք տալիս են 8 վիրաւոր. թշնամու կորուստը շատ մեծ է լինում:

Դեկ. 2-ին մերոնք պատրաստւում են գրաւել Քեափանակը: Կազմւում է ծրագիրներ ուսում հրամանատարների հետ: Մերոնք կռուից առաջ երկու օր հաց չէին կերել: Սկսւում է տաք կռիւ: Ռուսական թնդանօթը շատ վատ է գործում: 128 անգամ արձակում են եւ ոչ մէկ անգամ չեն դիպչում նշանին ու գիւղին, ուր ամրացել էին թուրքերը. մի շարք գրոհներ են լինում, բայց ուժեղ թշնամին յետ է մղում. մերոնցից վիրաւորւում են ութ հոգի. երկուսը ծանր, կողակներից 8 եւ սպանւում է 1 հոգի, թուրքերի կորուստը անհամեմատ աւելի մեծ է եղել: Երեկոյեան կռիւը վերջանում է առանց գիւղը գրաւելու: Մեր խմբից շատ գոհ են այդ շրջանի զինւորականները: Հակառակ այն անասելի պայմաններին, ցրտի, տաք հագուստի բացակայութեան եւ սնունդի պակասութեան, մեր մարտիկները զարմանալի տոկունութիւն եւ հոգեկան արիւթիւն են ցոյց տուել:

Դեկ. 8-ին Համագասպի գունդը ենթարկւում է մի ծանր հարուածի: Գիշերը, երբ գունդը զօրքերի հետ հանգստանում էր, Ալագեազ գիւղում էլ գիշերապահութիւն յանձնուած էր կողակներին, թուրքերը փաթաթուած էին ճերմակ սաւանների մէջ, ձիւնի մէջ չնկատուելու համար, յարձակում են գործում, սպանում են պահակներին, եւ գրոհ տալով գիւղի վրայ, պատուհաններից սկսում են կրակել:

Տղաները յանկարծակիի եկած փողոց են վազում կիսամերկ, մի մասը իսկոյն շտապում է ամուր դիրքեր գրաւել եւ ապահովել միւսների նահանջը: Այս դժբախտ գիշերին մերոնցից սպանւում են մօտ 30 հոգի. կորչում է մերոնց ամբողջ օբոզը<sup>37</sup> եւ ռազմամթերքը:

Ծանր գոհեր են տալիս նաեւ ուսում զօրքերը: Թիֆլիսից ուղարկուած նոր ոյթերով ու մթերքով հագիւ կարելի է լինում հոգալ խմբի անմիջական կարիքները:

Խումբը այնուհետեւ շարունակում է գործել իր շրջանում եւ յետ է քաշւում Կաղզուան ուսում ամբողջ բանակի հետ:

Իբրեւ նշան այն համակրական տրամադրութեան, որ ուսում զօրքի հրամանատարները ցոյց են տալիս դէպի մեր գունդը, բաւական է յիշել, որ նրանք ամենաջերմ վերաբերմունք են ցոյց տալիս դէպի գունդը: Գնդի հրամանատար Համագասպին տրուած է Գէորգեան երկրորդ կարգի մետալ, քաջութեան համար: Խմբի հասցէին ուղղուած մի շարք գովասանական թղթերից իբրեւ նմուշ առաջ բերենք այն պրիկազը, որ գեներալ Պրժէվալսկին կորպուսի հրամանատարի կողմից ուղղել է ուսում բանակին:

Ահա այդ պերճախօս փաստաթուղթը.—

Հրաման Կովկասեան անաջին զինուորական կորպուսին N° 129 27 դեկտ. 1914

Կովկասեան գործող բանակ

Հայկական երրորդ գունդը Համագասպ Սըրւանձտեանի հրամանատարութեան տակ պատերազմի հեճն սկիզբից գտնուելով կորպուսի ճախ թեւում, առաջ Պոլկովնիկ Կովքեակիցի գնդում, իսկ յետոյ Պլաստունցների երկրորդ բրիգադին կից, անվեհեր կերպով կատարում էր հետախուզումներ դժուար մատչելի լեռներում, կռիւ մղելով քրդական հրոսակների դէմ, ուս ուսի մասնակցում էր կռիւներին մեր զօրքերի հետ, կրելով ծանր զոհեր:

Ազնի ու քաջամարտիկ ծառայութեան համար շնորհակալ եմ գնդի հրամանատար Համագասպ Սըրւանձտեանից եւ կորիճ կամաւորներից:

Ստորագրեց կորպուսի հրամանատարի փոխարէն,

Գեներալ Մաժէօր Պրժէվալսկի

1914 թ. դեկ. 29



Փաստ. Ս.Վ. 144-11

# 11.– ԿԱՐԳԱԴՐԻՉ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄ Ս. ՎՐԱՅԵԱՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ԱԶԳ. ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ԿԱՄԱՒՈՐ ԽՄԲԵՐԻ ՄԱՍԻՆ

1914 թ. դեկտ. 27

Ազգային Բիւրոյի նախագահի զեկուցումից ժողովականները իմացան, թէ ի՞նչ պայմաններում առաջացաւ հայ կամաւոր խմբերի կազմակերպման միտքը: Կառավարութիւնը որոշ խոստումներ առաւ տաճկահայոց ապագայի նկատմամբ, եւ Ազգ. բիւրոն յանձնարաւ կազմակերպել կամաւոր խմբեր օգնելու ռուս զէնքի յաջողութեան: Այնուհետեւ ստեղծուեց զինուորական մի մարմին՝ Հայ կամաւոր խմբերի Կարգադրիչ մարմին կամ, ինչպէս սովորաբար կոչում են, շտաբ անունով, բաղկացած զինուորական հմտութիւն, անուն ու փորձառութիւն ունեցող անձնաւորութիւններից, որոնց եւ յանձնուեց խմբերի կազմակերպման եւ ղեկավարման գործը:

Սկզբում շարժումը կրում էր անլէզալ բնաւորութիւն. կառավարութիւնը խուսափում էր աղմուկից եւ չէր ուզում հրապարակային ձեւ տալ: Այդ պատճառով ամէն բան արւում էր գաղտնի կերպով: Զինուորական մարմինը որոշեց խմբերի գործունէութեան վայրը, նրանց թիւը, հրամանատարների կազմը եւ կազմելով զօրաշարժի ծրագիրը՝ ամէն կողմ ուղարկուեցին մարդիկ ու հեռագիրներ՝ կամաւորներ արձանագրելու համար:

Որոշուեց խմբերի գործունէութեան չորս կէտեր ընդունել. Սալմաստից պիտի շարժուէր Անդրանիկի գունդը 1500 հոգուց բաղկացած եւ պիտի արշաւէր դէպի Վան. Իգտիրից պիտի դուրս գար Դրոյի խումբը 500 հոգուց կազմուած՝ նոյնպէս Վան արշաւելու նպատակով: Կաղզուանից շարժուելու էր Համագասպի գունդը, իսկ Սարղամիշից՝ Քեռիի գունդը: Կառավարութիւնը առաջարկում էր նաեւ Օլթիի եւ Խոյի գիծերը առնել, բայց զինուորական մարմինը մերժեց աչքի առաջ ունենալով, որ այդ գիծերը հայաբնակ չըջանում չեն գտնուում: Գործը կազմակերպողների մէջ այն տրամադրութիւնը կար, որ բաւական ժամանակ պէտք պիտի լինի մոբիլիզացիան լրացնելու համար, բայց հասարակութիւնը այնպիսի խանդավառութեամբ ընդ առաջ գնաց, որ շատ կարճ ժամանակում ոչ միայն ստացուեց պահանջուած թիւը, այլեւ շատերին ստիպուած եղանք մերժելու: Հայաբնակ բոլոր վայրերից ինքնաբերաբար գալիս էին կամաւորներ, հակառակ մամուլի եւ զին-

ւորական մարմնի ազդարարութիւնների՝ հոսանքը երթալով աւելի լայն ծաւալ ստացաւ. խմբեր եկան Բուզաբիայից, Ռուսանիայից, Օդեսայից, Ղրիմից, Ռոստովից, Եկատերինոպոլից, Աստրախանից, Անդրկասպեան երկրից եւ ուրիշ հեռաւոր տեղերից: Այդ հոսանքը շարունակուում է եւ այսօր, չնայած մեր կողմից եղած մերժումներին:

Կամաւոր խմբերի կազմակերպումը, ինչպէս յայտնի է, սկսուեց սեպտեմբերի սկզբներին, երբ ռուս-տաճկական յարաբերութիւնները խիստ լարուած էին եւ ամէն ըրպէ սպասուում էր պատերազմի յայտարարութիւն: Այդ տրամադրութեան ազդեցութեան տակ մոբիլիզացիան կատարուեց շատ արագ. կարելի չեղաւ ոչ խիստ բժշկական քննութիւն կատարել, ոչ էլ լաւ ընտրութիւն անել զինուորական եւ այլ տեսակէտներով: Այդ պատճառով խմբերի մէջ մտան բաւական թուով եւ տկար ու կասկածելի տարրեր, որոնք անզօր գտնուեցին դիմաւորաւ այն բոլոր դժուարութիւններին, որոնք վիճակուեցին մեր խմբերին: Այդ յուզուած տրամադրութիւնը տեղի տուեց հանգստութեան, եւ արդէն հոկտեմբերի կէսերին կառավարութիւնը մեզ յայտնեց, որ պատերազմը յետաձգուում է մինչեւ գարուն: Ապահով, որ դեռ ժամանակ կայ խմբերի պակասը լրացնելու եւ զինավարժութեամբ պարապելու, զինուորական մարմինը, համեմատաբար, թեթեւ պատրաստութեամբ նշանակուած կէտերն ուղարկեց կամաւորներին: Կամաւորների համար որոշուած էր առանձին, միանման համագրեստ, որ մշակեցին խմբերի հրամանատարները: Հագուստի եւ այլ պէտքերի համար ի նկատի էր առնուում անցեալ փորձը — բոլորական պատերազմի, հայդուկային կռիւների եւ այլն օրերից: Դժբախտաբար, շատ բան կարելի չեղաւ նախատեսել, եւ խմբերը բաւական նեղութիւններ կրեցին՝ սկզբներում տաք ու յարմարաւոր հագուստներ չունենալու պատճառով:

Չնայած կառավարութեան հաւաստիացումներին, յանկարծ, պայթեց պատերազմը, որ յանկարծակիի բերեց եւ մեզ: Սկսուեց մի տենդային աշխատանք եղած պակասութիւնները լրացնելու մասին, բայց սպասելու ժամանակ չկար: Խմբերը առանց կանոնաւոր վարժութեան ստիպուած էին կռուի մեկնել: Հրամանատարներ-





### ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

ըը դիմեցին իրենց տեղերը: Բոլոր խմբերը հապճեպով պատրաստեցին եւ հազար ու մի պակասութիւններով հանդերձ՝ սկսեցին գործի: Ամենամեծ պակասութիւնը, ինչպէս յիշեցինք, տաք հագուստի չլինելն էր, այլեւ խոհանոցի, բժշկական մասի պակասը: Մեր բոլոր՝ ճիգերը խմբերի համար բժիշկներ կամ Ֆէլդշէրներ գտնելու անցան ապարդիւն: Նոյնիսկ 200 եւ աւելի բուժփոխարինող սակաւ նշանակուեց, թերթերում յայտարարութիւն տպուեց, բայց բժիշկներ չգտնուեցին:

Խմբերի գործունէութիւնը ամփոփ կերպով հետեւեալն է եղել. Անդրանիկի խումբը շարժուել է Սալմաստից մօտ 1200 հոգով: Ապա այդ խումբն ուժեղացաւ մօտ 200 հոգով: Խումբը ունէր հետեւակ ու ձիաւոր — մօտ 200 հոգի — մասը: Զինուած էր մոսիներով: Խումբը առաջին կռիւր ունեցաւ Բուրուշտրան լեռնանցքի վրայ: Կռիւր անցաւ շատ յաջող: Խումբը ռուս զօրքերի հետ գրաւում է Ղօթուրը, ուր Րազի գիւղի մօտ լինում է տաք կռիւ: Այստեղ մերոնց անձնատուր են լինում չորս քիւրտ բէգեր-բինբաշիներ: Ապա խումբը առանց դիմադրութեան գրաւում է Սարայը: Մի խմբակ Աւոյի ղեկավարութեամբ ջարդում է քրդերին Բարթուղիմէ-նու առաքեալի վանքի մօտ եւ գրաւում վանքը: Ապա 14 հոգով գրաւում է Բաշկալան եւ գալիս միանում Անդրանիկի գնդին: Անդրանիկի գունդը՝ եղած հրամանի վրայ թողնում է Սարայը եւ գալիս Ղօթուրի մօտ դիրքեր բռնում: Դեկ. 4ին նոր հրաման է հասնում առաջ շարժուելու, խումբը նորից գրաւում է Սարայը, բայց վերջին ընդհանուր նահանջի ժամանակ՝ մեր խումբն էլ յետ է քաշուում: Մինչեւ վերջին արշաւանքը ամբողջ գնդից սպանուում են 12 հոգի եւ վիրաւորուում 18 հոգի: Գնդի գործունէութեան մասին ամենանպաստաւոր գեկուցումներ են տրուում Ատրպատականի ռուս բանակի հրամանատարների կողմից: Ի նշան յատուկ ուշադրութեան՝ Անդրանիկը վարձատրուում է բարձր պատուանշաններով, իսկ խմբից շատ մարտիկներ ներկայացուում են Գէորգեան խաչերի:

Երկրորդ գունդը շարժուեց Իգտիրից 390 հոգուց բաղկացած<sup>59</sup>, որոնց 50ը ձիաւոր:

Դրոյի ղեկավարութեամբ խմբի առաջին գործը եղաւ Կաւուէ Շամի գիւղի կռիւր, ուր վիրաւորուեց հրամանատար Դրոն, եւ խմբի հրամանատարութիւնը անցաւ Արմէն Գարոյին. նրա օգնականն էր Խէչոն: Գնդի յաջորդ գործերն եղան Նոյ. 23-ի եւ 28-ի ապա դեկ. 7-ի, 11-ի, 12-ի, 13-ի խիզախ կռիւնները, որոնց մասին հիացումով են խօսում ռուս սպաները՝ անուանելով մեր տղաների յանդուգն յարձակումները Աթաթա Սումասչէք-շիխ<sup>60</sup>: Գունդը գործել է շատ աննպաստ պայմաններում եւ գտնուել է հայտեաց գեներալ Աբաղիւի տրամադրութեան տակ եւ պատուաւոր կերպով տարել է իր գործը: Այնքան յաջող, որ կորպուսի կոմանտիր գեն. Օգանովսկին ինքնաբերաբար առաջարկում է

խումբը մեծացնել եւ հայ խմբերի համար սպաներ պատրաստել: Այդ նպատակով Իգտիրում հիմնուեցին հայ սպաների համար դասընթացքներ, ուր շտաբի սպաների դասախօսութեամբ պիտի պատրաստուեն մեզ համար վարիչ ոյժեր: Երկրորդ գունդն էլ ընդհանուր նահանջի հետեւանքով քաշուել է Իգտիր:

Երրորդ խումբը շարժուեց Կաղզուանից Համագասպի հրամանատարութեամբ. նոյնպէս ունեցաւ մի շարք փայլուն գործեր, որոնց մասին գրուեց թերթերում: Դեկ. 8-ին խումբը ենթարկուեց գիշերային յարձակման եւ տուեց զոհեր՝ սպանուած ու վիրաւորներ: Խումբը այժմ սահմանի վրայ է՝ Սըթահան գիւղում:

Ամենամեծ փորձութիւնների ենթարկուեց չորրորդ գունդը՝ Քեռիի հրամանատարութեամբ: Գունդը շարժուեց Սարղամիշից մօտ 480 հոգով, առաջին յաջող ճակատամարտը ունեցաւ Գլլար Կալա գիւղի մօտ: Կորպուսի հրամանատար Բէրխամանը առանձին ուշադրութիւն դարձրեց դէպի խումբը՝ կարեւոր նշանակութիւն տալով նրան: Վերջին պանիկայի ժամանակ Քեռին ամենածանր պայմանների մէջ ընկաւ՝ հանդիպելով անհամեմատ աւելի մեծ ոյժերի: Նարիմանի մօտ խումբը ցրուեց եւ մօտ 80 հոգի կորուստ ունեցաւ: Յրուած խմբակները այժմ հաւաքուել են Ղարսում եւ Քեռին պատրաստուում է նորից շարժուելու: Կորած է մի մասը: Բոլորովին թալանուած է նաեւ մեր պահեստը Սարղամիշում, որով Քեռու եւ Համագասպի խմբերը մնացել են առանց հագուստի ու պարէնի:

Բոլոր գնդերի մօտ մենք ունեցել ենք մեր քաղաքական ներկայացուցիչները — Պարսկաստանում բժ. Զաւրիւր, Սամսոնը եւ այլն, Իգտիրում Ս. Տիգրանեանը, Ս. Մատինեանը, Կաղզուանում Վալադեանը, Սարղամիշում՝ Նիկ. Աղբալեանը, որոնք ամենանպաստաւոր կերպով տարել են իրենց ծանր պարտականութիւնները: Օգտուում ենք առիթից յայտնելու համար մեր խորին յարգանքը թէ հրամանատարներին եւ քաղաքացիական ներկայացուցիչներին եւ թէ բոլոր կամաւորներին, որոնք ոչ միայն արդարացրին իրենց վրայ դրուած յոյսերը, այլեւ մեծապէս բարձրացրին հայ ժողովուրդը յաշտ պետական եւ զինուորական մարզկանց, ինչպէս եւ թշնամիների:

Կամաւոր խմբերի փայլուն գործունէութիւնը պատճառ եղաւ, որ կառավարութիւնը համաձայնուէր խմբերի կազմը կրկնապատկել՝ խոստանալով 3000 հրացան էլ տալ եւ համաձայնելով սպայ ու ենթասպայ մարգիչներ 1000 հոգինոց ընդհանր պատրաստելու համար: Այդ նպատակով արդէն 500 հոգի ուղարկուեց Ալեքսանդրապոլ, 500 հոգի էլ այս օրերս կ'ուղարկուեն: Րէզիլի պատրաստութեան գործը յանձնուեց Վարդա-

59.- Բնագիրը ունի 480, ապա մատիտով ցնցուած ու 390 գրուած:  
60.- Ուսաստառ. խեմբերու յարձակում:







նին, որի համուլթիւնը երաշխիք է այս գործի յաջողութեան: Աստիճանաբար պէտք է մեծացուին եւ գործող խմբերը, ուժեղացնելով նրանց ճիւղերը մասերը: Բէզէր-վից պատրաստ նիւթ պիտի հայթայթուի, որով պիտի լրացուի այն պակասը, որ խմբերը ունենում են սպանուողների, վիրաւորների եւ զանազան առիթներով հեռացողների պատճառով:

Զինուորական մարմինը անհրաժեշտ է գտնում կենտրոնացնել ընդհանրի գործը, որպէսզի կարելի լինի մեր պայմաններին համապատասխան մարզանք տալ, դիսցիպլինի միանմանութիւն մտցնել, բաշխման գործը կանոնաւորել եւ միանման հագուստ հագցնել: Բէզէր-վի կենտրոնացումը զգալի չափով կը կրճատէ եւ ծախսերը, որոնք այսօր բաւական անկանոն կերպով են տեղի ունենում, ոյժերի ցրուածութեան պատճառով:

Այսպէս, ուրեմն, հիմա մենք ունինք երկու, համեմատաբար, լրիւ խմբեր՝ Պարսկաստանում եւ Իգտիրում, Համազասպի խումբը առանց օրոզի<sup>61</sup> եւ Քեռու խումբը գրեթէ նոր կազմած: Վերջին երկու խմբերի վրայ խոշոր ծախսեր պէտք է անել՝ նրանց գէթ նախկին վիճակին հասցնելու համար: Ալեքսանդրապոլում ունինք ընդհանրի 500 հոգին, նոյնքան էլ Թիֆլիսում, որ մի քանի օրից պիտի ուղարկուի Ալեքսանդրապոլ: Իգտիրում ունինք սպանների դպրոց, որ նոր է կազմակերպու-ւում:

Խմբերի պէտքերը հոգալու համար թէ տեղերում եւ թէ Թիֆլիսում ունինք պահեստներ: Թիֆլիսի կենտրոնական պահեստում հայթայթուում են բոլոր հարկաւոր իրերը եւ կենտրոնացում են նուէրները: Պահեստը պէտք եղած իրերը կամ պատրաստ է գնում, կամ

ապսպրում տեղում ու դրսի քաղաքներում:

Ինչպէս ասացինք, խմբերը կազմելու եւ նրանց գործերը վարելու համար գոյութիւն ունի կարգադրիչ մարմինը կամ շտաբը, որ գործակցում է Ազգային բիւրոյի Գործադիր մարմնին: Վերջինս հոգում է գործի նիւթական մասը: Առաջինը տանում է գինուորական-մարտական գործը: Ընդհանուր գործի համար լինում են խառն ժողովներ:

Զինուորական մարմինը գործի կազմակերպման հէնց առաջին օրից որոշեց գործը դնել անպայման Համազգային անկուսակցական հողի վրայ: Եւ այս հանդիսացաւ գործի յաջողութեան առաջին պայմաններից մէկը: Այս եղաւ նաեւ ամենալաւ միջոցը ամրացնելու այն համերաշխութիւնը, որ վերջերս տիրում էր հայ ժողովրդի բոլոր խաւերում եւ բոլոր վայրերում:

Այս են այն ամփոփ տեղեկութիւնները, որ կարելի եղաւ հապճեպ կերպով պատրաստել: Դժբախտաբար ժամանակ չկար աւելի մանրամասնօրէն, թուերով ու փաստերով ներկայացնելու կամաւորների կազմակերպման գործը իր ամբողջ բարդութեամբ: Աւելի նպաստաւոր պայմաններում կարելի կը լինի այդ թերին էլ լրացնել:

Գործը շատ նոր էր, չափազանց բարդ ու պատասխանատու: Գործի կազմակերպման մէջ պակասութիւններ շատ կան, որոնք հետզհետէ պէտք է ուղղուին, մանաւանդ որ դեռ շատ փորձեր են սպասում մեզ ապագայում: Մենք համոզուած ենք, որ այս գործին հաւատացող բոլոր ոյժերը ոչ մի ջանք չպիտի խնայեն պատուաւոր կերպով դուրս գալու բոլորիս ստանձնած պարտականութեան տակից:

Ս. ՎՐԱՅԵԱՆ

61.- Ռուսատառ. օրոզ՝ գումակ, փոխադրական միջոց, պարե-նատրման կէտ:





Փաստ. Ս.Վ. 144-9

12.- ՄԻՍՈՆ ՎՐԱՑԵԱՆ – ՕՐԱԳԻՐ

(1914, դեկտ. 4 – դեկտ. 31)

Միմոնի Վրացեանի այս «Օրագիր»ը հրատարակուած է 1962 թ. Պէյրուք լոյս տեսած «Հին քղեր նոր պատմութեան համար» հատորին մէջ (էջ 87-127), որ հեղինակին անձնական հաւաքածոյէն քաղուած՝ պատմական արժէք ներկայացնող փաստաթուղթերու ժողովածոյ մըն է:

Ներկայ հրատարակութեան, ինչպէս նաեւ կամաւորական շարժման համար մեր օգտագործած միւս փաստաթուղթերուն համար, հիմք ընդունած ենք Պէյրուքի պահոցին մէջ գտնուող իր թիւ 144 թղթածրարին ձեռագիր-բնագիրները:

Խնդրոյ առարկայ Օրագիրը պարունակող թիւ 144-9 տետրակէն անջատաբար, առանձին թերթի մը վրայ, Վրացեան գրի առած է հետեւեալ ծանօթագրութիւնը, բացատրելու համար թէ ի՞նչ պարագաներու մէջ եւ ի՞նչ հանգամանքով է գրի առած իր Օրագիրը, բաղկացած բազմաթիւ տետրակներէ, որոնցմէ ցաւօք միայն այս մէկն է փրկուած:

Օրագիր  
(1914, Պն. 4 – Պն. 31)

1914 թ. մարտի 22-ին Արեւելեան Բիւրոյի յանձնարարութեամբ եւ Ազգային Բիւրոյի որոշումով եւ մտայ Հայ կամաւորական խմբերի Կարգադրիչ Մարմնի կազմի մէջ՝ ստանձնելով ընդհանուր քարտուղար-գործավարի պաշտօնը: Նիկոլ Աղբալեան վարում էր տնտեսական-հաշուական եւ Աբր. Գիւլ-խանդանեան վարչական բաժինները:

Իմ պարտականութիւնն էր նաեւ ներկայացնել Կարգադրիչ Մարմինը Ազգային Բիւրոյի ժողովներում եւ, առհասարակ, կապ պահել Կարգադրիչ Մարմնի եւ Ազգ. Բիւրոյի միջեւ: Որպէս այդպիսին մասնակից էի եւ իրազեկ Ազգային Բիւրոյի եւ Կարգադրիչ Մարմնի բոլոր գործերին:

Պաշտօնիս հենց սկիզբից եւ սովորութիւն դարձրի պահել Օրագիր եւ օրը-օրին արձանագրում էի ամէն անցուդարձ, ժողովների համառօտ արձանագրութիւնները, օրուայ հետաքրքրական դէպքերը եւ մեր անելիքները: Օրագրիս բոլոր տետրակները, դժբախտաբար, կորել են. մէկը միայն փրկուել է հրաշքով, որ ներկայացնում եմ ստորեւ, իբրեւ հում նիւթ պատմութեան:

Հապճեպով գրի առնուած տողեր են, յաճախ, շատ կրճատ: Լեզուի եւ ոճի գեղեցկութիւն մի՛ փնտռէք: Բովանդակութեան տեսակետից էլ թերութիւններ կան. բայց, ինձ թուում է, նիւթը որոշ շահեկանութիւն ներկայացնում է ժամանակի դէպքերը եւ դէպքերի ոգին պատկերացնելու համար:

1914 թ. սեպտեմբերին, Հ.Յ.Գ. Արեւելեան Բիւրոյի յանձնարարութեամբ եւ Ազգային Բիւրոյի որոշումով եւ մտայ Հայ կամաւորական խմբերի Կարգադրիչ Մարմնի կազմի մէջ՝ ստանձնելով ընդհանուր քարտուղար-գործավարի պաշտօնը: Նիկոլ Աղբալեան վարում էր տնտեսական-հաշուական եւ Աբր. Գիւլ-խանդանեան վարչական բաժինները:

Իմ պարտականութիւնն էր նաեւ ներկայացնել Կարգադրիչ Մարմինը Ազգային Բիւրոյի ժողովներում եւ, առհասարակ, կապ պահել Կարգադրիչ Մարմնի եւ Ազգ. Բիւրոյի միջեւ: Որպէս այդպիսին մասնակից էի եւ իրազեկ Ազգային Բիւրոյի եւ Կարգադրիչ Մարմնի բոլոր գործերին:

Պաշտօնիս հենց սկիզբից եւ սովորութիւն դարձրի պահել Օրագիր եւ օրը-օրին արձանագրում էի ամէն անցուդարձ, ժողովների համառօտ արձանագրութիւնները, օրուայ հետաքրքրական դէպքերը եւ մեր անելիքները: Օրագրիս բոլոր տետրակները, դժբախտաբար, կորել են. մէկը միայն փրկուել է հրաշքով, որ ներկայացնում եմ ստորեւ, իբրեւ հում նիւթ պատմութեան:

Հապճեպով գրի առնուած տողեր են, յաճախ, շատ կրճատ: Լեզուի եւ ոճի գեղեցկութիւն մի՛ փնտռէք: Բովանդակութեան տեսակետից էլ թերութիւններ կան. բայց, ինձ թուում է, նիւթը որոշ շահեկանութիւն ներկայացնում է ժամանակի դէպքերը եւ դէպքերի ոգին պատկերացնելու համար:





**Դեկ. 4**

Չորրորդ կորպուսի<sup>62</sup> հրամանատարի անձնական աղիւղանո<sup>63</sup> Շահխաթունի գեկուցում է տալիս: Օգանովսկին եւ Լիախովը տեսնուել են կաթողիկոսի հետ, որը շատ ազէտ ձեւով է ընդունուել:

Օգանովսկին լաւ է վերաբերուում դէպի հայերը: Առաջարկուում է էջմիածնում 1000 հոգինոց ըէգէրվ հաստատել, որի համար ինքը տալիս է ինտարուկտորներ: Իգտիրում հիմնել 50 հոգու համար սպաներ պատրաստող դպրոց: Ձինուորական մասը ինքն է առնում, պարենատրման\* մասը՝ մենք: նրա ցանկուլթիւնն է պատրաստել 10,000 հոգինոց խումբ: Ձէնքը ճարել դժուար է. առաջարկուում է Եսպոնիայից բերել նրանց հրացանները, 2.5 զծանի<sup>64</sup>, որ, իբր թէ, եսպոնական զինուորական նախարարը առաջարկել է գնել ուուս կառավարութեան, բայց վերջինս մերժել է՝ որոշել գնել Եսպոնիայից այն գէնքերը, որ ուուս-եսպոնական պատերազմի ժամանակ եսպոնիացիները գրաւել էին:

Ձէրնոզուբովը հեռագրել է Օգանովսկուն, որ Անդրանիկը առաջարկուում է որոշ ժամանակուում վանը առնել: Օգանովսկին հեռագրով շնորհակալուլթիւն է յայտնել եւ այդ առաջարկուլթիւնը համարել է վաղաժամ: Առհասարակ բանակը կանգնուում է ձմրան\* [պատճառով], փորում են գէմբանկաներ<sup>65</sup> եւայն:

Սպաների դպրոցի հարցը վճուուած է: 50 սովորող շուտով կ'ուղարկուեն:

Ըէգէրվը հիմնել էջմիածնում անյարմար է նկատուում որպէսզի վանքի հետ կապուելով՝ գրգռուում առաջ չբերէ մահմեդական տարրերի մէջ:

Մոսկուայից եկել է ոուս բժ. Նիկուլայեւ, որ խընդրում է ընդունուել իբրեւ բժիշկ մեր խմբերի մէջ: Պատրաստ է երթալ դիրքերը: Իր պայմաններն են.

300 ր. ամսական

300 ր. միանուագ օրավարձ\*. Մոսկուայից ճանապարհածախսը:

Եթէ գերի ընկնի, ամսականները բանում են: Վատ ախորժակ չէ:

Բայագէտի չըջանում, գրաւուած վայրերում վարչուլթիւն ստեղծելու գործը յանձնուեց Ս. Տիգրանեանին: Նա հետը ունենալու է 8 հոգի ինտելիգենտ ոյժեր, որոնց համար անհրաժեշտ է 8 ձի, զգեստատրում\* ասպ-

րուտի համար օրական 50 կոպէկ եւ ձեռքի ծախս՝ ամսական 10 ր.: Ընդամէնը ամսական բիւդձէ է որոշուում 370 ր. եւ միանուագ 1800 րուբլի: Ս. Տիգրանեանը հետը տանում է 500 ր., իսկ մնացած ծախսերը այստեղից կը լինեն:

Որոշուեց ժընեւից 5 բժիշկ բերել. հեռագրով փոխադրել ճանապարհածախսը, բայց նախ քան այդ հեռագրել Վարանդեանին, թէ ի՞նչ պայմանով են գալիս. եթէ կարիք լինի, ճանապարհածախս էլ կ'ուղարկենք:

Խմբերից եկողները գանգատուում են, որ շատ անգամ սոված են մնում: Գրել խմբերին եւ հարցնել, թէ չի՞ կարելի արդեօք տեղերում խոհանոցներ կազմել:

**Դեկ. 6**

«Հորիզոն» ուղարկել Իգդիր ուսանող-աղմիրխատրատորներին<sup>66</sup>:

Ռուսանիայից եկած կամաւորներից մի խումբ Ռոստովի բիւրոյից հագուուտ են ստացել եւ այստեղ գալով՝ մի քանի օր մնալով մեր կազարմայում<sup>67</sup>, թողնում հեռանում են եւ միանում հնչակեաններին, որոնք Ղարսում խումբ են կազմակերպում: Դրանք այսօր գնում են Ղարս եւ հագուուտն էլ տանում են հետները: Ընկերներից ոմանք ուզում են, որ գնանք եւ ուժով յետ առնենք հագուուտը: Այդ մերժուում է եւ առաջարկուում է գրել Ռոստով, որ չպիտի տալին հագուուտը պատահական մարդկանց եւ առհասարակ բոլոր բիւրոներին իմացնել, որ հագուուտ տրուի միայն այստեղի կարգադրուլթեամբ:

Բողոք ներկայացնել կառավարութեան, որ մեզանից դուրս ուրիշների միջոցով հայ կամաւորների խմբեր է կազմում:

Հնչակեանները պահանջում են, որ Ազգ. բիւրոյում իրենց երեք մարդու տեղ տրուի: Այդ պահանջը արդէն մերժուել է Ազգ. բիւրոյից, հետեւաբար այժմ խօսելը դրա մասին աւելորդ է:

Մատնանշուում է, որ կառավարութիւնը աշխատում է մեր ոյժերը բաժանել եւ այդ քաղաքականութեան հետեւանքով է, որ նախ մեր խմբերը հեռացնում է հայկական վայրերից (Քեուի) եւ խմբեր է կազմում անկախ մեր ձեռնարկից:

**Դեկտ. 7-ին**

Որոշուեց մի հրահանգ կոչ ուղղել հասարակութեան նուիրաբերութիւններն ու կամաւորների գործը կանոնաւորելու համար:

Շտաբի համար կնիք շինել՝

«Հայ կամաւորն խմբերի Կարգադրիչ Մարմին»\*:

62.- Կորպուս – զօրաբանակ: Չորրորդ զօրաբանակի հրամանատարն էր Չօր. Օգանովսկի:  
63.- Համհարգ:  
64.- Բնագրին մէջ ռուսերէն: Այսուհետես բնագրի ռուսատառ բառերը եւ ռուսերէն խօսքերը՝ շեղագիր եւ աստղանիշով:  
65.- Հիւղակներ:  
66.- Վարչական գործերով գրադողները:  
67.- Չօրանցում:



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

**Դեկ. 8**

Մեսրոպը Բայազիտի եւ Դիատինի շրջանից գեկուցում է:

Բոլոր քրտերը անխտիր գինուած են. շատ անհրաժեշտ է գինաթափ անել: Զինաթափման համար պէտք է բոլոր գիւղերից 2-3ական երեւելիներ կանչել եւ պահանջել գէնքը. եթէ տան լաւ. թողնել խաղաղ. եթէ չտան, գիւղերից պատանդ առնել եւ եթէ քրտերը ի չարը գործ դնեն գէնքերը, չարաչար պատժել թէ պատանդներին եւ թէ գիւղացիներին: Վնասակար անձինք հեռացնել այդ շրջանից: Քրտերի ձիերը գրաւել, որով թէ մեր ձիերի պէտքը բաւարարուած կը լինի եւ թէ քրտերը արագ տեղափոխուելու միջոցից կը գրկուեն:

Բայազիտի գեներալ-գուբերնատոր Տրեսազիմ\* յայտարարել է, որ հայերը գէնքով փողոց դուրս չգան:

Օգանովսկին խոստացել է հայերին թուղթ տան, որ գէնք կրելու իրաւունք ունենան:

Այն հայերը, որոնց գէնք է տրուած, սկսել են այդ գէնքով քրտերին թալանել: Այս երեւոյթը գրգռում առաջ է բերել տեղական ազմիրխատրացիայի մէջ:

Գրաւուած տեղերի հայերին բաժանուած է 150 բերդան. մի 100 էլ բաժանուած է Սուրմալուի շրջանում:

Բայազիտի հայերը ռուս բանակը մտնելուց յետոյ բոլոր թուրքերի տները թալանել են, նոյն իսկ դռներն ու պատուհանները հանել տարել են թուրքերի տներից: Թալանին մասնակցում է հարուստ թէ աղքատ:

Թալանով զբաղուած էին սկիզբը եւ կողակները, որոնք բացարձակապէս բռնութիւններ էին գործ դնում: 2-3 շաբաթից յետոյ դուրս եկաւ փոխարքայի հրամանը՝ չթալանել, եւ թալանը աւելի քողարկեալ ձեւ ստացաւ, բայց վերջ չգտաւ: Կողակները իգտիրի պոստից ահագին փող են փոխադրում իրենց հայրենիք:

Ցանկութիւն է յայտնուում, որ Բայազիտի ոստիկանապետը մի լաւ հայ նշանակուի: Այժմուայ ոստիկանապետը մի կաշառակեր հայ է:

Գեներալ նահանգապետը հովանաւորում է թուրք վարկաբեկուած տարրերին, որոնք շարունակում են յարաբերութիւններ պահել թուրք բանակի հետ:

**Բժ. Մանտինեանի գեկուցումը**

Բագուի հասարակական Ակումբը յատկացրել է 55000 ռ. պատերազմի կարիքներին: Այդ գումարը յատկացուեց յօգուտ թուրքիկ խմբերի: Այդ գումար[ով] մի խումբ կազմել հայ կամաւորների: Բժշկական խումբը կազմել 7 հոգուց, բժ. Մանտինեանի ղեկավարութեամբ: Երեք հոգի էլ առել է հետը սննդատու կայաններին\* համար:

Բժ. Մանտինեանը առաջարկում է, որ ինքը կարող է փոխարինել բժ. Զաւրիւեւին, իսկ վերջինս վերադառնայ

Թիֆլիս: Այս է Բագուի ընկերների տրամադրութիւնը:

Պարսկաստանի շրջանում էլ անհրաժեշտ է նկատուում վարչական մասի կազմակերպումը: Այդ նպատակով ուղարկել Սամուէլին – Կոստին<sup>67ա</sup>, որ աշխատէ Սամոնի<sup>51</sup> խորհրդակցութեամբ: Աշխարհբէկ Քալանթարին էլ ուսանող Առաքել Յարութիւն]եանի հետ դնել Սամուէլի ձեռքին տակ:

Սամուէլի կնոջ տալ ամսական 50 ռ. եւ նրա ապրուստը տեղում:

**Երեկոյ. Գործադիր [մարմնի ժողով]**

Միջնորդել, որ խմբերը կրկնապատկուեն. հաւաքել 3000 հոգի նախկին պայմաններով, կառավարութիւնը տալ իբրեւ նախնական ծախս 100,000 ռ. եւ բաժնէլափ\* 33 կ., թնդանթ, գնդացի\* եւ ձիաւորներ: Տայ կազարմա (օր. Ալեքսանդրապոլում) ըէգէրվ ստեղծելու համար, ինստրուկտորներ, ենթասպաներ\* եւ բաւարար քանակութեամբ գէնք: Զինաթափ անել քրտերին բանակի յետեւում:

Խումբերը դնել հայաբնակ շրջաններում. ցանկալի է կարգադրել, որ կառավարութեան տուած ամսականները տրուի Թիֆլիսում եւ ո՛չ տեղերում, որ անյարմարութիւններ է ներկայացնում:

Անհրաժեշտ է մի հրահանգով կարգադրել բոլոր նահանգապետներին, որ չարգելեն հաւաքել խմբերի համար փող, հագուստ եւ ձի:

Շտաբի բոլոր յարաբերութիւնները հայերի հետ՝ խմբեր կազմելու եւ գէնքի մասին, պէտք է ունենալ Ազգային բիւրոյի միջոցով. եւ այդ մասին եղած կարգադրութիւններն ու ձեռնարկները ենթարկել Ազգ. բիւրոյին:

Տալ 400 կարծ ու թեթեւ հրացաններ մեր խմբերի ձիաւորների համար. խմբերի ձիաւոր մասը ուժեղացնել:

Չարգելել տակել թերթերում տեղեկութիւններ խմբերի գործունէութեան մասին:

**Դեկ. 9**

Պարսկաստան ուղարկել 10 հոգի սանիտար:

Ուսանողական մի բիւրո է կազմուել. ուզում են, որ մենք հաստատենք եւ տանք սենեակ, դիւանական ծախսեր եւ այլն: Բիւրոյի նպատակն է միջնորդ դեր կատարել մեր եւ ուսանողութեան միջեւ: Ընդունել տալ բացի այն կէտից, որ ասում է, թէ շտաբը ուսանողների հետ յարաբերութիւն է պահում միայն Ուս. բիւրոյի միջոցով: Բիւրոն միայն միջնորդ կարող է լինել:

67ա.- Սամուէլ – Կոստի՝ Համբարձումեան Կոստանդին:





**[Արմէն] Գարոյի կռիւը**

Նոյ. 23-ին Գարոյի խումբը կռիւ է ունեցել Տոլտախի մօտերը Դերեկի գիւղի մօտերը:

Հեռուում երեւացել են թշնամիները: Զեմլեակի<sup>57</sup> խումբը դուրս է եկել հետախուզութեան\* յետոյ զննացել է Եսպոնի<sup>56</sup> խումբը: Խումբը հանդիպում է կողակներին, որոնք նոյնպէս հետախուզութեան\* էին դուրս եկել: Երկուսը միասին մի քիչ առաջ զննացին եւ հանդիպեցին քրտերի, որոնք սկսեցին գնդակ արձակել: Տղերքը ձիերը քաշում են մի շէնքի ետեւը եւ դիրք բռնելով սկսում են կռուել: Մեր տղերքը քիչ յետ են քաշում եւ Ուրրայով\* յարձակում գործում եւ բարձրանում մի սար: Քրտերը փորձում են շրջապատել, երբ հասնում է հայ հետեւակ խումբը, ապա գալիս է ռուս հետեւակը\* եւ տաք կռիւ է տեղի ունենում: Թուրքերի կողմից կռուում էին արաբներ, ըէտիֆներ<sup>68</sup> եւ համիտիներ: Երեկոյան դէմ թշնամին սկսեց փախչել:

Վիրաւորում է միայն մի կողակ. մեր տղաներից ոչ ոք չի վիրաւորում:

Միւս կռիւը եղաւ 28-ին: Թշնամին ոյժը հաւաքում է մերոնց վրայ, որոնք գտնուում էին աջ թեւում: Մերոնք յետ են մղում, մտնում են Տոլտախ եւ հասնում Աւմայ:

Մերոնցից վիրաւորում են 6 հոգի: Մէկը՝ Խոսրովի օգնականը գլխից ծանր վէրք է ստանում. նրան պահում են Խանիկում՝ վախենալով շարժել:

**Դեկ. 9**

Միշլայեվսկու մօտ են եղել երէկ ժամը 9-ին Խատիսեան եւ Ս. Յարութիւնեան: Խորհրդակցութեան ներկայ են եղել Պորոշին եւ Իւտենիչ: Տեսակցութիւնը տեւել է 2 ժամ: Ընդունուել է:

Կը տան 3000 հրացան, 2000 մոսին, 400 կարաբին եւ որքան կ'ուզէք ռազմամթերք: Կը տան աւանս 100,000 ռ., իսկ ձի չեն տալիս, ասում են «չկայ»: Թնդանօթ չեն տայ, բայց բոլոր նաջանիկներին<sup>69</sup> կը գրուի, որ կարիք զգացուելու դէպքում կամաւորական գնդերին տան քնդանօթներ\*: Տալիս են բաժնեւալիք\* 33ական կողակ:

Իրենք առաջարկում են 1600 մարդ տալ Անդրանիկին, 300-ական միւս խմբերին: 500 մարդ մշտապէս կ'ունենանք Իգտիր իբրեւ ընկերակ, աներ էլ կը տան. նոյն տեղ կը բացուի նաեւ օֆիցերական կուրսեր:

Պուլէմետտ<sup>70</sup> չեն տալիս, «չունենք» ասում են. նոյ-

նիսկ իրենց մասերը չունեն:

33-ական կողակ բաժնեւալիքը\* 3 խմբի համար դեկ. 10-ից այստեղից են տալու:

Քրտերի գինաթափման մասին ասում են, թէ դժուար է, որովհետեւ տեղերի ուժերի հրամանատարները\* այն կարծիքի են, որ պէտք է քրտերին շոյել, նրանց պատուանշաններ տալ եւ այդպիսով գրաւել: Այդ իմաստով շտաբի պետ Լեքեոնիսկի\* գրել է եւ առաջարկել քիւրտ երեւելիներին պատուանշան տալ: Այստեղից մերժել են, ասելով որ չեն հաւատում:

Ի վերջոյ Միշլայեվսկին խոստացել է խիստ հրաման տալ քրտերին գինաթափ անելու թիկունքում\*, իսկ առաջապահ մասերում թոյլ տալ, որ մեր խմբերը ազատորէն գինաթափ անեն:

Հայ խմբերը հայկական շրջաններն ուղարկելու մասին մերժել են, որ դա գինուորական տակտիկային է վերաբերում:

Խոստացել են ցիրկուլիար<sup>71</sup> հանել բոլոր նահանգապետներին, որ չարգելուի հայերին հանգանակութիւն անել ի նպաստ խմբերի:

Հայերի կամաւորների մասին միայն Ազգ. բիւրոյի հետ յարաբերութիւններ ունենալու մասին խոստացել են այսուհետեւ ոչ մէկի հետ գործ չունենալ եւ արտօնութիւն չտալ խմբեր կազմելու:

Ազգ. բիւրո.— փոխարքայի եւ Մետեխի միջեւ միջնորդ\*:

Լրագիրներում՝ խմբերի մասին տեղեկութիւն տալու ցենզորը Միշլայեվսկին ինքն է առել իր վրայ, միայն շաբաթը մի անգամ պէտք է ներկայացնել:

Անդրանիկը շատ լաւ դիրք է ձեռք բերել նրանց աչքերում: Հարցրել են թէ ի՞նչ միջոցով կարելի է նրան վարձատրել: Ուզեցել են ցուցակ ծառայութեան\*, որ փոխարքան ոսկէ թուր տայ, իսկ կայսրը շքանշան\*:

Դրոյին պիտի ամնխատիւ<sup>72</sup> տրուի:

Խմբերի մասին հարցում\* են արել: Անդրանիկի մասին Զէրնոզուբովը հրացան տեղեկութիւն է հաղորդել:

Համազասպի մասին հեռագիր է եղել, որով հաղորդուում է որ թուրքերը գիշերով յարձակուել են. սպանուել է 2 ռուս օֆիցեր, մի բժիշկ. մերոնցից 35 սպանուած, 25 վիրաւոր: Ձեր խմբապետը քնած է եղել\*, ասել է Միշլայեվսկին:

Րէզերվի ինստրուկտորներ նշանակում են զօրաբանակի հրամանատարները\*: Եզոր Տէր Աւետիքեանի մասին թող Օգանովսկին ինքը դիմէ:

**Դեկ. 10**

Արավերդիի գաւառը<sup>73</sup> ուղարկել էինք 30-ի չափ բանուորներ՝ ոչ-ալիտանի\* կամաւորներից: Հիմա նրանք չեն ուզում աշխատել: Որոշուեց մի մարդ ուղարկել եւ ասել<sup>74</sup>

68.- Պահեստի զինուորներ:  
69.- Հրամանատարներին:  
70.- Գնդացի:  
71.- Շրջաբերական:  
72.- Ընդհանուր ներում:  
73.- Գործարան:  
74.- «Հին քղեր»ում մէջ բաց ձգուած տողերում մէջ տպուած է. «Կամ պիտի ենթարկուէք, կամ պիտի վերադառնաք տեղերը»:







ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

**Համագասպի կռիւր**

Նոյ. 31-ին մեր 14 տղաներն 150 կողակներով դուրս են եկել նայել Քեափանակի դիրքերը: Թուրքերը սկսել են հրացան արձակել: Մերոնք քիչ յետ են քաշուում, ապա հասնում են միւսները մեր տղաներից. սկսում է տաք կռիւ, որ տեւում է մինչեւ երեկոյ. մերոնցից 8 վիրաւոր, թշնամիներից մի քանի տասնեակ սպանուած: Երեկոյեան մերոնք քաշուում են գիւղ:

Դեկտ. 2-ին մերոնք պատրաստուում են Քեափանակը գրաւել: Քեափանակի առջեւ մի դիրք կայ Քարէ սար: Մի շատ ամուր դիրք, որ անկարելի է գրաւել յարձակումով: Կազմուեց ծրագիր ռուսների հետ գրաւելու Քեափանակը: Մերոնք կռուից առաջ համարեա երկու օր հաց չեն կերել պաշար չունենալու պատճառով:

Սկսում են կռուել: Ռուս թնդանօթները մօտ 125 անգամ արձակում են եւ ոչ մի անգամ չեն կարողանում զարնել գիւղերին, որ բռնուած էր ուժեղ թուրքերով: Պլաստունները<sup>74</sup> յետ են քաշուում: Մերոնց բոլոր ջանքերը ընդհանուր յարձակում առաջ բերելու [անցան ապարդիւն], կարելի չեղաւ համոզել ռուս հրամանատարներին: Թուրքերը շատ լաւ էին գնդակ արձակում: Մերոնցից այստեղ էլ 8 վիրաւոր է տուում, 2 ծանր, 8 պլաստուն վիրաւորուում եւ մի կողակ սպանուում:

Երեկոյեան կռիւր վերջանում է. մերոնք քաշուում են առանց յարձակում անելու: Առհասարակ այս դէպքում պլաստունները եւ արտիլերիան<sup>75</sup> շատ վատ գոյներով է երեւացել: Մերոնցից գոհ են:

Խմբի համար պէտք են տաք կօշիկներ, թէ չէ գիշերները մեր տղաները չեն կարող պահակ կանգնել:

Ամէն տեղից գալիս են կամաւոր գրուողներ: Նրանց բնակարանի համար որոշուեց դիմել քաղաքագլխին, որ մեզ համար մի յարմար բնակարան յատկացնէ:

Խմբերը շատ են նեղուում տաք կերակրի պակասութիւնից. որոշուեց ստեղծել շարժական խոհանոց\*, հինգ հատ բոլոր խմբերի համար. դրա համար դիմել նաեւ կառավարութեան եւ, եթէ կարելի է, նրանից առնել:

Խմբերի համար պէտք է հրացանների պահեստի\* մասեր: Որոշուեց դիմել կառավարութեան եւ ստանալ: Համոյին<sup>76</sup> հեռագրել, որ գայ իբր խմբի բժիշկ ամսական 200 ռ. եւ ճանապարհածախս:

74ա.- Եմքասպաները:  
75.- Հրետանին:  
76.- Օհանջանեան Համագասպին:  
77.- Էկիպիրովկա – զգեստաւորում:  
78.- Սատրուտնիկ – համագործակից:  
79.- Պաքմայեի մասին Վրացեան «Հին քղեր»-ու մէջ իբրեւ ծանօթութիւն կը գրէ. «Պաքմայեը ցարական արքունիքում, զըլ-խատրապէս քագուիու շրջանակում, կապեր ունեցող արկածախնդիր մի անձ էր»:  
80.- Սաւառնակ:  
81.- Հողաքափերը:

Ժրնեւի բժիշկների համար հեռագրել. պէտք է տղամարդիկ, առաջապահ դիրքերի համար, 3 բժիշկ, ամսական 100 ռ., ճանապարհածախս 300 ռ., 100 ռ.՝ էկիպիրովկա<sup>77</sup>:

Դեկ. 2-ի մեր եւ ռուս զօրքի անյաջող փորձից յետոյ գրաւելու Քեափանակը, թուրքերը երես են առնում:

Պետրոսը գնում է Ս. Տիգրանեանին սատրուտնիկ<sup>78</sup>. յետգրովից վերցնել 3000 ռ[ուբլի]\*:

**Դեկտ. 12 Գործադիրի հետ**

Խատիսեանը գեկուցանում է, Կովկասի շտաբը իրեն ստիպողական կարգով\* գործադիրի հետ դիմում է, թէ արդեօք կարելի չէ՞ օգտուել սպայ Պաքմայեի\* առաջարկից կազմել Կովկասում հայ կամաւորների նոր խումբ, որի գրուելը կանգնելու լինի ինքը Պաքմայեի\*, որ դիմել է այդ մասին գինուորական մինիստր Սուխօմլինովին, որը գեկուցել է ցարին, սա էլ ուղարկել է այս առաջարկութիւնները Կովկասի շտաբին: Խատիսեանին շտաբում հասկացրել են, որ սա մի լուրջ առաջարկութիւն է, քանի որ Պաքմայեի\* որոշ ազդեցութիւն ունի պալատի մէջ\*: Բարձրագոյնս հրամայուած է Պաքմայեի\* դիմումի պատասխանը տալ հեռագրով: Որոշուեց պատասխանել, որ նրա անձնաւորութիւնը մեզ ծանօթ չէ, որոշ պատասխան տալու համար պէտք է բանակցել Պաքմայեի\* հետ<sup>79</sup>:

Մոսկուայից դիմել էին, թէ արդեօք խմբերի համար մի աէրօպլան<sup>80</sup> պէ՞տք է. իրենք պատրաստ են հասցնել, եթէ որոշ գումար տրամադրելի արոււի: Որոշուեց մերօժել:

Վաճառականների կոմիսիայի պատուիրած չուստերի<sup>81</sup> մեծ մասը անպէտք է դուրս եկել, անխնամ, փոքր. շատերը չեն էլ գործածուում:

Նոր հրացանները որոշուեց բաժանել հետեւեալ կերպով.

- 1000 Պարսկաստան, 200 կարճ
- 100 Թիֆլիս
- 700 Իգտիր, 100 կարճ

- 300 Կաղզուան
- 300 Սարըղամիշ } 100 կարճ

Մոսկուա վերադարձնել Գալայճեանին. տալ III կարգի տոմսակ:

Վարչական մասի կազմակերպութեան համար գնացող մարդկանց թելադրել, որ գիւղական պաշտօնէութեան աշխատին այնպիսի մարդիկ դնել, որ մեր գործին աջակցեն:

Պարսկաստանի եւ Իգտիրի շրջանի վարչական մասի





կազմակերպման համար էլ մարդ ուղարկել, ինչպէս ուղարկուեց Բասեն:

Իգտիրի շրջանը Ս. Տիգրանեանը, որ արդէն գնացել է իր ընկերներով, իսկ Սալմաստի շրջանը՝ Սամուէլը՝ իր ընկերներով — Աշխարհբէգ Քալանթարեան, Առաքել Յարութիւնեան, Բաղդասար Ասրիսեան: Այս երկու շրջանի ծախար համարեա նոյնն է:

**Դեկ. 13**

Արէշեան եւ Մելքիսէտէքով առաջարկում են կազմել ձիաւոր զօրաբաժին\* հայերից, երկու էսկաւորոն՝ հայկական կամաւորական զնդերին աջակցելու համար\*: Խմբի համար առաջարկութիւններ են լինում Ղազարի, Բորչալուի եւ այլ շրջաններից: Մի քանի հայ սպաներ անցնում են գործի գլուխ: Խումբը մարզելու համար պէտք է գէթ 2 ամիս՝ առնելով զինուորներ ձիավարութ մարդկանցից:

Խումբը — 300ն էլ մի տեղ պիտի լինի:

Այդ գործի գլուխ է կանգնելու Շամշատինի պրիստալ<sup>82</sup> Լեւոն բէգը, որ շատ ազդեցիկ է իր շրջանում եւ նրան շատերը կը հետեւեն: Զիւաւորներին տալ 100 սուբսիդիա<sup>83</sup>:

**Քեռու կռիւը**

Կաղզուանից դեկ. 7-ին Քեռու խումբը դուրս եկաւ առանձին: Հողը կաւոտ էր եւ ցեխ. շատ դժուար էր անցնել. շինելները<sup>84</sup> ձգում էին: Հասան լեռան կատարը, ձորի դիմաց, որի միւս կողմը թշնամին է: Որոշուեց մի ձոր էլ անցնել թշնամուն մօտենալու համար: Անցնելու ժամանակ երկու կամաւոր խփուեց: Քեռին իր խումբով առջեւն էր: Թշնամին իր դիրքերում փոսեր էր փորել, ծածկել եւ ծակ էր թողել հրացանի համար: Մեր հրացանները չէին ազդում: Բերել տուինք 2 թնդանօթ, դրին յետեւը եւ սկսեցին պարպել. գնդակը պայթեց մերոնց յետեւը: Կարգադրեցինք, որ շարձակեն: (Զորը անցնելու ժամանակ կողակների յիսնեակը փախաւ): Թնդանօթի երկրորդ հարուածը ընկաւ մերոնց մէջ եւ 2 հոգի վիրաւորուեց: Թնդանօթաձիգ սպային\* Քեռին լաւ ծեծեց, ինչպէս եւ կողակների սպաներին: Թնդանօթը չէր հասնում. որոշուեց դադարեցնել թնդանօթը եւ հրացանի կռիւը շարունակել: Եւ որոշուեց գիշերային յարձակում անել: Այդ յարձակումը պիտի լինէր առաւօտ ժամը 5-ին:

Մեռածները թաղուեցին Շաքարլու գիւղում:

Յարձակումից առաջ 30.000 փամփուշտ տարուեց մերոնց դիրքերը:

Ժամը գիշերը 2-ին Համասփիււը<sup>85</sup> վիրաւորներին բերում է Նարիման. մերոնք 5 վիրաւոր են ունենում. վիրաւորներին տեղաւորում են հիւանդանոցում:

Առաւօտը, դեկ. 9-ին, ժամը 6-ին լուր տարածուեց թէ ռուս զօրքը յետ է նահանջում: Երեւաց, որ Նարիմանի զօրքը յետ է նահանջում: Սկսեցին իսկոյն հիւանդներին ու օբոզը<sup>61</sup> տեղափոխել: Մի կողմից Նարիմանից են յետ գալիս, միւս կողմից Օլթիից են զօրքեր ու օբոզ գալիս: Այդ ժամանակ վրայ է հասնում զօրաբաժնի հրամանագիրը\* եւ յետ դարձնում նահանջող զօրքերին: Իգտիրը անցել է թուրքերին: Ղարսում լսել են, թէ Օլթին անցել է թուրքերի ձեռք:

Քեռու խմբի վիճակը անորոշ է:

Սահակին հեռագրել Իգտիր.— «Տեղ պատրաստեցէք երկու հարիւր հոգու համար: Գրուած է ձեզ նամակ: Որոշուած է Իգտիրում 500 հոգիի պահեստի ուժ պատրաստել: Երկուշաբթի կը մեկնեմ»\*:

Հեռագրել Եկատերինոտար:

Շտաբում աշխատողներին[վճարել]

Գարեգնին ամսական	50 ր.	
Օհաննէս Գրիգորեանին	50 ր.	} Աբրահամ 40 ր.
Տիգրան Նաճարեանին	30 ր.	
Խալաթեանին	30 ր.	
Գրիգոր Բալաբէգ[եանին]		
Արմենակ Միրոյեան	50	} Յովսէփ
Արմէն	30	
Մշակ	25	
Ոստանիկ	25	} Սիմոն

82.- Ոստիկանապետ:  
83.- Նպաստ:  
84.- Շինել — զինուորական երկար վերարկու:  
85.- Համասփիւտեան Խորէն, սպայ:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

**Դեկ. 14**

Աւտոնոմիայի ժողով [Ազգ. Բիւրոյի]

Տէրիտորիայի հարցը ընդհանրապէս պարզուած է – վեց վիլայէթներ եւ Կիլիկիա: Պէտք է որոշել աւտոնոմիայի ձեւը:

Տարակուսանք է յայտնուում այն մասին, թէ ի՞նչ ձեւի աւտոնոմիա պէտք է պահանջել – աւտոնոմ պետութի՞ւն, աւտոնոմիա՝ Թուրքիայի սուվերէնիտէտով, թէ՞ աւտոնոմիա ռուսական սուվերէնիտէտով<sup>86</sup>:

Ռուսաստանը 1) Կարող է ամբողջ Հայաստանին տիրել, 2) Կարող է մի մասը գրաւել, 3) Կարող է բոլորովին չգրաւել – բոլոր դէպքերում էլ մեր ցանկութիւնն է աւտոնոմիա ռուսական պրոտէկտորատով<sup>87</sup>:

Օլթին թուրքերը գրաւել են, ասում են 2 պոլկ<sup>88</sup> է կոտորուել. քաղաքը այրուել է: Քեռու խումբը բաժանուել է մի քանի մասի, մօտ 50 հոգի հասել են Սարղամիշ, միւսների մասին տեղեկութիւն չկայ: Սարղամիշ թուրքերը հասել են եւ կատաղի կռիւ եղել: Օլթին առել են դեկ. 10-ին: Ասում են Սարղամիշը գրաւուած է: Բայագիտի շրջանից էլ ռուսները, ասում են, ուզում են յետ քաշուել: Բաթումը ռմբակոծուած է այս գիշեր. 25 ռումբ են գցել: Օլթիից յանկարծակի կերպով են փախել. ոչ ոք ոչինչ չի կարողացել տանել:

Կառավարութեան յանձնարարել Սոֆիա եւ Պոլքէշ վաստահէլի ընկերներ, որ տեղական ռուս դեսպանների հետ յարաբերութիւններ ունենան կամաւոր խմբեր կազմելու մասին:

Սոֆիա՝ Արզուման<sup>89</sup>:

Պատերազմի դաշտից եկած տեղեկութիւնները անյաջողութեան մասին քննութեան առնուեցին եւ որոշուեց, որ ըզզէրվի եւ նոր խմբերի վարժութեան գործը անկարելի է կենտրոնացնել սահմանազխի վայրերում եւ պէտք է պնդել, որ կառավարութիւնը տայ այդ նպատակով կազարմա<sup>67</sup> եւ յարմարութիւններ:

**Դեկ. 15**

Դեկ. 10-ին թուրքերը առել են Օլթին եւ եկել են Սարղամիշի վրայ: Ռուսները նրանց դէմ ուղարկում են 2000 կամաւորներ\* եւ ամրազէն զինուորներ\*: Քեռու խմբից հասել են 25 հոգի Սարղամիշ եւ պատմում են, որ Քեռու խումբը շրջապատուել է եւ մի հարիւրեակ անջատուել ու կռուելով հեռացել, որից այդ 25 հոգին ազատուել ու հասել են Սարղամիշ: Թուրքերը լինում են 8000 հոգի եւ յետ են մղում ռուսներին, գրաւում են

ռուսների 8 պոլկմեոտը<sup>70</sup> եւ մօտենալով Սարղամիշին շրայնելով<sup>90</sup> ռմբակոծում կայարանը: Ժողովուրդը հեռանում է քաղաքից: Դեկ. 12-ին արդէն ոստիկանութիւնը, կառավարական բոլոր հիմնարկութիւնները, պոստ, հեռագիր, եւ այլն, բոլորը հեռանում են քաղաքից:

Դեկ. 13-ին ժամը 12-ին մի սանիտարական գնացք\* է դուրս եկել Սարղամիշից եւ թուրքերը գնդակահարել են այդ գնացքը եւ մի լոկոմոտիւի ծխնելոյզը\* ջարդում:

Դեկ. 14-ին Սարղամիշի կայարանի կառավարիչը հեռագրել է որ թուրքերը, երբ Գրզլար Գալայից խումբը հեռանում էր, ձեմարանի 7-րդ դասարանի աշխակերտներից մէկը, որ ձիաւոր խմբումն է, մտնում է գոմը, որ ձին հանէ, թուրքերը փակում են դուռը, եւ տղան մնում է ներս: Թուրք զինուորները վրայ հասնելով սպանում են:

Պոստը կազմակերպել

Մի տեղացի ունենալ Ալեքսանդրապոլում, որ նամակներ ուղարկէ Թիֆլիս:

Ջուլֆայում մի մնայուն մարդ ուղարկել, որ պոստի գործը կազմակերպուի:

Ղարսից հեռագրով պահանջում են, որ այստեղի շտաբը շուտով հասնի Ղարս: Որոշուեց որ Նիկոլն ու Արարատեանը<sup>91</sup> անմիջապէս մեկնեն Ղարս եւ մանրամասն տեղեկացնեն մեզ իրերի կացութեան մասին:

Երեկոյ, Գոծաղբի հետ

Ներկայացուում է բիւզնէն նոր 3000 հոգու մորելի-զացիա անելու համար: Յանձնուեց բիւզնէն շտաբին ի քննութիւն:

Ռումանիայից եկած հնչակեանները, որ Յ. Գասպարեանի ազդեցութեան տակ գնացել էին Ղարս, բազմաստորագիր հանրագրութեամբ յայտնում են, որ իրենք մոլորուել են հնչակեաններից եւ խնդրում են նորից ընդունուել մեր խմբերի մէջ:

Կռուի դաշտից նոր հեռագիր եկաւ, որ ասում է թէ «թուրքերի յարձակումը կասեցուած է բոլոր գծերի վրայ»\*: Սարղամիշը ռուսների ձեռքին է, բայց երկաթուղու գիծը վնասուել է:

Ձիաւոր խմբի առաջարկութիւնը անցաւ եւ որոշ-

86.- Գերիշխանութիւնը:  
87.- Հովանաւորութեամբ:  
88.- Գունդ:  
89.- Խաչիկեան Տիգրանին:  
90.- Հրետանիի ռումբով:  
91.- Յաջորդաբար՝ Արարատեան Նիկոլը եւ Արարատեան Սարգիսը:





և եղ ղիմում անել կառավարութեան եւ այդ մասին կարգադրութիւն անել: Խումբը ամբողջապէս պէտք է ենթարկուի մեզ:

ժընեկի բժիշկներին<sup>92</sup> հեռագրել, որ առ այժմ սպասեն, պէտք չէ:

Պապաճանեանը գեկուցանում է Ղարսի եւ Սարըղամիշի շրջանից իր տպաւորութիւնները: Հայերը այնտեղ բարեկամ չունեն: Թէ ադմինիստրատիւ եւ թէ զինուորական մասը, ընդհանրապէս, շատ վատ են տրամադրուած դէպի հայերը: Նոյնիսկ Բէրիւմանը, որի մասին կարծում են, թէ հայասէր է, բայց սխալ է: Նա էլ ասել է, որ հայ զինուորների մէջ շատ դեգէրտորներ<sup>93</sup> կան — 2000 հայ դեգէրտոր, ինչ որ սխալ է:

Սարըղամիշը ումբակոծելուց յետոյ, դեկ. 13-ին, բազմաթիւ գաղթականներ՝ հին ու նոր՝ ղիմում են դէպի Ղարս: Պարպուել է եւ Սէլիմ մեծ գիւղը մալականերից<sup>94</sup>, եւ թուրքերից այրուել է: Տեղական մահմետականները օգնում էին թուրքերին: Չաթախ կայարանի մօտ բռնուել է մի լեզգի, որ փորձում էր քանդել երկաթուղու ճանապարհը:

Սարըղամիշի կայարանը 1-2 ժամով եղել է թուրքերի ձեռքը, բայց յետոյ ռուսները հեռացրել են: Ռուսները մաքրել են թուրքերից նաեւ Չաթախը, որ ումբակոծում էին թուրքերը:

Օլթիի մօտ ոչնչացրած են Նովոկիմսկի եւ Տեմկիսկի գումղերը\*:

Քեռիի խումբը ցրուած է, յայտնի չէ վիճակը, ասում են, որ մօտ 150 հոգի կորուստ ունի:

Ղարսի շրջանի հայ գիւղացիները անպաշտպան են, թէ հայ եւ թէ ռուս գիւղերի ներկայացուցիչները գէնք են պահանջել նահանգապետից, բայց մերժում են ստացել:

Այդ շրջանի թուրք ու քիւրտ տարրը խիստ կասկածելի դիրք են բռնել: ադմինիստրացիան էլ իր վերաբերմունքով կարծես խրախուսում է նրանց:

Բէրիւմանը մեծ գովասանքով է խօսել հայ խմբերի մասին:

Ռուսների կողմից կայ ընդամէնը 75.000 զօրք Սարըղամիշի, Մժնկերտի եւ այլն շրջանում:

**Դեկտ. 16**

Հեռագրել Բագու, որ այլեւս կամաւորներ չուղարկեն:

Հեռագրել Բողազարիա եւ Ռումանիա, թէ յայտնեցէք բոլոր կուսակցութիւններին, թաղական խորհուրդ եւ այլ պաշտօնական մարմիններին, որ կամաւոր, կարող են ուղարկել միայն մինչեւ 45 տարեկան, բժշկական խիստ քննութիւնից յետոյ, վկայականներով եւ անցագրերով: Այս պայմաններին չհամապատասխանողներին չենք ընդունում: Մարդ կ'ուղարկէք միայն մեր պահանջներով:

Ղով: Ապահովութեան հարցը\* դնել գաղթականներին օգնող մարմինն — խօսել Ս. Յարութիւնեանի հետ:

**Տրդատի գեկուցումը:**

Այսօր Անդրանիկի խմբից եկաւ Տրդատը, բերեց նամակներ եւ տեղեկութիւններ: Խումբը գտնուում է այժմ Սարալի մօտերը:

Ստեփան Չաչեանը վռնտուած է Անդրանիկի խմբից: Խմբի եւ խմբապետների մէջ յարաբերութիւնները լաւ չեն: Խմբապետների մէջ անհամաձայնութիւններ կան: Պարոյրը<sup>95</sup> փաշայութիւն է ծախում: Նրա եւ Բժշկի<sup>96</sup> մէջ էլ անհամաձայնութիւններ են պատահել: Պարոյրը շատ է ջղայնանում, նոյնիսկ մտրակ է բարձրացրել Բժշկի վրայ եւ ծեծելու փորձ արել: Պարոյրի եւ կապիտան Յովսէփեանի մէջ էլ պաղովիւն [է] առաջ եկել: Սմբատի<sup>97</sup> խումբը թալաններով է զբաղւում:

Կամաւորների խմբին ուղարկուած է 120 Գէորգեան խաչ:

Բժշկի դերը խմբում շատ բարձր է: Ասորայից մինչեւ Ղոթուր ոտով է եկել, իր ձին հիւանդներին է տուել:

Բուրուշ-Խուրանի կուռում երկու կողակ եւ մի զինուոր վիրաւորուեց: Ռուս բժիշկներին ղիմեցին եւ բուրդն էլ քարի ետեւը մտած՝ հրաժարուում են գնալ վէրքը կապել: Մեր բժիշկը իր ձիով գնում է, գնդակների տարափի տակ վէրքը կապում, վիրաւորներին իր ձիու վրայ դնում ու բերում:

Բժիշկը չի կարող վերադառնալ Թիֆլիս... մինչեւ որ ինքը չփոխարինուի կարող մէկով: օր[ինակ] Ռոստոմով: Առաջարկում է Անդրանիկի խումբը կրկնապատկել: Կէսի հրամանատարութիւնը յանձնել անուանապէս Անդրանիկին, իրապէս Սեպուհին, իսկ միւս կէսը Վարդանին<sup>98</sup>: Անդրանիկը իբրեւ ղեկավարող հրամանատար թոյլ է, բայց իբրեւ հայդուկային կռուող — սքանչելի:

Չէրնոզուբովը ուզում է, որ գարնանը հայ խմբերը գնան ռուս բանակի աջ եւ ձախ թեւերով: Խոստանում է տալ պուլէմետ<sup>70</sup> եւ այլն:

92.- Ժընեկն երիտասարդ հայ բժիշկներ, որոնք պիտի գային ծառայելու կամաւորական շարքերուն մէջ:  
93.- Դասալիքներ:  
94.- Հայաստան հաստատուած ռուս աղանդատորներ:  
95.- Անդրանիկի կուսակցական ծածկամունն է:  
96.- Բժիշկ Յակոբ Չարիեւ:  
97.- Բորոյեան Սմբատ (Մախլուսո):  
98.- Ծանօթ հայդուկապետեր եւ կամաւորական գումղերու հրամանատարներ՝ Ներսէսեան Արշակ (Սեպուհ) եւ Խանասարի Վարդան, բուն անունով Մեհրաբեան Սարգիս:





### ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

#### Դեկտ. 17

Ուսանողների մէջ ընդհարում է պատահել Տրդատի այն խօսքի վրայ, որ ուսանողութիւնը շատ ստոր է դուրս եկել Պարսկաստանում: ուսանող Ադամեանը ապտակել է մի ուրիշի: Որոշուեց, որ Կարճիկ[եան]ը եւ Շահխաթունեանը այդ հարցը կարգադրեն:

Իգտիր հեռագրել, կարելի է ուղարկել սպաների դպրոցի համար 30 հոգի:

«Ստիպողական. պահեստի զօրքի համար, առ հաշի վերցնել 3000 ր.»\*:

#### Քեռիի մասին

Դեկ. 7-ին խումբը Քոչկանցից գնաց Վերնթափա եւ քիչ մնալով պատրաստուեց գնալ առաջ. անցաւ Գան-ձաձորը. ամբողջ ճանապարհին թշնամին երեւում է դիմացի սարերի վրայ: Խմբի հետ կար Թեմչիմսկի գունդի\* 16 եւ 17 վաշտերը 2 պուլէմեոտով: Սանիտարները մնացին գիւղում, իսկ խումբը գնաց առաջ, դիրքերը, կռուի: Կռուր սկսուեց մինչեւ երեկոյ, ժամը 2-ին. ունեցան 2 մեռած, 5 վիրաւոր: Երեկոյեան եկան Վերնթափա: Հետեւեալ օրը մառախուղ էր: Վիրաւորներին վերադարձրեցին Շաքարլու. դեկ. 9-ին, առ[աւօտեան] ժամը 11-ին լուր բերին, որ պաշարուած ենք: Պատրաստուեցինք եւ յետ նահանջեցինք, ըստ հրահանգի, դէպի Քոչկանց, որ միակ ճանապարհն էր: Երեք կողմից պաշարուած էինք: Թշնամին հազար քայլի վրայ էր եւ կրակում էր: Պուլէմեոտների տեղ բերուած էր 2 թնդանօթ, որոնք շատ դժուարութեամբ տարանք:

Շաւարշի խումբը, որ ընդվէտկայի<sup>99</sup> էր գնացել, 30 հոգով գերի ընկաւ: 4 ձիաւոր էլ գերի ընկաւ թնդանօթը քաշելու համար: Քոչկանցից Միշան<sup>100</sup> 2 ձիաւորի հրամայեց գնալ Շաքարլու, որ տեղեկութիւն բերէ. չնայած ձիաւորների առարկութեան, որ Շաքարլուն պաշարուած է, Միշան պնդեց եւ տղաները գնացին ու չվերադարձան: Խումբը դժուարութեամբ նահանջում է: Խումբը հետապնդում էր: Նահանջը լինում էր առանց կռուի, թշնամին էլ չէր [յ]արձակւում: 9-ին երեկոյեան հասնում են մի գիւղ. կէս ժամում ձիերին կերակրում են եւ շարունակում ճանապարհը: Վալատը<sup>101</sup> թուրք մոլլա էր, որը կէս գիշերին ճանապարհը շեղեցրեց եւ մտքեց ձիւների մէջ: Մի 1.5 ժամ սպասելուց յետոյ ճանապարհը գտան եւ շարունակեցին: Լուսադէմին ենթադրում էին, որ ռուսաց բանակի մօտ են: Հարիւրապետ Մկրտիչը եւ Զանլաթը գնացին 4 կողակով առաջ, որ ռուս զօրքին յայտնեն իրենց գալը: Մօտենում են Նարիմանին (խմբի դանդաղ շարժուելու պատճառը, երկու թնդանօթներն էին): Մկրտիչը եւ Զանլաթը բերում են 15 թուրք գիւղացիներ, որոնք ասում են,

թէ սխալ էք գնում եւ ճանապարհ ցոյց տալիս: Խումբը հետեւում է նրանց, գնում են մի տեղ, եւ ահա հրացանաձգութիւն սկսում: Քեռին հրամայում է բլրակի վրայ դիրք բռնել, մի մասը գնում են կողքի բարձր սարը եւ դիրք գրաւում:

Տեղեկութիւն ստացուեց, որ Կովկասի շտաբում պանիկա է տիրում: Բէրիմանի կորպուսը մէջօկի<sup>101ա</sup> մէջ է ընկել, ռուսները յետ են քաշուում, այժմ կռիւ կայ Արտասանի մօտ, Սարրղամիչը անյոյս է: Ռուսները որոշել են Ղարսը թողուլ, Չէրնոզուբովից ոչ մի տեղեկութիւն. Միշայէվսկին Ալեքսանդրապոլում օպուլէնիա<sup>102</sup> է կազմում: Թուրքերը Արտասանը գրաւելուց յետոյ անցնելու են Ախալքալաք եւ Ախալցխա եւ 4-5 օրից յետոյ կը գան Թիֆլիս: Որոշուած է Թիֆլիսը մաքրել: Շտաբի մէջ առաջարկում են մեր միջոցները կենտրոնացնել Ալեքսանդրապոլ, զէնք ու սպայ տալիս է: Տաճիկ 2 կորպուս Արտասանի շրջանից շարժում է դէպի Թիֆլիս:

Հեռագրել Ռոստով, Եկատերինոտար, Արմաւիր Ատլէր, Գուրգուտի, Վլադիկաւկազ, Սիմֆերոպոլ անմիջապէս պատրաստ կամաւորներին ուղարկեն:

Ամբողջ Կովկասում հիմա 13000 ազատ հրացան կայ: Եթէ Բէրիմանը ջարդուի եւ Արտասանի մօտ 12-15000 ռուս զօրքը պարտուի, մէկ-մէկուկէս շաբաթից Թուրքերը Թիֆլիսում կը լինեն!! ասել է գեներալ Վէսէլովզորովը. Արտախանից մինչեւ Թիֆլիս ոչ մէկ ռուս զինուոր\*:

#### «Պատմական նիստ» [Ազգ. բիւրօյի]

Երեկոյեան ժամը 5.5-ին: Ներկայ են Մեսրոպ եպ., Խատիսեան, Ս. Յարութիւնեան, Ա. Սահակեան, Յ. Թումանեան, Յ. Խունտուց, Յ. Ամիրխանեան, Ն. Աբէլեան, Վարդան, Յ. Տէր-Դաւթեան, Ա. Շահխաթունեան, Ա. Գիւլխանդանեան, Խ. Կարճիկեան, Յ. Քոչարեան, Ար. Ղազարեան, Գ. Ղազարեան, Կոստիա, Ս. Վրացեան:

Խատիսեանը գեկուցանում է իրերի վիճակը եւ հաղորդում է դէժարնի<sup>103</sup> գեներալ Վէսէլովզորովի ասածը: 2 կորպուս թուրքեր Արտասանի մօտ են. նրանց դէմ կռուում են 12-15000 ռուս զօրքեր: Մի կորպուս զօրք կայ Բէրիմանի դէմ, անորոշ քանակութեամբ թուրքեր աշխատում են կտրել Սարրղամիչ-Ղարս գիծը, որով Բէրիմանի բանակը վտանգի մէջ է: Հրաման տրուած է, որ Բէրիմանը ինչ միջոցով էլ լինի հասնի Կարս\*:

99.- Հետախուզութեան:  
100.- Արզումանեան Միշա, Միքայէլ:  
101.- Առաջնորդ, ուղեցոյց:  
101ա.- Պանիկա – խուճապ: Մէջօկ – պարկ, հոս՝ ծուղակ, շրջապատում:  
102.- Ռոստրէն – աշխարհագրօք:  
103.- Հերթապահ:





Եթէ Արտահանի մօտ ուղևորները պարտուին եւ Բէրիմանը չկարողանայ ճեղքել-անցնել, թուրքերը 4-5 օրից Թիֆլիսում կը լինեն:

Միշտ յայտնի Ալեքսանդրապոլում է եւ օպալչենիա է կազմում: Գլխաւոր հրամանատարութիւնը այժմ Ալեքսանդրապոլումն է, առաջարկուած է որ մեր ուժերը տեղափոխենք Ալեքսանդրապոլ, ուր մեզ կը տան հրացաններ, սպաներ, ինստրուկտորներ: Որոշուած է նաեւ եթէ յանկարծական բարելաւում չլինի, Թիֆլիսի պաշտօնական հիմնարկութիւնները պարպել — էվակուացիա անել:

Կացութիւնը շատ լուրջ է: Եթէ թուրքերը գան, հայ ժողովուրդը ոտքի տակ կ'երթայ:

Ռուսները աշխատում են ոյժերը կենտրոնացնել Ալեքսանդրապոլ օգնելու համար Բէրիմանին դուրս պրծնելու: Որոշուած է առաջին հնարաւորութեամբ ուղարկել մեր կամաւորներին Ալեքսանդրապոլ: Ուղարկել նաեւ զինուորական հատուկներն ունեցող մարդիկ, ինչպէս եւ Ազգ. բիւրոյի ներկայացուցիչներ:

Հէնց այս գիշեր Ալեքսանդրապոլ են մեկնելու շտաբի կողմից մէկը, Վարդանը իբրեւ ղեկավար կամաւոր խմբի եւ Յ. Սպենդիարեանը Ազգ. բիւրոյի կողմից:

Խօսք է լինում, թէ ի՞նչ անել, եթէ ժողովուրդը սկսի փախչել դէպի հիւսիս: Որոշուած է չնպաստել արտագաղթին, բայց փախուստի հոսանքը պէտք է կանոնաւորել:

Առաջարկուած է ստեղծել առանձին մի նեղ մարմին՝ լայն լիազօրութիւններով, որ մոմենտին յարմար կերպով անկախօրէն վարէ գործը այս բացառիկ պայմաններում: Այդ պարտականութիւնը թողնուած է կարգադրել Մարմինին:

Մտքերի փոխանակութիւն է լինում ժողովրդի փախըտեան դէպքում ժողովրդին օգնութիւն հասցնելու եւ բաւարար չափով վազոճներ ունենալու մասին: Առաջարկուած է, որ Խատիսեանը այդ մասին կոնֆիդէնցիալ<sup>104</sup> կերպով խօսի կառավարութեան հետ:

Այն ժամանակ, երբ այս արտակարգ դէպքերն են տեղի ունենում, Գանձակում դատ է կատարուած Դաշնակցութեան գործով մեղադրուողները վրայ:

Ժողովի վերջում Խատիսեանը կարգում է իր ստացած մի շարք նամակները Բարատովից, Խէտաուբովից, բժ. Վնուկովից եւ այլն, որ մեծ համակրանքով են խօսում մեր կամաւոր խմբերի մասին:

Հեռագրել Ալեքսանդրապոլ, որ 1000 հոգի գալիս են, տեղ պատրաստէք:

Աբրահամ<sup>46</sup> Վարդանի հետ գնում է Ալեքսանդրապոլ:

Դեկ. 18

Ղարս հեռագրել Քեռիին. «Վարդանը կամաւորների հետ վաղը Ալեքսանդրապոլում կը լինի: Չեր տեսակցութիւնը անհրաժեշտ է. եթէ հնարաւոր է, մեկնէք Ալեքսանդրապոլ»\*:

Դեկ. 19

Ալեքսանդրապոլ ուղարկուեց 500 հոգինոց մի խումբ, որ Վարդանի ղեկավարութեամբ պիտի գործէ: Խմբի նպատակն է լինել ու գործակցել բանակին Ալեքսանդրապոլ—Ախալքալաք ռայոնում:

Սկսուել է քաղաքում պանիկա. փախչող փախչողի վրայ է. կայարանը խուճուած է բազմութեամբ:

Դեկ. 20

Պահանջել Ազգ. բիւրոյի Գործադիր մարմնից, որ այս երեկոյ ժողով գումարուի:

Կառավարութեան տալիք ականսը<sup>105</sup> մեր ձեռքը առնել:

Խատիսեանը Վարդանին յայտնել է, որ ինքը հրահանգ\* ստացել է քաղաքային պաշտօնեաներին փող տայ եւ նրանց ընտանիքները հեռացնէ: Հեռացում են նաեւ վարժարաններն ու պաշտօնական հիմնարկութիւնները: Վրաց ազնուականները ժողով են արել երէկ եւ որոշել են դիմել ու խնդրել փոխարքային, որ Թիֆլիսը յանձնուի թշնամուն առանց կռուի: Ազնուականութեան պարագլուխ Աբխալիան նոյնիսկ յայտնել է, որ ինքը կը հրաժարուի իր պարագլխութիւնից եւ թուրքերին պիտի դիմէ աղ ու հացով:

Ս. Յարութիւնեանը կնոջ հետ հեռացել է Բագու ու փախել է նաեւ Ազգ. բիւրոյի գանձապահ Քալանթարեանը:

Երեկոյեան առաջնորդարանում ժողով է գումարուում Ազգային բիւրոյի՝ խօսելու այս ծանր կացութեան մասին:

Երեկոյեան գումարուում է [ժողով] զանազան կուսակցութիւնների ներկայացուցիչներից՝ խորհրդակցելու համար ստեղծուած դրութեան մասին:

Շրջաբերական նամակներով սուրհանդակների ձեռքով ուղարկել տեղեկութիւն ներկայ վիճակի մասին բոլոր խմբապետներին:

Բոլոր տեղերը հեռագրել, որ այլեւս մարդ չուղարկեն:

Իգտիր գրել, որ բերդանները դնեն Կ. Կ.ի տրամադրութեան տակ եւ փոխադրեն Երեւան:

104.- Խորհրդապահական:  
105.- Կանխավճար գումարը:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

**Ազգ. բիւրոյի ժողով**

[Մեարոպ] եպ. յայտնում է, որ երէկ Ս. Յարութիւն-եանը երեկ. ժամը 4-ին թէյէֆոնով յայտնեց իրեն, որ ինքը գնում է Բագու գործով, որ 2 օր կը մնայ, եթէ դրու-թիւնը կը լաւանայ, ինքը կը վերադառնայ. եթէ վատա-նայ, ինքը կ'երթայ Վլատիկակազ եւ այնտեղով կը գայ:

Հեռացել է նաեւ Յ. Քոչարեանը՝ առանց իր գործերը յանձնելու, կամ մէկին ասելու:

Վրացիները ասում են «ձեր պրէզիտէնտը փախաւ» եւ հրճուում են:

Բոլորը վրդովում են յայտնում, որ Ս. Յարութիւն-եանը այսպիսի մի փափուկ բողոքի թողել հեռացել է:

Ս. Յարութիւնեանը ստորագրել է 1000 ը., եւ էն էլ չի վճարել:

Բոլորը քննադատում են հեռացողներին, բայց իրենք էլ նրանցից ոչնչով աւելի չեն. «Իրենց էլ ամէն մէկի գըր-պանը տոմսակը պատրաստ է», ինչպէս նկատեց ժողո-վականներից մէկը:

**Դեկ. 21**

Առաջնորդարանում ժողով. եպիսկոպոսը տեղեկաց-նում է, որ Կոմսուհին իրեն հաղորդել է, որ Բարսառովը ճեղքել է թրքական բանակը\* եւ այդ նկատուում է զգալի բարելաւում: Մտածում են քաղաքը դրօշակներով զար-դարել:

Ալաշկերտը պարպում են ուսաններ:

Օլթիի, Սարըղամիչի, Բասենի, Ալաշկերտի հայերը շտապով գաղթում են՝ թողնելով ետին տուն ու ստաց-լածք:

Բաթումի շրջանում ուսու կառավարութիւնը բաժա-նել է 17,000 գէնք. 12,000 հրացան աջառացիներին եւ 5000 հրացան՝ լազերին: Այդ բոլոր գէնքերը գործած-ւեցին ուսու գործի դէմ:

**Դեկ. 22**

**Լուսեցեանի գեկուցում**

Սարըղամիչում մօտ 3000 գերիներ յանձնուում են հայ կամաւորներին. երբ մերոնք առարկում են, թէ հաց չունին, շտաբից պատասխանում են, թէ՝ «տարէք, կո-տորեցէք». մերոնք գերիներին աշխատեցնում էին գե-րեզման փորելու վրայ:

Թուրքերը շատ են գերի ընկնում: Թուրք զինուոր-ները ասում են, որ ուրախութեամբ կը գան գերի կ'ընկ-նեն, եթէ իրենց չկոտորեն: Սարըղամիչում գերի ընկած

հայ ասկերները պատմում էին, թէ իրենք 3 օր հաց չեն կերել:

Թուրքերը հնարաւորութիւն չունին իրենց վիրաւոր-ներին հաւաքելու:

Պլաստունները<sup>106</sup> շատ հրաշալի են կուռում, բայց ուսու գործը չի կուռում. թալանով է զբաղւում: Թալա-նով են զբաղւում եւ ձիաւոր կողակները:

Ղարսի եւ Սարըղամիչի մէջ շօսէի եւ երկաթուղու հաղորդակցութիւն չկայ. յարաբերութիւն պահպան-ւում է Ղարաղուրութի կողմով. մեր պահեստը պահե-լու համար 15 ձիաւոր է ուղարկուել:

Երբ թուրքերը շրջապատում են Նարիմանի մօտ ուսու գործերին եւ մերոնց, հրաման է տրւում յետ նա-հանջելու: Մերոնք աշխատում են կուռել, բայց ուսու գործը նահանջում է: Մեր խմբապետներին հրաման է տրւում – «ազատուեցէք ո՛վ ինչպէս կարող է»: Կուռով սկսում են նահանջել եւ խմբերով ցրւում են. մի 100 հո-գի հասնում է Սարըղամիչ՝ Ղարաղուրութի եւ ուրիշ ճանապարհներով: Ընդհանուր խուճապի միջոցին Քե-ռին մի փոքրիկ խմբով հասնում է Ղարս: Մինչեւ վեր-ջերս զանազան տեղերից հասնում են կամաւորներ. են-թաղւում է, որ մօտ 100 հոգի կորել է: Ղարս գալով Քեռին յայտարարում է խումբը լուծուած եւ նոր ըն-դունելութիւն է անում. տղաների մեծ մասը նորից գրւում են:

Ռուբէն Իվանովիչը<sup>107</sup> նկարագրելով Թիֆլիսում սկսուած խուճապը՝ առաջարկում է մեր կողմից դիմել քաղաքագլխին եւ առաջարկ անել կազմակերպել Թիֆ-լիսում ինքնապաշտպանութիւն թէ թուրք բանակի եւ թէ թաթարական հորդանների էկսցէսները<sup>108</sup> դէմ: Ա-ռաջարկում է արգելել քաղաքից փախուստը. թոյլ տալ, որ հեռանան ծերերը, կանայք ու երեխաները, իսկ մնա-ցածներից կազմակերպել միլիցիա եւ բռնել դէպի Թիֆ-լիս եկող ճանապարհները, ամրացնել եւ արգելել թուր-քերի մուտքը:

Անցեալ օրուայ միջկուսակցական ժողովում սոց.-դեմ., սոց.-յեղ. եւ այլ կուսակցութեանց ներկայացու-ցիչները, մեծ մասամբ վրացի, իրենց կուսակցութիւն-ների կողմից առաջարկում էին քաղաքը թուրքերին յանձնել առանց կուռի, իսկ քաղաքի ներքին ինքնա-պաշտպանութեան համար կազմել միլիցիա, որը, սա-կայն, չպիտի կուռի թուրք գործի դէմ: Ասում էին, որ էնվեր փաշան Եւրոպա տեսած մարդ է, գաղափար ու-նի կուսակցութիւնների մասին, նրան կը ներկայանան կուսակցութեանց ներկայացուցիչները եւ կը խնդրեն քաղաքի պաշտպանութիւնը իրենց յանձնել:

Նոյն եզրակացութեան են եկել եւ ժողովում իրարմիջի ժողովում:

106.- Ենթասպաները:  
107.- Յովհ. Քաջագունիսի:  
108.- Անկարգութիւններու, չարագործութիւններու:





Ընդհանուր տրամադրությունը այն է, որ անհրաժեշտ է [կազմակերպել] գալառի հայ ժողովրդի պաշտպանությունը հենց իր հարեւաններից, որը կարող է գլուխ բարձրացնել, եթէ թուրքերը գրաւեն Թիֆլիսը:

Շրջաբերական ուղարկել բոլոր մարմիններին, որ առանց այստեղի պահանջի մարդ չողարկեն եւ հագուստ չտան այնտեղ – փողը ուղարկել այստեղ:

Հնչակեան խմբերը թողած եւ մեզ դիմող երկու տղաներին առ այժմ մերժել, որովհետեւ ընդունելություն չկայ:

Գրել Վարդանին, որ Խաչիկեանը քաղաքագլխից 4500 ռ. է առել ու հեռացել. թո՛ղ վերադառնայ եւ հաշիւ տայ:

Կնիք պատրաստել  
«Տրդ հայկական զորագունդ»\*:

Կ. Կ. Ի եւ Ա[րեւելեան] Բ[իւրոյ]ի Խառն նիստ

Ս. Դ. կուսակցության նախաձեռնությունները երէկ գումարուել է միջկուսակցական ժողով, Ս. Դ., Ս. Բ., Ս. Տ., հնչ. եւ դաշ. ներկայացուցիչներից: Ս. Դ. ներկայացուցիչները առաջարկել են կազմել միջկուսակցական մարմին, որը պիտի ղեկավարէ քաղաքին, երբ կառավարությունը քաշուի եւ քաղաքը յանձնելու լինեն: Ս. Դ. ներկայացուցիչների կարծիքն է դիմադրություն ցոյց չտալ թուրք զորքին, պարտիզանական կռիւ չմղել եւ լոյս ղերք բռնել թուրքերի հանդէպ:

Լինում է մտքերի փոխանակություն. ոմանք այն կարծիքն են յայտնում, որ ժամանակը չէ այդ տեսակ մարմնի մասին մտածելու, քանի որ անմիջական վտանգ չկայ, ոչ էլ ըստ հունիկեան կարիք կայ, որովհետեւ այդ մարմնի կատարելիք ֆունկցիաների համար կայ քաղաքային դոմա կամ այլ չէզոք մարմիններ: Ուրիշներն այն կարծիքն են, որ թէ ժամանակն է եւ թէ կարեւոր, բայց անհրաժեշտ է գործակցություն իրական ոյժ ունեցող կուսակցություններից եւ ոչ անուանական:

Մերոնց տրամադրությունն է Թիֆլիսը առանց կռուի չտալ:

Գործադիր Մարմին [Ազգային բիւրոյի]

Հնչակեանների կողմից Սիւնիք<sup>109</sup> դիմում է գրաւոր Ազգ. բիւրոյին եւ յայտնելով, որ հնչ. մարտական ոյժերը արդէն պատրաստ են՝ պահանջում են պարէնաւորման համար դրամ: Որոշուեց պատասխանել, որ մենք կուսակցական խմբեր չունենք եւ չենք կարող այդպիսի խմբերի դրամ տալ:

Պարսկաստան ուղարկելիք 110 եւ Ալեքսանդրապոլ

ուղարկելիք 500 հոգու հագուստները համար գծուեց բիւրոյէ 39000 ռուբլի, մարդագլուխ՝ մօտ 60 ռուբլի է նստում:

Կառավարությունը դնել 200 ձիու պահանջ:  
Ժամհարեան, Ելիզովիսիսկայա փողոց, 31\*:

Առաջարկություն է եկել Թաւրիզից, որ մեր ընկերվից 500 հոգի կենտրոնացնել Թաւրիզում:

Թիֆլիսում խուզարկություն է եղել թուրքերի մէջ եւ նրանց գերեզմանատանը գէնքի պահեստ են գտել: Վերջերս շուտ-շուտ մեռել էին տանում գերեզմանատուն. կասկածում են, գնում խուզարկում են եւ գտնում գէնքեր:

Ղարաբաղի եւ այլ շրջանի թուրքերի մէջ գրգռում է նկատում:

Գերագոյն հրամանատար Նիկոլայ Նիկոլայեւիչի\* հրամանով սկսուել է էվակուացիա<sup>110</sup>:

Հեռագիրը աւետեց Արտահանի գրաւումը ռուսների կողմից եւ Բարտուզի բարձունքների գրաւումը:

Թիֆլիսում երեւում են շատ նոր թուրքեր. թուրքերը արագ կերպով գինում են:

Դեկ. 23

Ալեքսանդրապոլում մեր տղաներին մօսին չեն տալիս եւ առաջարկում են բերդան կամ մանլիխէր<sup>111</sup>: Այդ մասին Թիֆլիսում դիմումներ եղաւ եւ նոյնպէս մերժուեց. ասում են «չկայ». ունեցածները բաժանել են ուրիշ զօրամասերին:

Որոշուեց, որ կապիտան Պօղոս Տէր Սարգսեանին յանձնուի ընկերվի կազմակերպումը: Աշխատել ընկերվի կենտրոնացնել Ալեքսանդրապոլում՝ ստանալով կառավարությունից ինստրուկտորներ:

Աշխատել բժ. Մելիք-Քեարամեանի բժշկական խումբը ուղարկել Դրոյի խմբի մօտ, իսկ բժ. Մէժլումեանի խումբը ուղարկել Անդրանիկի մօտ: Այս երկու խմբերն էլ, ինչպէս եւ բժ. Մանտինեանի, կազմուած են Բագուի Հասարակական Ակումբից:

Ռուս շտաբում եղած գեկուցումից երեւացել է, որ գինուորական բարձր շրջաններում հիացումով են խօսում Քեռու վերջին գործի մասին. այդ առթիւ յարմար համարուեց մի շնորհաւորական հեռագիր ուղղել Քեռուն:

Թիֆլիս բերուած թուրք գերիները խեղդել են իրենց հետ վագոններում եղած հայ գերիներից 5 գինուոր: Անմիջապէս դիմուեց Միշլայէվսկուն եւ խոստացուեց կարգադրել:

Ալեքսանդրապոլի մեր խմբին հրաժարում էին մօ-

109.- Աւետեան Բագրատ:  
110.- Կազմակերպում պարպում, հեռացում:  
111.- Մոսին, բերդան, մանլիխէր – հրացանի տեսակներ:





ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

սին տալ — հիմա Միշլայէվսկին խոստացել է կարգադրել, որ տան:

Դեկ. 24

Մելիք-Թանգեանը<sup>112</sup> [Մեսրոպ] եպիսկոպոսին յայտնել է, Միշլայէվսկին էլ հասկացրել է, որ որոշուած է Ատրպատականի ռուս բանակը յետ քաշել: Սալմաստի եւ Ատրպատականի հայ ազգաբնակիչներին մեծ վրտանդ է սպառնում: Մելիք-Թանգեանը խնդրում է միջնորդել, որ զօրքերը յետ չքաշեն:

Որոշում է դիմել շտաբին, որ եթէ իսկապէս ռուս զօրքի էվակուացիա լինի, առաջուց մեզ իմացնեն, որ մենք հնարաւորութիւն ունենանք Սալմաստի եւ միւս շրջանների հայ ազգաբնակիչներին հեռացնելու:

Հեռագրել Վարդանին, որ մօսիները պիտի տան: Ընդհանուր շրջաբերական հանել, որ առանց թղթի մարդ չուղարկեն եւայն:

Քեռու մասին

Ուսուլ Խէչոյի<sup>113</sup> պատմածը

Դեկ. 9-ին կռիւ եղաւ Գանձասարի մօտ այդ գիւղը քանդելու համար. ռուսն ու մերոնք մի շղթայով էին կուռում մինչեւ գիշեր — մերոնք տուին 2 սպանուած, 5 վիրաւոր: Կռիւը շատ տաք է լինում. երեկոյեան մերոնք գալիս են Վերընթափա: Միւս օր մառախուղ էր: Մեր ձիաւորները ըզզվէտկայի<sup>99</sup> դուրս են գալիս դէպի Գանձասար, որտեղից թշնամի է երեւում: Զիւն, մառախուղ: Թշնամին եւ մեր ըզզվէտկան սկսում են կրակել: Գանձասարը լեցուած է եղել թուրք զօրքերով:

Միւս օրը, դեկ. 11-ին Ուսուլ Խէչոն տանում է առաջին դիրքերում տեղաւորում է Շաւարշի խմբակը, 22 հոգի: Թուրքերը դեռ գիշերով, հազարաւոր մարդով դիրքեր էին գրաւել եւ սաստիկ տրաքացնում: Ռուս առաջապահները յետ են քաշուում: Կարգադրւում է յետ քաշուել Կոճկանց: Սկսում է նահանջը: Մի մասը տղաներից կարծում են, թէ խումբը Վերընթափումն է: Գնում են գիւղ: Գիւղացիները գէնք են հանում եւ յարձակւում մերոնց ու ռուսների վրայ եւ շատերին սպանում: Խումբը հաւաքւում է Կոճկանց եւ դիրքեր բռնում բայց տեսնելով ընդհանուր նահանջը՝ յետ են քաշուում: Այդ գիւղում 2 թնդանօթ կար, որ պէտք էր տանել: չէին ուզում թողնել — «Թասիպի խնդիր է»:

Եկան մի խորը ձոր, ուր անկարելի էր հանել թնդանօթը, բայց ահագին դժուարութիւններով կարելի եղաւ հանել սարը: Թուրք մոլլան վալադ էր, ճանապարհը կորցրին, վերջը գտան եւ լուսաբացին, սոսկալի դժուարութեամբ հասան Նարիման: Մինչ այդ Վերընթափում

մի քանի հոգի էին կորցրել: Ճանլաթը 10 հոգով գնում է տեսնելու, թէ Նարիման գիւղը ո՞ւմ ձեռքումն է: Ճանլաթը վերադառնում է, առանց ստոյգ լուր բերելու: Լուսաբացին մի ահագին կոլոնա երեւաց. քննելուց պարզուեց, որ թուրքերն են: Մերոնք հարցնում էին «ովքե՞ր էք»: Կանգնի՞ր\* պատասխանում էին թուրքերը:

Քեռին հրամայում է դիրքեր բռնել. մի մասը դիրքեր են բռնում, միւսները՝ (ռուսները) սկսեցին փախչել դէպի Օլթի տանող կիրճը: Այդ փախուստը շատ վատ ազդեց. թուրքերը սկսեցին զալալով<sup>114</sup> կրակել դէպի փախչող ռուսները: Մերոնք բարձր դիրքերից կուռում էին. եթէ մերոնք չլինէին, բոլոր ռուսներն էլ կը կոտորւէին:

Այդ խուճապի ժամանակ մերոնցից Քեռի, Միշա, Ճանլաթ, Արամայիս, Ուսուլ Խէչօ — մօտ 15 հոգի էլ, տեսնելով, որ անկարելի է մի բան անել, նոյնպէս անցան կիրճը դէպի Օլթի: Միւս տղաները ցրուեցին զանազան կողմեր: Օլթիի մօտ էին թուրքերը արդէն ջարդել ռուսներին, Օլթին այրւում էր: Օլթիի մօտ էին մերոնք դեկ. 12-ին, ժամը 10-ին առաւօտ:

Թնդանօթները մնացին կիրճի մօտ: Օլթիի մօտ զօրք, կողակ, օրոզ\* նահանջում էր: Մերոնք էլ — 15 հոգին — դրանց հետ նահանջեցին: Ամբողջ խումբը ցրուեց եւ յետոյ հատ-հատ ու փոքրիկ խմբակներով հաւաքուեցին: Շաւարշն էլ, որի մասին ասում էին, թէ գերի է ընկել, ազատուել ու հասել է Սարրղամիշ: Խումբի ընդհանուր կորուստը կը լինի 80-100 հոգի:

Արմաւիր եւ Ատլէր<sup>115</sup> գրել, որ սպասեն, չուղարկեն [կամաւորներ]. մօտ օրերս կը պարզուի վիճակը\*:

Դեկ. 25

Սարրղամիշի մեր պահեստը ամբողջապէս թալանւել է. թալանել են տեղացիները, ռուս զինուորները, նաեւ մեր կամաւորները: Մեր օպոզի կամաւորներին տղաները խուզարկել են եւ մի քանիսի մօտից դուրս են եկել գուլպաներ, ֆուֆայկաներ<sup>116</sup>, ֆայկաներ, բլուզներ եւ այլն. մէկի մօտից դուրս է եկել 70 գուլպայ, միւսի վրայից հանել են 7 բլուզ եւ 7 վարտիք, որ իրար վրայ հագել էր:

Սարրղամիշի երկաթուղային կամուրջը պաշտպանելու ժամանակ մեր 3 տղաները աչքի են ընկել, մէկը, մանաւանդ, հերոսութիւն է ցոյց տուել: Թուրքերը աչ-

112.- Մելիք-Թանգեան եպիսկոպոսը ասաջնորդն էր Ատրպատականի թեմին:  
113.- Կարապետեան Խաչատուր:  
114.- Համազարկով:  
115.- Արմաւիրը՝ Նոր Արմաւիրն է, հիւս. Կովկասի մէջ: Ատլէրը նոյնպէս Կրասնոտարի շրջանի ծովափնայ բուժավայր, Մոչիի մօտ:  
116.- Չեռագործ հիւսուած շապիկներ:



խատում են բռնել կամուրջը, ռուսներից 23 հոգի գնում են կամուրջը գրաւելու. թուրքերը կանչում են. «Չան ֆիդալար, տուր»<sup>117</sup>:

Թուրքերը զարնում են ռուս սպային. 20 ռուսներ առնում տանում են սպային, մնում են մեր 3 հոգին, որոնք դիրք գրաւում ու սկսում կռուել. պահում են կամուրջը եւ մօտ 30 հոգի սպանում թուրքերից:

Միշլայէվսկին, յանկարծ, շրջապատուած տեսնելով ռուս զօրքին, փոխանակ Սարըղամիշից ուղիղ Ղարս գնալու՝ անցնում է Մժնկերտ, Մժնկերտից մեր տղաներից 7 հոգու եւ կողակների կոնվայով<sup>118</sup> անցնում Ղարաղոլրուժ, ապա Կաղզուան, Ղարս:

Հեռագրել Ալեքսանդրապոլ բժ. Մանտինեանին, որ պատրաստ լինի Պարսկաստան մեկնելու: Նամակ գրել Ղարս Աղբալեանին, որ մեզ համար ճարէ 100,000 տաճկական փամփուշտ ինքնապաշտպանութեան համար:

**Դեկ. 26**

Երեկոյեան եղաւ Ազգ. բիւրոյի կողմից հրաւիրուած պատուիրակների ժողովը: Ժողովը նշանակուած եւ վերջին խուճապի պատճառով փոխուած էր, բայց իմացուած էր միայն մի քանի քաղաքներ, իսկ միւսներին չէր իմացուած, եւ շատերը եկել էին: Եղաւ խորհրդակցական նիստ եւ գլխաւորապէս զբաղուեց ինքնապաշտպանութեան հարցով:

**Դեկ. 27**

**[Արմէն] Գաբոյի գեկուցում (Ազգային բիւրոյի համագումար)**

Հոկ. 24-ին մեկնեցինք 390 հոգով՝ միացած Նիկոլայէվի օտրիային<sup>119</sup>, Աբաղայով Վան անցնելու: 30-ին գրաւեցինք Կեաւրէ Շամ գիւղը, ուր եղաւ կռիւլ: Յետոյ մտանք Աբաղիւսի օտրիային Ղարաքիլիսէում: Աբաղիւսը շատ վատ էր վերաբերում դէպի հայերը:

Ամբողջ Ղարաքիլիսէի հայ ու թուրք տները թալանել են կողակները:

Աբաղիւսը խուճարկել է տուել հայերի գիւղերն ու գէնքերը իսկել:

Դեկ. 19-ին սկսուեց ժողովրդի արտագաղթը մեր խմբի հսկողութեան տակ:

Գեներալ Օգանովսկին խոստացել է խումբը դնել գեներալ Նիկոլայէվի օտրիայի տրամադրութեան տակ:

2 սպանուած ունեցանք, 23 վիրաւոր, 5 լուրջ կռիւ, 5 մետալ է տրուել:

**Լէօ[ի գեկուցումը]<sup>120</sup>**

18րդ դարում Եկատերինայի ծրագիրը որին ոյժ են տալիս Պոտեմկինը, Սուվորովը եւ այլն — հայկական անկախ պետութիւն ստեղծել:

Հնդկահայերի ծրագիրը հանրապետական Հայաստան ստեղծելու — 18րդ դարում:

1827 թ. Երեւանի գրաւումով ռուսների կողմից վերջանում է այս նահանգի հայոց հարցը, իբրեւ մի ժողովրդի, որ հպատակ է մահմետական պետութեան:

Մնում է թուրքահայոց հարցը:

1855 թ. Ղրիմի պատերազմը, 1877-78 թ. պատերազմ, Սան-Սթէֆանօ 16 յօդ., որով Ալաշկերտի հովիտը տրուում է ռուսներին:

61 յօդ., որով Եւրոպան խլում է ռուսներից Ալաշկերտը իբրեւ տրանզիտի ճամբայ:

1878 թ. երբ հայ պատուիրակները գնում են Սան-Սթէֆանօ Կոմս Իգնատիէվին տեսնելու, առաջին խօսքը լինում է «օթոնոմի ադմինիտրատիւ»<sup>121</sup>:

Երբ հայ պատուիրակութիւնը գնում է Բերլին, ներկայացնում է մի ծրագիր, որ իսկապէս աւտոնոմիա է պարունակում:— Հայաստանի 2 վիլայէթները էրզրումի եւ Վանի, որ այժմուայ վեց վիլայէթներն են, միացուում եւ կազմում մի շրջան քրիստոնեայ գեներալ նահանգապետով, որ եկամտից մի մասը տալիս է սուլթանին, իսկ մեծ մասը ծախսում տեղի վրայ: Նրա մօտ կան տեսչութիւններ-մինիստրութիւններ, տեղական միլիցիա, վարչական ու ժանտարմերիա ըստ ազգի, ազգային դպրոց, դասարաններում ազատ լեզու եւ այլն: Սա է եղել հայերի պաշտօնական ցանկութիւնը 1878 թ: Ուրեմն, հայ ժողովրդի մշտական ցանկութիւնը, ինչպէս եւ այսօր, աւտոնոմիա է:

Այդ ծրագիրը չքննուեց էլ Բերլինի վեհաժողովում: Ի՞նչ է Եւրոպայի տուածը, 61րդ յօդուած:

1895 թ. մայիս 11-ի ծրագիրը — շատ համեստ:

1912-13 թուերի ծրագիրը՝ ռուս-գերմանական մրցում:

1913<sup>121ա</sup> յունուար 26-ի ծրագիրը:

Ամբողջ մի դար է, որ ռուսները առաջացել են Արփաչայից մինչեւ Ալաշկերտ: Եւրոպան չէր թողնում նրան առաջ եւ հիմա էլ չի թողնի, քանի նրա դէմ կան հակադիր շահեր — Բաղդատի երկաթուղի, Միջագետք, Միջերկրական եւ այլն:

Եւրոպական գրականութեան մէջ Հայաստանը

117.- Թուրքերէն — «ջան ֆիտայիներ, կանգ առ»: 118.- Կառախումբով: 119.- Զօրաբաժնի: 120.- Պատմաբան Առաքել Բաբախանեան: 121.- Վարչական ինքնավարութիւն: 121ա.- Պէտք է ըլլայ 1914:







ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

միշտ նկատուելի է ստրատեգիկ մի հանգույց ամբողջ Արեւմտեան Ասիայի համար:

Եւրոպական գրականութեան մէջ ասուում է, թէ՛ ով տիրում է էրզրումին, նա տիրում է Ալեքսանդրեաին: Եւ էրզրումի դէմ է, որ Անգլիան գրաւել է Կիպրոսը:

Այսի գեկուցումից յետոյ վիճաբանութիւն է դրուում հայ ազգային քաղաքականութեան մասին: Ոմանք – Պապաջանեան, Թաղիանոսեան, բժ. Ստեփանեան եւ այլն, – գտնում են, որ չպէտք է խօսել մամուլի մէջ ակտոնոմիայի մասին, մեծամասնութիւնը հակառակ կարծիք ունի: Միաձայնութեան կարծիքն է, որ բոլոր հայերիս ընդհանուր բաղձանքն է տեսնել թուրքահայ ժողովուրդը ազատուած տառապանքներից եւ ստեղծուած ակտոնոմ մի կազմակերպութիւն:

Մեծամասնութեամբ ընդունուում է, որ պէտք է մամուլում եւ այլն խօսել՝ պարզելով ու ժողովրդականացնելով ակտոնոմիայի հարցը, որոշ տաքտով:

Դեկ. 28

Բուքրէշի կոնսուլին նամակ գրել, որ վերջ տայ կամաւորներին անձնագիր տալ:

Գրել Օտեսա, Բուքրէշ եւ ուրիշ տեղեր, որ կամաւոր չուղարկեն:

Ալեքսանդրապոլում Վարդանին նորից մերժել են մօսին տալ եւ առաջարկում են մանլիխէր: Հեռագրել. «Ընդունեցէք վարժեցնելու, բայց ոչ կոուի մէջ մտնելու»\*:

Գրել Նիկոլին, որ մի հազար տայ Երուանդ Տէր-Մինասեանին, 2000 էլ իրեն առձեռն ծախսի, եւ խնդրել, որ անմիջապէս գրէ, թէ մօտաւորապէս ինչքա՞ն փողի պէտք ունի – թող ուղարկէ նախահաշիւ\*:

Վարդանին նամակ գրելիս յիշել, որ այստեղից մարդ ուղարկելիս միշտ թուղթ է տրուում, առանց թղթի մարդ չընդունել:

Գարոն առաջարկում ընդհանուր իգտիրում տեղաւորել, Վարդանի խումբն էլ այնտեղ տանել. Վարդանն էլ համաձայնել է: Օգանովսկին ամէն յարմարութիւն է տալիս:

Դեկ. 29

Դեկ. 27-ին 2 վրացի կամաւորներ «Մուտաքսի պապարում»\* ծեծում են մեր կամաւորներից մէկին: Դեկ. 28-ին Դվարցով\* փողոցում մի խումբ վրացի կամաւորներ փորձում են ծեծել մեր երկու կամաւորներին: Պարզ երեւում է, որ վրացիները ուզում են սքանտալ հանել եւ վարկաբեկել մեր կամաւորներին ազմի-նիստրայի առաջ. որոշուեց բողոքել ուր հարկն է:

Դեկ. 30

Ազգ. բիւրոյի նոր նախագահ է ընտրուել Պապաջանեանը եւ քարտուղար՝ Մ. Բերբերեանը: Այդ բանի դէմ ընդհանուր դժգոհութիւն է տիրում մեր շարքերում: Այդ ընտրութիւնը եղել է հակառակ մեր որոշման: Այդ առթիւ Աբրոյի<sup>121բ</sup> ժողով է լինելու:

Համասփիւռեանը<sup>85</sup> Իգտիրից գալով՝ գեկուցանում է այնտեղի գործերի մասին: Օգանովսկու կողմից առաջարկում է ընդհանուր կենտրոնացնել Իգտիրում, Գարոյի եւ Անդրանիկի խմբերը մեծացնել եւ մի հայկական դիվիզիոն կազմել: Թէ՛ ուղարկական եւ թէ՛ քաղաքական հաշիւներից Օգանովսկին առաջարկում է յատուկ ուշադրութիւն դարձնել իր այս առաջարկութեան վրայ. եթէ կառավարութիւնը զէնք չտայ, զէնք գնել սեփական միջոցներից. իբրեւ զէնքի աղբիւր ցոյց է տալիս Եպանիան ու Շվէդիան:

Այս առաջարկութեան մասին Օգանովսկին Օգոլի միջոցով յայտնել է կաթողիկոսին խնդրելով նրա աջակցութիւնը: Կաթողիկոսն էլ համակրանքով է վերաբերուել:

Քանաքեռի կազարմաները<sup>40</sup> Օգանովսկին տալիս է մեր կամաւորներին. առաջարկում է անմիջապէս խմբերը ուղարկել այնտեղ. Վարդանին էլ տեղափոխել, տալիս են սպայ եւ ունտէր-օֆիցէր<sup>106</sup> ինստրուկտորներ. այնտեղ է կենտրոնանում եւ սպաների դպրոցը. Օգոլը գնում է այնտեղ իբրեւ ինստրուկտոր:

Որոշուում է Վարդանի տղաներին Ալեքսանդրապոլից Քանաքեռ փոխադրել:

Կոստանցա հեռագրել Լեւոն Սեղբոսեանին, որ մարդ չուղարկեն:

Գրել Ալեքսանդրապոլ Վարդանին, որ Սամուէլին ուղարկէ այստեղ Բալկաններ ուղարկելու համար:

Պապաջանեանը հրաժարուել է Ազգ. բիւրոյի նախագահութիւնից հասկացնել տալով, թէ ինքը չի կարող ընդունել այդ պաշտօնը, քանի որ զինուորական մարմինը իրեն կողմնակից չէ:

Մանրամասն կերպով քննադատուում է Շտաբի եւ Գործադիր մարմնի յարաբերութիւնը: Ոմանք առաջարկում են կացութիւնը առ այժմ թողնել նախկին դրութեան մէջ, ուրիշներն անհրաժեշտ են գտնում գրաւոր յայտարարութեամբ դիմել Գործադիր մարմնին եւ պարզել մեր յարաբերութիւնը՝ ցոյց տալով, որ զինուորական մարմինը ակտոնոմ է իր գործունէութեան մէջ: Որոշուում է յարմար մոմէնտին ներկայացնել այդ յայտարարութիւնը:

Հիմնական նախահաշիւ\* կազմել ու ներկայացնել Գործադիր մարմնին:

121բ.- Արթուր – ծածկանուն Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոյի համար:



**Դեկ. 31**

Ատլէր<sup>115</sup> նամակ գրել եւ դժգոհութիւն յայտնել, որ կամաւոր են զրկել: Եկածներին մի-երկու [օր] պահել, յետոյ ընդունել խիստ քննելով, մերժուածներին\* ճանապարհածախս չտալ:

Ժընեւի բժիշկներին<sup>92</sup> հեռագրել, որ այլեւս պէտք չկայ, որովհետեւ ազատ տեղերը բռնուած են:

Վարդանին գրել Բաբալեանի մասին, որ վարձուած է ամսական 200 ռուբլով:

Վարդանին հեռագրել, որ չընդունեն խնուցիներին. մանրամասնութիւնները նամակով\*:

Վարդանին հեռագրել, որ անմիջապէս մեկնի Քանաքեռ:

Վարդանին հեռագրել, որ խումբը տանի Քանաքեռ: Իգտիր հեռագրել Գարոյի անունից, որ խումբը զնայ Քանաքեռ:

Վարդանին գրել, որ այնտեղից հեռագրէ շտաբին, որ սպայ Գրիգորի Ալեքսանդրովիչ Սիրունեանը, կովկասեան հրացանաձիգ գունդի 4րդ վաշտից\* ուղղում է մտնել մեր կամաւոր խմբի մէջ, եթէ կարելի է, նրան տալ մեզ (եղել է կռիւներում եւ թեթեւ կերպով վիրաւորուել):

Հայ. 23-ը Գարոյի Գարոյի  
կարճ և ուշիկ ՊԱՄԱՅԱՐԻՍ  
տեղա Գրիգոր Գրիգոր Մարտի:  
Չբուենտ խոսքի և թշուառեա:  
Գրեւոր խոսք Գարոյի և իր  
բաշխագրա-ի յորոս զայն և  
Երանայր խոսք: Դրոյս հաւ  
տարաւ և հօշակութեամբ  
արդարեւ բաշխագրա-ի Գարոյի  
ինչ Երանայր Գարոյի և իր  
տարաւ զայն և հաւանութեամբ  
Գարոյի: Գրեւոր Գրեւոր  
և թեթեւ կերպ և Գարոյի  
Գարոյի Գարոյի: Գրեւոր  
Գրեւոր և Գարոյի և Գարոյի  
Գարոյի Գարոյի Գարոյի  
Գարոյի Գարոյի Գարոյի  
Գարոյի Գարոյի Գարոյի  
Գարոյի Գարոյի Գարոյի



Փաստ. 1158-1

13.- ՏԻԳՐԱՆ ԽԱՉԻԿԵԱՆԷՆ ԱՐՏԱԲԱԶԳ ՀԱՆՐԱՄԵԱՆԻՆ (Եգիպտոս)

Սոֆիա, 1 Յունուար 1915

Սիրելի Արտաւազգ!

915 թուականի առաջին նամակը քեզ կը գրեմ. ուստի նախ շնորհաւորում եմ Նոր տարին. դալ տարի Հայաստան: Կարծեմ քեզ չի կարելի սրանից աւելի լաւ բարեմաղթութիւններ անել: Երկրորդ նամակիս ուշանալուն պատճառը իմ հիւանդութիւնն էր: Քո եւ իմ բախտէն, այսպիսի ժամանակներում երկու շաբաթ հիւանդացայ:

Թիֆլիսէն ստացանք Ռայոնական ժողովի արձանագրութիւնները: Կազմուած է Ազգային բիւրօ, կաթողիկոսի հովանաւորութեան տակ, որը կառավարութենէն պաշտօնապէս ճանչցուած է: Ազգային բիւրոն ունի հետեւեալ մասերը — 1) տնտեսական, 2) ռազմական, 3) քաղաքական, 4) գաղթականական հարցի, 5) ինքնավար Հայաստանի օրէնքները մշակող եւ այլ յանձնախմբեր:

Ռազմական մասը յանձնուած է Հ. Յ. Դաշնակցութեան, իսկ բոլոր մասերում տիրապետող քաղաքական տարրը մենք ենք:

Յոյս ունեմ, որ «Հորիզոն» կը ստանաք եւ կռիւներու, յատկապէս կամաւորական խումբերի կռիւների մանրամասնութիւնները կը ստանաք: Համոն առանձին խմբով Կաղզուանի ճանապարհում է, Անդրանիկը Վանի ճանապարհին, Խաչոն, Դրոն՝ Պայագիտ, Քեռին՝ Բասեն, Նիկողը, Եսպոնը, Օնէն, Մարտիրոսը, Չեմլեակը, Սեպուհը, Առաքելը եւ վերջապէս մեր բոլոր խմբապետները առանձին զօրախումբերու գլուխն անցած են: Նամակի չէրն անբաւական են անոնց ամէնօրեայ քաջութիւնները պատմելու համար. միայն այսքանն ասեմ, որ թէ ռուսաց բանակի յառաջխաղացման եւ թէ հայ գիւղերու ինքնապաշտպանութեան համար ճակատագրական դեր կը կատարեն, ճիշդ այնպէս, ինչպէս նախատեսուած էր Ընդհ. ժողովում:

Միայն մի տխուր փաստ կայ. այն է, որ ռուսական մամուլի մի մասին մէջ սկսած է հակառակ հոսանք հայկական ակտիւնիստների. եւ երեւակայի որի՞ կողմէ. — ազատականներու պետ Միլիոկովի կողմէ, որը անցեալ տարի այս ատենները Փարիզ գացած էր հայկական հարցը ուսումնասիրելու համար, որից ետք նա թէ «Ռեյ»ի եւ թէ բարլամենթի թրիպիւնից ուժգնօրէն պաշտպանեց մեր հարցը, իսկ այսօր յանկարծ սկսեր է անեկսիտները<sup>122</sup> մասին խօսիլ: Մեր կովկասեան մամուլը լիքն է կատաղի եւ հայրենաշունչ յօդուածներով, մինչեւ արշի-կողմոպոլիտ Մշակը, բոլորը կը պահանջեն կամ Հայաստանի անկախութիւն եւ կամ առնուազն

ինքնավարութիւն՝ ռուսական պրոտեկտորայի տակ:

Ռոստոմը Անգլիայով պէտք է անցնի Ռուսաստան, իսկ Միքայէլ Վարանդեան մի քանի շաբաթից Պուլկարիայով կ'անցնի Կովկաս: Երանի ձեր պատգամաւորը նրա հոս<sup>123</sup> հասնելուն մեզ մօտ լինի:

Ձեր ռեկորդութիւնը մեզ շատ ուրախացուց: Այստեղ մենք սարսափելի դժուարութիւններ քաշեցինք առայժմ հոսանքը կեցնելու համար<sup>124</sup>. այնուամենայնիւ չկարողացանք բոլորովին արգելել. Ռուսմանիայէն եւ Պուլկարիայէն մինչեւ այժմ գացին 1100 մարդ. Ձուիցերիայէն շարունակ կու գան մեր աւարտած ուսանողները, բժիշկ, իրաւաբան եւ բոլորը, բոլորը կ'երթան Կովկաս՝ շարժման միանալու համար: Հայ ազգի, աշխարհի բոլոր ծայրերը ցրուած զաւակներու ընդհանուր զօրահաւաքն է կարծես: Ինչպէս մէկ ժամանակ, ես չեմ գիտեր բայց լսած եմ, 95 թուականի կոտորածներու ժամանակ, ամէն օր Երկիրը կը դատարկուէր հայ երիտասարդներէն, այսօր հակառակը կը կատարուի. ամէնքը կը գնան դէպի հայրենիք, վրէժի եւ սուրբ հաւատքի կայծը իրենց կուրծքի տակ. եւ մենք, Արտաւազգ ջան, անպատճառ պիտի յաղթենք եւ եկող տարի, 1916-ին, այն օրը մենք պիտի տօնենք աւերակ Հայաստանի վրայ բարձրանալը վերածնունդ հայրենիքի նոր տարին եւ թերեւս մեր հողին վրայ: Իմ հաւատքը այնքան խոր է, որ ոչ մի ջանք չեմ անի քեզ հաւատացնելու համար:

Այստեղ ձեռնարկեցինք թերթի մը հրատարակման տառերը ձուլեցինք, խմբագրատունը վարձեցինք, ամէն ինչ պատրաստ է. ես էլ մեր մի քանի երիտասարդ ընկերներու հետ պիտի վարեմ խմբագրական գործը: Թերթի անունն է «Հայաստան». նպատակն է այս պատմական օրերուն պարզաբանել Պալքանի հայութեան մեր հարցի նոր ֆազը եւ միաժամանակ տեղեալ պահել Կովկասի եւ Հայաստանի անցքերուն: Բացի այդ մենք աչքի առաջ ունեցանք, որ նոյնիսկ Եգիպտոսի, Եւրոպայի եւ Ամերիկայի համար թերթը կարող է, իբրեւ լաւ informateur<sup>125</sup>, դեր կատարել: Մեր նիւթական միջոցները շատ նեղ են. առայժմ շաբաթը երկու թիւ պիտի հրատարակենք, յետագայում ամէնօրեայի վերածելու յոյսով. ուստի, եթէ դու էլ համաձայն ես մեզ առաջնորդող motif-ներուն<sup>126</sup>, դէ՛ ուրեմն, աշխատիր, որ մեր

122.- Կցումի:  
123.- Իմա Պուլկարիա:  
124.- Կամաւորներու հոսանքը:  
125.- Ֆրանսերէն — տեղեկատու:  
126.- Ֆրանսերէն — շարժառիթ:



տեղիդ ընկերները նիւթական եւ բարոյական աջակցութիւն ցոյց տան, որպէսզի թերթը կարելի լինի տանել: Մենք հաւատացած ենք, որ մի անգամ ոտքի կանգնելուց յետոյ, թերթը, իբրեւ միակը արդիական կեանքին բաւարարութիւն տուող հայաթերթ, մեծ ընդունելութիւն պիտի գտնի բոլոր գաղութներում: Կ'առաջարկէի, որ տեղիդ ընկերներուն մէջ մի փոքրիկ հանգանակութիւն բանայիք ի նպաստ «Հայաստան»ին: Պուկարիա եւ Ռումանիա մենք սկսած ենք հանգանակութեան եւ յոյս ունենք որ յաջողինք, եւ դրանով մենք առայժմ ապահոված կը լինենք թերթի գոյութիւնը գէթ մի քանի ամիսով, եթէ ոչ մի տարով:

Մարմինն առանձին նամակ գրած եմ. դրկուած չէք գանձած ենք. յարմար միջոց մ'ունենալնուս, արժէքը անմիջապէս կը փոխանցենք Պոլիս:

Կռիւներու մասին մանրամասնութիւններ չեմ գրեր, որովհետեւ մէկ երկու օրէն լոյս կը տեսնի մեր թերթի առաջին համարը, որի մէջ տուած ենք շատ մանրամասն նկարագրութիւններ կովկասեան կռիւներու եւ մեր առիւծներու քաջութիւններու մասին:

Մեր տղերքը, Ակնունի, Խաժակ, Շահրիկ, Հրաչ, Սարգիս, Ժիրայր, Զարգարեան<sup>127</sup> եւ ուրիշներ դատապարտուած են բերդարգելութեան գրեթէ. ոչ մէկը իրաւունք չունի հեռանալու... Շահրիկը եւ Խաչատուրը փորձեցին դուրս գալ, բայց արգելուեցան. այնպէս

որ առայժմ ոչ ոք չկայ տրամադրելի ձեր կողմը գալու համար:

Մի քանի օր առաջ Մուշէն, ցամաքի ճամբով, Պոլիս հասած է Գեղամը<sup>128</sup>. շատ վատ կը պատմէ Հայաստանի կացութիւնը.— Մշոյ դաշտէն կառավարութիւնը հաւաքեր է 1.000.000 օխա հաց, 30.000 ոչխար: Կը գրգռէ թուրք ամբոխը ասելով որ մեզ դէմ կուռուղները ուսները չեն այլ հայերը: Ռուսերու գրաւելիք գիւղերէն իսլամ ազգաբնակչութիւնը կը հեռացնէ եւ կը գետեղէ երկրի ներսը՝ մահմետական գիւղերուն մէջ, իսկ գիւղերը այրելով հայ ազգաբնակչութիւնը կը թողնէ աւերակներու մէջ: Սովը Կարնոյ մէջ սարսափելի է. մէկ օխա հացը կ'արժէ 8 դրուշ, այն էլ չկայ: Եթէ հրից ու սրից ազատ մնայ մեր ժողովուրդը մինչեւ գարուն, սովի ճիրաններից չի ազատուելու:

Պատգամաւորի գալը շատ լաւ կը լինի. բաւականին կարող է ծանօթանալ Պալքանի վիճակին, մեր տրամադրութիւններուն եւ մեզ փոխադարձաբար ծանօթացնել ձեր շրջանին. դրանով գուցէ եւ կարելի լինի մի քանի գործնական եզրակացութիւններու գալ այն... ծանօթ ձեռնարկի մասին: Մինչեւ իմ նամակի ստանալդ եթէ ճանապարհ չէ ելած, ասէք որ երբ Տէտէ Աղաճ հասնի, թող ճանապարհը շարունակի պուլկարական հողով. էտիրնէի գծով վտանգաւոր է, կարող է ձերբակալուել:

Առայժմ այսքան, սիրելի Արտաւազդ. ամէն շաբաթ կանոնաւոր կը գրեմ:

Համբոյրներով՝  
Ընկերդ՝ ՏԻԳՐԱՆ

127.- Յաջորդարար՝ Մայրումեան Խաչատուր (Ակնունի), Գարեգին Խաժակ, Յար. Շահրիկեան, Թիրեաքեան Հայկ (Հրաչ), Բարսեղեան Սարգիս, Զօրեան Բարթող (Ժիրայր), Զարդարեան Ռուբէն:

128.- Տէր Կարապետեան Գեղամ, Օսմ. խորհրդարանի անդամ Մուշէն:





Փաստ. 24-1

14.- Ս. ՎՐԱՑԵԱՆԵՆ Հ.Յ.Դ. ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ<sup>129</sup>

(Պատճենը ուղարկուած է Բաղկանեան Կեդր. կոմիտէին Պոլիս յայտնելու համար)

1915 թ. Յուն[ուար] 1/14 Թիֆլիս

Սիրելի ընկերներ!

Վերջին նամակը ձեզ գրել էինք մօտ մի ամիս առաջ. ապահով չէինք, ստանում էիք արդեօք եւ նրա համար զգուշանում էինք գրել. ընկեր Վարանդեանի վերջին հեռագրից իմացանք, որ մեր նամակը տեղ է հասել, ուստի շարունակում ենք գրել: Այս նամակը, առիթից օգտուելով, մարդու ձեռքով ուղարկում ենք մինչեւ Ռուսմանիա, իսկ այնտեղից՝ պոստով: Գրում ենք վերջին ամսուայ ընթացքում անցած-դարձածը եւ խնդրում, որ դուք էլ յայտնէք ձեզ հետ կապ պահող վայրերին, մասնաւորապէս Եգիպտոս եւ Ամերիկա:

Կովկասը եւ հայ ժողովուրդը հէնց նոր ազատուեց մի սոսկալի կատաստրոֆից: Ռուս-տաճկական պատերազմը, որի վրայ ռուսները շատ անհոգութեամբ էին նայում, յանկարծ ստացաւ անսպասելի կերպարանք. թուրքերը հաւաքելով իրենց ոյժերը էրզրումի գծի վրայ, դեկտ. 10-ին գրաւում են Օլթին՝ տորքելով ու յետ մղելով ռուսներին. ապա արագ վազքով հասնում են Արտահան, գրաւում են եւ անցնում դէպի Ախալքալաք, որից մօտ 25 վերստ հեռաւորութեան վրայ՝ կռուի բռնուում ռուսների հետ: Միւս թեւը՝ աւելի ուժեղ՝ գրոհ է տալիս Սարղամիշի վրայ, կատաղի ռմբակոծում կայարանն ու երկաթուղին, արագ շարժումով տոպրակի մէջ է գցում Բերիւմանի կորպուսը եւ յաջող մի շարժումով անցնում Սարղամիշի ետեւը եւ կտրում Ղարս-Սարղամիշի երկաթուղին՝ Չաթախ կայարանի մօտ: Օլթիի, Արտահանի եւ Սարղամիշի տեղացի թուրքերը միանում են տաճիկ զօրքին, եւ թուրք կորպուսները<sup>119</sup> շջմեցեղով ռուսներին՝ սպառնում են Թիֆլիսին, որից 3-4 օրուայ հեռաւորութեան վրայ էին գտնուում: Ռուսները շատ քիչ զօրք ունէին այդ կողմերում: Գլխաւոր բանակը՝ Բերիւմանի կորպուսը մէշոկի<sup>130</sup> մէջ էր, իսկ նոր զօրքեր անկարելի էր հասցնել: Սկսուեց մի աննկարագրելի խուճապ. առաջաւոր դիրքերից սկսուեց մի խելակորոյս նահանջ, որի ժամանակ թողնուում էր ամէն ինչ եւ զէնք, պաշարեղէն եւ ռազմամթերք. միլիոնների հարստութիւնը անցաւ թուրք խուճանի ձեռքը, թալանուեց կամ այրուեց: Այն շրջանների հայ ժողովուրդը թողած ամէն ինչ՝ փախաւ. ահագին գաղ-

թականութիւն սկսուեց: Պատերազմի բեմից լուրերը աւելի չափազանցուած էին հասնում Թիֆլիս, ուր ամէն ոք իր գլուխը կորցրել՝ կարծում էր, որ թուրքերը առանց դիմադրութեան 3-4 օրից Թիֆլիսում կը լինեն. կարգադրութիւն եղաւ էվակուացիայի<sup>110</sup>. որոշուեց հեռացնել բանկերը, պաշտօնական հիմնարկութիւնները եւայլն. որոշուեց փոխարքային փոխադրել Եկատերինոպոլ, իսկ զինւ. շտաբը՝ Ստաւրոպոլ. Պետերբուրգ ուղարկուած անվերջ հեռագիրներին զօրքի պահանջով՝ եկաւ մերժումի պատասխան: Բերիւմանին հրաման ուղարկուեց ինչ գնով էլ լինի ճեղքել թուրք զօրքը եւ Սարղամիշ օգնութեան հասնել: Փոխարքայի զինուորական մասի օգնական Միշլայէվսկին, որ թուրքերի գրոհի պահուն Սարղամիշ էր, փախաւ Ալեքսանդրապոլ եւ այնտեղ սկսեց կազմակերպել օպօլչէնիա<sup>102</sup> եւ ժողովրդին զէնք բաժանել: Ղարսից, Ալեքսանդրապոլից, մանաւանդ Թիֆլիսից, ժողովուրդը սկսաւ փախչել. կայարաններում կռուով էին տեղ ճարում: Մի սոսկալի պանիկա էր տիրում ամէն տեղ, եւ ամէն ազգ իր դիրքն էր աշխատում որոշել: Վրաց ազնուականութիւնը ժողով գումարելով՝ փոխարքային դիմում է անում, որ Թիֆլիսը առանց կռուի յանձնեն թշնամուն: Նման դիմում են անում եւ քաղաքային Դոման ու ժուրնալիստների ժողովը: Քաղաքական բոլոր կուսակցութիւնների մի ժողով է գումարուում, որի մէջ վրացիները նոյնպէս առաջարկում են Թիֆլիսը առանց կռուի յանձնել: Մերոնք միայն հակառակ կարծիք են ունենում: Առհասարակ այդ օրերում թէ կառավարական շրջաններում եւ թէ մասսայի մէջ այն կարծիքն էր տիրում, որ ամբողջ Անդրկովկասը պիտի անցնի թուրքերի ձեռքը: Օր օրի վրայ սպասուում էր կովկասեան թաթարների ընդհանուր շարժում. արդէն նշաններ էլ կային: Ադմիրալստրացիան էլ կարծես հաշտուել էր այդ մտքի հետ — արագօրէն հեռացնում էին իրենց ընտանիքները եւ արժեքաւոր իրերը: Սոսկալի էր հայ ժողովուրդը. նրա հա-

129.- Ս. Վրացեան այս նամակը հրատարակած է իր «Հայաստանի Հանրապետութիւն»ը կոթողական աշխատասիրութեան Բ. տպագրութեան Յանդիւարձի բաժնին մէջ, «Էնվերի արկածախնդրութիւնը» խորագրով (Պէյրուս 1958, էջ 585-590):  
130.- Պարկ, տպարակ, փոխաբերաբար շրջապատում իմաստով:





մար ազատում չկար. «ազգի երեւելիները» ինչպէս Ազգային բիւրոյի նախագահ Սամ[սոն] Յարութիւնեանը, Դոմայի անդամ Պապաջանեանը եւ ուրիշները զանազան պատրուակներով փախան Թիֆլիսից. մնացինք մենք ու մեր բոլորիս մտահոգութիւնն էր փրկել ժողովուրդը վերահաս վտանգից եւ պաշտպանել ժողովուրդը: Այս գործի համար մտածում էինք օգտուել մեր խմբերից. դիմում եղաւ կառավարութեան եւ մի քանի տեղ — Ղարս, Ալեքսանդրապոլ եւ այլն, տրուեցին բերդաններ: Մտածւում էր նաեւ դիւրութիւններ ստեղծել փախչող ժողովուրդին օգնելու:

Այս միջոցին կառավարութիւնը դիմեց մեզ խոստանալով եւ գէնք, եւ սպաներ, միայն թէ նոր խմբեր ուղարկենք. մենք անմիջապէս կազմեցինք 500 հոգինոց մի խումբ եւ Վարդանի հետ ուղարկեցինք Ալեքսանդրապոլ, ուր մտածւում էր հաւաքել ռուսների դիմադրական ոյժը: Այսպէս անցնում է մի քանի ծանր օր, երբ դեկտ. 20-ին, լուր է հասնում, որ Բերխմանի կորպուսը դուրս է եկել թակարդից եւ միւս ոյժերի հետ կանգնեցնում է թուրքերի գրոհը. ապա մեծ յաղթանակ է տարւում թուրքերի վրայ, որի մէջ ջարդւում են թուրքերի 10-րդ եւ 9-րդ կորպուսները. վերջինիս հրամանատար Խան փաշան եւ շտաբը գերի են ընկնում. գերուում են եւ մօտ 10 000 թուրք զինուորային. Արտահանը յետ է առնւում, թուրքերը ստիպուած են լինում յետ քաշուել եւ այժմ կռիւներ տեղի են ունենում Քարակոլորգանի մօտ: Թուրքերը շատ լաւ են կռւում, ծրագիրը շատ յաջող էր կազմուած. միայն ցուրտը ու պաշարի պակասը պատճառ եղան որ նրանք յաղթուեցին, եթէ ոչ Թիֆլիսը ձեռքից գնացել էր:

Այդ պանիկայի<sup>130</sup> միջոցին հրաման տրւում է Պարսկաստանի ու Ալաշկերտի զօրամասերին յետ քաշուել. սկսւում է յետ գալ եւ Ատրպատականի ռուս զօրքը, որի հետ գաղթում են ամբողջ Սալմաստի եւ Աղբակի հայերը: Կարիք կա՞յ ստելու թէ ինչ ահռելի կացութեան մէջ ընկել է այդ ժողովուրդը այս ցրտին:

Գաղթում են եւ Թաւրիզից, որը անցել է թուրքերի ձեռքը, Ալաշկերտից, որի բոլոր գիւղերը այրել են ռուսները հեռանալուց առաջ: Շահ Աբասի ժամանակներն են եկել մեր ժողովրդի վրայ: Ռուսները առ այժմ ուզում են ամրանալ Խոյ-Բայազետ-Քարաուրգան գծով ու բռնել պաշտպանողական դիրք մինչեւ որ նոր ոյժեր գան:

Ռուսաստանից հիմա գալիս են նոր կորպուսներ<sup>62</sup>. ըստ երեւոյթին զարնանը տեղի կ'ունենան վճռական դէպքեր: Գաղթող հայերին օգնելու համար սկսւում են հանգանակութիւններ. կարիքը անհաշուելի է. Կովկասի հայերը մեծ կարեկցանքով են ընդունում եկողներին: Այս նոր տարին առ այժմ բերեց մեզ մի քանի տասնեակ հազար բնակեր եղած ժողովրդի լաց ու սուգ: Թուրքական գրոհի վտանգը թւում է անցած, թէեւ յայտնի չէ թէ Քարաուրգանի մօտ տեղի ունեցող թրքական նոր

յարձակումների յետեւը նրանք որքան ոյժ ունեն:

Կամաւոր խմբերն էլ մասնակցեցին վերջին դէպքերին: Անդրանիկի գունդը, որ հիմա ունի մօտ 1200 հոգի, յետ է գալիս Սարայի կողմից դէպի Խոյ ռուս զօրքերի հետ. խումբը շատ յաջող գործունէութիւն ունեցաւ ու արժանացաւ բարձր գնահատումների, ռուս զինուորականների եւ շտաբի կողմից: Արմէն Գարոյի խումբը այժմ Իգտիրումն է: Նա էլ ունեցաւ մի շարք յաջող կռիւներ, իսկ վերջին յետ նահանջի ժամանակ անգնահատելի օգնութիւն հասցրեց գաղթող հայ գիւղացիութեան: Խումբը կապուած էր Գեներալ Աբաղիւնի (Օսետին) օտրեադի<sup>131</sup> հետ. վերջինս հայատեաց եւ քրդասէր մի մարդ է, այդ պատճառով տեղի են ունեցել նրա եւ Գարոյի միջեւ մի շարք անախորժութիւններ. Աբաղիւնը վատ է տրամադրուած եղել դէպի խումբը, եւ ամենավտանգաւոր տեղերն է ուղարկել նրան: Ի գնահատութիւն խմբի գործունէութեան՝ չորրորդ կորպուսի հրամանատար Օգանովսկին որոշել է խումբը կապել մի ուրիշ օտրեադի հետ: Օգանովսկին շատ լաւ է վերաբերւում դէպի մեր խումբը. նրա առաջարկութեամբ եւ հովանաւորութեամբ Քանաքեռում հիմնւում է 50 հոգու համար դասընթացք, հայ խմբերի համար հայ սպաներ պատրաստելու համար. նրա պնդումով նոյնպէս Քանաքեռում հիմնւում է 1000 հոգինոց ռեզերվ, որ պիտի մարզուի ռուս սպաների դեկավարութեան տակ:

Որոշուել է Գարոյի խումբը մեծացնել, Վարդանի խումբն էլ այնտեղ փոխադրել եւ ստեղծել 1200-1500 հոգինոց հայկական մի դիվիզիոն. ցանկութիւն կայ մեր ոյժերը կեդրոնացնել հայաբնակ վայրերում, Օգանովսկու կորպուսի սահմաններում. նա շատ է ոգեւորւած մեր խմբերով. մեր շահն էլ պահանջում է ուժերի կենտրոնացում: Թէ Գարո-Վարդանի եւ թէ Անդրանիկի խմբերը գտնուելու են միեւնոյն ռայոնում:

Համազասպի խումբը այժմ Կաղզուանում է. ունեցել է մօտ 30 հոգի սպանուած, 40 վիրաւոր եւ բաւական պաշարեղէնի կորուստ: Ունեցել է մօտ 13 կռիւ եւ միշտ յաջող. նրանից էլ շատ գոհ են. ստացել է Գէորգեւսկի մեդալ երկրորդ աստիճանի: Ամէնից ծանր կորուստ է ունեցել Քեռին, որ թուրքերի գրոհին է ենթարկուել Նարիմանի շրջանում. մօտ 70 սպանուած է տուել միայն Նարիմանի մօտ: Նրա խումբը թուրքերի յաղթական արշաւի օրերում ընկնում է մէջոկի մէջ Նարիմանի մօտ եւ շնորհիւ Քեռու ճարպիկութեան ազատւում է. խումբը ցրւում է եւ նրա բեկորները հետզհետէ հաւաքւում են: Այժմ խումբը վերականգնուել է եւ պատրաստ է արշաւելու: Այս օրերս Գարոն ու Համազասպը Թիֆլիսում են. հեռագրուեց որ Վարդանն ու Քեռին էլ գան մի ընդհանուր խորհրդակցութիւն կատարելու

130ա.- Խուճապի, իրարանցման:  
131.- Չօրաբաժին:





ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

համար: Հարցեր շատ կան եւ ամէնից առաջ պէտք է համաձայնեցնել մեր գործունէութիւնը ռուս գօրծի նոր տակտիկի հետ, ի նկատի ունենալ հայ ժողովրդի ինքնապաշտպանութիւնը, այլեւ ոյժերի նոր բաշխում կատարել, որովհետեւ կառավարութիւնը կամենում է մեր խմբերը մեծացնել՝ կամաւորների թիւը կրկնապատկելով:

Վերջին պանիկան մի առ ժամանակ մոռացնել տուեց ամէն բան, բայց մինչեւ այդ որոշ աշխատանք կատարւած էր թէ մամուլով եւ թէ դիւանագիտական ճանապարհով՝ հայկական հարցի նպաստաւոր լուծման համար: Մեր լոգունգն է «Աւտոնոմիա վեց վիլայէթների եւ Կիլիկիայի, ռուսական պրոտեկտորատի ներքեւ»․ այս մտքով հող է պատրաստուում Պետրոգրադում: Սազոնֆը<sup>132</sup> եւ միւս շրջանները ըստ երեւոյթին հակառակ չեն այս ծրագրին: Այս մտքով դիմում եղաւ եւ կաթողիկոսի կողմից փոխարքային գրաւոր, իսկ բերանացի՝ Յարին, առաջինեցիայի<sup>132</sup> միջոցին, վերջին տեսակցութեան ժամանակ: Փոխարքան ասել է՝ «կը մտածենք» իսկ ցարը ասել է, թէ «Ձերդ սրբութեան ցանկութիւնները կ'իրագործուեն, պատերազմից յետոյ: Հայերի ապագան շատ լաւ պիտի լինի»: Յարը հետաքրքրուել է ապագայ Հայաստանով, նրա ժողովուրդներով եւ հայերի թուով: Կաթողիկոսը տեղեկութիւններ է տուել: Այդ առաջինեցիայից, ինչպէս եւ այցելութեան միջոցին դէպի հայերը ցոյց տուած ցարի բացառիկ ուշադրութեամբ, հայկական բուրժուական շրջանները բաւական ոգեւորուած էին, բայց իրապէս մէջտեղը ոչ մի շօշափելի երաշխիք չկայ, ընդհակառակը ռուս ինտէլիգենցիայի (Միլիկով) եւ մամուլի («Ռէչ», «Ուտրո-Րասսի»)<sup>133</sup> եւ այլն) որոշ մասը շատ պարզ ու կատեգորիկ կերպով ղնում են Հայաստանի անէկցիայի<sup>134</sup> խնդիրը: Մեր շարքերում այդ խնդրի մասին մի վճռական կարծիք չկայ, թէ եւ բոլորս էլ վախենում ենք «անեկցիայի» ուրուականից: Կառավարութեան վերաբերմունքը դէպի հայերը այժմ շատ լաւ է — գլխաւորաբար գինուորականների եւ բարձր ազմինիստրացիայի տեղական պաշտօնէութիւնը՝ մեծ մասամբ վրացի, թուրք, գերմանացի, միշտ էլ հակահայ են:

Քաղաքական պատճառներով փախչողները վերադարձել եւ ազատ ապրում են: Մի ընդարձակ ցանկ անունների ներկայացուած է փոխարքայի կողմից Պետրոգրադ, բայց դեռ ամնիստիա<sup>42</sup> չկայ: Արտասահման գտնուողներն էլ անվտանգ կարող են վերադառնալ:

132.- Ունկնդրութեան:  
133.- Ռուսերէն լրագիրներու անուններ:  
134.- Կցումի:  
135.- Լուծարք, հարցը փակելու իմաստով:  
136.- Արդուքեան Յովսէփ:

նալ եւ մինչեւ պատերազմի վերջը առանց բռնուելու կ'ապրեն: իսկ պատերազմից յետոյ յոյս կայ ընդհանուր լիկվիդացիա<sup>135</sup> անել նրանց մեղքերի:

Ինչպէս գիտէք կամաւորների գործի նիւթական մասը վարում է Ազգ. բիւրոն, իսկ գինուորականը՝ Ձինուորական մարմինը: Ազգ. բիւրոյի մէջ վերջերս տեղի են ունենում խլրտումներ ու պայքար. երեւի մօտ օրերս կը պայթի. Ս. Յարութիւնեանի հրաժարումով նախագահ ընտրուեց Բաբաջանեանը, որը սակայն նոյնպէս հրաժարուեց, որովհետեւ իմացաւ որ մեր վստահութիւնը չի վայելում: Մենք աշխատում ենք կացութիւնը փրկել եւ մինչեւ Ընդհ. ժողով ետը տանել, իսկ Ընդհ. ժողովի մէջ ընտրել մի ձեռնհաս մարմին: Ուզում ենք բժ. Ջաւրիեւին Անդրանիկի բանակից այստեղ բերել, բայց նա էլ պայման է դնում որ ինքը կը հեռանայ, եթէ իր տեղը գայ մի կարող ընկեր, օր[ինակ] Ռոստոմը: Ռոստոմի բացակայութիւնը այստեղ առհասարակ շատ ենք զգում, եւ լաւ կը լինի եթէ նա գայ: Մինչեւ այժմ շատ ենք մտածել՝ հեռագրել ու խնդրել որ գայ, բայց ի նկատի ունենալով դիւանագիտական քայլերի<sup>47</sup> կարեւորութիւնը՝ չենք արել:

Խնդրում ենք առանձնապէս ջանք թափել մեզ համար նպաստաւոր վերաբերում ստեղծելու Պարիզի եւ Լոնդոնի դիպլոմացիայի մէջ, որովհետեւ վերջ ի վերջոյ ամէն բան նրանցից կ'ախտուած պիտի լինի:

Այստեղ շատ է մտածուում այդ մասին, բայց զգուշանում ենք պաշտօնական քայլեր անելուց. դուք այդ ուղղութեամբ խոշոր գործ կարող էք անել:

Ձինուորական մասը վարում ենք մենք, ստեղծել ենք կարգադրիչ մի մարմին (Աբրահամ<sup>46</sup>, Իշխան<sup>136</sup>, Վրացեան), որոնք տանում են գործի ընթացիկ մասը, իսկ ընդհանուր գործը՝ Աբրոն<sup>121բ</sup>:

Տրամադրութիւնը դեռ շատ բարձր է. կամաւորների հոսանքը շարունակուում է. պէտք է առ այժմ վերջացնել, որովհետեւ տեղումս էլ շատ մարդ կայ:

Բոլոր ընկերները առողջ են:

Ընկերների կողմից ջերմ բարեկներով՝  
Ս. ՎՐԱՅԵԱՆ

Յ. Գ.- Խնդրում եմ այս տեղեկութիւնները հաղորդել Պոլիս, Եգիպտոս եւ Ամերիկա:

Ձեզանից ոչ մի նամակ չենք ստացել վերջերս, բացի Բալկանէն եկած վերջին նամակը:

ՆՈՅՆ





Մատենան 1190ա, էջ 773-4  
Նամակ թիւ 312

### 15.- ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՍԻՏԷԷՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Սոֆիա, 1915, Յունուար 15

Ընկերներ!

Մի քանի օր առաջ ձեզ ուղարկեցինք «Հորիզոն»-ի հասցեով շրջաբերական մը. շրջաբերականի բովանդակութիւնը քաղած էինք Պոլսէն ստացուած նամակէ մը: Ինչպէս կը տեսնէք Երկրի դրութիւնը շատ ծանրացեր է. բալկանեան մարմիններուն ուղղուած լինելով չուզեցինք ամէն մանրամասնութիւն գրել:

Վանի դէպքը շատ լուրջ է, եւ ոչ մի ապահովութիւն չկայ, որ մի երկրորդը չպատահի: Թորոսի (Ալոյեան) սպանութիւնը կատարուած է Իթքիհատի ներկայացուցիչ Հիլմիի թելադրութեամբ. երեւի գիտէք, որ Թորոսը ուղարկուած էր մերոնց եւ կառավարութեան համաձայնութեամբ, որ բանակցութիւններ կատարէ Իգտիլը: Մերինները առայժմ չեն ուզեր ցոյց տալ, որ գիտեն Իթքիհատի դերը Թորոսի սպանութեան գործին մէջ. մեզ գրուած է որ մենք էլ չաղմկենք:

Կամաւորական հարցի առիթով երկար բանակցութիւններ եղած են. մերինները պնդեր են, որ մեր դիտարկութիւնը չէ տեսնել Հայաստանը կցուած Ռուսաստանին, այլ պարզապէս պաշտպանել մեր ազգաբնակչութիւնը քրտական խժոճութիւններու դէմ եւ տեսնել երկիրը բարեկարգ: Այժմ նոյնիսկ ուշ չէ ռեւէ նպատակոր եզրակացութեան հասնելու համար, եթէ համոզուիք մի քանի զիջումներ անել հայերին եւսլլն, եւսլլն: Իբր թէ խոստացեր են անել մերոնց ցանկացածները, բայց իրապէս ոչինչ չեն արել:

Պոլսի ընկերները բոլորովին դէմ են, որ Կովկասի մամուլը շատ անվերապահ կը ցուցադրէ շարժումը, որովհետեւ այդ բոլորը կ'անդրադառնայ Երկրի կացութեան վրայ. իրենք կը յայտնեն, որ այլեւս անգոր են ռեւէ բան անելու. թուրքերը կը խուսափին իրենց հետ ռեւէ յարաբերութիւն ունենալէ: Կարինի մէջ յատկապէս Փիլոսի եւ Վահէի դէմ կայ մասնաւոր հետապնդում: Վերջապէս մերերու յոյսը արտասահմանի եւ Կովկասի շրջաններուն վրայ է:

Որոշած են, որ Վրացեանը վերադառնայ Ամերիկա, որովհետեւ այնտեղ նրա ներկայութիւնը շատ զգալի է: Եթէ համաձայնուիմ է, թող մեզ հեռագրէ:

Մրանից առաջ գրել ենք, որ մեր Կ. կոմիտէի երկու ընկերները, Պարոյր Պարոնեան եւ Պետրոս Թազուրեան, եկան ձեր շրջանը շարժմանը միանալու համար. նրանք ձեզ պէտք եղածը կը պատմեն մանրամասն. բայց պէտք կը զգանք այնուամենայնիւ մի քանի պարագաներ շեշտել: Գիտնալով հանդերձ որ մենք միակ միջոցը կարող էինք լինել երկրի եւ ձեր յարաբերու-

թիւններուն (Ռուստոնը ժամանակին ձեզ գրեց, Պոլսէն Հոկտ. 20-ով գրուածը), բայց եւ այնպէս մինչեւ այսօր ոչ մի նամակ, ոչ մի գրութիւն չուղարկեցիք մեզի՝ դէպքերը պարզաբանող, կամ մեր գործունէութեան ուղղութիւն տուող, մոռնալով թէ մեզ եւ թէ Պոլսյ ընկերներին. կարծէք Դաշնակցութիւնը շոգիացաւ[?] աշխարհի բոլոր կողմերէն, եւ Կովկասից դուրս ոչ մի հետաքրքրութեան արժանի բան չկայ. այդպէս բոլորովին մեզ կտրեցիք կեանքէն եւ պատճառ դառանք անտիրութեան[?]:

Կամաւորական հարցի առիթով մեր բազմաթիւ հեռագրերուն եւ նամակներուն պատասխանեցիք միայն լակոնական հեռագրերով, մինչդեռ այդ խնդիրը շատ կարեւոր խնդիր էր: Պալքաններուն կայ շատ լաւ, բանի պէտք գալիք մի երիտասարդութիւն: Կառավարութիւնը փոխուելուն, թէ Ռումանիա եւ թէ Բուլղարիա Պալքանը մոպիլիզացիայի պիտի ենթարկեն. արդէն Բուլղարիոյ մի քանի մասերուն մէջ ապօրինի կերպով բազմաթիւ հայաստանցիներ տարուեցան զինուորական ծառայութեան. իսկ այդ խեղճ երիտասարդութիւնը ամիսներով շարունակ աղաղակեցին Երկիր, Երկիր, Կովկաս, եւ մենք անկարող եղանք ռեւէ բան անելու, որովհետեւ առաջին օրից կաշկանդուեցանք ձեր հեռագրներով, իսկ միւս կողմէն մեր անգործունէութենէն հնչակեանները օգտուելով սկսան բոլոր անպէտք տարրերը հաւաքել եւ ուղարկել:

Ուրիշ պարագայ մը եւս.— Շարունակ Կովկաս անցնելու համար կու գան տաճկահայեր, ոչ կամաւորական նպատակով, պատուաւոր վաճառականներ, որոնք կամ պայագէտի են եւ կամ ռեւէ նոր գրաւուած վայրէ. ռուսական հիւպատոսարանը չ'ուզեր անոնց անցագրերը վիզէ ընել. միւս կողմից ճիշտ 8 օր է ժընեւէն հոս են հասել մեր ընկերներէն երեք նորաարտ բժիշկներ. անոնց եւս չեն տուեր հարկ եղած դիւրութիւնները Կովկաս անցնելու համար չնայելով որ Ազգային բիւրոյին կողմէ կանչուած են: Մի քանի օր առաջ ձեզ հեռագրեցինք, որ chancellerie-ին<sup>137</sup> հեռագրով հրաման տրուի, որ բժիշկները կարողանան [մեկնել]:

Միանգամընդմիջտ այս բոլորին վերջ դրուելու համար այդտեղէն կարգադրութիւն մ'ըրէք, որ յետ այսու Պալքանի Կ. կոմիտէի ներկայացուցած գործերուն վերաբերուին վստահութեամբ, որ եթէ մենք վկայենք ռեւէ անհատի մասին, նրանք բաւականանան եւ գործ տեսնեն. ապա թէ ոչ օրը օրին եկուորներու թիւը կը շատանայ եւ կը ստեղծուի մի անել կացութիւն:

Ընկերական բարեկեցութիւն  
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՍԻՏԷ

137.- Ֆրանսերէն – դեսպանատան դիւանատան:



Փաստ. ՍՎ. 144-19

16.- ՄԻՍՈՆ ՎՐԱՑԵԱՆԷՆ  
Հ.Յ.Դ. ԱՍԵՐԻԿԱՅԻ Կ. Կ.Ի ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

[Թիֆլիս], 1915 թ. Փետր. 20

Միրելի ընկերներ,

Կովկաս գալուցս ի վեր Ձեզանից եւ ոչ մի նամակ չեմ ստացել, չնայած, որ Ձեզ միշտ գրել եմ թէ նամակներ, թէ թղթակցութիւններ (16 հատ) եւ թէ կարեւոր լուրերը հաղորդել եմ հեռագրով: Ձեզանից միայն ստացել եմ հեռագիրներ, որոնք, սակայն, յաճախ այնպէս են աղաւաղուում, որ դժուար է լինում հասկանալ իսկական իմաստը: Միայն մի նամակ ստացել եմ Ճէսփէրից, մէկ էլ Կոբոյեանից — եւ ուրիշ ոչինչ: «Հայրենիք» էլ չեմ ստանում, որով բոլորովին գրեթէ անտեղեակ եմ այդտեղի կեանքի եւ գործերի մասին: Թէեւ ուշ, բայց նամակներ գալիս էին Ամերիկայից, ուստի խնդրում եմ ինձ պարբերաբար իրազեկ պահեցէ՛ք այդտեղի կացութեան մասին, որ ես էլ գործերն այստեղ ըստ այնմ կարգադրեմ, թէ չէ բաւական անյարմար դրութիւն է ստեղծուում:

Այսպէս, հեռագրում էք համերաշխութիւնը խանգարուելու մասին եւ պահանջում, որ այստեղից ազդեցութիւն բանեցուի, բայց ինչպէ՞ս անել այդ, երբ չենք իմանում, թէ համերաշխութիւնն այդտեղ ինչ պայմաններով է կնքուած, ի՞նչքան եւ ի՞նչպէս է հանգանակութիւն եղած, ո՞ւմ մօտ է դրամը եւ այլն: Յամենայն դէպս, ձեր հեռագիրը ստանալուց յետոյ, ես խորհրդակցեցի Ազգ. բիւրոյի հետ եւ որոշեցինք այդ մասին դիմել կաթողիկոսին. անմիջապէս նամակ խմբագրեցինք, եւ Ազգ. բիւրոյի նախագահը իր կողմից ուղարկեց կաթողիկոսին: Նամակով խնդրում էինք կաթողիկոսին, որ հրամայէ տեղիդ առաջնորդին ճանաչել Ազգ. բիւրոյի հեղինակութիւնը եւ հանգանակուած դրամները ուղարկել նրան, այլեւ յորդորել ամերիկահայ ժողովրդին լինել համերաշխ եւ աշխատել հայկ. դատի լուծման ի նպաստ: Կաթողիկոսն, անշուշտ, անմիջապէս հեռագրած կը լինի. այս օրերս ես էլ էջմիածնում կը լինիմ եւ կաթողիկոսի հետ կը խօսեմ այդ մասին:

Իսկ վերջին Ձեր ընդարձակ հեռագիրը ստանալուց յետոյ՝ խորհրդակցեցինք ընկերների հետ. ինձ համար պարզ չէր, թէ ի՞նչ դրամ էիք ուզում ուղարկել եւ ի հաշիւ ինչի՞ առաջարկում էիք փոխառութիւն անել: Փոխառութիւն անելու պէտք չկար, որովհետեւ Ազգ. բիւրոն դրամապէս դեռ չի նեղուում, բայց ընդհակառակը, մենք բաւական կարիք ունինք, մանաւանդ ինքնապաշտպանութեան համար. այդ պատճառով որոշեցինք հեռագրել, որ կամաւորների համար հանգանակուած

դրամը ուղարկէք Ազգ. բիւրոյին, իսկ «տարեկան մուտքը» առ այժմ պահէք, մինչեւ նամակ գրենք: Ես անմիջապէս Ձեզ գրեցի, երեւի արդէն ստացած կը լինէք: Կրկնում եմ եւ նորից կամաւորները համար հաւաքուած ամէն դրամ ուղարկեցէ՛ք հետեւեալ հասցէին — Tiflis, eveque Mesrop, կամ քաղաքագլուխ Ալեքսանդր Խատիսեանի հասցէին, երկուսն էլ Ազգ. բիւրոյի անդամներ են եւ միանգամայն վստահելի հասցէներ: Ես տուել էի Azovsko-Donskoy բանկի հասցէ, բայց կարելի է փոխադրել եւ Banque de Commerce-ի միջոցով: Ամերիկայից պէտք է փոխադրել Լոնտոնի եւ Պետրոգրադի վրայով: Ամերիկեան տոլարի կուրսը բաւական բարձր է: Իսկ մեր փողերը — «տարեկան տուրքեր» եւ այլն ուղարկէք նոյն բանկերի միջոցով «Հորիզոն»ին. ինձ էլ հեռագրով իմացրէք, որ այսքան փող է ուղարկուած: Դրամի այս բաժանումը անհրաժեշտ է մտցնել նրա համար, որ կան գործեր, որոնք կատարուում են միայն մեր միջոցով, հետեւաբար դրա համար եւ յատուկ միջոցներ են հարկաւոր: Քիչ եմ գրում, բայց շատ հասկացէք:

Ըստ երեւոյթին, այդտեղ պայքար կայ «կամաւորների» եւ «գաղթականների» շուրջ: Երկուսն էլ կարեւոր են — նպաստել թէ կամաւորներին եւ թէ գաղթականներին, ուստի եւ արգելք չպէտք է լինել երկուսին էլ. ով ուզում է, թող կամաւորներին տայ, ով ուզում է գաղթականներին: Միայն ինձ համար անհասկանալի է, թէ այդտեղի «ազգայինները» ինչո՞ւ են ուզում դրամը այդտեղ պահել. ինչի՞ համար. թէ, նորից մտադիր են «տոքթորի» նման «երեւելի» մարդիկ ուղարկել այստեղ, «ազգը փրկելու» համար: Ի սէր Ալլահի, արգելք եղէ՛ք այդպիսի յիմարութիւնների եւ ծիծաղելի դրութեան մէջ մի դնէք ամերիկահայ գաղութը: Այստեղ մարդ ունենալու ո՛չ մի կարիք չկայ: Կարող, վստահելի եւ հեղինակաւոր մարդիկ այստեղ շատ կան գործի մէջ:

Դուք պնդում էք դարձեալ, որ կամաւորներ պիտի ուղարկէք: Խորհրդակցելով այստեղ, ես նորից ստիպուած եղայ հեռագրել, որ առ այժմ պէտք չէ: Եւ ուրիշ կերպ չի էլ կարելի: Այդտեղի մարդկանց հոգեբանութիւնը ինձ ծանօթ է, եւ հասկանում եմ, որ ամէնքն էլ ուզում են գալ, իրենց արիւնով նպաստել սուրբ գործին: Բայց ազգային գործերում միայն զգացումով չի կարելի դեկավարուել: Կայ եւ ոյժերի ու միջոցների ամենայարմար գործադրման միջոցը: Իսկ այդ՝ ստիպում է միշտ ժխտողական պատասխան տալ, եւ ահա





Թէ ինչու: Կառավարութիւնը ոչ մի պայմանով չի կարող աւելացնել մեր կամաւորներին թիւը. հազար ու մի բանակցութիւններէ յետոյ հազիւ յաջողուեց մեր կամաւորներին թիւը հասցնել 7000-ի, բայց այն էլ դժուարանում է մի մասին գէշնք տալ: Պատճառները մասին — յետոյ: Փաստը այն է, որ այդ թուից աւելի կամաւոր չենք կարող ունենալ: Արդ՝ այդ թիւը լրացնելու համար այստեղ աւելի քան բաւարար չափով մարդիկ կան. նախ՝ կան շատ տաճկահայ փախստական գինուորներ, ապա կան շատ հայդուկներ՝ տաճկահայ ու պարսկական յեղափոխութիւնից, այլեւ հայ-թաթարական ընդհարումների ժամանակներից մնացած: Բացի այդ վերջին տաճկահայ 100,000 գաղթականների, ինչպէս եւ առաջ գաղթածների միջից կան. անկարելի է նաեւ մերժել ռուսահայ երիտասարդութեան: Սրանք բոլորը արդէն լրացնում են պահանջուած թիւը: Դրանից զատ ստիպուած ենք հաշուի առնել Պուլգարայի եւ Ռումանիայի երիտասարդութեան վիճակը. պուլգար եւ ռուման կառավարութիւնները յայտարարել են, որ եթէ ընդհանուր զորաշարժ լինի, բոլորին անխտիր գինուոր են առնելու: Այդտեղի մեր երիտասարդութիւնը ազատելու համար, ստիպուած ենք նրանցից էլ որոշ չափով օգտուել, թէեւ այնտեղ էլ հեռագրել ենք, որ մարդ չուղարկեն: Այսպիսով պատրաստ ուժերը 2-3 անգամ աւելի են, քան եղած պահանջը. նոյնիսկ վերջերս ստիպուած եղանք Ռումանիայից եկած հարիւրաւոր մարդկանց մերժել, եւ խեղճերը թշուառ վիճակի մէջ մնացին: Այս պայմաններում կարելի է Ամերիկայից նոր մարդիկ բերել եւ բարոյական ի՞նչ իրաւունքով, այստեղ հերթի սպասող հարիւրաւոր երիտասարդներին պիտի մերժենք եւ հազարաւոր տղարներ ծախսելով՝ այդտեղից կամաւորներ պիտի բերենք: Ոյժերի եւ միջոցների խնայողութեան տեսակէտից դա, ի հարկէ, անիմաստ մի քայլ կը լինէր: Ընդհակառակը, արդարութիւնը եւ գործի շահը պահանջում են, որ այն դրամը, որ պիտի ծախսուի այդտեղից այստեղ ուղարկուելիք մարդկանց վրայ, ուղարկուի այստեղ, արդէն պատրաստ ոյժերը շարժման մէջ դնելու համար: Ճիշտ է, այդպիսով ամերիկահայութիւնը անմիջական-ֆիզիքական մասնակցութիւն չի ունենայ այս ազատագրական շարժման մէջ, բայց ի՞նչ արած. պէտք է հաշտուել հանգամանքների հետ: Ի հարկէ, այս արգելք է, որ այդտեղ ցանկացող երիտասարդութիւնը արձանագրէք եւ ցուցակները միշտ ունենաք ձեզ մօտ. պէտք եղած դէպքում անմիջապէս կը հեռագրուի ձեզ, եւ նրանք կը գան: Արձանագրելիս անհրաժեշտ է խիստ բժշկական քննութեան ենթարկել եւ միայն կատարելապէս առողջներին արձանագրել. սեռական հիւանդութիւն ունեցողին, կամ երբեքից ունեցած ու բժշկուածին ոչ մի պայմանով չընդունել: Արձանագրելիս, ի հարկէ, պէտք է բացատրէք, որ կ'ուղարկուին միայն այն ժամանակ, երբ Թիֆլիսից պահանջ լինի:

Վարդուց է Ազգ. բիւրոյի կողմից մտադրութիւն կայ

մի մարդ ուղարկել այդտեղ թէ հանգանակութեան եւ թէ կամաւորների գործը կազմակերպելու, եւ թէ ամերիկահայ գաղութին ծանօթացնելու կամաւորական շարժման մանրամասնութիւնները հետ: Ազգ. բիւրոյի կողմից առաջարկուեց, որ ես գամ, բայց ոչ ես կարող էի գալ, թողնել այստեղի գործերը, ոչ էլ ընկերները կարող էին համաձայնել, որ ես հեռանամ: Ես առաջարկեցի խնդրել Ահարոնեանին, որ անցնի Ամերիկա: Ազգ. բիւրոն ընդունեց եւ որոշուեց գրել ու խնդրել Ահարոնեանին, որ յանձն առնի այցելել Ամերիկա: Եթէ համաձայնի, շատ լաւ կը լինի. այսպիսի մոմենտների համար, երբ հարկաւոր է մարդկանց նեարդների վրայ ազդել, Ահարոնեանը շատ լաւ կը լինի: Եթէ գայ, աշխատեցէք նրա այցելութեան նեղ կուսակցական գոյն չտալ. մի հոյակապ շարժում ստեղծեցէք, ինչպէս եղաւ Ակնուսու ժամանակ:

Ես, ուզեմ-չուզեմ, մինչեւ պատերազմի վերջը այստեղ պիտի լինեմ: Առ այժմ Զինուորական մարմնի մէջ եմ եւ աշխատում եմ Թիֆլիսում թէ՛ Կարգադրիչ մարմնի եւ թէ Ազգ. բիւրոյի մէջ: Մարտից սկսած դուրս եմ գալու խմբերի այցելութեան եւ ապա դարձեալ մնալու եմ Թիֆլիսում: Շատ աշխատեցի որեւէ խմբի հետ գնալ, Անդրանիկն էլ շատ ստիպեց, որ իր հետ գնամ, բայց գործերն ու ընկերները արգելք եղան: Պատերազմը, երեւի, ամառը կը վերջանայ, եւ պատերազմից յետոյ կը մեկնիմ Ամերիկա, ուր, հաւանաբար, կը լինեմ սեպտեմբերի մէջ: Այս անգամ կը գամ, որպէսզի ամերիկահայերին «քշեմ» դէպի ազատուած հայրենիք: Ամերիկայում կը մնամ մի քանի տարի, մինչեւ որ բոլոր ամերիկահայերին վերադարձնենք հայրենիք. յետոյ կը հաւաքենք «Հայրենիքը» իր խմբագիրներով, գրաշարներով, տպարանով եւ կը տեղափոխուենք Երկիր՝ Հայաստանի սրտում շարունակելու համար հրատարակութիւնը:

Կատակ չեմ անում, ինչ էլ լինի, այս անգամ մեր հարցը պիտի լուծուի եւ, հակառակ բոլոր կասկածների, ուզում ենք յուսալ, որ լուծուելու է ի նպաստ մեր, Հայաստանի, այսինքն հայկական վիլայէթների եւ Կիլիկիայի աւտոնոմիային. միանգամայն հնարաւոր է համարուում քաղաքական շրջաններում, այդ մասին առ այժմ լաւ տրամադրութիւն է տիրում: Յոյս կայ, որ թէ՛ Ռուսաստանը եւ թէ Անգլիան ու Ֆրանսիան ոյժ կը տան մեր պահանջներին, եւ մօտիկ ապագայում կը ստեղծուի ազատ Հայաստան: Յամենայն դէպս այդ յոյսով ենք ապրում բոլորս եւ միայն դրա համար աշխատում:

Կամաւոր գնդերի մասին մանրամասնօրէն գրել եմ թղթակցութիւնների մէջ, երեւի խմորատիպ «Լուրերն» էլ ստացել էք: «Լուրերը» իմ կազմածն են, հետեւաբար աւելացնելիք շատ բան չունեմ: Հիմա գնդերը, ինչպէս եւ ամբողջ ռուս բանակը, սպասողական վիճակի մէջ են, բայց շուտով, երեւի, կուլաները կը սկսեն, եւ մերոնք էլ կը մասնակցեն: Հիմա կառավարութեան հետ համա-







ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

ձայնութեան եկանք, որ մեր խմբերը բոլորը տեղափոխենք Սալմաստի եւ Բայազիտի գծերի վրայ եւ կազմենք չորս բաժանումներ: Սա այն առաւելութիւնը ունի, որ մեր խմբերը կը լինեն կենտրոնացած եւ աւելի պատկառելի ոյժ կը ներկայացնեն, այլեւ կը լինեն խիտ հայութիւն ունեցող վայրերում, եւ նրանց ռազմական եւ քաղաքական նշանակութիւնը աւելի բարձր կը լինի: Վերջին արձակուրդներին այստեղ էին մեր բոլոր խմբապետները – Անդրանիկ, Քեռի, Համազասպ, Գարօ եւ այլն: Այժմ բոլորն էլ գնացել են արդէն իրենց տեղերը: Դրոն էլ բոլորովին առողջացել է եւ շուտով գործի կ'անցնի: Օգտուելով խմբապետների այստեղ լինելուց՝ քաշել տըւհինք բոլորի պատկերները: Մի քանի օր առաջ ձեզ ուղարկեցի մի ձոխ հաւաքածու – մօտ 45 նկար: Երբ ստանաք, տուէք թէ թերթի մէջ եւ թէ առանձին հրատարակէք: Թերթի քըթերը<sup>138</sup> այն մեծութեամբ շինել տուէք, որ յետոյ կարելի լինի բաց նամակներ էլ հրատարակել: Օգտուեցէք առիթից եւ հրատարակեցէք մի քանի հարգար բաց նամակներ – աշխատեցէք միայն գեղարուեստական բան անել: Կարող էք հրապարակել նաեւ մեծադիր նկարներ, այլեւ օգտուել մոգական լապտերի համար: Պատկերների բնագիրները պահեցէք: Անդրանիկի պատկերը չկարողացայ հասցնել, բայց նրա լաւ պատկերը կայ Չըլսի մեր կողմում. առէք այնտեղից: Աստիճանաբար կ'ուղարկեմ ուրիշ պատկերներ. լաւ նկարներ կ'ունենամ երբ դիրքերը գնամ. հետո տանելու եմ առանձին նկարիչ: Այստեղ որոշել ենք պատկերներից ստացուած շահը յատկացնել կամաւորների ընտանիքների օգտին, բայց դուք կարող էք արդիւնքը յատկացնել «Հայրենիք»ին, եթէ նրա նիւթականը լաւ չէ: Բացի այդ, ես կ'առաջարկէի այդ պատկերները տալ եւ ամերիկեան թերթերին թէ՛ Պոստոնի, թէ՛ Նիւ-Եորքի, օրինակ “Times”-ի կամ ուրիշների կիրակի օրուայ թուերին. կարող էք նաեւ կամաւորների մասին կոկիկ յօդուած կազմելով՝ պատկերները տալ “Metropolitan”-ի պէս գեղարուեստական թերթերին: Թող խորհէ՛ք զբաղուել մի քիչ այդ գործով:

Արդէն հեռագրել եմ Ձեզ Ազգ. բիւրոյի համազուտարի մասին, մանրամասնութիւնների մասին կը գրեմ վաղը մի թղթակցութիւն: Այստեղ էլ [կը] տամ մի քանի թղթակցութիւն: Համազուտարին մասնակցում էր մօտ 100 հոգի, որից մօտ 70ը եկած զանազան քաղաքներից: Ո՛չ մի հայաբնակ քաղաք համարեա չէր մնացել, որ իր ներկայացուցիչը չունենայ: Ներկայացուցիչներ ընտրուել են հասարակական հաստատութիւններից, համայնքներից եւ դասակարգերից: Շատ հետաքրքիր էր ժողովի կազմը. մեր հոսանքի մարդիկ ճշող տոկոս էին կազմում, հակառակ որ մենք ամէն կերպ աշխատում էինք, որ մերոնք շատ չլինին եւ առաջ էինք քաշում ուրիշներին: Ի հարկէ, ոչ... գէնջողականներ կային, ոչ վերակազմեալներ, ոչ էլ ռամիկներ: Դրանց եւ ոչ մէկի հոտն անգամ չկայ կովկասում, իսկ ռամիկների ու վերակազմեալների անունը անգամ չէ լսուած: «Գէնջող-

լականները» մասին արդէն գրել եմ. այդ անպիտանները իրենք էլ խայտառակ եղան, հայի անունն էլ արատաւորեցին: Ժողովին մասնակցում էին բոլոր դասակարգերի եւ բոլոր յայտնի հաստատութիւնների ներկայացուցիչներ: Ժողովը վաւերացրեց կամաւորների համար մշակուած նախահաշիւը – տարեկան 2.5 միլիոն ռուբլի, որ պէտք է հաւաքուի: Ի հարկէ, այս փողի մեծ մասը պիտի տան Պետրոգրադը, Մոսկուան եւ Հիւսիսային Կովկասի քաղաքները: Ժողովը իր հաւանութիւնը յայտնեց Ազգ. բիւրոյի դիւանագիտական քայլերին եւ առաջարկեց շարունակել նոյն ընթացքով: Ժողովը բուռն ծափահարութեամբ լսեց Ձին [ուրուական] մարմնի գործունէութիւնը եւ իր հաւանութիւնը յայտնեց նրան: Ապա միաձայնութեամբ որոշեց, որ կամաւոր խմբերի գոյութիւնը անհրաժեշտ է, եւ առաջարկեց շարունակել նրանց կազմակերպումն ու պահպանումը: Ի վերջոյ ժողովը կազմեց Ազգ. բիւրոյի Կանոնադիր ընտրեց Ազգ. բիւրոյի նոր կազմը 15 հոգուց բաղկացած: Համբ. Առաքելեանը իւրայիններով կազմել էին թեկնածուների մի ցուցակ՝ բացառապէս մշակականներից բաղկացած, իսկ մեր կողմից առաջարկուեց մի ցուցակ՝ բոլոր հոսանքների պատկանող մարդկանցից, որը եւ ընտրուեց ձայների ճնշիչ մեծամասնութեամբ: Ահա Ազգ. բիւրոյի նոր կազմը, որը անհրաժեշտ է, որ դուք էլ գիտնաք եւ պէտք եղած դէպքում, «ազգային ճիւղերի» կոկորդը խրէք: Ընտրուեցին Թիֆլիսի քաղաքապետ Ս. Խատիսեան, Բարեգ [ործական] ընկ. նախագահ Ս. Յարութիւնեան, Ներսիսեան դպրոցի տեսուչ Յ. Խուսնունց (անկուսակցականներ): 2) Տ. Աֆրիկեան, Հ. Մելքեան, Մ. Քալանթարեան, Ս. Պօղոսեան, Գիւլպէնկեան (վաճառականներից), բժ. Ստեփանեան, փաստաբան Յ. Սպենդիարեան (Մշակականներից), բանաստեղծ Յ. Թումանեան, պատմագէտ Լէօ, Աւ. Սահակեան, Յ. Արղութեան եւ Յ. Ամիրխանեան: Ինչպէս տեսնում էք, բոլոր հոսանքներին տեղ է տրուած: Ազգ. բիւրոյի նիստերին Ձին. Մարմնի կողմից մասնակցելու են Ն. Աղբալեան, Ա. Գիւլխանդանեան եւ Ս. Վրացեան: Այս կազմը, յոյս ունինք, բոլորին էլ բաւարարութիւն կը տայ, բոլորն էլ թէ հասարակութեան եւ թէ կառավարութեան համար միանգամայն վստահելի մարդիկ են: Ժողովից յետոյ գաւառի ներկայացուցիչների հետ մենք ունեցանք մի քանի խորհրդակցական նիստեր այն հարցերի մասին, որոնք ժողովը հնարաւորութիւն չունեցաւ զբաղմունքի առարկայ դարձնելու:

Ձեր դեկ. 25-ի ժողովի մասին իմացայ Կոբոյ [եան]ի նամակից: Ուրախ եմ, որ լաւ է անցել: Ընտրութիւնն էլ լաւ է, թէ եւ մի քիչ ցրուած է եւ ժողովների տեսակէտից որոշ անյարմարութիւններ ունի: Չիմացայ, սակայն, թէ ինչպէս կարգադրեցիք «Հայրենիք»-ի գործը. ըստ իս լաւագոյնը կը լինէր, եթէ Համբարձումեանը մի տարի գոհէր եւ Շահանի<sup>139</sup> հետ տանէին. ես վստահ եմ, որ

138.- Անգլերէն – կտրուածքները:  
139.- Շահան Նաթալի:





չատ լաւ կերպով կը վարէին թերթը: Չգիտեմ նաեւ, ո՞վ է Կ. Կ.ի քարտուղարը — Դարբինը մնաց, թէ նորից փոփոխութիւն եղաւ. շատ պիտի ցաւիմ, եթէ հեռացել է: Առհասարակ, մարդկանց արագ փոփոխութիւնը շատ է վնասուում գործին: Իսկ մէնէճիրութիւնը<sup>140</sup> — Սանտա՛լը մնաց, թէ՞ նոր մարդ եկաւ: Խորէ՞նը ինչ է անում. Ուէստում թափառո՞ւմ է, թէ Պոստոն է գտնուում: Ափսո՛ս հիմա նա Կովկաս պիտի լինէր. իր եռանդը շատ օգտակար կը լինէր այստեղ: Արսէ՞նը<sup>141</sup> ինչպէս դուրս եկաւ. անշուշտ, գոհ էք: Անցեալները ժընեւից մէկը գրել էր ինձ, որ Մնարը<sup>142</sup> Գերամանիայում պահուում է իբրեւ գերի. աշխատում են ազատել, բայց չի յաջողուում: Շատ լաւ կը լինէր, եթէ նա այժմ գտնուէր Ամերիկայում, ուր այնքան մարդկանց պէտք կայ: Արդեօք չէ՞ր կարելի Ամերիկայի գերմանական դեսպանի միջոցով նրան պրծեցնել:

Պոլսից երբեմն-երբեմն ստանում ենք նամակներ Բուրգարիայի միջոցով: Վերջին անգամ Պոլսից գրել էին, որ ես անմիջապէս մեկնիմ Ամերիկա: Ի հարկէ, չէի կարող: Գրում են նաեւ, որ մեր ընկերները իբրեւ պատանդ պահուում են. Շահրիկը, Ակնունին, Արծիւեանը<sup>143</sup> փորձել են մեկնել Արտասահման, բայց կառավարութիւնը չի թոյլ տուել: Ինչ կը լինի նրանց վերջը — Ալլահը գիտէ, թէ այժմ Ալլահն էլ կորցրել է իր ամբողջ կարողութիւնը:

Անցեալ օր եկան 6 հոգի Նիւ-Պրիթլից կամաւոր գրուելու համար: Խեղճերը մօտ 2 ամիս ճանապարհ են անցել Յունաստանի վրայով, մինչդեռ հիւսիսային ճանապարհը աւելի կարճ է: Նրանց, ի հարկէ, անմիջապէս ընդունեցինք. մի հոգի էլ եկաւ Նիւ-Շորթից՝ Տէր-Յակոբեան, եւ 2 հոգի էլ ունինք Լօուէլից: Երբ Ամերիկայից եկողներ եմ տեսնում սիրտս լեցում է ուրախութեամբ: Պէտք է ասել, որ շատ եմ կարօտել Ամերիկայի ընկերներին եւ բոլորիդ: Այստեղ աշխատանքը այնքան շատ է, որ երանի եմ տալիս Ամերիկայի կեանքին:

Այսքան երկար նամակ չկարծէք, որ հետեւանք է շատ ժամանակ ունենալու: Ո՛չ, ձեր բախտից վերջերս հիւանդացայ, բաւական ծանր, թոքերի բորբոքումով մօտ 15 օր «անկողնին ծառայեցի», ինչպէս ասում են հոսհոսները<sup>144</sup>: Անկողնում էլ գրում էի ձեզ յօդուածներ, այդ է պատճառը, որ գրուած են մատիտով եւ այսպէս անշնորհ կերպով: Հիմա սկսեք եմ լաւանալ. այսօր առաջին անգամ բժիշկները թոյլ տուին սենեակում պտտել, իսկ 3-4 օրից, եթէ տէրը կամենայ, բոլորովին

կ'առողջանամ եւ կը սկսեմ գործի: Գործի որ սկսեցի, էլ այսպէս երկար նամակների երես չէք տեսնի:

Այս օրերս սպասում ենք այստեղ Ռոստոմին ու Վարանդեանին, որոնք լաւ լուրեր կը բերեն Եւրոպայից:

Շատ պէտք ունինք 12 անգամ մեծացնող հեռադիտակների. այստեղ չի ճարուում, արդեօք չի՞ գտնուի այդտեղ. եթէ վստահ եկող լինի, 5-10 հատ ուղարկէք: Ահագին կարիք ունինք նաեւ մաուզեր տասնոցների, որոնք այստեղ չեն գտնուում: Եթէ այդտեղից կարելի է ստանալ, մենք կարող ենք թոյլտուութիւն ստանալ կառավարութիւնից ազատ մտցնելու Ռուսաստան:

Է՛, առ այժմ այսքան. մի քանի ամսից յետոյ կը տեսնուենք եւ շա՛տ բաներ կը պատմեմ:

Կարօտով եւ համբոյրներով՝  
Ձերդ Ս. ՎՐԱՅԵԱՆ

Յ. Գ.- Խնդրում եմ, այս նամակս եւ առհասարակ, բոլոր նամակներս ուղարկէք նաեւ Նիւ-Շորթ, Ջատիկն ու Կոբոյեանն էլ կարդան: Ժամանակս այնքան քիչ է, որ նրանց էլ նոյն մանրամասնութեամբ չեմ կարող գրել: Շատ գոհ կը լինէի, եթէ Ա. Ռոստիկեան լինէր ուղարկէիք: Կարող էք, ի հարկէ, լրակատարութեամբ օգտուել եւ շրջաբերականների համար: Շա՛տ բաների մասին չեմ կարող գրել ձեզ հասկանալի պատճառներով, բայց գրածներս էլ բաւական պարզում են կացութիւնը եւ այստեղի տրամադրութիւնը:

Շատ շնորհակալ կը լինեմ, եթէ ինձ ուղարկէք «Հայրենիք»ի համարները սկսած անցեալ սեպտեմբերից, այլեւ «Բացառիկը» հետեւեալ հասցէին:

Tiflis, Russie.  
Anastasievskaya, 22  
App. Chigaeff.  
Eghia Axhaeff

Հայերէն՝ յանձնել ինձ:

Այս հասցէին կարելի է ամէն անմեղ բան ուղարկել, դա իմ բնակարանս է, իսկ միւս բաների համար մնում է հին հասցէն: «Հայրենիքը», եթէ կարելի է, եւ «Ասպարէզը» շարունակաբար ուղարկէք:

«Հորիզոնը», «Հայրենիք» չի ստանում: Նրանք դադարեցրել էին ուղարկել թիւերը, բայց ես կարգադրեցի, որ շարունակեն:

Ընկ. Կարապետեան, նոտաների ցուցակը թուրք պաշտօնեաները կերան էրզրումի բանտում: Խնդրեմ, նեղութիւն քաշիւր նորից ուղարկելու. հետս կը բերեմ:

140.- Վարչական բաժնի ղեկավարութիւնը:  
141.- Միքայելեան Արսէն, կուսակցական գործիչ, նոր ժամանած Ամերիկա:  
142.- Նարինեան Միսէն, կուս. գործիչ Ամերիկայի մէջ:  
143.- Արծիւեանը՝ կուսակցական ծածկանուններէն մէկն էր Գարեգին Խաժապի:  
144.- Իմա պոլսեցիները:





Փաստ. ՍՎ. 10-14

ՀԱՅԿ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԲԻՒՐՕ

13 մարտի 1915 թ.  
Թիֆլիզ  
Լեռնոնսովկայա փողոց, 12

17.- ԲՈՍՏՈՆԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ!

Ամերիկա – Բոստոն

Գերապատիւ Ս. Մետրովը եպիսկոպոսի միջոցով Բիւրօն մարտի 7-ին ստացաւ յարգելի կոմիտէիդ ուղարկած 47061 թ. 31 կոպէկը եւ այդ մասին յայտնեց իւր սրտագին շնորհակալութիւնը:

Նոյն ճանապարհով Բիւրօն ստացաւ նաեւ քառասուն եօթ հազար քսան եւ չորս թուրի (47024 թուրի):  
Բիւրօն կրկին յայտնում է իւր սրտաբուլի շնորհակալութիւնը յարգելի կոմիտէիդ այդ առատածէնն նուիրատութեան համար:

Փոխ-նախագահ Բիւրոյի՝  
Յ. ԽՈՒՆՈՒՆՑ

Hairenik 7 Bennet st. Boston Mass  
U.S. of America

ՀԱՅԿ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԲԻՒՐՕ

13 մարտի 1915 թ.  
Թ Ի Յ Ի Բ Օ  
Լեռնոնսովկայա փողոց, 12

Բոստոնի Հ. Յ. Դաշնակցութեան  
Գլխավոր ծախսերի կոմիտէին!

Ամերիկա – Բոստոն.

Գերապատիւ Ս. Մետրովը եպիսկոպոսի միջոցով Բիւրօն մարտի 7-ին ստացաւ յարգելի կոմիտէիդ ուղարկած 47061 թ. 31 կոպէկը եւ այդ թանկ և շնորհակալութիւնը:

Նոյն ճանապարհով Բիւրօն ստացաւ նաեւ քառասուն եօթ հազար քսան եւ չորս թուրի (47024 թուրի):

Բիւրօն կրկին յայտնում է իւր սրտաբուլի շնորհակալութիւնը յարգելի կոմիտէիդ այդ առատածէնն նուիրատութեան համար:

Փոխ-նախագահ Բիւրոյի՝ *Երվանդ*

Hairenik 7 Bennet st. Boston Mass  
U.S. of America.



**ԳԼՈՒԽ VII**

**ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ ՍԵՒ ԱՄՊԵՐ  
ՀԱՅԱՇԽԱՐՀԻ ԵՐԿՆԱԿԱՍԱՐԻՆ**

Եօթներորդ այս գլուխը կ'ընդգրկէ 1914 Նոյեմբեր–1915 Ապրիլ երկարող վեցամսեայ ժամանակամիջոցը, երբ Թուրքիոյ պատերազմի մուտքով՝ սարսափներու նոր շրջան մը կ'ուրուագծուէր հայաշխարհին համար:

Նախորդող ամիսներուն հայկական նահանգներուն մէջ հալածանքները ծայր տուած էին արդէն, բռնագրաւումներով, թալան-կողոպուտով, առեւանգումներով եւ մասնակի սպանութիւններով յատկանշուած: Այժմ, պատերազմի պաշտօնական յայտարարութիւնը եւ անոր հետեւող ճիշտօրէն սրբազան կռուի կոչը ազդանշան պիտի հանդիսանային քրիստոնէաներու եւ յատկապէս հայերու նկատմամբ խուժանային գրգռութիւններու շրթայագերծումին:

Այնուհետեւ ծանօթ են դէպքերը: Յատուկ նպատակով բանտերէն արձակուած եւ մարդասպաններէ կազմուած չէթական խումբերը սանձարձակ նետուեցան հայկական գիւղերու վրայ. սպանութիւնները, այս անգամ տասնեակներով, դարձան սովորական: Բանակ կանչուած հայ զինուորները զինաթափ եղան ու դրկուեցան իբրեւ *ամէլէ թապուրի*, ճամբաներու շինութեան կամ բեռնատարութեան հետզհետէ լուրեր պիտի հասնէին անոնց խմբային սպանութեանց մասին: Քաղաքներու եւ գիւղերու մէջ բռնագրաւումները, պատերազմական կարիքներու պատրուակին տակ, ստացան թալանի երետոյթ. պիտի հետեւէր ապա հայերը տեղահանելու հրահանգը: Այս բոլորի եւ շատ ատելիին մասին մանրամասն տեղեկութիւններ կը տրուին բաժնին մէջ ներկայացուած փաստագրերով:

Ինչ կը վերաբերի մայրաքաղաքին, գլխաւոր թիրախը հոն Դաշնակցութիւնն էր, որուն ղեկավար դէմքերը կը պահուէին հսկողութեան տակ, պատանդի վիճակին մէջ: Կուսակցական մարմինները անասելի դժուարութիւններ պէտք է յաղթահարէին շրջաններուն հետ կապուելու համար: Երթելէն արգիլուած էր, իսկ գրաւոր հաղորդակցութիւնը խիստ գրաքննութեան ենթակայ: Այս պայմաններուն մէջ անոնք կ'ընէին ամէն ինչ ներքին գաւառներէն լուրեր քաղելու եւ արտաքին աշխարհ փոխանցելու համար: Այս իմաստով բացառիկ առաքելութիւն վիճակուած պիտի ըլլար սահմանակից Պալքանի Կ. կոմիտէութեան, որ շնորհիւ տեղացի բարեկամ անձնատրութիւններու եւ Պոլսոյ պուլկարական դեսպանատան պաշտօնեաներու հետ իր հաստատած կապերուն, գտած էր գրաւոր հաղորդակցութեան տարբեր ճամբաներ՝ Երկրի անցուղարձերուն իրազեկ դառնալու համար: Ստացուած տեղեկութիւնները, այսպէս, անմիջապէս կը փոխանցուէին ժընեւի կեդրոնին, Թիֆլիս՝ Հ.Յ.Դ. Արեւելեան բիւրոյին, Եգիպտոս, Ամերիկա եւ արտասահմանեան միւս մարմիններուն:

Մայրաքաղաքի ընկերներուն հետ կենդանի կապ պահելու համար Պալքանի Կ. կոմիտէն կ'օգտուէր Սոֆիայէն Պոլիս երթելէն օտարախառնակ ընկերներէ եւ օտարազգի բարեկամներէ: Այս իմաստով յատկանշական է պարագան ծանօթ հայասէր Տոքթ. Լեւիսիուսի, որ Սոֆիայի ընկերներէն անհրաժեշտ տեղեկութիւնները քաղելէ ետք, Պոլիս պիտի երթար Գերմանիոյ դեսպան Վանկենհայնը համոզելու որ փոխէ իր դիրքը հայկական հարցի նկատմամբ. փորձ՝ որ պիտի մնար ապարդիւն:

Հաղորդակցութեան ուրիշ միջոց էին թերթերը. վերջինները կ'օգտագործուէին գրաքննութենէ խուսափելու համար. նամակները կը գրուէին լրագիրներու (ընդհանրապէս օտարալեզու) լուսանցքներուն վրայ. ծածկագիր կ'ըլլային անոնք եւ գաղտնի մելանով գրուած, այդ իսկ պատճառով երբեմն դժուար վերծանելի:

Յայտնենք վերջապէս, որ Թուրքիոյ մայրաքաղաքին եւ Երկրի խորերէն ստացուած լուրերու փոխանցման եւ տարածման մարզին մէջ կարեւոր դեր պիտի խաղար Պալքանեան Կ. կոմիտէի ջանքերով 1915 թ.ի Մարտ 10էն սկսեալ Սոֆիա հրատարակուող «Հայաստան» եռօրեայ լրագիրը. թերթին այս օգտաշատ առաքելութիւնը տեւեց կիսամեակ մը. նոյն տարուան Մեպտեմբերի վերջերուն Պուլկարիա՝ Գերմանիոյ եւ Թուրքիոյ կողքին պատերազմի մտնելով, հրահանգուեցաւ «Հայաստան»ի փակումը:







**ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

Փաստ. 105ա-5

**1.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԷՆ (ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾ)  
ԲԱԼԿԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ**

*Ընկերներ!*

Երէկ ձեզ հեռագրեցինք որ ձեզ մօտ գտնուած գումարը հասցնէք մեզ, առանց ի նկատի ունենալու զեղչի %ը: Դրամ անհրաժեշտ է, եւ հնարաւորութիւն չկայ այլ կերպ հայթայթելու: Սկիզբը մենք էլ դէմ էինք այդքան վնասին, բայց միւս կողմից էլ հնարաւորութիւն չեղաւ ուրիշ տեղերից ստանալ պահանջուած գումարը:

Խնդրում ենք ներփակ հեռագիրը անմիջապէս յանձնէք հեռագրատուն. շատ կարեւոր եւ ստիպողական է: Ռոստոմը յոյս ունենք որ արդէն ճանապարհուած կը լինի: Ձեր տուած հարցի մասին Ռոստոմը պիտի խօսէր ձեզ հետ: Ուրեմն կը վարուիք այնպէս, ինչպէս որ նա ասել է: Ստացել ենք ձեր հոկտ. 13 թիւ նամակը:

*Ընկերական բարեւանքով՝  
Հ[ԱՅԱՍՏԱՆԻ] Բ[ԻՒՐՈ]Ի Պ[ՈԼՍՈՅ] ՀԱՏՈՒԱԾ*

1914 Նոյեմբեր 1

Դրամը լաւ կը լինի յատուկ մարդու միջոցաւ ուղարկէք:  
*Ն[ՈՅՆ]*

Մատեան 1190ա, էջ 607-8  
թիւ 245

**2.- Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ ՌՈՍՏՈՄԻՆ**

1914 Նոյեմբեր 10, Սոֆիա

*Յարգելի ընկ. Ռոստոմ!*

Ձեր մեկնումէն ետք բաւական անակնկալ դէպքեր պատահեցան: Երեք օր ետք կովկասեան սահմանադիր ընդհարումներու մասին լսեցինք. այդ լուրը մի ահագանգի պէս հնչեց մեր գաղութներում: Սկսաւ մի խելացնոր շարժում թէ Ռուսմանիա եւ թէ Պուլկարիա-ամէնքը կ'ուզեն կամաւոր երթալ: Նամակ, հեռագիր, թելեֆոն, աղմուկ, ինչ ասէք չարին: Ստիպուած եղանք հեռագրել Թիֆլիս, բայց պատասխան չստացանք: Որպէսզի շարժումը ինքնագլուխ չընթանայ, ստիպուած եղանք միջամտել: Շատ գաղտնի եւ զգուշաւոր ճանապարհներով դիմեցինք ռուսական դեսպանին. դիմումը անձամբ չկատարեցինք: Արգումանեանը<sup>1</sup> ծանօթացած էր մի ռուս հրապարակագրի, վստահելի անձնաւորութիւն, որը եղաւ մեր եւ դեսպանատան խողովակը: Դեսպանը համաձայնեցաւ մեր առաջարկներուն, որոնք հետեւեալներն են՝

1) Կամաւորները պիտի յատկացուին կովկասեան սահմանադիրին եւ պիտի կռուին կամաւորական

*խմբերուն մէջ.*

2) Անցագիր չունեցողներուն հիւպատոսարանը կը տայ անցագիր.

3) Մինչեւ Կովկաս՝ փոխադրութիւնը պետական հաշուով: Դեսպանը հեռագրեց Բետերբուրգ եւ Կովկասի փոխարքային: Վաղը մեզ կու տան վերջնական պատասխան:

Մինչ այդ մեր Պուլքրէշի մարմինը արդէն համանման դիմումներ ըրած էր ռուսաց դեսպանին. նա եւս համաձայնութիւն յայտնած էր: Կայացէն բաւական տղայք մեկնեցան շատ զգոյշ եւ լռելեայն. ամէն միջոց ձեռք առինք, որ շատ չաղմկուի. թերթերու մէջ գրուածները անմիջապէս զրժեցինք եւ բոլոր վայրերը հրահանգե-

1.- Արգումանեան Ստեփան. այսպէս է Հայաստանի բիրոյի Պոլսոյ հատուածին կողմէ տրուած լիազօրագիրը Պալքանի համար որկուած գործիչին: Այս անունով կուսակցական գործիչ Ժանգո չէ մեզի: Յայտնապէս խնդրոյ առարկայ անձը Խաչիկեան Տիգրանն է, Հ.Յ.Դ. Տրդ Ընդի. ժողովին Պոլսոյ պատգամաւոր, որ ծանօթ էր Արգուման ծածկանունով: Լիազօրագիրը՝ Արգումանեան Ստեփան անունով, տրուած պիտի ըլլայ զուշատորութեան նկատմով:







ցինք խստիւ արգելել անպատասխանատու մարդկանց հրապարակ նետուել եւ անկարգ եւ անզգոյշ եղանակով գործին միջամուխ լինել, ինչպէս օրինակ Վառնայի թաղակ. խորհուրդը, որ օգտուելով մեր տեղակ. մարմնի ձեռնպահութենէն 110 կամաւորներ, առանց ընտրութեան ղրկած էր Ռուսճուք, ուրկէ Ռուսաստան անցնելու համար պուլկարական ոստիկանութիւնը արգելքներ էր յարուցեր: Վերջին պահուն մեզ դիմեցին. մենք եւս ներքին գործոց նախարարին դիմեցինք: Երկար դժուարութիւններէ ետք թոյլ տրուեցաւ սահմանէն անցնել, հաշուելով, որ ատոնք անգործ մարդիկ են, սովէն չջարդուելու համար կ'երթան ապրուստ հայթայթելու: Մեր ընկերներէն մին երէկ ղրկեցինք Ռուսճուք՝ անձամբ հսկելու առաջման գործին: Այս զգուշաւորութիւններով յոյս ունինք անաղմուկ կերպով գործը տանիլ:

Առ այժմ կան կամաւորներ հետեւեալ վայրերը. Պուրկազ՝ 150 հոգի, Սոֆիա՝ 50, Ֆիլիպպէ՝ 100, Տէտէ-Աղաճ՝ 50, Ռուսճուք՝ 190, Կալայց՝ մաս մը ղրկած են, դեռ կան 80-100-ի չափ, Պրայլա՝ 110, Քոսթանցա՝ նոյնքան, Պուքրէշ՝ 150-200. նմանապէս կայարանները աշխատող բաւառացի բազմաթիւ պանդուխտներ:

Ձեր մեկնելէն մի օր ետք Պետոն վերադարձաւ. ամէն ինչ լաւ կարգադրած էր. թղթակցական միջոցը (պուլկարական հիւպատոսարանի ճանապարհով) սկսած ենք գործածել: Լեաբովը<sup>2</sup> մեզ յայտնեց, որ իւրաքանչիւր 10 օրը մի մասնաւոր թղթատար կը հասնի Պոլսէն պուլկարական արտաքին գործոց նախարարութիւն. մենք պիտի կարողանանք տոքթոր Նիկոլօֆի հասցէով ղրկել մեր գրութիւնները: Արգումանեանը ծանօթացաւ Նիկոլօֆին, որը խոստացաւ իրեն աջակցութիւն ընել: Այդ թղթատարը թուրքերու կողմէ բոլորովին անձեռնմխելի է: Նիկոլօֆը յանձն առաւ մերիններուն տալ ամէն կարգի դիւրութիւն ի հարկին Պոլսէն հեռանալու համար: Այդ անձնաւորութիւնը այնտեղ (Կ. Պոլսում) որոշ

քաղաքական միասիա ունի. մի տեսակ կապ է թուրք վարիչներու եւ պուլկար կառավարութեան միջեւ. նախկին յեղափոխական է եւ մեզ հետ գործակցել: Նիկոլօֆը պիտի տեսնուի խաչատուրին<sup>3</sup> հետ պուլկարական հիւանդանոցում, ուր ինք բժիշկ է: Եթէ ոեւէ կարեւոր գրութիւն պէտք լինի այդտեղէն ուղարկել Պոլիս, կարող էք հոս ուղարկել, մենք կը փոխադրենք:

Թուէս մի շաբաթ առաջ Մարգպետը<sup>4</sup> Պոլսէն եկաւ, բացատրելու համար թղթակցութեան համար մի քանի կարեւոր զգուշութիւններ, եւ միաժամանակ տեղեկութիւններ տալու մեր եւ թուրքերու յարաբերութիւններու մասին: Նրա ասածներէք երեւում է, որ արտաքին լաւ յարաբերութիւններ սկսած են մեր եւ թուրքերու միջեւ. ուրիշ նորութիւններ չասաւ. կարծեմ այդտեղ ուղարկել են մի նամակ. մանրամասնութիւններուն կը տեղեկանաք: Երկու օր մնալէ ետք, գնաց Ֆիլիպպէ, անկէ էլ Պոլիս:

Պոլսէն նոր հասնող փախստականները սեւ[?] գոյնբով կը ներկայացնեն այնտեղի ներկայ պատկերը. մոլեռանդութիւններ, սադրանքների տեսարաններ պատահեր են, որոնց մասին երեւի թերթերէն տեղեկացած կը լինիք:

Նամակ չենք ստանար Պոլսէն, ոչ էլ Կովկասէն. Արգումանեանը Պոլսի ընկերներու հրահանգով չպիտի ելնէ շրջանները, որպէսզի տանի փոխ-յարաբերական գործը. առանց այն էլ նա արդէն կը տանի շրջաններու հետ թղթակցութեան գործերը եւ տեւաբար չի կրնար Սոֆիան թողուլ:

Վաղը Արգումանեանը կը տեսնուի Վասիլեւի հետ, պուլկարական խորհրդարանի անդամներից, ----- փօֆի<sup>5</sup> կուսակիցներէն է. մեր ամենալաւ բարեկամներից է, զոր դուք էլ կը ճանչնաք. ուզած է մանրամասն տեղեկութիւններ տալ պուլկարական քաղաքականութեան մասին:

Ընկերական բարեկներով  
Հ.Յ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
ՊԱՒՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԷ

2.- Լեաբով՝ մակեդոնացի ծանօթ յեղափոխական, դեկավար դէմք, Դաշնակցութեան իմ բարեկամներէն, որ կը գործածէր նաեւ Ջաւէն Արշակունի ծածկանունը: Խնդրոյ առարկայ հարցը կը վերաբերի Պալքանի Կ. կոմիտէին եւ Պոլսոյ միջեւ հաղորդակցութեան կապի պահպանման:

3.- Մալումեան Խաչատուր (Է. Ակունի):  
4.- Մարգպետ – դաշնակցական ծանօթ գործիչ, իսկական անունը՝ Ղազարոսեան Ղազարոս:  
5.- Անդրեանի անուն:

Յոյս ունինք, որ բաւական յաջող հանգանակութիւն պիտի կրնանք ընել. գաղութի տրամադրութիւնը շատ բարձր է, եւ դէպի մեր կուսակցութիւնը հաւատք եւ համակրանք աւելցած է:



Փաստ. 1402-53

3.- ՏԻԳՐԱՆ ԽԱՉԻԿԵԱՆԵՆ ԱՍԵՐԻԿԱ՝ ԱՐՄԷՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻՆ

Միրելի Արսէն՝

Ստացայ 12 նոյ. նամակդ: Մանրամասնօրէն պատմեմ ինչ կատարուեր է քո գնալէդ ետք եւ ինչ որ կատարուեմ է այժմ:

Նախ թուրքիայում.— Զօրահաւաքը շարունակուեց նոյն խստութեամբ մինչեւ հոկտ. 26. կողոպուտներով եւ ամէն անօրինութիւններով: Քո մեկնելէն քիչ ետք սկսաւ մասնաւոր անվստահութիւն դէպի մերերը: Թուրքերը, իթիհատականները վերահասու եղան, որ մերիններէն շատերը անցած են Կովկաս. քո դեռ Պոլիս եղած ժամանակը գիտես, որ Գարոն<sup>6</sup> անցաւ եւ նրա հետ ուրիշներ. Սամսոնի վահանը<sup>7</sup> նոյնպէս անցաւ Կովկաս. վարդանը<sup>8</sup> պատերազմէն երկու օր առաջ անցաւ նոյնպէս Կովկաս. Տրապիզոնի տղաներէն շատերը փախան: Ռոստոմը քշած էին Պոլիս. նա պատերազմէն մի օր առաջ եկաւ Պուլկարիա, անցաւ ժընեւ: Այժմ Պոլիս կը մնան Խաթալը, Սարգիսը<sup>9</sup>, Ակնունին, Զարդար[եանը], Շահրիկ[եանը] եւ մեր գրեթէ բոլոր թրքահայ ընկերները: Սիմոնը<sup>10</sup> նոյնպէս քշուած էր էրզրումից, մեր մեկնելէն (Պոլսէն) մի քանի օր ետք: Թիֆլիս է այժմ:

Մի ամիս առաջ հեռագիր ստացանք Թիֆլիսէն, որ մեր բոլոր ընկերները կարող են անցնել Կովկաս: Բայց մերոնք չուզեցին երկրից հեռանալ, նախ որպէսզի խուճապ չսկսուի ժողովրդի մէջ եւ որ գլխաւոր է կառավարութիւնը չկասկածի:

Մի քանի օր առաջ Ակնունին ուզեր է Պուլկարիա անցնիլ, նրան արգելել են, իբրեւ ռուսահպատակի:

Թէ Պոլսում եւ թէ գաւառները մեր շրջաններում կատարել են ձեռքազրկութիւններ. էրզրումում օրինակ Փիլոսը եւ վահանը<sup>11</sup>, բայց ետքէն բաց թողուցին Պոլիս՝ նոյնպէս մի քանի տղաներ. այժմ բոլորն էլ ազատ են: Ճէմիլը<sup>12</sup> որ Կիլիկիա դրկուած էր, ճառ ասելուն համար աքսորել են Տիգրանակերտ, ուր գինուորական ծառայութիւն կ'ընէ այժմ:

Մերոնց հետ թէ Պոլսում եւ թէ գաւառներում թուրքերը ձեւականօրէն կը շարունակեն բարեկամ մնալ:

Ազատամարտը մինչեւ այժմ անձեռնմխելի մնացած է. միայն էրզրումում արաբական զօրքերը աւրչտկել են Դաշնակցութեան տունը: Մոռացայ ասելու, որ Մշուած մեր Գեղամը<sup>13</sup> բանտարկել են, կուժն ու պէլան նրա գլխին է պայթել:

էրզրումում եւ Կիլիկիայում, ինչպէս եւ վանում կառավարութիւնը գործադրեց մի քանի մահապատիժներ հայերու վրայ, որոնք ամբաստանուած էին իբրեւ գինուորակ. փախստականներ: Այրեցին նոյնպէս մի քանի տներ, որոնք փախստական գինուորներու ընտանիքին կը պատկանէին: Զէյթունում սպանեցին յայտնի հերոս՝ Նազարէթ Չաւուշը, ամբաստանելով զայն իբրեւ գինուորական փախստականներ թագցնող:

Շարունակուեմ են մասսայական գինաթափութիւն հայ գինուորներու. տեղ տեղ մերերը լուրջ ընդդիմութիւններ ըրած են եւ զէնքերը չեն յանձներ. այդ բանը մեծ տպաւորութիւն գործում է թրքական շրջանակներուն վրայ, որոնք շատ էլ համամիտ չեն այդպիսի չափերով գինաթափման. այս բանը գլխաւորաբար գործն է գերմանական սպաներուն:

էտիրնէն Պոլիս, Պոլսէն մինչեւ Տրապիզոն, ամբողջ Կիլիկիայում եւ Հայաստանում գրեթէ բոլոր հայ արական սերունդը թափուած է խրամատներու մէջ, գինուորական ծառայութեան պատրուակով. նրանց կատարել են տալիս եգիպտական բրգաշէն գերիներու ֆիզիքական աշխատանք. իսկ Հայաստանի ամբողջ գիւղերը ողողուած են հարաւէն եկած արաբական զնդերով, որոնք ամէն հարստահարութիւն կ'ընեն այդ շրջաններում:

Վանի շրջանէն տեղեկութիւններ չկան. Կոմսը, Վուամեանը, Իշխանը եւ բոլոր ընկերները այնտեղ են. Ռուբէնից լուր չունեմ<sup>14</sup>:

Մի քանի օր առաջ լուր առինք Պոլսէն, որ Շահրիկեանը պիտի գայ մեզ մօտ, անկէ Կովկաս անցնելու համար. դեռ չեկաւ.

Սուրբ պատերազմ յայտատարուելու ժամանակ Պոլսում ֆանատիզմի խայտառակ տեսարաններ տեղի ունեցան. ամբողջ աւրչտկեց ռուսաց գերեզմանատունը

6.- Արմէն Գարօ (Փաստրմաճեան Գարեգին):  
7.- Սամսոնի վահանը՝ Մինախորեան վահանն է:  
8.- Խանասարի վարդանը՝ Մեհրաբեան Սարգիս:  
9.- Բարսեղեան Սարգիս, անդամ Հայաստանի բիւրոյին:  
10.- Վրացեան Սիմոն:  
11.- Փիլոս կամ Մարալ՝ Փափախեան Փիլոս. վահան՝ հաւանաբար Թորքաճեան վահան:

12.- Ֆերիտ Գեմիլ կամ Տիգրան Ծամհուր, բուն անունով Ամսէեան Տիգրան:  
13.- Տէր Կարապետեան Գեղամ, պետական երեսփոխան Մուշի:  
14.- Յաջորդաբար՝ Փափաղեան վահան (Կոմս), Վուամեան Արշակ, Պողոսեան-Միքայէլեան Նիկոլ (Իշխան) եւ Տէր Սիմասեան Ռուբէն:





(1878-ի ընկածներու) եւ Բերայի բոլոր այն հիմնարկութիւնները, որոնք պատկանում էին Երրեակ համաձայնութեան հպատակներուն. աւերեցին եւ Թոքաթլեանը<sup>15</sup>, որը այժմ բանեցնում է մի աւստրիացի հրեայ: Փակագծի մէջ աւել, որ հրեաները շատ ստորութիւններ կը գործեն Պոլսում, օգտուելով առիթներէրից եւ խլելով տնտեսական գերակշռութիւնը հայերի եւ յոյներու ձեռքից: Արդէն հիմնադրուած կործանեցին բազմաթիւ հայ եւ մանաւանդ յոյն առեւտրական տներ. յոյներու վիճակը մանաւանդ շատ անտանելի դարձած է: Ճանապարհին, Սիրքէճիէն Ադրիանապոլիս, տեսայ այն կարաւանը փախստականներու. այժմ այդ պատկերը հարիւրապատկուեր է:

Պուլկարիոյ եւ Պոլսոյ միջեւ ամէն յարաբերութիւն կանոնաւոր է մինչեւ օրս: Գրաքննութիւնը շատ խիստ է Պոլսում:

Բոլոր նամակները perustration-ից<sup>16</sup> կ'անցնեն. ներսից դուրս դրկուած նամակները պէտք է գրուեն թուրքերէնով. վերջերս ընդունեցին եւ հայերէնով. իսկ յունարէնով արգիւտած է: Դրսից՝ նամակները պիտի ուղարկել բաց: Անմեղ բաներու համար բանտարկութիւն եւ աքսոր կայ: Սարսափը Պոլսում թէ գաւառներում մեծ է. ամէն օր բազմաթիւ հակաթիթհատականներ կը սպանուեն. կառավարութիւնը գործադրեց Պոլսում բազմաթիւ կախաղաններ, իր հակառակորդներուն դէմ:

Մենք՝ թղթակցութեան բաւական ապահով ճանապարհ գտած ենք. մեր բոլոր նամակները կու տանք մակեդոնական կոմիտէի մեր բարեկամներուն, որոնք կապուած են պուլկարակ. արտաքին գործոց մինիստրութեան մօտիկ անձնաւորութիւններու հետ. ամէն շաբաթ մի մասնաւոր թղթատար կը մեկնի Սոֆիայէն Պոլիս՝ դիբլոմատիական նամակները տանելու. մերինն էլ նրանց կը յանձնենք:

Երբեմն էլ մենք մասնաւոր սուրհանդակ կ'ուղարկենք Պոլիս (պուլկարահպատակ հայ մը) դրամի եւ այլ փոխադրութեան համար: Մի երկու անգամ էլ մերերը սուրհանդակ դրկեցին, աւստրիահպատակ ընկերներէ. եկաւ Մարզպետը<sup>17</sup>:

Ձեզ տրուած հեռագրերը՝ միշտ մեզ ուղարկուած են. անցեալ օրն էլ Պոլսի կողմէ ձեզ հեռագրեցինք — "Hairenik Presse, Boston, Reçu 103, cablez 300 urgence, Buro"<sup>17</sup>...

Նամակները կարող էք մեզ ուղարկել. մենք այստե-

ղէն ապահով կը հասցնենք: Իսկ դրամի համար այսօր կը հարցնեմ պուլկարական տներու, թէ արդեօք հնարաւորութիւն կայ Ամերիկ[այէն] հոս դրամ ստանալու. եթէ այո, այն ատեն Ամերիկայի դրամները հոս կը փոխադրէք, եւ ասկէ էլ Պոլիս՝ առանձին սուրհանդակով:

Այս բոլորը Թուրքիոյ մասին. այժմ մի քանի խօսք էլ կովկասի մասին:

Երկար ժամանակ լուր չունէինք, թէ ի՞նչ կը կատարուի այնտեղ. այժմ ստացանք որոշ տեղեկութիւններ, զորս պատմում եմ քեզ նոյնութեամբ: Երբ մենք դեռ էրգրում էինք, յիշում ես, որ Վուսեանը եկաւ եւ զեկուցանեց Թիֆլիսի հայ շրջաններուն եւ ռուս կառավարութեան միջեւ եղած բանակցութիւնները. այդ բանակցութիւնները շարունակուել են մինչեւ պատերազմը (ռուս-թրքակ.): Ռուսաստանը համաձայն է իբր թէ Հայաստանի լիակատար աւտոնոմիային: Բայց թէ այդ համաձայնութիւնը տողիւմանիցէ<sup>18</sup> է թէ չէ, այդ մասին մերերը ոչինչ գրած են: Ես պատմում եմ իրերու մասին, առանց ուզելու ենթադրութիւններու մէջ մտնելու.— Դաշնակցութիւնը ընդհանուր պատերազմի յայտարարութեան յաջորդ օրն իսկ ազատ կը լինի ամէն հազածանքէ. վերադառնում են մեր բոլոր աքսորականները, Համօ<sup>19</sup>, Մաշուրեան եւ 45 կարեւոր ընկերներ եւ առհասարակ բոլոր դաշնակցական գործով ամբաստանուածները: Ահարոնեան, Խաթակ եւ միւսները նոյնպէս կարող են մտնել կովկաս: Պաշտօնապէս բացուած է Դաշնակցութեան զինուորական շտաբը եւ սկսուած է կամաւորական գնդերու կազմակերպումը: Երկրէն անցած էին անմիջապէս Խաչոն, Դրոն. Սեպուհը կանչուած էր Խարքովէն, Քեռին՝ Պարսկաստանէն, Անդրանիկը Պուլկարիայէն, Մալխաս<sup>20</sup> եւ ուրիշ առհասարակ զինուորական մասնագէտներ: Սկիզբէն ծրագրուած շատ համեստ էր 7-8000 կամաւորներ պատրաստել, բայց այժմ արդէն հսկայական թիւերու է հասած. պատերազմի յայտարարութեան օրը 35000 էր. իսկ թւում է, որ այժմ այդ թիւը կրկնապատկուած է եւ հասեր է 70-80000-ի<sup>21</sup>. շարժումը կը շարունակուի մինչեւ այսօր. որոշ միջոցներ ձեռք առել են արգելելու մանաւանդ գաղութներու մասնակցութիւնը. այնուամենայնիւ ես չկարողացայ զսպել Պալքանները եւ ստիպուեցայ մի հազար տղայ դրկել Ռուսմանիայէն եւ Պուլկարիայէն: Բայց այժմ արդէն 4-րդ հեռագիրն է, որ ստացանք, որով խստիւ կ'արգելեն նորերը դրկել:

Մի մեծ կամաւորական զօրաբաժին, պատերազմա-

15.- Համանուն պանդոկ Պոլսոյ մէջ:  
16.- Ֆրանսերէն անձամօք (անգոյ) բառ. պէտք է ըլլայ perquisition – խուզարկութիւն:  
17.- «Հայրենիք» հրատարակչատուն Պոստրն, ստացում 103.ը- անյապաղ փոխադրեցէք [հեռագրով] 300 – Բիւրօ:  
18.- Իմա գրատը, փաստաթղթային:

19.- Օհանջանեան Համօ:  
20.- Յաջորդաբար՝ Դաշնակցական Խեչօ – Ամիրեան Խաչատուր, Կանայեան Դրաստամատ (Դրօ), Ներսէսեան Արշակ (Մեպոն), Գաւաթեան Արշակ (Քեռի), Օգանեան Անդրանիկ, Յովսէփեան Արտաշէս (Մալխաս):  
21.- Ակնյայտ չափազանցութիւն. ճիշդը տրուած առաջին թիւն է՝ 7000:





### ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

կան ամէն սարքով, յառաջացաւ հոկտ. 26-ին դէպի Ատրպատական, Անդրանիկի հրամանատարութեամբ ամբողջ Ատրպատականի սահմանագծի երկու կողմը գտնուած համիտէական ուժերը մաքրելուց ետք, սրանից 4 օր առաջ մեր բանակը գրաւեց Պաշգալէն, որը 130 քիլոմետր հեռու է պարսկակ. սահմանագլխէն, Վասպուրականի երկրորդ կարեւոր կեդրոնն է, ռազմական միակ ճանապարհին վրայ:

Մեր միւս խմբերը, հազարաւոր կամաւորներէ բաղկացած, դրուած են Դրոյի, Խէչոյի, Արմէն Գարոյի, Քեռու, Վարդանի, Սեպուհի եւ ուրիշ խմբապետներու հրամանատարութեան տակ. նրանք էլ կը յառաջանան հիւսիսային Հայաստանով — Բասենով, Տիատինով, Ալաշկերտով: Իսկ ռուսական բանակները հասել են մինչեւ Տէվէ-Պոյնիի եւ Ղորաճուխի կողմերը. ուրեմն էր գրքումէն 3-4 ժամ հեռաւորութեան վրայ: Առայժմ ձիւնի եւ ցրտի պատճառով պատերազմական գործողութիւնները դադարել են բանակի համար. իսկ կամաւորական զնդերու համար ո՛չ. նրանք աշխատում են ռուսաց բանակից առաջ ներս խուժել, որպէսզի կարողանան պաշտպանել հայ գիւղացի ազգաբնակիչները քիւրտերու եւ թուրքերու դէմ. մանրամասնութիւնները, ժողովրդական խանդավառութեան, Կովկասում եւ նոր գրաւուած վայրերում, կը կարդաս Հորիզոնի էջերում:

Կովկասեան բոլոր քաղաքներու վրայ տուրք նշանակուած է կամաւորական խմբերու կազմակերպական կոմիտէի կողմէ. կովկասահայութիւնը առատօրէն կը նուիրաբերէ. վերջապէս շարժումը մեծ է եւ համահայկական: (Պատմութեան մէջ կան վայրկեաններ, երբ բոլոր խաւերը (նոյն ազգին) միատեսակ կը զգան): Այսօր այդ մասամբ իրականացուած է, Կովկասի հայութեան համար:

Այժմ գանք նամակիդ մասերուն: Ինձ կը թուի, թէ կամաւորներու խնդրին համար պէտք է Կովկաս գրել. իսկ երէկ տեղէս Կովկաս մեկնող ընկերոջ մը հարկ եղածը խօսեցայ թէ Պալքանի կամաւորներու մասին: Իմ կարծիքով լաւ է, որ այս ձմեռ չշարժուին. կովկասեան պատերազմը աւելի դէմոնսթրաթիւ<sup>22</sup> քան թէ յարձակողական կռուի կերպարանք ունի. ձմեռս կը թուի թէ մեծ գործողութիւններ պիտի չկարողանան անել. հետեւաբար չարժէ, որ տղերքը ամբողջ վեց ամիս գնան եւ մնան ձմրան ձիւնին ու բուքին տակ. բացի այդ՝ ծախքը, զինման, դեղորէից եւայլն ծանրացած է ամբողջ հայկական շրջաններուն վրայ: Ուրիշ տեսակէտ մ՛ալ կայ. մտերիմ շրջաններում կը մտածուի կիլիկեան փիերը իջնելու ծրագրի մը մասին, անգլօ-Ֆրանսական նաւատորմի մը օժանդակութեամբ. կիլիկիեան ծովեզերքները անպաստպար են եւ հայաբնակ գրեթէ. իսկ Կիլիկիայի հայերը՝ կռուող: Այդ պարագային գաղութային երիտասարդութեան պէտք պիտի ունենանք:

Պուլկարիան ստիպուած է հաշտ չնայիլ իր երկրից անցնող կամ իր երկրում կազմուող հայ կամաւորական խմբերուն: Մի քանի օր առաջ պուլկարահայութիւնը մեծ յուզման մատնուեցաւ, կամաւորական խնդրէն առաջացած եւ սարքուած բրովոքասիոնի<sup>23</sup> մը հետեւանքով: Պուլկար կառավարութիւնը 24 ժամուան մէջ հրամայեց հեռացնել պուլկարահայոց նորընտիր առաջնորդ Արքեպիսկոպոս Ղեւոնդ Դուրեանը, Պուլկարիոյ սահմաններից: Նա ամբաստանուած էր, որ իբր թէ Պոլսից յատկապէս դրկուած է Պուլկարիա, որպէսզի նախ հայերից կամաւորական խմբեր կազմակերպի եւ ապա համախորհուրդ Շիփկայի եւ ռուսաց վանքի վանականներուն հետ, սկսի ռուսօֆիլական<sup>24</sup> բրոքականտ պուլկար գիւղացիութեան մէջ, այդ կերպով որպէսզի տապալուի ներկայ թրքասէր դահլիճը եւ նրա տեղ գայ թրքասեաց նախարարութիւն եւ պատերազմ յայտարարի Թուրքիոյ դէմ: Դաւը լարուած էր Սոֆիայի թուրք դեսպանի եւ թուրք լրտեսներու կողմէ, նպատակ ունենալով — 1) մէկ կողմէն հայերը կասկածելի ցուցնել յաշտ պուլկար կառավարութեան 2) միւս կողմէն ապացուցանել, որ հայերը, սկսած կղերականներից — աշխարհականների, Հայաստանից Պոլիս եւ Պոլսից մինչեւ գաղթավայրերը պետական դաւաճաններ են: Այնպէս որ, դժուար չէր երեւակայել, թէ ի՞նչ վատ անդրադարձներ պիտի ունենային էնթրիկները, եթէ մենք չաճապարէինք գանոնք մերկացնել: Եպիսկոպոսը նախ՝ աքսորէն ազատելու համար դիմեցինք մեզ բարեկամ մակեդոնական կոմիտէին. կոմիտէի անդամները ահագին սկանտալ բարձրացրին, մինչեւ որ յաջողեցան ազատել արքեպիսկոպոսը աքսորից եւ միւս կողմէ ապացուցին, որ Ֆէթհիի եւ թուրք լրտեսներու սարքածը պարզ բրովոքասիոն է: Թուրքերը այդ կերպով լաւ բարոյական ապտակ ստացան. եւ միաժամանակ երեւի վազ կ'անցնին բրովոքասիոնէ, գոնէ հայերու վերաբերմամբ:

Թէ Ռուսմանիա եւ թէ Պուլկարիա լրտեսներով լեցուն է. բայց սրանց լրտեսներն էլ կառավարակ. պաշտօնեաներու նման են, զուարճանում են եւ գործ ցոյց տալու համար, սուտեր են սարքում եւ շատ անգամ խայտառակում իրենց պաշտօնական շրջանները:

Առայժմ ուրիշ բան միտքս չի գար. կարեւոր պէտք լինելուն, կը գրեմ. շրջանը բաւական կարգի բերած եմ. ո՛չ միայն գործիչի դերը, այլեւ Կ. կոմիտէի գրագրութիւնը վրաս ծանրացեր է. ո՛չ մի ինտելիգենտ ընկեր չկայ. բոլորովին միմիակ եմ. իսկական ամբոխ են ներկայացնում մեր ընկերները. ոգեւորութիւն շատ կայ, բայց անձնագոհութիւն քիչ: Երանի կամ ես այդտեղ լինէի եւ կամ դու՛ն՝ հոս, եթէ անպատճառ մեզ վիճակ-

22.- Յուցական:  
23.- Գրգռութեան:  
24.- Ռուսասիրական:



ւում է մնալ գաղթավայրերում. մի անգամ ուզեցի կովկաս անցնել, բայց Ռոստոմը չթողուց: այստեղ էլ մարդ չունեն. ուրիշ տրամադրելի մարդ չկայ: Եթէ այդտեղ մարդու պէտք ունիք, ես կու գամ, նպատակ ունենալով քեզ հետ միասին կիլիկեան փեղերը տեսանթ<sup>25</sup> անելու ծրագիրը հասունացնել. գոնէ այդ կերպով կենդանի գործունէութիւնից կտրուած չենք լինի:

Չմոռանաս «Հայրենիք» ուղարկել մի օրինակ մեզ: Այս նամակէն յարմար տեսած մասերը հրատարակիր. (գլխաւորաբար բրովոքասիոնի մասը): Արսէն, մի օրինակ էլ այն հրատարակութենէն, որի մէջ կան այնքան գեղարուեստական բաներ. մէկ էլ երգարան մը. փոխարէն ձեզ կ'ուղարկենք ուրիշ գրականութիւն:

25.- Էջը, յարձակում:  
26.- Նաւախումբը:

Իմ անունս է Արզուման. այդպէս կը ճանչնան էստեղ:

Նորութիւններ լինեն էլի կը գրեմ. եթէ հեռագիր տալ ուզէք Պոլիս, մեզ հեռագրեցէք, մենք փոստով Պոլիս կը ղրկենք:

Համբոյրներով՝ ՏԻԳՐԱՆ

29 նոյ. 1914

Այսօր լրագրերը յայտնում են, որ ցարը գնացել է Թիֆլիս. կաթողիկոսը պիտի երթայ բանակ[ցելու] անմիջապէս գրիր կամաւորներու մասին:

Սերպերը մեծ յաղթանակ աւտրիացոց դէմ. անգլիական էսկադրը<sup>26</sup> ջարդեր է գերմանական զրահանաւեր...







Փաստ. 882-62

4.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾԷՆ  
ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ<sup>27</sup>

Նոյ[եմբեր] 24-ը ստացուած:

Ոչ Ակնունին եւ ոչ էլ Շահրիկ[եան]ը թողած են մեկնել. կ'ուզեն գլխաւորները (դաշնակցականները ) ձեռքի տակ ունենալ:

Հարցնել թէ ի՞նչ պարագաներից դրդուած պուլկար բարեկամներ եւ Ռոստոմը կ'ուզեն մերոնց հեռանալը:

Նամակները ղրկել Տոքթորի եւ Minerva-ի<sup>28</sup> հասցէներով:

Մերձանօֆին գրեցէք, որ իրա դէմքով անցազիր մը հարկաւոր է (պուլկարական): Դուկասը<sup>29</sup> նրան ճանաչում է. վիզէ անել եւ վստահելի մարդու մը հետ ղրկել:

Թերթերը բռնուել են. այսուհետեւ չուղարկել եւ միայն թերթերի եզերքներով եւ նամակներով իմացնել:

Կովկասէն եւ Ռուսաստանէն ի՞նչ լուր:

Զարդարեան Հայրենիքին յղուածներ պիտի ղրկէ – թերթերի միջով – ղրկել Ամերիկա: Նման բաների համար մի քանի հասցէ տուէք: Մի քանի տեղեկագիրներ կան, զորս պիտի ուղարկենք. կը ղրկէք Ամերիկա, ասելով, որ Բիւրոն է ուղարկել:

Գրել Ամերիկա նաեւ որ ստացուել է 120 օսմ[անեան] լիրան: Աշխատեցէք կուսակցութեան եկամուտների համար: Այլեւս յոյս չունենք, որ ձեզ կարողանանք ընկեր հասցնել:

Ամերիկայի, Եգիպտոսի եւ Կիլիկիայի համար թղթակցութիւն [պահեցէք]: Վահան Փափազեան՝ Մուշ, Վռամեան Վան [կը գտնուին]:

Բարլամենիթը բացուած է: Խառն ժողով եղած է (Կ. Կ.ի, Բ[իւրոյ]ի եւ ղեկավար ընկերներ). որոշած են առ այժմ չգործադրել Ընդհ. ժողովի որոշումը<sup>30</sup> եւ թոյլ տալ որ Վարդգէսը մասնակցի բարլամենիթի նիստերին, սպասելով յարմար վայրկեանին հեռանալու համար:

Հ[ԱՅԱՍՏԱՆԻ] Բ[ԻՒՐՕ]  
Պ[ՈԼՍՈՅ] ՀԱՏՈՒԱԾ

27.- Լուսանցքին գրուած Copie-ն է 1914, 4 դեկտ. գրուած Պուսէն ստացուած նամակի: Պատասխանում N° 284-ով:

28.- Minerva – Պոլսոյ Բերա քաղամասին մէջ գտնուող դերձակատուն, որուն սեփականատէրն էր Յովհ. Չեօկիւրեան, եղբայրը յայտնի գրող Տիգրան Չեօկիւրեանի:

29.- Մինասեան Դուկաս, Պալքանեան շրջանի վաստակաւոր ընկերներէն:

30.- Թէեւ Ընդհ. ժողովի որոշումներու քաղուածքներուն մէջ բացայայտ կերպով արձանագրութիւն չկայ՝ որ դաշնակցական երեսփոխանները պէտք չէ մասնակցին խորհրդարանի նիստերուն, եւ սակայն այդ իմաստով փաստօրէն որոշում կայացուած է:





Մասնագիտ. 1190ա, էջ 718-9  
N° 283

5.- ՊԱԼՔԱՆԷՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՂԻՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Սոֆիա, 14 Դեկտ. 1914

Ընկերներ!

Ստացանք ձեր No 169 նամակը. անմիջապէս չպատասխանելուն պատճառը հետեւեալն է. — ձեր նամակէն քանի մ'օր առաջ ընկ. Ա. Միքայէլեանից<sup>31</sup> ստացած էինք նամակ, որուն մէջ կ'ըսուէր ի միջի այլոց, որ նամակ չէք ստացեր Պոլսէն եւ ձեր զրկած 2003 տոլարը չէ փոխադրուած: Մենք այստեղ դիմելով զանազան ֆինանսական տներու, գտանք փոխադրութեան յարմարագոյն միջոցը. պուլկարական Banque Générale-ը որը Ամերիկայի մէջ մեծ գործեր ունի, յանձն առաւ առանց գումարներ<sup>32</sup> փոխադրել տալ դրամները. դուք Պոստոնում կը վճարէք First National Bank-ին, որը չէքով կամ հեռագրով Սոֆիա Générale-ի միջոցով կը վճարէ մեր հասցէին (Matheos Hagopian) իսկ մենք մասնաւոր սուրհանդակով կամ չէքով դրամները կ'ուղարկենք Պոլսի իսկ Կովկաս կարելի է պանքային հիմնարկութիւններով յաջողցնել, կամ Սոֆիայէն կամ Bucarest-էն: Յամենայն դէպս դժուար կէտը լուծուած է. մինչեւ Պալքանները կարող էք փոխադրել մեր մատնանշած եղանակով: Դեկտ. 5-ին ձեզ այդ նպատակով հեռագրեցինք հետեւեալը. — Boston quatre mille dollars télégraphique pour compte Banque Générale Bulgarie, adresse Mathéos Hagopian, guetronagan<sup>33</sup>. Բայց պատասխան ձեզնից չստացանք: Միեւնոյն եղանակով եւ կարող էք փոխադրել պուլկար կարօտեալներու դրամը:

Պոլսի ընկերներէն, թէպէտ ցանցաւ կերպով, բայց շարունակ նամակ կը ստանանք: Թէպէտ թուրքերը առերեւութապէս լաւ կը վարուեն, բայց իրապէս խիստ անվստահութիւն կը սնուցանեն դէպի մեզ. մի քանի օր առաջ արգիլեցին թէ ընկ. Խաչատուրը<sup>3</sup> եւ թէ ընկ. Շահրիկեանը թուրքիայէն դուրս ելնել. նոյնը արել են մեր գաւառական ընկերներուն, շատերը օտարահպատակներ: Մէկ խօսքով նրանց վար դրել են ինչպէս պատանդներու. այդ պարագան մերինները դրեր է ծանր մտահոգութեան մէջ: Մենք հաստատ տեղեկութիւններ առած ենք մեր պուլկար բարեկամներու աջակցութեամբ, որ գոնէ մի քանիսը յաջողէին դուրս բերել, բայց առայժմ չյաջողեցաւ:

Հակառակ Ընդհ. ժողովի որոշման Վարդգէսը եւ մեր միւս երեսփոխան ընկերները առայժմ պիտի մասնակցեն պարլամենտի այս շրջանին. այդ բանը եղել է նկատի ունենալով թուրքերու կասկածները: Որոշումը եղել է Պոլսի ընկերներու եւ Բիւրոյի հատուածի Խառն

ժողովով, ինչպէս եւ Վիշապի<sup>34</sup> Կ. Կ.ի համաձայնութեամբ:

Վահան Փափագեան Մուշ է, իսկ Վառամեանը՝ Վան: Կարինի եւ միւս վայրերու ընկերներէն լուր չկայ. միայն գիտենք, որ մի ամիս առաջ անոնցմէ շատերը բանտարկուած էին: Մօտերս Պոլսէն կը սպասենք, ձեզ ուղարկուելու համար, մի քանի տեղեկագիր եւ ընկ. Ջարդարեանի «Հայրենիք»ի համար պատրաստած յօդուածները: Ձեր զրկած 120 օսմ. լիրան ստացել են: Գրաքննութիւնը խիստ լինելով մերոնք դժուարանում են Ամերիկա եւ Եգիպտոս գրել, իսկ Պալքաններու հետ յարաբերաբար դիւրին է առայժմ գոնէ կապ պահել: Ձեր գրութիւնները ուղարկեցէք մեզ. մենք գաղտնի թանաքով գրելէ ետք կ'ուղարկենք. ձեռք ենք առել բաւական վստահելի միջոցներ:

Թիֆլիսէն նոր լուր չունինք: Վերի Բասենը ռուսաց ձեռքն է, իսկ ամբողջ Արեւելեան Հայաստանը՝ Մասիսից մինչեւ Ծաղկոտն-Պաշգալէ մերերը ողողած են. կամաւորական գնդերը, ղեկավարուած Անդրանիկից, Դրոյից, Քեռուց, Համագասպից, Խաչոյից, Արմէն Գարոյից, Սեպուհից, Վարդանից<sup>20</sup> եւ մեր բազմաթիւ խմբապետներից, ահ ու սարսափ են տարածել ամէն տեղ. առանց ոեւէ նշանակալի կորուստներ տալու, զարմանալի քաջութեամբ ահագին զրաւումներ կը կատարեն. կ'անեն աւելին քան ռուսական կանոնաւոր զօրքը. համառուական հիացմունք առաջ բերած են մերերը. ամբողջ շարժումը մերիններու ձեռքն է: Առայժմ կը թուի, թէ կովկասեան շրջանները չեն փափաքիր, որ գաղթավայրերը արձագանգեն ինչ որ կարեւոր կանխազգուշութիւններով 1) Ուժի խնայողութեան 2) Թըրքական շրջաններու ուշադրութիւնը չհրաւիրելու համար:

Որքան որ թերթերը կը գրեն կոտորածներու մասին, իրականին մէջ այդպէս չէ. մասնաւոր սուրհանդակներ կը հասնին երկրից Կովկաս, որոնց տուած տեղեկութիւնները հանգստացնող են, բայց ինչ կը վերաբերի տնտեսականին, սարսափելի տխուր վիճակ ստեղծուած է:

31.- Միքայէլեան Արսէն – կուս. գործիչ Ամերիկայի մէջ:  
32.- Միջնորդէքի:  
33.- Ֆրանսերէն – «Պոստըն [ուղարկել] հեռագրով չորս հազար տոլար Պուլկարիոյ Ընդհանուր դրամատան հաշուոյն – հասցէ Մասթէոս Յակոբեան – Կեդրոնական [կոմիտէ]:  
34.- Վիշապ – Կ. Պոլսոյ կուսակցական ժածկագունը:





ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Հակառակ մեր ցանկութեան Պալքանից 1000-ի չափ մարդ գնաց, մեծագոյն մասը մեր տղաներից. այժմ շարժումը դադարած է:

Մեզ թուում է, թէ միակ բանը որ օրուան անհրաժեշտութիւնն է այս ընկալիս, այդ օգնութիւնն է, որ տասնեակ հազարներով փախչում են գիւղացիները դէպի Սարիղամիշ՝ դրանց յօգուտ անպայման. վիրաւորներուն, որբերուն, այրիներուն եւայլն [օգնելու] կարիքը կայ: Ա-

ռայժմ մեր աշխատանքը այդտեղ կեդրոնանալու է:

Մենք մեր շրջանում սկսանք շարժում. շուտով հրապարակ կը հանենք թերթ մը «Հայաստան» անունով. նպատակն է միացնել բոլոր հայերը եւ Պալքանը կապել մայր երկրին հետ:

Ընկերական բարեկենդրով  
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԷ

Փաստ. 105ա-9

6.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾԷՆ ԲԱԼԿԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻՆ

26 Դեկտ. 1914

Կը հաստատենք մեր դեկտ. 4 եւ 9-ի նամակները, ինչպէս եւ 23-ի գրած բաց կարտը: Ձեզանից մինչեւ հիմա ոեւէ նամակ չունենք. գէթ մեզ ծանօթ տղերքորի միջոցաւ գրեցէք, կը հասնի մեզ. ենթադրում ենք, որ գրում էք եւ չենք ստանում, իսկ եթէ մինչեւ հիմա չէք գրել, սխալ էք արել որ անտեղեակ էք պահել դրսի անցուղարձերի հետ:

Ամերիկա, Ժրնեւ, Կովկասի հետ կանոնաւոր յարաբերութիւն պահեցէք եւ մեզ տեղեակ արէք այնտեղ անցած դարձածներից. մասնաւորապէս Ամերիկա յայտնեցէք, որ Հայրենիքի մէջ զգուշաւոր կերպով արտայայտուեն. հայերի կացութիւնը օրից օր ծանրանում է եւ նոր գրգռումների տեղիք չպիտի տալ: Հայրենիքները ի հարկէ մեր ձեռքը չեն ընկնում. թրքական ազենտները<sup>35</sup> կարող են կարգալ եւ թարգմանաբար Պոլիս՝ կառավարութեան ղրկել. մենք անկէ առած տեղեկութիւնների հիման վրայ կը գրենք: Կովկասում հայ կամաւորների բացայայտ մասնակցելը եւ Կովկասի հայ մամուլի զարկած թմբուկը նմանապէս սոսկալի ծանր անդրադարձում կ'ունենայ թուրքահայերի եւ մասնաւորապէս Դաշնակցութեան վրայ: Եկուր մեր բարեկամ թուրքերին հաւատացրու, որ մենք դաշնակցական[ներս] այդ բանի մէջ մաս չունենալէ զատ, կողմնակից ենք թուրքերի գոյութեան եւ դէմ՝ Հայաստանը ռուսների կողմէ գրաւուելուն: Դրսի հայերը իրենց ցուցամոլական արարքներով չպիտի դժուարացնեն թուրքահայերի վիճակը:

Վերջերս նորանոր նամակներ հասան Երկրէն, որով գրութիւնը շատ ծանր կը նկարագրեն: Նոյեմբ. 16 թրւով Վանէն նամակ առինք. կառավարութեան գրաւումները հայ ժողովրդից՝ թալանի ձեւ է ստացել. գիւղերը աւերեր, եղած չեղածը թալանում են գինուորական զրաման անուկով: Փախստական երիտասարդներ-

րի պատճառով անոնց տները կը վառեն եւ ինչքերը կը գրաւեն յարքունիս: Նոյն բանը մահմետականներին չանելէ զատ՝ բոլոր ոճրագործներին, աւազակներին ներեցին եւ գէնք տուին: Շատ տեղեր բանտերէն ազատել են ոճրագործներին եւ գէնք բաժանել: Մերոնց կատարած բողոքները համարեա թէ ոեւէ արդիւնք չեն տուեր. միայն վերջերս պատահած մի դէպք կացութեան մէջ իբր թէ որոշ չափով փոփոխութիւն է մտցնում. կուսակալը խոստացել է մերոնց առաջարկածները նկատի ունենալ:

Մինչեւ մեր նամակի թուականը 100 հայեր զնդակահարուած են եղեր գիւղերում, իբր թէ զօրակոչին արձագանգ չտուողներից են եղեր: Նման դէպք տեղի է ունենում Վանի Այգեստանի բաժնում. ժանդարմները սպանում են մի հայ երիտասարդ. այդ դէպքի առիթով տասնոցներով գինուած հայ երիտասարդներ ամէն կողմէ վազում եւ զնդակների տարափի տակ են առնում ժանդարմներին. սրանք ազատում են եւ սկսում է կռիւը: Վաւաճանը վազում է կուսակալին եւ ասում, որ ժանդարմները յետ կանչեն, իսկ Արամ եւ Իշխան<sup>36</sup> վրայ են հասնում եւ կռուողներին համոզում որ յետ կանգնեն եւ չկրակեն: Այդ դէպքից յետոյ կուսակալը, տէֆտէրտարը եւ Նաջին մերոնց հետ մտնում են բանակցութիւնների եւ մերոնց առաջարկածները խոստանում են ի կատար ածել... Այլ կէտերը աւելորդ կը համարենք ներկայացնել այս նամակով, որովհետեւ ոչ կ'իրագործեն, ոչ էլ հնարաւոր է ներկայ պարագաներում գրել, երբ այնքան դժուարացել է նամակագրութիւնը:

Հայ կամաւորների արշաւանքը նմանապէս շատ խօսակցութիւնների եւ բանակցութիւնների տեղիք է

35.- Գործակալները:  
36.- Արամ Մամուկեան եւ Նիկոլ Պողոտեան-Միքայէլեան:



տուել. մերոնք բացատրել են որ հայ կամաւորները ոչ թէ կ'ուզեն ձեր դէմ պատերազմիլ, այլ հայերին պաշտպանել քրդական խժոժութիւնների դէմ, որ մենք դէմ ենք ուսաների տիրապետութեան, քանի որ Թուրքիոյ շարունակութեամբն է, որ մենք յոյս ունենք քաղաքական որոշ իրզայնների հասնել. եւ մերոնք առաջարկում են, քանի դեռ ուշ է, որոշ գիջումներ անել, որպէսզի հայերը տաքանան դէպի ներկայ պատերազմը այլպէս 5 դարու քաղաքական խաբէութիւնները յուսահատեցրել են հայերին: Նաջին ասել է, որ Կարսը առնելէ յետոյ ի նկատի կ'ունենանք այդ բոլորը. իսկ մերոնք ասում են, որ ոչ Կարսի առնելուն եւ ոչ էլ Կարնոյ անկումին պիտի սպասել:

Կառավարութեան եւ մերոնց համաձայնութեամբ, երկու ընկերներ են ճանապարհւում, մէկը Սալմաստ, միւսը Իգտիր: Սալմաստ գնացողը ողջ եւ առողջ տեղ է հասնում, իսկ Իգտիր գնացողը լինում է Թորոսը (Ալոյ-եան). Բայագէդէն դուրս եկած ժամանակ յետեւից գընդակահարում եւ սպանում են: Ենթադրութիւն կայ, որ սպանել տուողը եղել է Հիլմին՝ Իթթիհատի ներկայացուցիչը: Մերոնք ցանկանում են այնպիսի ձեւ տալ, որ չեն կասկածում որ Հիլմին է սպանել տուել. ուրեմն դուք էլ այդ ձեւով պիտի վարուէք. չպէտք է աղմկել, թէ Հիլմին է անել տուել:

Ստացանք նաեւ Մարալէն<sup>37</sup> Կարնից 20 օրուան գրած մի նամակ: Դրութիւնը այնտեղ նոյն բանն է ներկայացնում: Չեթաներ, Մարալի ասելով, կազմուած միմիայն հայերի համար, գիւղերում գտնուած յայտնի հայերին սպանում են. գիշեր ատեն թափւում են հայ գիւղերը, կանանց մտցնում սառ ջրի մէջ, տանջում եւ պահանջում դրամ եւ գէնք. այդպէս են արել Դիլիկ, Պատիչէն, Թարգունի հայ գիւղերի մէջ: Մերոնք երբ բողոքում են Թահսին բէյին<sup>38</sup>, վերջինս ասում է, որ երկու օրուայ ընթացքին կը պատժեմ չարագործներին, բայց տասը օր ետք նոյն բանը տեղի է ունենում Հինձք եւ Չիթոզ գիւղերի մէջ:

37.- Մարալ – Փափախեան Փիլոս:  
38.- Կարնոյ կուսակալ:  
39.- Չեռագրին մէջ բաց ձգուած: Յայտնաբար խօսքը կը վերաբերի Ռուբէն Զարդարեանի յողուածներուն՝ Ամերիկա «Հայրենիք»ին սահմանուած:

Սպանում են եւ հայ զինուորներին: Կուռի օրերում չէթաները զանազան վայրերում սպանում են հայ զինուորներին. միմիայն մէկ վայրում 64 հոգի: Հարուստ թուրք մը մերոնց ասում է, որ Իթթիհատի կոմիտէն որոշել է քաղաքի մէջ էլ սպանութիւններ կատարել. նոյնիսկ ենթադրում են ընդհանուր կոտորածի ծրագիր էլ ունեն: Կոմանդանը հետաքրքրուել է մասնաւորապէս Փիլոսով եւ Վահէով<sup>39</sup>: Մէկ խօսքով դրութիւնը նկարագրում են չափազանց ծանր եւ մռայլ. ներկայացրել են եղելութիւնը այնպէս ինչպէս կայ:

Դրսի մարմիններին է մնում մտածել թէ դուք ի՞նչ կրնաք անել դրութիւնը մի քիչ թեթեւացնելու համար: Մենք արինք այն բոլորը ինչ կրցանք, բայց անգոր ենք: Մենք այստեղ արդէն պատանդի դերին մէջ ենք. կառավարութիւնը ամէն կերպ խուսափում է մեզի հետ որեւէ յարաբերութիւն ունենալէ: Այս նամակը կ'արտագրէք եւ կ'ուղարկէք Ամերիկա, Ժընեւ եւ Կովկաս. ասացէք որ դժուար լինելով ձեզ անձամբ դրկել, մեր միջոցաւ են գրում: Ամերիկայի նամակին մէջ աւելացրէք, որ Ֆիլիպէի վրայով -----<sup>39</sup> թղթով յողուածների հետ միասին ուղարկել ենք նաեւ տեղեկագիրներ Երկրի կացութեան մասին: Թէ նման տեղեկագիրներ ստանանք, օրին նոյնութեամբ ձեզի կ'ուղարկենք: Բացի այդ՝ թղթակցութիւնների հաշուին մինչեւ հիմա 15 ոսկի ենք յանձնել ընկերոջը, 5 էլ պիտի վճարենք նորէն, մէջը հաշուելով նաեւ ձեր յանձնարարած գումարը. ուրեմն մեզ ուղարկուած 20 օսմ. ոսկին հաշուեն Չարդարեանին տրուած թղթակցութիւնների հաշուին:

Ընկեր Շահպազը եւ Սարգիս Մինասեանը համարուում են թեկնածու Հայրենիքի իմբագրութեան համար. եթէ ոեւէ մէկին յարմար համարեն, թող հեռագրեն ձեզ: Բացի այդ՝ Վրացեանին մենք կրկին ցանկացանք Ամերիկա դառնալ. գրեցէք որ նրա ներկայութիւնը անհրաժեշտ է, եւ թող գալու կամ չգալու համար Կովկասէն ձեզ հեռագրեն, որպէսզի վերոյիշեալ ընկերի խնդիրը ըստ այնմ լուծուի. չմոռանաք:

Գրեցէք զանազան ձեւով, մանաւանդ առ այժմ դուրստորի հասցէով:

Բարեկներով՝  
Հ[ԱՅԱՍՏԱՆԻ] Բ[ԻՒՐՈՅԻ]  
ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾ





Մատենան թիւ 1190ա, էջ 736-38  
N° 292

7.- ՊԱԼՔԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԷՆ Հ.Յ.Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Սոֆիա 1914, դեկտ. 29

Պալքանեան Կ. Կ.ի այս նամակը՝ ուղղուած Արեւելեան բիւրոյին ըստ էութեան Հայաստանի բիւրոյի Պոլսոյ հաստուածի գրութիւն է՝ փոխանցելի Թիֆլիս. կը բովանդակէ տեղեկութիւններ ներքին գաւառներու, յատկապէս Տարօնի մէջ 1914 թ.ի վերջերուն տիրող ահ ու սարսափի մթնոլորտին մասին: Մտորագրուած է «Արեւմտեան բիւրո» հին անուանակոչութեամբ երեւի ստորագծելու համար Պոլսէն ուղարկուած ըլլալու հանգամանքը: Թղթակցական եւ հաղորդակցութեան ուղղակի կապի անկարելիութեան պատճառաւ եւ ըստ պայմանաւորութեան, նամակի բովանդակութիւնը սահմանուած էր Պալքանի Կ. կոմիտէի խողովակով փոխանցուելու Կովկաս եւ արտասահմանեան կեդրոններուն:

Ընկերներ!

Հակառակ մեր բազմաթիւ նամակներուն եւ հեռագրերուն ձեզմէ մինչեւ այժմ մեր հարցումներուն ոչ մի պարզաբանող պատասխան նամակ չստացանք: Պոլսի եւ Կովկասի յարաբերութիւնները խզուելէ ետք մերինները կարգադրած էին, որ յետ այսու ձեր եւ Հայաստանի բիւրոյի յարաբերութիւնները պէտք է կատարուեն Պալքանեան Կ. կոմիտէին միջոցով: Բայց դժբախտաբար այդ բանը չիրականացաւ: Հեռագրով յայտնուած էիք շարունակ, որ նամակները ղրկուած են, մինչդեռ ո՛չ մի նամակ չստացանք մինչեւ ցարդ. զուրկ լինելով ամէն տեղեկութենէ, Կովկասում կատարուող անցքերու մասին, չկարողացանք ունէ կերպով հարկ եղած տեղեկութիւնները տալ եւ մեր Պոլսի ընկերներուն, ինչպէս եւ Եգիպտոսի եւ Ամերիկայի ընկերներուն, որոնք շարունակ նամակներով մեզմէ տեղեկութիւններ կը պահանջեն: Առանց մանրամասնելու ասենք, որ մենք մեզ բոլորովին կտրուած կը զգանք կուսակցական եւ համագգային իրականութենէն, ինչ որ չափազանց վատ կ'ազդէ մեր պալքանեան եւ առհասարակ գաղութային գործունէութեան վրայ: Այս բոլորի մասին ձեզ մանրամասնօրէն կը պատմեն վերջերս Սոֆիայէն մեկնող եւ կողմը ուղեւորած պալքանեան Կ. Կ.ի երկու անդամները, Պետոն եւ Պերճը (Պարոյր Պարոնեան):

Մի քանի օր առաջ Պոլսէն ստացանք մի նամակ (Գ. միջոցով) որու ձեզ պատկանող մասը ահաւասիկ.---

Մ[եծ] Բ[աղաք], Գ[աշնակցութեան] Արեւելեան Բիւրոյին,

Ընկերներ,

Կը հաստատենք մեր 28 թուակիր նամակը. մենք ձեզմէ ունէ լուր չենք առներ եւ դա շատ վատ է. ի՞նչ կը մտածէք այդպէս լուռ մնալով. միթէ կարեւորութիւն չունի ձեզ համար տեղեակ պահել ընկերներին անցած դարձածների մասին: Ձեր լուրսերը միանգամայն դատապարտելի եւ ոչ արդարանալի է. կը սպասենք Սոֆիայի միջոցաւ ձեզմէ մանրամասն տեղեկութիւններ. դուք կը դրկէք անոնց, անոնց միջոցաւ մենք կը ստանանք:

Գեղամը<sup>13</sup> Մշից երկու օր առաջ տեղս հասաւ. սարսափելի կերպով կը նկարագրէ հայերի կացութիւնը: Նախ քան պատերզամը իբր թէ աւելի մեղմ են եղած հայերի հետ. յետոյ գնալով այնպիսի դրութիւն են ստեղծել, որ ժողովուրդը բացարձակ բնաջնջման է ենթարկուել: Ամբոյսը գրգռում են ասելով, որ ռուսերը չեն որ կռոււմ են մեզ հետ, այլ հայերը. հայերին ենթարկում են սուսակալի կեղեքումների. միմիայն Մշոյ դաշտից 5.000.000 օխա հացահատիկ են առել հայերից, 30.000 ոչխար. այնպէս, որ գարնան ուտելիք չէ մնացել: Ձեռնարկել են ռուսերի գրաւելիք վայրերէն ժողովուրդը ներսերը քաշել, գիւղերը այրելով. մահմետականների տեղաւորում են համակրօնակիցներու գիւղերում, իսկ հայերին՝ թողնում են իրենց բախտին: Պիթիսի կուսակալը ինչպէս եւ Մշոյ մութեսարըֆը պատրաստած են լինում դժո-







խային ծրագիր Սասնոյ դէմ, բայց առաջը կարելի [պիտի՞] լինի առնել: Անվտանգութիւնը բացարձակ եւ անսահման է: Հայութիւնը կ'անցընէ ամենավտանգաւոր մի շրջան. ողջ մնացողներու համար պիտի նկատի ունենալ մեծ օգնութիւն պատերազմէն յետոյ, այլապէս սովը անխուսափելի է:

Տեղէս մի քանի ընկերներ ցանկացան հեռանալ. կառավարութիւնը Ակնունուն արգիլեց ռուսահպատակի պատրուակով, իսկ Շահրիկ[եան]ին առարկեցին թէ ինչո՞ւ կ'երթաս. երեւի կը ցանկանաս գնալ Պուլկարիա եւ մեզ դէմ լրագիր հանել: Այդ բոլորը ի հարկէ առարկութիւններ են. պարզապէս դաշնակցականներին պահում են իբրեւ պատանդ: Ի՞նչ կը լինի ընկերների վիճակը, բան չգիտենք, թող միայն ժողովրդին բան չպատահի. մի քանի դաշնակցականների պատճառով հայ ազգը մեծ բան չի կորցնի. մեր մտահոգութեան առարկան ուրիշ է:

Այստեղ հաւատացած են, որ Կովկասի հայութիւնը ղեկավարում [է] ընդդէմ Թուրքիայի. այդտեղի մեր լրագրութիւնը այնպիսի շեղումներ է անում, որ մենք էլ լինելիք պիտի մտածէինք, որ գործը ամբողջ դաշնակցականներն են վարում. կարծենք, որ այդ անխտենութիւններից եւ անելորդաբանութիւններից օգուտ առաջ չգալէ զատ վնաս էլ կայ: Թուրքահայերի վիճակը միշտ ի նկատի ունենալու է:

Այստեղ լուրջ երկիւղներ կան, որ ռուսերը գրաւելէ ետք Հայաստանը, կցեն Ռուսաստանին: Ընկերները մի շարք խորհրդակցութիւններէ ետք որոշեցին, որ այժմէն պիտի աշխատել Եւրոպական կառավարութիւններուն մօտ, Հայաստանին «ատոնոմիա» տալու ուղղութեամբ. բայց քանի որ մենք չգիտենք, թէ հայութիւնը ի՞նչ խոստումներ ունի ռուսերի կողմից, կամ այդտեղ ի՞նչ յարաբերութիւնների մէջ էք, լաւ համարուեց նախ ձեզ գրել, որ դուք այդ ուղղութեամբ գործէք, Եւրոպա յատուկ մարդիկ ուղարկէք կամ եղածներին հրահանգներ տաք. մենք այն կարծիքէն ենք, որ այդ դիմումները պիտի անուեն Իտալիա, Ֆրանսա, Անգլիա, Ամերիկա շատ գաղտնապահութեամբ, որ ռուսական կասկածներ չունենանք. դիմումները կատարել մեր Եւրոպայի բարեկամներու միջոցաւ. մեր անունը մէջտեղ չերեւայ: Նոյն ազդեցութեամբ պէտք է աշխատել եւ Ռուսաստանում:

Մեզ կը գրէք Սոֆիայի միջոցաւ, թէ ո՞ր են գործերը. եթէ կարիք կայ, որ այս կողմէն ընկերներ գան տեղոյ, գրեցէք. թերեւս մի քանիսը հնարաւորութիւն ունենան գալու:

Բարեւներով  
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

*Ընկերական բարեւներով*  
**Հ. Յ. Դ[ԱՇՆԱԿՑՈՒԹ]ԵԱՆ ԲԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԷ**





Փաստ. 104-2

8.- ՊԱՏՃԷՆ ԿԱՐՆՈՅ ԾԱԾԿԱԳԻՐ ՆԱՍԱԿԻ<sup>40</sup>

(Անճանական բնոյթ ունի (Միսաք))

1-1-1915

Միրելի Ռոստոմ!

Կուսակցական կեանք ի հարկէ չկայ. Բարթող, Գասպար<sup>41</sup> եւ այլն այնպէս են յետ քաշուել որ մերժում են մի ժողովի անգամ մասնակցել. Վանիկը<sup>42</sup> լաւ որ մնաց այստեղ. մնացել ենք երիտասարդներս, թէեւ անելու էլ բան չկայ. նամակ գրեցինք Վահանին էլ Վարդգէսին<sup>43</sup> էլ, բայց չեկան ու չեկան, մինչդեռ նրանց մէկն ու մէկը ներկայութիւնը մեծապէս կարեւոր էր այստեղ:

Տրամադրութիւնները դէպի հայերը չափազանց վատ էին մէկ ժամանակ. վերջերս պէտք է ասել որ բաւականին փոխուել է դէպի լաւը:

Պատերազմը սկսուելուն հետ սկսուեցաւ նաեւ չեթայական գործունէութիւնը, որն արտայայտուեցաւ բացառապէս հայերուն դէմ: Բասենը ամբողջապէս քարուքանդ եղաւ չեթաներուն ձեռքով. նոյնը նաեւ Կարնոյ դաշտը: 50-100 եւ դեռ աւելի ճիւղերներով կը լեցւէին հայ գիւղերը պահանջելով գէնք, դրամ: Զինաթափութեան մի ճարպիկ միջոց էր եւ պէտք է ասել որ յաջողուեցաւ:

Կարնոյ դաշտում սպանեցին նաեւ Օձնի գիւղի Տ. Արիստակէս քահանան (դաշնակցական): Բարբարոսութիւններ շատ եղան: Եղան գիւղեր ուր դրամ ու գէնք առնելու համար գիշերով կանանց ու երեխաներին լրցորին գետը, այդպիսով փրկանք ու խոստովանութիւն կորցելու համար, ու յաջողեցան. այսքանը դեռ բաւական չէ, գրաւեցին հայերի ունեցած ցորենն ու դարին ու դարմանը (յարդը), իսկ այժմ էլ հայ գիւղերը դատարկել են տալիս հիւանդանոց դարձնելու պատճառով: Այս խժեղութիւնների մի շատ թոյլ մասն էլ գործադրուեցաւ նաեւ թուրք գիւղերի վրայ բայց այս՝ շատ աննշան չափով:

Տրամադրութիւններու այս վատթար շրջանին էր որ բանակի մէջ ծառայող հայերին զինաթափեցին եւ շատ

չատերին էլ կոտորեցին անձայն, անչառակ. աղաղակող եւ վրդովեցուցիչ փաստեր կան այս տեսակէտէն: Բասենի մէջ 60 հայ գիւղերներ մի անգամից մի ձորի մէջ սպանեցին եւ այսպէս շատ տեղեր: Անձայն ու անչառակ մի կոտորած էր այդ, որ բաւական ժամանակ տեւեց եւ այժմ մեղմացած է կամ աւելի ճիշտը վերջացած բարեբախտաբար:

Այս շրջանին էր որ մենք ժողով գումարեցինք եւ որոշեցինք կուսակալին դիմել. դիմեցինք. ինքը դեռ նոր էր եկած. մեզմէ առաջ ինքը խօսեց այն բոլոր բաները ինչ մենք պիտի խօսէինք եւ պատուի խոստում տուեց դադարեցնել այդ բոլորը եւ հեռացնել պատասխանատուները: Իր ասելով առ նուազն 6 հոգու մահուան պիտի դատապարտէին դաշտում կատարուած խժեղութիւնների համար. մահուան մինչեւ այժմ ոչ [ոք] չդատապարտուեց ի հարկէ, բայց արդար լինելու համար պիտի ասեմ ի հարկէ որ այնուհետեւ իսկապէս որ չեթայական գործունէութիւնը մեծ չափով մեղմացաւ, այստեղից հեռացուեցան Հիլմին ու Շաքիրը<sup>44</sup>, երկու այդ սրիկաները, որոնք պատասխանատուներն էին այդ տխուր դէպքերուն: Ի միջի այլոց ասեմ որ Հիլմին՝ մեր յաճով Բայագէզում սպանել է տուել մեր ընկեր Թորոսին<sup>45</sup>: Մեր ստացած տեղեկութիւնները պէտք է ասել որ բաւական վստահելի է: Այսպէս սիրելիս այս վիճակը տեւեց բաւականին երկար. բացի այս, նոյն այդ մարդիկ ծրագրել էին իբր թէ մեզնից աչքի ընկնողներին սպանել տալ մէկիկ մէկիկ: Այս տեղեկութիւնները մեզ հաղորդել են տեղացի վաճառական թուրքերը, որոնք հակառակ են նման քայլերին, շատ հասկանալի պատճառով. պէտք է ասել որ շատ վատ շրջան էր այդ. մենք հնարաւորութիւն չունէինք սերտ յարաբերութիւն պահպանելու կուսակալի հետ կամ ուրիշների հետ: Մեր յարաբերութիւնն եղաւ մի անգամ: Կուսակալը քաղաքավարի էր եւ խնդրեց որ միշտ դիմենք իրեն, բայց իրեն հետ տե-

40.- Բովանդակութեանն եւ գրութեան վերջաւորութեան նշում «Սանահերդ» ստորագրութեանն յայտնի կը դառնայ, որ Ռոստոմի ուղղումը ծածկագիր այս նամակի հեղինակն է Կարնոյ «Յառաջ» թերթի խմբագիր Փափախեան Փիլոսը, ծանօթ նաեւ Մարալ ծածկանունով: Արդարեւ Ռոստոմ եղած էր կնքահայր Փիլոսի զակից:

41.- Բարթող, Գասպար – անդամներ Կարնոյ Կեդր. կոմիտէին:

42.- Վանիկ – Թերլեմէզեան Միհրան, որ իբրեւ Վանի պատգամաւոր Հ.Յ.Դ. Տրդ Ընդի. ժողովին մասնակցելէ ետք՝ պիտի մնար Կարնոյ, ապա զինակոչի ենթարկուելով՝ սպանուէր թուրքերու կողմէ:

43.- Փափաղեան Վահան եւ Մերենկիլեան Յովհաննէս, պետական երեսփոխանները Վանի եւ Կարնոյ:

44.- Իթքիխատական ղեկավարներն են հայկական ջարդերու պատասխանատուներն:

45.- Թորոս կամ Դարվիշ. Ալոյեան Գալուստն է, յեղափոխական վաստակաւոր գործիչ, դասադրաբար սպաննուած թուրքերու կողմէ:





սակցել է 2 օր ետքը յանկարծ գոլորդուհի<sup>46</sup> կողմից փնտռուեցանք ես եւ Վահան. երբ հետաքրքրուեցանք մեզ փնտռելու պատճառով, զանազան պատասխաններէ վերջ, վերջապէս մեր բժիշկը մեզ յայտնեց թէ «որովհետեւ դաշնակցականներ էք՝ կ'ուզեն ձեզ հսկողութեան տակ առնել՝ իմանալու համար քաղաքականութիւնով կը զբաղիք թէ ոչ»: Այս բանը ինձ թւում է պատասխանն է կամ անմիջական արդիւնքը մեր կուսակալի հետ ունեցած տեսակցութեան: Այս էր պատճառը որ բազմիցս գրեցինք Վահանին որ անցնի Կարին: Բայց նա տեղից էլ չչարժուեց ու մնաց Մուշ, մինչդեռ յարաբերութիւն պահելը շատ պէտք էր. պէտք է եւ այժմ: Բռնուած բասենցիները մօտ բռնուած են նաեւ կուսակցական թղթեր, օրագիրներ. սրանց մէջ կան մարտական գործունէութիւն, գինական ֆոնդ եւ սրանց նման բաներ: Պատերազմական ատեանը հիմնուելով սրանց վրայ մեզինց պահանջեց ծրագիր-կանոնագիրը. տրւինք, բայց ի՞նչ պիտի հասկանան. մէկը պէտք է որ անհրաժեշտ լուսաբանութիւնները տայ: Կանչել էին Մարտիրոսին ու Ղազարին. գնացին եւ այնպիսի բացատրութիւններ տուին, որ աւելի պիտի կասկած [տան] քան մեր լուսաբանութիւնները. ես առաջարկեցի որ մէկը ընկերանայ ինձ, երթալ անհրաժեշտ լուսաբանութիւններ տալու. դժբախտաբար չեկան, ես էլ իմ լեզուի տկարութեան պատճառով խոհեմութիւն համարեցի մենակ չգնալ եւ այդպէս կը մնայ աւելորդ կասկածների մէջ, մինչդեռ Վահանի ներկայութիւնը կրնար փրկել մեզ այդ կասկածներից:

Դառնանք բանտարկեալներին. Պետրոսին<sup>47</sup> աքսորեցին Կեսարիա. բասենցիների քիչ մասը մնացած է բանտը, մեծ մասը հանեցին արդէն: Կուսակցական խնդիրների մէջ մոռացայ գրել դրամի մասին: Քո մեկնելուց յետոյ որքան փորձեցինք գոնէ մի 200 ոսկի ստանալ եւ ճամբել Մուշ, չյաջողուեցաւ. քեզինց յետոյ Խաչիկն էլ մեկնեց պատերազմի դաշտը եւ կը մնայ դեռ:

Ստացայ 85 ոսկի եւ ինձ մօտ եղածից էլ 15 վրան դնելով տուի Ս.ին: Ինձ մօտ եղածից 30 ոսկի էլ տուել եմ Կ. Կ.ին ի հաշիւ բանտարկեալների: Չգիտեմ պէտք էր տալ թէ չէ, բայց հաւաքաբար որոշել ու տուել ենք. բանտում այնպիսի ընկերներ կային, որոնք չէին ստանում ուրիշ տեղերից եւ բացարձակապէս զուրկ էին միջոցներից: Այդ 30 ոսկու մէջ է նաեւ Կ. Կ.էի վերցրած 10 ոսկին, որ տուին Ստեփանեանին<sup>48</sup>:

Պատերազմի լուրերից շատ բան չեմ հաղորդում որովհետեւ գիտեմ որ այնպէս էլ կ'իմանաս արդէն: Այսքանը ասեմ որ առանց կռուի էլ օսմ. բանակը սարսափելի արագութեամբ հիւժուում է, քայքայւում. հիւանդութիւնները՝ դիֆ, դիֆուս, դիզենթրի նաեւ սոսկալի կերպով տարածուեցին. երեւակայիր որ միայն քաղաքում օրական 4-500 մահ կայ, չհաշուած դեռ բանակի մէջ (պատերազմի դաշտում) եղած մահերը: Մօտ մի ամիս առաջ, երբ այստեղ կուսակալի նախագահութեան տակ բժշկական ժողով տեղի ունեցաւ, ուր կուսակալը յայտարարեց որ մինչեւ այժմ բանակի կորուստը, մէջը հաշուելով, գերի, սպանուած, փախստական, հիւանդ — թիւը կը հասնի 140.000-ի. այս մի ամսուայ մէջ զոհերը անհամեմատ աւելի շատցան քան առաջ էր: Ախար, ուտեստ չկայ, սնունդ չկայ, հագուստ չկայ, խնամք չկայ: Վերջին կռուի ժամանակ (Օլթիի շրջանում) սարսափելի կերպով ջարդուեցաւ մեր բանակը. շուրջ կայ որ պատերազմի դաշտում զօրքը ըմբոստացել է եւ վիրաւորել պատերազմի նախարար էնվեր, գերման հրամանատարն եւ իր եավերը<sup>49</sup>. որքան ճիշտ է չգիտեմ. եավերի վիրաւոր ըլլալը հաստատ է:

Եթէ կարելի է գրիւր խնդրում եմ. հինգ նամակից աւելի է որ գրում ենք Պոլիս եւ ոչ մի պատասխան չենք ստանում. Վանը նոյնպէս լքել է մեզ. այդպէս պէտք է լինէր...

Ձերմ համբոյրներով  
(Ստորագրած ՍԱՆԱՀԵՐԴ)

Յ. Գ.- Չես մտածում մեզ էլ քեզ մօտ տանել ?—  
հեռագիրը ու բաց նամակը ստացել ենք:

46.- Չօրամասի (հրամանատարէն):  
47.- Գաւաֆեան Պետրոս, անդամ Կարնոյ Կեդր. կոմիտէի:  
48.- Ստեփանեան Ստեփան, ծանօթ Բալաջան ծածկանուով:  
49.- Եավեր՝ համհարգ:





Մատենանքի 1190ա, էջ 747-750  
N° 297

9.- Հ.Յ.Դ. ՊԱԼՔԱՆԻ Կ. ԿՈՍԻՏԷԷՆ  
ՊՈԼՍՈՅ Հ.Յ.Դ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾԻՆ

Մոֆիա, 5 Յունուար 1915

Ընկերներ!

Ստացանք ձեր 26 դեկտ.ը. կը հաստատենք մեր 16 դեկտ. 5ը. դրկած էինք Minerva-ի<sup>28</sup> հասցեով: Ձեր բոլոր նամակներուն ճշգրիտ կերպով պատասխանած ենք: Կրկենք նախորդ նամակներուն գլխաւոր կէտերը, ենթադրելով որ չէք ստացեր: «Ռումանիոյ մէջ սկսած էր կամաւորական շարժում, շատ հրապարակային եւ վտանգաւոր կերպով: Մեզնից մէկը դրկեցինք եւ միաժամանակ յաջողեցանք շարժումը կասեցնել. քիչ վերջ գգուշացումի [?] մենք ամէն միջոց ի գործ դրինք. մտանք բանակցութեան մէջ ռուսաց դեսպանատան հետ. հեռագրեցինք մերոնց Թիֆլիս, բայց արդիւնք չունեցանք:

Ամերիկայի հետ կանոնաւոր բանակցեր ենք. անոնք մեզնից ուզած էին դրամները փոխադրելու միջոց. մենք գտանք պոլկարական վտահանքի պանքաներ, որով հնարաւոր կը լինի բոլոր գումարները հոս փոխադրել եւ ապա Պոլիս կամ Կովկաս:

Եզրիպտոսի հետ նոյնպէս կը թղթակցինք. այնտեղ սկսած են հանգանակութեան. մինչեւ ցարդ մօտաւորապէս 4000 ոսկի հաւաքած են. մտադիր են շուտով Սոֆիա ուղարկել մի պատգամաւոր, որպէսզի գայ մեզ հետ խորհրդակցելու, թէ արդեօք ի՞նչ նպաստաւոր հանգամանքներ կան, որ միացեալ ուժերով արտասահմանում կազմակերպենք կամաւորական զօրքը Կիլիկեան հայութեան պաշտպանութեան համար: Ստացած ենք, ձեզ փոխադրելու համար, Եզրիպտոսի 3200 Ֆր.ը, բայց Անգլիայէն պատասխան չստացուեց, թէ եւ մեր չէքը գանձուած է, որովհետեւ մենք չէքը այդ պայմանով ծախեցինք. եթէ մեր չէքը այստեղ գանձուի, դրամները յետ պիտի տանք:

Երկար ժամանակ Կովկասէն ո՛չ մի գրութիւն չստացանք. անցեալ օր միայն ստացանք ռայոնական ժողովներու արձանագրութեան ամփոփումը, որի կարեւոր կէտերը հետեւեալներն են.— Ազգային բիւրոն առնել մեր կուսակցութեան ազդեցութեան տակ. կամաւորական խմբեր կազմակերպել Երկրի պաշտպանութեան համար եւ միաժամանակ ուժ տալ Կովկասում մեր կազմակերպութեան վերակազմութեան: Թիֆլիսէն մինչեւ ցարդ ոչ մի պարզաբանող նամակ չէ հասեր: Մենք Կովկասի գործերու մասին նոյն անգիտութեան մէջ ենք, ինչ դուք: Անցեալ օր ժընեւէն նամակ ստացանք, ուրկէ կը հասկցուի, որ Ազգային բիւրոն մերոնց գործն է. ունի հետեւեալ բաժանումները.— Տնտեսական, ինքնապաշտպանողական, գաղթականական, ապագայ աւտո-

նոմ Հայաստանի օրէնքները մշակող յանձնախմբեր: Կամաւորական գործին կառավարութիւնը յատկացուցած է 100000 ռուբլի: Չաւրիեւր Պաքուից նոյնքան հաւաքած է. նախատեսուած է 1.000.000 ծախք: Մեզ կը թուի, թէ ժընեւի այս տեղեկութիւնները շատ հին են. այժմ կամաւորներու թիւը շատ աւելի բարձր է: Անդրանիկի խմբի (1200 հոգի) հետ մեկնած են Սեպուհը՝ օգնական հրամանատար, Սամսոնը<sup>50</sup>, Չաւրիեւր եւ Չամալեան: Դրոյի խումբը Իգտիրում 480 հոգի. խմբի մէջ են Գարոն եւ Խէչոն: Քեռիի խումբը 500 հոգի՝ Սարիղամիշ. խմբի մէջն է Արարատեան: Համագաւաի խումբը 450, Կաղզուան է. խմբի մէջ է Վալադեան:

Այժմ խօսենք կռիւներու մասին, այնքանով ինչքանով «Հորիզոն»ներից գիտենք: Պատերազմի սկզբին ռուսները հասան մինչեւ Քէոփրիւ-Քէոյ մէկ կողմէն եւ մինչեւ Թուրքաղ (Մնուսի ուղղութեամբ) միւս կողմէն, բայց շուտով թուրքերը ուժեղացան եւ Քէոփրիւ-Քէոյը ետ առան. ռուսները մնացած դիրքերը պահեցին. բայց քիչ ետք վերստին թուրքերը ուժեղացան եւ ետ քշեցին ռուսները Վերին Բասենէն. այդ առեւն է որ սկսաւ գաղթականական մեծ շարժում Բասենի հայ գիւղացիներու կողմէ, որոնք մեծաւ մասամբ խմբուեցին Սարիղամիշի եւ Կարսի մէջտեղը: Վանի կողմը ռուսները, գլխաւորաբար մերոնք՝ Անդրանիկի խումբը շատ լաւ առաջ եկան. Անդրանիկը գրաւեց Պաշգալան եւ Սարայը, բայց քիչ ետք, Պաղտատէն հասած զօրքերով թուրքերը ուժով-ցած՝ յետ մղեցին ռուսները, որոնք շատ քիչ թիւ ունին ամէն տեղ: Այդ յետ նահանջման ժամանակ սկսաւ փախըստականներու կարաւանը դէպի Սալմաստ եւ Թաւրիզ. Պաշգալում թուրքերը ըրին սարսափելի կոտորած. 300 տնից, ազատել են 15 հոգի:

Ռուսները այս անգամ նոր ծրագրով սկսան գործել.— Թոյլ տուին թուրքերուն որ Օլթիով առաջանան Արտահան եւ անկէ ալ մինչեւ Սարիղամիշ. թուրքերը մեծ խանդավառութեամբ գրաւեցին Արտահանը եւ երբ հասան Սարիղամիշի մօտերը բաւական խոշոր ուժերով, ռուսները իրագործեցին իրենց ծրագիրը. կտրեցին թրքական բանակի պարենաւորումը եւ սարսափելի ջարդ տուին թուրքերուն. մի ամբողջ զօրաբանակ գերի ընկաւ, հրամանատարով (Իհսան փաշա) եւ սպաներով. թուրքերը ունին 30000 սպանուած. այս լուրը ամէն աղբիւրէ հաստատուած է: Այժմ սկսած է թուրքերու նահանջը, բայց իրողութիւնը հոն է, որ ռուսները չունեն այն ուժերը, որոնցմով շարունակեն առաջանալ. կը

50.- Սամսոն – Թաղեմուսեան Ստեփան:



Թուի, թէ կռիւը պիտի տանեն démonstratif<sup>51</sup> հողի վրայ: Կամաւորական զնդերը ճակատագրական մեծ դեր կատարել են այս յաջողութիւններուն մէջ. դժբախտաբար Քեռու խումբը ունեցած է սարսափելի կորուստներ. անցեալ օր լուր կար, որ վերակազմուել եւ էլի անցնելու է ճակատի գծերը:

Ատրպատականի սահմանէն թարմ լուրեր չկան առայժմ. կը թուի, թէ ռուսները այնտեղ էլ մեծ ուժ չունեն, բայց ամէն պարագայում թուրքերուն դիմադրելու չափ ուժ ունեն, բայց դժբախտութիւնը հոն է, որ մեր յոյսերէն եւ ոչ մէկը կ'արդարանայ. արագ նուաճման նշաններ չեն երեւար եւ ռուսական բանակի այդ alternatif<sup>52</sup> շարժումներուն զոհ կը գնայ հայկական ազգաբնակչութիւնը:

Բացի գրուած տողերէն, Ռուսաստանի մէջ օրուան հարցն է Թրքահայաստանի կցման թէ ինքնավարութեան պարագան: Միլիոնավորի պէս մարդը դէմ է հայկական ինքնավարութեան: Հայկական մամուլը եւ ռուսական մամուլը մի մասը արտայայտուեցան ընդդէմ Միլիոնավորի եւ իր կազմակերպութեան. տարօրինակը՝ կարեւոր ռէակտիոնէր շրջանները կողմնակից են հայկական ինքնավարութեան: Պետերբուրգի եւ Մոսկուայի հայերը կազմակերպում են դասախօսութիւններ ի նպաստ հայկական ակտիւնիստի:

Առայժմ ասոնք են աչքի ընկնող նորութիւնները:

Զեր՝ Արեւելեան բիւրոյին համար գրած նամակը ուղարկեցինք. այս անգամ գրածներն էլ կ'ուղարկենք:

Ժընեւի նամակէն կ'իմանանք, որ Վարանդեանը շուտով կ'անցնի Կովկաս, Պուլկարիոյ վրայով: Ռոստոմը նոյնպէս պիտի երթայ, բայց հիւսիսով: Վրացեանը մեզ կը թուի, թէ Թիֆլիս բիւրոյական գործով զբաղուած է. բոլոր հեռագրերը նա է ստորագրում:

Դրամները հոս փոխադրելու համար Ամերիկա հեռագրած ենք եւ պատասխան չենք ստացեր: Երէկուան նամակին օրինակը ձեր մատնանշած տեղերը կ'ուղարկենք:

Վերջապէս, երկու երեք օր առաջ կարելի եղաւ կասեցնել կամաւորական շարժումը Ռուսմանիոյ մէջ եւս, շնորհիւ Թիֆլիսէն եկած հրահանգի: Գլխաւոր գրգռողները հնչակեաններն էին, ի հեճուկս մեզ, որովհետեւ նրանք անջատ Ազգային բիւրոյէն կը գործեն: Ազգ. բիւրոն ռազմական ինքնապաշտպանական գործը յանձնել է միայն Դաշնակցութեան. դրանից մարդիկ վիրաւորուել են. ուստի ամէն կողմ հեռագրել են, որ -----<sup>53</sup> այդ պատճառով էլ Ռուսմանիոյ մէջ սկսած են գրգռել կամաւորական շարժումը: Ռուս կառավարութիւնը կը ճանչնայ միայն Ազգ. բիւրոյին ներկայացուցած ինքնապաշտպանական մարմինը եւ անոր միայն կը մատակարարէ գէնք եւ այլ միջոցներ:

Անցեալ անգամ գրած ենք, որ Ամերիկայի մէջ կազմուած է միջկուսակցական յանձնախումբ՝ համագործակցութեան համար: Զգիտենք, որ որքան ժամանակ պիտի ապրի այդ համաձայնութիւնը:

Մեր ջանքերով շուտով Սոֆիայի մէջ կը հրատարակուի «Հայաստան» եռօրեայ թերթը, որի նպատակը պիտի լինի պարզաբանել Բալկանի հասարակութեան ներկայ դէպքերը եւ կազմակերպել — միացնել հասարակութիւնը համագաղտին օգնութեան գործին շուրջ եւ միաժամանակ տարածել մեր կուսակցութեան բարոյական ազդեցութիւնը, կարենալ դիմագրաւելու համար ամէն վտանգաւոր երեւոյթի՝ յատկապէս Պալքաններու մէջ, ուր տեղի թուրքերը կը հաւաքեն բրովաքասիոնի ամենաշօշափելի փաստերը: Գործը թէպէտ սկիզբէն դրինք համերաշխական հողի վրայ, ընդունելով եւ հնչակեաններու մասնակցութիւնը մատակարարական խնդրում, բայց ետքէն կամաւորական հարցի շուրջ առաջ եկած անհամաձայնութեան պատճառով նրանց ստիպուեցանք դուրս ձգել:

Զգուշութեան համար ամէն միջոց ի գործ կը դնենք. նոյնիսկ թուրքիկ մը հանեցինք, որով հասարակութեան կը յայտնէինք, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը պալքաններու մէջ կամաւորական զնդեր չի կազմակերպել եւ կազմակերպողներուն պէտք չէ քաջալերել. այս կոչը հասարակութեան վրայ լաւ տպաւորութիւն թողեց:

Արտաքին աշխարհի մէջ օրուան նորութիւնն է իտալո-պուլկարո-ռոման մերձեցումը. տիրող կարծիք է, որ սրանք ի վերջոյ կը միանան Երրեակ համաձայնութեան: Եւրոպական պատերազմը կայուն վիճակ ունի. նպաստաւոր է առայժմ համաձայնութեան վիճակը: Մեծ դժգոհութիւն կայ Հունգարիոյ կողմէ Աւստրիոյ դէմ. Պերխուլթը<sup>53ա</sup> հրաժարուեց, որովհետեւ կ'ուզէր մի քանի դիվիզիա գործ բերել Հունգարիա եւ Կարբատները պաշտպանել. բացի այդ չկրցաւ յաջողցնել աւստրո-սերպ խաղաղութիւնը, որու բանակցութիւնները սկսած էր վարել մի քանի շաբաթէ ի վեր:

Այս է առայժմ ընդհանուր կացութիւնը. թերթերու եզերքով չգրեցնուս պատճառը՝ թերթերը (պուլկարական) մեծամասնութիւնով թուրքերու աննպաստ բաներ պարունակելն է<sup>54</sup>. վախենում ենք, որ չեն տար: Պիտի փորձենք դարձեալ դրկել. մի քանի թիւ ռուսերէն թերթեր անցեալ օր դրկեցինք, երեւի չէք ստացեր, Minerva-ով<sup>28</sup>:

Խաժակը<sup>55</sup> դատարանի կողմէ անպարտ արձակուած է: Կուրի դաշտում մեռած է Զուլայը<sup>56</sup>, Պարսկաստան:

Ընկերական բարեկներով՝  
Հ. Յ. Դ. ԲԱԼԿԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԷ

51.- Ֆրանսերէն – ցուցական, ցուցադրական:  
52.- Ֆրանսերէն – փոխն ի փոխ, փոփոխական, մէկ առաջ, մէկ ետ իմաստով:  
53.- Անընթեռնելի մէկ տող:  
53ա.- Կոմս Գրաֆ Բերխտոլդ՝ Աւստրիոյ վարչապետ:

54.- Այնպիսիքն այն իրողութեան, որ գրաքննութեան խուսափելու համար նամակները կը գրուէին ընդհանրապէս առաքուած թերթերու լուսանցքներուն եւ բաց տարածութիւններուն վրայ:  
55.- Գարեգին Խաժակ (Չապալեան):  
56.- Չուլայ՝ ծածկանունը Կարապետեան Լեւոնի:







Փաստ. 882-58

10.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾԵՆ ԲԱԼԿԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

8 Յունուար [1915]

Ընկերներ!

Ստացանք ձեր 19 դեկտ. թուակիրը: Կը հաստատենք մեր 9 դեկտ. թուակիր նամակը, ինչպէս եւ դեկտ. 23 բաց կարտը եւ նոյն ամսուան 26 թիւ երկար նամակը: Պէտք է ասած, որ չափազանց ծոյլ էք յարաբերութիւն պահպանելու: Պիտի գրել աւելի յաճախ, եւ մանրամասն տեղեակ պահէք մեզ բոլոր դրսի անցուղարձերին: Մենք արտաքին աշխարհից կտրուած ենք եւ մեր յոյսը ձեր վրայ է դրուած, իսկ դուք չափազանց դանդաղութիւն էք ցոյց տալիս: Կարեւոր հեռագիրներ պատերազմի ընթացքի մասին, տեղեկութիւններ կովկասեան դէպքերից, իսկոյն եւեթ պէտք է գրել եւ ուղարկել մեզ: Գրեցէք դոկտորի, Սարգսի, ձեզ տուած հասցէներով: Երբեմն պարզ ջուրը կը գրէք, ի հարկէ տակը [գաղտնի] մեղան, երբեմն նամակ նոյն ձեւով: Իւրաքանչիւր 3 օրը մէկ երկու տող գրելը դժուար բան չէ, եւ հասնում է տեղ եթէ զգուշութիւն պահէք: Երբեմն էլ որեւէ գերմանական կամ նոյնիսկ ֆրանսիական թերթ կրնաք ուղարկել, միշտ նոյն ձեւով գրուած: Ի սէր Աստուծոյ, այսուհետեւ աւելի գրեցէք, այլապէս կ'ապրենք մոլթի մէջ:

Զգիտենք թերթը ի՞նչ բիւզէջով եւ ի՞նչ միջոցներով է հրատարակուում<sup>57</sup>: Բալկանի պատգամաւորը Ընդհ. ժողովում այդ խնդրի մասին խօսել է եւ մերժում է ստացել, այնպէս որ Ընդհանուր ժողովի որոշումներէն չպիտի դուրս գաք եւ թերթ չպիտի հրատարակէք: Մենք կը դիմենք...<sup>58</sup> չգիտենք ներկայ պայմաններում ի՞նչ պահանջ եւ մանաւանդ ի՞նչ կարիք կայ նման ձեռնարկի մը: Եթէ անպայման հրատարակելու էք, բայց եւ այնպէս կուսակցական միջոցներէն որեւէ սանտիմ չէք ծախսելու: Արդէն մեր գաւառական թերթերի համար կուսակցական բիւզէջից երբեք դրամ չէ տրուած եւ իրաւունք էլ չունենք: Ազատամարտը ժամանակին բացառութիւն կազմեց, որ եւ մեծ աղմուկների տեղիք տուաւ: Այժմ այդ եղած ծախքը մաս մաս վճարում ենք: [Տիգրանը]<sup>59</sup> Կովկաս գործ չունի, նա ուղարկուած է Բալկանների համար, ուրեմն այնտեղ էլ մնալու է, մինչեւ նոր կարգադրութիւն անոր մասին: Ընկերները երբ մէկ վայր են գնում, պիտի աշխատեն երկար ու յամառ աշխատանքով գործ ստեղծել եւ ոչ թէ մէկ կազմէն միւս կազմը անցնելու մասին մտածեն:

Ամերիկա ուղարկուելիք թղթակցութիւնները եւ տեղեկագիրները ուղարկել ենք Ֆիլիպէի ընկերներին, որ

նրանք ուղարկեն Ամերիկա: Հարցրէք թէ արդեօք ստացել եւ ուղարկել են թէ ոչ:

Եզիպտոսի համար մտածում ենք ընկեր ուղարկել, տեսնենք պիտի յաջողինք: Եզիպտոսէն ուղարկուած 100 անգլիական լիրան չստացանք: ինչո՞ւ ուշացրիք այսքան ժամանակ: Ամերիկայէն կրնան դրամ ուղարկել որքան ցանկանան, մեր իրենց ցոյց տուած ճանապարհով: արդէն ուղարկածները ամէն անգամ էլ ապահով ստացել ենք:

Համերաշխութիւնը լաւ էք արել որ կատարել էք: Իրար միւս ուտելու ատեն չէ. միայն կուսակցական նըպատակով հանգանակութիւններ երբեք միասին կատարելու չէք: զգոյշ պէտք է լինէք այդ ուղղութեամբ ոեւէ քայլ անելէ:

Ռուս-թուրք պատերազմը ի՞նչ վիճակում է. արդեօք ճիշտ է, որ տաճիկները Արտահանի եւ Սարիղամիշի մօտերը 40000 հոգի կորուստ են ունեցել:

Երկրից նոր տեղեկութիւններ չունինք, որ ձեզ հաղորդենք: Ընկեր Կրանը խնդրում է, որ Ռուսընք ընկերուհի Վարդուհուն գրէք, որ հետեւեալ կէտերը նկատի ունենայ: Վարդուհուն պիտի գրէք Քէստանեանի միջոցաւ: Բիւզանդիոններու<sup>60</sup> 4 էջանոց երրորդ էջին առաջին սիւնակին էն վարի տողէն, աջէն ձախ սկսելով կիտաղրուած գրերը կարգալ առաջին սիւնակը վերջացնելուց՝ երկրորդ սիւնակից դարձեալ վարէն սկսել նոյն ձեւով շարունակաբար:

Թուրքերէնով Ֆիլիպէէն թերթ ուղարկել (Պալեանը կամ մի ուրիշը) նոյն ձեւով, կէտադրելով յարաբերել:

Եկատերինոտարի եւ Մայկոպի հասցէները գրելիս անպատճառ աւելացնել նահանգին անունը, Բուպանրակի օպլասթ շատ կարեւոր է. եղօրս Վարդանին հեռագրել Maikop, Roubanski, Chapovoloff Vartan, quarantine jours Iskouhie partie, sans nouvelles. telegraphier Roustchouk Kestanian Haig<sup>61</sup>. Ի հարկէ այդ յանձնարարութիւնը շատ արագութեամբ կը կատարէք: Ընկեր

57.- Խօսքը կը վերաբերի Պալքանի Կ. կոմիտէի ձեռնարկած «Հայաստան» թերթին, որուն առաջին թիւը լոյս պիտի տեսնէր 10 մարտ 1915ին:

58.- Նախադասութիւնը կիսատ մնացած, կախման կէտերով:

59.- Տիգրանը, արուած ըլլալով՝ հազիւ ընթեռնելի է: Արդարեւ խօսքը կը վերաբերի Խաչիկեան Տիգրանի (Արզուման), որ Բիւրոյի կողմէ Պալքանները որկուած էր իբրեւ գործիչ:

60.- «Բիւզանդիոն» – Պոլիս հրատարակուող անկուսակցական թերթ:

61.- «Քառասուն օր է Իսկուհի մեկնած առանց լուրի. հեռագրեցէք Ռուսոյնք Քեստանեան Հայկին»:



Կռանը<sup>62</sup> չափազանց անհանգիստ է իր ընտանիքի մասին: Եթէ Ռուսջուրում լուր ունին, որ ապահով տեղ է հասել, պիտի խնդրէինք մի բաց կարտով անմիջապէս այնտեղ գրէք որ հանգստանայ: Ինչպէս կ'երեւի մեր Կովկասի բերրոն չափազանց անփոյթացել է եւ նրանից մենք անկարող պիտի լինենք լուրեր առնել: Լաւ կը լինի որ գրէք Հրաչի[?] եղբօր Վարդանին, որ նա էլ իր իմացածները ձեզ գրէ, այդտեղէն դուք էլ մեզ գրէք: Նրա հասցէն հետեւեալն է. Maikop, Roubanski Oblaste Aram Chapovoloff: pour Vartan<sup>62ա</sup>. Ուրիշ ճար չկայ. մասնաւորների միջոցաւ պիտի աշխատիք տեղեկութիւններ ստանալ: Դոքթոր Տէր Դաւիթեանին էլ կրնաք գրել, ինչպէս եւ Արչակ Ջամալեանին կամ Նիկողայոս Աղբալեանին: Մասնաւորապէս առաջինին գրեցէք Սարգսի կողմէն որ ինքը կամ Սաթենիկը<sup>63</sup> պարբերաբար գրեն. թող Սաթենիկն էլ Սարգսի ծնողներին յայտ-

նի, որ լաւ են եւ առողջ, թող ապահով լինեն: Խնդրում ենք անմիջապէս նամակ գրեցէք օրիորդ Սաթենիկ Օհանջանեանին, Հորիզոնի հասցէով եւ ասէք, որ ընկ. Խաչատուրը<sup>3</sup> խնդրած է, որ ամէն շաբաթ անձնական նամակներ գրի ձեզ եւ տեղեկութիւններ տայ Կովկասի բոլոր անցուղարձերի մասին, որպէսզի դուք էլ մեզ գրէք նոյնը: Բացի այդ Խաչատուրի ընտանիքի մասին էլ թող տեղեկութիւններ հաղորդեն. ասացէք, որ առնուազն շաբաթը մէկ նամակ ձեզնից կը սպասենք: Թող խօսի եւ ընկերների հետ, որ շատ վշտացած ենք իրենցից, իրենց ծայր աստիճան անփութութեան պատճառաւ. Վարդանն ու միւս ընկերները ի՞նչ կ'անեն<sup>64</sup>:

Յոյս ունինք, որ դուք էլ այսուհետեւ աւելի ուշադիր կը լինէք եւ աւելի կանուխ կը գրէք:

Ընկերական բարեկենդրով  
Հ[ԱՅԱՍՏԱՆԻ] Բ[ԻԻՐՈՅԻ] Պ[ՈԼՍՈՅ] ՀԱՏՈՒԱԾ

Ռոստոմին գրեցէք, որ ընկերները խնդրում են որ Ռուսաստան գնալով Բուլգարիայով անցնի, իր հետ կարեւոր խօսելիքներ ունենք: Կրնաք նոյնիսկ հեռագրել:

ՆՈՅՆ

62.- «Ընկ. Կռանի» ինքնուրիշ կարելի չեղաւ ստուգել:  
62ա.- Մայկոպ, Ռուբանցկի Օբլաստ, Արամ Շապովոլով, Վարդանին համար:  
63.- Սարգիսը՝ Բարսեղեան Սարգիսն է (Օտապաշեան Պօղոս) անդամ Հայաստանի բիրոյի Պոլսոյ հատուածին եւ ընդհանրապէս Կ. Պոլիսէն առաքուած նամակներու հեղինակը: Սաթենիկը՝ կինն էր բժ. Տէր Դաւթեան Յովսէփի:  
64.- Խօսքը կը վերաբերի Խանասորի Վարդանին (Սեփրաբեան Սարգիս) եւ Կովկաս անցած միւս ընկերներուն, որոնք մասնակից էին կամաւորական շարժման:





Փաստ.1158-6  
N° 313

11.- ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԷՆ

Սոֆիա, 15 յունուար 1915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր դեկտ. 16 նամակը: 26 դեկտ. թուակիր Պոլսից նամակ ստացանք, որու մէջ մանրամասնօրէն նկարագրուած էր Կարինի եւ Վասպուրականի կացութիւնը: Համաձայն Պոլսի ընկերներու հրահանգին այդ նամակի բովանդակութիւնը ձեզ եւ միւս մարմիններուն շրջաբերականի ձեռով տեղեկացուցինք: Յատկապէս նամակը կը թելադրէր, որ մեր արտասահմանեան մամուլը զգուշաւոր արտայայտուի կովկասահայ շարժման մասին: Թուրքերը օրը օրին կը չարանան. «Հայրենիք»ի յօդուածները թարգմանաբար կ'ուղարկուին Պոլիս. թրքական շրջաններու անվստահութիւնը կը շատանայ օրը օրին:

Շրջաբերականը երկու օր առաջ ձեզ ուղարկուեցաւ: Պոլսի մեր ընկերները յուսահատել են եւ իրենց յոյսը՝ երկրի ժողովրդի կացութիւնը մեղմելու մասին, դրուած են մեզ՝ արտասահմանեան ընկերներուս վրայ:

Ձեզ ուղղակի նամակ չեն կարող գրել. ուստի մեր միջոցաւ կը գրեն: Ֆիլիպէի վրայով ձեզ ուղարկուած յօդուածների հետ պիտի ստացած լինէք ընդարձակ տեղեկագիր՝ Երկրի կացութեան մասին:

Ընկ. Ջարդարեանին վճարուած է մինչեւ հիմա 15 օսմ. լիրա. 5 ալ պիտի վճարուի. ուրեմն համագումար 20 լիրա կը գեղչէք ձեր դրկած գումարից:

Ընկերներ Սարգիս Մինասեան եւ Շահպազ դրել են իրենց թեկնածութիւնը «Հայրենիքի» համար. եթէ ոեւէ մէկին յարմար համարէք մեզ անմիջապէս հեռագրեցէք: Պոլսի ընկերները ցանկացել են, որ Վրացեանը կրկին Ամերիկա վերադառնայ. այդ մասին մենք վաղը կը գրենք Կովկաս. եթէ իր համաձայնութիւնը ստանանք կ'իմացնենք ձեզ եւ Պոլիս:

Սրանից առաջ մեզինք ուզած էիք Ամերիկայէն Պալքանի վրայով դրամներ փոխադրելու միջոցներ. մենք գտանք հետեւեալ միջոցը.— վճարել Boston, First National Bank-ին ի հաշիւ Banque Générale de Bulgarie: Այս առթիւ ձեզ անմիջապէս հեռագրեցինք հետեւեալը.—

«Payez Bank First National Boston 4000 dollars pour compte Banque Générale de Bulgarie, Sofia, adresse Matéos Hagopian télégraphiquement»<sup>64ա</sup>. մինչեւ ցարդ

պատասխան չստացանք: Մի քանի օր առաջ գտանք մի ուրիշ վստահելի եւ աւելի նպաստաւոր հիմնարկութիւն, որի միջոցաւ նոյնպէս կարելի է փոխադրել.— վճարել այդտեղ National Shawmut Bank of Boston, ի հաշիւ Juda B. Israel et Cie. — Sofia: Այդ դրամատունը յանձն առաւ շատ քիչ աճիօ-ով<sup>65</sup> փոխադրել բոլոր գումարները Ամերիկայէն եւ վճարել Ռուսաստանի եւ Պոլսի չէքով: Մեզ ներկայացուցեր են մակերդոնական յեղափոխականները:

Կովկասէն ստացուած նամակէ մը կը քաղենք հետեւեալը.— «Կամաւորներու ամբողջ կազմակերպման եւ ղեկավարման գործը Ազգ. բիւրոն յանձնել է Հ. Յ. Դաշնակցութեան. կառավարութիւնը կը ճանչնայ միայն այդ մարմինը. կու տայ միայն գէնք. իսկ զգեստ, ճերմակեղէն, ուտեստ, բժիշկ եւայլն կը հոգան հայկական շրջանները. իւրաքանչիւր կամաւորի յատկացուած է 35 կոպէկ, բայց վերջերս կառավարութիւնը 10 կոպէկ աւելցուց:

Թրքական զօրքի մտնելը ռուսական հող բաւական ոգեւորել է Պաքուի եւ առհասարակ Կովկասի թուրք ազգաբնակչութիւնը. մի վայրկեան թուացեր է հայութիւնը պիտի ապրի 905-ի դէպքերը: Այժմ սկսուած է ինքնապաշտպանական խմբերու կազմակերպում, ոեւէ հաւանականութեան առաջ պատրաստ գտնուելու համար:

Մեր ընկերներէն Թորոսը<sup>45</sup> (Ալոյեան) սպանուած է իթթիհատի ներկայացուցիչ Հիլմիի ձեռամբ. մերինները առայժմ ցոյց կու տան, որ չեն մտածեր, որ իթթիհատը սպաներ է Թորոսը. մեզ էլ յանձնարարուում է, որ առ այժմ լուռ մնանք:

Պոլսէն դարձեալ կը գրեն դրամի մասին. փութացէք ոեւէ կարգադրութիւն ընել, որովհետեւ զարնան սկզբին բալկաններն էլ կը սկսեն վրդովուել, այն ժամանակ անհնարին կը լինի ոեւէ փոխադրութիւն:

Ընկերական բարեկներով  
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԷ

Մի քանի օրէն Սոֆիայի մէջ մեր ջանքերով հրապարակ կ'ելլէ «Հայաստան» թերթը. կը սպասենք կառավարութեան թոյլտուութեան:

ՆՈՅՆ

64ա.- «Հեռագրով վճարեցէք Պոսթքնի Ֆրոսք Նաշընըլ պանքին 4000 տոլար, ի հաշիւ Պուկարիոյ Պանք Ժեներալին, Սոֆիա. հասցէ.- Մաթէոս Յակոբեան»:

65.- Դրամատուային շահարաժմով, գեղով:





Փաստ. 882-65

12.- ՊԱԼՔԱՆԷՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾԻՆ

Ընկերներ!

Ստացած ենք ձեր 8 թուակիրը՝ կը հաստատենք մեր 5 Յոննուար թուակիրը, ինչպէս եւ 16 Դեկտ-ը: Մենք կանոնաւորաբար գրած ենք ձեզ. ձեր բոլոր յանձնարարութիւնները ճիշդ օրին կատարեր ենք, եւ եթէ զգուշացեր ենք թերթերի միջոցով ձեր տուած հասցէներին գրել, այդ եղեր է ձեր յանձնարարութեան համաձայն: Մենք միշտ նախընտրել ենք Տոքթորի միջոցով զրկել ատոր համար հարկ եղեր է սպասել մասնաւոր թղթատարի ժամանումին. միշտ թղթատարէն օգտուել ենք թղթատարը այս անգամ էլ ուշացեր է. մենք կ'օգտուինք մասնաւոր ու վստահելի մարդէ մը եւ նրա հետ կ'ուղարկենք այս նամակը:

Վերոյիշեալ նամակը կովկասէն զրկուածի copie-ն է. նոյնը ընդօրինակելով զրկեցինք ժընեւ, Գահիրէ եւ Ամերիկա: Այս առաջին նամակն է, որ ստացանք, խոստացեր են միշտ գրել: Ձեր յանձնարարութիւնները անմիջապէս կը կատարենք՝ թերթը կուսակցութեան սնտուկին վրայ չճանրանալու. անոր կարիքը ընդհանուր է, որովհետեւ չկայ ամբողջ Պալքանի մէջ թղթի կտոր մը, որ informer ընէ՝ մեր հասարակութիւնը անցած դարձածների մասին: Եզրպտոսէն ստացած դրամի գանձման լուրը երկու օր առաջ ստացանք. առաջին

պատեհութեամբ ձեզ կ'ուղարկենք գումարը:

Ռուսաստանում մեծ սանսիւն<sup>67</sup> կայ. վերոյիշեալ նամակը մարդու միջոցաւ զրկուած է:

Ռոստոմը մեկնած է Անգլիա. ձեր նախորդ նամակով ըրած յանձնարարութեան համաձայն ընկերները արտասահման ձեռնարկներ սկսած են: Միքայէլի<sup>68</sup> ջանքերով Իտալիայում շուտով լոյս կը տեսնի «Pro Armenia», որի շուրջ հաւաքուած են յայտնի երեսփոխաններ ու գրողներ:

Թուրքերի պարտութիւնը ճիշդ է. Թեւրիզը անցաւ ռուսների ձեռքը. թրքական Բասենի մի քանի կարեւոր կէտերը դարձեալ ընկան ռուսների ձեռքը. թուրքերը բոլորովին քշուեցան կովկասեան հողէն. միայն դեռ մաս մը կան Արտահանի ուղղութեամբ: Միքայէլը պիտի անցնէր կովկաս. երեւի դեռ մի ժամանակ կը մնայ վերոյիշեալ ձեռնարկի համար: Այս օրերս մեծ ջանքեր կան պուլկարօ-ռոման մերձեցման. օրուան քաղաքական մեծագոյն դէպքն է Իտալիոյ բացառապէս հակումը դէպի «Համաձայնութիւնը»:

Միլիկովը շարունակում է դէմ գրել «Հայկական աւտոնոմիային», այլ կարեւոր օրգաններ ի նպաստ: Ամբողջ ռուսական մամուլը կը զբաղի մեր հարցով: Պոլսում մնացած ընկերների կարիքը շատ զգալի է:

Ջամալեան, Աղբալեան եւ առհասարակ մեր բոլոր կարող ընկերները գնացել են կուռի դաշտ մեր կամաւորական խմբերի հետ, այնպէս որ նրանց չենք կարող գրել. բայց ընկեր Ա.ի յանձնարարութեամբ կը գրենք Ս.ին, որ մասնաւոր նամակներ գրէ:

Նամակները աշխատեցէք զիւրընթեռնելի գրել:

ԱՐՁՈՒՄԱՆ<sup>69</sup>

66.- Ֆրանսերէն – տեղեկացնէ, իրազեկ պահէ:

67.- Գրաքննութիւն:

68.- Վարանդեան Միքայէլի:

69.- Արզումանը՝ Խաչիկեան Տիգրանն է (գործիչ Պուլկարիոյ մէջ), որ կը գրէ Պալքանի Կեդր. կոմիտէին կողմէ: Նամակը անթուակիր է. Ռոստոմի «Լոնտոն մեկնած է» նշումէն պէտք է գրութիւնը տեղադրել 1915 թ. Յունուարի երկրորդ կիսուն: Ռոստոմ Լոնտոն մեկնած էր նոր տոմարով Յունուարի վերջերուն, հին տոմարով՝ Յունուարի կէսերուն:





Փաստ. 103-34

13.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾԷՆ ՌՈՍՏՈՍԻՆ

Պատճեն Հայաստանի Բիւրոյի Պոլսոյ հատուածի նամակի (Մտացուած է Յունուարի 30-ին)

Սիրելի Ռոստոմ!

Գնացիր ու լռեցիր, այն ինչ խոստացել էիր պարբերաբար մեզի գրել: Մենք քո գնալուցդ ի վեր ոեւէ նամակ չենք ստացեր քեզնից: Ընկերներից ոեւէ մէկը չկարողացաւ դուրս գալ Պոլսից: Թալէաթը խաբխբելով վերջիվերջոյ խաչատուրին<sup>3</sup> արգելեց հեռանալու՝ պատրուակ ունենալով թէ ուսաստաններին արգելուած լինելով, բացառութիւն չի կարելի կազմել: Շահրիկը ցանկացաւ անցնիլ Բուլկարիա. բայց նրան էլ մերժեցին, չնայած որ տաճկահայտակ է եւ գինուորագրութեան խնդիր չի կարող լինել նրան. բացորոշ կերպով մերժեցին, իբրեւ դաշնակցականի: Իբր թէ կ'երթայ եւ դուրսը թուրքերի դէմ լրագիր կը հրատարակէ: Մեզ թուում է թէ այս մարդիկը դաշնակցականներին պահում են իբրեւ պատանդ: Միայն Հրաչն<sup>70</sup> է որ ոեւէ ձեւով ցանկանում է դուրս թռչել, միւս ընկերները գանազան պատճառներով չեն ցանկանում հեռանալ: Շամիրը<sup>71</sup> շատ կը ցանկանայ անցնել դուրս, բայց ընկերները նրան արգելում են ինքնապաշտպանութեան խնդրի առիթով: Այս խնդիրը առանց նրան էլ կարելի է տանել, գուր տեղից նրա ներկայութիւնը կը պահանջեն:

Երկրի հետ միմիայն հեռագրական յարաբերութիւն ունինք: Կասկածելով թէ այսօր վաղը Մուշ-Վան կ'անցնի թշնամու ձեռքը նամակներ չենք գրում: Վահաբը Վան է, Վահանը Մուշ, Գեղամը<sup>72</sup> երէկ եկաւ բայց դեռ չտեսնուեցանք որ գրենք իր պատմածների մասին:

Այստեղ լուրջ կերպով կը վախենանք որ ուսները գրաւեն Հայաստանը եւ սկսին կոտորածներ: Ընկերները այն կարծիքին են որ այժմուսանից եւեթ, շատ գաղտնի եւ զգուշաւոր կերպով պիտի աշխատել Իտալիա, Ֆրանսա, Անգլիա եւ Ամերիկա, ինչպէս նաեւ Ռուսաստանում, բայց քանի որ չգիտենք թէ Կովկասի հայութիւնը ի՞նչ տեսակ յարաբերութիւնների մէջ է կառավարութեան հետ եւ ի՞նչ խոստումներ ունի, յարմար գտանք որ նախ գրուի նրանց եւ ապա այդ ուղղութեամբ աշխատանքներ կատարուի, որպէսզի թիւրիմացութիւնների տեղիք չտրուի:

Լաւ համարուեց, որ այս անգամ նախաձեռնումը Դաշնակցութիւնն անէ, բայց մենք մէջտեղ չերեւանք: Առ այժմ Եւրոպայի մեր բարեկամների միջոցով աշխատանք կատարուի, յարաբերութեան մէջ մտնելով կառավարութեան ազդեցիկ շրջանակների հետ: Դու պիտի տեսնուէիր Բերարի<sup>73</sup> հետ, ի՞նչ խօսակցութիւն ունեցաք, գրիր մեզ եւ վերոյիշեալներն էլ ի նկատի ունեցէք եւ այդ ուղղութեամբ մտածեցէք: Պոլսոյ դեկավար ընկերների, Կ. կոմիտէների եւ Բիւրոյի հատուածի ժողով ունեցանք մեպուսների պարլամենտից հրաժարուելու մասին: Որոշուեց, որ առ այժմ յետաձգուի Ընդհ. ժողովի որոշումը, վայրկեանը չափազանց անյարմար համարելով: Ուրեմն Վարդգէս եւ Գեղամ կը մասնակցեն նիստերին:

Ամերիկայից ընկերներ եկա՞ն. կարող է պատահել որ գան Մարսէլլ եւ չիմանան իրենց անելիքները. այնտեղի հետ յարաբերութիւն պահե՞լ էք:

Մուշից դրամ էին ուզել, առ այժմ հեռագրով 25 ոսկի ուղարկեցինք. որ ստացուի նոր գումարներ էլ կ'ուղարկենք: Մինչեւ հիմա Ամերիկայէն 300 ոսկի ստացանք: 100 յատկացրինք Զիֆոնեանին<sup>74</sup>: N° 11 չճարուելը՝ ստիպուած եղանք պերդկաններ գնել, միւսների պակասները լրացնել: Նամակներ գրեցէք Սոֆիա, անոնք մեզ կը հասցնեն: Շատ ու շատ կարօտագին բարեւեւում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾ

70.- Հրաչ՝ ծածկանուն Թիբեաբեան Հայկի, որ եղած էր Պանք Օթթումանի գրաման հերոսներէն եւ որ 1902-1908 անցուցած թրքական բանտերու մէջ:  
71.- Շամիր՝ ծածկանուններէն մէկը Բարսեղեան Սարգիսի, բուն անունով Օտապաշեան Պօղոս, անդամ Հայաստանի բիւրոյի Պոլսոյ հատուածին, որուն կողմէ առաքուած գրութիւնները իր գրչին կը պատկանին:  
72.- Երեքն ալ պետական երեսփոխան. յաջորդաբար՝ Վրաստան Արշակ (Վահաբ), Փափագեան Վահան, Տէր Կարապետեան Գեղամ:  
73.- Վիկտոր Բերար, ֆրանսացի քաղաքական դէմք, մօտիկ բարեկամ եւ գործակից Դաշնակցութեան:  
74.- Ինքնապաշտպանութեան ֆոնդին. N° 11-ը՝ մոսին հրացանն է:







Փաստ. 1158-7

14.- ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սոֆիա, 1915, Յունուար 17

Ընկերներ,

Ստացանք ձեր N° 121 նամակը: Դրամական առաքման մասին Կերձիքովի համար գրածնիդ ճիշդ է. նախ ուզեցինք նրա միջոցով ուղարկել, բայց ետքն յաջողեցանք Bankverein-ով փոխադրել:

Պուլկար պաշտօնական շրջանակներու եւ մեր յարաբերութիւնները զգալի բարեփոխութիւն կրեցին. մի ամիսէ ի վեր ձեռնարկած ենք Պալքանի մէջ հայաթերթ մը ստեղծելու. նոր տառեր ձուլեցինք, շէնք վարձեցինք եւ կը սպասենք կառավարութեան արտօնութեան, որը 1-2 օրէն յոյս ունինք ձեռք բերել:

Թուրքերը շարունակում են իրենց պրովոկատորական<sup>23</sup> արարքները. մենք ամէն զգուշութիւն ձեռք առել ենք:

Կամաւորական հոսանքը առայժմ դադարեցաւ. ուսուցիչները կ'աշխատեն Կոնստանդնուպոլիսի համաձայն ոչ ոքի անցագիր չեն տար (հիւպատոսարանները):

Երեք բժիշկները<sup>75</sup> եկան 10 օր առաջ. անոնք եւս չկարողացան մեկնիլ վերոյիշեալ արգելքին պատճառով. հեռագրեցինք մերոնց եւ ընդհանուր հիւպատոսարան էլ՝ chancellerie-ին, որ թոյլ տան սրանց մտնել Կովկաս. յոյս ունինք որ հրահանգ գայ:

Անհամբեր կը սպասենք ընկ. Վարանդեանի ժամանումին. երանի ընկերը լինի մեզ մօտ նոյն ժամանակ երբ Եգիպտոսի ընկերն էլ այստեղ կը լինի՝ խորհրդակցութեան համար:

Պոլսէն ստացուած նամակի տեղեկատուական մասը (երկրի կացութեան շուրջ) շրջաբերականի ձեւով մեր բոլոր մարմիններուն ղրկեցինք. մի օրինակ էլ ձեզ ղրկած ենք: Հարկ կը սեպենք այժմ աւելցնել մի քանի տեղեկութիւններ, գորս չէինք կարող շրջաբերականին մէջ դնել:—

Վանի դէպքը մեզ եւ կառավարութիւնը դրել է կատարեալ կախման մէջ: Ժանտարմաներու եւ Այգեստանի մեր տղաներուն ընդհարման օրը Վաւառեանը փութացել է կոնսակալին մօտ եւ ազդարարեր, որ վերջ տրուի խայտառակութեան. Արամը եւ Իշխանը<sup>36</sup> հազիւ կարողացել են մեր տղաներին զսպել:

Ալոյեանը (Թորոս) ղրկուած էր մերոնց եւ կառավարութեան համաձայնութեամբ Իգտիր, որպէսզի բանակցէր մեր խմբերի ներկայացուցիչներուն հետ. մի ուրիշն էլ ուղարկուած էր Սալմաստ: Վերջինս ապահով տեղ կը հասնի, իսկ Ալոյեանը դաւաճանութեամբ կը սպաննուի Պայագիտի մօտ. սպաննել տուողը Իթթիհատի ներկայացուցիչ Հիւմին է: Մերոնք առայժմ այնպէս

ուզում են ցոյց տալ, որ չեն կասկածիր անոր վրայ. մեզ գրած են, որ առայժմ չաղմկենք:

Կամաւորական արշաւանքի առթիւ երկար բանակցութիւններ եղած են մերոնց եւ թուրքերուն միջեւ (Երկրում). մերոնք ասել են, որ դեռեւս ուշ չէ որոշ զիջումներ անէք հայերու սիրտը գրաւելու համար. նրանք ասել են, որ ձեր առաջարկները նկատի կ'ունենանք Կարսի գրաւումից ետք: Վերջէն իբր թէ համերաշխութեան զաղափարին կը յանգին եւ պատգամաւորութիւն կ'ուղարկեն, որի վախճանը կը լինի մեր սիրելի ընկերոջ նահատակութիւնը:

Պոլսից թէ Թիֆլիսից շարունակ գրում են, որ պէտք է արտասահմանեան ընկերները սկսին ազդու միջոցներ ի գործ դնել Փրանսիական, անգլիական եւ չէզոք պետութիւններու կառավարութիւններուն մօտ հայկական աւտոնոմիայի համար հող պատրաստելու համար. ուստի այս պայմաններում չգիտենք թէ ինչքան յարմար էր, որ ընկեր Վարանդեան վերադառնայ Կովկաս:

Ստացանք Կովկասէն ընդարձակ տեղեկագիր թէ մեր գործերուն եւ թէ ընդհանուր պատերազմի շուրջ, մանաւանդ թուրքերի արշաւի առիթով Կովկասում կատարուած յատկանշական մի քանի դէպքերու մասին. արտագրերով ձեզ կը ղրկենք: Ստացանք նոյնպէս մեր գնդերու գործողութիւններուն եւ յարակից դէպքերու օրագրութիւնը, նոյնպէս մի օրինակ Արեւելեան բիւրոյի շրջաբերականը:

Պոլսէն ընկերներ շարունակ գանգատում են, որ մեր արտասահմանեան մամուլը շատ անվերապահ կերպով կ'արտայայտուի. դուք էլ ձեր կողմից գրեցէք «Հայրենիք»ին եւ «Հորիզոն»ին, որ մի քիչ զգոյշ պարգաբանեն մեր շարժումը: «Հայրենիք»ը Ամբերիկայում թարգմանուելով կ'ուղարկուի թուրք կառավարութեան:

Երկրի կացութիւնը օրը օրին կը դառնանայ. ընկերները (ներսի) ամբողջ յոյսերը մեզ վրայ են դրել: Թուրքերը ամէն կերպ խուսափում են յարաբերութիւն ունենալ մերոնց հետ:

Առ այժմ այսքան:

Ընկերական բարեկներով  
Հ.Յ.Դ. ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԷ

Թող ժընեի ընկերները յղեն մեր թերթին համար աշխատութիւններ, գլխաւորաբար «ժայկական հարց»ի շուրջ. թերթը կ'ըսուի «Հայաստան»: Գլխաւորաբար մեր ընկերներուն եւ մի քանի չէզոքներու գոհողութեամբ առաջ եկաւ. ամէն կողմէ անհամբեր կը սպասուի անոր հրատարակումը: Անբողջ Պալքանի մէջ չկայ ոչ մի թերթի կտոր, որ կարողանայ ներկայ մոմէնտը պարզաբանել եւ այս վայրերուն հայութիւնը կապել մայր երկրի անցքերուն հետ: Թերթի խմբագրութիւնը կը վարէ Տ[իգրան] Խ[աչիկեան]:

75.- Խօսքը Կովկաս մեկնելու համար ժընեի ճամբայ ելած երեք կամաւոր բժիշկներու մասին է.՝ Նալբանդեան Հայկազուն, Տէր Ստեփանեան Եղուարդ եւ Փիլոսեան Չարեհ:





Փաստ. 105-6

15.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾԵՆ  
ԲԱԼԿԱՆԻ Կ. ԿՈՍԻՏԵԻՆ

20-1-1915

Ընկերներ!

Ստացանք ձեր 5 Յունուար բովանդակալից նամակը. միայն պիտի խնդրէինք, որ միւս անգամ գաղտնի մեկա- նով գրուի. ոչ ոքի էլ վստահելու կարիք կայ:

Ներկայ նամակի տեղեկութիւնները կը հաղորդէք Եգիպտոս, Ամերիկա, Ժընեւ եւ Կովկաս: Չմոռանաք ժընեւի նամակին մէջ գրելու Ռոստոմին՝

ա) Որ իր ուղարկած գրքերը ստացանք, բայց չկըր- ցանք բացել գրածները. իր բացելու կերպը մեզ անյայտ է. այն միջոցները, որ սովորեցրել էր, փորձեցինք եւ ոե- ւէ օգուտ չտուաւ:

բ) Որ Պոլսոյ ընկերները խնդրում են Ռուսաստան անցնելուն, անպատճառ հանդիպել Բալկան. շուտով Վիշապէն<sup>34</sup> ընկեր պիտի գայ Բալկան, Երկրի գործերու մասին խորհրդակցելու եւ իր ներկայութիւնը շատ ան- հրաժեշտ է մեր այդ խորհրդակցութեան համար: Նոյնը Միքայէլը՝ որ պիտի անցնի Կովկաս, թող սպասէ Բալ- կաններում, մինչեւ մեր ընկերը գայ: Արդէն ընկեր Շահրիկ[եան] պիտի գայ (խիստ գաղտնի պահեցէք, ոչ ոք չիմանայ այդ բանը):

Վերջին փոստով նամակ ունինք թէ Կարինից եւ թէ Մշից: Կարինից գրուած նամակում ասում են, որ չեթա- յական գործունէութիւն այլեւս չկայ Կարնոյ դաշտում: Թուրքերի վերաբերմունքը դէպի հայերը բաւական փոխուել եւ լաւացել է: Թրքական զօրքի բարոյակ[ան] անկումը աւելի եւս սաստկացել է Սարիղամիշի պար- տութիւնից յետոյ: Լուիկ մնջիկ քաղաքը եւ շրջակայ բերդերը ամրացնում են, կասկածելով, որ ռուսերը շու- տով կը հասնեն իրգրումի պատերի քով: Հիւանդանոց- ներում օրական մեռնում են 4-500 հոգի: Քաղաքի մօտի 15 հայ գիւղերը բոլորովին դատարկել են հիւանդներ պահելու համար: Քաղաքի մէջ էլ մի քանի հայ թաղեր նոյն վիճակին պիտի ենթարկուի: Գրաւումները շարու- նակում են եւ մեծ մասը ծանրանում է հայերի վրայ. կառավարութիւնը պահանջում է որ ամսուայ մէջ մէկ շաբաթ զօրքին քաղաքը պահէ. այդ կարգադրութիւնը շատ դժբախտութիւնների է տեղիք տալիս, որի պատճա- րով ծեծը, բանտարկութիւնը յաճախադէպ են վերջերս:

Թուրքերի մէջ կը խօսին որ զօրքի մի մասի մէջ ապս- տամբութիւն է առաջ եկել, էնվեր փաշայի եւ գերմա- նացի դեկավարի դէմ: Էնվերի եավերը<sup>49</sup> վիրաւոր պառ- կած է Կարին: Ապստամբութեան լուրը դեռ չէ ստուգ- ւած (չմոռանանք աւելցնել, որ էնվեր փաշան վաղուց է ինչ Պոլիս է հասել):

Մուշից գրուած նամակը աւելի տխուր է. ժանտարմ- ները եւ կամաւորները լեցուած են քաղաք. գիւղերը սոսկալի աւազակութիւններ կան. հայերու ամէն ինչը գրաւում են. բռնի օրէնքի անուան տակ բռնագրա- ւումները սոսկալի չափերի է հասել եւ սովը գարնան անխուսափելի է: Փոխադրութիւնը կատարւում է ընդ- հանրապէս հայերի միջոցաւ, որոնք շալակով մինչեւ Հասան-Պալէ կը տանեն: Գնացողներին կէսը չեն վերա- դառնում, կամ կ'անյայտանան, այնպէս որ հայերին սպասում է Ֆիզիքական ոչնչացում:

Ըստ Մուշի կառավարիչի, Կարճկանում հայերը ապստամբել են եւ հեռագրաթելերը կտրել: Ըստ մեր ընկերների (Մուշի) այդ չափազանցութիւն պիտի լինի. հաւանօրէն փախստական հայ գինուորներ են, որ երեւի գրգռուած ժանտարմների արած բռնութիւններէն, ընդհարում են ունեցել: Սա երկրորդ ըմբոստացումն է հայերի կողմից ինքնաբերաբար: Պիտի ենթադրել թէ ինչ սոսկալի կացութիւն է ստեղծուել, որ նման դէպ- քեր ինքնաբերաբար կատարւում են:

Մենք ոեւէ յարաբերութիւն չունենք տեղիս կառա- վարութեան հետ: Դէպի դաշնակցականները կասկածը մեծ է: Աւելացնենք նաեւ, որ Կարնոյ պատերազմական ատեանը պահանջել է Դաշնակցութեան ծրագիրը, որովհետեւ բասենցիների թղթերի մէջ գտել են 1910-ի Ընդհ. ժողովի օրակարգը, որի մէջ կայ մարտական խմբեր, մնայուն գինուորական Ֆոնտ եւայլն եւայլն: Լեկալ մի ընկեր չունենք, որ կարողանայ բացատրու- թիւններ տալ:

Ընկերական բարեկերով՝  
Հ.Յ.Դ. Հ[ԱՅԱՍՏԱՆԻ] Բ[ԻՒՐՈՅԻ] Ի  
ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾ



Փաստ. 104-4

16.- ՓԱՓԱԽԵԱՆ ՓԻԼՈՍՓԻԱԿԱՆ ՌՈՍՏՈՍԻՆ  
ՊԱՏՃԵՆ ԿԱՐՆՈՅ ԾԱԾԿԱԳԻՐ ՆԱՍԱԿԻ (ՄԻՍԱՔ)

21 Յունուար 1915

Միրելի Ռոստոմ!

Թէեւ ուրախ լուր չունիմ հաղորդելիք. ամէն ինչ տխուր է, ամէն ինչ սգաւոր: Վարսէնը<sup>76</sup> անցուց բարեբախտաբար. այժմ կազդուրուում է: Այս մի խոշոր բախտաւորութիւն էր: Արաքսին մեռաւ. Սահակը մեռաւ, տիկ. Պաստրմաճեանը մեռաւ. Ջնդին<sup>77</sup> անյոյս է եւ գուցէ ապրում է վերջին ժամերը. նոյն վիճակի մէջ է եւ Մարութի եղբայրը. սրանց տնէն այս շաբաթ 3 մեռել միանգամից դուրս եկաւ: Ամէն տեղ սուգ է. տարափոխիկ հիւանդութիւնները բոյն դրին նաեւ քաղաքացիների մէջ եւ գոհեր է որ տանում է, օրական տասնեակներով մարդիկ են մեռնում քաղաքացիներից միայն, իսկ զօրքերի մէջ հաշիւ չկայ: Փախչողը կ'ազատուի գուցէ. բայց ո՛ր փախչիլ: Այսպէս է այժմ էրզրումը, մի խոշոր հիւանդանոց, ուր հիւանդների մեծագոյն տոկոսը մեռնում է...

Փախստական գինուորներ փնտռելու նպատակով սկսեցին խուզարկել հայ տները. խուզարկեցին եւ մեր տունը ու տարան քո, իմ գլխարկները (3 հատ) եւ իմ անձնական միջոցներով շինել տուած գինուորական հագուստները: Մեզ ամբաստանում են որպէս կասկածելի օտարականների պահողների. խնդիրը յանձնուած է պատերազմ[ական] ատեանին. տեսնենք ի՞նչ դուրս պիտի գայ...

Վերջերս վերջապէս նամակ ստացանք Վանէն. բաւական կարեւոր դէպքեր են եղել: Կարճկանի մէջ փախստական գինուորներ հետապանուելու ատեն մի քանի անգամ կարեւոր ընդհարումներ են տեղի ունեցել փախստականների եւ կառ[ավարական] զօրքերի հետ: Կառավարութիւնը ուզել է նոր ոյժերով վերջացնել հայ «չեթաներին». կռուի մէջ չեթաները մնացել են ապահով, իսկ կառավարութիւնը քանդել է անմեղ գիւղերը. նոր չեթաներ օգնութեան կը հասնին, կռիւր կը սաստկանայ, չեթաները կը կտրեն հեռագրաթելերը եւ օդը կը հանեն կամուրջները: Վերջապէս կռուի վայրը կը փութան 2 մեպուսներ Միւնիպ եւ Վռամ[եան], եւ կը հանդարտեցնեն յուզուած մտքերը: Այժմ խաղաղ է: Կառ[ավարութիւն]ը վերջերս դիմել է մերոնց եւ առաջարկել որ Վռամն ու Արամը անցնեն Սալմաստ յետ պահելու

հայ խմբերը թուրք զօրքերի դէմ կռուելուց. մերոնք ցոյց կու տան Բաշկալէի հայ կոտորածը ինչպէս նաեւ նման շարժումները եւ կ'առաջարկեն ապահովել հայերի կեանքը. կառ[ավարութիւն]ը կ'արդարացնէ Բաշկալէի կոտորածը եւ այսպիսով կը խզուին յարաբերութիւնները: Որքան կարողացայ ստուգել՝ Կառ[ավարութեան] նպատակն է եղել հեռացնել դաշն[ակցական] ղեկավարները: Կը կարծենք թէ Դաշն[ակցութեա]ն դէմ կամաց-կամաց պիտի սկսին նոր հալածանքներ:

Մուշ, Ռուբէնից պահանջել են անցազիր. թւում է թէ այս էլ նոր սկիզբ է Տարօնի խռովութիւններուն: Նոր տարուայ օրը քեզ գրել էի աւելի ընդարձակ մի նամակ. յայտնել եմ նաեւ մեր վիլայէթում կատարուած դէպքերը ու չեթայական գործունէութիւնը, ինչպէս նաեւ Պայազիտ Թորոսի<sup>45</sup> սպանութիւնը Հիլմի փաշայի ձեռքով. այդ խնդիրների մասին աւելորդ եմ համարում կրկնութիւններ անել:

Մի քանի տեղեկութիւններ նաեւ պատերազմի մասին, բայց իսկապէս պատերազմ չէ այդ, այլ կատարեալ կոտորած. կոտորում է թշնամին, կոտորում է ցուրտը, անօթութիւնը, մերկութիւնը, հիւանդութիւնները եւայլն, եւ դիակներ Կարնոյ դաշտում թէ Բասենում. Նարմանում մնում են անթաղ, թափթփուած իրար կողք-կողքի, շարան-շարան, դիակներ մարդկանց, դիակներ կենդանիների... Այսպէս է պատերազմի դաշտում...

Այն տարածայնութիւնները, թէ մերոնք<sup>78</sup> գրաւել են Օլթին ու Սարիլամիշը անպատճառ սուտ է: Ճիշտ է մերոնք զնացին յիշեալ տեղերը, բայց դա լոկ ռազմական մի խաղ էր եւ այնպիսի մի ջարդ կերան որ սոսկալի էր. խուճապը հասաւ մինչեւ Կարին, կառ.ը սկսեց ուժ տալ ու զօրացնել ամրոցները. կարծում էին որ թշնամին նոյն թափով գալու է, բայց սխալուեցին. թշնամին հասաւ իր նախկին դիրքերը եւ մնաց երբեք չփորձելով առաջ գալ: Թշնամու յետ կանգնելը նորից քաջալերեց մերոնց. նրանք սկսեցին հաւաքել ջարդուած բանակի անյոյս բեկորները, հաւաքել 43-50 տարեկանները (իբր թէ նոր բանակ կազմելու եւ նորից սկսելու կռիւր). այժմ այդ ջանքերի մէջ են. ահա ինչպէս երեւում է անյոյս են նաեւ գերման սպաները: Սրանք վերջերս դիմել են իտալական եւ ամերիկական կառավարութիւններին որ իրենց համար տրամադրելի անեն մի նաւ վերադառնալու համար Գերմանիա, բայց կարծեմ մերժուել են:

76.- Վարսենիկ՝ Փափախեան Փիլոսի կինը:  
77.- Ջնդի՝ Բարուսակեան Կարապետ:  
78.- Իմա՝ Թրքական զօրքերը:



**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

Լքումը թէ ժողովրդի, թէ գորքի եւ թէ մասնաւորապէս սպաների մէջ այն աստիճանի է հասած որ մեծ հաճոյքով կ'ընդունեն թշնամուն եթէ գայ, բայց թշնամին չի գալիս. ես կարծում եմ չի էլ գայ գարունքէն առաջ:

Պոլիսը լռում է. մի հատիկ նամակ անգամ չենք ստացել. չես գրում եւ դու. կտրուել ենք ամբողջ աշխարհից եւ սեղմուել մեր շրջանակի մէջ, ուր ամէն կողմ սուգ, ամէն կողմ լաց ու կոծ է: Վերը մոռացայ ասել, որ խաչիկն էլ հիւանդ է. հիւանդ է նաեւ Մագմանեան Լեւոնի կինը՝ Ատելը, բայց միթէ կարելի է թուել բոլորը: Ջնդին անդադար յիշում է քեզ, վերջին օրերս չի էլ խօսում. երէկ իր մօտն էի. յայտնեցի քեզ նամակ գրելու մտադրութիւնը, խեղճը լարեց իր բոլոր ուժերը եւ կցկտուր բառերով ասաց հետեւեալը... Թող

Ամերիկան դրամ հասցնէ անպայման ժընեւի մէջ գնելու համար Դաշն[ակցութեան] տունը եւ թող անունը գրեն «Մեր տունը». մի ընկերոջ վերջին ցանկութիւնն է գուցէ որ աւելորդ չհամարեցի քեզ գրել. առ հասարակ քեզ շատ է յիշում...

Դէ, մնաս բարեւ, ո՞վ գիտէ, գուցէ մենք էլ հիւանդացանք կամ մի բան եղանք, գուցէ էլ չկարողացայ գրել, ախր գրելու սիրտ է դիմանում, մնաս բարեւ, քեզ համբուրում եմ կարօտով, շատ շատ կարօտով. համբուրում ենք բոլորս, Վարսէնը, մայրս: Եթէ հնարաւորութիւն ունես աղաչում եմ գրիր երկար երկար:

(Ստորագրուած)  
Ք. ՄԱՐԱԼ<sup>40</sup>





Փաստ. 829-19

17.- ԿԱՐՆՈՅ, ԵՐՁՆԿԱՅԻ ԵՒ ՀԱԼԷՊԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԷՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ (ԿՈՎԿԱՍԻ ՎՐԱՅՈՎ ՍՏԱՅՈՒԱԾ)

Ա.- ԿԱՐՆՈՅ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՆԱՄԱԿԸ

ԽԱՊՐԻԿՆԵՐ ՁՈՒԼՈՒՄԻ ԱՇԽԱՐՀԷՆ

Կարին, 12 Փետր. [1915]

Կառավարութեան խիստ պահանջումով, Առաջնորդարանս ստիպուեցաւ քաղաքիս հայերէն 10.000 ներքնագրեատի (իչլիկ) համար դրամ հանգանակել եւ գանոնք շինել տարով յանձնել զինուորական իշխանութեանց:

Իբրեւ թէ թուրքերուն համար ալ թիւի համեմատութեամբ՝ 35.000 ներքնագրեատ որոշուած էր, բայց անոնք ցարդ միայն 15.000 հազիւ պատրաստեցին եւ տուին<sup>79</sup>: Նոյնպէս պարտադրեցին հայ ժողովուրդը որ 150 անկողիննոց հիւանդանոց մը կազմէ եւ իր ծախքովը հոգայ: Արդէն դրամ հաւաքելով կազմեցինք գայն եւ կը հոգանք այժմ:

Կը խորհինք թէ Կարնոյ հայութիւնը արդէն իսկ տնտեսապէս ուժասպառ եւ քայքայուած՝ չպիտի կարենայ երկար ատեն տոկալ ամսական 3-400 ոսկի պահանջող Հիւանդանոցի մը ծախուց՝ եթէ արտաքին օժանդակութիւններ չհասնին ուրիշ գաւառներէ, մանաւանդ թէ՛ կեանքը տարապայման եւ նոյնիսկ եռապատիկ ու քառապատիկ սղած է այժմ եւ Կարին իր շրջանակներով՝ յառաջիկայ տարի բնաւ հունձք չպիտի կարենայ ունենալ: Այդ տխուր հեռանկարը արդէն իսկ սովի արհաւիրքներ վերապահած է մեր դժբախտ ժողովրդեան՝ որ իբր սահմանագլուխի բնակիչներ՝ ո՛չ թէ միայն իր՝ այլ ամբողջ Անատոլիի ժողովրդեան ի հաշիւ կը տառապի անշուշտ, քանի որ ամբողջ Փոքր Ասիոյ իբր սահմանագլուխ կը ծառայէ: Այս տեսակէտով ամէն իրաւունք ունինք արտաքին օգնութիւններ սպասելու հեռաւոր գաւառներէ՝ որոնք յայտնի է թէ՛ մեր ենթարկուած բացառիկ նեղութիւններէն ու ճգնաժամէն զերծ են:

Այս պարագան կեդրոնիդ հոգածու ուշադրութեան յանձնելէ վերջ, դժբախտ եմք յայտնել որ 1914 Նոյ. 18 Գշ. օրը<sup>80</sup> զինեալ անծանօթ չարագործներու կողմանէ իր գիւղին մէջ կը սպաննուի Օձնիի Տ. Արիստակէս քհնյ. Սուղուպաթեան: Կառավարութիւնը քննիչ դրկեց եւ հետապնդեց թէ եւ չարագործները, բայց ցարդ կարելի չեղաւ գտնել:

Նմանապէս 1915 Յուն[ուար] 28 Դշ. երեկոյեան քաղաքիս երեւելիներէն Սեդրաք էֆ. Փաստրմաճեան<sup>81</sup>, երբ տուն կը դառնար, իր տան մօտերը՝ նեղ փողոցի մը մէջ՝ յարձակող քանի մը ոճրագործներու կողմէ հրագէնով եւ սուրով կը սպաննուի չարաչար, սուգի եւ սարսափի մատնելով ամբողջ հայ հասարակութիւնը եւ զինքը ճանչցող եւ սիրող թուրք երեւելիները:— կուսակալին խիստ հրամաններուն վրայ, քննութիւն կատարուելով, ոճրագործներէն 1-2ը ձերբակալուած ու բանտուած են: Քննութիւնները առաջ կը տարուին:

Բասենի վիճակին մէջ մերայիներէն ժողովուրդ մնացած չլինելով (հազիւ Հերթեւ, Թորդան, Օկոմի եւ Սիճիտլի գիւղերու հայերը մնացած են՝ Հասան Գալէի քանի մը տուն հայերու հետ) եւ ներկայ պարագայից բերմամբ տեղւոյն վիճակը ծանրացած լինելուն՝ փոխանորդ Տ. Կորիւն վրդ. Սրապեան Կարին եկաւ, եւ իր վերադարձը առայժմ անյարմար դատուելով եւ նկատելով որ Կարնոյ Առաջնորդարանի գործերը բազմապատկուած են, կեդրոնի առաջնորդական փոխանորդի պաշտօնը իրեն յանձնեցինք, Բասենի մնացեալ ժողովուրդն ալ տեղէս հոգալու եւ հովուելու առաջադրութեամբ:

Սպեր — Կիսկիւմ — Նարմանէն երկար ատենէ ի վեր լուր չունինք: Խնուսի մէջ նիւթական նեղութիւններ տակաւ կ'աւելնան եւ կը սաստկանան, իսկ Դերջանի մերայնոց վիճակը այս օրերուն յանկարծ ծանրացաւ. կամայական սպանութիւնք շատցան եւ հայ հարուստներէն դրամական փրկանք պահանջելու դրութիւնը (մահուան սպառնալիքով), նոյնիսկ կառավարական

79.- Ներկայ փաստաթուղթէն կատարուած համաձայն քաղաքի մէջ 15.000-ի փոխարէն գրուած է 1500:

80.- Գշ. Երեքշաբթի, Դշ. Չորեքշաբթի:

81.- Ենթակալան Օսմանեան դրամատուան Կարնոյ մասնաճիւղին երկրորդ տնօրէնն էր, յարգուած անձնատրութիւն հայ եւ քորք շրջանակներու մէջ. հօրեղբայրն էր Արմէն Գարոյի:





ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

պաշտօնէից գիտութեամբ, սովորական բան մը դարձած է:— Բաբերդի մերայնոց դրուժիւնն ալ այլապէս ծանրացած է, մեր առած տեղեկութեանց համաձայն. գէնքեր խուզարկելու պատրուակին տակ՝ պաշտօնական եւ անպաշտօն զինեալ անձեր ամէն կերպ բռնութիւն գործ կը դնեն. ծեծ, հայհոյանք, բանտարկութիւնք եւայլն, եւայլն, սովորական բաներ դարձած են: Մեր ստացած բերանացի տեղեկութեանց վրայ, դիմեցինք եւ կը դիմենք կուսակալութեան, խնդրելով որ կարեկցի այդ ժողովրդեան վրայ, եւ դարման տանի այդ ցաւերուն եւ առաջին առնէ այդ չարեաց: Հաւաստիքներ ստացած ենք եւ կը ստանանք, բայց չգիտենք թէ ո՞ր աստիճան պիտի մեղմանան: Միայն Երզնկայի վիճակն է որ առ այժմ այդ դառնութիւններէն ազատ կը մնայ. Քղին նմանապէս, այն ալ չափով մը: Պայազիտի շրջանէն բնաւ լուր չկայ:

Բասենցի հարիւրի չափ բանտարկեալներէն մեծագոյն մասը կարօտ ըլլալով՝ մէկ երկու ամիս պարտաւորութեանը հացազին նպաստ տալ իրենց եւ ապրեցնել:

Համաճարակ հիւանդութիւնը շատ գոհեր տարաւ քաղաքիս մէջ. միայն յունուար եւ փետր. ամիսներուն՝ քաղաքիս հայ ժողովուրդէն մեռնողներուն թիւը (բացի զինուորներէն) հարիւրականէն աւելի էր, մինչդեռ նախընթաց տարիներուն՝ նոյն ամիսներուն մահերու թիւը

19-20ը չէ անցած: Դժբախտաբար անօթութենէ եւ կենսական անհրաժեշտ պէտքերու չգոյութենէն ալ մեռնողներ պատահած են անոնց մէջ: Վերստին կը հրաւիրեմք Կեդրոնիդ կարեկցութիւնը եւ ստիպողաբար բաւականաչափ նպաստ կը խնդրենք:

Մեծագոյն մասամբ բասենցի 150ի չափ ծանօթ բանտարկեալներէն մեծ մասը 2-3 ամիս բանտարկութեան դատապարտութեամբ ազատ արձակուեցան: Իսկ երկար բանտի դատապարտուածներն են՝

1. Յովհաննէս Էֆ. Պալասանեան, կարնեցի, 3 տարուան
2. Մամբրէ Ապաճեան, Կարնեցի 10 տարուան
3. (Համբարձում Չէլիչչիկեան 10ական տարուան
4. Արշակ
5. Յովհաննէս Ղուկասեան, բասենցի 15 տարուան
6. Համբար Սարգիսեան, Բասեն իւզվէրանցի 10 »
7. Մելիք Գանթարեան բասենցի 10 տարուան
8. Արամ Թորոսեան » (եղանցի) 3 »
9. Արշակ Նժդեհեան, Այաչկերտ խաչյացի 3 տարուան
10. Ռէս Պողոս Պանտիկեան, » » 3 »

Անոնք այժմ Կարնոյ բանտն են, հարկ է որ օր առաջ կայսերական ներման արժանացնելու միջնորդէք:

Բ. – ԵՐԶՆԿԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՆԱՍԱԿԸ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ

Երզնկա, 18 փետր. 1915

Ա. Բազմաթիւ եւ բազմապիսի թէքէլիւֆներուն<sup>82</sup> (գրաւումներուն) մասնակցած է (հայ ժողովուրդը) թուրքերու քառապատիկէն եւ տասնապատիկէն միշտ աւելի. ասով մէկտեղ կրկին հայուն տուածը բնաւ աչքերնուն չ'երեւիր. եւ ներկայիս մտադրութիւն կայ հայր տնտեսապէս փճացնելու: Հայերու քով գտնուած բոլոր ապրանքները առին. մասնաւորներէ մեծագումար դրամ ալ առին. իսկ այն բանը որ ներկայիս հայուն քով սպառած է եւ չի գտնուիր, կը պարտադրեն որ հայերը լեցուն գինով թուրքերէն գնեն եւ թէքէլիւֆի տան:

Բ. Հայը միշտ կասկածելի տարր մը կը նկատուի ներկայիս եւ Դամոկլեան սուրը միշտ կը ճօճի հայուն գլխին վերեւ. այս վայրկեանիս ապրողը, յաջորդ վայրկեանին վրայ բնաւ վստահութիւն չունի թէ արդեօք պիտի ապրեցնեն:

Գ.- Առ հասարակ ընդհանուր մտայնութիւնը սա է.— «Հայեր, մեր այս բոլոր կրածները Ձեր երեսն է. եւ մեր պատերազմը Ձեզի դէմ է եւ ո՛չ թէ ռուսաց, որովհետեւ մեզի դէմ կուռնողները գուտ հայերն են ռուսաց բանակին մէջ եւ ո՛չ ուրիշներ»: Ահա այս սնամէջ առարկութիւններով, հայերուն այլեւս ամենաստորին անասունի մը չափ արժէք չեն տար. ծեծ-փետ, սպանութիւն եւ բանտ հասարակ բաներ դարձան հայոց հանդէպ:

Դ.- Կառավարիչ մ՞ունինք, որ ներկայիս կատարեալ պատիժ ու պատուհաս է Երզնկային համար. իր շուրջը հաւաքած է քանի մը իրեն նմաններ, որոնց միջոցաւ աներեւակայելի չարիքներ գործել կու տայ:

Ե.- Ըսի թէ՛ հայերուն կարողութենէն շատ եւ շատ աւելի թէքէլիւֆ պահանջեցին եւ առին. ասոնցմէ զատ, այս օրերս, նորօրինակ միջոց մը ստեղծած են հայերը կեղեքելու եւ փճացնելու տնտեսապէս: Քաղաքիս բոլոր կեղեքիները, դպրոցները, մզկիթները եւայլն զինուոր

82.- Թեքէլիւֆ հարպիտ – գիմուրական հարկ՝ պատերազմի ատեն հաւաքուող, որ փաստօրէն համագոր էր բռնագրաւումի:





լեցուցին. հիմա մասնախումբ մը, վստահ որ դրամ չահելու ժամանակ է, լուր կը դրկէ թէ՛ աշխնչ թաղը պէտք է պարպէք որ զինուոր լեցնենք եւ կամ այսքան գումար մը պէտք է վճարէք որ տուները պարպել տալէ ազատ թողունք: Աշխնչ գիւղը կա՛մ ամբողջութեամբ պէտք է պարպէք եւ կամ այսքան գումար պէտք է տաք:

Այնպէս որ, եթէ դամոկլեան սուրէն խեղճ հայր ազատի հրաշքով, գոնէ տնտեսապէս բոլորովին պիտի փճանայ: Հայ գիւղացին այսօր բոլորովին վարուցան ընելու անկարող վիճակի մը ենթարկուած է, որովհետեւ ուտելիքը, սերմնացուն եւ եղն ու միւս անասունները առին: Վաճառականութիւնը նոյնպէս փճացաւ եւ աղքատութիւնը առ հասարակ իր բազուկները տարածեց ամէն կողմ եւ ամէնուն վրայ:

Ձ.- Ինչ խնդրոյ համար որ կառավարիչին կը դիմենք եւ որքան կը խնդրենք, բնաւ չ'ազդուիր եւ չի լսեր. շատ անգամ բացարձակ ալ կ'ըսէ. «Իմ բնութեան մէջ բարիք ընել չկայ, պարապ տեղը մի՛ խնդրէք»: Երգնկայի եւ շրջակայից մէջ գործուած անլուր չարեաց մասնաւոր պատասխանատուն եւ թելադրիչը կառավարիչնիս է. այս մարդը բնաւ գութ, խղճմտանք, կարեկցութիւն ըսուած բաները չունի: Եթէ այս մարդը հոս մնայ, ամբողջ ողջ մնացող հայութիւնը մոխիրներու վրայ պիտի նստեցնէ: Ուստի կը խնդրեմ որ ճար մը գտնէք հեռացնելու զայն ասկէ, որպէսզի իր քլիքն ալ ոչնչանայ եւ չարիքները մեղմանան:

**Գ.- ՀԱԼԷՊԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ  
ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ  
(Տաճկերէն լեզուով եւ գրիչով)  
(Թարգմանութիւնը)**

Հալէպ, 3 մարտ 1915

Փոստայով դրկուած 13 փետր-ի պաշտօնագիրովս եւ երէկուան թուականով ստիպողապէս Պոլսոյ Պատրիարքարանիդ դրկուած հեռագիրովս կը յայտնէի թէ՛

Ձէյթունի փախստական զինուորներու դէմ օրինական հետապնդում կատարուելու վրայ է: Այդ փախստականներուն համար պէտք եղած զինուորական շարժումը եւ եղած կարգադրութիւնները Ձէյթունի ամբողջ հաւատարիմ ժողովուրդին դէմ յոռի կերպով հասկցուած ըլլալով, հետեւանքը, Աստուած մի արասցէ, Ձէյթունի եւ շրջակայից ժողովուրդեան մեծ դժբախտութիւն պիտի պատճառէ: Ուստի կայսերական կառավարութեան գլխութեան ապաւինելով արագ դարման կը խնդրէի այդ հեռագրով:

Այդ հեռագիրը անշուշտ ստացած էք: Ձինուորական սպաներէ բաղկացած պատերազմական Ատեանն ալ դէպի Մարաշ եւ Ձէյթուն ասկէ մեկնեցաւ երկու օր առաջ: Այս կացութիւնը յառաջ բերող իրողութեանց էապէս ինչ ըլլալուն թէեւ բացայայտ կերպով տեղեակ չենք, սակայն Ձէյթունի մէջ կարգ մը փախստական զինուորներու ներկայութեանը համար այնտեղի գայմագամին ու զինուորական հրամանատարին գործ դրած խստութեանը մասին զէյթունցիները թէ՛ կայսերական կառավարութեան, թէ՛ կաթողիկոսին եւ թէ՛ ինձ դիմում ըրած էին: Ձէյթունցիներուն քանի մը դրացի գիւղերը իրերու այս կացութեանն օգուտ քաղելով, կը պատրաստուին իրենց խաբէութիւններով հոն գացող զսպողական ուժի հրամանատարին եւ պատերազմական ատ-

եանին վրայ ազդել. սակայն թերեւս անոնց զրպարտութիւնները շատ ազդեցութիւն չընեն: Այսուհանդերձ թէ՛ այդ բարձրաստիճան անձերուն եւ թէ՛ Մարաշի միւթէսարըֆին՝ մինչեւ ցարդ տեղի ունեցած գործողութեանց եւ Ձէյթունի դրացիներուն հոգեկան տրամադրութեանց կատարելապէս տեղեակ չըլլալը յայտնի ըլլալով եւ այս միջոցիս Մարաշ ալ կուսակալութեան կեդրոնէն անջատուած ըլլալու պատճառով, — բնականաբար կուսակալութեան վարչութեանն օգուտ մը չի կրնար ձեռք բերուիլ: Ուստի, Տէր մի արասցէ, այս յոռի կացութեան մէջ գործին ո՛ր աստիճան կարեւորութիւն ստանալիքը յայտնի է:

Հետեւաբար, եթէ խնդրին քննութիւնը ու լուծումը՝ սկիզբէն ի վեր կատարուած իրողութեանց եւ ամէն կողմերու հոգեկան տրամադրութեանց քաջածանօթ ու գործին կարեւորութեան աստիճանով քաղաքական կարողութեան տէր եղող Հալէպի կուսակալ Ն. վսեմութիւն ճելալ պէյին յանձնուի, աւելի լաւ կերպով արդարութեան գործադրուելուն կրնանք վստահ ըլլալ: Գործը հետզհետէ ծանր համեմատութիւններ առնելու վրայ է: Այս կէտը նկատողութեան առնելով, առանց վայրկեան մը կորսնցնելու, ձեռք բարձր սրբազնութեան կողմէ պէտք եղած աջակցութիւնը կը խնդրենք:

Հայերէն նամակի գրաքննութիւնը ուշանալով, ստիպուեցանք քուրքերէն գրել:





Փաստ. 882-59

18.– ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԷՆ (Պոլիս) ՊԱԼՔԱՆԻ Կ. ԿՈՍԻՏԵԻՆ

20 Փետրուար [1915]

Ընկերներ,

Ստացել ենք ձեր Յուլիուս 22 եւ 27 թուակիր նամակները:

Շատ լաւ պիտի լինէր, եթէ միշտ էլ գաղտնի մելանով գրէք կամ Սարուստ[անէն] եկածները ընդօրինակէք գաղտնի մելանով, կրնայ ձեռք անցնիլ եւ աւելորդ մեկնաբանութիւնների եւ գլխի ցաւերի տեղիք տալ: Անհրաժեշտ է, որ Սարուստանէն<sup>83</sup> ստացած նամակների բովանդակութիւնը, Ամերիկա եւ Եգիպտոս, մնայ միմիայն Կ. կոմիտէների եւ ղեկավար ընկերների շրջանակներում: Խօսքը վերաբերում է պարտութիւններին եւ խմբագրութեան եղանակին: Անմիջապէս այդ ուղղութեամբ երկրորդ քայլերն էլ գրեցէք:

Դրամի մեծ կարիք կայ երկրի ներսը: Անհրաժեշտ է դրամ հասցնել անոնց: Հեռագրեցէք Ամերիկա, որ հեռագրով, նախկին ձեռով Պոլիս փոխադրեն (300) երեք հարիւր ոսկի: Դուք էլ ձեր մօտիկները փոխադրեցէք: Կովկասեան գաղթականների հանգանակութեան պատճառով չպիտի ցամաքեցնէք մեր բիւրճէն: Այդպիսի ձեռնարկներ կարելի էր անել եւ առաջնորդարանի կողմէն հարուստների հետ միացած: Մենք ապրում ենք պատմական այնպիսի կրիտիք մոմենտում, որ առանց կարեւոր պիւտճէների չենք կրնար մեր ժողովրդի կեանքը փրկել:

Երկրի ներսը կառավարական միլիտները մէկ կողմից, միւս կողմից քրդական ասպատակութիւնները սպառնում են ժողովրդի կեանքին: Քրդերը շարժման մէջ են, չեն ցանկանում կառավարութեան գօրք տալ: Թալանել են 4-5 հայ գիւղեր: Վասպուրականում ընդհարումներ են տեղի ունեցել հայ չէթաների եւ կառավարական ժանդարմների միջեւ: Բելու գիւղում առաւօտեան 9էն մինչեւ 5ը երեկոյեան, ընդհարում է տեղի ունեցել: Ամբողջ գիւղը վառում են չէթաները քաշուելէն յետոյ: Աթանանի վրայ յարձակում են քուրդ միլիտները երկու ժանտարմների ղեկավարութեամբ: Հայ չէթաների կողմէն սպանւում են ժանտարմները: Կառա-

վարութեան հրամանով, Ոստանի Խուրչիդ աղան, քրդերի գլուխն անցած, գալիս է Աթանանի վրայ: Երեք օրուայ կռուէն յետոյ, քրդերը պարտուում եւ ցրում են: Մանրամասնութիւնները կ'իմանաք Սարուստանի նամակէն:

Վասպուրականը կիսապատմբական վիճակումն է: Բուլգարական, ինչպէս եւ միւս գաղութներն են որ ներկայ պարագաներում դրամ պիտի հայթայթեն երկրին եւ այն վայրերուն որոնք ժողովրդի ինքնապաշտպանութեան կը մտածեն: Այս կէտը ձեր ուշադրութեան ենք հրաւիրում, որպէսզի խնդրի լրջութիւնը նկատի ունենաք եւ ըստ այնմ յարմարեցնէք ձեր գործունէութիւնը: Այդ նոյն ուղղութեամբ մեր կողմէ պիտի գրէք նաեւ մի Ամերիկա եւ մի Եգիպտոս:

Եգիպտոսի մեր ընկերների հետ կանոնաւոր յարաբերութեան մէջ եղէք: Նոյն քայլերը (400) ոսկու խնդրի շուրջ ի՞նչ հետեւանքներ ունեցան: Զէ° [որ] ձեզ [մօտ] պիտի գային բանակցելու: Այդ խնդրի մասին գրեցէք այդտեղի ընկերներին, իմացէք նրանց տրամադրութիւնները, միջոցները, ճանապարհները եւ անելիքները, եւ մեզ իմացուցէք, որպէսզի անհրաժեշտ խորհուրդներ ձեզ տանք:

Տեղումը թերթ հրատարակելուն մենք դէմ ենք մի քանի տեսակէտներից:

1) Նախորդ Ընդհ. ժողովը այդ մասին բացորոշ արտայայտուել է, եւ բացասաբար:

2) Թերթ ունենալու համար շատ փորձուած, կարող խմբագիր է հարկաւոր: Ժամանակը փափուկ է եւ ժողովն ախրի միջոցն այնպիսի բաներու մասին կ'արտայայտուի, որ կը վնասէ ընդհ. գործին, քան թէ օգուտ կը տայ. նա նշանակելի պարագայ է:

3) սխալ է թէ կազմակերպական սնտուկին ծախս չլինիր: Այն աշխատանքը, որը պիտի թափուի թերթի նիւթականը ապահովելու համար, ի վնաս ձեր սնտուկին պիտի լինի. որ բացերն էլի մեր խեղճ ընկերները պիտի գոցեն: Դուք անփորձ էք այդ ասպարէզում: Այնպիսի ծախքերի տակ կ'ընկնէք, որ անկարող էք գոցել:

Նամակները շարունակեցէք գրել ձեր ձեռքի տակ եղած բոլոր միջոցներով: Լրագիրները լաւ էք անում չէք դրկում, մեր ձեռքը չեն հասնում:

83.- Սարուստան – կու. ծածկանուն Ռուսիոյ, յատկապէս Կովկասի:



Փաստ. 105ա-11

19.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾԵՆ ԲԱԼԿԱՆԻ Կ. ԿՈՍԻՏԵԻՆ

27 Փետր. 1915

Ընկերներ!

Զարմանալիորէն լուռութիւն էք պահում: Լիպ[ա-րիտն]<sup>84</sup> այդտեղ գալուց յետոյ սպասում էինք որ յարաբերութիւնները աւելի արագանան եւ կանոնաւորութիւնը ընդհակառակը եկաւ եւ լռեց: Ի՞նչն է այդ լուռութեան պատճառը: Արդեօք ոեւէ լուրջ պատճառ կայ, թէ ծուրութիւնն է: Դուք ինչո՞ւ էք լուռ: Թերեւս դուք էլ ձեր յոյսը նրա վրայ դնելով, չէք գրում: Անհամբեր կերպով սպասում ենք նամակի եւ յոյս ունենք որ անմիջապէս կը պատասխանէք: Այսուհետեւ ձեզ Բիւզանդիոն եւ այլ լրագիրներ էլ որ ուղարկենք, փորձեցէ՛ք<sup>85</sup>: Նամակիս պատճէնը անմիջապէս կ'ուղարկէք իրեն յատուկ վայրերը. շարունակում ենք տեղեկութիւնները:—

Ռուսներու նահանջէն յետոյ, կոտորածներ են տեղի ունենում հետեւեալ վայրերը:— Ալաշկերտում՝ Մուսա բէկի, Աբդըլ Մէճիտի եւ Խալիլ բէկի համախոյժ ալայները միացած տեղի մահմետական ազգաբնակութեան հետ, թալանում եւ կոտորում են այն հայ գիւղերը, որոնք չէին կարողացեր ռուս բանակին հետ հեռանալ: Առեւանգուած եւ իսլամացուած են բազմաթիւ հայ կիւներ եւ աղջիկներ: Երկրորդ անգամ երբ ռուսները գալիս են, իսլամները վախնալով վրէժխնդրութենէ, փախչում են իրենց ընտանիքներով եւ ապաստան գտնում Մանազկերտի եւ Բուլանըզի հայ եւ քիւրտ գիւղերում, ապրում են ժողովրդի հաշուով: Մուհամմադները 2000 ընտանիք կը հաշուէին: Մեր կառավարութիւնը այդպիսի խոշոր սխալներ թոյլ է տալիս իրեն. եթէ այդ շրջանում կանոնաւոր զօրք լինէր, նման դէպքեր տեղի չէին ունենար. ամբողջ այդ շրջանի պաշտպանողները այդ քիւրտ ալայներն<sup>85ա</sup> են: Դժբախտաբար այժմ ալ նրանց է յանձնուած այդ շրջանների պաշտպանութիւնը. կանոնաւոր զօրք ամենեւին չկայ: Երեսփոխան Վահան Փափագեանը դիմել է որ այդ մուհամմադներին

չուղարկեն Մշոյ դաշտ՝ քաղաքական եւ տնտեսական պատճառները բացատրելով: Միւթասարըֆը խոստացեր է անոնց ուղարկել Դիարբեքիր: Մերոնք չեն հաւատում եւ կարծում են թէ իրօք Մշոյ դաշտում ընդհարումները անխուսափելի կը դառնան: Սասունի շրջանը մինչեւ հիմա փոխադրողներ չէ տուել. կառավարութիւնը պահանջում է 180 հոգի. կուսակալը անոնց վերադարձէն յետոյ 80 է ասել. բայց սասունցիք չեն համաձայնում. կասկած կայ, որ կառավարութիւնը իսկապէս միջոցներ ձեռք առնէ անոնց դէմ:

Վասպուրականի արեւելեան մասում կոտորուած գիւղերն են. Բաշկալա 110 տուն, եւ բոլոր այդ մարդիկ, կանանց մեծ մասը իսլամացուած եւ առեւանգուած են. Աղբակի դաշտի հայ գիւղերը կոտորուած. Ախտուկ, Հասան Թամբան, Պողազ Քեսան հայ գիւղերը թալանուած: Այս վերջինները նմանապէս որքան որ համախոյժներուն ձեռքով է կատարուած եղեր, բայց թելադրողը եղեր է Սարայի գայմագամ Քեամիլ պէկը: Թալանուած է Արճակի Մանտան, Նորդուզի Դառագեառ, Արճէշի 5 հայ գիւղերը: Վուստանի յիշատակագիրը<sup>86</sup> որեւէ արդիւնք չտուաւ. իմացաք ի հարկէ Սեդրակ Բասարմաճեանի տեւորը Կարնում<sup>81</sup>:

Սրվազի վիլայէթի վիճակը նոյնպէս նախանձելի չէ. միմիայն հայերէն գրաւել են 10,000,000 օխա գարի, 20 միլիոն օխա ցորեն եւ յարդ, 60,000 ոսկու մանիֆաթուրա. 20000 ոսկու երկաթ եւ պագալիէ, 40,000 ոսկու բուրդ եւ թիֆթիկ, 20,000 ոսկու հում ու բանուած կաշի, 15,000 ոսկու փայտ, 6000 ձի, 2000 էջ, 30,000 եզան սայլ եզներով միասին:

Այս ցանկին մէջ չէ յիշուած գիւղերու եւ քաղաքներու բունի հանգանակուած իւղ, պղտուր, գուլպայ, անկողին եւ այլն: Բոլոր գրաւուած անասունները ստակելէ յետոյ, ժողովրդի մօտ, մնացածներն ալ սկսեր է գրաւել ու փոխադրութիւններն էլ ժողովուրդի միջոցաւ կատարել (չալակով). հայերը չեն ուզում զինուոր գնալ ու մինչեւ այժմ 100-150 հազար ոսկի պետել<sup>87</sup> են տուել: Զվճարող անկարողները փախչում են եւ չեն գնում. 75-80 % տոկոսը փախել են. կառավարութիւնը սկսեր է վառել փախողներու տները:

Կեսարիա 4 հայ զնդակահարուեցան. այդ պատճառով Տէօրթ Եոլի հայերը չուզեցին ճանապարհներու վրայ աշխատիլ փախչել էին. կառավարութիւնը զօրք է մտցնում եւ բոլոր այդ մարդիկը վերցնում եւ ուղարկում է Հաճըն աշխատելու. միայն մէկ հատ դիմադրել է եւ սպանած մի ժանտարմ ու ատոր փոխարէն զօրք-

84.- Նազարեանց Լիպարիտ, դաշնակցական ծանօթ մտաւորական եւ գործիչ. անդամ էր Լեւիսիտի գլխատրած «հայ-գերման ընկերութեան», որուն կողմէ դրկուեցաւ Պոլիս եւ 1915 թ. Յունուարին տեսակցութիւններ ունեցաւ գերման դեսպանատան, Հ.Յ.Դ. Բիւրոյին եւ Հայոց Պատրիարքին հետ:

85.- Ակնարկութիւն այն իրողութեան, որ Բիւրոն ծանօթ պատճառներով նամակները կը գրէր առաքուած թերթերու լուսանցքներուն վրայ:

85ա.- Ալայ – գունդ:

86.- Վասմէանի Յիշատակագիրը՝ ուղղուած կուսակալ Թահսին պէյին, ինչպէս նաեւ առ հասարակ Վանի նահանգին վերաբերող նիւթերը, տեսնել կազմակերպական շրջաններէն Վան-Վասպուրականի գլուխին տակ, էջ300-303:

87.- Փոկազին՝ զինուորագրութիւնը գերծ մնալու համար:



ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

ըը սպանում են 6 հայ: Նոյն տեղը կամաւոր թուրքերը սպանում են 1 հայ. անկէ մի քանի օր յետոյ Օսմանիյէի ու Սիւսի մէջտեղը սպանում են 4 հայ, մէկ ուրիշ վայր էլ սպանում են 5 հայ:

Ամէն օր Հաճընի բոլոր այր մարդիկն էլ բռնի ուղարկել են ճանապարհների վրայ. առհասարակ հայերին կառավարութիւնը քշում է հայաշատ կեդրոններէն, կատարում են անյուր ոճիրներ:

Չէզոք մամուլի մէջ<sup>88</sup> պիտի բողոքել այս բոլորի դէմ. ի հարկէ տաճիկ կառավարութիւնը [կ']իմանայ թէ այս բոլորի աղբիւրը Պոլիսն է. չնայած որ ամբողջ հոգով կատարում ենք մեր քաղաքացիական պարտակա-

նութիւնները, բայց ոեւէ ձեռով միշտ էլ կասկածով է վերաբերում դէպի մեզ. ատոր համար միշտ էլ զգոյշ պիտի լինել:

Պոլսէն իսլամ բնակչութիւնը փոխադրում են Էսկի Շեհիր եւ Գոնիա: Եթէ Տարտանելը forcée<sup>89</sup> անեն, կառավարութիւնն ու մեր պատրիարքարանն էլ պիտի երթան:

Սպասում ենք անհամբեր տեղեկութիւնների, մարմինների համար այս նոյն մեղանով պիտի գրէք, այս նոյն ձեռով, որ նամակները շուտ տեղ հասնեն ու չկորսւն. առաջարկէք իրենց որ այս ձեռով ընեն իրենք ալ: Ամերիկայի 300 ոսկու համար հեռագրեցիք թէ ոչ. դրամի մեծ կարիք ունեն երկրի մարմինները եւ մենք:

88.- Իմա՝ ընդի. պատերազմին ոչ մասնակից չէոք երկիրներու մամուլին:

89.- Ֆրանսերէն – գործածուած է՝ եթէ Տարտանելի վրայ ճնշումը սաստկացնեն իմաստով:

Ընկ. բարեւներով  
Հ[ԱՅԱՍՏԱՆԻ] Բ[ԻՒՐՕ]

Փաստ. 1158-23

20.– ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵՒՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Սոֆիա 1/14 Մարտ 1915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր Յունուար 15 թուակիր նամակը, որով ձեզ ընդարձակ տեղեկութիւն կու տայինք Կովկասի եւ Երկրի դրութեան մասին. այնուհետեւ ձեզ ուղարկեցինք նաեւ Կովկասէն ստացուած մի ընդարձակ նամակ վերջին դէպքերի մասին. նաեւ ձեզ ուղարկեցինք մեր շրջանի կողմէ պատրաստուած երկու շրջաբերականներ. ի հարկէ ստացած էք բոլորն էլ:

Այժմ ձեզ կը տանք մեր շրջանի մէջ կատարուած աշխատանքները ու Երկրէն ստացուած նամակներու ամփոփումը: Մի քանի շաբաթ առաջ ընկ. Վարանդեանը ժընեւից եկաւ ու մի քանի հրապարակային ժողովներ սարքելէ յետոյ Պոլքրէշ մեկնեցաւ, անկէ Կովկաս երթալու համար:

Մեր նախորդ շրջաբերականներու մէջ ասած ենք, որ համաշխարհային ներկայ պատերազմի առթիւ եւ ներքին կազմակերպական հարցերի պատճառով Կ. կոմիտէն հարկ դատած էր Արտակարգ Շրջ. ժողովի մը գումարումը ու նախօրօք դրկած էինք ժողովի օրակարգը: Գրեթէ բոլոր շրջանները ուղարկած էին իրենց պատգամաւորները: Ժողովը բացուեցաւ ամսոյս 10-ին եւ Պալքաններու մէջ կայացուած բոլոր շրջանային ժողովներէն աննախընթաց ոգեւորութեամբ տարաւ իր աշխատութիւնները. շրջանները չափազանց ոգեւորուած են. ամէն կողմ վերակազմումի ջանքեր կ'ըլլան. նոր վայ-

րեր ալ հին ընկերներու նախաձեռնութեամբ կը կազմակերպուին, այնպէս որ երեւոյթը վերին աստիճանի միխթարական է: Ժողովի որոշումները շուտով կը տպագրուին ու ձեզ ալ կ'ուղարկենք Կ. կոմիտէի շրջաբերականին հետ մէկտեղ:

Ահա թէ ինչ են ասում Պոլսէն ստացուած նամակները.— Մի նամակի մէջ դրամական խիստ ստիպողութիւն կայ. պատմական այնպիսի քրիթիք վայրկեաններու մէջ կ'ապրին մեր ընկերները, որ առանց կարեւոր պիտեմէների չեն կարող մեր ժողովրդի կեանքը փրկել: Ահա թէ ինչ են գրում. «Վասպուրականը կիսա-ապրտամբական վիճակումն է. բուլկարական ինչպէս եւ միւս գաղութներին անհրաժեշտ է, որ ներկայ պարագաներին դրամ պիտի հայթայթեն Երկրին ու այն վայրերին, որոնք Երկրի ինքնապաշտպանութեան կը մտածեն. այս կէտը ձեր ուշադրութեանն ենք հրաւիրում, որպէսզի խնդրի լրջութիւնը ի նկատի ունենաք ու ըստ այնմ յարմարեցուի ձեր գործունէութիւնը: Այդ նոյն ուղղութեամբ մեր կողմէն գրեցէք նաեւ մի Ամերիկա ու մի Եգիպտոս: Ներկայ ամսոյ 14-ին հեռագրեցինք որ միեւնոյն եղանակաւ՝ հեռագրաւ — (300) երեք հարիւր ոսկի փոխադրէք Պոլիս:

Իսկ մի ուրիշ նամակ, որ գրուած է Կարինից, մօտաւորապէս հետեւեալն է.— Չէթայական գործունէութիւն այլեւս չկայ Կարնոյ դաշտին մէջ. թուրքիոյ վերաբերմունքը դէպի հայերը բաւական փոխուել ու լա-







լացել է. թրքական զորքի բարոյական անկումը աւելի եւս սաստկացել է Սարիղամիշի պարտութիւնից յետոյ: Լուիկ մնջիկ քաղաքը ու շրջակայ բերդերը կ'ամրացնեն, կասկածելով որ ռուսերը շուտով կը հասնին Էրզրումի պատերի քով. հիւանդանոցներու մէջ օրական 4-500 հոգի կը մեռնին. քաղաքի մօտի 15 հայ գիւղեր բոլորովին դատարկել են հիւանդներ պահելու համար: Քաղաքի մէջ էլ մի քանի թաղեր նոյն վիճակին պիտի ենթարկուին: Գրաւումները կը շարունակուին ու մեծ մասը կը ծանրանայ հայերի վրայ. կառավարութիւնը կը պահանջէ որ ամսուայ մէջ մէկ շաբաթ զօրքին քաղաքը պահէ: Այդ կարգադրութիւնը շատ մեծ դժբախտութիւնների տեղի կու տայ, որի պատճառով ծեծը, բանտարկութիւնը յաճախադէպ են: Վերջերս թուրքերի մէջ կը խօսին որ զօրքի մի մասի մէջ ապստամբութիւն է յառաջ եկել, Էնվեր փաշայի ու գերմանացի ղեկավարի ղէմ: Էնվերի եավերը<sup>49</sup> պառկած է Կարին: Ապստամբութեան լուրը դեռ չէ ստուգուած:

Մուշից գրուած նամակը աւելի տխուր է.— Ժանտարմները եւ կամաւորները լեցուած են քաղաք. գիւղերը սոսկալի աւագակութիւններ կան. հայերու ինչքը կը գրաւուի բռնի կերպով, օրէնքի անուան տակ. բռնագրաւումները սոսկալի համեմատութիւնների կը հասնին ու սովը գարնան անխուսափելի է: Փոխադրութիւնները կը կատարուին ընդհանրապէս հայերի միջոցաւ, որոնք շալակով մինչեւ Հասանգալէ կը տանին. դնացողներէն կէսը չի վերադառնար, կամ կ'անյայտանան, այնպէս որ հայերին սպասում է Ֆիզիքական ոչընչացում: Ըստ Մուշի կառավարչին Կարճկանում հայերը ապստամբուել են ու հեռագրաթերերը կտրել. ըստ մեր ընկերների (Մուշի) այդ չափազանցութիւն պիտի լինի. հաւանօրէն փախստական հայ գիւնդներն են, որ երեւի գրգռուած ժանտարմների արած բռնութիւններէն, ընդհարում են ունեցել. սա երկրորդ ըմբոստացումն է հայերի կողմից ինքնաբերաբար. պէտք է ենթադրել թէ ինչ սոսկալի կացութիւն է ստեղծուել, որ նման դէպքեր ինքնաբերաբար կատարուում են:

Կարնոյ պատերազմական ատեանը պահանջել է

Դաշնակցութեան ծրագիրը, որովհետեւ բասենցիների թղթերի մէջ գտել են 1910ի Ընդհ. ժողովի օրակարգը, որի մէջ կայ մարտական խմբեր, մնայուն զինուորական ֆոնտ եւայլն եւայլն:

Շուտով կ'ուղարկենք ձեզ նաեւ Կարնոյ, Մուշի եւ Վանի մէջ պատահած դէպքերի առթիւ Կարնոյ կուսակալ Թահսին պէյլին (որ կը համարուի հայ վիրայէթներու ղեկավար) ու Վանի կուսակալին ընկ. Վուսմեանի կողմէ տրուած յիշատակագրին պատճէնը:

Աւելացնենք մի քանի տեղեկութիւններ էլ Պոլսոյ մասին: Անցեալ շաբթուայ մէջ սկսուած Տարտանէլի ռմբակոծումը բաւական յուզում յառաջ բերաւ Պոլսի կառավարական շրջանակներուն մէջ. բանկերը, հանրալիք [այլին] պարտուց վարչութիւնը, պետական արխիւը սկսան փոխադրել Գոնիա: Իշխանաց կղզիներու ամբողջ բնակչութիւնը պարպուեցաւ կառավարութեան ստիպումով ու եկան քաղաք. ծովեզերեայ թաղերն ալ պիտի պարպուին: Արտակարգ ոստիկանական միջոցներ ձեռք առնուած են:

Ինչպէս մեր նախորդ նամակներուն մէջ խօսած ենք թէ «Հայաստան» անունով թերթի մը ձեռնարկած են մեր ընկերները, այժմ ուրախ ենք, ընկերներ, որ բաւական ծանր դժուարութիւններէ յետոյ կարողացանք կառավարական արտօնութիւն ձեռք ձգել. շուտով առաջին թիւը լոյս կը տեսնէ, կ'ուղարկենք ձեզ: Հարկաւոր է մեզ կարող ընկերներու աշխատակցութիւնը. ի հարկէ թերթը տարածելու համար նաեւ ջանք չէք խնայեր:

Գրեցէք մեզ ամերիկահայ կեանքի մասին, եւ կուսակցական գործունէութեան մասին. հետաքրքիր է այդ առթիւ իմանալ վերջին շարժումները: Մենք մեր կողմէ օրը օրին ձեզ տեղեակ կը պահենք մեր շրջանի ու Երկրի կացութեան մասին:

Երէկ ձեզ ուղարկուեցաւ Շրջ. ժողովի կողմէ պատրաստուած շրջաբերականը:

Ընկերական բարեկներով  
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
ՊԱԼՔ. ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ



Փաստ. 63-28

21.- «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ, Բոսսոմ

Ժրմես, 6 Մարտ 1915

Սիրելի ընկերներ!

Կը հաստատենք 6 եւ 14 յունուարի թիւ 123 եւ 124, նաեւ 2 փետրուարի N 127 գրութիւնները, որոնց պատասխանները տակաւին չստացանք, մինչդեռ խնդրել էինք դրանց անմիջապէս պատասխանէք որպէսզի իմանայինք՝ Կովկասից ստացած տեղեկութիւնների պատճէնը, որ ուղարկել էինք անցեալում ձեզ՝ հասել է թէ ոչ:

Ընկեր Ռոստոմը Լոնդրայից գրած է որ երկար սպասել է ձեր հեռագրած նամակին (12 օր) եւ չի ստացել. սպասելիս է եղել նորից եւ գրել որ ստանալուց մեզ կը գրէ. սակայն ոչինչ չստացանք տակաւին, իսկ ինքը վաղուց մեկնել է Լոնդրայից, ու Շուէտիայից հեռագրել իր՝ դէպի Ռուսաստան մեկնելը եւ հաւանականաբար արդէն թիֆլիս է հասել:

Ընկեր Միքայէլը<sup>90</sup> իր միասխան կատարել է Իտալիայում բաւական յաջող. տեսնուել է մի շարք հեղինակաւոր անձնաւորութիւնների հետ եւ խօսել մեր անեկիքների մասին: Ձեռք գրում ոչ Ռոստոմի եւ ոչ էլ Միքայէլի արածների մասին, համոզուած՝ որ իրենք ձեզ գրած կը լինեն: Ընկ. Միքայէլին Բալկ. Կ. Կ.էն պահել է 2 շաբաթով որպէսզի զանազան քաղաքներում հրապարակային դասախօսութիւններ կազմակերպէ եւ հանգանակութեան ձեռնարկեն կամաւորների օգտին: Արդէն այդ ժամանակամիջոցը լրացել է] եւ մեծ հաւանականութեամբ նա էլ քիչ օրից կը լինի թիֆլիս, ուր կ'ունենան խորհրդակցական նիստ, կը տան իրենց գեկուցումները եւ կ'որոշեն մեր անեկիքների ուղղութեան մասին իրենց մօտ, Թուրքիա եւ Եւրոպայում:

Կարնից ստացել ենք երկու նամակներ, որոնք տալիս են Երկրի մասին տեղեկութիւններ, թէեւ բոլորն էլ տխուր, սգաւոր: Ընդհանուր գրութիւնը աննախանձելի է իրենց շրջանում: Մերոնց յարաբերութիւնները խզուած են տեղական քաղաքական վարիչների հետ: Վերջերս նոր կուսակալ է նշանակուած եւ ուղարկուած Կարին, որին մերոնք գնացել եւ տեսնուել են: Վալին ըստ սովորութեան սիրալիր եւ ջերմ ընդունելութիւն է ցոյց տուել եւ խնդրել միշտ յարաբերութեան մէջ մնալ իր հետ եւ միւս կողմից խոստացել ամէն տեսակի աջակցութիւն: Այդ տեսակցութիւնից<sup>3-4</sup> օր յետոյ սկսուած է

խուզարկութիւններ եւ հետապնդումներ: Ընկերների կարծիքով, դա արդիւնք է եղել իրենց ունեցած տեսակցութեան. այդպէս են բացատրել մերոնց վալիի անձնաւորութեան մօտ շրջանակին ծանօթները: Դրութիւնը յուն[ուար]ից առաջ չափազանց վատ է եղել, բայց յետոյ դէպի լաւն է փոխուել: Վարչական շրջանակներում նորից ջարդերի շուկներ են եղել, սակայն տեղացի վաճառականները եւ աւանաւոր անձինք խիստ հակառակ են եղել դրան: Մասնայական ջարդեր չի եղել, բայց հատ ու կտոր սպանութիւններ, մասնաւորաբար հայ գինուորների, եղել է: շատերին գինաթափ են արել. շատերն էլ ըմբոստացել են գինաթափութեան սպառնալիքի դէմ, բայց եւ այնպէս Բասենում մի ձորի մէջ մօտ 60 հայ գինուորների, գիշերով եւ առանց շուկի ոչնչացրել են: Խուզարկութիւններ են տեղի ունեցել մեր ընկերների տներում, սակայն առանց դրական արդիւնքի: Հետաքրքիր է հայ «չէթայական» շարժումները Կարճկանի շրջանում, որը տեղեկացրել են Վանի ընկերները: Կարճկանում փախստական գինուորներ հետապնդելու ժամանակ ընդհարումներ են տեղի ունեցել փախստական գինուորների եւ կառ[ավարական] զօրքի մէջ: Կառ.ը ուզել է նոր ուժերով վերջացնել հայ «չէթաներին»: Կռուի մէջ չէթաները մնացել են ապահով, իսկ կառ[ավարութիւն]ը քանդել է անմեղ գիւղերը: Նոր չէթաներ օգնական կը հասնեն, կռիւը կը սաստկանայ: չէթաները կը կտրեն հեռագրաթելերը եւ օդը կը հանեն կամուրջները: Վերջապէս կռուի վայրը կը փութան 2 մեպուսներ՝ Միւնիպ եւ Վռամ[եան] եւ կը հանդարտեցնեն յուզուած միտքերը, որից յետոյ կը խաղաղուի եւ կառ.ը կը կ'առաջարկէ մերոնց որ Վռամ[եան]ն ու Արամը անցնեն Սալմաստ — յետ պահելու հայ խմբերը թուրք զօրքերի դէմ կռուելուց: Մերոնք ցոյց կու տան «Բաշկալէի» հայերի կոտորածը եւ նման շարժումները. կառ.ը կ'արդարացնէ «Բաշկալէի» կոտորածը եւ մերոնց յարաբերութիւնները կը խզուի:

Ինչպէս տեղեկացնում են Կարնոյ ընկերները, իրենց կարծիքով, կառ.ը նպատակ է դրել հեռացնել դաշն[ակցական] ղեկավարներ...: Մուշ՝ մեր ընկեր Ռուբէնից<sup>91</sup> պահանջել են անցագիր. բացի դա, պատերազմը սկսելուն պէս, սկսել են նաեւ չէթայական գործունէութիւնը, որ բացառապէս արտայայտուել է հայերի դէմ: Բասենը ամբողջապէս քարուքանդ են արել չէթաներու ձեռքով. նոյնը նաեւ Կարնոյ դաշտը. 50, 100 եւ աւելի ձիաւորներով լեցուել են հայ գիւղերը պահանջելով

90.- Վարանդեան Միքայէլ:  
91.- Տէր Մինասեան Ռուբէնից:



զէնք եւ դրամ. եղել են գիւղեր, ուր զէնք եւ դրամ առնելու պատրուակով կանանց եւ երեխաներին լեցրել են գետր: Շատ գիւղերի էլ ամբողջ ցորենն ու գարին, խոտն ու յարդը թալանել տարել: Այս թշուառութիւնների պակասը լրացնում են զանազան տարափոխիկ հիւանդութիւնները, որոնք զօրքի մէջ իր[ենց] ահուելի կոտորածը անելուց յետոյ, անցել է քաղաքը. ամէն օր տասնեակներով մեռնում են դիՓ, դիՓիւս եւ դիզենտերիից: Մի խօսքով, միխթարական առ այժմ ոչինչ չկայ:

Եթէ նոր տեղեկութիւններ ստանանք, ձեզ կը յայտնենք: Գրեցէք մեզ արդեօ՞ք ստան՞ում էք Երկրից ուղղակի տեղեկութիւններ եթէ ձեզ էլ գրում են նոյն բաները, կը նշանակէ աւելորդ կը լինի մեր կրկնութիւնները:

Ընկերական բարեկենդանի  
«Դրօշակ»ի խմբագրութեան կողմից  
Մ. ՂԱԶԱՐԵԱՆ

Փաստ. 105ա-7

22.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾԷՆ ԲԱԼԿԱՆԻ Կ. ԿՈՍԻՏԵՒՆ

Ընկերներ!

Ստացեր ենք ձեր գաղտնի մելանով նամակը, որ բոլորովին անընթեռնելի եղաւ, ինչպէս եւ քարտը, որի մէկ մասը միայն կրցանք կարդալ: Ամէն անգամ, մելանը նոր պիտի պատրաստել եւ երկրորդ, պատրաստելէ յետոյ, անպատճառ պիտի փորձել եւ երրորդ, գրելուց՝ ուշադիր պիտի լինել, երբեմն թուղթը սահուն լինելու պատճառով, գրիչը սահում է առանց գրելու եւ ամբողջ տողեր մնում են առանց գրի եւ խօսքի: Գրելու ատեն պիտի լինել համբերատար. Ձեր ամենազլխաւոր գործը պիտի լինի ներկայ մոմենտում երկրի հետ յարաբերութիւն պահելը եւ այդ էլ դժուարանում էք համբերատարութեամբ անել: Ամէն անգամ գաղտնի մելան պիտի գործածել, ներելի չէ զանազան առարկութիւններ անելը, կարիք չկայ որ սեւ[ագրութիւն]ը ամբողջութեամբ գրէք եւ ապա արտագրէք. բաւ է որ նոթեր առնէք եւ ապա դնէք գաղտնի ձեւեր, այնպէս, ինչպէս մենք ենք անում:

Ստացանք նաեւ ձեր բաց գրած նամակը բարեկամի մը միջոցաւ: Գործիչ ընկեր ուղարկելու խնդրի մասին կը խորհրդակցենք եւ ձեզ կը գրենք. թերթի մասին<sup>92</sup> որքան որ ռաջոնական ժողովը որոշեց եւ համամիտ են եղել Լիպարիտն ու Միքայէլը<sup>93</sup>, բայց եւ այնպէս մենք մնում ենք մեր տեսակէտի վրայ: Հակադիցիբլինական գործ չպէտք է անել եւ Ընդհանուր ժողովի որոշման հակառակ չպիտի գնալ, այլապէս կուսակցութեան ծո-

ցում անարխիա<sup>94</sup> կը ստեղծուի: Մեր կուսակցութեան ոյժը կազմել է նրա վերին մարմինների բարոյական ոյժի եւ հեղինակութեան մէջ եւ եթէ կարիք է զգացում՝ ժամանակի պահանջի համեմատ անոր որոշումները խախտել, գէթ օրուան իրաւասու մարմինների ոեւէ մէկի համաձայնութիւնը անհրաժեշտ էր:

Արտասահմանի մարմիններէն դրամ չստացանք. կրկին անգամ անմիջապէս հեռագրելու էք Ամերիկա 300 ոսկի հեռագրով փոխադրել տալու համար տոքթոր Փաշայ[եան]ի<sup>94ա</sup> հասցէին: Առնուազն 1000 ոսկու պէտք ունինք մեր եւ երկրի մարմիններու համար:

Ստորեւ յիշուելիք տեղեկութիւններէն պիտի իմանաք, որ Վասպուրականը համարեա թէ ապստամբական վիճակի մէջ է. սկսուել է կանոնաւոր կռիւներ, սպանուած են 60է աւել ժանտարմ. հրկիզուած են հայ գիւղեր. օգնութիւն պիտի փութալ. նոյնը գուցէ սկսուել են Մշում եւ եթէ չէ սկսուել, անխուսափելի է պայրամին. կառավարութիւնը այնպիսի անիրաւութիւններ եւ ոճիրներ է գործում, որ կռիւներն անխուսափելի են:

Թէ այստեղ եւ [թէ] երկրում արիւն թափուեց եւ հարկաւոր դիմադրութիւն չեղաւ, ամբողջ ծանրութիւնը եւ պատասխանատուութիւնը պիտի ձգենք արտասահմանի մարմիններուն վրայ: Մեղքը ձեր վիզը, մենք յոգնեցանք գրելէ, իսկ արտասահմանը բաւականացաւ լսելով. ամօթ է, դատապարտելի՝ նման վերաբերմունքը:

Կառավարական աղբիւրէ կը տեղեկանանք, որ Ձէյթիւնում ընդհարումներ են սկսուել: Ըստ գերմանական դեսպանատան տեղեկութիւններուն՝ կառավարական զօրքերու կողմէ կորուստներն աւելի մեծ են քան ապստամբներինը: Կռուի մեծութեան եւ ծաւալի մասին մանրամասնութիւններ կը պակսին:

Ներքին Կառկառում (Վասպուրականի Կ. կոմիտէի

92.- Խօսքը կը վերաբերի Պալքանի Կ. կոմիտէի նախաձեռնած «Հայաստան» թերթի հրատարակութեան, որուն արտօնագիրը առնուած էր եւ առաջին թիւը լոյս տեսած էր արդէն, Մարտ 10ին:

93.- Նազարեանց Լիպարիտը եւ Վարանդեան Միքայէլը:

94.- Անիշխանութիւն:

94ա.- Տոքթ. Կարապետ Փաշայեան (Թափառիկ), դաշնակցական երեսփոխան Օսմ. խորհրդարանին:



**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

չըջաններում) Բիթլիսի վիլայեթ, սկսուել են ընդհանրումներ.— հետեւեալ ձեւով ծայր տուեր է— ութ կարկառցի հայ գինուորացու տանում են դէպի Խիզան եւ ճանապարհին չորսը սպանում են (ժանտարմները)։ մի քանի ատեն յետոյ ժանտարմները նոր զօրք հաւաքելու պատրուակով գալիս են նոյն գաւառակի Եղեգիս գիւղը եւ հոն հրաւիրում են Ջալս եւ Կանկարուտ գիւղի ուխտներին։ Վերջիններին այնքան են ծեծում, որ չգիմանալով տեղնուտեղը մեռնում են։ Նոյն օրը 15 բուպէ անդին գտնուող Ծկոր գիւղում ժանտարմները սպանում են 12 տարեկան մի երեխայ։ Այս բոլորի վրայ գայրանալով, գիւղացիք յարձակուում են Եղեգիսում եւ սպանում են չորս ժանտարմ, իսկ Ծկորում՝ 2։ Բիթլիսէն միլիսներ եւ ժանտարմներ օգնութեան են գալիս եւ սկսում է կռիւ ըստ մեր առած տեղեկութիւնների, հայերը վառել են 4 իսկ ըստ ոմանց էլ 11 գիւղ։ Կոտորել են 2 գումարտակ ժանտարմներ, թուով 60 հոգի։ Գեաւաշի հայ գիւղացիները հասել են օգնութեան կռուողներին, իսկ թէ ընդհարումներն ի՞նչ ուղղութեամբ են գարգանում, չգիտենք։

95.- Միճաւանջով։

Կառավարական նոյն խստութիւնները վերսկսած են նաեւ Կարնում։ Դերջանում սպանութիւնները սովորական են դարձեր․ մահուան սպառնալիքով, անպատասխանատու մարդիկ, կառավարութեան գիտութեամբ՝ դրամ են պահանջում հայերէն․ նոյն վիճակին մէջ է նաեւ Բայբուրդը։ Ձէնքի խուզարկութեան պատրուակով մտնում են տները, նեղում, դրամ շորթում եւ նոյնիսկ սպանութիւններ կատարում։ Դրութիւնը գնալով սաստկանում է եւ ամբողջ ժողովուրդը ապրում է կոտորածի կոշմարով<sup>99</sup>։ Կառավարական նոր հրամանագիր է դուրս եկել, հայ բոլոր զինուորները զինաթափ անելու, իսկ ոեւէ շարժման դէպքում՝ կոտորելու։ Արդէն մնացած զինուորներէն ալ առնում են զէնքերը։

Այս ընդհանուր տեղեկութիւնները անմիջապէս յայտնեցէք համապատասխան մարմիններին։ Գրեցէք աւելի յաճախ։

Բարեւներով՝  
Հ[ԱՅԱՍՏԱՆԻ] Բ[ԻԻՐՈՅԻ]  
Պ[ՈԼՍՈՅ] Հ[ԱՏՈՒԱԾ]

1915 Մարտ 11  
Կ. Պոլիս





Փաստ. 882-4

23.- ԴՐՕՇԱԿԻ ԽՍՔԱԳՐՈՒԹԵԱՆ, ԺՂՆԵԻ (Միսաք)

Հայաստանի բիրոյի Պոլսոյ հատուածի հրահանգին համաձայն՝ թիւ 105ա-7՝ նախորդ վաստաթուղթով հաղորդուած տեղեկութիւնները Պալքանեան Կեդր. կոմիտէն կը յղէ արտասահմանեան մարմիններուն.– ԺՂՆԵԻ «Դրօշակ»ի խմբագրութեան, Թիֆլիս, Եգիպտոս եւ Ամերիկա: Այս մէկը հասցեագրուած է «Դրօշակ»ին, որուն կողմէ գրութիւնը մակագրուած է «Պատասխանուած N° 144, 25-IV-1915, Միսաք»: Այս վերջինը՝ Ղազարեան Միսաք, Միք. Վարանդեանի Կովկաս մեկնելէն ետք, Արտասահմանի հետ կը պահէր թղթակցական կապը:

Ընկերներ,

Հայաստանի բիրոն մեզ տեղեկացնում է հետեւեալը՝ Ձեզի եւս տեղեկագրելու համար:

Վասպուրականը համարեա թէ ապստամբական վիճակի մէջ է: Սկսուել են կանոնաւոր կռիւներ: Սպաննրւած են 60է աւելի ժանտարմ. հրկիզուած են հայ գիւղեր. օգնութեան պէտք է փութալ: Նոյնը գուցէ սկսուել է Մշում եւ եթէ չէ սկսուել, անխուսափելի է: Կառավարութիւնը այնպիսի անհրաւորութիւններ եւ ոճիրներ է գործում որ կռիւներն անխուսափելի են: Թէ այստեղ եւ [թէ] երկրում արիւն թափուեց եւ հարկաւոր դիմադրութիւնը չեղաւ. ամբողջ ծանրութիւնը եւ պատասխանատուութիւնը պիտի ձգենք արտասահմանի մարմիններուն վրայ: Մեղքը որո՞ւ վիզը. մենք յոգնեցանք գրելէ. իսկ արտասահմանը քաւականացաւ լսելով: Ամօք եւ դատապարտելի է նման վերաբերմունքը: Կառավարական աղբիւրէ կը տեղեկանանք որ Ձէյրունում ընդհարումներ են սկսուել: Ըստ գերմանական դեսպանատան տեղեկութիւններուն՝ կառավարական զօրքերու կորուստները աւելի մեծ են քան ապստամբներունը: Կռուի մեծութեան եւ ծաւալի մասին մանրամասնութիւններ կը պակսին: Ներքին Կարկառում (Վասպուրականի Կ. կոմիտէի շրջան) Բիթլիսի վիլայէթ սկսուել են ընդհարումներ որոնք հետեւեալ ձեւով ծայր են տուել.– Ուրը կարկառոցի հայ զինուորացու տանում են դէպի Խիզան եւ ճանապարհին չորսը սպանում են ժանտարմները: Մի քանի ատեն յետոյ ժանտարմները նոր զօրք հաւաքելու պատրուակով գալիս են նոյն գաւառակի Եղեգիս գիւղը եւ հոն հրաւիրում են Չալս եւ Կանկարուտ գիւղերի ռէսնէրին: Վերջիններին այնքան են ծեծում որ չդիմանալով տեղն ու տեղը մեռնում են: Նոյն օրը 15 րոպէ անդին գտնուող Ծկոր գիւղում ժանտարմները սպանում են 12 տարեկան մի երեխայ: Այս բոլորին չդիմանալով՝ գիւղացիք յարձակում են եւ Եղեգիսում սպանում են 4 ժանտարմ իսկ Ծկորում՝ 2: Բիթլիսէն միլիսներ եւ ժանտարմներ օգնութեան են հասնում եւ սկսում է կռիւ: Ըստ մեր առած տեղեկութիւններին հայերը վառել են 4, իսկ ըստ ոմանց 11 գիւղ: Կոտորել են երկու գումարտակ ժանտարմներ՝ թուով 60 հոգի: Գեւալաշի հայ գիւղացիները հասել են օգնութեան կռուողներին, իսկ թէ ընդհարումները ի՞նչ ուղղութեամբ են զարգանում չգիտենք:

Կառավարական այդ խստութիւնները սկսած են նաեւ Կարինում: Դերջանում՝ սպանութիւնները սովորական են դարձել: Մահուան սպառնալիքով՝ անպատասխանատու մարդիկ՝ կառավարութեան գիտութեամբ՝ դրան են պահանջում հայերէն: Այս վիճակի մէջ է նաեւ Բայբուրդը: Ձէնքի խուզարկութեան պատրուակով մտնում են տները, նեղում, դրամաշորթում եւ նոյնիսկ սպանութիւններ կատարում: Դրութիւնը գնալով սաստկանում է: Ամբողջ ժողովուրդը ապրում է կոտորածի կոշմարով: Կառավարական նոր հրամանագրեր է դուրս եկել՝ հայ բոլոր զինուորները զինաթափ անելու, իսկ ռեւէ շարժման դէպքում կոտորելու: Արդէն մնացած զինուորներէն ալ առնում են զէնքերը:

Ընկերական բարեւոյնով  
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ







Մատենանքի 1190ա, էջ 909-10  
N° 380

24.- ՊԱԼՔԱՆԻ Կ. ԿՈՍԻՏԵՆՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մոսկիա 14/27 Մարտ 1915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր փետր. 28 թուակիր եւ 340 թուահամար նամակը. ձեզնից մինչեւ այժմ ոչ մի նամակ չենք առել. մի քանի օր առաջ ձեզ ուղարկեցինք նաեւ Պալք. Շրջանային ժողովի որոշումներէն 2 օրինակ:

Երկրէն ստացուած նամակների տեղեկատուական մասը արդէն օրը օրին «Հայաստան» թերթի մէջ լոյս կը տեսնէ. այնպէս որ այդ լուրերը ձեզ մեծապէս կը գոհացնեն. մենք միայն կազմակերպական մասը ձեզ կը հաղորդենք. ինչպէս կը տեսնաք Մուշր եւ Վասպուրականը կիսա-ապստամբական վիճակի մէջ են: Անհրաժեշտ է դրամ. միայն Տարօնի գինման համար 2000 ոսկի է պէտք: Երկրի ընկերները գտել են ճանապարհները թէ աստան գնով գէշք ձեռք բերելու եւ թէ վստահելի միջոցաւ Պոլսէն դրամը փոխադրելը Կովկաս: Կ. կոմիտէս իր շրջանին մէջ որոշեց շուտով հանգանակութեան սկսել միայն Երկրի ինքնապաշտանութեան համար: Այս մտքը գրած ենք արդէն Եգիպտոսի եւ Ամերիկայի ձեռնհաս մարմիններուն այդ ուղղութեամբ աշխատանք տանելու համար: Ձեզ կը տանք մի քանի տեղեկութիւններ Պուլկարիոյ քաղաքական կեանքի մասին:

Յունաստանի դաւաճանական քայլին հետեւանքով Պուլկարիան բացէ ի բաց յարեցաւ Երրեակ համաձայնութեան. դրկուած անգլիական միսիան արժանացաւ խանդավառ ընդունելութեան: Մի քանի օր առաջ տեմոքրաթ կուսակցութեան պետ Մալենոֆը թէ ցարին եւ թէ վարչապետին հետ երկար տեսակցութիւններ ունեցաւ: Կելոֆն[?] ալ պալատ հրաւիրուեցաւ. ազգային խառն դահլիճ մը կազմելու գաղափարը (որ մինչեւ այսօր ընդդիմադիրները կը պահանջէին) արդէն իրականացած կարելի է համարել: Նախարարական շրջանակներու շատ մօտիկ անձնաւորութիւն մը մեզ յայտարարեց թէ մինչեւ երկուշաբթի 16/29 մարտ արդէն ամէն

բան կը պարզուի. ամենայն հաւանականութեամբ Ձատկէն յետոյ Պուլկարիան պատերազմ հրատարակէ թուրքիոյ-Յունաստանի դէմ: Դէպքերը այնքան արագօրէն կ'ընթանան, որ մինչեւ նամակնուս տեղը հասնելը հեռագիրը արդէն ձեզ բերած կը լինի մեր վերի գրածներու իրականութեան լուրը<sup>96</sup>: Մենք օրը օրին կը տեղեկագրենք կատարուող բոլոր շարժումները:

«Հայաստան» թերթը հրատարակուեցաւ. դրկեցինք ձեզ ալ. խնդրում ենք որ տեղւոյդ ու գանազան քաղաքներու ընկերները աշխատակցութիւն բերեն:

Պոլսոյ դրութիւնն ալ այնքան մխիթարական չէ. մեր ընկերները կատարեալ սարսափի ու հալածանքի ենթարկուած են. առայժմ բացայայտ չէ այդ շարժումը, բայց քանի գնում է այնքան սուր կերպարանք է ստանում: Իսլամ բնակչութիւնը խելայեղ փախուստի է դիմած. օրական 8 շոգեկառք կը մեկնի Հայտարար-փաշայէն դէպի Գոնիա ու էսկիշէհիր. բոլոր պաշտօնեաներուն պատուիրուած է կազմ ու պատրաստ սպասել, առաջին հրամանին մեկնելու համար: Հայոց Պատրիարքարանն ալ պիտի փոխադրուի: Տնտեսական տագնապը եւ անօթութիւնը իր ծայր աստիճանին հասած է:

Կովկասէն ոչ մի լուր չենք ստացել մինչեւ այժմ. արդեօք դուք ստացել էք, գրեցէք մեզ այդ մասին:

Ընկ. Միքայէլը Պուլքրէշից մեկնեցաւ, բայց մինչեւ այսօր որեւէ լուր չունենք. հեռագրեցինք Պուլքրէշ, պատասխանի կը սպասենք:

Ինչպէս մեր նախորդ նամակի մէջ գրեցինք, թէ մեր նամակի թուղթերը բոլորովին սպառուած են, խնդրում ենք շուտով մեզ ուղարկեցէք մեր նախորդ նամակալիշուած քանակութեան չափ. խիստ ստիպողական է:

Տեղւոյս ընկերներէն ընթերցարան մը պիտի բացուի մի քանի օրից. նաեւ մեզ ուղարկեցէք «Դրօշակ»ի բոլոր հրատարակութիւններէն 2 օրինակ. նաեւ հաշուեցուցակը որ դրամը ուղարկենք ձեզ:

Վերջին անգամ խնդրում ենք, մեր յանձնարարութիւնները փութով կատարէք:

Ընկերական բարեկներով  
Հ.Յ.Դ.ԵԱՆ ՊԱԼՔ. ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԷ

96.- Նամակագրի ենթադրութիւնները չիրականացան անշուշտ. ընդհակառակն ամիսներ ետք, Մեպտեմբերին, Պուլկարիա միացաւ պատերազմին Գերմանիոյ կողքին, ընդդէմ Երրեակ համաձայնութեան:





Փաստ. 105ա-10

25.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԻ ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԾԵՆ ՊԱԼՔԱՆԻ Կ. Կ.ԻՆ

20-III-1915

Ընկերներ,

Խնդրենք այս նամակը արտագրէք ու ղրկէք հետեւեալ մարմիններուն.— Արեւելեան բիւրօ, Ռոստոմ, Ամերիկայի Կ.Կ. եւ Եգիպտոս: Զեզ կը ղրկենք Վանի մեր ընկերներէն ստացուած յիշատակագրի պատճէնը. այդ յիշատակագիրը Վաւաճանի կողմէն գրուած է Վանի կուսակալութեան եւ Կարինի կուսակալ Թահսին պէյին որ կը համարուի հայ վիլայէթներու գլխաւոր ղեկավար<sup>86</sup>:

«Հայերու դասալքումը բանակէն ի սկզբան երեք պատճառ ունէր.

- 1) 23 տարիքէ վեր եղածներու անմարդ լինելը,
- 2) անոնց անվարժութիւնը այն ծանր գրկանքներու որոնց ենթակայ եղաւ մեր բանակը պատերազմին յանկարծակի հոչակման հետեւանքով.
- 3) կայ գինուորներուն կրօնական պէտքերուն արհամարհուելը բանակին մէջ: Դասալքութիւնը շատ սահմանափակ էր ի սկզբան ու անհնար չէր այդ աննշան տոկոսն ալ անհետացնել, եթէ ասոր առիթ տուող վերի պատճառները լրջօրէն նկատի առնուէին ու դարմանուէին իր ատենին:

Ատոր հակառակը, դժբախտաբար, աղէտաւոր անվստահութիւն մը կառավարութեան կողմէն հայերու նկատմամբ՝ իր անմիջական կարգ մը հետեւանքներով նորանոր եւ ծանրագոյն պատճառներ ստեղծեցին դասալքումին ընդհանուր բնոյթ մը տալու համար. այդ նոր պատճառներն են.

- 1) Հայ գինուորներու եւ ժանտարմաներու գինաթափումը որ քաղաքական անվստահութեան հեղձուցիչ միջնորդութ մը ստեղծեց անմիջապէս հայութեան շուրջ եւ նպաստեց լարելու միջացեղային յարաբերութիւնները հայուն եւ իսլամներու:
- 2) Զինաթափ եղած այդ հայերը գտնուելով գինուած իսլամներու հսկողութեան տակ կամ անոնք հարկադրուած ըլլալով անգէն շրջելու եւ աշխատելու արդէն գրգռուած եւ սպառազէն իսլամներու մէջ, անոնց կեանքը վտանգի ենթարկուեցաւ. հասարակութեան մէջ յամառօրէն կը շրջին շշուկներ հարիւրաւոր գնդակահար, ջրախեղդ կամ դաշունահար եղած ու անհետ կորսուած հայ գինուորներու մասին, մասնաւորապէս Կարնոյ ռազմադաշտին մէջ կամ քովերը.
- 3) Բոլոր իսլամներու յատկապէս քիւրտերու անխտիր գինումը (16էն մինչեւ 60 տարեկան) միլիսի պատրուակին տակ:
- 4) Անոնց յանձնուեցաւ ոստիկանութեան եւ ժանտարմարիի պաշտօններ որ հայութեան հանդէպ տիրապետող եւ զսպիչ ուժի մը հանգամանքը տուաւ անոնց:

տարմարիի պաշտօններ որ հայութեան հանդէպ տիրապետող եւ զսպիչ ուժի մը հանգամանքը տուաւ անոնց:

5) Միլիսիներու շահատակութիւնները հայ գիւղերուն մէջ: Այսպէս՝ Ալիւր, Խորենց, Ամիկ գիւղերու դէպքը, Թեմրանի միլիսիներու կողմէն. Բաղէշի միլիսիներու եւ Զերքէզ աղայի ջոկատին բռնութիւնները եւ աւերը Կարճկանի, Բելու, Նանեկանց, Ընձակ, Եղեգիս գիւղերու մէջ: Վանի մերձակայ Միկներ գիւղին մէջ անլուր ու վայրագ բռնութիւնները (20 կին ու աղջիկ) Բշարէ Զաթոյի ազգական էօմէր աղայի միլիսիներու ձեռքով: Բշարէ Զաթոյի 600 հոգինոց խմբին կատարած աւերածը Մանազկերտի հայ գիւղերուն մէջ եւ վերջերս ալ Պարսկաստան անցնելու ատեն Վանի նահանգին հիւսարեւելեան շրջանի հայ գիւղերուն մէջ կատարած շահատակութիւնները ու յափշտակութիւնները: Իսլամ չեթաններու բռնութիւնները Կարնոյ նահանգի հայ գիւղերուն մէջ: Քիւրտ կամաւորներու կատարած թալանը Մշոյ դաշտին մէջ, որուն շարունակումը առժամաբար վերջ գտաւ Մուսուլի գերման հիւպատոսին դիտողութեան վրայ միայն: Սիլվանի (Տիգրանակերտ) քանի մը հայ գիւղերու ամբողջովին կողոպտումը քիւրտերու ձեռքով եւն, եւն:

6) Ծանօթ քուրդ ոճրագործներու եւ աւազակներու գինումը եւ անոնց մնայլ իրենց գիւղերուն մէջ կամ հայաբնակ շրջաններու մէջ: Այսպէս՝ Մեհմետ էմին, Մուսա ու Գասրմ բէյ, եւն. եւն:

7) Զինաթափ եղած հայ գինուորները այլեւայլ պատրուակներով կը հեռացնեն իրենց բնագաւառներէն դէպի անձանօթ կամ իսլամաբնակ վայրեր:

8) Համիտիյէները կը մնան հայաբնակ գաւառներուն մէջ: Անոնց կատարած աւերն ու կողոպուտը.— այսպէս՝ Ախոռիկ, Հասան Թամրան, Բողագ-Քեսէն, Հազարէն, Մանտան (Վանի վիլայէթ) եւ Սատրմ պէյի մարդոց ձեռքով Պատիկ գիւղի (Թիմար) կողոպտումը:

9) Վերջապէս Բաշկալէի եւ շրջակայ հայ գիւղերու, ինչպէս նաեւ Սարայի, Ախոռիկ-Հասան Թամրան եւ Հազարէնի ջարդերը, որոնք իրականութիւններ են հակառակ պաշտօնական ամէն հերքումներու.—

Վերջին ինը պատճառները յառաջ կը մղեն գերազանցապէս կարեւոր խնդիր մը, այն է՝ պատուի, ինչքի ու կեանքի ապահովութիւնը տեղի մը՝ որու հանդէպ անվստահութիւն մը սկսուած է պաշտօնապէս, աստիճան մը եւս ծանրացնելով անոր արդէն իսկ փափուկ կացութիւնը իր դրացի քիւրտ տարրերու հանդէպ: Կեանքի, պատուի եւ ինչքի ապահովութեան խնդիրը ամէն նկատումէ վեր, գերազանցապէս նուիրական իրա-





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

ուղևը մըն է, ուստի բանականութեան, խղճի եւ առողջ քաղաքականութեան հակառակ գործ ըրած պիտի լինի կառավարութիւնը ստիպելով հայր մտնել ծառայութեան մը մէջ որ վտանգ կը սպառնայ ոչ միայն իր, այլեւ իր ընտանիքին ապահովութեան առանց ոեւէ օգուտ մը տալու ընդհանուր հայրենիքին: Ուստի պէտք է դադրիլ այլեւս դասալիք բառը գործածելէ հայուն հանդէպ քանի որ գէնք չունի ան իր ձեռքը, ինչ որ էական հանգամանքն է գինուորին: Դասալիք չի կրնար համարելի գինուոր չեղողը:— Հիմնուելով վերը պարզուած 12 նկատումներուն վրայ, կ'առաջարկեմ.—

Ա) Զինուորական ծառայութենէ գերծ համարել 23 տարեկանէ վեր եղող բոլոր հայերը, փոխարէն չափաւոր տուրք մը պահանջելով անոնցմէ, ներկայ պատերազմին առթիւ միայն:

Բ) Մինչեւ 23 տարեկանները (21-23) գինել ու գործածել ժանտարմըրի պաշտօնին մէջ տեղին վրայ:

Այս մասին խմբագրել առժամեայ օրէնք մը որ պիտի գործադրուի մինչեւ ներկայ պատերազմին վախճանը կամ [մինչեւ] վերահաստատումը նորմալ յարաբերութիւններու կառավարութեան եւ հայ ժողովուրդին միջեւ, մինչեւ երաշխաւորուի ապահովութիւնը հայ ժողովուրդի կեանքին, պատուին եւ ինչքին: «Մատուցուած 3/16 Յուն[ուար] 1915 — ստորագրուած՝ Վանի երեսփոխան՝ Վռամեան»:

Դասալքումի խնդրին լուծումէն զատ եւ անկէ առաջ Վռամեան պահանջած է նաեւ

Ա) Գիւղական պահակներու հաստատում հայ գիւղերու մէջ:

Բ) Միլիաները գինաթափ ընել: Անոնք գէնք ստանալու են պատերազմի երթալու ատեն միայն:

Գ) Միլիան ու համիտիյէն գիշերելու կամ օթեւանելու չեն հայ գիւղերը:

Դ) Միլիաները ժանտարմական կամ ոստիկանական պաշտօն ստանձնելու չեն:

Ե) Հայ ժանտարմները գինուած գէթ՝ %50: Ինչպէս կը տեսնէք յիշատակագրի բովանդակութենէն Հայաստանի մէջ թալաններ, պատուի բռնաբարումներ տեղի են ունեցած բաւական լայն չափերով: Միմիայն Պաշգալէի 110 տուն հայութենէն համարեա թէ այր մարդ չէ մնացած: Մնացած են երեխաներ ու կիներ որոնց մասին կը պատմեն թէ մէկ մասը իսլամացած իսկ միւս մասը առեւանգուած է: Սարայի եւ Արճակի շրջանի 5-6 հայ գիւղերէն սպաննուած է մօտ 200 այր մարդ: Այս վերջին սպանութիւնները կատարուած են քուրդ ցեղապետներու ձեռքով, ռուսները նահանջելէն յետոյ իրենց դաւաճանութիւնը ծածկելու ու կառավարութեան առաջ հաւատարիմ նկատուելու համար: Ջարդին գիտակ ու մասնակից է եղած նաեւ Կաւաչի գալմագամը: Մուշէն ու Կարինէն առած տեղեկութիւնները ցոյց կու տային որ նշանաւոր հայերու կեանքը վտանգի տակ է կառավարութեան եւ իթթիհատի ներկայացուցիչներու կողմէն եւ արդարեւ Ալոյեանի, Տէր Արիստակէսի, Օտապաշեան վարդապետի սպանութիւններէն<sup>97</sup> յետոյ, Յուն[ուար] 29ին Կարնոյ մէջ զարկած են Գարեգին Փաստրմաճեանի հօրեղբայր Սեդրակ էֆէնտին: Սպանողներն են՝ երկու գինուած ատրճանակներով ու դաշոյններով եւ հագուած գինուորական զգեստ: Չնայած տեսնողների ցուցմունքին կառավարութիւնը ձեռքալարութիւններ է կատարում բանկի պաշտօնեաներու մէջէն: Կարնոյ դաշտին մէջ կատարուած բռնութիւններու ու սպանութեանց պատճառով թահսին պէյը ձեւականօրէն բանտարկել կու տայ մի քանի անձեր ու քանի մը օրէն կ'արձակէ ըսելով թէ չարագործները անյայտ մարդիկ են: Այս բոլորէն կ'երեւայ որ հայ ազգութեան գոյութիւնը ենթարկուած է ամենամեծ վտանգի այս պատերազմի ընթացքին, եթէ չէզոք պետութիւնները եւ նոյնիսկ կռուող կողմերը իրենց ազդու ձայնը չբարձրացնեն ու զգուշացնեն թուրք կառավարութիւնը գալիք նոր ոճիրներէն:

Պիտի խնդրենք որ այդ ուղղութեամբ ամէն կողմ դիմումներ կատարուին: Վռամեանի այս օրինաւոր պահանջները ոչ միայն արձագանգ չգտաւ կառավարութեան մօտ, այլ ընդհակառակը ան լեցուած է խոր վրէժխնդրութեամբ դէպի Վռամեանի անձը: Վերջին օրերս անվստահութիւնը հասցուցած են ծայր աստիճանի դէպի Դաշնակցութիւնը, կովկասահայ շարժումները համարելով Դաշն. դեկավարութեան գործ:

Քանի մը տեղեկութիւններ ալ այս տեղի մասին: Անցեալ շաբթուն Տարտանէյի ռմբակոծումը բաւական յուզում յառաջ բերաւ հանր[ային] պարտուց կառավարական շրջանակներուն մէջ: Բանկաները, վարչութիւնը, պետական արխիւը սկսած են փոխադրել Գոնիա: Իշխանաց կղզիներու ամբողջ բնակչութիւնը պարպուեցաւ կառավարութեան ստիպումով եւ եկաւ քաղաք: Կըսուի թէ ծովեզերեայ թաղերն ալ պիտի պարպուին: Արտակարգ ոստիկանական միջոցներ ձեռք կ'առնուին:

Քանի մը տեղեկութիւններ ալ այս տեղի մասին: Անցեալ շաբթուն Տարտանէյի ռմբակոծումը բաւական յուզում յառաջ բերաւ հանր[ային] պարտուց կառավարական շրջանակներուն մէջ: Բանկաները, վարչութիւնը, պետական արխիւը սկսած են փոխադրել Գոնիա: Իշխանաց կղզիներու ամբողջ բնակչութիւնը պարպուեցաւ կառավարութեան ստիպումով եւ եկաւ քաղաք: Կըսուի թէ ծովեզերեայ թաղերն ալ պիտի պարպուին: Արտակարգ ոստիկանական միջոցներ ձեռք կ'առնուին:

Ընկ. բարեկներով  
Հ[ԱՅԱՍՏԱՆԻ] Բ[ԻՒՐՈՅԻ]  
Պ[ՈՒՍՈՅ] Հ[ԱՏՈՒԱԾ]

Տարտանէյի մասին խնդրենք մեզ շուտափոյթ գրէք ստոյգ տեղեկութիւններ: Գլխաւորաբար այն թէ սա պարզ ցոյց է թէ որոշած են մտնել: Մեզ համար շատ կարեւոր է այդ բանը իմանալ:

Առ հասարակ նամակնիդ մի ուշացնէք:

ՆՈՅՆ

97.- Ալոյեան Գալուստ, ծանօթ Դարվիշ ծածկանունով: Տէր Արիստակէս – Կարնոյ Օձնի գիւղին քահանայ, սպանուած իր տան առջեւ: Սահակ վրդ. Օտապաշեան, նախապէս Պրուսայի քնմի առաջնորդ, ապա Երզնկայի առաջնորդական փոխաւորդ նշանակուած, սպանուած էր 1914 թ. Դեկտեմբերին իր նոր պաշտօնատեղին երթալու ճամբուն վրայ:





Փաստ. 882-5

26.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԷՆ (ԿԱՐԻՆ) ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ [ՊԱԼՔԱՆԻ ՄԻՋՈՑՈՎ]

20-III-1915

Ընկերներ!

Կը հաստատենք մեր 11-III թուակիր նամակը: Ընկեր Մկրտիչը գալիս է ձեր կողմը շուտով: Նորէն պիտի վերադառնայ. այնպէս ինչպէս որ մենք օգտուում ենք, դուք էլ օգտուեցէք թէ նամակներ ուղարկելու այս միջոցաւ եւ թէ դրամ, եթէ պատրաստ կայ: Եթէ թղթադրամ լինի կարելի է բերել այնպէս, ինչպէս նամակները, կամ գուցէ չէք կարող էք ուղարկել: Ընկերները այն կարծիքի են, որ Բիւրոյի անունով հանգանակուած դրամի մէկ մասը կարելի է ուղղակի այստեղ փոխադրել: Մենք ձեզ ժամանակին գրեցինք, որ կազմակերպական բիւրօժէի մասին մտածելու էք. Արզումանին<sup>97</sup> այդտեղ ճանապարհելնուս այդ մասին երկար խօսուեց, բայց արդիւնքը այն չեղաւ, ինչ որ սպասում էինք:

Վասպուրական եւ Բիթլիս, Մուշ չըջանները ապրատամբական վիճակում են. որոշ վայրերում կուրը անողոք եւ կատաղի կերպարանք է ընդունել, իսկ մենք անկարող ենք ունէլ գէթ նիւթական օգնութեան հասնելու: Երեւի օգնութիւնը պիտի գայ այն ատեն՝ երբ ամէն բան վերջացած լինի. առնուազը 1000 ոսկի պիտի հասցնել այստեղ, այլապէս շատ ուշ կը լինի:

Կարինից ստացուած տեղեկութիւններ, գրուած Փետրուար 25 թուականով.— դրութիւնը նկարագրում են սոսկալի յոսանաւորացիքի կերպով.— իթիթհատական պաշտօնեաներ գազան են կտրել.— ծեծ, բռնութիւն, պատուի բռնաբարում եւ սպանութիւն սովորական բաներ են դարձել: Կարնոյ օջիս միւտիրին Դերջանում կանչում է մի նշանաւոր հայու եւ իր տասը տարեկան աղջկայ հետ միասին գնդակահարում:

Սպանութիւն սպառնալիքով եւ շատ անգամ էլ գործադրելով. ժողովրդի քիչ թէ շատ ունեւոր տարրերը թալլում, կողոպտում եւ վերադառնում են: Միւս վայրերը աւելի նախանձելի վիճակում չեն:

Երզնկա հայերի ունեցածները բռնութեամբ գրաւելէ յետոյ սպառնալով հրամայում են իրենց մօտ չգտնուած իրերը<sup>97</sup> դրամով առնել եւ յանձնել կառավարութեան: Ընդհանուր կոտորածի սպառնալիքը

կախուած է ամբողջ թրքահայ ժողովրդի գլխին: Կարին, Երզնկա, Տիարպեքիր եւ դէպի ամբողջ արեւմուտք մինչեւ Կիլիկիա, սպանութիւններ, անհատաբար, երբեմն մինչեւ 5-7 հոգով, սովորական բաներ են դարձել: Թուրքերը հայերին են սպանում, ասելով, «հայեր, այս բոլորի պատճառը դուք էք եւ մեզ դէմ կռուողներն էլ հայերն են եւ ոչ թէ ռուսները. ձեզ բոլորիդ պիտի ջարդենք»:

Տնտեսապէս վերջին աստիճանի աղքատութեան հասցրին: Գարնան եւ աշնան ցանք չկայ. սրից ողջ մնացածները սովի ճարակ պիտի դառնան. ապրում ենք ձիւնկիգ խաների, Լենկ թիմուրների եւ Շահապասների ժամանակներում. ամէն կողմը գոլուում է թագաւորում: Վասպուրականը, Բիթլիսի լեռնային մասերը, Ձէյթունը չկարողանալով դիմանալ փաթթուեց գէնքին եւ կռուի դրօշակը բարձրացրեց: Անհաւասար եւ կատաղի կուր. թէ ինչպէ՞ս կը վերջանայ գէնքի պայքարը, ապագան ցոյց կը տայ: Հայերը նման մտադրութիւն չունէին. կառավարութեան բռնութիւնները, սպանութիւնները եւ մանաւանդ պատուի բռնաբարութիւնները բաժակը լեցուցին: Արտասահման աշխատելու է եւ լայն հողի վրայ: Ամերիկեան, իտալական եւ այլ չէզոք երկրներում<sup>98</sup> բողոքի ձայն պիտի բարձրացնել եւ միջամտութիւն հրաւիրել, այլապէս Հայաստանը դառնալու է աւերակներու կոյտ: Դրամական հանգանակութիւնները մեծ չափերի պէտք է հասցնել թէ այժմ եւ թէ մանաւանդ պատերազմից յետոյ լայն աջակցութեան համար, այլապէս մարդ չպիտի մնայ վերան հայրենիքում: Ռուսների ետեւ առաջ շարժուելը քանդեց հայ ժողովրդի տունը: Այստեղ լուր է տարածուել որ Ձեմալ փաշան մեծ զօրքով քալում է Ձէյթունի վրայ. երեւակայեցէք գէյթունցոց դրութիւնը եթէ պարտուեցան...

Շամի եւ Դուրանի<sup>98</sup> կռուողների կարծիքն է որ կամաւորները անկախ ռուսական բանակէն՝ ներս խուժեն: Դրանք սկիզբները նման բանի հակառակ էին, բայց քանի որ զօռով իրենց դէպի ինքնապաշտպանութիւն մղեցին եւ գէնք վերցնել տուին, այժմ անհրաժեշտ են համարում այդ բանը. ուշացումը հայութեան բնաջնջում նշանակում է նրանց կարծիքով. ահա ուր հասցրաւ մեր իսլոք կառավարութիւնը մի ժողովրդի, որ իր ամբողջ հովիտեամբ համա-օսմանցիականութեան .....<sup>98</sup> պաշտպանն էր:

Արմատանում թուրք կամաւորները գիշերելու հա-

97ա.- Իմա՝ զէմքերը:

98.- Վասպուրականի (Շամ) եւ Տարօնի (Դուրան):

98ա.- Կիտաւոր, բաց ձգուած. հաւանաբար չէ բացուած գաղտնի մելանով գրուած բառը կամ բառերը:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

մար ցրում են հայ տները. միւլազիմը<sup>99</sup> բռնաբարում է տան կնոջը. գիւղացիք սպանում են միւլազիմին. 4 կին եւ 5 այր մարդիկ այդ պատճառով բանտարկւում են:

Տիֆլիսը սոսկալի կոտորածներ է անում Կարնոյ գօրքին եւ ժողովրդին մէջ: Ամբողջ գօրքը հալուեց. օրական մեռնում է 300 հոգի միմիայն քաղաքի մէջ: Համաճարակը կոտորում է նաեւ գիւղերում. մահացութեան չափը անհաւատալի չափերի է հասնում. թուրքերը հագիւ կարողացեր էին նորէն 40-50000-նոց մի բանակ կազմել, բայց կոտոր ընկած եւ ուժասպառ մի բանակ ի՞նչ կրնայ ընել: Դրուժիւնը սոսկալի է եւ հէնց առաջին ճակատամարտում, հաւանօրէն մեր<sup>100</sup> բանակը օդը ցնդի:

Ահա մեր խելօք ղեկավարները, ինչպէս այս դժբախտ երկրի ճակատագիրը խաղի տակ դրին, առանց կշռելու իրենց բարոյական եւ նիւթական ուժերը:

Ընկերներ! Ընդհանուր մասը արտագրեցէք եւ անմիջապէս ուղարկեցէք Ամերիկա, Եգիպտոս, ժընեւ եւ Արեւելեան բիւրօ: Տեղեկագրերը նոյնպէս արտագրեցէք եւ ուղարկել տուէք Ամերիկա, ժընեւ եւ Կովկաս. ամէն բան կատարեցէք արագ, օգնական ընկերներ հրաւիրեցէք արագ արտագրել տալու համար. իսկ նամակի բովանդակութիւնից կազմեցէք մի հեռագիր եւ

հեռագրեցէք Հորիզոնին: Հեռագրի բովանդակութիւնը՝ Երկրի անտանելի կացութիւնը, ապստամբութիւնը Ձէյթուն, ընդհարումները Բիթլիս եւ Վան:

Այս տեղեկութիւնները տեղիդ թերթում կը տպագրէք, կրնայ անդրադառնալ Պոլսոյ եւ երկրի ընկերների վրայ:

Դրուժիւնը այստեղ օրից օր ծանրանում է, առանց ոեւէ լուրջ պատճառի փակել են Ազատամարտը անորոշ ժամանակով. խմբագիրներէն մէկը (պարսկահայատակ) առանց ոեւէ պատճառի բանտարկել են եւ հակառակ պարսից կոնսուլայի պնդումներին դեռ չարձակեցին. այսօր էլ լսեցինք որ մտադրութիւն ունին էնկիւրի աքսորելու:

Յոյս ունինք որ բոլոր նամակների պատճէնները իրենց ժամանակին ուղարկել էք համապատասխան մարմիններին. գրած նամակների թուականները եւ համառօտ բովանդակութիւնները (մարմիններու գրածներուն) ի հարկէ կը պահէք: Մոռացանք վերեւը ասել, որ Մշոյ Ռուբէնը<sup>91</sup> փախստական էր. այժմ չգիտենք ինչ վիճակում է:

Ընկերական բարեւներով  
Հ[ԱՅԱՍՏԱՆ]Ի Բ[ԻԻՐՕ]

20 III 1915

Երբեմն էլ կը գրենք թերթի վրայ (Ֆրանսերէն). երբ որ մատիտով գծուած լինի, փորձեցէք. երբեմն պանտրոլի<sup>101</sup> վրայ կը գրենք (մատիտով):

99.- Սպանի:  
100.- Իմա՝ քրքալան:  
101.- Փաթաթանի:







Փաստ. 1158-35

27.- ՊԱԼՔԱՆԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Սոֆիա, 30 Մարտ 1915

1158-35 թուահամարը կրող այս փաստաթուղթը Պալքանեան Կեդր. կոմիտէի գրութիւն է ուղղուած Ամեն-րիկա: Կը բաղկանայ ձեռագիր 9 էջերէ: Առաջին երկու էջերը Կ. կոմիտէի պաշտօնաթուղթի վրայ, բայց նամակը անաւարտ է: Մնացեալ էջերը (թուագրուած 3-9) կը պատկանին մէկ ուրիշ գրչի եւ իմաստային շարունակութիւնը չեն կազմեր առաջին բաժնին: Մեր կարծիքով քիւրիմացութեամբ իրարու միացուած են երկու տարբեր գրութիւններ, առաջինը՝ անաւարտ, երկրորդը՝ անսկիզբ: Պէտք չենք տեսներ տալ առաջին բաժնի երկու էջերը, որոնք փաստօրէն բառացի արտագրութիւնն են Կարնոյ Հայաստանի բիրոյի հաղորդած լուրերուն (տես թիւ 882-5 փաստաթուղթ – Մարտ 20, էջ 238-9): Մտորել կը ներկայացնենք միայն երկրորդ էջ 3-էն սկսող եւ անսկիզբ բաժնի, որ նոյնպէս տեղեկատուութիւն է երկրի անցուդարձերուն մասին:

..... [Թէ հայերը պիտի կոտորենք երբ Պոլիսը իյնայ: Պաշգալէ, Աղբակ, Ալաշկերտ հայու թիւն չմնաց: Թուաներու յետ առաջ շարժումները պիտի իրականացնեն «Հայաստան առանց հայու»-ի իտէպը: Մեր ընկերները հետզհետէ կը մեռնին. Ջնդին<sup>77</sup>, Վահէ Թոքաճեանը եւ ուրիշները մեռան արդէն: Վերակազմուած բանակը հազիւ 30-40000 հոգիէ կը բաղկանայ:

**Կարին, 6 Մարտ.**— Կոտորածի ձեռնարկը լուրջ բան է եղել, բայց Թահսինը եւ Պոլսոյ կառավարութիւնը ընդդիմացեր են, ինչպէս նաեւ նոր եկող հրամանատարը՝ Մահմուտ Քեամիլ փաշա. անոնք ըսած են թէ կոտորած մը պիտի վնասէր ներկայիս իրենց վարկին: Այսպէս, սկզբունքով չէ որ կը մերժուի կոտորածը, այլ ժամանակակերպացէս անտեղի կը նկատուի:

**Գ.րդ Գոլ Օրտուկ**<sup>102</sup> նախկին հրամանատար Ահմէտ Յէյզին նշանակուած է տեղիս ամրութեանց ընհդ. հրամանատար:

**Վանէն կը գրեն 16 Փետր.** [Թուականով.— կառավարութիւնը ոչ միայն թոյլ չի տար կացութիւնը պարզել Պոլիս, այլ մինչեւ անգամ Բելուի դէպքէն յետոյ առաջնորդարանէն տրուած նպաստի խնդրանքի հեռագիրները վար դրաւ: Հոս կազմուած է նպաստից յանձնախումբ մը, բայց միջոցները անբաւարար են: Պատրիարքարանը պէտք է մտածէ յանձնախումբ մը զրկել ջարդի վայրերը, անտուն մնացած կիներն ու երեխաները հաւաքելու, ինչպէս նաեւ առեւանգուած կիներն ու աղջիկները ետ առնելու եւ իրենց ընտանիքներուն յանձնելու համար: (Այս ջարդերու մասին առանձին յիշատակագիր զրկուած է ներքին գործոց նախարարութեան):

**Ուրբաթ 13/26 փետր[ուարին]** ընդհարում մը տեղի ունեցաւ Ալճաւազի Արէն գիւղին եւ քիւրտ միլիսներու խումբի մը միջեւ, որ կը գտնուի եղեր Բշարէ Չաթոյի որդուն եւ հօրեղբօր հրամանին տակ: Խումբը Արծիկ քաղաքին մէջ բռնութիւններ ընելէ ետք Կոճեր գիւղին մէջ բռնաբարութիւններ կ'ընէ եւ կը դիմէ Արէն գիւղը: Գիւղացիները կը դիմադրեն եւ քիւրտերէն կը սպաննուի 3 հոգի, որոնց մէջ Բշարէ Չաթոյի տղան. հայերէն երկու սպաննուած եւ երկու վիրաւոր: Քիւրտերը ետ կը քաշուին:

**Սեբաստիա.**— Գարահիսարի շրջակայ գիւղերէն Բիւրք, Մշակնոց եւայլն եւայլն ընդհարում կ'ունենան կամաւոր զնացող չեթաներու հետ. հետեւանքը՝ խուզարկութիւն եւ մատնութիւն ու գրաւում 120-140 կտոր գէնքերու եւ բոլոր փամփուշտներու. կառավարութիւնը կը հետապնդէ մեր ընկերներէն Բիծան, Վ. Հիւսիսեան եւ Հ. Գարակէօզեան իբր հայթայթիչ այդ գէնքերուն. անոնք ալ փախստական դարձած են: Սվազի գիւղերէն Ուլագի[?] մէջ ալ խուզարկութիւններ տեղի ունեցած են եւ կանանց ծեծած են խոստովանեցնելու համար. յաջողած են գրաւել 12 գէնքեր: Կեսարիոյ գիւղերէն Էվերէկի մէջ ալ ռումբ մը պայթած է. վիրաւորը նախքան մեռնիլը յայտնած է թէ ինք էր պատրաստողը: Խուզարկութիւն եղած է բայց ապարդիւն: Այնուամենայնիւ բազմաթիւ ձերբակալութիւններ կան:

**Սեբաստիոյ մէջ** դասալքումը հասած է մեծ համեմատութիւններու: Հայ զինուորները գինաթափ կ'ընեն եւ կ'ուզեն տարապարհակ աշխատանքներու զրկել: Անոնք ալ դասալիք կ'ըլլան: Համաճարակը, դիֆտերիա ծայր տուաւ. միայն հայոց տուները կը պարպեն (հիւանդանոցի) համար. հիւանդապահներն ալ միայն հայեր են:

102.- Յոյ գօրարժանի:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

**Տրապիցոն, 8 Մարտ.**— Սարսափի շրջան է. փախրատական գինուորները ձերբակալելու համար ղրկուած ժանտարմները 10-ի չափ տուններ վառեցին եւ անլուր անգթութիւններ արին՝ չխնայելով ոչ սեռի եւ ոչ տարիքի: Ռուսները Խովիան գրաւելէն յետոյ կը յառաջանան դէպի ----<sup>103</sup> ճամբայ շինելով: Կարնոյ դաշտի բոլոր հայ գիւղերը ոչնչացած պէտք է համարել:

**Կիլիկիա.**— Չոք-Մարգուանի եւ Ձէյթունի դէպքերու մասին գրաբերս կը տայ մանրամասնութիւններ: Ձէյթութունցիները զարկած են 2 բեռ պետական գէնք սպանելով 7 ժանտարմ: Ձէյթունի վերի թաղը այժմ կռուի մէջ է զօրքերու հետ: Մարաշի մէջ խլրտումներ եղած են կոտորածի, բայց միւթեսարը հակառակած է. ատոր վրայ էշրաֆը<sup>104</sup> միացած կը պահանջեն անոր պաշտօնանկութիւնը: Առաջնորդը կը փափաքի հաղորդել կացութիւնը Սիսի կաթողիկոսին բայց կ'արգիլեն:

**Բերանացի բացատրութիւններ  
Հ[այաստանի] Բ[իրոյնի] Պ[ոլսոյ] Ի[ատուածի].  
Սորիանդակէն**

Ձէյթունցիները հակառակ որ կառավարութեան յանձնած են եղել վաղուց ի վեր իրենց մօտ ապաստանած 14 փախստականները, բայց եւ այնպէս կառավարութիւնը սկսեք է դարձեալ խիստ միջոցներու, որի վրայ Ձէյթունէն 150 հոգի ապաստանեք են վանքերէն մէկի մէջ, եւ սկսեք են կռիւ ժանտարմների դէմ. այդ կռուին մէջ երկու կողմէ մօտ 25 հոգի սպանուած է, ապա պաշարուածները շղթան կտրելով կը հեռանան հետերին տանելով վիրաւորները եւ իրենց սպանուածներու գլուխները. ապա շարժումը աւելի խիստ բնոյթ կ'առնէ, եւ թէեւ Ձէյթունի վարի երկու թաղերը ճերմակ դրօշակ կը պարգեն, բայց եւ այնպէս ապստամբները դարձեալ իրենց գործը կը շարունակեն եւ կռուելով նոր ղրկուած ուժերու դէմ՝ կը սպաննեն արշաւախմբի հրամանատարը, հազարապետը եւ հարիւրէ աւելի գինուորներ, ժանտարմներ, եւ տարօրինակ պա-

հանջներ կը դնեն կառավարութեան՝ պահանջելով նաեւ որ իրենց իրաւախոհը լինի Հալէպի վայրին՝ ճելալ փաշան, թէեւ իրենք ենթակայ են Մարաշի անկախ միւթեսարըֆութեան<sup>105</sup>:

Կոտորածի խմորումներ տեղի կ'ունենան նաեւ Այնթապի թուրք ժողովրդեան մէջ, բայց Հալէպի գերման հիւպատոսի ազդու դիմումին վրայ կը դադրին: Նման բարերար ազդեցութիւն ունեցել է նաեւ Մուսուլի գերման հիւպատոսի միջամտութիւնը Մշոյ դաշտում: Բնորոշ դէպք մ'է տեղի ունեցած նաեւ Չոք-Մարգուանի մէջ, ուր եկած են եղել երկու անգլիական գործակալներ Սալճեան (ասորի) եւ Քէօշկերեան (ատանացի): վերջնոյն մայրը սպանուած է եղել Ատանայի կոտորածներու ժամանակ եւ կինը՝ առեւանգուած: Ինքը Կիպրոսէն վերադարձին կը սպաննէ իր կինը առեւանգողը եւ կը դառնայ փախստական: Երբ կառավարութիւնը լուր կ'առնէ որ անոնք նաեւ անգլիական գործակալներ են՝ եկած Կիպրոսէն, կը հետապնդէ: Սալճեանը կը յաջողի փախչիլ, իսկ միւսը բռնուելով կախաղան կը բարձրացուի: Այդ դէպքի վրայ խստութիւններ կը սկսին Չոք-Մարգուանի մէջ եւ բոլոր այր մարդիկ 15 տարեկան վեր քաղաքէն դուրս կը տարուին եւ կ'աշխատցուին դաշտերու մէջ, ուր կը մնան մինչեւ հիմա. վերջերս մաս առ մաս թոյլ տրուած է վերադառնալ քաղաք:

Այդ դէպքերու առթիւ (Ազգ. իշխանութիւններու կողմէ) հեռագրուած է Եգիպտոսի արշաւախմբի հրամանատար Ճեմալ փաշային, որ պատասխանած է հանգիստ թողուլ խաղաղ ազգաբնակիւթեանը եւ շատ խիստ լինել ապստամբներու վերաբերմամբ:

Դիմում եղած է նաեւ գերման դեսպանատան՝ հիւպատոսներու թիւը աւելցնելու Հայաստանի մէջ եւ այդ ուղղութեամբ աշխատանք պիտի տարուի նաեւ Պերլինի կեղը. կառավարութեան մօտ:

Պատրիարքարանը դիմել է ամերիկեան դեսպանատունը, որ իր ստացած հրամաններու հիման վրայ հաւաստիացրել է որ մինչեւ վերջը պիտի պաշտպանէ թուրքիոյ քրիստոնեայ ազգաբնակիւթիւնը եւ նոյնիսկ վաշինկթոնէն դիմում պիտի լինի Պերլինի եւ Վիեննայի դաշիններուն, որպէսզի անոնք ալ իրենց կարգին ազդեցութիւն բանեցնեն թուրքերի վրայ, եւ արգիլեն քրիստոնեաների դէմ սկսուած հալածանքները եւ կոտորածները:

**Ընկ. բարեւներով  
Հ.Յ.Դ. ՊԱԼ. Կ. ԿՈՄԻՏԷ**

103.- Անրնթեռնելի անուն:  
104.- Էշրաֆ – թուրք երեսելիներու եւ ազդեցիկ շրջանակներու խաւ:  
105.- Ծելալ փաշա – Հալէպի կուսակալը, ծանօթ հայկական կոտորածներուն դէմ իր ցոյց տուած ընդդիմութեան համար, որուն հետեւանքով ալ պաշտօնանկ պիտի ըլլար:





Փաստ. 882-60

**28.- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԻՒՐՈՅԷՆ (ՊՈԼՍՈՅ ՀԱՏՈՒԱԾ)  
ԲԱԼԿԱՆԻ Կ. ԿՈՍԻՏԵՒՆ!**

6-4-[1915]

Ստացանք ձեր Մարտ 26 թուակիրը ինչպէս եւ նրանից առաջ ուղարկած բաց քարտը. վերջինս լաւ չկարգաց-  
ւեց. ամբողջ տողեր չէ գրուած. երեւի գրիչը սահում է առանց գրելու. ուշադիր պիտի լինել<sup>106</sup>. Հասցէի երեսին  
վրայ մի գրէք. կնիք են դարկում եւ անընթեռնելի է դառնում:

Լիպարիտը եկաւ<sup>84</sup>. Ի հարկէ ձեզ անցաւ: Նրա մասին պիտի աշխատէք մեզ տեղեակ պահել:

Կովկաս լաւ էք արել ընկ[եր] ուղարկելով. ուրիշ ճար չմնաց: Մէկն էլ մենք էինք ուղարկել երեք շաբաթ առաջ:

Դրամի մասին չորս կողմը հեռագրեցէք, գրեցէք, աղմուկ հանեցէք: Եզրպտոս էլ գրեցէք:

Ձեզ չենք կրնար յայտնի ընկերներէն մարդ հասցնել:

Չնայած մեր լաւագոյն վերաբերմունքին դէպի կառավարութիւնը, բայց եւ այնպէս կը կասկածին մեր վրայ.  
չեն թողնում հեռանալ: Ուրիշ ընկեր մը կը հասցնենք ձեզ<sup>107</sup>:

Ամերիկայի նամակը արտագրեցէք եւ հասցրէք իրենց: Մեզ հարկաւոր տեղեկութիւնները քաղեցէք ձեր մար-  
միններին, Եզրպտոս ու ժընեւ ուղարկելու համար: Կրնաք նոյն նամակը, ինչ որ Ամերիկային է վերաբերում, այդ  
մասը փոխէք եւ մնացածը արտագրելով հասցնել համապատասխան մարմիններին, ինչպէս եւ Սարուստան<sup>83</sup>: Շու-  
տով նամակներէն տեղեկագիր կը կազմենք եւ կ'ուղարկենք ձեզ:

*Ընկերական բարեւանքով*  
**Հ[ԱՅԱՍՏԱՆԻ] Բ[ԻՒՐՈՅ]Ի Պ[ՈԼՍՈՅ] ՀԱՏՈՒԱԾ**

106.- Հարցը կը վերաբերի գաղտնի թանաքով գրուած նամակի. գրութեան ժամանակ անուշաղբութեան պարագային գրողը վերա-  
հասու չէր ըլլար թէ գրիչը կ'արձանագրէ թէ ոչ:

107.- Հարցը կը վերաբերի գործիչ ընկեր ուղարկելուն:





Փաստ. 1158-118

29.- ԵՐԿՐԻ ՆԱՄԱԿՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ՝ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՊՈԼՍԷՆ

Ա.- ԿԻԼԻԿԻԱՅԷՆ.-

Սահմանաբերդէն<sup>108</sup> կը հաղորդեն ապրիլ 6 թուականով (նամակի թուականն է ապրիլ 10).- Ամէն օր 2-300 գէյթունցիներ հոս կը բերուին եւ հագիւ գիշեր մը մնալէ յետոյ կ'աքսորուին անծանօթ կողմեր: Պանդուկները եւ դպրոցները լիքն են աքսորականներով, որոնք գէյթունցի, ֆունուզցի եւ լափաչցի ընտանիքներ են: Շրջանը կը պարպուի արագօրէն: Որոշեր են վերջնապէս պարպել միւս բոլոր հայ կեդրոնները: Թուրքական թիւերը աննկարագրելի է. կը մոռցուին պատմական գաղթերը ջալալեղդիներէն օրերէն: Կաղեր, ծերեր, պառաններ, 4-5 տարեկան մանուկներ, բոլորիկ եւ հետիտն շարան-շարան կու գան: Սահմանաբերդի հայրկիւնը նիւթապէս շատ կ'օգնէ: Յարդ տրուած նպաստը 1000 ոսկին կ'անցնի: Եկեղեցիներու բակերուն մէջ հասարակական սեղան կը տրուի Ազգին կողմէ: Սահմանաբերդի մէջ մինչեւ 87 տարեկանները գինուորագրուեցան, միշտ իբրեւ ամել<sup>109</sup>:

Զէյթունի կոռուողները յուսահատ լեռները քաշուած են եւ թուրք գիւղերը ը կ'ասպատակեն: Երկու օր առաջ հոս բերուեցան 50 գէյթունցի երիտասարդներ. կ'ըսուի թէ պիտի կախուին՝ խուժանը գոհացնելու համար: Կը խնդրենք միջոցներ ձեռք առնել:

Սահմանաբերդի մէջ խուզարկուածները սոսկալի են: Հաւանաբար ընկեր մը գայ ամէն բան պատմելու (չէ եկած մինչեւ այժմ):

Այնթապէն 900է աւելի մուհաճիւրներ<sup>110</sup> մէկ շաբաթ առաջ ճամբայ ելած են. պիտի տեղաւորուին Զէյթունի եւ շրջանին մէջ:

Տեօթ-Եօլ ամբողջովին պարպուած է. 16-70 տարեկան բոլոր այրերը իբրեւ ամել տարուեցան մէկ օրուայ ճամբայ հեռաւորութեամբ. կ'աշխատցնեն, անարգանքներով ու տանջանքներով: Հակառակող երիտասարդ մը հրացանագարկ ըրին եւ դիակը քաշկռտեցին: Բոլոր գէնքերը հաւաքած են: Գիւղին մէջ մերկ կիներ եւ պառաններ մնացած են:

Հայ մը կախաղան հանուեցաւ Ատանայի մէջ, անգլիական մարտանաւ մը ելած լրտեսելու պատրուակով. ուրիշ տասն ալ բանտարկուած են նոյն խնդրով:

Բ.- ՇԱՄԷՆ<sup>111</sup>.-

Կը հաստատենք մեր Մարտ 23 թուակիրը (չենք ստացած) – 30 Մարտ.- Վալին բարեկամ կը ձեւանայ. եկած էր ջախջախելու, բայց մօտէն տեղեկանալով իրականութեան թիմարի կռիւին, մեր յուսահատ որոշման – եւ թելադրուած կեդրոնի հրահանգներէն, իր որոշումը փոխած կամ յետաձգած է: Թուրքերն ալ սկսեցին մօտենալ, նոյնիսկ խուլիգանները: Առ այժմ համաձայնած ենք 50 հոգի տրամադրել ճամբաներու շինութեան համար. խնդիրը առաջին խումբը պատրաստելն է: Վալին խոստացած է նաեւ դարմանել բոլոր վնասները, միայն կը խնդրէ սպասել 2-3 շաբաթ, որ ատեն պիտի դադրին իրանի գործողութիւնները երկու կողմէն ալ, այդ երկրին չէզոքութիւնը պահպանելու համար:

Սալմաստը քարուքանդ է. տունները կը մնան, բայց հայերու ապրանքները կողոպտուած են: Յառաջխաղացում մը կը սպասուի Արաղայէն: Գէթ մէկ օրուայ ճամբայ յառաջանալու են խմբերը եւ կամ մէկ մասը: Կամաւորական] խմբերը պէտք է մէկ գծով յառաջանան, փրկելու համար Տարօնն ու Վասպուրականը. գրեցէք Սարուստան<sup>83</sup> եւ ստիպեցէք:

Յուսահատ լուրեր կը հասնին Բաղէշէն: Վալին հրամայած է բոլոր գայմագամներուն՝ փոքր առիթ մը տրուելուն պէս, իջեցնել հայոց գլխուն: Այս դէպքերը կը հաղորդէք եւրոպական մամուլին, դեսպանատան, Յիշատակագրի կամ բողոքի ձեւով:

Անհրաժեշտ են այս բոլորը. հազիւ 3000 անուանական ժանտարմ կայ մեր սահմանին մէջ, անոնք ալ աւելի կողոպտելու կը ծառայեն քան ապահովութիւնը պահելու: Ընդհ. լքում քրտերու մէջ, այս ալ նպաստաւոր պարագայ մըն է յառաջխաղացման համար:

Թիմարի կորուստն է 10000 ոսկի. պիտի ջանանք դարմանել տեղական կառավարութեան միջոցաւ: Պատրիարքարանը ստիպեցէք նպաստ դրկելու Կառկառի եւայլնի համար: Առաջնորդարանը չի կրնար հեռագրել: Գիւսակը<sup>112</sup> թող միշտ շարունակէ իր հետապնդումները եւ հասկցնէ թալէաղին, խալիլին եւլն, որ յիմար խաղ մը չխաղան: Կարեւոր լուրերը հեռագրեցէք:

108.- Սահմանաբերդ – Մարաշի կու. ծածկանունն է:  
109.- Բանուոր:  
110.- Խօսքը թուրք գաղթականներու մասին է, բերուած յատուկ նպատակով հայերէն պարպուած գիւղերը վերաբնակեցնելու համար:  
111.- Շամէն՝ Վանէն:  
112.- Գիւսակ կամ Վարդգէս – ծածկանունն է Սերեցիիլեան Յովհաննէսի, պետական երեսփոխան Կարմոյ:



**Գ.- ԲԱՐՁՐԱԲԵՐԴԷՆՆԵՐԻՆ՝**<sup>113</sup>...

12 Ապրիլ (երէկ հասաւ) Շամէն ստացանք Ապրիլ 6 թուականով: Վալին սահմանէն վերադարձին շատ կը մօտենայ մերոնց, բայց շուտով երեւան կ'ելլէ: Իր բուն նպատակն է «այստեղ կամ հայ պիտի ապրի կամ իսլամ»: Ապրիլ մէկին Շատախում կը ձերբակալեն ընկեր Յովսէփը ստոր դաւադրութեամբ: Շատախցիները կը կտրեն հեռագրութեւրը, կը պաշարեն կառավարական շէնքը եւ կը փորձեն ազատել կալանաւորին: Կռիւր կը սկսի յաջորդ օրը: Վալին կ'առաջարկէ որ փոլիս միւտի-րին<sup>114</sup> հետ մերոնցմէ ալ մարդիկ երթան դէպքին առաջն առնելու: Մերոնք Իշխանին<sup>115</sup> կ'ողարկեն ու-րիշ երեք ընկերով: Նոյն օրը Հայոց Ձորի Հիւրէ գիւղին մէջ փոլիս միւտիւրը գիշերանց սպաննել կու տայ մեր չորս ընկերները: Յաջորդ առտուն կանուխ, երբ դեռ մերոնք լուր չունին, կուսակալը մարդ կը դրկէ եւ կը կանչէ Վաւմն ու Արամը<sup>116</sup>: այս վերջինը գործ ունենա-լով, Վաւմն առանձին կ'երթայ ու անմիջապէս կը ձեր-բակալուի, եւ իբրեւ թէ Պիթիւս կը դրկուի նաւով: Յե-տոյ կառավարութիւնը հայոց թաղերէն կը ժողովէ պա-հակներն ու ոստիկանները եւ կը սկսի պաշարել թնդա-նօթներով: Մերոնք կուսակալը դաւը՝ դիրք կը բռնեն եւ վայրկեանէ վայրկեան կը սպասեն կոտորածի: Կարինէն օգնական ուժեր ալ դրկուեցան: Երեւի մեծ կռիւներ են պատահած: Թահսինը (Կարնոյ կուսակալ) ըսեր է եւրո-պացիի մը, որ իբր թէ հայերը ուղմբով օդը հաներ են կառավարական շէնքը եւ պանքը:

Նոյն ճգնաժամին ենթարկուած է Դուրանը<sup>117</sup>:

Կարնոյ մէջ ալ տրամադրութիւնները ջարդարար են: Թուրք բարեկամներ կ'ազդարարեն շատ դուրս չել-լել: կը պնդեն որ հայերը նորէն հաւաքելով պիտի դրկեն պատերազմի, կոտորել տալու համար: Ի սէր Աստուծոյ

գրեցէք Կովկաս եւ ուր որ պէտք է որպէսզի խմբերը<sup>118</sup> օգնութեան հասնին: Յայտնի է որ ամիսներով չեն կրնար դիմադրել: Պէտք է մերինները յառաջանան եւ օգնութեան հասնին աղէտէն առաջ: Մենք ալ հոս կը դի-մենք գերման հիւպատոսին:

Կը հաստատենք Ապրիլ 4 նամակը (չենք ստացած):

**Դ.- ԱԻԱԶԱՆԷՆՆԵՐԻՆ՝**<sup>119</sup>...

7 Ապրիլ (այսօր ստացանք)։— Բարձրաբերդէն<sup>113</sup> կը հաղորդեն որ Փետրուարի վիճակագրութեամբ թիֆլի-սէն մեռած են 26.000 զինուոր: Բասենի վերջին կուուս 1000 սպանեալ, 2000 վիրաւոր եւ 400 գերի:

Ձէնքի տակ են կանչուած 45-52, 17-20 [տարեկաննե-րը]: նոր պատրաստութիւններ կը տեսնուին:

Վանի եւ Մուշի դէպքերը մեծ գրգռում պատճառած են մոլեռանդներու մէջ: Ներքին գործոց նախարարը<sup>120</sup> խստիւ պատուիրած է կարգը պահել, հաշտութեան պա-հուն հայերու արեան գինը չվճարելու համար, վալին հաղորդած է առաջնորդին: Իթիֆհատին չեթաները մեծ աւերներ են գործած Երզնկա, Դերջան եւ Բաբերդ: Եր-զընկայէն 24 հոգի շղթայակապ Կարին են տարած-ուումը ու գէնք կը պահանջեն: Մերոնց ստիպումով ա-ռաջնորդը տեղեկագիր մը ներկայացուց վալին, որը հաստատեր է ճշդութիւնը: Ընդհ. հրամանատարը լու-ծեր է չեթաները: Քիւրտ պէկերը լաւ են տրամադրուած երեք շրջաններու մէջ ալ եւ կը փնտուեն մերինները:

Մուշի կառավարիչը հաղորդեր է Կոմսին<sup>121</sup> որ կը հաւանի Բաղէշ գումարել խառն ժողով երկու կողմի ներկայացուցիչներով:

Քանի մը ամիսէ ի վեր մահմետական վրացիներ կը հասնին Աճառայէն, Արդուինէն եւ Մուրղուլիէն. աւե-րող ջարդողներ են ասոնք, որ ասկէ կ'երթան դէպի Փոքր Ասիոյ ներսերը:

113.- Բարձրաբերդ – կուս. ծածկանուն Կարին քաղաքի:  
 114.- Ոստիկանապետին:  
 115.- Իշխան – դաշնակցական ծանօթ ղեկավար դէմք, բուն անունը՝ Պողոսեան-Միքայելեան Նիկոլ:  
 116.- Արշակ Վռամեանը եւ Արամ Մանուկեանը:  
 117.- Դուրան – Տարօնի կուս. ծածկանունը:  
 118.- Խօսքը կը վերաբերի հայ կամաւորական գումղերուն:  
 119.- Աւագան – կուս. ծածկանուն Տրապիզոնի:  
 120.- Խօսքը կը վերաբերի Թալէաթի:  
 121.- Կոմս – Փափագեան Վահան, պետական երեսփոխան Վանէն, որ Պոլիս մեկնելու ճամբուն համղիպած էր Մուշ եւ հոն մնացած հիւանդ վիճակի մէջ:







Փաստ. 63-99  
N° 143

30.- «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՍԻՏԵԻՆ

Ժրմու, 24 Ապրիլ 1915

Սիրելի ընկերներ!

Կը հաստատենք մեր մարտ 25-ի N° 136 եւ ամսիս 14-ի N° 139 գրութիւնները:

Շտապում ենք հաղորդելու համառօտ կերպով Պ[ոլ-ս]ից ստացած տխուր տեղեկութիւնները երկրի վիճակի մասին: Չենք առաջ բերում նամակի բովանդակութիւնը նոյնութեամբ քանի որ գրել ենք ժամանակին Բալ-կ[անի] Կ. Կ-էին [որպէսզի] մեզ հետ միասին, Երկրից ստացած (ինչպէս եւ Պ[ոլս]ից տեղեկութիւնների պատ-ճէնը ձեզ էլ ուղարկէ, եւ յոյս ունենք արդէն ստացած կը լինիք:

Երէկուայ ստացած նամակով Պ[ոլս]ի ընկերները երկրի դրութիւնը աւելի քան յուսահատական են նկարագրում: Վասպուրական, Մուշ, Տարօն եւ Զէյթունը ապստամբական դրութեան մէջ են. Կարնից սկսած Երզնկա եւ Արեւմտեան գիծը՝ բռնութիւն, թալան, աւեր ու առեւանգումները չափ ու սահմանն անցնում են. 5-7ով սպանութիւնները, անգէն մարդկանց, կանանց ու երեխաներին հրապարակաւ զնդակահարելը սովորական բաներ են դարձել ամէնուրեք: Համաճարակը, սովը սպառնալի չափերի են հասել:— Վասպուրական, Մուշ եւ Զէյթունի հայերը չկարողանալով աւելին տանել, գէնքի են դիմել եւ կռուի դրօշ են բարձրացրել: Անհաւասար ու կատաղի կռիւ է մերոնց եւ կառավարական արիւնարբու զօրքի մէջ: Թէ ինչով կը վերջանայ այս բոլորը, առ այժմ յայտնի չէ: Ընկերները դրամական մեծ օժանդակութիւն են թախանձում. 1000 ոսկին օրուայ հրամայական պահանջ է:

Զերմագին խնդրում ենք, լարէք ձեր ամբողջ ուժերը եւ հնարաւոր դրամական օգնութիւնը օր առաջ

հասցնէք Պ[ոլ]իս. եթէ հնարաւորութիւն եւ ուղղակի գիծ (ապահով) ունէք, աւելի լաւ. հակառակ դէպքում տեղից ուղղակի Սոֆիա, Բ[ալկանի] Կ. Կ-էին, որին այսօր անմիջապէս գրում ենք՝ հոգան գիծ պատրաստելու առթիւ: Գրեցինք նաեւ Եգիպտոսի կ[ոմիտէ]ին նոյնը խնդրելով: Պ[ոլ]իսը 1000 ոսկին փութով արտասահմանի մարմիններից է սպասում եւ առաջարկում՝ շարունակել աղբիւրներ ճարելու, իսկ մեր սպասելիք վայրերը ներկայանում են Ամերիկան ու Եգիպտոսը: Եւրոպական զանազան երկրներում էլ դիմումներ կ'անենք, սակայն, ինչպէս գիտէք, այդ վայրերի տուածը մեծ սպեղանի չի կարող լինել բացուած խորը վէրքին:

Այստեղ հաւանականաբար պիտի սկսենք նորից չէզոք երկրների միջոցով բողոքի բարձր ձայն բարձրացնել: Ընկ. Ահարոնեանին կը յանձնարարենք գնայ Փարիզ, թերեւս եւ Լոնտոն, Ֆրանսացի ու անգլիացի բարեկամների միջոցով կառ[ավարութիւնների] հետ բանակցելու: Ընկ. Միքայէլից վաղուց լուր չստանալով՝ հեռագրեցինք Կովկաս իմանալու, եւ ստացանք նրա ձեռքակալութիւնը տխուր լուրը. մանրամասնութեանը ծանօթ չենք. ձեռքակալուել է Քիչնիեւում եւ տարուել Նովոչերկասկ երեւի կապելու Դաշնակցութեան՝ գործի<sup>122</sup> հետ. պիտի Ֆր[անսական] եւ անգլ[իական] կառ[ավարութիւնների]ին դիմումներ անենք օր առաջ նրան ազատելու, որովհետեւ նրա քայքայուած առողջութիւնը երբեք բանտի միջոցով տանել չի կարող: Այս բոլոր դիմումների, բողոքների ու բանակցութիւնների համար դրամ է հարկաւոր, իսկ մենք կանգնած ենք դժբախտաբար դրամական մեծ պահանջի առաջ ձեռնունայն:

Ինչո՞ւ էք դադարեցրել ձեր նամակները. գրեցէք յաճախ, տեղեկացնելով ձեզ մօտ անց ու դարձից եւ յատկապէս երկրին օգնութեան հասնելու համար ձեռք առած ու առնելիք միջոցների առթիւ:

Ընկերական բարեկներով  
«ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՆ

122.- Արդարեւ, Երոպայէն դէպի Կովկաս մեկնած Միք. Վարանդեան ձեռքակալուած էր ռուս ոստիկանութեան կողմէ. հարցը կապ ունէր անշուշտ քանի մը տարի առաջ Դաշնակցութեան դէմ բացուած դատին: Թիֆլիսի ընկերներու կողմէ կառավարութեան մօտ կատարուած դիմումներու շնորհիւ Վարանդեան շուտով ազատ պիտի արձակուէր:



## ԳԼՈՒԽ VIII

### **ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Գլուխը նուիրուած է համաշխարհային պատերազմի առաջին ամիսներուն Արեւմտեան Եւրոպայի մէջ տարուած քաղաքական աշխատանքներուն:

Պատերազմի բռնկումով դադրած էր «Դրօշակ»ի հրատարակութիւնը: Խմբագրութեան անդամները կը շարունակէին կապ պահել արտասահմանեան մարմիններուն հետ եւ, մամլոյ հաղորդագրութիւններով ու կոչերով, Եւրոպան իրազեկ կը դարձնէին ճգնաժամային կացութեան մատնուած հայութեան վիճակին: Խմբագրութեան գլխաւոր դէմքը Միք. Վարանդեանն էր. կային նոյնպէս Ա. Ահարոնեան, Յոնան Դաւթեանը եւ Միսաք Ղազարեանը. այս վերջինի ուսերուն պիտի ծանրանար թրթակցութեան գործը, մանաւանդ Վարանդեանի Կովկաս մեկնելէն ետք:

Էական նշանակութիւն ունեցող խնդիր էր իմանալ դաշնակից պետութիւններու տրամադրութիւնները հայկական հարցին նկատմամբ, որ բարենորոգումներու ծրագրին ձախողութեամբ անպայման այլ տարազի մը տակ պէտք է դրուէր: Յայտնի էր որ գերմանո-աւստրիական զինակցութեան յարելէ ետք՝ Թուրքիոյ ապագային նկատմամբ դաշնակից պետութիւնները նոր ծրագիրներ կ'որոճային. սեղանի վրայ էր պատերազմի աւարտին Օսմ. կայսրութեան անդամահատման խնդիրը: Խօսք կար նոյնպէս Կիլիկիոյ ծովեզերքը ցամաքահանում կատարելու մասին: Հայկական գաղութներուն մէջ ոգեւորութիւն առաջ բերած այս ծրագիրը, սակայն, չիրագործուեցաւ, հաւանաբար նախապատուութիւն տրուած ըլլալով Տարտանէլի նեղուցէն ուղղակի Պոլիսը գրաւելու ընտրանքին:

Վերոյիշեալ պարագաներու տակ եւ հայութեան վերաբերող կենսական խնդիրներուն համար նպաստաւոր հող պատրաստելու նպատակով, Ռոստոմ եւ Վարանդեան ձեռնարկեցին շարք մը հանդիպումներու ելոյթացի քաղաքական եւ պետական դէմքերու հետ: Վարանդեան մեկնեցաւ Իտալիա, Ռումանիա եւ Պուլկարիա, իսկ Ռոստոմ՝ Փարիզ ու Լոնտոն\*:

Յամենայն դէպս, այս բոլորը նախապատրաստական քայլեր էին պատերազմի թոհուրոհին մէջ հայկական հարցը նորովի հետապնդելու ճանապարհին: Պատերազմը, որ սկզբնապէս կը կարծուէր թէ պիտի աւարտի վեց ամիսէն, պիտի երկարէր սակայն աւելի քան չորս տարիներու վրայ:

\*) Հետաքրքրութենէ զուրկ չէ Ռոստոմի պարագան: Կարնոյ Ընդի. ժողովէն ետք ճամբայ ելած էր իբր թէ արձակուրդով՝ մէկ տարուան համար ազատ ըլլալու կուսակցական պարտաւորութիւններէ. հանգամանքներու պարտադրանքով, սակայն, ան ստիպուած պիտի ըլլար նախ Եւրոպայի մէջ, ապա Կովկաս լծուիլ տենդագին եւ սպառիչ գործունէութեան:



Փաստ. 62-94

1.- Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻՆ

[Ժրգնու] 2 Հոկտ. 1914

Սիրելի ընկերներ,

Հուրեր ու նորոթիւններ էք սպասում մեզնից. տա- րաբախտաբար, մենք ինքներս գրկուած ենք նրանցից. հաղորդակցութիւնը խանգարուած է եւ այս անօրինակ ուրագանը չի տրամադրում մեր հեռաւոր ընկերներին՝ գրիչ վերցնելու, նամակագրութիւն պահպանելու մեզ հետ: Որքա՞ն կը տեւէ այս վիճակը — ո՞վ գիտէ: Ի՞նչ հե- տեւանք կ'ունենայ — ո՞վ գիտէ...

Յամենայն դէպս եւրոպական, գուցէ եւ ասիական քարտէզը նշանաւոր փոփոխութիւններ պիտի կրէ եւ այդ ընդարձակ վերիվայրումը հաւանականօրէն կ'անդրադառնայ նաեւ Հայաստանի կացութեան վրայ: Պատերազմը, ահռելի չարիքներ բերելով հանդերձ ամ- բողջ մարդկութեան եւ քաղաքակրթութեան, պիտի ու- նենայ, անտարակոյս, նաեւ անհաշիւ դրական հետե- ւանքներ, պիտի լուծուի տայ մի շարք արիւնոտ խնդիր- ների, որոնք առկախ են մնացած տասնեակ տարիներից ի վեր: Թուրքիան հաւանօրէն նոյնպէս կը նետուի պա- տերազմի մէջ (Ռուսաստանի դէմ), եթէ մօտ օրերս Գերմանիան մի երկու յաղթական ճակատամարտ տայ ռուսներին (մի բան, որ դուրս չէ հնարաւորութեան սահմաններից): Այդ պարագայում թուրքիոյ վերջնա- կան կործանումը անխուսափելի է, որովհետեւ յաղթո- ղը ի վերջոյ ռուս-Ֆրանս-անգլիական դաշնակցութիւ- նը պիտի լինի. Գերմանիան իր արբանեակներով չարա- չար պիտի պարպուի: Թէ ինչպէս կը սահմանուի այնու- հետեւ Հայաստանի ճակատագիրը, դժուար է, ի հարկէ, որոշ բան գուշակել. ամէնէն հաւանականը՝ ռուսական գրաւումն է:

Որքան էլ հրապուրիչ լինի մեզ համար օսմ. կայս- րութեան վերջնական փլատակումի հեռապատկերը, բաղձալու ենք, այնուամենայնիւ, որ թուրքիան հեռու մնայ պատերազմից, որովհետեւ այդ վերջինը աղէտներ պիտի բերէ հայ ժողովրդին (քրդական խժոժութիւններ եւայլն): Հարկաւ, 1878 եւ 1895-96 տարիների պատկերը նոյնութեամբ չի վերարտադրուի. կազմակերպութիւնը խոշոր չափով կը հոգայ ժողովրդի պաշտպանութեան

գործը, բայց եւ այնպէս աղէտը մեծ կը լինի:

Յարը, ինչպէս երեւի իմացաք, հայ ժողովրդին, «իւր սիրելի հայ ժողովրդին» ուղղած հանդիսաւոր մանի- ֆեստով խոստացաւ մեզ մի նոր դրախտ պատերազմից յետոյ, եթէ «հաւատարիմ» մնանք այս նեղ օրերին<sup>1</sup>: Ներսէս Աշատարակեցու օրերից ի վեր, կարծեմ, այդ- պիտի մանիֆեստ չէինք տեսած: Հայ բուրժուազիան եւ բոլոր պարզամիտները ցնծացին, ի հարկէ, արքայական այդ ստայօղ խոստումների հանդէպ: Ընդհանուր եւ անորոշ Ֆրագների տեղ, եթէ կոնկրէտ մի քայլ անէր ռուս կառավարութիւնը (գէթ, օրինակ ազատ արձա- կէր բոլոր հայ բանտարկեալները եւ թոյլ տար վերա- դարձը փախստականների) — դեռ կը հաւատայինք ցա- րական անկեղծութեանը:

Հայաստանում ջարդ չի եղել. այդպէս էլ պատաս- խանցելիք ձեր հեռագրին. մենք եւս անհանգիստ էինք. բարեբախտաբար, սուտ չշուկներ էին:

Ը[նդհանուր] Ժ[ողովը] սկսել ու վերջացել է միան- գամայն բաւարար պայմանների մէջ, ինչպէս հաղոր- դում էր մի երկու շաբաթ սրանից առաջ Ակնունիի մի բացգիրը էրզրումից: Մեր ընկերը, կարծեմ ժամանա- կաւորապէս, կոպկաս պիտի անցնի Ղարսի վրայով:

Ը. Ժ.ի որոշումների մասին ոչինչ տակաւին չգի- տենք: Գուցէ Վրացեանը գրած լինի ձեզ: Գիտենք միայն, որ Արեւմտեան բիւրոն վերացրել են եւ ուժե- ղացրել Երկրի կենտրոնական մարմինները:

Մեր ընկեր Մնարը<sup>ա</sup> մի երկու անգամ դիմեց մեզ Լայպցիգից. դրամ էր խնդրում Ամերիկա մեկնելու հա- մար. մենք էլ շատոնց արդէն դրամական տագնապի մէջ ենք: Հեռագրել ենք՝ մի անգամ ձեզ, երկու անգամ Պոլիս: «Դրօշակ»ը կանգ է առել — ոչ պատերազմի, այլ դրամի պակասութեան պատճառով: Խմբագրութիւնը շատ նեղն է մնացել:

Ձեզնից տակաւին պատասխան չկայ, իսկ Պոլսից հա- ղորդում են, որ հարիւր Ֆրանկ անգամ չեն կարող ղրկել, որ այնտեղ եւս «տագնապ» է: Առաջարկում են ձեզ հեռագրել, իրենք եւս ձեզնից են սպասում:

Խնդրում ենք, ընկերներ, չուշացնել ձեր օգնու- թիւնը:

Ձերմ բարեւներով  
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Բարի եղէք ղրկել մեր խնդրած 1000 Ֆրանկը:

1.- Ակնարկութիւն Սեպտ. 17 թուակիր Նիկոլայ Բ.ի կողմէ հա- յերուն ուղղուած կոչին, ուր յիշել է ետք «հայերու դարաւոր հաւա- տարմութիւնը» Ռուսիոյ, Յարը կը խոստանար «ազատութեան եւ արդարութեան բարիքներ» մեր ժողովուրդին:

1ա.- Մնար — Նարինեան Սիմէոն, դաշնակցական գործիչ Ամե- րիկայի մէջ:





Փաստ. 1357-1

2.- ՌՈՍՏՈՍԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

23 / I 1915, Պարիզ

Համաշխարհային Ա. պատերազմի առաջին տարին Ռոստոմ, ցախքան Կովկաս անցնիլը, Փարիզի եւ Լոնտոնի մէջ պաշտօնական շրջանակներու հետ ունեցաւ հանդիպումներ նպատակ ունենալով դաշնակից պետութեանց աջակցութիւնը ապահովել՝ հայկական հարցի նպաստաւոր լուծման համար: Բանակցութեանց նիստ պիտի դառնար նոյնպէս Արեւելքի մէջ հայկական կամաւորական զուգոյքի կազմութեան հարցը: Այս եւ յաջորդ շարք մը նամակներ յղուած են Ամերիկայի Կեդր. կոմիտէին եւ Ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան. այս վերջինը թերթին հրատարակութիւնը դադարեցուցած ըլլալով հանդերձ կը շարունակէր օտարալեզու հրատարակութիւններու միջոցաւ եւրոպական մամուլը եւ պետական շրջանակները իրազեկ դարձնել թրքական իշխանութիւններու ձեռնարկած հայաջինջ գործողութիւններուն:

Սիրելիք,

Բերարը՝ գրի առաւ իր տեսութիւնները մեր ապագայ կազմի մասին. առաջ եմ բերում էական կէտերը: Բնագիրը հետոս եմ տանում:

Հայերի ձգտումը պէտք է լինի

1. Ստեղծել աշխարհագրական մի ամբողջութիւն քիւրդ-հայկական նահանգներից, որին Bérard-ը տալիս է Anatolie Orientale՝ անունը: Հակառակել բաժան բաժան անելու, մի քանիսի հովանաւորութեան տակ դնելու ծրագրին: Anat[olie] Orient[ale-ի] սահմանները պէտք է լինին՝

Հիւսիսից՝ Սինոպ-Ռիզէ-Խոպ՝: Արեւմտքից՝ Մերսինից Սինոպ գիծը. Հարաւից՝ Մերսին, Արեքսանդրէտ, Մոսուլ կամ մի քիչ աւելի դէպի հիւսիս. Արեւելքից՝ ռուս-պարսկական արեւմտեան սահմանագիծը: Այսպիսով երկիրը ելք կ'ունենայ դէպի Սեւ եւ Միջերկրական ծովերը:

2. Մտցնել այդ երկրում եւրոպական կարգեր: Կենտրոնական մարմինը, ուրիշ կառավարիչները կը լինեն սկզբում եւրոպացիներից: Ռեֆորմներ 4 կարգի են ա) ժանդարմերիայի բ) դատական գ) ֆինանսական, աւատական սեփականատիրութեան, դ) Հանրային աշխատանքների:

2.- Վիկտոր Բերար – ֆրանսացի քաղաքական դէմք, բարեկամ Դաշնակցութեան, խմբագիր հայկական հարցի պաշտպանութեան համար հրատարակուող Pro-Armenia եւ Pour les peuples d'Orient պարբերաթերթերուն:

3.- Ֆրանսերէն – Արեւելեան Անատոլիո:

4.- Խոպ – Խոպա կամ Խոփա, փոքր նաւահանգիստ Տրապիզոնի նահանգին մէջ, Վրաստանի սահմանին մօտ:

5.- Ֆրանսերէն – եւրոպացիներու կամքով ու աջակցութեամբ, եւ տեղաբնիկներու խորհուրդներով:

6.- Երրեակ համաձայնութիւնը՝ Ֆրանսայի, Անգլիոյ եւ Ռուսիոյ միջեւ կնքուած զինակցութիւնն էր:

7.- Ֆրանսական մեծագոյնցիկ օրաթերթ:

Այս բոլորը պէտք է լինի par la volonté et le concours des Européens avec la collaboration et les conseils des indigènes՝.

3. Թոյլ չտալ որեւէ ձեռով միջամտութիւն թուրք կառավարութեան, եթէ նա շարունակի գոյութիւն ունենալ: Ղեկավարութիւնը պէտք է պատկանի Երրեակ Համաձայնութեան՝ կամ նրա կողմից նշանակուած մի պետութեան:

Անհրաժեշտ է համարուում որ մենք համակերպենք այն բոլոր արտաքին ձեւերին, որ օգտակար կը դատի Համաձայնութիւնը. պահանջել պէտք է միայն տարեկան համարատուութիւն:

Առաջնութիւն պէտք է տալ առաջին կէտին, այսինքն աշխարհագրական միութիւն ստեղծելուն: Միւսները ինքնըստինքեան կը հետեւեն:

Ինչպէս տեսնում էք, ընկերներ, թերի բաներ շատ կան: Ես գրեթէ առարկութիւն չարի, մտածելով, որ ամբողջական ծրագրի մասին աւելորդ է այժմ խօսք բանալ: Բացի այդ՝ այս մարդիկ այնքան են զբաղուած, այնքան ծանր հոգսեր ունեն, որ մեղք է սրանց ժամանակը խլել: Ամէն տեսակցութեանս մտածում էի, թէ ինչպէս անեմ, շուտ վերջացնեմ դուրս գամ: Տեխնիկական գործերի վերաբերեալ բաւական տեղեկութիւններ ձեռք բերի: 3 ձեռնհաս անձերի հետ տեսնուեցի: Էլ ինձ չծաղրէք,՝ սրանց փորձերն էլ նոյն ուղղութեամբ են:

Յաջողուեց կապ հաստատել Temps-ի հետ՝, տեղեկութիւններ պիտի ուղարկուեն Պետերգրադի ներկայացուցչի՝ միջոցով:

Հասցէ եմ վերցրել կապուելու ամերիկական մի գործակալութեան ներկայացուցչի հետ:

Դուրս եմ գնում վաղը առաւօտ: Ամէն կերպ կ'աշխատեմ մի շաբաթից աւել չմնալ Լոնդոնում:

Համբոյրներով՝  
ՌՈՍՏՈՍ



Փաստ. 1362ա-9

3.- Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Նապոլի, 31 Յունուար 1915

Սիրելի Յոնան<sup>8</sup>, ընկերներ,

Ինչպէս հաղորդել էի բաց գրով, Հռոմում մի շարք հանդիպումներ ունեցայ իտալացի<sup>9</sup> քաղաքական գործիչների հետ եւ վերջին տեսակցութիւնս արտաքին գործոց մինիստրի chef de cabinet-ի<sup>9</sup> հետ էր: Շատ հետաքրքրական էին տեղի ունեցած խօսակցութիւնները, բայց ես մի քանի խօսքով միայն կ'անցնիմ: Միլան տեսել էի Corriere della Sera-ի<sup>10</sup> մի խմբագրի հետ, որը հեռախօսով յանձնարարել էր ինձ Հռոմի իրենց բիւրօ-ին: Այդ վերջինին առաջին այցելութիւնս արի: Ապա տեսնուեցայ Լուիջի Լուցցատտիի, Galli-ի, Barzilazi-ի, Bissolatti-ի Bonomi-ի հետ: Ամէնքն էլ սիրալիր կերպով ընդունեցին եւ ունկնդրեցին մեծ ուշադրութեամբ: Իմ յայտարարութիւնները համառօտակի հետեւեալն էին.

Իտալիան, Աբիսինայի (?) concession-ից<sup>11</sup> յետոյ եւ իբրեւ մէկը օսմ. կայսրութեան ժառանգներից, ունի այսուհետեւ expansion-ի<sup>12</sup> քաղաքականութիւն Արեւելքում, հետեւապէս եւ forcément<sup>13</sup> պէտք է ունենայ իր հայկական քաղաքականութիւնը... Որովհետեւ Փոքր Ասիայում Իտալիան կարող է առաջ մղել իր տնտեսական եւ քաղաքական ծաւալումը գլխաւորապէս հայ տարրի վրայ յենուելով, մի տարր, որ ամենագործօններից ու ընդունակներից է եւ ամէնէն ջերմ համակրողն ու տարածողը իտալական լեզուի, իդէալների ու քաղաքակրթութեան:

Թէ զուտ նիւթական այդ զարգացումներով եւ թէ իբրեւ աւանդականօրէն պաշտպան ճնշուած ազգերի, Իտալիան պէտք է նեցուկ կանգնէ հայկական դատի, պէտք է պաշտպանէ Թուրքա-Հայաստանի ինքնավարութեան թեզը գալոց եւրոպական համաժողովի մէջ:

Հայ ժողովուրդը կարող է որոշ ծառայութիւններ մատուցանել Իտալիային նոյնիսկ մօտ ապագայում, եթէ Իտալիան պատերազմական գործողութիւններ սկսէ մի յայտնի պետութեան դէմ:

Այդ ոգով էի խօսում: Ամէնքն էլ երկար հարց ու փորձ արին: Bissolatti-ն, որ համարուում է մինիստրացու, յայտնեց, որ հայկական դատը իրեն համար ամենասուրբ դատերից մինն է, որ պատրաստ է ամէն բան անել. պիտի խօսի եւ Chambre-ի<sup>14</sup> մէջ: Նոյնը յայտնեց հանրապետականների պարագլուխը, Բարձրացի, որ պարլամենտի ամենահեղինակաւոր դէմքերից է:

Նոյնը – Բոնոմի, Լուցցատտի եւ Գալլի: Լուցցատտին, որ երէկուայ մինիստր-նախագահն էր, խնդրեց, որ մի Mémoire<sup>15</sup> կազմեմ, տպագրած, մեր desiderata-ները<sup>16</sup> մասին: Ինքը իր ձեռքով պիտի տարածէ թէ député-ները<sup>17</sup> եւ թէ ambassadeur-ները<sup>18</sup> միջեւ, որոնք բոլորն էլ իր մտերիմներն են: «Երբ հայոց հարցը actualité<sup>19</sup> կը ստանայ, ասաց նա, կը սկսենք մի campagne<sup>20</sup>, թէ մամուլը կը խօսեցնենք եւ թէ Chambre-ը<sup>14</sup>: Դուք նախապատրաստական աշխատանքը կատարեցէք, կը վերսկսենք մի քանի ամսից յետոյ, երբ շատ բան արդէն փոխուած կը լինի»:

Նոյնն էին ասում գրեթէ բոլոր երեսփոխանները. Լուցցատտին խորհուրդ է տալիս Անգլիայում ուժեղ պրոպագանդ անել. եւ շատ զգուշ. ասում է, հայկ. աւտոնոմիայի մասին մեծ զգուշութեամբ պէտք է գրէք ու խօսէք՝ որպէսզի Ռուս[աստան]ը չգրգռուի»:

Հէնց այդ զգուշութեան պարագան է, ի միջի այլոց, որ դժուարացնում է իր առաջարկած Mémoire-ի<sup>15</sup> հրատարակումը: Ես պատասխանեցի, որ դա պատասխանատու հարց է եւ որ պէտք է խորհրդակցեմ կովկասում, հայրենակիցներիս հետ:

Նախքան Հռոմից մեկնելը (Նապոլով պիտի անցնէի Brindisi գնալու համար եւ Նապոլում պէտք է տեսնէի député Լամբրիոլային որին հնուց ծանօթ եմ) – կամեցայ տեսնուել որեւէ պաշտօնական անձի հետ: Երեսփոխան Գալլին – հին Գարիբալդեան, որի վրայ յանձնարարական ունէի վեներիկի հայրերից – յայտնեց որ ինքը սիրով կը ներկայացնէ ինձ Sonnino-ին (արտաք.

8.- Յոնան – Դարբեան Յոնան, Դաշնակցութեան հիմնադիր առաջնակարգ դէմքերէն, որ կը գտնուէր Շրննի:  
9.- Ֆրանսերէն – անձնակազմի պետ:  
10.- Իտալական յայտնի օրաթերթ:  
11.- Ֆրանսերէն – գիշելէն:  
12.- Ֆրանսերէն – ծաւալում, ընդարձակում:  
13.- Ֆրանսերէն – պարտադրաբար, ստիպողաբար:

14.- Ֆրանսերէն – խորհրդարանի:  
15.- Ֆրանսերէն – յիշատակագիր:  
16.- Ֆրանսերէն – բաղձանքների:  
17.- Ֆրանսերէն – երեսփոխանների:  
18.- Ֆրանսերէն – դեսպանների:  
19.- Ֆրանսերէն – այժմէականութիւն:  
20.- Ֆրանսերէն – պայքարի, արշաւանքի:







գործ[ոց] նախ[ար]ար) եւ իսկոյն նամակ գրեց մինիստրըին, որ իր մօտ բարեկամն է: Sonnino-ն պատասխանեց, որ չափազանց ծանրաբեռնուած է եւ որ հայ պատգամաւորին ուշադրութեամբ կ'ունկնդրէ իր chef de cabinet-ն<sup>9</sup>: (Ղրկում եմ ձեզ ի միջի այլ թղթերի [հետ] Sonnino-ի այդ պատասխանը: Գայլի եւ ուրիշները պընդում են, որ մինիստրը ղիւանագիտական մոտիվներով<sup>21</sup> է, որ չի կամեցել ինք-անձամբ audience<sup>22</sup> տալ հայ պատգամաւորին... որ իրողութիւնը իսկոյն յայտնի կը դառնայ Թուրքիոյ եւ Ռուսիոյ դեսպաններին, որոնց հետ Իտալիան տակաւին բարեկամական ոտքի վրայ է):

Երեք օր յետոյ Galli-ն առաջնորդեց ինձ ministère des Aff. Etrangères<sup>23</sup>, chef de cabinet<sup>9</sup> Մարքիզ Բորսարէլիի մօտ: Բնաւ չէի սպասում այնքան լաւ ընդունելութիւն: Կէս ժամից աւելի տեւեց մեր զրոյցը. քարտէզը առջեւնիս բացատրում էի հայ ազգաբնակչութեան ծովեզերեայ դիրքերը, իտալական ազդեցութեան սահմանները, մեր անելիք հնարաւոր աջակցութիւնը եւ այլն:

Մինիստրի օգնականը մի քանի անգամ ներողութիւն խնդրեց, որ մեր պաշտօնական դիրքը ստիպում է վերապահութեամբ խօսել ինձ հետ եւ սահմանափակուել ընդհանուր խօսքերով. «մենք ինքներս եղել ենք ժամանակին օտար լծի տակ, ուստի եւ շատ լաւ ենք ըմբռնում ձեր հայկական աստոնծիայի այս պահանջները. մեր բոլոր համակրութիւնը ձեր կողմն է եւ երբ ես ասում եմ «համակրութիւն», գիտցէք, որ դա մի սոսկ հնչիւն չէ, դատարկ բառ չէ...: Մենք միանգամայն հասկանում ենք, որ դուք ինքնավար Հայաստանը ուզում էք դնել Ռուսիոյ եւ եւրոպական ազատամիտ պետութիւնների հաւաքական protectorat-ի<sup>24</sup> տակ... եւ այլն եւ այլն: (Մոռացայ ասել, որ իմ բացատրութիւնների սկզբում նշում էի ամէն տեղ Եւրոպայի յայտնի մանիֆեստը, ուր հայերին խոստանում են վերադարձնել կորցրածը ազատութիւնները):

Վերջում մինիստրի օգնականը (անշուշտ հրահանգըւած Sonnino-ից)... հարց տուեց. «ի՞նչ որոշ, ակներեւ (palpable) ծառայութիւններ կարող է Իտալիան սպասել հայ ժողովրդի եւ մեր կուսակցութեան կողմից»: Պարզեց, որ մի յայտնի պետութեան դէմ պիտի օգտագործուէին ակնկալուած հայկական ծառայութիւնները...

... Իտալացիք այժմ համարեա էլ չեն թագցնում իրենց մօտակայ թատերամուտը<sup>25</sup>...

Պատասխանեցի Ռոստոմի առաջարկութեան իմաստով եւ իմ խօսակիցը ըստ երեւոյթի շատ գոհ մնաց:

Այսուհետեւ engagement-ներ<sup>26</sup> ունինք, մեր խօսքին պէտք է հաւատարիմ մնանք, եւ անտարակոյս, մօտ ապագայում – երբ մեր խնդիրը կը դրուի հաւանօրէն եւրոպական համաժողովին – Իտալիան կարող է մեծ ծառայութիւն մատուցել մեզ: Պէտք է լաւ մտածել որ ամօթով չմնանք: Ռոստոմին, Պարիզ չեմ կարող այս բաները գրել: Ինչպէս տեսնում եմ Լոնտոն էլ չի գնալու. գուցէ նորէն ժընեւ գայ. կը հաղորդէք զրաձս:

Նախն էլի ուշացայ, բայց գուցէ լաւ եղաւ, սոսկալի փոթորիկներ են ծովի վրայ. մի քանի օրից ասում են կարող է լաւանալ եղանակը:

Բարի եղէք կարգալ նամակս նաեւ Ահարոնեանին: Իւսուֆին<sup>27</sup> էլ:

Ձերմ բարեւներ ՄԻՔԱՅԷԼ

– Դրամս էլ, տարաբախտաբար, հալւում է. վախենում եմ շատ, թէ ճամբան նեղուեմ: Մի ամիս եղաւ, ինչ Իտալիա եմ. դրամ շատ գնաց... Ձեզ մօտ էլ կարծեմ շատ չկայ: Կովկասից, կ'ասեմ, կը ղրկեն. ի՞նչ արած, նաւի մէջ էլ ստիպուած եմ I classe<sup>28</sup> վերցնել. ասում են ալեկոծ ծովու[?] համար աւելի լաւ է:

– Պէտք է խնդրեմ, որ էլի մի 150 Ֆրանքի ճար տեսնէք: Բուլգարիայից յետ Կովկաս 15 օրից աւելի է տեւելու: Այդպէս են ասում տեղեակ մարդիկ: Իսկ Բուլգարիայում դեռ այնտեղ մի շաբաթ – 10 [օր] կանգ առնելը, Պոլիս մարդ ղրկելու եւ տեղեկութիւններ ստանալու համար: Պէտք է փորձել նաեւ գուցէ բուլգար կառավարութեան միջոցով Խաչ[ատուր]ին ու Խաթ[ակ]ին<sup>29</sup> գերութիւնից ազատելու:

– Ձգուելի եղանակներ են եւ Հռոմ եւ այստեղ:

– Լոնկեւիչը<sup>30</sup> բարեւում է ամէնքիդ. վաղը կը գայ Հռոմից մի քանի օրով, ապա կը մեկնի Պարիզ: Նա էլ մի ռուս ընկերով հետ օգնեց ինձ իմ աշխատանքին միջոցին:

21.- Պատճառներով:  
22.- Ֆրանսերէն – ունկնդրութիւն:  
23.- Արտաքին գործոց նախարարութիւն:  
24.- Ֆրանսերէն – հովանաւորութեան:  
25.- Իմա ընդհանուր պատերազմին մասնակցութիւնը (Երբեք համաձայնութեան կողմին):  
26.- Ֆրանսերէն – յանձնառութիւններ:  
27.- Եուսուֆեան Յովհաննէս, Դաշնակցութեան առաջին սերունդի ակամաւոր ղեմաբերէն, կազմակերպիչը Կ. Պոլսոյ եւ Ամերի-

կայի դաշնակցական կազմակերպութեանց. ծանրօրէն հիւանդ իր վերջին տարիները կ'ապրէր Ջուիցերիա, ուր մահացաւ 1920ին:  
28.- Ֆրանսերէն – առաջին կարգ:  
29.- Յաջորդաբար՝ Մալումեան Խաչատուրի (Ալմուհի) եւ Գարեգին Խաթակի:  
30.- Լուկեւիչ Վալերիան, ռուս յեղափոխական ղեմաբերէն, որ ծանօթ էր Վ. Արարատսկի ստորագրութեամբ «Դրօշակ»ի համարներու մէջ Ռուսիոյ քաղաքական ներքին կեանքին մասին գրած իր յօդուածներով:







Փաստ. 1403-18

### 4.– ՌՈՍՏՈՍԷՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. Կ.ԻՆ

3 Փետր. 1915, Լոնոնոն

Ժընեվից եւ Պարիզից մանրամասը գրել եմ. վախենում եմ, որ հարկ եղած ուշադրութեամբ կարդացած չլինէք, եթէ ոչ հեռագրով հարց չէիք տալ, թէ ի՞նչ գործի համար եմ Լոնոնոն եկել: Խնդրեմ մի անգամ եւս վերցրնել նամակներս եւ կարդալ այն ինչ ձեր աչքից վրիպել է:

Մի շաբաթից աւելի է, ինչ Լոնոնոն եմ: Երկու անգամ ժողով ունեցանք տեղւոյս հայկական կոմիտէի հետ: Կամաւորները խնդրի համար այստեղ դիմում եղած է. նախարարը շնորհակալութիւն է յայտնել աւելացնելով, թէ առայժմ պէտք չկայ. երբ ժամանակը գալու լինի, ինքը կը յայտնի: Կոմիտէն այս պատասխանը նկատել է իբրեւ մերժում, քաղաքավարի ձեւով արտայայտուած: Առաջարկեցի նորից կրկնել դիմումը մի քիչ ձեւափոխուած: Ընդունուեց, բայց դեռ ոչինչ չի արուած: Անհրաժեշտ է նախօրօք հող պատրաստել, որպէսզի երկրորդ անգամ մերժում չստացուի:

Ձեր երկրորդ հեռագիրը ինձ շատ դժուար կացութեան մէջ է դնում: Եթէ միայն երէկ էք փոստին յանձնել ձեր նամակը, ուրեմն առնուազը 12 օր պէտք կը լի-

նի սպասել այստեղ: Մինչդեռ, ընկերներ, շատ ծանր է այդ ինձ համար: Վաղուց արդէն ես իմ տեղումը պէտք է լինէի<sup>31</sup>: Ինձ վաղուց է սպասում են: Եթէ հեռանալու լինեմ, ձեր նամակը չստացած, խնդրեմ չվշտանաք:

Կարդացի ձեր համաձայնութեան խախտման մասին. լաւ բան էք արել: Այնուամենայնիւ կարծում եմ, որ կուսակցութիւնը իր անունով չպիտի դուրս գար: Կազմեցէք մի նոր մարմին, որը կապ պահպանէր Թիֆլիսի Ազգ. բերրոյի հետ: Պատճառները պարզ կը լինեն իմ նախորդ նամակներից: Նոր մարմինը անհրաժեշտ է, թէկուզ նա կազմուած լինի բացառապէս մեր ընկերներից, թէեւ անկարելի է, որ միւս տարրերից միացողներ չլինեն:

Մի անգամ եւս պիտի նկատեմ, որ գաղտնապահութեան տեսակէտից որոշ զգուշութիւն չէք պահպանում: Հարկ կա՞ր արդեօք Դրոյի խմբանկարների մէջ անպատճառ աւելացնելու Ա. Գ.ի անունը<sup>32</sup>. «Հորիզոնի» մէջ եթէ այդ բաց են թողել, նշանակում է որոշ նկատումներ են ունեցել: Ձեմ կարծում, որ ձեր յայտարարութիւնը լաւ ազդի Ա. Գ.ի վրայ: Արդէն «Հորիզոնը» այդ խմբանկարները չպիտի հրատարակէր!

Պոլսից նամակ ունէի: Ձեր 300ը ստացել են: Ընկերներին թոյլ չեն տալիս դուրս գալու. իբրեւ պատանդ են պահում: Վաւերեանը Վան է. Վահանը՝ Մուշ: Գեղամը եկել է Պոլիս<sup>33</sup>:

Մի քանի օրից նորէն կը գրեմ:

Ձեր՝  
ՌՈՍՏՈՍ

31.- Իմա՝ Կովկաս, Թիֆլիս:

32.- Ա. Գ.ը Արմէն Գարոն է (Փաստրմաճեան), նախկին երեսփոխան Կարնոյ, որուն լուսանկարը՝ հրատարակուած «Հայրենիք»-ի մէջ, կամաւորական խմբանկարի մը հետ, Ռոստոմ անպատեն կը գտնէ: Արդարեւ եղելութիւնը պիտի շահագործուէր թուրքերու կողմէ:

33.- Վոսմեան Արշակը ծանօթ է՝ Վանի երեսփոխան, Վահանը՝ Փափագեանն է՝ նոյնպէս Վանի երեսփոխան, իսկ Գեղամը՝ Տէր Կարապետեան, Մշոյ երեսփոխան:





Փաստ. 1357-3

5.- ՌՈՍՏՈՍԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

9 / II 1915, Լոնոնն

Սիրելիք,

Այսօր լրանում է երկու շաբաթը իմ այստեղ լինելուն, բայց դեռ ոչինչ չի արուած գրեթէ: Մեծ յիմարու- թիւն ունեցայ դիմումներ անելու հայկական կոմիտէի միջոցով: Երեւակայէք մինչեւ հիմա դեռ ոչ ոքի չեմ տե- սել: Անցեալ ուրբաթ օր ժամադրութիւն էր նշանակ- ւած անգլո-հայկական կոմիտէի նախագահ Վիլեամսին տեսնելու համար, բայց ինչպէս է եղել ինձ չեն գտել, ի- րենք մենակ են տեսնուել: Վաղը պիտի միասին գնանք, եթէ Աստուած յաջողի: 2-3 մարդու հետ տեսնուել եմ, բայց առանց կոմիտէի միջնորդութեան: Դրանցից մէկն է Նոէլ Բեկստոնը: Սրա կարծիքով՝ մեր վիճակը կախուած կը լինի մեր ցոյց տուած եռանդից եւ ուժից: Վստահ է որ անգլիական բարոյական ազդեցութիւնը չպիտի պակսի: Տեսնուեցայ նաեւ իրլանդացի հին մար- տիկ O'Conner-ի հետ, բայց դժբախտաբար մեր հարցի մասին շատ թուուցիկ խօսակցութիւն ունեցանք, չնա- յած, որ ամբողջ մի ժամ կորցրեց մարդը: Քաղաքավա- րական պայմանները յարգելու համար նա հարկ համա- րեց տանել ցոյց տալ պարլամենտը: Դրա շնորհիւ էր, որ տեսած եղայ լորդերի ժողովի նիստը, յայտնի լորդերին- յետոյ Համայնքների ժողովը, ուր այդ րոպէին հարցա- պնդում կար Բարդէվի[?] դատապարտութեան մասին,

գրադարանը, ընթերցարանը, ճաշարանը (ի միջի այլոց լորդերի ճաշարանը դեռ եւս առանձին է), առանձին կաբինէթները եւ այլն...

Նա եղել է, ինչպէս ինքն ասաց, անդամ հայանպաստ մի կոմիտէի, սրանից 30 տարի առաջ:

Մէկ ուզում եմ թողնեմ գնամ, մէկ էլ դժուար է ա- ռանց որոշ արդիւնքի մեկնել: Սպասում եմ այսպէս կամ այնպէս, մինչեւ

- 1) Ամերիկայի նամակի հասնելը,
- 2) Կարնոյ անգլիական հիւպատոսի գալը, որի միջո- ցով գուցէ աւելի դիւրին լինի գործը վերջացնել եւ
- 3) Կիրակի օրը գումարուելիք սոցիալիստների ժողո- վին, որի համար պիտի գան Ֆրանսիացի ու բելգիացի ներկայացուցիչները:

Ահարոնեանին լուր տուէք, որ գալուց անպատճառ Պարիզից յանձնարարարկաններ վերցնի. եթէ նա էլ կա- րողանար կիրակի օրը հասնել, ինչ լաւ կը լինէր:

Միքայէլը ո՞ւր է: Եթէ դեռ Բուլղարիա չի հասել, Սարգսի<sup>33ա</sup> ուզած տեղեկութիւնները՝ շատ համառօտ եւ զգոյշ, օբիեկտիւ տոնով, հասցրէք իրեն իր ցոյց տը- ւած ճանապարհով: Իսկ եթէ նա հասել է, ուղարկէք միայն լրացուցիչ տեղեկութիւններ: Աւելորդ չէ սակայն յիշեցնել Միքայէլին, որ անպատճառ մէկին ճանապարհ ձգի Սարգսի մօտ:

33ա.- Սարգիս Արարտեանի:

Ձեր ՌՈՍՏՈՍ





Փաստ. 1357-5

6.- ՌՈՍՏՈՍԷՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

17 / II 1915, Լոնոն

Սիրելիք,

Ամերիկայի Կ. Կոմիտէի նամակը չկայ ու չկայ: Իսկ այդ նամակից մի օր յետոյ գրուած մի ուրիշ նամակ, մասնաւոր, ստացուեց երէկ: Բացատրում եմ նրանով, որ Կ. Կոմիտէի նամակը ապահովագրուած է. բայց ինչո՞ւ գէթ այսօր չկայ: Ուզեմ, չուզեմ, պէտք է սպասեմ դեռ եւս: Թէեւ շատ լաւ գիտեմ, որ ծով անցնելը աւելի դժուար պիտի լինի գերմանացիների սպառնալիքի պատճառով: Ա՛խ, եթէ իմանայի, թէ այսքան երկար մնալու եմ: Որքա՛ն գործ կարելի էր կատարել:

Սոց[իալիստների] կոնգրէի մասին թերթերից իմանալուց յետոյ տեսնուեցի Մակ-Դոնալդի հետ, բայց սա դժբախտաբար թերի գաղափար տուեց նպատակի մասին: Նրա ասածին նայելով՝ ժողովում պիտի խօսուէր, թէ ինչ եղանակով համաձայնութեան գան գերման սոցիալիստների հետ. հակառակ է միւսներին, որոնք սուր կերպարանք են տալիս փոխադարձ անհամաձայնութիւններին: Longuet-ի հետ կարողացայ տեսնուել միայն ժողովից յետոյ: Ասացի, որ իր հայ բարեկամները չպիտի ներեն, որ մեր խնդիրը չի գրուել լեհականի կողքին: Արդարացաւ նրանով, որ չափազանց կարճ ժամանակ ունէին եւ չափազանց կարեւոր անհամաձայնութիւններ. մեր վիճակի մասին մոռացած է եղել: Խոստացաւ, որ այսուհետեւ ոչ մի առիթ չպիտի բաց թողնի:

Տեսնուեցայ եւ նախարար Sembat-ի հետ: Նա կատարեալ հաւանութիւն տուեց մեր բռնած ընթացքին թուրքիայում եւ դուրսը: Հայկական նահանգների ինքնավարութիւնը անհրաժեշտ է համարում՝ լինի դա թուրքիոյ, լինի Ռուսիոյ կազմի մէջ: Նրա կարծիքով՝ իրերի բերմամբ վերջինը կը լինի: Կիլիկիայի միացման պահանջը չափազանց է գտնում: Լաւ տպաւորութիւն թողեց վրաս նրա վերջին խօսքերը. «ես, ասաց նա, միշտ սրտիս մօտ եմ ընդունել ձեր հարցը. եթէ շատ չեմ արտայայտուել, դրա պատճառը այն է եղել, որ դուք ունէիք իբրեւ ձեր դատի պաշտպան, Պրեսանսէի<sup>33բ</sup> նման մի ուժ. բայց հիմա, քանի որ նա չկայ, ինձ վրայ եմ առնում նրա գործը. վստահ եղէք ինձ վրայ, ինչպէս վստահ էիք նրա վրայ»: Ահարոնեանը թող անպատճառ նրան տեսնի Պարիզով անցնելիս եւ լուրեր տայ մեր կամաւորների գործունէութիւնից: Տրամադրութիւնները կարող են այս կամ այն կողմը փոխուել. պէտք է միշտ տեսնուել հետները, au courant<sup>33գ</sup> մնալ:

Սոռոցայ ասել, որ Միջազգ. Բիւրոյի քարտուղար Hausmann-ին էլ տեսայ. բաւական դառնացած էր երեւում, թերեւս Լաբուր պարտիի<sup>33դ</sup> ընթացքի համար: Գոհ չէր եւ Ֆրանսիացի ընկերներից, որոնք ընդամարտուեալ չեն համարել ընդհ. սոց. կոնգրէն գումարելուն. եւ այս պատճառով նա վիժել է: Ինքը՝ միայն իբրեւ «հիւր» է իրեն նկատել այս ժողովին մէջ:

Մանրամասնութիւնների համար դիմեցէք Չերնովին կամ Լուկեւիչին, որ այժմ Պարիզ կը լինի:

33բ.- Պրեսանսէ, Մամբատ, Լոնգէ՝ ֆրանսացի ընկերվարականներ, քարեկամ Դաշնակցութեան:

33գ.- Ֆրանսերէն – իրագել, տեղեակ:

33դ.- Անգլիական Աշխատաւորական կուսակցութեան:

Չեր ՌՈՍՏՈՍ







Փաստ. 1403-28

7.- ՌՈՍՏՈՍԷՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. Կ.ԻՆ

21 Փետր. 1915, Լոնոն

Սիրելի ընկերներ,

Երկու օր առաջ գրած նամակս ստացած կը լինէք, հարկ եղած ուշադրութեամբ կարդացած եւ հակաճանր ըմբռնած: Ինչպէս յայտնել էի, մեկնումս յետաձգեցի նոր տեսակցութիւնների պատճառով:

Կրկնեցի առաջարկը այն ձեւով, ինչ ձեւով դրուած էր առաջ: Մեր կամաւորները մտնում են անգլիական բանակի մէջ, որ գործում է Եգիպտոսում: Նրանք մասնակցում են բոլոր գործողութիւններին, նոյնիսկ կռիւներին, գործնականապէս մարզում են եւ միաժամանակ օգտակար են դառնում բանակին, ոչ միայն իբրեւ կռուող ուժեր, այլ իբրեւ տեղական սովորոյթներին ու լեզուներին ծանօթ գիտնորներ, պայմանով սակայն, որ երբ անգլ. կառավարութիւնը պէտք ունենայ գիտնորական գործողութիւններ սկսելու Փոքր Ասիայի ափերում, կամ երբ անիշխանութիւն սկսի տիրել երկրի մէջ այս կամ այն պատճառով — թէկուզ Պոլսոյ գրամման հետեւանքով — մեր կամաւորները տեղափոխուում են Կիլիկիա:

Առաջարկը բանաւոր գտան եւ խոստացան խօսել ուր հարկն է ու արդիւնքը հաղորդել մեզ: Եթէ պատասխանը եղաւ որոշ, յստակ, վերջնական, ձեզ կ'ուղարկեն այստեղից հեռագիր, հակառակ պարագային կը գրուի ձեզ նամակ:

Ի միջի այլոց հարցրին կամաւորների թուի մասին.— նրանք լսել էին, որ այդտեղից 5000 հոգի խոստացուած

է: Պատասխանեցի, որ որոշ թիւ ասել չեմ կարող. չէինք էլ ուզենալ որ առաջին անգամից մեծ թուով ներկայանան: Մէջները կարող են շատ անընդունակներ լինել: Սկզբում թող մտնեն քիչ թուով ընտրովի ուժեր. յետոյ կարելի է մաս մաս աւելացնել: Բացի այն, որ այս պայմանը անհրաժեշտ է՝ վստահելի բանակ ունենալու համար, աչքի առաջ ունէի նաեւ այն հանգամանքը, որ որոշ ծախսեր ստիպուած կը լինենք մեզ վրայ վերցնել:

Չգիտեմ, թէ դուք այդտեղ ինչպէս էք պատկերացրել մեր մասնակցութեան եղանակը, բայց մենք ուրիշ ճանապարհ չենք գտել: Յիշեցէք, որ Անդրանիկը ստիպուած է եղել իր փոքրաթիւ բանակից 150 հոգի առաջին անգամից յետ ճամբել,— եւ այդ այնտեղ՝ ուր մարզուածներ, որակով անդամներ անհամեմատ աւելի շատ կան:

Եթէ առաջարկը ընդունուելու լինի, կանչեցէք գլխաւորապէս այնպիսիներին, որոնք մասնակցել են կռիւներին, գիտնորութիւն են արել, առնուազն մարզուել են Ամերիկայում, ընտրեցէք երիտասարդներին, քաջաւորներին: Գործ ածէք:

Ձեր՝ ՌՈՍՏՈՍ

Պետրոսը, Յարութիւնը անցել են: Ձեր բարեկները ընդունեցի: Շնորհակալ եմ:

Ն[ՈՅՆ]



Փաստ. 63-22ա

**Ց. ՎԱՐԱՆԴԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ  
ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱԽԱՐ  
ՍԸՐ ԷԴՈՒԱՐԳ ԳՐԷՅԻՆ**

Sofia, 20 février 1915<sup>34</sup>

A son Excellence Sir Edouard Grey,  
Ministre des Affaires Etrangères de la Grande Bretagne, Londres

Excellence,

L'Arménie russe désirant concourir dans la mesure de ses forces à la victoire de la Triple Entente a mis à la disposition de l'état major russe dix mille volontaires qui combattent actuellement dans les différentes régions du théâtre de la guerre russo-turque. Il y a aussi des centaines de volontaires arméniens dans l'armée française.

Le comité arménien vient, par la présente, offrir à l'état major anglais une légion de vingt mille hommes pour le cas où l'Angleterre jugerait utile d'opérer une descente sur la côte de Cilicie, soit à Alexandrette soit à Mersine. Cette descente se ferait sous le commandement d'officiers anglais. Nos volontaires se trouvent pour la plupart en Amérique. Il y en a aussi dans les Balkans et en Egypte.

Une fois la Cilicie serait arrachée à la domination Ottomane, la nation arménienne désirerait que cette région de la patrie historique fut placée sous le protectorat de la Grande Bretagne. (La Grande Arménie tombera probablement sous le protectorat russe).

Au cas où l'état major britannique accepterait notre offre, nous nous procéderons de suite – par nos comités locaux – aux recrutements de volontaires. Ceux-ci sont des gens solides, des combattants éprouvés et qui connaissent bien le pays à conquérir. Après quelque jours d'exercices à l'île de Chypre, la légion arménienne pourrait débarquer à Alexandrette, de là envahir la Cilicie où la population arménienne leur ferait bon accueil. (Les troupes turques sont peu nombreuses dans cette région).

Veuillez agréer etc.  
Pour le Comité Arménien  
M. VARANDIAN

[Կնիք]

*Ղրկուած է Սոֆիայի անգլիական դեսպանատան միջոցով եւ նրա խորհրդով Սըր Էա. Գրէյին:*

34.- Նամակի հայերէն մեքենագիր օրինակին վրայ թուականը նշանակուած է «25 փետրուար 1915»: Առաւել հաւանականը փետրուար 20-ն է: Վարանդեանի յաջորդ գրութեանն ի յայտ կու գայ, որ խնդրոյ առարկայ նամակը իսկութեան մէջ *հետագիր* է, խմբագրուած Սոֆիա, Անգլիոյ դեսպանին հետ միասին:





Փաստ. 63-22բ

**Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆԻ ՆԱՍԱԿԸ  
ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ  
ՍԸՐ ԷԴՈՒԱՐԳ ԳՐԷՅԻՆ**

Ժրնեւ, 25 Փետրուար 1915<sup>34</sup>

Սըր էդուարդ Գրէյին,  
Մեծն Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար, Լոնտոն

Ձերդ Վսեմութիւն,

Ռուսահայաստանը բաղձալով, իր ուժերի չափով, աջակցել Երրեակ համաձայնութեան յաղթանակին, ռուս սպայակոյտի տրամադրութեան տակ դրած է տասը հազար հայ կամաւորներ, որոնք ներկայումս կուռում են ռուսելթրքական զանազան ռազմաճակատներէ վրայ:

Այսու հայկական կոմիտէն գալիս է բրիտանական սպայակոյտին առաջարկելու է 20 հազարնոց մի հայկական լեզէոն այն դէպքում, երբ Մեծն Բրիտանիա օգտակար կը համարի զինուորական ցամաքահանում կատարել Կիլիկիոյ մէջ, Ալեքսանդրէտի կամ Մերսինի ծովեզերքներէ: Ցամաքահանումը կը կատարուի անգլիական սպաների հրամանատարութեան ներքեւ:

Մեր կամաւորները այժմ գտնուում են մեծամասնաբար Ամերիկայում: Կամաւորներ կան նաեւ Բալկաններում եւ Եգիպտոսում:

Հէնց որ Կիլիկիան կը պոկուի Օսմ. տիրապետութիւնից, հայ ազգը կը փափաքի, որ պատմական Հայաստանի այս հողամասը դրուի Մեծն Բրիտանիոյ հովանաւորութեան տակ: Մեծ Հայքը հաւանաբար կ'ընկնի Ռուսաստանի թեւարկութեան տակ:

Այն պարագային, երբ բրիտանական սպայակոյտը կ'ընդունի մեր առաջարկը, տեղական կոմիտէներէ միջոցով, անմիջապէս կը ձեռնարկենք կամաւորներէ զինահաւաքի: Կամաւորները ամրակազմ եւ փորձառու ռազմիկներ են, որոնք լաւածանօթ են գրաւուելիք հողամասին: Կարճ ժամանակով Կիպրոս կըղզում մարզուելուց յետոյ, հայկական լէզէոնը կարող է ցամաք ելնել եւ այնտեղից արշաւել Կիլիկիա, որին հայ բնակչութիւնը վստահաբար լաւ ընդունելութիւն ցոյց կը տայ: Այս շրջանում գտնուող թրքական զօրքը փոքրաքանակ է:

Հայ Կոմիտէի կողմից,  
ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆ





Փաստ. 1403-31

### 9.– Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆԷՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻՆ

Բուրբոշ, 26 Փետր. 1915

Ընկերներ,

Հռոմից է, որ պիտի գրէի ձեզ. մինչեւ այսօր ձգձգուեցաւ, որովհետեւ Բուլղարիոյ մէջ մեր տղաները զօռ «լծեցին» ինձ. ժողովներ ու ատենախօսութիւններ՝ Սոֆիա, Ֆրիլպէ, Ռուսչուք, այժմ էլ այստեղ: Տրամադրութիւնը բարձր է ամէն տեղ. ամէնքը յուսովառ եւ խանդավառ կը սպասեն ապագային:

Ժընեւից մեկնել էի — դեռ երկու ամիս սրանից առաջ — ուղղակի Կովկաս երթալու դիտաւորութեամբ: Բայց կանգ առայ իտալիայում: Մի քանի օր Միլան, գլխաւորապէս մեծ թերթերի խմբագիրներին հետ տեսնուելու համար, ապա երկու շաբաթ Հռոմ եւ Նապոլ՝ երեսփոխաններին ու այլ ազդեցիկ քաղաքական գործիչներին հետ խորհրդակցելու նպատակով:

Պատմութիւնը երկար է, իմ ժամանակը սուղ եւ մանաւանդ մէկ ամսուան քարոզչական պտոյտս Բալկաններում ուստապառ դարձուցած է ինձ, — կարճ կը կապեմ:

Հռոմ շատ եւ շատ սիրալիր ընդունելութիւն արին ինձ այլեւայլ կուսակցութիւնների պարագլուխներ, — Լուցաուտի (նախարարապետ էր մի քանի ամիս ասկէ առաջ), Բարձիլացի, Բիսսուլատտի, Գալլի: Երեսփոխանները ներկայացրին ինձ արտաքին գործերի նախարարի դիւանապետին, որի հետ երկար ու հետաքրքրական գրոյց ունենայ, խօսեցի ի միջի այլոց եւ ձեզ զբաղեցնող մեծ խնդրի մասին (որի առթիւ Ռոստոմը Լ[ոնտոն] գացած էր եւ որի առթիւ ինձ էլ հեռագրած էիք որ Լ. հաստատուեմ, բայց արդէն մեկնած եմ եղել): Շատ համակրանքով վերաբերուեց մարդը:

Հանգամանօրէն գրել չեմ կարող: Յամենայն դէպս... սպասել պէտք է: Այս վայրկեանիս Լոնտոնն անգամ ըստ երեւոյթին չ'ուզեր զբաղուել նման ծրագիրների իրագործումով: Այդպէս հաղորդեց ինձ եւ Սոֆիայի անգլիական դեսպանը, որի հետ գնացել էի յատկապէս այդ խնդրի առթիւ խորհրդակցելու:

Բոլոր երեսփոխանները համաձայնեցան ինձ հետ, որ իտալիոյ կենսական շահը կը պահանջէ նպաստել հայ երկրի ազատագրման, քանի որ իտալիան իր ազդեցութիւնը, իր ծաւալումի քաղաքականութիւնը կարող է առաջ տանել Փոքր Ասիոյ մէջ՝ միմիայն հայ տարրի վրայ կրթելով: Եւ ամէնքն էլ խոստացան աշխատել, որպէսզի գալոց եւրոպ[ական] վեհաժողովին մէջ իտալիան պաշտպան կանգնէ հայկ. ինքնօրինութեան: Կարճ եմ գրում. խօսակցութիւնները շատ երկար տեւեցին: — Մենք իրօք հիմնեցինք այսօր «Պրօ-Արմենիա» կոմիտէ Հռոմի մէջ: Բայց հարկաւ, այս նախապատրաստական աշխատանք էր միայն. պէտք է որ ընկերներէն մէկը մի 2-3 ամսէն երթայ հաստատուի Հռոմի մէջ: Ես դժուար թէ կարողանամ այդքան շուտ վերադառնալ. Ռոստոմը արդէն հեռացել է Լ[ոնտոն]ից, այժմ Ռուսիա պէտք է լինի. մնում է Ղարիբը<sup>35</sup>. սա էլ պատրաստուել էր Կովկաս մեկնելու (պահանջում են նրան եւս Կովկասից): Հեռագրեցի, որ առայժմ մնայ. լաւ չէ այս պայմաններու մէջ ի սպառ պարպել ժընեւը եւ Եւրոպան: Ուժերու սով է... Յուսամ՝ Ղարիբը կը մնայ: Ի հարկին՝ նա կարող է իտալիա գնալ իմ սկսածը շարունակելու:

Այսօր երկար գրեցի Փաշային<sup>36</sup>. յորդորեցի, որ Եւրոպա վերադառնայ, թէկուզ անպաշտօն հանգամանքով: Նա այդ տեսակէտից թանկագին ոյժ է: (Նա էլ, ըստ երեւոյթին, ազդուած է թուրքերու կողմէն իրեն ուղղուած սպառնական նամակներէն...):

\*  
\*\*

Խօսեցայ Սոֆիայում նոյն Լեւնաւալայրի<sup>37</sup> խնդրոյ առթիւ թէ անգլիական եւ թէ ռուսական ու Ֆրանս[իական] դեսպաններու հետ: Շատ սիրալիր էին երեքն էլ (ես կը ներկայանայի կազմակերպու]թեան կողմէ): Խոստացան անմիջապէս հարցնել իրենց պատկանեալ կառավարութիւններուն: Ինչպէս ասացի, անգլ. դեսպանը սկեպտիկ էր: Այնուամենայնիւ, հաղորդեց, ըսաւ, կառավարութեան: Միասին կազմեցինք ընդարձակ հեռագիր, որ ինքը նոյն օրն իսկ պէտք է ուղղէր Լոնտոն (տեսնուեցայ դեսպանի հետ 8 օր առաջ). իր խորհրդով՝ մի նամակ էլ գրեցի Սիր Էտ. Գրէյին, հանգամանօրէն պարզելու համար ինդիքը:

Պատասխանը — եթէ զայ — պիտի հաղորդէ Բալկանեանին<sup>38</sup>, նա էլ ձեզ ու ինձ կը տեղեկացնէ:

35.- Ղարիբ — Ահարոնեան Աւետիս:  
36.- Իմա՝ Պօղոս Նուպար փաշային, որ այդ օրերուն Եգիպտոս կը գտնուէր:  
37.- Լեւնաւալայր կուս. ծածկանունն է Կիլիկիոյ: Այստեղ՝ ակնարկութիւն է Մեծն Բրիտանիոյ կողմէ Կիլիկիա ցամաքահատում կատարելու ծրագրին:  
38.- Իմա՝ Հ.Յ.Դ. Պալքանեան Կեդր. կոմիտէին:





Սակայն, ինչպէս տեսնում էք, դէպքերը գահավիժ-  
ւում են խօլական արագութեամբ եւ դժուար թէ մենք  
կարողանանք հասնել նրանց ետեւից. դժուար թէ կարո-  
ղանանք ունէ տեղ բռնել այս գարհուրելի ջրապտոյտի  
մէջ: – Փոյթ չէ: Մեր երեսնամեայ մաքառումներն ու  
գոհաբերութիւնները եւ միայն այսօրուան տասնեակ  
հազար կամաւորները, որ կուռում են առիւծների պէս,  
մեզի բարոյական իրաւունք պիտի տան՝ պահանջելու  
Վեհաժողովից<sup>39</sup> այն ինչ որ պէտք է պահանջենք:

\*  
\*\*

Ցաւ են պատճառում տեղւոյդ դէպքերը, որոնց մա-  
սին կարդացի քիչ առաջ «Հայրենիքի» մէջ: Բալկաննե-  
րու մէջ եւս լսեցի աններդաշնակ, պառակտիչ ձայներ:  
Կովկաս էլ լսում են նրանք. անդարմանելի ցեղական  
արատ. այս հանդիսաւոր պատմական վայրկեանին ան-  
գամ չեն լուռւմ այդ վատ ձայները: Բարեբախտաբար  
քչուոր են նրանք եւ կը խեղդուին ընդհանուր խանդա-  
վառութեան յորձանքի մէջ: Տեսաք արդէն, թէ ինչպէս  
պատժուեց Մշակի համբաւաւոր խմբագիրը:

Թող Ամերիկայի չէզոքները չզրկեն իրենց փարանե-  
րը: Թող ամբողջ Անգլիոյ Հայ մեծահարուստ գաղութը  
ընդամէնը 200 ոսկի նուիրաբերէ ազգային գործին: Բա-  
րեբախտաբար Կովկասի, Ռուսաստանի մեր ունեւոր  
դասակարգը մի չտեսնուած առատաձեռնութեամբ  
սնուցանում է Ազգային Բիւրոյի, կամաւորների, գաղ-  
թականների ու Կարմիր խաչի դրամարկղները:

Ողբայլի կը լինէր, եթէ մեր գործի ընթացքը կախ-  
ւած լինէր արտասահմանեան գձուձ ու եսապաշտ Կրե-  
սոսներից:

\*  
\*\*

Կացութիւնը երկրի մէջ կը սկսի ալեկոծուիլ: Մեր  
վերջին սուրհանդակը (Վիշապէն Սոփիա եկաւ ընկ-  
ւեռնեանը<sup>40</sup>, որին զրկել էին յատկապէս ինձ լուրեր հա-  
ղորդելու համար) – այդ սուրհանդակը յուզիչ լուրեր  
կը բերէ... մասնաւորապէս Շամի<sup>41</sup> կողմերէն: Կառա-  
վարութիւնը հայերու գոյքը յափշտակելէ ետք, սկսած  
է այժմ եռանդով գինաթափ ընել: Բայց մեր երիտասար-  
դութիւնը չի ուզում յանձնել գէնքերը եւ չի էլ թողնի,  
որ գինաթափ անեն ժողովուրդը: Չէթաներ (հայդու-  
կային) խմբեր) կազմել են եւ լեռներն անցել:

Այսօր, կ'ըսէ սուրհանդակը, գրեթէ ամբողջ Շամի  
չըջանը ապստամբական վիճակի մէջ է. տեղի են ունեցել  
արիւնալի ընդհարումներ. կան տասնեակ գոհեր երկու  
կողմերէն:

Կացութիւնը վտանգաւոր է, բայց յոյս կայ, որ մեծ  
ջարդեր չեն լինի այս անգամ: Արդէն թշնամին ալ թե-  
րեւս ի վիճակի չէ ջարդի մեծ ծրագիրներ իրականացնե-  
լու:

Այժմ համաշխարհային ուշադրութեան կենտրոնը  
Դարդանէն է ու Պոլիսը: Շուտով, գուցէ մէկ ամսէն  
կ'առնեն այն թուրքերու ձեռքէն եւ կը դարձնեն (այդ-  
պէս կ'երեւի) միջազգային քաղաք: Հարկ չեմ տեսներ  
չեչտելու, թէ ինչ նոր հորիզոններ պիտի բացուին մօտ  
300.000 հայութեան առջեւ (Պոլսոյ եւ շրջակայքի)...

Կ'ապրինք եւ կը տեսնենք:

Ընկերական բարեւներով՝  
Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

Յ.Գ.- «Հայրենիքի» վերջին թուերից մէկուն մէջ կար-  
դացի, թէ ժողովուրդ գումարի մի մասը պիտի գործա-  
դրուի երկրի մէջ ապստամբական ձեռնարկներու հա-  
մար:

Այսպիսի բաներ միթէ՞ կարելի է տպագրել:

– Խմբագրութեանը ողջ-առողջ են: Վարդանը<sup>42</sup> անցել է  
2000-ով (ամենամեծ գունդը):

– Ակնունի, Խաթակ<sup>29</sup> եւայլն տակաւին կը մնան Պ[ո-  
լիս] – իբրեւ «պատանդ»:

39.- Խօսքը կը վերաբերի պատերազմի աւարտին կազմուելիք  
յաղթական պետութիւններու Վեհաժողովին:

40.- Վիշապը Պոլիսն է, Լեռնեանը՝ Նազարեանց Լիպարիտը,  
որ Գերման-հայկական ընկերութեան կողմէ որկուած էր Կ. Պոլիս,  
հոն տիրող կացութեան մասին վերահասու ըլլալու:

41.- Շամի – Վանի:

42.- Վարդանը՝ Խանասորի Վարդանն է, այժմ կամաւորական  
գունդի հրամանատար. բուն անունով՝ Մեհրաբեան Սարգիս:







## Կ Ա Չ Մ Ա Կ Ե Ր Պ Ա Կ Ա Ն Շ Ր Չ Ա Ն Ն Ե Ր

### Գ Լ ՈՒԽ IX – XIV

Կազմակերպական շրջաններու 1914-15 տարիներու գործունեութեան յատկացուած այս բաժինը, հասկնալի պատճառներով, կը ներկայանայ ոչ ամբողջական պատկերով, իբրև հետեւանք արխիւային նիւթերու զգալի մէկ մասին փճացումին: Թղթածրարներէն կը պակսին բազմաթիւ կարեւոր փաստաթուղթեր, մինչդեռ ծանօթ ենք որ կուսակցական գրեթէ բոլոր միաւորները, որպէս նախապատրաստութիւն Հ.Յ.Դ. Ութերորդ Ընդհ. ժողովին, 1914 թ.ի առաջին կէսին ունեցած են իրենց շրջանային ժողովները, ատենագրութիւն պահած, պատգամաւոր ընտրած եւ տեղեկագիր ներկայացուցած կուսակցութեան գերագոյն ժողովին: Ցաւալի է որ յատկանշական քիչ բան մնացած է՝ կուսակցական արդիւնաւոր գործունեութեամբ ծանօթ շատ մը շրջաններէ, ինչպիսիք էին Վասպուրականը, Տարօնը, Կարնոյ աշխարհը, Սեբաստիան, Կիլիկիան եւ միւսները: Ինչ որ հասած է – կեղքոնական մարմիններու հետ փոխանակուած նամակ, շրջաբերական եւայլն – տրուած է «ՆԻԻԹԵՐ»ու ներկայ հատորի տարբեր գլուխներուն տակ:

Նոյնն է պատկերը Կովկասի համար. հոս Դաշնակցութիւնը վերակազմութեան հանգրուանի մէջ ըլլալով հանդերձ, կլանուած էր համազգային տարողութիւն ստացած կամաւորական գործով: Այս մասին եւս գոյութիւն ունեցող նիւթերը թէն ոչ արհամարհելի, բայց եւ այնպէս ամբողջական չեն, կուսակցական արխիւին մէկ մեծ մասին Հայաստան ձգուած ըլլալուն պատճառաւ, մինչ կազմակերպութեան ներքին գործունեութեան վերաբերող յատկանշական քիչ բան մնացած է:

Այլ է պարագան արտասահմանի, յատկապէս Պալքաններու եւ Ամերիկայի, որոնց թղթածրարները կը յորդին ժամանակի հայ կեանքը յուզող հարցերով. կուսակցական գործունեութիւնը այս գօտիներուն մէջ կեղքոնացած է՝ դժնդակ պայմաններու մէջ տուայտող արեւմտահայութեան դրամական օգնութիւն հասցնելու, ինչպէս նաեւ Կովկասի կամաւորական շարժման սատարելու խնդիրներուն շուրջ:



## ԳԼՈՒԽ IX

### **Հ.Յ.Դ. ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ**

1.- Մինչև 1912 թուականը Պարսկաստանը, ուր Հ. Յ. Դաշնակցությունը իր հիմնադրության առաջին օրին կազմակերպական լայն և ուժեղ ցանց ստեղծած էր, կը ղեկավարուէր Թարիզ հաստատուած Վրէժատանի Կեդր. կոմիտէութեամբ: Այս տարիներուն շուրջ 70.000 հաշուող իրանահայութեան մեծագոյն մասը եւս կը բնակէր երկրին հիւսիսը, Ատրպատականի մէջ: Սահմանադրական շարժումներու օրերուն, մայրաքաղաքին ստացած քաղաքական կարեւորութեան հետեւանքով, ստեղծուեցաւ Իրանի երկրորդ Թեհրանի Կ. կոմիտէութիւնը, որուն իրաւասութեան ներքեւ դրուեցան երկրի կեդրոնն ու հարաւային մարզերը, ապա նաեւ Կասպից ծովու ափերուն գտնուող «Գիլան»ի շրջանը, Ղազուին, Ռաշտ, Էնզելի եւ այլ քաղաքներով: Այսպիսով Վրէժատանի կազմակերպութեան կը մնար բուն Ատրպատական նահանգը, յարակից Մալմաստի, Մակուի եւ Խոյի պատմական գաւառներով:

2.- Պարսկաստանի սահմանադրական կռիւներու ընթացքին, Իրանի հիւսիսային գօտին ռուս զինուորական գրաման ենթարկուելով, Ատրպատականի մէջ հաստատուեցան բռնատիրական կարգեր. խիստ հալածանքներ գործուեցան սահմանադրական ուժերուն դէմ. խափանուեցաւ նաեւ Դաշնակցութեան գործունէութիւնը, հակառակ անոր որ վերջինս խուսափած էր հակառուս ամէն գործողութենէ: Հետեւաբար 1911 թ.ի վերջերէն շրջանին մէջ առժամապէս դադար առած էր կուսակցութեան գործունէութիւնը: Աչքի զարնող դէմքեր եւ գործիչներ հեռացած էին երկրէն, իսկ մնացողները կը ջանային կանգուն պահել ազգային եւ հասարակական հաստատութիւնները, եւ գործել անոնց միջոցաւ:

Ատրպատականի մէջ պարզուած այդ կացութեան մասին կը խօսի Վրէժի Կեդր. կոմիտէի 1913-14ի միամտայ գործունէութեան տեղեկագիրը, սահմանուած Հ.Յ.Դ. Ուրբերող Ընդհ. ժողովին: Տեղեկագրին բնօրինակը կորսուած է. քաղած ենք զայն Կ. կոմիտէի 558ա համարը կրող «պատճեններու մատեան»էն:

3.- Ատրպատականէն շատ չէր տարբերեր երկրի կեդրոնին եւ միւս շրջաններուն տիրող կացութիւնը: Ճիշդ է որ հիւսիսի մէջ գործուող բռնութիւններն ու ճնշումները նոյն բրտութեամբ չէին արտայայտուէր հոս, բայց կառավարութիւնն ու խորհրդարանը դարձած էին խաղալիք «հովանաւորող» պետութիւններուն՝ Ռուսիոյ եւ Մեծն Բրիտանիոյ ձեռքը: Իրանը դարձեալ թատերաբեմ էր ներքին պառակտումներու, որոնք երկիրը կը մխրճէին խոր յետամնացութեան եւ անկարգութիւններու զիրկը: Փաստօրէն ապարդիւն անցած էին նախորդող տարիներուն՝ Պարսկաստանը ժողովրդավար եւ սահմանադրական կարգերով օժտելու ուղղութեամբ թափուած ջանքերն ու արիւնը: Այս պայմաններուն մէջ Դաշնակցութիւնը, իր կարգին հիասթափ, պիտի դադրէր թիկունք կանգնել այնպիսի իշխանութիւններու, որոնք գրկուած էին հեղինակութենէ եւ կը գործէին օտար պետութիւններու շահախնդիր թելադրութիւններուն ենթարկուելով: Դաշնակցութեան այս ձեռնթափութիւնը հիմնաւորեալ կերպով կ'արտայայտէ արդարեւ, 1914 տարուան խորհրդարանական ընտրութիւններու առթիւ Թեհրանի Կ. կոմիտէին հանած շրջաբերականը, որմով Իրանի ժողովուրդին եւ պետութեան այս անմխիթար վիճակը բուն կերպով ձաղկելէ ետք, կուսակցութեան անունով պոչքոթ կը յայտարարուի Մէջիսի ընտրութիւններուն դէմ (Տես «Մէջիսը եւ մենք», էջ 284-5):

4.- Շահստան-Թեհրանի թղթածրարը ամբողջական պատկեր չի ներկայացներ. կայ ամփոփ մէկ արձանագրութիւնը Թեհրանի կոմիտէի պատգամատրական ժողովին, բայց գոյութիւն չունի Կեդր. կոմիտէի տեղեկագիրը, մինչդեռ յանձին Յովհաննիսեան Յովսէփի (Ֆիլիպ) շրջանը պատգամատր ընտրած էր Հ.Յ.Դ. Ընդհ. ժողովին համար: Միւս կողմէ «Գիլան» ենթաշրջանը ատելի բախտատու է եւ թղթածրարին մէջ յարաբերաբար ընդարձակ տեղ կը գրաւէ իր տեղեկագրով եւ շրջանային ժողովի արձանագրութեամբ:



Ա.– ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՍԻՏԵՆՈՒԹԻՒՆ

Պատճեններու մատեան 558ա - էջ 382-395

Ա.– ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՍԻՏԵՆ

1913 ՅՈՒԼԻՍ-1914 ՅՈՒԼԻՍ, ՎՐԷԺ

Ընկերներ !

Շատ քիչ բան կայ ասելու մեր շրջանի մասին: Մի քանի տարի առաջ մեծ ակնկալութիւններով ասպարէզ եկանք մեռնող Իրանի վերածննդեան պայքարի մէջ եւ մինչեւ իսկ ամենահեռաւոր վայրերի մեր ընկերները իրենց նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը չխնայեցին այդ ազատական կռուում, սակայն մի քանի տարի յետոյ դէպքերի մի ձախող դասաւորութեամբ միանգամից կորցրինք ամէն ինչ: Այն բոլորը ինչ հաւաքուած ու կերպարանաւորուած էր բազմաթիւ ընկերների անդուլ ջանքերով եւ այն բոլորը ինչ որ ստեղծուած էր մեր ընկերների կեանքերովն ու արիւնովը, այդ բոլորը ունակցիայի խարազանի ոչնչացնող հարուածների տակ մեռան ու չքացան:

Երկու եւ կէս տարի է անցել այդ օրից եւ այդ ժամանակի ընթացքում մեր շրջանի քաղաքական պայմանների մէջ ոչ մի փոփոխութիւն չէ եղել: Գնալով աւելի եւ աւելի պարզուում է մեզ համար, որ մեր շրջանը կորած է քաղաքականապէս: Այս քողարկուած կորսուած վիճակը աւելի եւս վատ դրութիւն է ստեղծում երկրի մէջ՝ ամէնուրեք իշխել տալով սրա ու նրա սանձարձակ կամայականութիւնները, որից տուժում է կազմակերպութիւնը եւ ոչնչացնում վերակազմուելու ամէն կարգի հնարաւորութիւն:

Կտրուած լինելով բուն Պարսկաստանից, կտրուած ենք եւ նորա քաղաքական կեանքից: Ուրեմն այդ հողի վրայ մեր մասսայի մէջ հետաքրքրութիւն առաջ բերելը միանգամայն ի գուր է, եւ նոյնիսկ բռնագթօսիկ: Բաւական է այստեղ յիշել Մէջլիսի ընտրութիւնները. մեր շրջանի ինքնիշխան «նահանգապետը», որը ամէն ինչ է բացի նահանգապետ լինելուց, արգիլեց ընտրութիւնները մեր շրջանում: Թէ մենք եւ թէ մեր շրջանի ընկերների մեծամասնութեան կարծիքը այն էր, որ պէտք է մասնակցիլ ընտրութիւններին գերադասելով ամենայնօրէն մէջլիսը ներկայ անարխիայից<sup>1</sup>, միւս կողմից ի

նկատի ունենալով, որ Պարսկաստանի շատ մասերում տիրող արտակենտրոն ձգտումները չափաւորել, կապել իրար հետ կարող է աւելի շուտ Մէջլիսը՝ քան թէ ներկայ կառավարութիւնը, որի կատարեալ ապիկարութիւնը ամէն քայլափոխում երեւան է գալիս: Դեռ չենք ասում այն մասին, որ դա մի լաւ առիթ էր մեր ցրուած ուժերը համախմբելու, մեր շրջապատում տիրող անշարժութիւնը վրդովելու, ընդհանրապէս անելու այն ինչ որ մեր մօտ «գործ» է կոչուում եւ մղուում է լքուած ու յուսահատուած ընկերներին իրար մօտենալու: Միւս կողմից մենք շատ լաւ գիտենք, որ մեր բոյկոտը երբեք որեւէ անհանգստութիւն չպիտի պատճառէր կառավարութեան, որովհետեւ նրա համար շատ ցանկալի է որ հայ տարրը հեռու լինի քաղաքական կազմից եւ մենք բոյկոտի ենթարկելով Մէջլիսը նրանց սրտի ուզածն ենք կատարած լինում, ուրիշ ոչինչ: Բայց ինչքան էլ մենք կողմնակից էինք մասնակցութեան, այնուամենայնիւ որեւէ գործնական արժէք չունեցաւ այդ, քանի որ ողջ Ատրպատականը արգելքի տակ դրուեց նրա տէր ու տիրական Շուջայը-Դոպլէի<sup>2</sup> կողմից:

Տնտեսական միութիւններ ստեղծելը նոյնպէս խոչընդոտների է հանդիպում. նախ քաղաքական ռեժիմը, որ ամէն մի համախմբման, թէկուզ ամենամեղ նպատակներով, կասկածի եւ կամայականութեան է ենթակայ օրէնքների կատարեալ բացակայութեան շնորհիւ. նշանադրութեան հանդէսը համարուում է «ժողով», իսկ նշանադրող երիտասարդը քաղաքական յանցաւոր: Դրպարոցի յայտարարութիւնը տպող գրաշարանոցատէրը, որպէս գաղտնի տպարանի տէր աքսորուում է երկրի սահմաններից: Գործակալական ժողովը նկատուում է վնասակար երկրի շահերին եւ արգելքների հանդիպում: Օր օրի վրայ յայտարարութիւններ է որ իրար յետեւից լոյս է տեսնում, մասնաժողովները արգելուում են, եղած դէպքում ժողովատունը պիտի կործանուի, իսկ մասնակիցները խիստ պատժի կ'ենթարկուին: Եւ սոցա բոլորը առանց հետեւանքների չէ անցնում: Մօտիկ անցեալի սարսափների յիշողութիւններով տարուած մասսայի համար այսքանն էլ բաւական է սարսափի մէջ մնալու համար: Սրանց վրայ էլ եթէ աւելացնելու լինենք անտեղի խուզարկութիւններն ու հին ռեժիմի պատժական ու

1.- Անիշխանութիւնից:  
2.- Շուջա-էդ-Դոպլէ – Պարսկաստանի գահընկէց Շահ Մեհմեդ Ալիի կրտսեր եղբայրը, վերու յիշուած Ատրպատականի ինքնիշխան նահանգապետը:





ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

բանտային խայտառակ սիստեմի վերականգնումը, կարծում ենք, գոնե ընդհանուր գծերով, յիշած կը լինենք մեր քաղաքական կացութիւնը:

Գուցէ այս բոլորը մի այլ երկրում առիթ կարող էին ծառայել ժողովրդական ղեկավարութեանց ու գայրոյթի պոռթկումներին: Գուցէ այս վիճակը ղեկավարներին կը համախմբէր, իրար հետ կը կապէր, բայց մեզ մօտ այս ակնկալութիւնները աւերող են այն պարզ պատճառով, որ տիրող թուրք տարրը<sup>3</sup> համբերող է աներեւակայելի չափով, իսկ հայերը այնպիսի չնչին փոքրամասնութիւն են կազմում եւ այն էլ այդպէս ցրուած ողջ երկրում, որ ինքնուրոյն քաղաքականութիւն վարելը երազել անգամ անհնարին է:

Սկզբից ի վեր մեր տեղական կազմակերպութիւնը գործունէութեան երկու տեսակ հող է ունեցել իր ոտների տակ. տաճկահայ հարցն էր, ապա՝ տեղական գործունէութիւնը: Թէ առաջինը եւ թէ վերջինը, այժմ արդէն երբ նախկին վիճակը փոխուել է եւ մեզ մնում էր մեր գործունէութիւնը սահմանափակել տեղական տնտեսական պայքարով ու կուլտուրական հարցերով, այդ էլ թէ վերոյիշեալ քաղաքական պայմաններին եւ թէ մասնաւորապէս մեր տնտեսական ու կուլտուրական յետամնացութեան շնորհիւ՝ ուժեղ կերպով չեն շեշտում կազմակերպութեան գոյութեան անհրաժեշտութիւնը. այդ պատճառով էլ անհնարին է լինում բոլոր դաշնակցականներին, որոնց թիւը քիչ է մեր շրջանում, ի մի հաւաքել եւ նախկին կուռ կազմակերպութիւնը ստեղծել:

Այս բոլոր աննպաստ պայմանները, սակայն, մեզ չեն վհատեցնում, որովհետեւ մենք հաւատացած ենք, որ շատ չի քաշի եւ մեր քաղաքական վիճակը կը պարզուի միւս կողմից էլ երկրի տնտեսական զարգացումը արագ թափ է առել: Վերջին ամիսներում մի ոգեւորող հոսանք առաջ է եկել մեր երկսեռ փոքրաթիւ ինտելիգենցիայի մէջ. նրանք արդէն համախմբուած են Վրէժում: Նոյնպիսի շարժում հնարաւոր է ստեղծել եւ գաւառում, ինչպէս հաղորդում են մեզ այնտեղի անհատ ընկերները, եւ այդպիսով կը կազմուի մօտիկ ապագայում կորիզը այն կազմակերպութեան, որը ներկայիս այնքան աննախանձելի է այժմ: Չմոռանանք յիշատակել, որ գլխաւորապէս մեր ընկերների ջանքերով հիմնուած է Վրէժի «Գործակատարաց միութիւնը», որի մեծամասնութիւնը դաշնակցականներ են, սակայն քաղաքական հանգամանքների շնորհիւ յայտարարուած է «անկուսակցական»:

Այս շարժմանը քիչ է սատարել մեր այժմեան թերթը

«Ղարադաղը»: «Առաւօտի» փակուելուց ի վեր մենք միշտ էլ կարիք ենք զգացել մի թերթի որը կարողանար մեր շրջանի ցրուած ուժերը կապել իրար, որ սակայն մեր միջավայրում դժուար էր .....<sup>4</sup> անկարելի նորանուն թերթ լոյս ընծայել. օգտուելով առիթից, վերոյիշեալ ..... թերթը յաջողէինք ..... բերել, երբ նիւթական վատ ..... փակուելու վտանգին .....: Փոքրաթիւ ընկերների ցոյց տուած նիւթական եւ բարոյական աջակցութիւնը հնարաւորութիւն տուեց վերականգնել ..... թերթը ..... վիճակին: Թերթը այժմ .....

Չնայած մեր կազմալուծուած վիճակին, այնուամենայնիւ թէ գաւառներում եւ թէ քաղաք գտնուող ազգաբնակչութեան լաւագոյն մասին համակրանքը կուսակցութեան կողմն է: Դրան ապացոյց կարող է լինել թերեւս այն իրողութիւնը, որ ազգային կուլտուրական հաստատութեանց խնդրում, առանց որեւէ ջանքի եւ շատ անգամ հակառակ մեր ցանկութեան մեզ է վստահում դեկավարողի դերը յանձնել եւ այսօր չկայ մի հաստատութիւն որտեղ մեր ընկերները մեծամասնութիւն կազմելիս չլինեն:

Այս տարուայ ընթացքում վերոյիշեալներին դուրս մեր գործունէութիւնը սահմանափակուել է մեր շրջանի ապրանքների<sup>5</sup> պահպանութեամբ եւ ապահովութեամբ:

Մեզ մօտ եղած քաղաքական յետաշրջումը այնքան արագ ու անակնկալ կերպով տեղի ունեցաւ, որ անհնարին էր մեզ համար ամէն ինչ միանգամից ուղղել, կարգի դնել: Մի քանի օրուայ ընթացքում մեր ամբողջ շրջանում բոլոր կարեւոր ու գործիչ ընկերները ստիպուած եղան հեռանալ ամէն ինչ ձգելով անփորձ ու մասամբ էլ անվստահելի անհատների վրայ: Մինչեւ իսկ կենտրոնում, մեր անմիջական խնամքի տակ հնարաւոր չեղաւ ապրանքների անկորուստ հաւաքումն ու ապահովումը, ուր մնաց շրջաններում, որտեղ կատարեալ անտիրութիւն էր թագաւորում եւ ամէն ոք աշխատում էր իրենից ռատ անել<sup>6</sup> վտանգաւոր ապրանքը կամ թէ չէ շահագործել այն յօգուտ իր գրպանի: Եղաւ ժամանակ երբ մարմնի 3-4 անդամից ոչ ոք չէր գտնուում որեւէ յանձնարարութեան համար: Շնորհիւ այս հանգամանքի էր որ մեզ չյաջողուեց բոլորովին անկորուստ պահել մեր ապրանքները: Հագիւ միայն այս տարուայ ընթացքում հնարաւորութիւն ունեցանք գաւառներում գործը կարգի դնել եւ փրկել ապրանքը նորանոր կորուստներից: Ամէնից աւելի աչքի ընկնող կորուստը ընկ. Արամայիսի մօտ գտնուող ամբարի կորուստն էր, որը մինչեւ այժմ էլ չկարողացանք հասկանալ թէ ինչպէս է տեղի ունեցել: Մեր այդ ընկերը երկար ժամանակ եղել է Մինարէթի<sup>7</sup> կոմիտէի<sup>7</sup> անդամ եւ իր նիւթական ու բարոյական օժանդակութիւնը երբեք չի խնայել տեղական կազմակերպութեան համար, բայց յանկարծ

3.- Թուրք տարրը – պէտք է հասկնալ Ատրպատականի թուրքերը:  
4.- Բազմակէտով նշանակուած են այն բաները, որոնք անընթեռնելի են կրկնօրինակի վատ պատճճահանումի հետեւանքով:  
5.- Իմա՝ զինապահեստի:  
6.- Հեռացնել, վանել:  
7.- Միմարէթ – կուս. ծածկանուն Սալմաստի:







նրա մօտ գտնուող ամբարից պակասում են 6 հատ N° 10 եւ մի քանի հազար N° 19<sup>8</sup>: Հետաքրքրուելով գտնուում է որ ինչ որ թուրքի միջոցով ծախուած են դրանք՝ թուրքը խոստովանում է իրեն յանձնուած է դրանք՝ վարուելու ըստ իր հայեցողութեան եւ ինքն էլ յարմար է գտել ծախել: Արամայիսը, որ հեռացել էր արդէն Մինարէթից, ասում է, որ այդ իր համար անակնկալ է, որ ինքը երբեք այդ նպատակով ապրանք չի տուել ուրիշի եւայլն: Այսպէս թէ այնպէս միջնաէջ այժմ էլ մեզ համար պարզ չէ թէ ինչպէս է տեղի ունեցել այդ տգեղ ու դատապարտելի առուծախը: Մենք անմիջապէս Արամայիսից ստանում ենք կորուստի արժէքները մեր գնահատած գներով: Այժմ հարց է առաջ գալիս — «Ինչպէս վարուել այդ ընկերոջ» հետ: Մենք ի նկատի ունենալով այդ «ընկերոջ» թոյլ բնաւորութիւնը, նաեւ այն որ այդ տեղի է ունեցել նրա բացակայութեան ժամանակ երբ նա Ռուսաստանումն էր գտնուում, որ նրա նիւթական ապահով դրութիւնը չի կարող թոյլ տալ, որ մի քանի հարիւր թումանի համար այդպիսի տգեղ արարմունք տեղի ունենայ, նրա անսահման հաւատքը դէպի մարդիկ թերեւս առիթ տուած լինեն այդ վատնումին՝ հակառակ իրեն կամքին, որոշել ենք արժէքները գանձել (արդէն գանձուած է) եւ իրեն էլ չէզոքացնել մեր շարքերից: Մինարէթի ընկերները պահանջում են, որ այդ մասին յայտարարուի նաեւ «Դրօշակում», իսկ թէ ի՞նչ որոշում կը տաք դուք ընդհանրապէս այսպիսի խնդիրների նկատմամբ եւ մասնաւորապէս Արամայիսի, այդ մենք չգիտենք: Մեզ համար ընդհանուր վերաբերմունքի խնդիրն էլ նշանակուած լինի ունի, որովհետեւ կան մի շարք մանր մոնր վատնումի դէպքեր եւս, որոնց նկատմամբ ոչինչ չէ արուած անձնաւորութեանց մեր շրջանից բացակայ լինելու պատճառով:

Գալով ապրանքների սրանից յետոյ ունեցած դրութեան խնդրին կ'ասենք, որ թէպէտ այժմ արդէն ոչ մի արտաքին վտանգ չի սպառնում դրանց, սակայն կայ մի վտանգ որը պակաս վնասակար չէ. այդ փշանալու վտանգն է: Ընդհանրապէս այսպիսի ուժերով եւ այլիսի պայմաններում ապրանք անվնաս պահել անկարելի է: Դրա համար էլ մենք առաջարկում ենք մեզ համար անհրաժեշտ քանակութիւնը պահելուց յետոյ, մնացածը փոխադրել այնտեղ ուր պէտք է: Մեզ մօտ դժուար թէ այդպիսի քանակի պէտք ունենանք այժմ կամ սրանից յետոյ էլ: Բայց որովհետեւ, ինչպէս փորձը ցոյց տուեց, փոխադրութիւնները նախկին յաջողութեամբ եւ խնամքով չի կատարուում, որի պատճառով 80-90%ի կորուստի ենք մատնում ապրանքը, ուստի մենք աւելի գործնական ենք գտնում ծախել այն եւ գոյացած գումարը, որպէս զիջողական գումար պահել որեւէ դրամատան մէջ անձեռնմխելի: Այսպէս թէ այնպէս, խնդրում ենք

այս առթիւ մի արմատական միջոց ձեռք առնել եւ յայտնել մեզ, որպէսզի մեր անելիքը իմանանք:

Երկրորդ՝ «Խարխա» արհեստանոցի խնդիրն է, որը արեւելեան հարցից աւելի կնճռոտ ու ձգձգման ենթակայ մի հարց դարձաւ մեզ համար: Վերջին 5-6 տարում այդ արհեստանոցը անբարեխիղճ արհեստաւոր ընկերների եւ այս ու այն կողմ քաշքշելուց օր օրի վրայ փշանում, պակասում եւ անպէտքանում է: Քանի-քանի անգամներ մենք յայտնել ենք, որ դրա պէտքը չունենք մեր շրջանում եւ ամէն անգամ էլ պատուիրել էք պահել տեսնենք ինչ կը լինի: Մենք էլ պահում ենք եւ տեսնում թէ ինչ է լինում, — այն է լինում, որ գետի մէջ ընկած շաքարի բեռան նման օր օրի լուծւում է, քայքայւում: Մեզնից եւ ոչ մէկը այդ գործիքներից բան չի հասկանում, որ անհրաժեշտ հսկողութիւնը եւ խնամքը տանել կարողանար: Խնդրում ենք մի արմատական միջոց էլ այս առթիւ առաջարկեցէք, — այն է՝ կամ շուտափոյթ փոխադրել ուր որ պէտք է կամ ծախել: Հակառակ պարագային մենք ստիպուած ենք մինչեւ անարժէքութեան աստիճանի փշանալու յանցանքը կիսել ձեր եւ մեր մէջ, թէպէտ սրանով էլ խիղճը հանգստացնել չի կարելի:

Գալով մեր նիւթական հաշիւների խնդրին, այդ կողմից է որ շատ թեթեւ ենք: Չունենալով կազմակերպուած շրջան՝ եւ ոչ մի սանտիմ էլ եկամուտ չենք ունեցել: Մեր մուտքերը եղել են ծախուած եւ վատնուած գէնքերից ստացուած գումարները, որոնց ելքը եւ մուտքը մինչեւ Յունիս վերջը՝ հետեւեալ պարզ պատկերն է ներկայացնում: Մուտք՝ 6500 դրան, որից պարտք է վճարուած 2450 դրան Մինարէթում ապրանքների փոխադրութեան, տեղաւորութեան եւայլն ծախսուել է (ըստ նրանց հաշուեցողակի) 1050 դրան, իսկ Վրէժում՝ 1471,65. գումարը՝ 4971,65. ուրեմն առ մէկն Յուլիսի մնում է 1528,35 դրան: Սա մեր մի տարուայ ելքն ու մուտքն է՝ անկախ մեր անցեալ տարուայ [ընդհանուր] ժողովին] ներկայացրած հաշուեկշռից, որտեղ շատ շրջանների հաշիւները փակուած չեն, շնորհիւ այն հանգամանքի, որ այդտեղերից հաշիւները չստացանք, գործիչ ընկերները թողել հեռացել էին քաղաքական հալածանքների պատճառով:

Ինչպէս անցեալ ժողովին, այս անգամ էլ մենք առաջարկում ենք՝ ուղարկել մի լիազօր ընկեր ստանձնելու մեր դրամական ու ապրանքային հաշիւներու ամբողջ գործերը եւ վերջ դնելու այս անուանական Կ. կոմիտէութեանը մինչեւ որ ժամանակի ընթացքում հնարաւոր լինի կազմակերպել շրջանը: Մի ազատ գործչի կարիքը անխուսափելի է: Իսկ եթէ մեր առաջարկած միջոցները՝ ապրանքների նկատմամբ կ'ընդունուի, այն ժամանակ կարիք կը լինի կարճ ժամանակով մի ազատ մարդ ուղարկելու մեր շրջանը, գործին աւելի լաւ ընթացք տալու համար:

Ընկերական բարեկենդիկ՝  
ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

[Կարմիր կնիք]

8.- N° 10-ը պէտքէ իմանալ հրացան, N° 19-ը՝ փամփուշտ:







**ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

**Հ.Յ.Դ. Ա[ՏՐՊԱՏԱԿԱՆԻ] Կ[ԵՆՏՐՈՆԱԿԱՆ] Կ[ՈՍԻՏԵԻ]  
ԱՊՐԱՆԱՑ ԸՆԴՀ. ՊԱՏԿԵՐԸ**

N° 10 [զէնք]		N° 1* [փամփուշտ]	
Վրէժում <sup>9</sup>	67	վրէժ	39350
Մինար[էթում] <sup>7</sup>	69	Մին[արէթ]	52850
Փար[նսում] <sup>10</sup>	22	Փար[նս]	4450
Թերի եւ փչացած Գումար	31 189	Գումար	16200 112850

N° 20		N° 2	
Վրէժ	9	Վրէժ	11250
Մինարէթ	23	Մինարէթ	4800
Փարոս	11	Փարոս	200
Թերի եւ փչացած Գումար	1 44	թերի եւ փչացած Գումար	– 16250

N° 40		N° 62	
Վրէժ	2	Վրէժ	750
Մինարէթ	3	Մինարէթ	300
Գումար	5	Գումար	1050

Չանագան N° N°		Չանագան N° N°	
Վրէժ	6	Վրէժ	1200
Մինարէթ	4	Մինարէթ	370
Փարոս	–	Փարոս	380
Գումար	10	Գումար	2650

9.- Վրէժ – Թարիզ քաղաքի կուս. ծածկանունը:  
10.- Փարոս – Ուրմիա քաղաքի կուս. ծածկանունը:







**Բ.- ՇԱՀՍՏԱՆ – ԹԵՀՐԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ**

Փաստ. 594-5

**Բ 1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. «ԳԻԼԱՆ» ԿՈՄԻՏԵԻ<sup>11</sup>**

**ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԵԱՆ**

1910 թ. Դեկտեմբեր 3-ից մինչև 1913 թ. Դեկտեմբեր եւ 20 Մարտ 1914

1910 թ. Նոյեմբեր 21-ին «Գիլանի» IV-րդ Շրջանային ժողովից ընտրուած հինգ հոգուց նորընտիր մարմինը – Դիանա, Վրձին<sup>12</sup>, Սաքօ, Պոնտացի եւ էլէքտրի – Դեկտեմբեր 3-ին ունեցել է իր I-ին ժողովը եւ անցել է նոր գործունէութեան, այդ մասին յայտարարելով իր շրջանի մարմիններին իր անդրանիկ շրջաբերականով:

1911 թ. Ապրիլին, ընկ. էլէքտրը, Մայիսին՝ Դիանան քաղաքից հեռանալուն պատճառով հրաժարուեցին: Յունիսին կազմը լրացնելու համար հրաւիրուած են ընկ. Պետրոս եւ Խէչոն: Շատ անգամ է պատահել, որ կազմին անդամներից բացակայել են քաղաքից մի քանի ամիսներով եւ եղել է ժամանակ երբ քաղաքում մնացել են երկու հոգի կազմի անդամներից: 1912 թ. Սեպտեմբեր-կազմի մէջ է հրաւիրուած ընկ. Սէյրանը, ընկ. Խէչոյի բանտարկուած շնորհիւ բացակայելու պատճառով:

Երեք տարի է անցել ընտրութեան օրից եւ այդ 3 տարուայ ընթացքում թէ քաղաքական վայրիվերումների ժամանակ եւ թէ ընկերների յաճախ բացակայութեան պատճառով մարմինն որքան է կարողացել կատարել իր վրայ դրած պարտականութիւնները եւ յոյսերը, այդ ցոյց կը տայ տեղեկագրիս մէջ առաջ բերուած կրճատ եւ ճշգրիտ պատկերը գործունէութեան:

Բացի ծրագրով եւ կանոնագրերով նախատեսուած պարտականութիւններից, բացի IV-րդ Շրջ. ժողովից ընդունուած որոշումներից, Մարմինս պէտք է քաղաքական վայրիվերումների ժամանակ աչալուրջ լինէր, համապատասխան միջոցներ ձեռնարկէր: Յայտնի է թէ ինչ անակնկալ քաղաքական դէպքեր տեղի ունեցան այս 2 տարուայ ընթացքում, որոնց շնորհիւ ինչ ինչ ծանր կացութիւն ստեղծուեց կազմակերպութեանս համար, մանաւանդ վերջին դէպքերը, որը ոչ մենակ մեր շրջանում ուժեղ ունեցիւ առաջ բերեց:

Երեք տարուայ գործունէութիւնը աւելի լաւ պատկերացնելու համար կարիք ենք զգում բաժանել 4 շրջանի. 1) ընտրութիւնից մինչեւ ex-Շահի մուտքը Պարս-

կաստան. 2) ex-Շահը Պարսկաստանում. 3) Ռուսական դէպքերը եւ ուժեղ ունեցիւն եւ 4) ներկան:

Թէ ինչ միջավայրում է գործել եւ գործում «Գիլան» կոմիտէն, աւելի պարզ լինելու համար եւ թէ ապագայի վերաբերմամբ էլ – ինչ չափով յոյս կարելի է տածել, աւելորդ չենք համարում նախ քան գործունէութեան անցնելը ծանօթացնել այս շրջանի հայ ազգաբնակչութեան մասին համառօտ տեղեկութիւններ, նոյնպէս ենթակոմիտէների, խմբերի եւ անդամների քանակը եւ որակը:

Հայ ազգաբնակչութիւնը

«Գիլանի» շրջանին են պատկանել Ռաշտը, Էնգելին, Ղազուխը, Մազանդարանը եւ Աստարան:

Չենք կարող աչքաթող անել այն աչքի ընկնող երեւոյթը, որով միշտ էլ տատանումների է ենթարկուել դաշնակցական շարքերի թէ որակը եւ թէ քանակը, այդ այն պարզ պատճառով, որ այս շրջանի բոլոր վայրերի հայ ազգաբնակչութիւնը բաղկացած է եկուորներից, մեծ մասամբ գործակատարներից, որոնք այսպէս թէ այնպէս մնում են մեր շրջանում 1-3 տարի, իսկ ոչ գործակատարները մանր առեւտրականներ եւ օղեվաճառներ են, որոնց մնալը կախուած է առեւտրի աջակցութիւնից եւ անաջակցութիւնից: Մշտական մնալուն տարր քիչ է, այնպէս որ այս շրջանին աւելի շուտ առեւտրական գաղթավայր անունը պէտք է տալ:

Ռաշտ.— Հայ ազգաբնակչութիւնը 100 տուն, 500-550 շունչ. ունի մի երկդասեան երկսեռ դպրոց եւ մի մանկապարտէզ: Հայ ազգաբնակչութիւնը բաղկացած է մանր առեւտրականներից, խանութպաններից, գործակատարներից եւ օղեվաճառներից: Տնտեսական ընդհանուր դրութիւնը՝ միջակ:

Էնգէլի.— Հայ ազգաբնակչութիւնը 45-50 տուն, 200-250 շունչ, մի երկդասեան երկսեռ դպրոց, զբաղմունքի առարկաները նոյնը, տնտեսականը նոյնպէս:

Ղազուխ.— Հայ ազգաբնակչութիւնը 40-50 տուն, 200-250 շունչ. Սեւ Արիւնն<sup>13</sup> 7 գիւղ, մի երկդասեան երկսեռ դպրոց, զբաղմունքի առարկաները եւ տնտե-

11.- Գիլանը Կասպից ծովու հարաւ-արեւելքի Ռաշտ, Ղազուխ եւ Էնգելի քաղաքներու շրջանն է, որ նախապէս մաս կը կազմէր Ատրպատականի (Թարիզ) Կեդր. կոմիտէութեան. 1913 թ.ին միացւեցաւ Թեհրանին:

12.- Վրձին – հրապարակագիր Սիմասեան Խաչատուրի կուս. ծածկանունը:

13.- Սեւ Արիւն – կուս. ծածկանուն Ռաշտ քաղաքի:





սականը նոյնը, բացի Սեւ Արիւնի շրջանից (Ղարաղան) որտեղ գիւղացիների եւ մեր ընկերների ջանքերով ու մեր աջակցութեամբ բացուած է 2 դպրոց:

**Աստարա.**— (ռուսական եւ պարսկական).— 10-15 տուն, 50-60 շունչ:

**Մագանդարան.**— Ամբողջ Մագանդարանում (Բենդերգեազ, Մէշետիսեր, Բարֆրուշ, Քեափոշրայ, Շահ-րուժ, Աշրաֆ, Աստարբազ եւայլն) 120-140 հայ տուն մեծ մասը Բենդերգազում, այս շրջանում համարեա բոլոր գործակատարներ են:

Ինչպէս տեսնում էք, Ղազուինի շրջանը դուրս գալուց յետոյ, քանի որ արդէն «Գիլանից» անջատուած «Շահաստանին»<sup>14</sup> է միացրուած, «Գիլանի» շրջանին պատկանող վայրերում պէտք է հաշուել 1000 շունչ հայ, ամէն գոյնի, հասակի եւ սեռի:

**«Ռաշիդ» ենթակումիտէական շրջան**<sup>15</sup>

«Ռաշիդ» ենթակ. «Գիլանի» IV Շրջանային ժողովին իր տուած տեղեկագրից երեւում է, որ ունեցել է 4 խումբ 60 անդամ-անդամուհիներով, ունեցել է յեղափոխական գրադարան 230 գրքերով հայերէն եւ 175 ռուսերէն: Դեկտեմբերեան դէպքերից յետոյ ենթակումիտէ կազմալուծուել եւ խմբերը քայքայուել են: Միայն վերջերս «Գիլանի» ջանքերով այս շրջանում կազմուել է 3 խումբ 27 անդամներով:

**«Պորտ Արտուր» ենթակումիտէի շրջան**<sup>16</sup>

«Պ. Ա.» ենթ. համաձայն իր տեղեկագրի մինչեւ 1911 թ. ունեցել է 3 խումբ 55 անդամ-անդամուհիներով, յեղափոխական գրադարան --- գրքերով: Դեկտեմբերեան դէպքերից յետոյ կազմը եւ խմբերը քայքայուել են եւ անդամներից շատերը ցրուել: «Գիլանի» ջանքերով այնտեղ այժմ կայ մի խմբակ 5 հին ընկերներից, որի շուրջը պէտք է հաւաքուէին քիչ քիչ նախկին ընկերները, որոնք մինչեւ այժմ էլ կորցրել են ռէակցիայից, բայց դժբախտաբար առ այժմ մեր յոյսերը չեն իրականացել:

**«Գաղազան» ենթ. շրջան**<sup>17</sup>

Համաձայն տուած տեղեկագրի մինչեւ 1911 թ. այս շրջանը ունեցել է «Գաղազանում» 5 խումբ 45 անդամ-անդամուհիներով, Սեւ արիւնի շրջանում 5 խումբ 40 անդամներով: Ռէակցիայի օրերին այդ շրջանն էլ քայքայուել էր, բայց այս տարուայ սկզբներին «Գիլանի» կողմից ուղարկուած շրջիկը այդ շրջանը նորից կազմակերպել է, որից յետոյ անցել է «Շահաստանի» շրջանին:

**«Սիփան» ենթ. շրջան**<sup>18</sup>

Այս շրջանը չի մասնակցել IV-րդ Շրջանային ժողովին. եղել է անկազմակերպ վիճակում, 1911 թ. այնտեղ ուղարկուած պրոպագանդիստին հազիւ աջողուել է վերակազմել մի խմբակ 12 հոգուց, որից անմիջապէս յետոյ ex-Շահի կուիւնների շնորհիւ, բոլոր աչքի ընկնող ընկերները ցրուել են, կորել են գէնքերը եւ արխիւի մի մասը: Մինչեւ հիմա էլ մնում է անկազմակերպ: «Սիփանի» շրջանը միշտ մեծ եռանդի եւ ժամանակի կարիք ունի կազմակերպ վիճակում պահելու համար, մանաւանդ որ կումիտէից բաւական հեռու է ընկած, հաղորդակցութեան շատ անյարմարութիւններ ունի, գործակատարները վախենում են խմբերի մէջ մտնելուց. փոքրիկ տեղեր են, իսկոյն աչքի են ընկնում. պատահել են դէպքեր խմբերին մասնակցելու համար, գործատէրը հեռացրել է գործից եւ եղել են այդ ուղղութեամբ սպառնալիքներ:

**«Իրան-Թուրան» շրջան**<sup>19</sup>

Այս շրջանը չի մասնակցել IV Շրջանային ժողովին, ունեցել է մի գործակատարաց խումբ անկազմակերպ վիճակում, որը եւ 1911 թ. միացրուել է «Պորտ-Արտուրի» ենթակումիտէին, մինչեւ հիմա էլ անկազմակերպ վիճակում է:

**1) Ընտրութիւնից մինչեւ ex-Շահի մուտքը Պարսկաստան**

Ընտրութիւնից մինչեւ ex-Շահի մուտքը տեւել է 7 ամիս եւ ժամանակամիջոցում կումիտէն<sup>20</sup> ունեցել է 17 նիստ, աշխատել է խմբերի կազմերը ուժեղացնել, նրանց յեղափոխական մտածելակերպը զարգացնել. այդ ուղղութեամբ եղել են պարբերական դասախօսութիւններ, թէ առանձին խմբերում, թէ միացած խմբերում եւ թէ հասարակական ժողովներում, թէ տեղական կարող ընկերների կողմից եւ թէ դրսից հրաւիրուած երկու պրոպագանդիստ ընկերների կողմից: «Ռաշիդ», «Պորտ Արտուր» եւ «Գաղազան» ենթակումիտէների ժամանակները լրացած լինելու պատճառով, նոր

14.- Շահաստան – կուս. ծածկանուն Թեհրանի Կեդր. կոմիտեու-թեան:  
15.- Ռաշիդ – կուս. ծածկանուն Ռաշտ քաղաքի:  
16.- Պորտ Արտուր – կուս. ծածկանուն Էնգելի քաղաքի:  
17.- Գաղազան – կուս. ծածկանուն Ղազուին քաղաքի:  
18.- «Սիփան» – ենթակումիտէ Մագանդարանի շրջանի գիւղե-րուն:  
19.- «Իրան-Թուրան» – կուս. ծածկանուն Աստարա քաղաքի, նաւահանգիստ Կասպից ծովու վրայ, Ազրպէյճանի սահմանա-զովայր, ուր կը գտնուի նոյնիսկ նոյնանուն քաղաք:  
20.- Խօսքը կը վերաբերի Գիլան շրջանի կումիտէին:



ընտրութիւններ է կատարել տուել: Ամենալուրջ ուշադրութիւնն է դարձրել ուժեղացման վրայ, վերակազմել եւ լրացրել է մարտական խումբը: Ի նկատի ունենալով «Սիփանի» անկազմակերպ վիճակը, այնտեղ է ուղարկել շրջիկ պրոպագանդիստին, որին հազիւ աշոգուել է մի խումբ կազմել 12 հոգուց բաղկացած: Գաղազանի եւ «Պորտ Արտուրի» շրջաններն է ուղարկել շրջիկ պրոպագանդիստներին թէ պրոպագանդայի եւ թէ կազմակերպական գործերով: Աշխատել է տեղական պարսիկների մէջ առաջ բերել Դաշնակցութեան ուղղութեան մօտիկ մի կուսակցութիւն եւ յաջողեցրել է թէեւ փոքր թուով, բայց աւելի գիտակից պարսիկներից մի խմբակ կազմել թէ «Ռաշիդում» եւ թէ «Պորտ-Արտուրում» եւ թէ «Գաղազանում»: Պարսիկները մէջ Դաշնակցութեան գաղափարները տարածելու եւ կռուելու մոլոր ոյժերի դէմ, կոմիտէն թէ բարոյապէս եւ թէ դրամով աջակցել է իր կազմած խմբակի բերան թերթին՝ Խէյրուլլամ, որի մէջ յաճախ դուրս է եկել յօդուածներով բացատրելով Դաշնակցութեան այս կամ այն տեսակէտը, ուղղութիւնը եւ ձգտումը: Համաձայն Շրջանային ժողովի որոշման, մասնակցել է հոգաբարձական ընտրութեան եւ մեծամասնութիւնը մեր թեկնածուներից ընտրել տուել: Տուել է մի շարք թուողիկներ հայերէն եւ պարսկերէն ժողովրդի համար, ռուսերէն՝ ռուս գործի մէջ ցրուել Պարսկաստան մտնելուց: Վերջապէս աջողեցրել է թարգմանել տալ Թեհրանում մեր ծրագիրը պարսկերէն եւ տարածել պարսիկների մէջ: Կատարել է յեղափոխական գրականութեան փոխադրութիւնը Ռսկանապատ<sup>21</sup> թէ հայերէն եւ թէ ռուսերէն:

2) Ex-Շահի մուտքը

1911 թ. Յուլիս 6-ին, հեռագիր ստացուեց «Սիփանից», որ ex-Շահը մուտք է գործել Պարսկաստան, թուրքմանների մէջ, որի բովանդակութիւնը անմիջապէս հեռագրուեց Վրէժ Կ. կոմիտէին, Շահաստանին եւ մեր շրջանները: Եւ այդ օրից սկսած կոմիտէն ամենալուրջ ուշադրութիւն է դարձնում ինքնապաշտպանութեան ուժեղացման, սկսում է բանակցութիւնների մէջ մտնել պարսիկ յեղափոխական-քաղաքական կուսակցութիւնների հետ. ստեղծում է թէ գաղտնի եւ թէ անջուղմանում<sup>22</sup> լեզու միջկուսակցական մարմին, նոյնը հրահանգելով եւ իր շրջանի մարմիններին: Մեր նպատակն էր ի մի խմբել բոլոր սահմանադրական կոչուող կարող ոյժերը եւ այդպիսով թէ օգնութեան գալ պարսիկ կառավարութեան ex-Շահի դէմ կռուելու եւ թէ գսպելու տեղական ռեակցիոն տարրերը եւ մոլոր ոյժերը:

որը, որոնք կարող էին հանգամանքից օգտուել եւ մեր շրջանն էլ խառնել: Սակայն մեր բոլոր ջանքերը ապարդիւն անցան, կազմուած միջկուսակցական մարմինը ոչինչ անել չկարողացաւ, որովհետեւ պարսիկ կուսակցութիւնները դրական-կռուող ոյժ չէին ներկայացնում եւ բոլորը սպասում էին մեզնից: Բայց մեր ջանքերով եւ ազդեցութեամբ անջուղմանը շարժուեց, մեր հեռագիրները խնամակալին, մինիստրութեան եւ պարլամենտին ունեցաւ իր ազդեցութիւնը եւ անջուղմանը սկսեց մուղահիդներ<sup>23</sup> հաւաքել: Հասարակութեան համար մուղահիդների հրամանատար էր նշանակուած մի պարսիկ, բայց գաղտնի նշանակուել էր մեր մի ընկերը, որը պէտք է այս կամ այն կողմը արշաւելու ժամանակ միանար մուղահիդներին մեր 20 տղերանցով: Հայ ինքնապաշտպանութիւնը ուժեղացնելու համար անջուղմանից վերցրինք 15 մոսին հրացան համապատասխան փամփուռներով եւ դրսից եկած տղերանցից 10 հոգի պահում էինք այստեղ. Եփրեմը հեռագրել էր ընկերներից մէկին, որ տղերք ուղարկենք, բայց պատասխանուեց, որ պահանջը կատարուի կազմակերպական ճանապարհով, գործին Դաշնակցութեան գոյն տալու համար: Թէեւ Վրէժաստանի հեռագրի համար տղերք ուղարկում էինք, բայց եւ շարունակում էինք բանակցութիւնը թէ Եփրեմի եւ թէ Շահ կոմիտէի հետ, որով վերջապէս աջողուեց մեր ցանկացած ուղղութիւնը տալ: Ուղարկած եւ ուղարկելիք տղերանց համար աջողեցրինք Եփրեմից ստանալ 4600 թուման, որի մնացորդը համաձայն Եփրեմի ցանկութեան պահեցինք մեր շրջանի ինքնապաշտպանութեան համար: Եւ շնորհիւ այն ազդեցութեան եւ վախի, որ պարսիկների մէջ կար Դաշնակցութեան վերաբերմամբ, մեր շրջանում ռեակցիոն շարժում առաջ չեկաւ: Բայց եւ պարսիկ կառավարութեան դանդաղկոտութեան [պատճառաւ]՝ մեր ծրագիրները, որոշ ուղղութեամբ արշաւելու, չիրագործուեց:

Չպէտք է աչքից թողնենք այն հանգամանքը, որ ռուս հիւպատոսը այստեղ սկսել էր աւելի ակտիւ գործունէութիւն, լրտեսական ցանցով պատել էր ամէն կողմ, աշխատում էր արգելքներ ստեղծել ռեակցիայի դէմ կռուելուն: Հէնց այդ ժամանակները առանց մարմնի գիտութեան «Պորտ-Արտուրում» տեղի ունեցաւ նաւաստու դէպքը, որի պատճառով մեր ընկերներից մի քանիսին ձերբակալեցին, մի քանիսը փախան եւ մի քանիսի վերաբերմամբ էլ սկսուեց հալածանք: Եւ ռուսական ոտնձգութիւնների քաղաքականութեան հետեւանքը եկաւ յանգաւ ռուսական յայտնի Դեկտեմբերեան դէպքերին: Անշուշտ ռուս կառավարութիւնը չէր կարող տանել այն, որ իր ձեռքով ստեղծուած ex-շահական աւանտիւրիան Փիասկօ կրեց, այդ միջոցով չկարողացաւ հասնել իր քաղաքական նպատակներին, որին հետեւեց ռուսական յայտնի ուլտիմատում-պա-

21.- Ռսկանապատ – կուս. ծածկանուն Պաքուի:  
 22.- Անջուղման – պարսիկ սահմանադրական-յեղափոխական-ներու կոմիտէ:  
 23.- Մուղահիդ – պարսիկ յեղափոխական մարտիկ:







հանձները, որին ոյժ տալու համար հիւսիսային Պարսկաստանը զօրքերով լցրին, ստեղծեցին Դեկտեմբերեան դէպքերը Գիլանում եւ Ատրպատականում, որին անխուսափելիորէն հետեւեց Պարսկաստանի անկախութեան անկումը:

Իր բոլոր շրջանները ուժեղ ինքնապաշտպանութեան պատրաստելով [կոմիտէն], աչքաթող չի արել եւ Սեւարիւնի շրջանը: Մարմինս հրահանգել է «Գաղազան» ենթակոմիտէին ունեցած վարանդիլ հրացանները համապատասխան փամփուշտներով ուղարկել այնտեղ, ծախել գիւղացիներին էժան արժէքով, գիւղացիներին դիւրութիւն տալու համար նոյնիսկ մաս մաս վճարելու պայմաններով: Իր ձեռքի տակ ունեցած վարանդիլները էլ ուղարկել է «Գաղազանին» Սեւարիւնի համար:

Դեկտեմբերեան ռուսական դէպքերը եւ ռէակցիան

Մինչեւ 1911 թ. Դեկտեմբ. 8-ը շնորհիւ ռուս զօրքերի Պարսկաստան մտցնելուն, շնորհիւ ռուսական ուլտիմատումի, միջնորդող երեկտրականացած էր, պարսիկները բողոքի ցոյցեր էին կազմակերպում, ռուսների դէմ օգային յիտորտանքներ անում, իսկ ռուս կառավարութեան գործակալները, իրենց նպատակին արագ հասնելու համար, մի կողմից կրակի վրայ իւղ էին ածում, իսկ միւս կողմից ամէն տեսակի պրոպոկասիոններ անում եւ այդ բոլորից վերջը Դեկտեմբ. 8-ին ռուս հիւպատոսը կողակներով մտնում է քաղաք, աջ ու ձախ կրակելով մի քանի մարդ եւ սպանում, շատերին գինաթափ անում ձերբակալում, քաղաքը իրենց ձեռքը առնում եւ այդպիսով սարսափ տարածում Գիլանում: Երկրորդ օրուանից սկսւում է խուզարկութիւններ, ձերբակալութիւններ եւ գինուորական դաշտային դատարանը սկսում է գործել միապետական Շարիաթ Մատարի եւ նրա արբանեակների տուած ցուցմունքներով եւ վկայութիւններով: Կախում են Ռաշտում 4 պարսիկ, էնգելիում 2, բանտարկում են եւ աքսորում աչքի ընկնող պարսիկ սահմանադրականներին, որոնց շարքում մի քանիսը մեր ընկերներից եւ հայերից: Եւ այդ օրուանից ռէակցիան ամենաուժեղ կերպով սկսում է գործել, հրապարակ են իջնում միապետականները, մութ տարրերը, նոյն իսկ նախկին սահմանադրական կռուողները եւ իրենց գործերով սարսափ տարածում ժողովրդի մէջ: Ոչ ոք չի համարձակւում յեղափոխութիւն, սահմանադրութիւն, նոյնիսկ ազատութիւն բառը արտասանել, վախենալով հալածանքից, պատժից: Ուժեղ ռէակցիան մտնում է մեր շարքերը, մեր ընկերներից մի քանիսը ստիպուած են լինում ծածկուել, փախչել, մնացողները գլուխները կորցրած չեն իմանում ինչ անեն: Հայ ժողովրդի մէջ էլ մութ տարրերը գլուխ են բարձրացնում եւ սպառնալիքներ կարողում մեր կուսակցութեան հասցէին, ռուս հիւպատոսի դիրեկտիւներով շարժում,

լրտեսում: Մարմինս մնացող անդամների վրայ ծանր պարտք կար, պէտք էր գէնքերը եւ արխիւները խուզարկութիւնից փախցնել, մանաւանդ որ մեր ընկերները նոյնիսկ չէին համաձայնում իրենց մօտ եղած 1 գէնքը պահել: Եղել են դէպքեր, երբ առաջարկել են կամ ստանալ, կամ պէտք է տանի յանձնի: Մարմինս հագիւ աջողեցնում է գէնքերի եւ արխիւի մի մասը տաճկաց հիւպատոսարանում պահ տալ, մի խոշոր մասը ուղարկել Թեհրան Կ. կոմիտէին, մնացածն էլ մի կերպ պահել պահպանել, թէեւ անխուսափելիորէն լինում են եւ կորստեան դէպքեր: Մի երկուսը հանգամանքից օգտուելով իրենց մօտ եղած գէնքը ծախում են, փողը իւրացնում, իսկ «Պորտ-Արտուրում» աւելի տգեղ երեւոյթ է տեղի ունենում. ենթակոմիտէի միակ մնացող անդամ Մարը արխիւը ամբողջովին այրում է եւ մասնաւոր մարդկանց ինքնապաշտպանութեան մարմին յանձնած գէնքերից երկուսը կորցնում է, ինչպէս ինքն է ասում, ծովը նետում...:

Անցնում է մի քանի ամիս, Մարմինս ուզում է նորից խմբերը հաւաքել, ենթակոմիտէական ժողովներ գումարել տալ, բայց բոլոր յորդորները, գիմումները ապարդիւն են անցնում, բոլորը փախչում են նոյնիսկ լսելուց: Եւ դրութիւնը այդպէս շարունակւում է մինչեւ 1913 թ. գարունը: Որովհետեւ ռուսական դէպքերի ազդեցութիւնն եւ ռէակցիան թոյլ են եղել «Գաղազանի» շրջանում<sup>17</sup>, գարնանը կոմիտէս ձեռնարկում է այդ շրջանի վերակազման գործին, այնտեղ է ուղարկում Շահաստան գտնուող իր շրջանի ընկերներից Կայծին, որին աջողում է այդ շրջանը կազմակերպել եւ նոր ենթակոմիտէական ընտրութիւն կատարել: «Ռաշիտում»<sup>15</sup> էլ ռէակցիան մի քիչ թուլացած լինելով, հնարաւոր է լինում 2 խումբ կազմել, բայց հնարաւոր չի լինում կանոնաւոր ժողովներ գումարել տալ: Իսկ «Պորտ-Արտուրում»<sup>16</sup> ոչինչ անել չի լինում, բոլորը դեռ ռէակցիայի ազդեցութեան տակ էին: Այդպէս դրութիւնը շարունակւում է մինչեւ այս Հոկտեմբեր ամիսը:

Կոմիտէս մասնակցել է Շահաստանի շրջանային եւ պատգամաւորական ժողովներին, տալով իր պատգամաւորը եւ դիրեկտիւներ իր պատգամաւորին, դրուած հարցերի շուրջը:

Մինչեւ 1913 թիւ Յունուարը փակելով իր հաշիւները Վրէժստանի Կենտ. կոմիտէի հետ, համաձայն որոշման անցնում է «Շահաստանի» Կենտ. կոմիտէի շրջանին որի հետ պահում է, հնարաւորութեան սահմաններում, յարաբերութիւնը:

Ներկան

Ռէակցիայի ուժեղ թափը քիչ քիչ անցնում է, մեր շարքերը ուշաբերում են, վախը անցնում է, նախկին



ընկերները կարիք են զգում շարժուելու, միմեանց մօտենալու, նորից խմբուելու, թէեւ առայժմ փոքր չափով: Մարմինս որոշում է օգտուել դրուժիկներից ու ձեռնարկում է Ռաշխտում խմբեր կազմակերպելուն: Թէեւ մի փոքր դժուարութեամբ, բայց եւ այնպէս աջողում է կազմել 3 խումբ 27 անդամներով: Խմբերը այժմ ունենում են կանոնաւոր ժողովներ: Դեռ դուրսը մնացող ընկերները տատանում են խմբերին մասնակցելուց, բայց որեւէ հասարակական հարցում միշտ մեր մտածելու կերպով են առաջնորդում, մեր կողմը անցնում: Առ այժմ այսքանով բաւականաւորով, սպասում ենք աւելի պատեհ հանգամանքների, երբ կրկին մեր խմբերում կը դառնան աւելի քան 50 ընկեր-ընկերուհիներ: «Պորտ-Արտուրում» հազիւ հնարաւոր է լինում նախկին 5 ընկերներին հաւաքել, խմբակ կազմել, որի շուրջը պէտք է հաւաքուէին քիչ քիչ մեր նախկին ընկերները, բայց այդ խմբակը իր վրայ դրած յոյսերը չի արդարացնում եւ ոչինչ չի անում: Ամիսներից ի վեր նրանց յանձնուած եւ համարեա նրանց մասնագիտութիւնը համարուող փոխադրական գործը ոչ մի արդիւնք չունեցաւ: Մարմինս որոշել է շուտով այնտեղ ուղարկել իր անդամներից մէկին կազմակերպելու համար: գուցէ աջողուի մի բան անել եւ փոխադրական գործը աջողեցնել: Անշուշտ այդ բոլոր ունակցիական ուժեղ շարժումները առանց հետեւանքի չանցաւ եւ Մարմինս անդամների համար, որոնցից մէկը ստիպուած եղաւ մի քանի ամսով քաղաքից հեռանալ, մի ուրիշին բանտարկեցին եւ քեցին Կովկաս, այնտեղից Սիբիր աքսոր, մի երրորդը Բագուում բանտարկուեց ամբողջ 10 ամիս եւ Մարմինս որոշ ժամանակ հէնց իր շրջանի նման թուլացման էր ենթարկուած:

«Գաղազանը» Շահստանին միացնելուց յետոյ, Գիլանի շրջանում մնում են «Ռաշխտ», «Պորտ-Արտուր» եւ «Սիփանի» շրջանները: «Սիփանում» ներկայումս հնարաւորութիւն չունենք ոչինչ անելու, իսկ «Պորտ-Արտուրի» եւ «Ռաշխտի» վերաբերմամբ որոշ յոյսեր տածել:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Խեչոյի եւ Համբարձում – Աթաբէգեան գործի շուրջը: Ժամանակին մի շարք նամակներով գրել ենք «Շահստանի» Կ. կոմիտէին այդ գործի մասին եւ գրել մեր պահանջը Համբարձումից, բայց չգիտենք Կ. կոմիտէն ինչից առաջնորդուած չէ ցանկացել կատարել տալ մեր պահանջը: Երբ մի բարձր մարմին, ինչպիսին է Կ. կոմիտէն, այսպիսի աղաղակող փաստի դիմաց միայն լուռ ականատեսի դեր է կատարում, ինչ կարող ենք սպասել մեր շրջանի ընկերներից, այն էլ ունակցիայի օրերին, քանի որ մատնիչները անպատիժ են մնում եւ դեռ հասարակական որոշ դիրք էլ գրաւում, յոխորտում:

Պատմենք փաստը: Համբարձում Մելիք-Սարգսեանը

գնել էր Խեչոյից որոշ քանակութեամբ եւ որոշ արժէքով կաղնի փայտ եւ տուել էր մի գումար փող: Պայմանով Համբարձումը պէտք էր որոշ ժամանակին փայտը ստանար եւ կանխիկ վճարէր: Համբարձումը կարողանում է վերցնել միայն 11 հազար փութը, իսկ մնացորդ աւելի քան 30 հազար փութը փող չունենալու պատճառով ամբողջ 2 տարի չի կարողանում վերցնել եւ փայտը սկսում է փչանալ անտառում: Համբարձումը ոչ թոյլ է տալիս Խեչոյին ուրիշի ծախելու եւ ոչ էլ ինքն է վերցնում, ճնշում գործ դնելով Խեչոյի վրայ, օգտուելով նրա անլեզալութիւնից: Երկար ու բարակ բանակցութիւններից յետոյ, վաճառականների միջնորդ դատարանի որոշմամբ, Խեչոն համաձայնում է տալ Համբարձումին իր մօտ եղած փողը 700 թուման: Վաճառականներն էլ ի նկատի ունէին Խեչոյի անլեզալ լինելը եւ Աթաբէգեանի սպառնալիքը, որ կը դիմի ռուսաց հիւպատոսին: Բայց Աթաբէգեանը չի ցանկանում այնպէս վերջացնել, անշուշտ Համբարձումին համաձայնութեամբ, եւ դիմում է ռուսաց հիւպատոսին, յայտնելով Խեչոյի ռուսահպատակ լինելը եւ այլն: Ռուս հիւպատոսը կանչում է Խեչոյին, որի հետեւանքը լինում է ձերբակալել Կովկաս ուղարկելը եւ աքսորը Սիբիր: Եւ հէնց բանտարկուած օրերին Աթաբէգեանը առանց դատավարութեան ստանում է 1200 թուման, որովհետեւ Կովկասից պահանջի պատճառով ռուս հիւպատոսը չէր կարող Խեչոյին երկար պահել այստեղ, իսկ Աթաբէգեանն էլ դրուժիկներից օգտուեց: Ամենայն վստահութեամբ կ'ասէինք, որ եթէ Խեչոն լեզալ մարդ լինէր, ոչ թէ Համբարձումին փող կը տար, այլ նրանից մի երկու հազար էլ վնաս կը ստանար: Բոլոր մանրամասնութիւններին լաւ ծանօթ լինելով, կոմիտէն առաջարկել է Կ. կոմիտէին յետ ստանալ Համբարձումից 1200 թումանը եւ հասցնել Խեչոյի ընտանիքին, որը հէնց Համբարձում – Աթաբէգեան մատնութեան շնորհիւ չքաւոր դրութեան մէջ է, իսկ մատնութեան պատժի համար թողնել ապագային, երբ հնարաւոր կը լինի եւ գործադրել: Կոմիտէն նոյն պահանջը դնում է եւ հիմա, որի վրայ աւելացնում է եւ այն, որ արդէն ժամանակն է յանցանքի համեմատ պատիժ որոշել եւ գործադրել:

Եւ քանի որ մեր շրջանում անպատիժ են մնում բացարձակ մատնիչները (Համբարձում – Աթաբէգեան) կազմակերպական զէնք իւրացնողները, զանազան մեծ ու մանր լրտեստներ եւ մատնիչներ, մեր շրջանը դեռ շատ լքուած դրութեան մէջ կը մնայ. շատերը դրանց վախից չեն վստահանալ մտնել մեր շարքերը, գործել. շարքերում եղողներն էլ ամէն բոլորով վախի տակ են մնում: Պէտք է եւ անհրաժեշտագոյն պահանջ է, գոնէ բացարձակ մատնիչների վերաբերմամբ կտրական խօսքը ասել:

ՎՐՁԻՆ<sup>12</sup>, ՊԵՏՐՈՍ, ՍԷՅՐԱՆ, ՊՈՆՏԱՅԻ





Փաստ. 594-6

## Բ 2.- ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ Հ.Յ.Գ. ԳԻԼԱՆ ԿՈՄԻՏԵԻ V ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ

Կայացած 1914 թի Մարտ 20-ից Ապրիլ 12-ը

Համաձայն Գիլան կոմիտէի մի օրակարգ շրջաբերականի 1914 թ. մարտ 20-ին սկսուեց «Գիլան» կոմիտէութեան V Շրջանային ժողովը: Շահատանի Կ. կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Խաչագողը<sup>24</sup> Համաձայն Կենտրոնականի N 93 յանձնարարական նամակի բացուած Համարեց ժողովը եւ անցաւ օրակարգի I կէտին՝ Պատգամատրոնների լիազօրութիւնների վաւերացումը: Կենտրոնականի ներկայացուցիչը ստուգելով մանդատները պարզեց, որ ժողովին մասնակցելու են հետեւեալ մարմինների եւ խմբերի ներկայացուցիչները՝ թուով 8 հոգի:

- 1) Կենտրոնական կոմիտէի ներկայացուցիչ՝ ընկեր Խաչագողը:
- 2) «Գիլան» կոմիտէի ներկայացուցիչ ընկեր Պոնտացի:
- 3) «Ժայռ» խմբից ընկերներ Սուրէն եւ Ռուբէն Ասթանազ:
- 4) «Խրոխտ» խմբից ընկերներ Շաւարշ եւ Համր:
- 5) «Աշխատանք» խմբից ընկերներ Զաւէն եւ Անցորդ:

Շրջանը՝ Պորտ Արտուր, Սիփան եւ Իրան-Թուրանը անկազմակերպ լինելու պատճառով չէին մասնակցում ժողովին եւ Գիլան կոմիտէն բաւականացել էր միմիայն Ռաշիտով<sup>16</sup>. Իսկ «Գաղազան»<sup>17</sup>, որ առաջ պատկանելի է եղել Գիլանի կոմիտէութեան շրջանին՝ Համաձայն Կենտրոնական Շրջանային ժողովի որոշման, միացած լինելով Շահատանի կոմիտէութեան շրջանի հետ, հրաւէր չէր ուղարկուած մասնակցելու:

Այս պայմաններում գումարուած շրջանային ժողովի գլխաւոր դերապատճառը եղել է հին գործերի լիկւիդացիան եւ նոր մարմնի կոմիտէի ընտրութիւնը, որ պէսզի ապագայ գործունէութեան ընթացք տրուի:

II Գիւանի ընտրութիւնը: Համաձայն կանոնադրութեան եւ Կենտրոնական [կոմիտէի] յանձնարարութեան, ժողովներին պիտի նախագահէ Կ. կոմիտէի ներկայացուցիչ ընկեր Խաչագողը, իսկ քարտուղարու-

թիւնը որոշուեց հերթական կարգով իւրաքանչիւր ժողովին առանձին: Այս անգամ քարտուղար ընտրուեց ընկեր Շաւարշ:

III Օրակարգի հաստատութիւնը: Կարդացուեց եւ ժողովի կողմից հաստատուեց օրակարգը:

IV Կարող ընկերների հրաւիրելը: Ժողովը մտքերի փոխանակութիւնից յետոյ, որոշեց հրաւիրել դրսում եղած կարող ընկերներից հետեւեալներին ձայնի իրաւունքով 1) Ընկ. Սմայլա, 2) Սէյրան, 3) Մարօ, 4) Սիրան եւ 5) Որսորդ: Բացի սրանցից որոշուեց յանձնարարել կոմիտէին, որ թէեւ Պորտ-Արտուրը անկազմակերպ դրութեան մէջ է, բայց ժողովին մասնակցելու հրաւիրել ընկ. Դ-ին:

### ՆԻՍՏ II

1914 թ. մարտ 21-ին: Ներկայ էին 13 հոգի. ժողովից ոչ ոք չէր բացակայում:

Կ. կոմիտէի ներկայացուցիչ նախագահ ընկ. Խաչագողը զիջելով իր իրաւունքը, առաջարկում է ընտրել ուրիշ նախագահ. ժողովը խնդրում է իրեն նախագահել: Առաջին նիստի քարտուղարը բանաւոր գեկուցում է այդ նիստի անցուղարձը: Հերթական քարտուղար է ընտրուում ընկեր Սէյրանը:

Նախագահը առաջարկում է ունենալ մի ներքին կանոնադրութիւն եւ կարգում է IV Շրջանային ժողովի կազմած կանոնադրութիւնը: Ժողովականներից ոմանք յայտնում են, որ կանոնադրութիւնը հարկաւոր է բազմամարդ ժողովներին՝ մեծաքանակ հարցերի ժամանակ, որ կարիք չկայ այժմեանից եւեթ կաշկանդել մեր գործունէութիւնը. իսկ եթէ կը լինեն թերացող ընկերներ կամ ազատութիւնը ի չարս գործադրողներ, ժողովը անմիջապէս կ'արտայայտուի եւ որոշում կը տայ: Ժողովը կանոնադրութիւնը աւելորդ գտնելով, առաջարկում է ընկերներին լինել ուշադիր դէպի զբաղմունքները եւ պարտաճանաչ:

Նախագահի առաջարկութեամբ Գիլան կոմիտէի ներկայացուցիչը կարգում է 1910 թիւ դեկտեմբեր 3-ից առ 1914 թիւ մարտ 20-ի տեղեկագիրը<sup>25</sup>:

24.- Խաչագող – կուս. ծածկանուն Խաչատրեան Սլլրտիչի:  
25.- Տես նախորդ՝ Բ 1 ենթաբաժինը (էջ 267-271):





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

Տեղեկագրի ընթերցումից պարզվում է, որ Պորտ-Արտուրի ընկեր Մարը վատնել է իր մօտ եղած ժողովրդ-դական ինքնապաշտպանութեան գէնքերը եւ պատճառաբանում է, որ երկիւղ կրելով, ծովն է նետել: Մտքերի փոխանակումից յետոյ, ժողովը որոշում է այդ հարցը անցկացնել դատական բաժնում եւ զբաղուել նրանով: Ժողովը յանձնարարում է մարմնի ներկայացուցչին պատրաստել եւ մանրամասնը գեկուցում տալ ժողովին այդ մասին:

Տեղեկագրից պարզվում է, որ Սիփանի շրջանում կորած են կազմակերպական գէնքեր եւ ենթակոմիտէի արխիւը: Որովհետեւ ժողովին ներկայ էր այն ժամանակուայ Սիփանում գտնուող ընկ. Սուրէնը, ժողովը խնդրում է նրան բացատրութիւններ տալ:

Նրա ասածից պարզվում է, որ էքս Շահը միացած թիւրքմէնների հետ յարձակուել է ազգաբնակութեան վրայ, նրանց դէմ գործել է Սահմանադրական զօրքը, զօրքը պարտուել է, եղել է ընդհանուր թալան, կոտորած, որից մարդիկ հագիւ էին իրանց կեանքը ազատել, որ տեղում գտնուող 10-12 ընկերները ոչինչ չէին կարող անել բազմազար թշնամու դէմ եւ այն: ... Մի երկու ընկերներ դէմ են խօսում այն մտքով, թէ Սիփանի ընկերները առանց գիտակցելու իրենց թոյլ ոյժերը ցոյց են արել թիւրքմէնների դէմ, դեմոնստրատիւ<sup>26</sup> կերպով միացել են Սահմանադրական զօրքին եւ զրգուել իրանց դէմ թշնամիներին եւ չեն ենթարկուել Գիլան կոմիտէի այն գրութեան թէ պասիւ<sup>27</sup> ինքնապաշտպանութիւնից աւել քայլ չանէք: Ընկեր Սուրէնը առարկում է այդ կէտերին, որից յետոյ ժողովը որոշում է: Համարել ընկեր Սուրէնի բացատրութիւնները բաւարար եւ Սիփանի գէնքերի կորուստի մէջ այն տեղի ընկերները անպարտ են ճանաչուում: Պարզվում է, որ արխիւի կորուստ տեղի չէ ունեցել:

Տեղեկագրից յայտնի է դառնում, որ Պորտ-Արտուրից փախցրած մի ռուս նաւաստու փախուստի հարցը պատճառ է եղել մի քանի ընկերների վտանգուելուն, որից յետոյ տեղի է ունեցել եւ յայտնի ռուսական դէպքերը:

Ընկեր Որսորդը ցանկանում է իմանալ, թէ Գիլան կոմիտէն եւ Պորտ-Արտուր ենթակոմիտէն ինչ մասնակցութիւն են ունեցել այդ խնդրի մէջ: Մարմնի ներկայացուցիչը բացատրում է որ նաւաստու փախցնելը կատարուել է առանց մարմնի գիտութեան, որ Պորտ-Արտուրի ընկերները եթէ տեղեակ են եղել կամ մասնակցել են՝ ապա որպէս անհատներ իրանց պատասխանատուութեամբ: Նրան առարկում են, որ Պորտ-Արտուրի ենթակոմիտէի ընկերները (անդամները) բոլորը

մասնակցել են այդ ակտին, որ դա մի տեսակ պրեստիժի հարց են դարձրել, քանի որ նոյն նաւատան հնչակեանները չեն կարողացել փախցնել, որ նրանք յեղափոխականին վայել զգուշութիւնը չեն ունեցել եւ այլն: Նորից բացատրութիւն է տալիս ընկ. Խաչագողը ասելով, որ այդ բոլորը կապ չունի կազմակերպութեան հետ, որ եթէ մի երկու հոգի էլ իմացել են, այդ էլ պատահաբար է եւ այլն: Երկար վիճաբանութիւնից յետոյ ժողովը ընդունում է հետեւեալ բանաձեւը. 11 ձայնով ընդդէմ 2-ի:

«Շրջանային ժողովը լսելով Մատրուտեան հարցի մասին եղած մարմնի բացատրութիւնները եւ նրա դէմ եղած առարկութիւնները ընդունեց հետեւեալը:

Որ Պորտ Արտուրի ենթակոմիտէի անդամները եւ Գիլան կոմիտէի շրջիկը Մատրուտի խնդրում չեն առաջնորդուել յեղափոխականին վայել շրջահայեցողութեամբ, գուրկ են եղել յեղափոխական ակտի խորն ըմբռնումից, մեծ պատասխանատուութիւն են յանձն առել, չեն քարկելով հարցը պաշտօնական մարմինների քննութեան, տարուել են սին պրեստիժի հեռանկարով, որը եւ դատապարտելի է: Գալով Գիլան կոմիտէին ժողովս գտնում է, որ նա այս հարցի սկզբում թոյլ է տուել անփոյթ վերաբերում դէպի իր շրջանի անց ու դարձը, որից վնասուել է գործը որը եւ գովելի չէ»:

Ընկեր Խաչագողը ցանկացաւ իր փոքրամասնութեան բանաձեւը ներկայացնել վաղը:

Տեղեկագրից երեւում է, որ Համբարձում Մելիք-Սարգսեանը եւ ընկեր Խէչոն առեւտրական գործ են ունեցել, որի ընթացքում Համբարձումը իր հաւատարմատար բժ. Աթաբէկեանի միջոցով օգտուելով Խէչոյի անլեգալ դրութիւնից, ռուս հիւպատոսարանի ուժով ստացել են Խէչոյից 1200 թուման, իսկ Խէչոն ձերբակալուել է, դատուել եւ Սիբիր աքսորուել:

Ժողովը ցանկացաւ իմանալ թէ Գիլան կոմիտէն ինչ միջոցներ է ընձեռնել թէ ընկ. Խէչոյի վնասները հատուցանելու եւ թէ մատնողներին արդար պատիժը տալու: Մարմնի բացատրութիւնից երեւաց, որ նա որոշել է Համբարձումից յետ ստանալ 1200 թումանը եւ յանձնել Խէչոյի ընտանիքին, որ այդ ուղղութեամբ քանիցս գրել է Կենտրոնականին որ նա իրագործէ որոշումը, քանի որ Համբարձումը այնտեղ է, բայց մինչեւ օրս ոչինչ չէ արել: Մարմինը շարունակում է աշխատել իր որոշումը իրագործելու: Իսկ մատնութեան հարցը դեռ այժմս թողուած է առկախ, յարմար ժամանակի սպասելով: Ժողովը խնդրում է մարմնից յաջորդ նիստին ծանօթացնել այս հարցի առթիւ Գիլանի եւ Կ. կոմիտէի մէջ եղած զբազրութեանց: Հարցի շարունակութիւնը թողնում է յաջորդ նիստին: Նախագահը փակում է նիստը, յայտնելով յաջորդ նիստի ժամանակը եւ տեղը:

26.- Յուցական:  
27.- Կրատական:







ՆԻՍՏ III

1914 թ. Մարտ 22-ին: Կարդացուում է եւ առանց ուղղումների ընդունուում է նախկին երկու նիստերի արձանագրութիւնները:

Հերթական քարտուղարութիւնը յանձն է առնում ընկեր Սէյրանը: Ժողովից ուշացել էին ընկերներ Սմայլըս, Ռուբէն Ասքանազ եւ Անցորդ, որի համար առաջին անգամ որոշուում է նրանց նկատողութիւն անել, որը եւ անում է նախագահը:

Հերթի է դրուում կիսատ թողնուած Խէչօ—Համբարձումեան հարցի քննութիւնը: Մարմնի ներկայացուցիչը կարդում է այն գրաբերութեանց պատճէնները, որը ունեցել է Գիլան կոմիտէն Կ. կոմիտէի հետ եւ տալիս է բացատրութիւններ:

Բացի նախկին նիստից, այս նիստում հարցին նուիրուում է մօտ 5 ժամ որի ընթացքում մանրամասը քննութեան առնում այն պատճառները, որոնց շնորհիւ այս հարցը մնացել է չլուծուած. ժողովականները նկատում են, որ Գիլան կոմիտէի ուղիղ դրած հարցին Կ. Կ. շեղումներով է պատասխանում եւ չնայած նրանց, նորից բացատրում են, էլի արդիւնք չեն ունենում:

Բուռն մտքերի փոխանակումից յետոյ առաջարկուում է չորս բանաձեւ, որոնցից մէկը յետ է վերցուում իսկ միւս երեքից ոչ մէկը մեծամասնութիւն չի շահում: Նորից շարունակուում է վիճաբանութիւններ, այս անգամ բանաձեւերի շուրջը: Վերջապէս 7 ձայնով ընդգէմ 4-ի, ձեռնպահութեամբ 2-ի, ընդունուում է հետեւեալ բանաձեւը: «Գիլան» կոմիտէի V Շրջանային ժողովը իր III նիստում քննութեան առնելով Խէչօ—Համբարձումեան հարցը, ծանօթանալով Գիլան—Կենտրոնական կոմիտէների մէջ տեղի ունեցած գրաբերութեանց հետ, բուռն վիճաբանութիւններից յետոյ, որոշեց գոհունակութիւն յայտնել «Գիլան» կոմիտէին նրա ունեցած ջերմ վերաբերմունքի համար: Գալով Կենտրոնական կոմիտէի ցոյց տուած վերաբերմունքին, Շրջանային ժողովը գտնում է այն անբաւարար եւ իր զարմանքն ու անվստահութիւնը յայտնում նրա մինչեւ օրս այս հարցի նկատմամբ ունեցած գործունէութեան համար: Յանձնարարուում է նոր ընտրուելիք մարմնին յայտնել Կ. Կ. ին այս որոշումը եւ նորից Խէչօ-եան հարցը առաջարկել լուծելու: Որպէս բողոք Կ. Կ. այս հարցի առթիւ ունեցած վերաբերումի, այս նիստը յայտարարել փակուած, նշանակել յաջորդ նիստը եւ յանձնարարել Կ. Կ. ներկայացուցչին յայտնել այս մասին Կենտրոնականին: Ժողովը որոշեց արձանագրել նաեւ փոքրամասնութեան բանաձեւը, որը հետեւեալն է. «Ժողովը լսելով եւ մանրամասը ծանօթանալով Խէչօ—Համբարձումեան հարցի հետ, եկաւ այն եզրակացութեան, որ Գիլան կո-

միտէն ժամանակին իր բոլոր միջոցները գործադրել է եւ նոյնիսկ աւել, բայց Շահաստանի Կ. կոմիտէն դէպի այդ հարցը շատ անտարբեր է եղել եւ նոյնիսկ անվստահութեամբ է մօտեցել Գիլանի տուած զեկուցումներին ու գործին ոչ մի ընթացք չի տուել, որը պախարակելի է»:

Ժողովը գտնում է, որ Կ. կոմիտէն վերջ պիտի տայ այս հարցին եւ նախկին անտարբերութեան չմատնի, հակառակ դէպքում յանձնարարում է Գիլան կոմիտէին, որ իր բոլոր միջոցներով աշխատի Խէչօ-եան հարցին ընթացք տալու:

Նիստը փակուած լինելով նշանակուում է յաջորդ նիստի տեղն ու ժամը:

ՆԻՍՏ IV

1914 թ. Մարտ 23-ին: Ներկայ էին ժողովականներից 11 հոգի. բացակայում էին 2 հոգի: Ընկեր Համրը ժողովի գիտութեամբ յարգելի պատճառով իսկ ընկեր Մարոն անյայտ պատճառով:

Ժողովը բացուելուց ընկեր նախագահը յայտնեց, որ համաձայն նախկին ժողովի որոշման Կենտրոնականին արդէն նամակ գրուած է: Կարդացուեց եւ վաւերացուեց նախկին ժողովի արձանագրութիւնը, որից յետոյ ժողովը շարունակեց տեղեկագրի քննութիւնը: Ընկեր Ուսորդը հարց տուեց տեղեկագրում յիշուած կոմիտէի անդամներից մէկի ձեռքակալուելու մասին, որին նախագահը պատասխանեց՝ որովհետեւ այդ անձնաւորութեան շուրջը մի ուրիշ տեղ խօսակցութիւն պիտի լինի, այդ պատճառով թոյլ չի տալիս խօսելու: Ապա ընկեր Ուսորդի կողմից հարց տրուեց տեղեկագիրը նորից կարդացուի, որը եւ ընդունուեց:

Տեղեկագրի այն կէտը որտեղ յիշուած էր թէ մարմնի անդամներից երկու հոգի թէ ալցիայի<sup>28</sup> օրերում քաղաքիցս բացակայել են, ընկեր Շաւարշի կողմից հարց դրուեց — ինչու տեղական ընկերներից չէին լրացրել: Կոմիտէի ներկայացուցիչը պատասխանեց, որ տեղումս այդ գործի համար վստահելի ընկերներ չեն եղել: Նոյնը կրկնեց նախագահը խօսքը մասնաւորացնելով ներկայ գտնուող ընկերներից մէկի վրայ:

Այդ խնդրի շուրջը երկար վիճաբանութիւններ տեղի ունեցաւ, վերջը ընկերը պահանջեց՝ կամ նախագահը իր ասածները հաստատէ կամ խօսքը յետ վերցնէ:

Նախագահը խօսքը յետ վերցրեց եւ խնդիրը դրանով փակուեց: Տեղեկագրի շուրջը մի քանի հարցեր եւս դրուեցին, որոնց բոլորին կոմիտէի ներկայացուցիչը բաւարարեց: Ժողովի կիսում նախագահը հրաժարուեց ժողովը կառավարելուց. ժողովականները չընդունեցին, բայց նախագահի հանգստութեան համար օգնական ընտրեցին ընկեր Սէյրանին: Ժողովը տեղեկագրի շուր-

28.- Ալցիա – դէպք, գործողութիւն:







ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

ըր եղած խօսակցութիւնը վերջացած համարելով անցաւ դրամական հաշուին:

Հաշիւը կարգալուց յետոյ հարց առաջ եկաւ Թափառականի<sup>29</sup> կազմակերպութեան տրուած փողերի մասին, արդեօք այդ փողը զուտ կազմակերպական է թէ մասնաւոր բնոյթ է կրում: Այս հարցին մարմնի ներկայացուցիչը պարզ չպատասխանեց, որից ժողովը դո՛ւ չմնաց: Երկար շարունակուեց այս առթիւ եղած վէճը, որը տաք բնաւորութիւն ստացաւ եւ հարցից շեղումներ առաջադրուեց: Հարցի կիսում ընկեր Սէյրանը թողեց նախագահութիւնը, նրա տեղը բռնեց ընկեր Խաչագողը: Վէճը շարունակուեց անկանոն կերպով եւ ուշ լինելու պատճառով առանց եզրակացութեան գալու նիստը փակուեց:

ՆԻՍ V

Մարտ 25-ին: Նախագահութեամբ ընկ. Խաչագողի: Ժողովականները բոլորը ներկայ էին: Վերացուում է հերթական քարտուղարութիւնը, որովհետեւ շատերը հրաժարուում էին քարտուղար լինելուց: Մշտական քարտուղարութիւնը յանձն է առնում ընկեր Սէյրանը: Կարգացում է IV նիստի արձանագրութիւնը, որը մի քանի առարկութիւններից յետոյ վաւեր է համարուում:

Ժողովը լսում է Պորտ Արտուրի ընկեր Դ-ի նամակի ընթերցումը, որով ներկայացնում է, թէ անկարող է գալ մասնակցել շրջանայինին եւ առաջարկում է մի այլ ընկերի հրաւիրել:

Ժողովի մտքերի փոխանակումից յետոյ մերժում է Պորտ Արտուրից այդ ընկերը հրաւիրելու առաջարկը:

Շարունակուում է կիսատ հարցի քննութիւնը, այն է Թափառականի յանձնած գումարը կազմակերպական մասնաւոր բնոյթ ունի: Մարմնի ներկայացուցիչը նոր բացատրութիւններ է տալիս եւ ընդունում, որ յիշեալ գումարը կազմակերպական պիտի համարել: Ժողովը բաւարարում է եւ անցնում հաշուի առանձին առանձին կէտերին:

Ընկեր Ռուբէն Ասքանազը հարց է դնում յետ ստանալ այն ութը թումանը, որ ծախսուել է ընկեր Դ-ի բանտում եղած ժամանակ ճաշի վրայ: Երկար վիճաբանութիւններից յետոյ ժողովը 10 ձայնով ընդդէմ 1-ի եւ ձեռնպահութեամբ երկուսի որոշում է յետ չստանալ եւ անցնել միւս հարցերին: Հաշուի ընթերցումից երեւում է, որ ընկեր Չաւակը ծախսի եւ ճանապարհածախսի փող է ստանում 20 թուման, որի համար բացատրութիւն է պահանջում մարմնից: Բացատրութիւններ լսե-

լով ժողովը բաւարարում է հարցը փակում:

Անցնելով Սաքոյի բանտարկութեան եւ ստացած նպաստին, ժողովը հարցը երեք մասի է բաժանում եւ գատ ...

[1 էջ պակաս բնագրէն]

... դնելու, համարում է այդ կուսակցական յանցագործութիւն եւ որոշում է հեռացնել նրան մի տարով մեր շրջանի կազմակերպութիւնից: Ի նկատի ունենալով, որ ընկեր Սաքոն բացակայ է եւ ժողովը միջոց չէ ունեցել նրան ըսելու, որ նա շուտով տեղն է լինելու, որոշում է նրա գալուց, եթէ Շրջանային ժողովի նիստերը վերջացած լինին, արտագոյ կարգի ժողով գումարել եւ լսել նրա բացատրութիւնները եւ եթէ ներկայ որոշումը փոխուելու կարիք չգագցուի, յայտնել նրան: Ժողովը այս որոշումը ընդունեց 12 ձայնով ընդդէմ 1-ի իսկ այդ մի ընկերը կարծիքը մտցնում է արձանագրութեան մէջ որ հետեւեալն է.

«Լսելով ընկեր Սաքոյի մասին տեղի ունեցած ամբողջ խօսակցութիւնը չեմ միանում վերը այդ առթիւ յիշուած բանաձեւին եւ գտնում եմ, որ մենք համաձայն Կանոնագրի, իրատունք չունինք մեղադրելի բացակայութեամբ առանց նրա բացատրութիւնները լսելու այդ առթիւ որոշում կայացնել նրա մասին. ես առաջարկում եմ սպասել մինչեւ ընկեր Սաքոյի գալը, որը մօտ օրերս պիտի գայ – եւ սպաս կանչել մի նոր ժողով, կազմուած ժողովիս լրի կամ մասնակի անդամներից, որը քննելով գործը հնարաւորութիւն ունենայ ծանօթանալ մեղքի ծանրութեան հետ եւ որոշել ըստ այնմ պատիժ կամ արդարացում»:

Գալով հարցի երրորդ կէտին ժողովը մանրամասը լսելով մարմնի անդամների բացատրութիւնները, գտնում է 600 ռուբլի նպաստը շատ, եւ ձայների մեծամասնութեամբ որոշում է յետ ստանալ նրանից տրուած 600 ռուբլից 200 ռուբլի – թողնելով 400 ռուբլի յանձնարարում է նորընտիր մարմնին համաձայնութեան գալ ընկեր Սաքոյի հետ ժամանակի ընթացքում վերադարձնելու սոյն 200 ռուբլին:

Ժողովը փակուելով նշանակում է յաջորդ նիստի տեղը եւ ժամը:

ՆԻՍ VI

Մարտ 26-ին:

Ժողովին ներկայ էին բոլորը: Կարգացում է ընդունում է նախորդ նիստի արձանագրութիւնը: Ժողովը շարունակում է հաշուի քննութիւնը: Հաշուեկշռից երեւում է, որ ընկ. Խէչոն<sup>30</sup>, բերելով Թափառականի գումարի մի մասը, մարմնին յանձնում է 150 թուման

29.- Թափառական – կուս ծածկանուն Եփրեմ խան Դալթեանի:

30.- Խօսքը Դաշնակցական Խէչոյի մասին է, բուն անունով Ամիրեան Խաչատուր:





պակաս եւ մուրհակ է տալիս փոխարէնը: Հարցը քննուում է, թէ իրաւունք ունէ՞ր խէչոն այդ քայլն առնելու եւ թէ մարմինը պիտի համաձայնուէ՞ր կուսակցական դրամները անհատական կամքով վերցնողներին ստորագրութեամբ գոհանար:

Երկար վիճաբանութիւններից եւ մարմնի բացատրութիւնները լսելուց յետոյ ժողովը գտաւ, որ մարմինը անփոյթ է վերաբերուել դէպի իրեն յանձնուած կուսակցութեան դրամը, իսկ խէչոն հակակուսակցական վարմունք է թոյլ տուել իրան, առանց մարմնի [որոշումի] վերցնելով կազմակերպական փողերը իր պէտքերի համար, որի համար եւ արժանի է գայրոյթի: Այս վերջին կէտը անցնում է 6 ձայնով ընդդէմ 4-ի, ձեռնպահութեամբ 3-ի: Գալով այն խնդրին թէ խէչոյից յետ պիտի ստանալ այդ 150 թումանը թէ ոչ, ժողովը ի նկատի ունենալով նրա երկար բանտարկութիւնը, Սիբիր աքսորւելը, ուր գտնուում է այժմս, բազմամարդ ընտանիքը եւ կարիքները, որոշում է ոչնչացնել մուրհակը յետ չստանալու պայմանով:

Հաշուից երեւում է, որ ի վանին տրուած է 100 ռուբլի ճանապարհածախս. հարց է բարձրանում թէ ինչքան նպատակայարմար է տրուած այդ նպաստը: Մարմնի ներկայացուցիչը բացատրում է որ այդ գումարը յետ է գանձուած նրանից գէնքով: Այս բացատրութիւնը բաւարարում է ժողովին: Մի քանի մանր դիտողութիւններ անելուց յետոյ ժողովը մի յանձնախումբ է ընտրում դրամական հաշիւները վաւերացնելու քննելու եւ գեղուցանելու, որ եւ ընտրուում են ընկ. Շաւարշ, Ռուբէն Ասքանազ եւ Որսորդ:

Ժողովը անցնում է գինական հաշիւների քննութեան: Խօսք է առնում մարմնի ներկայացուցիչը եւ մանրամասն բացատրում այն աննպաստ պայմանները, որոնց մէջ ստիպուած են եղել գէնքերը պահել, խուզարկութիւններից ազատել, փոխադրել այլ քաղաք եւ այլն...: Նա պատմում է, որ յեղափոխական օրերից մինչեւ հալածանքի օրերը գէնքերը անցել են տեղից տեղ, մարդուց-մարդ եւ այս հաշիւը, որ նա ներկայացնում է մաքսիմում հնարաւորութեան պայմաններն ու միջոցներն են գործադրուած, թէ եւ չի պնդում, որ հաշիւը լիակատար է:

Ապա անցնում է հաշուի ընթերցանութեան: Ընթերցանութիւնը պարզում է որ IV Շրջանային ժողովի թողած գինացանկից այժմ պակասում է մի քանի կտոր — որոնցից մի երկուսը յայտնի է որ վտանգուած է, օր[ինակ] Վասիլի տասհարուածեանը, Վարդան Տէրեանի երեքհարուածեանը, եւ այլն, իսկ մի քանիսը ենթադրուում է որ Շահաստան կարող է փոխադրուած լինել: Պարզում է որ մի քանի անձնաւորութիւնների մօտ

եղած գէնքերը չեն վերադարձոււմ, մտադրութիւն ունենալով սեփականել:

Ընկեր Պետրոսը յայտնում է, որ իր անհատական պատասխանատուութեամբ մի քաղաքացու գէնք գտնուում է կազմակերպութեան մօտ որը եւ ծախուած է եւ խնդրում է իրան ազատել երաշխաւորութիւնից: Երբէկի մօտ եղած մի տասհարուածեանը գտնուում է ընկ. Որսորդի մօտ, իսկ վերջինս տարել է չրջանը: Այս բոլորից յետոյ ժողովը գալիս է հետեւեալ եզրակացութեան:

- 1) Վաւեր համարել Վասիլի, Վարդան Տէրեանի երկու կտոր գէնքի եւ զինուորների հետ գնացած երեք կտորի կորուստը:
- 2) Ստուգել այն մի երկու կտոր գէնքերի լինել կամ չլինելը, որ ենթադրուում է թէ յայտնի անձնաւորութիւնների մօտ են, օր. Լեւոն Առաքելեան եւ Արշամ եւ այլն:
- 3) Յանձնարարել նորընտիր մարմնին ամենախիստ միջոցների դիմել [եւ] գէնք սեփականացնողներից յետ ստանալ:
- Անյաջողութեան դէպքում խիստ պատասխանատուութեան կանչել, համաձայնութեան գալով Կ. կոմիտէի հետ:
- 4) Պարտաւորացնել Մարմնին բաւարարել ընկեր Պետրոսին յիշած քաղաքացուն եւ ազատել ընկերին պատասխանատուութիւնից:
- 5) Յանձնարարել ընկ. Որսորդին ներկայացնել իր դուրս տարած գէնքը եւ
- 6) Բոլոր կորուստները պարզելով կազմել նոր հաշուակիւղ:

Գալով ծայրերի<sup>31</sup> հարցին, մարմինը հնարաւորութիւնից զուրկ է ստոյգ հաշիւ ներկայացնելու, որովհետեւ մի մասը տաճկաց հիւպատոսարանումն է, որ դեռ հնար չկայ ստուգելու քանակը, միւս մասը Շահաստան է դրկուած խուզարկութիւնների օրերում, որ նոյնպէս հնարաւոր չէ ստուգել եւ այլն:

Ժողովը մի յանձնախումբ է ընտրում ստուգելու գէնքերը եւ հաշիւները, որ եւ ընտրուում են ընկ. Համր, Ռուբէն Ասքանազ եւ Զաւէն:

Ժողովը անցնում է օրակարգի IV մասի քննութեան այն է Սեր վերաբերումը դէպի ազգային հասարակական կուլտուրական հաստատութիւնները:

Նախագահը առաջարկում է կարգալ խմբերի նոյն հարցի առթիւ հանած բանաձեւերը: Նկատելի է որ բոլոր բանաձեւերը շեշտում են, որ կուսակցական պաշտօնական մասնակցութիւնը կուլտուրական գործերում, ցանկալի չէ, բայց որովհետեւ ժողովրդի կուլտու-

31.- Փամփուշտների:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

րական յառաջդիմութիւնը մեծ չափերով նպաստում է յեղափոխական գործին եւ այլն, ուստի ցանկալի է համարում, որ կուլտուրական հասարակական գործերը տարուին ժողովրդական մասսաների օգտի տեսակետով, որ եւ անհրաժեշտ է համարում դաշնակցական անհատների մասնակցութիւնը այդպիսի գործերին որպէս քաղաքացի, առանց հակասելու կուսակցութեան հիմնական գաղափարին: Նախագահը կարողում է Դաշնակցութեան VI Ընդհանուր ժողովում ընդունուած բանաձեւը այս հարցի առթիւ, որեւ ընդունուած է՝

«Հ.Յ.Դ. իբր կուսակցութիւն եւ ամբողջութիւն չի մասնակցի ազգային մշակութային գործերուն եւ հիմնարկութիւններուն:

«Կուսակցական շրջաններն ու անհատներն են, որ կրնան մասնակցիլ անոնց՝ առանց հակասելու կուսակցութեան սկզբունքներուն, միշտ մնալով սակայն ներշնչողի, ուղղութիւն տուողի, գործակցողի եւ ոչ թէ անօրինողի կամ միակ գործադիրի դերին մէջ»:

**Նիստը փակուում է նշանակելով յաջորդ նիստի տեղը եւ օրը:**

**ՆԻՍՏ VII**

Մարտ 28-ին, 1914:

Ներկայ էին բոլորը, նախկին ժողովի արձանագրութիւնը կարգացուցեց եւ վաւերացուցեց: Ժողովականները ցանկացան իմանալ թէ ի՞նչ է արել մինչեւ այժմս դրամական յանձնաժողովը:

Յանձնաժողովի անդամներից պատասխանում են, որ աշխատանքի մի մասը կատարուած է եւ բողոքում են յանձնաժողովի անդամ Ռուբէն Ասքանազի դէմ, որ վերջինս չէ եկել աշխատանքներին մասնակցելու: Ընկ. Ռուբէն Ասքանազը յանձն է առնում, որ թերացել է եւ միաժամանակ հրաժարուում է դրամական եւ գինական յանձնաժողովի կոչումից: Ժողովը որոշում է նոր անդամ չընտրել, այլ գոհանալ երկու անդամով մարմնի ներկայացուցչի հետ:

**Հերթի է դրուում Համայնական վարչութիւնների եւ Ազգային խորհրդի հարցը:**

Մտքերի փոխանակումից յետոյ պարզուում է, որ պարսկահայերիս Ազգային կրօնական-դատական, հողային եւ քաղաքական շատ հարցեր իրանց բաւարար լուծումը չեն ստանում. կուլտուրական հաստատութիւնները անդեկ ու առանց ծրագրի ու կանոնադրութիւնների անջատ-անջատ կեանք ունին եւ այս բոլորը նրա համար, որ մենք հայութեան միւս հատուածների նման, չունինք ազգային կառավարող մարմիններ, ուստի եւ որոշեց՝ ի նկատի ունենալով այն անկազմակերպ

վիճակը, որի մէջ գտնուում է պարսկահայ հասարակական-կուլտուրական գործերը, այն բազում հողային, դատական եւ քաղաքական հարցերը որ մնում են չբաւարարուած կամ բաւարարուած այս ու այն անհատական միջոցներով, այն հանգամանքը որ մինչեւ օրս պարսկահայերը չունին մի ընդհանուր տեղական կարիքներին եւ պայմաններին համապատասխան ծխական կանոնադրութիւն, դպրոցական ծրագիր եւ վարչական կանոնադրութիւն, մի իրաւական փոխարարութեանց դրութիւն պետութեան եւ հայութեան մէջ, — Երջանային ժողովը որոշեց բանակցել Կ. կոմիտէի եւ Թեհրանի համայնական վարչութեան հետ, որ այս վերջինս վերածուի պատգամաւորական ժողովի, որտեղ կը հաւաքուին բոլոր շրջաններից պատգամաւորներ. ունենալ գաւառներում համայնական վարչութիւններ, որպէս պատգամաւորական ժողովի ստորադաս մարմիններ—ճիւղեր: Մշակել մի մանրամասը կանոնադրութիւն կարող անձանց ձեռքով ուր մատնանշուած լինի պատգամաւորական ժողովի եւ համայնական վարչութեանց ֆունկցիաներն ու սրանց իրար մէջ եւ կառավարութեան հետ ունենալիք փոխարարութիւնները եւ հնարաւորութեան սահմաններում գործնականապէս իրագործել այս մեծ գործը:

Նաեւ Երջանային ժողովը որոշեց այս ուղղութեամբ թէ մամուլի եւ թէ խօսքի միջոցաւ նախապատրաստել ժողովրդին այս ձեւի հիմնարկութիւնների համար:

**Ժողովը անցնում է Երջանների կազմակերպութեան հարցին:**

Երկար խօսակցութիւնների ընթացքում ընկերները մանրամասը թուում էին անցեալի սխալները, կազմակերպութեան թուական ու որակական անհամաչափութիւնը եւ այլն: Մատնանշում էին, որ նոր ընկերներ ընդունելիս պիտի երկար քննութեամբ ընդունել, չգրաւել շատ մարդ ունենալու հեռանկարով, այլ մեծ տեղ տալ գիտակցութեան ու բարոյական արժանիքներին: Խօսուում է, որ շրջանները պիտի սկսել կազմակերպել վստահելի անդամներից, աստիճանաբար կապ ստեղծելով եւ լայնացնելով շարքերը: Ընդունուում է հետեւեալ բանաձեւը.— «Ի նկատի ունենալով վերոյիշեալները եւ անցեալի դրական ու բացասական կողմերը, պարտաւորացնել նորոնոր մարմնին վերակազմել շրջանները եւ խմբերը սեղմ ու մաքուր ընկերներով»:

Հերթի է դրուում. **Դրամական աղբիւրների կառուցումը**, որի մասին ընդունուում է հետեւեալ բանաձեւը.— «Ի նկատի ունենալով կազմակերպութեան սուղ միջոցները եւ նրանց բարելաւելու անհրաժեշտութիւնը, պարտաւորացնել մարմնին հսկել եւ ղեկավարել, որ խմբերը բացի իրենց անդամակցական վճարումները,





ձեռնարկեն ներկայացումներ, վիճակախաղեր եւ այլն հասոյթների միջոցներ:

**Փոքր ընդմիջումով ժողովը հերթի է դնում՝ Ինքնապաշտպանութիւնը մեր շրջանում:**

Մտքերի տաք փոխանակումով պարզուում է, որ ինքնապաշտպանութիւնը մեր շրջանում եւ ընդհանրապէս՝ հերթական հարց է ներկայ պայմաններում եւ ուշադրութեան արժանի, ուստի եւ Շրջանային ժողովը որոշում է»։ Ի նկատի ունենալով Պարսկաստանի ներկայ խախտու կացութիւնը, որը յղի է անակնկալներով եւ պատահարներով, կարեւոր է կազմակերպել ինքնապաշտպանութիւն՝ համաձայն կանոնադրութեան այն կէտի որ ասում է ամէն մի դաշնակցական պարտաւոր է գէնք ունենալ: Մարմինը ունենալու է իր մարտական խումբը սեփական կամ կազմակերպական գէնքերով գինուած»։ Այս որոշումը անցնում է 12 ձայնով ձեռնպահութեամբ 1-ի:

Ի նկատի ունենալով շրջանումս մի շարք անպէտքացած գէնքերը եւ այն, որ մնալով շատ գէնքեր կլիմայական եւ այլ պայմանների պատճառով փչանում են, որ դրանց պահելը դժուարութիւնների հետ է կապուած եւ մեծ ուժերի լարում է պահանջում, Շրջանային ժողովը որոշում է՝

- 1) Ընդունել մարմնի այն որոշումը, ըստ որի պէտք է ծախել բոլոր փչանալու ենթակայ գէնքերը, նաեւ մանր տեսակի ատրճանակները:
- 2) Զէնքի վաճառումից գոյացած գումարը համարել տեղական ինքնապաշտպանութեան ֆոնդ եւ մարմնի անդամներից երկուսի անուամբ դնել ընթացիկ հաշուով մի ապահով տեղ:
- 3) Պահել տեղումս բոլոր տասհարուածեանները համապատասխան թրուով փամփոշտներով, խիստ հսկելով պարբերաբար նրանց մաքրութեան ու անկորուստ մնալու վրայ:
- 4) Բանակցիլ Շահաստանի հետ, ստուգելու ճշգրիտ քանակը այն գէնքերի, որ ղրկուած է նրանց ըէակցիայի օրերին, որից յետոյ 15 հատ նորը (մօսին) ինդրել, որ պահեն եւ մեր պահանջի դէպքում փոխադրել մեզ, իսկ աւելորդը ծախուի, փողը յանձնուի մեզ միացնելու յիշեալ ֆոնդին:

Գալով դրամարկղում մնացած այն գումարին, որ մնացել է Թափառականից<sup>29</sup> ստացուած գումարից, Շրջանային ժողովը որոշեց այդ բոլորը յատկացնել տաճկահայ ինքնապաշտպանութեան, յայտնել այդ մասին Կ. կոմիտէին եւ նրա հաճութիւնը ստանալով փոխադրել անմիջապէս ուր հարկաւոր է:

**Մեր վերաբերմունքը դէպի պարսկական ներկայ կառավարութիւնը, Սահմանադրութիւնը եւ Մէջիսը:**

Ժողովը այս հարցերը միացնում է եւ ընդհանուր ձեւով խօսում, քանի որ մէկը բխում է միւսից: Երկար թեր ու դէմ վիճաբանութիւններ եղան, որի ընթացքում բնութագրուած են կառավարութիւնը, Սահմանադրութիւնը եւ Մէջիսը զանազան տեսակէտներով, որից յետոյ 10 ձայնով ընդդէմ 1-ի եւ ձեռնպահութեամբ 2-ի, ընդունուեց հետեւեալ բանաձեւը:

«Ի նկատի ունենալով որ ներկայումս Պարսկաստանում անկախ կառավարութիւն գոյութիւն չունի ոչ միապետական եւ ոչ սահմանադրական, եւ որ Մէջիսի ընտրութեանց հարցն էլ երկու տիրող պետութիւնների<sup>31</sup> խաղերն են, որոշեց որ կուսակցութիւնը պիտի չէզոք դիրք բռնի թէ դէպի սահմանադրութիւնը, թէ ներկայ կառավարութիւնը եւ թէ դէպի Մէջիսի ընտրութիւնները, չդադարելով միաժամանակ խարազանել եւ պարզել ներկայ կառավարութեան սխալ արարքները՝ ժողովրդին եւ իւր մասսային»:

ՆԻՍՏ VIII

**Մարտ 29-ին:**  
**Ներկայ էին բոլորը: Հերթական հարցն էր՝ Տաճկահայաստանի ռեֆորմները եւ ինքնապաշտպանութիւնը:**

Երկար վիճաբանութիւններ եւ բացատրութիւններ եղան վերջին ռեֆորմների<sup>32</sup> ծագման նշանակութեան մասին, նաեւ ինքնապաշտպանութեան անհրաժեշտութեան մասին, որից յետոյ ժողովը միաձայն ընդունեց հետեւեալ բանաձեւը:

Որ ի նկատի ունենալով, որ ներկայ տաճկահայ ռեֆորմները հայ ժողովրդի կազմակերպուած կռուի արդիւնք չեն, որ նա ծնունդ է եւրոպական պետութիւնների քաղաքական մրցութիւնների, որ ամենամիտնում չափով անգամ չէ բաւարարում թէ կուսակցութեան եւ թէ բովանդակ հայութեան ցանկութիւններին, որ շօշափելի օգուտ չտալով հանդերձ մտքերի շփոթեցում է առաջանում մասսաների մէջ, որ մի ամբողջական Հայաստանը այդ ռեֆորմներով բաժանուում է ու դառնում Գերմանիայի եւ Ռուսաստանի ազդեցութիւնների շրջան, որ վերջապէս ոչ մի երաշխիք չկայ, որ նոյնիսկ այս ձեւի ռեֆորմները կ'իրագործուեն,— որոշուեց յայտարարել ռեֆորմները խիստ պակասաւոր եւ ոչ հայ ժողովրդի կարիքներից բխած, պարզել մասսայի առաջ ռե-

31ա.- Այսինքն Ռուսիոյ եւ Անգլիոյ:  
32.- Խօսքը հայկ. բարենորոգումներու ծրագրին մասին է:







Ֆորմների յետին նպատակը եւ պետութիւնների ձգտումը: Գալով ինքնապաշտպանութեան որոշեց՝

Ի նկատի ունենալով, որ բեֆորմները սխալ հասկաց-  
ւելով լարում են մեր դէմ քրդերին եւ թուրքերին, [որ]  
հարեւան հզօր պետութիւններին ձեռնտու է խլրտում-  
ները այդ մասում, որպէսզի իրենց նպատակներին հաս-  
նեն, որից ինքնապաշտպանութիւնը դառնում է խիստ  
հրամայական եւ անյետաձգելի, Շրջանային ժողովը որ-  
ոշեց, հնարաւոր օժանդակութիւնը կազմակերպել  
ինքնապաշտպանութեան համար եւ խնդրել բարձր  
մարմիններին մեծ կարեւորութիւն տալ երկրի ինքնա-  
պաշտպանութեանը եւ կազմակերպելով այն:

**Հերթի է դրւում Պրոպականտայի հարցը:**

Երկար խօսւում է այն միջոցների եւ պրոմոների<sup>33</sup>  
մասին, որոնցով պիտի առաջ տանել մեր շրջանի գրա-  
ւոր եւ բանաւոր պրոպականտան:

Երկար բացատրութիւններից յետոյ ձայների մեծա-  
մասնութեամբ ընդունւում է հետեւեալը: Շրջանային  
ժողովը միազամայն անհրաժեշտ համարելով գրաւոր  
եւ բանաւոր պրոպականտան, յանձնարարւում է նոր  
ընտրուելիք մարմինն ամենալուրջ ուշադրութիւնը  
դարձնել այդ հարցի վրայ, որպէսզի ըստ ամենայնի բա-  
ւարար արդիւնք ստացուի:

**Ժողովը անցնում է Դատական քաճմին:**

Մարմինը ինքը դատ չունի ժողովին առաջարկելու:  
Չունին եւ նմանապէս միւս ընկերները: Ըստ կարգի  
խօսւում է Մարի եւ Սարումեանի մասին: Առաջինի վե-  
րաբերմամբ ժողովը գտնում է, որ թէեւ Մարը հարցը  
դատի նիւթ է տալիս, բայց դեռ մարմինը իր անելիքը  
նրա հետ չի վերջացրել, գուցէ նա մարմինն բաւարա-  
րում է, ուստի եւ թողնուեց մարմինն շարունակելու  
գործը: Միւսի վերաբերմամբ մի ինչ որ հին որոշում է  
եղել եւ որովհետեւ ոչ ինքը եւ ոչ մի այլ մարդ բողոք  
չունի, մարմինն էլ լաւ իրազեկ չէ հարցին, քանի որ եր-  
կար տարիներ են անցել այդ որոշումից, որ այժմս էլ  
գուցէ ինքը Սարումեանը իրան մեր կուսակից չի համա-  
րում, չզբաղուեց այդ հարցով: Կարճ դադարից յետոյ  
ժողովը անցաւ մարմնի ընտրութեան գաղտնի քուէար-  
կութեամբ: Ըտրուեցին 5 հոգի, երեքը 11 ձայնով, մէկը  
10 ձայնով, իսկ միւսը 8 ձայնով. մասնակցողների թիւն  
էր 13 հոգի:

Նիստը փակուեց նշանակուելով յաջորդ նիստի տե-  
ղը, եւ դրամական յանձնաժողովին լսելու:

**ՆԻՍ IX**

Ապրիլ 11, 1914:

Բացակայում էին Մարոն եւ Պետրոսը:

Դրամական յանձնաժողովը զեկուցանում է իր աշ-  
խատանքների արդիւնքի մասին: Յանձնաժողովը ծախ-  
սերի մի ցանկ է ներկայացնում, որոնց դիմաց մարմինը  
ընկալագրեր չունի:

Մարմնի ներկայացուցիչը բացատրում է, որ մանր  
ծախսերի, (օր. կառքի, հեռագրի, փոստի) համար ամէն  
անգամ հնարաւոր չէ եղել ընկալագրեր ունենալ, որ  
այս հաշիւը 3-4 տարուայ հաշիւ լինելով եւ խառն դրու-  
թեան ժամանակ՝ երբ թղթերը յաճախ ոչնչացւում էին,  
որոշ ընկալագրեր կարող են կորած լինել. մի քանի կէ-  
տերի նկատմամբ էլ թէեւ ընկալագրեր չկան բայց ծախ-  
սը հաստատող գրութիւններ եւ ընկերների վկայու-  
թիւններ կան: Ժողովը բաւարար է համարում դրամա-  
կան-հաշուական մասը, միայն դիտողութիւն է լինում,  
որ հաշուապահութիւնը անսխտեմ է պահւում, որը չի  
ժխտում եւ մարմնի ներկայացուցիչը, բայց արդարաց-  
նում է ժամանակի վայրկեւերում մերով: Վերջը պարզ-  
ւում է, որ ներկայումս առ ձեռն գումար կայ ութ  
հարիւր ինսուս երկու թուման եւ ութ դրան 12 շահի  
(8928 դր. 60 կոպ.) ընդհանուր գումար եւ գինական  
Փոնդը միասին: Մարմնի ներկայացուցիչը զեկուցա-  
նում է, որ մի քանի ստանալիքներ կան, երկար տարի-  
ներից մնացած, որոնց գանձելը անհաւանական է: Ժո-  
ղովը ծանօթանալով այդ ձեւի պահանջների հետ — որո-  
շեց չեղեալ համարել Միլիոնչեանի 25 թումանը, Աղաջա-  
նի 10 թումանը եւ Սիփանի 11 թումանը, որովհետեւ այս  
գումարների պարտքատէրերը չկան, անյայտ են:

**ՆԻՍ X**

Ապրիլ 12-ին:

Ներկայ էին 8 հոգի, բացակայ 5 հոգի (3-ը քաղաքից,  
2-ը քաջաղում):

Ժողովը որոշեց լսել ընկեր Սաքոյի բացատրութիւն-  
ները, վճիռը թողնելով երբ ընկերները լրիւ կը լինեն:

Ընկեր Սաքոն բացատրում է թէ «Քանի որ ես իմ  
անձնական փողից ծախսած եմ եղել, եւ այդ միջոցին,  
պէտք է Բագու գնայի, ինձ փող էր հարկատու իմ սե-  
փական գործերին համար, քանի որ կազմակերպա-  
կան արխիւր-հաշիւները գտնուում էր տաճկաց հիւպա-  
տոսարանում (պահուած էր այնտեղ) եւ ոչ մի հնարա-  
ւորութիւն չկար իմ պահանջի քանակութիւնը իմանալ,  
այդ պատճառով ստիպուած եղայ կազմակերպու-  
թեան այն դրամից՝ որը գտնուում էր Թումանեանների

33.- Պրիմ – իրականացման եղանակ, միջոց:







մօտ, ընկեր Պոնտացու միջոցաւ ստացայ 1000 թուման (հազար) որից յետոյ Բագումն ձերբակալուելուց յետոյ երբ վերադարձայ, հաշիւներից յայտնուեց որ 400 թուման պարտ եմ մնացել»:

ՍԱԲՕ

ՆԻՍ XI

Ապրիլ 15-ին:

Բացակայում էին Մարոն եւ Պետրոսը: Կարգացւում է նախկին երկու նիստի արձանագրութիւնը եւ ընդունւում անփոփոխ:

Ժողովը անցնում է ընկեր Սաքոյի տուած բացատրութիւններին, թէ ինչ պայմաններում է դրամը փոխադրել Բագու:

Երկար բացատրութիւններից ու մտքերի փոխանա-

կումից յետոյ ժողովը իր այս հարցի առթիւ ունեցած նախկին որոշումը փոփոխելու հիմունքներ չի գտնում եւ 10 ձայնով ընդդէմ 1-ի թողնում է նախկին բանաձեւը: Ժողովը անցնում է զինական յանձնաժողովի գեկուցման, որոշում է պահանջել մի մի գէնք Սուքիաս Սանասարեանից, Վարդանից, Ծերունի Նազարեանից, Մուրատից: Արամ Կարապետեանին մի անգամ եւս ժամանակ տալ, ապա պահանջել: Արամ Սանասարեանից, Ալէք Պետրոսեանից եւ Լեւոն Առաքելեանից պահանջել ստուգելուց յետոյ: Ժողովը որոշում է կազմել մի լրիւ ցանկ եղած գէնքերի եւ ակնյայտնի չեղածները ցանկից հանել: Ներկայ նիստով Շրջանային ժողովի նիստերը վերջացած ենք համարում:

Նախագահ՝ ԽԱՉԱԳՈՂ  
Քարտուղար՝ ՍԷՅՐԱՆ





Փաստ. 594-17

Բ 3.- ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՇԱՀ ՔԱՂԱՔԻ» [ԹԵՀՐԱՆ] ԿՈՄԻՏԵԻ ՊԱՏԳԱՍԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

«Շահ քաղաքի» կոմիտեի պատգամաւորական ժողովի առաջին նիստը տեղի ունեցաւ 1914 Օգոստոս 18-ին ներկայութեամբ՝

Ընկերներ Վաչէ՝ տեղական կոմիտեի ներկայացուցիչ

Գուրգէն՝ խմբապետական ժողովի պատգամաւոր Շաւարշ՝ Քրիստափոր խմբի պատգամաւոր Արշալոյս՝ Սերեմջեան խմբի պատգամաւոր Սիւնեցի՝ 2 ձայնով Գաղազանի շրջանի<sup>17</sup> եւ Արշալոյս խմբի պատգամաւոր

Վրէժ՝ Ասուպ խմբի պատգամաւոր  
Վրէժ՝ Կանանց Ալեակ խմբի պատգամաւոր

Բացակայում էին Կ. կոմիտեի ներկայացուցիչը, Գաղազանի շրջանի մի պատգամաւորը եւ Զաւարեան խմբի պատգամաւորը:

Կ. կոմիտեի ներկայացուցիչի բացակայութեան պատճառով ընկեր Շաւարշը ընտրուեց առժամանակեայ նախագահ իսկ ընկեր Վրէժը քարտուղար:

Ժողովի օրակարգն էր.

- 1.- Խորհրդակցական ձայնով հրաւիրուելիք ընկերների հարցը:
- 2.- Տեղը եւ ժամանակը:
- 3.- Օրակարգի դասաւորումը:

Ժողովը նկատի առնելով որ յեղափոխական տեսակէտով կարեւորութիւն ներկայացնող վայրում գտնուող գործիչները իրաւունք ունեն հրաւիրելու մի ձայնի իրաւունքով (համաձայն ներքին կանոնադրութեան)

Որոշեց ոչ թէ խորհրդակցական այլ վճռական ձայնով հրաւիրել հետեւեալ ընկերներին մասնակցելու պատգամաւորական ժողովին. ընկեր[ներ] Պարթեւ, Կայծ, Բարբաբայ, Նժդէհ, Ամատունի: Նաեւ որոշուեց երկրորդ նիստը շաբաթ երեկոյեան 23 Օգոստոս ժամը 8ից -12. նոյն տեղը, իսկ դրա յաջորդ նիստը 24 Օգոստոս կէսօրից անց ժամը 3-ից 10-ը:

3.- Ժողովը օրակարգի դասաւորման համար առանձնապէս փոփոխութեան չենթարկեց, որոշեց թողնել նոյնութեամբ միայն թէ առաջի տեղը գրաւէ ինքնապաշտպանութիւնը եւ միացնել 4 օրակարգերը 2-ի, այն (6-7) եւ (10-11):

Պատգամաւորներից միմիայն երկուսը ունէին իրենց յանձնարարականները՝ ընկեր Սիւնեցի եւ Վրէժ:

Նախագահ՝ ՇԱԽԱՐՇ  
Քարտուղար՝ ՎՐԷՅԺ

Պատգամաւորական ժողովի երկրորդ նիստը տեղի ունեցաւ Օգոստոս 30-ին, երեկոյեան ժամը 9-ին, ներկայութեամբ՝

Ընկերներ Ահրիման՝ Կ. կոմիտեի ներկայացուցիչը (եւ իբրեւ նախագահ)

Վաչէ՝ տեղական կոմիտեի ներկայացուցիչ Սիւնեցի՝ 2 ձայնով Գաղազանի շրջանի եւ Արշալոյս խմբի պատգամաւոր

Շաւարշ՝ Քրիստափոր խմբի պատգամաւոր Վրէժ՝ Ասուպ խմբի պատգամաւոր Բուղարացի՝ Զաւարեան խմբի պատգամաւոր Արշալոյս՝ Սերեմջեան խմբի պատգամաւոր Սաթօ՝ Կանանց Ալեակ խմբի պատգամաւոր:

Ներկայ էին հրաւիրուած ընկերները բացառութեամբ ընկեր Ամատունիի, ընկեր Սեդրակի՝ Գաղազանի շրջանից:

Ժողովը բացեց նախկին նախագահն, յանձնելով ընկեր Ահրիմանին ստանձնելու իւր պաշտօնը. նախքան ժողովի գբաղուելը ընկեր Կայծը առաջարկեց ընկեր Կոմսի ցանկութիւնը մասնակցելու պատգամաւորական նիստի որ եւ ընդունուեց միաձայն:

Նախկին արձանագրութիւնը կարդալուց յետոյ ժողովը անցաւ կոմիտեի տուած օրակարգին: Տեղական կոմիտեի ներկայացուցիչը կարդաց Շահ քաղաքի կոմիտեի 1913 մայիս 1-ից մինչեւ 1914 մայիս 31-ի տեղեկագիրը:

Ժողովը նկատի ունենալով մի քանի կէտեր դրամական տեսակէտից, մանրամասն քննադատութեան ենթարկեց եւ եկաւ հետեւեալ եզրակացութեան որ տեղական մարմինը անտարբեր է վերաբերուել. առաջին՝ դանձելու Թաղիաբատ գիւղի գէնքերի հաշիւը, երկրորդ՝ նա չէ պահանջել Գաղազանի շրջանից իւր 6 ամսւայ հաշիւները, իւր ժամանակին: Առաջին կէտին Կ. ներկայացուցիչը աշխատեց բաւարարութիւն տալ պատճառաբանելով որ կոմիտէն չէ գլացել իւր պարտքը



կատարել, այն է որոշել է 3 ընկերներ անցնելու Թաղիաբատ գիւղը եւ գանձել կուսակցական դրամը, բայց ինչ ինչ պատճառներով ընկերները իրենց անհատական պատասխանատուութեան ենթարկելով կոմիտէի այդ որոշումը, անկատար են թողել: Իսկ երկրորդ կէտին նոյնպէս ներկայացուցիչը պատճառաբանեց որ կոմիտէն մի քանի նամակներ ուղղելով Գաղազանի շրջանին, անպատասխան են մնացել եւ այդ բաւականաչափ նպաստել է ուշացնելու իրենց գործունէութիւնը եւ որ նա սեպտեմբերի վերջին պաշտօնապէս յայտնել է: Բացի այդ ժողովը զբաղուեց զինական գործերով: Ինչպէս արդէն մարմնի տեղեկագրում յիշուել էր, կոմիտէն տեղական զէնքերի մասին չունենալով ոչ մի դոկիւմենտ, ձեռնամուխ չի եղել նրանց հաշիւները իմանալու, իսկ Գաղազանի շրջանինը եւս գտնելով նոյն դրութեան մէջ, չէ յաջողուել մարմնին կազմակերպական զէնքերը ամբողջացնել: Ժողովը չգտնելով ոչ մի բաւարարութիւն, տուեց հետեւեալ բանաձեւը.

«Նկատի ունենալով այն եղած պայմանները որոնց մէջ գործել է Շահ քաղաքի կոմիտէն, Պատգամաւորական ժողովը գտնում է նրա կազմակերպական գործունէութիւնը բաւարար, իսկ զինական եւ դրամական գործի մէջ թոյլ».

սոյն բանաձեւը ընդունուեց միաձայն ընդդէմ մէկի եւ ձեռնպահութեամբ մէկի:

**Դրամական հաշիւներ.** Ժողովը միմիայն բաւականացաւ իմանալ ընդհանուր ելումուտը, որ է՝ մոտ 3341,75, ելք՝ 345,65, իսկ նրա վերստուգման համար որոշուեց մի յանձնարումը 3 հոգուց, ընկերներ Շաւարշ, Բուրղարացի, Սիւնեցի որը ստուգելով կը բերէ իւր տեղեկութիւնները զեկուցանելու յաջորդ ժողովին:

(Օրակարգի III կէտը) **Ինքնապաշտպանութիւն.** Ժողովը գտնելով ինքնապաշտպանութիւնը ներկայ պայմաններում աւելի անհրաժեշտ, առաջի տեղը դասաւորեց. բազմակողմանի վիճաբանութիւնից յետոյ, ընկերներ Վաչէ եւ Կայծր տուեցին իրենց բանաձեւը. առաջինը անցաւ ձայնի մեծամասնութեամբ, իսկ երկրորդը 2 ձայնով միայն: [Առաջին բանաձեւը].—

- 1) Նկատի ունենալով քաղաքական ծանր պայմանները, որը կարող է տխուր հետեւանքներ ծագել եւ յենուելով կուսակցութեան ընդհանուր ժողովների որոշման, ինքնապաշտպանութեան առթիւ Պատգամաւորական ժողովը հրահանգում է նորընտիր կոմիտէին
- Ա) Անյապաղ կենտրոնացնել կուսակցական զէնքերը:
- Բ) Տրամադիր զինական ոյժերից կազմել թաղային

34.- Յիշուած անունները կապ չունին այդ ծածկանուններով ծանօթ անձնատրոսիսներուն հետ:

- ինքնապաշտպանութեան խմբեր:
- Գ) Ընկերների աջակցութեամբ աշխատել համայնական խորհրդի միջոցաւ պատրաստել ուսեստ:
- Դ) Ինքնապաշտպանութեան առթիւ արուելիք քայլերը լինեն խիստ գաղտնի:
- Ե) Համաձայն ներքին կանոնադրութեան կազմել ինքնապաշտպանութեան շտապ:
- Ձ) Հանգանակել մի որոշ գումար ինքնապաշտպանութեան համար:
- Է) Աշխատել իւր գործունէութեան ընթացքում առաջ բերել նաեւ կուսակցական ինքնապաշտպանութեան միջոցներ՝ զէնք գնել, զինավարժութեան, եւ այլն:

Երկրորդ բանաձեւը.

«Ի նկատի ունենալով որ ինքնապաշտպանութեան հարցը գուտ ազգային խնդիր է, որի մէջ կարող է մասնակցել ամէն դասակարգի անհատ. որ Հ. Յ. Դաշնակցութիւնը լինելով մի յեղափոխական կուսակցութիւն, ոչ մի բարոյական իրաւունք ունի կազմակերպական նպատակին դրամական միջոցները յատկացնել ինքնապաշտպանութեան խնդրին. դրա հանդէպ ի նկատի ունենալով եւ այն որ հայ ժողովուրդը շրջապատուած լինելով ու ապրելով մահամետական բարբարոսութեան մէջ, ինքնապաշտպանութեան հարցը միշտ էլ դամոկլեան սրի նման կախուած է նրա գլխին եւ որ՝ ազգային] գոյութեան խնդրով շահագրգռուած է եւ ինք Հ. Յ. Դաշնակցութիւնը, եւ որ ժողովուրդի մէջ առհասարակ պակասում է նախաձեռնութեան ոգին,— ուստի առժամանակ ինքնապաշտպանութեան գործը ղեկավարելու է Հ. Յ. Դաշնակցութիւնը որը յանձնելու է այդ նպատակով կազմուած մի յատուկ մարմնի, կազմակերպելու այդ եւ ժամանակի ընթացքում յանձնելու իրեն ժողովուրդի ձեռքը:

Վտանգի մոմէնտին Հ. Յ. Դաշնակցութիւնը իւր ձեռքի տակ եղած միջոցներով պաշտպանելու է խաղաղ ժողովուրդը, միաժամանակ եւ միշտ աշխատելով համերաշխութեան ու հարեւան ժողովուրդին գիտակցութեան բերելու նպատակով»:

Նախագահ՝ ԱՀՐԻՄԱՆ  
Քարտուղար՝ ՎՐԷԺ

Պատգամաւորական ժողովի III նիստը տեղի ունեցաւ 31 Օգոստոսին, բացակայութեամբ ընկերներ՝ Վաչէ՝ տեղական կոմիտէի ներկայացուցիչ Գուրգէն՝ Խմբապետականի պատգամաւոր Սեդրակ՝ Գաղազանի ենթակոմիտէ:

Հրաւիրուած ընկերներից [բացակայ են] Նժդէհ եւ Կոմսը<sup>34</sup> (որը ժողովի ընթացքում եկաւ):  
Նախ քան զբաղուելը օրակարգի [հարցով], ժողովը





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

կարգաց ընկեր Վաչէ[ի] նամակը, որով յայտնում էր որ ինքն դադարում է գործօն դաշնակցական լինելուց:

Պարզ բան է, Պատգամաւորական ժողովը չէր կարող լուծթեամբ անցնել ընկեր Վաչէի կատարած հակատիտիպլինական այդ քայլի վրայից, եւ նկատի առնելով որ Պատգ. ժողովը իւր զբաղմունքների ընթացքում շարունակ հարցապնդումներ է անելու նրան, եւ որ նրա այդ ընթացքը հակատիտիպլինական է, եւ որ նրան էր վերապահւում Պատգամաւորական ժողովի որոշումները յայտնել նախկին մարմինն եւ նա մինչ նոր ընտրութիւն կատարուելը հրաժարուած չի համարուում,— ժողովը դատապարտելի գտաւ նրա արած քայլը, համարելով որ նա սխալ է ըմբռնել իւր պարտականութիւնը. բացի այդ, ժողովը գտնելով նրա հրաժարականը անտեղի եւ առանց որեւէ պատճառի, յանձնարարուեց ընկեր Բարաբային իմանալ նրա հրաժարման պատճառը եւ յայտնել նորընտիր մարմինն:

**III Սեր դիրքը կուլտուրական հիմնարկութիւնների հանդէպ**

Նկատի ունենալով Ը.րդ Ընդհանուր ժողովի որոշումները, որ հակառակ է կուլտուրական հիմնարկութիւնների ակտիւ մասնակցելուն՝ ոյժերի վատնում առաջ չբերելու համար, բայց որովհետեւ Պարսկաստանի տեղական հանգամանքները այնպէս են որ մեր կղզիանալը կը պատճառէ կուլտուրական հիմնարկութեանց ջլատումը, եւ որ մեր մէջ դեռ եւս քաղաքացիական պարտաճանաչութիւնը շատ թոյլ է եւ բացի այդ Ազգային խորհուրդը Պարսկաստանի ապագայ հայ սահմանադրութեան սաղմը պիտի լինի,— ժողովը տուեց հետեւեալ բանաձեւը, որը անցաւ միաձայն.

«Նկատի ունենալով որ մեր պայմանները եւ գործունէութեան շրջանները տարբեր են, համեմատած այլ վայրերի հետ, Պատգամաւորական ժողովը որոշում է մանակցել ազգային կուլտուրական հիմնարկութիւններին այն պայմանով որ այդ մասնակցութիւնը չխանգարէ կազմակերպական գործունէութիւնը»:

**IV Գրաւոր եւ բանաւոր պրոպագանդի միջոցներ**

Ժողովը յանձնարարեց առաջնորդուել Շրջանային II [ժողովի] որոշումներով:

**V Գրադարանի ճոխացում**

Գրադարանի ճոխացման առթիւ որոշուեց յետ առնել Կ. կոմիտէից այս տարուայ ընթացքում յանձնուած դրամները եւ իւր նպատակին գործադրել, բերել տարով յեղափոխական գրքեր:

**VI եւ VII Գիւղացիական միութիւններ եւ մեր տակտիկը գիւղերում**

Պատ. ժողովը նկատի առնելով որ գիւղացիական միութիւնների հարցը վերջին Շրջանային ժողովում դրուած էր, ուստի ընդունելով նախկին մարմնի տեսակէտը, որոշեց նորընտիր մարմինը իւր լուրջ ուշադրութիւնը դարձնէ ամէն կերպ, աշխատելով զարգացնել այդ միութիւնները որքան կարելի է, իսկ տակտիկի մասին, ղեկավարուել Շահաստանի երկրորդ Շրջանային ժողովի որոշումներով:

**VIII Սպառողական ընկերութիւններ**

Սպ[առողական] ընկ[երութիւններու] մասին առանց բացառութեամբ բոլորն էլ դէմ էին արտայայտուում առարկելով որ դրանք դեռեւս կեանք չեն կարող ունենալ, քանի որ սպառող մասսա չունենք եւ միութիւնները չեն ծառայում իրենց նպատակին. ուստի անցաւ հետեւեալ բանաձեւը.

Ի նկատի ունենալով որ միութիւնները չեն ծառայած իրենց նպատակին, ժողովս որոշեց ներկայումս հրաժարուել այդ միութիւններից:

**IX Սեր դիրքը պարսիկ աշխատատրութեան հանդէպ**

Պատ. ժողովը որոշեց ղեկավարուել Շահաստանի Շրջանային IIրդ ժողովի որոշումներով:

**X եւ XI Սեր դիրքը կուսակցութեան դիտալիմային չենթարկուող անհատների հանդէպ եւ մեր բռնելիք դիրքը պրովոկատորների հանդէպ**

Պատ. ժողովը տեսնելով որ ներկայ վայրում դիտալիմային չենթարկուող անհատների օրինակները մասնաւոր դէպքեր են, որոշեց դրանց քննութիւնները վերապահել տեղական պատշաճ մարմիններին. ինչ վերաբերում է պրովոկատորներին, քանի որ նոյնպէս մասնաւոր ինդիւիդներ են, որոշեց մասնաւոր վճիռներ կայանան տեղական պատշաճ մարմնի ձեռքով:

**XII Նոր առաջարկներ եւ դատեր**

-----

**XIII Ընտրութիւնները**

Նոր մարմնի ընտրութիւնը կատարուեց համերաշխութեամբ, ներկայութեամբ 3 /4-ի:

Որոշուեց յաջորդ նիստը լինի Հինգշաբթի Սեպ. 4 1914, ուր կը վաւերացուի արձանագրութիւնը:

Նախագահ ԱՀՐԻՄԱՆ  
Քարտուղար ՎՐԺԺ



Փաստ. 593-57

**Բ 4.– Հ.Յ.Դ. ԹԵՀՐԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ  
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ ԱՌԹԻՒ**

**ՄԷՋԼԻՍԸ ԵՒ ՄԵՆՔ**

Ընկերներ եւ քաղաքացիներ,

Վաղուց արդէն սկսուել են Մէջլիսի ընտրութիւնները: Հարկ չկայ շեշտել, որ այդ հիմնարկութեան բացումը, գոնէ ըստ երեւոյթին, մի նշանակալից իրողութիւն է Պարսկաստանի քաղաքական կեանքում, մի իրողութիւն, որի հանդէպ իւրաքանչիւր ոք, մանաւանդ մի քաղաքական կուսակցութիւն, պարտաւոր է իւր դիրքը որոշել եւ իւր խօսքն ասել:

Մենք արդէն մեր խօսքն ասել ենք, մեր դիրքը որոշել: Այժմ հարկաւոր է պարզել մեր նախորդ թուցիկի միտքը:

Մի ժամանակ խորապէս համոզուած էինք, որ պարսկական շարժումները՝ դարերով տառապած մեր երկիրը տանելու եւ դէպի ճշմարիտ ազատութիւնը, հաւատացած էինք, որ ժողովուրդը վերածնունդ է, որ պետութիւնն ունենալու է սահմանադրական կարգեր եւ այդ կարգերի մէջ ոչնչանալու եւ այն անջրպետները, որոնք Իրանի զանազան տարրերին բաժանել են իրարից եւ շատերին դարձրել երկրի խորթ զաւակներ: Համոզուած էինք վերջապէս, որ երկրի մէջ դարերով արմատացած սանձարձակ կամայականութիւնը, կաշառակերութիւնը եւ արդարադատութեան բացակայութիւնը, որ կրծում են պետութեան հիմքերը, դիակնացնում նրան եւ մեր երկիրը, տանում դէպի կորստեան անդունդը, վերանալու են եւ պատմական Իրանը թարմացած պետականութեան նոր սկզբունքներով՝ կենդանանալու է:

Ահա այս հաւատով էր, որ մենք ոգեւորուած մեր հայրենիքի վերածնութեան սրբազան գաղափարով՝ առանց վերապահութեան տուինք մեր ոյժերի մաքսիմումը, որպէսզի կատարած լինինք մեր յեղափոխականի եւ քաղաքացու պարտականութիւնները: Ընտրութիւններն ու սահմանադրութիւնն անշուշտ բազմաթիւ թերութիւններ ունեին, մանաւանդ զանազան ասասիի<sup>35</sup> այն յօդուածը, որով խախտուում էր ազգերի իրաւահաւասարութեան սկզբունքը: Բայց խանդավառութեան օրեր էին եւ մեզնից գործ էր պահանջում: Բացի դրանից՝ մտածում էինք, որ դրանք իւրաքանչիւր նոր շարժման հետ կապուած շատ անգամ անխուսափելի ժամանակաւոր սայթաքումներ են, որոնք հետագայ պարլամենտական ստեղծագործող աշխատանքի ժամանակ պիտի ուղղուէին: Եւ մենք աչք զոցեցինք դրանց վրայ, որպէսզի հակասահմանադրական եւ արտաքին թշնամի ոյժերի խաղերից արհիւնլուայ եղող երկրի առջեւ մի նոր դժուարութիւն հանած չլինինք: Աշխատեցինք ընդհակառակը խեղդել թշնամի ոյժերը, բուժել ծուաւուղ հայրենիքի վերքերը:

Մեր բոլոր սպասելիքներն իրականացնողը լինելու էր ժողովրդական ներկայացուցչութիւնը – Մէջլիսը. սպասում էինք, որ նա իր ուղղամիտ օրէնսդրական աշխատանքով կը վերացնի կատարուած թերութիւնները, կ'ըմբռնի երկրի պահանջները եւ այդ պահանջներին համապատասխան ուղղութիւն կը տայ պետական կեանքին: Բայց մեր յոյսերն այդտեղ էլ ի դերել ելան: Առաջին երկու մէջլիսները, որ համեմատաբար աւելի նպաստաւոր պայմանների մէջ էին գործում, չկարողացան այդ ուղղութեամբ ոչ մի դրական աշխատանք կատարել: Պաշտօնէութեան սանձարձակութիւնները, ազգերին բաժանող

35.- Հիմնական օրէնքի:







անջրպետները, հին ռեժիմի ախտերը մնացին իրենց լիակատար ոյժի մէջ: Դրութիւնն աւելի եւս ողբալի էր դարձնում այն փաստը, որ Մէջլիսն իւր քաղաքական դաւանանքներով այնքան տարտամ էր, որ անընդունակ եղաւ մի կենտրոն, պարլամենտական մեծամասնութիւն կազմելու: Այնու ամենայնիւ մենք երկրորդ Մէջլիսում ունեինք մեր ներկայացուցիչը: Կարծում էինք, որ մեր ձայնը լսելի կ'անենք, որ մեր տարրական պահանջներին բաւարարութիւն կը տրուի: Կարծում էինք, որ Մէջլիսը կը լինի այն վայրը, որտեղից ռամկավարական գաղափարները կ'արծարծուին եւ որպէս մի կենսատու հով, կը տարածուին մեր երկրի բոլոր անկիւնները: Սակայն ե՛ր մեր ե՛ր բազմատանջ ժողովրդի սպասելիքները մեծ մասամբ խորտակուեցան: Այժմ հինն է թագաւորում իւր բոլոր այլանդակութիւններով: Ժողովրդական զանգուածները հիասթափուեցին: Յեղափոխութիւն, սահմանադրութիւն, Մէջլիս՝ բոլորը վարկաբեկուած, հեղինակութիւնը կորցրած է: Տրուած բազմաթիւ զոհերը, աւերն ու կոտորածը մնացին ապարդիւն: Միայն հովանաւոր պետութիւններն են<sup>36</sup>, որ իրենց շահերից մղուած օրէցօր առաջ են գնում, եւ երկիրն ապրում է իւր անկախութեան վերջին օրերը: Կառավարութիւնն իւր ամենախղճուկ քայլերն էլ առնելիս ստիպուած է նկատի ունենալ հզօր հովանաւորների կամքը...

Եւ ահա այս պայմաններում հրաւիրում է երրորդ Մէջլիսը: Ինչ խօսք, որ այդ մէջլիսի կատարած գործը կարող է լինել միայն բացասական:

Հովանաւորները եթէ խոչընդոտ չեն հանդիսացել Մէջլիս գումարելու դէմ, նշանակում է, որ նոքա սպասում են նրանից միայն մի բան, այն որ Մէջլիսը պիտի վաւերացնի իրենց պահանջները. երկրի անկախութեան վերջին մնացորդներն էլ պիտի վաճառուեն: Եղած ընտրութիւնների արդիւնքը այլ եզրակացութեան բերել չի կարող: Եւ մեր ապիկար դիպլոմատները ոչ մի միջոց չեն խնայում Մէջլիսը դարձնելու երկիրը վաճառելու ընդունակ դաւաճանների մի հաւաքածու: Ճշմարիտ ժողովրդական ներկայացուցչի ձայնը խեղդուելու է այդ բախտախնդիրների, այդ թիկնաթոռ որոնողների մէջ: Ժողովուրդը արհամարհուած է, նրա բարեկամները հալածուած ասպարէզից:

Այս անմխիթար դրութիւնն է, որ ստիպեց մեզ բոյկոտի ենթարկել Մէջլիսը:

Ժողովրդական շարժումների ժամանակ մենք ժողովրդի հետ էինք, այժմ էլ նրա հետ ենք: Այսօր պետութեան գլուխ կանգնած, ժողովրդի թշնամիները Մէջլիս են կազմում միայն նրան եւ երկրին դաւաճանելու յետին նպատակով: Երրորդ Մէջլիսը ժողովրդի պահանջը չէ: Նա յեղափոխութեան ապօրինի զաւակն է, եւ մենք չենք կարող ձեռք մեկնել նրան: Պարսիկ ժողովրդի հետ մենք զոհեր տուինք եւ արին թափեցինք, որպէսզի այդ զոհերով ու արիւնով զարգանան ամբանան մեր հայրենիքի անկախութեան հիմքերը, որպէսզի ճանապարհ հարթած լինինք մի բարօր ու երջանիկ ապագայի:

Եւ այսօր մենք չենք ուզում դաւաճանել մեր հայրենիքին:

Վե՛ր կաց, Իրանի ժողովուրդ: Բո ապիկար գործիչները քեզ դէպի կորուստ են առաջնորդում: Սթափուիր եւ տէր կանգնիր քո իրաւունքներին, քո երկրին, եւ այն ժամանակ մենք այս սրբազան պայքարի մէջ առաջին շարքերում կը լինինք:

Հ.Յ.Դ. ՇԱՀՍՏԱՆԻ Կ. ԿՈՍԻՏԷ

19 Յունիս 1914

36.- Նկատի ունի Ռուսիան եւ Անգլիան, որոնք իրենց ազդեցութեան գօտիները ստեղծած էին Պարսկաստանի հետ:





**ԳԼՈՒԽ X**

**Հ.Յ.Դ. ՎԱՆ – ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ**

Ինչ որ ըսուեցաւ արդէն 1914-15 տարիներու Դաշնակցութեան արխիւի կորուստին մասին, այդ հաստատումը աւելիով կը պատշաճի Արեւմտահայաստանին, յատկապէս Կարին, Տարօն եւ Վասպուրական նահանգներուն, որոնք ողնայարը կը կազմէին հայ ազատագրական պայքարին: Յաւօք, Կարնոյ եւ Տարօնի յատկացումը առանձին գլուխները պիտի պակսին այս հատորին: Արհաւիրքի օրերուն այդ վայրերէն Պոլիս հասած եւ արտասահման փոխանցուած հազուադէպ տեղեկութիւնները տրուած են արդէն նախորդող բաժիններուն մէջ:

Վասպուրականին յատկացուած ներկայ գլուխը կազմեցինք տարբեր ճամբաներով մեզի հասած նիւթերով, յատկապէս հաշուի առնելով Մեծ եղեռնի օրերուն այդ նահանգին մէջ տեղի ունեցող իրադարձութեանց պատմական նշանակութիւնը:

1913-15 տարիներուն արդարեւ Վան-Վասպուրականի կուսակցական եւ հասարակական կեանքը բացառիկ վերելք կ'ապրի: Վռամեանի, Արամ Մանուկեանի, Իշխանի եւ բազմաթիւ այլ ականաւոր դէմքերու կողքին եւ անոնց ոգետրիչ շունչին տակ հասակ նետած երիտասարդութիւն մը խանդավառ մասնակցութիւն ունի ազգային, կուսակցական, կրթական ու մշակութային գործերուն մէջ: Տիրական է Դաշնակցութեան հեղինակութիւնը ոչ միայն հայկական միջավայրին, այլեւ քիւրտ տարրին եւ մինչեւ իսկ կառավարական շրջանակներուն մէջ: Տարիներու ընթացքին ձեռք բերուած ինքնապաշտպանութեան միջոցները, ինչպէս նաեւ զուտեմբումն մէջ հայ մարտական զինեալ խումբերուն արթուն ներկայութիւնը՝ լուրջ նախադրեալներ էին, որպէսզի կարելի ըլլար գէթ մասամբ զսպել հայութեան հանդէպ թշնամական տրամադրութիւններ սնուցանող տարրերը: Եւ եթէ այս բոլորին վրայ աւելցնենք հայութեան բոլոր խաւերուն մէջ տիրող համերաշխութեան ոգին – ստեղծուած դեռ 1913 թ.ի Ապրիլին կուսակցութիւններու միջեւ կնքուած համաձայնագրով–, այն ատեն հասկնալի կը դառնան թուրք կառավարութեան կողմէ լարուած սադրանքներուն ձախտղեցումը եւ, մանաւանդ, 1915 թ.ի Վանի միամետայ հերոսամարտին յաղթական ելքը:

\*  
\* \*

Վան-Վասպուրականին յատկացուած այս գլուխին առաջին բաժնով կը տրուին Ա. Վռամեանի եւ այլոց գրութիւնները: 1913 թ.ի երկրորդ կիսամեակին գրուած այդ նամակները որոշ գաղափար կու տան նախապատերազմեան ժամանակաշրջանին հայկական այդ միջավայրի ազգային-կուսակցական եռուն կեանքին մասին:

Երկրորդ բաժնի յատկանշական փաստաթուղթեր են.–

ա) Իբրեւ Վանի երեսփոխան Ա. Վռամեանի 1915 թ. 5 Յունուարի Յուշագիրը (ֆրանսերէն, հայերէն թարգմանութեամբ), ուղղուած Կարնոյ եւ Վանի նահանգապետ Թահսին պէյին, բողոքելու համար զօրակոչի կոչուած հայ բանակայիներու զինաթափման եւ զուտեմբումն մէջ հայոց դէմ գործուած անկարգութիւններուն դէմ:

բ) Հմայեակ Մանուկեանի «Տեղեկագիր Վասպուրականի դէպքերու մասին, 1913-1918»: Դէպքերու մասնակից Հ. Մանուկեանի տեղեկագրին առաջին բաժինը կ'ընդգրկէ Վասպուրականի շրջանին մէջ տեղի ունեցած անցուդարձերը մինչեւ ինքնապաշտպանական կռիւներու սկզբնաւորումը: Տեղեկագիրը դժբախտաբար զանց առած է կռիւներու նկարագրութիւնը եւ անցած յաջորդող դէպքերուն: Նշենք այստեղ որ հակառակ արխիւներու սակաւախօսութեան, այս կռիւները եւ անոնց յարակից եղելութիւնները լայնօրէն պարզաբանուած են հայ պատմագրութեան եւ վերապրողներու յուշագրութեանց մէջ:

գ) Անդրանիկի միջոցով արտասահման հասցուած Արամ Մանուկեանի օգնութեան կանչը. ապա իբրեւ նահանգապետ այս վերջինի մէջ Յայտարարութիւնը, ինչպէս նաեւ Ռոստոմի 23 Մայիս թուակիր նամակը Ժընեւի ընկերներուն, ազատագրուած Վան տուած իր այցելութեան օրերուն:



Ա 1.- ՎՈՒԱՍԵԱՆԵՆ Հ.Յ.Դ. ԱՍԵՐԻԿԱՅԻ Կ. Կ.ԻՆ

Բազու, Նոյ. 9/22 1913

Պոսթրնի Հ.Յ.Դ. արխիւներուն մէջ վերջերս յայտնաբերուեցաւ Վոսմեանի չհամարակալուած այս նամակը, որ յաւելեալ ծանօթութիւններ կը պարունակէ քիւրտ ցեղապետ Սէիտ Ալիի հետ 1913 թ. 16 Մայիսին, յանուն Վասպուրականի Կեդր. կոմիտէին իր կնքած համաձայնագրին: Վերջինս, օսմաներէն բնագրի պատճէնով եւ հայերէն թարգմանութեամբ, տեսնել «ՆԻՒԹԵՐ»ու Ժ. հատորին մէջ, էջ 272-73:

Վոսմեանի նորայայտ նամակներէն է նաեւ յաջորդող՝ Նոյեմբեր 22-ի գրութիւնը, նոյնպէս չհամարակալուած:

Սիրելի ընկերներ,

Կը հաստատեմ Հոկտ. 12 (Հին] տ[ումար]) նամակս, զոր կը յուսամ ցարդ ստացած լինիք: Պարապոյ ժամ մը գտնելով՝ խոստովանիս համաձայն կը փութամ գրել ձեզ այս անգամ ալ Վասպուրականի մեր գործունէութեան ուրիշ տիրոջթի (domaine) մը մասին:

Քիւրտերու հետ մեր յարաբերութեանց խնդիրն է ատ, որ շահեկան փուլի մը մէջ կը մտնէ:

Ողբացեալ Ռափայէլի<sup>1</sup> մահուան փոխ-վրէժը սկզբունքի խնդիր մը եղաւ մեզ համար, անցեալ տարի: Դաշնակցական ընկեր մը կը սպաննուէր օր ցերեկով, դաւադրութեամբ, ոչ իր սոսկական հանգամանքով, այլ քաղաքական եւ մշակոյթի իբրեւ գործիչ: Ստուգելէ ետք թէ որո՞նք եղած էին կազմակերպիչներն ու դրդիչները, որոշեցինք խստիւ ու անողոք հետապնդել գանոնք: Նախ՝ ամէն պատասխանատուութիւն կառավարութեան վրայ ձգելու համար, անոր օրինական ուժին դիմումներ ըրինք: Ձեզ յայտնի են նախորդ կուսակալ իզգէթին հետ մեր ըրած բոլոր յայտարարութիւնները, հեռագիրները, թաղման առթիւ եղած ցոյցերը եւայլն: Մեր նպատակն էր՝ մեր ծայրայեղ միջոցներն արդարացնել՝ կառավարութեան իսկ անգործութեամբը: Երբ ապարդիւն անցեր էին այդ բոլորը, ինչ որ արդէն իսկ կ'ակնկալէինք — ձեռնարկուեցաւ գործի- փոխ-վրէժը անմեղները պիտի խնայէր, յանցաւորները պիտի հարուածէր: Ժողովրդի հետ չէ որ գործ ունէինք, այլ աւագակներու եւ անոնց արբանեակներուն հետ: Հետեւանքը ծանօթ է ձեզ. Հաճի Եաղուբի եւ Ծ ընկերներու խմբովին ահաբեկումի ենթարկումը՝ քանի մը ամիս ետք:

Շարքը ատով չլմնցաւ. կը մնային ուրիշներ ալ: Այդ շարքին մէջ մէջ էին այս տարի Կարկառի Եղեգիս գիւղի առջեւ սպաննուած երկու եղբայրները, ծանօթ չարագործ քիւրտ աղաներ:

Կառավարութեան խստութիւնները օգուտ չունեցան. յանցաւորներն անյայտ մնացին — աւելի ճիշդ յայտնի էին, բայց անծանօթ անձեր: Սարսափը սկսաւ տարածել իր թեւերը:

Այս գարնանը Ռափայէլի սպանութեան կազմակերպիչներէն մէկը, որ երկիւղէն դադրած էր այլեւս Վան եւ Ոստան երթեւեկելէ՝ դիմեց Աղթամարայ փոխանորդին, խնդրելով հաշտուիլ «կոմիտէին» հետ: Այնտեղէն պատահանուեցաւ թէ Աղթամարը կրօնական գործերով միայն կը զբաղի, եւ հետեւաբար սխալ դուռ գարնուած էր:

Քիչ ետք անհաւատալի լուր մը եկաւ մեզ, թէ ծանօթ աւատապետ, Խիզանի հարստահարիչ եւ հեղինակաւոր շէյխ Սէիտ Ալին տեսակցութիւն կ'ուզէ ունենալ մեզ հետ: Ի սկզբան կարեւորութիւն չտուինք. երբ կէսպաշտօնապէս կրկին ու կրկին անգամ դիմում եղաւ մեզ, ծանօթ քիւրտ աղայի մը միջոցով, որ անձնական յարաբերութիւններ կը մշակէր գաւառի մեր ընկերներու հետ, որոշեցինք չմերժել: Մայիս 12-ին էր որ տեղի ունեցաւ մեր հանդիպումը, Կեցան գաւառի Քարուակ գիւղում, Սէիտ Ալիի եւ Դաշնակցութեան] ազգացութեան սահմաններու մէջտեղ կէտ մը: Չորս օր է ի վեր շէյխը եկած կը սպասէր հոն մեզ, 40 ձիաւորներով: Դաշն. Վասպ[ուրականի] Կ. կ[ոմիտէի] կողմէն ես էի եւ Կ. Կ-ի մէկ անդամը, եւ խմբապետ ընկեր մը (ծանօթ Կայծակ Առաքելը<sup>2</sup>): Երեւութապէս մենք անգէն էինք, միայն տասնոցներով, բայց կանխաւ խումբ մը եկած դարանի մտած էր մերձակայ դիրքը, ի պահանջել հարկին միջամտելու համար: Տեսակցութիւնը տեւեց մօտ 1/2 ժամ, բոլորովին առանձին իմ եւ Սէիտ Ալիի միջեւ: Իր առաջարկն էր՝ համերաշխութիւն ստեղծել հայերու եւ քիւրտերու միջեւ, օգտուիլ առիթէն եւ միաբան ու-

1.- Ռափայէլ Երեցեան, ուսուցիչ եւ դաշնակցական գործիչ Վասպուրականի հարաւային գաւառներուն մէջ, սպաննուած քիւրտերու կողմէ 1913 թ. աշնան սկիզբը:

2.- Կայծակ Առաքել — բուն անունով Ապաճեան Տիգրան, դաշնակցական հին անուանի մարտիկներէն, մասնակից աւելի ուշ Վանի հերոսական ինքնապաշտպանութեան կռիւներուն:



ժերով երկու ցեղերուն ընդհանուր շահերը պաշտպանել ամեն միջոցով: Ինք վստահութիւն չունէր Աբդուլ Ռեզաքին, որ Ռուսիոյ գործիք էր, վստահութիւն չունէր Ճեզիրէի Բեարխաններուն, որոնք ո՛չ ընդունակութիւն, ո՛չ ալ հմայք ունէին անկախ Քիւրտիստան մը ստեղծելու, մանաւանդ որ անոնց այդ ձգտումը պիտի հանդիպէր հայոց ընդդիմութեան, որոնք բնականաբար չէին կրնար ընդունիլ այդպիսի տիրապետութիւն մը Հայաստանի վրայ: Սէիտ Ալիի համոզուած էր միայն քարեմարտով միջոցով հայեւքիւրտ շահերը պաշտպանելու հնարաւորութեան, առանց գործիք դառնալու օտար պետութեան մը, բայց առանց նաեւ «թագաւորութիւն» ստեղծելու ցնորքներուն: «Աստիճանէ աստիճան քալելու ենք» – ահա ի՛ր խօսքերը:

Ինք մեծ հաւատք ունէր Դաշ[նակցութեան] վրայ, որ կրցեր էր միացնել հայերը, զինել անոնք, եւ այսպիսի գործնական ծրագիր մը մշակել: Իր փափաքն էր ընդունուիլ Դաշնակցութեան մէջ, իբրեւ անդամ, կատարել անոր բոլոր պարտականութիւնները: Ատոր փոխարէն Դաշ[նակցութիւնը] զինքը պիտի պաշտպանէր անոր բոլոր հակառակորդներուն դէմ:

Յայտնեցի իրեն որ հայեւքիւրտ համերաշխութիւնը մեր վաղնջական երազն է, պատմեցի մեր բոլոր փորձերը եւ գոհերը, թէ այդ գործին հակառակ եղած են աւատականներն ու կրօնապետները: Եւ թէ մինչեւ ինքը Շէյխը 1) վերջ չդնէ իր ազդեցութեան շրջանակներու մէջ աւագակային խմբերուն եւ 2) չօգնէ մեզ լուծելու հողավէճը – Դաշ[նակցութիւնը] չի կրնար ո՛րեւէ յանձնառութեան տակ մտնել անոր հանդէպ: Շէյխը պատասխանեց թէ իրեն համար այնքան կարեւոր է Դաշ[նակցութեան] բարեկամութիւնը, որ մեր նախնական պահանջները անկարեւոր կը նկատէ եւ պատրաստ է անմիջապէս կատարելու:

Այդ խոստումներէն ետք բաժնուեցանք մենք:

Ամիս մը չանցաւ եւ լուր առինք արդէն որ շէյխը դադրեցուցեր էր հուշակաւոր Մահմէի խումբին շահատակութիւնները, ամէն կողմ լուր ուղարկած էր՝ ո՛չ ոք համարձակի հայ գիւղացիներուն ո՛րեւէ նեղութիւն տալու, եւ քանի մը հողավէճեր ինք անձամբ կարգադրած էր, հողերը վերադարձնելով հայերուն: Մեր ընկերոջ հարցին՝ ծերուկ մը պատասխանած էր, որ 40 տարիներէ ի վեր չէին տեսած այսպիսի հանգստութիւն եւ ան-

դորրութիւն: Շէյխը խոստացաւ մինչեւ աշուն վերադարձնել նաեւ Ապարանից Ս. Խաչի վանքն ու իր հողերը:

Մեր այդ բանակցութեան շնորհիւ ամբողջ գաւառ մը՝ երկու գազաներ՝ այսօր անդորր են. վայր մը, ուր հայութիւնը ճգմուած, իսկ կառավարութիւնը անգոյ էր:

Մեր ստացած բազմապիսի տեղեկութիւններէն ստուգեցինք, որ Սէիտ Ալիի շատ շարժառիթներէն գլխաւորը՝ Դաշնակցութեան առաջխաղաց աճումը եւ շարագործներու պատժումն եղած է:

Քանի մը ամիս ետք Կարճկանի Մուսա բէկի սպանումը, որուն հետեւող փառաւոր դրուագը ձեզ ծանօթ է, աւելի եւս ամրապնդեց Սէիտ Ալիի բարեկամութիւնը, մանաւանդ որ Մուսա բէկ անձնական թշնամին եղած էր անոր, եւ առաջին հակառակորդը հայեւքիւրտ բարեկամութեան կամ մերձեցման:

Սէիտ Ալիի հետ միաժամանակ դիմեցին մեզ «Քէօռ» Հիւսէին փաշան, Պարսկաստանի սահմանագլխի բոլոր ցեղապետները:

Կառավարութիւնը բաւական ազդուեցաւ այս դէպքերէն: Յատկապէս քննիչ ուղարկեցին Խիզան՝ պարագաները մեր տեսակցութեան մանրամասնելու եւ ստուգելու: Վանի կուսակալը ինձմէ ալ հարցուց թէ ի՞նչ դաշնագիր ստորագրած ենք Սէիտ Ալիի հետ:

Հետեւանքն եղաւ Դաշ[նակցութեան] հմայքին բարձրացումը աստիճանաբար: Շաքիրի եւ Միր Մհէի հետապնդումը՝ խոշոր դէպքերը, կառավարութիւնը մեր պահանջին վրայ հարկադրուեցաւ կատարել, վախնալով որ մենք մեր ձեռքով կ'ընենք, ինչ որ իր հմայքին անկումը եւ մերինին զօրացումը պիտի լինէր:

Մեր տակտիկը – օգտուիլ քիւրտ ցեղապետներու այդ նոր տրամադրութիւններէն՝ անոնք չէզոքացնելու եւ անոնց հակումը օգտագործելու ընդհանուր պահանջներու իրագործման համար:

Կը գրեմ նորէն:

Ձերմ համբոյրներով  
Ա. Վ[ՌԱՄԵԱՆ]

Հասցէս՝ Eugénie Derdzagian  
Konrad str. 5 IV  
München, Germany





Ա 2.- ՎՌԱՍԵԱՆԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՍԻՏԵԻՆ

Քազու, Նոյ. 20, 1913

Ընկերներ,

Կը հաստատեմ Նոյ. 9 թուակիրս եւ նախորդները:

Այս անգամ նամակս կ'ուզեմ նուիրել կառավարութեան հետ մեր յարաբերութեանը՝ Երկրի մէջ:

Այդ յարաբերութիւններու ելեւէջները թերեւս ծանօթ չեն ձեզ: 1908-էն ասդին անկում եւ բարձրացում ունեցեր է՝ նայելով մեր դիրքին, կուսակալի անձնաւորութեանը եւ անոր պատկանող կուսակցութեան տրամադրութիւններուն: 1908-էն ետք Վան եկող բոլոր կուսակալներն ընդհանրապէս պատկառոտ վերաբերում ունեցած են Դաշ[նակցութեան] հանդէպ, մէկը՝ Բեքիր Սամի բէյ (1909-10) շատ մտերմական եւ գործակցող, ուրիշներ՝ բուն իթթիհատական՝ Նազմ բէյ, Իսմայիլ Հաքքը բէյ՝ արտաքուստ բարեացակամ, բայց հակառակորդ: 1912-ի վերջերը՝ Իթթիհատի անկումէն ետք՝ Իզզէթ բէյ, բացարձակապէս թշնամական: Կու գար Վան, Քեամիլ փաշայի դահլիճի կողմէ, ծերակուտական Աբտիլ Կատէրի հովանու տակ, հայերը խեղդելու լռիկ, քիւրտ աւատապետներուն թեւ տալու: Ողբացեալ Ռաֆայէլի սպանութենէն ետք՝ գիտէք թէ որքան լարւեցան մեր յարաբերութիւնները: Գործերը այդ վիճակին մէջն էին երբ Կովկաս մեկնեցայ 1912 Դեկտ. 4-ին, ձեզի ծանօթ գործերով — կապեր վերահաստատելու եւ դրամական աջակցութիւն կազմակերպելու համար: Իմ Կովկաս անցնիս արդէն կասկած ներշնչելէ զատ, առիթ մը կը ստեղծէր իրենց վերջնապէս հեռացնելու համար զիս եւ աստիճանաբար միւս ընկերներս՝ Վասպուրականէն: Գաբամաճեանի սպանութիւնը անձանօթներու ձեռքով՝ բարեպատեհ թուեցաւ կուսակալին, հալածանքի սկիզբը դնելու: Այդ սպանութիւնը Դեկտ. 23-ին կատարուած էր, մինչ ես մեկնած էի Դեկտ. 4-ին, իսկ ընկերս Արամը<sup>3</sup> ծանրապէս հիւանդ պառկած էր Ամերիկեան հիւանդանոցը, քանի մը ամիսներ: Վերջապէս՝ կոչնագիր ուղարկեցին ինձի եւ Արամին — սպանութեան մէջ ամբաստանելով երկուքս ալ: Կոչնագիրը մերժեցինք, հեռագրով խստիւ բողոքեցինք — 4 օր ետք կուսակալը պաշտօնանկ, շատ չանցած դատական գործն ալ փակեցին: Պաշտօնանկ Իզզէթ մեկնելէն առաջ, դիմեց մեզ, հաշտութիւն եւ հայեւքիւրտ համերաշխութիւն առաջարկելով — վճարեցինք, յայտնելով որ իր գործակցութեան չենք կարօտիր:

Անոր յաջորդող կուսակալը՝ Թահսին բէյ, եկաւ

Վան, առաջին գործն ընելով մեզ հրաւիրելու գործակցի իրեն, խոստանալով գոհացում տալ մեր բոլոր օրինաւոր պահանջներուն: Յայտարարեցինք իրեն թէ չենք վստահիր իրեն ո՛չ իբրեւ պաշտօնեայի եւ ոչ ալ իբրեւ իթթիհատականի: Կը մնայ որ գործով ապացուցանէ իր անկեղծութիւնը: Արդարացի գտաւ մեր առարկութիւնը եւ խնդրեց որ զինքը իր գործէն դատենք:

Շարք մը տեսակցութիւններու մէջ դրինք հետեւեալ պահանջները:

- 1) Աւատականութեան աստիճանական ջնջումը: Հեռացնել կամ պատժել ծանօթ սրիկաները անոնցմէ: Խոստացաւ աստիճանաբար, խնայելով անվնասներուն բոլորը իրեն դէմ չգրգռելու համար: Ծանօթ է ձեզ Բէյթիլիլ Շէպապի քանի մը աշիրէթներու դէմ պատժական արշաւանքներէն ամէնէն խիստը՝ Հիլալ աշիրէթին դէմ ձեռնարկուած, եւ վերջերս հանրահռչակ կրանցի Շաքիրի սպանումը: (Կրնար թերեւս ուշացնել ժամանակ մը եւս, բայց Մուսա բէյի ահաբեկումէն ետք՝ վախնալով որ մերոնց ձեռքով Շաքիրը կրնայ պատժուիլ, խնդրեց որ մենք չդպչինք անոր, ինք իր խոստումը կը կատարէ, բարձր պահելու համար կառավարութեան հմայքը):
- 2) Հայերը գինաթափ չընել. գրաւուած գէնքերը վերադարձնել. գիւղական պահակներու համար գէնք տալ: Դատարանը օրէնքի համաձայն իրեն ուղարկուած գէնքերը միշտ կը գրաւէ եւ հրացան կրողները կը պատժէ: Շրջաբերական հանց, որ այսուհետեւ գէնքով բռնուողները դատարանի չյանձնուին, մինչեւ կուսակալին իմաց տրուի: Եթէ աւագակ է կը յանձնուի դատարան, եթէ անմեղ գիւղացի է գինակիրը, գէնքը իրեն կը դարձուի: Քանի մը գրաւուած գէնքերը նոյն հետայն ետ տալ տուաւ, հիներու ցուցակը ուզեց: Գիւղական պահակներու համար տուաւ մօտ 250 հրացան մեր ցուցմունքով, որ կանխաւ առնուածի հետ՝ կ'ընէ մօտ 500: Այս ուղղութեամբ՝ տակաւին նոր պահանջներ ունինք:
- 3) Ոստիկան զինուորներու 50% հայ պահանջեցինք: Տոկոսը չընդունեց, խոստանալով հետզհետէ աւելցնել հայ ժանտարմներու թիւը: Փախստական հայ զինուորներուն խոստացաւ ներել, շրջաբերական ալ հանց, պայմանով որ գան ժանտարմ գրուին եւ մնան իրենց կուսակալութեան մէջ:
- 4) Հողային վէճերը լուծել վարչական եղանակով: Ուսկաւ մեր մատնանշած խնդիրները հետապնդել: Հեռացած լինելով՝ երեք ամսէ ի վեր չեմ գիտեր արդիւնքը:

3.- Արամ Մանուկեան:







5) Ժողովրդական վարժարաններու համար պահանջեցինք տասնորդի հաշուին մէջ մեր վճարած բաժինը, կամ մեր թուին հետ բաղդատմամբ ընդհ. բիւդձէէն հատուցում: Սկզբունքը վիճաբանութեան մէջ՝ բայց այս տարի 1200 ոսկի որոշեցին տալ եւ քանի մը դպրոցական շէնքերու կառուցման ծախք:

Դրամը պիտի յանձնուի Առաջնորդարանին: Մինչդեռ ցարդ՝ կամ թաղական խորհուրդներուն կը յանձնուէր, կամ իրենք իրենց կողմէ ուսուցիչ կ'ուղարկէին, յաւակնութիւն ունենալով անոնց դասախօսած վարժարանները իբրեւ նախարարական նշանակելու:

6) Պաշտօնէութեան 50% հայ պահանջեր ենք: Առանց սկզբունքն ընդունելու, սկսուած էր հայ պաշտօնեաներ նշանակելու, եւ մեր մատնանշած զեղծարարները պաշտօնանկ ընելու:

7) Համիտիէներու ջնջումը սկզբունքով ընդունեց, միայն աստիճանաբար:

Ուսումնասիրութեան խնդիր եղաւ milice-ի կազմակերպումը արեւելեան սահմանագծի հայ գիւղերու մէջ, պաշտպանելու հայ ժողովուրդը անակնկալ արշաւանքներու դէմ, որոնք կրնան տեղի ունենալ ո՛րեւէ արտաքին դրդումով:

Կուսակալը դրինք երկընտրանքի մը առջեւ. կամ հրաժարիլ հին մեթոտներէ եւ ընդունելով հայ ժողովրդի ազատ զարգանալու իրաւունքը, աջակցիլ անոր, եւ ասով ապահովել հայուն եւ Դաշ[նակցութեան] հաւատարմութիւնը օսմանեան պետական կազմին, — եւ կամ պատրաստ գտնուիլ ամէն անակնկալի: Յայտարարեցինք որ մենք չպիտի քաշուինք ո՛րեւէ ծայրայեղ միջոցէ՝ եթէ հակահայ քաղաքականութիւնը շարունակեն, պատասխանատուութիւնը թողնելով իրենց վրայ:

Ձանացիք մանրամասն հասկցնել հայ ժողովրդի մշակոյթին զարգացման համար թուրքիոյ ազատ պետութեան մը տուած եւ տալիք պատեհութիւնները, որոնք բնականաբար շահակից կ'ընեն մեզ պահպանելու այդպիսի պետութեան մը ամբողջութիւնն ու կեանքը:

Հասկնալ ձեւացան կամ թերեւս հասկցան ալ քիչ մը: Թահսին բէյ այնքան խանդ ցոյց տուաւ, որ յատկապէս զնաց Դատուան, Բաղէշի կուսակալին հետ տեսնուելու, որպէսզի ան ալ նոյն ուղղութեամբ սիրաշահիլ ձեռնարկէ մեզ Բաղէշի նահանգին մէջ: Թահսին բէյի յանձնարարականով տեսնուեցայ Մալիար բէյի հետ՝ Բաղէշ, ուր համաձայնութեան եկանք շատ մը կէտերու վրայ:

Որքա՞ն անկեղծ են — պիտի հարցնէք: Անկեղծութիւնը կապուած է շահերու հետ: Այդ պէտք է ճշդել:

ա) Երկիրը ունին ռուսական գրաւում:

Խառնակութիւն մը հանել եւ առիթ ստեղծել դժուար չէ, մանաւանդ հիմա մեզ համար:

բ) Դաշ[նակցութեան] աստիճանական ուժեղացումը

յատկապէս Վասպուրականի մէջ: Այդ ոյժն է որ կրնայ բարդութիւններ ստեղծել եւ եւրոպական միջամտութեան առիթներ պատրաստել:

Աս է պատճառը որ Վանի եւ վերջերս ալ մասամբ Մուշի մէջ թուրք կառավարութիւնը մղուեցաւ զիջումներ ընելու, որոնց մասին խորհիլ իսկ չեն համարձակիր միւս նահանգներու հայերը, նոյնիսկ Կարնոյ հայութիւնը, մինչդեռ Կարինը իր աշխարհագրական մերձաւորութեամբ Ռուսիոյ՝ աւելի պիտի կրնար օգտագործել ռուսական առաջխաղացման մը վտանգը եւ սպառնալիքը:

զ) Քիւրտերը իբրեւ ռազմական ուժ վարկաբեկուած են այլեւս: Նոյնպէս իբրեւ քաղաքական ազդակ: Քէօռ Հիւսէին փաշայի, որ ամէնէն հաւատարիմ նեցուկն էր Համիտին, Պարսկաստան ապաստանիլը եւ ապա փոխարքային ըրած դիմումը ռուսական թեւարկութեան տակ մտնելու նպատակով — բաւական սառեցուց թուրքերը քիւրտ աւատականներու հանդէպ: Նոյն հետեւանքին բերաւ Աբդուլ Ռեզակի ապաւինումը Կովկաս եւ անոր սադրանքները, որոնք վրան բաց են եւ ո՛չ մէկուն գաղտնի:

Եթէ ասոր վրայ աւելցնենք նաեւ քիւրտերուն մերձեցումը Դաշ[նակցութեան], եւ յատկապէս մեծերունը (Մէլի Ալի, Հիւսէին փաշա եւայլն) — պատկերը կը պարզուի:

Ինչպէս կը տեսնէք շատ մը խնդիրներ, որոնք ծրագրերու եւ բանակցութեան նիւթ եղած են տարիներով՝ Վասպուրականի եւ տակաւ Տարօնի մէջ իրերու ուժով պիտի իրագործուին ու կ'իրագործուին արդէն: Այնքան ակներեւ է աս, որ թուրք կառավարութիւնը համոզելու համար հայերը՝ (պոլսեցիները) թէ բարենորոգումները ինք պիտի ներմուծէ առանց դրսի միջամտութեան — յիշատակեր է Վանի նահանգի մէջ եղածները, մոռնալով միայն ըսել թէ ինչո՞ւ միւս նահանգներու մէջ չէ ձեռնարկած: Պատրիարքն ալ Պոլիս հասնելուն պատմած է (Հորիզոնէն կ'իմանամ) թէ Վանի հայերը աւելի հանգիստ են՝ բողոքող լինելուն, մինչ Բաղէշը ընձկուած է, ընդդիմադրութեան պակասէն:

Նահանգային ընտրութեանց դէմ մեր գործօն բոյկոտը — մանրամասնութիւնները գիտէք հարկաւ — քիչ չնպաստեցին մեր հմայքին զօրացմանը. մեզմէ ետքն էր որ Պատրիարքարանը ձայն բարձրացուց: Եւ կուսակալը Յ անգամ խօսք բացաւ մեզ հետ, թալխադ բէյի անունով, բոյկոտին վերջ մը դնելու — ինչ որ չըրինք, յայտնելով որ համագգային խնդիր է ադ եւ ո՛չ Վանեան:

Այս բոլոր իրողութիւններն էին որ համոզեցին վերջին Ընդհ. ժողովը ընդունելու մեր՝ Վանեան գործելակերպը, ինքնապաշտպանութիւնը ընդունելով իր լայն առումին մէջ, ո՛չ ջարդերու դէմ ապահովութիւն մը, այլ իբրեւ ներքին ուժ մը որ ծառայէր մեր անմիջական





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

քաղաքական նպատակները հետապնդելու:

Տարօն սկսուած է արդէն գործը, բաւական յաջողութեամբ: Մալիար բէյ դիմած է մեր այնտեղի ընկերոջ՝ Ռուբէնին<sup>4</sup>, գործակցութիւն առաջարկելով, արդէն մեր կանխախօսած ծրագրի համաձայն: Տարօն զօրանալուն հետ՝ միաժամանակ պիտի կարենանք ճառագայթել դէպի միւս նահանգները, եթէ միայն ձեռնարկուի հեղինակատր ուժեր գան մեզ օգնութեան:

Ծանրութեան կեդրոնը Երկրի մէջն է հիմա, եւ պէտք է զօրացնել զայն եւս աւելի: Հո՛ւտ է մեր փրկութիւնը: Պատրիարքարանը չպիտի ունենար իր այսօրուան հեղինակութիւնը եթէ Երկրի ուժը չլինէր իր ետին:

Հայկական խնդիրը ցարդ կը նկատուէր օտարներու եւ թուրքերու կողմէ՝ իբրեւ Պոլսի կամ ուրիշ կեդրոններու մէջ տեղաւորուած պոլիտիկոսներու տենչերուն ստեղծումը: Այսօր ան կը նկատուի իբրեւ իր հայրենիքին մէջ ապրող ու տառապող գիտակցութեան մը արտայայտիչը:

Հայկական խնդիրը Հայաստանի՝ որոշ հողաբաժնի մը խնդիր էր ասկէ առաջ: Հիմա է որ, 20 տարուան պայքարներէն ետք՝ ան կը վերածուի իր բուն կերպարանքին՝ հայ ժողովրդի խնդիր դառնալով:

Ատոր համար է որ սկսեք են մեզ հետ սիրաբանիլ թէ ոուսերը եւ թէ գերմանները:

Մեր կուսակցական պատմութեան ամէնէն լուրջ եւ տագնապալի փուլին մէջ ենք այսօր՝ բեղմնաւորելու շրջանին մէջ անգին ու անթիւ գոհաբերութիւնները:

Բոլոր մարմինները գիտակցելու են այս ճշմարտութեանը եւ ձեռք տալու են Երկրի մարմիններուն՝ նիւթապէս եւ բարոյապէս:

Քիչ մըն ալ այստեղի գործերու մասին: Գրած եմ թէ ինչո՛ւ եկած եմ: Հարկ է Հայաստանի բիւրոյի բիւրջէն

4.- Տէր Սիմասեան Ռուբէնին:  
5.- Իմա Մոսկուա եւ Պետերբուրգ:  
6.- Խօսքը կը վերաբերի Վանի մէջ կառուցուող Դաշնակցութեան Տան, որ պիտի կոչուէր նաեւ Ժողովրդային Տուն, «Աշխատանքի» Տուն:

լրացնել — մեր ունեցածը (ձեր օգոստոսեան պատրաստ գումարն ալ նկատի առնելով հանդերձ) չի բաւեր:

Քիչ շատ յաջողեցայ արդէն. կը շարունակեմ հոս ճիգերս. պիտի անցնիմ նաեւ հիւսիս<sup>5</sup>, նոյն նպատակով, գէթ նուազագոյնն ապահովելու համար:

Ատկէ զատ նաեւ մշակութային գործերը աշխատանքնիս մէկ մասը կը խլեն: Անհրաժեշտ է ոտքի տակ դնել մեր միջնակարգ ազգային վարժարանները՝ գէթ ամէն կեդրոնի մէջ, իսկ մասնաւորապէս գիւղական վարժարանները: Շահագրգռութիւն արթնցուցած եմ. ստացայ կարգ մը նպաստներ: Նոյնպէս Դաշնակցութեան] Տան<sup>6</sup> համար խոշոր նուէր մը, ծածկի համար երկաթեղէն եւ փոքր սինեմա մը մօտ 900 ուրբլ արժողութեամբ: Չեմ գիտեր թէ դուք ալ հող բան մը ըրի՞ք ժողովրդային] Տան համար: Ե՛կնքը աւարտած է, բայց մէջի մասը եւ կահաւորումը բաւական գումարի կը կարօտի. տեղիւ վանեցիները կրնային օգնել: Մեր գործունէութիւնը այսուհետեւ հնոց (օջախ մը) կ'ունենայ հոն, որ մեծապէս պիտի նպաստէ մեր գործերու ընթացքին:

Շատ ու շատ բարեկներ բոլորիդ  
Ա. ՎՈՒՍԵԱՆ

Յ. Գ.- Նամակներս ստացած լինելնիդ, ինչպէս նաեւ հարցեր եթէ ունիք երկրի գործունէութեան մասին՝ ուղղեցէք քրօջս հասցէին, անկէ կը ստանամ ես: Հասցէն՝ Eugénie Derdzakian, Konrad str. 5 IV, München Germany.

Չաւարեան հաստատութեան մասին գրածս «Ազատամարտ»ի մէջ կարդացիք անշուշտ: Լաւ կը լինէր արտատպէիք «Հայրենիք»ում, եւ ըստ այնմ շարունակէիք հոտ ալ: Բազուն արդէն ընդունած էր այդ առաջարկը եւ ըստ այնմ կազմակերպած: Բազունի յանձնախմբի նախագահն է Աստուածատուր Վաչեանց, քարտուղարը՝ Սիմէոն Յակոբեան: Հրատարակելու չէք անունները:





Փաստ. 673-38

Ա 3.– ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. Կ.ԷՆ Հ.Յ.Գ. ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. Կ.ԻՆ

Վաճ, 1913, դեկտ. 9/22

Ընկերներ!

Ստացանք Ձեր N 414, նոյեմբ. 18-ի նամակը, ներփակեալ 24.50 տողարի չէքովը, որը գանձելով յանձնեցինք հոս, տեղ եղած Միջկուսակցական համերաշխական մարմինն<sup>7</sup>: Մենք ժամանակին ազդարարած ենք եւ արդէն Ընդհ. ժող.ի որոշումն ալ է, որ մեր մարմինները պատասխանատու չեն այն գումարներու մասին, որք կը դրուին ինչ որ խառն մարմիններու տրամադրութեան տակ: Մենք շատ շատ միայն խողովակ կըրնանք հանդիսանալ առանց պատասխանատուութեան: Եւ արդէն մեր մարմինը սեփական ինքնազարգացման<sup>8</sup> միջոցներ չէ ստեղծելու, այլ ժողովրդականը յառաջ տանելու: Իրենց յանձնուած 5 լիւրան ալ պիտի յատկացւի երեւի եղած ու լինելիք թռուցիկային-տպագրական ու հեռագրական ծախուց: Հեշտ չէ նման մարմիններ ստեղծել ու իրօք խառն ինքնազարգացման գործ մը կազմակերպել: Թէեւ տեղիս մարմինը կազմած ատեն հիմնական միայն 2 կէտի շուրջ գոյացաւ, այն է ինքնազարգացման գործն ու ազգ[ային] համերաշխ քաղաքականութիւն կառուի[արութեան] հանդէպ, սակայն միւսներն ամէն վայրկեան մէջ բերելով տեղական մանր մոլեր պահանջներ ու խնդիրներ, յարաբերութիւնք պաղեցուցին: Մենք կը ջանանք շարունակել ու ներկայիս համաձայնիլ ընտրութեանց շուրջը եւ առաջ տանիլ սկսուած ինքնազարգացման ծաւալումը քաղաքի չէզոք համարուած դասին մէջ:

Ստացազիրը պիտի օրս ներփակենք, եթէ հասցուցին, եթէ ոչ յաջորդիւ: Վաւաբ[եան]ին դրկուած նամակն առած ու արդէն ձեզի գրած ենք: Շատ ալ կարեւորութիւն տալու չէք մեր մասին գրուածներուն: Ընտրութիւններու ատեն ո՛ւր դէպքեր չեն պատահիր. եթէ անոնք իրական գործի մը շուրջ կ'ուզեն համերաշխիլ եւ ոչ թէ այդ համերաշխութիւնը շահագործել ու ծաւալելի, այդպիսի դէպքերու կարեւորութիւն չպիտի տան: Օրինակ անոնք կը ցանկան, որ եթէ տեղէս 2 հայ

ընտրուի, մէկն իրենցմէ ըլլայ. ինչո՞ւ, ի՞նչ արդարութեամբ. հայ բոլոր քուէները մեզի կը տրուին, իսկ իրենք հազիւ մէկ պատուիրակ վաստակեցին. ի՞նչ ուժի ու գործի վրայ կռթնած այդ յաւակնոտութիւնը կը ցուցնեն:

Ներկայիս ալ ամբողջ Թուրքիոյ մէջ ռամկավարները համամիտ են ընտրութիւններուն մասնակցիլ, յուսալով թէ մենք մասնակի բոյկոտ պիտի ընենք, եթէ համազգայինը չյաջողուց:

Պատրաստ ենք Ձեզ հետ թղթակցութիւն պահպանելու, բայց կը կարծենք, որ Արեւմտեանն [Բիւրոն] ալ այժմ կանոնաւորած է իր գրասենեակն ու սկսած է կանոնաւոր թղթակցիլ:

Վաւաբանը չէ դարձած. երեւի արդէն Պետերբ[ուրգ] կամ Մոսկուա է ու շատ ալ հաւանական չէ, որ ձմրանս հոս գայ: Կ'աշխատի ինքնազարգացման գործի, գրադարաններու<sup>9</sup> եւ ազգ. դպրոցներու համար:

Մեր վիճակը գէշ չէ: Ինքնազարգացման գործը գաւառներու մէջ գոհացուցիչ է, քաղաքը, իր կարողութեան համեմատ թոյլ: Այդ ուղղութեամբ կ'աշխատուի տեսնենք թէ Միջկուս. համերաշխ. մարմինն ինչ պիտի ընէ: – Ընտրութիւններու խնդրին մէջ ցանկալի էր դնել հայկական պահանջներ ու ազգովին բոյկոտ հռչակել: Եթէ չյաջողի, մենք դէմ ենք միայն դաշնակցական բոյկոտին, որովհետեւ այդ պարագային միւսները մէջտեղ կ'ընկնէին: Պիտի համաձայնութեան գանք ու ջանանք գտնէ հայկական վիլայեթներու մէջ երեք կուսակց[ութիւններու] կողմէն բոյկոտ հռչակել:

– Մեր «Աշխատանքի տուներ» որ Ձեզ ու շատերին կ'երեւայ անպատեհ ձեռնարկ մը ներկայիս համար, հսկայ ձեռնարկ է ու մեծ ծախսերու կարօտ: Արդէն ծածկած ենք, զուտ տեղական միջոցներով – ծախսելով դրամ ու նիւթ մօտ 2000 ոսկու:

– Ձեռնարկած ենք ներքին կահաւորման. դրամ չունինք, բայց տեղիցս պիտի գոյացնենք գոնէ 600 ոսկի մ'ալ, ըստ Ռայոն. ժող.ի որոշման: Մեր այդ ձեռնարկը երբեք ալ չէ վնասած մեր գործերուն. ընդհակառակն կուսակց[ութեան] հմայքն աւելի է բարձրացած, որովհետեւ գարնան երբ գործի սկսեցինք ոչինչ ունէինք, իսկ գործի ընթացքին թէ՛ դրամ եւ թէ՛ նիւթ անվերջ եկաւ ու կու գայ. որքան տեղի կուսակց. ընկերները եւ ժողովուրդը կրնար տալ, կարելի է ըսել բոլոր վասպուրականցիները մասնակցեցան այդ շէնքին ու բոլորն ալ ի-

7.- Վաճի մէջ 1913 թ. Ապրիլ 4/17ին Հ. Յ. Գաշնակցութեան, Ս. Գ. Հնչակեան կուսակցութեան եւ Սահմանադիր-ռամկավարներու միջեւ կնքուած համաձայնութեամբ կազմուած մարմին (Տես «ՆԻՒԹԵՐ»-ու Ժ. հատոր, էջ 117-8):

8.- Ինքնազարգացումը իմանալ ինքնապաշտպանութեան իմաստով:

9.- Գրադարան – գէնք, գինապահեստ:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

ըստ իրենց տուներ համարելու: Կահաւորմանը կը հսկէ ընկ. Քաջազն<sup>10</sup>. ճարտարապետ, որով հնարաւոր յարմարութիւններ պիտի ստեղծուին:

չափերու կը հասնի Վասպ[ուրական]ի մէջ, հարկաւոր են առաւելագոյն նիւթական միջոցներ: Այսքան:

– Միաժամանակ խիստ ուշադրութիւն կը դարձնենք ընդհ. ազգային դպրոցական գործերուն, որոնց կեդրոնացման, տնտեսութեան բարձրացմանն ու կրթական որակի բարեփոխմանը կը ձգտինք: Ամէն ինչ խիստ մեծ

Ընկերական բարեկեցութիւն,  
ի դիմաց Վասպուրականի Կ. կոմիտէի  
ՎԱՆԻԿ<sup>11</sup>

Փաստ. 674-11

**Ա 4.– ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. Կ.ԷՆ Հ.Յ.Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ**

Վան, 19-VI-[19]14

Ընկերներ!

Կը հաստատենք մեր յունիս 9 թուակիրն, ի պատասխան ձեր մայիս 26-ի գրութեան: Ստացանք ձեր յունիս 6/19-ի գրութիւնը:

Կը փութացնենք Ընդհ. ժող.ի պատրաստութիւնները: 2 օրէն կը սկսին Ռայոն. ժողովի զբաղումները, 3-4 օրուայ տեւողութեամբ, այնպէս որ հարկ եղած պարագային ընկեր պատգամաւորը կամ [պատգամաւոր]ները կրնայ մեկնիլ ամսուս վերջին: Ինչո՞ւ նորէն Շամի<sup>12</sup> մասին խօսք չէք ըներ. թէ Մուշը եւ թէ դուք համաձայն էք եղեր Շամին, նոյն տեսակէտն ունին նաեւ Քեռիի երկրէն<sup>13</sup> եկողները, ինչո՞ւ եւ որո՞նց յարմարութեան մասին կը մտածէք, որ Շամ չէք ըներ. երեւի նոյնիսկ պիտի հարկադրուինք մարդ չըրկել, այլ դուրսէն նշանակել, որովհետեւ ընկերներն ի վիճակի չեն հեռանալու իրենց պաշտօններու բերումով: Մենք տեղեկագիր մը – գրաւոր – պատրաստելու վրայ ենք, ինչպէս նաեւ գործունէութեան բոլոր ճիւղերու պատկերները... տեսնենք թէ որքան պիտի յաջողինք:

Կրկին ձեր ուշադրութիւնը կը հրաւիրենք Վայրի վրայ. Շամը բոլոր առաւելութիւններն ունի. պէտք է ընկերներու հնարաւորութիւն տալ ծանօթանալու երկրին եւ մանաւանդ Շամին:

Ընտրութիւններու մասին հեռագրուած է. լմնցած հարց է, երկուքն ալ ընտրուած են<sup>14</sup>: Շուտով կը ձեռնարկենք Նահանգային ընտրութեան կէս առ կէսի սկզբունքով:

Ի՞նչ եղան մարզպանները<sup>15</sup>:

Ընկերական բարեկեցութիւն  
ՎԱՍՊ. Կ. ԿՈՄԻՏԷ

10.- Խօսքը կը վերաբերի Յովի. Քաջազնունիին, որ արդարեւ այդ շրջանին Վան էր եւ ստանձնած՝ «Աշխատանքի Տան» ճարտարապետութիւնը:

11.- Վանիկ – ծածկանունն է Կեդր. կոմիտէի անդամ Թերլեմէզեան Միհրանի, որ քիչ անց պիտի մասնակցէր Տրդ Ընդի. ժողովին իբրեւ միակ պատգամաւոր Վանէն:

12.- Շամ – Վանի կոս. ծածկանուն:

13.- Քեռիի երկիրը՝ Ռուսիան է, աւելի որոշ՝ Կովկասը: Հարցը կը վերաբերի Հ.Յ.Դ. Տրդ Ընդի. ժողովի գումարման վայրին, որուն

համար Կարինն էր ճշդուած, իսկ Վասպուրականի Կեդր. կոմիտէն կը պահանջէր Վան գումարել (ներկայ նամակին ձեռագիրը կը պատկանի Թերլեմէզեան Միհրանի (Վանիկ) գրչին):

14.- Խօսքը կը վերաբերի Թուրքիոյ երեսփոխանական ընտրութեան: Վանէն արդէն ընտրուած էին Վտամեան Արշակ եւ Փափազեան Վահան:

15.- Մարզպանները – այսինքն՝ հայկ. բարենորոգումներով նկատի առնուած երոպացի ընդի. քննիչները:





Փաստ. 676-1

**Բ 1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԴԷՊՔԵՐՈՒ ՄԱՍԻՆ  
(1913 – 1918)**

Այս տեղեկագիրը պատրաստած է Հմայեակ Մանուկեան, բուն անունով՝ Խոռոզեան (1888-1920) Հ.Յ.Դ. Ինններորդ ժողովին (գումարում 1919ին, Երեսան) ներկայացնելու համար:  
Հմայեակ Մանուկեան ծնած է Վան (1888) եւ մեռած Երեսան 1920ին: Եղած է 1913 թ. Վասպուրականի Կ. կոմիտէի անդամներէն եւ մօտէն հետեւած է 1913-1918ի Վան-Վասպուրականի իրադարձութիւններուն:  
Եղած է Վանի «Աշխատանք» թերթի խմբագիր, ապա երեսփոխան անկախ Հայաստանի խորհրդարանին:  
Տեղեկագրին առաջին մասը, կէսէն քիչ մը ատելի, կը վերաբերի Վանի հերոսական ինքնապաշտպանութիւնը նախորդող իրադարձութիւններուն: Կու տանք փաստաթուղթին ամբողջութիւնը:

1913 թուի աշնան Վասպուրականի Ռայոնական ժողովը ընտրեց Վասպ. Կեդր. կոմիտէ, հետեւեալ կազմով՝ 1) Արամ<sup>3</sup>, 2) Իշխան<sup>16</sup>, 3) Բուրգարացի<sup>17</sup>, 4) Մ. Թերլեմէզեան, 5) Մ. Չաթոյեան, 6) Լեւոն Շաղոյեան, 7) Հմ. Մանուկեան: Այժմ 7-էն 3-ը միայն ողջ են:

Վասպուրականի Դաշնակցութիւնը այն ատեն բարձրացած էր իր գործութեան գագաթնակէտին. իր շարքերուն մէջ կը հաշուէր 10-12000 կազմակերպուած ընկերներ, որոնք նահանգի մէկ ծայրէն միւսը կազմ ու պատրաստ, կուսակցութեան հրամանները կէտ առ կէտ կը գործադրէին: Ազգային բոլոր հաստատութիւնները Դաշնակցութեան ձեռքն էին անցած. գաւառական երեսփոխանական ժողովը, քաղաքական ժողովը, թաղական խորհուրդները, հոգաբարձութիւնները՝ բոլորն ալ կազմուած էին Դաշնակցութեան թեկնածուներէն: Կոմիտէի ձեռնարկած Դաշնակցութեան Տան շինութիւնը, իր մեծութեամբ եւ ժողովուրդի մէջ առաջ բերած արտակարգ ոգեւորութեամբ կառավարական պաշտօնեաներու նախանձը կը շարժէր: «Աշխատանք» թերթի իւրաքանչիւր խօսք պատգամի պէս կ'ընդունէր ոչ միայն հայ շրջանակներէ, այլեւ կառավարութեան կողմէ: Դաշնակցութեան համար սկսած էր ստեղծագործ եւ շինարար գործունէութեան մը շրջան: Կոմիտէի ղեկավարութեամբ գաւառները ծածկուեցան գիւղական դպրոցներով. իւրաքանչիւր գիւղ ունէր իր դպրոցը եւ դպրոցական սեփական շէնքեր կը կառուցանէին մեծ եռանդով: 1914 Մայիսին կատարուեցան օսմ. երեսփոխանական ընտրութիւններ, որոնց հետեւանքով Կ. կոմիտէն անցկացուց 2 պատգամաւոր՝ Վուսեան եւ

Փափագեան, ինչ որ չտեսնուած յաղթանակ մը եղաւ Դաշնակցութեան համար եւ որ կատարուեցաւ հակառակ պատրիարքարանի հրահանգներուն եւ Պոլսոյ կուսակցական կեդրոնի թեւադրանքներուն, որոնք հակառակ էին կուսակցական թեկնածուներու: Կուսակալ Թահսին պէյի եւ կոմիտէի ներկայացուցիչներու միջեւ կային չափազանց սերտ եւ ամուր բարեկամական յարաբերութիւններ, որոնց շնորհիւ կուսակալը ոչ մէկ ձեռնարկ չէր ընել առանց կոմիտէի համաձայնութեան, եւ լուծեց [կուսակալը] վարչական կարգով շատ մը հողային հարցեր ի նպաստ հայ գիւղացիութեան: Կոմիտէի կողմէ Արամն էր որ կը պահպանէր յարաբերութիւնը. երբ Հօֆ պէյ<sup>18</sup> Վան ժամանեց (914 Օգոստ. 4) կուսակալ Թահսին պէյ Արամը ներկայացուց անոր իբրեւ նահանգի ամենամեծ հայրենասէրը:

1914 յուլիսին ծագեցաւ եւրոպական պատերազմը, որու հետեւանքով երկու օր ետք գորակոչի յայտարարութիւն եղաւ նաեւ Վասպուրականի մէջ 20 միւնչեւ 45 տարեկաններու, որոնք պարտաւոր էին երթալ եւ արձանագրուել: Այս յայտարարութիւնը ոչ մէկ արձագանգ չգտաւ հայ ժողովուրդին մէջ եւ ընդհանրապէս երիտասարդութիւնը տրամադիր էր ընդդիմանալ եւ զինուոր չտալ: Այս պարագան ստեղծեց լարուած դրութիւն մը, գոր կը զգար նաեւ կառավարութիւնը: Արամ, որ գաւառներ եղած էր, ընկերներու հեռագիրին վրայ, Վան եկաւ եւ կրցաւ փրկել կացութիւնը: Անիկա, հակառակ մեր կուսակցական ընկերներու ընդդիմութեան, անցաւ փողոցէ փողոց, զուռնա-նաղարա իր առջեւ ձգած, հաւաքեց զինուորներու մեծ բազմութիւն մը եւ մեծ ցոյցով անցաւ Իթիհատի գլխալին առջեւէն, ուր մեծ ընդունելութեան եւ ճառերու հանդիպեց, եւ բոլորն ալ, ինքն ալ մէջը, զինուորագրուեցան: Այս կերպով տագնապը անցաւ եւ ժողովուրդը ընտելացաւ զինուորագրուելուն:

16.- Պողոսեան-Միքայէլեան Նիկոյ:  
17.- Բուրգարացի Գրիգոր, բուն անունով Կեօզեան Գրիգոր:  
18.- Հօֆ – Հայկ. նահանգներու ընդհ. քննիչներէն մէկը, նորվեկիացի, որուն համար կեղրոնատեղի նշանակուած էր Վանը:







ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Այնուհետև սկսան ծայր տալ մէկը միւսին դժուարագոյն հարցեր: Սեպտ. 16-ին Պոլսէն Վան հասաւ նաեւ Վռամեան, որ Արամի հետ սկսան վարել կառավարութեան եւ հայ ժողովուրդի յարաբերութեանց դժուարին գործը: Անոնց ամբողջ նպատակը եղաւ դէպքերու տեղի եւ առիթ չտալ, կանխել զանոնք եւ արմատախիլ ընել: Ինչպէս յիշեցինք հայ ժողովուրդը Վասպուրականի մէջ եւ դաշնակցական ընկերները մանաւանդ ինքզինքը չափազանց հզօր եւ հպարտ կը զգար եւ չէր կրնար հանդուրժել պատերազմի պարտադրութիւններուն, որոնք յաճախ կը ստանային ընդվզեցողիչ բնաւորութիւն: Այսպէս, պատերազմական տուրք անուան տակ ժանտարմաները կատարելապէս կը թալլէին հայ գիւղերը: ամէն օր նոր պահանջ էր որ կը ներկայացնէին. փախտական գինուորներ փնտռելու պատրուակին տակ ծեծ, բռնութիւն, տուներու այրումը եւ հրկիզումը սովորական բաներ էին: Այս պատճառով շատ անգամ ընդդիմութիւններ կը պատահէին հայերու կողմէ, որոնք կ'ընդարձակուէին: Որքան ատեն որ Թահսին պէյ կուսակալ էր եւ չէր հեռացած, հնարաւոր կ'ըլլար Արամին եւ Վռամեանին առաջը առնել դէպքերուն եւ լուծել զանազան խնդիրներ, բայց Հոկտեմբերի սկիզբը (1914) Թահսին պէյ Կարին փոխադրուեցաւ եւ անոր յաջորդեց Վասպուրականի քաջ ծանօթ «Նալբանդ» (պայտագործ) մականուններու Ջէվդէթ<sup>19</sup>, որ Պաշգալէի միւլթասարըֆն էր եւ իր օրով պայտել տուած էր Պօղոս Պետրոս անունով հայ մը:

Աւելորդ չ'ըլլար հոս բերել «Աշխատանք, թերթի խմբագրականին մէկ մասը, գրուած Թահսին պէյի մեկնումին առթիւ, որ արտայայտութիւնն է Վռամեանի եւ Արամի վերաբերմունքին Թահսին պէյի հանդէպ»:

«... Թահսին պէյ եղաւ պետական այն հազուագիտ պաշտօնեաներէն, որ առաջին անգամ ձեռք առաւ կտրուկ եւ ազդու միջոցներ աւազակներու դէմ եւ Շաքիրի ու Միր Սիէի սպանութիւններով բնաջինջ ըրաւ աւազակային այն դրոյթները, որ տարիներէ ի վեր, սահմանադրական վարչութեան օրովն ալ, կը խանգարէր գիւղացիութեան հանգիստն ու աշխատանքը: Թահսին պէյ եղաւ, նոյնպէս առաջինը, որ համարձակօրէն ձեռք առաւ հողային խնդիրներ, ըմբռնեց անոնց ընդփոյժ լուծման նշանակութիւնը եւ վարչական միջոցներով, բաւարար լուծման յանգեցուց անոնցմէ շատերը: Թահսին պէյ չնոոցաւ նաեւ կրթական գործը. մեծ զարկ տուաւ գիւղական վարժարաններուն, բանալ տուաւ զանազան վայրերու մէջ

դպրոցներ: Որդեգրեց կրթական բաժինէն հայերուն տրուելիք մասը ուղղակի Առաջնորդարանին յանձնելու սկզբունքը, ինչ որ այլուր զանազան դժուարութեանց կը բախէր՝ շնորհիւ տեղական պաշտօնեաներու չկամութեանց: Թահսին պէյ ունէր պետական պաշտօնեայի այն առաւելութիւնն ալ, որ պզտիկ եւ երկրորդական խնդիրներու ետեւէ չէր իյնար եւ զանոնք չէր մեծցներ՝ ինքզինքը գործի վրայ ցոյց տալու համար, ինչպէս սովորութիւն ունին ընելու մեր պաշտօնեաներէն շատ շատեր: Ընդհակառակը, անիկա ձեռք կ'առնէր ընդհանուր բնոյթ կրող խնդիրներ եւ կը ջանար հիմնական լուծում մը տալ անոնց: Շնորհիւ այս մեթոտին անիկա յաջողեցաւ համերաշխութեան ոգի տարածել զանազան տարրերու միջեւ, տեղի չտալ անհասկացողութիւններու, ցոյց տալով որ այս երկրի զաւակները, ինչ ազգի ալ որ պատկանին, ըլլան հայ, թուրք կամ քիւրտ, հաւասար իրաւունքներով եւ պարտականութիւններով կապուած են օսմ. հայրենիքին: Եւ, վերջապէս, Թահսին պէյ պաշտօնեայ մըն էր, որ կրնար ըմբռնել երեսոյթները, կը հասկնար տեղական պայմանները եւ սիրով կ'ընդունէր իրեն առաջարկուած աջակցութիւնները»: («Աշխատանք» 1914, Հոկտ. 6):

Կացութիւնը փոխուեցաւ, երբ Թահսին պէյի յաջորդեց Ջէվդէթ, որ պաշտօնական յայտարարութեամբ մը խոստացաւ անշեղ կերպով հետեւիլ իր նախորդ մեծ վարպետի բացած «զարգացման եւ բարձրացման ճամբուն»: Դէպքերը մէկը միւսի ետեւէն սկսան ծայր տալ: Հոկտեմբեր 7-ին ժանտարմա ձիւղորներու խումբ մը Այգեստանի փողոցներէն Քէնտրլիի մէջ կը հանդիպի գինուորացուի մը, զոր ձերբակալել կ'ուզէ:

Ձինուորացուն՝ Մանուկ անունով երիտասարդ մը ձեռքը ատրճանակին կը տանի կրակելու եւ փախչելու, բայց կ'իյնայ ժանտարմաներու կրակին տակ: Ասոր վրայ ամէն կողմ կը սկսի հրացանաձգութիւն: Ժանտարմաներ կը մտնեն շրջակայ տուներ եւ դիրք կը բռնեն. շրջակայ տուներէն ալ հայ երիտասարդներ կրակ կը բանան. ժանտարմաներու կրակէն կը սպաննուի Արծրուն անունով տղայ մըն ալ. եւ այսպէս 1-2 ժամ հրացանաձգութիւն կը շարունակուի, մինչեւ որ Վռամեան Ջէվդէթին առնելով դէպքին վայրը կը փութայ եւ վերջ կը դնէ ստեղծուած խուճապին: Դեկտեմբեր 3-ին (1914) Բէլուի մէջ կը սպաննուի ժանտարմ մը. Ոստանի գայմագամ Շիւքրի պէյ վառել կու տայ Բէլուն, 2-300 քիւրտեր կը թողու գիւղին վրայ թալանելու եւ ջարդելու համար: Բէլունէն զատ Նանեկանց, Ընձակ, Շատվան եւ Թիմար գիւղերն ալ կ'ենթարկուին Բաղէշէն եկած միլիսներու բռնութեանց եւ թալանին: Դեկտեմբեր 6-ին Աթմանց գիւղի մէջ չէթա մը կը սպաննէ հոն գացող ոստիկաններէն մէկը, որու պատճառով

19.- Դետէք աներոյին էր Թուրքիոյ պատերազմական նախարար Էնվեր փաշայի:





դեկտ. 7-ին ոստիկաններ խուզուող աղայի դեկավարու թեամբ կը յարձակին Աթանանցի վրայ, ուր խուզուող կը սպաննուի: Կառավարութիւնը կը գինէ Ոստանի քիւրտերը: Անգղ գիւղին մէջ հայ չէթէներ կը քանդեն գիւղին կամուրջը: Այս դէպքերուն վերջ տալու համար կառավարութեան կողմէ Վառամեան եւ Միւնիպ պէյ, երկու երեսփոխաններ կը մեկնին Գաւաշ, դէպքին վայրը եւ կը հաստատեն անդորրութիւնը:

Այս դէպքերէն զատ, ծանօթ չարագործ Մեմհէտ էմին կամաւորներու գլուխ անցած ընդհարում ունեցած էր Կանճառուի հայ գիւղացիներուն հետ: Աւազակապետ Բշարէ Չաթոն նոյնպէս կամաւորներու գլուխ անցած սկսած էր հայ գիւղերը թալլել: Պաշտպալի մէջ տեղի ունեցած էր կոտորած, որմէ ճողոպրածներէն ոմանք Վան սկսած էին հասնիլ: Հազարէն, Բողազքէոյ եւ Մանդան գիւղերը ենթարկուեցան միլիսներու կողմէ ակերի ու թալանի: Թիմարի շրջան՝ էրերինի մէջ փախըստական գիւղերուց փնտռելու գացող ոստիկաններ ընդդիմութեան հանդիպեցան գիւղին կողմէ եւ սկսաւ կարգին ճակատամարտ, որուն վերջ տրուեցաւ նորէն Գ. Ճիտէչեան եւ ուրիշ մը տեղուոյն վրայ ղրկուելով:

1915 փետրուար ամսին արդէն կատարուած էին հետեւեալ փաստերը.—

- 1) Հայ գիւղերուները եւ ժանտարմաները գինաթափուած էին, բան մը որ ստեղծեց քաղաքական անվստահութեան հեղձուցիչ մթնոլորտ մը հայերու հանդէպ եւ լարեց յարաբերութիւնները հայուն եւ իսլամին միջեւ:
- 2) Զինաթափ եղած հայ գիւղերուներուն գրաստի դեր մը տրուեցաւ, ինչ որ վերաւորեց անոնց ինքնասիրութիւնը, միանգամայն ստորնացնելով զանոնք իսլամներու աչքին:
- 3) Զինաթափ եղած այդ հայերը գտնուելով գիւղուած իսլամներու հսկողութեան տակ կամ հարկադրուած ըլլալով անգէն շրջելու գրգռուած եւ սպառազէն իսլամներու մէջ՝ իրենց կեանքը վտանգի ենթարկուեցաւ, հարիւրաւորներ գնդակահար եղան անյայտ տեղեր եւ գաղտնի սպաննուեցան. ջրախեղդ եւ դաշունահար եղան Կարնոյ եւ Պարսկաստանի ճակատներուն վրայ եւ քովերը:
- 4) Զինաթափ եղած հայ գիւղերուները զանազան պատրուակներով հեռացուեցան հայ գաւառներէն դէպի անծանօթ վայրեր:
- 5) Բոլոր իսլամները, յատկապէս քիւրտերը, անխտիր կերպով, 16-60 տարեկան գիւղեցան կառավարութեան կողմէ միլիս անուան տակ: Անոնց յանձնուեցան ոստիկանական եւ ժանտարմական պաշտօններ: Հայերու դիմումները գիրենք ալ միլիս գրելու, յամառօրէն մերժուեցաւ կառավարութեան կողմէ:
- 6) Սոյն միլիսները սկսան շահատակութիւններ ընել

հայ գիւղերու մէջ: Այսպէս՝ Ալիւր, Խաւենց, Ամիկ գիւղերու դէպքերը Թիմարի միլիսներու կողմէ: Կարճկանի Բէլու, Նանեկանց, Ընճակ, Եղեգիս գիւղերու մէջ կատարուած բռնութիւններն ու սպանութիւնները՝ Բաղէշի միլիսի եւ Չէրքէզ աղայի ջոկատին ձեռքով: Մղկների բռնաբարուածները՝ էօմէր աղայի միլիսներու կողմէն: Բշարէ-Չաթոյի 600 հոգինոց խումբին բռնութիւնները Մանազկերտի եւ Վանի նահանգի հիւսիսային արեւելեան գիւղերուն մէջ:

7) Համիտիէներու մնալը հայաբնակ գաւառներու մէջ եւ անոնց կատարած ակերն ու կողոպուտը, ինչպէս Հասան Թամրանայ, Ախոռիկի, Բողազքէսէնի, Հազարէնի, Մանդանի թալանը, Պատիկ գիւղի կողոպուտը Սաղամ բէյի ջոկատին կողմէ եւայլն:

8) Վերջապէս, Բաշգալի եւ շրջակայ հայ գիւղերու, ինչպէս եւ Ախոռիկի եւ Ազարիկի, Հասան Թամրանայ, Հազարէնի եւ Դաշոյլուի ջարդերը:

Այս եւ ասոնց նման դէպքերը անվերջ եւ յարաճուն կերպով սկսան զարգանալ: Զեվտէթ պէյ, որ իր նշանակուելէն քիչ ետք մեկնած էր պարսկական ռազմաճակատ եւ իր տեղ փոխանորդ նշանակած Հեքթարիի միւթէսարը՝ Շեֆիք պէյ, Պաշտպալի վերադարձաւ մարտին՝ Թիմարի մէջ տեղի ունեցած դէպքերուն հետեւանքով կարծես, եւ գործի ձեռնարկեց: Հայ պաշտօնական անձեր ամէն միջոց ի գործ դրին որ Զեվտէթ խստութիւններու չդիմէ: Արամ նոյնիսկ խօսք տուաւ որ փախստական գիւղերուները հաւաքէ եւ ինքն ալ անոնց հետ երթայ ճամբաներուն վրայ աշխատէ: 1915 ապրիլ 2-ին Վանայ առաջնորդական փոխանորդ Եզնիկ վրդ. Ներկարարեանը հետեւեալը յայտարարեց հայ հասարակութեան.—

«Օսմ. կառավարութեան ներկայ պատերազմին մէջ կառավարութեան վերջին կարգադրութեան համաձայն հայոց զինուորական ծառայութիւնը երկրագործական աշխատութեանց եւ ճամբաներու շինութեան յատկացուած ըլլալով եւ ձմեռուան եղանակին տոյն աշխատութիւնն թոյլատու չլինելու եւայլն կարգ մը պատճառներով հայ զինուորացուներէն մէկ մասը իրենց պարտականութեան գլուխ չէին գտնուած:

Արդ, երկրագործական եւ ճամբայի աշխատութեանց եղանակը արդէն սկսած եւ մանաւանդ վստահ որ կառավարութիւնը եւ ազգը ամէն միջոցներ խորհած են պաշտպանելու զինուորներու կեանքը, պատիւը եւ տունը մնացած ընտանիքը, ջերմապէս կը յորդորենք որ մեր ազգայինք ժամ առաջ ընդ առաջ երթան կառավարութեան պատուէրին եւ փութան կատարել իրենց քաղաքացիական պարտականութիւնը»:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

*Ոչ մէկ բան օգնեց, եւ ապրիլ 3-4ի գիշերը իշխանը սպաննուեցաւ, 4-ի առաւօտ Վռամեանը ձերբակալուեցաւ, իսկ 7-ին կռիւը սկսաւ: Կռիւները, որոնց կեդրոններն էին Այգեստան, քաղաքամէջ եւ Շատախ, արդիւնք էին միմիայն Դաշնակցութեան տարիներու գործունէութեան եւ անոր նախապատրաստական աշխատանքներուն: Աւելորդ չ'ըլլար հոս բերել պատճէնը թուրքիկին, որ թուրքերէն լեզուով կռուի առջի օր հրատարակուեցաւ եւ ղրկուեցաւ թուրքերուն: Ահա այդ թուրքիկը:—*

«Հայրենակիցներ,

Արիւնքուտ առնաւուտ կուսակալ մը երկիրը պատերազմի աղետներուն ենթարկելէ եւ անմիտ յարձակումներով մեր մօտաւորապէս 10000 զինուորներու արիւնը ի գուր տեղ հոսեցնելէ ետք, այսօր կ'ուզէ այդ անգամութիւնը ծածկել վանեցիներու արեան մէջ: Ասոր համար է որ սահմանի վրայ գտնուող զինուորները քաշելով տեղույս անմեղ ժողովուրդը ոչնչացնել կ'ուզէ: Խորհեցէք որ, ինչպէս ինքը կ'ըսէ, այս երկրին մէջ անիկա ձի մը ունի միայն: Հետեւաբար անիկա երկու ազգերու արիւնը հոսեցնելէ ետք իր ձին հեծնելով երկրէն դուրս կ'ելլէ եւ փախչելով երկիրը ու մասնաւորապէս ձեզ պիտի յանձնէ սահմանը անցնող թշնամիներուն ձեռքը: Գիտցէք որ այս կուսակալը ծառէն ճիւղ մը կտրելու համար կացինը արմատին կը զարնէ: Ծառին մէկ ճիւղն ալ դուք էք: Ծառը եթէ իյնայ, շատ լաւ կընայ հասկնալ որ ճիւղերն ալ միասին պիտի իյնան: Հետեւաբար թէ ձեր եւ թէ ձեր գաւազներու իրաւունքն ու պաշտպանութիւնը չապահովող այս անիրաւ կռուին մասնակից եթէ ըլլաք, երկու ազգերու միջեւ ահարկու անդունդ մը բանալու օգնած պիտի ըլլաք: Դուք ալ ձեր կեանքը վտանգի ենթարկելէ ետք շատ մօտիկ ժամանակ ձեր վրայ պիտի հրաւիրէք անհաշիւ պատասխանատուութիւն մը եւ անոր չարաղետ արդիւնքը:

Մէկ խօսքով, եթէ երկրի փրկութեան եւ երջանկութեան փափաքող էք, անմիջապէս գործի սկսէք: Ըսէք Ջետտէք պէյին, թէ տեղէ մը կառավարութիւնը կընայ վերցուիլ, բայց ազգեր մնայուն կը մնան: Ըսէք որ երկու ազգեր իրար պէտք չ'է զարնել տալ, դուք հիւր էք, իսկ մենք ընդմիշտ այս երկրին մէջ պիտի ապրինք, հետեւաբար պահանջեցէք որ ինք այս երկրէն ելլէ երթայ, պաշարումը վերցնէ եւ գաւառներուն մէջ տեղի ունեցող դէպքերուն անմիջապէս վերջ տայ: Հակառակ պարագային գործը իր ելքին պիտի յանգի եւ վախճանը աղետալի պիտի ըլլայ»:

ՎԱՆԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ

7 ապրիլ, 915

*Մայիս 6-ին ռուսական զօրքը մտաւ Վան եւ ապա Արամ նշանակուեցաւ Վանի նահանգապետ: Այդ օրէն քայքայուեցաւ Վասպուրականի դաշնակցական կազմակերպութիւնը եւ ոչ մէկ դեր կըրցաւ կատարել Վանի իշխանութեան ամբողջ շրջանին, մինչեւ նահանջ: Կեդր. կոմիտէի երկու անդամներու ճիգերը զուր անցան՝ մէկ կողմէ կառավարութեան գլուխ գտնուող ընկերներուն համերաշխելու որ ապագայ հաւանական վտանգները ի նկատի ունենալով՝ մանր գործերու ետեւէ չ'իյնան, միւս կողմէ՝ զսպելու կազմակերպական շարքերը եւ զանոնք ի վիճակի պահելու պայքարի եւ կռուի համար: «Աշխատանք» թերթի այն ատենուայ խմբագրականները պարզ ցոյց կու տան այն ուղին, որմէ պէտք էր քաշել, բայց զոր անտես ըրին մանաւանդ դուրսէն եկող եւ ներսի ընկերները արհամարհող ուժերը: Ու Վասպուրականը քանդուեցաւ յուլիս 18-ին ահաւոր, աներեւակայելի խուճապով եւ անտիրութեամբ: Կ. կոմիտէի ընկերները տեղեկութիւն իսկ չունէին այդ նահանջէն. կառավարութեան գլուխ գտնուող ընկերները նախամեծար համարած էին խօսել եւ յայտնել զայդ ժողովուրդի ներկայացուցիչներուն, բայց բնաւ կազմակերպութեան: Անկազմակերպ, անպատասխանատու, խայտառակ այդ նահանջը տասնեակ հազարաւոր կեանքեր խլեց Վասպուրականի ժողովուրդէն, որ ցայնօր կըրցած էր կռուով փրկել իր գոյութիւնը: Վասպուրականի նահանջը, ինչպէս տղթ. Լեփսիոս ալ կը հաստատէ, արդիւնք էր Ռուսիոյ Լոպանովեան նշանաբանին — «Հայաստան առանց հայերու»: Եւ իրաւ, Վասպուրականը եթէ մնար կանգուն՝ կը դառնար իսկական Հայաստան, զերծ օտար տարրերէ, հարուստ եւ ուժեղ հայ տարրով:*

*Յուլիսեան նահանջէն ետք, օգոստոսին, երբ Վանը վերագրաւուեցաւ ռուս բանակին կողմէ, Արամ իբրեւ նահանգապետ 7-800 հոգիով, կէս զինուած, կէս անզէն, փութաց Վան, բայց քիչ օրէն դարձեալ ռուսերը նահանջեցին, ու Արամը նորէն ինքզինքը գտաւ Իգատիր ու Երեւան: Անկէ վերջ Արամ պաշտօնանկ եղաւ եւ անոր փոխարէն Վանի շրջանապետ կարգուեցաւ Տէրմէն, որով թեւին տակ մտնելով Վանի ռամկավարները յաջողեցան միլիցիական կազմակերպութեան իրաւունքը յանձնել տալ Եկարեանին:*

*Ասիկա, բնականօրէն դժուար էր տեսնել Վասպուրականին, որ մինչեւ այն ատեն միմիայն Դաշնակցութիւնն էր տեսած գործի գլուխ:*

*Յունուարին, 916 թուի, բիւրոյի կողմէ Վ. Փափագեան Երեւան կու գայ եւ կ'ուզէ խուճապ մը մեր ընկերներէն Վան ղրկել՝ կուսակցական գործերու համար: Կ. կոմիտէի երեք անդամներ՝ Բուլկարացի, Լեւոն եւ Հմայեակ<sup>20</sup> կը մերժեն այդ առաջարկը եւ կ'առաջարկեն*

20.- Յաջորդաբար՝ Կեօգեան Գրիգոր (Բուլկարացի), Շաղոյեան Լեւոն եւ Մանուկեան Հմայեակ:



վերականգնել Վասպ. Կեղր. կոմիտեն, կնիքը վերադարձնել եւ Վասպուրականի կազմակերպական գործերը թողուլ Կեղր. կոմիտէին, ինչ որ կ'ընդունուի եւ յունուարին Բուլկարացի Գրիգորի ղեկավարութեամբ ու Լեւոնի եւ Տիգրան Բաղասարեանի մասնակցութեամբ 12 հոգիէ բաղկացեալ ձիւղոր խումբը, իբրեւ կամաւորական բանակի մէկ մաս, Պարսկաստանի ճանապարհով կը մեկնի Վան: Հոն էր նաեւ Կ. Համբարձումեան, իբրեւ Քաղաքներու Միութեան լիազօր: Մեր ընկերները հետզհետէ կ'ամրանան Վանի մէջ Տէրմէնի ռամկավար իշխանութեան օրով եւ քիչ ատենէն զգացնել կու տան նոյն հակադաշնակցական Տէրմէնին՝ իրենց ուժը: Անոնք կը մասնակցին ռուսական բանակի կատարած գրեթէ բոլոր հետախուզական գործողութիւններուն, իբրեւ տեղւոյն ծանօթներ եւ մեծապէս կ'օժանդակեն յառաջխաղացման ու պատճառ կը դառնան որ քիւրտեր միշտ քշուին եւ հնարաւորութիւն չունենան հաստատուելու: Նոյն մեր ընկերներու շնորհիւ է, որ Խօջապ հաստատուած քիւրտերու վրայ տեղի ունեցաւ յարձակում եւ տեղահանուեցան անոնք ու քշուեցան:

1916 թուականին եւ Տէրմէնի շրջանապետութեան ընթացքին, Վանի մէջ գործի վրայ էին հետեւեալ ընկերութիւնները: 1) Քաղաքներու միութիւն, 2) Գիւղատնտեսական ընկերութիւնը, 3) Նպաստամատոյց, 4) Հայաստանի վերաշինութեան յանձնախումբ, 5) Ամերիկեան կոմիտէ, 6) Բարեգործական ընկերութիւն եւ 7) Տատեանայի կոմիտէն: Սոյն ընկերութիւնները մեծ եռանդով եւ մրցակցութեամբ ձեռնարկած էին Վասպուրականի վերաշինութեան գործին եւ ժողովուրդը հետզհետէ աւելի մեծ թափով կը լեցուէր Վասպուրական՝ վերադառնալով Կովկասէն եւ Պարսկաստանէն, այնպէս որ 916-ի ամառը Վասպուրականը կը ներկայացնէր 50.000-ի հասնող բնակչութիւն մը, որ արդէն բաւական բարեկեցիկ վիճակի տիրացած էր:

Այս կացութիւնը երկար չի տեւեր. յուլիսի վերջերը եւ օգոստոսի սկիզբը Վասպուրականը նորէն կը բռնէ նահանջի ճամբան: Այս գաղթի ընթացքին մեր ընկերները, որոնք իրենց հետ ունէին մինչեւ 70-ի հասնող զինուորներ, կը մնան Վան եւ ռուսական բանակին հետ կը կռուին քիւրտերու եւ թուրքերու դէմ, որով վտանգը կը հեռանայ թէեւ, բայց ժողովուրդը արդէն տեղահանուած կ'ըլլայ: Այս գաղթէն ետք Վասպուրականի շրջան մնացողներու եւ ճամբայէն վերադարձողներու թիւը կ'իջնայ 10-12.000-ի: Եկարեանի միլիցիան կը վարկաբեկուի, ինքը կը հեռանայ եւ տեղը կ'անցնի Չանկալեան, վերակազմեալ հնչակեան մը, որ ինկած էր մեր ընկերներու ազդեցութեան տակ եւ գժտուած ռամկա-

վարներու եւ Եկարեանի հետ: Չանկալեան այնուհետեւ Վանի մէջ կը գործէ մեր տեղւոյն ընկերներու խորհուրդով եւ մեր զինուած ուժերու օժանդակութեամբ: Սոյն նահանջէն ետք ընկերութիւնը, որու լիազօր Օհանջանեան, ոչ դաշնակցական մը, նոյնպէս կը գործէ մեր ընկերներու թելադրութեամբ եւ խորհուրդներով ու չափազանց մօտ կը գգայ ինքզինքը Դաշնակցութեան, Գիւղատնտեսական ընկերութիւնը, որու գործիչները մեր ընկերներն էին, եւ Քաղաքներու միութիւնը, որու լիազօրը Կ. Համբարձումեանն էր: Կը ստեղծուի դրութիւն մը, ուր հանդէս կու գայ նորէն Դաշնակցութիւնը իր ամբողջ ուժով, հարկաւ ոչ յայտնապէս:

Հետզհետէ կացութիւնը կը սկսի բարելաւուիլ, երբ տեղի կ'ունենայ Վասպուրականի հինգերորդ գաղթը, նոյնմբեր 9-ին: Նախորդ նահանջէն ի վեր ռուս բանակը Հայոց Ձորի շրջանը իր պաշտպանութենէ դուրս թողած էր թէեւ, բայց 2500-ի չափ ժողովուրդը ըրսկով հաստատուել էր հոն եւ մեր զինուած ուժերուն ապաւինած վար ու ցանքս կ'ընէր: Երբ Հայոց Ձորի մեր խումբերը կ'ենթարկուին քրտական եւ թուրքական ուժերու յարձակման, ռուս զօրքը օգնութեան չ'երթար, որով կռիւը կը փոխադրուի Այգեստանի պատերուն տակ, ուր սակաւաթիւ զօրքը մեր զինուորներուն օժանդակութեամբ՝ ետ կը մղէ յարձակումը, երբ արդէն Հայոց Ձորի եւ Վանի բնակիչները գաղթեցր եւ լեցուցեր էին Թիմարի շրջանը ու բռնեց նահանջի ճամբան: Այս կռիւներու մէջ մերոնք, Լեւոնի եւ Տիգրանի<sup>21</sup> ղեկավարութեամբ, մեծ քաջագործութիւններ կը կատարեն, չնայելով որ նոյնիսկ կռիւներու ատեն զինաթափութեան կ'ենթարկուին ռուսաց կողմէ, որոնք արգիլած էին ժողովուրդին գէնք կրելը: Այդ կռիւներէն առաջ եւ ետք մեր զինուած ուժերը կը շարունակեն իրենց հետախուզութիւնները՝ ռուս հրամանատարի հրամանով եւ ամէն անգամուն ալ պատճառ կը դառնան որ Խօջապի եւ Հայոց Ձորի սահմաններուն մօտեցող քիւրտերը քշուին եւ հեռանան: Այս գաղթի հետեւանքով 4000 հոգի միայն Կովկաս եկան, իսկ միւսները մնացին դարձեալ Վանի շրջանին մէջ:

1917 փետրուարեան յեղափոխութիւնը կու գայ նոր շրջան մը բանալ նաեւ Վասպուրականի մէջ: Յեղափոխութեան այլքները ուշ կը հասնին հոն: Մարտ 27-ին մեր ընկերները կը նախաձեռնեն կազմել մարմին մը, որուն նախ քաղաքապետական մարմին անուն կու տան, եւ կը սկսին քշել ռուս չինովիկները<sup>22</sup> տեղւոյն զինուորական մարմնի մասնակցութեամբ: Վան կ'երթան զօրքի համար կոմիսարներ՝ յեղափոխութիւնը իրագործելու համար: Սոյն կոմիսարները օրինական մարմին կը ճանչնան վերոյիշեալ շրջանային մարմինը: Ապրիլ 7-ին Վասպուրականի Կ. կոմիտէն յեղափոխութեան ոգեւորութեան տակ կը սօսնէ ապրիլեան կռիւներու տարեդարձը եւ կը կատարէ բացումի հանդէս

21.- Լեւոն Շաղոյեանի եւ Տիգրան Պաղասարեանի:  
22.- Չինովիկ – պաշտօնայ:







ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

«Ազատութեան լոյս» ընթերցատան: Կամաց-կամաց Վասպուրականի պետական-վարչական ամբողջ իշխանութիւնը կ'անցնի մեր ընկերներու կազմած Շրջանային վարչութեան, որ կը կազմակերպէ դատարան, ոստիկանութիւն, տնտեսական, գաղթականական մարմիններ, ուսումնական խորհուրդ եւ այլն ճիւղեր ու կը վճարէ ռուս չինովնիկները:

Ապրիլ 23-ին կը գումարուի Վասպուրականի Շրջանային ժողովը 180 պատգամաւորներու մասնակցութեամբ: Ժողովին կը հրահրուին նաեւ ընկերութեանց ընկեր ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ հայկական V գնդի դաշնակցական սպաներ:

Օրակարգի հարցերը կ'ըլլան

- 1) Զեկուցումներ շրջանէն.
- 2) Զեկուցում Կեղը. կոմիտէի.
- 3) Զեկուցում Շրջանային վարչութեան.
- 4) «Աշխատանք» թերթը.
- 5) Գործող կազմակերպութիւնները Վասպուրականի մէջ.
- 6) Վերաբերմունքը քիւրտերու հանդէպ.
- 7) Ինքնապաշտպանութիւն եւ միլիցիա.
- 8) Ներգաղթ եւ ազգաբնակչութեան տեղաւորումը:

Երբ ժամանակաւոր կառավարութիւնը հիմնեց Թուրքահայաստանի գեներալ նահանգապետութիւն, Կ. Համբարձումեան, որ Շրջ. վարչութեան նախագահն էր, նշանակուեցաւ Վանի կոմիսար եւ ապա եղաւ Վանի նահանգային կոմիսար: Ընկ. Կ. Համբարձումեան կոմիսար դառնալով կը պահպանէ Շրջ. վարչութեան գոյութիւնը նոյնութեամբ գրեթէ եւ բոլոր կարեւոր խնդիրները կ'ենթարկէ անոր որոշման:

Կացութիւնը երթալով կը բարդանայ ճակատի վրայ: Զօրքը հետզհետէ կը թուլնայ: Զինուորներ կը սկսին միթիւնկներ ընել անվերջ եւ հրամանատարի հրամանը չի գործադրուիր, բայց երբ Նոյեմբերին երեք ամսուայ պաշտօնական զինադադարի լուրը հասաւ ճակատ, զինուորը այլեւս մոռցաւ իր զինուորի պարտքը, եւ վերադարձի մասին սկսաւ մտածել, նախապէս պատրաստուելով ատոր, թալանելով, կողոպտելով պետական եւ մասնաւոր գոյքեր:

Տեսնելով ճակատէն մեզ սպառնացող վտանգը, ձեռնարկեցինք, առանց դուրսէն ոեւէ հրահանգ ստացած ըլլալու, տեղւոյն վրայ զինուորական ուժ գոյացնել: Նոյեմբեր 24-ին կազմեցինք դաշնակցականներու ընդհանուր ժողովը, ուր երկրի պաշտպանութեան հարցը քննութեան առնելով, կոչ ըրինք ընկերներուն մտնել զինուորական շարքերը: 27-ին կազմեցինք մեծ միթիւնկ

մը, ուր ընկերները մանրամասնօրէն ներկայացուցին սպառնացող վտանգը եւ նոյնպէս հրահրեցին ժողովուրդը դէպի գէնք: Մէկ քանի օրուայ ընթացքին, միլիցիա անուան տակ, մենք կազմեցինք 500-ի հասնող ուժ մը, որուն մէկ մասը անմիջապէս ճակատ դրկուեցաւ: Տեղական զինուորական ուժեր կազմակերպելու ձեռնարկին մեծ ուժ տուաւ, իր խորհուրդներով եւ օժանդակութեամբ, գորավար Սիլիկեան, որ նոյն ատեն Վանի ռուս զօրաց հրամանատարն էր, որու մասին մենք Վանէն Կովկասի ընկերներուն միշտ գովասանական խօսքեր ըրինք:

[1918] Յունուար 14-ին կ'ունենանք Ռայոնական ժողով, 85 ներկայացուցիչներէ բաղկացեալ: Ժողովը, ի մէջ այլ հարցերու, որոշեց մերժել Կովկասի մէջ կազմուած թուրքահայ եւ ռուսահայ զինուորական առանձին մարմիններ եւ գունդեր, եւ պահանջել որ ստեղծուի մէկ իշխանութիւն եւ զինուորական բանակ: Նոյնպէս որոշուեցաւ բարւոք յարաբերութիւններ ստեղծել քիւրտերու հետ, որուն անմիջապէս ձեռնարկուեցաւ եւ տուաւ իր դրական հետեւանքները: Այսպէս, երբ Վասպուրականի ժողովուրդը մարտին բռնեց նահանջի ճամբան դէպի Պարսկաստան, Սարայի շրջանի մէջ Նօշարի քիւրտերը չկտրեցին մեր ճամբան. նոյնպէս նոյն Նօշարի քիւրտ աղաները եղան առաջին անգամ, որ մեզի հաղորդեցին Կամուրջի թուրքական հրամանատարի այն հրամանը, որ դրկուած էր քիւրտերուն եւ կը հրահանգէր անոնց ոտքի ելլել եւ կտրել հայերու նահանջի գիծը յայտնելով որ իրենք շուտով պիտի սկսին յառաջխաղացման:

Տեսնելով որ դէպքերը արագօրէն կը զարգանան եւ Վանի կոմիսարիատը չի կրնար ընդառաջ երթալ օրուայ ընդհանուր պահանջներուն եւ կազմակերպել դիմադրական ուժ, Կ. կոմիտէն կ'որոշէ կազմել նոր ձեւով կառավարութիւն մը, անկախ կոմիսարիատէն. առաջարկը կը ներկայացուի Կ. Համբարձումեանին, որ սիրով կ'ընդունի, եւ կը կազմուի Համբարձումեանի նախագահութեամբ, աշխատանքի բաժանման սկզբունքով, կառավարութիւն մը, որ մեծ եռանդով գործի կը ձեռնարկէ եւ դրական արդիւնքներու կը յանգի:

Վասպուրականի մէջ, ռուսական զօրքերու մեկնումէն ետք, կը մնայ հայկական V պոլկը<sup>23</sup>, մօտաւորապէս 1000 հոգի: V պոլկի մնալը դարձաւ չափազանց գայթակղալի եւ անվերջ խռովութիւններու բոյն: Անոնց մէջ սկսաւ շարժում Կովկաս վերադառնալու. այս պատճառով ներքին կռիւներ եւ սպանութիւններ վերջ չունէին: Ու այն օրը, մարտ 8-ին, երբ Ոստանի ճակատին վրայ սկսաւ առաջին յարձակումը, անոնք ճամբայ ելան դէպի Կովկաս:

23.- Պոլկ – գունդ:

[1919 թ., Երեւան]







Փաստ. 63-4

## Բ 2.- MEMORANDUM

### Présenté par Vramian, Deputé de Van à Tahsin Bey, Vali de Van et d'Erzroum, Chef principal des vilayets arméniens

Les soldats arméniens ont déserté au commencement de la guerre pour trois motifs:

- 1- Les soldats qui avaient plus de 23 ans n'avaient jamais été exercés.
- 2- Ils eurent à souffrir des injustices et de mauvais traitements, surtout depuis la déclaration de la guerre.
- 3- On affecta de méprises leur religion, on ne leur permit pas d'accomplir leurs devoirs religieux.

Au début les déserteurs étaient peu nombreux; avec quelques concessions on aurait pu facilement les retenir dans l'armée, mais la méfiance du gouvernement, certaines mesures irritantes, grossirent bien vite le nombre des mécontents qui ne pensèrent qu'à fuir.

Les causes principales du mécontentement des soldats sont les suivantes:

1- Le désarmement des soldats et des gendarmes arméniens, qui les mettait en infériorité envers leurs camarades turcs, qui créait autour d'eux une atmosphère de méfiance et rendait encore plus difficile les relations déjà si tendues.

2- Les arméniens désarmés se trouvaient sous la surveillance des musulmans en armes; ils étaient obligés de circuler, de travailler sans arme au milieu de leurs ennemis bien armés et cela souvent au péril de leur vie. Le bruit court dans le public qu'il y eut des centaines de soldats égorgés, noyés, poignardés, disparus à Erzeroum et dans les environs, au moment des combats.

3- On arma les musulmans et les kurdes, de 16 à 60 ans, sous prétexte de créer une milice populaire, on leur conféra des grades et des titres comme gendarmes ou commissaires, ce qui leur donne une certaine autorité sur les arméniens.

4- Des villages furent ruinés par les milices.

Les violences et les pillages des milices de Temran amenèrent les incidents D'Aliour, de Korentz et d'Amek.

Les milices de Bitlis, renforcées par des bandes de Tscherekez aga, pillèrent, dévastèrent les villages de Gardjkan, de Beghen, de Nanekantz, d'Endzak et d'Egheguisse.

Des milices conduites par Eomer agha, parent de Bechare Tschato, saccagèrent le village de Meghkener, y commirent des atrocités de toutes sortes, il y eut vingt femmes et enfants massacrés.

Les villages de Manazkert furent visités aussi par une bande de 600 hommes, commandés par Bcharé Tschato et là aussi il y eut des pillages et des violences de toutes sortes.

Ces derniers temps, lors du passage dans la Perse, les villages arméniens de nord-est du vilayet de Van eurent aussi beaucoup à souffrir.

Les villages arméniens du vilayet d'Erzeroum ne furent pas mieux traités.

Dans la plaine de Mousch il y eut des pillages, des viols, des enlèvements de femmes et de jeunes filles, toujours commis par des volontaires kurdes. Ils durent s'arrêter provisoirement, par suite des observations faites par le consul allemand de Mossoul.



Փաստ. 63-4ա

## Բ 2.- Ա. ՎՈՒԱՍԵԱՆԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ ԹԱՀՄԻՆ ՊԷՅԻՆ՝

### ՎԱՆ ԵՒ ԷՐՁՐՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՆԱՅԵԹՆԵՐԻ ԳԼԽԱՒՈՐ ՎԱԼԻՆ

Պատերազմի առաջին ամիսներին, թրջական բանակի հայ զինուորները դասալքութեան մղուեցին հետեւեալ շարժումներով:

1- 23 տարիքից վեր զինուորները երբեք զինուորական մարզանք չեն տեսած.

2- Հայ զինուորները նշաւակ եղան անիրաւութեան եւ չարաչար վերաբերմունքի, յատկապէս պատերազմի յայտարարութիւնից յետոյ.

3- Ոչ միայն արգիլեցին, որ հայ զինուորները իրենց կրօնական պարտաւորութիւնները կատարեն, այլեւ քամահրեցին եւ անարգեցին նրանց կրօնքն ու դաւանանքը:

Սկզբում դասալքների թիւը շատ քիչ էր: Փոքր զիջումներով կարելի էր նրանց պահել դիւրութեամբ բանակի մէջ, բայց կառավարութեան ցուցաբերած անվստահութիւնն ու որոշ գրգռիչ միջոցառումները շուտով բազմացրին դժգոհների քանակը, որոնց ուրիշ բան չէր մնար, բայց միայն պրծել կացութիւնից:

Հայ զինուորների դժգոհութեան պատճառները հետեւեալներն են.

1- Հայ զինուորների եւ ժանդարմների զինաթափումը, որ հայերին, թուրք զինուորների աչքին, կը ներկայացնէր ստորակայութեան վիճակում, եւ որ կը ստեղծէ անվստահութեան մի մթնոլորտ, որ արդէն լարուած փոխյարաբերութիւնները խիստ դժուար կը դարձնի:

2- Զինաթափ հայ զինուորներին մշտապէս զինուած իսլամների հսկողութեան տակ պահելը: Հայերը պարտադրուած էին ման գալ եւ աշխատել բոլորովին անզէն, այն էլ զինուած իսլամների միջավայրում, զգալով իրենց միշտ մահուան սպառնալիքի տակ:

Յամառ գրոյցներ են շրջում հանրութեան մէջ, թէ հարիւրաւոր անզէն հայ զինուորներ փողոտուած, ջրամոյժն եւ սրախողիտող եղած են: Շատեր էլ անհետ կորած են ռազմաճակատից հեռու, էրզրումում եւ շրջակայքում, պատերազմական գործողութիւնների ընթացքում:

3- Ժողովրդական միլիա կազմելու նպատակով, 16-60 տարեկան թուրքերին եւ քրդերին զինել են, նրանց պաշտօնապէս շնորհուած է զինուորական տիտղոս եւ աստիճան, ինչ որ նշանակում է ընծայել որոշ հեղինակութիւն հայերի վրայ:

4- Այս միլիաների կողմից հայ գիւղերի աւերումը:

Թամրանի միլիաների գործած բռնութիւններն ու կողոպուտները պատճառ դարձան Ալիւրի, Խորենցի եւ Ամիլի դէպքերին:

Պիթիսի միլիաները, Զէրքէզ աղայի չէթէների գլխաւորութեամբ, թալանեցին, աւերեցին, քարուքանդ արին Կարճկանի, Պեյթենցի(?), Նանիկանցի, Ընձակի եւ Եղեգիսի գիւղերը:

Պշարէ Զաթոյի ազգական էոմեր աղայի միլիաները կողոպտեցին Միսկներ գիւղը, անլուր խժդժութիւններ գործեցին եւ քսան կին ու մանուկ մորթեցին:

Մանազկերտի գիւղերի վրայ յարձակուեցին Պշարէ Զաթոյի 600 չէթէներ եւ բացի կողոպուտից եւ աւերածութիւնից, ամէն տեսակ բռնութիւններ գործադրեցին: Վերջերս էլ ասպատակեց Վանի վիլայէթի հիւսիս արեւելքում Պարսկաստանի սահմանի մերձակայ գիւղերը, որոնք յոյժ ծանր կորուստների մատնուեցին: Նոյն ճակատագրին ենթարկուեցին նաեւ էրզրումի վիլայէթի հայկական գիւղերը:





Des Kurdes ont pillé et saccagé les villages arméniens de Slivan, Diarbékir, Tigranaguerd etc, etc.

5- L'armement des chefs kurdes et de leurs bandits, leur stationnement dans les villages et les régions habités par les arméniens comme Mehemed Emin, Moussa Gassem Bey etc.

6- Les soldats arméniens désarmés et envoyés loin de leur province natale, dans des pays inconnus, habités par des musulmans.

7- Les Hamidiehs qui stationnent toujours dans les provinces arméniennes qu'ils pillent et ravagent à leur gré par exemple à Akhorick, Hassan Tamran, Boghaz-Kessan, Hazarène, Mandan, dans le vilayet de Van.

Les hommes de Sadem Bey ont pillé le petit village de Timar.

8- Enfin les massacres de Bachkalé et des villages voisins ceux de Saraï, Akhorik, Hassan Tamran et Hazarène sont malheureusement trop certains malgré tous les démentis officiels.

9- Tous les faits exposés ci-dessus sont les principales causes du mécontentement du peuple arménien, c'est ce qui contribua le plus au découragement et aux défaillances chez les soldats. C'est pour nous tous une question très importante; il s'agit de la vie, de l'honneur, de la sécurité des biens de notre peuple.

L'attitude du gouvernement favorise et entretient l'audace et la haine des kurdes.

La question de la vie, de l'honneur, de la sécurité de ses biens, est pour un peuple un droit sacré.

Le gouvernement en refusant de reconnaître ce droit agirait contre sa conscience, contre son intérêt, en dehors de la raison et d'une saine politique.

On oblige les arméniens à entrer dans un service où non seulement leur sécurité est menacée, mais encore celle de leurs familles, sans profit pour l'Etat, ni pour l'ordre public; de là la répugnance qu'ils montrent à accepter de faire ce service.

Il faut aussi, cesser d'employer le mot de déserteur envers les soldats arméniens; ils n'ont pas d'armes, ils ne sont donc pas soldats et par conséquent ils ne désertent pas.

En me basant sur toutes ces considérations je propose:

1- De dispenser du service militaire les arméniens âgés de plus de 23 ans, en leur faisant payer un impôt pendant toute la durée de la guerre.

2- D'armer les jeunes gens de 21 à 23 ans et de les employer dans les services de la gendarmerie locale. Que leur situation soit assurée par un règlement provisoire qui durera jusqu'à la fin de la guerre.

3- La reprise des relations normales entre le gouvernement et le peuple arménien afin que sa vie, son honneur, la sécurité de ses biens soient assurés.

Signé  
VRAMIAN, député de Van

Présenté le 5 janvier 1915





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

Մշոյ դաշտի վրայ գտնուող գիւղերում գործադրուեցին թալան, բռնաբարութիւններ, կիների եւ աղջիկների առեւանգում, եւ այս բոլորը քուրդ կամաւորները կողմից: Սրանք առժամապէս կասեցրին իրենց շահատակութիւնները, որովհետեւ դիտողութիւն եղաւ Մուսուլի գերման հիւպատոսի կողմից:

Քուրդերը թալանեցին եւ քարուքանդ արին նաեւ Սլիվանի եւ Տիարպեքիւրի գիւղերը, եւայլն, եւայլն:

5- Զինուամբ թուրք եւ քուրդ չէթէների պետերին, աշիրաթապետերին, նրանց բանակումը յատկապէս հայերով բնակուած գիւղերում եւ շրջաններում, ինչպէս Մուսա Ղասրմը, Մեհմէտ էմինը եւայլն:

6- Հայ գիւնուորների հեռացումը իրենց բնակավայրերից եւ մերձակայ շրջաններից դէպի անծանօթ եւ անմարդաբնակ վայրեր, ուր գուտ իսլամական ազգաբնակչութիւն գոյութիւն ունի:

7- Համիտիէների տեղաւորումը միշտ հայկական եւ հայաշատ գաւառների մէջ, ուր կողոպուտը, կեղեքումը եւ աւերածութիւնը սանձարձակ կը շարունակուի տակաւին, ինչպէս Վանի նահանգում Ախուրիկի, Հասան թամրանում, Պողազ Քեսանի, Հազարանի, Մանտանի մէջ:

Իսկ Սատրմ պէյի չէթէները վերջերս թալանած են թիմար փոքրիկ գիւղը:

8- Վերջապէս Պաշգալէի եւ հարեւան գիւղերի կոտորածները: Սարայի, Ախուրիկի, Հասան թամրանի եւ Հազարէնի ջարդերը, որոնք հակառակ պաշտօնական հերքումների, անվիճելիօրէն բացայայտ են:

9- Վերոյիշեալ եղելութիւնները գլխաւոր պատճառներն են հայ ժողովուրդի դժգոհութեան, որոնք մեծապէս նպաստում են հայ գիւնուորների վհատութեան եւ լքումին: Մեզ համար յոյժ կարեւոր եւ կենսական ինդիք է այս, որ վերաբերում է հայ ժողովուրդի կեանքի, պատուի եւ ինչքերի ապահովութեան:

Կառավարութեան կեցուածքը այս իրողութիւնների հանդէպ խրախուսում է քուրդերի յանդգնութիւնը եւ զարկ տալիս ատելութեանը:

Կեանքի, պատուի եւ ինչքի ապահովութիւնը մի ժողովուրդի բնական եւ նուիրական իրաւունքներն են: Մեր-ժելով ընդունել այդ իրաւունքները, կառավարութիւնը մարդկային խղճի եւ իր պետական շահերի դէմ է գործում, եթէ հաշուենք բանականութեան եւ ողջամիտ քաղաքականութեան ձայնը:

Հայը պարտաւորուած է մտնել մի ծառայութեան մէջ, որ ոչ միայն իր ապահովութեանն է սպառնում, այլեւ իր ընտանիքի, որով ոչ պետութիւնն է օգուտում եւ ոչ էլ հանրային անդորրութեան կարգուսարքը:

Ահա թէ ուսկից է ծագում հայ գիւնուորի չկամութիւնը եւ այս ծառայութիւնից փախուստը:

Պէտք է դասալիք բառը գործածել հայ գիւնուորի դէմ, քանի որ նա անգէն լինելով, այլեւս գիւնուոր չէ եւ հետեւաբար իր արարքը դասալքութիւն չէ:

Հիմնուելով վերոյիշեալ նկատումների վրայ, առաջարկում եմ.—

1.- Զինուորական ծառայութիւնից գերծ պահել 23 տարիքից վեր հայերին, դրա փոխարէն նրանցից գանձել մի տուրք, իբրեւ ծառայութեան փրկագին, պատերազմի տեւողութեան ընթացքում:

2.- Զինել 21-23 տարեկան հայ երիտասարդներին եւ մինչեւ պատերազմի վախճանը, նրանց գործածել տեղական ժանդարմական ծառայութեան համար:

3.- Վերականգնել կառավարութեան եւ հայ ժողովուրդի բնականոն փոխյարաբերութիւնները, երաշխաւորելու համար կեանքի, պատուի եւ ինչքի ապահովութիւնը:

**Ա. ՎՌԱՄԵԱՆ**  
Վանի երեսփոխան Օսմ. պարլամենտում

5 Յունուար 1915, Վան

Թարգմանուած Ֆրանսերէն բնագրից





Փաստ. 104-5

### Բ 3.– ԱՐԱՄԻ ՆԱՄԱԿԻ ՊԱՏՃԷՆԸ ՎԱՆԻՑ, ՊԱՇԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Վան, 15-16 Ապրիլ 1915

*Ծանօթութիւն.– Ստորեւ հրատարակուած նամակը Արամ Մանուկեանը Վանից ուղարկել է Անդրանիկին: Գրաբերը քուրդ վալադ Օսմանն է: Առաջին աշխարհամարտի սկիզբներին, Վռամեանը, վալադ Գող Մելոյի միջոցով, մի գրութիւն էր ուղարկել Բիւրոյին: Վալադ Օսմանը երկրորդ գրաբերն էր, որ յիշեալ նամակը Անդրանիկին հասցրեց, հակառակ սահմանը անցնելու ահագին դժուարութիւնների:*

*Դիւանում գտնուածը պատճենն է այդ նամակի, որ արտագրուած է Ռոստոմի ձեռքով: Նամակի ներքեւ Ռոստոմը փակագիծերի միջեւ գրել է. (ընդօրինակուած է բառացի, պահեցէք արխիւում):*

«Կառավարութիւնը դաւադրութեամբ կոտորածի ձեռնարկեց: Իշխանը դաւով սպանուած է, Վռամեանը արքայուած: Բազմաթիւ գիւղեր հրկիզուած, 5-6000 կոտորած՝ կանանց, երեխաների, գաւառների մէջ: Խիստ ընդհարում Վան եւ Շատախ: Տասը օր է ի վեր թնդանօթները կ'որոտան քաղաքի վրայ, ոչ մի վնաս մեզմէ: Շատախը 15 օր է, կռուի մէջ է: Ժողովրդի տրամադրութիւնը բարձր է: Ժողովրդի վերջին յոյսը ձեր վրայ է: Օր մը ուշանալն անգամ դաւաճանութիւն է: Շտապեցէք, ժողովրդի փրկութեան համար շուտ հասէք»:







#### Բ 4.– ԱՐԱՄԻ ԿՈՉԸ ԱԶԱՏԱԳՐՈՒԱԾ ՎԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Հայ ժողովուրդին,

Քաղաքացիներ,

Ռուսական յաղթական բանակի առաջխաղացումը նոր դարագլուխ է իրաւակարգ կը բանայ մեր քաղաքի եւ գաւառի իրաւագուրկ ժողովուրդին համար: Դարերու ստրկութեան եւ քաղաքական ճնշումներու վախճանն է, որ մենք կ'ապրինք այս օրերուն. հայ ժողովուրդի շինարար եւ ստեղծագործ ոգիի ծնունդն է, որ մենք կը տօնենք այժմ:

Ռուս զօրքերու հրամանատարը, գեներալ Նիկոլայեւ, գնահատելով Վասպուրականի հայ ժողովուրդի հերոսական ջանքերը՝ թուրք կառավարութիւնը անգօր դարձնելու իր ազգասպան քաղաքականութեան մէջ, եւ հաւանելով հայ ժողովուրդի կուլտուրական ձգտումները, բարեհաճեցաւ 7 Մայիս, 1915, թիւ 16 մասնաւոր հրամանագրով ինձ նշանակել քաղաքի եւ շրջանի կառավարիչ եւ կազմակերպել նոր գործը իր բոլոր ճիւղերով:

Այսօր արդէն կազմակերպուեցան ոստիկանական, դատական, գիւղատնտեսական, գաղթականական, քաղաքապետական եւ այլ վարչութիւններ:

Ասով կը յայտարարեմ ամբողջ ժողովուրդին, որ նոր կառավարութիւնը կազմակերպուած ըլլալով, անհրաժեշտ է բոլոր գործերու համար դիմել նոր կառավարութեան յանձնախումբերուն, քաղաքի եւ շրջակայքի մէջ բնականոն վիճակ ստեղծելու համար:

Ներկայ պատմական պատասխանատու օրերուն մէջ, հայ ժողովուրդը միայն մէկ նշանաբան պիտի ունենայ – համախմբուիլ ամբողջ եռանդով կառավարութեան շուրջը, վերակազմակերպելու համար կեանքը քաղաքի եւ շրջանի մէջ, արժանի լինելու համար քառորդ դարէ աւելի մղուած պայքարին մէջ ինկած հերոսներու յոյսերուն եւ յիշատակին ու միշտ բարձր պահելու համար հայ ազգի կուլտուրական պաշտօնի գիտակցութիւնը Փոքր Ասիոյ այս ծայրագաւառին մէջ:

Ռուս գեներալը մեր այս յոյսերու լիակատար գիտակցութեամբ էր, որ հայ ժողովուրդի եւ իմ հանդէպ ցոյց տուաւ այդ մեծ վստահութիւնը:

Քաղաքացիներ, ձեզ կը մնայ մեր այդ յաւակնութեանց եւ յոյսերուն ընդառաջ գացող յաղթական բանակի եւ գեներալի վստահութիւնը բացարձակապէս արդարացնել եւ աւելի լաւագոյնին արժանի եւ պատրաստ գտնուիլ:

Վանի շրջանի կառավարիչ  
ԱՐԱՄ

1915, Մայիս 8, Վան-Այգեստան

(«Հայրենիք» ամսագիր, Մայիս 1925, թիւ 7, էջ 87-88)





Փաստ. 675-2

Բ 5.- ՌՈՍՏՈՍԷՆ ԺԸՆԵՒԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ

23/VI 1915, Վան

Սիրելիք, ----<sup>24</sup>

Մի քանի ժամանակ է այս կողմերումն եմ: Մխիթարական եւ անմխիթար բաներ շատ կան:

Քաղաքը, ինչպէս իմացած կը լինիս, լաւ է պաշտպանուել: Մի քանի գաւառներ նոյնպէս կարողացել են լաւ դիմադրել մինչեւ դրսից օգնութիւն հասնելը: Կան այնպիսի վայրեր, որոնք բոլորովին չեն տուժել: Ուրիշ տեղեր ազգաբնակչութիւնը փրկուել է, բայց մեծամասնութեան ունեցած չունեցածը թալանի է ենթարկուել: Իսկ շատ տեղ ազգաբնակչութիւնը կոտորել են: Տղամարդկանցից ազատուել են շատ քչերը: Կան գիւղեր, որոնք կատարելապէս ամայի են դառել: Կոտորածը կատարել են աներեւակայելի անգթութեամբ: Քահանաներին խորովել են՝ շամփուր անցկացրած. կանանց եւ տղամարդկանց երբեմն սպանել են գլուխը նաւթ քսելով եւ կրակ տալով. կանանց ստինքները կտրել են եւ մորթուած մանուկների բերանը դրել:

Ազդուած այս բոլորից՝ հայերը իրենց կողմից մի քանի տեղեր կոտորել են քիւրդ եւ թիւրք գիւղեր: Բայց հետաքրքիրը այն է, որ առաջին գրգիռը անցած, չեն կարողացել այլեւս ձեռք տալ կանանց եւ մանաւանդ մանուկներին: 1200ի չափ թուրք կին, երեխայ բերուած են քաղաք եւ յանձնուած ամերիկական եւ շվեյցարական միսսիաններին:

Վանի մէջ կոտորուածների թշուառութիւնը նկատելի է: Բայց գաւառներում սոսկալի տեսարանների վկայ եղանք: Տասնեակ հազարաւոր կին, երեխայ, հատուկ կէստ տղամարդկանց ուղեկցութեամբ մի տեղից միւս տեղն են ընկնում՝ անապաստան, անօթի: Հիւան-

դութիւնները առատ հունձ են անում: Միայն Աղթամարի վանքի շուրջը օրեկան մեռնում էին 15-20 հոգի: Նոր կառավարութիւնը, մանաւանդ հիմնարկութիւնները, կազմակերպում են օգնութիւն, բաժանում են սնունդ, հագուստ, ուղարկում են բժիշկ, դեղեր, բայց այս բոլորը աւելի քան անբաւարար է:

Թէ ինչեր են կատարուում աւելի խորերը՝ Մշոյ, Բաղէշի, Սղերդի, Տիգրանակերտի եւ այլ շրջաններում, որտեղից տեղեկութիւններ գրեթէ չենք ստանում, կամ թէ ինչ կը կատարուի, երբ ուսուցողները մօտենան կամ ուշանան մօտենալու, այդ Աստուած միայն գիտէ:

Լաւ չէ եւ քրդերի վիճակը: Վանի նահանգապետը Արամն է: Վարչութիւնը, դատական մասը եւ այլն հայկական են: Սա մի փորձ է, քննութիւն, թէ արդեօք հայերը ընդունակ կը լինեն կառավարելու երկիրը:

Ձինուորները լաւ են: Անպայման քաջ են, մանաւանդ յարձակողական կռիւներում: Գրոհի են գնում քիչ թուով, բազմաթիւ եւ լաւ դիրքերում ամրացած թշնամու դէմ, նոյնիսկ երբ թշնամին կանոնաւոր գինուորներ են: Թնդանօթի եւ զնդացիւրների կրակի տակ լաւ են դիմանում: Միայն անկարգապահ են. ոչ մի կերպ չենք կարողանում մի քանի տարրական պահանջներ իրականացնել: Ձրկանքներ շատ են կրում, կռիւների շրջանում անտրտունջ, իսկ խաղաղ ժամանակ շատ պահանջներ են դնում: Եթէ լաւ գինուորներ չեն, - զուտ գինուորական դիսցիպլինի տեսակէտից, բայց անպայման գնահատելի կռուողներ են: Ափսոս միայն, որ կառավարական շրջանակները մեր տեսակէտը չեն բաժանում:

Համբոյրներով՝  
Ձեր Ռ[ՈՍՏՈՍ]

24.- Չեռագրին վրայ հասցէատիրոջ անունը ջնջուած:



Փաստ. 675-1

**Վ.Ա.Ն.Ի**  
**Շ Ր Զ Ա Ն Ա Յ Ի Ն**  
**Վ.Ա.ՐԶՈՒԹԻՒՆ**  
**N=**

Վ.Ն.Ն. 1915 թ. Զուհիսի 23

**Բ 6.- ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ  
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ**

Հայրենակիցներ!

Հաճոյքով լսեցիք այն բուռն ոգեւորութիւնը, որ առաջ բերին Վանի միամսեայ ինքնապաշտպանութեան կռիւները Կովկասի եւ գաղութներու մեր հայրենակիցներու մէջ:

Ժողովուրդը ուժասպառ, յամեցած [?] եւ քայքայուած, իր յոյսը դրաւ Կովկասի եւ արտասահմանի եղբայրներու վրայ, որ անոնք կու գան իր աւ[ե]ր[ու]ած տուներու, քանդուած օճախներու, հազարաւոր հիւանդներու եւ քայքայուած տնտեսութեան վերակազմութեան օժանդակելու:

Շնորհակալութեամբ արդէն ստացանք բաւականաչափ գումարներ Ս. Էջմիածնէն, Թիֆլիսէն եւ Բազումէն. տեղս հասաւ «Եղբայրական Օգնութեան կոմիտէ» բժշկական խումբը – մէկ բժիշկ, մէկ ֆելդշեր<sup>25</sup> եւ մէկ գրութեան քոյր: Երէկ տեղս հասան Թիֆլիսի Կ. կոմիտէի եւ Հայ Բարեգործական ընկերութեան բժշկական խումբն եւս – 2 բժիշկ, 3 կին բժիշկ օգնականներ, – Կ. կոմիտէի ներկայացուցիչ պ. Սարգիս Արովեան, գաղթականներուն սնունդ բաշխելու գործը կարգադրելու համար. երկու խումբերն ալ բերած են բաւականաչափ դեղորայք, հագուստ, շաքար եւայլն:

Արդէն գործի ենք սկսած: «Եղբայրական Օգնութեան» կոմիտէն բացած է քաղաքի մէջ բուժարան իր բժիշկով եւ օգնականով: Պատրաստութեան մէջ ենք վարակիչ հիւանդութիւններու առանձին հիւանդանոց մը բանալ քանի մը օրէն: Վեհափառ կաթողիկոսը նոյնպէս հրամայած է 56 անկողինով հիւանդանոց մը բանալ: Որոշած ենք այդ հիւանդանոցը հիմնել կանանց, երեխաներու եւ առհասարակ վարակիչ հիւանդութիւններու համար:

Թիֆլիսի Կ. կոմիտէի բժիշկներէն պ. Քոչարեանը պիտի մեկնի վաղն իսկ Ոստան, հոն բժշկական գործը կազմակերպելու:

Երեւի գիտէք որ այս գործերը վարելու համար արդէն կազմուած է Սրբազան Այվատեանի նախագահութեամբ «Եղբայրական օգնութեան» կոմիտէ մը: Կ. կոմիտէի բժշկական խումբը գալէն ետք, գործը համերաշխութեամբ եւ միացեալ կերպով վարելու համար, համաձայնութեան եկանք Կ. կոմիտէի գլխաւոր բժիշկ պ. Հ. Օհանջանեանին [հետ] – պ. Ս. Արովեանը վերցուցինք վերոյիշեալ կազմին մէջ:

Այս ձեւով գործը կազմակերպելու ձեւին մէջ դրինք գրեթէ: Փութամ աւելցնել եւ այն որ, նախքան Կովկասի օգնութեան հասնիլը եւ գալէն ետքն ալ, աշխատեցինք տեղական միջոցներով ալ կազմակերպել գաղթականներու օգնութեան գործը:

Տեղական միջոցներով մինչեւ հիմա հայթայթած ենք մօտ 10.000 փութ ցորեն, որու կէսը արդէն ցրւուած է եւ կէսն ալ նոր կը ցրւուի, կազմուած կոմիտէի տրամադրութեան տակ: Արդէն բաշխած ենք կարիք ունեցող զիւղերուն մօտ 8-10.000 ոչխար եւ 2000-էն աւելի սեւաստաւար:

Դիւրութիւն ենք ստեղծած Ոստանի մէջ, ուր բոլոր հիւանդները, ճրիաբար, տեղական միջոցներով կաթ, մածուն եւ այլն կը ստանան: Այսպիսով աշխատած ենք դուրսի օժանդակութեան հետ տեղացին ալ մասնակից ընելու, ժողովուրդը չայլասերելու համար:

Կարիքի պատկերը այսպէս կարելի է պատկերացնել:

Ամբողջ Վասպուրականը հիւանդանոցի է փոխուած: Տուն չկայ որ մէկէ աւելի հիւանդներ չունենայ: Աւելի ծանր է վիճակը Ոստանի-Աղթամարի շրջանին մէջ, ուր հաւաքուած են Սպարկերտի, Մամրտանքի, Խիզանի, Կարկարի եւ Կարճկանի ժողովուրդը՝ 15-25.000 հոգի, որոնցմէ նուազագոյնը 2-3000-ը հիւանդ են: Հիւանդութեան տեսակները մեծ մասամբ տիֆն է իր բոլոր մոռոշներով եւ տիզանթերի եւայլն: Նոյնն է եւ Թիմար կոչուած շրջանին մէջ: Հոն հաւաքուած էին եւ են Ալճաւազի եւ Բերկրիի շրջանի հայերը: Հիւանդութիւնները սոսկալի են

25.- Ֆելդշեր – օգնական բժիշկ, բուժակ:





և բժշկական ոչ մեկ օգնություն չենք կրնար հասցունել: Աւելի սուսկալի է սուրի քաշուած Արճէշի վիճակը. հոն մօտ 5000 ժողովուրդ կայ անտէր անտիրական եւ հիւանդ, եւ իբր ատելի հեռու ինկած գաւառ՝ ատելի քիչ է խնամքի արժանացած: Ի դէպ է ըսել որ առհասարակ բժիշկներու հետ պայմանաւորուելու էք, որ անոնք, ի պահանջել հարկին, համաձայնին գաւառներն ալ երթալ: Գերադասութիւն տուէք տղամարդ ֆելդշերներուն, որոնք միայն կրնան դիմանալ գաւառի եւ գիւղի դժուարութեանց: Իսկ մնացած գաւառները, ուր թէւ գաղթականներ չկան, բայց ամբողջ ազգաբնակչութիւնը հիւանդ է: Պէտք է նկատել որ եթէ շուտով համաճարակի առաջքը չառնուի, ժողովուրդը դեռ ձմեռը չհասած սովամահ պիտի ըլլայ, որովհետեւ աշխատող ձեռքերը եթէ դաշտային աշխատանքին չհասնին, բերքերը կը մնան անքաղ: Պէտք է ուրեմն անմիջապէս լրացնել բժշկական օգնութեան գործը: Անհրաժեշտ են բժիշկներ, օգնականներ եւ դեղորայք, 1) Արճէշի, 2) Ալճաւազի, 3) Թիմարի, 4) Բերկրիի, 5) Արճակի, 6) Հայոց Ձորի, 7) Շատախի, 8) Մոկսի շրջաններու համար: Եթէ անհնար է բժիշկներ գտնել, կարելի է 4 բժիշկով եւ քանի մը ֆելդշերով գոհանալ՝ երկու գաւառի մէկ բժիշկ տալով, այսինքն 2000 հիւանդին՝ մէկ հոգի: Բժշկական գործի հետ պէտք է կազմակերպել եւ սնունդի ու նպաստի գործը: Փաստերը ցոյց են տուած որ շատերը մահացած են սովի եւ շատերը հիւանդացած՝ սնունդ չըլլալուն պատճառով:

Որոշած ենք մեր տրամադրութեան տակ եղած մօտ 50.000 ռուբլի գումարէն որոշ տոկոս մը յատկացնել հացահատիկներու զննան թէ ներկայի եւ թէ ձմրան համար:

Պէտք է նոր գումարներ հասցնել հիւանդանոցներու, բժշկական օգնութեան, սնունդի եւ այլ պահանջներ գոհացնելու համար: Հաւաքելու էք հին հագուստներ կամ կտորներ՝ հագուստի համար: Պէտք են մեծ քանակութեամբ թէյ, շաքար եւ այլն, որովհետեւ տեղս ոչինչ չի գտնուիր:

Այս բոլորի ատելցնելու է ինտելիգենտ, ժողովրդասէր ու ձեռնհաս մարդկանց պահանջը: Տեղացիներու մեծ մասը թէւ յոգնած՝ բայց նորէն գործի գլուխն է, բայց անոր ուժերը անբաւական են այս յոգնութեամբ եւ կտաւարական գործերը տանելու, եւ տեղական ինքնապաշտպանութիւնը ապահովելու, եւ գաղթականական գործը տանելու:

Կոչ պէտք է ընել երիտասարդութեան, որ գոնէ քանի մը ամսով երկիր մտնէ՝ գաղթականներու օգնութեան եւ տեղաւորման գործը կազմակերպելու համար:

Եթէ ամփոփելու ըլլանք մեր ըսածները, կը ստանանք հետեւեալը.–

Ա.- Գործը գրեթէ կազմակերպուելու վրայ է:

Բ.- Անհրաժեշտ է առնուազն 4-5 բժիշկ եւ բաւականաչափ ֆելդշերներ՝ դեղորայքով:

Գ.- Պէտք է փութացնել սնունդի գործը, ամբարելու համար ժամանակին հաց եւ այլն, ինչպէս նաեւ դուրսէն բերել տալ թէյ, շաքար:

Դ.- Անհրաժեշտ է փութացնել երկրագործական գործիքներու առաքումը առ առաւելն մինչեւ Յուլիսի կէտը – հնձող մեքենայ, գերանդի, կալտոյ եւ քամող մեքենաներ եւ այլն:

Ե.- Գործի կազմակերպութիւնը ուժեղացնելու համար հայ ինտելիգենտ ուժերու ներկայութեան հրամայական պահանջը:

Ձեր ուշադրութեան ներկայացնելով այս բոլորը, կը խնդրեմ դիմել բոլոր միջոցներուն, կոչ ընել ամենքին որ իրենց զոհողութիւնները՝ որքան կարելի է շուտ եւ առատ ժամանակին տեղ հասցնեն, որպէսզի դեռ ձմեռը չեկած կարող ըլլանք գործերը հիմնականապէս կազմակերպել:

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ






Փաստ. 63-54ք

Բ 7.- ԾՐԱՐԻ ՊԱՏՃԷՆ

Ստորև տրուած փաստաթուղթը մեկնաբանութեան չի կարօիր: Ազատագրուած Վանի ընդհ. կառավարիչին, իմա Արամ Մանուկեանին հասցեագրուած նամակի մը պահարանին պատճէնն է, ուր Վասպուրականը կը ներկայացուի իբրև ազատ Հայաստանի մէկ նահանգը: Թալէաթին ուղղուած հեռագիրը՝ ակնարկութիւն է 1915 թ. Յունիս 2ին «Դրօշակ»ի խմբագրութեան անունով Թուրքիոյ ներքին գործոց նախարարին ուղղուած ազդարարութեան, որմով անձնապէս զինք, Իթթիհատը եւ կառավարութիւնը կը յայտարարուէին պատասխանատու «այն բոլոր ոճիրների համար, որ գործուում են հայ ժողովուրդի» դէմ:



**Պատմական դոկումենտ արխիւում պահելու համար:**

Սոյն ծրարի պատճէնը գրուած Միսակ Ղազարեանի ձեռքով 1915 թուի 1 Օգոստոս եւ ներփակ ուղարկուած Թալէաթ բէլին մեր ուղղած հեռագրից մի օրինակ:

**ԴԱՁԱՐԵԱՆ**

**Via Russie**

**Monsieur**  
**Le Gouverneur général**  
**de Vaspourakan**  
**Province d'Arménie**  
**à Van**

**ARMENIE**







**ԳԼՈՒԽ XI**

**Հ.Յ.Դ. ԱԻԱԶԱՆ – ՏՐԱՊԻԶՈՆԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵՈՒԹԻՒՆ**

Փաստ. 793-7

**1.- Հ.Յ.Դ. ԱԻԱԶԱՆԻ ՏՐԴ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ**  
[1914, Ապրիլ]

Աւագանի Կ. կոմիտէի հրաւերի համաձայն Շրջանային ժողովը գումարուեցաւ Ծովափի<sup>1</sup> մէջ 914 ապրիլ 6ին, եւ իր աշխատութիւնները լրացուց ապրիլ 10ին:

Ժողովին կը մասնակցէին 13 պատգամաւորներ եւ վճռական ձայնով վեց հրաւիրուածներ, իսկ խորհրդակցական ձայնով՝ հինգ ընկերներ: Ժայռը<sup>2</sup> եւ Գետափը<sup>3</sup> իրենց պատգամաւորները չէին զրկած: Ժողովին մէջ իրենց ներկայացուցիչները ունէին նաեւ Բանային<sup>4</sup> եւ Մ...ը:

Կազմուելով դիւանը, նախ՝ քննուեցան մանտաթները եւ ապա օրակարգի նիւթերը բաժնուեցան յանձնախումբերու, գործերը կանոնաւոր եւ դիւրութեամբ տանելու համար:

**Զեկուցումներ**

Կ. կոմիտէն իր ներկայացուցիչի միջոցաւ տուաւ Աւագանի շրջանի մօտաւորապէս միամեայ կուսակցական գործունէութեան պատկերը, յետոյ մի առ մի իւրաքանչիւր պատգամաւոր բերանացի տուաւ իր շրջանի գործունէութեան զեկուցումը. եւ որովհետեւ ժամանակի սղութեան պատճառաւ զեկուցումները գրաւոր չէին ներկայացուած, ժողովը որոշեց, որ յետ այսու, իւրաքանչիւր շրջան իր զեկուցումները անպատճառ գրաւոր ներկայացնէ:

Շրջանային ժողովը լսելով Կ. կոմիտէի եւ շրջաններու զեկուցումները, գտաւ որ մարմինները եւ ընկերները կատարեք են գնահատելի աշխատանք թէ՛ կուսակցական եւ թէ՛ ակումբային գործերու կանոնաւորման համար, սակայն ժողովը համեմատելով կուսակցական եւ ակումբային պիւտճէներու գործունէութիւնը եկաւ այն եզրակացութեան, որ աւելի դրամ ու եռանդ կը

սպառուի ակումբային գործունէութեան շուրջ, քան բուն կազմակերպական նպատակներու համար: Հետեւաբար ուշադրութեան առնելով այդ պարագան եւ միանգամայն նկատի ունենալով որ՝

1. Ակումբները վերջ ի վերջոյ կրնան կլանել Դաշնակցութեան ամբողջ եռանդն ու նիւթականը,

2. Որ ակումբները աւելի ու աւելի կ'ընդարձակեն իրենց նպատակն ու գործունէութեան շրջանը,

**Որոշեց՝**

Ա. Թելադրել շրջանիս ենթակայ բոլոր մարմիններուն, որ ակումբներու նպատակը պիտի ըլլայ համախմբումներու եւ ժողովներու համար դիւրութիւններ ստեղծել եւ գլխաւորաբար կուսակցական գաղափարները գրաւոր ու բերանացի կերպով տարածել:

Բ. Այդ տեսակէտէն առաջնորդուելով, առաջարկել որ այդ ուղղութեամբ վատնուած եռանդն ու նպատակը, հնարաւորութեան չափով, բազմապատկուին ի նպաստ բուն դաշնակցական գործին, հասցնելով զայն մի այնպիսի նուազագոյնի (minimum), որով կարելի ըլլայ իրագործել ակումբներու վերը յիշուած նպատակը:

Գ. Պարտաւորեցնել բոլոր ակումբները, որ իրենց մուտքի %15ը յատկացնեն տեղական մարմիններու դրամարկին:

**Հայկական բարենորոգումները եւ կուսակցական քաղաքականութիւնը**

Նկատելով որ սահմանադրական կարգերը իրենց բոլոր թերութիւններով միասին բարիք են հայ ժողովրդի համար, եւ այդ կարգերու տեւականութեան շնորհիւ հնարաւորութիւն կ'ունենանք աւելի լաւ կազմակերպուիլ բոլոր օրինաւոր միջոցներով, հասնելու համար մեր նպատակներուն,

Նկատելով նոյնպէս որ բարենորոգումները գործադրուելու պարագային հանգրուան մը կ'ըլլայ անիկա մեր նուազագոյն պահանջները իրականացնելու համար, ժողովը որոշեց որ կուսակցութիւնը, մէկ կողմէն

1.- Ծովափ – կուս. ծածկանուն Տրապիզոն քաղաքի: Աւագանի Տրապիզոնի շրջանի Կեդր. կոմիտէութեան ծածկանունն է:  
 2.- Ժայռ – կուս. ծածկանուն Տրիպոլի քաղաքի:  
 3.- Գետափ – կուս. ծածկանուն Էլէվի քաղաքի:  
 4.- Բանայի – կուս. ծածկանուն Սամսոն քաղաքի:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

պէտք է աշխատի այդ կարգերու հիմնաւորման, միւս կողմէ բոլոր հնարաւոր եւ օրինաւոր միջոցներով պիտի հետապնդէ իր նուազագոյն պահանջներու իրականացումը:

**Ինքնագարգացում<sup>5</sup>**

Որոշուեցաւ կարելի եղած բոլոր միջոցներով ինքնագարգացման ոյժ տալ:

**Քրտական շարժումը եւ մեր վերաբերմունքը**

Նկատելով որ քրտական շարժման բնոյթը վերջնականապէս չէ ճշտուած, Դաշնակցութիւնը պէտք է չէզոք հանդիսատեսի դիրքին մէջ լինի, իսկ երբ ապացուցւի թէ՛ այդ շարժումը կը վնասէ սահմանադրութեան եւ հայ ժողովրդի ապահովութեան ու քաղաքական իրաւունքներուն, այն պարագային օժանդակել կառավարութեան՝ շարժումը անվնաս դարձնելու համար:

**Մեր դիրքը հանդէպ ԻԹԹԻՀատին**

Նկատելով իԹԹԻՀատի եւ մեր արդի յարաբերութիւնը, ժողովը գտաւ, որ իր քաղաքականութիւնը դէպի այդ կուսակցութիւնը չըլլալով սկզբունքային, այլ պայմանական, կ'որոշէ.

- 1. Ամէն առիթով, երբ ԻԹԹԻՀատը ընդառաջ կ'երթայ մեր նուազագոյն պահանջներուն, Դաշնակցութիւնը պէտք է աջակցի եւ նպաստէ այդ քաղաքականութեան.
- 2. Հակառակ պարագային Դաշնակցութիւնը միշտ կը մնայ իր ընդդիմադիր-քննադատողական դերին մէջ:

**Ազգային համերաշխութեան հարց**

Դաշնակցութիւնը պէտք է համերաշխի հայ գանազան հատուածներու եւ հոսանքներու հետ՝ ամէնէն աւելի ազգ. ընդհ. քաղաքական հարցերու հետապնդման պարագային: Իսկ ներքին կրթական եւ կուլտուրական խնդիրներու մասնակցութեան մէջ, կուսակցութիւնը պէտք է աշխատի համեմատական սկզբունքը կիրարկել:

**Մեր շրջանի ուսումնասիրութեան խնդիր**

Նկատելով որ մեր կուսակցական բովանդակ աշխատանքը քաղաքական, տնտեսական, կուլտուրական եւ աշխատաւորական են, ու հիմնաւորուած պէտք է լինին իրական, շօշափելի թիւերու եւ փաստերու վրայ, եւ չնայած որ, այս կարեւոր հանգամանքէն ո՛չ մի դրական աշխատանք չեն կատարուած, եւ կամ կատարուածներն ալ եղեր են խիստ մակերեւութային,

ժողովը կ'որոշէ՝

Պարտք դնել բոլոր մարմիններու վրայ՝ մինչեւ յառաջիկայ Սեպտ. 1 անպայման պատրաստեն իրենց շրջաններու թէ՛ հայ եւ թէ՛ դրացի ազգութեանց մանրամասն վիճակագրութիւնը՝ Կ. կոմիտէի կազմելիք հարցացուցակներու համաձայն:

**Ազգային տնտեսական քաղաքականութիւն**

Քաղաքական պայմաններու օրրատօրէ աւելի յաջող դասաւորման յոյսը եւ մասնաւորապէս հայկական բարենորոգումներու հաւանական գործադրութիւնը՝ կ'ենթադրեն մօտիկ ապագային տնտեսական զարգացումը:

Այժմ իսկ նկատի ունենալով դրացի ժողովուրդներու տնտեսական զարթումի սկիզբը, եւ նոյնիսկ միջցեղային մրցակցութեան տարերային հոսանք մը, առաւել եւս անհրաժեշտ կը գտնենք տնտեսական նոր ձեւերու որդեգրում մը մեզ համար եւ կ'առաջարկենք հետեւեալ միջոցները.

Ա. Երկրագործութիւնը փրկել իր հնաւանդ քարացումէն, ներմուծելով երկրագործական նոր մեքենաներ:

Բ. Չարկ տալ անասնաբուծութեան, կաթնատնտեսութեան, մեղուաբուծութեան եւ ծառամշակութեան:

Գ. Գիւղացիներու համար ստեղծել ձմեռնային աշխատանք, իւրաքանչիւր վայրի յարմարութեան համաձայն, մտցնելով ձեռական աշխատանք եւ արհեստներ:

Դ. Շահագրգռել անհատներ կամ խմբակներ տեղական արդիւնաբերութեան արտահանման գործով զբաղուիլ. հաստատել աժան վարկի ընկերութիւններ եւ կալուածի գնման ընկերութիւններ:

Ե. Թելադրել Միացեալ ընկերութեանը որ գիւղական նախակրթարաններու կից հաստատէ երկրագործական գիտելիքներու դասընթացք Հայկ. բարեգործական միութեան օժանդակութեամբ, եւ այս վերջինի նախաձեռնութեամբ Հայաստանի մէջ բանալ գիւղատնտեսական միջնակարգ դպրոց մը:

**Մանօթ.—** Մարմինները եւ ընկերները պիտի աշխատին այս գաղափարները ժողովրդականցնել, առանց այս ձեռնարկները մտցնելու կուսակցական շաւղի մէջ:

**Կուսակցական գրականութիւն եւ թերթեր**

**Դրօշակ.—**

Ընդունելով հանդերձ թերթի անկանոն հրատարակման արդարանալի պատճառները, յանձնարարել պատկանեալ մարմին, որ ջանայ կանոնաւոր կերպով հրատարակել է՛լ աւելի լայն ծաւալով, համաձայն նախորդ Ընդհ. ժողովի որոշման:

**Ազատամարտ.—**

1. Խմբագրական բաժինը գնահատելի համարել, գտնելով զայն ընդհանրապէս կուսակցութեան ընդհ. տեսակէտներու համաձայն:

2. Յանձնարարել, որ գաւառական բաժինն աւելի հոգածութիւն տարուի, տեղ տալով շաբաթական եւ կիսամեայ ամփոփ յօդուածներու:

3. Նկատելով որ քաղաքական ու դիւանագիտական բաժին, թերթի առաջին էջէն իսկ, մեծ տեղ տրուած է,

5.- Իմա ինքնապաշտպանութիւն:





յանձնարարել կրճատել գայն, աւելցնելով հասարակագիտական եւ գիտական մասը, եւ իբր թերթօն հրատարակել յեղափոխական կեանքէ դրուագներ եւ կարճ վէպեր:

Ասկից զատ «Ազատամարտ»ը լինելով կուսակցական սեփականութիւն, հարկ է անոր վարչական գործերու վերաբերմամբ պարբերաբար տեղեկութիւն տալ Կ. կոմիտէներուն, անոր տնտեսական դրութեան տեղեկ պահելու համար կուսակցական շրջանակները:

Հրատարակութիւններ

«Դրօշակ»ի եւ Ազատութեան մատենադարանի հրատարակութիւնները շարունակել, նկատի ունենալով որ կուսակցական թերթերը որքան ալ շատ ըլլան դարձեալ պէտք եղածին պէս չեն կարող կուսակցական սկզբունքները եւ աշխարհայեացքը պարզաբանել բաւարար եւ մտաւոր սնունդ տալով ընթերցողներուն:

Աշխատաւորական ձեռնարկներ

Աշխատաւորական գործունէութիւնը որպէս մեր ծրագրի հիմնաւոր նպատակներէն մին, պէտք էր որ մարմիններու եւ ընկերներու լուրջ ուշադրութեան արժանացած լինէր, սակայն դժբախտաբար մինչ ցարդ մարմինները այս ուղղութեամբ ոեւէ աշխատանք կատարած չըլլալով, ինչ որ կը բացատրուի ընկերներու անտարբեր վերաբերումով, ժողովը անհրաժեշտ կը նկատէ ուժերու գէթ նուազագոյն չափով աշխատիլ այդ ուղղութեամբ, հիմնելով սպառողական, արհեստակցական եւ նման միութիւններ:

Տուրքերու նոր յաւելումներ

Նկատելով, որ պատերազմական առժամեայ անունով կատարուած տուրքերու յաւելումները ո՛չ միայն պահուած են, այլ եւ առժամեայ նոր յաւելումներ տեղի ունեցած, որով ժողովրդի տնտեսական անապահով կացութիւնը այս առթիւ ալ աւելի տագնապալից կը դառնայ, եւ անցեալի փորձառութեամբ գիտակ ըլլալով որ այդ առժամեայ տուրքերը մնայուն կը դառնան, եւ ժամանակաւոր բացառիկ բարդումներ չեն մնար, կ'առաջարկենք պատկանեալ տեղերը բողոքի հանրագրութիւններ ներկայացնել միւս ազգերու հետ համախորհուրդ:

Ներգաղթը քաղաքներու միջոցներ

Շրջանային ժողովը ուշադրութեան առնելով գաղթականութեան հարցը, անոր հիմնական պատճառները նկատեց քաղաքական անապահովութիւնը եւ առաւել եւս տնտեսական անձուկ վիճակը: Բայց նկատելով որ Դաշնակցութեան հիմնական նպատակն ու գոյութեան իմաստը այդ երկու պատճառներու դէմ կռուիլն է, որոշեց՝ առանձին ուշադրութեան առնել միայն այն վայրերը, որտեղ համաճարակի կերպարանք առած է

գաղթականութիւնը, եւ Դաշնակցութեան որոշումներու տրամադրութեանց համաձայն, կռուիլ այդ երեւոյթի դէմ գարկ տալով տնտեսական ու կրթական հիմնարկութիւններու, աշխատանք ստեղծել եւ գրաւոր ու բանաւոր փրօփականտ մղել գաղթականութիւնը արգիլելու համար:

Պարլամենտական ընտրութիւնը եւ մեր ուղղութիւնը

Վերջին Ընդհ. ժողովի որոշման համաձայն՝ կուսակցութիւնը համերաշխ միւս ազգ. հատուածներու եւ կուսակցութիւններու հետ, պէտք էր որ ձեռնպահ մնար, եթէ կառավարութիւնը գոհացում չտար ազգ. եւ համեմատական ընտրութեան երկու սկզբունքներուն:

Հայկական հարցը համեմատաբար լաւ ելք ընդունած ըլլալուն եւ ընտրութեան խնդիրը իր սուր բնաւորութիւնը կորսնցուցած՝ պէտք էր համաձայնութեան գար կառավարութեան հետ մասնակցելու համար ընտրութիւններուն, եթէ սակայն կառավարութիւնը ընդունէր կամ ազգային եւ կամ գոնէ համեմատական սկզբունքը, հակառակ պարագային համազգային ձեռնպահութիւնը պէտք էր շարունակել:

Եթէ կուսակցութեան իրաւասու մարմինները պատճառ եղած են, որ այդ երկու սկզբունքներն ալ միաժամանակ զոհելէ վերջ, ընտրութեան մասնակցիլ հարկ եղած է, զանոնք հրաւիրել պատասխանատուութեան, իսկ ազգի միւս հատուածներու մասնակցութեան պարագային Դաշնակցութեան ձեռնպահութիւնը համարել սխալ եւ դատապարտելի:

Ընդհ. ժողովի պատգամաւորի ընտրութիւն

Ընդհ. ժողովի պատգամաւորի ընտրութեան խնդիրը յարմար նկատուեցաւ թողուլ Կ. Կ.ին, որպէսզի կոմիտէն իր մէջէն յարմար անձնաւորութիւն մը ընտրէ մասնակցելու համար Ընդհ. ժողովին. եթէ զանազան արգելիչ պատճառներով անկարելի դառնայ իր մէջէն յարմար ընկեր մը նշանակել, այն ատեն դուրսէն յարմար ընկեր մը դրկել իբր պատգամաւոր:

Իսկ Կ. կոմիտէի վայրի ընտրութեան նկատմամբ թեր ու դէմ վիճաբանութիւններէ վերջ, ժողովը նկատի ունենալով, որ թէ՛ աշխարհագրական, թէ՛ քաղաքական եւ թէ՛ այլ տեսակէտներով յարմարագոյն վայրը Մովսիս<sup>1</sup> է, որոշեց Կ. կոմիտէի վայրը նոյնը թողուլ:

Կ. կոմիտէի ընտրութեան առթիւ առաջարկներ եղան նախկին կոմիտէն en bloc<sup>6</sup> վերընտրել, քանի որ ան գոհացուցիչ գործունէութիւն մը ցոյց տուած է կուսակցական խնդիրներու շուրջ իր միամեայ պաշտօնավարութեան շրջանին. սակայն յետոյ ժողովը յարմար նկատեց գաղտնի քուէարկութիւն կատարել, որով ընտրեց հինգ հոգիէ բաղկացեալ Կ. կոմիտէն:

Վերջին պահուն ստացուելով «Ժայռ»ի<sup>2</sup> գեկուցագիրը՝ կարդացուեցաւ ժողովին մէջ:

6.- Ֆրանսերէն – լրիւ, ամբողջութեամբ:





Փաստ. 793-8

2.- ՏԵՂԵԿԱԳԻՐ  
ՏՐԱՊԻՉՈՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԻՒՂԵՐՈՒ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ  
ԵՒ  
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Տեղեկագրով նկատի առնուած գիտախումբը կը գտնուէր Տրապիզոնի նահանգին Եոմուրա գաւառակին մէջ: Գիտախումբին կեդրոն կը համարուէր Ապիոնը: Հայ բնակիչները իրենց բարբառը պահած համշէնցիներ էին: Փաստաթուղթը հետաքրքրական է իր հայթայթած վիճակագրական հարուստ տուեալներով շրջանի գիտերու կազմակերպական, տնտեսական եւ կրթական վիճակը պատկերացնող: Աչքառու երեսոյթներ են՝ մէկ կողմէ՝ գիտացիներու դրական տրամադրութիւնը ինքնապաշտպանութեան կազմակերպման նպատակով հարկ եղած միջոցները հոգալու համար, միւս կողմէ՝ արտագաղթը որ, ինչպէս ցոյց կու տայ վիճակագրութիւնը, հասած է զգալի համեմատութիւններու: Արտագաղթողները կ'անցնէին ռուսական սահման եւ կը հաստատուէին մօտակայ ծովափնայ շրջանները՝ Սոչի, Սուխում մինչեւ Կրասնոտար եւայլն:

Տրապիզոնի արեւելեան գիւղերը կը տարածուին թուրքերով պատուած լեռնաշղթայի մը վրայ. գլխաւոր գետերն են Շանայի Այազմա եւ Կալաֆկա կամ Ուզի գետերը: Գիւղերը կը բաղկանան ցրիւ եւ իրարմէ հեռու չինլած տուներէ, այնպէս որ մի գիւղի մի ծայրից միւս ծայրը կը տեւէ շատ անգամ կէս ժամուայ ոտով ճանապարհ: Ընդհանրապէս այս գիւղերի գլխաւոր բերքն է կաղիւնը, իսկ որոշ չափով լազուտը եւ լուբիան, որոնցմէ առաջինը նոյնիսկ տեղական պահանջը գոհացնելու անբաւական: Այս գիւղերը ընդհանրապէս կ'արտադրեն նաեւ զանազան պտուղներ, որոնք սակայն հասոյթի աղբիւր մը չեն կազմեր եւ կը գործածուին գլխաւորապէս իբրեւ տան ուտելիք: Խոզարածութիւնը սահմանափակուած է մի քանի հարուստ թուրքերի մէջ եւ այն էլ ոչ այնքան կարեւոր քանակութեամբ մը:

ԾԱՆԱ

Գլխաւոր թաղերը Մինկիլա (հայաբնակ), Մեծ Շանա (թրքաբնակ), Փոքր Շանա, Վոնոզ (յունաբնակ) եւ փոքր Սամուրաքսա՝ իսոն բնակչօք:

1.- Թագ-Մինկիլա. բնակչութեան թիւն է՝

Տուն	այր մարդ	կին	երեխայ	գումար	գաղթած
39	68	94	102	264	181

Ամենաշատ բնակիչ ունեցող տունը՝ 15 հոգի }  
 Ամենաքիչ » » » 4 հոգի } հայ  
 Միջին թիւ 7 հոգի

Մինկիլա թուրքեր 3 տուն  
Այր մարդ 5, կին 8, երեխայ 3, գումար՝ 16:





Մի հայկական վարժարան 2 ուսուցչով. տարեկան պիւտճէ 47 ոսկի. աշակերտներու թիւը 64, 23ը աղջիկ: Վարժարանին մէջ նկատելի է մասնաւորաբար տղայոց ճարպիկութիւնն ու ուշիմութիւնը: Համարձակութիւնը կը պակասի մի քիչ աղջիկներուն մօտ: Վարժարանի ծրագրային շրջանն է (6) վեց դասարան, իսկ ներկայիս կը պակասի Ե. դասարանը եւ Բ. ու Գ. դասարաններն միացուած են, որով (4) չորս դասարան միայն գոյութիւն ունին:

Աշակերտները մասնաւորաբար յառաջադէմ են հայերէնի եւ թուաբանութեան մէջ, իսկ Ազգ. պատմութիւնը թոյլ է:

Բնակչութեան մէջ կարգալ, գրել իմացողներու միջինն է՝ այր մարդոց համար 64%, կանանց համար 12.7%, իսկ երեխայոց 64%:

Ընթերցարանական վիճակը՝ դեռ անորոշ եւ սաղմնային, բայց ջանքերը կ'ըլլան զարկ տալու այդ գործին:

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿ.**— Ծիլինկացիների հասոյթի միակ աղբիւրն է կաղինը, իսկ իրանց պէտքերի համապատասխան չափով՝ կաղամբ եւ լուբիա, իսկ դրսից պարտաւորուած են գնել եգիպտացորեն, աղ, բրինձ, ալիւր, շաքար, օճառ, նաւթ եւ հագուստեղէն: 15 անդամից ընտանիքի մը տարեկան ծախսն է 60 ոսկի. 7 հոգինոց ընտանիքի մը 40 ոսկի եւ 4 հոգինոցինը 25 ոսկի, իր արտադրութիւնը եւ տուրքերն ալ մէջը հաշուելով:

Իւրաքանչիւր գիւղացի ունի առ առաւելն 10 կով, միջին հաշուով 4 կով եւ առ նուազն 1 կով: Իսկ գիւղացիները առանց բացառութեան ունին պարտքեր վաճառականներու, խանութպաններու եւ շատ քիչ մաս մ'ալ սարաֆներու<sup>7</sup>. այդ պարտքերու ամէնէն բարձրն է 400 ոսկի. միջինը 40 ոսկի եւ ամէնից վարը 5 ոսկի:

Իւրաքանչիւր գիւղացի ունի իր սեփական հողը, ամենաբարձրը 500 ոսկի, միջին հաշուով 300, իսկ ամէնէն վարը 50-100 ոսկի արժէքով:

**ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ.**— Տեղւոյն վրայ կազմուած է մի խումբ բաղկացած 7 անդամից, իսկ պատրաստ մի երկրորդ խումբ բաղկացած 9 հոգիից, որի վերջնական ընդունելութիւնը յետաձգուած է մի քանի օրով եւ այդ ժամանակամիջոցի մէջ քննուելու է ներքին վէճ մը որ արգելք կը հանդիսանայ այդ խումբի անմիջական կազմակերպութեան: Առ այժմ այս է կազմակերպական դրական ոյժը:

**ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ.**— Գիւղին ներկայացուցած ընդհանուր վիճակին մէջ կը մտնէ ընկերներու ներկայացուցած ինքնապաշտպանական ոյժը: Գիւղին մէջ փորձ կուռող ոյժ կարելի է հաշուել (18) տասնեւութ հոգի: **Ձէնքեր.**— ընդհանուր երկար<sup>8</sup> 11 հատ, որոնցից 4 երկայն եւ 3 միջին յունական, 2 պերտան, 2 տաճկական — 350 փամփուշտ յունական երկարներու համար, 170 յունական միջիններու համար, 150 պերտաններու համար եւ 50 տաճկականներու համար:

Բոլոր փամփուշտները կարելի է տեղւոյն վրայ լեցնել, կասկածի տակ է միայն պերտանը:

**ԱՏՐՃԱՆԱԿՆԵՐ.**— Ընդհանուր թիւ 17, Ֆրանսական (1) մէկ՝ քսան փամփուշտով, ամերիկեան 3՝ 140 փամփուշտով, Ղարատաղ 8՝ 210 փամփուշտով, ռուսական 2՝ 60 փամփուշտով: Հին ձեւի ատրճանակներ 3 հատ՝ 50 փամփուշտով: Բացի ռուսականներէն բոլորին փամփուշտները կարելի է տեղւոյն վրայ լեցնել:

**ԶԻՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁ.**— Որոշ չափով ցանկութիւն կայ գէնքեր գնելու, բայց նիւթական միջոցները կը պակսին գեղացոյն: Ցանկացուած գէնքերն են գլխաւորաբար յունական երկար եւ մոսին: Յունականների համար պատրաստ են վճարել 8-9 ոսկի:

**ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ.**— Ծինկիլացիների մէջ որոշ չափով գոյութիւն ունի համայնական զգացումը. արդէն իրենց կուլտուրական գործը համայնական ձեւով առաջ կը տարուի: Պատրաստի հող կայ որոշ տնտեսական ձեռնարկներու մէջ ալ համայնական ձեւը մշակելու: Հաւանականօրէն շուտով կը ձեռնարկուի գիւղացիական միութեան մը կազմութեան:

Տեղւոյն գիւղացիութիւնը գիտակից է, եւ գիւղին ընդհանուր բարոյական վիճակը շատ լաւ, ինչպէս նաեւ ընկերականութիւնը:

7.- Սարաֆ — լումայափոխ:  
8.- Երկար՝ հրացանն է:







**ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

**2.- ԹԱՂ ՓՈՔՐ ՇԱՆԱ.**— Թրքաբնակ, բաղկացած 33 տնից:

Մեծ եւ Փոքր Շանայի համար է այս ցուցակը:

Ամէնից շատ բնակիչ ունեցող տունը կը բաղկանայ	20 անդամէ:
» քիչ » » » »	5 անդամէ
Միջինը » » » »	9-10 »

Ունին մի հատ թրքական վարժարան Փոքր եւ Մեծ Շանայի համար 60 աշակերտով եւ մի ուսուցիչով (մոլլա մը):

**3.- ԹԱՂ ՄԵԾ ՇԱՆԱ.**— 27 տուն թուրք, 17 տուն յոյն, 4 տուն հայ: Հայերը.— 7 այր մարդ, 8 կին, 8 երեխայ եւ 47 հոգի գաղթած Ռուսաստան:

Յոյները.— ամէնից շատ բնակիչ ունեցող տունը 12 հոգի:

» քիչ » » » 3 »
Միջինը » » » 6 »

Այս ցուցակը Վոնոզի համար ալ է:

Յոյները ունին մի վարժարան Վոնոզի հետ միացած, 25 աշակերտով եւ մէկ ուսուցչով: Հայերը գէնք չունին:

**4.- ԹԱՂ ՎՈՆՈԶ.**— 14 տուն յոյն եւ 2 տուն թուրք:

**5.- ԹԱՂ ԿԵՇԱՆԱՅ՝**— Զուտ հայաբնակ. բնակչութիւն

տուն	այր	կին	երեխայ	գաղթական
43	98	109	132	193

Ամէնէն շատ բնակիչ ունեցող տունը՝ 16 հոգի

» քիչ » » » 2 »
Միջին » » » 7 »

**ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄ.**— Առ այժմ կազմալուծուած. կազմակերպուելի կան 35 հոգի մօտաւորապէս:

**ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ.**— Վարժարանը շինուելու վրայ է. աշակերտները կը լինին 40-50: Հաւանական թիւը ուսուցիչներու՝ 2: Պիւտճէ՝ մօտաւորապէս 55 ոսկի: Սկզբունքը համայնական:

**ԿԱՐԴԱԼ-ԳՐԵԼ ԳԻՏՅՈՂ.**— 19 աւ% կանանցից, %-ին 80 այր մարդոցմէ. իսկ երեխայ՝ բոլոր վարժարան գնացողները:

**ԸՆԹԵՐՑԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿ.**— Գիւղը ունի մօտաւորապէս 300 հատոր գիրք եւ ընթերցանութիւնը տեղացիներու մէջ տարածուած:

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿ.**— Բերք (տես ընդհանուր վիճակը): Ամէնից բարձր հող ունեցողը 600 ոսկի. միջին՝ 300 ոսկի, իսկ ամէնից քիչ ունեցողը 50-100 ոսկի (4-5 տուն): Ամէնից բազմաթիւ ընտանեկան տարեկան 70 ոսկի ծախս, միջին հաշուով՝ 35 ոսկի, իսկ ամէնից քիչը 10-15 ոսկի:

9.- Կեղանա կամ Կիւղանա, ծննդավայրն է Միսաք Թորլաքեանի:





**ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ՊԱՐՏՔԸ.**— Ամենաչափ տուրք ունեցողը 100 ոսկի, միջինը՝ 50 ոսկի, իսկ ամենաքիչը՝ 5 ոսկի եւ կան չունեցողներ ալ. սովորական տոկոսը %-ին 15 (ինչպէս բոլոր շրջանը):

**ԱՆԱՍՈՒՆՆԵՐ.**— Ամենաչափ կով ունեցող տունը 20, միջինը՝ 10, ամենաքիչը՝ 4:

**ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ.**— Ընդհանուր գէնք գիւղին մէջ (բոլորն էլ դաշնակցական). հրացաններ՝ 9 յունական երկայն - 1020 փամփուշտ, 3 յունական միջակ - 290 փամփուշտ, 3 յունական կարճ - 270 փամփուշտ. 1 ռուսական - 140 փամփուշտ. 1 տաճկական - 30 փամփուշտ, 1 պերսական - 50 փամփուշտ:

**ԱՏՐՃԱՆԱԿ.**— 6 ռուսական (2-ը 7 հարուած[եան] 300 փամփուշտով, 8 ամերիկեան - 320 փամփուշտ. 1 գարատաղ - 30 փամփուշտ. 1 բրաունինկ - 20 փամփուշտ. 1 հատ մատուցեր 10 կրականոց - 180 փամփուշտ: Կռուողներ՝ 25-30 հոգի: Բոլորին փամփուշտները կարող են տեղւոյն վրայ լեցուիլ, բացի մատուցերներից, բրաունինկից եւ 7 հարուածեան ռուսականներից:

**ԶԻՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՔ.**— Լինի ընկերներու, լինի դրսեցիներու մէջ ցանկութիւն կայ գէնք գներու, բայց փող չկայ. միջոցները կը պակսին:

**ԳԻՒՂԱՑԻՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ.**— Տրամադրութիւն կայ որոշ համայնական ձեռնարկներ կատարելու (տես գիւղական ժողովի արձանագրութիւնը):

**ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎԻՃԱԿ.**— Ոչ գինեմոլութիւն, ոչ թղթախաղ, համերաշխական ոգի կայ: Ընտանեկան կեանքը մաքուր:

Կ Ա Լ Ա Ֆ Կ Ա

**ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆ.**— Հայեր:

տուն	այր	կին	երեխայ	գաղթած
43	96	116	99	118

Ամէնից շատ բնակիչ ունեցող տունը	13 հոգի
Ամէնից քիչ	» » » 2 »
Միջինը	» » » 7 »

**ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄ.**— Դեռ անկազմակերպ, բայց մօտ օրերս կը կազմակերպուին եւ հաւանականօրէն գոյութիւն ունենան երկու խումբ 15-16 անդամով, եւ մի պատանեկան խումբ 5 անդամով:

**ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ.**— Մի վարժարան 58 աշակերտով, 2 ուսուցիչ, 42 ոսկի պիւտճէ:

**ԳՐԵԼ-ԿԱՐԴԱԼ ԳԻՏՅՈՂ.**— Այրերէն 60%, կիներէն 10%, իսկ երեխաներէն վարժարան գնալու տարիք ունեցողները:

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ.**— Ժամանակաւ փորձ է եղած մի գրադարան հիմնելու, որմէ կը մնան այժմ 50 հատորի մօտ գրքեր: Նպատակ կայ վերանորոգելու այդ գրադարանը: Ընթերցասիրութիւն՝ որոշ չափով:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿ.— Բերք (տես ընդհանուր վիճակ):**

<b>ԿԱԼՈՒԱԾՔ.— Ամէնից բարձր արժէք</b>	500 ոսկի
Միջին հաշուով	300 ոսկի
Ամէնից քիչ ունեցող	50-100 ոսկի
Ամէնից շատ կով ունեցող	15 հատ են
Միջին » »	8 » »
Ամէնից քիչ » »	4 » »
Ամէնից շատ ծախք ունեցող ընտանիքը	50 ոսկի
Միջին » » »	30 ոսկի
Ամէնից քիչ » » »	10-15 »
<b>ՊԱՐՏՔԵՐ.— Ամէնից շատ պարտք ունեցող</b>	80 ոսկի
Միջին » »	20 ոսկի
Ամէնից քիչ » »	5 ոսկի

Մեծ մաս մը պարտք չունի:

**ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ.— Գտնուած գէնքերն են՝**

	Հատ	պատրոն <sup>10</sup>
<b>Հրացան.-</b>		
Յոռնական երկայն տեսակ	2	150
Յոռնական միջակ	1	50
Տաճկական այնալի մէկ իսկական եւ (4-ը շինծու)	5	250
Բերդանկայ	1	30
Տաճկական այնալի	1	30
<b>Ատրճանակ.—</b>		
Անգլիական	1	50
Նիքելապատ	1	50
Ամերիկեան	8	170
Գարատաղ	1	30
	21	810

Ընդհ. հրացաններ 10 հատ 510 պատրոնով  
 Ընդհ. ատրճանակ 11 հատ 300 »

**ՁԷՆՔԻ ՊԱՀԱՆՁՔ.—** Հիմակուհի մէկ մոսին ուզող կայ. եթէ մէկ մոսինը կարելի լինի 7-8 ոսկիի գնել, շատեր պատրաստ են գնելու (ըստ իրենց ասածին):

**ԳԻՒՂԱՅԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ.— (Տես Կեչանա):**

**ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎԻՃԱԿ.— (Տես Կեչանա):**

**ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐ.—** Թուրք. ամբողջ գիւղը կը հաշուուի 250-257 տուն. ամէնից բազմամարդ տունը միջին հաշուով 12-15 հոգի, եւ ամէնից նուազը 3-5 հոգի:

10.- Պատրոն՝ փամփուշտ:





**ՎԱՐԺԱՐԱՆ.**— 100 աշակերտով եւ երեք ուսուցիչով:  
(Ուսուցիչներից փոքրը տղայոց ուսուցման հետ կը զբաղուի, իսկ մեծը՝ մոլլալուծեան վերաբերեալ դասեր կու տայ):

<b>Հոգ.</b> —	<b>Ամէնից շատ հող ունեցողերը</b>	1000-1500 (5-6 հատ)
	<b>Միջինը</b>	» » 100
	<b>Քիչ</b>	» » 10-50

**Փոքր մաս մը, 5-10 ընտանիք, ոչ հողատէր, կ'ապրուին ուրիշների հողի վրայ բանելով:**

Ծանօթութիւն.— 500 ոսկիի արժէք ունեցող հող մը կու տայ 50 ոսկիի արդիւնը, եւ միջին հաշուով արտադրութիւնը կը համեմատի հողին արժէքին 10% տարեկան:

**ՔԵԱՆ (ԿՈՒՍԱԼԻ ԵՒ ՏՐՈՆԱ)**

<b>Բնակչութիւն.— հայեր՝</b>				
տուն	այր	կին	երեխայ	<b>Ռուսաստան գաղթող</b>
36	80	89	94	42

<b>Ամէնից շատ բնակիչ ունեցող տունը</b>	<b>Քեան</b>	<b>Կոխալի</b>	<b>Տրոնա</b>
» քիչ	12 հոգի	11	15
<b>Միջին</b>	4	3	4
	6	8	10

**ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄ.**— Առ այժմ կան երեք ընկերներ միայն. յանձնարարուած է մասնաւոր պրոպագանդ. կարելի է անմիջական մի խումբ կազմել 5 հոգինոց:

**ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ.**— Որոշ անհամաձայնութիւնների եւ վարժապետի հարցերու պատճառով, վարժարանս փակ կը մնար: Այցելելով եւ խօսելով տեղացւոց, յաջողեցանք համոզել վարժարանը բանալու. ընտրուեցաւ հոգաբարձութիւն: Այս տարուայ համար պիւտճէն կը լինի առ առաւելն 12 ոսկի: Այդ վարժարանը դրուած է համայնական ձեւով, որուն կը մասնակցին 3 գիւղերն ալ:

<b>ԳՐԵԼ-ԿԱՐԴԱԼ ԳԻՏՑՈՂՆԵՐ.—</b>	<b>այր</b>	<b>կին</b>	<b>երեխայ</b>
	38	37	41
<b>Քեան</b>	50%	0%	25%
	(25)	(26)	(28)
<b>Կոխալի</b>	50%	4%	18%
	47	25	26
<b>Տրոնա</b>	42%	0%	2%

Ասոնց մէջ մեծ մասամբ հազիւ կարող են 2 տող մի բան գրել:

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ.**— Մտքերնէն անգամ անցուցած չունին խեղճերը!!!

**ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ.**— Ներկայիս պատրաստ գտնուածներն են՝





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

			Հատ	պատրոն
Քեան	հրացան	յունական կարճ	2	100
Տրոնա	»	» երկար եւ ուղղակի մը	2	100
Կոխալի	»	» մէկ երկար երկու կարճ	3	175
			8	375
Քեան	ատրճանակ		2	100
Տրոնա	»	վեց հարուածեան	2	100
			4	200

Ընդհանուր հրացաններու թիւը 7, 375 պատրոնով, ատրճանակ 4 հատ 200 պատրոնով:

**ՁԷՆՔԻ ՊԱՀԱՆՁՔ.**— Ընդհանուր վիճակին համաձայն է:

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿ.**—

	Քեան	Կոխալի	Տրոնա
<b>Ամէնից շատ հող ունեցող</b>	300	500	300 ոսկի
» քիչ » »	60	100	50 »
Միջին	200	200	150 »
<b>Ամէնից շատ ծախք ունեցող</b>	60	55	60 »
» քիչ » »	20	15	20 »
Միջին	35	30	35 »
<b>Ամէնից շատ պարտք ունեցող</b>	30	50	30 ոսկի
» քիչ » »	10	10	5 »
Միջին	15-20	30	15 »
<b>Ամէնէն շատ կով ունեցող</b>	8	10	10
» քիչ » »	2	3	2
Միջին	5	5	5

**ԲԵՐՔԸ.**— (Տես ընդհ. շրջան):

**ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ.**— Ամէնից դժուար անկիւնը: Պէտք է շատ մեծ պրոպագանդա:

**ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎԻՃԱԿ.**— Լաւ: Տիրացուական ժողովուրդ մը եւ վերջին ծայր անհամերաշխ:







**ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐ.—**

**ՔԵԱՆ.—** 80 տուն թուրք. ամենէն բազմամարդ ընտանիքը 14 հոգի  
 » քիչ » 4-5

Երկու վարժարան ունին մի մի ուսուցիչով, մօտաւորապէս 60 աշակերտով:

Ամենէն շատ կալուած ունեցող 700 ոսկի  
 » քիչ » » 80 »  
 Միջին » » 100-150 »

Յոյն 3 տուն. իւրաքանչիւր տուն կը հաշուէ 5-7 հոգի:

**ԿՈՆԱԼԻ.—** 50 տուն թուրք. ամենէն բազմամարդ ընտանիք 16 հոգի  
 » քիչ 3-5 հոգի

Մէկ դպրոց, մէկ ուսուցիչ, 30 աշակերտ.

Ամենից շատ հող ունեցող 1000 ոսկի  
 » քիչ » » 50-80 ոսկի  
 Միջին 150 »

Յոյն 60 տուն. ամենէն բազմամարդը 12 հոգի  
 » քիչ 3 հոգի

Մէկ վարժարան, մէկ ուսուցիչ, 40-50 աշակերտ

Ամենէն շատ հող ունեցող 1500 ոսկի  
 » քիչ » » 30-50 »  
 Միջին 100-150 »

Ծանօթ.- 60 տուն յոյներէն զատ Կոխալի կը գտնուին նաեւ 25-30 տան չափ սանթաքիներ, որոնք իբր զաղթական կ'ապրին եւ իրենց գլխաւոր զբաղմունքն է, ինչպէս նաեւ ապրուստի միջոցը՝ բանուորութիւնը եւ քարտաշութիւնը:

**ՏՐՈՆԱ.—** Թուրք 50 տուն. ամենէն բազմամարդը 15 հոգի  
 » քիչ 3 »

Մէկ վարժարան, մէկ ուսուցիչ:

Ամենէն շատ հող ունեցող 1000 ոսկի  
 » քիչ » » 10 »  
 Միջինը 200-300 »

Յոյներ 30 տուն. ամենէն բազմամարդը 10 հոգի  
 » քիչ 3 հոգի

Վարժարան չունին:

Ամենէն շատ հող ունեցողը 300 ոսկի  
 » քիչ » » 25 ոսկի  
 Միջին 200 »





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

**Ա Պ Ի Ո Ն**

**ԲՆԱԿԶՈՒԹԻՒՆ.**— Զուտ հայաբնակ՝

տուն	այր	կին	տղայ	գաղթած
79	156	243	248	281

Ամենէն շատ բնակիչ ունեցող տուն	19 հոգի
» քիչ » »	2 հոգի
Միջին	10

**ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄ.**— 28 անձից բաղկացած 3 խումբ եւ մի մարտական խումբ 12 հոգի:

**ԿՈՒՆՏՐԱԿԱՆ.**— Մի վարժարան երեք ուսուցչով, 101 աշակերտով: 5 դասարան. պիւտձէ 70 ոսկի օսմ., աղ-ջիկ 36 հոգի:

**ԿԱՐԴԱԼ-ԳՐԵԼ ԳԻՏՅՈՂՆԵՐՈՒ ԹԻՒԸ.**— 53% այր մարդերից կարդալ գրել գիտէ: % 2 կիներէն, տղաքներէն դպրոց գնացողներն գրել կարդալ գիտեն:

**ԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹԻՒՆ.**— Բաւական չեշտուած ընթերցասիրութիւն ընդհանուր երիտասարդութեան մէջ: Հիմքը դրուած է գրադարանի մը, որ կը պարունակէ 150 հատոր գիրք, եւ հիմնուած է ընթերցասիրաց ընկերու-թիւն:

**ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ.**— Գիւղին մէջ կան

Հրացաններ՝

- 7 հատ ուսական, 350 փամփուշտով.
- 3 հատ յունական, 160 փամփուշտով.
- 2 հատ ուղմանական, 87 փամփուշտով.
- 7 » տաճկական, 365 փամփուշտով:

Ատրճանակներ՝

- 8 գարատաղ, 350 փամփուշտով.
- 4 ամերիկեան, 120 փամփուշտով.
- 1 ուս քազոնի, 45 փամփուշտով.
- 4 գարատաղ եւս, 100 փամփուշտով:

Կուռող ոյժ՝ 24 հոգի:

**ԶԻՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁԲ.**— 4 հոգի կը փափաքին գնել հրացաններ. մէկը դաշնակցական. կու տան 10 ոսկի իւրա-քանչիւր գէնքի համար:

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿ.**— Բերք — Տես ընդհանուր շրջան:

Ամենից շատ հող ունեցող	700 ոսկի
» քիչ » »	50 ոսկի
Միջին	200 »

Ամենէն շատ ծախս ունեցող տունը	700 ոսկի
» քիչ » » »	50 ոսկի
Միջին	40 »





Ամէնէն շատ պարտք ունեցող տունը	100	ոսկի
» քիչ » » »	5	ոսկի
Միջին » » »	20	»

Ամէնէն շատ կով ունեցող տունը	25	կով
» քիչ » » »	5	»
Միջին » » »	15	»

**ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ.**— Համայնական զգացումը շեշտուած է գիւղին մէջ: Ունի առաջին համայնական դրուժիւնով խանութը: Վարժարանը նոյնպէս միեւնոյն դրուժեամբ կազմուած է:

**ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎԻՃԱԿ.**— Լաւ. գինեմորութիւն, թղթախաղ չկայ. ընտանեկան կեանքը մաքուր:

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ.**— Ապիւոն գիւղը բաղկացած է չորս թաղերից, որք են՝ Ապիւոն թաղ, Ձեփնեան թաղ, Ֆիրինհատ թաղ եւ Սամերա թաղ:

Նկատելի է որ Սամերա թաղում գտնուում են երկու ընտանիքներ, որոնք սեփական հող չունին եւ իրենց ապրուստը ճարելու համար աշխատում են օտար հողերի վրայ (մարապա):

**Ս Ի Ֆ Թ Ե Ր**

Բնակչութիւն.— Հայեր՝

Տուն	այր	կին	տղայ	գաղթած
29	54	78	91	71

Ամէնէն շատ բնակիչ ունեցող տունը	20	հոգի
» քիչ » » »	2	
Միջին » » »	7	

**ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄ.**— Մի խումբ - 5 հոգի, եւ մի մարտական՝ 3 հոգի: Կան մի քանիներ եւս աւելացուելու համար խումբի վրայ:

**ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ.**— Մի վարժարան երկու ուսուցչով, 32 աշակերտով, որոնցմէ 11 աղջիկ (թիւ՝ որ կարող է բարձրանալ 40-ի եթէ բոլորն էլ ուղարկեն իրենց գաւակները): Պիւտճէ՝ 23 ոսկի:

**ԳՐԵԼ-ԿԱՐԴԱԼ ԳԻՏՑՈՂՆԵՐՈՒ ԹԻՒԸ.**— 40% այրերէն, կիներէն 1%, երեխաներէն՝ դպրոց գնացողները:

**ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱԿԱՆ ՎԻՃԱԿ.**— Գոյութիւն ունի որոշ չափով դաշնակցական ընկերներու մէջ, բայց բոլորովին սաղմնային:

**ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ.**— Միայն դաշնակցականները ունին 4 գէնք. 2 յունական 100 փամփուռտով, 1 տաճկական 13 փամփուռտով, 1 ռումանական 65 փամփուռտով:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

**ԶԻՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՔ.— Ցանկացողներ կան բայց փող չունին:**

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿ.— Բերք նոյն (Տես ընդհանուր շրջան):**

Ամէնից շատ հող ունեցող տունը	300	ոսկի
» քիչ » » »	30	ոսկի
Միջինը	200	»
Ամէնից շատ ծախս ունեցող տունը	50	ոսկի տարեկան
» քիչ » » »	15	» »
Միջինը	30	» »
Ամէնից շատ պարտք ունեցող տունը	25	ոսկի
(մի հատ էլ 150):		
Ամէնից քիչ պարտք ունեցող տունը	5	ոսկի
Միջինը	15	»

**Կան նաեւ պարտք չունեցողներ:**

Ամէնէն շատ կով ունեցող տունը	15	կով
» քիչ » » »	5	»
Միջինը	8	»

**ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ.— Ամենաանհաւանական վայրը:**

**ԲԱՐՈՑԱԿԱՆ ՎԻՃԱԿ.— Տխուր, կրօնամոլ, անհամերաշխ կեղծաւոր եւ հին փտած գաղափարներու տէր մարդիկ: Գիւղին չար ոգին է Կարապետ Սիմաւոնեանը:**

**ԹՈՒՐՔ ԱԶԳԱԲՆԱԿԶՈՒԹԻՒՆԸ.— Թուրքեր 58 տուն:**

Ամէնից շատ բնակիչ ունեցող տունը	17	հոգի
» քիչ » » »	3	հոգի
Միջինը	10	»

**Կան գիւղին մէջ 3 պէյեր, որոնք ունին 2000, 1000, եւ 500 ոսկիի կալուածներ:**

Ամէնէն բարձր հող ունեցողը գիւղացիներէն	500	ոսկի
» քիչ » » »	50	ոսկի
Միջինը	100	»

**Մէկ վարժարան ունին 60 աշակերտով եւ մէկ ուսուցչով, որը փակ է 2 տարիէ ի վեր, [եւ] որը յետին ծայր անկանոն վիճակի մէջ է:**





**ԳԼՈՒԽ XII**

**Հ.Յ.Դ. ԼԵՌՆԱՍԱՐ – ԽԱՐԲԵՐԴԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ**

Բացի ընթացիկ հարցերու համար պահպանուած քրթակցութենէն, Խարբերդի Կեդր. կոմիտեութեան քրթածրարին մէջ, իբրև ժողովական փաստաթուղթ, կը գտնուի 1914 թ. Ապրիլի 10-13ին գումարուած Եօթներորդ Շրջանային ժողովի որոշումներու այս արձանագրութիւնը, խմորատիպ 8 էջերէ բաղկացեալ:

Փաստաթուղթին մէջ ծածկանունով յիշուած բնակավայրերէն մեզի ծանօթ են՝

- Արեւալուսին – Մեզրէ
- Լեռնասար – Խարբերդ քաղաքը եւ Կ. կոմիտեութիւնը
- Բլրակ – Արաքլիք
- Մեսրոպաւան – Բալու
- Բազէ – Չմշկածագ
- Անուշաւան – Հիւսէյնիկ
- Բերքառատ – Մալաթիա

Փաստ. 829-13

**ՈՐՈՇՈՒՄՆԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԼԵՌՆԱՍԱՐԻ ԵՕԹՆԵՐՈՐԴ ԾՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ**

[Ապրիլ 10-13, 1914]

Լեռնասարի է-րդ Շրջանային ժողովը սկսաւ Ապրիլ 10-ին եւ վերջացաւ 13-ին, ունենալով ընդամէնը ինը նիստեր: Ժողովին կը մասնակցէին հետեւեալ մարմինները եւ խումբերը, — Բլրակ եւ Մեսրոպաւանի կոմիտէները Չական ձայնով, Բազէի ենթակոմիտէ՝ 1, Անուշաւան եւ Բուրաստան՝ 1, Վանասար եւ Դաշտավայր՝ 1, Նէվրուզ եւ Սրբավայր՝ 1, Կեդր. կոմիտէ՝ 1, Ճելալեան՝ 1 եւ Աստիկեան՝ 1, ընդամէնը 11 ձայն: Վանաձորը մասնակցեցաւ խորհրդակցական ձայնով: Բացակայ էին՝ Բերքառատի եւ Սրտաձորի մարմինները, իսկ՝ Արեւալուսնի կոմիտէն, իր կազմի պառակտման պատճառով, ժողովին մասնակցելու իրաւունքէն զրկուեցաւ: Մարմինները իրենց օրինական ձայներովը մասնակցեցան ժողովին, իսկ՝ ենթակոմիտէի ցենդ չունեցող վայրերը միացուելով՝ ձայն տրուեցաւ անոնց:

Պատգամաւորներու յանձնարարականները ստուգուելէ եւ ժողովի ղիւանն ու հաշուեքննիչ յանձնախումբը

ընտրուելէ ետք, տեղի ունեցաւ մարմիններու, խումբերու եւ Կեդր. կոմիտէի տեղեկագրերու ընթերցումը եւ հաշուետուութիւնը:

Այս նախնական զբաղումներէն ետք՝ ժողովը անցաւ օրակարգին վրայ եղած հարցերու վիճաբանութեանց եւ անոնց մասին տուաւ հետեւեալ որոշումները:

**1.— ԻՆՔՆԱԶԱՐԳԱՅՈՒՄ<sup>1</sup>**

ա) Կազմել առանձին յանձնախումբ մը Ինքնագարգացման գործը առաջ տանելու համար. այս մարմինը բոլորովին զաղտնի մնալու է ընկերներէն:

բ) Իրարու մօտ գտնուած վայրեր կրնան խորհրդակցական ժողովներ գումարել Ինքնագարգացման համար միջոցներ խորհելու:

գ) Ամէն դաշնակցական՝ իր կարողութեան համաձայն՝ պարտաւոր է մէյ մէկ գիրք ունենալ իր անձնական գրադարանին<sup>2</sup> համար, հակառակ պարագային՝ խստիւ պատժուելու է:

1.- Ինքնագարգացումը պէտք է հասկնալ ինքնապաշտպանութիւն իմաստով:  
2.- Գիրքը գէնքն է, գրադարանը՝ զինապահեստ:







**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

դ) Իւրաքանչիւր մարմին (ոչ թէ ինքն. յանձնախումբը) պարտաւոր է քննել բոլոր ընկերներու գիրքերը:

ե) Իւրաքանչիւր մարմին ջանալու է իր տեղին վրայ կազմակերպել մարմնամարզական խումբեր<sup>3</sup> կամ ակումբներ, ինչպէս նաեւ թելադրել ընկերներուն որ, նայելով տեղական պայմանները, ուժ տան որսորդութեան<sup>4</sup>.— Որսորդութեան<sup>4</sup> համար կառավարութեանն արտօնագիր առնուելու է, անպատեհութեանց եւ կասկածներու տեղի չտալու համար:

զ) Իւրաքանչիւր մարմին, միշտ նկատի ունենալով տեղական պայմանները, կրնայ հանգանակութեան ձեռնարկել ինքնագարգացման համար, պայմանաւ որ Դաշնակցութեան վարկը արատաւորող միջոցներու չդիմուի:

է) Իւրաքանչիւր մարմին [ինքնագարգացման] նպատակին համար որոշ գումար մը տրամադրելի ընելու է Կեդր. կոմիտէին, որպէսզի վերջինս պարտաւոր ըլլայ հարկ եղածները հայթայթելու [ինքնագարգացման] նպատակը ուսուցանասիրելու համար: Իւրաքանչիւր մարմին վստահելի եւ կարող ընկերներէն մին տրամադրելի ընելու է Կեդր. կոմիտէին:

ը) Ունենալ ինքնագարգացման շրջուն պրոպականդիստ մը ամբողջ շրջանին համար. երբ երկու երեք ամսուան մէջ անկարելի ըլլայ ճարել նոյն պրոպականդիստը, Կեդր. կոմիտէն պիտի հաստատէ կեդրոն նկատուած վայրի մը մէջ մասնաւոր կրթարան մը, ուր շրջանի մարմիններուն կողմէ բարոյականի տէր եւ ընդունակ ընկերներ պիտի ղրկուին ինքնագարգացման որոշ եւ գործնական դասընթացքներ ստանալու. այս կրթարանի ընթացքը ակարտողները՝ իրենց վայրին մէջ պարտաւոր են ստացած կրթութիւննին փոխանցել ուրիշներու: Կրթարան յաճախող ընկերներու ամբողջ դասընթացքին համար ուսուցիչին պիտի ըլլայ վճարում, որը պիտի ճշդուի Կեդր. կոմիտէին կողմէ: Աշակերտներու ծախքերը պիտի հոգացուին գիրենք ղրկող մարմիններուն կողմէ: Իրենց պարտականութեանց մէջ թերացող ակարտականները ներքին կանոնագրի համաձայն խստիւ պատժուելու են տեղական մարմիններուն կողմէ:

**2.— ՊՐՈՊԱԿԱՆՏ**

ա) Բանաւոր.— Լեռնասարի շրջանին համար մնայուն գործիչ-պրոպականդիստ մը գատ, իւրաքանչիւր մարմին պարտաւոր է սարքել մասնաւոր դասախօսութիւններ ընկերական շարքերուն համար, պարզելով կուսակցութեան հայեացքները եւ օրուայ ազգային թէ

քաղաքական հարցերը: Որոշուեցաւ նաեւ դիմել երկու բերրոններուն՝ որ մեր շրջանին համար տրամադրելի ընեն շրջուն կարող պրոպականդիստ մը, որուն ներկայութիւնը մեծապէս պիտի նպաստէ շրջանի կազմակերպութեան ուժեղացմանը:

Գոհացում չտրուելու պարագային՝ նոյնիսկ դիմել Ընդհանուր ժողովին:

բ) Գրաւոր.— Ընկերական շարքերուն մէջ յեղափոխական ոգին արթնցնելու համար, իւրաքանչիւր մարմին պարտաւոր է իր տեղին վրայ ունենալ՝ այլեւայլ միջոցներով կազմակերպական գրադարաններ, որոնք գլխաւորապէս պիտի պարունակեն կուսակցութեան աշխարհահայեացքը, ուղղութիւնը եւ գործելակերպը պարզաբանող գրքեր, թերթեր եւ հրատարակութիւններ: Իսկ նիւթական անկարողութեան պատճառով՝ կազմակերպական գրադարաններ չունեցող վայրերու մէջ մէկ կամ երկու խումբ միանալով՝ բերել կու տան դաշնակցական կարեւոր հրատարակութիւններ:

Ժողովը այս առթիւ նկատի ունենալով որ մարմիններէն շատերը մինչեւ հիմա թերացած են կուսակցութեան պաշտօնաթերթի «Դրօշակ»ի եւ կիսապաշտօնական օրաթերթի «Ազատամարտ»ի տարածման գործին մէջ, որոնք՝ գլխաւորապէս կը նպաստեն դաշնակցական եւ ազատական գաղափարներու ընդհանրացմանը, որոշեց պարտադրել բոլոր մարմինները եւ ընկերները որ աշխատին իրենց տեղին վրայ տարածել յիշեալ թերթերը թէ ընկերական շարքերու եւ թէ չէզոք հասարակութեան մէջ: Գոնէ իւրաքանչիւր խումբ իր անունով բերել տալու է յիշեալ թերթերէն մէկ մէկ օրինակ:

**3.— ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՄէՋ**

Ժողովը՝ նկատի ունենալով որ վերջին տարիներու ընթացքին ազգային գործերու մէջ մարմիններուն կողմէ պաշտօնապէս մասնակցութիւնը, անվարչագիտութեան պատճառով, առաջ բերած էր ընկերական անհամաձայնութիւններ, որոնց հետեւանքով՝ անխուսափելի դարձած է զանազան վայրերու մէջ կազմակերպական շարքերու պառակտումը եւ կուսակցութեան հմայքին ու վարկին արատաւորումը, յաչս ժողովուրդին—, որոշեց որ՝ ասկէ ետք Դաշնակցութիւնը Լեռնասարի շրջանին մէջ պաշտօնապէս չմասնակցի ազգային գործերուն եւ ընտրութիւններուն, ազատ թողլով ընկերները որ իրենց անհատական պատասխանատուութեան տակ մասնակցին: Կազմակերպական բոլոր մարմինները (Կեդր. կոմիտէ, կոմիտէ եւ ենթակոմիտէ), որոնց անդամները չեն կրնար ունէ պաշտօն ստանձնել ազգային շրջանակի մէջ, պիտի մնան դիտողի եւ քննադատողի

3.- Մարմնամարզական խումբ՝ մարտական խումբ:  
4.- Որսորդութիւն՝ զինավարժութիւն:





դերին մէջ՝ հանդէպ ազգային մարմիններու եւ գործերու: Իսկ, իբրեւ բացառութիւն, Դաշնակցութիւնը պաշտօնապէս կը մասնակցի գաւառական ժողովի ընտրութիւններուն՝ իբրեւ Օրէնսդիր ժողով:

**4.— ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՆԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԽՈՒՄԲԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ**

Նկատելով որ կանոնադիրներու քննութիւնը եւ վաւերացումը կը կարօտի երկար ժամանակի ու խորհրդածութեան, որոշուեցաւ պարտք դնել Կեդր. կոմիտէի վրայ որ արդէն պատրաստուած կանոնադիրներէն մէկ օրինակը կարգաւ զրկէ հեռակայ մարմիններուն, որոնք՝ իրենց ղեկավարութիւնները ընելով՝ պիտի վերադարձնեն Կեդր. կոմիտէին, վերջինս՝ իսկոյն Խարբերդի դաշտի մարմիններու խորհրդակցական ժողով գումարելով՝ պիտի ենթարկէ անոր քննութեանը եւ յետոյ վաւերացնելով տպագրութեան կը յանձնէ գանոնք:

**5.— ՀԱՄԵՐԱՇԽ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ ՔՈՅՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԵՏ**

Նկատի ունենալով որ միւս հայ կուսակցութիւններն ալ ազգային-մշակութային կեանքին մէջ կարեւոր դեր կը կատարեն եւ յաճախ կուսակցական հակառակութեանց պատճառով՝ քառասային վիճակ մը կը ստեղծուի ազգային գործերու մէջ, նկատի ունենալով նաեւ այն պարագան՝ որ Պոլսոյ մէջ արդէն չորս հայ կուսակցութիւնները համերաշխած են եւ որոնց կողմէ տրուած հրահանգներու համաձայն գաւառին մէջ, ամէն կուսակցութիւններն ալ համերաշխած են, որոշուեցաւ յանձնարարել շրջանի բոլոր մարմիններուն եւ ընկերներուն՝ որ իրենց տեղին վրայ եղած հայ կուսակցութեանց հետ համերաշխաբար գործակցին ազգային, հանրային եւ քաղաքական գործերու մէջ: Կուսակցական համերաշխութիւնը աւելի գործնական հողի վրայ դնելու համար, դաշնակցական մարմինները պարտաւոր են ուժ տալ միջկուսակցական ժողովներու կազմութեան:

**6.— ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՐԳ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ**

Ժողովը, Հայաստանի եւ Արեւմտեան բիւրոներու հրահանգի համաձայն ընտրեց իր պատգամաւորը Լեւոնասարի շրջանը ներկայացնելու Դաշնակցութեան Ութերորդ Ընդհանուր ժողովին, որ պիտի գումարուի առաջիկայ Յուլիս ամսի մէջ: Իսկ, նոյն ժողովին ներկա-

յացուելիք հարցերուն համար պարտք դրուեցաւ Կեդր. կոմիտէին վրայ՝ որ իսկոյն դիմէ շրջանի բոլոր մարմիններուն փութացնելու իրենց առաջարկներն ու բաղձանքները, որոնք ամփոփուելով Կեդր. կոմիտէին կողմէ՝ պիտի զրկուին Ընդհանուր ժողովին:

**7.— ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ԵՒ ՎԱՅՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ**

Կեդր. կոմիտէի վայր որոշուեցաւ դարձեալ Արեւալուսինը<sup>6</sup>, նկատելով որ վերջինս՝ աշխարհագրական, վարչական եւ քաղաքական տեսակէտով կեդրոն կը ներկայանայ եւ ամէն կերպով յարմար ու օգտակար պիտի ըլլայ նոյն վայրին մէջ:

Երկպատիկ ցանկի մը վրայ՝ գաղտնի քուէարկութեամբ՝ ընտրուեցան հինգ անդամներ Կեդրոնական կոմիտէի համար:

Ինքնագարգացման բաժինին մէջ մոռցուած է աւելցրնել հետեւեալ յօդուածը.— Կազմակերպական միջոցներով գնուած գոյքերը իրենց տեղին վրայ արժեքնով տրուելու են ընկերներուն, իսկ չհզոքներուն՝ շահով: Եթէ միեւնոյն ժամանակ տարբեր գներով նոյն տեսակ գոյքեր գտնուին, անոնց միջին գինը պիտի ըլլայ արժած գինը:

**ԴԱՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ**

Շրջ. ժողովը, ծանօթանալով Արեւալուսնի կազմին ներքին պառակտումներուն, պաշտօն յանձնեց Բլրակի եւ Մեսրոպալանի չորս պատգամաւորներուն որ Արեւմտեան բիւրոյի ներկայացուցիչ ընկեր Մուրատի<sup>7</sup> հետ կարգադրեն Արեւալուսնի խնդիրը:

Դատական մարմինը հետեւելով իրեն ներկայացուած բոլոր փաստաթուղթերուն եւ գրութիւններուն եկաւ այն եզրակացութեան՝ թէ՛ գոյութիւն ունեցող բոլոր ամբաստանութիւնները կազմակերպական բնոյթ ունեցող խնդիրներէ (ինչպիսին է գոյքերու իւրացում կամ խարդախում եւ կամ դրամական զեղծում) ծնունդ առած չեն: Հատուածական բաժանումները, իրարհակած ընթացքները արդիւնք էին ոչ-կազմակերպական հողի վրայ ստեղծուած խնդիրներու, որոնք յեղափոխական կազմակերպութեան մը համար, որպիսին է Հ. Յ. Դաշնակցութիւնը, բնաւ չէր կրնար ներել եւ թոյլ տալ այն ընկերներուն որ անհատական եւ կազմակեր-

5.- Եօթներորդ Ընդհ. ժողովի մասնակիցներուն մէջ Խարբերդի պատգամաւորին անունը չի գտնուիր. հաւանաբար ներկայ չէ:

6.- Արեւալուսինը Մեզրէի ծածկանունն է, Խարբերդի նահանգային կեդրոնը:

7.- Մեքաստացի Մուրատն է (Խրիմեան):





**ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԲ**

պական հարցի վերածելով ստեղծելին ցաւալի պառակտումը «օրինական» եւ «ոչ-օրինական» մակդիրներով կամ հատուած անուաններով:

Դատական մարմինը՝ ընկեր Մուրատի հետ խիստ ուշադրութեամբ քննելով այս իրողութիւնները, բանաձեւեց հետեւեալ որոշումները:—

Ա.— Նկատելով որ չվաւերացուած «ոչ-օրինական» հատուածը մեր ներքին կանոնադրի ուղղութեանն շեղած է, չյարգելով կազմակերպական կարգապահութիւնը՝ կուսակցական բնոյթ չունեցող հարցերը չըջած, վերածած ու սկզբունքի հարց դարձուցած է, անսալով ու հետեւելով շատ անգամ գինքը գէշ առաջնորդող արտաքին ու ներքին մտքերէ, անգիտակցաբար ինքզինքը ձգելով բաժանումի ճամբուն մէջ եւ այսպիսով անուանարկելու Արեւալուսնի հմայքը:

Բ.— Նկատելով որ՝ Կեդր. կոմիտէին վաւերացուած «օրինականացած» հատուածը նոյնպէս ինքզինքը երբեմն ձգած է սայթաքումներու մէջ՝ իրեն տալով հարագատի կոչում՝ թոյլ տուած է ինքզինքին գէշ որակումներ ընել «ոչ-օրինականացածի» հաւաքական կազմին ու անհատ ընկերներուն դէմ, նոյնպէս յանցանք նկատուեցաւ:

Գ.— Նկատելով որ՝ Կեդր. կոմիտէի անդամներէն ոմանք, հակառակ իրենց պաշտօնի փափկութեան, գանազան առիթներու մէջ՝ փոխանակ գոյուցիւն ունեցող վէճերը մաքրելու, անձնական քինախնդրութիւնը զիրենք գէշ առաջնորդութեան մղած է, անշուշտ իրենց մտածողութեանն ու կազմէն անկախ, առաջնորդուելով իրենց տրուած արտաքին սխալ տեղեկութիւններով:

Դատական մարմինը՝ տեսնելով այս բոլոր իրադարձութիւնները, նկատի ունեցաւ նաեւ երկու բիւրոներու թելադրութիւնները եւ օրուան քաղաքական կեանքին մէջ մուսուրտ պատկերը, որոնք կազմակերպական շարքերու խտացման անհրաժեշտութիւնը խիստ ստիպողական կը դարձնէին, որոշեց՝ որ փոխանակ յանցաւոր նկատուած ընկերները կանոնական օրէնքներու սահմանած պատիժներով դատապարտելու, իւրաքանչիւր ընկերով յանցանքը առանձին իր երեսին տալ՝ իբրեւ բարոյական պատիժ, նկատելով, որ այս կերպ բարոյական պատիժի տնօրինութիւն մը յեղափոխականի մը համար աւելի արժէք կը ներկայացնէ, քան դրամական ու արտաքսումի պատիժ-վճիւնները:

Դատական մարմինը, հիմնուած այս տեսակէտին վրայ, անջատ հատուածներու անհատ ընկերները առանձինն եւ ամբողջութիւնը ընդհանուր ժողովով մը քով քովի բերելով, թելադրեց հաշտութեան փրկարար միջոցը եւ անոնցմէ ստանալով համազորակցութեան անկեղծ ուխտն ու խոստումը, նուիրագործեց հաշտութիւնն ու համերաշխութիւնը Արեւալուսնի ընդհանուր կազմին մէջ:

**ԲԱՅԱՌԻԿ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ**

Որովհետեւ տոքթ. Խ. Պոնափարթեանի՝ Կեդր. կոմիտէի թուուցիկովը կազմակերպական շարքերէն երկու տարուայ համար հեռացուած ըլլալը յայտարարուած էր, դատական մարմինը գտաւ զայն չափազանցուած, հետեւաբար՝ վերընդունեց զայն շարքերուն մէջ, պայմանաւ որ յիշեալին պատասխանատու գործ չյանձնուի մինչեւ առաջիկայ հոկտեմբեր 1:

Կարապետ Պոյաճեանի բողոք-նամակը իր բովանդակութեամբ չհաստատուած զրպարտութիւն գտնուելով որոշուեցաւ իբրեւ պատիժ երկու տարի բնաւ պատասխանատու գործ ու պաշտօն չյանձնել, եւ եթէ այս պատիժի ժամանակամիջոցին՝ չուղղէ իր ընթացքը, ի սպառ արտաքսել շարքերէն:

Մարգար Յակոբեան, իր ստորագրութեան տակ ըրած ճրի զրպարտութիւնները չկարենալ փաստելով, եւ իր ցոյց տուած վկաներու հաստատութիւնով երեւան գալով որ սուտ ու յերիւրուած բամբասանքներ են պաշտօնական մապմիններու եւ անհատ ընկերներու հասցէին ըրած ամբաստանութիւնները, որոշուեցաւ մէկ տարի շարքերէն դուրս պահել:

**Վերջ**

Ծանօթ.— Հ.Յ.Դ. Լեռնասարի 7րդ Շրջանային ժողովի որոշումներուն հարազատ արտագրում ըլլալը կը հաստատենք:

Հ.Յ.Դ. Լեռնասարի Կեդր. կոմիտէ  
Ա.դպիր                    Ա.պետ  
ՄԱՍԻՍ                      ՀՐԱՏ

10/23 Մայիս 1914



**ԳԼՈՒԽ XIII**

**Հ.Յ.Դ. ՎԻՇԱՊ – ՊՈԼՍՈՅ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՈՒԹԻՒՆ**

Պատճեններու մատեան – 892-1, էջ 131-132

Հ.Յ.Դ. ՎԻՇԱՊԻ Կ. ԿՈՄԻՏԵ

[19]14 Մայիս 5

Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրոյին

**1.- ՎԻՇԱՊԻ Կ. ԿՈՄԻՏԵԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ**

**Հ.Յ.Դ. ՏՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԻՆ ՄԱՍԻՆ**

Ընկերներ,

Հետեւեալ հարցերը, եկած մեծ մասամբ մեր շրջանի մարմիններէն, կը փափաքէինք տեսնել Ընդհ. ժողովի օրակարգին մէջ:

1) Մեր կուսակցութեան դերն ու դիրքը հայկ. բարենորոգումներու հանդէպ:

2) Օսմ. երեսփոխանական ընտրութեանց խնդիրին ծանօթ իրադարձութեանց պատասխանատուութեանց ճշտում.— Օսմ. երեսփոխանութեան թեկնածու ընկերներու ձայնի իրաւունքի խնդիր՝ այդ հարցին վերաբերմամբ.— Պատասխանատու մարմիններու անդամ եղող ընկերները պէ՞տք է որ իրենց թեկնածութիւնը դնեն երեսփոխանութեան համար:

3) Կուսակցութեան դիրքը հանդէպ կառավարութեան.— Հետեւողական եւ տեւական քաղաքականութեան հետապնդումը:

4) Լեկալի-իլլեկալի<sup>1</sup> խնդիրին հիմնական ճշտում եւ կուսակցութեան պիտածէին ճշտորոշումը.— Կուսակցական ակումբներ:

5) Ինքնապաշտպանութիւն:

6) Կուսակցութեան դիրքը հանդէպ զինուորագրութեան:

7) Ներգաղթի-արտագաղթի խնդիր եւ հիմնական ու գործնական դարմաններ:

8) Կուլտուրական եւ ազգային հաստատութիւններն ու կուսակցութիւնը.— Դաշնակցական երեսփոխաններու գործունէութիւնը Ազգ. խորհրդարանին<sup>2</sup> մէջ եւ անոնց պատասխանատուութիւնը կուսակցութեան առջեւ.— Ուրոյն խմբակ պիտի կրնա՞ն կազմել թէ՛ պիտի գործեն անկախապէս.— Կուսակցութեան դիրքը՝ առանձնապէս դէպի կրթական գործը:

9) Համերաշխութեան խնդիրը իր դրական-բացասական կողմերուն մէջ.— Համերաշխութեան սահմանները.— Կուսակցական ձայներու համեմատական սկզբունքի կիրառութիւն՝ համաձայն իւրաքանչիւր կուսակցութեան ներկայացուցած բարոյական թէ՛ նիւթական ուժերուն:

1.- Կուսակցութեան օրինակացման կամ ոչ խնդիր:  
 2.- Նկատի ունի Կ. Պոլսոյ Պատրիարքութեան Ազգ. Ընդհ. ժողովը:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

10) Կուսակցական փրոփականտա.— Ընկերներու կուսակցական դաստիարակութեան հարցը.— Ուղեցոյց.— Կուսակցական մամուլ.— Դրօշակ եւ դրական կարգադրութիւն անոր մասին:

11) Բանուորական հարց.— Պարտականութիւն գործնական ձեռնարկներու առաջացման.— Միօրինակ ուղղութիւն.— Կուսակցութեան մասնաւոր ուշադրութիւնը դէպի այս հարցը:

12) Վերաքննութիւն դատական խնդրի մասին նախորդ Ընդհ. ժողովի տուած որոշման.— Իրենց անունը դատական ռեէ խնդրի հետ կապուած ընկերներ կրնա՞ն պատասխանատու մարմիններու անդամութեան կանչուել՝ առանց այդ խնդրին շուրջ վճիռ կայացուած ըլլալու:

13) Կուսակցութեան հիմնական վերակազմութիւն.— Հիմնական կանոնադրի հրատարակութեան անհրաժեշտութիւն:

14) Դաշնակցութեան պատմութեան մասին պարտադիր որոշում եւ անխուսափելի աշխատանքի սկսում:

15) Կուսակցութեան պիւտճէի հիմնաւորում.— Կուսակցութեան կեդրոնական արկղի հասոյթներու բաշխում՝ համաձայն շրջաններու ներկայացուցած պիւտճէին, շրջաններու վրայ՝ որոշ գումարներով, սա ոչ թէ 40% սակով, որ ֆիքթիվ<sup>3</sup> է:

16) Աշխատագրուրկ եւ նիւթական անձուկ վիճակի մէջ գտնուող ընկերներու համար յատուկ մարմիններու ստեղծում:

Հաղորդելով վերոյիշեալ հարցերը, որոնք, ինչպէս ըսինք, կը փափաքէինք օրակարգին մէջ տեսնել, Կեդր. կոմիտէս պարտականութիւն կը զգայ ձեր ուշադրութեան յանձնել նաեւ հետեւեալ մէկ-երկու առաջարկները:

Աչքի առաջ ունենալով գումարուելիք Ընդհ. ժողովին կարեւորութիւնը՝ կազմակերպութեան համար ապագային կարգ մը հարցերու անհրաժեշտ լուծման եւ կարգադրութեան տեսակէտէ, որոնց մէջ, մեր կարծիքով, առաջնակարգ տեղը կը բռնէ կուսակցութեան հիմնական վերակազմման եւ կազդուրման խնդիրը, ցանկալի է որ գումարուելիք Ընդհ. ժողովը առանց ունենալու իր նախորդին թերութիւնները, առհասարակ արտայայտիչն ըլլայ ամբողջ կուսակցութեան՝ առնելով զայն իր բոլոր խաւերովն ու շրջաններով: Այս անհրաժեշտութեան ընդառաջ գնալու համար հարկ է մեր կարծիքով:

1) Օրակարգը բոլոր շրջաններուն սեփականութիւնը դարձնել օր առաջ ցրուելով զայն մարմիններուն:

2) Յենգի մասին նուազ խստապահանջ ըլլալ եւ թոյլ տալ ամէն շրջաններու որ իրենց ներկայացուցիչը ունենան, տալով ցենց ներկայացնողներուն 2 եւ թերի ցենց ունեցողներուն մէկ ձայնի իրաւունք:

3) Պարտադրել որ պատգամաւորները ընտրուին անպայման Շրջ. ժողովներէն, որպէսզի Ընդհ. ժողովը շարքերէն բխի եւ ոչ թէ վարչական մարմիններէն:

4) Ապահովել նաեւ մասնակցութիւնը կուսակցութեան հողին մէջ գտնուող բոլոր կարեւոր գործիչներուն:

5) Եւ որպէսզի բոլոր շրջաններն ալ հնարաւորութիւն ունենան իրենց ներկայացուցիչները ղրկելու՝ ժողովը գումարել ծովեզերեայ կեդրոն վայր մը — օրինակ Տրապիզոն, որով գրեթէ յարգուած կ'ըլլայ նաեւ նախորդ Ընդհ. ժողովի որոշումը:

Ընկերական բարեւաններով՝  
Հ.Յ.Դ. ՎԻՇԱՊԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

3.- Երեւակայական, մտացածին:







Պատճեններու մատեան – 892-1, էջ 157-160

## 2.– ԱՄՓՈՓ-ՊԱՏԿԵՐ ՎԻՇԱՊԻ ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ (Ուղարկուած ծրոյ Ընդհ. ժողովին)

Ընկերներ,

Նախորդ Ընդհանուր ժողովէն մինչեւ ներկան ընդգրկուած ժամանակը – հազիւ 8-9 ամսուայ տեւողութիւն մը իրականին մէջ – հնարաւորութիւն չտուաւ փափաքուած արդիւնաւոր աշխատանքի մը՝ կուսակցական գետնի վրայ, – եթէ ընդունինք որ Օսմ. երեսփոխանութիւնը իրադարձութիւններն ու այդ առթիւ առաջացած յուզումներն ալ ունեցան իրենց դերը այս պարագային:

Ներկայ քանի մը տողերով նպատակ ունինք ծանօթացնել մեր շրջանը՝ իր կազմակերպական վիճակին մէջ:

Եթէ շրջանի կազմակերպութիւնը, իր ներկայացուցած թուական, նիւթական եւ այլ պայմաններուն մէջ, բաղդատութեան դրուի միջավայրին ընծայած տնտեսական, նիւթական-յարաբերական ու թուական համեմատաբար լաւագոյն պայմաններուն հետ՝ ճիշդ է որ բաւարար չէ ու շատ անհամապատասխան այդ իրականութեան: Բայց եթէ նկատի ունենանք այն հանգամանքը՝ որ այս շրջանի հայ ազգաբնակչութիւնը տակաւին ոչինչով ինքզինք կապուած կը զգայ բուն երկրի ժողովուրդին հետ ու գոհողութեան գաղափարը իրեն համար տակաւին անըմբռնելի – կ'ապրի ինքն իրեն համար, մնալով ազգային-կազմակերպական լաւագոյն մտածումներով եւ զգացումներով – պէտք է գոյութիւն առած ազգային-կազմակերպական վիճակը լաւ սկզբնաւորութիւն մը համարել:

1911ի վերակազմութենէն ի վեր ունինք շուրջ 10-25 կէտի մէջ կազմեր – կոմիտէ, ենթակոմիտէ, խումբ եւ այլն – մօտաւորապէս, ներկայիս, 1000է աւելի ընկերներով: Եթէ հաշուենք ակումբներու եւ բարոյապէս կազմակերպութեան հետ կապուած միութիւններու պատկանող անդամներու թիւերն ալ, կարելի է այդ թիւը կրկնապատկել: Կեդր. կոմիտէի եւ մարմիններու մէջ կայ մշտային կապ եւ կանոնաւոր յարաբերութիւն, ինչ որ կը նպաստէ շրջանի կազմակերպութեան մարմիններու յարատեւ գոյութեան, տեղի չտալով կազմալուծիչ տրամադրութիւններու, ինչ որ յաճախ կը պատահէ: Այս գոհացուցիչ կապին պէտք է վերագրել այն իրողութիւնը, որ չորս տարիէ ի վեր պարբերաբար եւ

ամէն տարի Շրջ. ժողովներ կը գումարուին՝ գրեթէ իրաւասու ձայներու ամբողջին ներկայութեամբ եւ կամ հազիւ մէկ-երկուքին բացակայութեամբ: Խումբերը եւ շարքերը տակաւ կը վարժուին, ու ջանք ալ կը թափուի՝ մղել գիրենք զուտ կազմակերպական-կուսակցական արդիւնաբերող աշխատանքներու: Ու ինչ որ ալ ըլլայ գանազան ժամանակներու մէջ այս շրջանի կազմակերպութեան կրելիք բարձրացումի եւ նուազումի աստիճանները, սա՛ կարելի է հաստատապէս ըսել որ՝ կազմակերպութիւնը իր հիմը դրած է եւ բաւական ամուր գետնի վրայ, շնորհիւ այն իրողութեան՝ որ շատ մը վայրերու մէջ արդէն ունինք որոշ թիւով ընկերներ, որոնք եւ ու պիտի մնան անբաժան ու նուիրուած կազմակերպութեան եւ որոնց շուրջը կարելի պիտի ըլլայ համախմբել միշտ նոր տարրեր:

Պարբերաբար իրար յաջորդող Կեդր. կոմիտէներու ուղղութիւնն է եղած շարքերը նուազ զբաղեցնել տեղական կուլտուրական գործերով եւ առաւելապէս գանոնք մղել կուսակցական աշխատանքի եւ կուսակցութեան անցեալ եւ ներկայ կեանքի ծանօթացման – այնքան որ անծանօթ է այս շրջանը այդ բոլորին: Առաւելապէս գիւղերու մէջ, որոնք մեծ մասով զուտ հայաբնակ են, կրնանք ըսել որ ամբողջ ազգային-կուլտուրական կեանքի թոնր մեր ընկերներէն կու գայ եւ առանց անոնց բարոյական կամ նիւթական աջակցութեան – ուղղակի թէ անուղղակի – այդ ուղղութեամբ ամէն շինարար աշխատանք կանգ կ'առնէ: Քաղաքներու մէջ մեր այս ուժին ընդգիւծողը, հակազդող ուժեր եւ կազմակերպութիւններ չեն պակսիր սակայն, հոգ չէ թէ ըլլան տարբերային եւ ոչ կազմակերպուած. անոնք կը համախմբուին երբ խնդիրը մեր ընկերներէն ծնող կամ հետապնդող որեւէ ձեռնարկ քանդելու պարագան կը ներկայանայ: Այս վիճակին հակազդելու եւ գանոնք կազմալուծման դատապարտելու՝ յաջողած ենք միմիայն դիմելով անոնցմով չզբաղելու թաքթիքին, ինչ որ մեր շարքերն ալ լաւագոյն զբաղումներու մղելու առիթ մը կ'ըլլայ միւս կողմէ: Գալով կեդրոնական քաղաքի կազմակերպութեան պատկերին, պէտք է ըսել որ ոչ մէկ կերպով յաջողած չէ մեզ թափանցել տեղացի տարրին մէջ, որուն զգացումներուն ու մտայնութեանը շատ ալ ծանօթ չեն մեր շարքերը՝ առաւելապէս – չըսե-





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

լու համար ամբողջովին — բաղկացած գաւառացիներէ, հակամէտ ցրուելու:

Այս շրջանն է՝ նաեւ գերազանցապէս աշխատաւորական կեդրոն: Դժբախտաբար այդ ուղղութեամբ գործ դրուած փրօփականտը ոչ հասարակութեան, ոչ իսկ մեր շարքերուն վրայ իր փափաքուած ներգործութիւնը կ'ընէ համապատասխան գործ ստեղծելով: Այս երեւոյթի մէջ եթէ մէկ կողմէ շարքերը կազմիչ տարրերու անհետաքրքիր դիրքը իր դերը ունի, միւս կողմէ աշխատաւորական փրօփականտին իբրեւ թէ ի նպաստ մօտաւոր անցեալի ձախող թաքթիքն ալ իր ներգործական ազդեցութենէն զերծ չէ: Ներկայիս ունինք մէկ-երկու վայրերու մէջ անկուսակցական գետնի վրայ բայց մեր ազդեցութեան տակ գտնուած բանուորական միութիւններ: Շրջանի գիւղերը կը ներկայանան քօփերաթիւներու համար լաւագոյն գետինը, ու պէտք է ըսել որ այդ ուղղութեամբ աշխատանք մը ծայր տուած է արդէն: Ուրախալի է ըսել որ երկու-երեք վայրերու մէջ կազմուած քօփերաթիւները յաջողութեան լաւ յոյսեր կը ներշնչեն եւ արդէն հիմնաւորուած են:

Շրջանի կազմակերպական նիւթական վիճակը, դարձեալ, ըլլալով անհամապատասխան շրջանի կարեւորութեան, համապատասխան է շրջանի կազմակերպութեան վիճակին: Հիմ ունենալով նախորդ տարիներու պիւտճէները եւ վերջին երկու Ընդհ. ժողովներու դրած ցենզը՝ մեծ տարբերութիւն մը չենք տեսներ: Զուտ կուսակցական մուտք կ'ունենանք շուրջ 20.000 դրուշ, որուն հետ եթէ հաշուենք ակումբներու, մարմ-

նամարզի եւ այլ մօտաւոր նպատակներու վրայ ծախսուածները, ինչպէս նախատեսուած է նոյն երկու Ընդհ. ժողովներէն, 50,000-ը գուցէ կ'անցնի: Կուսակցութեան կեդրոնական արկղը տարեկան 5-7000 դրուշ մուտք մը կրնայ նախատեսել այս շրջանին, բայց յառաջիկայ տարեշրջանին՝ շուրջ 15000 (7000 նախորդ տարուայ հանգանակութիւններէն, 3600 այս վերջացող տարեշրջանի սակէն եւ 6-7000 յառաջիկայ տարեշրջանի սակէն՝ վճարելի մասնավճարներով մինչեւ յառաջիկայ Օգոստոս):

Տալով ներկայ ամփոփ-պատկերը, մենք միանգամայն հեռու ենք իրերը լաւ ներկայացնելու տրամադրութիւնները սնուցանելէ: Մենք կը մնանք այն կարծիքին, որ մեր կազմակերպութիւնը ընդհանրապէս՝ իր անցեալն ու ստանձնած դերը արդարացնող կազմակերպուած ուժ մը չէ տակաւին եւ հիմնական վերակազմութեան մը անհրաժեշտութիւնը աւելի քան հրամայական է, որուն լծուելու են, մեր կարծիքով, կուսակցութեան բոլոր ուժերը, գոնէ որոշ ժամանակի համար լքելով կողմնակի ամէն աշխատանք: Օրուան հրամայականը կուսակցութեան հիմնական կազմակերպման խընդիրն է:

Սրտանց բաղձալով Ընդհ. ժողովի աշխատանքներու յաջողութեանը՝ ընկերական բարեւներով

**Հ.Յ.Դ. ՎԻՇԱՊԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ**

1914, Յուլիս 5





Փաստ. 881-33

### 3.– ԱՄՓՈՓՈՒՄ Հ.Յ.Դ. ՎԻՇԱՊԻ ԶՐՆ ՇՐՋ. ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՆ

(Գումարուած 1914 Յունիս 19 – Յունիս 3)

**Ժողովին կազմը.**— Հ.Յ.Դ. Ը՞նդհ. Ժողովի մօտալուտ գումարումին պատճառով՝ Վիշապի Կեդր. կոմիտէն նախաձեռնած էր Շրջանային ժողովը գումարելու նախատեսուած ժամանակէն շուրջ մէկուկէս ամիս առաջ, հարկ եղածը հրահանգելով իրաւասու թէ խորհրդակցական ձայն ունեցող բոլոր շրջաններուն:

Համաձայն շրջանի կանոնադրին եւ աւանդութիւններուն, ինչպէս նաեւ նախորդ Շրջ. ժողովով Կեդր. կոմիտէին եղած յանձնարարութեանց — ի մասին մարմիններու նիւթական ցենզի լրացման անհրաժեշտութեան — 8 մարմիններ կ'ունենային իրաւասու ձայն:

Վերոյիշեալ 8 իրաւասու շրջաններն ալ ժողովին վայրը դրկեցին իրենց պատգամաւորները, իսկ խորհրդակցական ձայնով մասնակցեցան երեք շրջաններ՝ 3 պատգամաւորով: Ասոնցմէ դուրս մասնակցեցան Կեդր. կոմիտէն 1 իրաւասու ձայնով, ինչպէս նաեւ Կեդր. կոմիտէի մնացեալ ընկերներն ու հրաւիրուած ընկերներ՝ խորհրդակցական ձայնով:

Ժողովները ընդհանրապէս գումարուեցան՝ 7—9 իրաւասու պատգամաւորներու, 2—3 խորհրդակցական ձայն ունեցող պատգամաւորներու եւ 4—7 հրաւիրուած ընկերներու ներկայութեամբ:

Բացակայ շրջաններէն շատեր իրենց բացակայութիւնը կը պատճառաբանէին գիւղական եւ դպրոցական աշխատանքներով, ինչ որ եկաւ իր կարգին հաստատել այն պարագան թէ՛ մեր շրջանի Շրջ. ժողովի գումարման յարմարագոյն ժամանակը Օգոստոս 1 — 10-ն է:

**Պատգամաւորներու ընտրութեան մասին.**—

Անցնելով ներկայացող պատգամաւորներու վկայագրերու քննութեանը՝ դիտուեցաւ որ յարգուած է թէեւ ընտրական հիմնական կանոնը՝ 2/3-ի սկզբունքի կիրառութեամբը, սակայն տեղ-տեղ քուէատուփը նոյն օրուան մէջ կարելի չէ եղած բանալ բացակայութեանց պատճառով անհնար ըլլալով քուէներ կեդրոնացնել: Այս իրողութիւնը արդիւնք թէեւ տեղական կարգ մը անխուսափելի պատճառներու — դաշտային աշխատանք, պատերազմ[ական] դրութիւն եւն.— սակայն ժողովը հարկադրուեցաւ արձանագրել հետեւեալ պարտադիր հրահանգը.

«Քուէարկութիւնները պէտք է տեղի ունենան միեւնոյն օրուան եւ միեւնոյն ժողովին մէջ: Նախընտրելի է՝ անյաջողութեան պարագային երկրորդ ժողով գումարելով՝ նոր քուէարկութիւն կատարել, որուն արդիւնքը վերջնական եւ վաւերական կ'ըլլայ, փոխանակ քուէարկութեան տալու արտաժողովային ձեւ եւ քուէարկութիւնը կատարելու մէկէ աւելի օրերու ընթացքին: Յաջորդ Շրջ. ժողովին վրայ պարտականութիւն կը դրուի այս պարագան խիստ ուշադրութեան առնել՝ վկայագրերու ստուգման պահուն»:

**Ընդհ. ժողովի օրակարգի նկատառութիւն.**—

Դիւանական կարգ մը ընթացիկ աշխատանքներու լրացումէն յետոյ — յանձնախումբերու ընտրութիւններ եւն.— Շրջ. ժողովը անմիջապէս անցաւ Ընդհ. ժողովի օրակարգի նկատառութեան, նախ լսելով շրջանի նախորդ պատգամաւորը եւ իր նիստերուն մեծագոյն մասը յատկացնելով առաջադրուած օրակարգին, նկատելով որ Ընդհ. ժողովի գումարման օրերը կը մօտենան: Այս մասին տրուած որոշումները առանձին հրատարակելով՝ կը կցուի ներկայ ամփոփումին: Այս որոշումներու կարգին՝ Շրջ. ժողովը ուշադրութեան առաւ նախորդ Ընդհ. ժողովի գումարման հետ կապուած ինչ-ինչ թերութիւններ, այդ առթիւ իր եզրակացութիւնը առանձնապէս յանձնելով գումարելի Ընդհ. ժողովի նկատառութեան:

**Տեղեկատուութիւն շրջանի մարմիններու, շրջիկի եւ Կեդր. կոմիտէի.**—

Ժողովը լսելով շրջանի պատգամաւորներու տեղեկաբերութիւնները՝ իրենց պատկան կազմերու մասին եւ քաղելով անոնցմէ զանազան լուսաբանութիւններ, ինչպէս նաեւ լսելով Կեդր. կոմիտէի կարծիքը անոնցմէ իւրաքանչիւրի մասին, ըրաւ առանձին նկատողութիւններ՝ պարտականութիւն յանձնելով Կեդր. կոմիտէին՝ հաղորդել այդ դիտողութիւնները պատկանեալ կազմերուն:

Կարգալով շրջիկ-ընկերոջ տեղեկագիրը՝ ժողովը փաստացի տեղեկութեանց մասը պակաս գտաւ անկէ, ինչ որ գլխաւոր տեղը գրաւած պէտք էր ըլլար հոն: Ժողովին կարծիքով՝ տեղեկագիրը նախագծի մը տպաւորութիւն կը թողու աւելի:



**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

Կ. կոմիտէն եւս ըրաւ իր գրաւոր տեղեկաբերութիւնը՝ քննադատօրէն մօտենալով իր եւ շրջանի աշխատանքներուն միանգամայն, ընդունելով գանոնք մէկը միւսէն անբաժան, ու ցորչափ շրջանը չյայտնուի կուսակցական պարտականութեանց եւ աշխատանքներու ըմբռնումի բարձրութեամբ՝ եկող-գացող Կեդր. կոմիտէները նպաստաւոր տեղեկաբերութիւններ ընելով վիճակին մէջ չպիտի գտնուին: Տիրող այս պայմաններուն մէջ՝ անցնող տարեշրջանին կուսակցութեան ծոցին մէջ երեւան եկած յուզումները՝ փարլամենթական ծանօթ իրադարձութեանց առիթով՝ հանդարտ աշխատանքի մը հնարաւորութեան գրկեցին թէ գինք եւ թէ շրջանները: Նիւթական պատկերը նոյնպէս նախանձելի չէ, որովհետեւ նախատեսուած շուրջ 27,000 դրշ. մուտքին դէմ հազիւ 18,000 դրշ. ստացած է, ինչ որ իր կարգին խանգարած է նորմալ աշխատանքը: Կեդր. կոմիտէն իր տեղեկագրով կը յայտնէր նաեւ որ յառաջիկայ տարեշրջանին արդիւնաւոր գործունէութեան մը հիմը դնելու կանխամտածութեամբ՝ պատրաստած է խումբերու ինքնագարգացման եւ դասախօս-ընկերներու ինքնապատրաստութեան համար ուղեգրիներ, ինչպէս նաեւ քօփերաթիւի կանոնագիր, երեքն ալ հրատարակելի վիճակի մէջ: Կեդր. կոմիտէն տուաւ նաեւ տեղեկութիւններ՝ մարմնամարզական եւ որսորդական աշխատանքներու<sup>4</sup> մասին, մէջ բերելով թուանշաններ:

Ժողովը արտայայտուելով Կեդր. կոմիտէի գործունէութեան շուրջ, արձանագրեց հետեւեալ.—

1) Կեդր. կոմիտէի գործունէութիւնը, տրուած պայմաններուն մէջ բաւարար նկատելով հանդերձ, դիտելի է որ Կեդր. կոմիտէն իր ներքին տարակարծութեանց պատճառով աւելի վիճաբանական ժողովներ ունեցած է՝ քան օրկանական աշխատանքի ժողովներ:

2) Կուսակցական ընդհանուր կեանքին եւ գործերուն ու իր փոխ-յարբերութեանց մէջ՝ Կեդր. կոմիտէն պարտաւոր է կարելի միջոցները գործադրել իր իրաւասութեան սահմանին մէջ իր ուժն ու ինքնութիւնը պահելով:

**Պիւտճէ.— Տեղեկաբերութիւն Հաշուեքննիչի.—**

Հաշուեքննիչ մարմինը քննած եւ վաւերացուցած ըլլալով Կեդր. կոմիտէի հաշիւները, յայտնեց որ մարմինները չեն լրացուցած Շրջ. ժողովէն նախատեսուած պիւտճէն, 27,000-ի տեղ հազիւ 18,000 հայթայթելով, իսկ Կեդր. կոմիտէն իր ծախսերուն վերաբերմամբ մնացած է իրեն տրուած իրաւասութեան սահմանին մէջ. ունեցած է 2,200 դրշ. չնախատեսուած ծախք մը թէեւ, բայց այդ գումարը ելքին համար գծուած քանակին հետ համապատասխան եղած է:

4.- Մարմնամարզական եւ որսորդական աշխատանքը պիտի հասկնալ զինավարժութեան իմաստով:

Հաշուեքննիչ յանձնախումբը ներկայացուց նաեւ յառաջիկայ տարեշրջանի պիւտճէն՝ պէտքն զգալով շուրջ 30,000 դրշ. մուտքի մը անխուսափելիութեանը, որ բաշխած էր շրջ. մարմիններու վրայ: Ելքի բաժնին մէջ նախատեսած էր Հաշուեքննիչը՝ շրջանի փրփականտի-դիւանական ծախքերուն հետ նաեւ՝ կուսակցութեան կեդր. արկղին վճարելի գումարները, որոնք անյետաձգելիօրէն պիտի գործադրուին, ինչպէս նաեւ Ընդհ. ժողովին գնալիք երկու պատգամաւորներու ծախքերու հայթայթման պէտքը:

Այս պիւտճէին հետ՝ Հաշուեքննիչը ժողովին կը բերէր քանի մը յարակից առաջարկներ:

Շրջ. ժողովը կարծիքներու փոխանակութենէ յետոյ՝ իւրացնելով Հաշուեքննիչի ներկայացուցած պիւտճէն իր յարակից առաջարկներով, տուաւ հետեւեալ որոշումները.—

1) Կը պարտադրուի յառաջիկայ Կեդր. կոմիտէն՝ պատրաստ 3,600 դրշ. ի գումարը պարբերաբար վճարել Բիւրոյին՝ նախորդ տարուայ սակի փոխարէն: Նոյնպէս պարբերաբար գանձելով ԶարիՖեանէն՝ 7,000 դրշ. վերադարձնել Բիւրոյին՝ ի հաշիւ նախորդ տարուայ հանգանակութեան մնացորդին: Յառաջիկայ տարեշրջանի համար պիւտճէով նախատեսուած սակը պարբերաբար վճարել Բիւրոյին, ջանալով ելեմուտքին մէջ համաչափութիւն պահպանել:

2) Ընդունելով Հաշուեքննիչի բաշխման ձեւը՝ կը յանձնարարուի Կեդր. կոմիտէին՝ մնալ նոյն սահմաններուն մէջ եւ դուրս չգալ անկէ, ինչպէս նաեւ կը թելադրէ փնտռել հասոյթի նոր աղբիւրներ — երեկոյթ, դաշտահանդէս եւլն.:

3) Կեդր. կոմիտէին վրայ պարտականութիւն կը դրուի իր վայրին մէջ ապրող նիւթապէս գոհացուցիչ պայմաններուն մէջ գտնուող ընկերներու ամսավճարներուն գումարը համապատասխան քանակի մը մէջ դնել՝ անոնց նիւթական պայմաններուն հետ բաղդատմամբ:

4) Միաձայնութեամբ կը ջնջուի շրջիկի դրութիւնը եւ կը պահուի մնայուն քարտուղարի այժմեան ձեւը: Կը պարտաւորուին Կեդր. կոմիտէն եւ ձեռնհաս ընկերները, ըստ յարմարութեան՝ այցելել շրջանի կազմերուն:

**Շրջանակալին գումարումներ.—**

Առաջնորդուելով այն գաղափարէն, որ մէկ կողմէ շրջիկի վերացումը, միւս կողմէ՝ մարմիններու մէջ սեփական նախաձեռնութեան եւ աշխատանքի ոգիի արծարծումը անհրաժեշտ կը դարձնեն այդ պէտքերուն գոհացում տուող համապատասխան օրկաններու ստեղծումը, Շրջ. ժողովը որոշեց.—





1) Բաժնեկ վիշապի շրջանը քանի մը շրջանակներու եւ ընդունիլ Շրջանակային ժողովներու գումարման պարտադիր կարեւորութիւնը՝ տարուան մէջ գէթ մէկ-երկու անգամ:

2) Իւրաքանչիւր շրջանակի տեղական կազմերը կը պահեն փոխադարձ յարաբերութիւններ՝ զուտ շրջանակային խնդիրներու շուրջ:

3) Շրջանակային ժողովները կը գումարուին Կեդր-կոմիտէի հրահրով, անոր մէկ անգամին ներկայութեամբ եւ կանխապատրաստուած որոշ օրակարգի մը համաձայն՝ որ կը վերաբերի շրջանակային խնդիրներու:

4) Շրջանակային բաժանումները պիտի կատարէ Կեդր- կոմիտէն, նայելով աշխարհագրական եւ այլ պայմաններուն:

Ներքին կանոնագրի վերաքննութեան

առաջարկի մասին.

Մէկ-երկու մարմիններու կողմէ առաջարկ եղած էր թէ եւ այս մասին, սակայն ժողովը նկատելով որ փոփոխութեան առաջարկին հետ փոփոխելի կէտերու մասին ոչ մէկ տեսակէտ եւ մանրամասնութիւն յղուած էր. միւս կողմէ՝ կուսակցութեան Ընդհ. ժողովի օրակարգին մէջ դրուած է նաեւ ընդհ. կանոնագրի մշակման հարցը, որուն բովանդակելիք ընդհանուր սկզբունքներուն եւ տրամադրութեանց է որ պէտք է համաձայնեց-ւի շրջանի կանոնագիրը՝ անժամանակ նկատուեցաւ այդ խնդիրով զբաղիլը:

Կարմիր խաչի խումբեր.

Շրջ. ժողովը դիտելով որ տեղ-տեղ սկսած են ծնունդ առնել Կարմիր խաչի խումբեր, որոնց գործունէութիւնն ու մարմիններու հետ ունենալիք փոխ-յարաբե-րութիւնը որոշ ուղղութեան մը ենթարկելու անհրա-ժեշտութիւնը կը ներկայանայ, կարծիքներու փոխանա-կութենէ յետոյ որոշուեցաւ.

1) Կարմիր խաչի խումբերը կը պահուին իբր ուրոյն միութիւններ, անջատ կուսակցութենէն, բայց տեղա-կան դաշնակցական մարմիններու հովանաւորութեան եւ հսկողութեան տակ, որոնց պարտականութիւններէն մէկը պիտի ըլլայ մշտական յարաբերութեան մէջ ըլլալ յիշեալ միութիւններուն հետ: Կարմիր խաչի խումբերու անդամավճարներէ գոյացած հասոյթին 50%-ը կը տրուի տեղական դաշնակցական մարմին, մնացածը եւ բացառիկ հասոյթները Կեդր- կոմիտէի ցուցմունքնե-րուն համաձայն գործածուելով Կարմիր խաչի համար նախատեսուած նպատակներուն:

2) Կեդր- կոմիտէին կը յանձնարարուի այս ընդհա-նուր ուղղութեան սահմանին մէջ պատրաստել ամփոփ կանոնագիր՝ Կարմիր խաչերու համար:

Շրջանի կազմակերպական ուժեղացում.

Տեղական-կազմակերպական աշխատանքներու

կանոնաւորում եւլն.

Այս մասին նախորդ Շրջան. ժողովներէն տրուած որոշումները իւրացնելով եւ անոնց գործադրութիւնը յանձնարարելով՝ Շրջ. ժողովը հետեւեալ հրահանգ-որոշումներուն անչեղ գործադրութիւնը կը պարտադ-րէ.

1) Խմբական ժողովները դարձնել պարտաւորիչ եւ հերթական, տեղական ընդհ. ժողովներու գումարումը յարմարեցնելով տեղական պայմաններուն:

2) Խմբական թէ ընդհ. ժողովներու գումարումէն առաջ մարմինները պարտաւոր են նախապատրաստ-ւելու եւ ըստ այնմ ներկայանալ ժողովներուն, զանոնք ամլութեան չդատապարտելու համար:

3) Շրջ. ժողովին մասնակցող պատգամաւորները գործօն մասնակցութիւն պիտի ունենան տեղական կազմերուն մէջ, անդամակցելով անոնց:

4) Տեղական դաշնակցական ուսուցիչները գործածել փրփականտի, դաստիարակչական աշխատանքներու մէջ՝ առանց վարչական դեր եւ աշխատանք տալու անոնց եւ առանց տեղական մարմիններու մէջ մտցնե-լու զանոնք:

5) Դասախօսութիւններուն տալ խմբական բնոյթ եւ սորվեցնելու ձեւ, առանց ընդհանուր փրփականտի վերածելու այդ աշխատանքը, որ պէտք է կրէ աւելի մը շրջանի աշխատանքի բնոյթ: Համեմատաբար կարող ընկերները պէտք է ցրուել զանազան խումբերու մէջ՝ յատկապէս պարապելու համար այդ խումբերու կու-սակցական-յեղափոխական դաստիարակութեամբը: Այս դասախօսութեանց ընթացքին միշտ պարզէն դէպի բարդը երթալ, տալով նախ մեր յեղափոխական անցեա-լի մասին ծանօթութիւններ, մեր հերոսներու կեանքէն տեղեկութիւններ եւ աստիճանաբար անցնիլ տեսական հարցերուն: Այս աշխատանքին համար ունենալ որոշ ուղեցոյց (Տէս Կեդր- կոմիտէի պատրաստածները):

6) Պարտադիր դարձնել «Դրօշակ» բաժանորդագ-րութիւնը բոլոր խումբերուն համար եւ անոր ընթեր-ցումը՝ ժողովներու մէջ թէ անհատաբար: Ջանալ որ՝ տեղական ամէն կազմ ունենայ իր «Դրօշակ»ի հաւաքա-ծուն: Ունենալ զուտ կուսակցական ամփոփ գրադա-րան՝ ընկերներու կուսակցական մտաւոր դաստիարա-կութեան իբր աղբիւր:

7) Ընկերներու մէջ հրահրել սորվելու ոգին, ինքնօգ-նութեամբ պարապելու օգտակարութեան գաղափարը եւ արմատախիլ ընել այն մտայնութիւնը, որով կ'առաջ-նորդուին յաճախ ընկերներէն շատեր՝ սպասելով ամէն բան իրենցմէ դուրս, առանց իրենց սեփական, շօշափե-լի աշխատանքը բերելու եւ թերութիւնները տեսնելու իրենց իսկ մէջ:

8) Վերցնել ակումբներու մէջէն զանազան կարգի





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

խաղերը եւ ջանալ որ ընկերները հեռու մնան մոլոր-  
թիւններէ: Զուտ մտաւոր աշխատանքին ընկերացնելու  
համար գործնական հաճոյքներն ալ, անպայման ուժ  
տալ մարմնամարզական եւ որսորդական խումբերու  
կազմութեան, սարքել ամառնային կիրակնօրեայ  
պտոյտներ, սարքել երեկոյթ-հանդէսներ, միշտ առաջ-  
նորդուելով կուսակցութեան շինարար ոգիէն եւ նպա-  
տակներէն:

9) Տեսական-դասախօսական աշխատանքներուն մէջ  
գործածել ուսանող ընկերները եւ պարտադիր աշխա-  
տանք յանձնել անոնց:

10) Հարցարաններու միջոցով տալ նիւթեր՝ շարքե-  
րու մտամարզանքին համար եւ պարբերական վիճակա-  
ցոյցներով տեղեկութիւններ քաղել կատարուած աշխա-  
տանքի մասին եւ կազմել ընդհանուր վիճակացոյց որ  
Շրջանակային ժողովին կը ներկայացուի Կեդր. կոմի-  
տէին կողմէ:

11) Անշեղ եւ ճշգրիտ գործադրութիւն ներքին կանո-  
նագրին, կուսակցական աշխատանքներու եւ պարտա-  
կանութեանց անխափան կիրառութիւնն ապահովելու  
համար:

**Բանուորական միութիւններ եւ քօփերաթիւններ.**—  
Շրջ. ժողովը դիտելով որ աշխատաւորական գետնի  
վրայ չըջանին մէջ շօշափելի աշխատանք չէ թափուած,  
իր նկատողութիւններուն հետ, յառաջիկայ տարեշրջա-  
նի գործունէութեան համար կը յանձնարարէ նախորդ  
Շրջ. ժողովի որոշումը ուղեգրի ընդունիլ:— այն է՝

1) Ստեղծել տեղական մարմիններու կողքին առան-  
ձին յանձնախումբեր՝ որոնց գործն ըլլայ միմիայն տըն-  
տեսական կազմակերպութեան հետապնդումը:

2) Նկատի ունենալով տեղական պայմանները՝  
անոնց համեմատ աշխատիլ որ բանուորական-արհես-  
տակցական միութիւնները ունենան անկուսակցական,  
խսկ քօփերաթիւնները՝ կուսակցական (կուսակցական՝  
գործին դեկը դաշնակցական ընկերներու ձեռքը պահե-  
լու եւ քայքայումի վտանգէն ազատելու առումով),  
միշտ աչքէ չվրիպեցնելով որ կուսակցութիւնը քանի ըն-  
դարձակէ իր տնտեսական-աշխատաւորական միութ-  
եանց կազմակերպումը, քանի ամրացնէ իր կուսակ-  
ցական կապերը նոյն միութեանց հետ, այնքան աւելի  
ընդլայնած կ'ըլլայ իր քաղաքական գործունէութեան  
խարխիսն ալ եւ այնքան աւելի ուժեղ կ'ըլլայ իր քաղա-  
քական գործունէութեան յենակէտը:

**Աշակերտութեան եւ ուսանողութեան հանդէպ.**—  
Շրջ. ժողովը բաժնելով եւ իւրացնելով վերջնութեւ Շրջ.  
ժողովի որոշումը՝ զայն անգամ մըն ալ իր շարքերուն,  
մասնաւորապէս մարմիններուն ուշադրութեան կը

յանձնէ, դիտելով որ այդ մասին շեղումներ տեղի կ'ու-  
նենան:

Մեկնելով կուսակցութեան աշխարհահայեացքէն՝ որ  
կը թելադրէ կրթական գործը հեռու պահել դասակար-  
գային շահագործումներէ, կ'որոշէ:—

1) Պաշտպանելով ապագասակարգային տեսակէտը  
կրթական գործին մէջ, օրինական ամէն միջոցներով  
պայքարիլ աղայական յետադիմական ազդեցութեանց եւ  
ոտնձգութեանց դէմ, վարժարաններէն ներս թոյլ չտա-  
լով որ կրթական գործը ծառայեցուի անոր շահերուն:

2) Վարժարաններէն ներս — ըլլան անոնք նախակր-  
թարաններ թէ բարձրագոյն վարժարաններ — կուսակ-  
ցական ոչ մէկ կազմ եւ փրոփականտ առաջացնել:

3) Եօթնամեայ իտատիներու<sup>5</sup> բարձր կարգերու աշա-  
կերտները առնել միայն շարքերուն մէջ, պարտադիր չը-  
նելով անոնց վարչական գործօն դեր ու աշխատանք:

4) Զարկ տալ խնդրոյ առարկայ կարգերուն ինքնա-  
զարգացման՝ տեսական-գիտական հարցերու շուրջ  
դասախօսութիւններ սարքելով:

5) Յանձնարարել դաշնակցական բոլոր ուսուցիչնե-  
րուն՝ ըլլալ իրենց պարտականութեան մարդը, հետեւիլ  
եւ օգտուիլ մանկավարժական գիտական աշխարհի  
առաջխաղացութիւններէն:

**Առեւտրական պոյքթը չըջանին մէջ<sup>6</sup>.**— Պոյքթը ար-  
դիւնք տնտեսական պատճառներու, հակառակ իր տարե-  
րային բնաւորութեան, թէեւ կը ծառայեցուի իբր ազ-  
դակ՝ նաեւ թուրք ազգայնութեան զարթնումի եւ ամրա-  
պնդումի գաղափարին հետապնդութեան ի նպաստ,  
բայց ցորչափ այդ շարժումը կը մնայ տեսական եւ բարո-  
յական գետնի վրայ եւ օրինաւորութեան մէջ, մեզի կ'իյ-  
նայ տարածել այն գաղափարը, որ համագործակցու-  
թեամբ հակազդող միջոցներ ձեռք առնեն նաեւ այն  
տարրերը՝ որոնց դէմ կ'ուղղուի այդ շարժումը: Բողոքել  
այն բոլոր երեւոյթներուն դէմ, որոնք օրինաւորութեան  
ճամբէն շեղելով՝ բռնութեանց դուռ կը բանան:

**Դատական խնդիր.**— Շրջ. ժողովը իր օրակարգին  
մէջ ունէր դատական խնդիրներ, որոնց մէջ նաեւ շրջի-  
կի եւ մէկ քանի ընկերներու հետ կապուած խնդիր մը:  
Այս մասին ժողովը կատարելով հարկ եղած քննու-  
թիւնը, տուաւ իր որոշումը, որ կը հաղորդուի իր ատե-  
նին մարմիններուն եւ պատկանեալ տեղերը:

**Կեդր. կոմիտէի ընտրութիւն.**— Շրջ. ժողովը վեր-  
ջացնելով օրակարգի նիւթ կազմող բոլոր խնդիրները՝  
գաղտնի քուէարկութեամբ ընտրեց նոր Կեդր. կոմի-  
տէն — բաղկացած եօթ ընկերներէ — եւ օրինաւորապէս  
փակուած յայտարարեց նիստերը:

5.- Իտատի — պետական միջնակարգ վարժարան:  
6.- Խօսքը բուրքերու կողմէ 1913-14 թուականներուն հոշակ-  
ւած պոյքթի մասին է ընդդէմ յունական եւ հայկական հաստա-  
տութիւններու եւ արտադրութիւններու:

**Ընկերական բարեկենդան  
Հ.Յ.Դ. ՎԻՇԱՊԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ**



Փաստ. 881-34

4.- ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Հ.Յ.Դ. ՎԻՊԱՇԻ Զ<sup>Գ</sup> ՇԲԶ. ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԷ Ը. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԻԹԹԻՀԱՏ – ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ – ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ

Շրջանային ժողովը լսելով կուսակցութեան ընդհանուր քաղաքականութեան եւ բարենորոգումներու հարցի շուրջ եղած գեկուցումները եւ լայնօրէն արտայայտուելով այդ մասին, կը գտնէ,

1) Որ մեկնելով կուսակցութեան հիմնական ծրագրէն ու աշխարհահայեացքէն եւ զայն անշեղ հետապնդելու կուսակցական պարտականութենէն, ինչպէս նաեւ Սահմանադրական Թուրքիոյ տուեալ պայմաններէն – ազգային, տնտեսական, քաղաքական – անհրաժեշտութիւն մըն է ունենալ Շրջանային բարեկարգութեանց համար յատուկ կուսակցական ծրագիր, իբրեւ նախագիծ կուսակցութեան քաղաքական ծրագրին առաջնորդող առաջին հանգրուան:

2) Աչքի առջեւ ունենալով Դաշնակցութեան եւ Իթիհատի ցարդ ունեցած յարաբերութեանց աննորմալ եւ մեր կուսակցութեան էութեան ու ոգիին անհամապատասխան բնոյթը, ինչպէս նաեւ՝ Շրիտասարդ-թուրքերու – յանձին Իթիհատի – քաղաքական հասունութեան աստիճաններն ու ձգտումները, մանր ազգութեանց իրաւունքներու վերաբերմամբ անոր համոզումներն ու ոգին, ըմբռնելով նաեւ՝ սահմանադրական կարգերու իրականացման տեսակէտով թուրք կամ մահմետական տարրերու մէջ Իթիհատի վերապահւած -----<sup>7</sup> վրայ հիմնուած մեր կուսակցական աշխարհահայեացքի ժխտումը կ'ըլլար յուսալ որ առանց մեր սեփական ուժը նժարի մէջ դրած ըլլալով՝ դիւանագիտութիւնը ընդունակ կ'ըլլայ իր միջամտութեամբ ստեղծել Թուրքիոյ մէջ մեր պահանջներուն ոեւէ չափով բաւարարութիւն տուող դրութիւն, երբ նոյն այդ դիւանագիտութիւնը գլխաւոր նպատակ ունի իր սեփական շահերու հետապնդումը, որոնց ծնունդն է 1914 Յունուարի համաձայնագիրը<sup>8</sup>, անբաւարար հայ ժողովուրդի ազգային-կուլտուրական եւ տնտեսական զանազան պահանջներու ապահովման տեսակէտէն:

Կ'որոշէ. –

ա) Յառաջիկայ Ընդհ. ժողովի քննութեան եւ վաւերացման ենթարկուած տեսնել բիւրոյական ընկերներէն պատրաստուած Շրջանային բարենորոգութեանց այն

ծրագիրը՝ որ կուսակցութեան սանկցիան չստացաւ՝ տիրող անխուսափելի պայմաններու բերմունքով, եւ անոր բովանդակութիւնը դարձնել կուսակցական շարքերու սեփականութիւն, փրփականտի առարկայ եւ առանցքը՝ յառաջիկայ գործունէութեան:

բ) Գործադրելով նախորդ Ընդհ. ժողովի որոշումը – Իթիհատի եւ Դաշնակցութեան յարաբերութեանց պատմութեան հրապարակումը պաշտօնապէս – Իթիհատ-կառավարութեան հանդէպ մնալ անվերապահ ընդդիմադիրի դերին մէջ, ընդունելով որ ընդդիմադիրի սահմանները չեն արգիլեր մասնակի յարաբերութեանց պահպանումը, պայմանով որ ընկերները իրաւունք չհամարեն նախընթացներու նման պաշտօնական եւ մասնաւոր յարաբերութիւնները տանիլ այնպիսի ձեւով մը որ համաձայնութեան կամ համագործակցութեան պատրանքն ստեղծէ:

գ) Ծանօթ համաձայնագրին<sup>8</sup> եւ դիւանագիտութեան դերին հանդէպ մնալ վերապահ եւ սպասողական վերաբերմունքի մէջ, եւ զգուշացնել հայ ժողովուրդը արտաքին միջամտութեանց վրայ յոյսեր դնելէ, ցոյց տալով որ իրաւունքի յարգանքը ուժերու փոխ-յարաբերութեան արդիւնքը ըլլալով՝ հայ ժողովուրդն եւս այդ աշխատանքին ու ճամբուն պէտք է հետեւի, ինչպէս ապրիլ բաղձացող ու ազատագրուող ազգերու օրինակը ցոյց կու տայ:

Ուշադրութեան առնելով նաեւ բարենորոգմանց Պատրիարքարանի ծրագիրը, Շրջ. ժողովը գտաւ որ, իրերու բերմունքով – պուրժուա եւ հոգեւորական տարրի անպատրաստութիւն – այդ ծրագիրը եւս պատրաստուած է Դաշնակցութեան ծրագրին վրայ եւ ընկերներու կողմէ, որով կը մնայ օգտագործել այս իրողութիւնը հասարակաց խաւերու մէջ, վեր առնելով այն պարագան սակայն, որ Պատրիարքարանը այդ աշխատութիւնը իւրացուցեր է այն ատեն՝ երբ արտաքին երեւոյթները յուսալից եւ հրապուրիչ էին. այն օրէն որ դիւանագիտութեան խաբուսիկ յոյսերը սկսան չքանալ՝

7.- Տպագիր օրինակէն մէկ տող կը պակսի:  
8.- Նկատի ունի հայկ. բարեկարգումներու շուրջ Յունուար 26ին կնքուած ռուսերուրք համաձայնագիրը:





### ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Պատրիարքարանի ղեկանազէտները ղեմեցին նաճանջներու:

Շրջ. ժողովը կ'առաջարկէ նաեւ Ընդհ. ժողովին որ թիւրիմացութեանց տեղի չտրուելու համար կուսակցական ընդհանուր խնդիրներու մասին կիսապաշտօնական օրգանները թեր ու դէմ չարտայայտուին՝ ցորչափ կուսակցութիւնը իր Ընդհանուր ժողովով չէ ճշդած իր դիրքը: Եթէ անհատ ընկերներու արտայայտուելուն պէտք տեսնուի՝ այդ պարագային տալ անոր հրապարակային լուսաբանական-վիճաբանութեան ձեւ, թեր ու դէմ յօդուածները հիւրընկալող օրգանին կողմէ կանխաւ ճշդուելով անոնց անհատական հանգամանքը:

Նոյնպէս Շրջ. ժողովը կը փափաքի որ ղեկավար ընկերները նուազ ուժ սպառեն ղեկանազիտական աշխատանքներու շուրջ, առաւելապէս իրենց ուշադրութիւնը կեդրոնացնելով կուսակցական ներքին կեանքին ու պէտքերուն վրայ:

#### ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆՑ ՀԱՆԴԵՊ

Աչքի առջեւ ունենալով այն հանգամանքը՝

1) Որ թէեւ կուսակցութեան Ընդհ. ժողովները բացասական վերաբերմունք ցոյց տուած են հանդէպ ազգային-կուլտուրական-վարչական մարմինները, բայց անհատ ընկերներու մասնակցութիւնը ձգուելով ազատ, շեղումներու տեղի տրուած է, իր կարգին ազդելով կուսակցութեան ընդհանուր ուղղութեան եւ դիմագծին վրայ:

2) Նկատելով որ ազգային-վարչական մարմիններուն մասնակցող ընկերներն ըլլալով գլխաւորաբար կուսակցութեան մէջ դիրք ու պատասխանատու դեր ստանձնող ընկերներ՝ անոնց մասնակցութիւնը մէկ կողմէ հոմանիշ կը դառնայ կուսակցութեան մասնակցութեան, միւս կողմէ կը վնասէ ընդհանուր կուսակցական աշխատանքին, վնասելով նաեւ շարքերու կուսակցական գիտակցութեան:

3) Նկատելով որ ինչպէս պետական պատասխանատու պաշտօններու, նոյնպէս եւ ազգային վարչական պատասխանատու մարմիններու անդամակցութիւնը ուրիշ նշանակութիւն չի կրնար ունենալ՝ բայց եթէ համակերպումն ու գործակցութիւնը տիրող պահպանողական եւ կիսաազատական հայեացքներուն ու տարրերուն հետ, ինչպէս որ տարիներու փորձը ցոյց տուաւ:

4) Նկատելով որ մի միայն ժողովրդական ընտրութեամբ կազմուած մարմինները եւ մանաւանդ օրէնսդրական կամ խորհրդարանական ժողովներն են — ինչպէս կեդրոնական եւ գաւառային ընդհանուր ժողովները — ուր կուսակցութեան կամ կուսակցական ընտրելիներու մասնակցութիւնը կրնայ նպատակաշարմար ըլլալ, պայմանով որ կանխորոշուած հարցերու շուրջ

փրփանկանտ մղուի փլաթֆորմով, ինչ որ իր կարգին պիտի նպաստէ կուսակցական շարքերու գիտակցութեան եւ կուսակցութեան դիրքի ուժեղացման ու անոր աշխարհահայեացքի տարածման:

Կ'առաջարկուի-

ա) Արգելել կուսակցական ընկերներու մասնակցութիւնը ազգային-վարչական մարմիններու մէջ եւ անպայման կարգապահական պատժի ենթարկել կուսակցական որոշումներու դէմ շեղումներ կատարող ընկերները:

բ) Մշակելով ազգային-կուլտուրական-տնտեսական կեանքին համար հիմնական վերանորոգչական ծրագիր՝ ընդունիլ կուսակցութեան մասնակցութիւնը միմիայն ժողովրդական ընտրութեամբ կատարուող մարմիններուն մէջ, պայմանով որ այդ մասնակցութիւնն ու փրփանկանտը ղեկավարուի փլաթֆորմի հիմունքներով ու թեկնածուները նշանակուին տեղական կամ շրջանակային մարմիններէն:

գ) Իւրաքանչիւր ժողովի մէջ գտնուող դաշնակցական ընկերներէն կազմել դաշնակցական հատուած, որոշ կարգապահութեամբ եւ պատասխանատուութեամբ՝ կուսակցութեան համապատասխան շրջանային կամ այլ մարմիններու առջեւ:

#### ՄԵՐ ԴԻՐՔԸ ՀԱՆԴԵՊ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

Շրջ. ժողովը առանց ժխտելու ազգային իրաւունքներու պաշտպանութեան մէջ կուսակցութեան վիճակուած հրամայական պարտականութիւնը եւ այդ առթիւ Պատրիարքարանին ու ազգային հիմնարկութեանց բերելիք գործօն աշակցութիւնը, բայց ընդունելով որ Պատրիարքարանի կարծեցեալ քաղաքական դերը հետեւանք է եղած քաղաքական իրական ուժերու եւ քաղաքական կուսակցութեանց չգոյութեան անցեալի մէջ, մինչդեռ իրականին մէջ Պատրիարքարանը իբրեւ կուլտուրական-կրօնական հիմնարկութիւն իր էութեամբն ու բաղադրութեամբը չի կրնար ներկայացնել ընդհանուր եւ հետեւաբար հայ ժողովուրդի քաղաքական իրաւունքներուն ու պահանջներուն պաշտպան մնալ:

Շեշտելով այն բացասական դիրքը՝ որ ունեցած է Պատրիարքարանը հայ ժողովուրդի ազգային կուլտուրական եւ տնտեսական պահանջները բովանդակող քաղաքական իրաւանց պաշտպանի դերովը, ինչպէս նաեւ այն՝ որ մեր կուսակցութիւնը նախասահմանադրական շրջանին ժխտած եւ հակազդած է Պատրիարքարանի այդ քաղաքական դերի յաւակնութիւններուն, նոյն ուղղութեան հետեւելով նաեւ սահմանադրութեան առաջին տարիներուն իր գործունէութեան ընթացքին:

Դիտելով որ վերջին տարիներուն մէջ պատրիարքարանի հանդէպ կուսակցութեան ղեկավար շրջաններու ունեցած դիրքն ու պահած յարաբերութեան եղանակը,



մէկ կողմէ անհամապատասխան մեր կուսակցութեան ըմբռնումներուն, միւս կողմէ՝ ունի նաեւ իր բացասական ազդեցութիւնը շարքերու դաստիարակութեան եւ կուսակցութեան իրական ուժին եւ ազդեցութեան վրայ. Կ'առաջարկուի.

Մնալ կուսակցութեան աւանդական ուղղութեան մէջ հանդէպ Պատրիարքարանի քաղաքական հետամտութիւններուն եւ յարաբերութիւնները տանիլ նոյն հաստատութեան հետ պաշտօնական գետնի վրայ, կուսակցութեան ուղղութիւնն ու դիրքը միանգամայն բարձր պահելու համար ամէն կարգի թիւրիմացութիւններէ:

**ԳՐԱԻՈՐ ԵՒ ԲԵՐԱՆԱՑԻ ՓՐՈՓԱԿԱՆՏ**

Շրջանային ժողովը ուշադրութեան առնելով դաշնակցական մամուլը իր դերին եւ ներկայացուցած պայմաններուն մէջ, եւ ընդունելով որ կուսակցական մամուլը պէտք է հարազատ եւ հետեւողական արտայայտիչն ըլլայ կուսակցութեան սկզբունքներուն եւ կարիքներուն, ունենալով բարձր իտէյալ, կուսակցական աշխարհայեացքէն բխող քաղաքական, տնտեսական եւ կուլտուրական ծրագիր՝ համապատասխան մտաւոր պաշար ներկայացնող արտայայտիչներով:

Ընդունելով նաեւ այն՝ որ հայ ազգը եւ անոր հետ նաեւ Դաշնակցութիւնը բաժնուած ըլլալով երեք պետութեանց սահմաններուն մէջ՝ ունի ազգային թէրթորիական եւ գաղութային ճիւղեր, առանձնայատուկ պայմաններով ու պէտքերով,

Կ'առաջարկուի.

1) Վերոյիշեալ բաժանմունքներուն սահմանին մէջ հրատարակուող կիսապաշտօնական կամ կեդրոնական օրգաններուն տալ համապատասխան բովանդակութիւն, ուր իրենց անխախտ տեղն ունենան – ա) Իւրաքանչիւր պետութեան շրջանի քաղաքական, տնտեսական եւ կուլտուրական հարցերը՝ որոնցմով կը հետաքրքրուի կուսակցութիւնը եւ այդ հարցերու հանդէպ կուսակցութեան վերաբերմունքն ու պահանջները. բ) կուսակցական ընդհանուր հարցեր՝ տեւական ուսումնասիրութեամբ, քննադատութեամբ եւ տեսութեամբ. գ) իւրաքանչիւր պետութեան հատուածի կեանքէն բխող հարցեր, երեւոյթներ, քննադատութիւններ եւ տեսութիւններ:

2) «Դրօշակ»ը իբր կուսակցութեան կեդրոնական օրգան՝ բոլոր հատուածներու կուսակցական ազգային, քաղաքական, տնտեսական եւ այլ պահանջներուն ու պէտքերուն ընդհանուր արտայայտիչը կ'ըլլայ, ուրոյն բաժիններով, խնամուած եւ ճոխ բովանդակութեամբ ու կանոնաւոր պարբերականի մը անխափան հրատարակութեամբ:

3) Թէ կուսակցութեան կեդրոնական օրգանին եւ թէ

հատուածներու կեդրոնական օրգաններուն խմբագրական կազմը դնել անկախ եւ ուղղակի պատասխանատուութեան տակ, առանց վարչական մարմիններու հետ կապուելու, ընտրելով ի հարկին այդ խմբագրական կազմերը կամ Ընդհանուր ժողովէն եւ կամ Ռայոնական ժողովներէն:

4) Բոլոր թերթերու խմբագրական կազմը յանձնել կուսակցական աշխարհայեացքին ծանօթ եւ ընկերվարական մտածողութեան տէր ընկերներու, եւ պարտադիր դարձնել ընկերվարական գաղափարի փրփականտը՝ հետեւողական եւ մնայուն բաժիններով:

5) Ժխտելով օգտակարութիւնը օտար լեզուով օրգաններուն ներկայիս, եւ գտնելով նիւթական աւելորդ ծանրաբեռնութիւն մը անոնց գոյութիւնը՝ վերջ տալ այդ հրատարակութեանց եւ կամ կուսակցութիւնը ազատել անոնց նիւթական եւ բարոյական պատասխանատուութենէն:

6) Բերանացի փրփականտին հիմնական աղբիւրն ու անոր արդիւնաւորումը կախուած ըլլալով գրաւոր փրփականտին կանոնաւորումէն, առաջնորդուել նոյն ուղղութեամբ:

**ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ – ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ**

1) Կանոնագրին մէջ ռեւէ հիմնական փոփոխութիւն չմտցնել, ոչ ալ վերջնական կանոնագիր պատրաստել՝ առանց մտցուելիք փոփոխութիւններն ու յաւելումները կուսակցութեան հիմնական սկզբունքներուն հետ հաշտեցնելու եւ առանց կուսակցութեան շրջանային ժողովներուն քննութեան ենթարկելու այդ փոփոխութիւնները: Նպատակայարմար է որ Ընդհանուր ժողովը մշակէ կանոնագիր-նախագիծ եւ զայն նախ ենթարկէ շարքերու նկատառման, ուսումնասիրութեան եւ եզրակացութեանցը, որպէսզի յաջորդ Ընդհ. ժողովը հնարաւորութիւն ունենայ վերջնական սանկցիա<sup>9</sup> տալու անոր:

2) Ձեռք բերուողներուն վերագրուած եւ կուսակցութեան ապակեդրոնացման սկզբունքներուն հակասող բոլոր ֆոնկսիոններն ու իրաւասութիւնները, եւ որոշ ու յստակ կերպով սահմանաւորել Բիւրոն իր խողովակի իսկական դերին մէջ:

3) Անուններով չզբաղիլ, ինչպէս է «Պատասխանատու մարմին»ը, այլ գլխաւորապէս ուշադրութիւն դարձնել կազմակերպութեան, բոլոր կեդրոնական կոմիտէներու եւ յատկապէս երկրի կեդրոնական կոմիտէներու կազմերուն ուժեղացման, որոնց մէջ անպայման մտնելու են կուսակցութեան գործօն եւ նուիրուած ընկերները:

9.- Սանկցիա – վաւերացում, գործադրութեան ոյժ:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

4) Զննել կեղրոնական կոմիտեներու շրջաններուն մէջ յատուկ գործիչներ ունենալու ձեւը եւ կեղրոնական կոմիտեներու ինչպէս նաեւ տեղական մարմիններուն կազմը նոր հիմունքներու վրայ դնելով՝ այդ մարմիններու կազմը վերածել քաղաքակիրթ երկիրներուն մէջ ընդունուած կազմական սխառեմին եւ մտցնել անոնց մէջ սէքրէթար-ընկերներ<sup>10</sup>, որոնք կը ստանձնեն ամբողջ պատասխանատուութիւնը վարչական-կազմակերպական գործերուն՝ իրենց շրջանին մէջ: Տաքտիկական հիմնական խնդիրներու որոշման համար, նայելով առաջադրուած հարցի բնոյթին եւ կարեւորութեան, իրաւասու հեղինակութիւններ ընդունիլ ենթակոմիտէական, կոմիտէական եւ կեղրոնական կոմիտէական ռազմական սէքրէթարներէն ու ներկայացուցիչներէն բաղկացած Շրջանակային ու Շրջանային ժողովները, որոնք պարտաւորուած կ'ըլլան յամենայնդէպս դուրս չգալ Ընդհ. ժողովներու որոշումներէն (5 ձայնի մեծամասնութեամբ):

Այս մասին եղաւ նաեւ հետեւեալ առաջարկը, որ ստացաւ 3 ձայն.

Առաջարկը ընդունիլ իրբեւ ծրագիր՝ կազմակերպութեան հիմնական վերակազմութեան ձգտելու համար աստիճանաբար, եւ փորձել այդ ձեւը համեմատաբար նիւթապէս ապահով շրջաններու մէջ: Մինչ այդ՝ ընդունիլ կեղր. կոմիտէներու մէջ մէկ ազատ ընկեր ունենալու անհրաժեշտութիւնը, եւ ստիպել շրջանակային կազմերը՝ որ պարբերաբար շրջիկներ հանեն իրենց մօտակայ կազմերուն, տրամադրելով անոնց որոշ պիւտձէ տեղական հասոյթի սակէն:

5) Միմիայն ընդհանուր տաքտիքական հարցերու նկատառման համար՝ բացառիկ պարագաներու մէջ ընդունիլ Դաշնակց. Խորհուրդի կազմը, գումարուած ռազմական շրջաններու ներկայացուցիչներէն, տրուած որոշումները յաղորդ Ընդհանուր ժողովի քննութեան եւ վաւերացման ենթարկելու անխախտ որոշումով:

6) Զուտ Ռազմական շրջաններու յատուկ տաքտիկական հարցերու համար իրաւասու ընդունիլ Ռազմական ժողովները, իսկ Ռազմական ժողով գումարել անհնար եղած պարագային՝ գումարել Ռազմական խորհուրդ, նոյն ռազմի կեղր. կոմիտէներու ներկայացուցիչներէն բաղկացած՝ տրուած որոշումը Ռազմական ժողովին քննութեան եւ վաւերացման ենթարկելու անխախտ որոշումով: Ընդհանուր ժողովին կը ձգուի բաժնել ռազմները:

7) Միանգամ ընդմիշտ հրաժարիլ յեղափոխական կազմակերպութեան ըմբռնումին անհամապատասխան դատական մարմիններու կազմութեան գաղափարէն: Շրջանակային, Շրջանային եւ Ռազմական ժողովները կ'ըլլան իրաւասու՝ իրենց ներկայացուած ամբաստանութեանց մասին վճիռ կայացնելու համար: Իւրաքանչիւր

չիւր ժողովի վճիռ կ'ենթարկուի իրեն անմիջապէս յաղորդող Բարձր ժողովի վճիռին՝ որ վերջնական կ'ըլլայ: Ընդհ. ժողովի վերաքննութեան կ'ենթարկուին միայն Ռազմական ժողովներէն տրուած վճիռները եւ ա՛յն մարմիններու կամ ընկերներու նկատմամբ եղած գանգատներն ու ամբաստանութիւնները՝ որոնք Ընդհանուր ժողովներէն ընտրուելով՝ ենթակայ չեն Ռազմական ժողովներու իրաւասութեան: Բոլոր ժողովներու մէջ ալ կ'ընտրուի դատական խնդիրները ուսումնասիրելու պարտականութիւն ունեցող յանձնախումբ, որուն եզրակացութիւնը նկատի առնուելով կը տրուի որոշում եւ կամ վերաքննութեան առաջարկ կ'ըլլայ: Ընկերներու մէջ պատահած տեղական խնդիրներու քննութեան եւ որոշման համար անխախտ կը պահուի Ընկերական ատեանի սկզբունքը:

Շրջ. ժողովը այս առիթով առանձնապէս ուշադրութեան առնելով նախորդ Ընդհ. ժողովի կողմէ դատական խնդիրներու մասին տրուած որոշման հետեւեալ կէտը. — «Երբ ո՛րեւէ դատ երկու տարուան ընթացքին մէջ լուծում չստանայ, ինքնին դադրած եւ գոցուած կը համարուի» — կը գտնէ լիովին անհամապատասխան կազմակերպութեան հայեացքներուն եւ հակառակ դաշնակցական խղճին եւ կ'առաջարկէ ջնջել զայն:

8) Օրինականացման վերաբերեալ արդէն վաւերացուած կանոնագիր մը գոյութիւն ունենալով՝ աւելորդ կը նկատուի այդ խնդիրը բերել սեղանի վրայ եւ նոր որոշում անցնել: Պատգամաւորը նկատի կ'ունենայ մեր շրջանի նախորդ Շրջ. ժողովի որոշումները այս մասին: Բոլոր այն ընկերներուն՝ որոնք ի պաշտօնէ ճանչցուած եւ փարլամենթական թեկնածու ներկայացուած են, իրաւունք չտալ մասնակցելու կուսակցութեան աքթիւ եւ պատասխանատու մարմիններուն:

**ՕՍՄ. ՓԱՐԼԱՄէՆԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԻՐՔԸ**

Շրջ. ժողովը լայն քննադատութեան ենթարկելով վերջին փարլամենթական ընտրութեանց առիթով կուսակցութեան մէջ եւ շուրջը տեղի ունեցած անբաղձալի իրադարձութիւնները, կազմեց ընդարձակ բանաձեւ, հիմնաւորուած պատճառաբանութիւններով եւ պատասխանատուութեանց վերաբերմամբ որոշ առաջարկներով, յանձնելով զայն Ընդհ. ժողովի նկատառութեան:

**ՓԱՐԼԱՄէՆԹԻՆ Մէջ ՊԱՇՏՊԱՆՈՒԵԼԻՔ ՀԱՐՑԵՐ**

Կուսակցութիւնը ի պաշտօնէ մասնակցած չըլլալով ընտրութիւններուն եւ չունենալով ներկայացուցիչներ

10.- Մէքրէքար՝ քարտուղար:







փարլամենտին մէջ՝ չի կրնար այլեւս հարցեր պաշտպանել գոյութիւն ունեցող այդ պայմաններուն մէջ:

**ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ**

Նկատի ունենալով որ կուսակցութեան յենակէտը երող խումբերէն՝ արհեստակցական միութեան խումբերու կազմութեան բնաւ ուշադրութիւն չէ դարձուած, որով Թուրքիոյ մէջ կուսակցութիւնը ո՛չ միայն աշխատաւորական կեանք ու գործունէութիւն չէ ունեցած, այլ եւ աշխատաւորական կեանքի ուսումնասիրութիւն իսկ չէ եղած:

Աշխատաւորական կեանք ըսելով առանց գործարանական բանուորութիւնը ըմբռնելու եւրոպական մտքով, եւ ընդունելով որ Թուրքիոյ մէջ բացի տեղ տեղ արդէն գոյութիւն ունեցող գործարանական շրջաններէն՝ անիկա գերազանցապէս այն երկիրն է, ուր սեփականագրկութիւնն ու աշխատանքի շահագործումը, ինչպէս նաեւ աւատական տիրապետութիւնը իրենց նախնիները կը գործեն եւ հետեւաբար գերազանցապէս հող կայ երկրի տնտեսական պայմաններու թելադրած չափով եւ ուղղութեամբ աշխատաւորական գործ եւ պայքար ստեղծելու համար:

Կ'առաջարկենք.

ա) Գիւղացիութեան համար ընդունիլ «հողը հողագործին» նշանաբանը:

բ) Անպայման նուիրուիլ գիւղացիական եւ արհեստակցական խումբերու կազմութեանը:

գ) Գիւղացիական եւ արհեստակցական խումբերու մէջ ստեղծել արդիւնաբերական, համագործակցական (քօսպերաթիւ միութիւններ):

դ) Ստեղծել սպառողական համագործակցական միութիւններ:

ե) Պարտադրել իւրաքանչիւր շրջանակի եւ շրջանի մարմինները կամ գործիչ ընկերները՝ որ անպայման իւրաքանչիւրը իր շրջանին մէջ լուրջ ուսումնասիրութեամբ՝ շրջանակային, շրջանային եւ ռայոնական ժողովներու քննութեանն ու որոշման ենթարկեն արդիւնաբերական եւ սպառողական միութեանց նիւթ կազմելիք ճիւղերը:

**ՀԱՅ ԵՒ ՔԻՒՐՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Աչքի առջեւ ունենալով քիւրտ ժողովուրդին — իբր հարեւան եւ բնակակից Հայաստանի հայ ազգաբնակչութեան — իմացական, ֆիզիքական, ընկերային եւ թուական-տնտեսական պայմանները.

Նկատի առնելով որ Բաղէշի վերջին դէպքերը իրենց ծնունդ տուող ներքին եւ արտաքին ազդակներուն հետ՝ այնուամենայնիւ քիւրտ ժողովուրդին մէջ ազգային

գաղափարի զարթոնումի սաղմը կ'ենթադրեն, որ տակաւ պիտի զարգանայ.

Ընդունելով նաեւ այն որ՝ քիւրտ աշխատաւոր մասսան ներկայիս կը մղուի իր իսկական շահերուն տրամագծօրէն հակառակ երող աւատապետներէ եւ ցեղապետներէ:

Շրջ. ժողովը կ'որոշէ.

Ջանալով նպաստել քիւրտ աշխատաւոր դասակարգի մտաւոր եւ ազգային գիտակցութեան զարթոնումին հնարաւոր բոլոր միջոցներով, միաժամանակ մնալ հակահայկական զանգուածային հաւանական դէպքերու եւ յարձակումներու համար միշտ նախազգուշ:

**ՀԱՅ ՔԱՂ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՀԱՆԴԵՊ**

Աչքի առջեւ ունենալով հայկական իրականութեան հետ նաեւ այն պատկերը զոր կը ներկայացնեն գոյութիւն ունեցող հայ-քաղաքական կազմերը կամ խմբակցութիւնները՝ կազմակերպական, սկզբունքային եւ ուղղութեան կրկին տեսակէտներով.

Մեկնելով միաժամանակ համերաշխութեան գաղափարէն՝ որ մեր կուսակցութեան ընդհանուր ոգիէն ու գործունէութենէն իսկ կը բխի.

Նկատի ունենալով նաեւ այն՝ որ տարիներէ ի վեր համերաշխական փորձերը միշտ վիժած են քաղաքական անհասկացողութեանց, անձնական տրամադրութիւններու եւ գլխաւորապէս աքթիւ գործունէութեան մը վրայ հիմնուած չըլլալուն համար.

Շրջ. ժողովը կ'որոշէ.

Հետապնդելով աքթիւ-գործունէութեան մը շուրջ համաձայնութեան գաղափարը՝ մղուած համերաշխութիւնը գործի վրայ հիմնելու առաջադրութենէն, մինչ այդ՝ յանձնարարել վստահութիւն ներշնչող կազմերուն հետ տեղական պայմաններու համաձայն համաձայնութիւններու իրականացումը որոշ գործերու եւ աշխատանքներու շուրջ, առանց տեղական կուսակցական դիմագծին եւ ուժերու փոխ-յարաբերութեան հիմունքը խախտելու:

**ՁԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ**

Գիտակցելով որ զինուորագրութիւնը այլեւս անխուսափելի դարձած պարտականութիւն մը ըլլալով է՝ նաեւ անխուսափելի պէտք մը հայ ժողովուրդը շրջապատող ներկայ պայմաններուն մէջ — քաղաքացիական պարտականութեան, իրաւահաւասարութեան, ստրկական կեանքի թօթափման, միջցեղային յարաբերութեանց լաւացման հետ նաեւ ազգային-ֆիզիքական ուժի կազդուումն մէկէ աւելի տեսակէտներով.

Նկատի առնելով նաեւ այն պարագան՝ որ զինուորական օրէնքին մէջ գոյութիւն ունեցող կարգ մը պայ-



**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

մաններու թեթեւացման համար աշխատելով հանդերձ՝ հայ երիտասարդութիւնը պարտաւորութեան տակ կը գտնուի չխուսափելի զինուորագրութենէ:

**ՇՐՋ. Ժողովը կ'որոշէ.**

Մինչեւ կուսակցութեան պաշտպանած ժողովրդային միլիտի սիստեմին ընդունուելն ու իրագործուելը՝ կուսակցութիւնը պարտաւոր է բերանացի թէ գրաւոր փրօփականտ մղել ի նպաստ զինուորագրութեան եւ գործ դնել իր ազդեցութիւնը՝ որպէսզի երիտասարդութիւնը խոյս չտայ զինուորական պարտականութենէն, աշխատելով միաժամանակ զինուորագրութեան ինչ ինչ կէտերու բարեփոխութիւնը ձեռք բերելու:

**ՌՈՒՍԱՍՏԱՆ – ՊԱՐՍԿԱՍՏԱՆ**

1) Երեւոյթները ինչ որ ալ ըլլան, կուսակցութիւնը պիտի շարունակէ իր աւանդական ուղղութեամբ, փոփոխուած պայմաններու վրայ նայելով տակտիքական տեսակէտով միայն:

2) Թուրքիոյ համար առաջարկուածին նման ունենալ Շրջանային-Պրագիր նաեւ Կովկասի եւ Պարսկաստանի համար:

**ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՔՍԱՆ ՀԻՆԳԱՄԵԱԿԸ**

Հ. Յ. Դաշնակցութեան քառորդ դարու գոյութիւնը տօնել՝ անհրաժեշտութիւն մըն է, եթէ հնարաւոր պիտի ըլլայ այդ տօնակատարութիւնը դարձնել հանդիսաւոր առիթը՝ ժողովրդական խաւերու մէջ աւելի եւս հաստատուն կերպով թափանցելու եւ մոտք գործելու, իր աշխարհահայեացքի ու իտէպի փրօփականտն ընելու, եւ քառորդ դարու մէջ կրած բարեշրջական զարգացումն ու ամբարած ուժը ներկայացնելու, շարքերը խտացնելու, յեղափոխական նոր եւ ուժեղ թափ ներշնչելու համար:

Այս առիթով անպայման հրապարակ բերել կուսակցութեան 25ամեայ պատմութիւնը:

**ԾՐԱԳՐԱՅԻՆ ԵՒ ՆՈՒԱԶԱԳՈՅՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ**

Կուսակցութեան ծրագրի վերագնահատումը գտնելով կարեւոր, կը կցուի հետեւեալ առաջարկ-տեսութիւնը՝ Ընդհ. ժողովի նկատաւման համար.

«Չէ կարելի ժխտել որ կուսակցութեան աշխատակողման շարքերն ու մարմինները, նոյնիսկ ինտելիգէնտ ըստած շարքերու մեծամասնութիւնը հասունցած եւ նախապատրաստուած չէ ծրագրային ու նուազագոյն պահանջներու տեսականովն ու գործնականովը, եւ հետեւաբար դեռ երկար ժամանակ կարօտ պիտի ըլլայ իր ղեկավարներու եւ ցանցառ տեսաբաններու թերազրութեանցն ու առաջնորդութեանցը:

Մեր ծրագիրն ու նուազագոյն պահանջները ցարդ եղած են աւելի փոխառութիւններ դրսէն, Միջազգային Ընկերվարական գրականութենէն, քան մեր սեփական կեանքի եւ մշակութիւնը արդիւնք: Մեր ծրագիրն ու պատմահայեցողութիւնը եղած է խառնուրդ մարքսիզմի եւ ռուսական նարոտնիկութեան տեսաբանութիւններուն եւ չէ հիմնաւորուած մեր սեփական կեանքին ու պայմաններուն ուսումնասիրութեամբ եւ սեփական աշխարհահայեցողութեամբ:

Ընդունելով հանդերձ որ ընկերվարութիւնը իբրեւ գիտական դպրոց՝ մեր ուսուցիչն ու մեր վարդապետութեան հիմը պիտի ըլլայ, բայց այդ վարդապետութիւնը զանազան հայեցակէտերով մշտական լուսաբանութեան ու սրբագրութեան ենթարկուելով, ինչպէս նաեւ գիտութիւնը իբրեւ գիտութիւն մեր սեփական կեանքի ու միջավայրի ուսումնասիրութեամբ եւս հիմնաւորելով՝ դառնալու է մեր սեփականութիւնը, ազատուելու է փոխ առնուածի տպաւորութենէն, բռնազբօսիկ ազդեցութենէն եւ խառնուրդէն, ուրկէ եւ բխելու է մեր սեփական ծրագիրը:

Իբրեւ ազգային-ընկերվարական կուսակցութիւն՝ մենք կը կարծենք որ Հայաստան – բաժանուած երեք պետութիւններու մէջ – մեր քաղաքական ծրագիրն ու պահանջները ամէնէն աւելի կեդրոնացած պէտք է ըլլան թէրիթորիային եւ արտաթէրիթորիային<sup>11</sup> երկու սիստեմներու եւ սկզբունքներու վրայ միանգամայն.— թէրիթորիային՝ իւրաքանչիւր պետութեան մէջ շրջանային վարչութեան պահանջներով, արտաթէրիթորիային՝ Հայաստանի սահմաններէն դուրս, իւրաքանչիւր պետութեան մէջ սփռուած հայ տարրի, իբրեւ փոքրամասնական, քաղաքական, կուլտուրական իրաւունքներու պահանջներովը:

Հետեւաբար, երեք պետութեանց մէջ ալ, առաջնորդուելով միեւնոյն սկզբունքէն ու ծրագրէն, հանդէպ պետութեան՝ համապետական տեսակէտէն, մեր քաղաքական ծրագիրը, մեր բռնելիք դիրքը պիտի հիմնաւորուի եւ սահմանաւորուի այն չափով ու ծաւալով եւ այն հայեցակէտերով՝ ինչ որ պիտի բխի եւ կամ կը բխին շրջանային վարչութեան թէրիթորիական եւ արտաթէրիթորիական պահանջներէն ու հայեացքներէն:

Ընդունելով որ Կովկասեան նուազագոյն պահանջներու ծրագիրը աննորմալ ժամանակի ծնունդ է եղած եւ իր մէջ կը պարունակէ հակասութիւններ նայելով կուսակցութեան ազգ. դիմագիծին, կուսակցութիւնը չի կրնար Ռուսահայաստանի սահմաններէն դուրս գտնուող, Կովկասի մնացեալ մասերն ալ միասին առնելով, ամբողջ կովկասեան դատը իր ծրագրին հիմքը ընդունիլ:

Ընդունելով որ Թրքահայաստանի բարենորոգմանց

11.- Տարածքային եւ արտատարածքային:





համար պատրաստուած վերջին նախագիծը, հիմնուած Շրջանային վարչութեան վրայ, կը բովանդակէ իր մէջ թէրիթորային եւ արտաթէրիթորային տարերքը, եւ այդ սահմաններուն մէջ ա՛յդ սկզբունքներով քաղաքական ծրագրի մը պաշտպանութիւնը մեր ազգային կեանքի համար լիովին բաւականութիւն կարող է տալ ո՛չ միայն ներկայի եւ մօտաւոր ապագայի՝ այլ եւ բաւական հեռու ապագայի մէջ, որմէ յետոյ միայն կարելի կ'ըլլայ ձգտիլ ու պաշտպանել Ֆեդերալիզմ կազմն ու պահանջները:

Նպատակայարմար է յիշեալ նախագծի քննութիւնն ու ընդհանրացումը՝ Թրքահայաստանի, Ռուսահայաստանի եւ Պարսկահայաստանի համար միանգամայն:

Եթէ մեր քաղաքական ծրագիրը իր վերջնական ձեւակերպումն ու հիմնաւորումը չէ ստացեր դեռ եւս, եթէ մեր քաղաքական աշխարհահայեացքը դեռ եւս սեփական կեանքի պահանջներուն թոյլ գիտակցութեան աստիճաններուն վրայ է, մինչդեռ կուսակցութիւնը ամէնէն աւելի զբաղած է քաղաքականութեամբ եւ քաղաքական հարցով, բնականաբար աւելի՛ եւս թոյլ ու տարտամ պիտի ըլլային իր ծրագրի տնտեսական մասն ու պահանջները՝ որոնք աւելի փոխ առնուած կրկնութիւններ են, առանց սեփական կեանքի վրայ հիմնաւորուած ըլլալու:

Բացի հողային հարցէն՝ ուրիշ ո՛չ մէկ տնտեսական հարց լուրջ տեղ չի գրաւեր մեր ծրագրին մէջ եւ չէր ալ կրնար գրաւել, ինչպէս չէ գրաւած, ուրիշ ոչ մէկ ընկերվարական կուսակցութեան ծրագրին մէջ:

Ծրագիրներու մէջ ո՛չ թէ պահանջներ կը ձեւակերպուին՝ այլ սիստեմ, սկզբունք, որ կը կազմէ ընկերվարականութեան վարդապետութիւնն ու նպատակը:

Տնտեսական պահանջները՝ ծրագրէն դուրս, իւրաքանչիւր երկրի մէջ շրջապատող պայմաններուն, տեղի ունեցած քաղաքական ու տնտեսական զարգացման կամ բարեշրջութեան եւ ուժերու փոխ յարաբերութեան համեմատութեամբ, սեփական կեանքէն բխած, դէպի նպատակը տանող հանգրուաններ են: Մեր մէջ կուսակցականօրէն այս կարգի կեանք եւ աշխատանք տակաւին գոյութիւն չէ ունեցած: Այս պատճառով ալ, իւրաքանչիւր Ընդհանուր ժողովի առիթով օրակարգի մէջ կը մտնեն այնքան բազմապիսի ու բազմապատիկ հարցեր՝ որոնց ամբողջին լուծումը ո՛չ մէկ Ընդհ. ժողով չի կրնար տալ: Եւ ուրիշ կերպ ալ չէր կրնար ըլլար, որովհետեւ այդ հարցերու լուծումը տարու համար՝ կանխօրօք ուսումնասիրուելու են, այդ ուղղութեամբ կանխապատրաստուելու են մտքերը եւ հոսանքներ ծնունդ առնելու են:

Ընդհանուր ժողովներու տեւողութեան ժամանակի անբաւականութիւնն իսկ հնարաւորութիւն չի տար չնախապատրաստուած՝ այդ հարցերուն մօտենալու:

Ո՛չ մէկ երկրի, ո՛չ մէկ կուսակցութեան Ընդհ. ժո-

ղովներուն (որոնք քոնգրէ անունը կը կրեն) առջեւ մերինն պէս բարդ ու բազմապատիկ օրակարգ չէ ներկայացած եւ չի ներկայանար:

Միակ տնտեսական հարցը եւ պահանջը որ շօշափուած է եւ կուսակցութեան քաղաքական գործունէութեան ալ մաս կազմած՝ հողային հարցն է, որ ամէնէն աւելի յուզուած ու հրատապ է դարձեր Թրքահայաստանի եւ մասամբ նաեւ Կովկասի մէջ՝ սակաւահողութեան պատճառով: Իսկ սակաւահողութեան ու բռնագրաւմանց դէմ եղած գանգատներն ու պահանջները ամբողջովին հիմնուած ըլլալով մասնաւոր սեփականութեան վրայ, չեն կրնար հաշտուիլ ընկերվարական աշխարհահայեացքին հետ, եւ իբրեւ այդպիսին՝ չեն կրնար ունէ՛լ աստիճանով հանգրուանի տեղ ընդունուիլ:

Նպատակայարմար է որ առ այժմ մեր հողային տնտեսական պահանջին առանցքը կազմէ՝ «հողը հողագործին» նշանաբանը:

Բայց ընդունելով հանդերձ այս նշանաբանը հիմնակէտ, կ'առաջարկենք որ Ընդհանուր ժողովը որոշէ պարտադրիչ ուսումնասիրութեան ու աշխատանքի առարկայ դարձնել հետեւեալները.

1. Իւրաքանչիւր գիւղի եւ գաւառի տարածութիւնը, մշակուած եւ անմշակ հողերու (արագիւր խալիլէ, եայլա, օրման) տարածութիւնները:
2. Իւրաքանչիւր գիւղի եւ գաւառի ազգաբնակչութեան ընդհանուր եւ ըստ ազգային բաժանման թիւերը, հայ ազգաբնակչութեան համեմատական տոկոսը ընդհանուր ազգաբնակչութեան եւ իւրաքանչիւր ազգի թիւին համեմատութեամբ:
3. Հողային սեփականութեան ընդհանուր տարածութիւնն ըստ ազգութեան, իւրաքանչիւր ազգի պատկանող սեփականութեան թիւերն ու համեմատական տոկոսները:
4. Միեւնոյն ուղղութեամբ մշակելի եւ անմշակ հողերու տարածութեանց ուրոյն թիւերը:
5. Այդ երկու կարգի սեփականութեանց ալ, ըստ դասակարգի, համեմատական թիւերը, այսինքն իւրաքանչիւր գիւղի եւ գաւառի մէջ ո՞ր ազգի ո՞ր դասակարգերը եւ իւրաքանչիւր դասակարգ քանի՛ հոգի է բաղկացած ըլլալով ի՞նչ տարածութեամբ մշակելի, ի՞նչ տարածութեամբ անմշակ հողերու սեփականատէր են: Այս թիւերով իւրաքանչիւր ազգի եւ դասակարգի սեփականութեանց իրարու համեմատութեամբ բաղդատական տոկոսները:
6. Իւրաքանչիւր ազգի եւ դասակարգի սեփականութեանց ընդհանուր տարածութեան համեմատութեամբ վճարած հողային տուրքի գումարներն ու իրարու համեմատութեամբ տոկոսները:
7. Իւրաքանչիւր ազգէն իւրաքանչիւր գիւղի եւ գաւառի մէջ որքան սեփականագուրկներ գոյութիւն ունենալը:





**ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

8. Ուրքա՛ն հողագուրկ, ճորտային վարձակալներ կան, ի՞նչ են վարձակալութեան (մարապա) պայմանները, ի՞նչ կը ստանան հողատէրերը եւ զուտ բերքի ի՞նչ քանակը կը մնայ սեփականատէրերէն:

9. Իւրաքանչիւր գիւղի եւ գաւառի համայնական սեփականութիւն եղած մշակելի ու անմշակ (մէրէ, եայլա, արօտավայր, անտառ, կալ) հողերու մարգագետիններու տարածութիւնը:

10. Իրերօգնութիւն, համայնական աշխատանք, վարուցանք եւ այլ սովորութիւններ՝ ինչ որ կան:

11. Իւրաքանչիւր գիւղի եւ գաւառի մէջ տեղաւորցուած գաղթականներու թիւը, անոնց ո՞ր տեղերէն եւ ե՞րբ գաղթեցուած ըլլալն ու ազգութիւնները:

12. Իւրաքանչիւր գիւղի եւ գաւառի մէջ ի՞նչ տարածութեամբ եւ քանի սեփականատիրոջ հողի վրայ տեղաւորուած են գաղթականները:

Այս ուսումնասիրութիւններն ու վիճակագրական թիւերը պէտք են հողային հարցի «հողը հողագործին» նշանաբանին հիմնաւորումին ու պաշտպանութեանը:

Հողային հարցէն յետոյ, տնտեսական կեանքին մէջ կուսակցութեան աշխատաւորական գործունէութիւնը ըլլալու էր գիւղացիական-երկրագործական, համագործակցութիւններուն (քոօփերաթիւ), փոխադարձ օգնութեան միութիւններ ստեղծելն ու կազմակերպելը, ինչպէս նաեւ քաղաքներու մէջ արհեստաւորական համագործակցութիւններ, արհեստաւորական, սպառումի, արդիւնաբերութեան, արտահանութեան միութիւններ ստեղծելն ու կազմակերպելը:

Այս ուղղութեամբ անկասկած որ գործելու մեծ աւարէզ կայ, միայն թէ այդ ուղղութեամբ աշխատութիւնը կը կարօտի տեղւոյն վրայ բազմակողմանի ուսումնասիրութեանց, որոնց հետեւութեամբ միայն

հնարաւոր կ'ըլլայ որոշելու՝ թէ ո՞րտեղ, ո՞ր ասպարէզի եւ նիւթի համար եւ ի՞նչ ձեւ միութիւններ ու համագործակցութիւններ կարելի է ստեղծել:

Հետեւաբար նպատակայարմար է որ Ընդհ. ժողովը՝ նախ որոշէ պարտադրել իւրանչիւր շրջանի մարմիններն ու գործիչ-ընկերները՝ որպէսզի անպայման նուիրուին վերոյիշեալ անհրաժեշտ ուսումնասիրութեանց եւ իրենց աշխատանքի տեղեկագիրները պարբերաբար ներկայացնեն ստեղծուելիք պատշաճ մարմինն:

Ընկերներ,

Վիշապի Ձրդ Երջանային ժողովի վերոյիշեալ որոշումները, բանաձեւուած Ը. Ընդհ. ժողովի գումարման առիթով եւ ներկայացուած օրակարգէն մեկնելով, հիմք պիտի կազմեն Երջանի պատգամաւորներու պաշտպանելիք տեսակետներուն՝ Ընդհ. ժողովին մէջ: Մինչեւ Ընդհ. ժողովի պաշտօնական որոշումը՝ առաջադրուած այդ հարցերու վերաբերմամբ՝ Երջանային ժողովի վերոյիշեալ բանաձեւերը, իբր Վիշապի Երջանային ժողովի կարծիքը, կը յանձնուի շարքերու նկատմամբ:

Կուսակցութեան պաշտօնական որոշումը նոյն հարցերու մասին, աւելորդ է ըսել, պիտի բանաձեւուի Ընդհանուր ժողովէն, որոնց վրայ պիտի հիմնաւորուի կուսակցութեան, որով նաեւ մեր Երջանի կազմակերպութեան գործունէութեան ուղեգիծը:

Ընկերական բարեկներով  
Հ.Յ.Դ. ՎԻՇԱՊԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

914 Յուլիս 5







**ԳԼՈՒԽ XIV**

**Հ.Յ.Դ. ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ**

Կազմակերպականօրէն Պալքանի մաս կը կազմէին Պուլկարիան եւ Ռումանիան, ուր կանուխէն արմատ նետած էր Դաշնակցութիւնը եւ տարածուած ատելի քան տասնեակ մը քաղաքներու մէջ: Տեղ-տեղն հայութիւնը կը բաժնուէր երկու խումբերու. առաջինը մնացորդն էր հին գաղթականութեան, մեծ մասամբ այլասերած եւ հեռու հայկական կեանքէն. երկրորդը, յարաբերաբար նոր, բաղկացած էր ընդ-հանրապէս պանդուխտ հայերէ,– շոգեկառքերու կայարաններուն եւ նաւահանգիստներուն մէջ սեւ աշխատանքով օրուան ապրուստը հոգացող, բայց հայրենիքի կարօտով տոչորուող երիտասարդներէ:

1914 թուականին երկու երկիրներն ալ նոր էին դուրս եկած Պալքանեան պատերազմէն, որուն աւարտին, հազիւ ձեռնարկած կուսակցութեան վերակազմութեան, վրայ հասած էր աշխարհամարտը, յաւելեալ պարտաւորութիւններու տակ դնելով Պալքանի Կեդր. կոմիտէութիւնը: Արդարեւ շուտով պի-տի խզուէին եւ հետզհետէ ի սպառ ջրանային կապերը Երկրի կազմակերպութեանց հետ, իսկ Պուլտայ կեդրոնին հետ երթեւեկն ու թղթակցական յարաբերութիւնները պիտի հանդիպէին անյաղթահարելի դժուարութիւններու:

Ահա այս պայմաններուն մէջ է որ Պալքանի կազմը տարբեր հնարքներ ի գործ դնելով՝ պիտի յա-ջողէր ըստ կարելոյն կանոնաւոր հաղորդակցութիւն պահել թէ՛ Պուլտայ եւ թէ Կովկասի կեդրոններուն հետ եւ լրատարածման միջնորդի դեր խաղալ Երկրի եւ արտասահմանեան մարմիններուն միջեւ:

Պալքանի կուսակցական գործունէութեան մէկ ուրիշ մարզը կը վերաբերի կամաւորական շարժ-ման: Կովկասի մէջ սկիզբ առած այս շարժումը մեծ խանդավառութիւն առաջ բերած էր Պուլկարիոյ եւ Ռումանիոյ աշխատաւոր երիտասարդութեան շարքերու մէջ: Արդէն հապճեպով եւ ինքնագլուխ խմբակներ ճամբայ ելած էին դէպի Կովկաս, առանց սպասելու պատասխանատու մարմիններու կար-գադրութեան: Այս վերջինները սակայն պարտաւոր էին զգուշաւոր ըլլալ, կասկածներ չյարուցանելու համար յիշեալ երկիրներու պետական շրջանակներու մօտ: Պուլկարիա եւ Ռումանիա այդ միջոցին դեռ մասնակից չէին պատերազմին, իսկ Պալքանի տարածքին կը վխտային թուրք լրտեսներ եւ գոր-ծակալներ, պատրաստ նման առիթներով հակահայ գրգռիչ լուրերու տարածման: Հակառակ կաշկան-դիչ այս պարագաներուն, Պալքանի Կեդր. կոմիտէն պիտի յաջողէր հանգստացնել պետական շրջա-նակները եւ, Թիֆլիսի կեդրոնին հետ համակարգում կատարելով, հազարէ ատելի կամաւորներ առա-քել Կովկաս:

Վերջապէս, շրջանի կարեւոր իրազօրծումներու շարքին պէտք է յիշատակել «Հայաստան» թերթին լոյս ընծայումը, որուն ձեռնարկեց Պալքանի Կեդր. կոմիտէութիւնը, հակառակ անոր որ Հ.Յ.Դ. Ութե-րորդ Ընդհ. ժողովը համամտութիւն չէր յայտնած այդ իմաստով եղած դիմումին: Պատերազմը եւ Երկ-րի հայութեան վիճակը, սակայն, մղեցին Պալքանի Կ. կոմիտէն որ շրջանցէ Ընդհ. ժողովի որոշումը: Պէտք է վկայել որ իր գոյութեան եօթը ամիսներու տեւողութեան (1914 թ. Մարտ – Մեպտեմբեր) «Հա-յաստան»ը անփոխարինելի դեր խաղաց արտերկրի հայութիւնը օրը օրին իրազեկ պահելով այն բո-լոր կարեւոր իրադարձութիւններուն, որոնք տազնապալի այդ շրջանին տեղի կ'ունենային Կովկաս եւ, մանաւանդ, Պոլիս եւ Արեւմտահայաստան:

\*  
\* \*

1914-15 թուականներու Պալքանի Կ. կոմիտէութեան դիւանը առատ նիւթ կը հայթայթէ ժամանակի հայ կեանքը յուզող շատ մը խնդիրներու մասին: Բացի գրաւոր հաղորդակցութեան համար պահպան-ւած թղթածրարներէն, յիշատակութեան արժանի է 1190ա համարը կրող մատեանը, որ կը պարունա-կէ Կ. կոմիտէին կողմէ կուսակցական միւս մարմիններուն յղուած գրութեանց պատճենները: Շատ մը բնագիրներ, յատկապէս Կովկաս՝ Արեւելեան բիրոյրին առաքուածները կորսուած ըլլալով, պատճեն-ներու այս մատեանը բնականաբար կը ստանայ մասնաւոր կարեւորութիւն:

Յայտնենք վերջապէս, որ Պալքանի թղթածրարներէն քաղուած բազմաթիւ փաստաթուղթեր տեղ գտած են ինչպէս ներկայ, ապա նաեւ այս հատորի տարբեր գլուխներուն տակ:







Մատենանքի 1190ա, էջ 418-423

### Ա 1.– ԵՐԿԱՍՏԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Յ.Դ. ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻ 1912 – 1914

**ՇՐՋԱՊԱՏՈՂ ԸՆԴՀ. ՊԱՅՄԱՆՆԵՐ.**— Օսմանեան սահմանադրութեան վերահաստատումէն առաջ Պալքանեան շրջանը, որքան որ կը ներէին իր նիւթական եւ բարոյական միջոցները, կը ներկայացնէր գործօն եւ արդիւնաւոր կազմ մը. նա ունէր իր օրգանները՝ նախ Շարժում եւ յետոյ Ռազմիկ, որոնք շաբաթը երկու անգամ հրատարակուելով եւ բնաշխարհի վիճակին գիտակ պահելով Պուլկարիոյ հայութիւնը, շինիչ դեր մը կը կատարէին: Ունէր նաեւ գաղափարական ընկերներու ստուար թիւ մը՝ որ թէ՛ տոնով եւ թէ՛ գործքով մղում կու տային տեղական եւ կազմակերպական գործերուն: Նախասահմանադրական այդ շրջաններուն՝ բաւական կլորիկ էին նաեւ շրջանի հասոյթները, որովհետեւ Պալքանը այդ միջոցին իբր անցուղարձի վայրը՝ իր գործօն տարրերով եւ անցորդ ընկերներու ցանած սերմերով մեծապէս կ'արդիւնաւորուէր: Սակայն երբ Միտհատեան սահմանադրութեան վերահաստատումովը թուրքիոյ վիճակը վարդապոյն թուիլ սկսաւ, բոլոր կարող եւ գործօն ընկերները համախմբուեցան Կ. Պոլիս. գաւառացի եւ պոլսեցի շատ ընկերներ Պալքանէն հեռացան, ընկերական շարքերը անօտարացան, կազմակերպական տեղական թերթը լռեց եւ ցցուեցաւ միտքերու մէջ սեւեռուած գաղափարի պէս սա անհեթեթ կարծիքը. «Սահմանադրութեան հուշակամբ ամէն բան կատարեալ է, այլեւս հարկ չկայ յեղափոխական կազմակերպութեան եւ հետեւաբար աւելորդ են անդամավճար, խումբեր եւ ժողովներ»: Այս մտայնութիւնը աւելի շեշտուեցաւ երբ վրայ հասան Մարտ 31-ի ռէակտիւսիոնական շարժումը<sup>1</sup> եւ Ատանայի եղեռնը: Դաշնակցութիւնը նկատուեցաւ քառութեան նոխազը բոլոր ձախորդութեանց. մինչեւ այն ատեն իրենց գոյութիւնը քաջքոյ ցանցառ խումբերը գրեթէ բոլորովին կազմալուծուեցան՝ ներշնչուելով հակայեղափոխական թերթերու ցանած վատ գաղափարներէն: Գուցէ իրերու վիճակը տարբեր ըլլար եթէ Պալքաններու մէջ պարբերաբար այցելէին կարող գործիչներ՝ որոնք իրենց հեղինակաւոր ձայնը լսելի ընելով մասամբ կարենային առաջին առնել հակայեղափոխական եւ յետադիմական հոսանքներուն: Իրերու այս ցաւալի վիճակը տեւեց մինչեւ Պալքանեան վերջին պատերազմը, որուն յեղակարծ պայթմամբ կարծես հրաշքով մեծ փոփոխութիւն, մեծ ցնցում

կրեց Պալքանի հայութեան մտայնութիւնը: Անոնք որ կազմակերպութեանն ուժացած էին եւ անոր անունն անգամ բերան առնել չէին յօժարեր՝ յանկարծ սկսան նորէն անոր յարիլ, յուսալից աչուրնին դէպի Դաշնակցութիւնը սեւեռել: «Արդեօք ի՞նչ պիտի ընէ Դաշնակցութիւնը, ապստամբութիւն թէ ցոյց. հայկական ապստամբութիւն մը առաւել քան երբեք հիմա անհրաժեշտ է եւ այդ ալ կրնայ յարուցանել միմիայն Դաշնակցութիւնը՝ իբր տարիներէ ի վեր փորձուած եւ կուռ կուսակցութիւն մը» կը ճշային այս բարեպատեհ առթիւ: Երբ որ կաթողիկոսական պատգամաւորութիւնը իր դիմումները կատարեց եւրոպական դիւանագէտներուն մօտ եւ երբ Դաշնակցութիւնը իր հօր աջակցութիւնը չզրացաւ անոր՝ թէ՛ ժողովուրդին եւ թէ՛ կազմակերպութեան հեռացած ընկերներու մէջ նոր ոգեւորութիւն մը առաջ եկաւ: Հետզհետէ սկսան խումբերը վերակազմուիլ, Դաշնակցութեան գոյութեան իրաւունքը վերստին շեշտուեցաւ եւ մասնակի հանգանակութեան մը առթիւ քսակները սիրայօժար բացուեցան:

Թէեւ այս բանի նշանները կ'երեւային եւ յոյս կար աւելի ստուարացնել շարքերը, սակայն պատերազմի երկարատեւ հանգամանքը<sup>2</sup> մէկ կողմէ եւ գործօն ընկերներու կարեւոր մաս մը պատերազմի դաշտը գտնուելը ու հաղորդակցական կանոնաւոր միջոցներու խանգարումը՝ միւս կողմէ, մեծագոյն արգելք կը հանդիսանային օգտուելու ժողովրդեան դէպի կազմակերպութիւնը ցոյց տուած այս «բարի» տրամադրութիւններէն: Ոչ նուազ արգելք հանդիսացած է նաեւ այս մասին՝ Կեդր. կոմիտէի գրեթէ կազմալուծեալ վիճակը: Կեդր. կոմիտէի երեք անդամներու անտարբեր եւ մեկուսացած ընթացքը հանդէպ ընդհ. գործը, բոլոր աշխատութիւնները ծանրացած կը մնան երկու հոգիի վրայ միայն. եւ երբ այս վերջիններէն մին իր անձնական գործերու բերումովը առժամանակեայ կերպով Վառնա փոխադրուիլ կը հարկադրուի՝ պէտք կ'ըլլայ նաեւ որ իր հրաժարականը տայ Կեդր. կոմիտէին ալ:

1.- Ակնարկութիւն 1909 թ. Մարտ 31ին Մուլքան Համիտի կողմէ թուրքիոյ մէջ սահմանադրական կարգերը տապալելու եւ բռնատիրական հին վարչակարգը վերահաստատելու փորձին, որու ընթացքին եւ գործուեցան Ատանայի կոտորածները:  
2.- Խօսքը 1912-13-ի Պալքանեան պատերազմի մասին է:



Պատերազմի դադարումն յետոյ հարկ տեսնուեցաւ անմիջապէս պալքանեան շրջանի Պատգամաւորական ժողով գումարել, պարզապէս թարմ տարրերով նոր Կեդր. կոմիտէ ընտրելու առաջադրութեամբ, որպէսզի գործերուն կանոնաւոր ընթացք մը տրուէր: Թէեւ քանիցս փորձեր կ'ըլլան այս ուղղութեամբ՝ հրահանգելով շրջանի բոլոր մարմինները՝ փութացնելու համար կանոնաւոր հաշիւները, վիճակացոյց, տեղեկագիր եւ պատգամաւորներ, — դրապէս կը պատասխանեն միայն քանի մը մարմիններ, մնացածները իրենց կազմալուծեալ վիճակը հաղորդելով: Այնպէս որ երկար տատանումներէ յետոյ հազիւ կարելի կ'ըլլայ 1913-ի Հոկտեմբերի վերջերը Ռուսոնուքի մէջ գումարելու Շրջանային ժողովը 4-5 պատգամաւորներու ներկայութեամբ միայն: Պալքանի համար ո՛չ պատուաբեր այս տիտուր կացութեան առջեւ, բնական է, ժողովին գեղալումները կ'ըլլան շատ սահմանափակ եւ գլխաւորապէս կեդրոնացած՝ շրջանին երեսի վրայ մնացած գործը ամուր հիմերու վրայ դնելու եւ ղեկավար կարող մարմին մը ընտրելու ջանքերուն մէջ: Տարակոյս չկայ թէ ժողովը մեծ դժուարութեանց կը հանդիպի՝ չունենալով իր սեղանին վրայ Կ. Կ. էի գործերը վարելու կարող թեկնածուներու ցուցակ մը: Երկար խորհրդակցութիւններէ վերջ յարմարագոյն կը նկատուի նոր Կեդր. կոմիտէն ընտրել Սոֆիայի տարրերէն, ուր եւ կը փոխադրուի Կ. Կ. ր:

Նորընտիր Կ. Կ. էն հազիւ ի վիճակի կ'ըլլայ 1914 Յունուտարին ստանձնելու իր պաշտօնը եւ իր համեստ ուժերով փարելու գործին: Ստանալով ամբողջ շրջանը եւ անոր ընթացիկ գործերը քառասային կատարեալ դրութեան մը մէջ, Կ. Կ. ի նոր կազմը իր ամբողջ ջանքերը կեդրոնացուց շրջանի վերակազմութեան գործին: Յաւալի է սակայն որ իր այս դժուարին ջանքերուն մէջ ան մնաց կղզիացած, առանց օժանդակութեան մեր արտաքին բարձր մարմիններուն: Քանիցս գրուեցաւ թէ՛ Արեւմտեան բիւրոյին եւ թէ՛ Դրօշակի խմբագրութեան այցելու կարող ընկերոջ մը առաքման, որ շրջան ընելով Պալքանին մէջ կարենար Կ. Կ. էի ջանքերուն իր օժանդակութիւնն բերել վերակազմութեան խնդրին: Մեր ձայնը ամէն տեղ անլսելի մնաց եւ մեզի յորդորուեցաւ միշտ բաւականանալ մեր համեստ ոյժերով:

Արդ՝ յոսսախաբ արտաքին ոեւէ օգնութենէ, հարկ եղաւ բաւականանալ ներքին ոյժերով եւ, Մարտի մէջ, Կ. Կ. էս պաշտօն յանձնեց ընկեր Գ. Ամիրեանի որ այցելէ Ռուսմանիոյ հայաշատ քաղաքները, կազմակերպէ այդ տեղի մարմիններն ու խումբերը եւ քննէ անոնց հաշիւները: Ընկերը՝ իր 2-3 ամսուան շրջանով յաջողեցաւ կազմալուծեալ եւ քայքայեալ մարմինները վերակազմել, գոյութիւն ունեցող վէճերը բառնալ, հաշիւները (կազմակերպական եւ կազմ. սրճարաններու) քննել, պատրաստ գումարները փոխադրել եւ հասութաբեր

սրճարաններու մատակարարութիւնը յանձնել վստահելի ընկերներէ կազմուած վարչութեանց:

Եւ ահա իբր արդիւնք այս ամէնուն Պալքանեան շրջանը կը պարզէ հետեւեալ վիճակը.

1- **Սոֆիա.** — Մայրաքաղաքին մէջ հայութիւնը թէեւ չնչին տոկոս մը կը կազմէ, սակայն Կ. Կ. էի հոս փոխադրուելէն ի վեր ընկերական կեանքը սկսած է հետըզհետէ աւելի եռուզեռի մէջ մտնալու եւ օրըստօրէ շարքերը խտանալու վրայ են: Ունինք 7 խումբ 52 ընկերներէ եւ ընկերուհիներէ բաղկացած. երկու տարուան շրջանին մէջ տուած է 1118 Փրանք հասոյթ կազմակերպութեան սնտուկին՝ մէջն ըլլալով հանգանակութեան գումարը:

2- **Տիլիպէ.** — Որ անցեալին մէջ Պալքանի ամէնէն շատ նպաստաւորուած եւ ամէնէն փայլուն վայրն էր, բայց դժբախտաբար այսօր ինկած վիճակ մը ունի: Հազիւ ունինք 5 խումբեր 40 ընկերներէ բաղկացեալ: Երկու տարուան շրջանին մէջ հազիւ թէ կրցած է 575 Փրանք հասոյթ մը մտցնել կազմակերպութեան սնտուկին մէջ: Եթէ ազդու պրոպագանդ մը մղուի կարելի է վերստին ամէնէն գործօն միջավայրը հանդիսացնել:

3- **Ալիքէն.** — Ունի շատ փոքրաթիւ հայութիւն, որու մեծագոյն մասը կը կազմեն գաւառացի գաղթականներ: Ունինք 8 խումբ 60 ընկերներով: Երկու տարուան շրջանին հասոյթ տուած է 168 Փրանք:

4- **Պուրկազ.** — Տեղացի հայութիւնը շատ քիչ, իսկ գաւառացիք մեծ մասամբ բեռնակիրներ, որոնք մեծաւ մասամբ փարած են յեղափոխական գործին: Ունին 5 խումբ 38 ընկերներով: Հասոյթ տուած է 1752 Փրանք հանգանակութեամբ միասին:

5- **Տէտէ-Աղաճ.** — Նոր միացած Պալքանի շրջանին<sup>3</sup>. հայութիւնը գրեթէ ամբողջութեամբ գաւառացիներ. ունի 4 խումբ 32 ընկերներով: Հասոյթ տուած է 6-7 ամսուան մէջ 105 Փրանք:

6- **Վառնա.** — Այս քաղաքը, հակառակ իր ստուար հայութեան եւ վայելած կազմակերպական դիւրութիւններուն, կը մնայ ամէնէն յետադէմ վայրերէն մին: Ունի 7 խումբ 50 ընկեր եւ ընկերուհիներով: Հասոյթ տուած է 466 Փրանք:

7- **Ռուսոնուք.** — Տիլիպէի եւ Վառնայի նման հոծ հայութիւն ունեցող վայր մը, բայց ո՛չ անոնց նման նպաստ

3- Տէտէ-Աղաճ – Նախապէս քրքական՝ Պալքանեան պատնարազնէն ետք միացուած Պուլկարիոյ:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

տաւորուած: Դժբախտաբար փայլուն վիճակ մը չունի: Ունի 71 ընկեր եւ ընկերուհիներ 7 խումբով: Ընդհ. հասոյթը եղած է երկու տարուան շրջանին 2190 Ֆրանք հանգանակութեամբ միասին: Այս գումարին մօտ 1200 Ֆրանքը հայթայթած է կանանց Մարօ-Չաւարեան խումբը ի նպաստ երկրի ինքնապաշտպանութեան:

8- Պռլքէշ.— Ամբողջ Պալքանին մէջ ամէնէն հայաշատ եւ տնտեսապէս ամէնէն լաւ վիճակ ունեցող վայրը: Ունի 94 ընկեր եւ ընկերուհի — 8 խումբ: Երկու տարուան շրջանին հասոյթ տուած է մօտ 4300 Ֆրանք՝ հանգանակութեամբ մէկտեղ: Պալքանի ամէնէն պարարտ հողը, որ եռանդուն մշակի կը կարօտի:

9- Կալքայ.— Ամբողջովին գաւառացի գործաւորներ, իսկ տեղացի հայուծիւնը այլասերուած: Ունի 4 խումբ 32 ընկերներով: Երկամեայ հասոյթը եղած է ոչինչ, որովհետեւ ամբողջ այս շրջանը անցուցած է ներքին կռիւներով եւ երկպառակութիւններով: Այժմ ամէն ինչ վերջացած կ'երեւայ վերոյիշեալ խումբերու նոր վերակազմովով:

10- Պրայեթ.— Ամբողջովին գաւառացի գործաւորներ. ունին 12 խումբ 121 ընկերներով: Երկամեայ հասոյթ տուած է 3800 Ֆրանք, որուն մեծագոյն մասը կը հայթայթէ կազմակերպական սրճարանը: Պալքանի մէջ Պռլքէշէ յետոյ ամէնէն հասութեաբեր վայրը:

11- Թուլչա.— Բաւական տեղացի հայեր կան, բայց խորթացած են: Հագիւ ունի 1 խումբ 8 գաւառացի ընկերներով: Ընդհ. հասոյթը երկու տարուան մէջ 386:

12- Սուլինա.— Բաղկացած ամբողջովին գաւառացի հայերէ: Ունի 5 խումբ 45 ընկերներով: Երկամեայ հասոյթը 966 Ֆրանք:

13- Քոնսթանցա.— Պռլքէշէն վերջ Ռումանիոյ ամէնէն հայաշատ կեդրոնը: Տեղացիները գրեթէ օտարացած: Ունի 15 խումբ 124 ընկերներով: [Երկամեայ հասոյթը] 2437 Ֆրանք հանգանակութեամբ մէկտեղ:

Ուրեմն բովանդակ Պալքանի մէջ ունինք 12 մարմին, 88 խումբ (727 ընկեր եւ 45 ընկերուհի) 772 ընկերներով: Երկամեայ ընդհ. հասոյթ 18260 Ֆրանք:

Նկատի ունենալով վերոյիշեալ պայմանները, որոնցմով շրջապատուած եւ ապրած է Պալքանեան շրջանը վերջին երկու տարիներու ընթացքին, նկատի ունենալով նոյնպէս որ վերոյիշեալ թիւերը օրըստօրէ աճելու վրայ են՝ քանի հոգ կը տարուի վերակազմութեան գործին, կրնանք ապահովապէս ըսել որ եթէ մեր շրջանը մնայուն շրջիկ գործիչով մը օժտուի՝ պիտի կարենայ

նիւթապէս եւ բարոյապէս նախանձելի վիճակի մը բարձրանալ. մասնաւորապէս Ռումանիոյ համար խիստ անհրաժեշտ է գործիչի մը պէտքը: Փոքրիկ Ամերիկա մըն է մեզի համար այդ շրջանը իր բարեկեցիկ հանգամանքով եւ բաւական ստուար՝ այն ալ գաւառացի հայութեամբ, որ այլասերման ճամբուն մէջ է դժբախտաբար չունենալով կարող առաջնորդներ եւ պրոպագանդիստներ:

Պալքաններու մէջ գէթ ամսաթերթի մը գոյութիւնը անհրաժեշտ դարձած ըլլալով՝ հարկաւոր է Պալքանեան Կեդր. կոմիտէին իրաւասութիւն տալ իր սեփական միջոցներով հիմնելու ամսաթերթ մը հայերէն եւ պալքաներէն բաժիններով, ինչպէս որ պարզած ենք անդին օրակարգի հարցերու բաժնին մէջ:

Համերաշխութեան փորձեր Ս. Դ. Հնչակեաններու հետ.— Պալքանեան վերջին պատերազմին եւ հայկական խնդրին վերարծարծման առթիւ ամէնուրեք ընդհ. հանգանակութեան մը պէտքը զգալի դարձած էր: Ընկեր Շահրիկեան եւ ընկեր Լեռնեան<sup>4</sup> Ռումանիոյ մէջ հանգանակութեան ձեռնարկեցին: Այդ միջոցին էր որ Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան անդամ պ. Սապահ-Գիւլեան<sup>5</sup> միեւնոյն նպատակաւ Պալքանները հասաւ: Կեդր. կոմիտէն յարմար դատեց հնչակեաններուն հետ համերաշխական ժողով մը կազմել, ուր որոշուեցաւ միասնաբար կատարել հանգանակութիւնը, որը դժբախտաբար շատ մասնակի յաջողութիւն ունեցաւ՝ Պալքանեան պատերազմի վերարծարծման եւ Ա[տրիանա]պոլսոյ վերագրւածման պահուն կատարուած ըլլալով:

Զիֆոնի<sup>6</sup> խնդիր.— Այս խնդրոյ շուրջ Արեւմտեան բիւրոն արդէն մանրամասնօրէն տեղեակ ըլլալով՝ հարկ եղած լրացուցիչ մանրամասնութիւնը կը թողունք մեր պատգամաւոր ընկերոջ բերանացի հաղորդելու Ընդհ. ժողովին:

Պատգամաւորի խնդիրը.— Ինչպէս վերեւ յիշեցինք Շրջանային ժողովը զբաղած ըլլալով շատ սահմանափակ խնդիրներով՝ զանց ըրած էր ի միջի այլոց պատգամաւորի խնդիրը: Կեդրոնական կոմիտէն այս մասին մեծ դժուարութիւններու հանդիպեցաւ, չլրնալով ճարել կարող ազատ ընկեր մը իր շրջանէն: Առ այս դիմումներ եղան Արեւմտեան բիւրոյին եւ Դրօշակի խումբագրութեան, սակայն ոչ մէկէն գոհացուցիչ պատաս-

4.- Շահրիկեան Յարութիւն եւ Նազարեանց Լիպարիտ (Լեռնեան):  
5.- Սապահ-Գիւլեան, բուն անունով Տէր Դանիելեան Ստեփան:  
6.- Զիֆոն — ինքնապաշտպանութեան միջոցներ հայթայթելու նպատակով ստեղծուած զինուորական ֆոնդ:





խան մը չստացանք: Նկատի ունենալով այս պարագան մէկ կողմէ եւ միւս կողմէ ալ Ընդհ. ժողովի գումարման հեռաւոր վայրը, Կեդր. կոմիտէս կը բաւականանայ մէկ պատգամաւորով միայն մասնակցելու Ընդհ. ժողովին, տալով անոր երկու ձայնի իրաւունք, այն է շրջանի ձայնը եւ Կ. Կէիս ձայնը:

Մարմինները Կ. Կէիս թողած ըլլալով պատգամաւորի ընտրութիւնը, Կ. Կէիս միաձայնութեամբ հաւանե-

ցաւ պատգ. ղրկել ընկեր Վ. Տագէսեանը<sup>7</sup>, որը հազիւ թէ այսօր 8/21 Յուլիս, ի վիճակի կ'ըլլայ ճամբայ ելլալու քաղաքէս դէպի Ընդհ. ժողովի վայրը:

Հ.Յ.Դ. ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Սոֆիա  
8/21-VII- 1914

Մատեան թիւ 1190ա, էջ 424-429

## Ա 2.- ԱՄՓՈՓՈՒՄ

### Հ.Յ.Դ. ՏՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐՈՒՄ ՎՐԱՅ ՊԱԼՔԱՆԵԱՆ ՇՐՋԱՆԻ ՏՈՒԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ

#### ՔԱՂԱՔԱԿԱՆ – ԹՈՒՐՔԻԱ

#### ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐՈՒ ԾՐԱԳԻՐ

##### ա) Դաշնակցութեան դիրքը հանդէպ

##### Թուրք կառավարութեան

Աջակցիլ կառավարութեան որքան ատեն որ ան սահմանադրական սկզբանց հաւատարիմ մնայ եւ այդ ուղղութեամբ կառավարէ երկիրը՝ ջանալով միշտ աւելի ամրապնդելու սահմանադրական ուժովը:

Վերապահ վերաբերումով ընդունիլ շրջուցիչ խոստումները եւ որպէս յեղափոխական կազմակերպութիւն՝ երբ հարկը զգացուի գործել ո՛չ լեկալ հողի վրայ:

##### բ) Դաշնակցութեան եւ

##### Իթիֆհատի յարաբերութիւնները

Վերապահութեամբ ընդունիլ իթիֆհատի անկեղծութիւնը. զգուշանալ ընդհանուր համաձայնութենէն, մշակել միայն մասնակի յարաբերութիւններ հարկ զգացուած վայրերուն մէջ:

##### գ) Հայեւթիւրտ յարաբերութիւնները

Շարունակել մեր յարաբերութիւնները քիւրտ իրաւագուրկ դասակարգին հետ միայն առ այժմ մինչեւ աւատական դրութեան վերացումը՝ մինչ այդ հող պատրաստելով հայ-քրտական ընդհանուր համերաշխութեան մը:

##### դ) Մեր յարաբերութիւնները հայ քաղաքական

##### կուսակցութիւններու հետ

Ազգային կենսական շահերու շուրջ աշխատիլ համագործակցութեամբ՝ ջանալով մասնաւորապէս տեւական համերաշխութիւն մը ապահովելու:

Դաշնակցութիւնը պարտի աշխատիլ բարենորոգումներու հարցին շուրջ համախմբելու բոլոր կուսակցութիւնները, Պատրիարքարանը եւ դրսի ուժերը, եւ ջանալ որ գոնէ ընդունուած նոր ծրագիր-համաձայնագիրը անթերի գործադրուի: Աչքի առջեւ ունենալ միշտ կուսակցութեան մինիմալ<sup>8</sup> պահանջները եւ հետամուտ ըլլալ քաղաքական եւ դիւանագիտական ձեռնտու պարագաներուն ընդունիլ տալու զանոնք: Իսկ ինչ կը վերաբերի Դաշնակցութեան նախաձեռնութեանը 1912ին<sup>9</sup>, կը թողունք Ընդհ. ժողովին քննութեանը եւ գնահատումին:

Ռուսական եւ գերմանական ազդեցութիւն.— Չյարիլ մէկ կամ միւս հոսանքին եւ ջանալ դիւանագիտական ճարպիկ դարձուածքներով օգտուելու երկու պետութեանց հակամարտ շահերու բերումով մեզի հանդէպ ունենալիք տրամադրութիւններէն:

Ազգային իշխանութեանց հետ համագործակցաբար աշխատիլ բարեփոխել տալու զինուորական նոր օրինագծին աննպաստ տրամադրութեան մասը — հայ քննիչներու եւ ուսուցիչներու զինուորագրութիւնը:

#### Արտագաղթին՝ Երկրին համար կործանարար հետե-

7.- Տագէսեան Վարդագար, Հ.Յ.Դ. Տրդ Ընդի. ժողովի պատգամաւոր, որ ժողովէն ետք պիտի ձերբակալուէր եւ բանտարկուէր Կարնոյ մէջ իբրեւ զինուորագրութեան ենթակայ, ապա եւ 1915ին սպանուէր բանտին մէջ:

8.- Նուազագոյն:

9.- Ալնարկութիւն Իթիֆհատի հետ յարաբերութիւնները խզելու որոշումին:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

Լանքները նկատի ունենալով հարկ է ամէն բանէ առաջ լաւ ուսումնասիրել անոր պատճառները եւ հոն կեդրոնացնելով մեր ամբողջ ուշադրութիւնը, ջանալ ամէն գնով արմատախիլ ընել տալու մեր դժբախտ երկրին վրայէն այդ պատճառները: Այս է միակ ճամբան առաջին առնելու համար արտագաղթին եւ զարկ տալու ներգաղթին:

Տեղն է յիշել որ հողային հարցին նպաստաւոր լուծումին փութացումը աւելի քան երբեք անհրաժեշտ է այժմ. միանգամայն ժամանակն է վերջապէս մտածել նաեւ հայ տարրին տնտեսական եւ ֆինանսական բարգաւաճման միջոցներուն վրայ:

**ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

ա) Աշխատիլ ամէն ձեւով որ մեր երկու հիմնական պահանջները՝ համեմատական ներկայացուցչութիւն եւ ազգային ընտրութիւն՝ ընդունուին թուրք կառավարութեան կողմէ:

բ) Ջանալ որ յառաջիկային աւելի հաստատ հիմերով վրայ դրուին մեր յարաբերութիւնները եւ համագործակցութիւնը միջկուսակցական համերաշխութեան մարմինն եւ Պատրիարքարանի հետ՝ նկատի առնելով անցեալի անյաջող փորձերը եւ անոնց ցաւալի հետեւանքները:

գ) Մանրակրկիտ քննութեան ենթարկել ընտրութեան զանազան փուլերը եւ անոնց՝ մեր կազմակերպութեան մէջ ստեղծած քառասային վիճակը՝ պատասխանատուները խիստ պատիժներու ենթարկելով:

դ) Ընկեր երեսփոխանները պարտաւորեցնել որ բոլոր հայ եւ հայասէր մեպոլաներու<sup>10</sup> հետ պլոք կազմելով (հակառակ դէպքին անջատաբար) ներկայացնել առ որ անկ է հայկական նուազագոյն պահանջները, հետապնդելով անոնց իրագործումը:

ե) Պարտաւորեցնել ընկեր երեսփոխանները որ մեպոլանական իրենց ամսականէն որոշ գումար մը յատկացնեն Երկրի ուսումնական գործին համար, ի նշան գաղափարական ծառայութեան:

10.- Երեսփոխաններու:

**ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՆԴԷՊ ԱԶԳ. ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ**

Աչքի առջեւ բերելով նախորդ ընդհ. ժողովներու այս մասին տուած որոշումները եւ անոնց գործադրութեան պահուն առաջ եկած դժուարութիւնները, գործուած սխալները եւ եղած շեղումները, — պէտք է խորհիլ այնպիսի միջոցներ, որոնց գործադրութեամբը հնարաւոր ըլլար կազմակերպութիւնն ուղղակի կամ անուղղակի հսկողն ըլլալու Ազգային բոլոր հիմնարկութիւններու բարեօք եւ ազգօգուտ գործունէութեան. պէտք է մասնաւոր մեծ հոգ տանիլ ազգային (եկեղեցական, վանական եւ դպրոցական) կալուածներու բարեօք մատակարարութեան՝ կեդրոնացնելով անոնց հասոյթները կրթական եւ գիւղատնտեսական գործին:

**ՌՈՒՍԱՍՏԱՆ**

Դաշնակցութիւնը պարտի ուսու կառավարութեան հանդէպ բռնել ոչ-թշնամական դիրք մը. առ այս անհրաժեշտ է լուսաւորել ուսու հանրային կարծիքն ու դիւանագիտութիւնը՝ համոզելով որ հայ ժողովուրդը հակառուս ձգտումներ չունի եւ թէ հայաշատ եւ շէն Հայաստան մը նպաստաւոր է Ռուսիոյ շահերուն:

**ՊԱՐՍԿԱՍՏԱՆ**

Պալքանեան շրջանը մօտէն տեղեակ չըլլալով պարսկահայ վիճակին եւ անոր պահանջներուն, կը թողու Ընդհ. ժողովին՝ լսելէ յետոյ առ այս գալիք տեղեկագիրները եւ զեկուցումները, տալու հարկ եղած որոշումները:

**ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ – ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ**

ա) Կանոնագրի վերջնական մշակման պահուն ի նկատ առնել նաեւ վերջին նոր պայմանները Երկրին մէջ: Գալով օրինականացման խնդրին՝ պէտք չէ մոռնալ որ Դաշնակցութիւնը թէեւ լեկալ հողի վրայ կը գործէ Սահմանադրական Թուրքիոյ մէջ իբրեւ քաղաքական կուսակցութիւն, սակայն միանգամայն իբրեւ յեղափոխական կուսակցութիւն ան պէտք է ունենայ իր ներքին յատուկ կանոնագիրը, որուն շատ մը տրամադրութիւնները պէտք է գաղտնի մնան իրեն վերապահուած:

բ) Ցանկալի է որ ներկայ Ընդհ. ժողովը իր զբաղումներէն մեծ բաժին մը յատկացնէ՝ ձեւակերպելու համար







ծրագրային եւ նուազագոյն պահանջներու հարցերը՝ համաձայն Երկրին մէջ ստեղծուած նոր պայմաններուն: Ձեւակերպել նոյնպէս քաղաքական եւ տնտեսական հարցը եւ խորհիլ այն հնարաւոր միջոցներուն վրայ, որոնք պիտի կրնան փութացնել անոնց իրագործումը:

գ) Ընդհ. ժողովին թողլով ճշտել եւ սահմանել բիւրոններու իրաւասութեան դասաւորութիւնները՝ պէտքը կը զգանք ճշտելու հոս որ Թուրքիոյ մէջ երկու բիւրոններու գոյութիւնը աւելորդ եւ աննպատակ կը գտնենք: Կը պահանջենք որ Թուրքիոյ բոլոր գործերը թողլով Հայաստանի բիւրոյին վրայ՝ Արեւմտեան բիւրոն փոխադրել դուրսը, իր նախկին տեղը՝<sup>10ա</sup> [եւ] ի հարկին պատասխանատու մարմին մը միայն հաստատել Պոլսոյ մէջ:

դ) Պատասխանատու մարմիններու պէտքը զգալի ըլլալով սակայն, պէտք է պահել զանոնք դեռ որոշ ժամանակ մը:

ե) Եօթներորդ Ընդհ. ժողովը Դաշն[ակցութեան] Խորհուրդի կազմին մէջ բացի երեք բիւրոններու ներկայացուցիչներէն՝ մտցուցած է նաեւ Ամերիկայի Կեդր. կոմիտէի ներկայացուցիչը: Արդարութիւնը կը պահանջէ որ այս սկզբունքը տարածուի նաեւ միւս Կ. Կ[ոմիտէ]ներու վրայ ալ: Կ'առաջարկուի Ընդհ. ժողովը բարեփոխել իր նախորդին որոշումը այսպէս. Դաշնակցական Խորհուրդը կը կազմեն երեք բիւրոններու եւ Կ. Կ. երու ներկայացուցիչները:

Իւրաքանչիւր Կ. Կ. քով դատական գատ մարմիններ, որոնց պաշտօնը ըլլայ շրջանի դատական խնդիրներով զբաղիլ:

զ) Հարկ-անհրաժեշտ է Կ. Կ.ներու շրջաններուն մէջ անպայման հաշիւներ պահելու խնդիրը որոշուի այլեւս ներկայ Ընդհ. ժողովին: Եթէ կարելի է նոյնիսկ ընտրուին հաշուեքննիչները[?] իւրաքանչիւր շրջանին համար նոյն ժողովին կողմէ: Կազմակերպական գործերուն այս բաշխումը մեծ զարկ մը տուած պիտի ըլլայ ընդհանուր կազմակերպութեան վիճակին բարելաւման:

է) Պէտք է վայելուչ կերպով տօնել Դաշն[ակցութեան] 25ամեակը՝ հրատարակելով այդ առթիւ նաեւ Դաշն[ակցութեան] պատմութիւնը: Հրատարակել նոյնպէս նահատակ ընկերներու յիշատակին նուիրուած ալպոմ մը եւ ձեռնարկել համազգային հանգանակու-

թեան: Տօնելու ձեւին միօրինակութիւն տալու համար հարկ է որ Ընդհ. ժողովը որոշ ծրագիր մը պատրաստէ այդ մասին:

**ԳՐԱՒՈՐ ԵՒ ԲԱՆԱՒՈՐ ՊՐՈՊՈՍՏԱՆՆԵՐ**

ա) Դրօշակի կանոնաւոր եւ աւելի ճոխ պարունակութեամբ հրատարակուիլը ապահովել ամէն գնով: Դրօշակի մէջ աւելի լայն տեղ տալու է կազմակերպութեան՝ դաւանած սկզբունքներուն լուսաբանութեան՝ յառաջացնելու համար մեր շարքերուն մէջ կուսակցական հաստատ դաստիարակութիւնը՝ որուն ցարդ նըւազ ուշադրութիւն տրուած է:

բ) Ոյժ տալ կազմ. կիսապաշտօնական օրկաններուն ալ, պահանջելով մանաւանդ Ազատամարտէն որ սովորական օրաթերթի մը հանգամանքէն դուրս գալով մնայուն լայն տեղ տայ իր էջերուն մէջ նաեւ սկզբունքային հարցերու պարզաբանութեան, որ ցարդ պատահական եղած է միայն:

գ) Արտաքին պրոպագանդին մէջ Pro-Armenia-ին կատարած դերը մեծապէս գնահատելով կը պահանջենք ապագային համար ալ շարունակուիլը անոր հրատարակութեան եւ եթէ կազմակերպութեան նիւթական վիճակը կը թոյլատրէ՝ հիմնել նոյն ուղղութեամբ եւ նոյն պարունակութեամբ պարբերականներ նաեւ Գերմանիոյ եւ Ռուսիոյ մէջ:

Այս առթիւ Ընդհ. ժողովի ուշադրութեան կը յանձնենք պալքանեան շրջանի հետեւեալ փափաքը.

Նկատելով որ Պալքանի կազմակերպման գործին մեծ զարկ տուած են Շարժում (որոշ ժամանակ մը) եւ յետոյ Ռազմիկ թերթերը.

Նկատելով որ Ռազմիկի խափանումէն յետոյ պալքանեան շրջանը շատ բան կորսնցուց իր ղեկավար մարմինն, քանի որ Ռազմիկի խմբագիրները միանգամայն ղեկավարներն էին շրջանի կազմակերպական գործերուն.

Նկատելով վերջապէս որ թերթի մը գոյութիւնը պիտի կրնայ դարձեալ կարող ընկերներ համախմբել իր շուրջը, որոնք պիտի կրնային միաժամանակ ստանձնել նաեւ շրջանի վերին մարմնոյն դերը.

Կը փափաքինք որ Ընդհ. ժողովը նկատի առնելով այս ամէնը արտօնէ Պալքանեան Կեդր. կոմիտէին՝ իր սեփական միջոցներով հիմնելու ամսաթերթ մը՝ հայերէն եւ պուլկարերէն լեզուներով:

Առ այս, առ այժմ պէտք ունինք միմիայն կարող գործին ընկերով մը, որու պէտքը չեչտած ենք վերեւ, եւ որը կարող ըլլայ միաժամանակ խմբագրապետի դերը ստանձնելու: Մնացածը կարելի է տեղւոյ վրայ ճարել:

10ա.- Այսինքն ժընեւ:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

Թերթին կէսը պուլկարերէն ընելու մեր նպատակն է ծանօթացնել պուլկար ժողովուրդին հայու դատն ու հայկական կուլտուրան: Թերթին խմբագրութիւնը կարող ձեռքբերուն մէջ ինկած՝ մեծ խթան մը պիտի ըլլայ հայ եւ պուլկար մերձեցման մը, որը ցարդ անտեսուած է, հակառակ անոր որ վայելած ենք միշտ պուլկար կառավարութեան բարեացակամութիւնը հանդէպ մեր դատին: Պէտք է գիտնալ որ պուլկար ժողովուրդը շատ մութ եւ տարտամ գաղափար մը ունի «հայկական դատին», հայկական կուլտուրային եւ մանաւանդ նոցա անցեալին՝ հայկական պատմութեան վրայ:

Յուսով ենք ուրեմն որ մեր այս փափաք-առաջարկը լաւ ընդունելութիւն կը գտնայ ժողովին մէջ եւ նպաստաւոր լուծումի մը կ'արժանանայ, որովհետեւ մեր պրոպագանդը պէտք է կազմակերպենք հնարաւոր ամէն միջոցներով եւ ամէն ուղղութեամբ:

**ԴՐԱՄԱԿԱՆ – ՀԱՇՈՒԱԿԱՆ**

ա) Կազմակերպութեան դրամական եւ գոյքի արդի վիճակը ճշտելէ յետոյ մտածել այն աղբիւրներու վրայ, որոնք պիտի կրնային աւելի բարւոքել կազմակերպութեան նիւթական ընդհանուր վիճակը: Այդ աղբիւրներէն մին գոնէ մեր շրջանի համար պիտի ըլլայ ներքին պրոպագանդի զօրացումը, որուն պակասը տարուէ-տարի կը նուազեցնէ շրջանի դրամական մուտքը: Ուրեմն անգամ մը եւս կը շեշտենք հոս շրջուն գործիչի անհրաժեշտութիւնը մեր շրջանին համար:

բ) Հանգանակութեան գլխաւոր միջոցներէն մին կը նկատենք դարձեալ ներքին պրոպագանդը, որու ազդեցութենէն եւ տպաւորութենէն կախեալ է նաեւ հանգանակութեան քանակը:

Դիտուած է ընդհանրապէս մեր շրջանին մէջ որ ձեռնարկուած իւրաքանչիւր հանգանակութիւն, որմէ

առաջ նպատակայարմար զօրաւոր պրոպագանդ մըղ-լած է, եղած է եւ շատ արդիւնաւոր:

գ) Նախահաշուի սխտեմը ներմուծելով կազմակերպութեան մէջ՝ պարտաւորիչ ընելու է ընդհանրապէս բոլոր մարմիններուն՝ թէ՛ ստորադաս եւ թէ՛ բարձրագոյն:

Կազմակերպական ընդհանուր հասոյթի բաշխումի մասին կ'առաջարկենք.

ա) Կ. Կ-երու՝ իրենց ընդհ. հասոյթէն ծախսելու սակը բարձրացնել մինչեւ 30% առ առաւելն՝ կարենալ մեծ գարկ տալու համար ներքին պրոպագանդին:

բ) Որոշ սակ մը յատկացնել Երկրի Ի. Պ. [Ինքնապաշտպանութեան] գործին՝ կարելի եղածէն բարձր ընելով այդ սակը:

գ) Արտաքին պրոպագանդին համար նոյնպէս որոշելու է սակ մը, որու սահմանին մէջ շարժին պատկան մարմինները:

**ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Կազմակերպական բոլոր կարեւոր ոյժերը աչքի առջեւ ունենալով՝ կ'առաջարկենք խնայողութեամբ եւ նպատակայարմար կերպով բաշխել ոյժերը՝ կեդրոնացնելով զանոնք միայն մէկ կամ միւս վայրը, ինչպէս եղած է անցեալին մէջ:

Եւ այդ ընտրութեանց պահուն կը պահանջենք անպայման նկատի առնել Պալքանի գործիչի խնդիրն ալ՝ տրամադրելով ընկեր մըն ալ մեր շրջանին համար:

**Հ.Յ.Դ. ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ**





Փաստ. 1157-29

### Ա 3.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 1

Ընկերներ,

Հ. Յ. Դաշնակցութեան Պալքանեան վերջին Շրջանական ժողովը՝ գումարուած Ռոսճուք 1913 Հոկտեմբեր ամսոյն մէջ, որոշած է Կեդր. կոմիտէի վայրը փոխադրել Սոֆիա, ուրկէ մատւ ընտրած է անոր նոր կազմը հետեւեալ ընկերներէ.

Մարտիկ Յովհաննէսեան, Գրիգոր Յովհաննէսեան, Մատթէոս Յակոբեան, Պարոյր Պարոնեան, Խաչիկ Զմբուխտեան եւ Պետրոս Թազուրեան: Այս վերջինը միայն քաղաքէս մեկնած ըլլալով իր անձնական գործերով՝ հրաժարած է Կ. Կ.ի անդամակցութենէն:

Թէեւ շրջանական ժողովը փակուած է Հոկտեմբերի վերջերը, սակայն Կեդր. կոմիտէի արխիւի, գոյքերու եւ այլնի փոխանցումը Ռոսճուքէն Սոֆիա հակառակ մեր կամքին ուշացած ըլլալով՝ նորընտիր կազմս հազիւ հնարաւորութիւնն ունեցանք այսօր մեր առաջին շրջաբերականն ուղղել ձեզի:

Ընկերներ,

Հարկ չկայ յիշեցնելու թէ Պալքանեան պատերազմը, որ հրատարակուեցաւ յանուն մեր բախտակցի՝ բազմաչարչար ու բազմատանջ *Մակեդոնիոյ* ազատութեան, իր առաջ բերած աղէտներովը եւ ստեղծած խառնաշըփոք վիճակովը՝ չկրցաւ չազդել մատւ Պալքանի մեր կազմակերպութեան գործերուն վրայ ալ՝ կասեցնելով անոնց քիչ թէ շատ կանոնաւոր ընթացքը: Ամբողջ տարի մը գրեթէ Կ. Կ.է եւ տեղական մարմիններ գրկուած մնալով հաղորդակցական եւ յարաբերական ամէն միջոցներէ, անջատուած մնացին իրարմէ. միւս կողմէ ընկերներու ստուար թիւ մը պատերազմի դաշտը կը գտնուէր: Այս ամէնուն հետեւանքով էր անշուշտ, որ շրջանի բոլոր մարմինները կէս լուծուած վիճակի մը մատնուած էին եւ այս պատճառաւ ալ քանիցս հրաւիրուած ու ձգձգուած Շրջանական ժողովը վերջ ի վերջոյ գումարուեցաւ այնքան փոքրաթիւ պատգամաւորներով:

Պատերազմը վերջացաւ, բայց նա անխուսափելիօրէն մէջտեղ բերաւ տարիներով մոռցուած հայկական դատը, որը այժմ ի միջի այլոց դրուած է դարձեալ կանանչ սեղանին վրայ եւ կը զբաղեցնէ դիւանագիտական ամբողջ աշխարհը, իր լուծման վերջին փուլին մէջ հասած թուելով: Չմոռնանք սակայն որ դիւանագիտական անարգ խաղերը, որոնց նպատակն է զանազան դարձուածքներով այս կամ այն մեծ պետութեան սեփական շահերը ապահովել մեր դատը իբրեւ զէնք գործածելով իրենց այդ հակամարտ շահերու մրցակցութեան մէջ, կրնան այս անգամ եւս յուսախաբ ընել մեզ, ինչպէս պատահած է միշտ, թողլով մեզի ապաւինիլ դարձեալ մեր երկաթեայ բազուկներուն վրայ եւ դիմել ինքնապաշտպանութեան փրկարար սուրբ գործին: Ուրեմն չակնկալենք օտարներէն օգնութիւն, որովհետեւ խաբուսիկ երազներով միայն մեր ժամանակը վատնած կ'ըլլանք: Աչաւորջ դիտենք երեւոյթները եւ պատմական անցեալէն օգտուիլ գիտնանք:

Ահա մեր շուրջը կատարուող իրողութիւնները.

Մինչ մէկ կողմէ արեւելեան վեց նահանգներու կամ արեւի ճիշդը Հայաստանի բարեկրորդմանց ծրագիրներ կը մշակուին եւ կը պարտադրուին Բարձրագոյն Դրան մեծ պետութեանց կողմէ, անդին Տաճկաստանի բարլամենթական ընտրութիւններն են որ սկսած են եւ Թուրքիոյ հայ ժողովուրդը ակամայ ինքզինքը կը գրկէ քաղաքական իր ամենամուրհրական իրաւունքէն՝ ստիպեալ պոյքոթ հրատարակելով այդ ընտրութեանց դէմ, որովհետեւ պատրիարքին դիմումները եւ անոր միջոցաւ ներկայացուած հայ ազգին արդար պահանջները՝ այն է համեմատական ներկայացուցչութիւն եւ ընտրութեանց ազգային եղանակ, մերժուած են թուրք կառավարութեան կողմէ, որը կը ջանայ 20 հայ երեսփոխան երաշխատրելու փայլուն խոստումներով մեղմացնել կամ առաջըն առնել իրաւագործիկ հայերուս այս առթիւ սկսելիք պայքարին:

Արդ, ընկերներ, պատմական այս բռնակէտին՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ գործօն միակ կազմակերպութիւնը, որուն դրօշակը միշտ բարձր պարզած է իբր միակ պաշտպանը անօգնական հայուն արիւնոտ դատին, այժմ արեւի քան երբեք պէտք ունի արեւի խտացած եւ արեւի հզօր կազմով մը հետեւելու եւ հսկելու դժբախտ հայրենիքին երկունքի այս օրերուն:



## ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

353

Եւ մենք՝ Պալքանեան շրջանի բոլոր ընկերներս, այսօր հրամայական պահանջի մը առջեւ կը գտնուինք՝ սքափելու պատերազմին պատճառած թուլութենէն, բազմապատկելու մեր եռանդն ու մեր գործունէութիւնը, թեւ ու թիկունք ըլլալու ընդհանուր կազմակերպութեան, որպէսզի նա ինքնավստահ եւ խորխտ կերպով կարենայ շարունակել իր դժուարին բայց վեհ գործը:

Իմացնելով ձեզի իրաց այս վիճակը՝ կը յանձնարարենք ձեզի ջերմապէս, որ անմիջապէս տեղական ընդհանուր ժողովներ գումարելով խորհիք ձեր տեղական գործերուն կանոնաւոր ընթացք տալու միջոցներուն վրայ եւ մարմնի նոր ընտրութիւններ ընելով տեղեկացնէք մեզի անոնց արդիւնքը: Իմացուցէք միաժամանակ նաեւ թրթալցութեանց համար ձեր նոր հասցէն:

Կ'իմացնենք ձեզի ի գիտութիւն, որ Կ. Կ.ին գանձապահ ընտրած ենք ընկեր Մատթէոս Յակոբեանը, որուն պէտք է ուղղէք դրամական ձեր բոլոր առաքումները, այսպէս

**Mathéos Hagopian Rue Tirgovska 33 Sofia  
Bulgarie**

Իսկ թրթալցութեանց մեր հասցէն է

**Barouir Baronian Rue Pirotska 8 Sofia  
Bulgarie**

Խնդրենք ծանօթութիւն առնէք եւ սպասելով ձեր արդիւնաւոր գործունէութեան ու կանոնաւոր թրթալցութեանց, մնամք ընկերական սիրալիր բարեւներով

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ



1914 Յունուար 10  
Սոֆիա





Փաստ. 1157ա-90

Ա 4.– Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻՆ, Սոֆիա

Տնտեսագիտ., 5/18 Մայիս 1914

Ընկերներ!

Ձեր Ապրիլ 20 թուակիր նամակի հետ միասին եւ անպակաս ստացանք ձեր կողմէ մեր հասցէին ղրկուած թիւ 1, 2 եւ 3 շրջաբերական նամակները եւ Արեւմտեան բիւրոյի մէկ շրջաբերական նամակը, 40 հատ անդամատետր, 250 հատ (1) մէկ ֆրանքոնոց մարքան եւ նամակի պլանկաւոր թղթերէն 11 հատ միայն:

Ուրախ ենք որ երկար տատանումներէն յետոյ գտանք այն իրաւասու մարմինն, որու հետ տեղւոյս կազմակերպական գործերու համար կրնանք յարաբերութիւն պահել: Կը ներէք, անշուշտ, ձեր նամակի պատասխանը ուշացնելու համար, որովհետեւ պէտք տեսանք ընկերական ժողով գումարելու, հին եւ նոր հաշիւներ աչքէ անցնելու եւ տեղւոյս կարծիքներով կամ ընկերներու առաջարկներով միասին բեռնաւորելու այս նամակը:

Նախ ամփոփ կերպով կ'ուզենք ձեզ գիտակ ընել տեղւոյս կազմի վիճակի մասին: Ինչպէս ձեզ յայտնի է, առաջ տեղս կապուած էր Վիշապի շրջանին<sup>11</sup>, բայց 1912ի Սեպտեմբերէն ի վեր լքուած է եղեր ընդհանրապէս, որովհետեւ տեղի ունեցող քաղաքական դէպքեր յարաբերական հնարաւորութենէ զրկած էր տեղիս կազմը: Պալքանեան երկրորդ պատերազմը արդէն աւելց այս տեղէն տարաւ հայ գաղութը եւ բոլոր ընկերները: Պուլկարական վերագրաւումի ժամանակ կամաց կամաց քանի մը հին ընկերներու հետ տեղս եկան հաստատուեցան նոր ընկերներ:

Ինքնրատինքեան պէտք զգացուեց տեղւոյս կազմը վերանորոգելու: Ընկերներու հետ միասին ձեռնարկուեց վերակազմութեան աշխատանքին, եւ ուրախ ենք ըսելու, որ այդ ուղղութեամբ եղած աշխատանքը յաջողութեամբ պսակուեցաւ:

Ձեր ղրկած անդամատետրեր եւ մարքաներ բաւական ոգեւորութիւն ստեղծեց ընկերներու մէջ, որովհետեւ մինչեւ այսօր լոկ ընկերական վստահութեամբ էր որ գործերը կը տարուէր, մանաւանդ անդամավճարներու գանձման համար երբեմն դժուարութեանց կը հանդիպէինք: Յունուարէն սկսեալ մինչեւ Ապրիլի վերջ ամսավճարներ գանձուեցան եւ փոխարէն մարքաներ տրուեցան:

Ձեզ ղրկուած ներփակ հաշուեկշռէն պիտի տեսնէք, որ 910 Սեպտ. մինչեւ 1913 Դեկտ. 31ի հաշիւներէն, հին

գանձապահի տրամադրութեան տակ կար քիչ մը գումար, որմէ քիչ մը օգտուեցանք վերակազմութեան գործը գլուխ հանելու համար, իսկ մնացածն ալ գանձուելով նոր գանձապահին յանձնուած է:

Ճիշտ այսօր փոստային յանձնեցինք (110) հարիւր տաս ֆրանք, Կ. կոմիտէիդ գանձապահ պ. Մատթէոս Յակոբեանին յանձնուելու համար: Այդ գումարէն գեղջելով «Դրօշակի» մէկ օրինակի բաժնեգին, մնացած գումարը հաճեցէք անցնել Կ. կոմիտէութեան սնտուկի հաշուին եւ փոխարէն ղրկեցէք մեզ ընկալագիր մը:

Նկատի ունեցէք որ տեղիս կազմի գոյութիւնը կապուած է պանդուխտ մշտի բանուորներու վրայ. տեղիս տնուորներ, արհեստաւորներ եւ խանութպան էանաֆներ միշտ հեռու ապրած են կուսակցական կեանքէն. նրանց մէջ յեղաշրջում առաջ բերելու համար, երկար եւ մեծ աշխատանք պէտք է: Մինչեւ որ տեղացի գիտակից երիտասարդներ չկարողանանք քաշել մեր շարքերի մէջ, տեղիս կազմ միշտը երբեք չի վիճակի մէջ կը մնայ, որովհետեւ եթէ գործեր այսպէս շարունակուին, մեր ընկերներէն մեծ մաս պիտի հեռանան այս տեղէն: Դեկտեմբերի մէջ, երբ վերակազմութեան գործին ձեռնարկեցինք, առաջին թափին 50է աւելի անդամներ ունեցանք, բայց նաւահանգստի գործերու չգոյութեան պատճառաւ ճիշտ այն շաբթուան մէջ 20-25 ընկեր թողուցին ուրիշ կողմ գնացին:

Հակառակ բոլոր այդ աննպաստ պայմաններին մեր ընկերներ այնպէս խոհականութեամբ շարժուած են, որ տեղիս եկեղեցա-դպրոցական գործերու ղեկը յանձնուած է եղեր մեր եւ մեզ համակիր մարդկանց ձեռքը: Մի շաբաթ առաջ տեղի ունեցող թաղական ընտրութեան մասնակցեցանք, ոչ պաշտօնապէս եւ անուղղակիօրէն. արդիւնքը նոյնիսկ զմեզ զարմացուց, եւ ժողովուրդը իր ձայնը տուաւ մեր մատնանշած թեկնածուներին:

Թրակիոյ ուրիշ վայրերի մէջ, դաշնակց. կազմ գոյութիւն չունի, որչափ որ մենք գիտենք: Միայն թէ վերջերս իմացանք որպէս թէ Միդչայի մէջ Գարեգին Նժդեհ<sup>12</sup> ակումբի մը կազմութեան ձեռնարկած է, բայց չգիտենք, թէ ի՞նչ նպատակ է որ կը հետապնդուի: Եթէ կարելի է մեզ իմացուցէք թէ կազմակերպութիւնը որ

11.- Վիշապ – կու. ծածկանուն Կ. Պոլսոյ: Տեսնել նաեւ թիւ 3 ծանօթագրութիւնը:  
12.- Տէր Յարութիւնեան Գարեգին:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

աստիճան վստահութիւն կը ներշնչէ յիշեալ անձի հանդէպ, կամ անոր հետապնդած ուղղութեան, եթէ ունի:

Կիւմիւլիւմի մէջ հիմա մանաւանդ բաւական երիտասարդութիւն կայ, միայն թէ նախաձեռնող ուժեր կը պակսին: Վերջերս հոն գացած եւ հաստատուած է Էտիրնէի մեր դաշնակցական ընկերներէն Յրուանդ Պարոնեան: Եթէ դուք ծանօթ էք յիշեալին, կամ գիտակէք որ վստահելի է, մենք կը գրենք պէտք եղածը նրան: Կամ հասցէն ձեռք բերելով ձեզ կը ղրկենք:

Ձեր մէկ շրջաբերականով թուրք լրտեսներու գոյութիւն յայտնած էիք: Թէեւ հոս այդպէս նորեկ դէմքեր չենք տեսած, բայց հինէն մնացած մէկ մը կայ, որ մեզ կը թուի թէ վարագոյրի տակէն բաւական վտանգաւոր խաղեր կը խաղայ: Այդ թուրքը՝ Թուրքիոյ զինուորական հարիւրապետներէն աքեչացի Րիզա բէյն է, որ ժամանակ մը տեղւոյս աւտոնոմիստների պարագլուխ եղած է: Հիմա ալ առանց գործի կ'ուտէ-կը խմէ մանկու գայ, եւ թուրք կառավարութենէն առատ ուճիկ կը ստանայ: Բաւական հիմնաւորող կասկածներ ունինք ատոր վրայ, եւ երբեմն թրանզիթ թրեմէն վար առնողներ կ'ըլլան կամ Պոլսոյ նաւահանգիստ ելնողներ, որ տէտէաղածցի են. չափէն աւելի կը նեղեն եւ կը բանտարկեն: Կ'աշխատինք հնարաւոր եղածի չափ մանրամասն փաստեր ձեռք բերել, միայն թէ ձեր բոլոր ազդեցութիւնը գործ դրէք տեղւոյդ պուլկարական տիրող շրջանակներու վրայ, որ ուշադրութեան առնեն այդ պարագան, որովհետեւ տեղական կառավարութիւնը շատ երես կու տայ այդ սրիկային:

Փութացէք մեզ ղրկել Պալք. ռայոնական ժողովի որոշումներ, եւ ատենագրութեանց պատճէնը ղրկել:

Եթէ կարելի է, կը խնդրէինք մի քանի հատ յեղափոխական կեանքէ առնուած թատերական պատկերներ, եթէ ունէիք, ղրկէիք, որովհետեւ մտադիր ենք երբեմն փոքրիկ հանդէսներ սարքել, բայց այդ տեսակ նիւթեր չունինք որ օգտուինք:

Ընկերական բարեւաններով՝  
ի դիմաց Տէտէաղածի ենթակոմիտէի

Գանձապահ  
ՍԱՆԱՏՐՈՒԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԱՏ[ԵՆԱՊԵՏ] ՄԻՐԶԱՅԵԱՆ (ՏէՐՎԻՇ)

Խ. ԳԱՐԵԳԻՆ ՄՈՍԿՈՅԵԱՆ (ՃԵՐՄԱԿ)

Յ.Գ.- Վերջերս տեղւոյս մակեդոնացի գաղթականներու քոմիսիան անուղղակի հալածանք մը սկսած է տեղւոյս թէ տնուոր եւ թէ նաւահանգիստի բանուոր հայերի դէմ: Տնուորներին շատ անգամ բռնութեամբ իրենց վարձած տներէն դուրս կը թափեն եւ իրենց գաղթականները կը տեղաւորեն: Հիմա ալ մեծ թափով մը կ'աշխատին մաքսատան մէջ աշխատող հայ բանուորները դուրս ձգել եւ անոնց տեղ պուլկարներ տեղաւորել: Այդ մասին որչափ կարելի է տեսնուեցէք մակեդոնական կազմակերպութեան շէֆերու հետ. այդ հալածանքին գոնէ շուտով վերջ մը դրուի, եթէ ոչ տեղս գտնուող մանաւանդ ընտանիք ունեցող աշխատաւորներու վիճակը յուսահատական կը դառնայ:





Փաստ. 1157-35

**ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԷ**

**Բ 1.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 7  
Հ.Յ.Դ. ՊԱԼՔԱՆԻ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ**

Ընկերներ!

Համերոպական փոթորիկը անակնկալօրէն շղթայագերծ՝ տակաւ կը սաստկանայ՝ իր մոլեգնած ալիքները մղելով Եւրոպայի քարտէսէն հեռու վայրերը:

Այդ ահեղ ու սահմնկեցնող փոթորկի թանձր մառախուղը կը մթագնէ օրը օրին Թուրքիայի արդէն չարաբաստ մթնոլորտը:

Բազմատանջ ժողովուրդներու ճակատագիրը վարող «Երիտասարդ Թուրքիան»՝ ազատուած խելակորոյս Եւրոպայի խնամակալութենէն եւ բարոյական փրեսփիժէն, սկսած է յախտուն կերպով ընթացք տալ իր թէ արտաքին եւ թէ ներքին այլատեսաց քաղաքականութեան:

Մենք շատ էլ չենք մտածեր, թէ փոթորկի վերջաւորութեան ի՞նչ է պատասխանելու «Երիտասարդ Թուրքիան» Եւրոպայի հաշուեյարդարին:

Ինչ մեզ գերազանցապէս կը շահագրգռէ, այդ այն հալածողական քաղաքականութիւնն է, որ այդ երկրի վարիչները ուժգնօրէն ի գործ կը դնեն այսօր. հպատակ ոչ-մահմետական ազգերու եւ Հայաստանի մէջ յատկապէս մեզ դէմ:

Թուրքիայի դատարկ գանձը՝ անկարող հայթայթել ընդհանուր գորահաւաքի ծախքը, զինուորական բարձր իշխանութեան հետ օրինաւոր կերպով կը կողոպտէ մանաւանդ ազգաբնակչութեան ոչ-մահմետական տարրերը: Այս նոր սիստեմը աւելի մեծ եւ ընդվզեցնող [չափեր] կը ստանայ մանաւանդ ծայրագաւառներում՝ Հայաստանում:

Այդ գրաւումները երբեք նման չեն քաղաքակիրթ երկրներու մէջ գորահաւաքի ժամանակ գործադրուած զինուորական գրաւումներուն, այլ բնաջնջումի մի նոր եղանակ է՝ բարձրէն ծրագրուած, որի անմիջական հետեւանքն եղաւ Երկրին մէջ, խստամբեր ձմրան նախօրեակին արդէն սկսուած սովը:

Այդ դեռ ոչինչ. գորահաւաքը կը դատարկէ մեր բնագաւառի ամէն մէկ անկիւնը աշխատող ձեռքերէ եւ ազգաբնակչութեան ինքնապաշտպանութեան անհրաժեշտ տարրերէն. իսկ թուրք գաղտնի ոստիկանութիւնը մասնաւոր հրահանգներով խստօրէն կը հետապնդէ երկրի մէջ մեր գործօն ընկերները:

Այսքանը բաւական են ապացուցանելու, ընկերներ, որ կ'ապրինք հաւանական արհաւիրքներու նախօրեակին:

Համաշխարհային ռէաքսիոնի այս օրերուն, երբ եւրոպական դիբլոմացիան կորուցեր է իր հեղինակութիւնն ու բարոյական դիմագիծը՝ թուրք անուղղայ բռնակալութեան աչքին, յեղափոխական շարքերու յստակատեսութիւնն ու վարկէնի լրջութեան գիտակցութիւնը միայն կարող են սթափեցնել զայն իր խելագարութենէն:

Ներկայ ծանր թուրքութեան, որոնցմէ ամէն մէկը նոր անակնկալներ կը բերէ մեզ. անհրաժեշտ է, որ առանց մեր պաղարիւնութիւնը կորցնելու, աւելի քան պինդ փարիւնք մեր դրօշակին, որը բարձր պահելու վայրկեանը հասած է: Այս օրերուն է, որ մեզնէ ամէն մէկը դուրս գալով իր սեփական կաշուէն եւ մոռնալով նիւթական թէ բարոյական մասնաւոր հաշիւներ, հաւաքաբար ընթացք պիտի տայ յեղափոխական գործին:

Դէպի գործ! ընկերներ. անթերի պարտաճանաչութեամբ ի կատար ածելու մեր յեղափոխական բոլոր յանձնառութիւնները:

Աշխատանքներու արդիւնաւորման համար ճշգրիտ կերպով հետեւել մեր կազմական կանոնագրի բոլոր տրամադրութիւններուն՝ կը լինի մեր կուսակցական առաջին պարտականութիւնը. կազմակերպական անհատներու բարոյական դիմագիծը բնորոշող միակ յատկանիշը, տագնապալից ժամանակներու մէջ. միմիայն անոնց





## ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՐ

357

կազմակերպական օրենքներու հաւատարմօրէն ենթարկուելու ընդունակութիւնն է:

Աւելորդ է ասել, որ թերութիւններ, որոնք երէկ յանգանք կը համարուէին, այսօր դաւաճանութեան պիտակը պիտի կրեն:

Պալքանեան կեդրոնական կոմիտէն ընդ առաջ գնալով կազմակերպական բարձր մարմիններու անմիջական հրահանգներուն [ձեռնարկած է] վերակազմութեան: Ուստի կը յանձնարարէ, որ անյապաղ փութացնէք ձեր եռամեայ հաշուեկշիռը եւ բարոյական գործունէութեան տեղեկագիրը:

Հայաստանի բիրոյի «Արեւմտեան հատուածը»՝ Պալքանի կազմակերպութեան ուժ տալու անհրաժեշտութենէն առաջնորդուած, այս անգամ մեր շրջանն ուղարկել է մի գործիչ-ընկեր<sup>12ա</sup>, որը պիտի շրջի մեր բոլոր վայրերը:

Կարեւոր կը համարենք ձեզ մի անգամ եւս յիշեցնել, որ պարտաւոր էք ամենախիստ զգուշաւորութիւն եւ աչալրջութիւն ցոյց տալ, այս շփոթ օրերուն, յանուն երկրի ինքնապաշտպանութեան կատարուող զանազան նախաձեռնութիւններու, որոնք ցորչափ չեն բխիր կազմակերպական պատասխանատու բարձր շրջաններէ, որիչ ո՛չ մի հետեւանք կարող են ունենալ, եթէ ոչ վատթարացնել երկրի կացութիւնը եւ բազմապատկել ու խտացնել նոյնիսկ թրքական պաշտօնական թէ անպաշտօն շրջաններում ջարդի բնագոյները:

Յանձնելով այս բոլորը ձեր լուրջ ուշադրութեան, լիայոյս ենք, որ անյապաղ կը ձեռնարկէք անոնց իրականացման, ի սէր մեր ընդգրկած գաղափարին եւ ընդհանուր գործին:

Յաջողութիւն ցանկանալով ձեզ՝ ընկերական բարեւներով  
Հ.Յ.Գ. ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿՈՄԻՏԷ

Մեր նոր հասցէն հետեւեալն է.–  
Mathéos Hagopian  
N 33, Tirgouska, 33  
Յանձնել Կ. Կ.ին

Ստանալնիդ իմացուցէք

2 Հոկտ. 1914, Սոֆիա

12ա.- Յիշեալ գործիչը Խաչիկեան Տիգրանն է, ծանօթ Արզուման ծածկանունով:



Մատեան թիւ 1190ա, էջ 511-12  
N° 172

**Բ 2.- Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ**

Սոֆիա, 13 Հոկտ. 1914

Ընկերներ!

**Ձեզ սեպտ. 29ին հեռագրած ենք հետեւեալը.**—  
Tiflis, Horizon, Buroyin – pas de nouvelles de Constantinople votre adresse – renseignement de vos cercles – Adresse Mathéos Hagopian, getronagan<sup>13</sup>. Մի քանի օր ետք ընկ. Արզումանեան<sup>14</sup> ձեզ գրած է մանրամասն նամակ յանուն Կեղրոնական կոմիտէի:

Թէ հեռագրի եւ թէ նամակի շարժառիթները եղեր են՝

- ա) Պոլսից եղած թղթակցութիւններու սակաւութիւնը.
- բ) Կովկասում կատարուածներուն մասին այստեղ եղած վնասակար տարածայնութիւնները.
- գ) Մեր ընկերներուն Կովկաս անցնելու եւ շարժման միանալու անհամբերութիւնը.
- դ) Իսկ այդ բոլորի վրայ մեր բացարձակ անգիտութիւնը անցքերու մասին:

Երկու օր առաջ տեղս եկաւ ամերիկաբնակ պարսկաստանցի մի ընկեր. նրա հետ Ս[իմոն] Վ[րացեան] տեսակցելով տուել էր մանրամասնութիւններ, ճանապարհին՝ մարմիններուն հաղորդելու համար: Մեր ստացած տեղեկութիւններուն համաձայն, այդտեղ շարժումը անսպասելիօրէն միխթարական է: Մենք հասանք այն եզրակացութեան, որ մեր բոլոր ընկերները՝ դատապարտուած դաշնակցական գործով, կարող են վերադառնալ, որ մեր նամակներուն վրայ խիստ գրաքննութիւն չի կատարուիր, որ մենք կարող ենք ազատօրէն թղթակցել:

Ուստի, եթէ մեր առաջին նամակին դեռ եւս չէք պատասխաներ, կը խնդրենք անմիջապէս պատասխանել: Բացի այդ, մեզ լուսաբանէիք, թէ աշխատանքի ի՞նչ բաժին վիճակուած է այս օրերուն Պալքանի ընկերներուն, ըլլայ նիւթական կամ բարոյական: Եթէ կան ընկերներ, որոնք ի վիճակի են օգտակար դեր կատարելու, կարո՞ղ ենք աջակցիլ, որ անցնին Կովկաս: Վերջապէս բարի եղէք մեզ մասամբ պարզաբանել Կովկասի մեր գործերը:

րու իրական կացութիւնը:

Մեզ կը հաղորդեն Պոլսից, որ հայկական գաւառներուն մէջ կացութիւնը գնալով կը վատթարանայ, գինւորական իշխանութիւնը կ'այրէ փախստական հայ գինուորներու ընտանիքներուն պատկանող տները: Էրզրումում 20 տուն այրուել են, գնդակահարուել են շատ երիտասարդներ: Վանի մէջ 5 դէպք, շատ անգամ անմեղ տեղը: Զէյթունի մէջ հալածանքը շատ աւելի խիստ է. այնտեղ ծեծի տակ մեռցուցեր են իշխան Նազարէթ չաւուշը. հաւաքել են շատ զէնքեր եւ երկաթեայ գործիքները: Կառավարութիւնը պաշտօնական թալանը կը շարունակէ. մասնաւորաբար հայ գիւղացիներէն խլուած են նոյնիսկ տան կարեւոր հացահատիկները. Հայաստանում ոչ մի տեղ աշնանացան չէ եղել. առաջիկայ տարի սովը անխուսափելի կը դառնայ: Նոյնպէս կը կատարուին ամէնէն շատ ձերբակալութիւններ:

Մեր սիրելի ընկերոջ Դումանի<sup>15</sup> մահը կակիծով համակեց Պալքանի բոլոր ընկերները. յանձնարարեցինք որ ամէն տեղ հոգեհանգիստ կատարեն: Երէկ Սոֆիայի գաղութին ներկայութեան հանդիսաւոր պատարագ եւ հոգեհանգիստ կատարուեցաւ. Արզումանեանը տուաւ մանրամասն կենսագրական. գաղութը խոր կերպով ազդուեցաւ. իր կողմէ հեռագրեց Դումանի ընտանիքին: Հոգեհանգիստէն ետք այցելեցինք անմահ Քրիստափորի եւ Վռամշապուհի զոյգ գերեզմանները<sup>16</sup>, օրհնել տուինք:

Ընդհանրապէս տրամադրութիւնը բարձր է Պալքանի մէջ. հակառակ տնտեսական տագնապի առաջացուցած նեղութիւններուն, բարոյալքում չկայ մեր շարքերուն մէջ. ամէնքն էլ խոր հաւատքով լեցուած են դէպի մեր գաղափարը եւ մեր բարձր մարմինները. միայն սպասողական վիճակը եւ յեղափոխական կենդանի գործին առայժմ մասնակցելէ զրկուած ընկերները ջղագրիւ վիճակի մէջ են:

Մենք շատ լաւ գիտենք, ընկերներ, որ ձեր չափազանց զբաղուած լինելը հնարաւորութիւն չի տար գուցէ յիշելու մեր շրջանը, որ առայժմ կենդանի գործունէութեան վայրէջ հեռու մնացեր է, բայց մի մոռանաք, որ այս շրջանը կազմուած է վերին աստիճան զոհաբերող եւ անձնուէր հայաստանցիներէ, որոնք ամէն մի րոպէ պատրաստ են առաջին ազդանշանին:

Սպասելով ձեր պատասխանին,  
Ընկերական բարեւներով  
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԷ

13.- Ֆրանսերէն – Թիֆլիս, Հորիզոն, Բիւրոյին – Կ. Պոլսէն ձեր հասցէին տեղեկութիւններ չկան – Ձեր շրջանի տեղեկութիւնները [մեր] հասցէին՝ Մատթէոս Յակոբեան: Կեղրոնական [կոմիտէ]:  
 14.- Արզումանեան – բուն անունով Խաչիկեան Տիգրան:  
 15.- Նիկոլ Դուման – բուն անունով Տէր Յովհաննիսեան Նիկողայոս, հռչակաւոր մարտական ղեկավար, մահացած Սեպտ. 23ին:  
 16.- Քրիստափոր Միքայէլեան եւ Վռամշապուհ Քենտիբեան, մահացած 1905 թ. մարտ 4/17-ին, Ապտուլ Համիտ սուլթանին սահմանուած ռուբի փորձարկման ընթացքին:



Փաստ. 1157-45

Բ 3.- Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՍՈՖԻԱՅԻ ՄԱՐՄՆԻՆ

Սոֆիա, 25 Հոկտ. 1914

Ընկերներ!

Ստացանք ձեր N° 11, Հոկտ. 19 թուակիրը: Կոմիտէի պակաս անդամի ընտրութիւնը կատարուած լինելով կազմակերպական օրէնքներու տրամադրութեան համաձայն, կը համարենք զայն վաւերական:

Այս անգամ ի գիտութիւն բոլոր ընկերներուն հաղորդում ենք, որ Պալքանեան Կ. կոմիտէն Պոլիս դրկած լինելով մասնաւոր սուրհանդակ<sup>17</sup>, կրցած է տեղւոյն վրայ ծանօթանալ իրերու կացութեան: Եթէ մէկ կողմէն բազմաթիւ են այն փաստերը, որոնք կրնան մեր մէջ առաջ բերել ոգեւորութիւն, պակաս չեն միւս կողմէն դէպքեր, որոնց առաջ ոգեւորութենէ աւելի յեղափոխականի սառնասրտութիւն անհրաժեշտ է: Կովկասահայ հատուածը եւ թրքական հատուածը միաժամանակ ողողուած են պատերազմի արհաւիրքով: Երկու կողմն էլ հսկայական բանակներից ոտնատակ է լինում ամբողջ կեդրոնական Հայաստանը: Կռուող բանակներու վրէժխնդրական մաղձը երկու կողմն էլ պիտի թափուի մեր հողերուն վրայ, բայց այդ կողմերէն մէկը՝ թրքականը մեզ համար դեռ վերապահած է չարաբաստանականիւններ: Իրիտնաւոր հայութիւնը իր սեփական երկրին մէջ կը սպասէ պատերազմական պատանդի սրտաճաք սարսափով: Մայրաքաղաքի եւ գաւառներու մեր ամենաձեռնհաս ընկերները՝ չնայելով օտարահպատակ, որոշած են կամովին մնալ Տաճկաստան մինչեւ դէպքերու վերջը, որպէսզի թուրք ղեկավար շրջանները հեռացնեն իրենց գլխէն Դաշնակցութեան Կովկասում ունեցած... Ինչ որ ինիցիատիւի վախը<sup>18</sup>: Մեր պատասխանատու շրջանները որոշել են մինչեւ իսկ շրջաբերականներով յանձնարարել հայ ժողովրդին որ այն վայրկենին, որ թշնամի բանակը ոտք դրեց հայրենի հողին վրայ, նա պէտք է պաշտպանէ անոնց վայրագութիւններուն դէմ իր դրացիները:

Պալքանեան շրջանը աշխարհագրականօրէն շատ մօտ կանգնած լինելով թրքական ոստանին, որու հարկըրաւոր ազենտ-սրովակատորները<sup>19</sup> կը վիստան մանաւանդ պուլկարական մայրաքաղաքում, պարտական է զսպել իր արտայայտութիւնները, որքան էլ այդ դժուար լինի: սառն վերաբերմունքը աւելի յեղափոխականավայել է քան թէ ամբոխային տարերային պոռթկումը, որը չի կրնար ունենալ ներուժ յարատեւութիւն:

Ուստի, սիրելի ընկերներ, յանձնարարում ենք որ ձեր շրջանում հրահանգէք ծայրայեղ զգուշութիւն եւ գաղտնապահութիւն մեր գործերի մասին: մեր շրջաններէն դուրս գտնուողներու համար, մէկդի առած բացառութիւնները, այնքան էլ մեծ արժէք չունի գուցէ հայ ժողովրդի եւ մեր բազմաթիւ թանկագին ընկերներու ապահովութեան խնդիրը, իսկ ձեզ համար այդպէս չէ անշուշտ: Խմբական թէ ընդհանուր ժողովներով արէք հարկ եղած թելադրութիւնները:

Պուլկարահայ թեմի կազմակերպական գործը դեռ չաւարտած, Կ. Պոլսի պատրիարքարանի հրահանգով սկսուած է կանխապատրաստութիւն առաջնորդական ընտրութեան: Հ. Յ. Դ. եան Ցրդ Ընդհ. ժողովի որոշումներու բացայայտ տրամադրութեամբ, մեր մարմինները կարող են մասնակցել այն արտակուսակցական ձեռնարկներուն, որոնց մէջ կայ ժողովրդական ձայնատուութեան սկզբունք: Ուստի կազմուելիք պատգամաւորական ժողովին համար Սոֆիայի կողմէ ներկայացուելիք պատգամաւորի ընտրութեան գործում աշալուրջ մասնակցութիւն ունեցէք, նպատակ ունենալով ձեր քուէները կեդրոնացնել մեր տեսակէտներու մօտ անձնաւորութեան մը վրայ:

Աշխատեցէք շուտափոյթ իրակացնել հաւաքատեղիի խնդիրը: Մի մոռանաք եռամսեայ հաշիւները ղրկել, միաժամանակ գործունէութեան բարոյական տեղեկագիրը եւ վիճակագրական տախտակը:

17.- Պոլիս դրկուած մասնաւոր ստրիանդակը Պալքանի Կեդր. կոմիտէի անդամ Յովհաննէսեան Մարտիկն էր:  
18.- Նախաձեռնութեան:  
19.- Խռովարար, գրգռիչ գործակալները:

Ընկերական բարեկենսով  
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԷ





Մատենան թիւ 1190ա, էջ 554-557  
N° 219

**Բ 4.– Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊՈՒՔՐԷՇԻ ՄԱՐՄՆԻՆ**

Սոֆիա 1 Նոյեմբ. 1914

*Ընկերներ!*

Ստացանք ձեր թիւ 39, 29 Հոկտ. նամակը. մեր N° 156 եւ 159 նամակները կը հաստատէք, իսկ 19 Հոկտ. N° 169 նամակը՝ ոչ. արդեօք չէ՞ք ստացեր. այդ նամակով տուած ենք մի քանի պարզաբանումներ ռուս-թրքական պատերազմի մեր մասնակցութեան եւ կամաւորական հարցի առիթով:

Այժմ երբ պատերազմը իրականութիւն դարձաւ, աւելի քան անհրաժեշտ դարձաւ ճշդել անելիքը մեր՝ Պալքանի ընկերներու: Ուրախ ենք, որ այդ մտահոգութիւնը Պուքրէշի ընկերները եւս կը զբաղեցնէ, ինչպէս եւ մեր շրջանի բոլոր մարմինները: Ոչինչ չունենք ասելու ձեր ռուսաց դեսպանատան հետ սկսած բանակցութիւններին, եթէ այդ կատարուեր է շատ գաղտնի եւ զգուշաւոր:

Կ. կոմիտէս, մանաւանդ պատերազմի յայտարարութենէն յետոյ, երկար խորհրդակցութիւններ ունեցած է Պալքանի ընկերներու բռնելիք դիրքի մասին: Բացի այդ գրած է Արեւելեան բիւրոյին եւ մասնաւոր սուրհանդակ դրկած է Կ. Պոլիս խորհրդակցելու ուղղակի Հ[այաստան]ի բ[իւրոյ]ի Արեւմ. հատուածի ընկերներուն հետ: Երկու օր առաջ նոյնպէս Պոլսէն եկաւ առանձին մի սուրհանդակ, կարգ մը անհրաժեշտ հրահանգներ հաղորդելու համար:

Արդ, ընկերներ, կարծենք ձեզ համար բոլորովին հասկանալի կը լինի, թէ որքա՛ն զգուշաւոր շարժուիլ պէտք է այսպիսի ժամանակի մը մէջ, երբ փոխ-յարաբերութիւններու գործը չկրնալով թղթակցական ճանապարհով վարել՝ ստիպուած ենք սուրհանդակներով բանակցիլ:

Նախքան կամաւորական խնդրի մասին խօսիլը, անհրաժեշտ կը սեպենք ձեզ տալ մի քանի մանրամասնութիւններ թուրքերու եւ մեր յարաբերութիւններու մասին:

Մասնաւորաբար պատերազմի յայտարարութենէն ի վեր ծայր տուած է մեծ անվստահութիւն դէպի հայերը. իսկ թուրք վարի խաւերուն մէջ ջարդի բնագոյնները օրը-օրին կը սաստկանան: Զինուորական իշխանութիւնները կը շարունակեն զինաթափ ընել հայ զինուորները: Կ. Պոլսում ազգ. իշխանութիւնները դադրել են կառավարութեան համար լսելի լինելէ: Որպէսզի չարիքի առաջ-

քը առնուի, պատրիարքարանը շրջաբերականներ հանեց. մեր կիսապաշտօնական օրկան «Ազատամարտ»ի խմբագրականը նոյնպէս դիտաւորեալ է: Մեր ընկերները, չնայելով շատերը օտարահպատակ, որոշել են մնալ թուրքիայում, մինչեւ դէպքերու վերջաւորութեան, որպէսզի կարողանան ցրուել թուրքերու այն կասկածը, որ իբր թէ մենք Կովկասում ունենք... ինչ որ ինիցիատիւ<sup>17</sup> ընդդէմ Թուրքիային: Մէկ խօսքով մեր ամբողջ ժողովուրդը եւ մեր կազմակերպութեան ամենավաստակաւոր եւ ձեռնհաս ընկերները կը մնան այդ դժոխքին մէջ իբրեւ պատերազմական պատանդ:

Ահա կացութիւնը. դրա վրայ աւելցրած Կարինի եւ Վանի անմեղ կախաղանները, հայկական տներու հրկիզումները, Կիլիկիայի հարստահարութիւնները, ձերբակալութիւնները, պաշտօնական-անպաշտօն կողոպուտը եւ կոտորածի համատարած սարսափը՝ արդիւնք երկրի վարչութեան մէջ ծայր տուած անիշխանութեան եւ մանաւանդ նոյն այդ իշխանութեան այլատեսաց քաղաքականութեան:

Ահա այսպիսի հանգամանքներու մէջ է, որ մեր առաջ դրուած է Պալքանում կամաւորական խմբեր կազմակերպելու շատ ծանր եւ պատասխանատու խընդիրը: Գործին ձեռնարկելէ առաջ, պէտք է ըմբռնել, որ մենք ստիպուած ենք բոլորովին ենթարկուել եւ ենթարկել մեր բոլոր շրջանները conspiratif (դաւադրական) ձեռնարկներու ժամանակ անհրաժեշտ բացառիկ միջոցներու եւ տրամադրութիւններու: Այս տեսակէտով բաց եւ անզգոյշ եղանակով արտաքին բանակցութիւններ վարելու եւ կամաւորներ խմբելու եւ անկազմակերպ առաքումը, ո՛չ միայն գործը ինքնին վիժել կու տայ, այլեւ սարսափելի անակնկալներու պատճառ կը դառնայ, երբ նկատի առնէք վերեւ մեր թուածները թուրքիայի վերաբերմամբ եւ այն լրտեսական, փրովոկատորական հսկայ ցանցը, որը խորամանկօրէն կազմակերպուած է թուրքերու կողմէ ամբողջ Պալքանի մէջ՝

- 1- Բոլոր ռուսական եւ այլ դեսպանատները լրտեսուած են.
- 2- Հայկական գաղութները նոյնպէս.
- 3- Պոլկարիոյ մէջ առայժմ կայ խստութիւն հայ փախստականներու դէմ.
- 4- Լրտեսութիւն եւ հայերու մէջ:



**ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

Ահա՛ այս բոլորը յանձնելով ձեր լուրջ ուշադրութեան, կը յանձնարարենք, որ եթէ մինչեւ ցարդ գործը տարել էք աւելի անզգոյշ եղանակով, յաջորդ բանակցութիւնները կատարուեն բոլորովին դաւադրական ճանապարհով: Նախ աշխատէք սահմանափակուել գուտ կուսակցական պատասխանատու շրջաններում: զգուշանալ բոլորովին նոյնիսկ անհատ դաշնակցականները գործին մէջ խառնելէ: կազմակերպական այն ընկերները, որոնք կ'ուզեն երթալ, պէտք է ենթարկուին խիստ ընտրութեան: անոնք որ պիտի երթան, ենթարկուելու են խիստ դիսցիպլինի, ապա թէ ոչ անմիջակամօրէն եւ շտապով յետ կը դարձունեն: *մինչեւ ատոնց հեռանալը՝ բացարձակապէս արգիւտած է խմբուել, խօսել եւ պատմել սրան նրան իրենց դիտարարութիւնը: Զգուշացրէք անհատներ երթալ ինքնազուխ՝ հիւպատոսարան կամ ա՛յս ու այն անհատի մօտ, որ կապ ունի խնդրին հետ: Բանակցութիւնները պէտք է վարել միայն եւ միայն մարմնի միջոցաւ:*

Ակնկալելի է լուրջ կերպով այլ միջոցներու մասին, որոնք պէտք է ձեռք առնել գործի թեքնիք մասի համար: Զի կարելի բաց թողնել, որ խառնիխտում եւ անկարգ կերպով շարժուեն դէպի վայրը: պիտի մտածել զանոնք վերածելու յարմար կռուիներու, ղեկավարած կարող ընկերներէ եւայլն:

Այս եւ նման խնդիրներու համար **Կ.** կոմիտէն կ'աշխատի մէկը ուղարկել ի հարկին ձեզ հետ բանակցելու համար:

Զեր գրածէն կը հասկացուի, որ տեղիդ ռուսաց դեսպանին հետ բանակցութեան միջոցին չէք խօսած նիւթականի մասին: Մենք հոս բաւական ժամանակէ ի վեր, բոլորովին գաղտնի ճանապարհով, սկսած ենք բանակցութիւններ: կը թուի թէ նիւթական կողմն էլ որոշ չափով մեզ համար նպաստաւոր կերպով պիտի յաղորդին ուր է, եթէ ընկերները ունեն իրենց սեփական միջոցները լաւ է, որ գոնէ մաս մը իրենք զոհաբերեն, բայց մի մոռանաք որոշ զոհաբերութիւն էլ իրենցից խլել (ռուսաց հիւպատոսարանից), գոնէ ռուսական սահմանէն ներս:

Վերջապէս գործը մի անգամ որ սկսուած է, պէտք է շարունակել, միայն լաւ ղեկավարել, ի սէր մեր ժողովրդի, մանաւանդ գաղտնի, զգուշաւոր ճանապարհով, զգուշանալով ցուցամոլութիւններէ եւ ունայնաբանութիւններէ սրճարաններում եւ հաւաքատեղիներում:

Այս բոլորի մասին լաւ կը լինի, որ գրէք ձեր կողմից Պրայլայի, Քոստանցայի եւ միւս վայրերու ընկերներուն: իսկ մեզ շարունակ գրէք օրը օրին ձեր արածներից: Պուրբէջը ունի այս գործում բարոյական պատասխանատուութիւն, արտաքին փոխ-յարաբերական գործը ստանձնելով: Երբ գործը բոլորովին հասունցաւ, այն

ատեն պէտք կը լինի մի քանի հրահանգներ խնդրել Արեւելեան բիւրոյէն առաքման գործի կազմակերպման համար:

Ընկերը, որ պիտի այցելէր շրջանները, վերահաս դէպքերու պատճառով չկարողացաւ Սոֆիայէն հեռանալ: մեր փոխ-յարաբերական գործերը այժմ աւելի քան թուլացել են: յոյս ունենք որ մօտերս մէկ ուրիշ ազատ ընկեր կ'ունենանք շուտով հաւանականաբար ձեր շրջանները կը զրկուի:

Հանգանակութեան համար մանաւանդ շօշափելի արդիւնքի մը հասնելու համար, պէտք է ----<sup>20</sup>, որովհետեւ եթէ վատ կազմակերպուի սովորականի նման լրարիկ մի բան պիտի գոյանայ, մինչդեռ այժմ կարիքը խիստ մեծ է: Կեդր. կոմիտէն կը զբաղուի այդ հարցի ուսումնասիրութեամբ:

Վերջապէս, սիրելի ընկերներ, խիստ աշայրջութիւն եւ վերին աստիճանի գաղտնապահութիւն անհրաժեշտ են ձեր բոլոր ձեռնարկներուն մէջ: Այս պահուս ստացանք հեռագիր Վառնայէն եւ Իսթեթէն, որ սկսուած է խստութիւն տեղւոյն թրքահայ երիտասարդութեան դէմ: հաւանական կը թուի, թէ բացառիկ միջոցներ ձեռք պիտի առնուեն, որովհետեւ ----<sup>20</sup> որ Պալքանի թուրքախայերուն մէջ կան չեթայական խմբեր կազմակերպելու տրամադրութիւններ: մի լրագրող նոյնիսկ արաւ այդպիսի յայտարարութիւն:

Տեղական մամուլի մէջ եթէ հայերու ձեռնարկներու մասին հրատարակութիւններ դուրս գան, ռուսաց դեսպանատան միջոցաւ աշխատեցէք հերքել: արտակուսակցական եւ հասարակական անվստահելի հայ-շրջաններուն մէջ նոյնպէս հերքեցէք: Վերջապէս շարժումը մնայ բոլորովին գաղտնի:

Կը սպասենք անյապաղ ձեր նոր տեղեկութիւններուն: դարձեալ կը կրկնենք. սոյն հրահանգները ամփոփ կերպով յայտնել Ռումանիոյ միւս մարմիններուն, մանաւանդ Պրայլա եւ Քոստանցա:

*Ընկերական բարեկեցութեամբ*  
**Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ**  
**ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԷ**

**Յ. Գ.** - Երէկ ձեզ պիտի հեռագրէինք, որ անմիջապէս դրամ ուղարկէք... սաստիկ պահաջ կայ. մօտերդ եղած պատրաստը իսկոյն հասցրէք ներփակելով նամակին Տաքէսեանի համար հանգանակուածը պէտք է մեզ զրկել, որովհետեւ այդպէս է մեր որոշումը: հաշիւները նոյնպէս փութացուցէք: հին անդամավճարները ամբողջապէս գանձեցէք: այս մասին բոլորովին լռում էք: վարժեցուցէք ընկերները ճշգրտապահութեան եւ պարտականութեան:

**ՆՈՅՆ**

20.- Անընթեռնելի բառ:





Փաստ. 1157-59

**Բ 5.- ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ**

**Մ Ի Ա Ն Ա Ն Ք**

**ՊԱԼՔԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ**

Կտրուած հայկական իրականութենէն, չըսենք գրեթէ խզուած մեր երկու մայր հատուածներէն՝ Կովկասահայաստանէն եւ Թրքահայաստանէն, համերոպական պատերազմէն յետոյ մեր բնագաւառի հողին վրայ որոտընդոտ պայթած ռուս-թուրք պատերազմի բոթն անգամ, կարծես, անբաւական եղաւ բարձրացնելու պալքանեան հայութիւնը իր գաղութային սահմանափակ մտահոգութիւններուն շրջանակէն վեր, պայծառ կերպով տեսնել կարենալու այն ահաւոր աղէտը, որ համատարած հրդեհի նման կը ծաւալի հետզհետէ Եւրոպայի հորիզոններէն անդին, Մասիսի սարալանջէն մինչեւ Տարոսի փէշերը փռուող մեր հայրենի օճախներուն շուրջ:

Աղէտը այս անգամ ո՛չ արհեստականօրէն յարուցուած հայկական հարցի հետեւանք է եւ ո՛չ ալ ազգային յաւակնութիւններու կամ անխոհեմներու սխալ գործունէութեան չար ծնունդը, այլ համամարդկային ծով աղէտի մէկ մասն է, որը ճակատագրականօրէն եկաւ լափելու մարտիրոս ժողովրդի երէկուան արհաւիրքներէն դէռ չվերանորոգուած բոյնը, ցանուցիր ընելու մեր աշխատատուր գիւղացիութիւնը, քանդելու շինականի գոմն ու հիւղակը, սարսափահար փախցնելու երեխայք, կանայք եւ ծերերը, սրբելու կրակով եւ սուրով կայք եւ կենդանի ամէն ինչ, որ կարող է պահել աշխատատուր հայ մարդու գոյութիւնը:

Ո՛չ կեղորոնական Եւրոպայի մէջ մղուող ճակատամարտներուն եւ ոչ ալ այլուր կատարուող թշնամական ընդհարումներու միջոցին մենք չենք պատահիր այնպիսի զարհուրելի տեսարաններու, քանդումի եւ բնաջնջումի զազանային բնագոյներու, որպիսիք մենք՝ հայերս կ'ապրինք մերձաւոր Ասիայի այսօրուան ռազմաբեմին վրայ: Երկրագնդի այդ վայրերը ուր նորմալ ժամանակներու մէջ իսկ քաղաքակրթական ալիքները շարունակ ետ մղուած են, այսօր՝ թօթափած քաղաքակիրթ, բայց յանցաւոր Եւրոպայի քաղաքական-բարոյական խնամակալութիւնը, կու գան ultra-վայրենութեան վերջին խօսքն ըսելու ժամանակակից մարդկութեան՝ պատմական այս նոր դարագլխի նախօրեակին:

Հիւսիսային Հայաստանը՝ սկսած Արածանիի ակունքներէն մինչեւ Ճորոխի ափերը, հայկական բարձրաւանդակէն մինչեւ Ճաղկոտնի սարերը, դատարկուեցան հայութենէն, մեր աշխատատուր շինարար ժողովրդէն: Ո՞ր փախսան անոնք Հայաստանի ամեհի ձմրան ձեռքէն, 35 աստիճան ցրտի ճիրաններէն, շռափնէլի տեղատարափներու մէջէն, մեր հայրենիքի անանցանելի բարձրաբերձ սարերէն եւ անդնդախոր ձորերէն. այդ մենք չենք գիտեր, գիտեն միայն Հայաստանի ծծկեր մանուկները, դեռատի մայրերն ու հարսերը, չիսս աղջկերք եւ պատանիք, պատաւ կանայքն ու ծերունիք: Մեր անհիւրասէր սարերը: Բասենի եւ Ալաշկերտի միապաղաղ ձիւնածածկ անդերը անկարեկից, սառն վկաներն եղան անոնց ծով տառապանքէն թռչող յուսահատ հառաչանքին եւ... փայտացած դիակներուն:

Կովկասեան լրագիրները կը գուժեն, որ փախստական հայերու դիակները անտիրական սփռուած են ամբողջ Արածանիի հովիտէն մինչեւ ռուսական հողը, իսկ ազատուողներու կարաւանները՝ կիսամեռ, ցուրտէն կարկամած եւ թշուառութենէն այլանդակուած, տասնեակ հազարներով կը թափուին հարաւային Կովկաս՝ Կարս, Ալեքսանդրապոլ, Երեւան, եւայլն:

Ի՞նչ պիտի ըլլայ խորտակուած, ջախջախուած հայութեան այդ բեկորներու անմիջական ճակատագիրը. ո՞վ պիտի կատարէ անոնց հոգատարութիւնը: Կովկասը: Ա՛ն ալ սպառեցաւ. սպառեցաւ շարունակ տալով, երեսուն տարի պատսպարելով, առատօրէն նուիրաբերելով, իսկ այժմ երբ անոր տնտեսական կեանքի ջիղը կազմող երիտասարդութիւնը զէն ի ձեռքին կը սպասէ խրամատներու մէջ, բնական անկարելիութեան մէջ է միս միայնակ կարենալ հոգալու եւ պահելու փախստական հայութիւնը:

Ուրեմն, Պալքանեան հայեր, աճապարեցէ՛ք այսօր գոնէ ձեզի ինկած բաժինը հատուցանելու, յանուն քաղաքացիական առաքինութիւններուն, զորս յոյս ունինք որդեգրեցիք քառասնեակ տարիներու մէջ, ապրելով կողք կողքի Պալքանեան փոքրիկ բայց ազատատենչ ժողովուրդներու հետ, վայելելով միեւնոյն քաղաքական բարոյացուցիչ ազատութիւնները: Ապացուցէ՛ք այդ եղբայր ժողովուրդներուն, որ ստրկութիւնն է եղեր պատճառը, որ





### ՆԻԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՐ

363

առժամապես սրբեր տարեր է մեր ժողովրդի աւանդական մեծահոգութիւնը եւ ասպետական զոհաբերութեան զգացմունքը եւ որ Պալքաններուն մէջ դուք արժանի կերպով օգտագործեր էք քաղաքական ազատութիւնները՝ մեր նախնեաց ազնի առաքինութիւնները վերագարթեցնելով ձեր հոգւոյն մէջ:

Մի՛ կասկածիք. Պալքանի մեր քոյր ժողովուրդները, ազատագրական երկկի հերոսները, կը հետեւին պատմական այս ծանր օրերուն մէջ բռնելիք մեր ընթացքին, եւ անոնց համակրանքի չափը դէպի մեզ պիտի նուազի կամ աճի համաձայն ներկայիս մեր ցոյց տալիք բարոյական դիմագծին. անոնք արհամարհանքով պիտի դիտեն Պալքանի հայ գաղութին *անվայել, եսասեր աշխարհաքաղաքացիութիւնը*, եւ ընդհակառակը սրտանց պիտի գորգորան անոր *միութեան*, մարդկայնական պարտականութիւններու գիտակցութեան ամէն մէկ գեղեցիկ ժեսքին վրայ. ուստի թող միանանք մենք ամէնքս, քաղաքական կուսակցութիւններ, յարանուանութիւններ, համախմբակցութիւններ, պատմական այս աննախընթաց բոլորէն, վաղնջական ազնիւ եւ ընդունակ ժողովրդի մը բնաջնջման սպառնալիքին դէմ եւ վերադառնանք մեր բոլորին գոյութիւնը արդարացնող հիմնական իդէալ-նպատակին՝ հայ ժողովուրդի գոյութեան պաշտպանութեան, համախմբուելով պատերազմի արհաւիրքներուն եւ անձայր թշուառութիւններուն ենթակայ մեր համբերատար եւ ազնուական ժողովրդի օգնութեան գործին շուրջը:

Ապրելու սահմանուած ազգերու կեանքին մէջ տասնեակ տարիներու միջոցին մէկ մէկ անգամ կ'արթննայ համայնական մեծ եւ ահեղ բնագոյ, որը պատմական գործօններէ զատ, պայմանաւորուած է ցեղի բնական կենսունակութեան դրական տարրերով. եթէ ցեղային այլատեսութիւնը դեռ չէ ծաւալեր մեր ցեղի արեան մէջ, այսօր վայրկեանն է մեզ՝ հայերուս համար այդպիսի մէկ գերագոյն բնագոյ, որը պիտի մղէ նոյնիսկ անկախ մեր հաշուող բանականութենէն, դէպի ընդհանրական շահերու խոր գիտակցութիւն եւ զանոնք պաշտպանելու հերոսական զոհաբերութիւն:

Աղէտը ընդգծած է մեզի գործունէութեան լայն ծրագիր մը, – կռուի դաշտին մէջ իրենց սիրասուն ամուսինները կորսնցուցած այրիներու պաշտպանութիւնը, որբերու հոգը, խրամատներու մէջ ցրտահար եղած եւ սովէն տառապող զինուորներու եւ անոնց միմուճար ընտանիքներու թշուառութիւնը, բռնազուրկ փախստականներու պատսպարումը, կը կազմեն այդ ծրագրին մեծ գծերը: Ահա այս ծրագիրն է որուն վրայ պիտի խոկայ իւրաքանչիւր հայ Պալքանի թէ աշխարհի մէկ ուրիշ վայրին մէջ, չբաժնելով զայն իր անհատական կեանքի մտահոգութիւններէն, ընդհակառակը այսօր զայն աւելի գերադասելով իբրեւ իր ամենամեծ հոգը:

Թո՛ղ այդ գերագոյն ցարը ըլլայ մեզ՝ մինչեւ ցարդ բաժան բաժան ապրող հայերս միացնող, կապող երկաթէ շղթան: Ազնիւ ժողովրդասիրութիւնը եւ հայ մարդու ոտնահարուած արժանապատուութեան զգացումը թո՛ղ մեզ եղբայրացենն, որովհետեւ առեւանգուող, լլկուող հայ որբուհու պատիւը, վիշտը մեր բոլորինն է, այրուող գիւղերու մուխը հաւասարապէս կը խողէ մեր բոլորին կոկորդը:

Այսպիսի հսկայ եւ ահռելի աղէտներու պահուն, հասարակութեան անդամները իրարմէ բաժնողը կ'ըլլայ մէկ զգացում մը, տարտամութիւնը, բայց... ընդհանուր սուգը մարդկանց ամենայնեւիններն անգամ կ'ազնուացնէ:

Պալքանեան հայեր, մեր միւս հատուածները բազմաթիւ անգամներ ապացուցին, որ գիտեն համայնական աղէտներու ժամանակ դուրս գալ իրենց տնային եւ շուկայական նեղ ցաւերէն եւ հպարտ կերպով ծառանալ դժբախտութեան առջեւ. ահա՛, հայու գոյութիւնը վտանգող ճգնաժամային այս վայրկեանին դո՛ւք եւս անոնց հետ պիտի ապացուցանէք ձեր ալ զոհաբերութեան բարձր ընդունակութիւնը:

Յաշս պատմութեան եւ քաղաքակիրթ մեծ ու փոքր ազգերու՝ հայ ժողովուրդը այսօր քաղաքացիական հասունութեան քննութեան ենթարկուած է. մեր առնելիք դրական քայլերը ո՛չ միայն պիտի մեղմեն այսօրուան ահաւոր չարիքը, այլեւ պիտի բնորոշել եւ գնահատել տան մեր ցեղային եւ մարդկային առաքինութիւններու չափը: Դէպի՛ գործ, ուրեմն, Պալքանեան հայեր, դէպի՛ անխոնջ աշխատանք, համազգային այս աղէտը թող ըլլայ մեզի միութեան եւ յաւերժական եղբայրակցութեան հրաւիրող ամէնէն հզօրագոյն ազդակը: Դաւաճան է ա՛յն ով այսօր խուլ եւ անտարբեր կը մնայ:

Ներշնչուած խոր հաւատքով մեր ժողովուրդը բաղկացնող բոլոր խաւերու դէպի ազնիւ զգացումները, միութեան եւ աշխատութեան վաղուան գեղեցիկ արշաւոյսին առջեւ կը կոչենք.

Կեցցէ համահայկական միութիւնը:

Կեցցէ Պալքանեան հայերու միութիւնը:

Կեցցէ համաժողովրդական աշխատանքը:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

Սոփիա, 21 Դեկտ. 1914





Փաստ. 1158-2

**ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ**

**Բ 6.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ**

**Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ**

Ռուս-թուրք պատերազմը կը մտնէ տակաւ իր ամենաաղէտալի ֆազին մէջ. խանդավառուած մի քանի երկրորդական յաղթանակներով, թրքական անտիսիբրլին բանակը եւ յատկապէս հայերու համար կազմակերպուած պաշտպանութիւնը չէթաները անխնայ աւերներ կը սփռեն հիւսիսային Պարսկաստանում եւ Ատրպատականի հայաբնակ գաւառներում: Պարսիկ կրօնամոլ ամբոխը<sup>21</sup> ապերախտօրէն մոռացած յանձին Հայ Յեղ. Դաշնակցութեան հայ ժողովրդի երէկուայ անձնագոհութիւնները Պարսկաստանի ազատութիւնը եւ սահմանադրական կարգերը պահպանելու համար, գրկաբաց կ'ընդունի թրքական զօրքերը որոնց հետ ձեռք ձեռքի՝ աւարի ու թալանի ճարակ կը դարձնէ Ռուսիոյ եւ Մարաղայի հայ գիւղական ազգաբնակչութիւնը:

Անդին Վասպուրականի ու Կարինի գաւառներուն մէջ կառավարութիւնը չբաւականանալով կրօնամոլ ամբոխի բնագոյային վրէժխնդրութիւնով՝ ուղղակի միջոցներով կը մղէ զայն ալան թալանի եւ սրածութեան: Թուրքիոյ տէրերը կ'արդարացնեն իրենց այս արարքները հայերու՝ կամաւորական զինքեր կազմակերպելու դաւաճանական քայլին՝ իբրեւ փոխ վրէժ:

Յաւալի է ասել որ մեր կովկասահայ եւ համառուսական մամուլը հայ ժողովրդի օրինատուր ինքնապաշտպանութեան ճիգերը ձախող կերպով մեկնաբանելով իրենց կողմէն նպաստած են այս աղէտալի թիրիմացութեան: Մեզ դաշնակցականներին բոլորովին թող պարզ լինի որ կամաւորական զինքերը ունենալու նպատակն է պաշտպանել պատերազմի տեւողութեան Թրքահայաստանի դժբախտ ազգաբնակչութեան կեանքը. կարող էին [անոնք] կազմակերպուել մէկ կամ միւս պետութեան մէջ՝ անկախ քաղաքական ակնկալութիւններէ. բաւական էր որ անոնք հնարաւորութիւն ունենային այդ երկիրներուն մէջ կազմուելու: Հայ ազգաբնակչութեան պաշտպանութեան համար բազմաթիւ անգամներ դիմումներ եղան թէ պատերազմէն առաջ եւ թէ յետոյ թուրք վարիչներուն, սակայն ամենքն ալ մնացին անլսելի. ուստի եթէ այսօր այդ պաշտպանութիւնը կը կազմակերպուի դրսէն՝ այդ արդիւնք է միմիայն հնարաւորութեան: Այս միտքը պէտք է բարձրաձայն յայտարարել ամբողջ աշխարհին եւ ջանալ որդեգրել տալ հայկական բոլոր շրջաններուն որոնք հեռուէն կամ մօտէն կապ կարող են ունենալ թրքահայ ժողովրդի պաշտպանութեան գործին հետ:

Միանգամընդմիջտ պէտք է զսպել արտաքին բոլոր ցուցամոլութիւնները եւ աւելորդաբանութիւնները որոնք անտեղի կերպով ծայր տուին թէ հայկական եւ թէ օտար շրջաններում. մեր դիտաւորութիւնը շատ համեստ է եւ բնական, նրան վերագրուած չափազանցութիւնները ոչ մի օգուտ առաջ չբերելէ գատ պիտի ծանրացնեն թրքահայ ժողովրդի, առանց այն էլ վատթարացած կացութիւնը:

Մի քանի փաստեր աւելորդ չեն բնորոշելու համար այն դրութիւնը որը կայ այս վայրկեանիս Հայաստանի մէջ: Վերջին ժամանակները կառավարական գրաւումները հայ ժողովրդից թալանի ձեւ կը ստանան, գիւղերը կ'արուին մէկը միւսին ետեւէն, փախստական երիտասարդներու տները կը վառուին ու ինչքերը կը գրաւուին յարքունիս. մահմետականները այդ խստութիւններէն ազատ կացուցանելէ գատ անոնց կը բաշխուի զէնքեր հայերու դէմ գործածելու համար. այդ նպատակի համար շատ տեղեր բանտերէն ազատ արձակուած են ոճրագործները. մերոնց կատարած բողոքները համարեա թէ ոչ մի արդիւնք չեն տուել. միայն վերջերս պատահած մի դէպք կացութեան մէջ իբրեւ թէ որոշ չափով փոփոխութիւն է մտցնում. Վանի կուսակալը խոստացեր է մերոնց առաջարկները նկատի ունենալ, մինչեւ այդ՝ հարիւր հայեր Վասպուրականի գիւղերուն մէջ զնդակահարուած են. վերջին դէպքը տեղի է ունենում Վանի Այգեստանի բաժնում: Ժանտարմները սպանում են մի հայ երիտասարդ, որի հետեւանքով, զինուած հայ երիտասարդներ տարափի տակ են առնում ժանտարմներին, որի պատճառով սկսուած է մեծ կռիւ. մեր ընկերները հրաւիրում են կառավարութեան ուշադրութիւնը այս դէպքի վրայ եւ

21.- Այստեղ պարսիկը պէտք է հասկնալ թուրք, որովհետեւ Ատրպատականի ազգաբնակչութեան մեծամասնութիւնը թրքացել էր:







**ՆԻԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

պահանջում՝ դադարեցնել կռիւը. երկար բանակցութիւններէ յետոյ կռիւը կը դադարի, իշխանութիւնը բազմաթիւ խոստումներ է անում յետագայում նման դէպքերի տեղի չտալու համար:

Հայ կամաւորներու արշաւանքի առթիւ նմանապէս շատ բանակցութիւններ են կատարուել. մեր ընկերները բացատրել են որ կամաւորական զնդերու նպատակն է պաշտպանել գիւղացիութիւնը քրդական խժոժութիւնների դէմ, եւ առաջարկել են որ քանի դեռ ուշ չէ՝ կառավարութիւնը որոշ զիջումներ անի հայ ժողովրդի վրդովուած հոգեբանութիւնը խաղաղեցնելու համար, այլապէս հինգ դարու քաղաքական խաբէութիւններէ հիասթափուած հայութիւնը՝ ի գին բնաջնջման ընդունակ է ամէն ծայրայեղութիւններու. երկրի թուրք իշխանութիւններու եւ մարմիններու համաձայնութեամբ պատգամաւորութիւն կը դրկուի Սալմաստ եւ Իզդիբ, բանակցելու համար հայ ղեկավար շրջանակներու հետ, բայց թրքական ստոր դաւաճանութիւնը, ինչպէս ամէն համերաշխական ձեռնարկի մէջ, այս անգամ էլ իր եպերելի դերը կը խաղայ. Իզդիբ ուղարկուած պատգամաբերը, մեր բազմաշխատ ու հնամեայ գործիչ Թորոս Ալոյեանն էր, որ իր միսիան վերջացնելուց յետոյ երբ կը հեռանար Պայազի-տէն նահատակուեցաւ դաւադիր զնդակէ մը:

Արեւելքի քաղաքական զձուձ փոխյարաբերութիւններու մէջ երանի այդ լինէր մեր վերջին համերաշխական փորձը որի համար տուինք այդ անդարմանելի կորուստը: Դրութիւնը բարձր Հայաստանի մէջ բոլորովին նոյնն է. չէթաներ կազմակերպուած են միմիայն հայերու դէմ. գիւղերում սպանում են յայտնի հայերին, գիշեր ատեն քափառում են հայ գիւղերը, կանանց մտցնում սառ ջրի մէջ, տանջում եւ պահանջում դրամ ու զէնք. այդպէս են արել Տրւնիկ, Պատիշէն, Թարգունի հայ գիւղերու մէջ. մերոնք երբ բողոքում են կուսակալ Թահսինին, նա հաւաստիացնում է մերոնց որ երկու օրուայ ընթացքում կը պատժէ չարագործները, բայց տասը օր ետք նոյն բանն է պատահում Հինձք ու Չիթոք գիւղերու մէջ: Կռուի օրերում չէթաները սպանում են եւ հայ զինուորներին. միմիայն մէկ վայրում են սպանել 64 հոգի. Իթքիհատի կոմիտէն որոշել է քաղաքին մէջ էլ սպանութիւններ կատարել, նոյնիսկ ենթադրում է որ մի ընդի. կոտորածի ծրագիր էլ ունեն:

Երկրի ընկերները բոլորովին անզօր են այս երեւոյթներու վրայ հակազդելու. նրանք դրուած են պատանդի վիճակին մէջ. կառավարութիւնը ամէն կերպ խուսափում է անոնց հետ յարաբերութիւն ունենալէ:

Աւելորդ չենք համարեր ընկերներ յիշեցնել որ արտասահմանի մէջ յարաբերական ազատութիւն վայելող հայերս, իրաւունք չունինք՝ սահմանափակուելով միմիայն տեղական բնոյթ կրող հանգամանքներով, անհեռատես ընթացքի մէջ գտնուելու եւ դրանով ծանրացնելու երկրի ժողովրդի եւ ընկերներու կացութիւնը. մեր արտասահմանեան եւ երկրային գործունէութիւններու միջեւ անհրաժեշտ է միշտ որոնել հաւասարակշռութեան կէտը, խուսափելու համար աղէտալի հետեւանքներէ: Ուստի այս անգամ էլ ձեզ կը յիշեցնենք աչալուրջ գործունէութեան անհրաժեշտութիւնը, եւ միաժամանակ կը զգուշացնենք ձեր քայլերուն մէջ միակողմանի մոթիվներէ<sup>22</sup> դեկավարուելէ:

Կամաւորական զնդերու կազմակերպումը եթէ պիտի արդարանայ երկրի պաշտպանութեան գերագոյն իտէպով, չպիտի ղեկավարուի այնպիսի եղանակով, որը նոյն այդ երկրի գոյութիւնը կարող է վտանգել:

Այս բոլորը յանձնելով ձեր լուրջ նկատառման՝ վստահ ենք որ յետագայում ձեր գործունէութիւնը պիտի ընթանայ համաձայն այն շահերին որոնք կը բխին երկրի ժողովրդի այսօրուայ կեանքէն, քան թէ այն նկատումներէն որոնք յատուկ են գաղութային բոլոր շրջաններուն. կուսակցական մրցակցութիւն, նեղ փառասիրութիւն եւ նման դրդապատճառներ այսօր երբեք չպէտք է տեղ բռնեն մեր կենսական աշխատանքներուն մէջ:

Շրջաբերականին տեղեկատուական մասը յայտնեցէք ընկերական ընդի. ժողովում բոլոր ընկերներին, ձեր կողմից տալով հարկ եղած պարզաբանումները:

Ընկերական բարեւներով  
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
ՊԱԼԶ. ԿԵՂԻ. ԿՈՄԻՏԷ

Սոֆիա  
7 Յունուար 1915

22.- Շարժադիքներէ, դրդապատճառներէ:



Փաստ. 1158ա-5

**Բ 7.- Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԵՈՒԹԵԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎ (1915 Փետրուար)**

ՕՐԱԿԱՐԳ

1.- ա) Ընտրութիւն դիւանի.- ճշտում եւ վաւերացում մանտաքների.  
բ) Վաւերացում օրակարգի: Նոր հարցեր:

2.- Տեղեկագիր (մասնակի, վերջին դէպքերու հետ կապ ունեցող խնդիրներու).  
ա) Կ. կոմիտէի.  
բ) Շրջաններու.

3.- Մեր դիրքը հանդէպ պատերազմը.  
ա) կամաւորական խնդիր.  
բ) Համազգային օգնութեան կազմակերպման խնդիր.

4.- Մեր դիրքը հանդէպ Պալքանեան զօրահաւաքը.  
ա) Բուլգարիա }  
բ) Ռումանիա } քուրքահայերի զինուորագրում.

5.- Հայկական հարց եւ մեր դիրքը.  
ա) Դիպլոմացիա  
բ) Մամուլ } բրորագանդ.

6.- Կուսակցական կազմակերպական.  
ա) Վերակազմութիւն.  
բ) Կազմակերպական – դրամական վիճակ.  
գ) Կազմակերպական – նախահաշիւ եւ բաշխում.

7.- Կուսակցական փոխ-յարաբերական կեանք. հատուածային համագումար (Եզիպտոս, Ամերիկա, Բուլգարիա, Ժընեւ):

8.- -----23

Հ.Յ.Դ. ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԵ

1915 Յունուար 23, Սոֆիա

23.- Օրակարգի այս կիտաւոր բաժինը պէտք է հասկնալ ինքնապաշտպանութեան եւ զինման իմաստով:





Փաստ. 1158-22

### Գ 1.– Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1915 Փետրուար)

(Պատերազմի հետեւանքով կազմակերպութեան մէջ առաջացած նոր երեւոյթներու վերաբերմամբ ընդգծելու համար նոր գործելակերպ եւ նոր ուղղութիւն, հիմնուելով պալքանեան շրջանի ներքին կանոնագրի 39րդ յօդուածի տրամադրութեան վրայ, Կեդր. կոմիտէն հարկ դատեց արտակարգ շրջանային ժողովի մը գումարումը):

*Ժողովին մասնակցեցան հետեւեալ վայրերը.*

Ռուսճոռք	(1	ձայնով)
Վառնա	(»	»)
Ֆիլիպէ	(»	»)
Պուքրէշ	(2	»)
Սիւվէն	(1	»)
Պուրկազ	(1	»)
Սոֆիա	(»	»)
Կ. կոմիտէն	(1	»)

հետեւապէս քաղաքականապէս վերածնունդ ազգի մը ճակատագիրը չի կարող հիմնուել այդ հիմնարկութիւններուն եւ կամ անոնց օրկան ոեւէ թերթի բրտբականտին վրայ: Բայց միւս կողմէ ընդունելով որ ազգերու քաղաքական, պատմա-իրաւական գոյութիւնը բիրտ, նիւթական ուժերու փոխյարաբերութիւններով կը պայմանաւորուի եւ հետեւաբար ստիպուած ենք նկատողութեան առնել դիւանագիտական շրջանների դերը, Հ. Յեղափոխական Դաշնակցութիւնը՝ առանց չեղելու իր էթիքայէն<sup>24</sup>, կ'ընտրէ միջին ճանապարհ, աշխատիլ միայն Երրեակ համաձայնութեան ու չէզոք պետութիւններու մօտ, եւ մնալ միշտ անհաշտ դէպի Գերմանիան, որի միլիթարիզմը<sup>25</sup> ծնել է ժամանակակից աղէտը, եւ դառնացուցել իրաւագուրկ ազգերի եւ մեծ երկիրներու տառապող աշխատաւորութեան կեանքը:

*Ժողովին չմասնակցեցան հետեւեալ շրջանները. Սուլինա, Կալաց, Պրայլա, Քոնսթանցա, Տէտէ-Աղաճ:*

#### ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Նկատելով, որ պատերազմը ի սպառ ջլատեց եւրոպական շրջաններու մէջ տարիներէ ի վեր կազմակերպուած դիւանագիտական աշխատանքը.

Նկատելով, որ ներկայ համաշխարհային շփոթութեան մէջ, Ֆրիգիքական կռուի զուգընթաց, անհրաժեշտ է տանիլ դիւանագիտական հետեւողական պայքար, ցանկալի էր, որ մեր ղեկավար շրջանները՝ համախորհուրդ հայկական զանազան խաւերու ներկայացուցիչներուն, մշակեն քաղաքական պարզ պլատֆորմ ապագայ աւտոնոմ Հայաստանի մասին եւ ջանան այդ պլատֆորմով նուաճումներ կատարել Անգլիական, Ֆրանսական, Իտալական, Ամերիկեան եւ, երկրորդաբար, Պալքանեան դիւանագիտական շրջանակներուն մէջ: Այդ հետապնդումներուն զուգընթաց ջանալ ձեռք առնել եւրոպական մամուլի այն օրկանները որոնց ձայնը ազգեցիկ է թէ՛ հասարակական խաւերու եւ թէ՛ քաղաքական շրջաններու վրայ:

Առանց նախապաշարուած լինելու ո՛չ ռուսական եւ ոչ ալ եւրոպական ոեւէ դիւանագիտութիւնով՝ ընդունելով որ ամէն տեղ դիւանագիտութիւնը հասարակական մի ստոր եւ խաբէբայական հիմնարկութիւն է եւ

#### ԿԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԽՆԴԵՐԸ

Կամաւորական խնդրի առթիւ ժողովին մէջ կը տիրէին երկու տարբեր հոսանքներ:

#### Ա. բանաձեւ

Նկատելով որ հայ ժողովուրդը իր ուժեղ տարրերով կամայ թէ՛ ակամայ մուտ գտած է ներկայ պատերազմին մէջ:

Նկատելով որ մէկէ աւելի անգամներ յայտարարուած է թէ՛ ապագայ հաշուեյարդարին կը մասնակցին միայն անոնք որոնք մասնակցած են պատերազմին:

Նկատելով որ մենք մեր ազգային իտէալին իրականացման համար կարող ենք պատերազմին մասնակցիլ մի ուրիշ թատերավայրով ալ, այն է Իգմիտ, Պոլիս, Կիլիկիա. նկատելով եւ այն, որ ռուսներու տրամադրութիւնը կը դառնայ դէպի մեզ հետզհետէ անհամբերող, եւ միւս կողմէ գործնական աւելի շանսեր կ'ունենանք հովանաւորուելու Անգլիայէն ու Ֆրանսայէն:

24.- Բարոյական ըմբռնողութիւն:

25.- Ռազմամոլութիւն:





Նկատելով որ այս ճակատի վրայ ալ մենք ունինք բազմաթիւ հայ ազգաբնակիչներն՝ որքան Կովկասի ճակատի վրայ, ուրեմն այստեղ եւս պէտք է ինքնապաշտպանական գործ կազմակերպել:

Կ'առաջարկենք որ հատուածային համագումարը ամէն զնով իրականացուի, որպէսզի միջոցներ ստեղծէր աւելի սիստեմաթիւօրէն եւ լայն չափերով մասնակցելու պատերազմին:

**Բ. բանաձեւ**

Նկատելով որ Կովկասի բովանդակ հայութիւնը կարելին կ'ընէ կամաւորական զնդեր կազմակերպելով:

Նկատելով որ պահեստի կամաւորներու ահաբիւթի մը եւս կայ Կովկաս՝ որոնց կազմակերպման նիւթական միջոցները կը պակսին:

Նկատելով որ ռուս կառավարութիւնը նիւթապէս չի նպաստեր մեր կամաւորական շարժման:

Նկատելով որ կամաւորական շարժումէն զատ նիւթական միջոցներ պահանջող շատ մը գործեր կան, գաղթականներու պաշտպանութեան հարց, դիւանագիտական շարժում եւ այլն:

Նկատի ունենալով Երկրի մարմիններու պահանջը՝ գէթ արտասահմանի մէջ ռեւէ կամաւորական շարժումով թրքահայերու վիճակը չվատթարացնելու մասին:

Նկատի ունենալով նաեւ ռուս կառավարութեան ոչ նպաստաւոր եւ անցեալի պատմութիւնը:

Նկատելով որ մեծ սխալ մը պիտի ըլլայ մեր ուժերուն մաքսիմումը սպառել, որով անպաշտպան թողուցած կ'ըլլանք Կովկասէն դուրս գտնուող բոլոր հայ շրջանները, անսպասելի վտանգներու առջեւ:

Նկատելով որ հաշուեյարդարութեան պահուն պէտք է նախապատրաստուած ըլլանք, մարտական եւ դիւանագիտական շարժում յառաջ բերելու եւ մեր տնտեսած ուժերով հայկական ճակատագրին թոն տալու:

**Կ'առաջարկենք**

ա) բաւարար համարել ցարդ կազմակերպուած կամաւորական զնդերը ու միայն շանսեր ստեղծուելու պարագային կամաւորական զնդերը զարգացնել Կովկասի մէջ:

բ) լուրջ ու զգուշաւոր կերպով կազմակերպել արտասահմանի մէջ նիւթական ու ֆիզիքական ուժեր որպէս պահեստ:

գ) քաղաքական եւ դիւանագիտական նոր պայմաններու յառաջացման պահուն մասնակցիլ կռուի հոն՝ ուր աւելի մեծ հաւանականութիւն կայ հայկական իտէպըներու իրականացման (Երբեք համաձայնութեան կամ գինակցութեան եւ կամ նոր խմբակցութեան մը հակելով):

դ) հրաւիրել հատուածային համագումար Կովկասի մասնակցութեամբ ու այնտեղ համախորհուրդ որոշել արտասահմանի գաղութներու դիրքը:

**ԶԻՆՈՒՈՐԱԳՐԱԿԱՆ ՀԱՐՑ**

1- Շրջանային ժողովը իբր նիւթական միջոց Կ. կոմիտէի գանձէն 200 Ֆր. կը յատկացնէ հայ գաղթականաց օգնութեան յանձնախմբին, յառաջիկային վերստանալու պայմանով:

2- Կազմակերպական բոլոր մարմինները վերոյիշեալ յանձնախմբին մասնաճիւղերը կը նկատուին. Կ. կոմիտէն կը համարուի կեդրոնական յանձնախումբը:

3- Կ[եդրոնական] յանձնախումբը կարող եւ յարմար փաստաբանի մը հետ կը պայմանաւորուի, նիւթական վարձատրութիւնով:

4- Կ. յանձնախումբն ու փաստաբանը անմիջապէս կը պատրաստեն տրքիւմաններու դասաւորումը եւ կը դիմեն նախարարութեան ի դիմաց թրքահայ փախստականներու եւ լուսաբանութիւններ կ'ուզեն, փաստելով միաժամանակ թէ թրքահայերը քաղաքացիական իրաւունքներէ չեն օգտուիր այլ միայն իրենց տուրքերը վճարելով համեստ ապրուստ մը կը հայթայթեն<sup>26</sup>:

5- Համաձայնիլ որ 18-20 տարիէ ի վեր հոս ապրողները զինուորական տուրք մը միայն վճարեն, պուլկարահպատակ դառնալու համար:

6- Յանձնախումբը կառավարութեան վաւերացնել կու տայ իր ծրագիրը:

7- Կեդր. յանձնախումբը իրաւունք ունի իր յարմար դատած միջոցներով չնախատեսուած քայլեր առնելու, իր պատասխանատուութեան տակ:

8- Պուլկար ազդեցիկ մամուլին մէջ, նիւթական միջոցներով հայնպաստ շարժում մը յառաջացնել:

**ՄԵՐ ԴԻՐՔԸ ՀԱՆԴԵՊ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԶՕՐԱՀԱՒԱՔԸ**

Պուլկարիան երբ պատերազմ յայտարարէ քրիստոնեայ ռեւէ պետութեան մը դէմ, այդ պարագային քաղաքապահ եւ հիւանդապահ խմբերով կ'օժանդակենք. պայմանաւ որ գաղթականներու զինուորագրութեան խնդրին մէջ բարեացակամ վերաբերում ցոյց տայ:

Իսկ եթէ պատերազմը ըլլայ Թուրքիոյ դէմ՝ այն ատեն ամէն միջոցներով, նոյնիսկ կովկասեան մեր գործունէութեան համանման ուղղութեամբ, բուռն կերպով մասնակցիլ կռուին:

Գործունէութեան միեւնոյն միջոցները կը յանձնարարուին նաեւ Ռուսաստանի մեր մարմիններուն:

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ**

Պալքանի բոլոր գաղութներու մէջ հաւաքական

26.- Խնդիրը կը վերաբերի պուլկար կառավարութեան այն որոշման, որով թրքահայ պանդուխտ երիտասարդները կը պարտաւորուին զինուորագրուիլ պուլկար բանակին մէջ:



**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

մնայուն գործունէութիւն մը ստեղծել հետեւեալ ուղղութեամբ.

1- Կազմել ամէն տեղ ներկայացուցչական մասնախումբ՝ որուն կը մասնակցին թաղականութիւն, հոգաբարձութիւն, կոմիտէ, բարեգործական, աղքատախնամ, ազգային տարբեր յարանուանութիւններ եւ ուրիշ միութիւններ անխտիր.

2- Կազմել կանանց Կարմիր-խաչի միութիւններ, պատանեաց խմբեր՝ որպէս հասոյթի միջոց:

3- Յառաջատուական սիստեմով անդամավճարի դրութիւն մտցնել:

4- Գոյացած հասոյթները փոխադրել կաթողիկոսի ու Պատրիարքարանի միջոցաւ.

5- Գործը դնել նաեւ միջազգային հողի վրայ եւ աքտիւ փրփականտ մղել օտար շրջանակներու եւ մամուլի մէջ, հայանպաստ տրամադրութիւններ ստեղծելու համար.

6- Աշխատիլ գործը ամրապնդել՝ կառավարական վաւերացման ենթարկելով զայն:

**ՄԱՄՈՒԼ**

Բովանդակ Պալքանի մէջ գոյութիւն չունի հայկական մամուլ. երեւոյթ մը որ անհամապատասխան է հասարակութեան արդիական պահանջներուն. ուստի ժողովը կը յանձնարարէ որ Սոֆիայի ընկերներու կողմէ նախաձեռնուած «Հայաստան» թերթի հրատարակութեան աշխատանքները շարունակուին, եւ այս առթիւ կ'որոշէ.

**Ուղղութիւն.**— «Հայաստան»ը պէտք է ըլլայ պաշտպանը հայկական ինքնավարութեան: Որպէս ազատ միջավայր՝ անվերապահ վերաբերում մը ցոյց տայ դէպի Ռուսաց կառավարութիւնը. տայ լուսաբանութիւն հայկական հարցի մասին. ըլլայ ոչ նեղ կուսակցական, այլ քաջակերէ ժողովրդական բոլոր խաւերու օգտակար ձեռնարկները, եւ նմանապէս առանց կուսակցական նեղ հաշիւներէ առաջնորդուելու, անողոք կերպով քննադատէ բոլոր խառնակիչ տարրերը:

**Բովանդակութիւն.**— Ունենայ խմբագրական մը, տայ հետաքրքրական տեղեկութիւններ պուլկարահայ եւ ռումանահայ կեանքէն. ունենայ մամուլի բաժին մը. կարելի եղած չափով ջանայ տեղեկութիւններ տալ Երկրի եւ գաղութներու մասին:

**Նիւթական.**— Թերթի մատակարարութեան համար լինելիք բոլոր կարգադրութիւնները կը թողու նախաձեռնողներին:

**ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՆԴԻՐ**

1.- Նկատելով, որ գաղութներու մէջ ազգային գործը կեդրոնացել է մի քանի ազդեցիկ անձնաւորութիւն-

ներու ձեռքին մէջ, ազգային կալուածներու մատակարարութիւնը մնացեր է անքոնթրոլ եւ որ ժողովրդական խաւերու տրամադրութիւնը հակած է դէպի առաջնորդական վերակազմութիւնը.

2.- Ընդունելով նոյնպէս, որ գաղութներու թեմական-առաջնորդական կազմակերպութեան պահանջը՝ ազգային վերագարթնումի նշան է:

3.- Նկատելով, որ առաջնորդական հաստատութիւնները կը նպաստեն որոշ չափով ոչ միայն չայլատեալ գաղութները պաշտպանելու օտարացման դէմ, այլ եւ դարերէ ի վեր ազգային դիմագիծը կորուսած գաղութները կը վերադարձնեն դէպի ազգային ամբողջութիւն.

Շրջանային ժողովը կ'որոշէ՝ որ Կեդր. կոմիտէն առաջնորդարանի վաւերացման գործը հետագօտէ եւ նպաստէ վերջնական հաստատման:

**ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ**

Կտրուած լինելով ներկայ պատերազմի ընթացքին Երկրէն եւ արտասահմանէն, աչքի առաջ ունենալով նոյնպէս փոխյարաբերութիւնները՝ ընդ[հանուր] կազմակերպական ձեռնարկներու տաքտիք ընդգծելու եւ մանաւանդ հաւաքական որոշումներ տալու մասին, առաջիկային անպատրաստ չգտնուելու համար, պալքանեան շրջանը նախաձեռնութիւն կը ստանձնէ կազմել հատուածային համագումար, հետեւեալ վայրերու ներկայացուցիչներէն.

Ամերիկա 3 ձայնով, Պալքանի շրջան 3 ձայնով, Եգիպտոսի շրջան 1 ձայնով, Կովկաս ----, Պոլիս ----:

Պալքանեան շրջանէն այդ առթիւ ղրկուելիք պատգամաւորներու ընտրութեան ձեռնարկուեցաւ եւ միաձայնութեամբ ընտրուեցան ընկերներ Կ.----, եւ Ք.----, եւ Կ. կոմիտէի ներկայացուցիչը:

**ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ**

Ա) Կեդր. կոմիտէի տեխնիքական աշխատանքները վարելու համար որոշուեցաւ մնայուն քարտուղարութիւն մը հաստատել եւ պիւտճէ յատկացնել ամսական 100 ֆրանք:

Բ) Կեդր. կոմիտէի կազմէն երեք անդամներ զանազան պատճառներով հեռացած ըլլալով, Կեդր. կոմիտէի կողմէ գործակցելու համար նախապէս հրաւիրուած ընկ. Ղ.ի ընտրութիւնը Շրջ. ժողովը վաւերացուց. իսկ նորի ընտրութեան ձեռնարկելով միաձայնութեամբ ընտրուեցաւ ընկ. Վ.:

Գ) Մնայուն շրջիկ փրփականտիստ ընկերի մը պէտքը խիստ զգալի դարձած էր. ուստի ժողովը կազմեց ցանկ մը հետեւեալ ընկերներէն, Շ., Խ., Բ., Ա.: Թողլով ընտրութիւնը Կ. կոմիտէին:

Դ) Ժողովը կը յանձնարարէ Կեդր. կոմիտէին՝ որ վե-







րակազմութեան առթիւ կազմակերպէ նաեւ Տոպրիչի, Պալչիկի, Սիլիստրէի, Վիտինի, Բլէվնայի, Կիւմրուլճինէ- յի եւ Իսկէչէի գաղութները:

Ծանօթ.- Հաշուական յարմարութիւններու համար նոր շրջանը կը սկսի Ձատկին. մինչեւ այն ատեն փակել բոլոր հին հաշիւները:

**ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻԻ ԵՒ ԲԱՇԽՈՒՄ**

Կեդր. կոմիտէի 1915-1916 տարուան համար ժողովը հետեւեալ բաշխումը կ'ընէ.

<u>Հասոյթ</u>			
		Փոխադրեալ 10100	
Սուլինա	1200 Ֆր.	Պուլքրէշ	2000 Ֆր.
Պրայա	1500 »	Սոֆիա	2000 »
Կալաց	1000 »	Պուրկազ	1000 »
Վառնա	1200 »	Քոնսթանցա	1100 »
Ռուսճուք	2000 »	Տէտէ-Աղաճ	1000 »
Ֆիլիպպէ	2000 »	Սերպիա	800 »
Թուլչա	200 »	Շումլա	500 »
Սլիվէն	1000 »	Այլեւայթ	1000 »
Փոխադրելի	10100 »	ընդհ. գումար	19500 »

Մախք

Մնայուն քարտուղարի համար	1200 Ֆր.
Մնայուն գործիչի համար	1500 »
Դիւանական ծախք	800 »
Պատահական գործիչներու համար	2000 »
Կազմակերպական այլեւայլ ծախքեր	500 »
Ընդհ. գումար	6000 »

**ԷՏԻՐՆԷԻ ԶԻՖՈՆԻ ԽՆԴԻՐԸ<sup>27</sup>**

Նկատելով որ այս խնդիրը կը կարօտի երկար ժամանակի ուսումնասիրութեան, Շրջանային ժողովը կ'որոշէ՝ կազմել յանձնախումբ մը, որ մինչեւ յառաջիկայ հերթական շրջանային ժողովը զբաղի այդ հարցով, ուսումնասիրէ այդ առթիւ եղած բոլոր տոքիմանները եւ իր եզրակացութիւնները բերէ առաջիկայ Շրջանային ժողովին:

Յանձնաժողովի անդամ կարգուեցան ընկերներ՝ Գ. Յ., Խ. Զ., Ե. Վ., Յ. Պ., Գ. Վ.:

27.- Պայքանեան պատերազմին, երբ Էտիրնէ քաղաքը գրաւած եւ կցուած էր Պուլկարիոյ, կուսակցութեան զինուորական ֆոնդի (Ջիֆոն) պատասխանատուները հոն ստեղծած էին զինապահեստներ. իսկ պատերազմի երկրորդ փուլին, երբ թուրքերը վերագրաւեցին Էտիրնէն, հոն պահեստաւորուած զինամթերքը ազատելու խնդիր ստեղծուած էր:

28.- Ծայրը փամփուշտն է:

**ՎԱՌՆԱՅԻ ԶԻՖՈՆԻ ԽՆԴԻՐԸ**

Լսելով այդ առթիւ տրուած բացատրութիւնները, Շրջանային ժողովը կ'որոշէ, որ բոլորովին չփճանալու համար ծախուին ծայրերը<sup>28</sup>, եւ կը յանձնարարէ Վառնայի մարմինին որ նմոյշներ դրկէ Սոֆիա եւ Ռուսճուք եւ ուր որ բարձր գին կու տան՝ հոն ծախէ:

**ՕՐԱԿԱՐԳԻ ՏՐԴ ՀԱՐՑԻ ԱՌԹԻԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ**

Մարտական -----<sup>23</sup>  
Երկրի մասին -----<sup>23</sup>

**ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻ ՏԵՂԵԿԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Շրջանային ժողովը՝ լսելով Կ. կոմիտէի ներկայացուցչի բերանացի ընդարձակ տեղեկաբերութիւնը, եկաւ հետեւեալ եզրակացութեան.

Նկատի ունենալով այն աննորմալ պայմանները, որոնց հետեւանքով մէկէ աւելի հոսանքներ թէ՛ կազմակերպութեանն ենք եւ թէ՛ կազմակերպութեանն դուրս՝ հասարակութեան մէջ, ստեղծած էին խառնաշփոթ հասկացողութիւններ, մասնաւորապէս ռուս-թրքական պատերազմի յայտարարութեանն ետքը ծագած կամաւորական խնդրի առթիւ, Կեդր. կոմիտէի գործունէութիւնը ոչ թէ միայն համապատասխան եղած է ըրպէի պահանջներուն, այլ նա իր ձեռք առած միջոցներով կըրցած է որոշ չափով ազդել երեւան եկած ծանօթ անկարգ ու անպատասխանատու ձեռնարկներուն եւ անոնց անախորժ հետեւանքներուն վրայ:

Միւս կողմէ կուսակցութեան ներսը այդ խառնաշփոթութեան ատեն կատարուած է կազմակերպական որոշ աշխատանք, որը գոհունակութեան արժանի է, եւ որի մէկ գեղեցիկ ապացոյցն է ներկայ ժողովը:

Կամաւորական շարժման մէջ, չտարուելով առժամեայ հոսանքներէ, առողջ դատողութեան վրայ հիմնուելով, աշալուրջ ընթացք մը ցոյց տուած է, ղեկավարուելով Արեւելեան բիւրոյի եւ Հ[այաստանի] բիւրոյի Պուլսոյ հատուածէն այս առթիւ եկած հրահանգներէ:

Շրջանային ժողովս անհրաժեշտ կը համարէ որ ընդարձակօրէն գրի առնուէր Կ. Կ.ի տեղեկագիրը եւ կցուէր այս ժողովի արձանագրութիւններուն, հնարաւորութիւն տալով առաջիկային օգտուելու անկէ, այդպիսով միաժամանակ Շրջանային ժողովը կ'ունենայ իր աշխատանքներուն ամբողջական արձանագրութիւնը:

Ժողովը գնահատման արժանի կը գտնէ Կ. կոմիտէի ընկերներուն ու անոնց գործակիցներուն անխոնջ աշխատանքը:





Փաստ. 1158-20

**ՍԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ**

**Գ 2.- ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ  
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

Ընկերներ,

Շուտով հրապարակ կու գայ «Հայաստան» թերթը. մեծ դժուարություններով ստացանք կառավարական արտոնագիրը:

Թերթի ուղղութեան եւ մատակարարման գործի կազմակերպման մասին տեսնել Շրջ. ժողովի որոշումները:

Առայժմ կը յանձնարարենք անմիջապէս մեզի ներկայացնել կարող գործակալ՝ շրջանիդ մէջ թերթը տարածելու համար, նոյնպէս պարտադրել վայրիդ ձեռնհաս ընկերները՝ բերել իրենց աշխատակցութիւնը «Հայաստան»ին:

Բաժանորդագրութեան պայմաններ

Պուկարիա	տարեկան՝	12 ֆրանք.
	վեցամսեայ՝	8 »
Արտասահմ.	տարեկան՝	18 »
»	վեցամսեայ՝	10 »

Բաժանորդագրութիւն կանխիկ:

Ցանկալի է այժմէն փութացնել բաժանորդներու ցանկը:

**Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
ԲԱԼԿԱՆԵԱՆ Կ. ԿՈՍԻՏԷ**

27 Փետր. 1915  
Սոֆիա

Թիի 1, 10 ՄԱՐՏ 1915, Ա. ՏԱՐԻ

**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն**

Բ Ա Ց ՈՒ Ա Մ Ե Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Գ Ա Գ Ր ՈՒ Թ Ի Ի Ն Ե Ր  
1915 Տ Ա Ր Ի Ո Յ

Ա. Տ Ա Ր Ի " Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն . . " Ա. Տ Ա Ր Ի  
Հ Ա Յ Ա Թ Ե Ր Թ Ի

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Գ Ա Գ Ր ՈՒ Թ Ի Ե Ն Պ Ա Յ Մ Ա Ն Ե Ն Ե Ր

ՊՈՒԿԱՐԻՈՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան 12 Ֆր.	Տարեկան 18 Ֆր.
Վեցամսեայ 7 »	Վեցամսեայ 10 »

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Գ Ա Գ Ր ՈՒ Թ Ի Ի Ն Ե Ր Զ Ը Ն Գ Ր ՈՒ Ն ՈՒ Ռ Ի  
Իրաջները կամ մանտափոստով եւ կամ չէքով պէտք է ուղարկել  
Նետեալ Հասցէին

**ՆԱՐԱԳՐԱԿԱՆ**

Մ Ե Ր Ն Պ Ա Տ Ա Կ Ը

Բաղկաններու մէջ հայ թերթի մը պէտքը երբէք այնպէս ընդհանուր եւ անյետազգայի չէ եղեր ինչպէս այս պատմական օրերուն երբ համեմատական շարժման մէջ կամայք ալ ակամայ կը քշուի եւ Հայաստանը, եւ՝ «Հայկական հարցը»:  
Վտարուած մայրենի երկրէն քաղաքական դժնդակ հողմերէ, առժամ ապէս ըստ զրան Բալքան հորիզոններու տակ ցանուցրիւ հայ զաղութները երբէ՛ կ'յանտած մեծաւ մասամբ կենքի առօրեայ պէտքերով եւ առաւտուէն գաղութային սահմանափակ մասհողութիւններով, ուր զերգանցապէս դիրքազած զարձակ են այն բոլոր երեւոյթներուն հանդէպ, որոնք սրբնթաց եւ ճակատագրական նշանակութեամբ իրարու կը յաջորդեն իր երկրին մէջ:

Նողութիւններէ ետք նա ալ յօր գարնեալ անտարտնջ, բացճակատ վեր է բարձրացուցեր ազգիւ կռուի զբոշակը, որի շուրջ ո՛չ մի ժողովուրդ այնքան ցոհ առեց անցող դարու կէսէն մինչեւ այսօր:  
Պատմութիւնը կ'ուզէ ամբողջանալ եւ վերջին անգամ իր արիւնտու էջերուն մէջ արձանագրել երկրագնդի միւս դժբախտ ժողովուրդներուն հետ եւ մեր ժողովրդի գերագոյն գոհողութեան վաստը եւ անոր բարոյագրական հասունութեան չափը: Եւ ահա հայ ժողովուրդը կը պատրաստուի վճարել իր ծանր տուրքը, որի համար եւ պէտք է զգայ անդադար համախմբել իր ֆիզիքական հոգեկան ուժերը, պարզեան դուրս գալու վաղուան մեծ հաշուէ յարգարէն:

Ինչպիսիքն ենք՝ մանր ազգերու վիճակուած քաղաքական դրժբազդ ճակատագրի համեայ ժառանգորդ Հայաստանը՝ կանգնած է այժմ երէկի եւ վաղուան պատմու-

Այդ պատկանելի՝ ազգերու պատմութեան մէջ հաղուազէպ երեւոյթին համար, մայր հայրենիքի եւ երկրագնդի բոլոր հողամասերուն մէջ փռուած զաւակներու միջեւ եղած հոգեկան անջրպետը պիտի անհրաժեշտօրէն



## ԳԼՈՒԽ XV

### **Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵՆՈՒԹԻՒՆ**

Ըստ բառականին ծառայուն է Ամերիկայի թղթածրարը: Միացեալ Նահանգներու արեւելեան ու արեւմտեան գօտիներուն եւ Քանատայի վրայ տարածուող Կեդր. կոմիտէին գործունէութիւնը եւս տարուէ տարի կ'ընդարձակուի: 1913 տարուան վերջերուն, կոմիտէներուն թիւը հասած էր 67ի, 1650 անդամներով: Ամերիկայի մէջ կոմիտէ կը կոչուէր, մեծ թէ փոքր, իւրաքանչիւր բնակավայրի կուսակցական կազմը, անկախաբար անդամներու թիւէն, որ կրնար ըլլալ տասը կամ հարիւրէն անէլի: Դաշնակցական կազմակերպութիւնը ունէր իր մամուլը – «Հայրենիք»ը, երկօրեայ, որ 1915ի վերջերուն պիտի վերածուէր օրաթերթի, եւ Ֆրեզնո հրատարակուող «Ասպարէզ»ը: Կազմուած էր նոյնպէս Հ.Յ.Դ. Ուսանողական միութիւնը: Չուգահեռաբար կը գործէին Կարմիր խաչի 15 մասնաճիւղեր, որոնց թիւը 30ը պիտի անցնէր 1914ի վերջաւորութեան: Կուսակցութիւնը սերտ կապի մէջ էր եւ կը գործակցէր ամերիկեան քաղաքներուն մէջ հիմնուած հայրենակցական միութիւններուն հետ, որոնք մշտական յարաբերութիւն կը պահէին իրենց հայրենի բնօրրաններուն հետ, եւ նիւթապէս կ'օժանդակէին անոնց կրթական, ինքնապաշտպանութեան եւ այլ կարիքներուն:

Ինչպէս կը տեսնուի, լայնատարած եւ բազմաճիւղ էր Ամերիկայի կուսակցական եւ հանրային գործունէութիւնը, որուն առաւել արդիւնատրման համար Կեդր. կոմիտէները կ'օգտուէին տեղական շարք մը մտատրական ընկերներէ: Բացի այս վերջիններէն, միշտ անհրաժեշտ համարուած է Երկրէն կամ արտասահմանէն հրաւիրել յատուկ ընկերներ խմբագրի կամ գործիչի պաշտօնով: Այդպիսիներէն էին, 1913-15 տարիներուն, Սիմոն Վրացեան, Սիմէոն Նարինեան (Սնար) եւ Արսէն Միքայէլեան:

2.- Տուեալ ժամանակաշրջանին, ինչպէս ընդհանուր կազմակերպութեան, նոյնպէս նաեւ Ամերիկայի կազմին ուշադրութիւնը սեւեռուած էր հայ աշխարհը յուզող խնդիրներուն շուրջ, սկսած բարենորոգումներու հարցին վերջին զարգացումներէն մինչեւ համաշխարհային պատերազմի բռնկումն ու անոր հետեւանքով Թուրքիոյ հայութեան սպառնացող վտանգները:

Նոյն այդ օրերուն այլ երեւոյթ մը, անէլի խրախուսիչ այս պարագային, խանդավառութեան ալիք պիտի բարձրացնէր ամերիկահայութեան մէջ: Հարցը կը վերաբերէր կամաւորական շարժումին, որուն գլուխը անցած էին իրենց մարտական կենսագրութեամբ հանրածանօթ հոյ մը անուանի դէմքեր: Շարժման առաջադրանքն էր օր առաջ փութալ Երկիր՝ սեփական ժողովուրդը բնաջնջումէ ազատելու համար: Ամերիկահայ երիտասարդութիւնը, արդարեւ, անտարբեր չմնաց եւ, 1915 թուականի երկրորդ կիսուն, հարիւրաւոր երիտասարդներ մեկնեցան Կովկաս:

3.- Ամերիկայի դաշնակցական կազմակերպութիւնը բնորոշող յատկանիշներէն մէկը իր նիւթական զոհաբերութեան բարձր աստիճանն էր, զոր ան ցոյց կու տար ամէն անգամ երբ կը դիմուէր իրեն, կուսակցական վերին մարմիններէն եկած ըլլար այդ կոչը, թէ հայրենի ծննդավայր քաղաքէն կամ գիւղէն: Երեւոյթը պիտի կրկնուէր 1914-15 տարիներուն եւ անէլի մեծ չափանիշով անշուշտ՝ արեւմտահայութեան ապրած մեծ տազնապին եւ կամաւորական շարժման ընթացքին:



Փաստ. 1401-133

Ա 1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿ[ՑՈՒԹԵԱՆ] ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ 1913 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Ընկերներ,

Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի շրջանի 19րդ Պատգամաւորական ժողովը, գումարուած անցեալ Դեկ. 24-28ին Պոսթընի մէջ, իր վստահութեան քուէով մեզ յանձնեց կոմիտէի վարչութիւնն ու մենք ընդունեցինք մեզ տրուած պաշտօնը ուրախութեամբ եւ միանգամայն տիրութեամբ:

Ուրախութեամբ, որովհետեւ մեզ կը յանձնուէր մեր սիրած կուսակցութեան գործը՝ որուն քիչ մը մօտէն, աւելի օգտակար ըլլալու պատեհութիւնը պիտի ունենայինք:

Տիրութեամբ, որովհետեւ մենք մեր մէջ չէինք զգար այն ընդունակութիւններն ու փորձառութիւնը որ անհրաժեշտ է ղեկավարելու համար մէկ կողմէն Ամերիկայի պէս ընդարձակ եւ կարեւոր շրջան մը, միւս կողմէն ներկայացնելու զայն միւս բոլոր քոյր մարմիններուն, ինչպէս նաեւ մասամբ ազգային քաղաքական ու հասարակական շատ մը շրջանակներու:

Տիրութեամբ նաեւ, անոր համար որ Պատգ. ժողովը ընտրութեան պահուն նկատի չէր ունեցած մէկ կամ միւս շրջանի վրայ կեդրոնացնել իր քուէները, ու ընտրելով 3 ընկերներ Պոսթընէն, 3 Նիւ Եորքէն եւ 1 Թորոյէն, մեզ ձգած էր նեղ դրութեան մէջ: Տեղ մը մեծամասնութիւն կարենալ կազմելու համար, ստիպուած եղանք Նիւ Եորքի ընկերներէն մէկը տեղափոխել Պոսթըն: Այս պայմաններուն մէջ, կազմելով դիւանը, երբ սկսանք գործի, այս անգամ ընկ. Ա. Ռատիկեան ստիպուած իր առողջական պատճառներով կը մեկնէր Ֆրեզնօ: Գործերուն կարեւոր ընթացք տալու համար, գումարեցինք հաւաքական ժողով, նոր տնօրինութիւններ ընելու նպատակով: Հոս երկու բառով դիտել տալ կ'ուզենք անպատեհութիւնները անդամներու հեռաւորութեան, աւելորդ թղթակցութիւններու, ծախքերու եւ հետեւապէս մասամբ գործերու յապաղման:

Հակառակ այս ծանր պայմաններուն, միացնելով մեր ջանքերը, մասնաւոր կարգադրութիւններով ունեցանք մեր շաբաթական 36 նիստերը եւ չորս հաւաքական ժողովները, ընթացիկ ու կազմակերպական գործերուն պէտք եղած ընթացքը տալու համար:

Գիտենք որ անկարող եղանք բաղձացուած գործը արտադրել, բայց ըրինք ինչ որ մարդկօրէն կարելի էր ընել, մեր խղճի ու կարողութեան համաձայն:

1. Պատգամաւորական ժողովի հրամայողական որոշումներէն առաջինն էր ինքնապաշտպանութեան հարցը, որ գրաւեց մեր բովանդակ ուշադրութիւնն, ու շրջանի ամբողջ տեղութեան մէջ ջանացինք մասամբ իրագործել ժողովի որոշումները: Մամուլով, շրջաբերականներով, մասնաւոր հրահանգներով ու հրապարակային ժողովներով աշխատեցանք ուժ ու զարկ տալ այդ կենսական հարցին եւ ուրախ ենք յայտարարելու, որ շնորհիւ ընկերներու գիտակցական ու գոհաբերութեան գնահատելի ոգիին, գործիչ ընկերներու անխոնջ աշխատանքին եւ թերթի այս ուղղութեամբ ըրած փրփականտին, այս հարցին մէջ դուրս եկանք պատուաւոր կերպով, որովհետեւ իբրեւ արդիւնք, այդ ջանքերով յաջողեցանք ինքնապաշտպանութեան կեդրոնական բիւրօյին փոխանցել ինը հազար տոլար, յանձնարարելով տրամադրել համեմատաբար աւելի կարօտ ու կարեւոր վայրերուն:

2. Վեց վայրերու համար համատեղացիական ինքնապաշտպանութեան գումարներու փոխադրութիւնը ստացած ենք ու տեղ հասցուցած Բիւրօյի միջոցաւ: Տիրող քաղաքական պայմաններու հետեւանքով այդ գումարները չեն հասած կանոնաւոր միջոցի մէջ ու մեր նկատողութեան փոխարէն ստացած ենք գոհացուցիչ պատասխան:

Ինքնապաշտպանութեան մասին մարմիններէն ու ծանօթ ընկերներէն եկած նամակներ ու տեղեկութիւնները ցոյց կու տան որ որոշ վայրերու մէջ ան կը գտնուի բաւական միջիթարական վիճակի մէջ ու վերջապէս մեր եւ մեր քոյր մարմիններու երկար ու թանկագին ջանքերուն հետեւանքով, հայ ժողովուրդը գտնէ իր գոյութիւնը ի հարկին պաշտպանելու ուրախալի ձգտումներ ցոյց կու տայ: Մեզ կը մնայ ուժ տալ այդ զարթնումին, մանաւանդ որ երկիրը կը գտնուի անտեսական ողբալի չքաւորութեան մէջ ու անկարող այդ ուղղութեամբ լուրջ ձեռնարկներ ընելու:

3. Կամաւոր գնալու<sup>1</sup> տրամադրութիւն ցոյց տուող ընկերներուն անկարելի եղած է բաւարարութիւն տալ, անոր համար որ մեզմէ պահանջուած է կարող եւ կազմակերպող ընկերներ, ու մենք, դժբախտաբար, ի վիճա-

1.- Խօսքը կը վերաբերի իբրեւ գործիչ Երկիր երթալու:





կի եղած չենք ներկայացնել այդ կարգի թեկնածուներ: Այդ կենսական պահանջը դեռ կը գտնուի իր այժմէութեան մէջ ու զայն կը յանձնենք ժողովի լուրջ ուշադրութեան:

4. Զինուորական կամ զինագործական կարեւոր հարցին մէջ անկարող եղանք դրական արդիւնքներ ձեռք բերել, տեղական շատ մը անգործնական ու դժուարին պատճառներով: Զինագործութեան մէջ աշխատող անհատ ընկերներու մօտ եղած մեր քննութիւնները ցոյց կու տան, որ այդ տեղերը անկարելի է սորվիլ որոշ մասնագիտութիւն եւ անհնար՝ պայթուցիկներու մասին: Այս պայմաններուն մէջ, մեզ շատ քիչ թիւով դիմող ընկերներուն խորհուրդ տուած ենք յաճախել տեղական բանակներուն մէջ ու օգտուիլ ընծայուած պատեհութիւններէն:

5. Մշակութային հարցին մէջ մեր ընկերները, շատ քիչ բացառութեամբ, կը մասնակցին համատեղացիական կրթական գործին: Հակառակ ատոր, սակայն, յաճախ շեշտած ենք կրթական գործին մշտատեւ ուժ տալու կարեւորութիւնը եւ թելադրած ընկերները՝ մտնել այդ կարգի հաստատութիւններու մէջ ու ղեկավարել յաջողութեամբ, հարթելով այն բոլոր խոչընդոտները, որ գոյութիւն ունին հոն ու արգելք [են] բարգաւաճման: Այս հարցին կարեւորութիւնը նկատի ունենալով, պիտի թելադրենք ժողովին, որ միջոցներ ձեռք առնէ, երկրի կրթական հաստատութիւնները դնելու համար մաքուր ու կարող ձեռքերու մէջ, ապագային մեր գոհողութիւններով մեր դէմ հակառակորդներ չստեղծելու համար:

6. Արտագաղթի հարց.— Երկրի քաղաքական ու տրնտեսական ներկայ ցաւագին պայմաններու մէջ, արտագաղթի հոսանքին դէմ կուուելու իբր գէնք կրնայինք գործածել միայն գրաւոր հակազդեցում, ինչ որ յաճախ կատարուած է «Հայրենիք»ի մէջ, թէ՛ խմբագրականներով, թէ՛ աշխատակիցներու կողմէ ու պաշտօնական նամակներով:

Շատ անգամ երկրի մարմիններուն մասնաւորապէս գրուած է պարզելով գործաւորական կեանքի արկածալի ու տաժանելի պայմանները:

7. Նկատի ունենալով որ կազմակերպութեան բարգաւաճման գլխաւոր ազդակներէն մէկն է բանաւոր փրօփականտը, ջանացինք որքան կարելի էր, շրջանները օժտել շրջուն ընկերներով: Ու ընկեր Մնարեան<sup>2</sup>, որ որոշած էր մեկնիլ իր դասընթացները աւարտելու համար, խնդրեցինք որ շրջան մը եւս մնայ ու ընկերը յօժարութեամբ իր որոշումը յետ առնելով սկսաւ յաջորդաբար այցելել Պոսթընի, Նիւ Եորքի շրջանի կոմիտէներ:

րուն ու յետոյ անցնիլ Շիքակոյի եւ Քանատայի շրջանները:

Պահանջին առջեւ ստիպուեցանք հրաւիրել նաեւ ընկ. Գ. Ռատիկեանը, որ նոյնպէս յիշեալ շրջանները մի առ մի այցելելով անցաւ Արեւմուտք: Ուրախ ենք ըսելու որ թէ՛ գործիչ ընկերներէն եւ թէ՛ կոմիտէներէն եկած տեղեկագիրները ցոյց կու տան անոնց գործին տուած ցանկալի գարկը:

Իսկ ինչ կը վերաբերի ընկեր Ղարիպի<sup>3</sup> Ամերիկա գալու, համաձայն անցեալ Պատգամաւորական ժողովի որոշումին, դիմեցինք Բիւրոյին ու «Դրօշակ»ի խմբագրութեան, սակայն ընկեր Ղարիպի ներկայութիւնը Եւրոպայի մէջ անհրաժեշտ սեպելով, ժամանակաւորապէս յետաձգեցին: Նորէն դիմեցինք ու այն պահուն երբ ընկեր Ղարիպ իր հաւանութիւնը տուած էր ու խորհրդակցութեան մէջ էինք, տեղի ունեցաւ մեր սիրեցեալ մեծ ընկերոջ Զաւարեանի անսպասելի ու դժբախտ մահը: Ու ընկեր Ղարիպ մեկնեցաւ Պոլիս, ապա Եգիպտոս իր առողջութիւնը դարմանելու համար:

8. Ընդհանուր Պատգամաւորական ժողովի<sup>4</sup> գումարման առթիւ Յուլիս 9-ին երկու Բիւրոներէն ստացանք հրաւիրագիր մը եւ ժողովի օրակարգը, որով կը ծանուցէին ժողովին Օգոստոս 15ին գումարուելը եւ կը պահանջէին մեր մասնակցութիւնը: Հակառակ որ շատ քիչ միջոց տրուած էր ու մենք կը գտնուէինք բոլորովին անակնկալի մը առջեւ, անմիջապէս գումարելով հաւաքական ժողով, հարցերը ենթարկեցինք կոմիտէներուն հաւաքական կարծիքին եւ Ամերիկայի Կեդր. կոմիտէին Ընդհանուր ժողովին ձայնը ներկայացնող նշանակեցինք ընկեր Մնարեան: Ընդհանուր ժողովը սակայն գումարուած ըլլալով նախ՝ Մուշի Ս. Կարապետ վանքը եւ յետոյ Կարին, մեզ համար անկարելի էր մեր ներկայացուցիչը երկու շաբթուան մէջ ժողովին վայրը հասցընել ու մենք զրկուեցանք ժողովին մասնակցութենէն: Այս հապճեպ կարգադրութեան մասին իր ժամանակին Բիւրոյին ըրինք խիստ նկատողութիւններ ու պահանջեցինք մանրամասնութիւններ ու տեղեկագիր մը:

9. «Հայրենիք».— Թելադրուած նախորդ Պատգ. ժողովի որոշումէն, խրախուսուած հասարակութեան ու ընկերներու տրամադրութենէն ու պահանջէն, թերթը երկօրեայի վերածելու համար, խնդրեցինք ընկեր խմբագրէն կատարել յատուկ ուսումնասիրութիւն ու ներկայացնել հաւաքական ժողովին: Յաջորդ հաւաքական ժողովը, ընկերոջ տեղեկութիւնները գտնելով օգտակար ու կարելի, որոշեցինք թերթը վերածել:

2.- Սնարեան – իսկական անունը Նարինեան Սիմոն:  
3.- Ղարիպ – Ախարոնեան Աւետիս:  
4.- Ալկնարկութիւն Հ.Յ.Գ. Եօթներորդ Ընդհ. ժողովին:







**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

այժմեան ձեւին ու հրատարակութեան:

Առաջին յաջող փորձէն վերջ, նկատի ունեցանք ծաւալը կրկնակի դարձնել, բայց պիւտճէն արգիլեց: Պիւտճէի նուազման գլխաւոր պատճառներն են,—

ա.- Երկօրեայի հրատարակութիւն:

բ.- Օգնական խմբագիր եւ օգնական քարտուղարի մը կարիքը:

գ.- Ապառիկները գանձելու դժուարութիւն:

Նկատելի ունենալով որ թերթը այժմեան ծաւալով ենթարկուած է ահագին ծախքերու եւ նկատելով որ մէկ լայնութայի<sup>5</sup> մեքենայ կարող է վարժ օփըրէյթըրի մը ձեռքով նոյն գործը եւ աւելին կատարել, որոշեցինք այս հարցը յանձնել երկու ընկերներու քննութեան: Արդիւնքը նպաստաւոր գտնելով ապսպրեցինք մէկ մեքենայ, որու գինն է 3747 տոլար, վճարելի 38 ամիսէն: Մեքենան գնելու համար կանխավճարը 300 տոլար, Կեդրոնական կոմիտէին գանձէն իբր փոխառութիւն տրուեցաւ:

«Հայրենիք»ի սեփական շէնք մը ունենալու հարցը քննելով գտանք որ բաւական մեծակալ գումար մը հարկաւոր է, ինչ որ այս միջոցին անկարելի է տրամադրել, հետեւաբար այդ մտածումը գանց առինք:

10. «Ասպարէզ».— Քալիֆորնիայի ընկերները տեղական ջանքերով թերթը դարձնելով կուսակցութեան սեփականութիւն, դիմած էին մեզի մնայուն գործիչի մը պահանջով: Այս առթիւ, դիմեցինք Բիւրոյին: Մեզի ներկայացուցին մի քանի ընկերներու թեկնածուութիւնը, սակայն մենք անյարմար գտանք տրուած անունները: Քալիֆորնիոյ մէջ գործիչի պակասը լրացուց ընկեր Գ. Ռոստիկեան, որ իր մասնաւոր հոգածութեան առարկան դարձուց «Ասպարէզ»ն ու կոմիտէական գործերը: Ուրախ ենք որ իր ջանքերը տուին սպասուած արդիւնքը:

11. Կեդրոնական կոմիտէին յարաբերութիւնները միւս քաղաքական կուսակցութիւններուն հետ.— Այդ ուղղութեամբ աշխատանքները սկսանք բաւական խոս-

տումնալից արդիւնքներով: Կեդրոնական կոմիտէն, համաձայն Պատգ. Ժողովի որոշումին, անգամ մը եւս հրակիրեց բոլոր կուսակցութիւնները խորհրդակցական ժողովի մը, ուր իրենց ներկայացուցիչները զրկած էին Վեր[ակագմեալ] եւ Ս. Դ. Հնչակեանները, իսկ Ս[ահմանադիր] Ռ[ամկավար]ները մերժած էին, առաձգական եւ անիմաստ պատասխաններով: Մշակեցինք մասնաւոր ծրագիր մը, զոր ատենին կոմիտէներուն ուղարկեցինք յատուկ շրջաբերականով մը: Այդ ծրագիրը ստորագրուեցաւ Վեր. եւ Ս. Դ. Հնչակեաններուն եւ Դաշնակցութեան ներկայացուցիչներուն կողմէ: Սակայն, աւելի վերջ, Հնչակեաններն ալ քաշուեցան, առարկելով որ Ամերիկայի մէջ համերաշխութեան քայլերը ժամավաճառութիւն են: Սակայն, ինչպէս պիտի տեղեկանաք աւելի վերջ Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի տեղեկագրէն, Պոլսոյ մէջ կայացած է չորս քաղաքական կուսակցութեանց միջեւ համերաշխութեան ձգտող հասկացողութիւն, ընդհանուր ազգային քաղաքական գործերու շուրջ միասնաբար գործելու համար:

12. Անդամական.— Կեդրոնական կոմիտէն այս տարեշրջանին շարքերէն հեռացուցած է 66 ընկերներ, իրենց անպարտաճանաչութեան համար: Հրաժարած են 13 անձեր: Երկիր մեկնած են մեր գիտութեամբ եւ յանձնարարութեամբ 57 ընկերներ:

Կոմիտէներուն թիւն է 67, 1650 գործօն ընկերներով: Կարմիր խաչի խումբեր ունինք Նիւ Եորք, Թրոյ, Ուոթըրվիլթ, Պրիմփորթ, Նիւ Պրիթըն, Հարթֆորտ, Ուայթինսվիլ, Շիքակօ եւ Փրովիտենս:

13.- Պիւտճէ.— Այս տարեշրջանին նիւթական ընդհանուր գործառնութիւնները հետեւեալ պատկերը կը ներկայացնեն,—

Մուտք՝ 24,486 տոլար:

Ելք՝ 17,431 տոլար:

Ինքնապաշտպանութեան Կեդրոնական բիւրոյին զրկած ենք՝ 9,200 տոլար:

Կեդրոնական կոմիտէի ներկայ գանձին մէջ պատրաստ գումար՝ 7,054 տոլար:

5.- Գրաշարական տողատիպ մեքենայ:



Փաստ. 1401-129

**Ա 2.- ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐ**  
**Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ 20ՐԴ ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻ**  
**(1913 Դեկտեմբեր 24-28)**

- 1.- Հաշուետուութիւն եւ տեղեկագիր կոմիտէներու, Շրջանային խորհուրդներու, գործիչ ընկերներու, Կեդր. կոմիտէի, «Հայրենիք»ի, հաշուեքննիչ եւ այլ մարմիններու կողմէ:
- 2.- Երկրի ինքնապաշտպանութեան ուժ տալու միջոցներ:
- 3.- Կուսակցական փոխ-յարաբերութիւններ.– Երկրի, Կովկասի եւ Պարսկաստանի մարմիններու հետ:
- 4.- Կուսակցական փրոփականտի միջոցներ:
- 5.- Գործիչներ.– Շրջանները գործիչներով բաժնելով եւ զօրացնելու միջոցներ:
- 6.- Կուսակցական մամուլը եւ անոր տարածման միջոցները  
(«Դրօշակ», «Հայրենիք», «Ազատամարտ» եւ այլն):
- 7.- Ընկերներու ինքնազարգացման միջոցներ:
- 8.- Տեղական ուժերէ փրոփականտիստներ պատրաստելու միջոցներ:
- 9.- «Հայրենիք»ի ծաւալ, նոր հրատարակութիւններ եւ վարչական գործեր:
- 10.- 1914ի կազմակերպական տուրքեր:
- 11.- Վերաքննուած կանոնագրի փոփոխութիւն եւ վաւերացում
- 12.- Մեր վերաբերումը Ամերիկայի մէջ գոյութիւն ունեցող կուլտուրական հիմնարկութիւններու հանդէպ:
- 13.- Մեր վերաբերումը ամերիկահայ թեմական գործերու հանդէպ:
- 14.- Ամերիկահայ գաղութի թուահամարը կազմելու միջոցներ:
- 15.- Չնախատեսուած հարցեր:
- 16.- Կ.Կ.ի եւ այլ մարմիններու ընտրութիւններ:





Փաստ. 1401-127

ԿՈՍԻՏԵՆՆԵՐՈՒՆ ՀԱՍԱՐ

**Ա Յ.- Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն Ե Ր**


**Հ.Յ.Դ. ԱՍԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ 20ՐԴ ՊԱՏԳԱՍԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ**

(1913)

(ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ)

Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի շրջանի 20րդ Պատգամաւորական ժողովը բացուեցաւ 1913 Դեկտ. 24ին, Երեկոյեան ժամը 8-ին, Ուստրի մէջ, 60 կոմիտէներէն հետեւեալներու մասնակցութեամբ:

	Զայն	Կոմիտէ	
Պինկհէմթընի	»	1	
Պոսթընի	»	2	
Պրանթֆըրտի	»	1	
Պրիմփորթի	»	1	
Պրաքթընի	»	1	
Քէրէվիլի	»	1	
Քէմպրիճի	»	1	
Սէնթրըլ Ֆոլսի	»	1	
Չարլսթաունի	»	1	
Չըլսի	»	1	
Շիքակոյի	»	1	
Քանքըրտի	»	1	
Տիթթոյիթի	»	1	
Ի. Սէնթ Լուիզի	}	»	2
Կրանիթ Սիթիի			
Իսթ Ուէյմընթի	»	1	
Ֆիչպուրկի	»	1	
Տընտէսի	}	»	2
Համիլթընի			
Հարթֆըրտի	»	1	
Լօուէլի	»	1	
Հէյվըհիլի	»	1	
Մանչէսթրի	»	1	
Միտլպորոյի	»	1	
Նիւ Պրիթէյնի	»	1	
Նիւ Հէյվընի	»	1	
Նիւ Եորքի	»	1	
Նիակարաֆոլսի	»	1	



**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն Ե Ր**

**Հ.Յ.Դ.**

**ԱՍԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ**

**20ՐԴ ՊԱՏԳԱՍԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ**

**(1913)**

**(ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ)**

**1913**

**«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ՏՊԱՐԱՆ**

**Պոսթըն**

Փաթըրսընի	»	1	
Ֆիլատերֆիայի	»	2	
Փորթլէնսի	»	1	
Փրավիտէնսի	»	3	
Ռէյսընի	}	»	2
Սթէյկըրի			
Ուօթէկընի			
Ու. Փուլմընի	}	»	1
Թրոյի			



Ուղիղվելիքի	»	2
Ուղիղվածունի	»	1
Ուեսթ Հոպոքընի	»	1
Ուայթինսվիլի	»	2
Ուստրի	»	2
Սփրինկֆիլտի	»	1
Նիւ Եորքի Շրջ. խորհ.	»	1
Պոսթընի Շրջ. խորհ.	»	1
Գործիչներ	»	1
Կեդր. կոմիտէ	»	1

Պատգամաւոր ընկերներու իրաւասութիւնը քննող Յանձնախմբի տեղեկագրէն յայտնի եղաւ, որ Փրայվիտէնսի, Չըլսիի, Նիւ Հէյվընի, Սփրինկֆիլտի եւ Ուստրի կոմիտէները դրամական սակը լրացուցած չեն, հետեւաբար, անիրաւասու էին: Սակայն լսելով նոյն կոմիտէներու ձայները ներկայացնող պատգամաւոր ընկերներու բացատրութիւնները եւ առաջիկային վճարելու խոստումները, ժողովը գտաւ բանաւոր եւ ընդունեց իբր օրինաւոր պատգամաւորներ:

Պատգամաւորական ժողովը առաջնորդուելով Լորէնսի պատգամաւոր ընկերոջ դէմ դրկուած ամբաստանագրէ մը եւ լսելով անոր յարակից խնդիրները, գտաւ, որ ընկեր պատգամաւորը անձնապէս անիրաւասու է, Կանոնագրի յօդ. 62-ի տրամադրութեամբ, հետեւաբար, մերժեց անոր մասնակցութիւնը եւ հեռագրեց Լորէնսի կոմիտէին, որ նոր պատգամաւոր ընկեր մը դրկեն:

Ժողովը բացուելուն պէս, յոտնկայս ցաւակցութիւն յայտնուեցաւ ողբացեալ ընկ. Ս. Զաւարեանի մահուան առթիւ եւ որոշուեցաւ, յանուն Պատգամաւորական ժողովին, ցաւակցական հեռագիր մը տալ «Ազատամարտ»ի խմբագրութեան: Յետոյ, ներկաներու բաղձանքներուն համաձայն, Զաւարեանի Գիւղատնտեսական վարժարանի ֆոնտին համար հանգանակուեցաւ 100 տոլար:

**Նիւ Եորքի Շրջանական խորհուրդի տեղեկագիրը:—**

Պատգամ. ժողովը լսելով Նիւ Եորքի Շրջ. խորհուրդի տարեկան տեղեկագիրը եւ թեր ու դէմ կարծիքներէ վերջ՝ գտաւ, որ խորհուրդը իր որոշ աշխատանքներու մէջ մասամբ բաւարար գործունէութիւն ունեցած է:

**Պոսթընի Շրջանական խորհուրդի տեղեկագիրը:—**

Լսելով Պոսթընի Շրջանական խորհուրդի տարեկան տեղեկագիրը եւ թեր ու դէմ կարծիքներէն յետոյ, գտաւ, որ խորհուրդի գործառնութիւնը իր շրջանի մէջ տիրող պայմաններուն նկատմամբ («Հայրենիք»ի եւ Կ. Կ. ի ներկայ լինելու պարագան), որոշ արդիւնք միայն ունեցած է: Եւ ներկայացուած տեղեկագիրը գտաւ մասամբ միակողմանի:

**Շիքակոյի Շրջանական խորհուրդի տեղեկագիրը:—**

Շիքակոյի Շրջ. խորհուրդը թէեւ չէր մասնակցեր ժողովին, սակայն, դրկած ըլլալով իր տարեկան գործունէութեան տեղեկագիրը, ժողովը թեր ու դէմ կարծիքներէ վերջ գտաւ անգոհացուցիչ:

**Գործիչ ընկ. Մնարեանի<sup>2</sup> տեղեկագիրը:—**

Ժողովը լսելով ընկ. Մնարեանի տեղեկագիրը՝ ընդհանուր հաւանութեամբ գոհունակութիւն յայտնեց իր գործունէութեան համար, որը տեղեկագիր ըլլալէ զատ հմտալից եւ ճշգրիտ ուսումնասիրութիւն մըն էր մեր կազմակերպական կեանքը եւ ընկերներու հոգեբանութիւնը ներկայացնող:

**Գործիչ ընկ. Գ. Ռստիկեանի տեղեկագիրը:—**

Ընկ. Գ. Ռստիկեանի վեցամսեայ տեղեկագիրը կարգացուելէ եւ թեր ու դէմ կարծիքները յայտնելէ վերջ, գոհունակութեամբ ընդունուեցաւ:

Յետոյ Կ. Կ. ի տարեկան եւ Արեւմտեան բիւրոյի համառօտ տեղեկագրերը ժողովին ներկայացուելէն վերջ, անցաւ օրակարգի հետեւեալ հարցերուն:

**ա) Ինքնապաշտպանութիւն:—**

Պատգամ. ժողովը ինքնապաշտպանութեան մասին եղած կարծիքներու փոխանակումէն վերջ, որոշեց նոյնութեամբ ընդունիլ 1912ի Պատգ. ժողովի որոշումը: Ի մասնաւորի Կ. Կ. ի ուշադրութեան կը յանձնարարուի նկատի առնել նաեւ տեղական «միլիտարի» մասնակցելու խնդիրը, այլ եւ Երկրի մարմիններուն թելադրել ----<sup>6</sup>

Թելադրել նոյնպէս տեղիս մեր բոլոր ընկերներուն, որ աշխատին մեր օժանդակիչ խումբերու (Կարմիր խաչի, Զինավարժական, Դերասանական) գործունէութեան նիւթապէս եւ բարոյապէս օգնելու ուղղութեամբ առաջնորդուիլ:

**բ) Դաշնակցութեան դիրքը**

**Թուրք կառավարութեան հանդէպ:—**

Նկատելով, որ վերջին երկու տարիներու ընթացքին տարբեր վայրերու մեր պաշտօնական բարձրագոյն մարմիններու կողմէ տարբեր ժամանակներ փաստուած եւ հաստատուած է թուրք կառավարութեան բացարձակ չկամութիւնը եւ անկարողութիւնը՝ ապահովելու հայ ժողովրդի ամենաարդարացի եւ տարրական իրաւունքները, որ՝ այդ իրողութիւնը անցեալ Պատգամ. ժողովին վերջ ոչ միայն չհերքուեցաւ եղած իրադարձ:

6.- Կիտաուր բաժինը՝ չիքատարակուած, գաղտնապահութեան նկատմամբ:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

ձուլվելու են, այլ առկա է կամ հաստատված է կամ պետք է նկատվել նոր փորձերով, — Պատգամ. ժողովը իր հաշվարկները կու տայ կուսակցության ներկայիս ընտրած պաշտարող եւ հակազդող դիրքին -----  
-----6

**դ) Դաշնակցության գերբը փառամեծության հանդէպ. —**  
Գոհացուցիչ կը գտնէ կուսակցության վերջին Ընդհ. Պատգամ. ժողովի որոշումը:

**դ) Դաշնակցության գերբը**  
**պատրիարքարանի հանդէպ. —**

Կազմակերպութիւնը պարտի համերաշխ գործակցութեամբ ուժ տալ ազգային մարմիններուն քաղաքական հողի վրայ, որքան ատեն, որ անոնք իրենց գործունէութեամբ կը հետապնդեն հայ ժողովրդի քաղաքական պահանջներու իրագործումը:

**ե) Դաշնակցութիւնը Ռուսիոյ եւ**  
**Պարսկաստանի մէջ. —**

Տեղեկանալով Դաշնակցութեան գործունէութեան մասին Ռուսաստանի եւ Պարսկաստանի մէջ, Պատգամ. ժողովը ուրախութեամբ կը նկատէ, որ կազմակերպութիւնը Ռուսիոյ մէջ միութարական վիճակի մէջ է եւ յոյս կը յայտնէ, որ Պարսկաստանի մէջ ալ կազմակերպական գործերը շուտով պիտի ստանան իրենց նորմալ դրութիւնը:

**զ) Դաշնակցութեան ամերիկահայ**  
**թեմական գործերու մասնակցութիւնը. —**

1912ի Պատգամ. ժողովի որոշումը կը մնայ իր ուժին մէջ, որ հետեւեալն է.

«Ամերիկայի երեսփոխանական ու հոգաբարձուական ընտրութիւններուն ընկերները կրնան մասնակցել միայն որպէս անհատ դաշնակցականներ:

«Կուսակցութեան ոեւէ մարմին նման ոեւէ ընտրութեան պէտք չէ մասնակցի, ոչ պրոպագանտի եւ ոչ ալ որոշ մարդիկ ընտրել տալու համար:

«Ոեւէ պարագայի տակ չեն կրնար ընտրուիլ դաշնակցական գործօն անդամներ:

**Մանօթ. —** Գործօն անդամներ են Կ. կոմիտէի, Շրջ. խորհուրդի, տեղական կոմիտէի վարչութեան անդամները եւ գործիչ ու ատենախօս ընկերները»:

Նկատելով սակայն, որ անցեալ տարուայ ընթացքին այդ որոշման հանդէպ անհատական զանցառութիւններ եղած են, կը թելադրուի նորընտիր Կ. կոմիտէին նկատի առնել այդ եւ նախկին որոշման տրամադրութիւնը անշեղօրէն գործադրել առաջիկային:

**է) Գործիչներու հարցը. —**  
Որոշուեցաւ յաջորդ շրջանին «Հայրենիք»ի ընկ. խմբագրէն զատ, երկու գործիչ պահել:

Գործիչները բաշխելու պարագային Կ. կոմիտէն առանձին նկատողութեան առնելու է Արեւմուտքի մեր կոմիտէներու անցեալ եւ այս Պատգամ. ժողովին եղած արդարացի պահանջները:

**ը) Տեղական փրոփականդիստներ**  
**պատրաստելու հարց. —**

Կ. կոմիտէն յատուկ դասախօսութիւններով, փորձուած ընկերներու ղեկավարութեամբ կազմուած ու կարգացուած շարադրութիւններով, վիճաբանական ժողովներով եւ այլ միջոցներով սխիթեմաթիք աշխատանք մը սկսելու է տեղական փրոփականդիստներ պատրաստելու համար:

Ուր որ միայն փրոփականդիստներ դառնալու յոյսեր տուող ընկերներ կան, Կ. կոմիտէի եւ գործիչներու ղեկավարութեամբ մեր կոմիտէները պատահութիւններ ստեղծելու են նոյն ուղղութեամբ աշխատանքներ կատարելու համար:

Կ. կոմիտէն յաջորդ տարուայ համար յատուկ պիւտ-ճէ մը տրամադրելու է այդ նպատակին եւ գործադրելու է պէտքին համեմատ:

Առաջին տարուայ համար տրամադրելի գումարը ըլլալու է առ առաւելն հարիւր տոլար:

**թ) Ամերիկայի մշակութային խնդիր. —**

Հրահանգել Ամերիկայի մեր ընկերներուն, որ յարմարութիւններուն համեմատ իրենց գործօն մասնակցութիւնը բերեն տեղական մշակութային գործին մէջ: Ընկերները յատուկ ջանքեր ընելու են կրթական ընկերութիւններու միջեւ մօտիկութիւն առաջացնելու համար, որով ամերիկահայ կրթական ընդհանուր միութեան մը նախնական հողը պատրաստելով:

**ժ) Ընկերներու ինքնագարգացման միջոցներ. —**

Ինքնագարգացման համար ընթերցանութեան սէրը արթնցնելու ընկերներու մէջ, իսկ քիչ կարգացողներուն նորանոր դրդումներ տալու է:

Այդ նպատակին համար բոլոր կոմիտէները պարտաւոր են անդամական ժողովներու մաս մը յատկացնել սկզբունքային, ընկերային-քաղաքական խնդիրներու շուրջ վիճաբանութիւն, կուսակցական գրականութիւն, հաւաքական ընթերցանութիւն, բացատրութիւն եւլն.:

Ամէն կոմիտէ առնուազն վեց այդպիսի ժողովներ ընելուն է՝ մէկ տարուան ընթացքին մէջ:

Ուր որ կոմիտէները կուսակցական քրուպներ ունին, կուսակցական եւ այլ տեսակի ընտրովի գրականութեան ճիշտ գրադարան մը պահելու է: Ընթերցանական-վիճաբանական կամ լրսաբանական ժողովներ յաճախակի ընելու են այդպիսի կոմիտէները:





Կ. կոմիտեն խորհրդակցելով ընկեր գործիչներու հետ, երբեմն-երբեմն այժմէական կուսակցական քաղաքական նշանակութիւն ունեցող հարցացուցակներ ուղարկելու է կոմիտէներուն, որպէս վիճաբանութեան նիւթ:

«Հայրենիք»ի խմբագրութեան քով, խմբագրութեան գործակցութեամբ, մրցանակաբաշխութեան յանձնախումբ մը կազմելու է, որի նպատակը պէտք է ըլլայ մեր շարքերուն յանձնարարել արժէք ունեցող հարցեր կամ գրքեր եւ ատոնց ամփոփ կարծիքներն առնել մրցանակաբաշխութեան պայմանով:

**ժա) Ամերիկահայ թուահամարի հարց.—**

Նկատելով, որ անմիջական բաւարարութիւն պահանջող շարք մը կարեւոր խնդիրներով ծանրաբեռնուած է կուսակցական մեր գործը, ամերիկահայերու թուահամարը կազմելու առաջարկը կը յետաձգուի յարմար պատեհութեան մը:

**ժբ) «Ասպարէզ»ի եւ Քալիֆորնիայի հարց.—**

Նկատի ունենալով Քալիֆորնիայի շրջանի կազմակերպական գործերը եւ կուսակցական թերթ դարձնելու առաջարկը, Պատգմ. ժողովը կ'որոշէ Քալիֆորնիայի համար մնայուն գործիչ մը դրկել, շաբաթականի մասին համաձայնութեան գալով «Ասպարէզ»ի հետ, իսկ «Ասպարէզ»ը առնել Կ. Կ.ի բարոյական հսկողութեան տակ, առանց անոր նիւթականի պատասխանատուութիւնը ստանձնելու եւ առանց թերթը կուսակցական օրգան դարձնելու:

**ժգ) Ընկեր Ղարիպի<sup>3</sup> Ամերիկա այցելութիւնը.—**

Պատգմ. ժողովը տեղեկանալով Կ. Կ.ի տեղեկագրէն, որ ընկեր Ղարիպ իր տկարութեան հետեւանքով չէ կրցած անցեալ Պատգմ. ժողովի բաղձանքին համաձայն Ամերիկայի շրջանը այցելութիւն տալ, Պատգմ. ժողովը որոշեց նոյն դիմումը կրկնել ընկ. Ղարիպի մօտ, առաջիկայ շրջանի համար:

**ժդ) Ընկեր Վրացեանի տեղեկագիրը.—**

Պատգմ. ժողովը լսելով «Հայրենիք»ի խմբագիր ընկ. Ս. Վրացեանի խմբագրական գործերու մասին տուած տարեկան տեղեկագրութիւնը, «Հայրենիք»ի բովանդակութեան եւ ընդհանուր ուղղութեան նկատմամբ, թեր ու դէմ կարծիքներէ վերջ՝ գոհունակութիւն յայտնեց խմբագրութեան:

**ժե) «Հայրենիք»ի հաշուետուութիւն.—**

Ժողովը լսելով «Հայրենիք»ի քարտուղար ընկ. Խ. Գալուստեանի հաշուետուութիւնը, ընտրեց երեք ընկերներէ յանձնախումբ մը, որպէսզի տեղին վրայ մանրամասն քննութիւն մը ընելէ վերջ, արդիւնքը Կ. Կ.ի միջոցով շրջաբերականով տեղեկացուի կոմիտէներուն\*:

**ժզ) «Հայրենիք»ի ծաւալը.—**

«Հայրենիք»ը շարունակել հրատարակել շաբաթ երեք անգամ, առաջին պատեհութեամբ շաբաթ օրուայ [թիւր] վերածել ութը էջի եւ աստիճանաբար միւս թիւերն ալ հրատարակել կրկնակի ծաւալով:

\*) «Հայրենիք»ի հաշուեքննիչ յանձնախմբի տեղեկագիրը հետեւեալն է.—

«Յանձնախումբս աւարտած ըլլալով իր գործը, կու գայ ըսելու, որ «Հայրենիք»ի հաշուապահութիւնը գտաւ անսխտեմ եւ անբաւարար, իսկ Manager-ին<sup>7</sup> տարեկան գործունէութիւնը բաւական գոհացուցիչ:

Յենուած մեր մէկ շաբթուան ուսումնասիրութեան վրայ, հետեւեալ թելադրութիւնները կը յանձնենք Կ. Կ.ի ուղարկութեան, ներկայ տարուայ յունուար 1-էն սկսեալ գործադրուելու համար:

1) «Հայրենիք»ի վարչութիւնը պէտք է պահէ հետեւեալ տոմարները.—

- ա) Մայր տոմար
- բ) Բաժանորդներու տոմար
- գ) Job-երու<sup>8</sup> տոմար
- դ) Ծանուցումներու տոմար
- ե) Գիրքերու տոմար

2) «Հայրենիք»ի վարչութեան բոլոր առեւտրական գործառնութիւնները պէտք է կատարուին Blue Book-ի սխտեմով:

3) Դեկտ. 1-էն հին տարուայ հաշիւը փակել: Կ. Կ.ը կը նշանակէ հաշուեքննիչ յանձնախումբ մը, որ քննելով «Հայրենիք»ի ամբողջ տարուան հաշիւները, արդիւնքը կը ներկայացնէ Պատգ. ժողովին:

4) «Հայրենիք»ի վարչութիւնը պարտ է հաշուետուութիւն ընել, ամէն շաբաթ Կ. Կ.ին:

5) Ներկայ Manager-ը պահել:

6) Manager-ը ընթացիկ գործերու մէջ պէտք է վայելէ լայնազափ անկախութիւն:

«Հայրենիք»ի ընդհ. մուտք 1913-ին	\$ 11.160,38
» » ելք »	10.710,65
»ի պատրաստի գումար	449,73

7.- Անգլերէն – գործավար (տնտեսական բաժնի):

8.- Անգլերէն – աշխատանք, գործ:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

**ժէ) «Հայրենիք»ի հրատարակութիւնները:—**

Թերթի հրատարակութիւնը իր գլխաւոր գործը կատարելով հանդերձ, «Հայրենիք»ի խմբագրութիւնը հոգալու է նաեւ ուսումնասիրութիւններ եւ այլ հրատարակութիւններ՝ առաջնութիւն տալով կուսակցական բնոյթ ունեցող նիւթերու: Բացի տարուայ ընթացքին լոյս տեսնող մէկ կամ ակելի բացառիկ թիւերէն, ունենալ նաեւ մէկ կամ ակելի ուսումնասիրութիւններ: Տարեցոյցի հրատարակութիւնը կը թողուի խմբագրութեան յարմարութիւններուն:

**ժը) «Հայրենիք»ի վարչութիւն:—**

«Հայրենիք»ի վարչական գործերը վարել ներկայ սիւստեմով: Վարչութեան եւ տպարանի մէջ գործող բոլոր ընկերներու իրաւունքներն ու պարտականութիւնները գծելու է յատուկ կանոնադրութեան մէջ:

Կ. կոմիտէի առաջնորդութեամբ այդ կանոնադրութեան համար կազմուելիք յանձնախմբին մէջ ձայն ունենալու են նաեւ տպարանի աշխատաւորները:

«Հայրենիք»ի մէջ աշխատաւոր ընդունելու ժամանակ առաջնութիւն տալու է դաշնակցական ընկերներուն: Ուելէ աշխատաւոր ըլլալու է անկասկածելի համակիր մեր կուսակցութեան:

Կ. կոմիտէի անդամ մը չի կրնար ըլլալ «Հայրենիք»ի մէնէնը:

«Հայրենիք»ի տեղափոխութեան հարցը առայժմ անհետեւանք թողնուեցաւ:

**ժթ) Կազմակերպական տուրք:—**

1914 տարեշրջանի համար անդամատուրքը կը մնայ նոյնը, այսինքն ամսական մէկ տոլար:

**ի) Ատենախօսանք:—**

Ատենախօս ընկերներուն Կ. կոմիտէն պատեհութիւն տալու է կուսակցական ներքին գործերուն ծանօթանալու, իրենց ատենախօսութիւնները ակելի շահակէտ եւ կուսակցական քաղաքականութեան համապատասխան կերպով առաջ տանելու համար:

Անհրաժեշտ նկատելով, որ ընկեր ատենախօսներու միջեւ համաձայնութիւն մը ըլլալու է կուսակցական սկզբունքներու եւ գործելակերպային կարեւոր խնդիրներու մէջ, Կ. կոմիտէի գործիչ եւ ատենախօս ընկերները միջոցներ ստեղծելու են սխիթեմաթիքօրէն դասախօսական, վիճաբանական եւ այլ ժողովներով կարծիքներու փոխանակութիւններ, լուսաբանութիւններ եւ համերաշխութիւն առաջացնելու համար:

Աւելի օգտակար կերպով գործը առաջ տանելու նպատակով, պարտաւորեցնել բոլոր ատենախօսները, իրենց խօսածներու մասին շարունակական եւ անմիջական տեղեկութիւններ տալ Կ. կոմիտէին, թէ ի՞նչ նիւթեր շօշափեցին, ի՞նչ տեսակէտներ պաշտպանեցին եւ

մօտաւորապէս ի՞նչ գլխաւոր հիմունքներով:

**իա) Շրջանական խորհուրդներու պիւտճէ:—**

Շրջանական խորհուրդներու պիւտճէի մասին եղած թեր ու դէմ կարծիքները լսելէ վերջ, որոշուեցաւ ղեկավարուել անցեալ Պատգ. ժողովի որոշումով, իրաւունք տալով Շրջանական խորհուրդներուն մէկ տարուայ ընթացքին ծախսել առ առաւելն յիսուն տոլար:

**իբ) Դաշնակցութեան պէճերը<sup>9</sup>:—**

Դաշնակցութեան պէճերը գործածելու իրաւունքը սահմանուած է միայն իսկական դաշնակցական ընկերներուն:

**իգ) Կուսակցութեան մէջ պատասխանատու պաշտօնի կոչուող ընկերներու ապրուստը ապահովելու եւ կուսակցութեան վեթերաններու ֆոնտ:—**

Նկատելով, որ կուսակցական պատասխանատու գործերու մէջ եղող ընկերներէն շատերը կամ ապրուստի ուել գումար չեն ստանար կազմակերպութենէն եւ կամ կը ստանան անգոհացուցիչ չափով:

Նկատելով, որ ուրիշ կարող ընկերներ ալ իրենց անխոսափելի պէտքերուն գոհացում տալու մտահոգութիւնով անկարող են իրենց ունեցած ուժերուն համեմատ գործ ստանձնել կուսակցութեան մէջ, կուսակցական ընդհանուր ֆոնտի մը կազմելը կը գտնէ խիստ կարեւոր: Այս նպատակով կը յանձնարարուի Ամերիկայի մեր պատգամաւորի կողմէն առաջարկ ներկայացնել կուսակցական Ընդհ. պատգ. ժողովին<sup>4</sup>:

Նկատելով նաեւ, որ մեր օժանդակիչ խումբերը, առանձնապէս Կարմիր խաչերը, կարող են որոշ գործ կատարել, մանաւանդ կուսակցական վեթերաններուն կեանքը մասով մը ապահովելու խնդրին մէջ, աշխատելու եւ խրախուսելու է անոնց գործունէութիւնը այդ ուղղութեամբ:

**իդ) Կուսակցական մամուլ:—**

Որոշուեցաւ անցեալ Պատգամ. ժողովներու որոշումները պահպանել, թելադրելով կոմիտէներուն եւ ընկերներուն, որ «Դրօշակ»ի, «Ազատամարտ»ի, «Հայրենիք»ի եւ կուսակցական թերթերու տարածման հոգ առնեն:

**իե) Վերաքննուած կանոնագիր:—**

Պատգ. ժողովը կ'ընդունի վերամշակուած Կանոնագիրը ի գործադրութիւն յաջորդ տարեշրջանին համար: Կանոնագրի վերջնական վաւերացումը եւ հրատարակութիւնը, հնարաւոր փոփոխութիւններէ վերջ կը թողնուի յաջորդ Պատգ. ժողովին:

Վերամշակուած Կանոնագրի մէջ փոփոխուած են 10, 11, 16, 41, 49, 61, 62, 67, 72, 98 եւ 100-րդ յօդուածները, իսկ 43-րդ յօդուածը բոլորովին ջնջուած:

9.- Կրօնաւնշանները:





**իզ) Զաւարեան Փոնտի Կեդր. յանձնախումբ. —**  
Թելադրուած Նիւ Եորքի կոմիտէին նշանակուած Զաւարեան Փոնտի յանձնախումբի նամակէն, որոշուեցաւ Փոնտի Կեդր. յանձնախումբի մը ընտրութեան գործը յանձնել նորընտիր Կ. Կ.ին:

**իէ) Գաղ[ու]թային հարցը. —**  
Ընդունելով, որ արտագաղթի երեւոյթը իր մեծ չարիքն ունի եւ սակայն նկատելով Դաշնակցութեան վրայ ծանրաբեռնուած այժմէական եւ հրամայական պահանջները, թելադրել ընկերներուն իրենց անհատական թղթացկութիւններով եւ «Հայրենիք»ի մէջ հրապարակով լայնօրէն ներկայացնել Ամերիկայի ներկայ կեանքն ու արտագաղթի չարիքները:

**իբ) Համերաշխութեան հարց. —**  
Նկատելով, որ անցեալ տարուայ Կ. կոմիտէին մեր նախկին Պատգմ. Ժողովներու թելադրութեան եւ մեր կուսակցութեան մէջ տիրող համերաշխութեան ոգուն համեմատ իր լաւագոյնը ըրած է մէկ տարուայ ընթացքին:

Նկատելով, որ անցեալ տարուայ ընթացքին տեղի ունեցած համերաշխութեան փորձերու անբաւարար արդիւնքներուն համար պատասխանատուութեան ոեւէ նշոյլ չ'իյնար մեր մարմիններու վրայ:

Նկատելով նաեւ, որ երկրի մէջ եւ այլուր այդ ուղղութեամբ եղած ջանքերը նաեւ գործնական արդիւնքներ ունեցած են եւ փափաքելի է, որ այդ ուղղութեամբ աշխատանքները ա՛լ աւելի արդիւնաւոր լինին առաջիկային, կը թելադրուի մեր մարմիններուն եւ շարքերուն համերաշխական բանակցութիւններու փորձերը շարունակել այն կուսակցութիւններուն հետ, որոնց կողմէ եւս նման տրամադրութիւններ եւ խոստումներ եղած են:

(Համերաշխութեան շուրջ եղած արձանագրութիւններու յարմար ատենուան հրատարակութիւնը կը թողնուի Կ. կոմիտէին):

**իթ) Խարբուցիկան գոհերու հարց. —**  
Լսելով Խարբուցիկան գոհերու կողմէ ուղղուած խնդրագիրը, որով կը խնդրէին իրենց դատի պաշտպանութիւնը յանձնել Հ. Յ. Դաշնակցութեան. նկատի ունենալով, որ մինչ ցարդ ազգային ոեւէ մարմին, ոեւէ պաշտպանութիւն ցոյց չէ տուած ի նպաստ գոհերուն. նկատելով, որ այդ գոհերու պահանջը բացարձակ արդարութիւն մըն է, — Պատգ. Ժողովը որոշեց, թելադրել Կ. կոմիտէին դիմել մեր պատկան մարմիններուն, որ կազմեն բարեխիղճ եւ ձեռնհաս օրէնսգէտներէ մարմին մը, հետապնդելու Խարբուցիկան գոհերու դատը, պայմանաւ սակայն, որ գոհերու կողմէն կանխաւ վճար-

ւին եւ կամ երաշխաւորուին պէտք եղած դատական ծախքերը:

**լ) Աշխատաւորական բիւրօ եւ Փոնտ. —**  
Ընդունելով այդ օրինակ հիմնարկութիւններու օգտակարութիւնը ամերիկահայ աշխատաւորութեան համար, անոնց իրագործումը կը թողու յարմար պատահութեան մը:

**լա) Դատական գործերը. —**

- 1) Լսելով խաչավանցիներուն բողոք նամակը, որոշեց պահանջուած 100 տոլարի վճարումը յետաձգել մինչեւ Բիւրոյէն տեղեկութիւն ստացուիլը:
- 2) Լսելով Նէշուէի նախկին կոմիտէի երեք ընկերներու բողոքի մասին դատական յանձնախումբի տեղեկագիրը, Պատգ. Ժողովը հաստատեց Կ. կոմիտէի որոշումը եւ բողոքը անհետեւանք թողուց քանի որ Նէշուէի կոմիտէին լուծուած ըլլալով՝ խնդրոյ առարկայ անհատները այլեւս մեզի անդամ չեն:
- 3) Նկատելով որ Սէնթրալֆոյի կոմիտէի ներկայացուցած բողոքագրի մասին որոշ փաստեր կը պակսին, որոշուեցաւ Աշոտ Գասապեանի գործի քննութիւնը յանձնել Շրջ. խորհուրդին:

**լբ) «Հայրենիք»ի գրաշարներու բողոքը. —**  
Լսելով ընկերներ Խանպէկեանի եւ Ա. Մուրատեանի բողոքը, որով կը պահանջէին օտարագրի բառարանը շարելու աշխատավարձը, Պատգ. Ժողովը մերժելով հանդերձ այդ պահանջի իրաւական մասը, թելադրեց «Հայրենիք»ի վարչութեան վճարել խնդրոյ առարկայ եղող գումարը, հիմնուելով միայն ընկերներու աշխատած ըլլալու իրողութեան վրայ:

**լգ) Կ. Կ.ի գիւնական-յարաբերական թղթակցութեանց եւ հաշուեքննիչ յանձնախումբի տեղեկագիրը. —**  
Պատգ. Ժողովը լսելով յանձնախումբի զեկուցումը, Կ. Կ.ի բոլոր գործառնութիւնները գտաւ խիստ գոհացուցիչ:


**լդ) Կ. Կ.ի ընտրութիւնները. —**  
Յանձնախումբի պատրաստած երկպատիկ ցանկէն գաղտնի քուէով նորընտիր Կ. կոմիտէի անդամ ընտրուեցան հետեւեալ ընկերները Գ. Տ. Կ., Յ. Տ., Խ. Գ., Գ. Պ., Գ. Ռ., Ծ. Ն., Մ. Հ.:

Պատգ. Ժողովը վերջացաւ դեկ. 28-ի իրիկուն, ժամը 6:30-ին եւ պատգամաւորները մեկնեցան լաւ տպաւորութիւններով, այն յուսով, որ Պատգ. Ժողովի որոշումները յառաջիկայ տարուայ բեղմնաւոր աշխատանքի նիւթ պիտի մատակարարեն եւ ճոխ արդիւնք պիտի բերեն մեր Ժողովուրդին:





Փաստ. 1401-83



Ա 4.- ՎԱՐԱՆԴԵԱՆԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

Պարիզ, 12 սեպտ. 1913

Միտերի ընկերներ,

Կարճ պիտի գրեմ — խնդիրն էլ արդէն շատ պարզ է. դրամ չունենք:

Ունինք մէկ ամսուան միայն՝ երկու խմբագրութիւնների համար<sup>10</sup>: Բաժանորդագրութեան վրայ դրած մեր յոյսերը լիովին չարդարացան. արդէն վերջին 5-6 ամիսը «Դրօշակը» իր խմբագրութեամբ հանդերձ ապրում էր մեր մի ընկերոջ նուիրաբերած հինգ հազար ֆրանքով: Դա մի «մանանա» էր, որպիսին յաճախ չի իջնում երկնքից:

Այդ դրամը գրեթէ սպառած է: Դիմելու ուրիշ տեղ չունինք: Մեր միակ յոյսը Ամերիկան է: Պոլիս դիմել ենք. պատասխանում են, որ Ամերիկայից եւ ուրիշ տեղերից ստացուած գումարները յատկացրուել են միմիայն Ջիֆոնի եւ հետեւապէս ոչինչ չեն կարող դրկել մեզ: (Պոլիսը, «Ազատամարտը» շատոնց պարտ են ժընեկին: Սա մի կատարեալ ապօրինութիւն է. մինչդեռ «Ազատամարտը» բարգաւաճ կեանք ունի, կուսակցութեան կենտրոնական օրգանը յաւիտենական կրիզի մէջ է, դադարման սպառնալիքի տակ):

Մեր յոյսը դարձեալ դուք էք եւ ահա նորէն դիմում ենք ձեզ, համոզուած՝ որ պիտի մտնէք մեր կացութեան մէջ եւ չպիտի մերժէք ձեր աջակցութիւնը երկու թերթերին, որոնց խոստացել էիք առատօրէն նպաստել բաժանորդագրութեամբ:

Խնդրում ենք 5000 ֆրանք, որից 3000ը դրկելու էք ժընեկ, 2000ը այստեղ, P[our] les peuples d'Orient-ի համար (Varandian, rue Crébillon, 4): Հաւատացած եղէք, որ ձեզ դիմում ենք միշտ, in extremis, երբ բոլորովին սպառում են մեր միջոցները եւ երբ դիմելու ուրիշ տեղ չի մնում:

Ծայրագոյն պարագայում՝ ֆրանս-անգլիերէն թերթը կարող է դադարել, բայց «Դրօշակը» չի կարող: Ֆրանսերէն թերթի դադարումն եւս ցանկալի բան չէ, քանի որ մեր խնդրի վճռական շրջանն է եւ ամէն կերպ պիտի աշխատենք չէզոք մարդկանցից միջոցներ առնել՝

մէկ տարի եւս շարունակելու ֆրանսերէն թերթը (սրա դադարումը շատ վատ կը մեկնաբանուի որոշ շրջաններում, շատ կը խրախուսի թուրք կառավարութեանը): Յոյս ունինք կովկասցի մեր բարեկամի վրայ, որ շատ հարուստ չէ, բայց ապահովել է այս տարի թերթի ծախքերի մի կարեւոր մասը:

Բարի եղէք ձեր պատասխանը ըստ կարելոյն շուտ հասցնել մեզ, որովհետեւ մէկ ամսից յետոյ մեր դրութիւնը կը դառնայ կրիտիքական: Չեն սպասում ո՛չ տըպարանը, ոչ թղթավաճառն ու գրաչարը: Ժընեկից տղաները շարունակ վա՛յ են տալիս:

Համարը մամուլի տակ է: «Դրօշակի» խմբագրութեան վրայ վերահսկողը ընկեր Տարագիրն<sup>11</sup> է, որ յաճախ ժընեկ է գնում (Լօզանից). նաեւ գլխավոր աշխատակիցն է, ստիպուած գոհանալ շատ համեստ հոնորարով<sup>12</sup> (ամսական հարիւր ֆրանկ): Բոլոր ծախքերը հասցրուած են վերջին minimum-ին, այնուամենայնիւ, ամսական մի 7-800 ֆրանկ պէտք է՝ Դրօշակը ապրեցնելու համար:

Երէկ նամակ ունէի Պոլսից՝ Չաւարեանից: Ինքը եւ Քաջազնունին (որ նոր է մեկնել այս կողմերից) ուղեւորուել են դէպի Մեծ Հայք, Ը[նդհ.] Ժ[ողով]ին մասնակցելու համար:

Շատ ցաւալի է, որ դուք եւ մենք զուրկ մնացինք այդ բախտից: Իմ պատասխանը ձեր հեռագրին ստացած կը լինիք: Իմացաք նաեւ որ տղաները փոքրիկ արկած ունեցան Աշտիշատում: Այժմ Թալաթ պէյի հրամանով ազատ են արձակուած, միայն... այլեւս չեն կարող գումարել Ը. Ժողով Ս. Կարապետում, ինչպէս ծրագրուած էր:

Ուրիշ տեղ կը լինի: Մենք դուրս մնացինք: Միտերի-լենք նրանով, որ «Դաշնակցութիւնը» գէթ մի անգամ Ընդհ. Ժողով կ'ունենայ Երկրի մէջ:

10.- Այսինքն՝ «Դրօշակ»ի եւ «Pour les peuples d'Orient»ի: 11.- Տարագիր — Ահարոնեան Աւետիսի մէկ ուրիշ ծածկանունը: 12.- Պատուազինով, աշխատավարձով:





Ինչպէս գրած էին, պիտի շտապեն այս անգամ. երեք շաբթուայ մէջ պէտք է սպառեն օրակարգը որպէսզի գործիչները շուտով նորէն վերադառնան իրենց տեղերը:

Պոլիս մտնում է Ակնունի, Ջարդ[արեան], Խաժակ<sup>13</sup> եւ այլն:

Ը. Ժ.ին Կովկասից եւս գնացել են մի շարք ընկերներ: Նոր «արկած» չպատահի...

\* \* \*

Պետերբուրգի մէջ մինիստրական շրջաններում, ամիսներից ի վեր, աշխատում է մեր կարեւոր ընկերներից մինը<sup>14</sup>. Ինչպէս իմանում եմ իր մի նամակից, Սա-

զանով<sup>15</sup> ասել է նրան (նորերս տեսակցութիւն է ունեցել) որ ինքը, մինստրը — այժմ սաստիկ զբաղուած է հայկական խնդրով եւ տրամադիր է տալ այդ խնդրին մեր ցանկացած լուծումը:

Խօսակցութիւնը տեւել է մէկ ժամի չափ:

Այս բոլորը կը խնդրէի դուրս չհանել ձեր ընկերական նեղ շրջանից եւ մանաւանդ նամակների նիւթ չծառայեցնել:

Աշխատանքներ կատարւում են եւ Բերլինում:

Ձերմ բարեկներով  
Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

Փաստ. 118-68

### Ա 5.- ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻՆ

Պոլիս, 20 հուլիս. 1913

Ընկերներ,

Ձեր նամակներու յաճախ գանգատալից եւ ջղայնոտ բովանդակութեան համար ցաւ կը յայտնեն ընկերները, մանաւանդ որ լուրջ շարժառիթներ չկան այդ ձեւով գրելու եւ մանաւանդ որ մեր գործունէութեան հակառակ դեբորա մասին միշտ գիտակ պահած ենք ձեզ: Կ'ընդունինք որ վերջերս նամակագրութիւնները թոյլ եղած են, բայց բացակայութիւնը եւ անհրաժեշտ լուրերու չգոյութիւնն էին պատճառը. ինչ որ գրուէր ալ գրեթէ կրկնումը պիտի ըլլար ըստածաներուն:

Դուք գանգատներ կը տեղաք եւ ամբաստանանքի ձեւին տակ՝ թէ դրամները տեղ հասցուած չեն. կը փութանք յայտնել որ անիրաւ էք այդ կէտին մէջ. այդ մասին ընկեր Հրաչի կողմէն ընկեր Կոփոյեանի<sup>16</sup> գրուած մասնաւոր նամակին մէջ պիտի գտնէք ստացուած եւ փոխադրուած դրամներու մանրամասն հաշուետուութիւնը:

Տիրաւորներու մասին ձեր գրածը իրաւացի է. համատեղացիներու անունով հոն փոխադրուելիք գումարը արդէն տեղ հասած է եւ ընկալագիրն ալ ձեզի ղրկուած, իսկ բաշխման բաժինը Կարնոյ<sup>16ա</sup> թողուած ըլլալով մեր կողմէ այլեւս հետապնդում չէ եղած:

Գալով Քղիի՝ Կարնէն կը գրեն որ հոն գէնք փոխադրուած է համարժէք կերպով:

Տիվրիկի Օտուր գիւղի դրամը Սամսոն փոխադրուած է, ուր գէնքեր գնուելով փոխադրած են Սեբաստիա մեր ընկերներուն տեղ հասցնելու համար: Տիվրիկ գլը-

ւած է նամակ, բայց ցաւալի է ըսել ցարդ պատասխան եւ ընկալագիր չեն ստացուեր, որով չենք կրցած բացատրութիւն տալ ձեզի:

Իսկ Մովք, Կիւրին եւ Հաւաւ գիւղերուն համար ձեր փոխադրած գումարներու մասին կը խնդրենք, եթէ կարելի է, մեզի լուսաբանէք, որովհետեւ մեր դիւանը զգուշութեան համար հետզհետէ կը փոխադրենք ժընեւ, որով զրկուած ենք մեր նամակները քննելով լուսաբանելու հնարաւորութենէն: Կ'ուզենք իմանալ թէ այդ տեղերու գումարները առանձին ղրկուած են՝ Օտուրի, Չմշկածագի նման, թէ մեզի ղրկուած մեծաքանակ գումարներու հետ խառն. այդ պարագային զարմանալի պիտի ըլլար չնկատել ձեր որոշ հրահանգը մասնաւոր գումարներու փոխադրութեան մասին: Այս մասին կը սպասենք ձեր տալիք լուսաբանութեան եղած թիւրիմացութեան առթիւ:

Անկեղծօրէն պէտք է յայտնենք ձեզի որ մեր սնտուկին մէջ այս պահուս բացի պարտքէ ոչինչ չունինք: Ասիկա կ'ըսենք որպէսզի սխալմամբ կարգադրութիւն չընէք թէ այսինչ տեղի դրամը ղրկեցէք: Սխալը եղած է:

13.- Յաջորդաբար՝ Մալումեան Խաչատուր (Ակնունի), Ջարդարեան Ռուբէն, Գարեգին Խաժակ – Չազալեան:

14.- «Կարեւոր ընկերը» բժ. Յ. Չարեանն է:

15.- Մերգէլ Մազանով, արտաքին գործոց նախարար Ռուսիոյ՝ 1911-1916:

16.- Հրաչը՝ Թիրեաքեան Հայկն է, անդամ Ինքնապաշտպանութեան քիւրդիին. Յ. Կոբոյեան՝ անդամ Ամերիկայի Կ. կոմիտէին:

16ա.- Իմա Հ.Յ.Դ. Արեւմտեան քիւրդի Կարնոյ հաստատմին:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

Ձեր նամակի մէջ մասնաւոր ընկերներու կողմէն գրուած երկու նամակներու մասին գանգատաւոր ձեւով կը գրէք: Այդ ընկերները նախ որ պատահական ընկերներ չեն եւ երկրէն նոր վերադարձած ըլլալով մեր հրահանգներով ձեզի գրեցին իբր տեղեակ բուն գործերուն այն յոյսով որ գոհ պիտի մնաք, բայց, ինչպէս կը տեսնենք, հակառակ արդիւնք ունեցեր է:

Բայց ձեր նամակի էն աչքառու կէտը Պոլսոյ Կ. Կ.ի շրջաբերականէն ազդուած ըլլալնիդ է. եւ այդ առթիւ, անոր ոգիէն ներշնչուելով, դուք ալ ձեր յարձակումներուն սաստկութիւն մը կու տաք: Այս մասին շրջաբերականով մը յատկապէս բացատրութիւն պիտի տրուի:

Մօտ տեսնէն կը ստանաք Ընդհ. Ժողովի որոշումներուն տպագրուածը:

Ինքնապաշտպանութեան գործը, ինչպէս քանիցս գրուած է ձեզ, բացառիկ կերպով, յաջող կերպով տարուած է՝ համեմատաբար մեծաքանակ գնումներ ընելու, ամբողջութեամբ Կարին փոխադրելու եւ անկէ բաշխուելու համար:

Գնման եւ փոխադրման համար շատ ապահով միջոցներ ունինք. լաւ առաջարկներ մեր սեղանին վրայ են, սակայն դրամն է որ կը պակսի եւ քանի որ մեզ կը մեղադրէք որ միայն փողի համար է որ ձեզի կը դիմենք, այս անգամ դրամի առաջարկ չենք ընել: Միայն յանուն գործին կը խնդրենք վերին աստիճանի գաղտնապահ ըլլալ գէնքերու խնդրի մասին: Այս նկատողութիւնը կ'ընենք աչքի առաջ ունենալով ձեր վերջին շրջաբերականը, ուրտեղ կոմիտէները, ընկերները ոգեւորելու գովելի փափաքով մը, յայտնած էք թէ ապրանքներ գնուած եւ փոխադրումներ եղած են: Պէտք էր այդպիսի լուրերը շատ սահմանափակ շրջանի մը մէջ պահուիլ եւ գրի չառնուիլ, զի ինչքան ալ կը կարծէք որ ծածուկ կը պահուի, դարձեալ կերպով մը երեւան կ'ելլեն եւ կրնան աղիտաւոր դժբախտութիւններու պատճառ ըլլալ եւ վնասել գործին: Կը կրկնենք մեր խնդիրքը, այն է՝ գէնքի մասին լուռ մնալ:

Կառավարութիւնը վերին աստիճանի կասկածով կը վերաբերուի Դաշնակցութեան հետ եւ անվերջ խուզարկութիւններ կատարել կու տայ ծովեզերքները գէնքի մաքսանենգութիւնները արգելելու համար:

Հայկական հարցի մասին Ռուսիոյ եւ Գերմանիոյ

միջեւ համաձայնութեան մը գալու լուրը յայտնի ըլլալու է ձեզի: Գերմանիան որ էն դիմադրողն էր մեր ծրագրի գլխաւոր պահանջներուն, այդ համաձայնութեամբ յոյսեր կու տայ մեր բարենորոգումներու մօտալուտ կարգադրութեան: Այդ կարգադրութիւնը հեռու է անշուշտ մեզի լիովին գոհացնելէ, սակայն եւ այնպէս ընդհանուր գծերու մէջ, կը բովանդակէ առաւելութիւններ գործնք, ներկայ շփոթ կացութեան մէջ, գոհացուցիչ կարելի է համարել միշտ ձգտելով անշուշտ լաւագոյն պայմաններու:

Վերջերս Ամերիկայէն վերադարձող Գ ճամբորդներ հոս հասան, որոնք Սամսոնի եւ Տրապիզոնի գծով մեկնեցան: Պէտք եղած դիւրութիւնները տրուեցան անոնց:

Ընկ. բարեւներով  
Ի[ՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ] ԲԻԻՐՕ

Յ.Գ.- Երեք ծրարի մէջ ձեզի կը դրկենք Ծրագիր եւ Կանոնագիր: Ձեր ուզածին չափ չկան, բայց առայժմ բաւականացէք այդքանով:

Երկրի հասցէներու հետ ատկէ հաղորդակցիլ անյարմար կը նկատուի. մենք արդէն շատ զգուշութեամբ կը թղթակցինք եւ փոխանցական միջոցներով. ուստի եթէ ունիք ռեւէ բան, լաւ կ'ըլլայ մեր միջոցով ընէք, որովհետեւ մենք միայն ապահով եւ զգոյշ ճանապարհով միջոցները գիտենք: Յանձնարարականներու համար կարելին կ'ընենք:

Քալիֆորնիոյ համար յարմար ընկերի մը համար կ'աշխատինք, թէեւ այդպիսի պարագաներու մէջ, ինչպէս «Յառաջ»-ի խմբագիր մը դրկելու գործին մէջ, յաջողութիւն չենք ունեցած:

Միջ-կուսակցային համերաշխութիւնը ժամանակի պահանջ մըն էր. բայց թէ չի յաջողիր կամ անհամաձայնութիւններ կը ծագին, մեր բարեացակամութենէն դուրս է: Ներկայ ազգային ճգնաժամին բաղձալի է այդպիսի իրագործում մը մեր ընդհանուր շահերուն տեսակէտով. յաջող է կամ ոչ, մենք մեր գործունէութիւնը առաջ կը տանինք անվրդով՝ ուրիշները թող հետեւին մեզի:

ՆՈՅՆ





Փաստ. 61-72

Ա 6.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ

Վիշապ, 1913 9/22 XI

(Գաղտնի միայն մարմնի համար)

Ընկերներ,

Միմոնի մահուամբ<sup>17</sup> գլուխներս չափազանց խառն էր. միևս կողմից նորընտիր Բիւրոյի անդամները դեռ Պոլիս չէին հասել, այնպէս որ ձեր 31 Հոկտեմբեր նամակի պատասխանը ժամանակին չգրուեց: Անցեալները յարաբերութիւնների մէջ մասամբ անկանոնութիւններ են տեղի ունեցել, ինչպէս եւ զանազան յանձնառութիւններ ժամանակին չեն կատարուած: Այդ բոլորը ունեցել են իրենց պատճառները, որոնց մասին այստեղ աւելորդ է խօսելը: Յոյս ունենք, որ այսուհետեւ Բիւրոյի գործառնութիւնները աւելի կանոնաւոր պիտի լինեն:

Ծովքցիներու, Հաւաւցիներու ինչպէս նաեւ Կիւրիցիներու գումարի մասին չկարողացանք իմանալ թէ նախկին Բիւրոն ի՞նչ կարգադրութիւն է արած: Զեռքներս տակաւին արխիւ չլինելով, պիտի անմիջապէս գրենք ժընեւ, որ նային վերջին տարիների հաշիւները եւ մեզ տեղեկացնեն: Այստեղ կայ մէկ տարուայ հաշիւներ միայն: Խնդրեցինք, որ այդ հաշիւները բերեն մեզ մօտ, թերեւս այնտեղից էլ հնարաւորութիւն ունենանք ոեւէ բան իմանալու: Եթէ հաշուեկշիռի ելքի մէջ նշանակուած չլինեն, բաւական դժուարութիւնների պիտի հանդիպենք: Նոյնիսկ հին ընկերներից մէկը, որ ծանօթ է հաշիւներին, ասում է որ հաշուեկշիռից դժուար թէ ինդիքը պարզուի: Յամենայն դէպս, ամէն բան պիտի անենք, առկախ մնացած խնդիրները կարգադրելու: Պիտի խնդրէինք նեղութիւն քաշէք, այդ երեք վայրերի գումարի քանակը, ինչպէս եւ ուղարկուած ժամանակի մասին մեզի տեղեկացնէք:

Զմչկածագի 50 լիրան, ինչպէս եւ Արաբկիրի համար կուսակցութիւնից 50 լիրա ուղարկուած է պատկանեալ մարմնին, որ N° 11-եր<sup>18</sup> գնէ եւ ուղարկէ: Ընկերները արդէն պատուէրներ տուել են, եւ Խարբերդի ընկերների միջոցաւ կը հասցուի իրենց: Վանի մարմնի գանադատը արդէն աւելորդ է, որովհետեւ Դեկտեմբերի 6-ի նամակով յայտնում են, որ ստացել են ուղարկուած գանազան տեսակի գրքերը<sup>19</sup>, որոնց փոխարժէքն է մօտաւորապէս 350-400 ոսկի: Բացի այդ ստացել են 250 ոսկի եւս: Վերջապէս չպիտի մոռանաք, որ ոչ միայն ձեր, այլ ընկերները ալ տեղերից եկած գումարները Արեւելեանի եւ Արեւմտեանի համաձայնութեամբ գրքերի վերածուած տեղաւորում են հարկաւոր անհրաժեշտ

եղած վայրերում: Կուսակցութեան դրամները սխալ է փոքրիկ գումարների վերածելով ցրել զանազան վայրեր: Տեղական պէտքերը պէտք է հոգալ տեղական միջոցներով, իսկ կուսակցութեան միջոցները անհրաժեշտ է եւ նպատակայարմար կենտրոնացնել մի քանի յայտնի վայրերում:

Ընդհանուր ժողովի ամենակարեւոր եւ արմատական որոշումը երկու բիւրոների (Հայաստանի եւ Արեւմտեանի) Պատասխանատուի դեր յանձնելն է: Ուրեմն վերոյիշեալ մարմինների վրայ այժմ դրուած է շատ ծանր եւ պատասխանատու դեր:

Երկրի ներսի տակտիկը պէտք է լինի Վասպուրականի Կեղերոնական կոմիտէի առած ձեւը, ի հարկէ աւելի սիստեմի վերածուած: Սպանութիւններին պէտք է պատասխանուի նոյն ձեւով: Յայտնի հարստահարիչ եւ հայ տարրի թշնամի աղայութիւնը եւ ուշները պէտք է ենթարկուին ահաբեկչութեան: Գրաւորուած հոդերը, ուր որ հնարաւոր է, պէտք է վերագրուել բուն միջոցներով, թողնելով որ բողոքողի դերում նրանք լինեն: Ուրեմն, այս Ընդհանուր ժողովի բնորոշիչ գիծը այն է, որ պաշտօնական բնաւորութիւն է տալիս մեր յեղափոխական ձեռնարկներին: (Պաշտօնական ասելով, պիտի հասկանալ կուսակցութեան ներսը): Նկատելով որ ակտերը վերջ ի վերջոյ կարող են տանել ընդհանուր բռնկման, այժմուսանից եւեթ ուրեմն մտածուած է պատրաստ գտնուել որոշ վայրերում:

Այդ բոլորի համար ի հարկէ անհրաժեշտ է դրամական խոշոր միջոցները: Վահագր<sup>20</sup> յատկապէս անցել է Սարուստան<sup>21</sup> այդ նպատակով: Յոյս է յայտնում, որ մինչեւ 10,000 ռուբլի մեզի հասցնի: Արդէն տեղ է հասցրել 3000 ռուբլի: Մեր գործերի թափը կախուած է դրամների շարունակական հասնելուց: Բաւականին մեծ պատուէրներ ունենք տուած. այդ բոլորը հնարաւոր կը լինի ստանալ, գումարների պատրաստ ունենալնու: Մինչեւ այժմ բոլոր գնումները ամենայն յաջողութեամբ տեղ է հասել, առանց ոեւէ վտանգի: Պարագաները թէպէտեւ բաւականին փոխուել են, եւ խստու-

17.- Չուարեան Միմոն մահացած էր 14/27 հոկտ. 1913ին:  
18.- N°11-երը մոսկի հրացաններ են:  
19.- Գրքերը՝ պէտք է հասկնալ գեները իմաստով:  
20.- Վահագր – ծածկանունն է Վոսմեան Արշակի:  
21.- Սարուստան – ծածկանուն Կովկասի եւ Ռուսիոյ:



ՆԻԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Թիւններ շատացել, բայց նորանոր միջոցներ է գտնուում:


Ինչպէս մինչեւ այժմ էլ տեղեկացած կը լինէք, երկրի մարմիններէն Շամը եւ Դուրան-Բարձրաւանդակն<sup>22</sup> է, որ կորովի գործունէութիւն են ցոյց տալիս: Պիտի աշխատուի, որ միւս վայրերն էլ նոյն թափով աշխատեն: Ժողովրդի ինքնապաշտպանութիւնը իրենց սովորական միջոցներով բաւականին լաւ կերպով առաջ կ'երթայ: Նկատելի է մի պարագայ, որ իրենց միջոցներից մեծ գոհողութիւն են անում:

Ընդհանուր ժողովը որոշել է երեսփոխանական ընտրութիւններին մասնակցելու պայման դնել համեմատական եւ ազգային ներկայացուցչութիւնը: Պատրիարքական թաքրիրը կառավարութիւնը մերժել է չափազանց կոպիտ ձեւով, վերադարձնելով թաքրիրը Պատրիարքարանին: Մենք աշխատում ենք ամէն կերպ ընդհանուր, համազգային բոյկոտ առաջ բերել: Ռամկավարները քիչ մը խոյս կը տան. տեսնենք կը յաջողինք անոնց էլ միացնելով բոյկոտը գլուխ բերել թէ ոչ:

Հայկական հարցը լաւ վիճակում չի գտնուում: Գերման-ռուս համաձայնութենէն յետոյ, 6 զլխաւոր կէտերու շուրջը վարչապետին դիմում կատարուում է: Վարչապետը սկիզբը մերժել է, նկատելով որ վեհապետութեան իրաւունքներին դէմ է նման մի ծրագիր: Վերջը

խոստացել էր, թէ կը համաձայնուենք ընդհանուր քննիչի (որը պէտք է լինի օսմանցի, նշանակուած Սուլթանից). խորհրդականը պահանջել եւրոպացիներից, նրան տալով բաւականին լայն իրաւասութիւններ: Մենք ցանկանում ենք ընդհանուր քննիչներ խորհրդականներին գէթ տրուի այնպիսի իրաւունքներ, որ իրապէս ոյժ ունենան ռեւէ գործ կատարելու: Ո՞րքան այդ բանը պիտի յաջողուի, չգիտենք: Ընկերների մեծամասնութիւնը այն կարծիքի են, որ վերջ ի վերջոյ, այդ խնդրի լուծումը պէտք է գլուխ բերուի հայերի ակտիւ միջամտութեամբ: Դիպլոմացիան մի բան է, բայց ոչ ամէն բան: Այդ բանը մենք ժամանակին պիտի իմանայինք եւ հարկաւոր պատրաստութիւնը տեսնէինք:

Կառավարութեան ներկայացուցիչները ցանկութիւն էին յայտնել Դաշնակցութեան հետ տեսնուել եւ բանակցութեան մտնել հայկական խնդրի շուրջ: Որքան որ վտանգաւոր է այդ մարդկանց հետ տեսնուել (պրովոկացիա են առաջ բերում, տարածելով թէ հայերի հետ համաձայնութեան ճանապարհի մէջ ենք) բայց եւ այնպէս, յարմար համարեցինք մէկ անգամ էլ տեսնուել, եւ ազդել անոնց վրայ, որպէսզի [չ]խուսափեն կոնտրոլի գաղափարից, որից այնքան խրամնում եւ փախչում են: Տեսակցութեան միջոցին սկսեցին նորէն իրենց հին խաղերը, որ պատրաստ են ամէն բան անելու, հայերին գոհ



Նմոյշ մը Վանայ Սարգիսի (Օտապաշեան Պողոս) ձեռագրէն





Թողնելու եւայլն, եւայլն, պայմանով որ մենք էլ դէմ արտայայտուենք եւրոպական կոնտրոլին: Մեր պատասխանը բացորոշ էր. «առանց երաշխաւորութեան չենք հաւատում ոեւէ ընթրմի», այսօր դուք էք, վաղը մի ուրիշ կաբինէ, եւ մէկի արածը միւսը առանց դժուարութեան կարող է ոչնչացնել: Նոցա մէջ էլ երկու հոսանք կայ. մեծամասնութիւնը սոսկալի դէմ է կոնտրոլին, բայց կայ մի փոքրամասնութիւն, որ չէ ուզում խուսափել կոնտրոլից, պայմանով որ այն ձեռով խմբագրուած լինի, որ օսմ. վեհապետութեան իրաւունքները վնասուած եւ օսմանց[ոց] ինքնասիրութիւնը [չվիրաւորուի]: Մէկ անգամ եւս պէտք է տեսնուենք եւ դա երեւի կը լինի վերջինը ...:

Ընդհանուր ժողովի արձանագրութիւնները մենք էլ չենք ստացել. միայն գլխաւոր որոշումներ են, որոնք տրուած են տպագրութեան: Գլխաւոր խնդիրը պատասխանատուի եւ ինքնապաշտպանութեան վերաբերեալներին տրուեց:

Գլխաւոր որոշումներից շատերը բոլորովին անպատշաճ եւ անտեղի էին «Դրօշակ»ում տպել: Երբ իմացանք, հեռագրեցինք որ համարը չտարածեն, բայց արդէն ուշ էր:

Օտուրցիներու գրքերը արդէն տեղ են հասել. եկողներից իմացանք. բայց ստացական մեզ չհասաւ, որ ուղարկենք ձեզ:

Մենք զարմանում ենք, որ Պոլսոյ Կ. կոմիտէի տգեղ

թուղթիկի ոգուն համամիտ էք գտնուել: Կան պարագաներ, որ օրէնքների տառերին չեն կառչում: Ընդհանուր ժողովի կարիքը բազմաթիւ մարմիններ զգալով, դիմում էին կատարել, որ արագացուի: Նկատելով պատմական մոմենտի կարեւորութիւնը, խկոյն եւեթ ձեռնարկուեց: Չէր կարելի աշնան ձգել, որովհետեւ շատերը ուսուցչական պաշտօն ունենալով, այդ ատեն չեն կարողանում մասնակցել: Ժողովը հնարաւորութիւն ունեցաւ մեծամասնութիւն կազմելու եւ կանոնաւոր նիստեր ունենալ: Ճիշտ է որ մի քանի մարմիններ զրկուեցան, բայց դա նուազագոյն չարիքն էր: Մեր կուսակցութեան ոյժը եղել է ծայրայեղ յարգանքի եւ բարոյական վերաբերմունքի մէջ. մարմինների եւ ընկերների մէջ այդ դրատիցիան<sup>23</sup> պահելու է, այլապէս կուսակցութիւնը մեծապէս կը տուժէ:

Գրեցէք այն հարցերի մասին, որ ձեզ հետաքրքրում են, պատասխաններ կը տրուի կանոնաւոր կերպով: Բիւրոյի գործավարութիւնը կանոնաւոր հիմքերի վրայ է դրուած:

Ընկեր Վրացեանը ինչո՞ւ է ցանկանում հեռանալ: Չէ՞ որ դժուար է նոր ընկերներ գտնել: Պիտի խընդրէինք որ շարունակէր իր գործը եւ չմտածէր մօտիկ ապագայում վերադարձի մասին:

Ընկերական բարեւանքով՝  
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Յ.Գ.- կը ստանաք 1200 դոլլարի ստացականը ներփակ նամակով:

22.- Շամը՝ Վանն է. Դուրան-Բարձրասնդակը՝ Տարօն-Մասուն:  
23.- Աւանդութիւնը:





Փաստ. 1401-116

Ա 7.– ՎԱՐԱՆԴԵԱՆԷՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՍԻՏԵԻՆ

Պարիզ, 25 Նոյեմբեր 1913

Ընկերներ,

Ժամանակին շնորհակալութեամբ ստացել ենք ձեր 2590 Ֆրանքի չէքը: Ժրնեւ էլ ստացել են ձեզինց 1000 Ֆրանք: Աջ ու ձախ ենք ընկել դրամ գտնելու, որպէսզի գէթ 8 ամիս եւս ապրեցնենք Ֆրանսերէն օրգանը: Բաժանորդագրութիւնից կը ստանանք գուցէ մի 2-2500 Ֆրանք: Յուսամ՝ կ'ապրուի քանի մը ամիս: Մեծ յոյս ունենք մասնաւորապէս Ամերիկայի բաժանորդագրութեան վրայ: Անգլիերէն բաժինը այսուհետեւ աւելի ճոխ կ'անենք:

Գալ համարով պիտի հրատարակենք Pro Armenia անուան տակ: Եթէ ոյժ տաք պրոպագանդին, անուուազն 1500-2000 Ֆրանք բաժնեգին կարող ենք ստանալ ձեր կողմերից:

Սիմոնի մահից<sup>17</sup> յետոյ, Բիւրոյի կազմը սաստիկ թուլացել է Պոլսոյ մէջ եւ հարկ է լրացնել կարեւոր ուժերով, մինչեւ առաջիկայ Ը[նդհանուր] Ժ[ողով]ը: Գրեցինք Վանայ Սարգիսին<sup>24</sup> (ընտրուել էր Բիւրոյի անդամ), որ թողի Կիրասոնը եւ հաստատուի Պոլիս: Նա էլ պատասխանում է, որ խիստ engagement-ներով<sup>25</sup> կապուած է այս տարի Կիրասոնի հետ եւ մէկ ամսով միայն կարող է Պոլիս երթալ: Անդամ է ընտրուած եւ Կարոն<sup>26</sup>, որ տակաւին էրգրում է: Մնում են Պոլսոյ մէջ երկու հոգի միայն – Դոկտորը եւ Հրաչը<sup>27</sup> – երկուսն էլ ոչ շատ հմուտ եւ մանաւանդ ոչ ազատ՝ կազմակերպական գործերով զբաղելու համար:

Ուստի նորէն կանգ են առել Վուամեանի վրայ եւ որոշել են խնդրել նրան փոխադրուել Պոլիս: Տակաւին պատասխան չունին: Նրա առողջութիւնն էլ բաւական տրորուած է, հանգստանալու պէտք ունի. (մտադիր է շուտով Միւնիխէն անցնել, քրոջ մօտ. այժմ ինք Ռուսաստան է հանգանակութեան գործով):

Ընկերներ, Սիմոնի մահուան պարագաները ծանր խորհրդածութիւնների տեղիք տալով հանդերձ, մեզ շատ որոշ եւ ստիպողական թելադրութիւններ է անում: Ինչպէս գրում են ինձ շատ տեղեակ աղբիւրից, մեր խեղճ ընկերը վերջերս սաստիկ տառապել է աղքատութիւնից: Մնունդը ողբալի է եղել, միանգամայն անհամաչափ, իր կատարած ահագին աշխատանքին, իր ծախսած էներգիան<sup>28</sup>: Եւ նա աստիճանաբար հիւժոնել է ու մարել: Կազմակերպական դրամարկղից չի կամեցել վերցնել, բայց եւ միւս կողմից իր դասերից ստացած վաստակը չնչին է եղել: Ուրիշ դասեր գտնելու համար –

մեծ արգելքների է հանդիպել: Անկարելի է առանց խոր կսկիծի ու ցատուամի կարգալ այդ տեղեկութիւնները:

Եւ գէթ այժմ, այդ եղերական նախընթացից յետոյ, պէտք է լրջօրէն մտածենք մեր մնացող վետերանների մասին. նրանց՝ որոնք չեն կարող ապրել ոչ գրելով եւ ոչ էլ ուրիշ աշխատանքով (վարժապետութեամբ, եւայլն): Թէեւ մեծ մասամբ քայքայուած ջղայնացած՝ նրանք այնուամենայնիւ դեռ շատ եւ շատ օգտակար կը լինէին կազմակերպութեանը, եթէ լինէին ազատ, եթէ ստիպուած չլինէին սեւ, չարքաւ աշխատանքի մէջ իրենց պարէնը վաստակել:

Կան հին ընկերներ – Դոման, Իւսուֆ<sup>29</sup> եւայլն – որ դժբախտաբար կատարելապէս ինվալիտ<sup>30</sup> են դարձել: Իմ խօսքը նրանց մասին էլ չէ. նրանք մի կերպ ապրում են իրենց ընկերներից կամ ազգականներից ստացած նպաստներով եւ կը շարունակեն ապրել:

Իմ խօսքը այն կատեգորիի<sup>31</sup> մասին է, որ եթէ շարունակէ մնալ իր ներկայ աշխատանքի պայմաններում, դատապարտուած է վաղը նոյնպէս ինվալիտ դառնալու: Շատերը կան – ես կը յիշեմ միայն, Ռոստոմին, Վահաբին: Պէտք է հնարաւորութիւն տալ վաղուան ինվալիտութեան այդ թեկնածուներին՝ փոքր ինչ հանգստանալ, բժշկուել, գէթ մի քանի ամիս: Որքան էլ դեմոկրատ ու հաւասարապաշտ լինենք մեր հասկացողութիւնների մէջ, պիտի ընդունենք այնուամենայնիւ, որ մեր կազմակերպութեան մէջ եւս, ինչպէս բոլոր նմանօրինակ մարմինների մէջ բոլոր երկրներում, կան մի շարք ընկերներ, որոնք իրենց մտաւոր, բարոյական կամ գինուորական արժէքով, փորձառութեամբ, յեղափոխական անցեալով եւայլն, – բարձր դիրք ունին կուսակցութեան մէջ, հանդիսանում են վերջինի գոյութեան սիւները: Եթէ Քրիստափոր եւ Սիմոն կենդանի լինէին, երբեք ոչ մէկի մտքով իսկ չէր կարող անցնել

24.- Վանայ Սարգիսը՝ Բարսեղեանն է, բուն անունով Օտապաշեան Պողոս, որ արդէն անցած էր Պոլիս. Արեւելեան բիրոյի նախորդ նամակը (փաստ. 61-72) կը պատկանի իր ձեռագրին:  
25.- Ֆրանսերէն – յանձնառութիւն:  
26.- Կարոն՝ Արմէն Գարոն է – Փաստրմաճեան Գարեգին:  
27.- Դոկտորը՝ բժ. Փաշայեան Կարապետն է, Հրաչը՝ Թիրեաքեան Հայկ:  
28.- Կորովին, եռանդին:  
29.- Նիկոլ Դոման (Տէր Յովհաննիսեան Նիկողայոս) եւ Եուսուֆեան Յովհաննէս:  
30.- Հաշմանդան:  
31.- Դասի, խաւի:





Դաշնակցութեան «ապագայ կազմալուծումի» կամ նոյնիսկ թուլացումի երկիւղը: Ես ի հարկէ, դարձեալ լաւատես եմ:

Պէտք է, կրկնում եմ, հնարաւորութիւն տալ եւ պատրաստել մեր մի քանի ընկերներին՝ ապրել կազմակերպութեան հաշուով եւ նուիրուել բացառապէս կազմակերպական գործերին:

Ահա, օրինակ, մեր զինուորական կարեւոր ուժերից – Վարդանը<sup>32</sup>: Դուժմանի մասին կը գրեն արդէն թէ անյոյս հիւանդ է: Անդրանիկը երկիր չի ուզում վերադառնալ, Քեռին<sup>33</sup> մնում է Պարսկաստանում. Վարդանը թուրքիա է (Իզմիրի մօտ) – բայց ձեռք ու ոտք կապած՝ նիւթականի յաւիտենական ու նզովեալ խնդրով: Եւ ահա մեր պատմութեան, մեր հարցի այս վճռական շրջանին մէջ, երբ այնքան յոյսեր կան եւ այնքան պատասխանատուութիւններ մեր կազմակերպութեան վրայ, երբ աւելի քան երբեքիցէ պէտք է մտածել մեր զինուորական վերակազմութեան մասին երկրի մէջ – մեր ամենամեծ, ամենահին հրամանատարները մնում են երկրից դուրս: Աւելի երիտասարդների՝ Մուրատի, Սեպուհի, Աւետիսի, Արամի, Իշխանի, Ռուբէնի<sup>34</sup> եւ այլոց արժէքը չենք ուրանում, բայց ուրիշ բան է հնրի հմայքն ու ազդեցութիւնը:

1911-ի Ը. Ժ. րորոշել է որ Վարդանը նուիրուի զինուորական կազմակերպութեան եւ շատ քչերը ունին նրա փորձառութիւնը, ձեռնհասութիւնն ու հմայքը: Եւ նա սիրով համաձայնել էր: Բայց... մի քանի ամիս յետոյ իմացանք, որ նա հաստատուել է Մանիսայի մէջ, աշխատում է ինչ որ գործարանում՝ փարա վաստկելու եւ ապրելու համար:

32.- Խանասարի Վարդան, բուն անունով Մեհրաբեան Սարգիս:  
33.- Անդրանիկը ծանօթ հայրուկապետն է Քեռին՝ Գաւաֆեան Արշակ:

34.- Յաջորդաբար՝ Սեբաստացի Մուրատ Խրիմեան, Ներսէսեան Արշակ (Մեայոս), Կիւմիշխանեցի Աւետիս – Բիգեան, Մանուկեան Արամ, Պօղոսեան-Միքայէլեան Նիկոլ (Իշխան), Տէր Միսասեան Ռուբէն:

35.- Բարսեղ Շահպազ:  
36.- Արարատեան Սարգիս, իսկական անունը Շահնազարեան Սարգիս:

Կազմակերպութիւնը այսպիսով ձգւում է բախտի կամքին: Վաղը կարող են Սիմոնի եղբրական պարագաները կրկնուել իրարու ետեւից եւ մեր հօր կազմակերպութիւնը կարող է որբանալ:

Ահա այս ցաւի մասին է, ընկերներ, որ պէտք է խորհենք: Մենք կազմում ենք Փոնդ՝ Ազատութեան կոթողի համար, հաստատում ենք Կարմիր խաչ՝ նահատակների որբերին մասին հոգալու համար, բայց չենք բնաւ մտածում ապրեցնել մեր կազմակերպութեան ողջ սիւները: Ինձ թւում է որ եթէ մենք ունենայինք 4-5 հոգուց բաղկացած մի Բիւրօ, որի անդամները – ընտրուած բոլորն էլ մեր ձեռնհաս վետերաններից – ապրէին կազմակերպութեան հաշուով եւ բացառապէս նուիրուէին կազմակերպական գործերին, ի տեղի կլանուելու իրենց մասնաւոր, նիւթական հոգսերով – մեր կուսակցութեան գործերը շատ աւելի փայլուն վիճակի մէջ կը լինէին եւ դրամական զոհողութիւնը որ պիտի անէինք այդ ընկերներին ապրեցնելու համար՝ կրկնակի ու եռակի պիտի վարձատրուէին:

Այդպէս են անում ամէն մի խոշոր յեղափոխական կազմակերպութեան մէջ, մեզնից աւելի քաղաքակիրթ երկրների մէջ:

Որոշ – կոնկրետ առաջարկ չեմ ուզում անել, կ'ուզէի միայն ձեր խորհրդածութեան նիւթ դարձնել – մինչեւ առաջիկայ Ընդհանուր ժողովը:

Ահարոնեանը գնաց բժիշկների խորհրդով Եգիպտոս՝ խնամելու իր հիւսիս կուրծքը: Շնորհքով թոքախտ ունի եւ վերջին ամիսները սաստիկ տառապել է:

Գալով ձեր ուզած գործիչներին, ընկ. Շահբազ<sup>35</sup> հակառակ իր բուռն ցանկութեան չպիտի կարողանայ Ամերիկա գալ նախքան [ուսումը] աւարտելը, իսկ Արարատեանը<sup>36</sup> կը գայ առաջիկայ գարնան կամ ամառը: Աւարտել է բայց կ'ուզէ մի տարի եւս դասախօսութիւններ լսել, մտաւոր պաշար ձեռք բերել: Բայց ընկ. Մնար<sup>2</sup> եւ Վրացեան երեւի կը մնան ձեզ մօտ – մինչեւ գարուն:

Ձերմ բարեկենդրով  
Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ



Փաստ. 1401-126

Ա 8.- ՎՌԱՍԵԱՆԷՆ ԱՍԵՐԻԿԿԱՅԻ Կ. ԿՈՍԻՏԵԻՆ

Ս. Պետերբուրգ, 18/31 Դեկտ. 1913

Սիրելի ընկերներ,

Ուրախութեամբ կարդացի ձեր Դեկտ. 16 (1913) թուակիր տեղեկութիւնները Ամերիկեան մեր կազմի յառաջը [իմութեան] ու բարգաւաճման մասին: Այդպէս ալ կը յուսայի: Երկրի մէջ կուսակցական աւելի հասուն գործունէութիւնը, ամերիկեան շարքերու աւելի խորունկացած գիտակցութիւնը եւ պատասխանատուութեան ըմբռնումը՝ հզօր ազդակներ պիտի լինէին ձեր ջանքերը կրկնապատիկ արդիւնաւորելու համար: Իսկ երբ աչքի առջեւ ունենանք օր աւուր անո՞ղ հաւանակա- նութիւնները հայ դատին նպաստաւոր լուծման — բնական է որ մեծ թափ մը պէտք է տային անոնք՝ ներքին կորովի եւ հաւատքի յարածուն ամրապնդմանը: Ո՛ւր էինք 1899-1906 թուականներուն, երբ ձեզ հետ էի ես՝ բարենորոգման չէ, այլ բարեփոխման տարրական նշոյլը ողջունելու յօժար, ո՛ւր այսօր — երբ հայ տարրը քաղաքական դեր մը կու գայ ստանձնելու՝ երթալով բարձրաճակատ, Մերձաւոր Արեւելքի գործերուն մէջ:

Այս համեմատութիւններն ու բաղդատութիւնները ընելու եւ աչքի առջեւ ունենալու էք յարատեւ:

Կազմակերպական ներքին թերութիւններ, աւելի դիւանակալ քան ընկերական բնոյթ ունեցող՝ իրենց արժէքէն աւելի զբաղեցնելու չեն ձեզի:

Չեմ գիտեր թէ ինչո՞ւ Բիւրոն «Դրօշակ»ի մէջ հրատարակելէ առաջ (անշուշտ ոչ ամբողջովին) տեսարակի չէ վերածեր Որոշումները՝ միայն մարմիններուն համար: Երկրորդական խնդիր է այդ:

Ողբացեալ Չաւարեանի յանկարծական մահը եւ նոր Բիւրոյի երկու անդամներու բացակայ գտնուելը Պոլսէն՝ կը բացատրեն այդ երեւոյթները:

Ես սակայն տակաւին Կարինէն փութացեր էի մանրամասն կերպով հաղորդել ձեզ որոշումներուն կարեւորները, Վրացեանի միջոցով Սեպտեմբեր 4 թուակիր նամակովս: Միթէ՞ չէք ստացած այդ նամակը:

Գալով գումարներու խնդրին, որքան գիտեմ կամ լսած եմ հանգուցեալ Չաւարեանէն, այդ բոլոր գումարները մտած են ինքնապաշտպանութեան՝ մարմնի արկղը, իւրաքանչիւր վայրի գինման յատկացուելու համար:

Բացատրութիւն մը անհրաժեշտ կը նկատեմ հոս, լուսաբանութեան համար:

Փորձառութիւնը համոզեց մեզ, որ համայնական գէնքը դրսէն եկած գումարով գնուած, որոշ համայնքի

մը յատուկ չի ծառայեր իր նպատակին: Ահա ինչո՞ւ: Ձէնքերը լաւ չեն պահուիր, նախանձ-կռիւ յառաջ կու գայ տեղացիներուն միջեւ (ինչո՞ւ այսինչը կը պահէ եւ ո՛չ ինքը, ինչո՞ւ կը գործածէ գէնքը, փամփուռները կը սպառէ, եւ այլն): Վտանգի պահուն՝ ամէն ոք իր վրայէն նետել կը ձգտի այդ գէնքը:

Անձնական քրտինքով վաստկուած եւ գնուած գէնքն է որ գիւղացին խնամքով եւ գուրգուրանքով կը պահէ, կը պահպանէ եւ կը սորվի գործածել: Վտանգի պահուն ալ ամէն միջոց կը հնարէ փախցնելու կամ թաղցնելու համար գայն:

Ահա փորձը 1907ին Վասպուրականի մէջ:

Ուստի վերակազմութեան ատեն, բոլոր համայնական գէնքերը ծախեցինք իրենց վրայ, մասնաւոր սեփականութիւն դարձուցինք, իսկ ստացուած գումարով նոր գէնք առինք, այս անգամ ո՛չ թէ համայնական, այլ տուեալ՝ այդ վայրին կազմակերպական իբրեւ սեփականութիւն: Այս վերջին պարագային գէնքը գաղտնի կը պահուիր, բոլորովին ենթակայ կազմակերպական-ուղմական մարմնի տրամադրութեանը, գործածուելու համար ո՛չ թէ գիւղի մը, այլ ամբողջ շրջանի պէտքերուն համար:

Հետեւանքն այն եղաւ, որ կռիւները վերջ գտան, ամէն ոք իր սեփականութիւնը պահպանեց եւ չտեսնելով իր աչքին առջեւ ուրիշի դրամով գէնք ունենալու գայթակղութիւնը — ամէն գիւղացի հարկադրուած եղաւ իր սեփական գէնքն ունենալու պէտքն ու անհրաժեշտութիւնը ընդունելու:

Մեր ամբողջ ջանքը՝ զինեալ ժողովուրդ մը ստեղծելն է, որ իր ուժերուն վստահի եւ ո՛չ իր աչքերը տնկէ դրսէն՝ «Ազգին» բերած գէնքերուն:

Թերեւս այդ նկատումներն են որ առաջնորդած լինեն նաեւ Բիւրոն, ձեր ակնարկած այդ գումարները չյատկացնելու որոշ գիւղի մը համայնքին, տալով գայն անոր չըջանային կազմին:

Ամէն պարագայի տակ, ձեր նամակը կը հաղորդեմ Պոլիս եւ բացատրութիւն հաղորդել կը խնդրեմ իմ կողմէս ալ:

\* \* \*

Ընկերներ Մնարեանի<sup>2</sup> եւ Վրացեանի հեռացումը Ամերիկայէն որքան ցաւ պիտի պատճառէ ձեզ այդպիսի ուժերէ գրկուելնուդ համար, — միւս կողմէն կ'ուրախացնէ զիս, թարմ ուժեր բուն գործին քով տեսնելու





յուսով: Ես արդէն իսկ կը պատրաստուէի առաջարկել անոնց՝ Երկրին մէջ պարտականութիւն ստանձնել: Որքան պէտք ունինք թարմ, կորովի եւ պատրաստուած ընկերներու: Հիմա որ ամէն ժամանակէ աւելի սիստեմատիկ աշխատանքի մը կը կարօտինք — իրաւունք ունինք սպասելու, մենք հիներս, որ նորերը գան օգնելու մեզ եւ փոխանակելու մեզ... Կը տեսնէք որ մահը կը հնձէ տակաւ, իսկ որքան գործեր կան կատարելիք:

Կարելի է ըսել որ ամէն բան նոր ի նորոյ պիտի սկսուի Հայաստանի մէջ:

Ես հաճոյքով կը տեսնեմ որ Ամերիկան վարժութեան եւ մարզանքի որոշ դեր մը կը կատարէ այդ ուղղութեամբ. եւ վստահ եմ որ այս պարագան ինքնավստահութեան առիթ մը պիտի ծառայէ ձեզ, քան տիրութեան պատճառ մը: Ընկեր Արարատեանը ծանօթ է ինծի եւ շատերուն, նկարագրի եւ պատրաստութեան տէր երիտասարդ է, եւ բաւական փորձառու կազմակերպական գործերուն: Լաւագոյն ընտրութիւն չէր կրնար կատարուիլ:

\* \* \*

Երկրի գործերու մասին բաւական գրած եմ ձեզ նախորդ նամակներովս (յուսով եմ վերջինն ալ՝ Նոյ. 20-ինը Թաշճեանի հասցէով) իր ժամանակին ստացած կը լինէք: Քանի որ արդէն իսկ վերսկսած էք ձեր յարա-

բերութիւնը Վանի հետ, այսուհետեւ իրագեկ կը լինէք: Առաջիկային կը կապուիք նաեւ Տարօնի հետ, որ ուժեղացած է հիմա:

Իսկ ես զբաղած եմ, ինչպէս գիտէք, հանգանակութեան գործով: Նպատակ ունինք գէթ \$ 100.000 հաւաքելու այս տարի. պիտի յաջողի՞նք — չեմ գիտեր: Կ'աշխատինք:

Ատկէ զատ կը կատարուի նաեւ դիւանագիտական աշխատանք, մասնաւորապէս ընկեր Բժիշկի<sup>37</sup> միջոցով: Այս օրերուն նպաստաւոր ընթացք մը ստանալու վրայ է գործը: Մինչեւ նամակ հասնի ձեր ձեռքը, հեռագիրը արդէն հաղորդած կը լինի Inspecteur Général-ի<sup>38</sup> սկզբունքով ընդունուիլը՝ եւրոպական քոնթրոլի տակ:

Հոս հարկ կը համարեմ ընդգծել թէ մեր Պոլսի ընկերներուն տեսակցութիւնը «Իթիբհատ»ի հետ թիւրիմացութեամբ բացատրուած է ձեր նամակին մէջ: Ոչ ոք չեմ մանանելիս հատի չափ իսկ՝ վստահութիւն չունի այլեւս անոնց վրայ: Մեր ընկերները բացորոշ յայտարարած են որ միայն եւրոպական քոնթրոլը կրնայ գոհացնել հայերը: Այդ կտրուկ յայտարարութիւններէն ետքն է որ Բ. Դուռը ճարահատ ստիպուած եղաւ գոհացում տալու ռուս եւ գերման միացեալ առաջարկին՝ որուն պարագաները կը սպասենք իմանալ վաղը, Դեկտ. 19:

Ձերմ բարեկենդիվ բոլորիդ՝  
Ա. ՎՌԱՄԵԱՆ

37.- Բժիշկը՝ Տոքթ. Յակոբ Չարեան:  
38.- Ֆրանսերէն — Ընդհ. քննիչ:

— Հասցէս՝ քրոջս, Միւնխէն:





Փաստ. 1402-55

### Բ 1.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 1 Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ

#### Ընկերներ

Հ.Յ.Դ. Ամերիկայի շրջանի 20րդ Պատգամաւորական ժողովը վերջացաւ կատարեալ յաջողութեամբ: Պատգամաւոր ընկերները քննութեան առին մէկ տարուայ մէջ կուտակուած բոլոր հարցերը եւ իրենց հեղինակաւոր որոշումները տալով՝ գծեցին այս տարուայ գործունէութեան ծրագիր մը: Պատգ. ժողովը իր քուէներով Կեդրոնական կոմիտէի պաշտօնին կոչեց մեզ՝ քաղցր, բայց եւ ծանր պարտականութիւն մը դնելով մեր ուսերուն վրայ: Ձեր բոլորի անմիջական աջակցութեամբ եւ ընկերական քաջալերանքով յոյս ունինք մեր ստանճնած պատասխանատու գործը լաւագոյն կերպով կարգադրել:

Ընկերներ, չափազանց փափուկ եւ անակնկալներով լի շրջանի մը մէջ է որ գործի կը սկսինք մենք: Մէկ կողմէն Հայկական հարցը սուր բնատրոթիւն կը ստանայ եւրոպական պետութիւններու հանդէպ, միւս կողմէն գրգռուած վիճակ կը ստեղծուի հայաբնակ նահանգներու մէջ, որ կրնայ աղիտաւոր հետեւանքներ ունենալ: Երբորդ կողմէն՝ փարլամենթական ընտրութեանց պոլքոթի համազգային հոյակապ ժեսթը հրամայականօրէն կը թելադրէ ուժերու համախմբում մը իրականացնել: Եւ այս երեք ուղղութեամբ պիտի ընթանայ մեր աշխատանքը այս հեռաւոր հորիզոնին տակ:

Եւրոպական դիւանագիտութեան նկատմամբ մենք դրուած ենք միայն կողմնակի օժանդակողի դերի մէջ. մենք պարտաւոր ենք լայն կերպով տարածել հայանպաստ փրոփակաճանտի միջոցները, մասնաւորապէս «Pro Armenia»-ն, որ մեր կուսակցութեան պատուաբեր ձեռնարկներէն մէկը կը հանդիսանայ:

Ուժերու համախմբման առաջին պայմանը համերաշխութիւնն է եւ կարեւոր է, որ մենք մեր ընթացքով ջանանք գործօն համերաշխութիւն մը ստեղծել ոչ միայն քաղաքական կուսակցութիւններու, այլ ընդհանուր ժողովրդին մէջ: Այժմ Արեւմտեան բիրոյի ջանքերով կուսակցութիւններու համերաշխութիւնը իրականացած է արդէն, ջանանք հոս եւս իրագործել զայն:

Մեր մտահոգութեան գլխաւոր առարկան, ինչպէս եւ անցեալին մէջ, կազմելու է ինքնապաշտպանութիւնը, որուն ի սպաս պէտք է բերենք թէ մեր բարոյական օժանդակութիւնը եւ թէ նիւթական նպաստը, ըլլայ հանգանակութիւններով ու տուրքով, ըլլայ հանդէսներով կամ այլ միջոցներով:

Ինքնապաշտպանութեան հրատապ բնոյթի գիտակցութեամբ էր, որ մենք գործի անցնելով՝ անմիջապէս փոխադրեցինք 2000 տոլար Հայաստանի բիրոյին եւ 1000 տոլար Արեւմտեան բիրոյին ինքնապաշտպանութեան պէտքերուն համար: Մօտիկ ապագային նորանոր գումար ուղարկելու պէտքը պիտի ըլլայ եւ մենք պարտաւոր ենք պատրաստ գտնուիլ:

Հայկական հարցը թէ միջազգային եւ թէ ներքին ազգային ու պետական տեսակէտներով աւելի եւ աւելի կը ճնշուի բնատրոթիւն կը ստանայ, որուն լուծումը կրկնապէս կը դժուարանայ: Ապագան թէւ յուսալից, բայց շատ կողմերով անորոշ է ու կասկածելի: Ամէն վտանգի դիմագրաւելու համար, անհրաժեշտ է, որ մենք կազմ ու պատրաստ գտնուինք մեր պատնէշներու վրայ եւ մեծ թափով լարենք մեր ուժերը:

Ընթացիկ հարցերը կը յետաձգենք յաջորդ շրջաբերականին. այսօր յիշենք միայն «Դրօշակ»ի խմբագրութեան առաջարկը բաժանորդագրութեան գործը կանոնաւորելու համար: Տարին նոր կը սկսի. պէտք է ուժ տալ տարեկան բաժանորդներ գտնելուն, ջանալով մեր մայր օրկանի սպառումը մեծցնել, ան տարածել նաեւ չէզոք հասարակութեան մէջ եւ հնարաւորութիւն տալ թէ՛ մեր գաղափարական փրոփակաճանտի սահմանները ընդարձակել եւ թէ «Դրօշակ»ի նիւթական վիճակը գոհացուցիչ աստիճանի հասցնել:

Խարբերողի մեր Կեդր. կոմիտէն կը հաղորդէ, թէ իր ջանքերով Խարբերողի առաջնորդարանի միջոցով կազմուած է յատուկ յանձնախումբ մը Խարբերողեան գոհերու դատը հետապնդելու համար: Հրաւիրուած է նաեւ փաստաբան մը, որ մեր ընկերներէն մէկն է: Այդ դատը վարելու համար որոշուած է կազմել փոքրիկ ֆոնտ





մը, որուն պիտի մասնակցին գոհերը իրենց պահանջի 5-6% յատկացնելով այդ նպատակին: Չէքերը պետք է որկել յանձնախումբին: Հետեւաբար այս պարագան կը յանձնենք ուշադրութեանը մեր ընկերներու, որոնք գոհ գացած են անորակելի դրամաշորթութեան:

Ընկերներ, ներկայ շրջաբերականով այս քանի մը փաստերը արձանագրելէ եւ խորհրդածութիւններ ընելէ ետք՝ երկրէն եկած լուրերը, ինչպէս նաեւ տեղական շատ մը հարցեր կը յետաձգենք յաջորդին: Կը բաւականանանք միայն հրաւիրելով ձեզ դէպի եռանդուն գործունէութիւն. եթէ ամէն ընկեր եւ ամէն կոմիտէ գործի լուրջ գիտակցութեամբ կատարէ իր բաժին պարտականութիւնը, մեր կազմակերպութիւնը այս տարի ալ արդիւնատու եւ շինարար շրջան մը կը բոլորէ: Կեդր. կոմիտէն ալ միայն այն ատեն յաջողութիւն կ'ունենայ, երբ դուք բոլորդ անոր հետ ըլլաք թէ՛ համակրանքով եւ թէ՛ գործով:

Զինուած՝ անհատ ընկերներու, կոմիտէներու եւ գործիչ ընկերներու ժրաջան գործակցութեամբ՝ մենք յուսալից հայեացքով կը նայինք ապագայի երեսին, այն վստահութեամբ, որ յաջորդ Պատգմ. ժողովին ներկայացնենք մեզի յանձնուած գործը աւելի մեծցած եւ ճոխացած, միշտ կենդանի ու յառաջադէմ:

Ընկերական բարեկեցութեամբ  
Հ.Յ.Դ. ԱՄԵՐ. ԿԵՂԻ. ԿՈՄԻՏԷ

1914 Յունուար 15, Պոսթոն







Փաստ. 1402-56

## Բ 2.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 2 Հ.3.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ

### ԿՈՄԻՏԵՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Միտերի ընկերներ,

Հակառակ մեր ջերմ փափաքին՝ ներկայ շրջաբերականը սովորականէն աւելի ուշացաւ կարգ մը աննպաստ պատճառներու հետեւանքով: Ասկէ ետք յոյս ունինք պարբերաբար եւ կանոնաւոր կերպով հասցնել մեր շրջաբերականները:

Տագնապալի ու անակնկալով յոյ օրերու մէջ կ'ապրինք: Յոյսն ու յուսալքութիւնը, կողք-կողքի կը քալեն, լատենտութիւնն ու յռետեսութիւնը իրար կը յաջորդեն: Յեղեղով ու տարտամ հանրային տրամադրութիւնները օրէ օր կը փոխուին: Նորանոր երեւոյթներ տեղի կ'ունենան, եւ այս բոլորի հանդէպ մեր կուսակցութիւնը պէտք է միշտ պահէ իր սառնարին, վճռական ու որոշ դիրքը:

Օրուայ մտահոգութեան գլխաւոր առարկան հայկական հարցն է եւ անոր շուրջ կատարուող դիւանագիտական քայլերը: Վերջին ամիսներու մէջ բուն գործունէութիւն մը տեղի ունեցաւ վարագոյրին ետեւը: Թուրք կառավարութիւնը կը ձգձգէր պատասխանել պետութեանց դեսպաններու պահանջին եւ կը ջանար ներքին համաձայնութեան մը գալ հայերու հետ: Իր բոլոր դիմումները կտրուկ դիմադրութեան հանդիպեցան թէ՛ Պատրիարքարանի եւ թէ՛ Դաշնակցութեան կողմէ: Թուրք գործիչները անգամ մըն ալ դիմած են Պուլսի մեր ընկերներուն՝ զիտնալու համար, թէ ինչ պայմաններով կրնան հայերը հասկացողութեան մը գալ: Մերոնք յայտնած են, թէ՛ միայն *հայկական իրական բարենորոգումները գործադրելով եւ երոսպական քոնքրոլը ընդունելով*:

Այս վերաբերումը տեսնելով՝ թուրք կառավարութիւնը շարունակած է իր սակարկութիւնները ռուս դեսպանատան հետ եւ յունուար 26-ին ընդունուած է բարենորոգումներու չափազանց խեղափարկուած ու թերի ծրագիրը. ռուս դիւանագետները բոլոր կարեւոր կէտերու մէջ զիջած են: Արեւմտեան բիւրոն այդ առթիւ կը գրէ մեզ. «Ամէն պարագայի մէջ, նոր հանգրուան մըն է, որ կը բացուի մեր բաղձանքներու իրականացման ճամբուն վրայ: Չմոռանք, որ շատ բան կախում ունի օսմ. կառավարութեան բարեացակամութենէն: Զննիչները հաւանաբար հոլանտացի ըլլան եւ արդէն ձեռնարկներ կը կատարուին այդ նպատակով: Բերանա-

ցի խոստում եղած է թուրք գաղթականներ չզետեղելու Հայաստանի մէջ: Շատ բան մութ կը մնայ նոյնիսկ ծրագրին մէջ, եւ ընդհանուր քննիչներու պաշտօնավարութեան ընթացքին միայն կրնայ լուսաբանուիլ: Կառավարութիւնը մինչեւ այսօր չհրատարակեց բուն ծրագիրը, եւ իր յարմար տեսած ձեւով տեղեկութիւններ կը հաղորդէ մամուլին»:

Այդ բուն ծրագիրը մենք ստացած ենք, եւ ֆրանսերէն բնագրի թարգմանութիւնը հրատարակեցինք «Հայրենիք»-ի մէջ:

Բարենորոգումներու մասին հայ ժողովուրդի եւ ազգային մարմիններու դիրքը յայտնի է ձեզ մամուլէն, իսկ մեր կազմակերպութիւնը կը վարուի համաձայն վերջին Ընդհանուր ժողովի որոշումներուն, այսինքն, ջանալ ապահովել հայ ժողովրդի ազգային-քաղաքական իրաւունքները: Այդ իսկ պատճառով համաձայնագրերէ ու ստորագրութիւններէ աւելի կարեւորութիւն կու տայ կառավարութեան կողմէ եղած գործնական քայլերուն: Իր քայլերով սակայն, կառավարութիւնը ռեւէ յուսատու նշոյլ ցոյց չի տար, որով մեր դիրքը կը մնայ սպասողական ու վերապահ: Որպէսզի վերջնապէս համոզուի, թէ ինչ արժէք ունին թուրք կառավարութեան նորանոր հաւաստիացումները, առաջ քաշեցաւ փարլամենթական ընտրութիւններու խնդիրը:

Արեւմտեան բիւրոն իր վերջին նիստով որոշած է հայկական բարենորոգումներու ստորագրումէն ետք մասնակցիլ փարլամենթական ընտրութիւններուն՝ պահելով միջկուսակցական մարմնի եւ Պատրիարքարանի հետ համերաշխութիւն: Այդ նպատակով՝ Պատրիարքարանը պէտք է սկսի բանակցութիւն կառավարութեան հետ՝ պահանջելով 18-20 երեսփոխանի տեղ, որոնց թեկնածութիւնը պիտի առաջարկէ Պատրիարքարանը. բաշխումը պիտի կատարուի հայերու որոշած վիլայէթներու մէջ, եւ կառավարութիւնը պարտաւոր է ազգային ընտրութեանց մասին նոր օրինագիծ մը առաջարկել փարլամենթին: Եթէ հայկական բարենորոգումները վիժին, մէտուսները գրաւոր յանձնառութեամբ պէտք է հեռանան փարլամենթէն: Եթէ Պատրիարքարանը զիջի, միջկուսակցական մարմինը կամ Դաշնակցութիւնը իրաւունք ունին բողոքելու եւ ձեռնպահ մնալու:

Միջկուսակցական մարմինը նոյնութեամբ ընդու-



նած է Բիրոյի այս բանաձեւը եւ այս հիման վրայ է, որ Պատրիարքարանը նորէն բանակցութեանց սկսած է կառավարութեան եւ Իթքիհատի հետ: Արդիւնքը արդէն ձեռք յայտնի է. կառավարութիւնը երկար ձգձգումներէ եւ սնուտի խոստումներէ ետք բացէ ի բաց մերժած է հայերու պահանջները ընդունիլ. Պատրիարքը համակերպուած է եւ համաձայնած Իթքիհատի հետ, իսկ կուսակցութիւնները կը շարունակեն պոյքոթը: Թէ որ քան ամուր կրնայ ըլլալ միջկուսակցական համերաշխութիւնը այս հարցի շուրջ չենք կրնար ըսել: Մինչեւ այժմ կուսակցական ընդհանուր համերաշխութիւնը չէ խանգարուած, եւ կուսակցութիւնները ձեռք ձեռքի տուած կը գործեն, ինչ որ շատ մխիթարական է: Այս առթիւ դարձեալ շեշտենք, ընկերներ, որ դուք եւս ամէն կերպով պիտի աշխատիք համերաշխօրէն ապրիլ ձեր վայրի միւս կուսակցութիւններու հետ եւ խուսափիլ պառակտումներու պատճառ եղող արարքներէ:

Այսպէս, ուրեմն ընկերներ, թէ դիւանագիտական ձեռնարկները եւ թէ փարլամենթական ընտրութիւնները որոշ ելքի մը չեն հասած: Մինչեւ թուրքերու կողմէ շօշափելի եւ վստահութիւն ներշնչող քայլեր չկատարուին, մեր վիճակը կը մնայ չափազանց երերուն ու մտահոգիչ: Ի՞նչ ընել: Ինչպէ՞ս վարուիլ: Ո՞ր պիտի տանի մեզ այս ընթացքը, մանաւանդ չափազանց է մոռնալ, որ կառավարութիւնը տեղագրուած թափով մը եւ բացայայտօրէն կը զինէ իսլամ խուժանը եւ հակաքրիստոնէական գրգռիչ ձեռնարկներ կ'ընէ: Երկրէն ստացուած նամակները վախ կը յայտնեն, թէ զարուհը բացուելուն պէս սկսին հակահայ շարժումներ ու ջարդի փորձեր:

Այս բոլորի դէմ – անգամ մըն ալ կրկնենք – կայ ու կը մնայ միակ փրկարար ու վստահելի միջոցը, ինքնապաշտպանութիւնը, որը մեր գլխաւոր մտածողութեան առարկան պիտի կազմէ: Այս հարցի մասին բազմաթիւ տեղեկութիւններ կ'առնենք երկրի զանազան վայրերէն, որոնք, ուրախ ենք ըսել, շատ ալ անգոհացուցիչ չեն: Մեր ընկերներն ու մարմինները, ինչպէս եւ ամբողջ հայ ժողովուրդը գիտակից բռնակալութեան՝ գերագոյն ճիգեր կը գործէ փորձութեան ժամուն անպատրաստ չգտնուելու համար: Առանց ինքնապաշտպանութեան ռեւէ դրական հետեւանք չի կրնար ստացուիլ, մեր բոլոր ուժը պէտք է կեդրոնացնել այս ուղղութեամբ: Գործը կ'երթայ թէւ բաւական մխիթարական չափով, բայց անհրաժեշտութիւնը աւելի մեծ է, իսկ միջակական միջոցները այնքան ալ շատ չեն:

Առ հասարակ, դրամական պէտքը չափազանց մեծ է, մեր բոլոր միջոցները կ'ուղղուին դէպի երկիր, բայց նորէն բաւականութիւն չի տրուիր եղած մեծամեծ պահանջներուն: Նիւթական միջոցներ հայթայթելու կարելոր քայլեր կ'ըլլան նաեւ սահմանի միւս կողմը՝ Սա-

րուստանի<sup>21</sup> մէջ, ուր մեր կուսակցութիւնը այժմ վերակազմուած ու գործունեայ վիճակի մէջ է: Հոն գացած է միեւնոյն նպատակով ընդարձակ պտոյտներ եւ այցելութիւններ կատարած է նաեւ ընկեր Վ.<sup>39</sup>, որի ձեռք բերած արդիւնքները խիստ խրախուսական են: Հանրային համակրութիւնն ու աջակցութիւնը ամէն տեղ մեզի հետ է, բայց եւ այնպէս պէտքը այնքա՛ն մեծ է, որ կարիքը միշտ կը մնայ զգալի: Այդ նպատակով մենք մեր մօտի գումարները մաս առ մաս երկիր փոխադրեցինք. տակաւին քանի մը օր առաջ 1500 տոլար փոխադրեցինք Հայաստանի բիրոյին, որով այս տարի վերջին երկու ամսի մէջ, մեր փոխադրած ընդհանուր գումարը եղաւ 4500 տոլար: Եւ որպէսզի ասկէ ետք ալ միշտ պատրաստ ըլլանք եղած դիմումներուն դրական պատասխան տալ եւ մեր դրամական առաքումները շարունակել, պէտք է, որ մեր կոմիտէները եւ անհատ ընկերները ջանան իրենց տուրքերը փութացնել, իսկ օժանդակող մարմինները – Կարմիր խաչ, դերասանական խումբեր եւ այլն – պէտք է կրկնապատկեն իրենց ջանքերը [եւ] ի նպաստ ինքնապաշտպանութեան հասութեան ձեռնարկներ կատարել:

Մեր ստացած տեղեկութիւններու համաձայն մեր դրկած դրամները լաւագոյն կերպով գործադրուած են եւ քաջալերական արդիւնքներ ունեցած են: Երկրի զանազան մարմիններէ առած մեր նամակները միաբերան կը վկայեն մեր ջանքերու արժէքը: Շարունակենք նոյն ուղղութեամբ եւ ա՛լ աւելի հարուստ հետեւանքներով:

Երկիրը առ այժմ խաղաղ է: Հակառակ իսլամ ամբոյսի սպառնական դիրքի եւ եղած վախերու՝ դեռ արտակարգ դէպք մը չպատահեցաւ: Մեծ վախ կայ գարունէն, երբ կրնան հայ-թուրքական կամ հայ-քրտական ընդհարումներ տեղի ունենալ: Առ այժմ կարգ մը տեղերու մէջ քիւրտերը մեզի հետ հաշտ են, եւ նոյնիսկ անոնց կողմէ դիմումներ ու քայլեր եղած են հասկացողութեան մը գալու համար:

Ժողովուրդի նեղութիւնը աւելի տնտեսական է: Ահա թէ ինչ կը գրեն մեզ Տարօնէն. «Հրատապ է հողային հարցը. կառավարութիւնը փոխանակ բաւարարութիւն տալու հայերու վաղեմի պահանջներուն, ընդհակառակը կ'աշխատի անօրինական միջոցներով ձեռք բերած հողերը օրէնքով հաստատել օտարներու վրայ: Այդ ուղղութիւնը կը շեշտուի մանաւանդ Սասունի մէջ: ... Մենք ինչպէս 1907-1908ին արգիլել էինք հող ծախելը, նոյնպէս եւ այժմ արգիլել ենք առանց մեր գիտութեան հող ծախել. միեւնոյն ատեն պայքար սկսել ենք հողատէրերու դէմ...»: Ուրիշ տեղերէ եւս կը գրեն, թէ կառավարական պաշտօնեաները կ'աշխատին հայերը հողագործ դարձնել, մանաւանդ երկրագործական պանքան, որ հողատէրերու ձեռքին շահագործման միջոց մըն է. ընկերները կ'ըսեն, թէ հողեր գնելու

39.- Վ.ը՝ Վրաստան Արշակն է:





**ՆԻԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԻ**

մեծ պատեհություններ կան եւ կոչ կ'ընեն, որ ամերիկահայերը ջանան երկրի մէջ հողեր գնել:

Երկրէն կը շեշտեն նաեւ արտագաղթի վնասներու մասին. տեղեր կան, ուր ինքնապաշտպանութիւնը անկարելի պիտի դառնայ, որովհետեւ բոլոր կարող մարդիկ դուրսն են, մեծ մասով Ամերիկա: Մեզմէ թախանձագին կը խնդրեն նպաստել, որ երիտասարդութիւնը տուն վերադառնայ: Կը յանձնենք այս պարագան ձեր ուշադրութեան, ընկերներ, եւ կը թելադրենք լուրջ կերպով խորհիլ անոր մասին եւ ձեր շուրջը արծարծել հայրենիք վերադառնալու պետքը: Եկողը գարուն է, եւ հայրենիքը մեծ կարիք ունի երիտասարդ եւ աշխատատեղ բազուկներու: Ով որ կրնայ, թո՛ղ դառնայ:

Վերեւ յիշուած բոլոր երեւոյթները ցոյց կու տան, թէ ի՞նչ ծանր ժամանակի մը մէջ կ'ապրինք: Եւ միակ միսիթարանքն այն է, որ հայ ժողովուրդը լուրջ պաղարիւնութեամբ կը հետեւի իր ճակատագրին՝ առանց խանդավառուելու եւ պարսպ ցնորքներով տարուելու, իսկ անոր միակ զօրատուր ու գաղափարական կազմակերպութիւնը՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը կորովի առնականութեամբ մը կը տանէ իր ուսին վրայ դրուած ծանր, այլ սիրելի խաչը՝ Գողգոթան ի վեր, հոն, ուր պիտի ծածանի հայ տառապեալ ու հարստահարուած ժողովրդի ազատութեան դրօշակը:

Ռուսաստանի մէջ մեր կազմակերպութիւնը գրեթէ գտած է ինքզինք եւ նախկին եռանդով կեցած գործի գլուխ: Նոյն մեր երիտասարդութիւնը միշտ կազմ ու պատրաստ է, անակնկալներու պահուն, անմիջապէս ձեռք կարկառելու սահմանի միւս կողմ ապրող եղբայրներուն: Պարսկաստանի մէջ վերակազմակերպման աշխատանքները կը շարունակուին, եւ հայերը մեր ընկերներու ղեկավարութեամբ պոչքօք յայտարարած են պարսկական փարլամենթական ընտրութիւններու դէմ՝ իբրեւ բողոք կառավարութեան հակահայ քաղաքականութեան դէմ: Աւելի քան երբեք կազմակերպական գործերը լաւ են եւ Թուրքիոյ մէջ, ուր սակայն մեծ պակաս կայ գործող ու ձեռնհաս ուժերու: Բիրոյնէն մեզի քանիցս դիմումներ եղած են, որ Ամերիկայէն կազմակերպող գործիչներ որկենք, բայց ցարդ չենք կրցած այդ ուղղութեամբ ռելե գործնական քայլ ընել յարմար թեկնածուներ չունենալնուս համար: Յաւայի է, որ ասանկ փափուկ պարագաներու մէջ անգամ մեր երիտասարդ ընկերները, ուսանողութեան պատրուակին տակ, կան զինուորութենէ խուսափելով կը լքեն գործն ու երկիրը եւ կը հեռանան:

Ուսանողութիւնն ալ այս պակասը չի լրացներ կարեւոր չափով. հին ղեկավարող ընկերները կը պակսին, նախկին գաղափարական սերունդի շարքերը կը նօսրանան, բայց նորերը չեն յաջորդեր: Գէթ ազատ գործով երկիր անցնողները մատի վրայ կը համրուին, մինչդեռ մեր մտաւորական, ուսանող ընկերներուն

հատ ու հաշիւ չկայ: Այս ցաւալի երեւոյթին դէմ պետք է կռուիլ եւ գործնական միջոցներ առաջարկել:

Վերջերս կը նկատուին սթափուելու նշաններ ուսահայ ուսանողութեան մէջ. վերակազմուած է Փեթրասպուրկի Դաշնակցական Ուսանողական միութիւնը՝ իր ճիւղերով ուրիշ քաղաքներու մէջ: Որոշ եռանդ կը նկատուի եւ Երոսայի ուսանող ընկերներու մէջ, որոնք դեկտեմբեր 25ին, Փարիզի մէջ ունեցած են իրենց հինգերորդ տարեկան համագումարը: Ժողովին մասնակցած են ներկայացուցիչներ Ֆրանսայի, Չուիցերիայի, Պելճիքայի եւ ուրիշ վայրերու համալսարաններէն ներկայացուցիչներ: Համագումարը որոշած է աւելի սերտօրէն կապուիլ կուսակցական կեանքին, տուած է կարգ մը արժէքատու որոշումներ եւ ընտրած է գործադիր մարմին մը, որ յատուկ շրջաբերական-կոչ մը հրատարակած է ուսանողական խումբերուն:

Ընդհանուր առմամբ միսիթարական են կազմակերպութեան գործերը եւ հոս՝ Ամերիկայի մէջ, ուր կը տիրէ նախկին գուրգուրտ վերաբերումը դէպի կուսակցութիւնը: Հակառակ գործերու արտակարգ թուլութեան, մեր շարքերը կ'աւելնան, մեր հմայքը կ'աճի, մեր մամուլի տարածումը կը մեծնայ, մեր ժողովները սիրով կը յաճախուին եւ մեր ձեռնարկները միշտ տաք ընդունելութիւն կը գտնեն, ինչ որ ապացոյց է, թէ մեր բռնած ճամբան շիտակ է եւ համապատասխան ժողովրդի բաղձանքներուն: Մենք ճիշդ կը թափենք մեր շուրջը միշտ պահել համերաշխական ոգի մը եւ ամէն կերպով նպաստել հայ ժողովուրդի զարգացման եւ ազատագրութեան նպաստող ձեռնարկներուն: Մենք վստահ ենք, որ բոլոր ընկերներն ալ միեւնոյն ոգիով ներշնչուած են: Վստահ ենք, որ բոլորիս հաւաքական եւ անդով գործունէութեամբ քայլ առ քայլ պիտի մօտենանք մեր ընդհանուր նպատակին:

Ընկերական բարեւներով  
**Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՂՐ. ԿՈՄԻՏԷ**

Յ. Գ.- Տպարանական քանի մը անյարմարութիւններու հետեւանքով անդամատետրերու, դրոշմներու տըպագրութիւնը ուշացաւ: Այժմ արդէն պատրաստ են եւ ուղարկուած ձեգ: Կը յուսանք, որ ակամայ ուշացումը արգելք մը չպիտի ըլլայ կոմիտէական գործերը կանոնաւորութեամբ վարելու: Հաճեցէք միայն ընկերներու անուանացանկը որկել, որպէսզի անդամատետրերը պատրաստենք:

– «Հայրենիք»ի վարչական մասին մէջ ստիպուեցանք նոր փոփոխութիւն մը մտցնել. ընկեր Խ. Գալուստեանի մէնէճրական պաշտօնէն հեռանալով՝ անոր տեղ նշանակեցինք ընկեր Մ. Սանտալ: Հաւատացած ենք, այս





անցողական շրջանի պատճառով, եղած դժգոհություններում վերջ կը տրուի, եւ կոմիտէներու ու բոլոր ընկերներու գործակցութեամբ ընկեր մենեճըրը<sup>7</sup> ի վիճակի պիտի ըլլայ իր ծանր պաշտօնը գործադրելու:

«Հայրենիք»ը նիւթական չափազանց աննպաստ պայմաններու մէջ է, մինչդէռ կոմիտէներու եւ գործակալներու վրայ մօտ 1500 տոլարի ապառիկ կայ: Ստիպողաբար կը խնդրենք անմիջապէս փակել այս հաշիւները եւ որկել ձեր մօտ գտնուած դրամները:

– Երկրի մարմիններէն կը թելադրեն, որ ըստ կարելոյն, խուսափինք միջկուսակցական մարմիններուն ի նպաստ հանգանակութիւններ կատարելէն, որովհետեւ այդ հողի վրայ անախորժ դէպքեր կը պատահին:

– «Ազատամարտ»ին մասին բազմաթիւ բողոքներ ու զանգատներ կը ստանանք: Կը խնդրենք այդ բողոքները ուղղել անմիջապէս «Ազատամարտ»ին, որովհետեւ այստեղէն ռեւէ կարելիութիւն չկայ գոհացուցիչ պատասխաններ տալու: Պիտի ջանանք կեդրոնական գործակալութիւնը աստիճանաբար, հին եւ առկա ինքնաշարժները մաքրել ետք վերցնել:

– Իզմիրի մէջ բանտարկուած Գ. Տէմիրճեանի համար Բէյսիմի կոմիտէն քանի մը տարիներ առաջ վիճակահանութեան տոմսեր հանած էր եւ որկած քոյր կոմիտէներուն: Կը թելադրենք բոլոր կոմիտէներու առանց ժամանակ կորսնցնելու հաշիւները փակել եւ մնացած տոմսերն ու դրամները որկել Բէյսիմի կոմիտէին: Այս առթիւ անգամ մըն ալ պիտի նկատենք, որ վիճակահանութիւններ

եւ նման ձեռնարկներ ընելու համար կոմիտէները նախօրօք առնելու եւ Կեդրոնական կոմիտէի հաւանութիւնը:

– Վերջերս գրեթէ բոլոր կոմիտէներ սգահանդէսներ կը կազմեն յայտնելու համար իրենց յարգանքը դէպի հանգուցեալ գործիչներու յիշատակը: Այս սգահանդէսները, որքան եւ նուիրական, յաճախ արգելք կ'ըլլան փրոփականտի գործին եւ լայն ծախքերու դուռ կը բանան: Մեծապէս փափաքելի է, որ այս կարգի ձեռնարկներ կատարուին հաւաքաբար իրար մօտ եղող քանի մը կոմիտէներու կողմէ: Այդպէսով սգահանդէսներու թիւը կը պակսի, բայց անոնց տպաւորութիւնը աւելի պատկառելի կ'ըլլայ, այլեւ պատեհութիւն կը տրուի տարբեր քաղաքներու ընկերներուն աւելի մօտէն շփուելու իրար հետ:

– Ի վերջոյ պէտք կը զգանք յայտնել, որ մարտի վերջին ընկեր Սնար<sup>2</sup> եւ ապրիլի վերջին ընկեր Ս. Վրացեան պիտի մեկնին Ամերիկայէն: Այդ առթիւ դիմումներ կատարած ենք Երկրի, Պոլսի եւ Եւրոպայի համապատասխան մարմիններուն պահանջելով կարող գործիչներ: Յոյս ունինք, որ մեր պահանջին լուսազոյն կերպով բաւարարութիւն պիտի տրուի:

– Այն կոմիտէները, որոնց քով կան ներքին կանոնագիրներ, հաճին մեզ որկել. շատ մը տեղեր պահանջներ կ'ըլլան, իսկ մեր մօտ բնաւ չէ մնացած. մինչեւ նորի տպուիլը պիտի ջանանք եղածներով գոհանալ:

1914 թ. Մարտ 15





Փաստ. 62-34

Բ 3.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ

Կ. Պոլիս, 1914 Ապրիլ 8/21

Ընկերներ,

Կը հաստատենք մեր մարտ 11/24 թուակիրը:

Ստացանք ձեր մարտ 24-ի նամակը յատուկ շրջաբերականներով եւ որոշում-հաշուեկշռով: Գնահատելի են ձեր ջանքերը հաշուական կանոնադրութեան համար: Թուրքերը յանձնած ենք Կեդրոնական հաշուեկշիռին, որ պիտի քննէ նաեւ ծանօթ քանի մը հաշիւներու մանրամասնութիւնները:

Ապահովաբար մեր Մարտ 11/24 նամակը ստանալով, դուք ինքներդ շատ բան զեղչած էք ձեր նկատողութիւններէն, որոնք քիչ մը անթոյլատրելի էին, եթէ կը ներէք, այն ալ նորընտիր Կ. կոմիտէի մը համար: Մենք սրտանց գոհ ենք, որ Ամերիկայի մեր ընկերները բծախնդիր հետաքրքրութեամբ մը կը հետեւին կազմակերպութեան քայլերուն, կը պրպտեն չարն ու բարին, կը զգուշացնեն սայթաքումներու կամ ձախողանքներու մասին: Դաշնակցութեան ծրագիրն իսկ այդ կը թելադրէ իր էութեամբ եւ ձգտումով: Բայց դուք քիչ մը չափազանց հեռու չէ՞ք երթար, արդեօք, պահանջելով որ կուսակցութեան ղեկավար մարմինները անպատճառ այս կամ այն ուղին բռնեն, այս կամ այն ձեւ գործունէութեան հետեւին: Այլ բան է *բաղձալ, թելադրել, ձգտիլ*, այլ է ձեր նկատողութիւնները պարտադրել իբրեւ անվերաքննելի վճիռ:

Կ'ուզէինք աւելի մանրամասն եւ մտերմիկ խօսակցութիւն մը ունենալ ձեզի հետ այն բոլոր հարցերու մասին, զորս կը յուզէք ձեր վերջին շրջաբերականով:

Նախ՝ մէպուսական հարց<sup>40</sup>.- Չեզի պարզած էինք բոլոր անցուդարձերը՝ բոյկոտի խզումէն մինչեւ պատրիարքի դաւերը: Չգիտենք թէ մեր լուսաբանութիւնները կրցա՞ն օգնել փարատելու համար ձեր կարգ մը քիւրիմացութիւնները: Տրուած պայմաններուն մէջ, երբ մանաւանդ պատրիարքը ինք խզեց ընդհանուր համերաշխութիւնը եւ Հայաստանի բիւրոն կրկին եւ կրկին պնդեց *ազգային ընտրութեամբ*<sup>41</sup> կուսակցական թեկնածուներու ընդունելութեան, ուրիշ ճար չկար

բայց միայն ընտրել միջին ճանապարհը, թէ՛ կուսակցութիւնը ծանր պառակտումէ մը փրկելու եւ թէ՛ մեր դիրքը պահելու համար: Դուք կը յիշէք որ Է. Ընդհ. ժողովը մասնաւորապէս շեշտած է *համազգային* բոյկոտի մասին, որ մինչեւ մէկ աստիճան յաջողեցաւ եւ Չաւէն եպս.<sup>42</sup> զիջումէ զիջում իջնելով, խանգարեց ամէն բան: Այդ պահուն էր որ դժուարացաւ մեր դիրքը, այդ պահուն էր որ Դաշնակցութիւնը մատնուեցաւ տագնապի, թէ՛ ներսէն եւ թէ դուրսէն: Պէտք չէր այնքան միամիտ ըլլալ, հաւատալու համար թէ *անհատական* կամ *խմբակային* ձգտումներ կրնան խախտել ընդհանուր ուղեգիծ մը: Սկզբունքներու կռիւ մըն էր որ մղուեցաւ կուսակցութեան մէջ, կուսակցութենէն դուրս, եւ ընդհարումներէ, պայքարներէ յետոյ գտնուեցաւ միակ ելքը՝ արկածէն ազատելու: Անշուշտ Ամերիկայի ընկերները իրենց իրաւունքին մէջ են, երբ իրերը կը դատեն հեռուէն, կողմնակի տեղեկութիւններով եւ առանց պատասխանատուութիւն ունենալու օրուան գործունէութեան, ընթացիկ քաղաքականութեան մէջ:

Այս դժբախտ հարցը, մէպուսական կնճիռը իր վերջնական լուծման յանգած չէ տակաւին: Կարիքի մէջ երկու երեք ճակատով պայքար կը մղուի: Վախ կայ որ Իթթիհատը ո՛չ պատրիարքին ցանկը յաջողցնէ, ոչ ալ մերինը, այսինքն Կարիքի գաւառական ժողովի թեկնածուները: Ուրիշ տեղ իր մարդիկը (Մեծատուրեան եւ Մատաթեան) շահեր են: Վանն ալ դեռ անորոշ է. իսկ Պիթիս խառնակութեան բոյն դարձած ըլլալով, ժամանակ չունի մէպուս ընտրելու: Վանի ընկերները կ'ուզեն այդ վայրը տալ ռամկավարներուն, որպէսզի փոխարէն երկու դաշնակցական ընտրեն Վանէն:

Երկրորդ՝ մեր քաղաքականութիւնը կառավարութեան հետ, մեր ընթացքը բարենորոգումներու մասին.—

Այս մասին ձեր տեղեկութիւնները շատ թերի են, հետեւաբար ձեր դատաստանը միակողմանի եւ անարդար: Դիշո՞ք է որ բարենորոգումներու նոր ծրագիրը մեզ չի գոհացներ, շատ հեռու է մեր բուն պահանջներէն, եւ պարզապէս կը կազմէ նոր հանգրուան մը: Այդքանն ալ կը գործադրուի՞ թէ ոչ՞ դեռ հարց է: Մակայն պահանջել որ այդ քայլին հանդէպ բռնենք *խափանաբար, անհաշտ* ընթացք, առնուազն տհասութիւն է: Մենք երբեք հրաժարած չենք մեր իսկական ծրագրէն

40.- Մէպուսը՝ երեսփոխանն է, մէպուսականը՝ ակնարկութիւն է երեսփոխանական ընտրութեանց:

41.- Ազգային ընտրութիւն — հայերու կողմէ ներկայացուած պահանջ, որ հայ երեսփոխանները ընտրուին հայ ընտրողներու քուէներով:

42.- Չաւէն եպս. Եղիայեան — Կ. Պոլսոյ հայոց պատրիարք:







եւ այդ ուղղութեամբ մեր աշխատանքները մանրամասնելու հարկ չկայ: Սակայն եթէ յեղափոխական տակադիկ է մաքառիլ ու բողոքել անողորմաբար, նոյնքան յեղափոխական քայլ է, կը կարծենք, արթուն հրակել ու սպասել փոխանցման շրջաններու երեւոյթներուն, իր ճամբան շարունակել, բայց միեւնոյն ատեն քարեր չշարել նոր փորձի մը հանդէպ, երբ դեռ ժամանակ կայ: Այդ վերապահ քաղաքականութիւնն է ներկայիս մեր բռնած դիրքն ալ, եւ բնականաբար պարտաւոր ենք, առանց ուղղակի խառնուելու մեր բաժինը կատարել, առաւելագոյն արդիւնքներն ստանալու համար:

Մեզի վայել չէր *in corpore*<sup>43</sup> մասնակցիլ դիւանագիտական այս խաղին, բայց եւ երբեք չպիտի կարենայինք անտարբեր մնալ եւ ի հարկին մեր օժանդակութիւնը զլանալ: Մեր բուն պահանջներուն իրականացումն իսկ կը պահանջէ չխափանել նոյն իսկ այս կրճատ եւ անբովանդակ ծրագիրը որ ապագային պիտի դառնայ հզօրագոյն զէնք մը մեր ձեռքին մէջ: Այնպէս որ, այս մասին ձեր վրդովումը բոլորովին անտեղի է: Ինչ կը վերաբերի կառավարութեան՝ հետ մեր յարաբերութեանց, անիրաւաբար կը մեղադրէք մեզ հակասութեամբ մը, որ իրականին մէջ գոյութիւն չունի: Մենք Իթքիհատի հետ *ոչ մէկ կապ ունինք այսօր*: Մեր յարաբերութիւնները ճիշդ այն են ինչ որ էին բարենորոգումներու խնդրին արծարծուելէն ի վեր: Մինչեւ այսօր ալ Իթքիհատը չէ ներած մեր բռնած ընթացքը *controle-ի*<sup>44</sup> եւ պարլամենտական ընտրութեանց տագնապին մէջ: Ան մեզ կը մեղադրէ իբրեւ պատասխանատու այս բողոքին, եւ ըստ այնմ փոխած է իր դիրքը մեզի հանդէպ: Այս փոփոխութիւնը ուղղակի նոյնիսկ բրտօրէն կը զգացուի Կարինի մէջ, ուր մերոնք ո՛չ մէկ կապ ունին անոնց հետ, եւ Վանի մէջ, ուր նահանգապետը յատկապէս դժգոհ է եւ չէ ծածկեր կեդրոնին ալ սրտմըտութիւնը Դաշնակցութեան հանդէպ: Եւ ճիշդ այս պահուս, սեղանի վրայ է յարաբերութեանց այդ խնդիրը, որովհետեւ Հայաստանի մեր մարմինները շատ ալ համաձայն չեն ամէն յարաբերութիւն վերջնապէս խղզելու, նկատի առնելով կենսական պարագաներ:

Ինչպէս կը տեսնէք հակասութիւն մը չկայ մեր Գեկտ. 27ի նամակով պարզուած տեսակէտին եւ ներկայ դիրքին միջեւ, հակառակ ձեր մտավախութեան: Գուք շատ լաւ կը տեսնէք որ կառավարութիւնը չորս աչքով կը հսկէ մեր վրայ, թերթին վրայ, ակումբներու վրայ: Բնորոշ երեւոյթներ են ասոնք, եւ երբ կը համիք թերթին քաղաքականութեան, ի հարկէ չէք մոռնար որ Ազատամարտը Բիւրոյին ուղղակի հակակշռին տակ է:

Եւ յետոյ, նկատեցէք որ ընդհանուր հարցերու մասին քաղաքականութիւնները չեն կրնար փոխուիլ մէկ օրէն միւսը: Մենք կը հաւատանք թէ մինչեւ այսօր

առնուած քայլերը համապատասխան են Է. Ընդհ. ժողովի հրահանգներուն: Հիմնական փոփոխութեան համար, – ահա մօտ է Ը. Ընդհ. ժողովը:

\* \* \*

Պարզ է որ մեր գործօն ընկերները, Բիւրոյի անդամներ չեն կրնար մասնակցիլ Ազգ. վարչութեան<sup>45</sup>: Այս պարագան պիտի բացատրենք մեր ընկեր-անդամին ստանձնած պարտականութեանց պահանջով (բարենորոգ. եւն.): Ընդհ. ժողովը ինք կրնայ լուսաբանել այն հարցերը, որոնք միշտ վէճի դուռ են բացեր մեր մէջ: Գիտէք անշուշտ որ ներկայիս մենք ոչ մէկ մասնակցութիւն ունինք Ազգ. վարչութեան մէջ:

Այս բացատրութիւնները տալով, մենք կը հետապնդենք միայն մէկ նպատակ, – ձեզի հաղորդել կարելի բոլոր մանրամասնութիւնները, որպէսզի երբ կուսակցութեան վարիչ մարմիններու մասին դիտողութիւններ ունենաք, այդ դիտողութիւնները հիմնուած չըլլան թերի, վիճելի տեղեկութիւններու վրայ, որոնք պիտի նրւագեցնէին անոնց արժէքը: Եւ եթէ Ամերիկա ունի դաշնակցական գործունէութեան բոլորովին նոր եւ նպատակայարմար ծրագիր մը, անշուշտ պիտի կրնայ պաշտպանել Ը. Ընդհ. ժողովին մէջ, փոխանակ օրը օրին եւ այնքան ալ հեռուէն, եւ յաճախ շատ ուշ, տեղի եւ անտեղի թելադրութիւններ ընելու:

Ու իբր վերջաբան այս անախորժ ըսի-ըսանքերուն, պիտի խնդրէինք Ամերիկայի մեր ընկերներէն, որ իրենց նամակագրութեան մէջ ըլլային ատելի պաղարին եւ լուրջ, զգուշանալով անկազմակերպական արտայայտութիւններէ եւ ակնարկութիւններէ:

\* \* \*

Հայրենիքի խմբագրութեան համար Ապրիլ 10ին<sup>36</sup> ստիպողական նամակ մը գրեցինք Արարատեանին, որպէսզի շտապէ: Զգիտենք թէ ձեզի պատասխանա՞ծ է: Գրած ենք նաեւ ընկեր Լիպարիտ Նազարեանցի, թէ յոյս չունինք որ ընդունի: Եթէ հաւանէր, ինք կ'ըլլար խմբագիր եւ Արարատեանը գործիչ: Օրէ օր կը սպասենք պատասխանի:

\* \* \*

Ընդհ. ժողովի համար օրակարգի պատրաստութեամբ զբաղած ենք այս միջոցին: Բարի եղէք փութացնելու ձեր հարցերը, որովհետեւ ժամանակը շատ

43.- Լատիններէն – իբրեւ մարմին, մարմնի անունով:  
44.- Ֆրանսերէն – հակակշռի, վերահսկողութեան:  
45.- Խօսքը Պատրիարքարանի Ազգ. վարչութեան կը վերաբերի:





**ՆԻԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԻ**

կարճ է: Անցեալ տարուան անախորժութիւնները չկրկնուին<sup>46</sup>: Անշուշտ ստացաք շրջաբերականները եւ հաղորդեցիք բոլոր մարմիններուն:

\* \* \*

Երկու Ընդհ. քննիչներու անուանումը տեղի կ'ունենայ քանի մը օրէն: Երոպայի պատուիրակութեանց թելադրութեամբ եւ Քեռիի<sup>47</sup> գիտութեամբ առաջարկուած էին պելժ գնդ[ապետ] Հանրի եւ զօր. Տրկիզ, իբրեւ յարմարագոյն: Գերմանիա մերժեց առաջինը իբրեւ շատ խիստ վարչագէտ, եւ առաջարկեց գոիցերիացի մը, որ իր կարգին մերժուեցաւ Ռուսիայէն իբրեւ գերմանասէր: Յետոյ Ռուսիա նշանակեց երկու հոլանտացիներ: Այժմ դեսպանները խորհրդակցելով, այս ու այն դուրս ձգելով, ներկայացուցած են ցուցակ մը որ կը բովանդակէ մէկ հոլանտացի եւ մէկ նորվեկիացի (Հօֆ) եւ որ ապահովաբար պիտի ընդունուի: Ռուս դեսպանը հասկցուցած է որ աճապարելու են, նոյնիսկ իրենց շահուն համար: Ճավէր պէյ<sup>48</sup> խնդիրը վերջացած կը նկատէ, փոխառութիւնը յաջողած ըլլալով: Քննիչներու նշանակումէն յետոյ է որ պիտի առնուի առաջին քայլը: Մեր ընկերներէն Վիզէնը եւ Կարոն<sup>49</sup> Փարիզ են այս միջոցին, եւ պիտի տեսակցին թեկնածուներուն հետ, անոնց պարզելու համար բուն կացութիւնը եւ ուրիշ մանրամասնութիւններ: Քննիչներուն համար պատրաստուած է նաեւ մանրամասն հրահանգ մը, իբրեւ լրացուցիչ եւ տեսակ մը ուղեցոյց:

\* \* \*

Պիթիսի ապստամբութիւնը զապուած է առ այժմ: Առաջին լուրերուն վրայ, նկատելով որ ժողովուրդի կեանքը վտանգի մէջ է, դիմում ըրինք եւ կառ[ավարութիւնը] 150 հրացան տրամադրեց, խոստանալով աւելին տալ, եթէ անբաւական զայ: Յօժարութիւն կը ցուցնէր նաեւ նոյն դիրութիւնը տալ Վանի, Մուշի եւ Կարի-

46.- Ակնարկութիւն այն իրողութեան որ իբրեւ հետեւանք ուշ տեղեկացուած ըլլալուն, Ամերիկան չէր յաջողած իր պատգամատորը ունենալ Հ.Յ.Դ. Եօթներորդ Ընդհ. ժողովին:  
47.- Քեռին, հոս, Կ. Պոլսոյ ռուս դեսպանն է:  
48.- Իթքիատի կեղղոմական մարմնի անդամներէն:  
49.- Վիզէն՝ ծածկանունն է քժ. Յակոբ Չարիեի. Կարոն՝ Արմէն Գարոն է – Փաստըմաճեան Գարեգին:  
49ա.- Վաշխառուներու:  
50.- Ծովափ՝ կուս. ծածկանունն է Տրապիզոն քաղաքի:

նի մէջ: Այս իմաստով հեռագրեցինք մեր մարմիններուն, բայց առ այժմ բան մը չէ տրուած, եւ երեւի պիտի քաշքշեն մինչեւ աւելի ծանր դէպքերու պոռթկումը: Դրամ դրկած ենք Պիթիս որպէսզի օրը օրին հեռագիր տան կացութեան մասին: Շրջակայ մարմիններուն ալ պատուիրած ենք արթնութեամբ հետեւիլ դէպքերուն, մանաւանդ որ անակնկալները այսուհետեւ յայտնի կ'ըլլայ: Ինչ կասկած որ կառավարութիւնը կրնայ յանկարծ հաշտուիլ Մոլլա-Սէիտի դեկավարներուն հետ, եւ հաւաքուած զօրքը թափել հայկական շրջակաները ժողովուրդը զենքակէց ընելու: Հա[յաստանի] բիրոն կը թելադրէ պահանջել որ կառավարութիւնը ժողովուրդին բաժնէ միութեակիպներու<sup>49ա</sup> հողերը: Իրենք առաջարկ մը ներկայացուցած են այս իմաստով եւ կ'ուզեն որ մենք ալ ոյժ տանք: Հարց է թէ օրուան վարիչները այդքան հասուն եւ արմատական քայլ մը առնելու ընդունա՞նք են:

Կովկասը գնահատելի օժանդակութիւն մը կ'ընծայէ ինքնապաշտպանութեան գործին համար: Չանագան գումարներ փոխադրուած են արդէն: Երբ տրամադրելի ուժերը ազատ ըլլան յատկապէս այդ գործով զբաղելու համար, աւելի արդիւնաւոր միջոցներ կը ստանանք: Ծովափի<sup>50</sup> մէջ անհատի մը պատկանող 200 զէնք բռնուած ըլլալով, կառավարութիւնը խիստ հետապնդումներու սկսած է եւ կ'ուզէ անպատճառ կազմակերպութեան մը կապել խնդիրը: Տէրը անհետ եղած է, իսկ կասկածով ձերբակալուածները եւ բեռնակիրները փոխադրուած են Պոլիս, պատերազմական ատեանով դատուելու համար:

\* \* \*

Վերջերս Ամերիկայի մէջ պատահած ոճիրները շատ անախորժ տպաւորութիւն գործեցին: Կը խընդրենք մեզի հաղորդել բոլոր մանրամասնութիւնները այդ ողբալի դէպքերուն: Գրեցէք նաեւ ձեր յարաբերութիւնները միւս կուսակցութեանց հետ: Աւելորդ անգամ մըն ալ կը յիշեցնենք որ չտարուիք սին վէճերով: Մեպուսականի մասին միայն համերաշխութիւնը ընդհատուած է, բայց հարկ չկայ ընդհանրացնելու եւ կիրքերը սրեցնելու:

Սպասելով ձեր լուրերուն, ընկերական բարեւանդով՝  
**ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ**





Փաստ. 62-45

### Բ 4.- ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԷԻՆ, Պոսթըն

Պոլիս, 1914 Մայիս 7/20

Կը հաստատենք մեր Ապրիլ 8/21 թուակիր նամակը: Ստացանք ձեր Ապրիլ 24 թուակիր նամակը, ներփակ հաշուեկշռով, չըջաբերականով եւ յանձնարարականներով:

Ձեր սպասած հարցերուն պատասխանած ենք արդէն: Այսօր կու տանք ուրիշ տեղեկութիւններ, այնպէս որ գանգատելու շատ ալ պատճառ չունիք:

Ա.- Գործիչի խնդիր.— Ապրիլ 30 թուակիր հեռագրով մը ձեզի հաղորդեցինք.— «Արարատեան մերժեց. Լիպարիտ անյոյս. կ'առաջարկենք Արսէն Տէր Օձանէսեան»<sup>51</sup>. Կը հեռագրենք վերջնականը»: Դեռ ստացած չենք իր վերջին խօսքը, բայց կարելի է ապահով նկատել, մանաւանդ որ ինքնաբերաբար յօժարութիւն յայտնած էր ընկեր Արարատեանի: Ինքը ուսանող է, Պետերբուրգէն, եւ ծանօթները լաւ վկայութիւններ տուին մեզի: Արարատեան ջերմապէս կը յանձնարարէ. թէ խօսող է եւ թէ գրող, տակտի տէր, եւ կը կարծենք թէ պիտի գոհացնէ ձեզ մանաւանդ իբրեւ շրջիկ: Պատասխանելով իր նամակին, պատուիրեցինք անմիջապէս ճամբայ ելլել դէպի ժընեւ, եւ այնտեղ ստանալ իր ծախքը: Մինչեւ հիմա հեռագրած պիտի ըլլար ձեզի կամ մեզի: Ամէն պարագայի մէջ, գէթ այս մէկը ապահով է: Գալով երկրորդին, եթէ ճիշդ է որ ընկեր Վրացեան հաւանք է մնալ, ուրեմն խնդիրը կարգադրուած է: Եթէ ընկեր Վրացեանը մէկ տարի ալ չմնայ, իր մեկնումը որոշ ատեն մը յետաձգելով, հնարաւորութիւն պիտի տայ յաջորդի մասին կրկին եւ կրկին մտածելու: Մենք շատ լաւ կը հասկընանք ձեր պահանջին ամբողջ խստութիւնը, եւ որովհետեւ յարմար կամ տրամադրելի թեկնածուներ գրեթէ չկան այդպիսի պատասխանատու հոգերու համար, ահամայ զանցառու կը նկատուինք... Անմիջապէս որ լուր ստանանք Պետերբուրգէն կամ ժընեւէն, կը հեռագրենք ձեզի:

Բ.- Հայկ. հարց.— Երեք շաբաթ է որ հասած են երկու ընդհ. քննիչները, հոլանտացի Վեստենենկ եւ նորվեկիացի Հոֆման. բայց դեռ յայտնի չէ թէ ի՞նչ իրաւասութիւններով գործի պիտի ձեռնարկեն: Մերոնք<sup>52</sup> երկարօրէն տեսակցած են Եւրոպայի մէջ, բացատրելով իրերու վիճակը, իրենց պարտականութիւնները, գոր-

ծունէութեան պայմանները: Հասկցուցած են որ առանց Դաշնակցութեան օժանդակութեան իրական օգուտ մը չպիտի ունենան: Երկուքն ալ հետաքրքրութեամբ մտիկ ըրած են, ծանօթանալով ոչ միայն մեր պատմութեան, հայերու դերին, այլեւ Դ[աշնակցութեան] գործունէութեան: Շատ աղօտ տեղեկութիւններ ունին մեր իրականութեան մասին: Այնպէս որ այժմէն կը զգան իրենց պատասխանատուութեան ծանրութիւնը: Մեր տեսակցող ընկերներուն տպաւորութիւնը շատ լաւ էր, թէեւ կարելի չէ երաշխաւորել ամէն բան: Այստեղ ալ նոյն տրամադրութիւնները կը յայտնէին:

Ինչպէս ըսինք, դեռ ճշդուած չեն իրաւասութիւնները: Կառավարութիւնը ոչ մէկ որոշ իրաւասութիւն կ'ուզէ տալ, պարագայէս անոնց կը ցուցնէ նահանգային նոր օրէնքը, որու էութեան ծանօթ էք արդէն: Հայերու կողմէն ուղեցոյց մը մշակուած էր, եւ իբրեւ թելադրութիւն առաջարկուեցաւ դեսպաններու միջոցաւ, որպէսզի անոր վրայ հիմնուին քննիչները: Այդ նախագիծը լայն գործադիր իշխանութիւն կու տար երկու ընդհ. քննիչներուն, բայց չպաշտպանուեցաւ դեսպաններէն: Կիրսը<sup>53</sup> բացակայ ըլլալով, ռուս դեսպանութեան գործակատարը ինքն իր ձեռքով շատ բան ջնջեց, յապաւեց կամ այլափոխեց որպէսզի «ընդունելի» ըլլայ, բայց այդքանն իսկ սրտով չի պաշտպաներ. գերմանական դեսպանը վերապահ է, իսկ միւսները անտարբեր կը մնան, մանաւանդ Ֆրանսականը եւ անգլիականը:

Իրերը այժմ ձգուած են իրենց վիճակին: Երկու քննիչները հոլանտական դեսպանին հետ ծրագիր մը պատրաստեցին իրենց իրաւասութեանց մասին, եւ ներկայացուցին նախարարներուն: Պատրիարքարանի միջոցաւ փորձ եղաւ գէթ հայերու խորհրդակցութեամբ կազմելու ծրագիրը, բայց հոլանտական դեսպանը մերժեց. այնպէս որ ամէն բան պատրաստուած է մոլորի մէջ, հեռու հայկ. շրջանակէ: Արդէն երկու քննիչները այս միջոցին կը զգուշանան հայերու հետ տեսակցելէ,

51.- Յաջորդաբար՝ Արարատեան Սարգիս, Նազարեանց Լիպարիտ եւ Տէր Յովհաննէսեան Արսէն. վերջինս Ամերիկայի մէջ պիտի գործեր Միքայելեան Արսէն անունով:  
52.- Մերոնք՝ Տոքթ. Չարիիտ եւ Արսէն Գարո: Այս մասին տեսնել Արսէն Գարոյի նամակները, էջ 55-57:  
53.- Կիրս կամ Գիրս – Պոլսոյ ռուս դեսպան:



**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

կասկած չհրավիրելու համար: Ի մէջ այլոց պահանջած են որ յատուկ շէնքեր կառուցուին իրենց համար (palais)<sup>54</sup>. ամսական պիտի ստանան 450 օսմ. ոսկի (իւրաքանչիւրին համար):

Կառավարութիւնը կը պահանջէ որ Ֆէս դնեն, եւ հաւանաբար երկուքն ալ համակերպին, առանց գրաւոր engagementի<sup>55</sup>, դեսպաններու թելադրութեամբ: Շրջանակներու մասին դեռ ստոյգ լուր մը չկայ: Մեր քաղած տեղեկութեանց համաձայն, մէկը Կարին պիտի հաստատուի կամ Տիգրանակերտ, մինչ պետական շրջաններէ կ'իմանանք որ մէկը Տրապիզոն պիտի մնայ եւ միւսը Տիգրանակերտ<sup>56</sup>:

Գործերը այս վիճակին մէջ են հիմա: Երկու քննիչները Եւրոպա կ'երթան իրենց ընտանեկան գործերը կարգադրելու, եւ հաւանաբար այնտեղէն ճամբայ ելլեն, երբ երեսփ. ժողովը վաւերացնէ եղած կարգադրութիւնը: Երկուքն ալ երեւութապէս նոյնքան գիտակից են իրենց պատասխանատուութեան, որ նոյնիսկ յայտներ են թէ կը նախընտրեն Եւրոպա դառնալ, քան ճամբայ իյնալ առանց որոշ իրաւասութեան:

Այստեղէն իրենց հետ պիտի ունենան թարգմաններու կամ քարտուղարներու դիւան մը, բաղկացած մէկ հայէ, մէկ թուրքէ եւ մէկ քուրտէ: Ի հարկէ պիտի ջանանք որ պաշտօնէութեան մէջ գտնուին ընդունակ հայեր, գէթ աստիճան մը կապ պահելու պամար հայ կեանքին հետ, թէ եւ երեւոյթները շատ խաբուսիկ են այժմ:

**Գ.— Ընդհ. ժողով.—** Մինչեւ այսօր չենք ստացած ձեր հարցերը՝ Տրապիզոնի համար: Զգիտենք կարգադրութիւններ ըրա՞ծ էք պատգամաւորներու ընտրութեան համար: Ստիպողաբար կը խնդրենք անյապաղ կարգադրել այս խնդիրները, որպէսզի անցեալ տարուան թիւրիմացութիւնները չկրկնուին<sup>56</sup>: Շատ մարմիններ զրկած են իրենց հարցերը, թելադրութիւններ ընելով տեղի մասին ալ: Վերջնական օրակարգը այսօր վաղը տպագրութեան պիտի յանձնենք, եւ անմիջապէս կ'ուղարկենք ձեզի:— Առաջարկներ կան ժողովը գումարելու Վան կամ Տրապիզոն<sup>57</sup>:

**Դ.—** Մեր յարաբերութիւնները Իթիոպիային հետ կը մնան անփոփոխ, այսինքն վերապահ եւ սպասողական: Ոչ մէկ պաշտօնական կապ ունինք: Բիւրոյի վերջին ժողովին մէջ առաջարկուեցաւ յարաբերութեան ձեւ մը գտնել. բայց մեծամասնութեամբ մերժուեցաւ իբրեւ անիմաստ եւ վնասակար: Ուրեմն այսօրուան մեր դիրքը պիտի շարունակենք մինչեւ Ընդհ. ժողով, կամ գոնէ մինչեւ որ դէպքերը տարբեր երեւոյթ մը առնեն: Մեզի դէմ շատ լարուած են եւ միշտ դառնութեամբ կը յիշեն կոնտրոլի խնդրին եւ մէպոլսներու ձեռնպահութեան առթիւ մեր բռնած դիրքը: Գաւառներու մէջ ալ նոյնն է վիճակը:

**Ե.—** Քրտական շարժման հանդէպ ալ մեր վերապահ դիրքը, մեր չհզոթութիւնը լաւագոյն քաղաքականութիւնն էր, մանաւանդ որ շարժումը ինքնին պղտոր հանգամանք ունէր: Կառավարութիւնը իր իսկ գոյութեան դէմ համարելով շարժումը, անողորմաբար պատժեց ղեկավարները, մանաւանդ որ փաստեր գտեր է թէ օտարի մատ կայ<sup>58</sup>: Այս մասին Հայաստանի բիւրոն շօշափելով իր շրջանի կարծիքները, եկած էր այն եզրակացութեան թէ՝

ա. Պէտք է աւագ կարեւորութիւն տալ ինքնապաշտպանութեան, ամէն պատահականութեան առջեւ պատրաստել ժողովուրդը, համոզուած որ միայն դիմադրական պատրաստ ուժը կրնայ քիւրտերը հեռու պահել հայերու վրայ յարձակելու փորձութենէն: Եւ որովհետեւ կառավարութիւնը միջոցներ ձեռք պիտի առնէ որպէսզի շարժումը բարդ կերպարանք չստանայ, պէտք է ուրեմն ուժ տալ գիւղական պահակներու կազմակերպութեան: Այս մասին անպայման պիտի գործակցինք կառավարութեան հետ.

բ. Թէ՛ գաւառի եւ թէ՛ կեդրոնի կառավարութեան բացատրել թէ որքա՛ն անհրաժեշտ է աւատական դրութեան ջնջումը եւ գիւղացիները սեփականատէր դարձրնելը.

գ. Ծանօթացնել քիւրտ տարրը մեր ուղղութեան եւ տեսակէտներուն.

դ. Որոշ միջոցներ ձեռք առնել քրտական յարձակումները արգիլելու կամ կղզիացներու համար:

Անշուշտ մենք ալ կը բաժնենք այս տեսակէտները եւ Բիւրոն մանրամասնօրէն քննելով խնդիրը, ուրիշ կարգ մը որոշումներ ալ տուաւ, որոնց մասին թերեւս առիթ ունենանք գրելու:

**Զ.—** Քրտական հարցիչ էական կէտերը մանրամասնօրէն գրած ենք ժամանակին, թաքուն բան չկայ, եւ աւելորդ էր վրդովուիլ դուրսի ասէ-կօսէներով: Պատահած ճիշդ այն է ինչ որ հաղորդած ենք ժամանակին: Կազմակերպական որոշումով էր որ թերթը աւելի չզբաղեցաւ, եւ հրատարակեց միայն իրողութիւնները: Կ'ուզէինք որ կուսակցութեան բոլոր օրգաններն ալ այդ ուղղութեամբ ընթանային, որովհետեւ տարբեր ձեւ մը՝ բանավէճի, կիրքի, խառնիճաղանձ ժխտի մը դուռ պիտի բանար, առանց իրական օգուտի: Վարժուիւնք, վերջապէս, քիչ մը պաղարիւնութեամբ լսելու ողորմուկ թշնամանքները եւ հայհոյութիւնները, որոնք

54.- Ֆրանսերէն – պալատ:  
55.- Ֆրանսերէն – յանձնառութեան:  
56.- Ընդհ. քննիչներու համար ի վերջոյ կեդրոնատեղի պիտի նշանակուէին Կարին-Էրզրումը եւ Վանը:  
57.- Վերջնական վայր պիտի ընտրուէր, ինչպէս յայտնի է, Կարին-Էրզրումը:  
58.- Օտար մատը՝ Ռուսիան էր:





ատեն մը միայն կ'ապրին: Մեր պատասխանատուութիւնը, մեր դիրքը, հայ ժողովուրդի հանդէպ մեր պարտքը, ներկայ տագնապը չեն թոյլատրեր մեզ ժամավաճառ ըլլալու վայրահաշտութիւններով: Կը յանձնարարենք, ուրեմն, եւ աւելորդ անգամ մըն ալ — միշտ մնալ վերապահ եւ շիտակ, հաւատարիմ մեր աւանդութիւններուն:

Այս դժբախտ հարցը իր բոլոր երեւոյթներով պիտի քննուի արդէն ծրագրէն մէջ: Ժողովին մէջ:— Կարինի ընտրութիւնը ձախող ելք մը ունեցաւ, եւ այս իսկ պատճառով Բարձրաբերդի Կ. կոմիտէն պահանջած է ընկեր Վարդգէսէն որ հրաժարի<sup>59</sup>: Իսկ Վանի ընտրութիւնները դեռ չեն վերջացած: Կուսակալը հեռագրած է ներքին գործերու նախարարին թէ հազիւ կը յաջողի մէկ հայու ընտրութիւնը, եթէ Դաշնակցութիւնը չմասնակցի, եւ խնդրած է որ այս պարագան հաղորդուի Պատրիարքին: Այս վերջինը, արդէն իր անմիտ կարգադրութեան հետեւանքը տեսաւ Կարինի ընտրութեամբ, եւ իր արժանապատուութիւնն անգամ չկրցաւ յարգել տալ...

Է.- Չանագան.— Պետական դումայի անգամ՝ պ. Միք. Պապաջանեան վերջերս Պոլիս գալուն, պարզելով Ռուսիոյ պաշտօնական շրջանակներուն տրամադրութիւնը, կը յայտնէ թէ անոնք կ'ուզեն որ

ա) Հայերը շատ խստապահանջ չըլլան եւ համերաշխ մնան.

59.- Կարնոյ երեսփոխանական ընտրութիւններուն, Առաջնորդարանի եւ Դաշնակցութեան թեկնածուներն էին Վարդգէսը (Յովհ. Սերեմկիլեան) եւ Արմէն Գարոն (Փաստրմաճեան). Իրֆի-հատը վերջինիս ընտրութիւնը ձախողոց եւ ընտրել տուաւ իր հայ թեկնածուն յանձին Մատաթեան Յովսէփի:

60.- Գրադարանական գործունէութիւնը կը վերաբերի ինքնապաշտպանութեան համար զինական միջոցներու հայթայթումին:

բ) Աւելի ոյժ տան կուլտուրական գործերու.

գ) Իրենք իրենց մասին յանձն կ'առնեն ապահովել մեզ՝ աղէտներու դէմ եւն:

Լուրջ ծրագիր մը կայ Հայաստանի մէջ ուսսական դրամատուն մը հաստատելու, ի հարկէ քաղաքական նպատակներով:— կովկասահայ կալանաւորները ազատելու համար, երկու ձեւեր կան աչքի առջեւ,—

ա) Որ իւրաքանչիւրը անհատաբար խնդրագիր տայ ցարին.

բ) Փոխարքային միջոցաւ ընդհ. ներում խնդրուի:

Այս ուղղութեամբ կ'աշխատին Կովկասի մէջ:

Ը.- Գրադարանական գործունէութեան<sup>60</sup> մասին գոհացուցիչ լուր մը չկայ առ այժմ: Երեք ամիսէ ի վեր առուծախը դադրած է: Տեղ մը յարմար միջերք կայ աժան գնով, եւ փոխադրութեան դիւրութիւններով, սակայն նախ՝ վերջերս Ծովափի<sup>50</sup> մէջ խնդիրներ ծագած ըլլալով եւ երկրորդ՝ դրամական անձկութեան պատճառաւ կարելի չեղաւ օգտուիլ: Ամէն պարագայի մէջ, միջոցներ կը խորհինք տակաւին: Չգիտենք թէ Հ[այաստանի] Բ[իւրո]ն որքան պիտի կրնայ օգնել: Միւսէն ալ շատ սպասելիքներ ունինք եւ կարելին ի գործ կը դնենք այս բացառիկ պատեհութենէն օգտուելու համար, մանաւանդ որ գաւառական գրադարանները ստիպողաբար նոր գիրք կը պահանջեն:

Վերջացնելով ընկերային կեանքի այս ամփոփ պատկերը, անհամբեր կը սպասենք ձեր լուրերուն:

Ընկերական բարեկենդիկ  
ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՕ





Փաստ. 1402-67

**Բ 5.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 1  
Հ.Յ.Դ. ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԽՈՒՄԲԵՐՈՒՆ**

Յարգելի ընկերուհիներ,

Հ.Յ.Դ. Կարմիր Խաչի խումբերը մայր-կուսակցութեան անհրաժեշտ օժանդակիչ մարմինները կը ներկայանան, ուստի եւ ընդհանուր գործի յաջողութեան համար անոնց դերը խիստ կարեւոր է: Մասնատրապէս Ամերիկայի մէջ Կարմիր Խաչի խումբերուն վերապահուած է գործունէութեան լայն ասպարէզ մը, ուրտեղ հայ կիներն ալ պիտի պիտի բերէ իր մասնակցութիւնը հայ ժողովուրդի ազատագրական գործին:

Ուրախ ենք ըսել, որ ամերիկահայ իգական սեռը սկսած է գնահատել մեր ջանքերը եւ գործօն աջակցութեամբ կու գայ ուժ տալու մեր կազմակերպութեան: Հետզհետէ զանազան քաղաքներու մէջ կը կազմուին Կարմիր Խաչի նորանոր խումբեր, որոնց թիւը այսօր հասած է 13-ի եւ քաժնուած են հետեւեալ ձեւով.

**Պրիճփորթի**  
A.R.F. RED CROSS  
P. O. Box 2125 – Bridgeport, Conn.

**Նիւ Եորքի**  
A.R.F. RED CROSS  
P. O. Box 124 Mad. Sq. – New York, N.Y.

**Սէնթրըլ Ֆոլսի**  
A.R.F. RED CROSS  
P. O. Box 65 – Cenrtal Falls, R. I

**Նիակարա Ֆոլսի**  
A.R.F. RED CROSS  
P. O. Box 829 – Niagara Falls, N.Y.

**Չըլսիի**  
A.R.F. RED CROSS  
P. O. Box 52 – Chelsea, Mass.

**Փրովիտէնսի**  
A.R.F. RED CROSS  
P. O. Box 293 – Providence, R. I.

**Շիքագոյի**  
A.R.F. RED CROSS  
20 North Western Ave. – Chicago, Ill.

**Րէյսինի**  
A.R.F. RED CROSS  
P. O. Box 198 – Racine, Wis.

**Հարթֆորտի**  
A.R.F. RED CROSS  
P. O. Box 96 Sta.A – Hartford, Conn.

**Թրոյ-Ուոթըրվիլիի**  
A.R.F. RED CROSS  
P. O. Box 32 – Watervliet, N. Y.

**Նիւ Պրիթէյնի**  
A.R.F. RED CROSS  
P. O. Box 985 – New Britain

**Ուայթինսվիլիի**  
A.R.F. RED CROSS  
P. O. Box 97 – Witinsville, Mass.

**Նիւպրիփորթի**  
A.R.F. RED CROSS  
P. O. Box 23 – Newburyport, Mass.





Մեր փափաքներէն մէկն ալ այն է, որ բոլոր հայաբնակ քաղաքներու մէջ հիմնենք Կարմիր Խաչի խումբեր, ատանկով հայ իգական սեռը կազմակերպել մէկ ընդհանուր դրօշի տակ եւ միջոց ու պատենհութիւն տալ անոր հաւաքական կեանքով ապրիլ, զարգանալ եւ օգնել իր շրջապատին: Չժածկենք – հայ կինը դեռ շատ յետամընաց է եւ ահագին աշխատանք պէտք է թափել, որպէսզի ան ի վիճակի ըլլայ գիտակցօրէն հասարակական գործերով զբաղուիլ: Կարմիր Խաչի խումբերը այս տեսակետով խոշոր դեր ունին կատարելիք:

Մեր նպատակներէն մէկն ալ բոլոր խումբերը իրար հետ կապել ու յարաբերութեան մէջ դնելն է, ուստի ջերմապէս կը յանձնարարենք աւելի մօտէն ծանօթանալ իրար հետ, նամակագրութիւն ունենալ եւ նոյնիսկ ընդհանուր ձեռնարկներ կատարել:

Յարգելի ընկերուհիներ, հայ ժողովուրդը յոյսերու եւ յոյզերու օրեր կ'ապրի, իր նեարդները չափէն աւելի լարած են: Ի՞նչ պիտի ըլլայ վաղը, դժուար է ըսել: Բայց այսօրուայ մեր ընելիքը պարզ է.– պէտք է կազմակերպել ժողովուրդը, պէտք է օգնութեան հասնիլ երկրի գործին, պէտք է ձեռք մեկնել կարիքի մէջ գտնուողին եւ ամէնէն աւելի պէտք է ինքնապաշտպանութեան գործը առաջ տանիլ, որպէսզի այլեւս չկրկնուին ջարդն ու արհաւիրքի սասանեցնող օրերը: Այդ պատճառով Կարմիր Խաչի խումբերուն մենք կը թելադրենք ամէնէն աւելի ուժ տալ ինքնապաշտպանութեան եւ անոր օգտին ձեռնարկներ ընել:

Նմանապէս մեծ պէտք կայ նպաստելու մեր նահատակ ու յեղափոխութեան ատեն վնասուած ընկերներու որբերուն եւ այրիներուն, յատկապէս որբերու կրթութեան պէտքը հոգալու: Ուրեմն, եւ ձեր երկրորդ մտահոգութիւնը այս պիտի ըլլայ: Առ այժմ ձեզ կը յանձնարարենք այս երկու ուղղութեամբ գործելու – *ինքնապաշտպանութեան եւ որբերու կրթութեան:*

Կարմիր Խաչի խումբերու մէկ կարեւոր պարտականութիւնն ալ իր անդամներու զարգացման օժանդակելն է: Հ. Յ. Գաշնակցութիւնը ինքնին դպրոց մըն է, որ աննկատելի կերպով կը կրթէ ու կը դաստիարակէ իր անդամները. նոյնը պէտք է ըլլայ եւ Կարմիր Խաչը իր անդամուհիներու համար: Ժողովներ կազմեցէք ինքնազարգացման համար, ընթերցանութեամբ պարապեցէք եւ աշխատեցէք ամէն անդամի մտաւոր հորիզոնը լայնցնելու մասին: Կարմիր Խաչերը միայն նիւթական նպաստ հասցնելու համար չեն հիմնուած, այլեւ բարոյական ու մտաւոր գործունէութեան. ասիկա միշտ պէտք է յիշել:

Երկրի վիճակը առայժմ խաղաղ է: Յոյս ունինք, որ աստիճանաբար կարելի պիտի ըլլայ «արցունքի հովիտը» վերածել «ծիծաղի հովիտի», միայն թէ պէտք է աշխատիլ, աշխատիլ ու աշխատիլ:

Ընկերական բարեւներով  
Հ.Յ.Գ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՂՐ. ԿՈՄԻՏԷ

Յ.Գ.- Ասկէ ետք պիտի ջանանք պարբերաբար շրջաբերականներ հրատարակել եւ ձեզ մօտէն տեղեակ պահել անցած-դարձածներու մասին:

Պոսթըն, յունիս 1, 1914





Փաստ. 62-57

Բ 6.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՍԻՏԵԻՆ

Պոլիս 11/24 Յուլիս 1914

Ընկերներ,

Ստացանք ձեր Յունիս 23, Յուլիս 6 եւ 13 թուակիր նամակները: Բիւրոյի մեծ մասը Ընդհ. ժողովին գացած ըլլալով, կը փութանք պատասխանել միայն ընթացիկ հարցերուն:

1- Ընկեր Վրացեանը շաբաթ օր մեկնեցաւ<sup>61</sup>. այնպէս որ իրեն յատուկ թուղթերը ընկերոջ մը հետ պիտի դըր- կենք քանի մը օրէն, բոլորը մէկ ծրարի մէջ. իսկ փոս- տով ձեզի կ'ուղարկենք իր ձգած թուղթերը:

2- Ընկեր Արսէն Տէր Յովհաննէսեան (այժմ Արսէն Միքայէլեան) ընդունած է Ամերիկա գալ, բայց կարգ մը ուսումնասիրութիւններու համար Երկիր գացած ըլլա- լով, ուշացաւ իր պատասխանը: Այս շաբթու իրմէ նա- մակ ստացանք Կարինէն, ուրկէ պիտի անցնի Մուշ եւ Վան, եւ Սեպտեմբերին պատրաստ պիտի ըլլայ Ամերի- կա ուղեւորելու: Նոյնիսկ Օգոստոսին կը հաւանի գալ: Մենք այս բոլոր տեղեկութիւնները անձամբ կը հաղոր- դենք ընկեր Վրացեանի, որ գրած պիտի ըլլայ թէ ձեզի եւ թէ իրեն: Ամէն պարագայի մէջ, այդ ընկերը ապա- հովուած է, կրնաք վստահ ըլլալ: Մենք այսօր իսկ նա- մակ գրեցինք Մուշ, որպէսզի պատրաստ ըլլայ եւ աւե- լի չուշանայ:

3- Ստացանք ձեր չէքը, մէկը 22,5 օսմ. ոսկի եւ միւ- սը՝ 26 ոսկի (դեռ չենք գանձած) Թամզարայի Չոխրաք [?] ենթակոմիտէի համար: Վաղն իսկ կը փոխադրենք, համապատասխան ընկալագիր պահանջելով: Ի հարկէ հակակազմակերպական քայլ մըն է որ առած են թամ- զարացիները՝ այդ ձեւ յարաբերութեամբ, եւ կ'արժէր դիտել տալ: Ինչ կը վերաբերի միւս հին գումարներուն, Կիւրիինը դրկուած է արդէն, Չմշկածագի մասին խիստ նամակ գրած էինք վերջերս Փառնակին<sup>62</sup>, որ պատաս- խանատու է այդ գործին համար, ու իմացանք որ իրենց կամքէն անկախ պատճառներ ունէին, իսկ այժմ արդէն դրկած են: Չգիտենք ինչո՞ւ կը յիշէք Ծովքը... Այս հար- ցերու մասին անշուշտ ձեր պատգամաւորը գոհացում պիտի պահանջէ Ընդհ. ժողովին մէջ, որով կը խնդրենք

ա՛յ չկրկնել ամէն մէկ նամակի մէջ: Վիշապածորի եւ Խորածորի<sup>63</sup> պարագաները կ'իմանաք Հաւալէն [?]:

Ըսենք անցողակի, որ ընդհանրապէս լրջութիւնը կը պակսի ձեր կարգ մը նամակներուն մէջ, եւ շրջաբերա- կաններու շէշտն անգամ առնուազն անախորժ է: Այս տեսակէտով ուշագրաւ է մանաւանդ ձեր Յունիս 1 թը- ւակիր նամակը, որուն այլեւս աւելորդ կը նկատենք պատասխանել, քանի որ ձեր յուզած հարցերը պիտի քննուին Ընդհ. ժողովին մէջ:

4- Կամաւորներ<sup>64</sup> կարող են երթալ Երկրի ներսերը, իրենք իրենց կամքով, եւ երբ որ հարկ ըլլայ, կը տրա- մադրեն իրենց ուժերը: Այժմ ոչինչ կարելի է ըսել, ոչ ալ յանձնառութեան տակ մտնել այդ մասին, գէթ մինչեւ Ընդհ. ժողով:

\*  
\*\*

Երկու ընդհ. քննիչներէն Հօֆը մեկնեցաւ այսօր: Վեստենենկը ճամբայ կ'ելլէ տասը օրէն: Վերջին շա- բաթներու միջոցին չափազանց կ'ընդունեցաւ խնդիրը, որովհետեւ կառավարութիւնը մինչեւ վերջը կը ջանար ընդունիլ տալ իր տեսակէտը, թէ՛ իրաւասութիւններու եւ թէ պաշտօնէութեան մասին: Շնորհիւ մեր դիմում- ներուն եւ ուրիշ օժանդակութիւններու, մանաւանդ Հոլանտացիին<sup>65</sup> ընդդիմութեան, կարելի եղաւ որոշ զի- ջումներ ձեռք բերել: Այսպէս, հարեւաններ<sup>66</sup> ընդու- նած եղան որ գլխաւոր պաշտօնէութիւնը կազմուի կէս առ կէսի սկզբունքով: Հօֆը իր հետ ունի երեք հայ, եր- կու եւրոպացի եւ երեք թուրք (մէկը քիւրտ, երեւութա- պէս). իսկ Վեստենենկը կ'ունենայ երեք հայ, երեք եւրո- պացի (համագումար վեց քրիստոնեայ) եւ հինգ թուրք: Յուցակ մը ունէր կառավարութիւնը, ցուցակ մըն ալ

61.- Իմա՝ մեկնեցաւ Պոլսէն դէպի ժողովատեղի՝ Կարին:  
62.- Փառնակ – կուս. ծածկանուն Կիրասոն քաղաքի:  
63.- Վիշապածոր – կուս. ծածկանուն Տիարպեթի-Տիգրանա- կերտ քաղաքի, Խորածոր – կուս. ծածկանուն Քղիի:  
64.- Իմա Ամերիկայէն իբրեւ գործիչ Երկիր մեկնող կամաւոր ընկերներ:  
65.- Հոլանտացի – Բնդի. քննիչներէն Վեստենենկն է:  
66.- Հարեւանները – իմա թուրքերը:



Հայերը: Թէեւ բուն մեր ուզած թեկնածուները չյաջողեցան, բայց առ հասարակ բոլորն ալ հայկ[ական] ցանկէն են, այսպէս կամ այնպէս յանձնարարուած: Հարեւանները մինչեւ վերջը ընդդիմացան մեր ընկերներու (Գարօ եւայլն) թեկնածու թեան, առարկելով թէ երբ դաշնակցական պաշտօնեայ գտնուի, իսլամ ժողովուրդը կրնայ գրգռուիլ եւայլն: Վերջին շաբաթներու մաքառումները բոլորովին ապարդիւն չանցան, եւ երկու եւրոպացիները իրենց մորթին վրայ զգացին բոլոր արեւելեան խաղերը, աւելի գիտակից դարձան իրենց պաշտօնին եւ տեղական պայմաններուն: Հիմա աւելի ճշդուած են իրենց իրաւասութիւններն ու յարաբերութիւնները, որոնք մոլթ կը մնային, շնորհիւ հռչակաւոր

Հրահանգներուն<sup>67</sup>: Քեռիին<sup>47</sup> եւայլն պահանջումով հարեւանները պաշտօնապէս Քննիչներուն եւ դեսպաններուն հաղորդեցին accord-ը<sup>68</sup>, մինչ առաջ կը դժկամակէին, եւ նոյնիսկ փորձեցին առանց այս կէտերը կարգադրելու, ժամ առաջ ճամբայ հանել Հօֆը, որպէսզի միւսը մինակ մնայ եւ ան ալ համոզեն: Որովհետեւ քննիչները իրաւունք ունին – գէթ մեծ չափով – փոխելու իրենց պաշտօնեաները, յոյս կայ որ յառաջիկային աւելի յարմար դիւաններ կազմուին: Ամէն պարագայի մէջ, առանց յափշտակուելու այս նոր փորձով, բայց նաեւ առանց անձնատուր ըլլալու ջլատիչ յոռետեսութեան մը, մենք կը շարունակենք մեր ճամբան՝ արթուն եւ վերապահ, առանց ընդհատելու ներքին ուժեղացման աշխատանքը:

67.- Խօսքը կը վերաբերի Ընդհ. քննիչներու իրաւասութեանց մասին մշակուած հրահանգներուն. տես էջ 60-67:  
68.- Ֆրանսերէն – համաձայնութիւն:

**Ընկերային բարեւաններով  
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ**





Փաստ. 1402-59

**Բ 7.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻԻ 5**  
**Հ.Յ.Դ. ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵՂԻ. ԿՈՄԻՏԵԻՑ<sup>69</sup>**

**ԿՈՄԻՏԵՆԵՐՈՒ ՀԱՍԱՐ**

*Սիրելի ընկերներ,*

Այս շրջաբերականը սովորականէն քիչ մը ուշացուցինք՝ Ութերորդ Ընդհանուր ժողովին պատրաստութեան պատճառով: Օրուան ներքին կեանքը զբաղեցնող հարցը՝ ութերորդ ընդհանուր պատգամաւորական ժողովին է: Կուսակցութեան արտասահմանեան եւ երկրի բոլոր մարմինները պատրաստուած են իրենց բաժինը բերելու այս ժողովը Դաշնակցութեան կեանքին մէջ եզակի եւ վերակենդանացուցիչ ընելու համար: Մենք մեր պատգամաւորին, որ այժմ Պոլիս կը գտնուի պատգամաւորական ժողովին վայրը երթալու համար՝ դրկած ենք պէտք եղած բոլոր տեղեկութիւններն ու արխիւները, որպէսզի ան ի վիճակի ըլլայ Ամերիկան արժանաւոր կերպով ներկայացնելու Ընդհանուր ժողովին մէջ:

**Ա. Հայկական հարց.**— Ահա թէ ինչ կը գրէ մեզ Պոլսի բարձրագոյն մարմինը. «Մերոնք<sup>52</sup> երկարօրէն տեսակցած էին ընդհանուր քննիչներուն հետ Եւրոպայի մէջ, բացատրելով իրերու վիճակը, իրենց պարտականութիւնները, գործունէութեան պայմանները: Հասկացուցած են, որ առանց Դաշնակցութեան] օժանդակութեան իրական օգուտ մը պիտի չունենան: Երկուքն ալ հետաքրքրութեամբ մտիկ ըրած են, ծանօթանալով ո՛չ միայն մեր պատմութեան, հայերու դիրքին, այլեւ Դաշնակցութեան գործունէութեան: Շատ աղօտ տեղեկութիւններ ունին մեր իրականութեան մասին, այնպէս որ այժմէն կը զգան իրենց պատասխանատուութեան ծանրութիւնը: Մեր տեսակցող ընկերներուն տպաւորութիւնը շատ լաւ էր, թէեւ կարելի չէ երաշխաւորել ամէն բան: Կառավարութիւնը ոչ մէկ որոշ իրաւասութիւն կ'ուզէ տալ. պարզապէս անոնց կը ցուցնէ նահանգային նոր օրէնքը, որուն էութեան ծանօթ էք արդէն: Հայերու կողմէն ուղեցոյց մը մշակուած էր, եւ իբրեւ թեղադրութիւն առաջարկուեցաւ ղեսպաններու միջոցաւ, որպէսզի անոնց վրայ հիմնուին քննիչները: Այդ նախագիծը լայն գործադիր իշխանութիւն կու տար երկու ընդհանուր քննիչներուն, բայց չպաշտպանուեցաւ ղեսպաններէն: Կիրսը<sup>53</sup> բացակայ ըլլալով, ռուս ղեսպանատան գործակատարը ինքն իր ձեռքով շատ բան ջնջեց, յապաւեց կամ այլափոխեց, որպէսզի «ըն-

դունելի» ըլլայ, բայց այդքանն իսկ չպաշտպանեց. գերմանական ղեսպանը վերապահ էր, իսկ միւսները անտարբեր կը մնային, մանաւանդ Ֆրանսականը եւ անգլիականը: Երկու քննիչները հոլանտական ղեսպանին հետ ծրագիր մը պատրաստեցին իրենց իրաւասութեանց մասին եւ ներկայացուցին նախարարութեան: Պատրիարքարանի միջոցով փորձ եղաւ գէթ հայերու խորհրդակցութեամբ կազմելու ծրագիրը, բայց հոլանտական ղեսպանը մերժեց, այնպէս որ ամէն բան պատրաստուած է մութին մէջ, հեռու հայկական շրջանակէ»:

Իսկ մեր մօտիկ ընկերներէն մէկի նամակէն կը քաղենք հետեւեալը. «Հայկական հարցի շուրջ առանձին նորութիւն չկայ: Պերլինի եւ ժընեւի հայկական կոմիտէները կը շարունակեն իրենց աշխատանքները: Հայկական բարենորոգումներու մասին վերջին տեղեկութիւնները շատ աննպաստ են: Որովհետեւ այժմ պարզ է, որ Ռուսիա թողեր է մեր գործը եւ իրաւախոհութեան եկեր թուրքերու հետ՝ Թալէթ պէյի Լիվատիա<sup>70</sup> այցելելու առթիւ: Պեռար<sup>71</sup> բոլորովին անյոյս է եւ չի հաւատար, որ բարենորոգում կարող է լինել: Պեռար, որ շատ մօտէն տեղեակ է քաղաքական անցուղարձեւումը, կը հաւատացնէ, որ Թուրքիոյ վերջը մօտ է, որ շուտով կը բաժնուի եւ մեզ խորհուրդ կու տայ միայն զինուելի, ներքնապէս ուժեղանալ, կազմակերպուել, որպէսզի ապագային ոտքի տակ չերթանք ու կարողանանք մեր գոյութիւնը պահպանել: Ռուսաստանի վրայ այս պահուստ այլեւս ոչ մէկ յոյս ու վստահութիւն կայ: Պեռարը յայտներ է մերոնց, թէ ինքը հաստատ աղբիւր է

69.- Շրջաբերականը անթուակիր է. մօտաւոր թուականը կարելի է ճշդել նկատի առնելով որ Կ. կոմիտէի շրջաբերականները ընդհանրապէս պարբերական էին՝ ամսական դրութեամբ: Այսպէս, նախորդող շրջաբերական թիւ 4-ը Յունիս 6-ին է, յաջորդ թիւ 6-ը՝ Օգոստոս 13-ին, ուրեմն ներկայ թիւ 5-ը տեղադրելի է Յունիս ամսուան վերջերուն, մասնաւորապէս որ շրջաբերականին մէջ յիշուած Ամերիկայի պատգամատրը (Ս. Վրացեան), Պոլիս մեկնելու ճամբուն վրայ, ժընեւ հանդիպած էր եւ անկէ գրած Կ. կոմիտէին Յունիս 10 թուականով:

70.- Լիվատիա – Խրիմ, Եաթրայի մօտ բնակավայր, ուր 1914 թ. Մայիսին Թալէթ Խանդիպում ունեցած էր Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սազանովի հետ:

71.- Վիկտոր Բերար – ֆրանսացի քաղաքական ծանօթ դէմք, բարեկամ Դաշնակցութեան, խմբագիր Փրօ-Արմենիայի:

72.- Սազանով – Ռուսիոյ արտաքին գործոց նախարար:







գիտէ, որ Լիվատիոյ մէջ Սազանովը<sup>72</sup> խօսք տուած է թալէաթ պէյի, որ Ռուսիա յունական գործերուն պիտի չխառնուի, իսկ հայկական հարցի մէջ պիտի բաւականանայ եղածով եւ նոր դիմումներ պիտի չընէ. ուրիշ խօսքով թոյլ պիտի տայ, որ թուրքերը շարժին իրենց քէյֆի ուզածին պէս:

Ատոր հետեւանքով է որ թուրքիա վերջերս այնպէս յոխորտանքներ կ'ընէ: Մեր հարցի եւ բարենորոգումներու նկատմամբ մեր ընկերական շրջաններու մէջ վատ տրամադրութիւն կը տիրէ. ընկեր<sup>\*\*\*73</sup>, որ Եւրոպա եկած է Փեթրոսպոլիէն քննիչներու հետ տեսնուելու համար (ուսու արտաքին գործոց նախարարութեան խորհուրդով) սկիզբները շատ լաւատես եղած է, յատկապէս ուսներու վրայ, բայց վերջերս Պոլսէն իր քանի մը նամակներով շատ յոռետես տեղեկութիւններ կը հաղորդէ եւ ցոյց կու տայ, որ ուսու դիւանագիտութիւնը այս անգամ ալ դաւաճաններ է մեզ, հաւատարիմ մնալով իր պատմական ավանդութիւններուն»:

Բ. Ինչպէս գիտէք քրտական շարժման հանդէպ վերապահ էր մեր դիրքը, մեր չէզոքութիւնը լաւագոյն քաղաքականութիւնն էր, որ [ովհետեւ] շարժումն ինքնին պղտոր հանգամանք ունէր: Երկրի բարձրագոյն մարմինը հետեւեալ տեսակէտներն ունի նոյնանման շարժումներու առթիւ, որ անշուշտ մենք ալ կը բաժնենք անոր հետ.—

«ա.) Առաջնագոյն կարեւորութիւնը տալ ինքնապաշտպանութեան գործին, ամէն կերպ ու ամէն պարագայի բոլոր պատահականութեանց առջեւ պատրաստել մեր ժողովուրդը՝ համոզուած որ միմիայն ընդդիմադրութեան պատրաստ ուժը կրնայ քիւրտերուն հեռու պահել հայերու վրայ յարձակումներ գործելու գայթակղութենէն: Եւ որովհետեւ կառավարութիւնը ինքն ալ միջոցներ ձեռք պիտի առնէ, որպէսզի շարժումը բարդ կերպարանք չստանայ, պէտք է աւելի եւս շեշտել ուրեմն դիւղական պահակներու կազմակերպման անհրաժեշտութեան վրայ: Այս կէտի շուրջ ուրեմն մենք անպայման պիտի գործակցինք կառավարութեան հետ:

բ.) Թէ կեդրոնի եւ թէ գաւառներու մէջ պէտք է ամէն անգամ շեշտել կառավարութեան մօտ թէ որքան օգտակար ու անհրաժեշտ է ավատական դրութեան ջնջումն եւ դիւղացիներուն սեփականատէր դարձնելը: Ընկերային այս յեղաշրջումով միայն կարելի է վերջ տալ արդի վտանգաւոր շարժումին: Ատով քիւրտ տարրը ազատուելով ճորտական վիճակէն, միշտ կը ձգտի մնալ պետական ամբողջութեան մէկ մասը. եւ եթէ ատկէ վերջն ալ քիւրտ ժողովուրդի մէջ տեղի ունենայ ոե-

ւէ շարժում, այդ կ'ըլլայ միմիայն ներքին կռիւ եւ բնաւ չի կրնար սպառնալ երկրի ընդհանուր շահերուն ու գոյութեանը:

գ.) Ծանօթացնել քիւրտ տարրը մեր ուղղութեան հետ եւ աշխատիլ, որ անոնք ալ ընդունին մեր տեսակէտները եւ դնեն նոյն ընդհանուր պահանջները:

դ.) Ամէն միջոց ձեռք առնել քիւրտ յարձակումներու առջեւ առնելու համար. իսկ մասնակի ընդհանրումներու պարագային ջանալ կղզիացնել զանոնք»:

Ուրեմն անակնկալներու առջեւն առնելու ու դիմադրելու միակ կերպը եղած է ու է ուժ տալ զինման ինքնապաշտպանութեան գործին. այդ գործը գլուխ պիտի հանէ միայն աշխատաւոր ժողովուրդը, որովհետեւ ուրիշ դասակարգէ յոյս չկայ: Լսեցէք թէ ինչ կը գրէ գործին մօտ եղող ընկեր մը. «Ես առանձնապէս հետաքրքրուեցայ հայ-պուրժուազիի կատարած դերով ինքնապաշտպանութեան համար. դուրս կու գայ, որ սանթիմ մը անգամ չեն տուած, Պօղոս փաշան բացարձակապէս հակառակած է, իսկ ուրիշներ ալ՝ փաշայի շուքին տակ թաղուած՝ ոչինչ չեն տուած: Եգիպտոս, ուր տարիէ մը աւելի միջկուսակցական հոսսոսական համերաշխութիւն կը տիրէր, մէկ դրուշ չէ հաւաքած ինքնապաշտպանութեան համար: Նոյնը եւ Պալքաններու մէջ: Միայն Ռուսաստանի պուրժուազին որոշ օժանդակութիւն տուած է: Իսկ Պոլսի մասին խօսիլն իսկ աւելորդ է»:

Ընկերներ, քառապատկեցէք ձեր ուժերը, պարտականութեան հրաւիրեցէք մասսան եւ ջանացէք որքան կարելի է շատ եւ շուտ տուրքի գանձումներ ընել ու մեզ փոխադրել, որպէսզի մենք ալ եղած պահանջներուն գոհացում տանք:

Գ.) Տրուած հաւաստիացումներուն վրայ յենուած կարող ենք ըսել, որ մօտ ժամանակէն նոր գործիչ ընկեր մը կ'ունենանք, փրփականտի գործը աւելի յաջող եւ բեղուն առաջ տանելու համար:

Ընկերական բարեկենդան  
Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Յ. Գ.- Ընկերներ, կը փափաքինք հետեւեալ կէտերը ձեր ուշադրութեան յանձնել:

1.- «Դրօշակ».— Ընկ. Ս. Վրացեան հետեւեալ ուշագրաւ տողերը կը գրէ «Դրօշակ»ի մասին. «Դրօշակ»ի նիւթականը խիստ աննախանձելի է. Պոլսէն դրամ չեն դրկեր. գլխաւոր աղբիւրը բաժանորդագրութիւնն է,

73.- Բժ. Յակոբ Զաւրիտ:





ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

այն ալ վերջին տարին շատ թոյլ է, հազիւ 1300 բաժանորդ ունին. Ամերիկայի մէջ երկու հարիւրի չի հասնիր, մինչդեռ անցեալ տարի չորս հարիւրէն աւելի էր: Ես բացատրեցի պատճառները, բայց, ի հարկէ, ատիկա խնդիրը չի լուծեր»:

Ուրեմն թերթը կանոնաւորապէս վարելու համար դրամի պէտք կայ: Կոմիտէները աշխատելու են մեր կեդրոնական օրգանը որքան կարելի է շատ տարածելու համար:

2.- Ըստ Ամերիկայի 20-րդ պատգամաւորական ժողովի՝ Կ. կոմիտէն երբեմն-երբեմն այժմէական կուսակցական քաղաքական նշանակութիւն ունեցող հարցացուցակներ ուղարկելու էր, որպէս վիճաբանութեան նիւթ. արդ՝ հետեւեալ հարցերը լուրջ եւ բազմակողմանի վիճաբանութեան ենթարկելով մեծամասնութեան հետ փոքրամասնութեան կարծիքն ալ մեզի դրկել հաճեցէք:

Հարցեր.—

Ա. Ի՞նչ է ձեր կարծիքը ընդունուած ռուս-գերմանական համաձայնագրին՝ բարենորոգումներու ծրագրի մասին: Պիտի իրականանայ՞ այդ ծրագիրը: Եթէ այո կամ ոչ՝ ինչո՞ւ եթէ պիտի իրականանայ, ի՞նչ հետեւանքներ կ'ունենայ:

Բ. Հաւանական կը գտնէ՞ք, որ Ռուսաստանը վերջ ի վերջոյ պիտի նուաճէ Հայաստանը: Ի՞նչ հիմունքներով այո եւ կամ ոչ. ի՞նչ վիսասներ եւ օգուտներ կը սպասէք ռուսական տիրապետութենէն:

3. «Հայրենիք»ի սեփական շէնքի խնդիր.— «Հայրենիք»ի այժմու տեղի երեք տարուան լիզը<sup>74</sup> լրացած ըլլալով, ստիպուած եղանք տարուան մը պայմանաժամով նոյն տեղը 750 տոլարի վարձել. 1915ի մայիսին կամ ամէնէն քիչը հարիւր տոլար աւելի վարձքով նորէն նոյն տեղը պիտի մնանք եւ կամ նոր տեղ պիտի վարձենք. արդ՝ որպէսզի միանգամ ընդ միշտ այս թափառական կեանքէն «Հայրենիք»ը ազատուի եւ երկու-երեք տարին անգամ [մը] տեղափոխութեան աւելորդ ծախսեր չըլլան, անհրաժեշտ է մնայուն բոյն մը ունենալը: Պոսթընի արուարձաններէն Իսթ Քէմպրիճի բնակութեան թաղերու սիքսթ<sup>75</sup> փողոցի մէջ դպրոցի համար շէնք մը

չինուած է, որ քսանչորս հազար տոլարի գնահատուած է (assessed), բայց դպրոցի անյարմար ըլլալուն ծախու հանուած է եւ կարելի պիտի ըլլայ 6-7 հազար տոլարի գնել շէնքը:

Շէնքը հաստատուն, կղմինտրէ շինուած է: 8200 քառակուսի ոտք գետին ունի: Ներքնայարկէն եւ ձեղնայարկէն զատ ունի երկու յարկ՝ չորսական սենեակով: Դիւրութեամբ կարելի պիտի ըլլայ առաջին յարկը տպարան, եւայլն համար գործածել, իսկ երկրորդ յարկը սրահի վերածելով վարձու տալ. մեր կարծիքով՝ շէնքը շատ յարմար է մեզի համար եւ շատ ալ շահաւոր պիտի ըլլանք. ահա թէ ինչու:

Ինչպէս ըսինք այժմ վարձքի կու տանք 750,00

Շէնքը առնելու պարագային եթէ մորթկէյճ<sup>76</sup> ունենանք 87000,00 5% կ'ընէ 350,00

Շէնքի ապահովագրութեան համար (մէկ տարուան) 12,00

Շէնքի թէքս<sup>77</sup> 140,00

Անմիջական շէնքի կահաւորման 100,00 602,00

Թէպէտեւ այլեւայլ ծախսեր ալ կան, բայց հիմա ալ կ'ընենք անոնք: Ինչպէս կը տեսնուի գուտ շահ կը մնայ 148,00\$: Բայց նկատի պէտք է առնել, որ շէնքը գնելու պարագային հազար տոլար կանխիկ պիտի վճարուի եւ մինչեւ յաջորդ մայիս շէնքը պիտի չհասագործուի: Արդ մեր վեցամսեայ հաշուեկշիռին հետ այս շէնքին խնդիրն ալ կը ներկայացնենք մեր կոմիտէներուն եւ կը փափաքինք անոնց լուրջ եւ տրամաբանող կարծիքները լսել:

5. Կոմիտէներու շատերուն քով կը գտնուին անցեալ տարիներու անդամադրոշմներէն, շուտով անոնք մեզի դրկեցէք:

6. Վերջերս նորէն գանգատներ կը լսուին թէ՛ կոմիտէներէ ոմանք գանազան նպատակներու համար վիճակահանութիւններու եւ նման ձեռնարկներու տոմսեր կ'ուղարկեն ուրիշ կոմիտէներու: Փորձերը ցոյց տուած են, որ այս կարգի ձեռնարկները ահագին դժգոհութիւններու տեղիք կու տան: Ուրիշ անգամ ըսած ենք ու կը կրկնենք, որ ռեւէ վիճակահանութիւն կամ այդ կարգի բնոյթ կրող գործ ընելու համար անպայման Կ. Կ.ի հաւանութիւնը առնուելու է:

74.- Լիզ, անգլերէն, վարձակալական պայմանագիր:  
75.- Վեցերորդ:  
76.- Գրաւ անշարժ կալուածի վրայ (պարտք):  
77.- Տուրք, հարկ:





Փաստ. 1402-68

**Բ 8.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 2**  
**Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԽՄԲԵՐՈՒՆ**

Յարգելի ընկերուհիներ,

Մեր թիւ 1 շրջաբերականին մէջ Հ.Յ.Դ. Կարմիր խաչի խմբերու դերի կարեւորութիւնը շեշտելէ եւ անոնց վերապահուած գործունէութեան լայն ասպարէզը մատնանշելէ վերջ երկու որոշ ուղղութեամբ գործելու թելադրած էինք, այսինքն՝ Ա. ինքնապաշտպանութեան, Բ. մեր նահատակ ու յեղափոխութեան ատեն վնասուող ընկերներու որբերու կրթութեան: Այս անգամ ձեզի կը ներկայացնենք Հայաստանի բիրոյի հետեւեալ առաջարկը եւ կը յուսանք, որ դրական պատասխան կը տրուի մեզի. «Երկու տարիէ ի վեր այստեղ մեր մօտ են Աղբիւր Սերոբի երկու զաւակները, ինչպէս նաեւ ուրիշ չորս սասունցի տղաներ, մեր նահատակ ընկերներու որդիներէն: Տեղական միջոցներով երկու տարի ապրեցան, բայց նկատելով, որ վերջերս բաւական դժուար եղաւ հայթայթել անոնց ուսման եւ թէ ապրուստի միջոցները, ձեր միջոցով կը դիմենք Ամերիկայի Կարմիր խաչի ընկերութեան խնդրելով, որ եթէ հնար է որդեգրեն Սերոբի տղաքը. իսկ միւսներուն համար ալ տարեկան որոշ օգնութիւն մը հասցնեն: Թէ Սերոբի եւ թէ միւս ընկերներու որդիները բոլորն ալ կը կարդան Նոր Սանասարեան դպրոցը:

Պիտի խնդրենք, որ մեր կողմէ դիմէք տեղւոյդ Կարմիր խաչին յաջողցնելու համար մեր առաջարկը»:

Յարգելի ընկերուհիներ, թէպէտեւ այդ նպատակին համար Կարմիր խաչի խմբերէ դրկուած գումար մը կայ մեր քովը, բայց բաղդատմամբ առաջարկին շատ փոքր է, եւ վստահ ենք, որ մեր հերոսներու որդիներու կրթութեան ու ուսման գործը թերի չի մնար մեր Կարմիր խաչերու խմբերու ջանքերով:

Կարմիր խաչի խմբերուն թիւը, որ այժմ կը հասնի տասնընկուորս բոլորն ալ իրարու հասցէներ ունին, կը թելադրենք, որ խմբերը մեկուսացած չգործեն միմիայն իրենց գաղութներուն մէջ, այլ յարաբերութեան մէջ մտնեն իրարու հետ, աւելի փորձառութիւն ունեցողները նորերու սովորեցնեն եւ միացեալ ուժերով ձեռնարկներ տեղի ունենան, ու Կարմիր խաչի խումբ չեղած տեղերու մէջ շարժում ստեղծել այդ ուղղութեամբ կազմակերպուելու համար:

Բազմահայ գաղութներու մէջ, օրինակ Պոսթըն, Ուստը եւ նոյնիսկ հեռաւոր Քալիֆորնիայի Ֆրեզնոյի

մէջ, ուր Հ.Յ.Դ. Կարմիր խաչի խումբ չկայ, շարժումներ սկսած են այդ ուղղութեամբ կազմակերպուելու. յոյս ունինք, որ տարին չբոլորած մեր Կարմիր խաչերու թիւը պիտի հասնի քսանի:

Կազմուած են հետեւեալ Կարմիր խաչի խմբերը:

A.R.F. RED CROSS  
P.O. Box 299 – Fitchburg, Mass.

A.R.F. RED CROSS  
Box 21 – Waukegan, Ill.

Ընկերական բարեւանքով  
Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՂՐ. ԿՈՄԻՏԵ

Յ. Գ.- Կը խնդրենք, որ հաճիք հետեւեալ հարցերուն պատասխանել, որպէսզի կարող ըլլանք Կարմիր խաչի խմբերու ճշգրիտ վիճակագրութիւն մը ունենալ, ինչպէս օրինակի համար ունինք կոմիտէներու համար:

- 1.- Ե՞րբ կազմուած է ձեր Կարմիր խաչի խումբը:
- 2.- Քանի՞ անդամուհիներ ունիք:
- 3.- Ի՞նչ են անոնց անունները: Քանի՞ տարեկան են:
- 4.- Ո՞ր ծնած են:
- 5.- Ե՞րբ Ամերիկա եկած են:
- 6.- Ի՞նչ գործով կը զբաղին:
- 7.- Անուսնացա՞ծ են թէ ոչ:
- 8.- Ուրիշ ռեւէ ընկերութեան կը պատկանի՞ն:
- 9.- Ե՞րբ Կարմիր խաչի անդամ եղած են:
- 10.- Ո՞ր, Երկիր թէ Ամերիկա:
- 11.- Տեղական կոմիտէին մէջ քանի անդամուհիներ ունիք:
- 12.- Բոլորն ալ գրել կարողալ գիտե՞ն:

Պոսթըն, Մէս. Օգոստոս 13, 1914





Փաստ 1402-78

**Գ 1.- Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ 21-ՐԴ ՊԱՏԳԱՍՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ  
(1914 Դեկտեմբեր 23-27)**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ի Հ Ա Ր Ց Ե Ր**

- 1.- Հաշուետուութիւն եւ տեղեկագիր կոմիտէներու, Շրջանային Խորհուրդներու, գործիչ ընկերներու, Կեդր. կոմիտէի, «Հայրենիք»ի հաշուեքննիչ եւ այլ մարմիններու կողմէ:
- 2.- Երկրի ինքնապաշտպանութեան ուժ տալու միջոցներ:
- 3.- Քաղաքական ներկայ մոմենտը եւ մեր դիրքը:
- 4.- Կամաւորներու հարց:
- 5.- Կուսակցական փոխ-յարաբերութիւններ.– Երկրի, Կովկասի եւ Պարսկաստանի մարմիններու հետ:
- 6.- Կուսակցական պրոպականտի միջոցներ:
- 7.- Գործիչներ – Շրջանները գործիչներով բաժնելու եւ զօրացնելու միջոցներ:
- 8.- Կուսակցական մամուլը եւ անոր տարածման միջոցներ («Դրօշակ», «Հայրենիք» եւ այլն):
- 9.- Ընկերներու ինքնագարգացման միջոցներ:
- 10.- Տեղական ուժերէ փրոփականտիստներ պատրաստելու միջոցներ:
- 11.- «Հայրենիք»ի վարչական եւ նիւթական բարելաւման միջոցներ –
  - Ա) Ներկայ սիստեմով գործը վարել, տարեկան որոշ պիւտճէ մը յատկացնելով առնուազն երկու տարի.
  - Բ) Առետրական բաժինը ծախել.
  - Գ) Ընկերական բաժնետիրական համագործակցութեան սիստեմով գործը վարել:
- 12.- «Հայրենիք»ի սեփական շէնքի գնման խնդիր  
– որքա՞ն նպատակայարմար կը գտնէք սեփական շէնք մը գնելը: Ո՞ւր:
- 13.- Հ.Յ.Դ. տեղական ինքնապաշտպանութեան միութիւններն ու մեր դիրքը անոնց հանդէպ:
- 14.- Կոմիտէներու համար միակերպ արձանագրութեան ու ելեւմուտքի տեսրակներու հարց:
- 15.- Միջկուսակցական համերաշխութեան հարց:
- 16.- 1915-ի կազմակերպական տուրքեր:
- 17.- Կոմիտէներու վերաքննուած կանոնագրի վերջնական փոփոխութիւն ու վաւերացում:
- 18.- Կարմիր խաչերու կանոնագրի փոփոխութիւն ու վաւերացում:
- 19.- Չնախատեսնուած հարցեր:
- 20.- Կ. Կ.ի եւ այլ մարմիններու ընտրութիւններ:





Փաստ. 1403ա-11

## Գ 2.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 1

### Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ

#### ԿՈՄԻՏԵՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Ընկերներ,

Հ.Յ.Դ. Ամերիկայի շրջանի 21րդ պատգամատրական ժողովը վերջացավ յաջողությամբ: Պատգամատրական ժողովը քննութեան առաջ մէջ տարուայ մէջ կուտակուած հարցերը եւ իր հեղինակատր որոշումները տուաւ գծելով այս տարուան գործունէութեան ծրագիր մը: Պատգամատրական ժողովը իր քուէով Կեդր. կոմիտէի ծանր պաշտօնը յանձնեց մեզի այս պատմական օրերուն: Յոյս ունինք, որ ձեր բոլորին աջակցութեամբ մեր ստանձնած պատասխանատու գործը լաւագոյն կերպով կը կարգադրենք:

Ընկերներ, չափազանց փափուկ ու անակնկալներով լի շրջանի մը մէջ է, որ գործի կը սկսինք: Մէկ կողմէն Հայ ազատագրութեան արդար կռիւն է որ կը մղուի, իսկ միւս կողմէ ռուս-թրքական պատերազմի պատճառով գրգռուած վիճակ մը ստեղծուած է հայաբնակ նահանգներու մէջ, որ կրնայ աղիտաբեր հետեւանքներ ունենալ:

Մեր մտահոգութեան գլխաւոր առարկան կը կազմէ Հայ ազատագրութիւնը, որուն սպաս պէտք է դնենք մեր բարոյական օժանդակութիւնը եւ թէ նիւթական նպաստը, ըլլայ հանգանակութիւններով ու տուրքով, ըլլայ հանդէսներով կամ այլ միջոցներով:

Համազգային վտանգի ու երկունքի այս պատմական օրերուն ամէն հայու բաղձանքն ու պահանջն էր, որ ոչ միայն քաղաքական կուսակցութիւններն այլեւ այլ կուսակցութիւններն իրարհասկացողութեան մը գային, համագործակցութեան յատկազօծ մը պատրաստէին, որպէսզի թէ առնելիք քայլերը իրար շխաշածեւէին եւ թէ արդիւնքը ըլլար պատուաբեր ու պատկառելի թէ՛ նիւթապէս եւ թէ բարոյապէս: Ու իբր այդ միւս երեք քաղաքական կուսակցութիւններու հետ իրարհասկացողութեանց եկած էինք հետեւեալ կէտերու շուրջ, այն է՝ 1) Օգնել այժմ իսկ երկրի մէջ կռուող խումբերու. 2) Չինեալ շարժում մը առաջ բերել, երբ կարելի ըլլայ դաշնակից պետութիւններու հաւանութիւնն ու աջակցութիւնը ստանալ. 3) Դիւանագիտական հետապնդումներ կատարել: Այս կէտերն որդեգրեցին նաեւ Ուստրի կեդր. վարչութեան ներկայացուցիչներն ու եկան յանձնախումբին միանալ, եւ Միջկու-

սակցական յանձնախումբը վերամկրտուեցաւ «Ազգային պաշտպանութեան Ամերիկայի յանձնախումբ» անունով: Նկատի ունենալով Կովկասի մէջ գոյութիւն ունեցող Ազգային բիւրոն ու անոր կողմէ պարենատրուող մարտական գունդերը, մենք առաջարկ ներկայացուցինք «Ազգային պաշտպանութեան Ամերիկայի յանձնախումբ»ին, որ, ա) հանգանակուած գումարին հարիրին յիսունը յատկացուի կովկասեան սահմանագլուխի վրայ կռուող խումբերուն. բ) այդ գումարը դրկուի ուղղակի Ազգային բիւրոյին: Յանձնախումբը բաւականացաւ միայն՝ ա) 25% յատկացնելու Կովկասին. բ) այդ գումարը դրկուի կաթողիկոսին, որպէսզի անիկա իւրաքանչիւր խմբակցութենէ մէյմէկ ներկայացուցիչ կանչէ՝ ու ըստ անոնց որոշման իր նպատակին յատկացնէ: Յանձնախումբի որոշումները ոչ միայն Կովկասի երեսին նետուած նախատիւք մըն էր, այլեւ հակահամերաշխական քայլ մը, ու մենք յենւած ընդհանուր գործի շահուն գործելու հրամայականութեան ու Ամերիկայի 21րդ պատգամատրական ժողովի որոշման, յունուար 8ին յանձնախումբին վերջնագիր մը դրկեցինք պահանջելով, որ,

1) Անմիջապէս հանգանակութեան սկսիլ, որոշելով գումարի առնուած կէտը դրկել Կովկաս, յատկացնելու համար հայ հողի վրայ կռուող հայ կամաւորներու անխտիր,

2) Դրամը դրկել Ազգային բիւրոյին, անկէ դուրս ուրիշ անհատի կամ մարմնի դրկելու առաջարկ նկատելով ոչ միայն անվստահութեան արտայայտութիւն մը հանդէպ համազգային վստահութիւն վայելող Ազգային բիւրոյին, այլեւ հակահամերաշխական :

3) Հանգանակուելիք գումարին միւս կէտը պահել, գործածելու համար երկրի ուրիշ վայրերու մէջ (իմանալ մասնատրապէս Կիլիկիա) յեղափոխական շարժում յառաջ բերելու: Իսկ, եթէ մինչեւ 1915 մարտ ամիսի վերջը կարելի չըլլայ առաջ բերել այդպիսի շարժում մը, մնացեալ կէտն ալ դրկել Կովկաս, հայ խումբերուն:

Միւնոյն ատեն, այդ առթիւ յունուար 10ին, խորհրդակցական ժողով մը գումարեցինք Կեդր. կոմիտէի անդամներէ, Նիւ Եորքի Շրջանային խորհուրդի ներկայացուցիչներէ, գործիչ, ատենախօս ու ուրիշ ընկերներէ եւ ընդարձակ կերպով քննութեան առնելով





### ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՐ

ստեղծում և կացութիւնը, հետեւեալ բանաձեւերը ընդունեցին:

#### ՄԱՍՈՒԼ

1) Համերաշխութիւնը խզելու դէպքին՝ անմիջապէս հրատարակել Մերոպ եպիսկոպոսի<sup>78</sup> Միջկուսակցական յանձնախումբին ուղարկած հեռագիրը, «Հայրենիք»ի առաջին երեսի վրայ եւ յայտարարել ամերիկահայ գաղութին, որ մեր յարաբերութիւնները խզուած են Միջկուսակցական յանձնախումբի հետ:

2) «Հայրենիք»ի յաջորդող համարներու մէջ հրատարակել Միջկուսակցական համերաշխութեան պատմութիւնը եւ ապա հրատարակել մեր այդ մարմնի ուղարկած վերջնագիրը:

3) Հրատարակել «Հայրենիք»ի մէջ փաստաթուղթեր՝ Ազգային բիւրոյի, կամաւորներու եւ այլ հարցերու մասին ամերիկահայ գաղութը գիտակ պահելու [համար] երկրի քաղաքական եւ ռազմական գործողութեանց հետ:

4) Խզման յաջորդող բանակիւններու ընթացքին անհրաժեշտ է պահել մամուլն իր բարձրութեան վրայ եւ քննադատել մեր հակառակորդները՝ փաստերու եւ ազգային շահերու վրայ հիմնուած:

5) Մամուլը իր բարձրութեան վրայ պահելու համար անհրաժեշտ է, որ Կեդր. կոմիտէն դիմէ մեր բոլոր կարող ընկերներուն աշխատակցելու «Հայրենիք»ին:

#### ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

1) Հրապարակային հանգանակութիւնները առաջ տանիլ Դաշնակցութեան ղեկավարութեան տակ, աշխատելով հնարաւոր եղած չափով չէզոք հասարակութեան համակրութեանն օգտուիլ:

2) Ընդունելով ըստ էության բացառիկ եւ կրիտիկական, յայտարարել մեր կոմիտէներուն, որ 1915ի հրապարակային հանգանակային ժողովներու մէջ հանգանակուած բոլոր դրամները (կուսակցական տուրքերն ալ մէջը հաշուած) պիտի ուղարկուին Կովկասի Ազգային բիւրոյին, յայտարարելով ամերիկահայ գաղութին, որ պատմական ներկայ վայրկեանին մենք չունինք կուսակցական ոչ մէկ գործ, այլ մեր գործը Համազգային է, եւ որ մենք կը դնենք մեր կուսակցութեան բարոյական եւ նիւթական աջակցութիւնը Ազգային բիւրոյի տրամադրութեան տակ:

3) Կեդրոնական կոմիտէն եւ «Հայրենիք»ը պէտք է աշխատին միջոց հանդիսանալու անհատներու եւ գանազան կրթական եւ այլ մարմիններու նուէրները փոխադրել կովկասեան Ազգային բիւրոյին<sup>79</sup>:

*Ծանօթ.- Կուսակցութեան ընթացիկ ծախքերի համար, 1914 տարւոյ հաշուոյն ստացուած բոլոր գումարները, պահուիլն այդ նպատակին համար:*

3) Կեդրոնական կոմիտէն եւ «Հայրենիք»ը պէտք է աշխատին միջոց հանդիսանալու անհատներու եւ գանազան կրթական եւ այլ մարմիններու նուէրները փոխադրել կովկասեան Ազգային բիւրոյին<sup>79</sup>:

#### ՊՐՈՊԱԿԱՆՏ

1) Հանգանակութեան ժողովներու մէջ մնալ միշտ բարձր եւ ուղղամիտ, շօշափել ազգային շահերն ընդհանրապէս, պարզել մեր տեսակետը ազգային ներկայ գործունէութեան վերաբերմամբ առանց ակնարկելու մեր հակառակորդներու մեղադրանքներուն եւ որքան հնարաւոր է խուսափիլ վիճաբանութիւններէ:

*Ծանօթ.- [Տեղեակ] պահել ընկերները կուսակցութեան ընդհանուր գործունէութեան հետ եւ տալ անհրաժեշտ ուղղութիւններ պրոպականտի վերաբերմամբ:*

«Ազգային պաշտպանութեան Ամերիկայի յանձնախումբ»ը փոխանակ մեր համեստ պահանջին պատասխանելու, իր ծանօթ «շրջաբերական»ով առանց մեր ներկայացուցիչներու ստորագրութեան հրապարակ կու գար, որով համերաշխութիւնը խզած կ'ըլլար: Իսկ մեր վերջնագրին միայն յունուար 15ին կը պատասխանէր, որ՝ ա) Յանձնախումբը հանգանակութեան գործին սկսած է արդէն. բ) 25 % միայն Կովկասին պիտի յատկացուի. գ) այդ գումարը պիտի դրկուի կաթողիկոսին միջոցով (որո՞ւ, բան չ'ըսեր). դ) երկրի մէջ տարբեր կողմեր (իմանալ Կիլիկիա) շարժում ստեղծելու ձեռնարկը միայն իրենց կողմէ կախում չունի. ե) «Հայրենիք»ի միջոցով հանգանակութեան արդիւնքը դնել յանձնախումբին տրամադրութեան տակ: Բնականաբար այդ տեսակ պատասխան մը, ընդհանուր գործին սիրոյն համար անընդունելի էր մեզի: Վերոյիշեալ համառօտ տեղեկութիւններէն ու «Հայրենիք»ի տուած լայն բացատրութիւններէն գիտէք, որ

78.- Թիֆլիսի առաջնորդ եւ նախագահ Ազգ. Բիւրոյի:

79.- Պէտք է արձանագրել որ 1914ի վերջերուն եւ 15ի առաջին ամիսներուն գաղութներու մէջ, յատկապէս Եգիպտոս, Պալեստինա եւ Ամերիկա, հրապարակային եւ մամուլ սուր վէճերու պայքարի եւ միջնադէպի ներքին պառակտումներու տեղի տուող երեսոյք դարձած էր թէ՛ համազգային ջանքերով հանգանակուած գումարները ինչ հասցէի պէտք էր ուղարկել. խնդիր էր նոյնպէս թէ այդ գումարներու որ համեմատութիւնը պէտք էր յատկացնել այս կամ այն նպատակին: Դաշնակցութեան համար հարցը պարզ էր. գումարներու կարեւորագոյն համեմատութիւնը պիտի ուղարկուէր Թիֆլիս՝ Ազգ. Բիւրոյին, յատկացուելու համար կամատրական գումարներու կարիքներուն: Միւս հատուածները, - Հնչակեան, Բարեգործական, Սահմանադիր-Ռամկավար-, համարելով որ Ազգ. Բիւրոն լրիւ Դաշնակցութեան հակակշիռն ենթակայ մարմին է, հակամէտ էին գումարին համեմատաբար մէկ փոքր մասը բաժին հանել կամատրներուն եւ, վերապահութիւն յայտնելով Ազգ. Բիւրոյի նկատմամբ, կը նախընտրէին գումարները փոխանցել Էջմիածնի կաթողիկոսին: Այսպէս թէ այնպէս, տազնապալի այդ օրերուն, լրջօրէն կը խախտէր այնքան բաղձացուած ազգային համերաշխութիւնը:



ամենքիս փափաքած համերաշխությունը մեր հակառակորդներու չկամութեան պատճառով վիժած է, ու անոնք հրապարակի վրայ ելած են Հայ ազատագրութեան անունով ժողովրդի լաւ զգացումները շահագործելու: Մեր պարտականութիւնն է եղած անցուդարձերը ժողովրդին բացատրել, ճշմարտութիւնը պաշտպանել ու Կովկասի Ազգային Բիւրոյի անունով, ի նպաստ Հայ ազատագրութեան հրապարակային ժողովներ ընել, թէ՛ մեր հակառակորդները կանխելու եւ թէ թոյլ չտալու, որ ժողովուրդը զոհ երթայ անոնց. ու իբր այդ՝ հրապարակային հանգանակային ժողովներու շարքի մը կարգադրութիւն ըրած ենք. յոյս ունինք, որ իւրաքանչիւր կոմիտէ, որ իր անունը «Հայրենիք»ի մէջ յայտարարուած կը տեսնէ, ամէն ջանք ի գործ կը դնէ եղած կարգադրութիւնը յաջողցնելու, ժողովի օրն ու բնոյթը չի փոխեր, անմիջապէս ժողովասարահի եւ իր յարակից խնդիրներու կարգադրութիւնները կ'ընէ, ու իւրաքանչիւր ընկեր արտակարգ գոհողութիւն կ'ընէ, որպէսզի *յաջողութիւն ունենանք*: Մրցում մըն է այս, որուն յաջողութենէն կախուած է ճշմարտութեան յաղթանակը ու Ամերիկայի դաշնակցական կազմի փրէս-թիժը:

Եղած կարգադրութիւնը բոլոր կոմիտէներու համար չէ. նկատի ունենալով որոշ վայրերու դժուարութիւնները, իրենց վայրի կոմիտէներուն ձգած ենք կարգադրութիւններ ընելը. հետեւաբար այն մօտակայ կոմիտէները, որոնց անունները «Հայրենիք»ի մէջ չեն յայտարարուած՝ ժողովի կարգադրութիւններ թող ընեն ու ատենախօսներու համար թերթին մէջ եղած ցանկն ու ատենախօսներու անունները նկատի առնելով մեզի դիմեն: Իսկ Ուէսթի<sup>80</sup> չյայտարարուած կոմիտէներու կարգադրութիւն պիտի ընէ ընկեր գործիչը:

Այս կարգադրութեամբ, զանազան կոմիտէներու դիտողութիւնները, որքան ալ արդար ըլլան, *գործն ու վայրկեանը* նկատի ունենալով, պէտք է եղածով գոհանալ: Շատ մը կոմիտէներ կ'առարկեն, որ եթէ նոր գործիչ մը մեզի չտրամադրուի, հրապարակային հանգանակային ժողով չենք կրնար ընել: Որքան ալ որ որոշ ճշմարտութիւններ ըլլան այդ տեսակէտին մէջ, այնուամենայնիւ հիմա ժողովուրդը գործով է հետաքրքրուած եւ ոչ թէ այս կամ այն ատենախօսող ընկերով, հետեւաբար առանց այս կամ այն ատենախօս ընկերոջ տրամադրուիլը նկատի առնելու *պէտք է հրապարակային հանգանակային ժողովներ* ընել, ուրիշ խմբակցութիւններ մեզ կանխելէ առաջ: Կոմիտէները պարտաւոր են հետեւեալ կէտերը նկատի առնել:

1) Որ, կոմիտէները հրապարակային հանգանակային ժողովներն առանձին պիտի ընեն եւ ոչ թէ ուրիշ քաղաքական խմբակցութեանց հետ:

2) Որ, կոմիտէները կրնան իրենց ղեկավարութեամբ՝ համակիր միութիւններու, ընկերութիւններու,

չէզոք յանձնախմբերու եւայլի հետ հրապարակային հանգանակային ժողովներ սարքել, պայմանով սակայն, որ արդիւնքն *ամբողջութեամբ* ու *անմիջապէս մեր միջոցով Կովկասի Ազգային Բիւրոյին* դրկուի:

3) Որ, կոմիտէները հրապարակային հանգանակային ժողովներու մէջ հանգանակութիւնները չփակեն, այլ հանգանակութիւնները շարունակելի ընեն ու յանձնախմբերու միջոցով դիմեն ժողովի չեկող ու հանգանակութեան չմասնակցող ազգայիններու:

4) Որ, ընկերներն իրենց 1915 տարուայ տուրքով կը մասնակցին հրապարակային հանգանակութիւններուն, արդիւնքն *ամբողջութեամբ, մեր միջոցով Կովկասի ազգային Բիւրոյին* դրկելու:

5) Որ, ընկերներն ըստ սովորութեան զգուշանան հրապարակային ու այլ ժողովներու ատեն վէճի տեղի տալէ:

6) Որ, կոմիտէները նոր անդամներու ունենալու պարագային, ամենախիստ քննութենէ վերջ միայն ներս պիտի ընդունին անոնք:

**ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Ըստ Ամերիկայի կոմիտէներու ներքին կանոնագրի յօդ. 62ի ծանօթութեան, *ամէն շրջան պարտաւոր է ունենալ իր Շրջանային խորհուրդը*: Բայց դժբախտաբար Պոսթընի Շրջանային ժողովը, որ զումարուեցաւ անցեալ տարի, հոկտեմբեր 4ին, նոր Շրջանային խորհուրդ մը չընտրեց: Արդեօ՞ք, քանի որ, ներքին կանոնագրի վերոյիշեալ յօդուածին համաձայն՝ *ամէն շրջան պարտաւոր է ունենալ իր Շրջանային խորհուրդը*, այդ մասին ի՞նչ կը խորհին Պոսթընի շրջանի կոմիտէները: Թէեւ մենք կ'ուզենք Պոսթընի շրջանի կոմիտէները Շրջանային ժողովի հրաւիրել, բայց նախքան այդ՝ իրենց կարծիքները կ'ուզենք իմանալ. հետեւաբար թող հաճին իրենց կարծիքները մեզի հաղորդել:

**ԱԶԱՏԱԳՐՈՒԹԻՒՆ**. Կովկասէն գործին մօտիկ ընկերոջ մը նոյեմբեր 19 նամակէն կը քաղենք հետեւեալը.— ----<sup>81</sup>

**ԿԱՍԱՒՈՐՆԵՐ**. Հակառակ անոր, որ մէկէ աւելի անգամներ յայտնեցինք մեզ դիմողներուն, որ ի պահանջել հարկին իրենց ուժերէն կ'օգտուինք, անոնք, ընկեր թէ համակիր, միեւնոյն յանկերգը կը կրկնեն.

80.- Ուէսթ – նկատի ունի Ամերիկայի արեւմտեան նահանգները, յատկապէս Քալիֆորնիան:

81.- «Կարեւոր ընկերը» Վրացեան Սիմոնն է, որուն յիշեալ նամակէն ամբողջովին քաղուած տեղեկութիւնները տառացիօրէն տրուած են «Ազատագրութիւն» ենթախորագրին տակ, որ կը գրուէ շրջաբերականին գրեթէ կէսը: Չեղչած ենք այդ ընդարձակ հատւածը, նկատի ունենալով որ Վրացեանի յիշեալ նամակը տրուած է արդէն Կամատրական շարժում գրութիւն տակ (էջ 158-160):



**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

«կամատր կ'ուզենք երթալ»: Ըստ պատգամատրական ժողովի որոշման, մինչեւ որ վերջնական հասկացողութեան մը չգանք մեր Կովկասեան մարմիններին հետ, այդ ուղղութեամբ ռեւէ գործնական քայլ չենք կրնար առնել: Հետեւաբար ռեւէ մէկը, որ կամատր կ'ուզէ երթալ, եթէ դիմումագիր լեցուցած չէ, թող լեցնէ ու մեզի դրկեցէք, իսկ եթէ լեցուցած է, պէտք է սպասէ մեր հրահանգներուն:

**ԳՐԱՄԻ ԱՌԱՔՈՒՄ.** Շատ մը ընկերներ մեզի դիմում կ'ընեն իրենց բնագաւառը<sup>82</sup> դրամ փոխադրելու համար: Կը ցաւինք որ մենք այդ տեսակ գործերով չենք կրնար զբաղիլ:

**ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ.** Պիտի ջանանք, որքան կարելի է շուտ պատգամատրական ժողովի որոշումներն ու հաշուեկշիռը տպել տալ ու դրկել:

**ԳԻՄՈՒՄՆԱԳԻՐ, ԱՆԳԱՄԱՏԵՏՐՆԵՐ ՈՒ ԱՆԳԱՄԱԴՐՈՇՄՆԵՐ.** Անդամատերներն ու անդամադրողները քիչ մը պիտի ուշանան, պարզ այն պատճառով, որ դիմումագրերը սպառած ըլլալով, ընկերներու վիճակագրութիւնը կատարեալ ընելու համար, նոր ձեւի դիմումագրեր կը տպուին, որոնք ընկերներու անուանացանկերու հետ անոնց դիմումագրերը լեցնելէ ու անուանացանկերը ճշդելէ ու վերադարձուելէն վերջն է միայն, որ անդամատերները պիտի դրկենք կոմիտէներուն:

**ԾՐԱԳԻՐ ՈՒ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ.** Ծրագիրն ու ներքին կանոնագիրը սպառած ըլլալով՝ նորերը տպուելուն պէս իւրաքանչիւր կոմիտէի բաւականաչափ կը դրկենք:

**ՓՈՍԹԻ ԵՒ ՏԱՆ ՀԱՍՑԷՆԵՐ.** Ապահովութեան համար անհրաժեշտ է, որ իւրաքանչիւր կոմիտէ *փոսթ օֆիսի* մէջ *պօքս*<sup>83</sup> ունենայ. իսկ տան հասցէ մը առանձնապէս մեզ դրկուիլն այն առաւելութիւնը ունի, որ ստիպողականութեան ու ռեւէ կոմիտէի ընկեր մը դրկելու պարագային՝ աւելորդ ժամավաճառութեան տեղի չի տրուիր:

«ՓԱՄՓՈՒՇՏԻ ԳՐԱՄԻ ԳԱՆՁԱՆԱԿՆԵՐ». Այն կոմիտէները, որ փամփուշտի դրամի գանձանակներէն մէկ կամ աւելի կը փափաքին ունենալ, թող հաճին մեզի իմացնել:

Յաջորդ շրջաբերականով կ'անդրադառնանք հեռացուածներու, հրաժարածներու եւ անդամակցողներու մասին:

Շատ մը կոմիտէներ դեռ անցեալ տարուան նամակներ, շրջաբերականներն ու այլ թղթերը չեն վերադարձուցած. փափաքելի է, որ 1914 տարուայ բոլոր նամակները, *շրջաբերականներն* ու այլ թղթերը՝ բացի անդամատերներէն մեզի վերադարձնեն: Իսկ այս տարուան շրջաբերականներն ըստ Ամերիկայի ներքին կանոնագրի յօդուած 41ի ծանօթութեան՝ կոմիտէի ժողովին մէջ կարդալէ ետք, անմիջապէս կը վերադարձուի Կեդր. կոմիտէին՝ յարձանագրութիւն:

Ընկերական բարեւերով  
**Հ.Յ.Գ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՂՐ. ԿՈՍԻՏԷ**

Յունուար 20, 1915, Պոսթըն

82.- Իմա՝ Հայաստանի մէջ իրենց ծննդավայրը կամ այն բնակավայրը ուրկէ գաղթելով եկած են Ամերիկա:

83.- Արկղ, փոստարկղ:





Փաստ. 1403-41

Գ 3.- ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻԷՆ ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆԻՆ

Պոսթըն, Մարտ 10, 1915

Միրելի ընկեր Աչք Եհովայի<sup>84</sup>,

Պուկարիայի միջոցով դրկուած քղթակցութիւններու երկու կապոցներն ու ներկակ տեղեկագիրները ստացած եմ եւ քղթակցութիւններու մէկ մասը սկսուած է հրատարակուիլ, իսկ մէկ մասն ալ յաջորդաբար կը հրատարակուի: Անոնց անհրաժեշտութեան մասին ոչ մէկ խօսք կ'ըսեմ, որովհետեւ անոնք, դուք ալ գիտէք, ներկայ օրերուն ո՛չ միայն «Հայրենիք»ի 5000 ընթերցողներուն, այլ ամբողջ ամերիկահայութեան սեւեռումին առարկան են:

Չեմ գիտեր թէ այս նամակս կամ իր պարունակութիւնը պիտի հասնի ձեզ թէ ո՛չ, որովհետեւ այս տեղ հասնող հեռագիրները Պոլսի մասին (բնակչութեան) մտահոգիչ հեռագիրներ կը հրատարակեն, բայց պարտականութիւն մը կատարած ըլլալու համար կը գրեմ, խորհելով թէ դուք ալ գոնէ քիչ մը կ'ուզէք մեր մասին լսել:

Ամենէն առաջ ըսեմ թէ՛ ձեր քղթակցութեան հաշիւներու մանրամասնութիւնը ինձ անձանօթ է, որովհետեւ ընկ. Վրացեան երբ կը մեկնէր, ինք պէտք չտեսաւ մանրամասնութիւններ ըսել, քանի որ շուտով վերադառնալու ծրագիրով կը մեկնէր: Իսկ այսօր ան ալ կապուած է այնպիսի գործի հետ որ անհրաժեշտ է մնալ գործին զուլխը եւ մենք նոյնիսկ չենք մտածեր քղթակցական հաշիւներով զբաղիլ, երբ այնքան շատ ու կարեւորագոյն գործեր կան տեսնելիք: Ներկայ տագնապալի օրերուն մէջ այնքան ալ մեծ շահագրգռութիւն չունին ինձ համար ամիս մը առջի կամ վերջի հաշիւները: Հետեւաբար այս նամակիս հետ կը գրեմ երկտող մըն ալ Սոֆիայի Կ. Կ.ին որպէսզի Բիւրոյին ըսէ ձեզ «Հայրենիք»ի հաշիւն վճարելու 15 ոսկի: Մնացած հաշիւը կրնանք նորէն կարգադրել:

Այստեղ թէն մենք պզտիկ ուժերով մնացինք, բարեբախտաբար Արսէնը եկաւ, որի այնքան պէտք ունէինք եւ սքանչելի գործ տեսաւ, սակայն, հպարտօրէն կրնանք ըսել թէ տեղային գործերը մեր ակնկալածէն ալ աւելի առաջ տարինք ու վերջին «համերաշխական» խաղըութիւններու մէջէն ճերմակ երես դուրս ելանք. ու այսօր քառեակ զինակցութեան պարտութիւնը եկաւ ամերիկահայութեան ամբողջ հաւատքը կապել մեզի: Մեր կոմիտէներու թիւը արդէն 90ը անցաւ, Կարմիր խաչերու թիւը՝ 30ը կ'անցնի եւ նորեր, թէ կոմիտէներ եւ թէ Կ. խաչեր, կը կազմակերպուին, իսկ երեկի տասնեակ անդամներով կազմուած կոմիտէներու անդամ-

ներու թիւերը 50-100-150-200 անդամներու կը հասնի:

«Հայրենիք»ը իր թիրաժը<sup>85</sup> բարձրացուց 5,000ի եւ այդ միայն Ամերիկայի մէջ կը սպառուի. դադրեցուցած ենք 600ի չափ թերթերը, որոնք միայն Թուրքիա կ'երթային, քանի որ տասնեակ թերթեր են որ Ատլանտեանը կը կտրեն:

Դժբախտութիւնը այն է որ գործերը կը կրկնապատկուին, իսկ լծուած մարդերը նոյններն են, որոնք ստիպուած են գիշեր ցերեկ աշխատիլ եւ շատ անգամներ անհնար են գործին հասնիլ: Այս պարագան որքան ալ որ ունի իր օգտակար մէկ կողմը, - հնարաւորութիւն ստեղծել ու տեսակ մը բռնադատելով որ ընկերները իրենց ուժերը մարզեն եւ ամբողջապէս նուիրուին գործին, - բայց միս կողմէ ալ անոնք շատ շուտ կրնան յոգնեցնել:

Ամերիկայի մէջ Դաշնակցութեան դէմ շատ տգեղ պայքար սկսան, բայց արդիւնքը աննպաստ եղաւ իրենց: Մեր հանգանակութիւններու գումարը 100,000 տոլարի մօտեցած է, իսկ հանգանակութիւնը թէ սիստեմաֆիք եւ թէ դաստիարակիչ ընելու համար «Հայ ազատագրական տուրք» անունով տետրակներ ու դրոշմներ հանեցինք, որոնք ցրուած են ժողովուրդին մէջ եւ վստահաբար քանի մը տասնեակ հազարներ կ'ակնկալենք մինչեւ աշուն, երբ մեր հանգանակութիւններու նոր շարքին կը սկսինք: Եթէ Ամերիկայի տնտեսական տագնապը եւ անգործութիւնը չըլլային վստահաբար քառորդ միլիոն տոլար կրնային հանգանակել:

Կամաւոր երթալու անդիմադրելի պահանջ կայ. մեր ընկերներէն շատեր իրենց անձնական րիսքով գացին, իսկ մենք կը սպասենք հրահանգի: Մենք չկրնալով դէմ երթալ այդ անգուսպ փափաքին, կը մտածենք խումբ մը դրկել իր ամբողջութեան մէջ. - զինուոր, սպայ, բժիշկ, հիւանդապահուիլի - եւ այդ այն կրկնակ առաւելութիւնը պիտի ունենայ որ թէ կամաւորները գոհացած պիտի ըլլան եւ թէ ամերիկահայութիւնը սիրով պիտի ուզէ իր ամերիկահայ խումբի ամբողջ հոգերը ստանձնել բացի իր հանգանակութիւններէն:

Այս թռուցիկ քանի մը տողերը կը գրեմ այն հաւատքով թէ՛ անոնք իրենց շահագրգռութիւնը ունին ձեզ համար:

Որոշ է թէ հայութիւնը արիւնի պարտք ունի տակաւին տալիք, բայց գոնէ 95ի<sup>86</sup> պարտքին պէս չվճարէ այդ պարտքը:

Չեր քղթակցութիւնները շարունակեցէք ամէն առիթով որ կրնաք. շաբաթական երկու թիւ մէջ կը հրատարակեմ ձեռքիս տակ եղածները:

Մահի ու կեանքի պայքարի մէջէն ընկերօրէն կ'ողջագուրեմ ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ

84.- Աչք Եհովայի - գրական ծածկանունը Ռուբէն Զարդարեանի, որ այդ անունով կ'աշխատակցէր (Պոլսէն) Ամերիկայի «Հայրենիք» թերթին: Շահան Նաթալին անդամ էր խմբագրութեան:

85.- Տպարանակը:

86.- Ակնարկութիւն 1895ի համիտեան կոտորածներուն:





Փաստ. 1403ա-13

## ԽԻՍՏ ԳԱՂՏՆԻ

### Գ 4.– ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 2 Հ.Յ.Դ. ԱՍԵՐ[ԻԿԱՅԻ] ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻ

#### ԿՈՄԻՏԷՆԵՐՈՒ ՀԱՍՄԱՐ

Ընկերներ,

Հայ կամատրական գնդերու գործունեությունն ալ աւելի ակներև եւ բեղմնատու դարձնելու համար, միտք յղացուած է տասնեակ մը օդանաւ վարողներ եւ անթել հեռագիր գործածողներ պատրաստել: Ու իբր այդ, այս շրջաբերականը կը դրկենք կոմիտէներուն, որպէսզի հաճին հետագայ հարցերուն, որքան կարելի է շուտ ու մանրամասն պատասխանել, հնարատրութիւն տալով մեզի, որ ներկայացուած թեկնածուներէն ամենայարմարագոյններուն պատեհութիւններ ստեղծենք վերոյիշեալ միտքն իրականացնելու:

Անհրաժեշտ է որ կոմիտէները խիստ զաղտնի պահեն շրջաբերականին մէջ շօշափուած հարցերը: Ընկերներէն զատ ոչ ոք զիտնալու է:

Ա) Ձեր կոմիտէն քանի՞ ընկերներ օդանաւ կառավարել սորվելու թեկնածու են:

Բ) Ձեր կոմիտէն քանի՞ ընկերներ անթել հեռագիր գործածել սորվելու թեկնածու են:

Գ) Թեկնածուներն անգղերէն գրել, կարդալ լաւ գիտե՞ն: Ամերիկան կամ քանադական քաղաքացի՞ են:

Դ) Թեկնածուներն ի՞նչ տեսակ կրթութիւն առած են, միջա՞կ թէ բարձրագոյն: Ի՞նչ դպրոցներ աւարտած են:

Ե) Թեկնածուները մեքենականութենէ կը հասկնան: Եթէ այո, ո՞ր սորված են:

Ձ) Թեկնածուները քանի՞ տարեկան են: Ամուսնացա՞ծ են: Ընտանիքներնին Ամերիկայի մէջ են:

Է) Թեկնածուները քանի՞ տարիներէ ի վեր դաշնակցական են:

Ընկերական բարեւերով  
Հ.Յ.Դ. ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Ապրիլ 3, 1915, Պոսթոն Մեսս.







Փաստ. 1403ա-14

### Գ 5.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 3 Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ

#### ԿՈՄԻՏԵՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Ընկերներ,

Բաւական ատենէ ի վեր երկրի՝ Հայաստանի կացութեան մասին գրեթէ ոչինչ հաղորդած էինք: Ինչպէս արդէն գիտէք, համաշխարհային պատերազմի առթիւ՝ էն քաղաքակրթութեան ու հաղորդակցութեան ամենազիւրկին միջոցներն ունեցող երկիրները նոյնիսկ հաղորդակցութեան ու յարաբերութեան դժուարութիւններ ունին, ալ ո՞ր կը մնայ կէս-նահապետական երկրի մը միջոցները, այն ալ այսպիսի պայմաններու մէջ, բայց այսուհանդերձ, շնորհիւ մեր կազմակերպութեան տարիներու փորձառութեանց, միջոցներու ու մարմիններու բազմաթուփեան ի վիճակի ենք երկրի կացութեան մասին տեղեկութիւններ ստանալ: Այս անգամ ձեզի կը ներկայացնենք Երկրի Բարձրագոյն Մարմնի\*\*\* հատուածի նամակը, որ թէեւ քիչ մը ուշ հասած, այնուամենայնիւ մեր վաթանին ճշգրիտ վիճակը կը նկարագրէ:

«Վանէն, Մուշէն եւ Կարինէն դեկտեմբեր 26 թուակիր նամակներ կան, որոնց բովանդակութիւնը յայտնում ենք ձեզ»<sup>87</sup>:

\*  
\*\*

Ինչպէս կը տեսնէք անշնորհ կառավարութիւնը բացառիկ ու սխաթմաթիւք միջոցներով հայ տարրը սպառելու ետեւէ է, եւ որպէսզի իր գործն աւելի դիւրանայ՝ ժողովրդի դեկավարները — Դաշնակցականները — այլեւայլ պատրուակով կ'ուզեն երկրէն հեռացնել եւ կամ անոնց տները խուզարկելով վերահսկողութեան ենթարկել: Այնուամենայնիւ մեր ընկերները տրակոնական<sup>88</sup> այդ միջոցներուն առջեւ իսկ չեն ընկճուիր, «ինքնապաշտպանութեան գործը առաջ տանելով եւ միառմի թուելով կառավարութեան ձեռք առած աչառու վերաբերմունքը հայերու հանդէպ եւ ցոյց տալիս որ, վերոյիշեալ պատճառներով հայերի մէջ ռեւէ վստահութիւն չէ մնացել դէպի կառավարութիւնը եւ այդ բոլորը զուտ ինքնապաշտպանողական երեսոյքներ են»:

Հ.Յ.Դ. Դաշնակցութիւնը, հայկական ազատագրութիւնը դարձնելու իր պատմական միսիոնը<sup>89</sup> կատարե-

լու գործին մէջ է. իր բոլոր ուժերը տրամադրած է Կովկասի հայկական զնդերուն, որոնց կատարած գործի մասին եւրոպական մամուլը գովեստով խօսեցաւ, ռուսական զինուորականութիւնը իր հիացմունքը յայտնեց ու կովկասահայր խմբերու ու յարակից պէտքերու համար երկուքուկէս միլիոն բուրձի պիւտճէ որոշեց: Միեւնոյն ատեն երկրի մէջ ինքնապաշտպանութեան գործը կարելի եղած չափով առաջ կը տարուի անակնկալներու առջեւ ժողովուրդը պաշտպանելու համար...: Այդ նպատակաւ անցեալ շաբթու փոխադրեցինք Երկրի Բարձրագոյն Մարմնին ----ի<sup>90</sup> հատուածին հազար հինգ հարիւր տոլար: Հեռագրի մը ի պատասխան այս շաբթու փոխադրեցինք նաեւ հինգ հազար տոլար: Մարտական կազմակերպութիւնը, գիտակ իր դերին, ու վստահ իր վերջնական յաղթանակին, հակառակ իր հակառակորդներու ճղճիմ, կուսակցամոլ, անհայավայել, անժամանակ ու փրովաքաթէօր<sup>91</sup> ընթացքին, որոնք հայրենիքի վտանգի, կեանքի ու պայքարի այս օրերուն բիւզանդական ոգիով<sup>92</sup> տարուած են, կը գործէ ժողովրդով, ժողովրդին հետ ու ժողովրդին համար: Ապրին Քրիստափորները, Սիմոնները ու նմանները, որոնք քաղաքական հայրութեան ներկայ շարժումները հիմնադրեցին: Ապրին Անդրանիկները, Դրոնները եւ նմանները, որոնք հայ գէնքը անմահացուցին:

Կեցցէ ապագայ ազատ հայրութիւնը:

Կեցցէ մարտական կուսակցութիւնը:

ԿԱՄԱԻՈՐՆԵՐ.— Մտադրած ըլլալով կամաւորական խումբ մը զրկել Կովկաս, անհրաժեշտ է, որ կոմի-

87.- Շրջաբերականը այնուհետեւ ընդարձակ քաղուածքներով կը ներկայացնէ՝ վերոյիշեալ վայրերէն ստացուած՝ սպանութիւններու եւ այլ բռնութեանց եւ համատարած քալանի վերաբերող տեղեկութիւնները, որոնք, ըստ սովորութեան, Պալքանի Կ. կոմիտէի միջոցաւ կը փոխանցուէին արտասահմանեան շրջաններուն: Այդ բոլորը մանրամասնօրէն տրուած ըլլալով արդէն (տես էջ 207-208) կը գեղչենք շրջաբերականի այդ բաժինը:

88.- Խիստ, դաժան:  
89.- Առաքելութիւնը:  
90.- Այլապէս՝ Հայաստանի բիւրոյի Պոլսոյ հատուածին:  
91.- Գրգռիչ:  
92.- Մին, ունայն:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

տէները վերահսկեն ու ատենին կամաւորական դիմումները լեցնող ընկերները նկատի առնեն հետեւեալ կէտերը ու անմիջապէս բժշկական մանրամասն քննութիւն անցնելով, բժշկական մանրամասն վկայականնին, ամէնէն ուշը մինչեւ մայիս 9ին մեզի դրկեն, որ ըստ այնմ հարկ եղածը կարգադրենք: Այս կարգադրութեան մասին ընկերները խիստ գաղտնապահ ըլլալու են.—

1. Նախապէս կամաւորական դիմումները լեցնող ընկերներն անպատճառ իրենց անձնական ծախքով վկայեալ բժիշկի մը մանրամասն քննութեան ենթարկուելու են, բացատրելով իրենց նպատակը, որպէսզի ըստ այնմ քննութիւնը կատարէ եւ վկայականը տայ, որուն մէջ յիշուած պիտի ըլլան թեկնածուն տեսողութեան, իմացականին, այլ խօսքով ֆիզիքականի ու բարոյականի մասին:

2. Բժշկական վկայականները մեզի հասնելուն ու վերջնական ընտրութիւն ըլլալէն վերջ, կանչուելու պահուն իւրաքանչիւր կամաւոր գինուորական կարգապահութեամբ, ոչ ոքի ըսելով, որոշեալ օրը, որոշեալ ժամուն, որոշեալ վայրը ներկայ գտնուելու են:

3. Որոշեալ վայրը հասնելէ վերջ, նախքան ճամբորդութեան սկսիլը, բժշկական վերջնական քննութիւն մը եւս կը կատարուի Կեդրոնական կոմիտէի կողմէ, որմէ վերջ կամաւորական թեկնածուներու վերջնական ընտրութիւն կը կատարուի: Հետեւաբար Կեդրոնական կոմիտէինն է վերջին խօսքը: Կամաւորական թեկնածուները պէտք է այդ նկատի առնեն եւ ըստ այնմ քայլեր առնեն:

4. Բժշկական քննութեան, երթեւեկութեան եւայլն բոլոր ծախքերը, իրենք՝ կամաւորական թեկնածուները կ'ընեն:

**ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՏՈՒՐՔ**

«Ազատագրութեան տուրք»ի ամէնէն առաջ զրկուած տետրակներուն վրայ մոռցուած էր «Հրապարակ դրուած Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդրոնական կոմիտէի կողմէ»նը: Ներփակ կը ստանաք յատուկէն պատրաստուած կտրօններ: Հաճեցէք տետրակներուն վրայ փակցնել, որպէսզի մեր կողմէ հրապարակ դրուելը յայնի ըլլայ: Միեւնոյն ատեն իւրաքանչիւր տրուած տետրակի վրայ առնողին անունն ու թիւ գրելու է: Տետրակները կը մնան միշտ առնողներուն քովը: Ամսէ ամիս՝ ամսական տուրքի վճարումի համապատասխանող դրոշմներ կը տրուին: Տուրքի վճարումի տեւողութիւնը բնական է կախում ունի «Ազատագրութեան տուրք»ի տետրակը առնողէն: Բայց փափաքելի է, որ տուրքի վճարումը

տեւէ այնքան ատեն, որքան ազատագրութեան կռիւները կը տեւեն:

Ձեռնարկը ժողովրդականացնելու եւ կարելի եղածին չափ տետրակներ սպառելու համար թիւ 2 շրջաբերականին մէջ մատնանշուած չէզոք յանձնախմբեր կազմելէ զատ, հրապարակային եւայլ ժողովներու մէջ հրապարակ հանեցէք եւ մասնաւորապէս չէզոք դասակարգին պնդեցէք, որ իբրեւ պարտականութիւն գէթ առնուազն մէկական հատ առնեն:

**ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԵԱՆՅ ՅԱՆԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ.**— Նկատի ունենալով կարգ մը կոմիտէներու կրկնակի դիմումները, որոնք կը փափաքէին իրենց հանգանակութիւններուն ցանկը հրատարակուած տեսնել «Հայրենիք»ի մէջ, Կեդրոնական կոմիտէս որոշած է հրատարակել, բոլոր կոմիտէներուն հանգանակութեանց ցանկը, պայմանով, որ իւրաքանչիւր կոմիտէ իր հանգանակութեան գումարներն ամբողջովին գանձած ըլլայ, համաձայն «Հայրենիք»ի մէջ արդէն յայտարարուած գումարին:

Այն կոմիտէները, որոնք ժողովներու մէջ կամ դուրսը հանգանակուած գումարներու համապատասխան ցանկ չեն զրկեր կամ ապառիկներու ցանկ կը զրկեն, այսպիսի կոմիտէներու զրկած ցանկերը նկատի չեն առնուիր:

Արդ՝ անհրաժեշտ է, որ բոլոր կոմիտէներն կարելի եղածին չափ շուտ իրենց ցանկերը փութացնեն՝ վերոյիշեալ պայմանները անպայման նկատի առնելով, որպէսզի ցանկերը սկսինք հրատարակել:

**ԴՐԱՄԻ ԱՌԱՔՈՒՄ ԱԶԳ. ԲԻՒՐՈՅԻՆ**

Ինչպէս գիտէք, երկրորդ անգամ ըլլալով հեռագրով քսան հազար տոլար եւս փոխադրած ենք Ազգային Բիւրոյին, որուն ստացումի պատասխանը առնելուս, ուրիշ քսան հազար մը եւս պիտի փոխադրենք. ու որպէսզի կարող ըլլանք այդպէս ընել յաջորդաբար, անհրաժեշտ է, որ բոլոր ապառիկներն անմիջապէս գանձուին ու անպայման ամէնէն ուշը մինչեւ մայիս 15ը մեզի հասնին:

Միեւնոյն ատեն, կոմիտէներու ուշադրութիւնը կը հրաւիրենք 1914ի յետնեալ ու ապառիկ հաշիւներու վրայ, որոնց գանձումը նոյնքան անհրաժեշտ է, որովհետեւ այդ գումարներով է, որ երկրի ինքնապաշտպանութեան պահանջներուն գոհացում պիտի տանք:

**ԴԻՄՈՒՄՆԱԳԻՐ.**— Հակառակ մեր կրկնակի դիմումներուն, որ կոմիտէները փութացնեն նոր դիմումները՝ բոլոր ընկերներէ լեցուած՝ վերադարձնել, այնուամենայնիւ դեռ կարգ մը կոմիտէներ կը դանդաղին: 1915ի անդամատետրները ունենալու համար անհր-





րաժեշտ է, որ դիմումագրերը փոխարին:

Բոլոր կոմիտեներու դիմումագրերը չունենալնուս պատճառով, չկրցանք, դժբախտաբար, նոր ընկերներու ճշգրիտ թիւը հաղորդել: Միայն այսքան ըսենք որ կուսակցութիւնը օրըստօրէ աւելի կը ժողովրդականանայ եւ խոր արմատներ կը ձգէ ժողովրդի խաւերուն մէջ: Կոմիտեներու թիւը 94 է, Կարմիր խաչերունը 32:

Դիմումագրերը վերադարձնելու ատեն պէտք չէ անոնք ծախել. պէտք է յարմար պահարաններու մէջ գետեղուած վերադարձնել, այլապէս դիմումագրերը կը կոտորին:

**ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ**

Կարգ մը կոմիտեներէ գանգատներ կը հասնին, որ փորձառու ու կարող ընկերները կը դժկամակին Գործադիր Մարմնի անդամ ըլլալ: Այդ տեսակ ընկերներու բռնած դիրքին կը զարմանանք: Իւրաքանչիւր դաշնակցական ընկերոջ պարտականութիւնն է, կոմիտէի մը կողմէ տրուած պարտականութիւնը կատարել, այն ալ այսպիսի պատմական օրերուն, երբ ամէն ընկեր ինքնաբերաբար կարելին ընելու է կազմակերպական գործերն յաջողութեամբ իր ուսերուն վրայ տանելու: Գործադիր եւ այլ պատասխանատու մարմնի անդամ ընտրելու համար միշտ պէտք է նկատի առնել Ներքին կանոնագրի 10-րդ եւ 35-րդ յօդուածները:

**ՀԱԳՈՒՍՏԵՂԷՆՆԵՐ.**— Կովկաս ապաստանող փախստականներու համար հաւաքուած հագուստեղէն-

ները պէտք է պատրաստ ունենալ, որպէսզի մօտերս «Հայրենիք»ի մէջ ցոյց տրուած հասցէին ղրկուին, հոն կեդրոնացնելու՝ Կովկաս փոխադրելու եւ նպատակին յատկացուելու համար:

— Հ.Յ.Դ. կուրծքի զինանշաններն ու վզկապի գնդասեղները սպառած ըլլալուն, նորեր ապսպրուած են, որոնք պատրաստուելուն՝ պահանջող կոմիտեներուն կը ղրկենք:

— Այս շրջաբերականին հետ կը ստանաք 1914ի պատգամաւորական ժողովի արձանագրութիւնը, Կ. Կ.ի, «Հ[այրենիք]»ի հաշուեկշիռներն ու կոմիտեներուն հասցէները:

Ընկերական բարեկենդանով  
**Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ**

Ապրիլ 20, 1915  
Պոսթըն, Մէս.

Յ.Գ.- Վերջին պահուն դառնակսկիծ ու ահռելի հեռագիր մը ստացանք, որ Արձէշ (Վանի նահանգ) կոտորած տեղի ունեցած է եւ շուկներ կան, որ ընկերներ Արամ եւ Վռամեան կախուած են<sup>93</sup>:

Հեռագրեցինք Կովկաս ստուգումներ կատարելու եւ մանրամասնութիւններն իմանալու: Պատասխան ստանալնու օրը օրին կը տեղեկացնենք ձեզի:

93.- Վռամեանի եւ Արամ Մանուկեանի կախուած ըլլալու մասին տարածայնութիւնները, ճիշդ չըլլալով հանդերձ, բոլորովին անհիմն չէին: Արդարեւ Ապրիլ 2-3ի գիշերը, ընդառաջելով Վանի կուսակալ Գետեթի բաղձանքին, Իշխան կ'ուղեորուի Շատախ հայերու եւ քիւրտերու միջեւ խաղաղութիւն հաստատելու համար, Հայոց Չորի Հիրճ գիւղին մէջ դաւադրաբար կը սպաննուի իրեն ընկերացող երեք մարտիկներով: Ապրիլ 4-ին, խորհրդակցութեան

պատրուակին տակ Գետեթ իր մօտ կը հրաւիրէ Արամ Մանուկեանն ու Վռամեանը. վերջինս առանձին կը ներկայանայ, իսկոյն կը ձերբակալուի եւ քիչ ետք կը սպաննուի անորոշ վայրի մը մէջ: Գալով Արամ Մանուկեանի, Կ. կոմիտէի ներկայ շրջաբերականի գրութեան ժամանակ (Ապրիլ 20, իսկ հին տոմարով՝ Ապրիլ 7) ան կը գլխաւորէր իրօքիատական բռնակալութեան դէմ ըմբոստացած Վան-Վասպուրականի հերոսամարտը:







Գ 6.- ԱԶԳԱՅԻՆ ԲԻՒՐՈՅԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ  
Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵԻՆ

Թարգմանությունը.-

Թիֆլիս Դեկտ. 26 [1914] – Փաստարան Միերան Սվազրի հասցեին, պատճենը «Հայրենիք»ի խմբագրության, Պոսթըն Մաս. (Հայրենիք հրատարակչական ընկ., 7 Պեննեթ փողոց):

Թիֆլիսի Ազգային Բիւրոն կը գործէ կաթողիկոսի հաւանութեամբ – կը մասնակցին բոլոր կուսակցութեանց ներկայացուցիչները – Պատուոյ նախագահը եւ եւ – Յարութիւնեան՝ նախագահ – Խատիսեան՝ փոխ նախագահ – Բիւրոն կազմակերպած է չորս խումբեր, որոնք կ'ունենան փայլուն յաջողութիւններ – Բիւրոն պէտք ունի մեծ գումարներու – կը խնդրենք Ամերիկայի հայրենակիցներէն օգնել մեզի, որամ որկելով որամատան միջոցով:

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ



Թարգմանությունը.-

Թիֆլիս 16 [Մարտ 1915] – Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէին, Պոսթըն.– Ստացուած 47061 ռուբլի 11 կոպէկ – Շնորհակալութիւն յանուն կամատրներու եւ [Ազգային] Բիւրոյի:

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

THIS SYSTEM OF MESSAGE TRANSMISSION IS NOT TO BE USED FOR THE TRANSMISSION OF LONG MESSAGES. THE MESSAGE SHOULD BE TRANSMITTED IN SHORT SENTENCES. THE MESSAGE SHOULD BE TRANSMITTED IN SHORT SENTENCES. THE MESSAGE SHOULD BE TRANSMITTED IN SHORT SENTENCES.





Փաստ. ՍՎ. 144-37

Ք 7.- ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՆԱԳԻՐ

<b>ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՆԱԳԻՐ</b>	
1.— ա) Թեկնածուի տնունն ու մականունն:	.....
2.— Քանի՞ տարեկան է:	.....
3.— ա) Ծննդամուրթ	.....
բ) Նահանգ	.....
գ) Քաղաք	.....
դ) Գիւղ	.....
4.— ա) Ե՞րբ Ամերիկա եկած է:	.....
5.— ա) Ի՞նչ դործով կարողի՞.	.....
բ) Պարտք ունի՞.	.....
գ) Ո՞րքան.	.....
դ) Պարտատէրերու հետ հասկցողութեան եկած է:	.....
6.— ա) Ամուսնացած է:	.....
բ) Քանի՞ դուստկ ունի.	.....
գ) Քանի՞ տարեկան:	.....
7.— ա) Կինն ու զուգահեռը ո՞ւր են.	.....
բ) Քաջաո՞ղջ են.	.....
գ) Աղբերու միջոցներ ունի՞ն.	.....
դ) Ի՞նչ միջոցներ:	.....
8.— ա) Ծնողք ունի՞.	.....
բ) Քանի՞ տարեկան.	.....
գ) Քաջաո՞ղջ են.	.....
դ) Ո՞ւր են.	.....
ե) Աղբերու միջոցներ ունի՞ն.	.....
զ) Ի՞նչ միջոցներ:	.....
9.— ա) Եղբայրներ, քույրեր ունի՞.	.....
բ) Քանի՞ հաս.	.....
գ) Քանի՞ տարեկան.	.....
դ) Ո՞ւր են.	.....
ե) Քաջաո՞ղջ են.	.....
զ) Աղբերու միջոցներ ունի՞ն.	.....
է) Ի՞նչ միջոցներ:	.....
10.— ա) Ունի՞ կուսակցութեան կզատկանի՞.	.....
բ) Ո՞ր:	.....
11.— ա) Կարգաւ գրեւ զիտէ՞.	.....
բ) Ի՞նչ լիզուններ:	.....
12.— ա) Զինավարժութիւն գիտէ՞.	.....
բ) Զինամուսնութիւն գիտէ՞.	.....
գ) Զինագործութիւն գիտէ՞:	.....
13.— ա) Մարտական խմբերու մասնակցած է:	.....
բ) Ե՞րբ.	.....
գ) Որո՞ւ հրամանատարութեան տակ:	.....
14.— ա) Որո՞ւ միջոցներով (ճանապարհածախս եւայլն)	.....
կուղէ երթաւ. Ի՞ր թէ կազմակերպութեան.	.....
բ) Եթէ իր՞ ո՞րքան դրամ ունի:	.....
<p>Ինքնարեւարար ու իմ կամքովս կամաւոր գացող մըն եմ:</p> <p>Վերողբեալ տեղեկութիւններուն ճիշտ ըլլալուն կերպում ու կատարադրեմ: Այլ կերպ հաստատուելուն անձնապէս պատասխանատու եմ:</p> <p>Թեկնածուի ստորագրութիւնը . . . . .</p> <p>Թեկնածուի մնայուն հասցէն . . . . .</p> <p>Քաղաք . . . . .</p> <p>Թւական . . . . .</p> <p>Մեր ներկայութեամբ լիցւած է վերոյիշեալ զիմումնադիրն ու կատարած բժշկական քննութիւնը: Կվաւերացնենք անոնք՝ աւելցնելով, որ յիշեալի նկարագիրը . . . . .</p> <p>ու . . . . .</p>	







Գ 8.- ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹԻՒՆ

## Medical Examination

OF

---

**An Applicant for Appointment in the Military Service.**

Age \_\_\_\_\_ years. Birthplace \_\_\_\_\_

Occupation \_\_\_\_\_

---

<p>1. A. State exact weight, <span style="font-size: 2em; vertical-align: middle;">}</span> Stripped.</p> <p style="margin-left: 100px;">B. Height,</p> <p style="margin-left: 100px;">C. Chest measurement.</p> <p>2. Is the respiring murmur clear and distinct over both lungs?</p> <p>3. Is the character of the respiration full, easy and regular?</p> <p>4. Are there any indications of disease of the organs of respiration or their appendages?</p> <p>5. Is the character of the heart's action uniform, free and steady?</p> <p>6. Are its sounds and rhythm regular and normal?</p> <p>7. Are there any indications of disease of this organ, or of the blood vessels?</p> <p>8. Is the sight good?</p> <p>9. Is the hearing good?</p> <p>10. Is the applicant subject to cough, expectoration, difficulty of breathing, or palpitation?</p> <p>11. Are the functions of the brain and nervous system in a healthy state?</p> <p>12. Has the brain or spinal cord ever been diseased?</p> <p>13. Is there evidence of any disease of the kidneys, as shown by an examination of the urine?</p> <p>14. Has the applicant any predisposition, either hereditary or acquired, to any constitutional disease, such as phthisis, scrofula, rheumatism, cancer, insanity?</p> <p>15. Does the applicant display any evidence of having, or of having had, syphilis?</p> <p>16. Does the applicant display any evidence of having, or of having had gonorrhoea?</p> <p>17. Has the applicant been ruptured?</p> <p>18. Has he varicose veins?</p> <p>19. Is there evidence of successful vaccination?</p> <p>20. What are his habits as to use of stimulants and tobacco?</p> <p>21. Is the applicant in your opinion physically fit to fill the position of soldier, and to endure the exposure incident to such a position?</p> <p>22. Do you recommend his appointment for military service?</p>	<p>1. A. _____ Lbs.</p> <p>B. _____ ft. _____ inches.</p> <p>C. At forced expiration _____ inches, on full inspiration _____ inches.</p> <p>2. _____</p> <p>3. _____</p> <p>4. _____</p> <p>5. _____</p> <p>6. _____</p> <p>7. _____</p> <p>8. _____</p> <p>9. _____</p> <p>10. _____</p> <p>11. _____</p> <p>12. _____</p> <p>13. _____</p> <p>14. _____</p> <p>15. _____</p> <p>16. _____</p> <p>17. _____</p> <p>18. _____</p> <p>19. _____</p> <p>20. _____</p> <p>21. _____</p> <p>22. _____</p>
---	---

I certify that I have made a careful physical examination of the person above named, an applicant for appointment for the Military Service, and I recommend that he be appointed.

Dated, \_\_\_\_\_ 191\_\_\_\_\_

Address \_\_\_\_\_ M. D,





### ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

**Աբաղյան** (զորավար) – 165, 169, 184, 190:  
**Աբգրի Մեծի** – 228  
**Աբելյան Ն.** – 179:  
**Աբխազի** – 180:  
**Աբովյան Սարգիս** – 307:  
**Աբովյան Գեորգ** – 139:  
**Աբխազների Համայնակ** – 165:  
**Արտակարգ Գործեր (Թորոս)** – 192, 208, 211, 217, 220, 222, 237, 365:  
**Ակնունդի (Մարտիկան Խաչատուր)** – 5, 35, 79, 94, 96-99, 101, 102, 110, 111, 123, 126, 129, 131, 133, 136, 139, 141, 152, 157, 188, 194, 196, 200, 201, 205, 206, 210, 216, 219, 247, 250, 259, 384:  
**Ահարոնյան Ալեքսի** – 34, 35, 91, 194, 202, 245, 246, 250, 253, 254, 258, 374, 380, 383, 390:  
**Աղբարյան Նիկոլ** – 158, 162, 169, 171, 177, 184, 185, 195, 216, 218:  
**Աղբար Սերոբ (Վարդանյան)** – 412:  
**Ամիրյան Գրիգոր** – 346:  
**Ամիրխանյան Յ.** – 179, 195:  
**Ամսեան Տիգրան** – 130, 201:  
**Այվատեան Սահակ Արք.** – 307:  
**Անդրանիկ (Պարոյր, Օզանյան)** – 98, 99, 137, 142, 144, 150, 152, 153, 155, 158, 161-164, 168, 169, 172, 174, 178, 182, 185, 187, 190, 191, 194, 195, 202, 203, 206, 213, 255, 286, 304, 390:  
**Աշտարակեցի Ներսէս Արք.** – 247:  
**Ապաճեան Մամբրէ** – 225:  
**Ապտիւլ Համիտ Բ.** – 3, 290:  
**Ապտիւլ Ռեզաք** – 40, 164, 288, 290:  
**Ապտիւլ Քատէր** – 289:  
**Աջեմեան Մ.** – 159:  
**Առաքելեան Համբարձում** – 195:  
**Ասրիսեան Բաղդասար** – 176:  
**Ատրունի Արամ** – 83:  
**Արամայիս (Տէր Դանիէլեան Միսաք)** – 183, 263, 364:  
**Արարատեան Սարգիս** – 36-39, 78, 89, 99, 109, 123, 158, 177, 213, 253, 390, 392, 400, 402:  
**Արզումանեան Միշա** – 179, 183:  
**Արզումանեան Ստեփան** – Տես Խաչիկեան Տիգրան:  
**Արէշեան (զորավար)** – 76:  
**Արիստակէս քհն. (Սողոմոնյան)** – 211, 224, 237:  
**Արղունի Յովսէփ (Իշխան)** – 144, 191, 195:

**Արմէն Գարո (Փաստրմաճեան)** – 44, 45, 54-57, 69, 84, 86, 88, 91, 94, 98, 110, 123, 135, 136, 153, 158, 161, 165, 166, 169, 174, 184-186, 190, 195, 201, 203, 206, 213, 224, 237, 252, 389, 401, 402, 404, 408:  
**Արտաշէս – Տես Բաբայեան Արտաշէս:**  
**Ալեքսիս Ալօ (Կիզեան)** – 164, 169, 390:  
**Աֆրիկեան Տ.** – 195:  
**Բաբայեան Արտաշէս** – 163, 186:  
**Բաղարթեօխեան Միքայէլ** – 165:  
**Բալաբէգեան Գրիգոր** – 176:  
**Բաղդասարեան Տիգրան** – 298:  
**Բարատով** – 180, 181:  
**Բարձիլացի** – 249, 258:  
**Բարսեղեան Սարգիս (Շամիլ)** – 69, 73, 77, 94, 97, 98, 100, 101, 110, 123, 137, 201, 215, 216, 219, 387, 389:  
**Բեկստոն Նոէլ** – 253:  
**Բերար – Տես Պերար Վիկտոր:**  
**Բերբերեան Մ.** – 185, 189:  
**Բերիման** – 169, 178, 179, 180, 190:  
**Բեքիր Սամի պէյ** – 289:  
**Բիծա** – 240:  
**Բիստրաուտի** – 249, 258:  
**Բշարէ Չաթօ** – 236, 240, 296, 301:  
**Բոնոմի** – 249:  
**Բորսարէլի** – 250:

**Գալլի** – 249, 250, 258:  
**Գալուստեան Խ.** – 380, 397:  
**Գանթարեան Մելիք** – 225:  
**Գասապեան Աշոտ** – 382:  
**Գասըմ բէյ** – 236:  
**Գարակէօգեան Վ.** – 240:  
**Գարեգին Խաժակ** – 94, 96, 97, 110, 152, 188, 196, 201, 202, 214, 250, 259, 384:  
**Գարեգին Նժդէհ** – 152, 157, 354:  
**Գալաֆեան Արտաշէս (Պետրոս)** – 111, 212:  
**Գիսակ – Տես Սերենկիլեան Յովհաննէս:**  
**Գիրս** – 402, 409:





Գիւլիանդանեան Աբրահամ – 123, 171, 179, 195:  
Գրէյ Էդուարդ – 256-258:  
Գրիգորեան Յովհաննէս – 176:

**Դ**աշնակցական Խեչօ (Ամիրեան Խաչատուր) – 144, 153, 158, 161, 165, 169, 187, 202, 203, 206, 213, 267, 271, 273-276:

Դաստակեան Աբրահամ – 34, 35:  
Դարալագեազցի Տէր Գրիգոր – 155:  
Դարբինեան – Տես Զիլինգիրեան Արտաշէս:  
Դաւթեան Յոնան – 246, 249:  
Դուրեան Ղեւոնդ Արք. – 203:  
Դրօ (Դրաստամատ Կանայեան) – 144, 133, 154, 158, 161, 163, 165, 168, 169, 182, 187, 195, 202, 203, 206, 213, 252:

**Ե**ապոն – Տես Պարոնեան Յովհաննէս:  
Եկարեան Արմենակ – 297, 298:  
Եղիայեան Զաւէն (պատրիարք) – 36, 69, 87, 399:  
Եղևուֆեան Յովհաննէս – 250, 389:  
Երեմեան Ե. – 140:  
Երեցեան Ռափայէլ – 287, 289:  
Եփրեմ (Դաւթեան) – 269, 275, 278:

**Զ**արդարեան Ռուբէն – 96, 98-102, 111, 123, 136, 137, 188, 201, 205, 206, 208, 217, 384, 418:  
Զաւարեան Սիմոն – 35, 69, 73, 94-96, 98, 99, 103, 140, 146, 374, 378, 382, 383, 389-391:  
Զաւրեան Յակոբ – 33, 34, 36, 40, 54-57, 73, 77, 88, 94, 95, 99, 100, 123, 153, 158, 161, 169, 173, 178, 191, 213, 384, 392, 401, 402, 410:  
Զեմլեակ (Նանումեան Յար.) – 165, 174, 187:  
Զմրուխտեան Խաչիկ – 352:  
Զուլալ (Կարապետեան Լեւոն) – 164, 214:  
Զօհրապ Գրիգոր – 34, 68, 102, 108:  
Զօրեան Բարթող (Ժիրայր) – 95, 96, 188:  
Զօրեան Ստեփան – Տես Ռոստոմ:

**Է**մին Մեհմէտ – 11, 19, 236, 296, 303:  
Էնվեր – 5, 181, 189, 212, 221, 230, 295:  
Էմեր աղա – 236, 296, 301:

**Թ**ագլորեան Պետրոս – 192, 352:  
Թադէոսեան Ստեփան (Սամսոն) – 144, 158, 161, 169, 213:  
Թալէաթ – 5, 34, 35, 59, 73, 79, 84, 98, 101, 107, 108, 135, 136, 139, 141, 219, 243, 290, 309, 383, 409, 410:  
Թահսին պէյ – 45, 208, 230, 236, 240, 244, 286, 289, 290, 294, 295, 300, 365:  
Թաղիանոսեան – 185:  
Թափառական – Տես Եփրեմ:  
Թերլեմէզեան Միհրան (Վանիկ) – 98-100, 110, 111, 211, 293, 294:  
Թիրեաքեան Հայկ (Հրաչ) – 69, 94, 188, 219, 384, 389:  
Թորլաքեան Միսաք – 315:  
Թորոս – Տես Ալոյեան Գալուստ:  
Թորոսեան Արամ – 225:  
Թումանեան Յովհաննէս – 179, 195:  
Թոքաճեան Վահէ – 111, 192, 201, 208, 240:

**Ժ**իրայր – Տես Զօրեան Բարթող:

**Ի**բրահիմ աղա – 135:  
Իգնատիեւ – 184:  
Իզզէթ փաշա – 289:  
Իհսան փաշա – 213:  
Ինճեճիկեան Աւետիս (Աւտօ) – 111:  
Իշխան (Պօղոսեան Նիկոլ) – 110, 201, 207, 220, 244, 286, 294, 297, 304, 390, 422:  
Իպրահիմ էֆէնտի – 17:  
Իսմայիլ Հաքքը բէյ – 289:  
Իւզբաշեան Ռ. – 38:  
Իւտենիչ – 174:

**Լ**ամբրիոյա – 249:  
Լեաբով – 151, 200:  
Լեբետինսկի – 174:  
Լեւոն բէգ – 176:  
Լեփսիոս Եոհան – 34, 198, 297:  
Լէօ (Բաբախանեան Առաքել) – 184, 185, 195:  
Լըժին – 58:  
Լիախով – 172:  
Լոնգէ – 254:  
Լոռեցեան – 181:  
Լունկեւիչ Վալերիան – 250, 254:  
Լուցցատի Լուիջի – 249, 258:





**Խ**ալիլ բէյ – 73, 102, 107, 108, 228, 243:  
 Խալիլ չաւուշ – 21:  
 Խալիֆա Սելիմ – 91:  
 Խանպէկեան – 382:  
 Խաչատուրեան փրոֆ. Աստուածատուր – 69, 97:  
 Խաչատրեան Մինաս (Խաչագոր) – 272, 273, 280:  
 Խաչիկեան Տիգրան (Արզուման) – 45, 111, 141, 142, 177, 187, 188, 199-201, 204, 215, 218, 238, 357, 358:  
 Խատիսեան Ալեքսանդր – 158, 174, 175, 179, 180, 193, 195, 423:  
 Խարբուլիեան – 79, 132, 382:  
 Խետաուբով – 180:  
 Խոսրովեան Ճ. – 83:  
 Խորէն եպս. Մուրատբէգեան – 160:  
 Խոնոնուց Յովսէփ – 179, 195, 197:  
 Խուրչիդ աղա – 227, 296

**Կ**աթակ Առաքել (Ապաճեան Տիգրան) – 287:  
 Կարապետեան Արմենակ – 165:  
 Կարճիկեան Խաչատուր – 123, 179:  
 Կերճիբով – 220:  
 Կէօզեան Գրիգոր (Պուլկարացի) – 294, 297, 298:  
 Կիւրճեան Մելքոն (Հրանդ) – 94, 98-101:  
 Կոբոյեան Յ. – 195, 384:

**Հ**աճի Եաղուպ – 287:  
 Համազասպ – Տես Սրուանձտեանց Համազասպ:  
 Համասփիւռեան Խորէն – 176, 185:  
 Համբարձումեան Կոստի – 173, 176, 179, 185, 298, 299:  
 Հայր-Աբրահամ – Տես Սահակեան Աւետիք:  
 Հանրմեան Արտաւազդ – 111, 136, 187:  
 Հանուամեան Արտեմ – 165:  
 Հանրի (գնդապետ) – 91, 401:  
 Հասան Բիգա – 35:  
 Հասսօ Իպրահիմ – 15:  
 Հիլմի պէյ – 84, 192, 208, 211, 217, 220:  
 Հիւսէին փաշա – 288, 290:  
 Հիւսիսեան Վ. – 111, 240:  
 Հօֆ – 4, 33, 131, 136, 138, 141, 294, 401, 402, 407, 408:

**Ղ**ազարեան Ար. – 179:  
 Ղազարեան Գ. – 179:  
 Ղազարեան Գէորդ – 111:  
 Ղազարեան Միսաք – 38, 211, 232, 234, 246, 309:

Ղազարոսեան Ղազարոս (Մարգպետ) – 69, 96, 97, 99, 157, 200, 202:  
 Ղարիբ – Տես Ահարոնեան Աւետիս:  
 Ղուկասեան Յովհաննէս – 225:

**Ճ**ավէր պէյ – 401:  
 Ճաւիտ պէյ – 34, 88:  
 Ճելալ պէյ – 226, 241:  
 Ճեմալ փաշա – 37, 108, 238:  
 Ճեմիլ – 11, 19:  
 Ճեւտէթ պէյ – 11, 295, 296, 422:  
 Ճիտէճեան Գ. – 296:

**Մ**ազմանեան Լեւոն – 223:  
 Մալենոֆ – 235:  
 Մալէգեան Վահան – 88:  
 Մալիար բէյ – 290, 291:  
 Մալիաս – (Յովսէփեան Արտաշէս) – 101, 140, 202:  
 Մալումեան Խաչատուր – Տես Ակնունի:  
 Մակ-Դոնալդ – 254:  
 Մահմէ – 11, 13, 21, 288:  
 Մանուկեան Արամ – 85, 110, 123, 207, 220, 222, 231, 244, 286, 289, 294-297, 304-307, 390, 422:  
 Մանուկեան Հմայեակ – 286, 294, 297:  
 Մանտելիթամ Անտրէյ – 32:  
 Մանտինեան (բժիշկ) – 173, 182, 184:  
 Մաշուրեան – 202:  
 Մատթեան Յովսէփ – 44, 54, 57, 83, 84, 86, 88, 93, 399, 404:  
 Մատինեան Ս. – 169:  
 Մարանեան Մարուքէ – 111:  
 Մարգպետ – Տես Ղազարոսեան Ղազարոսեան:  
 Մեժլումեան – 182:  
 Մելիք-Թանգեան եպս. – 183:  
 Մելիք-Սարգսեան Համբարձում – 271, 373, 274:  
 Մելիք-Քեարամեան – 182:  
 Մելքիսէտէբով – 176:  
 Մեծատուրեան Գ. – 83, 93, 399:  
 Մեհմէդ Ալի Շահ – 262, 267-269, 273, 274:  
 Մեմալիկ – 135:  
 Մեսրոպ եպս. – 158, 160, 179, 180, 183, 193, 197, 415, 423:  
 Մերճանօֆ Գրիգոր – 205:  
 Միլիկով – 187, 191, 214, 218:  
 Մինախորեան Վահան – 111, 131, 136, 139, 201:  
 Մինասեան Խաչատուր (Վրճին) – 267, 271, 272:  
 Մինասեան Ղուկաս – 151, 205:  
 Մինասեան Սարգիս (Արամ-Աշոտ) – 208, 217:  
 Միշլայեակի – 174, 179, 180, 182-184, 189:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

Միտհաթ Շիւքրի – 107:  
 Միր Մհէ – 11, 17, 35, 288, 295:  
 Միրզայեան (Տերվիշ) – 355:  
 Միրոյեան Արմենակ – 176:  
 Միւնիսկ – 222, 231, 296:  
 Միքայէլեան Արսէն – 130, 132, 196, 201, 204, 206, 372, 402, 407, 418:  
 Միքայէլեան Քրիստափոր – 358, 389:  
 Մկրտիչեան Յովհաննէս – 165:  
 Մոլլա Սելիմ – 93:  
 Մոլլա-Մէխ – 401:  
 Մոսկոֆեան Գարեգին (Ճերմակ) – 355:  
 Մոստիչեան Յարութիւն – 55, 56:  
 Մուսա պէյ – 236, 288, 289, 303:  
 Մուստաֆա աղա – 15:  
 Մուրատեան Ա. – 382:  
 Մուրատ Սեբաստացի (Խրիմեան) – 326, 327, 390:  
 Մուրատեան Սանատրուկ – 355:

**Յ**ակոբեան Մատթէոս – 206, 217, 352-354, 357, 358:  
 Յակոբեան Սիմէոն – 291:  
 Յարութիւնեան Աղեքսանդր – 165:  
 Յարութիւնեան Առաքել – 173, 176:  
 Յարութիւնեան Մարտիրոս – 111:  
 Յարութիւնեան Սամսոն – 158, 174, 178-181, 190, 191, 195, 423:  
 Յովհաննէսեան Գրիգոր – 352:  
 Յովհաննէսեան Մարտիկ – 352, 359:  
 Յովհաննիսեան Ա. – 38, 39:  
 Յովհաննիսեան Յովսէփ – 111, 127, 128, 149, 150, 261:

**Ն**ազարեանց Լիպարիտ – 228, 232, 242, 259, 347, 400, 402:  
 Նազարէթ Չառուշ – 140, 142, 201:  
 Նազրմ բէյ – 289:  
 Նալբանդեան Հայկազուն – 220:  
 Նաճարեան Տիգրան – 176:  
 Նաճի պէյ – 5, 133, 135, 139, 207:  
 Նարինեան Սիմէոն (Մնար) – 89, 109, 130, 196, 247, 372, 374, 378, 390, 391, 398:  
 Ներկարարեան Եղնիկ վրդ. – 296:  
 Ներսէսեան Արշակ (Սեպուհ) – 144, 153, 158, 163, 164, 178, 187, 202, 203, 206, 213, 390:  
 Նժդէհեան Արշակ – 225:  
 Նիկողայ Բ. – 247:  
 Նիկողայեւ (զօրավար) – 182, 184, 305:  
 Նիկողայեւ (բժիշկ) – 172:  
 Նիկոլ Դուրման (Տէր Յովհաննիսեան) – 34, 358, 389, 390:

Նիկոլօֆ – 200:  
 Նորատունկեան Գաբրիէլ – 88:  
 Նորատունկեան Սերովբէ – 44:  
 Նուպար Պօղոս – 4, 33, 34, 36, 37, 40, 55, 56, 88, 108, 109, 258, 410:

**Շ**ահան Նաթալի – 195, 418:  
 Շահխաթունեան Ա. – 123, 172, 179:  
 Շահպազ Բարսեղ – 37-40, 55, 57, 59, 89, 98, 109, 208, 217, 390:  
 Շահրիկեան Յարութիւն – 94, 96-98, 110, 188, 196, 201, 205, 206, 210, 219, 221, 347:  
 Շաղոյեան Լեւոն – 294, 297, 298:  
 Շամիլ – Տես Բարսեղեան Սարգիս:  
 Շաւարշ – 179, 183:  
 Շաքիր – 35, 288, 289, 295:  
 Շերիֆ – 40:  
 Շերիֆ փաշա – 131:  
 Շեքէթ Մահմուտ փաշա – 9:  
 Շեֆիք պէյ – 296:  
 Շիւքրի պէյ – 13, 17, 295:  
 Շուջա-էդ-Տովլէ – 262:

**Ո**ւսուլ Խեչօ (Կարապետեան Խաչ.) – 183:

**Չ**աթոյեան Մ. – 294:  
 Չանկայեան – 298:  
 Չաչեան Ստեփան – 178:  
 Չեթօ Եաշար – 11, 19:  
 Չերնով – 254:  
 Չերնոզուբով – 163, 164, 172, 174, 178, 179:  
 Չէլիֆէշիկեան Արշակ – 225:  
 Չէլիֆէշիկեան Համբարձում – 225:  
 Չէրքէզ աղա – 236, 296, 301:  
 Չէօկիւրեան Յովհաննէս – 205:  
 Չէօկիւրեան Տիգրան – 205:  
 Չթչեան Ասքանազ – 79:  
 Չիլինգիրեան Արտաշէս – 89:

**Պ**աթմայեւ – 175:  
 Պալասանեան Յովսէփ – 225:  
 Պալոյեան Մինաս – 111:  
 Պանտիկեան Պօղոս – 225:







Պապաճանեան Միքայէլ – 178, 185, 190, 191, 404:  
 Պատրմաճեան Սեդրակ – 222, 224, 228, 237:  
 Պարոնեան Երուանդ – 355:  
 Պարոնեան Յովհաննէս (Եպոն) – 165, 174, 187:  
 Պարոնեան Պարոյր – 153, 192, 209, 352, 353:  
 Պեհաչատրին Շաքիր – 5, 133, 134, 139, 211:  
 Պետոյեան Մեսրոպ – 79:  
 Պերար Վիկտոր – 34, 37-40, 91, 99, 105, 219, 248, 409:  
 Պերխոլա – 214:  
 Պիչոն – 34:  
 Պոլեան Մճօ – 111:  
 Պոյաճեան (երեսփոխան) – 79:  
 Պոյաճեան Համբարձում (Մուրատ) – 68:  
 Պոնափարթեան Խ. – 327:  
 Պոչկէզնեան Արթին – 79:  
 Պորոչին – 174:  
 Պրեսանսէ Ֆրանսիս – 105, 254:  
 Պրժեվալսկի – 167:  
 Պօղոսեան Ս. – 195:  
 Պօղոս Նուպար փաշա – Տես Նուպար Պօղոս:

**Ջ**ամալեան Արշակ – 158, 213, 216, 218:  
 Ջանլաթ – 179, 183:  
 Ջեւտէթ – Տես Ճեւտէթ:  
 Ջնդի (Բարունակեան Կարապետ) – 222, 223, 240:

**Ռ**աշիդ (Բանեւ) – 157:  
 Ռոստոմ (Չօրեան Ստեփան) – 5, 73, 74, 78, 83, 84, 86, 90, 110, 111, 123, 133, 136, 137, 151, 152, 157, 160, 187, 191, 192, 196, 199, 201, 204, 205, 211, 214, 216, 218, 219, 221, 222, 231, 236, 246, 248, 250, 252-255, 258, 286, 304, 306, 389:  
 Ռուբէն Ասքանազ – 272, 274, 276, 277:  
 Ռստիկեան Ա. – 373:  
 Ռստիկեան Գ. – 374, 375, 378:

**Ս**ազանով Սերգէյ – 34, 59, 159, 191, 384, 409:  
 Սալահետտին – 13:  
 Սահակեան Աւետիք (Հայր Աբրահամ) – 123, 159, 179, 180, 191, 195:  
 Սահակեան Խոսրով – 165:  
 Սամուէլ – Տես Համբարձումեան Կոստի:  
 Սամսոն – Տես Թադէոսեան Ստեփան:  
 Սայիտ Հալիմ – 33:  
 Սանտալ Մ. – 398:  
 Սանտերզ Լիման Ֆոն – 5, 43:

Սապահ-Գիւլեան – 131, 347:  
 Սատրմ պէյ – 236, 296, 303:  
 Սարգիսեան Համբար – 225:  
 Սաւեկցի (գորավար) – 65:  
 Սաւֆէթ պէյ – 11:  
 Սեղբոսեան Լեւոն – 185:  
 Սեմպա – 254:  
 Սեպուհ – Տես Ներսէսեան Արշակ:  
 Սերենկիւլեան Յովհաննէս (Վարդգէս, Գիսակ) – 57, 68, 69, 84, 86, 92, 97-99, 133, 136, 205, 206, 211, 219, 243, 404:  
 Սերոբեան Մուշեղ (Գանձակեցի) – 165:  
 Սէիտ Ալի – 13, 287, 288, 290:  
 Սիլիկեան Մովսէս (գորավար) – 299:  
 Սիրունեան Գրիգոր – 186:  
 Սիրունի (Ճոլոլեան Յակոբ) – 96:  
 Սինիք (Աւետեան Բագրատ) – 182:  
 Սմբատ (Բորոյեան) – 163, 178:  
 Սմիլօ – 164:  
 Սնարեան – Տես Նարինեան Սիմէոն:  
 Սոննինօ – 250:  
 Սուվորով – 184:  
 Սուրէն վարդապետ – 93:  
 Սպենդիարեան Յ. – 180, 195:  
 Ստեփանեան (բժիշկ) – 185, 195:  
 Ստեփանեան Ստեփան (Բալաջան) – 212:  
 Սրապեան Կորիւն վրդ. – 224:  
 Սրենց (Սարգիս Գլուճեան) – 101:  
 Սրուանձտեանց Համազասպ – 35, 55, 96-99, 111, 144, 153, 161, 163, 167-170, 175, 187, 190, 195, 206, 213:

**Վ**ալարեան Վալադ – 158, 169, 213:  
 Վահաբ – Տես Վռամեան Արշակ:  
 Վանայ Սարգիս – Տես Բարսեղեան Սարգիս:  
 Վանկենհայմ – 198:  
 Վաչեանց Աստուածատուր – 291:  
 Վարանդեան Միքայէլ – 6, 34, 40, 55, 69, 91, 94, 98, 110, 123, 137, 139, 172, 189, 196, 214, 218, 220, 229, 231, 232, 234, 235, 245-247, 249, 250, 253, 256-259, 383, 384, 389, 390:  
 Վարդանեան – 111:  
 Վարդան Խանասորի (Մեհրաբեան Սարգիս) – 102, 137, 144, 151, 169, 178-180, 182, 183, 185, 186, 190, 201, 203, 206, 216, 259, 390:  
 Վեստենենկ – 4, 33, 56, 57, 131, 402, 407:  
 Վիգէն – Տես Ջաւրեան Յակոբ:  
 Վիլեամս – 253:  
 Վնուկով – 180:  
 Վռամեան Արշակ (Վահաբ, Դերձակեան Օննիկ) – 5, 36, 38, 40, 68, 87, 98, 100, 110, 123, 127, 133, 135, 136, 153, 201, 202, 205-207, 219, 220, 222, 228, 230, 231, 237, 244,





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

252, 286-289, 291-297, 300, 303, 304, 386, 389, 391, 392, 396, 422:

**Վրացեան Սիմոն** – 6, 36, 89, 99, 109-111, 123, 129, 132, 139, 145, 151-153, 158, 160, 168, 170, 171, 179, 189, 191, 192, 195, 196, 201, 208, 214, 217, 247, 358, 372, 380, 388, 390, 391, 398, 402, 407, 409, 410, 413, 416, 418:

**Տաքսեան Վարդազար** – 111, 131, 348:  
**Տերվիչ Էֆէնտի** – 17:  
**Տէմիրճեան Գ.** – 398:  
**Տէր Դանիէլեան Ստեփան** – **Տես Սապահ-Գիւլեան:**  
**Տէր Դաւթեան Յովսէփ** – 179, 216:  
**Տէր Թովմասեան բժ.** – 158, 161:  
**Տէր Կարապետեան Գեղամ** – 43, 68, 133, 188, 201, 209, 219, 252:  
**Տէր Մարտիրոսեան Միքայէլ (Մար)** – 35:  
**Տէրմէն** – 297, 298:  
**Տէր Մինասեան Երուանդ** – 185:  
**Տէր Մինասեան Ռուբէն** – 73, 77, 78, 111, 123, 201, 222, 231, 291, 390:  
**Տէր Միքայէլեան Եզոր** – 174:  
**Տէր Ներսէսեան Սմբատ** – 83:  
**Տէր Սարգսեան Պօղոս** – 182:  
**Տէր Ստեփանեան Եղուարդ** – 220:  
**Տէրտէրեան Պետրոս (Շահ-Արմէն)** – 111:  
**Տըկիզ (զօրավար)** – 401:  
**Տիգրանեան Սիրական** – 169, 172, 175, 176:  
**Տրդատ** – 178, 179:  
**Տրեազին (զօրավար)** – 173:

**Րիզա պէյ** – 355:

**Փաշայեան Կարապետ (Թափառիկ)** – 69, 94-98, 100-102, 232, 389:

**Փափազեան Վահան (Կոմս)** – 40, 55, 68, 69, 73, 87, 94-97, 101, 133, 153, 201, 205, 206, 211, 212, 219, 228, 244, 252, 293, 294, 297:

**Փափախեան Վարսենիկ** – 222, 223:  
**Փափախեան Փիլոս (Մարալ)** – 111, 192, 201, 208, 222, 223:  
**Փիլոսեան Զարեհ** – 220:  
**Փոլատեան** – 111:

**Քալանթարեան Աշխարհբէկ** – 173, 176, 180:  
**Քալանթարեան Մ.** – 195:  
**Քաջազնունի Յովհաննէս** – 181, 293, 383:  
**Քեամիլ պէյ** – 228, 240, 289:  
**Քեռի (Գաւաֆեան Արշակ)** – 150, 153, 158, 162, 163, 168-170, 172, 176-183, 187, 190, 195, 202, 203, 206, 213:  
**Քեստանեան Հայկ** – 215:  
**Քենտիրեան Վուստապուհ** – 358:  
**Քէորքիս** – 19:  
**Քոչարեան Յակոբ** – 179, 181, 307:  
**Քրմոյեան Վահագն** – 95:

**Օզանովսկի (զօրավար)** – 166, 169, 172-174, 184, 185, 190:  
**Օրիկեան Արմենակ (Սլաք)** – 111:  
**Օհանջանեան Համազասպ** – 175, 202, 307:  
**Օհանջանեան Սաթենիկ** – 216:  
**Օհանջանեան Սարգիս (Ֆարհատ)** – 94-102:  
**Օսման (Վալարդ)** – 304:  
**Օտապաչեան Պօղոս** – **Տես Բարսեղեան Սարգիս:**  
**Օտապաչեան վրդ. Սահակ** – 237:  
**Օրմանեան Մաղաքիա արք.** – 88:  
**Օ՛քոննրր** – 253:

**Յերիտ Ճեմիլ** – **Տես Ամսէեան Տիգրան:**  
**Յէյտի Ահմէտ** – 240:  
**Յիլիպ** – **Տես Յովհաննէսեան Յովսէփ:**  
**Յուսատ պէյ** – 37:





### ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

**Աբաղա** – 153, 184, 243:  
**Աթանանց** – 227, 295, 296:  
**Ալաշկերտ** – 23, 181, 184, 190, 203, 228, 240, 362:  
**Ալավերդի** – 174:  
**Արեքսանդրապոլ** – 146, 170, 173, 177, 179, 180, 182, 184, 185, 189, 190:  
**Արեքսանդրէտ** – 185, 248, 257:  
**Արեքսանդրիա** – 140:  
**Արիւր** – 140, 142, 236, 296, 301:  
**Արճաւազ** – 240, 307, 308:  
**Արլանիա** – 4, 40, 49, 59:  
**Ախալցխա** – 179:  
**Ախալքալաք** – 146, 155, 179, 180, 189:  
**Ախուրիկ** – 228, 236, 296, 303:  
**Աղբակ** – 190, 228, 240:  
**Աղթամար** – 287, 306, 307:  
**Աճառիա** – 244:  
**Ամերիկա** – 6, 35, 36, 41, 59, 75, 99, 103, 105, 107, 109, 111, 115, 123, 126, 127, 129-132, 136, 138, 140, 143, 145, 151, 153, 160, 187, 189, 191-194, 196-198, 200, 202, 205-210, 213-215, 217-219, 221, 227, 229, 231, 232, 234-236, 238-240, 242, 245, 247, 248, 250, 252, 253, 255, 258-260, 287, 292, 350, 366, 369, 372-425:  
**Ամիկ** – 296, 301:  
**Այնթապ** – 241, 243:  
**Անատոլու** – 9, 13, 29, 33, 46, 224, 248:  
**Անգլիա** – 4, 145, 147, 185, 187, 194, 210, 213, 218, 219, 249, 256-259, 261, 278, 285, 367:  
**Անգղ** – 296:  
**Աշխաբադ** – 154, 155:  
**Աշնակ** – 163:  
**Աշտիշատ** – 383:  
**Ապիոն** – 313:  
**Աստարա** – 267, 268:  
**Աստրաբադ** – 268:  
**Աստրախան** – 154, 168:  
**Ասուրլի** – 164, 178:  
**Ատաբազար** – 36:  
**Ատանա** – 77, 79, 115, 241, 243, 345:  
**Ատլէր** – 179, 183, 186:  
**Ատրիանապոլիս** – *Տես Էտիրնէ*:  
**Ատրպատական** – 6, 163, 169, 183, 190, 203, 214, 261-267, 269, 270:

**Արաբկիր (Բլրակ)** – 324, 326, 386:  
**Արդուին** – 244:  
**Արեւալուսին** – *Տես Մամուրէթ-իւլ-Ազիզ-Մեգրէ*:  
**Արծկէ** – 240:  
**Արզնի** – 79:  
**Արճակ** – 228, 237, 308:  
**Արճէշ** – 228, 308, 422:  
**Արմաւիր (Նոր)** – 155, 179, 183:  
**Արմտան** – 238:  
**Արտաշան** – 179, 180, 182, 189, 190, 213, 215, 218:  
**Աւազան** – *Տես Տրապիզոն*:  
**Աւգատ** – 15:  
**Աւստրիա** – 4, 32, 59, 110, 214:

**Բաբերդ** – 225, 233, 234, 244:  
**Բազու** – *Տես Պաքու*:  
**Բալիան** – *Տես Պալքան*:  
**Բալու (Մետրոպոլիս)** – 324, 326:  
**Բաղէշ** – *Տես Պիթիս-Բաղէշ*:  
**Բանիջան** – 19:  
**Բասեն** – 155, 181, 187, 203, 206, 211, 213, 218, 222, 224, 231, 362:  
**Բարձրաբերդ** – *Տես Կարին-էրզրում*:  
**Բարֆրուշ** – 268:  
**Բելու** – 227, 236, 240, 295, 296:  
**Բենդերգեազ** – 268:  
**Բերկրի** – 307, 308:  
**Բիրէա** – 136:  
**Բիւրք** – 240:  
**Բլենէ** – 370:  
**Բողազքէոյ** – 296:  
**Բորչալու** – 176:  
**Բուրուշ-իւորան** – 163, 169, 178:

**Գաշիրէ** – 140, 218:  
**Գանձակ** – 149, 154, 180:  
**Գանձաձոր** – 179:  
**Գանձասար** – 183:  
**Գարաճա-պէյ** – 21:





**ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ**

**Գերմանիա** – 4, 5, 32-34, 88, 104, 108, 137, 147, 150, 161, 196, 198, 223, 235, 247, 278, 350, 367, 385, 401:  
**Գրգըլ-Կալա** – 162, 169, 177:  
**Գոնիա** – 229, 230, 235, 237:  
**Գուդաոուա** – 179:

**Դաշոյլու** – 296:  
**Դատուան** – 290:  
**Դերիկ** – 163, 166, 174:  
**Դերջան** – 92, 224, 233, 234, 238, 244:  
**Դիլման** – 163:  
**Դվնիկ** – 208, 365:

**Եալթա** – 59:  
**Եապոնիա (Ճափոն)** – 172, 185:  
**Եգիպտոս** – 6, 35, 55, 97, 111, 115, 126, 136, 138, 140, 151, 187, 189, 191, 198, 205, 206, 209, 213, 215, 218, 220, 221, 227, 229, 234-236, 239, 241, 242, 245, 255, 257, 366, 369, 374, 390, 410, 415:  
**Եկատերինոտար** – 159, 168, 176, 179, 184, 215:  
**Եղեգիս** – 233, 234, 236, 287, 296, 301:  
**Եմէն** – 4, 47:  
**Ենիքէոյ** – 32:  
**Եոմուրա** – 313:  
**Եոնճալու** – 45:  
**Երեւան** – 115, 146, 150, 160, 180, 184, 294, 297, 299:  
**Երզնկա** – 23, 224-226, 238, 244, 245:  
**Եւրոպա** – 4, 6, 32, 35, 36, 98, 104, 108, 131, 159, 181, 184, 187, 196, 210, 219, 231, 246, 250, 258, 362, 398, 403, 409, 410:

**Զարա** – 233, 234:  
**Զանգեզուր** – 146:  
**Զէյթուն** – 140-142, 201, 226, 232, 234, 238, 239, 241, 243, 245, 358:  
**Զմիւռնիա – Տես Իզմիր:**  
**Զուիցերիա** – 88, 139, 151, 185, 187, 397:

**Էլեվի (Գետափ)** – 310:  
**Էլիուխ** – 15:  
**Էնգելի** – 261, 267-274:  
**Էջմիածին** – 172, 307, 415:  
**Էսկի Շեհիր** – 229, 235:  
**Էվերէկ** – 240:

**Էտիրնէ** – 105, 151, 188, 201, 202, 347, 355, 370:  
**Էրերին** – 296:  
**Էրզրում – Տես Կարին:**  
**Էրուն** – 13, 19:

**Ընձակ** – 236, 295, 296, 301:

**Թաղ** – 19, 25:  
**Թաղիաբատ** – 281, 282:  
**Թամգարա** – 407:  
**Թամրան – Տես Հասան Թամրան:**  
**Թարգունի** – 208, 365:  
**Թաւրիզ** – 115, 150, 182, 190, 213, 218, 261, 265-267:  
**Թեհրան** – 111, 115, 127, 128, 144, 146, 149, 261, 269, 270, 277, 281, 282, 284:  
**Թիմար** – 236, 243, 295, 296, 298, 303, 307, 308:  
**Թիֆլիս** – 6, 40, 71, 115, 128, 133, 144-146, 149, 150, 152-155, 158-162, 167, 170, 173, 175, 177-180, 182, 187, 189, 190, 193-195, 197-199, 201, 202, 204, 206-209, 213, 214, 220, 231, 234, 252, 307, 344, 358, 415, 423:  
**Թորղան** – 224:  
**Թուլչա** – 347, 370:  
**Թուրքիա** – 3-7, 9, 32-34, 37, 43, 59, 68, 70, 94, 105, 110, 113, 115, 116, 118, 119, 126, 127, 130, 131, 134, 141, 147-150, 162, 177, 198, 201-203, 206, 208, 210, 229, 231, 235, 241, 246, 247, 250, 254, 290, 292, 293, 295, 336, 340, 341, 345, 350, 352, 355, 356, 359, 360, 368, 372, 390, 397, 409, 410:  
**Թրակիա** – 134, 156, 354:  
**Թրոյ** – 373, 377, 405:

**Ճընեւ** – 6, 35, 57, 91, 94, 110, 120, 123, 137, 139, 157, 158, 175, 178, 186, 192, 196, 198, 201, 207, 208, 213, 214, 218, 221, 223, 231, 234, 239, 242, 245, 247-250, 252, 257, 258, 286, 306, 350, 366, 383, 389, 402, 409:

**Իգտիր** – 153, 154, 158, 161, 163, 166, 168-170, 172-176, 179, 180, 185, 186, 190, 208, 213, 220, 297, 365:  
**Իզմիր** – 367:  
**Իզմիր** – 11, 79, 115, 390, 398:  
**Իշխանաց կղզի** – 230, 237:  
**Իսթ Ուէյմընթ** – 377:  
**Իսթ Սէնթ Լուիզ** – 377:  
**Իսկէչ** – 156, 361, 370:





*Իտալիա* – 6, 59, 139, 210, 218, 231, 249, 250, 258:  
*Իրան – Տես Պարսկաստան:*  
*Իրաք* – 4:  
*Իւզպէկիստան* – 155:

**Լ***աւէյ* – 56, 57, 88:  
*Լեոնասար – Տես Խարբերդ:*  
*Լեոնավայր – Տես Կիլիկիա:*  
*Լիբանան* – 143:  
*Լիվատիա* – 59, 409:  
*Լոնսոն* – 35, 36, 40, 55, 191, 193, 231, 245, 246, 250, 252-255, 258:  
*Լորենս* – 378:  
*Լօզան* – 383:  
*Լօուէլ* – 196, 377:

**Խ***անասոր* – 154, 158, 164:  
*Խառատուն* – 164:  
*Խարաբէ Հառնանց* – 17:  
*Խարբերդ* – 13, 32, 33, 46, 47, 58, 62, 77, 79, 87, 89, 91, 110, 115, 131, 143, 324-327, 386, 393:  
*Խարզան – Տես Ղարզան:*  
*Խարքով* – 202:  
*Խաւենց* – 296:  
*Խիզան* – 13, 17, 19, 21, 25, 85, 233, 307:  
*Խնուս* – 213, 224:  
*Խոյ* – 164, 168, 190, 261:  
*Խոչապ* – 298:  
*Խորաձոր – Տես Քղի:*  
*Խորենց* – 236, 301:  
*Խումար* – 17:  
*Խոփա* – 241, 248:  
*Խրիմ* – 59, 168, 184, 409:

**Մ***կոր* – 233, 234:  
*Մովսի – Տես Տրապիզոն:*  
*Մովք* – 384, 386, 407:

**Կ***ալաց* – 156, 199, 200, 347, 367, 370:  
*Կալաֆկա* – 316:  
*Կաղզուան* – 153, 155, 161, 163, 167-169, 175, 184:  
*Կանկարուտ* – 233, 234:  
*Կանճաուս* – 296:

*Կառկառ* – 232, 287, 307:  
*Կարախան* – 154:  
*Կարին-էրզրում* – 5, 6, 23, 32, 33, 35, 40, 42, 45, 46, 48, 51, 52, 57, 62, 71, 72, 74, 75, 77, 79, 82-84, 86-93, 97, 110, 111, 115, 127-133, 136, 139, 141, 142, 153, 154, 184, 185, 188, 189, 192, 196, 201, 203, 206, 211, 212, 217, 221, 222, 224, 225, 228-231, 233, 234, 236-240, 244, 246, 247, 252, 253, 260, 286, 290, 293, 295, 300, 348, 360, 364, 374, 384, 389, 391, 399-401, 403, 404, 407, 420:  
*Կարճկան* – 221, 222, 230, 231, 236, 288, 296, 301, 307:  
*Կարս* – 115, 146, 169, 172, 176-181, 184, 189, 208, 213, 247, 362:  
*Կաւուէ-Շամ* – 165, 169, 184:  
*Կեաւաչ* – 17, 233, 234, 296:  
*Կենճ* – 77:  
*Կեշանա* – 315:  
*Կեսարիա* – 79, 115, 212:  
*Կիլիկիա* – 6, 7, 9, 40, 95, 97, 99, 142, 143, 145, 151, 153, 159, 162, 177, 190, 194, 201, 205, 213, 238, 241, 243, 246, 254, 255, 258, 260, 360, 367, 414, 415:  
*Կիլման* – 21:  
*Կիպրոս* – 185, 241:  
*Կիսկիմ* – 224:  
*Կիրասոն* – 389, 407:  
*Կիւմիւլճինէ* – 370:  
*Կիւրին* – 384, 386, 407:  
*Կոխալի* – 318-320:  
*Կոկանդ* – 155:  
*Կոճեր* – 240:  
*Կոճկանց* – 179, 183:  
*Կովկաս, Անդրկովկաս* – 5, 6, 34, 40, 74, 94, 95, 99, 105, 110, 111, 115, 123, 126, 127, 133-135, 137, 138, 144-149, 151, 152, 155, 157, 159, 175, 179, 187, 189, 192, 193, 195, 196, 199-203, 205-210, 213-221, 224, 227, 229, 231, 234, 235, 239, 242-244, 246-248, 250, 258-260, 271, 289, 290, 298, 299, 307, 341, 342, 344, 358-360, 362, 368, 372, 376, 384, 386, 396, 401, 414-416, 420, 422:  
*Կորով* – 19:  
*Կոփ* – 45:  
*Կրանիթ Սիթի* – 377:  
*Կրասնոտար* – 313:  
*Կրեաէ* – 40:

**Հ***ազարէն* – 296, 303:  
*Հալէպ* – 79, 224, 226, 241:  
*Հաճըն* – 228, 229:  
*Համիլթըն* – 377:  
*Հայոց Ձոր* – 244, 298, 308, 422:  
*Հաչգուլ* – 163:







Հասան-Պալէ – 131, 154, 221, 224, 230:  
 Հասան Թամրան – 228, 236, 296, 301, 303:  
 Հասպատան – 164:  
 Հարաթեկ – 164:  
 Հարթֆրրտ – 375, 377, 405:  
 Հաւաւ – 384, 386:  
 Հերեսան – 164:  
 Հերթեւ – 224:  
 Հեքիարի – 11, 296:  
 Հէյվրհիլ – 377:  
 Հինձք – 208, 365:  
 Հիրճ – 244, 422:  
 Հիւսէյնիկ (Անուշաւան) – 324:  
 Հոլանտա – 88:  
 Հունգարիա – 4, 214:  
 Հում – 249, 250, 258:

**Զ**իթողք – 208, 365:

**Ղ**ազախ – 176:  
 Ղազուին – 261, 267-272, 281, 282:  
 Ղարաբաղ – 146, 182:  
 Ղարազէօզ – 164:  
 Ղարաքիլիսէ – 184:  
 Ղարզան – 11, 19, 85:  
 Ղարս – Տես Կարս:  
 Ղարաղան (Սեւ Արիւն) – 267:  
 Ղարաղուրուիթ – 181, 184:  
 Ղորաճուխ – 203:  
 Ղրիմ – Տես Խրիմ:  
 Ղօթուր – 163, 164, 169, 178:

**Ս**ալաթիա (Բերքառատ) – 324:  
 Սազանդարան – 267, 268, 271-274:  
 Սալքան – 164:  
 Սակեդոնիա – 4, 40, 134, 352:  
 Սակու – 261:  
 Սալկոպ – 215, 216:  
 Սամուրէթ-իւլ-Ազիզ – Մեզրէ – 13, 324, 326, 327:  
 Սանտան – 228, 236, 296, 303:  
 Սանազկերտ – 54, 228, 236, 296, 301:  
 Սարաչ – 79, 226, 241, 243:  
 Սարաղա – 364:  
 Սարսէյլ – 151, 219:  
 Սամրտանք – 307:

Սանչեսթր (Ամերիկա) – 377:  
 Մեծն Բրիտանիա – Տես Անգլիա:  
 Մեծ Քաղաք – Տես Թիֆլիս:  
 Մերսին – 248, 257:  
 Մերվ – 154:  
 Մէչէտիսեր – 268:  
 Մժնկերտ – 178, 184:  
 Միլահիճ – 21:  
 Միլան – 249, 258:  
 Մինարէթ – Տես Սալմաստ:  
 Միտրլպորօ – 377:  
 Միւնիւէն – 392:  
 Միսկներ – 236, 296, 301:  
 Մչակնոց – 240:  
 Մոլլա Հասան – 164:  
 Մոլլա-Սիւլէյման – 23:  
 Մոկս – 308:  
 Մոնթրոյ – 35:  
 Մոսկուա – 40, 100, 155, 172, 175, 195, 214, 291, 292:  
 Մուշ – 11, 17, 43, 44, 71, 77, 79, 86, 87, 91-93, 111, 115, 133, 135, 164, 188, 201, 205, 206, 209, 212, 219, 221, 222, 228, 230-232, 234-238, 241, 244, 245, 252, 293, 303, 306, 374, 401, 407, 420:  
 Մուսուլ – 85, 236, 241, 248, 303:  
 Մրգաստան – Տես Երեւան:

**Յ**ունաստան – 134, 196, 235:

**Ն**անեկանց – 236, 295, 296, 301:  
 Նարիման – 176, 179, 181, 183, 190, 222, 224:  
 Նափոլի – 249, 258:  
 Նեշուէ – 382:  
 Նիակարա Ֆոլս – 377, 405:  
 Նիկոմեդիա – 79:  
 Նիւ-Եորք – 195, 196, 373, 374, 377, 378, 405, 414:  
 Նիւ Հէյվըն – 377, 378:  
 Նիւ-Պրիթըն – 196, 375, 377, 405:  
 Նիւպրիփորթ – 405:  
 Նորդուզ – 228:  
 Նոր Նախիջեւան – 146, 155:

**Շ**ահ – Տես Թեհրան:  
 Շահաստան – Տես Պարսկաստան:  
 Շամ – Տես Վան-Վասպուրական:  
 Շամշատին – 176:





Շանա – 313:  
 Շապին Գարահիսար – 79, 111, 240:  
 Շատախ – 11, 17, 19, 154, 244, 297, 304, 308, 422:  
 Շատվան – 295:  
 Շաքարլու – 176, 179:  
 Շիրվան – 11, 19:  
 Շիքալօ – 374, 375, 377, 378, 405:  
 Շուկտ – 231:

**Ս**ականապատ – Տես Պաքու:  
 Սստան – 227, 287, 295, 296, 307:  
 Սւրմիա (Փարոս) – 265, 266, 364:  
 Սևաթինսկի – 375:  
 Սևոթրիթ – 375, 378, 405:  
 Սևթեկըն – 377, 412:  
 Սևսթ Փուլմըն – 377:  
 Սևոթրիթաուն – 378:  
 Սևսթ Հոպոքըն – 378:  
 Սևաթինսկի – 378, 405:  
 Սևսոր – 378, 412, 414:

**Չ**աթօ – 17:  
 Չաթալճա – 107:  
 Չաթախ – 178:  
 Չարլսթաուն – 377:  
 Չարսանճազ – 13:  
 Չըլսի – 195, 377, 378, 405:  
 Չմչկաձազ (Բազէ) – 324, 384, 386, 407:  
 Չոք-Մարզոուն – Տես Տէօրթ-Եոլ:

**Պ**աթուժ – 133, 150, 177, 181:  
 Պալիկ – 370:  
 Պալքան – 6, 32, 33, 49, 50, 58, 105, 111, 115, 127, 131, 140-143, 145, 151, 152, 156, 185, 187, 188, 191, 198-200, 202, 203, 205-207, 209, 210, 213-215, 217, 218, 220, 221, 227-232, 234-236, 238, 240-242, 245, 257-260, 344-371, 410, 415, 420:  
 Պաղտատ – 5, 213:  
 Պայազէտ – 21, 23, 164, 172, 173, 177, 187, 190, 195, 211, 220, 222, 225, 365:  
 Պաչգալէ – 85, 161, 164, 203, 206, 213, 222, 228, 231, 236, 237, 240, 295, 296:  
 Պատիշէն – 365:  
 Պարսկաստան – 6, 94, 95, 105, 114, 121, 126-128, 135, 150, 158, 161, 169, 170, 173, 175, 176, 179, 182, 184, 190, 202,

214, 236, 243, 261-285, 288, 290, 296, 298, 299, 301, 341, 349, 376, 379, 390, 397:  
 Պաքու – 34, 115, 146, 149, 158, 173, 178, 181, 213, 217, 269, 287, 289, 291, 307:  
 Պելժիա – 88, 397:  
 Պերլին – 33, 34, 95, 100, 184, 241, 384, 409:  
 Պեսերբուրգ, Պեսրոգրազ – Տես Փեթերսպուրկ:  
 Պգտիկ – 236, 296:  
 Պէյրութ – 111, 115, 171, 189:  
 Պիթլիս-Բաղէշ – 11, 13, 17, 19, 21, 25, 27, 32, 33, 40, 41, 46, 47, 51, 53, 62, 77, 79, 85, 88, 91-93, 111, 135, 209, 233, 234, 236, 238, 239, 243, 244, 290, 296, 301, 306, 399, 401:  
 Պինկհէմթըն – 377:  
 Պշերիկ – 15:  
 Պոլիս – 3, 4, 6, 7, 27, 32-34, 36-38, 40, 41, 45, 51, 56, 58, 59, 67-69, 71, 72, 76, 78-82, 84-88, 91, 94, 96-99, 102, 103, 107, 108, 110-112, 114, 115, 123, 127, 130, 131, 133, 135-139, 141-143, 147, 151, 152, 156-158, 188, 191, 192, 196, 198-209, 212, 213, 215, 217-221, 223, 224, 226-230, 233-237, 239-243, 245-247, 250, 252, 255, 259, 326, 328-345, 350, 354, 355, 358-360, 367, 369, 370, 374, 375, 383-386, 388, 389, 391, 395, 398, 399, 401, 402, 404, 407, 409, 410, 418, 420:  
 Պողազ-Բեսան – 228, 236, 303:  
 Պոսթըն – 6, 78, 87, 107, 195-197, 206, 217, 231, 286, 290, 291, 294, 372-374, 377, 378, 391, 394, 402, 406, 411-413, 416-419, 422, 423:  
 Պուլանըք – 45, 228:  
 Պուլկարիս – 111, 134, 138, 145, 151, 152, 156, 157, 168, 178, 187, 188, 192, 194, 196, 199, 201-203, 206, 210, 214, 216, 219, 227, 235, 246, 250, 253, 258, 344-346, 359, 360, 364, 366, 368, 370, 371, 418:  
 Պուրկազ – 156, 200, 346, 367:  
 Պուքրէշ – 156, 177, 185, 199, 200, 206, 229, 235, 258, 347, 360, 361, 367:  
 Պուսլա – 156, 200, 347, 361, 367, 370:  
 Պրանթֆրատ – 377:  
 Պրաքթըն – 377:  
 Պրիճփորթ – 377, 405:  
 Պրինսիպի – 151, 249:  
 Պրիւսէլ – 35, 55, 56:  
 Պրուսա – 21:

**Ջ**ուլֆա – 150, 155, 177:

**Ռ**աշտ – 261, 267-271:  
 Ռէյսըն – 377:  
 Ռիզէ – 248:





*Ռոստով* – 154, 155, 157, 159, 168, 172, 179:  
*Ռուսջուր* – 156, 200, 215, 216, 258, 346, 352, 367, 370:  
*Ռումանիա* – 137, 138, 145, 156, 168, 172, 178, 188, 192, 194, 199, 202, 203, 213, 214, 246, 344, 346, 347, 361, 366:  
*Ռուսիա* – 4-6, 21, 23, 32, 33, 36, 39, 57, 59, 88, 89, 104, 108, 109, 114, 115, 120, 128, 130, 134, 147, 150-152, 157, 161, 187, 192, 194, 200, 202, 205, 210, 214, 216-219, 221, 231, 247, 249, 250, 254, 257-259, 261, 264, 278, 285, 288, 290, 341, 349, 350, 379, 385, 386, 389, 397, 401, 403, 409-411:

**Ս***աթմանիա* – 164:  
*Սարմատ (Մինարէթ)* – 153, 158, 161, 163, 164, 168, 169, 176, 183, 190, 195, 208, 213, 220, 222, 231, 243, 261, 263-266, 365:  
*Սահմանաբերդ – Տես Մարաշ:*  
*Սամարղանտ* – 155:  
*Սամսոն* – 70, 111, 115, 136, 201, 310, 385:  
*Սանահին* – 155:  
*Սան Սթեֆանո* – 184:  
*Սասուն (Բարձրաւանդակ)* – 45, 72, 73, 77, 78, 99, 210, 228, 387, 396:  
*Սարաթեւօ* – 4:  
*Սարայ* – 161, 164, 169, 190, 213, 228, 236, 237, 299, 303:  
*Սարիղամիշ* – 153, 154, 158, 162, 163, 168, 169, 175, 177-179, 181, 183, 184, 189, 206, 213, 215, 221, 222, 230:  
*Սարուստան – Տես Կովկաս:*  
*Սըթահան* – 169:  
*Սեբաստիա-Սվազ* – 6, 32, 33, 46, 47, 58, 62, 77, 79, 80, 87, 89, 111, 115, 228, 240, 260, 384:  
*Սելիմ (գիւղ)* – 178:  
*Սերպիա* – 4, 110, 134:  
*Սէնթրըլ Ֆոլո* – 377, 382, 405:  
*Սիլիստրէ* – 370:  
*Սիւնթուր* – 224:  
*Սիմֆերոպոլ* – 179:  
*Սինոպ* – 248:  
*Սիպերիա* – 35, 58, 96, 271, 276:  
*Սիս* – 229, 241:  
*Սիֆթեր* – 322:  
*Սլիվան* – 236, 303:  
*Սլիվէն* – 156, 346, 367, 370:  
*Սկիւտար* – 101:  
*Սղերդ* – 11, 27, 306:  
*Սոչի* – 313:  
*Սուլինա* – 156, 347, 367, 370:  
*Սուխում* – 313:  
*Սուրիա* – 4, 143:  
*Սուրմարու* – 173:  
*Սոֆիա* – 49, 151, 156, 177, 192, 198, 200, 202, 203, 206,

209, 210, 213, 214, 217, 219, 220, 229, 235, 240, 245, 256, 258, 259, 346, 348, 352, 353, 358-362, 365-367, 369-371:  
*Սպարկերտ* – 307:  
*Սպեր* – 93, 224:  
*Ստաւրապոլ* – 155, 189:  
*Սփրինկֆիլտ* – 378:

**Վ***աննա* – 156, 346, 361, 367, 370:  
*Վաշինկթոն* – 241:  
*Վան-Վասպուրական* – 6, 11, 13, 17, 19, 21, 23, 27, 32, 33, 35, 40, 41, 44-47, 51, 58, 62, 68, 71, 72, 74, 75, 77, 79, 84-88, 91, 92, 97, 102, 110, 111, 115, 131, 133, 135, 138, 140, 142, 145, 153, 154, 158, 161, 162, 164, 168, 172, 184, 192, 201, 203, 205-207, 211-213, 217, 219, 220, 222, 227-232, 234-240, 243-245, 252, 259, 260, 286-309, 358, 360, 364, 386, 387, 391, 392, 399-401, 403, 404, 407, 420, 422:  
*Վիշապաձոր – Տես Տիարպեթի-Տիգրանակերտ:*  
*Վարդօ* – 54:  
*Վիշի* – 34:  
*Վիշապ – Տես Պոլիս:*  
*Վիեննա* – 110, 241:  
*Վիտին* – 370:  
*Վենետիկ* – 139, 249:  
*Վերընթափա* – 179, 183:  
*Վլադիկաւկազ* – 179, 181:  
*Վրաստան* – 155, 248:  
*Վրէժ – Տես Թաւրիզ:*

**Տ***աճկաստան – Տես Թուրքիա:*  
*Տատիկ* – 13:  
*Տարտանէլ* – 229, 230, 237, 246, 259:  
*Տարօն (Դուրան)* – 6, 45, 68, 72, 73, 75, 77, 78, 130, 131, 145, 222, 235, 238, 243-245, 260, 286, 290, 291, 387, 392, 396:  
*Տէվէ-Պոյնի* – 203:  
*Տէտէ-Աղաճ* – 151, 152, 156, 188, 200, 346, 354, 367:  
*Տէօրթ-Եոլ* – 228, 241, 243:  
*Տիատին* – 173, 203:  
*Տիարպեթի-Տիգրանակերտ* – 15, 32, 33, 46, 47, 62, 69, 73, 77, 79, 89, 110, 115, 131, 143, 201, 228, 236, 238, 303, 306, 384, 403, 407:  
*Տիթրոյիթ* – 377:  
*Տիվրիկ* – 384:  
*Տնտէս* – 377:  
*Տոպրիչ* – 370:  
*Տուտախ* – 174, 213:  
*Տրապիզոն* – 32, 46, 71, 74, 79, 87, 91, 92, 95, 111, 115, 129, 136, 201, 241, 244, 248, 310-313, 329, 385, 401, 403, 404:





*Տրիպոլի (ժայռ)* – 310, 312:  
*Տրոնա* – 318-320:

*Րազի* – 164, 169:  
*Րէյսին* – 398, 405:

*Փաթրաս* – 132:  
*Փաթրարն* – 377:  
*Փարիզ* – 3, 34-37, 39, 40, 48, 53, 55-57, 59, 88, 99, 108, 162, 187, 191, 245, 246, 248, 250, 252-254, 383, 389, 397, 401:  
*Փեթերսպուրկ* – 34, 40, 57, 78, 88, 95, 100, 144, 154-156, 159, 162, 189, 190, 193, 195, 199, 214, 248, 291, 292, 384, 391, 397, 402, 410:  
*Փորթլէնտ* – 377:  
*Փրավիտենս* – 375, 377, 378, 405:

*Քանատա* – 372, 374, 413:  
*Քանաքեռ* – 185, 186, 190:  
*Քանքրրտ* – 377:  
*Քալիֆորնիա* – 375, 380, 385, 412, 416:  
*Քարաուրզան* – 190:  
*Քարուակ* – 287:  
*Քեան* – 318-320:  
*Քեափանակ* – 167, 175:

*Քեմպրիճ (Ամերիկա)* – 377:  
*Քէրէվիլի* – 377:  
*Քէօհնաշար* – 163:  
*Քէօփրիքէոյ* – 92, 154, 160, 213:  
*Քիեւ* – 155:  
*Քիչնիեւ* – 245:  
*Քիրմասթի* – 21:  
*Քիւրտիստան* – 40, 288:  
*Քլի (Պորաձոր)* – 75, 130, 225, 384, 407:  
*Քոստանցա* – 156, 185, 200, 347, 361, 367:  
*Քուլթայիս* – 155:

*Օլթի* – 168, 176-178, 181, 183, 189, 212, 213, 222:  
*Օկոմի* – 224:  
*Օճնի* – 211, 224:  
*Օտեսա* – 155, 168, 185:  
*Օսմանիէ* – 229:  
*Օտուր* – 384, 388:

*Տիլատելֆիա* – 377:  
*Տիլիպէ* – 151, 152, 156, 200, 208, 215, 217, 258, 346, 367, 370:  
*Տիչպուրկ* – 377, 412:  
*Տրանսա* – 4, 39, 130, 134, 145, 147, 151, 194, 210, 219, 367, 397:  
*Տրեգնօ* – 372, 373, 412, 413:





**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

**ՅԱՌԱՋԱԲԱՆ** ----- 3

**ԳԼՈՒԽ I**

**Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԲՈՂՈՔԱԳԻՐՆԵՐԸ  
ԹՈՒՐՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ (1913)  
(էջ 7 – 31)**

<b>Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքարանի բողոքագիրները թուրք կառավարութեան (1913)</b> -----	7
1.- Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքին թաքրիրը ուղղուած թուրքիոյ վարչապետին -----	8
2.- Քաղուածքներ Մեծ-վեզիրական թեզքերէն -----	10
3.- Հայոց պատրիարքարանի պատասխանը արդարութեան եւ կրօնից նախարարութեան -----	26

**ԳԼՈՒԽ II**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ  
(էջ 32 – 67)**

<b>Հայկական բարենորոգումները</b> -----	32
Ա 1.- Մ. Վարանդեանէն Արեւմտեան բիւրոյին Պօղոս Նուպար փաշային հետ հանդիպման մասին -----	34
Ա 2.- Արեւմտեան բիւրոյէն Ամերիկայի Կ.Կ.ին (18/31 նոյ. 1913) -----	36
Ա 3.- Ս. Արարատեանէն Արեւմտեան բիւրոյին (30-12-1913) -----	37
Ա 4.- Երոպայի հայ ուսանողներէն Արեւմտեան բիւրոյին -----	38
Ա 5.- Կանխազգուշացում (4-1-1914) -----	39
Ա 6.- Ա. Վռամեանէն Արեւմտեան բիւրոյին (11/24-1-1914) -----	40
Ա 7.- Հայաստանի բիւրոյէն Ամերիկայի Կ.Կ.ին (20-1-1914) -----	41
Ա 8.- Հայաստանի բիւրոյէն Ամերիկայի Կ.Կ.ին (22-1-1914) -----	43
Բ 1.- Համաձայնագիր հայկ. բարենորոգումներու մասին (1914 Յունուար 26) -----	46
Բ 2.- Հայաստանի բիւրոյի թիւ 3 շրջաբերական-նամակը Կ. կոմիտէներուն -----	48
Բ 3.- Շրջաբերական թիւ 2 Հ.Յ.Գ. Պալքանեան շրջանի մարմիններուն (14-2-1914) -----	49
Բ 4.- Հայաստանի բիւրոյէն Կ. կոմիտէներուն (Շրջաբերական-նամակ Ամերիկայի Կ. կոմիտէներուն (14-3-1914) -----	51
Բ 5.- Հայաստանի բիւրոյի թիւ 6 շրջաբերական-նամակը (13-4-1914) -----	52
Բ 6.- Չորս նամակ Արմէն Գարոյէն (15, 19, 21, 27 Ապրիլ 1914) -----	55







Բ 7.- Արեւմտեան քիւրոյէն Պալքանի Կ.Կ.ին (6/19-5-1914) ----- 58  
 Բ 8.- Բարսեղ Շահապազէն Ամերիկայի Կ.Կ.ին (26-5-1914) ----- 59  
 Բ 9.- Հրահանգներ Ընդհանուր քննիչներու իրաւասութեանց մասին (Ֆրանսերէն եւ հայերէն) ----- 60

**ԳԼՈՒԽ III**

**ԹՈՒՐՔԻՈՅ 1914 Թ.Ի ԵՐԵՄՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
(էջ 68 – 93)**

**Թուրքիոյ 1914 թ.ի երեսփոխանական ընտրութիւնները** ----- 68  
 1.- Հայաստանի քիւրոյէն Արեւմտեան քիւրոյին (8/21-9-1913) ----- 69  
 2.- Արեւմտեան քիւրոյէն Բանալի-Սամսոնի Կ. կոմիտէին (2/15-11-1913) ----- 70  
 3.- Հայաստանի քիւրոյէն Արեւմտեան քիւրոյին (21-11-1913) ----- 71  
 4.- Դուրան-Բարձրաւանդակի Կ. կոմիտէն Արեւմտեան քիւրոյին (30-11-1913) ----- 72  
 5.- Հայաստանի քիւրոյէն «Դրօշակ»ի խմբագրութեան (5-12-1913) ----- 74  
 6.- Հայաստանի քիւրոյէն Ամերիկայի Կ.Կ.ին (15-12-1913) ----- 75  
 7.- Միջ-կուսակցական մարմնի որոշումը ձեռնպահ մնալու մասին (Դեկտ. 1913) ----- 76  
 8.- Դուրան-Բարձրաւանդակի Կ. կոմիտէն Արեւմտեան քիւրոյին (24-1-1914) ----- 77  
 9.- Արեւմտեան քիւրոյէն Ամերիկայի Կ. կոմիտէին (30/12-1-1914) ----- 78  
 10.- Սեւ-Բլուր-Մեքաստիոյ Կ. կոմիտէն Արեւմտեան քիւրոյին (6/19-2-1914) ----- 80  
 11.- Հայաստանի քիւրոյի թիւ 4 շրջաբերական-նամակը (8-2-1914) ----- 81  
 12.- Ռոստոմէն Արեւմտեան քիւրոյի Պոլսոյ հատուածին (24-2-1914) ----- 83  
 13.- Հայաստանի քիւրոյէն Արեւմտեան քիւրոյին (26-2-1914) ----- 84  
 14.- Վասպուրականի Կ. կոմիտէն Արեւմտեան քիւրոյին (3-3-1914) ----- 85  
 15.- Ռոստոմէն Արեւմտեան քիւրոյի Պոլսոյ հատուածին (11-3-1914) ----- 86  
 16.- Արեւմտեան քիւրոյէն Ամերիկայի Կեդր. կոմիտէին (11/24-3-1914) ----- 87  
 17.- Ռոստոմէն Արեւմտեան քիւրոյի Պոլսոյ հատուածին (15-3-1914) ----- 90  
 18.- Արեւմտեան քիւրոյէն «Դրօշակ»ի խմբագրութեան (17/30-3-1914) ----- 91  
 19.- Հայաստանի քիւրոյէն Արեւմտեան քիւրոյին (19-3-1914) ----- 92  
 20.- Հայաստանի քիւրոյէն Արեւմտեան քիւրոյին (30-3-1914) ----- 93

**ԳԼՈՒԽ IV**

**ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ  
(ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՏԵՂԵԿԱԳԻՐ)  
(էջ 94 – 109)**

**Արեւմտեան քիւրօ (Արձանագրութիւններ եւ տեղեկագիր)** ----- 94  
 1.- Բիւրոյական արձանագրութիւններ (1913) ----- 95  
 2.- Արեւմտեան քիւրոյէն Հ.Յ.Դ. Ամերիկայի 20րդ Պատգ. ժողովին (24-11-1913) ----- 103  
 3.- Արեւմտեան քիւրոյէն Հ.Յ.Դ. Ամերիկայի Կ.Կ.ին (14/27 դեկտ. 1913) ----- 107





**ԳԼՈՒԽ V**

**Հ.Յ.Դ. ՈՒԹԵՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ (ԿԱՐԻՆ)**  
(էջ 110 – 143)

<b>Հ.Յ.Դ. Ութերորդ Ընդհ. ժողով (Կարին)</b> -----	110
<b>Բաժին Ա.</b>	
Ա 1.- Հ.Յ.Դ. Ը. Ընդհ. ժողովի Հրատեր-շրջաբերականը Հ.Յ.Դ. մարմիններուն (1-3-1914) -----	112
Ա 2.- Հ.Յ.Դ. Ը. Ընդհանուր ժողովի Օրակարգը -----	113
Ա 3.- Հ.Յ.Դ. Ը. Ընդհանուր ժողովի որոշումներէն քաղուածքներ (Յուլիս 1914) -----	115
Ա 4.- Դաշնակցութեան Ընդհանուր ժողովը (հեռագիր) -----	126
<b>Բաժին Բ.</b>	
Բ 1.- Յովսէփ Յովհաննէսեանէն Թեհրանի Կ. կոմիտէին (31-6-1914) -----	127
Բ 2.- Ս. Վրացեանէն Ամերիկայի Կ.Կ.ին (12/25-8-1914) -----	129
Բ 3.- Վռամեան Իթքիհատի առաջարկներուն մասին (17/30-8-1914) -----	133
Բ 4.- Ա. Հանըմեանէն Եգիպտոս (20-8-1914) -----	136
Բ 5.- Ռոստոմէն Հայաստանի բիրոյի Պոլսոյ հատուածին (24-8-1914) -----	136
Բ 6.- Հայաստանի բիրոյի Պոլսոյ հատուածէն Վարանդեանին (27-8-1914) -----	137
Բ 7.- Հայաստանի բիրոյի Պոլսոյ հատուածէն Եգիպտոսի ենթակոմիտէին (31-8-1914) -----	138
Բ 8.- Հայաստանի բիրոյի Պոլսոյ հատուածէն Վարանդեանին (17-9-1914) -----	139
Բ 9.- Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ ենթակոմիտէներին (7-10-1914) -----	140
Բ 10.- Հայաստանի բիրոյէն (Պոլսոյ հատուած) Բալկանեան Կ. կոմիտէին (29-11-1914) -----	141
Բ 11.- Հայաստանի բիրոյէն (Պոլսոյ հատուած) Բալկանի Կ. կոմիտէին (7-10-1914) -----	142
Բ 12.- Հայաստանի բիրոյի (Պոլսոյ հատուած) շրջաբերականը (10-10-1914) -----	143

**ԳԼՈՒԽ VI**

**ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ**  
(էջ 144 – 197)

<b>Կամատրական շարժում</b> -----	144
1.- Արձանագրութիւն Հ.Յ.Դ. Կովկասի Ռայոնական ժողովի (21-23 Սեպտ. 1914) -----	146
2.- Յ. Յովհաննիսեանէն Թեհրանի Կ. կոմիտէին (28-8-1914) -----	149
3.- Պալքանեան Կ. կոմիտէին Արեւելեան բիրոյին (20-10-1914) -----	151
4.- Ս. Վրացեանէն Ամերիկայի Կ. կոմիտէին (4-11-1914) -----	153
5.- Կամատրական օրագիր (4-11-1914) -----	154
6.- Պալքանեան Կ. կոմիտէին Արեւելեան բիրոյին (11-11-1914) -----	156
7.- Ս. Վրացեանէն «Դրօշակ»ի խմբագրութեան (15-11-1914) -----	158
8.- Շրջաբերական Արեւելեան բիրոյի (1914) -----	161
9.- Լուրեր հայ կամատր խմբերի մասին N° 1 -----	163
10.- Լուրեր հայ կամատր խմբերի մասին N° 2 -----	165
11.- Ս. Վրացեանի զեկուցումը Ազգ. խորհրդաժողովին կամատրական խմբերի մասին -----	168





12.- Ս. Վրացեանի Օրագիրը (4-31 դեկտ.1914) -----	171
13.- Տիգրան Խաչիկեանէն Արտաւազդ Հանրմեանին -----	187
14.- Ս. Վրացեանէն Ամերիկայի Կ. կոմիտէին (1/14-1-1915) -----	189
15.- Պալքանեան Կ. կոմիտէն Արեւելեան բիւրոյին (15-1-1915) -----	192
16.- Ս. Վրացեանէն Ամերիկայի Կ.Կ.ի ընկերներին (20-2-1915) -----	193
17.- Բոստոնի Հ.Յ.Գ. Կենտրոնական կոմիտէին (13-3-1915) -----	197

**ԳԼՈՒԽ VII**

**ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ ՍԵՒ ԱՄՊԵՐ  
ՀԱՅԱՇԽԱՐՀԻ ԵՐԿՆԱԿԱՍՍԱՐԻՆ  
(էջ 198– 245)**

<b>Յեղասպանութեան նախօրեակին սեւ ամպեր հայաշխարհի երկնականարին -----</b>	<b>198</b>
1.- Հայաստանի բիւրոյէն (Պոլսոյ հատուած) Բալկանի Կ. կոմիտէին (1-11-1914) -----	199
2.- Հ.Յ.Գ. Պալքանեան Կ. կոմիտէն Ռոստոմին (10-11-1914) -----	199
3.- Տիգրան Խաչիկեանէն Ամերիկա՝ Արսէն Միքայէլեանին (29-11-1914) -----	201
4.- Հայաստանի բիւրոյի Պոլսոյ հատուածէն Պալքանի Կ. կոմիտէին (1-11-1914) -----	205
5.- Պալքանէն Ամերիկայի Կ. կոմիտէին (14-12-1914) -----	206
6.- Հայաստանի բիւրոյի Պոլսոյ հատուածէն Բալկանեան Կ. կոմիտէին (26-12-1914) -----	207
7.- Պալքանի Կ. կոմիտէն Հ.Յ.Գ. Արեւելեան բիւրոյին (29-12-1914) -----	209
8.- Պատճէն Կարնոյ ծածկագիր նամակի (1-1-1915) -----	211
9.- Պալքանի Կ. կոմիտէն Հայաստանի բիւրոյի Պոլսոյ հատուածին (5-1-1915) -----	213
10.- Հայաստանի բիւրոյի Պոլսոյ հատուածէն Պալքանի Կ. կոմիտէին (8-1-1915) -----	215
11.- Պալքանի Կ. կոմիտէն Ամերիկայի Կ. կոմիտէին (15-1-1915) -----	217
12.- Պալքանէն Հայաստանի բիւրոյի Պոլսոյ հատուածին -----	218
13.- Հայաստանի բիւրոյի Պոլսոյ հատուածէն Ռոստոմին -----	219
14.- Պալքանի Կ. կոմիտէն «Դրօշակ»ի խմբագրութեան (17-1-1915) -----	220
15.- Հայաստանի բիւրոյի Պոլսոյ հատուածէն Բալկանի Կ. կոմիտէին (20-1-1915) -----	221
16.- Փափախեան Փիլոսէն (Մարալ) Ռոստոմին (21-1-1915) -----	222
17.- Կարնոյ, Երզնկայի եւ Հալէպի առաջնորդարաններէն պաշտօնական նամակներ Պոլսոյ Պատրիարքարանին -----	224
18.- Հայաստանի բիւրոյէն Պալքանի Կ. կոմիտէին (20-2-1915) -----	227
19.- Հայաստանի բիւրոյի Պոլսոյ հատուածէն Բալկանի Կ. կոմիտէին (27-2-1915) -----	228
20.- Պալքանի Կ. կոմիտէն Ամերիկայի Կ. կոմիտէին (1/14-3-1915) -----	229
21.- «Դրօշակ»ի խմբագրութենէն Ամերիկայի Կ. կոմիտէին (6-3-1915) -----	231
22.- Հայաստանի բիւրոյի Պոլսոյ հատուածէն Բալկանի Կ. կոմիտէին (11-3-1915) -----	232
23.- Պալքանի Կ. կոմիտէն «Դրօշակ»ի խմբագրութեան (Ապրիլ 1915) -----	234
24.- Պալքանի Կ. կոմիտէն «Դրօշակ»ի խմբագրութեան (14/27-3-1915) -----	235
25.- Հայաստանի բիւրոյի Պոլսոյ հատուածէն Պալքանի Կ. կոմիտէին (20-3-1915) -----	236
26.- Հայաստանի բիւրոյէն Արտասահմանի մարմիններուն (20-3-1915) -----	238
27.- Պալքանէն Ամերիկայի Կ. կոմիտէին (30-3-1915) -----	240
28.- Հայաստանի բիւրոյի Պոլսոյ հատուածէն Բալկանի Կ. կոմիտէին (6-4-1915) -----	242
29.- Երկրի նամակների ամփոփումը՝ հաղորդուած Պոլսէն (6-4-1915) -----	243
30.- «Դրօշակ»ի խմբագրութենէն Ամերիկայի Կ. կոմիտէին (24-4-1915) -----	245





**ԳԼՈՒԽ VIII**

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ  
(էջ 246– 259)**

**Քաղաքական արտաքին յարաբերություններ** ----- 246

1.- Մ. Վարանդեանեն Ամերիկայի Կ. կոմիտեին (2-10-1914) ----- 247

2.- Ռոստոմեն «Դրօշակ»ի խմբագրության (23-1-1915) ----- 248

3.- Մ. Վարանդեանեն «Դրօշակ»ի խմբագրության (31-1-1915) ----- 249

4.- Ռոստոմեն Ամերիկայի Կ. կոմիտեին (3-2-1915) ----- 252

5.- Ռոստոմեն «Դրօշակ»ի խմբագրության (9-2-1915) ----- 253

6.- Ռոստոմեն «Դրօշակ»ի խմբագրության (17-2-1915) ----- 254

7.- Ռոստոմեն Ամերիկայի Կ. կոմիտեին (21-2-1915) ----- 255

8.- Մ. Վարանդեանի նամակը Մեծն Բրիտանիոյ Արտաքին գործ. նախարար Էդ. Գրեյին (20-2-1915) ----- 256-257

9.- Մ. Վարանդեանեն Ամերիկայի Կ. կոմիտեին (26-2-1915) ----- 258

**Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ա Կ Ա Ն**  
**Շ Ր Ջ Ա Ն Ն Ե Ր**

**Կազմակերպական շրջաններ** ----- 260

**ԳԼՈՒԽ IX**

**Հ.Յ.Գ. ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՈՒԹԻՒՆ  
(էջ 261 – 285)**

**Հ.Յ.Գ. Պարսկաստանի Կեդր. կոմիտեություն** ----- 261

Ա.- Տեղեկագիր Հ.Յ.Գ. Ատրպատականի Կ. կոմիտեի (1913 Յուլիս - 1914 Յուլիս) -----262

Բ 1.- Տեղեկագիր Հ.Յ.Գ. «Գիլան» կոմիտեի գործունեության -----267

Բ 2.- Արձանագրություններ «Գիլան» կոմիտեի V Շրջանային ժողովներու -----272

Բ 3.- Արձանագրություն «Շահ քաղաքի» կոմիտեի պատգամաւորական ժողովի -----281

Բ 4.- Հ.Յ.Գ. Թեհրանի Կ. կոմիտեի յայտարարությունը խորհրդարանական ընտրությանց առթիւ -----284





**ԳԼՈՒԽ X**

**Հ.Յ.Դ. ՎԱՆ – ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ**  
(էջ 286 – 309)

Հ.Յ.Դ. Վան-Վասպուրականի Կեդր. կոմիտեություն	286
Ա 1.- Վռամեանէն Հ.Յ.Դ. Ամերիկայի Կ.Կ.ին (9/22-11-1913)	287
Ա 2.- Վռամեանէն Հ.Յ.Դ. Ամերիկայի Կ.Կ.ին (20-11-1913)	289
Ա 3.- Վասպուրականի Կ.Կ.էն Հ.Յ.Դ. Ամերիկայի Կ.Կ.ին (9/22-12-1913)	292
Ա 4.- Վասպուրականի Կ.Կ.էն Հ.Յ.Դ. Արեւմտեան բիրոյին (19-6-1914)	293
Բ 1.- Տեղեկագիր Վասպուրականի դէպքերու մասին (1913-1918)	294
Բ 2.- Ա. Վռամեանի յուշագիրը Թահսին փաշային (5-1-1915)	300-301
Բ 3.- Արամի նամակի պատճէնը Վանից պաշարման ժամանակ (15-16 Ապրիլ 1915)	304
Բ 4.- Արամի կոչը ազատագրուած Վանի հայութեան (8-5-1915)	305
Բ 5.- Ռոստոմէն Ժընեւի ընկերներուն (23-6-1915)	306
Բ 6.- Վանի նահանգապետ Արամ Մանուկեանի յայտարարութիւնը (23-6-1915)	307
Բ 7.- Ծրարի պատճէն	309

**ԳԼՈՒԽ XI**

**Հ.Յ.Դ. ԱԲԱԶԱՆ – ՏՐԱՊԻԶՈՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ**  
(էջ 310 – 323)

1.- Հ.Յ.Դ. Աւագանի Տրապիզոնի ժողովը (Ապրիլ 1914)	310
2.- Տեղեկագիր Տրապիզոնի Արեւելեան զիւղերու ընդհանուր վիճակի մասին	313

**ԳԼՈՒԽ XII**

**Հ.Յ.Դ. ԼԵՈՆԱՍԱՐ – ԽԱՐԲԵՐՂԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ**  
(էջ 324 – 327)

Հ.Յ.Դ. Լեռնասար – Խարբերղի Կեդր. կոմիտեություն	324
Որոշումներ Հ.Յ.Դ. Լեռնասարի Եօթներորդ Ծրջանային ժողովի (Ապրիլ 10-13 1914)	324







**ԳԼՈՒԽ XIII**

**Հ.Յ.Դ. ՎԻՇԱՊ – ՊՈԼՍՈՅ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ**  
(էջ 328 – 343)

1.- Վիշապի Կ. կոմիտեի առաջարկները Ը. Ընդհ. ժողովի օրակարգին մասին -----328  
 2.- Ամփոփ պատկեր Վիշապի շրջանի կազմակերպության -----330  
 3.- Ամփոփում Հ.Յ.Դ. Վիշապի Ձ. Շրջ. ժողովի որոշումներուն (19 Յունիս – 3 Յուլիս 1914) -----332  
 4.- Որոշումներ Հ.Յ.Դ. Վիշապի Ձ. Շրջ. ժողովի կողմէ Ը. Ընդհ. ժողովի օրակարգի հարցերու մասին -----336

**ԳԼՈՒԽ XIV**

**Հ.Յ.Դ. ՊԱԼՔԱՆԵԱՆ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ**  
(էջ 344 – 371)

**Հ.Յ.Դ. Պալքանեան Կեդր. կոմիտեի կողմէն ----- 344**  
 Ա 1.- Երկամեայ տեղեկագիր Հ.Յ.Դ. Պալքանեան Կ. կոմիտեի ----- 345  
 Ա 2.- Ամփոփում Հ.Յ.Դ. Ը. Ընդհ. ժողովի օրակարգի հարցերուն վրայ Պալք. շրջանի տուած որոշումներուն ----- 348  
 Ա 3.- Շրջաբերական թիւ 1 (10-1-1914) ----- 352  
 Ա 4.- Հ.Յ.Դ. Պալքանեան Կ. կոմիտեին 1 (5/18-5-1914) ----- 354  
 Բ 1.- Շրջաբերական թիւ 7 (2-10-1914) ----- 356  
 Բ 2.- Հ.Յ.Դ. Արեւելեան բիրոյին (13-10-1914) ----- 358  
 Բ 3.- Հ.Յ.Դ. Սոֆիայի մարմնին (25-10-1914) ----- 359  
 Բ 4.- Հ.Յ.Դ. Պուքրէշի մարմնին (1-11-1914) ----- 360  
 Բ 5.- Պալքանի Կ.Կ.ի շրջաբերականը Պալքանի հայութեան – Միանանք (1-11-1914) ----- 362  
 Բ 6.- Շրջաբերական Հ.Յ.Դ. Պալքանեան շրջանի ընկերներուն (7-1-1915) ----- 364  
 Բ 7.- Հ.Յ.Դ. Պալքանեան Կ. կոմիտեի կողմէն Արտակարգ շրջանային ժողով (Փետր. 1915) ----- 366  
 Գ 1.- Հ.Յ.Դ. Պալքանեան շրջանի Արտակարգ շրջանային ժողովի որոշումները (Փետր. 1915) ----- 367  
 Գ 2.- Յայտարարութիւն «Հայաստան» թերթի հրատարակութեան մասին (27-2-1915) ----- 371





**ԳԼՈՒԽ XV**

**Հ.Յ.Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ**  
(էջ 372 – 425)

**Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդր. կոմիտեի կոմիտեի** ----- 372

Ա 1.- Տեղեկագիր Հ.Յ.Դ. Ամերիկայի Կ. կոմիտեի 1913 տարեշրջանի ----- 373

Ա 2.- Օրակարգի հարցեր Հ.Յ.Դ. Ամերիկայի շրջանի 20րդ Պատգ. ժողովի (24-28 Դեկտ. 1913) ----- 376

Ա 3.- Որոշումներ Հ.Յ.Դ. Ամերիկայի շրջանի 20րդ Պատգ. ժողովին – Քաղուածքներ (1913) ----- 377

Ա 4.- Վարանդեանն Ամերիկայի Կ. կոմիտեին (12-9-1913) ----- 383

Ա 5.- Ինքնապաշտպանութեան կոմիտեին Ամերիկայի կոմիտեին (20-10-1913) ----- 384

Ա 6.- Արեւմտեան բիւրոյէն Ամերիկայի Կ. կոմիտեին (9/22-11-1913) ----- 386

Ա 7.- Վարանդեանն Ամերիկայի Կ. կոմիտեին (25-11-1913) ----- 389

Ա 8.- Վռամեանն Ամերիկայի Կ. կոմիտեին (18/31-12-1913) ----- 391

Բ 1.- Շրջաբերական թիւ 1 Հ.Յ.Դ. Ամերիկայի Կ.Կ.Ի (15-1-1914) ----- 393

Բ 2.- Շրջաբերական թիւ 2 Հ.Յ.Դ. Ամերիկայի Կ.Կ.Ի (15-3-1914) ----- 393

Բ 3.- Արեւմտեան բիւրոյէն Ամերիկայի Կ. կոմիտեին (8/21-4-1914) ----- 399

Բ 4.- Արեւմտեան բիւրոյէն Ամերիկայի Կ. կոմիտեին (7/20-6-1914) ----- 402

Բ 5.- Շրջաբերական թիւ 1 Հ.Յ.Դ. Ամերիկայի Կարմիր խաչի խումբերուն (1-6-1914) ----- 405

Բ 6.- Արեւմտեան բիւրոյէն Ամերիկայի Կ. կոմիտեին (11/24-7-1914) ----- 407

Բ 7.- Շրջաբերական թիւ 5 Հ.Յ.Դ. Ամերիկայի Կ.Կ.Ի (Յուլիս 1914) ----- 409

Բ 8.- Շրջաբերական թիւ 2 Հ.Յ.Դ. Ամերիկայի Կարմիր խաչի խումբերուն (13-8-1914) ----- 412

Գ 1.- Հ.Յ.Դ. Ամերիկայի շրջանի 21րդ Պատգ. ժողովի Օրակարգի հարցեր (23-27 Դեկտ. 1914) ----- 413

Գ 2.- Շրջաբերական թիւ 1 Հ.Յ.Դ. Ամերիկայի Կ.Կ.Ի (20-1-1915) ----- 414

Գ 3.- Շահան Նաթալիէն Ռուբէն Զարդարեանն (10-3-1915) ----- 418

Գ 4.- Շրջաբերական թիւ 2 Հ.Յ.Դ. Ամերիկայի Կ.Կ.Ի (3-4-1915) ----- 419

Գ 5.- Շրջաբերական թիւ 3 Հ.Յ.Դ. Ամերիկայի Կ.Կ.Ի (20-4-1915) ----- 420

Գ 6.- Երկու հեռագիր Ազգային Բիւրոյէն Ամերիկայի Կ.Կ.Ին (26-12-1914) եւ (16-3-1915) ----- 423

Գ 7.- Կամաւորական դիմումագիր ----- 424

Գ 8.- Բժշկական քննութիւն ----- 425

**ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ** ----- 426

**ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ** ----- 432





**ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ – ԺԱ. ՀԱՏՈՐ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ**

**Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ ծանօթագրութիւններ  
ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒԹԵԱՆԻ**

**Համակարգչային շարուածք եւ էջադրում  
ԹԱՄԱՐ ՄՆԱՊԵԱՆ-ՍՈՒՐՃԵԱՆԻ**



**ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ  
շարքի բոլոր հատորները տեղադրուած են  
[www.elibrary.am](http://www.elibrary.am) եւ [www.historyofarmenia.am](http://www.historyofarmenia.am) կայքէջերուն վրայ:**





**TOME XI**


**ARCHIVAL DOCUMENTS FOR THE HISTORY  
OF  
THE ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION – DASCHNAKZOUTIOUN**

*All volumes of the series  
ARCHIVAL DOCUMENTS FOR THE HISTORY OF THE ARF – DASCHNAKZOUTIOUN  
can be found at  
[www.elibrary.am](http://www.elibrary.am) and [www.historyofarmenia.am](http://www.historyofarmenia.am) websites, in digital format.*

**E-mail: [ypamboukian@arfarchives.org](mailto:ypamboukian@arfarchives.org)**

**ՅՐՈՒՈՒՄԻ ԿԵԴՐՈՆ**

HAMAZKAYIN LIBRARY  
P. O. BOX 80-1096  
BOURJ HAMMOUD – LEBANON  
TEL.: 00961 - 1 - 241263/4  
FAX: 00961 - 1 - 260329  
E-MAIL: [imphamaz@inco.com.lb](mailto:imphamaz@inco.com.lb)  
[www.hamazkayin-bookstore.com](http://www.hamazkayin-bookstore.com)



**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ**

